

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ. Հ. ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1918 - 1920 ԹԹ.
(ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ,
ԲԱՆԱԿ, ՆԳՆ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

*Հրատարակութեան է երաշխավորել
Երևանի Պետական Համալսարանի
Հայագիտական Հետազոտութեաննեթի
ինստիտուտի Գիտական խորհուրդը*

Պատ.խմբագիր և գրախոս՝ պ.գ.դ., պրոֆեսոր է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

Վիրաբյան Վ. Հ.

Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918 - 1920 թթ. (Հետախուզություն, բանակ և ՆԳՆ). Մենագրություն. - Երևան, ԵՊՀ հրատ., 2015. - 746 էջ:

Մենագրությունում սկզբունքորեն նոր մոտեցում է ցուցաբերվում քննարկվող հիմնահարցերին, պարզաբանվում է Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ. ընթացած ազգային-պետական անվտանգության համակարգի ձևավորման գործընթացներին, կառավարության դիրքորոշմանը և գործունեությունը պետական անվտանգության համակարգի կարևորագույն օղակների՝ հետախուզական և հակահետախուզական ծառայության, ՆԳՆ ուժային կառույցների, միլիցիայի և այլալ մարմինների կազմակերպման ու ուղղորդման գործում: Մենագրությունում նորովի են բացահայտվում հետախուզության և բանակի փոխհարաբերության ու ռազմաքաղաքական ուժերի հայեցակարգերը: Նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների և լայն հասարակության համար:

Virabyan V. H. The creation and activity of the state security system of the Republic of Armenia (1918 – 1920). Investigation, Army and MIA (Monography). - Yerevan, Er. State Univ. Press, 2015. - 746 p.

The monography is devoted to the intelligence service and the army-creating policy, history of relations between these two structures from 1918 to 1920 in the First Republic of Armenia as well as to the processes of creating the national state security system. A principally new approach related to the issues of the Intelligence service and the Army is introduced in the monography. On the whole the monography also presents the attitude of the parties and the government to that important issue as well as the position of the military-political forces and various organizations to the major issues of the security system development. The monography is intended for historians, politicians and a wide range of readers.

© ԵՊՀ հրատարակչություն, 2015 թ.

© Վանիկ Վիրաբյան, 2015 թ.

**Նվիրում են Տիգրան՝
ԼԻԱՆՆԱՅԻՆ**

Մի ոտնահարիր ինձ, ով իմ թշնամի, թե գորուռեցի, նորից կը կանգնեմ, քանի որ, եթե խաւարում նստեմ, Տէրն է իմ լոյսը: Քանի որ մեղանչեցի Տիրոջ դէմ, համբերութեամբ կը տանեմ նրա բարկութիւնը, մինչեւ որ նա արդարացնի իմ դատաստանը, իրաւունք տայ ինձ, ինձ հանի դէպի լոյսը, եւ ես տեսնեմ նրա արդարութիւնը: Ինձ կը տեսնի իմ թշնամին, եւ ամօթք կը պատի նրան, որ ասում էր ինձ. «Ու՛ր է քո Տէր Աստուածը»: Իմ աչքերը կը տեսնեն նրան: Արդ նա ոտքի կոխասն կը դառնայ, ինչպէս ճանապարհի կայր:

**Միքիայի մարգարէութիւնը, 7: 8, 10
Աստուածաշունչ**

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

**Հայկական հետախուզությունը գործողության մեջ
(1918 - 1920 թթ.)**

Պատմական փաստեր և իրողություններ

Վերջին տարիներին տեղի ունեցած արմատական հեղափոխումները հասարակական-քաղաքական հարաբերությունների և հանրությունների գիտակցությունից մեջ գիտնականներին նոր խնդիրներ առաջադրեցին: Մասնավորապես, օրվա հրամայականը դարձավ ուսումնասիրելու Հայոց նորագույն, և հատկապես, Հայաստանի երեք հանրապետությունների պատմությունը, դրանց պատմական փորձն ու դասերը: Հետևապես ներկայիս գործընթացների պայմաններում բացառիկ նշանակություն է ձեռք բերում Հայաստանի Առաջին Հանրապետության (1918 թ. մայիսի 28 - 1920 թ. դեկտեմբերի 2) պետական անվտանգության համակարգի ու նրա առանձին կառույցների պատմության խոր անաչառ ուսումնասիրումը: Պատմության փաստերը ակնբախորեն վկայում են, որ Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի ռազմաքաղաքական կարևոր կառույցներն են եղել բանակը, միլիցիան (ոստիկանություն) և անշուշտ, հատուկ ծառայությունները: Նկատի ունենալով, որ Հայաստանի Երկրորդ (1920 թ. դեկտեմբերի 2 - 1991 թ. սեպտեմբերի 21, սոցիալիստական հանրապետության փուլը) և Երրորդ Հանրապետության (1991 թ. սեպտեմբերի 21-ից առ այսօր) պետական անվտանգու-

Թյան ռազմաքաղաքական համակարգում ևս կարևոր տեղ են զբաղեցնում ռազմաքաղաքական կառույցները, այստեղից էլ ինքնին հասկանալի է դառնում, թե որքան այժմեական ու հրատապ նշանակություն է ստանում Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության կառույցներից մեկի՝ հատուկ ծառայությունների (հետախուզության և հակահետախուզության), ինչպես նաև ՆԳՆ ուժային կառույցների և Հայկական բանակի կազմակերպման անցյալի ողջ փորձի համակողմանի ուսումնասիրումը և ընդհանրացումը, որոնք ունեն գործնական և ճանաչողական նշանակություն այսօրվա պետաքաղաքական և հասարակական, հատկապես աշխարհաքաղաքական ու անկախ պետականության գործընթացների տեսանկյունից: Ինքնին հասկանալի է, որ ներկա գործընթացների պայմաններում, երբ էական փոփոխություններ տեղի ունեցան և տեղի են ունենում նաև հայ պատմագիտության մեջ, հրամայական անհրաժեշտություն առաջացավ կրկին անդրադառնալ այդ կարևոր հարցին, բացահայտելով նորանոր ուշագրավ էջեր հայկական հետախուզության և պետական անվտանգության այլ ուժային օղակների գործունեության պատմությունից, դրանով իսկ փորձելով ավելի ամբողջական, ընդհանրական դարձնել Առաջին Հանրապետության պատմությունը, վերհանելով նաև այդ տարիներին իշխանությունների և կուսակցությունների կողմից թույլ տրված բացթողումները և սխալները: Քանզի ներկայումս զգալի չափով մեծացել է հետաքրքրությունը պատմական անցյալի դեպքերի ու իրադարձությունների նկատմամբ և, մասնավորապես, Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության նկատմամբ, ուստի փորձ է արվել վերհանել հենց այդ շրջանի պատմական հիշողությունները՝ անդրադառնալով հատուկ ծառայությունների՝ հետախուզության և հակահետախուզության, ՆԳՆ ուժային մարմինների կազմակերպման ու գործունեության դժվարին ուղու մի քանի չբացահայտված էջերի, ինչպես նաև ճշգրտել որոշ հարցեր, ստուգելով փաստերը և շրջանառության մեջ դնելով նոր արխիվային և այլ վավերագրեր:

Միաժամանակ, կարևոր է նշել, որ սույն թեմայի ընտրությունը ամենևին էլ պատահականություն չէ, այն ուսումնասիրելու անհրաժեշտությունը համահունչ է ներկա այն գործընթացներին, երբ զանազան պատմա-քաղաքական հանգամանքների բերումով ինքնուրույն և հիրավի անկախ պետություն դառնալու ուղին բռնած Հայաստանը որոշակի քայլեր է կատարում անհրաժեշտ պետաքաղաքական կառույցները ստեղծելու և դրանք կատարելագործելու ճանապարհին: Սակայն դրա հետ մեկտեղ իշխող մտայնություն են դարձել որոշ «գաղափարներ», որոնք հիմքից փտած են և չեն բխում ուժեղ ու լիարժեք պետություն դառնալու այն նպատակադրումների ոգուց, որ դրել են իրենց առաջ ազգային-քաղաքական լավագույն ուժերը և առավել հեռատես պետական-քաղաքական գործիչները: Խոսքը վերաբերում է նրան, որ կասկածելի և մեր կարծիքով, միանգամայն ոչ արդարացված և

ՀՀիմնավորված անցումներ են կատարվել ու կատարվում պետաքաղաքական մի գործընթացից դեպի մյուսը: Օրինակ, Հիմնավորված և ճիշտ միջնորդավորված անցում կատարելով (որն իհարկե միայն բառախաղ չէ, այլ քաղաքականություն, այն էլ բավականին բարձր որակի) «Պետական Անվտանգություն» Կոմիտեից» դեպի «Ազգային Անվտանգության Վարչություն», այնուհետև բարձրակետ ընտրվեց «Ազգային Անվտանգության նախարարությունը», դրանից հետո շեշտակի անկում տեղի ունեցավ պետական-քաղաքական գործընթացների ընթացակարգում և անցում կատարվեց գործի կազմակերպման և պետաքաղաքական գործընթացների ըմբռնման այն «մակարդակին», համաձայն որի երկիրը պետք է բավարարվեր ընդամենը «Ազգային Անվտանգության Ծառայության» համակարգով: Բերվեցին զանազան ոչ լուրջ պատճառաբանություններ և քաղաքական Հիմնավորումներ, որ Հայաստանը փոքր երկիր է, և ուժեղ ու մեծ անվտանգության համակարգի և էներգետիկ-տնտեսական հզորությունների կարիք չունի (ինչպես օրինակ ատոմակայան), քանզի Հայաստանի Հանրապետությունը ամենևին էլ չի պատրաստվում մեքենաշինություն և սարքաշինություն, ծանր արդյունաբերություն, էլ չենք ասում ինքնաթիռաշինություն, և աստված մի արասցե, ասենք, լիարժեք ռազմական արդյունաբերություն ունենալ, այլ միանգամայն կարող է բավարարվել ծխախոտագործությամբ, հյուրի և պղպաղակի արտադրությամբ (և այն էլ բացառապես օտարերկրյա տեխնոլոգիաների վրա հենված): Մի շարք փաստարկներ բերվեցին, որ դա չի բխում տարածաշրջանային շահերից, որ Հայաստանը ոչ ոքի չի սպառնում և հարևան երկրների կողմից իրեն էլ վտանգ չի սպառնում, որ Եվրախորհուրդը կլուծի բոլոր տարածաշրջանային խնդիրները և կապահովի անվտանգության կայուն համակարգի ստեղծման ու գործունեության բոլոր խնդիրները, ինչից բխում էր ենթադրություն անել, որ մի խոսքով պարտադիր չէ ունենալ, ասենք թե՛ «Ազգային Անվտանգության նախարարություն», այլ կարելի է բավարարվել միայն «ծառայությամբ»: Նմանակարգ քաղաքականություն իրականացվեց նաև Ներքին Գործերի նախարարության նկատմամբ, որի հետևանքով վերջինիս կարգավիճակը փոխվեց, նման այն բանին, որ ասենք, երբ անցում է կատարվում «Միութենական Հանրապետությունից ինքնավար Հանրապետության» կարգավիճակին, այդտեղից էլ դեպի «ինքնավար մարզի» վիճակի և ոչ ընդհակառակը: Հայաստանի Հանրապետությունը կանգնեց մի ուղու վրա, որ մեկը մյուսի ետևից սկսեցին փլուզվել այն կարևոր պետական-քաղաքական համակարգերը, ինչպիսիք են ներքին գործերի և անվտանգության կառույցները (ՆԳՆ-ն «թեթևացվեց» և արդյունքում ստեղծվեց «Հայաստանի ոստիկանություն» կառույցը, ձեռքի հետ փոշիացնելով առկա կադրուժը), որոնց անհամեմատ թույլ նմանակումները ստեղծվեցին՝ ժանդարմերիա, Ազգային Անվտանգության Ծառայություն և այլն:

Այդ առումով էլ ստորև ներկայացվող աշխատանքը մի համեստ փորձ է՝ բացահայտելու և լրացնելու Առաջին Հանրապետությունից պատմության հենց այդ կարևոր «սպիրտակ» էջը, չհավակնելով սպառնիչ պատասխան տալ բոլոր տեսակի բայցերին և հարցականներին: Թեմայի ուսումնասիրությունը պայմանավորված է մի շարք պատճառներով: Հայաստանի Առաջին Հանրապետության վերաբերյալ լույս են տեսել բազմաթիվ գրքեր և մենագրություններ, որոնց հեղինակները անդրադարձել են քննարկվող հիմնահարցի այս կամ այն բնագավառին: Եվ այնուամենայնիվ, մենք եկել ենք այն եզրահանգման, որ նորովի ուսումնասիրման և վերագնահատման են ենթակա նույնիսկ այն հիմնախնդիրները, որոնք կարծես թե արդեն բավականաչափ համակողմանիորեն և լիարժեքորեն ուսումնասիրվել են նախկինում՝ թե խորհրդային կարգերի օրոք, և թե դրանից հետո ընկած ժամանակահատվածում: Էլ չենք ասում պարզապես հայ պատմագիտությունից կողմից բացառապես չուսումնասիրված հիմնահարցերի մասին: Գործնականում այդպիսի չուսումնասիրված հիմնահարցերից են հենց Առաջին Հանրապետության հետախուզական և հակահետախուզական ծառայությունների, Ներքին Գործերի Նախարարության ուժային ստորաբաժանումների, իրավապահ մարմինների, և առհասարակ պետական անվտանգությունից համակարգի ստեղծման պատմությանը նվիրված հիմնահարցերը: Եվ քանի որ ***Հետախուզական ծառայությունը կամ Հետախուզական ու հակահետախուզական բաժանմունքը*** հանդիսանալով պետական անվտանգության համակարգի կարևորագույն ստորաբաժանումներից մեկը, ստեղծվել է հենց Առաջին Հանրապետության Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի կազմում և սերտ համագործակցության մեջ է գտնվելիս եղել բանակային բոլոր կարևոր կառույցների հետ, բնականաբար և խիստ օրինաչափորեն անհրաժեշտություն առաջացավ համալիր հարցաշարի մեջ որոշակի կտրվածքով քննարկել առկա հիմնախնդիրները, սակայն միաժամանակ ընդգծելով, որ այդ դժվարին և սովորյալ, տնտեսաքաղաքական լարված իրադրություն պայմաններում ստեղծվող և գործող հայկական հետախուզական և հակահետախուզական ծառայությունները չհասցրեցին դառնալ լիովին ինքնուրույն ծառայություն կամ ասենք վարչություն, առավել ևս՝ նախարարության տիպի կառույց և այլն, ինչպես դա մենք տեսնում ենք քիչ թե շատ լուրջ ու կենսունակ որևէ պետության օրինակով: Չնայած արխիվներում հետազոտողները հանդիպել են որոշ թվական տվյալների ու մի շարք անունների, որոնք առնչվել են հետախուզական ծառայության գործունեության հետ, սակայն դա ամենևին էլ խթանիչ գործոնի դեր չի կատարել, որպեսզի արխիվներից օգտվող հետազոտող մասնագետները փորձեին քիչ թե շատ լուրջ ու շարունակական կարճնել այդ հանգամանքի վրա, և դրա ետևում տեսնեին հնարավոր թաքնված կամ անտեսանելի պատմությունը: Այդ տեսանկյունից կարևոր է արձանագրել, որ արխիվներում աչքի են զարնում մի շարք անուններ և զանազան գործա-

ոււլթիների մասին վկայակոչումներ, որոնք հանիրավի մոռացվել են կամ էլ պայմանավորված են եղել ժամանակաշրջանի առաջ բերած բարդուլթիներով: Մեր կողմից կատարված աշխատանքի ընթացքում հնարավորինս ուշադրու-
թյուն դարձվեց հենց այդ բնույթի արխիվային և այլ բազմաթիվ փաստերի վրա, որոնք անուղղակիորեն կամ տարբեր առիթիներով անդրադառնում էին այդ հայ մարդկանց՝ հետախույզների գործունեությունը: Եվ չնայած այս պահի տեսանկյունից ոչ ամբողջական, երբեմն էլ կցկտուր, կիսատ-պռատ և անուղղակի բնույթի արխիվային վավերաղբերին ու տարաբնույթ նյութե-
րին, մենք եկանք այն եզրահանգման, որ եթե 1918 -1920 թթ. եղել են պե-
տականություն, բանակ, բանկ և այլևայլ կառույցներ, ուրեմն, բնականա-
բար, պետք է այդ պետություն մեջ ձգտեին ունենալ նաև ոչ միայն ամեն մի
պետություն համար անհրաժեշտ ներքին Գործերի մարմինների սկզբունքո-
րեն լիարժեք ուժային համակարգ, միլիցիա և առհասարակ՝ իրավապահ մար-
միններ, այլև ամեն մի լուրջ պետականություն համար «աչք ու ականջի»
դեր կատարող հատուկ ծառայություններ՝ հետախուզության և հակահետա-
խուզության համակարգ, ինչպես նաև այլ կառույցներ, մի խոսքով՝ պետա-
կան անվտանգության քիչ թե շատ ավարտուն և լիարժեք համակարգ, որը
կծառայեր Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքակա-
րության տարբեր խնդիրների լուծմանը: Եվ այդ տեսանկյունից էլ մեր կող-
մից կատարված հետազոտությունը բերեց որոշակի արդյունքի: Արխիվային
նյութերից ակնհայտ դարձավ, որ Հայաստանի Առաջին Հանրապետությունը
ոչ միայն փորձել է ձևավորման բարդ գործընթացներ սպրոզ անվտանգու-
թյան համակարգի շրջանակներում ունենալ և ստեղծել ոչ միայն ներքին
Գործերի մարմինների բավականին ճյուղավորված համակարգ, որն ունեցել
է բազմաթիվ գործառնություններ, այլև գործուն և աշխատող հետախու-
զություն և հակահետախուզություն, որոնք ստեղծվել և գործել են ՀՀ
Զինվորական նախարարության համակարգում՝ ՀՀ գործերի Գլխավոր Շտա-
բում, ձգտելով հասնել որոշակի արդյունքների, որոնք ցավոք, ոչ միշտ կամ
ավելի ճիշտ հազվադեպ են հաշվի առնվել ու իրատեսորեն գնահատվել 1918
- 1920 թվականների իշխանությունների կողմից, որն ընդհուպ մինչև 1920
թ. վերջը գտնվում էր Սևրյան խանդավառ շմուքի մեջ: Խորանալով նյութե-
րի ուսումնասիրություն մեջ, մեզ համար միանգամայն հասկանալի ու ակն-
հայտ դարձավ, որ Առաջին Հանրապետության պետական անվտանգության
համակարգի ուսումնասիրությունը պարզապես հանիրավի մոռացություն է
մատնվել հետազոտողների կողմից, այն տեղ չի գտել ինչպես խորհրդային,
այնպես էլ Երրորդ Հանրապետության, ինչպես նաև սփյուռքահայ և օտա-
րազգի պատմագիտության մեջ, որն էլ մեզ դրդեց ձեռնամուխ լինել այս
հույս կարևոր և հետաքրքիր հիմնախնդրի հնարավորին չափ խոր ուսում-
նասիրությունը: Ավելին, կարևոր է ընդգծել, որ եթե նույնիսկ այն եղել է
ընդամենը Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի մի բաժան-

մունք, արդեն բավարար է, քանզի պարտադիր չէր, որ այն լիներ մի այնպիսի կառույց, ինչպիսին ունեն մեծ տերությունները: Իսկ այն, որ ՀՀ Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը որոշակի չափով զբաղվել է «հետախուզական բնույթի տեղեկություններ հավաքելով», ինչը հենց նրա առաջնահերթ գործառնություններից է, կարծում ենք, դա էլ է օգտաշատ գործունեություն, բավարար թե ոչ, դա արդեն այլ բնույթի հարց է, և կարծես թե որոշ դեպքերում դա էլ քիչ է:

Հետևաբար, մենազրույցյան նպատակն է հետազոտություն ենթարկել ՀՀ պետական անվտանգության համակարգի ստեղծման և գործունեություն հիմնահարցերը, սկզբունքորեն վերհանել այն կազմող ստորաբաժանումները՝ հետախուզական և հակահետախուզական ծառայությունների, ՆԳՆ ու ժային կառույցների, միլիցիայի դերը և գործունեությունը որպես պետական անվտանգության համակարգի բաղկացուցիչներ: Հետազոտություն նպատակադրումների մեջ խնդիր է դրվել նաև հնարավորինս համակողմանի վերլուծություն ենթարկել Առաջին Հանրապետության այդ բացառապես չուսումնասիրված հիմնահարցերը և վերհանել այդ բնագավառում ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը, ինչպես նաև որոշակի տեղ հատկացնելով իշխանությունների մարտավարության վերհանմանը պետական անվտանգության համակարգի այս կամ այն օղակի ձևավորման բնագավառում՝ բացահայտելով նաև առկա բացթողումները և սխալները, որոնք խիստ արդիական են այսօրվա պետաքաղաքական գործընթացների առումով: Միաժամանակ քննության են առնված ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբում ստեղծված հետախուզական բաժանմունքի, ՆԳՆ իրավապահ ստորաբաժանումների, միլիցիայի և այլ կառույցների ստեղծման ու գործունեության հետ առնչվող ֆինանսական-տնտեսական, կարգային հիմնահարցերը, դրանք դիտարկելով ՀՀ կառավարության ու պառլամենտի ծավալած մարտավարության շրջանակներում: Այսպիսով, սույն մենազրույցյան մեջ խնդիր է դրված ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծման կազմակերպական-քաղաքական գործընթացները, այդ համակարգի բաղկացուցիչ օղակները և ստորաբաժանումները, հետախուզական և ՆԳՆ ու ժային կառույցների ծավալած գործունեություն արդյունքները:

Միաժամանակ կարևոր է ընդգծել, որ այս արդիական թեմայի մասին առ այսօր քիչ թե շատ լուրջ և ամբողջական ուսումնասիրություններ չեն հրատարակվել, բացառությամբ տողերիս հեղինակի մի շարք աշխատությունների¹, որոնք պատմագիտական առումով նորույթ են, քանզի դրանց

¹ Տե՛ս Վ. Վերքյան, Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ. (Հայոց քաղաքական պատմության նորագույն էջերից), Եր., ՀՊՆՀ, 1999. **Ույցի**՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց Քաղաքական պատմության

ուսումնասիրությունն առարկա են դարձել հենց Առաջին Հանրապետության պատմության բացառապես չուսումնասիրված հիմնահարցերը: Ասվածից կարելի է եզրակացություն գալ, որ սույն մենագրության գիտական նորույթը հենց նրանում է, որ գիտական շրջանառության մեջ դնելով մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր և այլևայլ նյութեր, հայ պատմագիտության մեջ առաջին անգամ՝ ժամանակակից պատմագիտության պահանջներին համահունչ չափանիշներով ու պահանջներով, փորձ է արվում ցույց տալ հայկական հետախուզական և հակահետախուզական ծառայության, պետական անվտանգության այլ ուժային կառույցների ու ստորաբաժանումների, մի խոսքով՝ պետական անվտանգության համակարգի ստեղծման ու գործունեության արդյունքների պատմությունը: Որպես գիտական նորույթ, մենագրության մեջ արված ընդհանրացումներն ու եզրահանգումները, անկասկած ունեն գիտագործնական կարևոր նշանակություն չէ, և առհասարակ հայկական պետականության ներկա գործընթացների իմաստավորման ու ապագայի մարտավարության ուղղությունների որոշման, պատմաքաղաքական գործընթացների դասերի հաշվառման տեսանկյունից: Աշխատության հարուստ փաստական և տեսական եզրակացությունները կարելի է օգտագործել ոչ միայն Հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի «սպիտակ» էջերը լրացնելու առումով, այլև ռազմաքաղաքական հարցերին նվիրված աշխատություններում: Օգտագործված նյութերի հիման վրա կարելի է կազմակերպել հատուկ դասընթացներ ու գործնական պարապմունքներ: Աշխատանքը կարող է օգտակար լինել ՀՀ Ազգային անվտանգության ծառայության, Ներքին Գործերի և Զինվորական նախարարությունների, ռազմաուսումնական հաստատությունների համար:

Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ հետախուզության պատմության հետազոտման առումով գնահատումներում հրապարակի վրա առկա հրապարակումներում և գրականությունում տեղ են գտել իրարամերժ գնահատումներ կամ ըստ էության թյուրմբռնումներ, գիտականորեն չհիմնավորված և ոչ ամբողջական տեսակետներ:

Այս առումով ուշագրություն արժանի է հայկական հետախուզության վետերան **Պ. Ա. Պետրոսյանի**² գիրք-հուշագրությունը, որը Խորհրդային Հայաստանի և Երրորդ Հանրապետության յուրահատուկ տարեգրություն է՝ հարուստ գիտարժան փաստերով և արժանահիշատակ իրադարձությունների մասին նկարագրություններով: Հետախուզության վաստակաշատ վետերան

Էջերից), Եր., 1999, էջ 22-27, **ճույնի**՝ Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Եր., Ասողիկ, 2003, **ճույնի**՝ Հայաստանի Առաջին Հանրապետության Միլիցիան և Ներքին Գործերի Նախարարությունը (1918-1920 թթ.), Եր., Ասողիկ, 2003, **ճույնի**՝ Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ.- Եր., «Լուսակն», 2006: **Նույնի**՝ Հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ, Եր., Լուսակն, 2009 և այլն:

² Տես **Պ. Ա. Պետրոսյան**, Էջեր հետախուզի կյանքից, Եր., Հեղ. հրատ., 2009:

Պ. Պետրոսյանը բերում է մի շարք հետաքրքիր օրինակներ, սակայն չվկայակոչելով հայտնի և արդեն վաղուց շրջանառություն մեջ գրված սկզբնաղբյուրները (որը գուցե և ելնում է իր հեղինակած գրքի հուշագրային բնույթից, և ինչ-որ տեղ դա արգարացված է): Պ. Պետրոսյանը միանգամայն արգարացիորեն գնահատելով մի շարք պատմափաստեր, տեղին նկատել է, որ «Հայաստանի Առաջին Հանրապետության պետական մարմինների համակարգում գործել է հետախուզական ծառայություն»³, այնուհետև ասվածին տեղին ավելացրել, որ «Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության օրոք հետախուզությունը և հակահետախուզությունն ընդգրկված են եղել ռազմական նախարարության համակարգում»⁴: Այդուհանդերձ, ըստ արժանվույնի փաստագրելով հայտնի իրողությունը Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգում հայկական հետախուզական ծառայության փաստացի գոյության պատմական իրողության մասին, Պ. Ա. Պետրոսյանը հակասելով ինքն իրեն և իր կողմից բերված օրինակներում հակասականություն ստեղծելով, մի կողմից իրավացիորեն պնդում է, որ «լուրջ հետազոտություններ են կատարվել (ոչ մի օրինակ չի բերվում, սակայն կարելի էր և պետք էր նշել նման փաստերի մասին - Վ. Վ.) կատարվել Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության մարմինների կազմավորման և գործունեության վերաբերյալ»⁵, մյուս կողմից ժխտում է Առաջին Հանրապետության հետախուզության պատմության վերաբերյալ հրապարակի վրա առկա, այդ թվում առաջին հերթին տողերիս հեղինակի մի շարք գրքերի, մենագրությունների և բազմաթիվ գիտական հոդվածների գոյության փաստը, և պարզապես պնդում հետևյալը. «Շատ ափսոս, որ բացակայում են մանրամասն տեղեկություններ նրա անձի [հեղինակը նկատի ունի Առաջին Հանրապետության փորձառու և տաղանդաշատ հետախույզներին մեկին՝ *Տիգրան Թադևոսի Դեվոյանցին*, որի մասին դեռ 1999 թվականից սկսած և առ այսօր մեր կողմից հրապարակվել են մի շարք մենագրություններ և գիտական հոդվածներ, որոնցում գիտական շրջանառության մեջ գրված արխիվային և այլ պատմափաստերը հնարավորություն են տալիս հնարավորինս լիարժեք կերտելու տաղանդավոր Հայ հետախույզի քիչ թե շատ բազմազունեղ և ամբողջական կերպարը] և ընդհանրապես այն ժամանակվա հետախուզական ծառայության գործունեության մասին»⁶: Վերն ասվածն ամենևին էլ նպատակ չունի ստվերելու Պ. Ա. Պետրոսյանի կողմից կատարված տքնաշան և միանգամայն գիտարժան աշխատանքը, որը նվիրված է հայկական հետախուզության գործունեությանը, այլ այստեղ մենք ընդամենը կատարել ենք որոշ կարևոր եզրահանգումներ քննարկվող հիմ-

³ Պ. Ա. Պետրոսյան, Էջեր հետախույզի կյանքից, էջ 386:

⁴ Նույն տեղում, էջ 387:

⁵ Նույն տեղում, էջ 386:

⁶ Նույն տեղում, էջ 387:

նախնդրի վերաբերյալ, արել որոշ անհրաժեշտ դիտարկումներ, ճշգրտումներ և սկզբունքային առումով տեղին վերազանհատումներ, որոնք, կարծում ենք, Հարցի պատմաքննություն տեսանկյունից՝ պարտադիր են:

Առհասարակ, հայկական հետախուզության պատմության, այդ թվում և Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության ձևավորման և գործունեության ամեն մի հիշարժան դրվագ ու պատմափաստ խիստ կարևոր է, քանզի այն հնարավորություն է տալիս ավելի ամբողջական և ավարտուն դարձնելու հայկական պետականության պատմաքննությունը:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետության ծագման և զարգացման պատմության հետագա ուսումնասիրության համար կարևոր ազդակ հանդիսացան 1988 թ. սկսված Արցախյան ազգային-ազատագրական պայքարով պայմանավորված իրադարձությունները, որոնց պայմաններում էլ պատմաբանները ձեռնամուխ եղան մի շարք գործերի՝ փորձելով նորովի լուսաբանել Հայոց պատմության մի շարք «սպիտակ» էջեր: Արժեքավոր է մասնավորապես «Նախիջևան-Շարուրը 1918 - 1921 թթ.» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն, որում կան մի շարք արժեքավոր տվյալներ հայկական հետախուզական ծառայության գործունեության վերաբերյալ⁷: Կարևոր է նշել նաև «Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի մասին⁸: Այս շարքը լրացնում է Լեռնային Ղարաբաղի 1918 - 1923 թթ. տեղի ունեցած իրադարձություններին վերաբերող արժեքավոր փաստաթղթերի և զանազան կարևոր վավերագրերի ժողովածուն⁹, որում ևս կան մի շարք հետաքրքիր փաստեր, որոնք օգնում են ամբողջացնելու որոշ պատկերացումներ հայկական հետախուզական ծառայության, և թե ՆԳՆ մարմինների գործունեության վերաբերյալ:

Քննարկվող հիմնահարցի այս կամ այն նրբերանգի լուսաբանման տեսանկյունից որոշակի արժեք են ներկայացնում ՀՀ վարչակարգի ներկայացուցիչների թողած աշխատանքները (Հուշեր, զանազան օրագրեր, պատմագիտական աշխատանքի փորձեր և այլն) այդ ժամանակաշրջանի վերաբերյալ, ինչպես նաև մի շարք արխիվային և 1918 - 1920 թվականների ՀՀ տարածքում հակառակորդի ծավալած քայքայիչ հակապետական և հակահայկական գործունեությունը մերկացնող փաստագրական բնույթի հրապարակումներ¹⁰, հոգվածներ, այդ թվում և տողերիս հեղինակի, որոնք քննարկվող

⁷ Տե՛ս «Նախիջևան-Շարուրը 1918 - 1921 թթ.», Փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի Արխիվների». 1993. N° 1-2, էջ 137-183:

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պրոֆ. Վլ. Վազախեցյանի ղեկ., Եր., «Գիտություն» հրատ., 2000:

⁹ Տե՛ս "Нагорный Карабах в 1918 - 1923 гг.", Сборник документов и материалов, отв. ред. В. А. Микаелян, Ер., Изд-во АН Армении, 1993:

¹⁰ Գաղտնի փաստաթղթեր: Արդեօսանի դավադրական գործունեության մի էջ, Եր., Գլխավոր Շտաբի տպ., 1920. - 56 էջ, N 1, («Ռազմիկի» տպարան, N 1):

Հիմնահարցի տեսանկյունից կարևորութուն են ներկայացնում և առավել համընդգրկուն դարձնում Ա.ռաջին Հանրապետության Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի ծավալած գործունեության պատմությունը, ինչը պատմագիտական որոշակի արժեք և հետաքրքրություն է ներկայացնում¹¹: Մասնավորապես, ՀՀ պետական անվտանգության համակարգի այս կամ այն օղակի, ստորաբաժանման ձևավորման վերաբերյալ թեկուզև չափազանց կցկտուր, բայց հետաքրքիր մանրամասների ակնարկումներ ենք հանդիպում ժամանակակիցների՝ ռազմաքաղաքական, հասարակական-կրոնական գործիչների՝ **Ս. Վրացյանի, Ա. Խատիյանի, Հովհ. Քաջաղունու, Կ. Սասունու, Ռ. Տեր-**

¹¹ Տե՛ս **Ս. Միզոբյան**, Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության պատմությունից, «Դոչոչակ», թիւ 2 (1574), Ապրիլ, 2002, էջ 110-117, **Վ. Վիրաբյան**, Հայաստանի Հանրապետության հետախուզական և հակահետախուզական ծառայությունը փաստաթղթերում (1918-1920 թթ.), «Բանբեր Հայաստանի Արխիվների», N° 2, 2004, էջ 30-36, **ճույնի՝** Հայաստանի Հանրապետության և Ներքին գործերի նախարարությունը և միլիցիան (1918-1920 թթ.), Բանբեր Հայաստանի Արխիվների, 2005, N° 1, էջ 92-98, **ճույնի՝** Հայկական հետախուզության պատմության էջերից՝ Անտոն Մարտկոտտի գործը, «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2005, N° 2 (106), էջ 243-248, **ճույնի՝** Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության համակարգի և հետախուզական ծառայության կազմակերպումը (1918-1920 թթ.), Բանբեր Երևանի Համալսարանի, N° 1, 2005, էջ 181-187, **ճույնի՝** Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության գործունեության պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», N° 3, 2005, էջ 36-49, **ճույնի՝** Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը, «Հայկական բանակ», 2006, N° 1, էջ 83-90, **Նույնի՝** Հայաստանի Առաջին Հանրապետության միլիցիայի և Ներքին գործերի նախարարության ստեղծումը 1918-1920 թթ., «Կանթեղ 1», Գիտական հոդվածների ժողովածու, գիրք 1 (26), Եր., «Ատոլիկ» հրատ., 2006, էջ 201-209, **ճույնի՝** Միլիցիան, Ն Գ-Ն մարմինները և հանցավորության, պետական-պաշտոնական դիրքի չարաչափումների դեմ պայքարի հիմնախնդիրները 1918-1920 թթ., «Կանթեղ 2», Գիտական հոդվածների ժողովածու, Եր., «Ատոլիկ» հրատ., 2006, N° 2 (27), էջ 125-134, **ճույնի՝** Անդրադարձ հայկական հետախուզական ծառայության գործունեությանը (1918-1920 թթ.), «Նորք», N° 2, 2006, էջ 153-159, **ճույնի՝** Էջեր Տիգրան Դեվոյանցի հետախուզական գործունեությունից, «Հայկական Բանակ», 2007, N 1 (51), էջ 82-88, **ճույնի՝** Հայկական հետախուզական խմբի գործունեությունը Կ. Պոլսում Տիգրան Դեվոյանցի գլխավորությամբ 1919 թ. երկրորդ կեսին - 1920 թ. սկզբին, Տարեգիրք Բ, Պատմագիտական հանդես, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 134-150, **ճույնի՝** Հայաստանի Հանրապետության հետախուզական ծառայության գործունեությունը Երևանում Խան-Թեքինսկու դավադրության մերկացման գործում (1919-1920 թթ.), Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, Ա., Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 178-196, **ճույնի՝** Տիգրան Դեվոյանցի հետախուզական գործունեության շուրջ, Լրագրեր Հասարակական գիտությունների, 2011, էջ 320-336, **Նույնի՝** Հայկական հետախուզության փաստաթղթերը Թուրքիայում ռազմաքաղաքական իրադարձությունների մասին (1919 թ. օգոստոս-նոյեմբեր, ռուս.), Պատմաբանասիրական հանդես, 2011, N 1, էջ 309-322, **ճույնի՝** Օտարերկրյա գործակալների ծավալած հակահայկական գործունեության կասեցումը Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.): Անտոն Մարտկոտտի և Իվան Տարականովի գործը, Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, Բ., Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 26-44, **ճույնի՝** Կ. Պոլսում հայկական հետախուզական խմբի ղեկավար Տիգրան Դեվոյանցի զեկուցագրերը Թուրքիայում և Հայաստանի Հանրապետության շուրջ տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների մասին, Պատմություն և մշակույթ. Հայագիտական հանդես. (Գիտական հոդվածների ժողովածու. հ. Գ.. Հայագիտական հանդես.- Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 17-47 և այլն:

Մինասյանի, Վ. Արծրունու և այլոց մի շարք աշխատություններում¹², որոնք հնարավորություն են տալիս ըմբռնելու, թե ինչպիսի աշխարհաքաղաքական միջավայրում, սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակում է փորձել կայանալ և գործունեություն ծավալել հայկական հետախուզական ծառայությունը:

Քննարկվող կարևոր հիմնական դիրքը մանրագնին և համակողմանիորեն ներկայացնելու տեսանկյունից հատկապես արժեքավոր են այն հրապարակումները, որոնց հեղինակները հայկական հատուկ ծառայություններ՝ հետախուզության և հակահետախուզության ներկայացուցիչներն են: Այդ առումով էլ շատ արժեքավոր են ՀՀ հետախուզական ծառայության կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկի՝ Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժնի պետերից մեկի՝ **Տիգրան Թադևոսի Դեվոյանցի հուշերը**՝ տպագրված Փարիզի «Վէմ» և Բոստոնի «Հայրենիք» ամսագրերում¹³, հետախուզյ, որն իր հետախուզական գործունեությունը սկսել էր դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին: Ցավոք սրտի, նմանակարգ հրապարակումները բացառություն են: Հետաքրքրություն են ներկայացնում նաև Իրազեկի դիտողությունները և քննադատական բնույթի փոքրիկ հուշագրությունն պատառիկները՝ կապված Տիգրան Դեվոյանցի գործունեության հետ, ինչպես նաև **Աբր. Գյուլխանդանյանի** մի հրապարակում Առաջին Հանրապետության վերաբերյալ, որում փոքրիկ, սակայն կարևոր անդրադարձ կա հայկական հետախուզության գործունեության վերաբերյալ¹⁴:

¹² Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի հանրապետություն, Եր., Հայաստան, 1993, **ճույնի**՝ Հին քրթեր նոր պատմության համար, Բեյրութ, տպ. «Համազգային», 1962, **ճույնի**՝ Կեանքի ուղիներով, Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ, հ. Դ. Բեյրութ, տպ., «Մշակ», 1965, հ. Ե., տպ. «Համազգային», Բեյրութ, 1966, **Ալ. Խատիսյան**, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, Բ. տպագր., Համազգային, 1968, **Հովհ. Քաջագունի**, Հ. Յ. Դաշնակցությունը անեյիք չունի այլես, Վիեննա, Միտրարեան տպ., 1923, **ճույնի**՝ Հայաստանի Հանրապետություն, Եր., Մ. Վարանդյան, 1993, **Կարո Սասունի**, Հայ-թուրքական պատերազմը (1920-ին), Պեյրութ, 1969, **ճույնի**՝ Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Բոստոն, 1927, էջ 65-83, **Ռուբեն**, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Արտասահման, Սատուն և Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, Գ. հրատ., 1982, **Վ. Արծրունի**, Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայությունը, Շատախ, Եր., «Մոլոնի» հրատ., 2002 և այլն:

¹³ Տե՛ս **Տիգրան Դեյոնանց**, Հետախուզի մը յիշուերը, «ՎԷՍ» (Փարիզ), 1938, Չ տարի, թիւ 2, Յունար-Մայիս, էջ 48-54, Թիվ 3, Յունիս-Սեպտեմբեր, էջ 58-72, **Տիգրան Դեյոնանց**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N° 1 (246), Յուն. - Փետր., էջ 53-62, 1945, N° 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 79-81, 1945, N° 3 (248), Մայիս-Յունիս, էջ 93-100, 1945, N° 4 (249), Յուլիս-Օգոստոս, էջ 81-89, 1945, N° 5 (250), Սեպտ. - Հոկտ., էջ 93-100, 1946, N° 2 (253), Մարտ-Ապրիլ, էջ 103-110, 1947, N° 2 (259), Մարտ-Ապրիլ, էջ 107-109, 1947, N° 5 (262), Սեպտ. - Հոկտ., էջ 111 - 112:

¹⁴ Տե՛ս **Իրազեկ մը**, Դիտողություններ և ճշգումներ, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N° 3 (248), Մայիս-Յունիս, էջ 109-111: **Ա. Գլխանդանյան**, Ամրկովկասի Հանրապետությունները «Հայրենիք» (Բոստոն), 1967, N° 3, էջ 9-17, N° 4, էջ 70-80:

Պետք է կարևորել Մ. Կարապետյանի Առաջին Հանրապետության բանակին նվիրված աշխատությունը¹⁵, որում սակայն, ամենևին հատուկ նպատակ չի դրվել ուսումնասիրության ենթարկելու բանակը որպես պետական անվտանգության համակարգի կարևորագույն օղակներից մեկը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հիմնախնդիրների մեջ խորամուխ լինելու և համընդգրկուն տեսնելու նկատառումներից ելնելով կարող ենք նշել Ռ. Գ. Հովհաննիսյանի, Ստ. Զոնսի գրքերն ու գիտահանրամատչելի առանձին հրատարակումները, որոնցում սակայն Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծման և գործունեության հարցերը որևէ կերպ չեն քննվել, առավել ևս, որ այդպիսի նպատակ ամենևին էլ չի դրվել¹⁶:

¹⁵ Տե՛ս Մ. Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակը (1918 -1920 թթ.), Եր., ԳՄԱ «Գիտություն» հրատ., 1996: Մ. Л. Карапетян, Генерал-лейтенант Ованес Ахвердян, Ер., "Наапет", 2003:

¹⁶ Տե՛ս Ռ. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն: Հատոր 1, Առաջին տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005, Richard G. Hovannisian., Armenia on the road to independence, 1918, Berkeley, Los Angeles: Univ. of California Press, 1967, The Republic of Armenia, Vol.I, Berkeley, Los Angeles, London, 1971, Vol. II, 1982, Vol. III, 1996, Vol. IV, 1996, Stephen F. Jones, Georgian-Armenian Relations in 1918-20 and 1991-94, A comparison, Armenian review, vol. 46, no 1-4 (181-184):

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 1918 - 1920 ԹԹ.

**1. Հետախուզական ծառայության կայացման ուղղությամբ գործընթացները: ՀՀ կառավարության, Զինվորական գերատեսչության և Արտաքին Գործերի նախարարության Համագործակցությունը
Հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքի ստեղծման ու գործունեության ուղղորդման բնագավառում**

Հետախուզությունը մարդկության և առանձին ժողովուրդների զարգացման ողջ պատմաքաղաքական ընթացքում եղել է պետությունների գերակա ռազմավարական առանձնահատուկ կարևորության շահերի կենտրոնակետում: Հետախույզը հանդիսացել է մի անձ, որն ամեն մի պետության բարձրագույն ղեկավարության և գործերի հրամանատարության կողմից կոչված է եղել զբաղվել ցանկացած իրադրությունում և ցանկացած ժամանակ գործող կամ հնարավոր հակառակորդի մասին տեղեկությունների ուսումնասիրմամբ և ընդհանրացմամբ, իսկ այնուհետև ժամանակին դրանց հաղորդմամբ՝ հակառակորդի դեմ անհրաժեշտ հակաքայլերի ձեռնարկման համար: Հետախուզական գործընթացների գլխավոր դեմքը հետախույզն է, իսկ հակահետախույզին և ընդհանրապես պետության հատուկ ծառայություններին առաջադրվող ռազմավարական նշանակության գլխավոր նպատակադրումը՝ հակառակորդի հետախուզության քայքայիչ գործունեությունը սեփական հայրենիքի դեմ կանխելն է:

Հարկ է ասել, որ դեռ Հին Հայաստանում կարևորվել են հետախուզական բնույթի գործառույթները, որոնց արդյունավետության հետևանքով հնարավոր է եղել ապահովել երկրի պետական անվտանգության համակարգի առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը: Պատմական փաստերը վկայում են, որ դեռ հայկական պետականության արշալույսին՝ Արարատյան պետականության ժամանակաշրջանում լուրջ քայլեր են արվել

հետախուզության կազմակերպման բնագավառում, ինչը հնարավոր է դարձրել արդյունավետորեն հակազդել Ասորեստանի և այլ երկրների հետախուզական կառույցների կողմից ձեռնարկված հակահայկական գործողություններին, ինչի մասին են փաստում առկա սեպագիր արձանագրությունները:

Ի դեպ, հարկ է նշել, որ չնայած ասորեստանյան գովերգված հետախուզության ծավալած գործունեությանը, դեռ Սարգոն II-ի ժամանակից հայտնի են փաստեր հետախույզների գործունեության վերաբերյալ, որոնք հայտնաբերվելու պահից իրենց վրա են բևեռել մասնագետների ուշադրությունը: Դրանք ակնհայտորեն վկայում են, որ այդ ժամանակաշրջանում Արարատյան թագավորությունում ոչ միայն գոյություն է ունեցել հետախուզական ծառայության գործող և ակտիվ կառույց, այլև այն գործնականում կարողացել է հմտորեն հակազդել ասորեստանյան հետախույզներին, կանխարգելել նրանց հակաքայլերը և պատասխան գործողություններ ձեռնարկել: Սեպագիր արձանագրությունների պատմաքննական վերլուծությունը փաստում է, որ Ռուսա արքայի գլխավորած արարատյան հիմնական զորքերի հետախույզների կողմից ձեռնարկված քայլերի մասին ասորեստանցիները տեղեկացել են այն ժամանակ, երբ հնարավոր չի եղել հակազդել դրանց: Ասորեստանյան և Արարատյան երկրների հետախույզների միջև պայքարը եղել է համառ, անզիջում, երկու կողմն էլ ձգտել են առավելություններ ձեռք բերել, որը միշտ չէ, որ հաջողվել է: Արարատյան երկրի արքաները պատվով են դուրս եկել այդ մրցակցությունից, երբեմն ինչպես գերելով ասորեստանյան գործակալներին, այնպես էլ ժամանակին ձեռք բերելով անհրաժեշտ կարևոր տեղեկատվություն հակառակորդի կողմից ձեռնարկվող հնարավոր ագրեսիվ գործողությունների, զորքերի տեղաբաշխման և տեղաշարժերի մասին, ինչի մասին են վկայում տարբեր թանգարաններում, այդ թվում Արարատյան (Վանի) թագավորության ժամանակաշրջանին վերաբերող ՀՀ պատմության թանգարանում պահ տրված նյութերը, այդ թվում սեպագիր արձանագրությունները:

Հետախուզությունը հին արևելյան բանակներում առանցքային տեղ ու դեր ուներ: Դատելով ասորեստանյան և այլ երկրների համանման սկզբնաղբյուրներից, այն հանդիսացել է պետության և բանակի կարևորագույն բաղկացուցիչը, առանց որի անհնարին էր պատկերացնել երկրի պետական անվտանգության հիմնախնդիրների լուծումը: Դրանց դիտարկումից ակնհայտ է դառնում, որ Արարատյան պետությանը հարևան երկրների հետ

սահմանամերձ շրջաններում, յուրաքանչյուր սահմանակից անցուղուն հարող խաչմերուկներում ասորեստանցիներն ունեին իրենց լրտեսներն ու իրազեկիչները, որոնք բավականին ակտիվ էին գործում՝ ձգտելով ձեռնարկել քայքայիչ գործողություններ Արարատյան-Վանի թագավորության դեմ: Առանց այս կամ այն երկրի դեմ ձեռնարկված, խնամքով մշակված հետախուզական գործունեության և թշնամու մասին հիմնավորապես հավաքված ու մանրագնին կերպով ստուգված տեղեկատվության, մարտական գործողություններ չէին նախաձեռնվում, այդ թվում նաև Ասորեստանի դեմ:

Հետախուզական գործը լավ հիմքերի վրա էր դրված նաև Արարատյան երկրի դեմ մշտական թշնամական դիրքորոշում որդեգրած Ասորեստանում: Ասորեստանյան հետախուզության մասին լավ հայտնի է Նինվեում պահպանված արքայական արխիվի՝ Արարատի թագավորությունում տիրող իրադրության մասին հետախուզական հաղորդումից, որը վերաբերում է Սարգոն 2-րդի (մ.թ.ա. VIII դ. վերջ) կառավարման շրջանին: Հետախուզության կարևորության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այդ ծառայությունը հաճախ ղեկավարում էր արքայազն-գահաժառանգը: Լավ կազմակերպված ու գործող հետախուզությունը օգնել է Ասորեստանի տիրակալներին՝ նվաճված երկրներում պահպանել իրենց կողմից պարտադրված «կարգերը» և ժամանակին ճնշել դիմադրության փորձերը:

Ինչպես երևում է ասորեստանյան հետախուզության տվյալներից, Արարատի [**Արարատյան**] թագավորության դեմ Ասորեստանի մ. թ. ա. 714 թ. ռազմական նախապատրաստությունների մասին ժամանակին հայտնի է դարձել արարատյան երկրի հետախույզներին: Իսկ ասորեստանցիները, իրենց հերթին, իմացել են արարատյան երկրի հակաքայլերի մասին: Սա, անկասկած, բնութագրում է արարատյան հետախուզական ծառայությունը, որի մասին, ասորեստանցիների թողած անուղղակի տեղեկություններից բացի, ցավոք, առայժմ, այլ տեղեկություններ չկան: Օրինակ, այդ նույն ասորեստանյան աղբյուրներից հայտնի է, որ արարատյան սահմանային ամրոցներից հայտնի ու նշանավոր է եղել Ուայախս ամրոցը, որտեղ, ըստ Սարգոնի հաղորդման, գտնվում էին արարատցիների խիզախ մարտիկները, լրտեսները, հետախույզները, որոնք նախանշված էին «շրջակա երկրների մտահղացումների մեջ ներթափանցելու համար»: Ուրեմն, արարատյան բանակը ևս ուներ հետախուզություն, որն, ըստ երևույթին, բաժանվում էր մարտավարականի ու ռազմավարականի: Առաջինի գործառույթներից էին տեղեկությունների ու հաղորդումների հավաքումը, արշավանքի հաջող իրա-

կանացման համար «լեզվի» և ուղեցույցների հայթայթումը, ինչպես նաև մարտական պահպանությունը: Նման կարգի խնդիրների լուծման համար մեծ է եղել հեծելագործի դերը, որը բացի հակառակորդի շարքերը ցրելու և նահանջող թշնամուն հետապնդելու խնդիրներից, կարող էր զգալիորեն առաջ անցնել հիմնական ուժերից և անհրաժեշտ տեղեկություններ իմանալ հակառակորդի զորքերի քանակի ու զորախմբերի տեղաշարժման ուղղության մասին, իսկ հարկ եղած դեպքում կատարել նաև «հետախուզություն՝ մարտով»: Հեծյալ ստորաբաժանումները հետախուզություն էին կատարում՝ հատկապես երթի ժամանակ տեղաշարժվելով զորքի առաջնային (զվխային) մասում: Լայնորեն կիրառվում էր դիտարկմամբ հետախուզությունը մայրուղիներում գտնվող հատուկ պահակային աշտարակներից, որոնք իրար հետ կապ էին պահպանում վառվող խարույկների կրակի միջոցով, տալով պայմանական ազդանշաններ, որը հին աշխարհում տարածված կապի ապահովման տեսանկյունից արդյունավետ եղանակ էր: Վերոհիշյալ երկրորդ տիպի հետախուզության մասին կարելի է եզրակացնել դարձյալ ասորեստանյան սեպագիր տեքստերից: Ինչպես արդեն նշեցինք, ասորեստանյան թագավորները հանուն իրենց բանակների հաջող գործողությունների, հարևան երկրները, այդ թվում և՛ Արարատյան երկիրը, հեղեղում էին իրենց լրտեսներով, որոնք հետևում էին արարատյան արքաների յուրաքանչյուր քայլին, զորքերի տեղաշարժերին, ճանապարհների, կամուրջների, ամրոցների շինարարությանը, ներքին խռովություններին և, ընդհանրապես, ներքին կյանքին: Ցավոք, արարատյան տեքստերից հետախուզական հաղորդումներ առայժմ մեզ հայտնի չեն, բայց կասկածից դուրս է, որ արարատյան արխիվ հայտնաբերելու դեպքում սեպագրերի նշանակալի մասը կկազմեին արարատցի հետախույզների տեղեկությունները, որոնց մասին ուղղակի նշվում էր նույն ասորեստանյան սեպածև արձանագրություններում: Հետախույզներով համալրված Ուայախս ամրոցից բացի, հավանաբար, Արարատում կային նաև այլ կետեր, որտեղից գործակալները ճանապարհվում էին հարևան երկրները ռազմավարական հետախուզության տեղեկություններ հավաքելու համար: Հետախուզության լավ դրվածքի, Արարատյան երկրի զորքի մարտավարական առանձնահատկությունների մասին է խոսում այն հանգամանքը, որ համաձայն տարեգրությունների տեղեկությունների, արարատյան արքաների արշավանքները իրականացվում էին տարեկան երկու անգամ՝ գարնանը կամ աշնանը, ինչը պայմանավորված էր ոչ միայն եղանակային յուրահատկություններով, այլ նաև կիսա-

քոչվորական անասնապահության ձևով: Ասել է թե՛ արարատցիները հայտնվում էին կամ գարնանը՝ մինչև անասունը լեռներ բարձրացնելը, կամ էլ աշնանը՝ քոչի վերադառնալու ժամանակ, ինչն ապահովել է նրանց հարուստ ռազմավարով: Այս հանգամանքն, անշուշտ, պահանջում էր հետախուզության և պահպանության լավ կազմակերպում, այլապես գորքերի բացահայտ մոտեցման դեպքում տեղաբնիկները կարող էին անասունը քշել-փախցնել, եթե ոչ շատ հեռու՝ լեռները, ապա ավելի ապահով վայրեր: Հետախույզների կողմից վերահսկվում էր նաև հատկապես սահմանամերձ բնակավայրերում գտնվող կամուրջների և անցուղիների նկատմամբ թշնամու հնարավոր քայքայիչ դիտավորությունների մասին անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը, որոնց պահպանությունը պետական կարևորության խնդիր էր և հակառակորդի կողմից դրանց ոչնչացումը հավասարագոր էր պատերազմի հայտարարման¹⁷: Հետախույզներին կարևոր դեր էր հատկացվում այլ պետությունների դեմ ռազմաքաղաքական ձեռնարկումներում:

Հետախուզության գործի կազմակերպումը կարևորվել է տարբեր ժամանակաշրջանների ազգային-հասարակական մտածողների, քաղաքական գործիչների կողմից, այդ թվում նաև Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների օրոք, որով զբաղվել են ինչպես առանձին պետական մարմիններ, այնպես էլ արքայի կողմից նշանակվող առանձին պաշտոնյաներ, պետական զինվորական այրեր: Դեռևս միջնադարում հանրահայտ **«Դատաստանագրքի»** հեղինակ **Մխիթար Գոշը** կարևորել է հետախուզության գործը պետության մեջ, շատ հստակ արձանագրելով այդ փաստը. **«Վայել չէ թագավորի եւ իշխանի համար զողեր եւ ավագակներ ունենալ, այլ միայն լրտեսներ, որ հետախույզներն են»**¹⁸:

Հայ հասարակական-քաղաքական, իրավական մտքի մեկ այլ խոշորագույն ներկայացուցիչ՝ **Շ. Շահամիրյանը** արդեն XVIII դարի վերջին ևս շատ տեղին անդրադարձել է այդ խնդրին, հստակ կարևորելով պետության և բանակի մեջ հետախույզ-լրտեսապետի ունեցած դերակատարումը. **«Տես-**

¹⁷ Տե՛ս **«Մարտիկ»**, 2-9 հոկտեմբեր, թիվ 42 (595), էջ 4, 9-15 հոկտեմբեր, թիվ 43 (596), էջ 4, 16-23 հոկտեմբեր, թիվ 44 (597), էջ 4, 23-30 հոկտեմբեր, թիվ 45 (598), էջ 4, 2004 թ.:

¹⁸ **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, Գ խմբագր., Եր., «Իրավունք», 2008, էջ 46: **«Գողս և առական ոչ վայել է թագաւորի և իշխանի, քայց միայն լրտես, որ է ջաշուշ»... «Իսկ զողս թագաւորի եւ իշխանի ոչ վայել է, քայց միայն լրտես»** // **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 31, 303:

նելով Բարձրահայք Արտաշատ գավառի¹⁹ ժողովրդի ընդունելությունն ու նրանց փոխանորդության թուղթը քեզ և հայոց տանուտերերի ատյանի առաջ քո երդմամբ սրտանց համոզվելով Հայոց տանը քո հավատարիմ լինելու մեջ՝ քեզ՝ խորամիտ Պետրոսիդ հայոց Բարձրահայք աշխարհի սահմաններում, Նախիջևան քաղաքում և նրա շրջակա տարածքում, երեք տարի ժամանակով շնորհեցիք *լրտեսապետի պաշտոն*, որ խորամիտ Պետրոսդ հաստատուն մնաս իբրև *լրտեսության պետ*: Քեզ իշխանություն տվեցիք, որ Հայոց տան ծախսով խաղաղության ժամանակ՝ տասներկու, իսկ պատերազմի ժամանակ երեսունվեց խելամիտ ծառայողներ վերցնես՝ լռելյայն շրջեցնելով նրանց Հայաստանյայց երկրի երեսին և օտար աշխարհում՝ հայոց թշնամիների կամ դրացիների երկրում, ամենայն զգուշակություն քանզի ձեռք բերելով ամեն տեսակ տեղեկություններ, ինչ կարգի էլ որ նրանք լինեն, յուրաքանչյուր շաբաթ երեք օրինակից մանրամասնորեն գրառելով թղթի վրա՝ մեկը հանձնես Նախիջևան քաղաքի իշխանին, երկուսից մեկը շնորհ անես Հայոց տան պալատին, իսկ մյուսը՝ հայոց նախարարի խորհրդարանին: Եվ թող Հայոց տան կարգադրությամբ արգելք դրվի քո ձեռքին ու բերանին, որպեսզի լռելյայն և գաղտնի ամեն բան, ինչ լուր էլ այն լինի, չխտսվի ու չգրվի որևէ մեկին, բացի երեք պալատներից, ինչպես քեզ հրամայեցիք վերևում: Չանք պիտի թափես և հավատարմորեն հոգատար լինես Հայոց տան հանդեպ: Գրվեց բարձրագահ պալատում... և

¹⁹ Որոգայք փառաց, Շարաղրեալ Յակոբայ Ըսահախրեսանց, Եր., Հայաստան, 2002, էջ 101-102: Գրաբարայդ տեքստն ունի հետևյալ տեսքը. «Տեսնելով մեր ընդունելությունն ժողովրդեան աշխարհին բարձրայ հայոց ՚ի գաաառեն պրտաշատայ, և թողթ փոխանորդութեան մոցայ ընդ քեզ, և երդմնելով քոյ առաջի առննի տանտտերաց հայոց հաստատեցաք սիրտ մեր հաատարիմ քեզ ՚ի վերայ տանն հայոց, տաաք պաշտոն լրտես պետութեան քեզ, երկայնամիտ Պետրոսիդ ՚ի մէջ քաղաքի Նախիջիվանու և շորջ վիճակի նորայ ՚ի յերեսս երկրի աշխարհին բարձրահայքայ հայոց Պետրոսդ կազցես և մնասցես պետ լրտեսութեան, և տաաք իշխանութիւն քեզ, որ ծախիւքն տանն հայոց առնես սպասաւորս երկրտասան ՚ի ժամանակս խաղաղութեան, և երեսուն և վեց ՚ի ժամանակս պատերազմի այրս երկայնամիտ, շրջեցուցա մեղով նոցայ ՚ի յերեսս երկրին հաստատմեաց, և ՚ի տարր յաշխարհ երկիրն թշնամեաց և դրացեաց հայոց լռելեան, և ամենայն զգուշութեամբ հանելով ամենայն լուր գոր ինչ և իցէ ամենայն շաբաթու մանրամասնաբար շարելով ՚ի վերայ երխ թղթու, մինն յանձնեսցես իշխան քաղաքի նախիջևանու, երկուքն ընծայեսցես մինն ՚ի ծածուկ խորհրդարանն նախարարին հայոց, և ՚ի կարգադրութեմ տանն հայոց, փակեալ լիցի ձեռ և բերանն քոյ, որ ամենայն գոր ինչ յուր լռելեան և գաղտնի մի խօսել և գրել յամեք բայց ՚ի երխ դրունս որպէս հրամայեցաք քեզ ՚ի վեր, և ջանալով հոգացես հաստատումաբար տանն հայոց, գրտուցաւ ՚ի դրունս բարձրագահ և աշխ» // տե՛ս Գիրք անուանեալ ՈՐՈՒՍԱՅԹ ՓԱՌԱՅ, Թիֆլիս, Էլեքտրատպ. յր. Ն. Աղանեսանի, Պոլից, 1913, էջ 192-193:

այլն»²⁰: Մեկ այլ տեղ խնդիր էր դրվում պատերազմի ժամանակ թշնամուր
վնասազերծելու և խստագույն պատժելու մասին. «Պատերազմի ժամանակ
բռնված թշնամական ամեն մի լրտես անմիջապես մահապատժի պետք է
ենթարկվի»²¹:

Հետախույզները բոլոր ժամանակներում եղել են պետության անտես
աչքերը՝ հառված դեպի թշնամին: Հետախույզները պետության անտեսա-
նելի, ամենահավատարիմ և պատրաստված զինվորներն են թշնամու մեջ:
Այդ մասին դիպուկ է նկատել հանրահայտ հայ հետախույզ, բոլոր ժամա-
նակների և մասնավորապես Երկրորդ աշխարհամարտի լեգենդար հետա-
խույզներից մեկը՝ **Գևորգ Վարդանյանը**. «*Հետախույզի մասնագիտությունը
հեռու է ռոմանտիկ արկածախնդրությունից և իրականում նրա հիմքում
դրված են ինքնամոռաց մվիրվածությունն ու քրտնաջան աշխատանքը:
Հնուց ի վեր բոլոր ազգերի հետախույզները զբաղվում են տեղեկույթի հայ-
թալթամամբ, ընդ որում այնպիսի տեղեկույթի, որը հատկապես թաքցվել և
թաքցվում է «օտար աչքերից»:*

*Հետախույզի աշխատանքը պահանջում է ստեղծագործական մոտե-
ցում, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում «մանրուքներից» և բոլորին հայտ-
նի տվյալներից անել պետությունների համար երբեմն ճակատագրական
նշանակություն ունեցող հետևություն: Այդ իսկ պատճառով, հետախույզից
պահանջվում է ոչ միայն մտավոր և հոգեբանական զերազանցություն, այլև
ֆիզիկական պատրաստվածություն, նպատակասլացություն, տոկունու-
թյուն, աշխատասիրություն և այլն:*

*Պատմությանն ուղղված հետադարձ հայացքը նկատելի է դարձնում,
որ նշված հատկանիշները բնորոշ են մեր ազգի ներկայացուցիչներին: Մեզ
այդպիսին են դարձրել անցած հազարամյակները՝ հայրենի երկրի պաշտ-
պանության համար մղվող պայքարը, պետականության վերականգնման
գոյամարտը, ռեսուրսների սակավությունը:... Հավանաբար, դա է պատճա-
ռը, որ հետախույզության բնագավառում հայերն աչքի են ընկնում այնպիսի
փայլուն մասնագետներով, որոնց անմիջական մասնակցությամբ ու ղեկա-*

²⁰ Ըստ հեղինակների կողմից բերված ծանոթագրության Արտաշատը ոչ թե Բարձր Հայ-
քի, այլ Այրարատ նահանգի մեջ է մտել // **Որոգայթ փաստաց**, Եր., «Հայաստան», 2002, էջ 279:

²¹ Նույն տեղում, էջ 202:

վարությամբ հիմնվել են հետախուզական կառույցներ, իսկ հետագայում՝ օպերատիվ գործունեության նոր ուղղություններ»²²:

Այս տեղից ակնհայտ է դառնում, որ պետաքաղաքական զարգացման ցանկացած փուլում և ցանկացած հասարակարգում հատուկ ծառայությունները՝ հետախուզական և հակահետախուզական համակարգերը պետական կառույցի անքակտելի բաղկացուցիչ մասն են եղել և դեռ երկար ժամանակ կլինեն այդպիսին, առանց որի ոչ մի պետություն գործնականում չի կարող երկար գոյատևել: Այդ ծառայությունների գործունեությունը ըստ էության նպատակաուղղված է որոշակի հիմնախնդիրների լուծմանը, որոնց իրագործման գլխավոր դերակատարները հետախույզները և հակահետախույզներն են: Ընդ որում հարկ է նշել, որ իրենց գործելակերպում հետախուզական և հակահետախուզական ծառայությունները սերտորեն շաղկապված են միմյանց հետ, և գործնականում չեն կարող արդյունավետորեն գործել առանց մեկը մյուսի: Ի դեպ, հարկ է նաև հատուկ ընդգծել, որ Հռոմեական Մեծ կայսրության մեծադղորդ հաղթարշավներում իրենց անգնահատելի և անուրանալի վաստակն են ունեցել տերության հատուկ ծառայություններում ընդգրկված անձնավորությունները՝ հետախույզները, որոնք տեղին և անվրեպ հաջաթել են ամհրաժեշտ տեղեկատվությունը հակառակորդի հնարավոր գործողությունների պլանների, զորքերի տեղաշարժերի, տեղաբաշխման, թվաքանակի և այլ կարևոր հարցերի վերաբերյալ: Հատուկ ծառայությունների պատմությունը վկայում է, որ Մեծ Բրիտանիան կայսերական գաղութային քաղաքականության իր զավթողական նպատակադրումներում կարևոր տեղ է հատկացրել հետախուզական կառույցներին, որոնց գործունեության արդյունավետ կազմակերպման համար հատկացվել են ֆինանսական-մարդկային ռեսուրսներ, որոնցից խմամքով և բծախնդրությամբ առանձնացվել են արհեստավարժ կադրեր, ինչն էլ գործնականում և ըստ էության ապահովել է բրիտանական իշխանությունների ավագակային-թալանչիական գաղութային ծրագրերի իրականացումը:

Եվ այսօր ևս, հետախուզական և հակահետախուզական կառույցները անխզելիորեն կապված են իրար հետ, իրողություն է դարձել նրանց կառուցվածքային միասնությունը, որի իրագործումը մենք փաստացիորեն տեսնում ենք նաև Առաջին Համապետության հատուկ ծառայությունների

²² Տե՛ս Ա . Ե. Մարգարյան, Հետախուզություն և հակահետախուզություն: Հայկական հետք (կենսագրական ակնարկներ հետախույզների և հակահետախույզների մասին), Եր., «Ամառաս», 2005, էջ 5-6:

գործունեությունում, որը դրսևորվում էր միասնական Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի ստեղծման մեջ, որը գործում էր Զինվորական նախարարության Գլխավոր շտաբին առընթեր:



Առաջին Համաշխարհային պատերազմի աշխարհաքաղաքական արդյունքները արմատական փոփոխություններ մտցրեցին Անդրկովկասյան տարածաշրջանի քաղաքական քարտեզի բովանդակությունում և դրսևորման ձևերում: Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջմամբ առաջ եկած ցնցումները և քաղաքական տեղատվությունները երկարատև բնույթ ունեին և իրենց ոլորտի մեջ առան գրեթե ողջ աշխարհը, այդ թվում՝ Հայաստանը: Հայկական Հարցի հանգուցալուծման բոլոր հնարավոր տարբերակները մեկը մյուսի ետևից փրկվեցին, նախկին պայմանագրերը և պայմանավորվածությունները կորցրեցին իրենց երբեմնի ուժն ու անկախ ազգային պետականությունների որոնման ձգտումների դժվարին ճանապարհին կանգնած ժողովուրդներին (Հայեր, մակեդոնացիներ, արաբներ, սլովեններ և այլն) կանգնեցրին ճակատագրական երկընտրանքների և աշխարհաքաղաքական բարդությունների առաջ: Այդպիսի անբարենպաստ աշխարհաքաղաքական և դժվարագույն ռազմական կացություն մեջ, երբ թուրք Հրոսակները, իրականացնելով արևմտահայություն նախճիրը, բախում էին Արևելահայաստանի դռները, 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որի անդրանիկ կառավարության լիազորությունները ստանձնած Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը ոչ միայն իրեն հռչակեց որպես Հայկական դավառների ղերագույն իշխանություն, ապա նաև պետական իշխանություն ստեղծող, այլև իր առաջնակարգ խնդիրներից մեկը համարեց ամեն մի պետության համար կենսականորեն անհրաժեշտ գործի՝ հետախուզության և հակահետախուզության մարմինների կազմակերպումը որպես պետական անվտանգության համակարգի կարևորագույն հիմքի: Այդ ուղղությամբ ընթացող գործընթացները բարդ էին, հակասական և ոչ միանշանակ, որոնք պայմանավորված էին տարածաշրջանում գործող աշխարհաքաղաքական ուժերի դասավորվածությամբ և նրանց միջև մղվող պայքարի ուժգնությամբ: Հայաստանի Առաջին Հանրապետության կազմավորումը և կայացումը (1918 թ. մայիսի 28 -1920 թ. դեկտեմբերի 2) ընթանում էր ծանրագույն ռազմաքաղաքական և տնտեսական իրավիճակում: Անհրաժեշտ էր կարճատև պատմական ժամանակամիջոցում ոչնչից ստեղծել պետական-քաղաքական ուժային անհրաժեշտ կառույցներ՝ բանակ, ոստիկանություն (միլիցիա), հատուկ ծառայություններ և այլ հանգուցյան, առանց որոնց անհնարին է անգամ պատկերացնել ցանկացած կազմակերպված պետության գոյությունը և ինքնուրույնությունը առհասարակ: Այս առումով կարևոր է հստակ ըմբռնել, որ պետությունն առհասարակ, նրա ինքնուրույնությունն ու քիչ թե շատ լիարժեք արտաքին քաղաքականությունը, և վերջին հաշ-

վով, ազգային-պետական անվտանգությունն անհնարին է պատկերացնել առանց այդ համակարգի բաղկացուցիչը կազմող հետախուզական և հակահետախուզական գործի հիմնավոր կազմակերպման, և այդ տեսանկյունից շատ դիպուկ է նկատել Տիգրան Դեվոյանցը²³. «*Հետախուզութիւնը պետութեան աչքն ու ականջն է: Հետախուզական բաժանմունքը խաղաղ ժամանակ կը պատրաստուի պատերազմի համար եւ անդադար կուտուննաիրէ թշնամիի ու ժերու դասաւորութիւնը, զօրաշարժի յատակադիրը, զօրքերու տեսակներն ու որակը, ամրութիւնները, հաղորդակցութեանց միջոցները, կապը, մթերքներն ու ռազմամթերքի պահեստները, բերքը, ժողովրդի տնտեսական եւ առողջապահական վիճակը, անոր տրամադրութիւնը, ազգութիւններու փոխյարաբերութիւնը եւ անոնց վերաբերմունքը դէպի պետութիւնը, պահեստի զօրամասերը, հրամանատարներու բնաւորութիւնը, գետերու խորութիւնը տարւայ չորս եղանակներուն, անցնելիք տեղերը, նոր շինող ճանապարհները, օդակայանները եւ այլն, եւ այլն: Հետախուզական բաժանմունքին կը վերաբերի նաեւ՝ աշխատիլ փչացնել թշնամիի հաղորդակցութեանց միջոցները, պայթեցնել ռազմամթերքի պահեստները, այրել պաշարները, հիւանդութիւններ տարածել մանրէներու միջոցաւ, ապստամբութիւններ, ներքին խռովութիւններ առաջ բերել թշնամիի երկրի ներսը, կապվիլ անոնց հեռախօսի եւ հեռադրի թելերու հետ, բանալ ծածկադիր հեռադիրները: Մի խօսքով, հմուտ հետախոյզը իր գործելակերպի եւ գործունեութեան մեջ ո եւ է սահման չունի, նա պետք է շարժի պահանջի և պայմաններու համեմատ»²⁴:*

Այս աշխատանքն էլ հենց վերաբերվում է Հայաստանի Առաջին Հանրապետութեան հետախուզութեան և հակահետախուզութեան, հատուկ ծառայութիւնների ողջ համակազմի աշխատանքի կազմակերպմանը, նպատակամղմանը ազգային-պետական անվտանգութեան բարդագույն խնդիրների լուծմանը: Սակայն այդ խնդրի իրագործումը զգալիորեն դժվարանում է այն հանգամանքով, որ այս հարցի վերաբերյալ սուղ տվյալներ կան արխիվներում կամ գրեթե չկան: Հաճախ խաբուսիկ տպավորութիւն է ստեղծվում, թե այդպես էլ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը չի ունեցել ազգային անվտանգութեան այդ կարևորագույն կառույցները, կամ էլ ի վիճակի չի եղել ստեղծել դրանք: Սակայն նույնիսկ առկա փաստերը, որոնք մենք հայթայթել ենք արխիվներից, հիմք են տալիս մեզ եզրակացնելու, որ դրանով զբաղվող մարդիկ եղել են, որ կառավարութիւնը փորձել է իր շատ հա-

²³ Դեվոյանց Տիգրան Թարևաի [<1890թ.>, Երևան - 02. 09. 1965թ., Բելգիա] - Սովորել է Տոմսկի համալսարանի լեռնային-ճարտարագիտական ֆակուլտետում, մասնկալարժ: Հայտնի է *Դևո, Խոյր, Դեօ* և այլ ծածկանուններով. - տե՛ս Հովակիմյան Բ. Մ. Հայոց ծածկանունների բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 596. - Օգտագ. արբ յուրները՝ «Հորիզոն» [Թիֆլիս], 1914, N 230, 233, «Армянский вестник» [Москва], 1916, N 33, стр. 24. «Кавказское слово» [Тифлис], 1914, N 28-30, 34-36, 1918, N 117:

²⁴ Տիգրան Դեվոյանց, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ» (Փարիզ), 1938, Զ տարի, քի 3, Յունիս-Սեպտեմբեր, էջ 59:

մեստ բյուջեից գումարներ հատկացնել այդ գործի կազմակերպման համար, ուղիներ է որոնել, հաջողությունների է հասել և ցավալի սայթաքումներ ունեցել: Գործելով 1918 -1920 թվականների դժվարին պայմաններում, այդ կարևոր կառույցը կամ ավելի ճիշտ ստորաբաժանումը, ցավոք սրտի, չհասցրեց ժամանակի ընթացքում դառնալ լիովին ինքնուրույն ծառայություն կամ ասենք վարչություն, ինչպես դա կարելի է տեսնել այդ ժամանակաշրջանի քիչ թե շատ լուրջ ու հզոր, կենսունակ որևիցե պետություն օրինակով: Արևիվային բազմաբնույթ փաստաթղթերի ուսումնասիրությունը բերում են այն եզրակացություն, որ 1918 -1920 թթ. ՀՀ կառավարությունը ձգտում էր ունենալ ոչ միայն պետականության գաղափարի ըմբռնման և կայացման տեսանկյունից այնպիսի կարևոր կառույցներ, ինչպիսիք էին բանակը, բանկը, խորհրդարանը և այլն, այլև բնականաբար՝ ամեն մի պետության ազգային անվտանգության ապահովումը երաշխավորող անհրաժեշտ կառույցներ՝ հատուկ ծառայություններ՝ թե հետախուզություն և հակահետախուզություն, և թե ներքին գործերի մարմինների սկզբունքորեն լիարժեք ուժային համակարգ, միլիցիա, այսինքն՝ անվտանգության քիչ թե շատ ավարտուն լիարժեք համակարգ, որը կծառայեր Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության տարաբնույթ խնդիրների լուծմանը, անվտանգության տարբեր խնդիրների հանգուցալուծմանը տարածաշրջանում, հանրապետության դեմ ուղղված թշնամական մեքենայությունների ու սադրանքների բացահայտմանը և կանխմանը: Հենց այդ կարգի նկատառումներից էլ ելնելով, արդեն 1918 թ. երկրորդ կեսին առաջացած շատ բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում էլ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ եղավ պետական ազգային անվտանգության համակարգի մարմինների ձևավորմանը և գործունեության ուղղորդմանը: Կազմակերպական-ֆինանսական և կադրային խնդիրների լուծման տեսանկյունից առաջին իսկ քայլերը կատարվել են հանրապետության հուլիսից անմիջապես հետո: Այսպես, դեռ 1918 թ. օգոստոսի 13-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը լսում է ռազմական նախարարության՝ իրեն միջոցներ բաց թողնելու միջնորդության մասին՝ ծածկելու համար ավիացիայի, հետախուզության, ռադիոհեռագրի վրա ծախսված գումարները: Նախարարների խորհուրդը՝ քննարկելով հարցը, որոշում է վանություն տալ ձեռնարկված քայլերին, ինչպես նաև կառավարության վարկի հաշվին բաց թողնել 6 միլիոն ռուբլի՝ ա) չնախատեսված ծախսերի համար հատկացնել 20 հազար ռուբլի, բ) հետախուզության համար՝ 20 հազար ռուբլի, և գ) հակահետախուզության համար ևս՝ 20 հազար ռուբլի՝ հետախուզական ծառայության կազմակերպական-քաղաքական հիմնախնդիրների լուծման համար (օրինակ, հարևան Վրաստանի Հանրապե-

տուժյունն իր հետախուզութան կարիքների համար կարողանում էր հատկացնել ավելի պատկառելի գումարներ)²⁵: Իսկ արդեն Զինվորական գերատեսչության գծով 1919 թ. ապրիլի 14-ի հրամանագրից տեղեկանում ենք, որ ՀՀ ռազմական նախարարության Գլխավոր շտաբում ստեղծվել է ուսկանել գործունեություն ծավալել **Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքն** իր փոքրաթիվ անձնակազմով:

Առհասարակ, հայթայթված արխիվային տարաբնույթ վավերագրերը ուղղակիորեն կամ անուղղակիորեն վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետության կառավարող գործադիր մարմինն՝ Նախարարների խորհրդին, մշտապես մտահոգել են ռազմական շինարարության և պետական անվտանգության համակարգի տարբեր օղակների ու ստորաբաժանումների ձևավորման հարցերը, այդ թվում և հետախուզական ու հակահետախուզական ծառայության կազմակերպման հարցերը, որոնց աշխատանքների ծավալման համար գործադրվել են իրական ջանքեր և հատկացվել են որոշակի գումարներ, թեկուզև ոչ շատ մեծ: Այսպես, ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. սեպտեմբերի 1-ի նիստը, որում նախագահել է մինիստր-նախագահ և Արտաքին Գործերի նախարար **Ա. Խատիսյանը**, քննարկեց նաև Զինվորական նախարարի զեկուցումը հետախուզության և հակահետախուզության ծախսերի համար 535 հազար ռուբլի վարկ բաց անելու մասին: Նիստը միաձայն որոշում ընդունեց հավանություն տալ և խնդրել պառլամենտի զինվորական հանձնաժողովին բաց թողնել այդ գումարը, ինչը հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման առումով կարևոր ազդակ հանդիսացավ²⁶: Հայկական պետության անվտանգության կարևոր բաղկացուցիչներ հանդիսացող հետախուզական մարմինների ձևավորման խնդրով է զբաղվել նաև Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 8-ի նիստը (նիստ 254...) **Հ. Օհանջանյանի** գլխավորությամբ, որը լսելով Զինվորական նախարարի զեկուցումը հետախուզության և հակահետախուզության բաժանմունքին մայիս ամսվա ծախսերի համար 657 հազար ռուբլի բաց թողնելու մասին հարցը, որոշում ընդունեց նշված գումարը բաց թողնել 40 միլիոնանոց հատուկ ֆոնդից²⁷: Սակայն առկա փաստաթղթերի մանրագնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կազմակերպական-ֆինանսական խնդիրներն այդ բնագավառում հեշտությամբ չէին լուծվում, երբեմն էլ արհեստական խոչընդոտներ էին հարուցվում, որոնք դժվարացնում էին հայկական հետախուզական ծառայությունների աշխատանքները, հաճախ վերջիններիս գործնականում կանգնեցնում փակուղու առաջ: Դա բավականաչափ հստակ է երևում 1919 թ. մայիսի 2-ի Գլխավոր շտաբի պետին հասցեագրված (N^o

²⁵ Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 484, ք. 9, Ֆ.Պ -202, ց. 1, գ. 13, ք. 12, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 216, ք. 1:

²⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (85), ք. 194, գ. 229, ք. 1:

²⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 146 (149), ք. 82, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 107, մաս II, ք. 87:

P07) զեկուցագրից, որում հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հովհան Խան-Կոտուրսկին նշում էր, որ հետախուզական բաժնի գործունեությունը ընդարձակման և հարևան երկրներում նոր կետերի բացման հետ կապված անհրաժեշտ է հոգ տանել այն մասին, որպեսզի Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հետախուզությունը գործակալները ինչ-որ աշակցություն ունենային իրենց երկրի դիվանագիտական ներկայացուցիչների կողմից: Փաստաթղթում ասվում էր, որ հետախուզության սպան «ձախողման» դեպքում պաշտոնապես չի օգտվում պաշտպանության իրավունքից և իր սեփական ռիսկի հաշվին է աշխատում: Այդ կապակցությամբ շեշտվում էր, որ այդ ամենի հետ մեկտեղ հետախուզիչի աշխատանքում էական աշակցություն (անշուշտ, ոչ պաշտոնապես) կարող են ցույց տալ դիվանագիտական ներկայացուցչությունները (միախաները), ինչը և գոյություն ունի բոլոր երկրներում, և ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ հետախուզության գլուխ միշտ էլ կանգնած են լինում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները: Զեկուցագրում միաժամանակ աստատանք էր արտահայտվում, որ Հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները հետախուզության գործակալների իրենց դիմելու դեպքում միանգամից վախենում են և մերժում վերջիններին, բացատրելով, որ տազնապում են հնարավոր «դիվանագիտական բարդացումներից», իսկ եթե երբեմն էլ որոշ օգնություն են ցուցաբերում, ապա ոչ այնքան հմուտ ձևով և հետախուզության գործակալին դնում են ամենառիսկոտ դրություն մեջ, ավելացնելով, որ դա ինքն իր վրա է զգացել (Ս. Կոտուրսկին - ընդգծումը մերն է՝ Վ. Վ.): Խան-Կոտուրսկին վերը նշված զեկուցագրում նաև գտնում էր, որ անհրաժեշտ է հարաբերության մեջ մտնել Արտաքին Գործերի նախարարության հետ և խնդրել, որպեսզի վերջինս կարգադրություններ անի բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Թուրքիայի շրջանակներում, և համապատասխան ձևով նշել, որ աշակցությունը հետախուզության գործակալներին նրանց աշխատանքում ուղղակի ներկայացուցչությունների պարտականությունն է: Զեկուցագրում նաև նշվում էր, որ այդ աշակցությունը պետք է գլխավորապես կայանա փաստաթղթերի փաթեթների ուղարկման և տարբեր շրջանները ուղևորությունների ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի ստացման համար աշակցության ցուցաբերման մեջ: Զեկուցագրի վերջնամասում նշվում էր, որ ներկայացուցչության աշխատանքներից բացի, պետք է բոլոր միջոցները ձեռնարկվեն, որպեսզի իրենց անզգուշ գործողություններով չձախողեն հետախուզության գործակալներին: Զեկուցագրում նաև ասվում էր, որ մանրամասն հրահանգները, թե ինչում պետք է արտահայտվի ներկայացուցչությունների օգնությունը, տեղում կարող են տրվել հետախուզության սպայի կողմից²⁸: Այդ նույն զե-

²⁸ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 24:

կուցագրի վրա Խան-Կոտուրսկին նաև մականգրել է, որ ինքը միջնորդում է ներկայացուցչութունների առաջ՝ օգնութուն ցուցաբերել: Դիմումագիրը հասցեագրված էր **Ալ. Շնեուրին**, որին և հանձնարարվեց հարցի պրակտիկ կողմի մշակումը²⁹: Եվ արդեն 1919 թ. մայիսի 21-ին Զինվորական նախարարութան Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականութունները կատարող փոխգնդապետ Ալ. Շնեուրը Զինվորական նախարարին ուղղված դիմումագրում խնդրում էր վերջինիս միջնորդութունը Արտաքին Գործերի նախարարութան միջոցով աջակցել հետախուզութան աշխատակիցներին³⁰: Այս փաստաթղթի տակ ևս կար Հ. Խան-Կոտուրսկու ստորագրութունը: Այդ նույն օրը Հայաստանի Զինվորական նախարար գեներալ-մայոր **Արարատյանը (Արարատյան Քրիստափոր Գեորգիի)** (18 Հուլիսի, 1876 թ. - 10 դեկտեմբերի, 1937 թ.³¹) գաղտնի գրությամբ դիմում է Արտաքին Գործերի նախարարին, կցելով նաև Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի զեկուցագիրը՝ կապված Արտաքին Գործերի նախարարութան աստիճանավորների և Զինվորական նախարարութան գործողութունների ուղղորդման հետ: Դիմումագրում Զինվորական նախարարը խնդրում էր կարգադրութուն անել ամենաինտենսիվ օգնութուն ցուցաբերելու հետախուզութան աշխատակիցներին, որոնք դիմում էին Արտաքին Գործերի նախարարութան ներկայացուցիչներին Հայաստանի սահմաններից դուրս: Գեներալ-մայոր Արարատյանը նշում էր, որ մանրամասն տվյալները, թե ինչու և պետք է արտահայտվի հետախուզյուններին ցուցաբեր-

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ **Արարատյան (Արարատու) Խաչատուր Գեորգիի** [18.06.1876 թ. - 10.12.1937 թ.] – Գեներալ-մայոր: Ակտիվորեն մասնակցել է 1918 թ. մայիսյան Բաշ-Ապարանի և Սարդարապատի ճակատամարտերին, այնուհետև հոկտեմբերին գլխավորել է Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև սահմանների հաստատման հանձնաժողովը, 1919 թ. մարտից մինչև 1920 թ. սկիզբը եղել է Հայաստանի զինվորական նախարարը: Պաշտոնից հեռացվել է ՀՅԳ կուսակցության անդամ դառնալուց հրաժարվելու համար: 1920 թ. աշմանը մասնակցել է թուրք-հայկական պատերազմին և դավաճանության հետևանքով գերի ընկել: Հետաքրքիր է նաև նշել, որ թուրքական բանակի հրամանատար **Քյազիմ Կարաբեղլու փաշայի** կողմից Ք. Արարատյանին առաջարկ է արվել թուրքական ռազմական ակադեմիայում դասավանդելու հրետանային պատրաստության դասընթաց, սակայն վճռաբար մերժվել է վերջինիս կողմից: Թուրքական զբոսայգուից ազատվել է Խորհրդային Հայաստանի հանրահայտ դեկավար և ականավոր պետական գործիչ **Ալեքսանդր Մյասնիկյանի** համար ջանքերի շնորհիվ, և նրա իսկ առաջարկով գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյանը 1923 թ. զբաղեցրել Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալի պաշտոնը: Չորսգրվելուց հետո գեներալ-մայոր Քրիստափոր (Խաչատուր) Արարատյանը եղել է Երևանի պետական համալսարանի և գյուղատնտեսական ինստիտուտի ռազմագիտության ամբիոնների վարիչ. – Տե՛ս **Տիգրան Հայկան [Տիգրան Պետրոսյան], Պարեգիմ Կազարյան**, 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ: Կենսագրական հանրագիտարան, Եր., Հեղ. հրատ., 2009, էջ 120 - 121: **Маршалы, генералы и адмиралы армянского происхождения**. Биографический справочник. Изд. Второе, допол. // Составитель **Армен Меружаян**, Санкт-Петербург, Изд-во “Роза ветров”, 2013, стр. 46 - 47:

վող աշակցութիւնը և գործողութիւնները ընդհանրութիւնը, անհրաժեշտ է պարզաբանել տեղում՝ հետախուզութեան բարձր աստիճանավորների բանակցութիւններում դիվանագիտական ներկայացուցչութիւնների ղեկավարների կամ անձնակազմի հետ³²:

Դեռ 1919 թ. ապրիլի սկզբին ևս մի կարևոր քայլ էր կատարվել Արտաքին Գործոց նախարարութեան և Հայաստանի հետախուզական ծառայութիւնների միջև աշխատանքներն ուղղորդելու ուղղութեամբ մեկ այլ կարևոր բնագավառում: Այսպես, 1919 թ. ապրիլի 9-ի որոշմամբ Արտաքին Գործերի նախարարութեանը կից ստեղծվում է Տեղեկատվական բյուրո: Սույն փաստաթղթում ասվում էր, որ Տեղեկատվական բյուրոյի գործունեութիւնը պետք է նպատակամղվի հակահետախուզական բաժանմունքի առջև կանգնած խնդիրների իրագործմանը, և գտնվի Զինվորական նախարարութեան վերահսկողութեան ներքո: Տեղեկատվական բյուրոյի գործունեութեան շրջանակներին վերաբերող տեղեկութիւնների շարքին էին դասվում. 1) ռազմական բնույթի տվյալները, գործառնների տեղաբաշխման, գինվածութեան և գինմատակարարման մասին և այլն, 2) հարևան երկրների կառավարութիւնների կողմից ընդունվող քաղաքական բնույթի միջոցառումները, էմիգրական (գործակալական) շարժումը, մամուլի նկատմամբ հետաքննչական վերահսկողութեան ուժեղացումը: Այս կարևոր փաստաթղթում նաև շեշտվում էր, որ բյուրոն պետք է աշխատի ռազմական հակահետախուզութեան հետ սերտ առնչութիւնների պայմաններում, օգնելով և թեթևացնելով մեկը մյուսի աշխատանքը³³: Հարկ է այս կապակցութեամբ մի շատ հետաքրքիր փաստաթղթի ևս անդրադառնալ, որպեսզի ավելի ամբողջականորեն և լիարժեք պատկերացնենք, թե ինչու հենց Արտաքին Գործերի նախարարութեանը կից ստեղծվեց Տեղեկատվական բյուրոն: Այդ կարևոր խնդրի բացահայտման վրա լույս է սփռում Զինվորական նախարարութեան Գլխավոր շտաբի Հատուկ բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար **Ռ. Չալխուշյանի** 1919 թ. ապրիլի 9-ով թվագրված գրութիւնը՝ հասցեագրված Հետախուզութեան ղեկավարներին: Դրանում Ռ. Չալխուշյանը գրում էր, որ դեռ հին ցարական ռեժիմի ժամանակ հայկական ղեկավար շրջանները թույլ են կողմնորոշվել ինչպես նախկին կառավարութեան ձգտումների մեջ, այնպես էլ հարևան ժողովուրդների վարքագծում: Չալխուշյանը գրում էր, որ տեղեկատվութեան բացակայութիւնը իրեն զգացնել տվեց 1917-1918 թթ., երբ հայերը անընդհատ հայտնվում էին հարևան, ավելի ճարպիկ, ավելի քաղաքականապես նրբանկատ ժողովուրդների իշխանութեան տակ: Հետևաբար, ըստ Չալխուշյանի, Տեղեկատվական բյուրոյի կազմակերպման գաղափարը միանգամայն օրինաչափորեն առաջացավ 1917-1918 թթ., և կիրառվեց Թիֆլիսում, սակայն այնտեղ փաստորեն հանգեցվեց գերութիւնից փախածների

³² Տես ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 23:

³³ Նույն տեղում, ք. 9:

մեջ հարցումներ անցկացնելուն, թերթերից պատասխիկներ հանելուն, և այլն: Ըստ Չալխուշյանի, սովորաբար տեղեկատվական գործունեությունը պետք է ծառայեր Զինվորական նախարարության Հետախուզական բաժանմունքը, սակայն քանզի վերջինիս համար այն դժվար էր իր պետություն սահմաններից դուրս տարածել, այդ իսկ պատճառով էլ նպատակահարմար գտնվեց տեղեկատվությունը կենտրոնացնել Արտաքին Գործերի նախարարությունում, որի ներկայացուցիչները օգտվում են էքստերիտորիալության (անձեռնմխելիություն) իրավունքից, փաստորեն նրա դերը հանդեպնելով Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի դերին՝ սակայն Հայաստանի սահմաններից դուրս, սկզբնապես Վրաստանում և Ադրբեջանում, ինչը կախված էր հայկական պետության փաստացի հնարավորություններից, և առաջին հերթին՝ տնտեսական և կադրային-մարդկային գործոններից: Ըստ այդ մտահղացման, այդ բաժանմունքի ղեկավարությունը պետք է կենտրոնանար Արտաքին Գործերի նախարարությունում, թեկուզև այն գաղտնի բաժանմունք անվանելով, կամ ասենք՝ Տեղեկատվական բաժանմունք: Զինվորական և Արտաքին Գործերի նախարարությունների միջև կայացած համաձայնությունամբ էլ Վրաստանում և Ադրբեջանում պետք է նշանակվեին զինվորական կցորդներ, որոնց ձեռքին էլ պետք է կենտրոնանար նշված երկրներում անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը, որոնց թվին առաջին հերթին դասվում էին՝ 1) գործառայության, հանդերձանքի, գործերի տեղաշարժերի և այլնի մասին ռազմական տեղեկությունները, 2) հարևան պետության կողմից ընդունվող քաղաքական բնույթի գործողությունները, գործակալական շարժումը, մամուլի նկատմամբ հակողությունը, 3) տեղեկությունները, որոնք կարող էին հետաքրքրություն ներկայացնել նախարարության համար, հարևան երկրների կողմից հպատակ հայերի նկատմամբ ձեռնարկվող միջոցները: Ավարտելով այս չափազանց հետաքրքիր փաստաթղթում ներկայացված մտքերի ամփոփումը, վերջնամասում Չալխուշյանը հատուկ ընդգծում էր, որ բյուրոն պետք է աշխատի և ռազմական հակահետախուզության հետ սերտ փոխհամագործակցության ու բազմակողմանի կապերի պայմաններում, փոխադարձաբար օգնելով միմյանց իրենց հայրենանվեր աշխատանքում³⁴: Այդպես էլ տեղի ունեցավ, թիֆլիսի Ազգային խորհրդի 1918 թ. հուլիսի 3-ի որոշմամբ բյուրոն հաստատվեց, որը տեղեկություններ ձեռք բերելով մամուլի և գաղտնի գործակալական ցանցի միջոցով, պետք է չձգնվորական գերատեսչությունը ներկայացներ օպերատիվ և քաղաքական բնույթի տեղեկատվություն: Հետագայում Ազգային խորհուրդն իր 1918 թ. հուլիսի 16-ի նիստում գտնելով, որ Տեղեկատվական բյուրոն պատմականորեն անհրաժեշտ հաստատություն է, որոշեց այն վերցնել չձգնվորական գերատեսչության ենթակայու-

³⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 9, 9 հսկ.:

թյունից և հանձնել ՀՀ Արտաքին Գործերի նախարարությունը՝ ի դեմս Թիֆլիսում գործող հայտնի դիվանագիտական ներկայացուցչության³⁵, որն էլ բնականաբար ինքնին հասկանալի է, քողարկված ձևերով իրականացնում էր հետախուզական գործառնություններ Վրաստանում և նրա շուրջ, հանդիսանալով կենտրոնական նշանակության կառույց, հանգուցակետ ինչպես Վրաստանի, այնպես էլ Ազրբեջանի, Հարավային Ռուսաստանի և այլ հարակից տարածքների նկատմամբ:

Սակայն իրական կյանքն ավելի բարդ էր և գործընթացներն էլ ոչ միանշանակ: Պրակտիկան ցույց տվեց, որ Արտաքին Գործերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության հետախուզական ծառայություն փոխհարաբերությունները ամենևին էլ այնքան հարթ չընթացան, ինչպես կարելի էր սպասել, այլ երբեմն էլ ընթացան փոխադարձ պահանջատիրության և տեղ-տեղ էլ՝ անհարկի քաջքշուկների մթնոլորտում: 1919 թ. հունիսի 18-ին Արտաքին Գործերի նախարարին ուղղված գրությունը (N^o 3833) Գլխավոր շտաբի պետ **Ա. Ծնեուրը** ի պատասխան Զինվորական նախարարի հասցեին 1919 թ. հունիսի 18-ին արտագործնախարարության կողմից հղված դիմումագրում արժարժված ստուգել է բնույթի հարցերի (N^o 2210), խնդրում էր շտապ հաղորդել և առաջիկայում էլ տեղյակ պահել, թե հետախուզական բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկություններից որոնք են դուրս եկել ոչ ճիշտ, ինչպես նաև կատարել դիվանագիտական ներկայացուցիչներից ստացված տեղեկատվության փոխանցում³⁶:

Բյուրոկրատիան ամենուր և ցանկացած իրավիճակում մնում է բյուրոկրատիա, իսկ թղթային քաջքշուկը իրական գործի փոխարեն վերջին հաշվով վնասում էր թե հետախուզության և թե Արտաքին Գործերի նախարարության կողմից ձեռնարկվող գործերի կազմակերպմանը, և դրանց արդյունավետությունը: Արտաքին Գործերի նախարարության գլխավոր քարտուղարը 1919 թ. հունիսի 19-ի գրության մեջ (N^o Po 179)՝ ուղղված Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետին՝ շեշտում էր, որ տվյալ պահին ինքը հնարավոր չի գտնում առանձին փաստերով հայտնել, թե հետախուզական բաժնի կողմից ներկայացված ո՞ր տեղեկությունները և ե՞րբ են ոչ ճիշտ դուրս եկել, սակայն հունիսի 8-ի հետախուզական բաժանմունքի կողմից ներկայացված ամփոփազրի վերջին տեղեկությունները (Թիֆլիսում կատարվող գորահավաքի և Խորհրդային Ռուսաստանի, Գերմանիայի, Վրաստանի, Բուլղարիայի և Թուրքիայի միջև հարաբերությունների մասին) Թիֆլիսից իրենց կողմից ստացված հաղորդագրությունների համաձայն չեն համապատասխանում իրականությանը³⁷: Ինչպես տեսնում ենք, վերը նշված երկու փաստաթղթերն էլ վկայում են նորաստեղծ հետախուզական և հակա-

³⁵ Նույն տեղում, գ. 81, ք. 2-3, 5-8, 11:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում, ք. 32:

հետախուզական ծառայությունների կայացման գործընթացների և նրանց կողմից ձեռնարկվող գործունեություն առջև ծառայած դժվարությունների, երբեմն էլ թույլ տրված սխալների և բացթողումների, ինչու է՝ նաև ձախողումների մասին, որ բոլոր երկրների հատուկ ծառայությունների պրակտիկայում էլ պատահում է: Կայացման գործընթացները դժվար էին, ոչ միանշանակ, իսկ գործնական փոխհարաբերությունները արտգործնախարարության հետ հստակ չէին դասավորվում, որովհետև երբեմն էլ վերջինիս պաշտոնյաները իրենց հեռու էին պահում հետախուզական ծառայություններից, անհարկի չէին վստահում, երբեմն էլ կակածի էին ենթարկում վերջիններիս գործունեությունը, չնայած այն հանգամանքին, որ արտաքին քաղաքական գերատեսչությունը բոլոր երկրներում էլ մշտապես եղել է արտաքին հետախուզական ծառայության գլխավոր կազմակերպիչը և ղեկավարը, ինչը թերևս Հայաստանի պարագայում գալիս էր անփորձությունից և երկչոտությունից: Այս ամենը հանգեցնում էր թյուրբմբնումների և բացասական արդյունքների, վնաս հասցնելով Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգությանը: Վերջ է վերջո, ինչ-որ առաջընթաց կար, թեկուզև ոչ ներդաշնակ և ոչ շատ շոշափելի: Կյանքի հրամայականն էր անհապաղ իրական կապեր ապահովել հետախուզական ծառայությունների և արտգործնախարարության համակարգի միջև, ծառայեցնելով նորաստեղծ Հանրապետության գոյատևման ապահովման աշխարհաքաղաքական խնդիրներին: **1920 թ. մայիսի 8-ին Հայաստանի Առաջին Հանրապետության Նախարարների խորհուրդը, լսելով Զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանում հետախուզական և հակահետախուզական գործի մասին, որոշում է կայացնում այդ գործունեությունը ենթարկել Հայաստանի Հանրապետության զեսպանների հսկողությանը**³⁸:

Ինչպես ակնառու կերպով տեսնում ենք, փուլ առ փուլ համառ ջանքեր էին գործադրվում հետախուզության և հակահետախուզության ծառայությունների աշխատանքների բովանդակությունը հնարավորին չափով ավարտուն և լիարժեք դարձնելու համար, ճշգրտվում էին հիմնական օղակները և ստեղծվում նորերը: Այս ճանապարհին կարևոր քայլ էր արտասահմանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կից զինվորական ներկայացուցիչների (գործակալ, կցորդ, ատտաչե) ինստիտուտի ստեղծումը: Այս առումով, անկասկած, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի գեներալ-մայոր **Գ. Գ. Ղորղանյանի (Ղորղանով - Կորգանով)** բազմաբեղուն գործունեությունը³⁹, որը գտնվում էր Զինվորական նախարարի անմիջական ենթակա-

³⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, գ. 1, գ. 489, թ. 62, Ֆ.Պ - 278, գ. 1, գ. 11, թ. 16:

³⁹ **Գարրիել Գրիգորի Ղորղանյան [3.05.1880 - 8.01.1954 թթ.]** - ծնվել է 1880 թ. մայիսի 3-ին, ազնվականի ընտանիքում, հայրը գեներալ-մայոր **Գ. Գ. Ղորղանյան** էր: Առաջին Համառապետության հռչակման պահից սկսած Ղորղանյանը ներգրավվել է դիվանագիտական աշխատ-

յուլիան տակ: Դեռ 1918 թ. դեկտեմբերի 3-ին Ղորղանյանը Զինվորական նախարարին է ներկայացնում մի ուշադրալ գեկուցում, որում հարց էր բարձրացնում և հիմնավորում այսպես կոչված «զինվորական ազնուների» համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Ղորղանյանը դա համա-

տանքների մեջ որպես ռազմական խորհրդատու: Նա 1918 թ. մայիսի վերջին - հունիսի սկզբին մասնակցել է Բաթումի կոնֆերանսի աշխատանքներին: 1918 թ. հունիսին Ա. Ահաբունյանի, Մ. Պապաջանյանի, Ալ. Խատիսյանի հետ ուղարկվել է Կ. Պոլիս, ուր սպասվում էր կոնֆերանսի անցկացում Կովկասյան հարցի վերաբերյալ: Դրանից հետո ՀՀ կառավարության կողմից Գ. Ղորղանյանը ուղարկվել է Փարիզ որպես հայկական պատվիրակության խորհրդական, ուր նա ժամանում է 1919 թ. հունիսի 1-ին: 1934 թ. Փարիզում հրատարակվող «ՎԷՄ» ամսագրում [1934, մայիս-հունիս, հուլիս-օգոստոս] տպագրվել է վերջինիս հոդվածաշարը Հայաստանի Հանրապետության և մեծ տերությունների հետ ունեցած հարաբերությունների մասին // **Ղորղանեան Գ. Ջոր.**, Հայաստանի Հանրապետությունը եւ պետությունները, I. Բրեստ-Լիտովկայից մինչև Եսեր, Բ. տարի, 1934, թ. 3, մայիս-յունիս, Ե., էջ 29-41, II, Սերից-Լոզան, Բ. տարի, 1934, թ. 4, յուլիս-օգոստոս, Զ., էջ 54-72 // «ՎԷՄ» (Փարիզ): Տես նաև Գ. **А. Аветисян**, Генерал Гавриил Григорьевич Корганян. Вестник общественных наук, 1997, N 1, стр. 155-158: Գորղանյանը կատարել է զգալի աշխատանք ջանք ու եռանդ շնայելով, որպեսզի հետախուզության գործը դրվի լավ հիմքերի վրա: Գեներալ Գ. Ղորղանյանը, որին ըստ էության կարելի է համարել ոչ միայն Փարիզում ՀՀ կառավարության պատվիրակության ռազմական խորհրդատու, այլև իրավամբ մասնազմական կցորդի պարտականությունները կատարող զինվորական, 1919 թ. վերջերին - 1920 թ. սկզբներին սերտ կապերի և համագործակցության մեջ էր գտնվում Կ. Պոլսում գործող Տիգրան Գեվոյանցի կողմից գլխավորվող հետախուզական խմբի հետ, որից մշտապես ստանում էր Թուրքիայի, նրա ռազմական ուժերի և ռազմաքաղաքական անցուղարձերի, **Մաստաֆա Քեմալ Աթաթյուրքի** կողմից գլխավորվող թուրքական ծայրահեղ ազգայնական, այսպես կոչված «Սիլի» շարժման, Հայաստանի դեմ նախապատրաստվող ավազակային արշավանքի, հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաշարժերի և այլնի մասին զգալի արժեք ներկայացնող տեղեկատվություն զանազան ամփոփագրերի և նամակազրույթյան տեսքով: Դրանք հասցեագրված էին Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդատու և ներկայացուցիչ **Գ. Ղորղանյանին**, և որոնց մեզ հայտնի թիվը հարյուրների է հասնում³⁹, դրանք վերջինիս կողմից պարտաճանաչարեն անաչվում էին Հայաստան՝ ռազմաքաղաքական դեկլար շրջաններին, ըստ այդմ ակնկալելով համապատասխան արդյունավետ քայլեր. հարկ է սակայն արձանագրել այն փաստը, որ դրանք հարկ եղած արդյունավետությունը չունեցան, և որ դա տեղի ունեցավ թե՛ հետախուզական բնագավառի կամ վերջինիս հետ սերտորեն առնչվող զինվորական այրերի մեղորոշ, և թե՛ իշխանությունների որդեգրած կրավորական դիրքորոշման և Սևրյան կողմնորոշման, Անտանտյան երկրներին կուրյ նվիրվածության հետևանքով, երբ շատ հարցերի հանգուցալուծումը պայմանավորվածության մեջ էին գտնվում մեծ տերությունների կողմից հետամտած երկտակ և նրբին խարդավանքներով լի քաղաքականության հետ, փոխանակ փորձերի ձեռնարկել ինքնուրույն քայլեր հանրապետությունը տկար վիճակից դուրս բերելու ուղղությամբ, շտկելով վիճակը ինչպես բանակում, այնպես էլ հետախուզության կազմակերպման և ուղղորդման բնագավառում: Այս ամենը մաս կկախում է այն արգասաբեր համագործակցության մասին, որ կար **Գ. Ղորղանյանի** և Կ. Պոլսում գործող **Տ. Դեվոյանցի** գլխավորած հետախուզական խմբի միջև: Մտահցել է **1934 թ. Խունվարի 8-ին** Փարիզում և հուղարկավորվել Պեր-Լաշեզ գերեզմանոցում: Պարզևատրվել է Ֆրանսիական կառավարության կողմից Ֆրանսիայի բարձրագույն պետական պարգևով Պատվո Լեգիոնի և ռուսական Սբ. Ստանիսլավի III աստիճանի շքանշաններով: Տես **Ա. Մержуанян**, Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге. Биографический справочник, **Корганян Г. Г.** Участие армян в мировой войне на Кавказском фронте (1914-1918) с 19-ю схемами / Пер. с фр. Пирумяна Ю. Л., Долбакяна Э. Е., М., 2011:

րում էր ամեն մի պետութեան զինված ուժերը գլխավորող մարմնի՝ Զինվորական նախարարութեան գործակալը: Ղորղանյանը նշում էր, որ ընդհանուր առմամբ զինվորական կցորդը պետք է հետևի այլ պետութեան զինված ուժերի զարգացմանը, ուր ինքը գործուղվել է և ձեռնամուխ լինի այն հնարավոր ուժերի բացահայտմանը, որոնց հետ հնարավոր է բախումներ լինեն: Հետևաբար, Ղորղանյանը գտնում էր, որ զինվորական կցորդը պետք է ձեռնամուխ լինի հետևյալ խնդիրներին իրագործմանը. 1) զինվորական կցորդը (գործակալը) պետք է բացահայտի հակառակորդի բանակի կազմը խաղաղ ժամանակ, ինչպես նաև նրա հաստիքային և թվական կազմը, 2) զինվորական ծառայութեան անցած զինվորականների պահեստակազմը, զինվորական ծառայութեան գծով արտոնութեաններ ունեցող այն մարդկանց թիվը, որոնք ազատված են զինվորական ծառայութեանից, և պատերազմի դեպքում չէին կարող գնալ կողմեր դառնալ: Անհրաժեշտ էր նաև պարզել պահեստի սպաների թիվը, 3) բացահայտել սպառազինութեան պաշարները, որոնք կարող էին օգտագործվել բանակի գորահավաքի ժամանակ, 4) զինվորական կցորդը կամ գործակալը պետք է պարզեր այն մարտիկների առավելագույն քանակը, որը տվյալ պետութեանը կարող էր մարտի դաշտ դուրս բերել, 5) բանակի կազմակերպումը պատերազմի ժամանակ, դրա տեղաբաշխումը, 6) զինվորական խանութների տեղաբաշխվածութեանը, դրանց իրական ունեցվածքը, 7) հրետանային և ինժեներական պահեստների, արհեստանոցների տեղաբաշխումը, 8) երկաթուղիների բեռնաթողունակութեանը, շարժակազմը, 9) երկաթգծերի վիճակը, երթուղիները, 10) պաշտպանական կառույցների պատրաստվածութեան աստիճանը և տեղաբաշխումը, 11) տեղական ռազմական վարչութեան կառուցվածքը և գորահավաքի արագութեան մասին տվյալները, 12) գործերի ուսուցման հարցերը, 13) գործերի մարտական ոգու, կարգապահութեան վիճակը և այլն: Հետաքրքիր փաստաթուղթ է, որը վկայում է նաև որոշ Հայ զինվորականների պրոֆեսիոնալ բարձր պատրաստվածութեան մասին:

Ահա այսպես, շատ մանրագնին ներկայացնելով զինվորական կցորդ-գործակալների առջև դրված խնդիրները, գեներալ-մայոր Գ. Ղորղանյանը անում է կարևոր եզրահանգումներ: Մասնավորապես նա հետևութեան է անում, որ առանց զինվորական գործակալների միջոցով հետախուզութեան գործի ճիշտ կազմակերպման, ռազմական զինված պայքարի մասին հարցերի լուծումը միշտ հենված կլինի կասկածելի տվյալների վրա, և հնարավոր չի լինի ճիշտ հակամիջոցների ձեռնարկումը: Գեներալ-մայոր Ղորղանյանը այնուհետև եզրահանգում է, որ ներկա պահին անհրաժեշտ է ամեն տեղ, ի նկատի ունենալով ծավալվող իրադարձութեանները, իսկույնից ստեղծել զինվորական գործակալութեան, այդ թվում և Վրաստանում, և Ադրբեյջանում: Միաժամանակ Ղորղանյանը գտնում էր, որ զինվորական գործակալները, ինչպես դա կա բոլոր պետութեանների պրակտիկայում, գտնվելով

դիվանագիտական ներկայացուցչություններին կից, նշանակվում են միանձնյա Զինվորական նախարարի կողմից, և միայն վերջինիս են ենթակա և Հաշվետու: Զինվորական նախարարի կողմից ռազմական կցորդների նշանակման պահից արդեն Արտաքին Գործերի նախարարությունը պետք է այդ մասին համապատասխան ձևով իրազեկ դարձնի տվյալ երկրի համապատասխան գերատեսչություններին, և նրանց հետ համաձայնեցնի մանրամասնությունները և հարցի առանձին կողմեր⁴⁰: Բացի այդ, գեներալ Ղորղանյանը գտնում էր, որ զինվորական գործակալը պետք է իրականացնի արձակուրդի մեջ գտնվող սպաների և զինվորականների, ինչպես նաև պահեստի այն սպաների, բժիշկների, չինովնիկների հաշվառումը, որոնք տվյալ պահին գտնվում են այն երկրում, ուր գործուղված են եղել: Այդ իսկ պատճառով, ըստ Ղորղանյանի, զինվորական գործակալը պետք է ունենար ծանրակշիռ զինվորական պատրաստվածություն, և որոնց նշանակումը Զինվորական նախարարի կողմից յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է հատուկ քննարկվեր: Ըստ այդ պլանի, ոչ մեկն առանց Զինվորական նախարարի թույլտվության իրավունք չունեն գործուղվելու համապատասխան ներկայացուցչություն: Ղորղանյանն առաջարկում էր զինվորական գործակալին նշանակել 1500 ռուբլի ռոճիկ, իսկ նրա օգնականին 800-ից 1000 ռուբլի՝ կախված սպայական կոչումից: Միաժամանակ գեներալ-մայոր Ղորղանյանը կարևոր էր համարում գաղտնի հետախուզության համար ենթահաշվետվական ավանսի հատկացումը, ինչպես նաև զինվորական կցորդի գրասենյակի համար նախատեսված սենյակի տրամադրումը ներկայացուցչության զբաղեցրած շինտարածքի շրջանակներում⁴¹:

Կատարվել էր զգալի աշխատանք, որի համար Ղորղանյանը ջանք ու եռանդ էր խնայել, որպեսզի հետախուզության գործը ղրվեր լավ հիմքերի վրա: Գեներալ-մայոր Ղորղանյանի այս տեղին և նպատակային հարցադրումներից հետո հաջորդ քայլը կատարվում էր գեներալ-մայոր Արարատյանի կողմից, որը 1919 թ. մարտի 31-ին նորից անդրադառնում էր Ղորղանյանի վերոհիշյալ գեկուցադրին թիֆլիսում և Բաքվում զինվորական գործակալների «համապատասխան ինստիտուտ» ստեղծելու անհրաժեշտություն մասին, ներկայացնելով համապատասխան տեղեկանքներ այդ գործի վերաբերյալ: Միաժամանակ գեներալ-մայոր Արարատյանը տվյալ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակում զինվորական ներկայացուցիչների (ազենտ, կցորդ) հաստատումը համարում էր հրատապ անհրաժեշտություն, ընդ որում պատճառաբանելով, որ հենց այդ զինվորական ներկայացուցիչների վրա էլ կարելի է դնել զինվորական ներկայացուցչություն պարտականությունները Դաշնակցային հրամանատարությունը կից՝ թիֆլիսում և Բաքվում: Արարատյանը գտնում էր, որ այդ պաշտոնյաների պահելու հոգ-

⁴⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 27, ք. 27 (72), ք. 62, Ֆ.Պ - 278, ց. 1, գ. 11, ք. 16:

⁴¹ Նույն տեղում, ք. 143:

սը կարող է իրականացվել Զինվորական նախարարություն ընդհանուր վարկի հաշվին, սակայն գրասենյակի և գաղտնի հանձնարարությունների գծով սպանների ծախսերը անհրաժեշտ է վարկավորել՝ յուրաքանչյուր ներկայացուցչին ենթահաշվետվային ավանս տալով ամսական 10 հազար ռուբլի չափով: Վերջնամատում Արարատյանը խնդրում էր իր առաջարկները հաստատել և թույլ տալ վարկավորումը սկսած ապրիլի 1-ից՝ ամիսը հազար ռուբլի, և ընդամենը 180 հազար ռուբլի էլ բաց թողնել մինչև 1919 թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար⁴²:

1919 թ. մարտին թվագրվող Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության փաստաթղթերից մեկում արդեն շարադրված են ռազմական գործակալների գործունեության ընդհանուր սկզբունքները, նրանց հետախուզության օբյեկտները և դիվանագիտական ներկայացուցչության հետ կապերի ձևերն ու եղանակները, որպես նրանց գործունեության պարտադիր պայմաններ, ինչի համար նախատեսվում էր չորս մարդ՝ բարձր կոչումներով, երեք մարդ՝ ցածր սպայական կոչումներով⁴³: Այդ նույն փաստաթղթում նշվում էր, որ Թիֆլիսում պահանջվում է Գլխավոր շտաբի բարձր սպայական կոչում ունեցող սպա, որ ռազմական գծով պետք է լիներ դիվանագիտական ներկայացուցչության կազմում, և փաստորեն անհրաժեշտ ռազմաքաղաքական տվյալները պետք է հավաքվեին և հաղորդվեին նրա միջոցով: Այդ գործի համար միակ հնարավոր թեկնածուն համարվում էր գեներալ Գ. Ղորղանյանը, որը փայլուն տիրապետում էր ֆրանսերեն լեզվին, անգլիացիներին գիտեր Պարսկաստանում իր գործունեությունից, որտեղ եղել էր գեներալ Ն. Ն. Բարաթովի (01. 02. 1865 թ. - 22. 03. 1932 թ. ⁴⁴) էքսպեդիցիոն կորպուսի շտաբի կազմում, եղել էր Կովկասյան Հեծելազորային դիվիզիայի պետ, և ի վերջո նաև ընդգրկվեց ՀՀ Զինվորական խորհրդի կազմում, որոշակի հեղինակություն էր վայելում Անդրկովկասում գտնվող ֆրանսիական, անգլիական ռազմական ներկայացուցչությունների շրջանում: Հենց այս թեկնածուական նկատմամբ էլ շատ բարեհաճ էր տրամադրված նաև Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար **Լևոն Գեորգիի Եվանգուլյանը (Եվանգուլով)**⁴⁵, որը համառորեն պաշտպանում էր գեներալ Գ. Ղորղանյանի թեկնածությունը գինվորական

⁴² Նույն տեղում, թ. 142:

⁴³ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 114, թ. 10 - 12:

⁴⁴ **Բարաթով Նիկոլայ Նիկոլայի [01.02.1865 թ. - 22.03. 1832 թ.] - գեներալ-լեյտենանտ.**

Առաջին աշխարհամարտի ժամանակ ռուսական զորքերի հրամանատարը Պարսկաստանում, 1918 թ. Կամավորական բանակի և Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի հրամանատար Դեմիկիմի ներկայացուցիչը Անդրկովկասում, ապրել է Ֆրանսիայում - Տե՛ս **Ա. В. Ганин**, Корпус офицеров Генерального штаба в годы гражданской войны, 1917 - 1922 гг., Справочные материалы, М., Русский путь, 2009, стр. 161, 584:

⁴⁵ Տե՛ս **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին Տարին, 1918 - 1919, էջ 379; **R. G. Hovannisian**, The republic of Armenia, vol. II, p. 349:

կցորդի պաշտոնի Համար⁴⁶: Սակայն կային նաև այլ թեկնածու թյուններ, այդ թվում դիվանադիրտական ներկայացուցչության կազմում գտնվող գնդապետ **Շահբաթովը**, նույնիսկ հետագայում հետախուզական աշխատանքից բավականին հայտնի երիտասարդ լեյտենանտ **Հովհաննես Խան-Կոտուրսկին**, որոնց դեմ Լ. Եվանգուլյանը կտրուկ առարկեց, գտնելով, որ այդպիսի պաշտոնում պետք է նշանակվեն Գլխավոր շտաբի ավելի բարձրաստիճան գինվորականներ, որոնք ունեին անհամեմատ ավելի մեծ փորձառություն և հեղինակություն⁴⁷: Այս թեկնածու թյունները, բնականաբար, չանցան, իսկ շուտով Լ. **Եվանգուլյանին** հասցեագրված ՀՀ Արտաքին Գործերի նախարարության 1919 թ. ապրիլի 10-ի հեռագրից տեղեկանում ենք, որ գեներալ Ղորղանյանը ևս բացառվում է այդ պաշտոնը զբաղեցնելու առումով, քանզի նրան հրամայվում է շտապ մեկնել Փարիզ⁴⁸: Ստեղծված իրավիճակում Լ. Եվանգուլյանը ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1919 թ. ապրիլի 28-ի հեռագրում (№ 914) առաջարկում էր գեներալ-մայոր Հախվերդյանի թեկնածությունը, սակայն Զինվորական նախարար Արարատյանը վերջինիս ներկայությունը Թիֆլիսում գտավ աննպատակահարմար, քանզի նրա ներկայություն անհրաժեշտությունը խիստ զգացվում էր հենց Երևանում⁴⁹: Որոշ ժամանակ անց ՀՀ Զինվորական նախարարի կողմից Թիֆլիսում ՀՀ գինվորական կցորդի պաշտոնում առաջադրվում է ՀՀ գինվորական դատարանի նախագահ **Հովսեփ Արտեմի Քիչմիշյանի** (Հ. Ա. Քիչմիշև, 1881 թ. - 1921 թ. հետո⁵⁰) թեկնածությունը⁵¹, որի դեմ սակայն կտրականապես առարկում է Լ. Եվանգուլյանը, գտնելով, որ վերջինս Գլխավոր շտաբի փորձառու գինվորականներից չէ, գիտակ չէ գործին, որ ունի միայն իրավաբանական կրթություն, ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ իր տրամադրության տակ առկա տեղեկությունների համաձայն՝ անտեղյակ է հայկական կյանքին ու ավանդույթներին, հայերեն չգիտի, որ նույնիսկ իրեն հայ չի համարում⁵²: Լ. Եվանգուլյանը նույնպես աննպատակահարմար էր գտնում, որ որևիցե մեկը, որը պաշտոնով ցածր էր և համեմատաբար անփորձ որպես գինվորական, նույնիսկ ժամանակավորապես կատարեր գինվորական կցորդի պարտականությունները Թիֆլիսում՝ մինչև հարցի վերջնական լուծումը: Այդ կապակցությամբ նա առարկեց գեներալ **Արսենի Սերգեյի Դոլուխանով** (**Արսեն Սարգիսի Դոլուխանով**, 21

⁴⁶ ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց.1, գ. 114, ք.13: Ֆ.Պ - 121, ց. 1, գ.111, ք. 1, գ. 9, ք. 15:

⁴⁷ Նույն տեղում, գ. 300, ք. 1-2:

⁴⁸ Նույն տեղում, ք. 8-10:

⁴⁹ Նույն տեղում, ք. 11-13:

⁵⁰ St' u M. Тумаян, Дипломатическая история Республики Армения .1918-1920 гг. / - Ер.: Национальный архив Армении, 2012, стр. 448:

⁵¹ St' u R. G. Hovannisian, The Republic of Armenia, vol. II, p. 158, 160 -162, 195:

⁵² St' u ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 300, ք. 18-19, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 116, ք. 69-71:

Հունվարի, 1863 թ. ~ 1920 թ. Հետո⁵³) կողմից առաջադրված պողպորուչիկ **Եղիազարովի** թեկնածուության դեմ որպես Թիֆլիսում ՀՀ ռազմական կցորդի ժամանակավոր պաշտոնակատարի⁵⁴: Քաջընկները շարունակվում էին, Հարցի վերջնական լուծումը հետաձգվում է մինչև Հունիսի սկիզբը: Այդ ընթացքում իրերի նման վիճակը խիստ վերավորական համարելով իր համար, գեներալ Քիչմիչյանը գեկուցազրով դիմում է ՀՀ Զինվորական նախարար Ք. Արարատյանին, խնդրելով ազատել իր զբաղեցրած պաշտոնից, միաժամանակ իրեն իրավունք վերապահելով պարզելու իր զբաղեցրած անձը և արժանապատվությունը վերավորող հանգամանքները՝ անմիջական հաղորդակցություն մեջ մտնելով Լ. Եվանգուլյանի հետ: Եվ սակայն քանի որ նման պաշտոնով գինվորականի առկայությունը խիստ հրատապ էր Թիֆլիսում ՀՀ շահերը ներկայացնելու տեսանկյունից, ՀՀ Զինվորական նախարարը Արտաքին Գործերի նախարարի հետ համատեղ բացատրական աշխատանքների հետ մեկտեղ որոշակի ճնշում են գործադրում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի վրա, ի վերջո վերջինս էլ համոզվում է, որ ինքը անիրավացի է եղել գեներալ Հ. Քիչմիչյանի հետ կապված իր եզրահանգումներում, որ նա ամենևին էլ հայկական ավանդույթներից հեռու մարդ չէ, ավելին, առաջին իսկ նիստը վարում է հայերեն, և դրանով իսկ գինվորական կցորդի պաշտոնում Քիչմիչյանի նշանակումը այլևս Եվանգուլյանի կողմից ոչ միայն դիմադրություն չի հանդիպում, այլև վերջինս հայցում է գեներալ Հ. Ա. Քիչմիչյանի ներողամտությունը⁵⁵: Իսկ արդեն ՀՀ Արտաքին Գործերի նախարարի 1919 թ. հունիսի 15-ի հեռագրից (№ 2763)՝ ուղղված Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի ժամանակավոր պաշտոնակատար Մ. Թումանովին (իշխան Միքայել Թումանյան 28 նոյեմբերի, 1887 թ. ~ 1926 թ. հետո տեղեկություն չկա⁵⁶), ակնհայտ է դառնում, որ Քիչմիչյանի նշանակման հարցը կարելի էր վերջնականապես լուծված համարել, և նրան առաջարկվում էր անցնել իր անմիջական պարտականությունների կատարմանը: Կարճ ժամանակ անց, ինչպես այդ մասին վկայում է հենց գեներալ Քիչմիչյանի գլխավոր ընդդիմախոսը, վերջինս դառնում է հեղինակություն նաև Փրանսիական, բրիտանական, ամերիկյան և այլ երկրների ռազմական ներկայացուցչությունների շրջանում: Եվ շուտով, Երևան ուղարկված 1919 թ. հունիսի 23-ի հեռագրում Լ. Եվանգուլյանը ՀՀ Զինվորական նախարար

⁵³ Տե՛ս **Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге**. Биографический справочник. стр. 111:

⁵⁴ Տե՛ս **ՀԱԱ**, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 300, ք. 20 -21:

⁵⁵ Նոյն տեղում, ք. 23- 25, Ֆ.Պ -276, ց. 1, գ. 116, ք. 70-71:

⁵⁶ Տե՛ս նրա աշխատությունը՝ **Микаел Туманян**, Дипломатическая история Республики Армения, стр. 10, 38.

րին հայտնում էր, որ իր կողմից այլևս ոչ մի առարկություն գեներալ Քիչ-միշյանի դեմ չկա⁵⁷:

Հետախուզական գործի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից զինվորական ներկայացուցչության համակարգի ստեղծումը Հայաստանի զինվանագիտական կորպուսի կազմում կարևոր քայլ էր և այդ ուղղությամբ հերթական քայլը կատարվեց Նախարարների խորհրդի 1919 թ. ապրիլի 8-ի նիստում: Լսելով Ջինվորական նախարարի զեկուցումը Թիֆլիսում և Բաքվում Հայաստանի զինվանագիտական ներկայացուցչություններին կից զինվորական վարչություն հիմնելու մասին հարցը, նիստը հարցին դրական լուծում տվեց: Նախարարների խորհրդի նիստը ընդունված որոշման մեջ կարևոր համարեց Թիֆլիսի զինվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչություն հիմնելը: Որոշման մեջ նաև ասվում էր, որ զինվորական կցորդի նշանակումը պետք է կատարվի Ջինվորական և Արտաքին Գործերի նախարարների փոխադարձ համաձայնությամբ, վերջինիս համարելով զինվանագիտական ներկայացուցչության անձնակազմի անդամ, գործելով ներկայացուցչության ղեկավարի ցուցմունքների համաձայն: Որոշման մեջ նաև ասվում էր, որ զինվորական կցորդը՝ գործակալը իր ռոճիկը պետք է ստանա Ջինվորական նախարարության վարկի հաշվին, որպես զինվորական: Միաժամանակ, Նախարարների խորհուրդը Արտաքին Գործերի նախարարին հանձնարարեց այն մտցնել իր նախահաշվի մեջ՝ 9 ամսվա հաշվարկով՝ 1919 թ. ապրիլի 1-ից սկսած մինչև տարվա վերջը 90 հազար ռուբլու չափով, այն հատկացնելով Թիֆլիսի զինվորական կցորդի գրասենյակային, ներկայացուցչական և այլ ծախսերի համար⁵⁸: Նշված որոշումը լրացվում է, կայունանում Նախարարների խորհրդի 1919 թվականի հունիսի 24-ի որոշումով, ըստ որի Վրաստանում և Ադրբեջանում Հայաստանի զինվանագիտական ներկայացուցչություններին կից հաստատվում են զինվորական կցորդների պաշտոններ՝ մեկ համհարգով հանդերձ յուրաքանչյուրին⁵⁹:

Երկար սպասված հարցի հանգուցալուծումը վերջ է վերջո գտնվեց: Արդեն 1919 թ. հուլիսի 2-ին Արտաքին Գործերի նախարարը Նախարարների խորհրդին ներկայացրած զեկուցագրում ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, որ տեղեկատվության նպատակով հրամայական անհրաժեշտություն է առաջացել Թիֆլիսում և Բաքվում Հայաստանի զինվանագիտական ներկայացուցչություններին և Բաթումում Հյուսիսատոսին կից զինվորական կցորդների նշանակման մասին հարցի կազմակերպական հանգուցալուծումը: Միաժամանակ նշված փաստաթղթում ընդգծվում էր, որ դրա անհրաժեշտությունը բազմիցս շեշտվել է ինչպես Արտաքին Գործերի նախարարության, այնպես էլ Ջինվորական նախարարության և Հայաստանի

⁵⁷ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 300, ք. 23 -25, 32-34:

⁵⁸ Նոյն տեղում, Ֆ.Պ -199, ց. 1, գ. 96 (205), ք. 62:

⁵⁹ Նոյն տեղում, գ. 118 (146), ք. 6:

ղիվանազիտական ներկայացուցիչների կողմից: Արտաքին Գործերի նախարարը գտնում էր, որ զինվորական կցորդի նշանակումը ելնում է Զինվորական նախարարի հետ կայացած համաձայնությունից, միջնորդվելով Արտաքին Գործերի նախարարություն և զիվանազիտական հավատարմատարների հետ հարաբերությունում: Փաստվում էր դրանց համագործակցության կարևորություն մասին: Դրա հետ մեկտեղ փաստաթղթում ասվում էր, որ արդեն կա Թիֆլիսում և Բաքվում զիվանազիտական ներկայացուցչություններին և Բաթումում հյուպատոսին կից զինվորական կցորդների պաշտոնների հաստատման մասին Նախարարների խորհրդի օրինագիծը և նախահաշիվը: Վերջապես, կարևոր փաստ էր արձանագրվում այն մասին, որ արդեն համապատասխան փաստաթուղթը գործողություն մեջ է դրվել⁶⁰: Այս ամենը միաժամանակ նշանակում էր Թիֆլիսում հայկական հետախուզական աշխատանքների կարգավորմանը և ուղղորդմանը նպատակաուղղված շատ իրական մի քայլ, այն ենթարկելով միասնական կենտրոնի տնօրինությունը: Իսկ արդեն Նախարարների խորհրդի 1919 թ. հուլիսի 8-ի նիստում գործին կից ընդունված ինտրուկցիայում (հրահանգավորումում) ընդգծվում էր Վրաստանում Հայաստանի Հանրապետության զիվանազիտական ներկայացուցչության աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև զինվորական կցորդների (հետևաբար նաև հետախուզական աշխատանքի կազմակերպման) գործունեություն սկզբունքները: Հրահանգում ասվում էր, որ ողջ աշխատանքի ղեկավարումը զիվանազիտական ներկայացուցչության համակարգում փաստացի գտնվում է զիվանազիտական հավատարմատարի ձեռքում, որին հիվանդություն կամ բացակայություն պարագաներում իրավասու էր փոխարինել միայն ներկայացուցչության խորհրդակալը: Բացի այդ, վերոնշյալ փաստաթղթում արձանագրվում էր, որ Թիֆլիսում առանձին հայկական նախարարություններին ինչպես միանձնյա (ֆինանսական, զինվորական և այլ գործակալները), այնպես էլ կոլեգիալ (պարենային և այլ կոմիտեների) ներկայացուցիչները այդ պահից համարվում էին արդեն զիվանազիտական ներկայացուցչությանը կից հաշվառված կառույցի մեջ⁶¹:

Հետաքրքիր է նաև նշել Վրաստանում և Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության զիվանազիտական ներկայացուցչություններին, ինչպես նաև Բաթումի հյուպատոսին կից զինվորական կցորդների, նրանց համահարգների համար սահմանված նախահաշիվ օրինագծի մասին, որն արդեն հուլիսի սկզբին հաստատված էր Նախարարների խորհրդի կողմից: Թիֆլիսում և Բաքվում գտնվող զինվորական կցորդների համար սահմանված էր ամսական 1700 ուբլի, իսկ նրանց համահարգներին՝ 900 ուբլի հիմնական ուժեղ, Բաթումի հյուպատոսին կից հանձնարարություններին գծով սպա-

⁶⁰ Նույն տեղում, գ. 20 (184), ք. 246:

⁶¹ Նույն տեղում, ք. 254:

յին՝ ամսական 1200 ռուբլի հիմնական ռոճիկ⁶²: 1919 թ. հունիսի 24-ին Նախարարների խորհրդի կողմից Վրաստանում և Ադրբեջանում դիվանագիտական ներկայացուցչություններին կից գինվորական կցորդների (ատտաչե) պաշտոնի հաստատումից հետո, Զինվորական նախարարի 1919 թ. հուլիսի 13-ի հրամանով (N° 10) Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից գինվորական ներկայացուցիչ է նշանակվում Առանձին Հայկական կորպուսի դատարանի, ինչպես նաև Հայաստանի Զինվորական դատարանի նախկին նախագահ գեներալ-մայոր **Հովսեփ Արտեմի Քիչմիշյանը**՝ Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի և օտար պետություններին (մասնավորապես՝ Անտանտի) ներկայացուցիչների համաձայնությունով⁶³: Զինվորական գերատեսչության գծով մի այլ փաստաթղթում, թվագրված 1919 թ. հուլիսի 25-ի վիճակով, արձանագրվում է, որ գեներալ **Հ. Քիչմիշյանից** ստացված հուլիսի 18-ի գրություն (N° 1220) պարզ է դարձել, որ ինքն արդեն անցել է իր նոր պարտականություններին կատարմանը⁶⁴, իսկ Ադրբեջանում ՀՀ գինվորական կցորդը **Պ. Մելիք-Շահաղարյանն** էր:

Հարկ է նորից ընդգծել, որ 1920 թ. հունվարի 21-ին ՀՀ մինիստր-նախագահը Նախարարների խորհրդին ուղղված իր գեկուցյուում (N° 324), անդրադառնում է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանի կողմից ներկայացված հունվարի 10-ի գեկուցագրին, կապված այն բանի հետ, որ դեռ 1919 թ. նոյեմբերի 27-ին Հայաստանի պառլամենտի նիստում քննարկվել է Արտաքին Գործերի նախարարի կողմից այդ հարցի վերաբերյալ մտցված նախագիծը, ըստ որի գինվորական ներկայացուցիչ կողմից ղեկավարվող վարչությունը պետք է տնօրինվեր գնդապետի կամ գեներալ-մայորի կոչում ունեցող անձի կողմից՝ 2 սպաների հետ միասին, սպասարկվելով 1 գործավարի, 5 զինվորի և այլնի կողմից, որի համար նախատեսված էր ամսական 15 հազար ռուբլի գումար: Սակայն հարկ է մատնանշել նաև ՀՀ պառլամենտի կողմից տվյալ հարցի կապակցությամբ հարուցված քաջըռուկի մասին՝ կապված պառլամենտի կողմից նշված օրինագիծը ետ վերադարձնելու մասին Արտաքին Գործերի նախարարությունը՝ պահանջելով նոր նախագիծ: Նշվում էր, որ պառլամենտը սխալ կերպով ենթադրել է, որ գինվորական ներկայացուցչի վարչությունը պետք է լինի ինքնուրույն օրգան, և օգտվելով մինիստր-նախագահի բացակայությունից, նիստում քաղաքական իրադրությունը ոչ համապատասխան, Արտաքին Գործերի ու Զինվորական նախարարությունների շահերին վնասող որոշում է կայացրել: Ուշադրավ է, որ վերը բերված գեկուցագրում նաև նշվում էր այն մասին, որ 1920 թ. հունվարի 21-ի (N° 14) մինիստր-նախագահը իր գեկուցագր-

⁶² Նույն տեղում, ք. 254 -255:

⁶³ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 40, ք. 71, գ. 132, ք. 104: Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 75, ք. 26, գ. 26, ք. 203, գ. 187, ք. 121:

⁶⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, ք. 104:

րում՝ ուղղված Նախարարների խորհրդին, տալով քաղաքական կացության նկարագիրը գինվորական ներկայացուցչության վերակառուցման կամ վերացման կապակցությամբ Լ. Եվանգուլյանի առաջարկների հետ, ամուր համոզմունք է արտահայտել և տվել իր եզրակացությունը գործող գինվորական վարչության պահպանության անհրաժեշտության մասին, ընդգծելով միաժամանակ, որ տվյալ գինվորական վարչության նախահաշիվը միանգամայն չնչին է, որ գինվորական ներկայացուցչի աշխատանքը միասնության մեջ է գտնվում դեվանագիտական ներկայացուցչության գործունեության հետ և հենց ինքը՝ գինվորական կցորդը, օգտվում է մեծ հեղինակությունից Վրաստանի գինվորական իշխանությունների շրջաններում, հատուկ սերտ կապերի մեջ է Հունաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչների հետ: Զեկուցագրի վերջնամասում մինիստր-նախագահը ընդգծում էր, որ ինքը լիովին բաժանում է Լ. Եվանգուլյանի տեսակետը, սկզբունքորեն համաձայնվելով հարցի դրվածքի հետ, ելնելով գինվորական ներկայացուցչության կեստարյա աշխատանքից (1919 թ. երկրորդ կես): Ելնելով վերը շարադրվածից, մինիստր-նախագահը անհրաժեշտ էր համարում հանձնարարել Զինվորական նախարարին ներկայացնել մանրամասն նախահաշիվ և գինվորական ներկայացուցչի հաստիքակազմը այն տեսքով, ինչպիսի ձևով վարչությունը մինչ այդ գործել է, սկզբունքորեն հակադրվելով պառլամենտի անսկզբունքային, ոչ պրոֆեսիոնալ մոտեցմանը⁶⁵: Այդուհանդերձ, Թիֆլիսում Հայաստանի դեվանագիտական հավատարմատարը 1919 թ. դեկտեմբերի 16-ին ստանում է ՀՀ Զինվորական նախարարի դեկտեմբերի 11-ի գրությունը (№ 1088)՝ հասցեագրված նաև Արտաքին Գործերի նախարարին, որում հայտնվում էր այն մասին, որ Հայաստանի պառլամենտի նոյեմբերի 27-ի նիստում որոշում է կայացվել վերացնել Զինվորական ներկայացուցչությունը Վրաստանում, բավարարվելով միայն մեկ սպա պահելով Թիֆլիսում որպես ՀՀ դեվանագիտական ներկայացուցչությանը կից գինվորական կցորդ, որը կարող էր և գեներալի կոչում չունենալ, ինչպես նախկինում որոշվել էր: Ըստ այդմ, տեղեկացվում էր այն մասին, որ գինվորական կցորդը պետք է աշխատի դեվանագիտական համակարգում նրա դեկավարի անմիջական ղեկավարությամբ, իսկ գեներալ Քիչմիշյանին առաջարկվում էր նոր նշանակման կապակցությամբ անմիջապես դիմել Զինվորական նախարարին, այն բանից հետո, երբ 1920 թ. հունվարի 1-ից սկսած Թիֆլիսում գտնվող ՀՀ գինվորական վարչությունը կրադարեցներ իր գործունեությունը և կլուծարվեր⁶⁶: ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1920 թ. հունվարի 10-ի դիմումագրում (№ 14) այդ ամենի դեմ Թիֆլիսում ՀՀ դեվանագիտական հավատարմատարը կտրուկ առարկում է, գտնելով, որ այն հակասում է իր իսկ Ղորղանյանի կողմից մշակված հոյակապ

⁶⁵ Տես՝ ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 118 (146), ք. 58 - 59:

⁶⁶ Նոյն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 196, ք. 98, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 300, ք. 42:

նախագծի կանխադրույթներին, համարելով, որ զինվորական վարչության կազմավորվածումը թուլացնում է իրենց դիրքերը, այն դեպքում, երբ ի դեմս գեներալ Կարավոլի Վրաստանը շարունակում էր պահպանել նմանատիպ վարչությունը Երևանում, և բացի այդ, հատկացվող գումարներն էլ զինվորական վարչությանը այնքան քիչ են, որ այդ պարագայում ՀՀ կառավարությունը կարող էր բոլորովին չանհանգստանալ՝ այն ավելորդ շքեղություն չհամարելով իր համար⁶⁷: Սակայն զինվանագիտական հավատարմատարի առարկությունները ոչ մի աջակցություն չեն գտնում և Թիֆլիսում զինվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչությունը վերջնականապես կազմացրվում է՝ դադարեցնելով իր օգտաշատ գործունեությունը: Դա, իհարկե, նկատելիորեն նեղացնում էր հնարավորությունները, իսկ դա հետախուզական գործի կազմակերպման տեսանկյունից բացասական հետևանքներ ուներ, քանզի Ֆինանսական հատկացումները ևս պակասում են, ինչը հետախուզական գործի մեջ կարևոր գործոն է, կադրային թվակազմն էլ իր հերթին կրճատվում է, իսկ դա հանգեցնում էր ձեռնարկվող գործողությունների արդյունավետության թուլացմանը, դա այն դեպքում, երբ Թիֆլիսում հետախուզության անմիջական ղեկավարությունն իրականացնում էր հենց այդ զինվորական վարչությունը և նրա ղեկավար կազմը, իսկ այդպիսի փոփոխության պայմաններում գործի ողջ ծանրությունը ընկնում էր զինվորական կցորդի և նրա խիստ կրճատվող հաստիքակազմի վրա:

Վերը բերված տարաբնույթ փաստերը ակնհայտորեն վկայում են, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները՝ հետախուզությունը և հակահետախուզությունը ստեղծվել են՝ անցնելով կազմակերպական-քաղաքական բարդ գործընթացների ուղիով, ինչի համար ՀՀ կառավարությունը որոշակի գործողություններ է ձեռնարկել, իրականացրել մի շարք գործառնություններ, պետականորեն կարևոր այդ գործի նկատմամբ բեռելով իր ուշադրությունը, հետախուզական գործի կազմակերպման հարցերը քննարկման առարկա դարձնելով կառավարության նիստերում, սույն խնդրի լուծումը դիտելով որպես պետական անվտանգության համակարգի ձևավորմանը նպատակաուղղված անհրաժեշտ և կենսականորեն կարևոր գործողություն, գործելով շատ խճճված և բարդ միջավայրում՝ չունենալով հուսալի և իրական դաշնակիցներ:

⁶⁷ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 300, ք. 45:

**2. ՀՀ կառավարության Ֆինանսա-տնտեսական միջոցառումները
Ձինվորական նախարարության Գլխավոր շտաբի
Հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքի
աշխատանքների կազմակերպման բնագավառում**

Հայաստանի Առաջին Հանրապետության Հետախուզական ծառայության կազմակերպման Հիմնախնդիրների լուծման բնագավառում Ֆինանսատնտեսական գործոնները երկրորդական չէին, երբեմն էլ առաջնային էին, և դրանցից շատ դեպքերում կախված էր բազմաթիվ ծրագրերի իրականացումը: Եվ այնուամենայնիվ, փորձեր արվում էին: 1918 -1919 թթ. վերաբերող որոշ փաստեր մենք արդեն վերը բերել ենք, դրանք առաջին անվարժ փորձերն էին, որ ՀՀ Ձինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքն ըստ էության գործնականում արդեն հասցրել էր քիչ թե շատ կազմակերպվել՝ ՀՀ Ձինվորական նախարարի 1919 թ. ապրիլի 14-ի հայտնի հրամանագրի համաձայն, և առաջին Ֆինանսական հատկացումները դրանով իսկ արդեն լիովին օրինականացան, դրվելով քիչ թե շատ լիարժեք օրենսդրական հիմքի վրա:

Հայաստանի Հանրապետության Ձինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը 1919 թ. հուլիսի 19-ի գրույթով հրամայում (N^o 7469) նշելով թիֆլիսում և այլուր Հայաստանի զինվորական ներկայացուցչությունների վրա դրված խնդիրների լայնածավալության մասին, մասնավորապես ընդգծում էր, որ վերը բերված հաստիքակազմը միանգամայն անբավարար է և տվյալ զինվորական վարչության վրա դրված խնդիրների կատարումը այդպիսի հաստիքակազմով անհնարին կլինի: Ըստ այդմ, վերջինս միջնորդում էր իր կողմից ներկայացված հաստիքակազմի հաստատման մասին, որի մեջ մտնում էին զինվորական վարչության ղեկավարը 1700 ռուբլի ռոճիկով, նրա օգնականը կամ օբերսպան, սպասյակը, նամակատարները՝ 2 հոգի, ազատավարձու մեքենագրուհին, և մեկ հոգի էլ՝ օժանդակ կազմից: Վարչության համար նախատեսվում էր ամսական 15 հազար ռուբլի աշխատավարձ և ըստ օրենքի, զինվորական ներկայացուցչից պետք է անմիջականորեն ենթարկվեր ՀՀ Ձինվորական նախարարին, մտնելով դիվանագիտական ներկայացուցչության հաստիքակազմի մեջ՝ գործելով եղած հրահանգների համաձայն ու ներկայացուցչության ղեկավարի գլխավորությամբ⁶⁸:

Հետաքրքիր է այդ առումով Ձինվորական նախարարի պարտականությունները կատարող գեներալ-լեյտենանտ Հ. Հախվերդյանի (Հախվերդյան Հովհաննես Բարսեղի՝ 29. 7. 1873 -1921 թ.) 1920 թ. մայիսի 20-ի գեկուցա-

⁶⁸ Նույն տեղում, Ֆ.Պ -199, ց. 1, գ. 118ա (146), ք. 20:

գիր՝ ուղղված Նախարարների խորհրդին (N^o 8404): Զեկուցագրում վկայակոչելով Նախարարների խորհրդի 1919 թ. մայիսի 8-ի որոշումը, համաձայն որի Վրաստանում ղեկմանադիտական ներկայացուցչությունը կից գինվորական վարչություն էր ստեղծվում և այդ նպատակի համար հանձնարարվել էր Արտաքին Գործերի նախարարություն 1919 թ. նախահաշվի մեջ մտցնել 90 հազար ռուբլի գումար (1919 թ. ապրիլի 1-ից սկսած՝ 9 ամսվա ծախսերը հոգավու համար), գեներալ-լեյտենանտ Հախվերդյանը արձանագրում էր, որ դեռևս այդ գումարը բաց չի թողնված և այդ ընթացքում առկա ծախսերը փոխարինաբար տրամադրվել են Գլխավոր շտաբի կողմից, ինչը ՀՀ Զինվորական նախարարությունը կանգնեցրել է այնպիսի վիճակի առաջ, որ գինվորական վարչությունը իր գոյությունը ՀՀ սահմաններից դուրս պահպանում է միայն շնորհիվ Գլխավոր շտաբի փոխարինաբար տված գումարների: Միաժամանակ Հախվերդյանը իրավացիորեն նշում էր, որ գինվորական ներկայացուցչությունը պահելու համար հատկացված գումարները ընդհանուր թանկության պայմաններում անբավարար են, ուստի ինքը խնդրում է. 1) հատկացնել վերը նշված 90 հազար ռուբլի գումարը, 2) ավելացնել ամենամսյա վճարումները՝ դարձնելով ամսական 15 հազար ռուբլի գումարի չափով՝ վճարելով՝ 1920 թվականի հունվարի 1-ից սկսած⁶⁹:

Սակայն հետախուզական գործի կազմակերպման համար հատկացվելիք գումարների շուրջ ծագած բյուրոկրատական-գերատեսչական քաշքշուկը շարունակվում է, որին մասնակցում են տարբեր նախարարությունների գանազան օղակներ և պաշտոնյաներ, իսկ հետախուզական ծառայությունները շարունակում էին իրենց դժվարին «ոգիսականը», խրթին խնդիրների առաջ կանգնում՝ նամանավանդ Վրաստանում և Աբրեբջանում, թուրքիայում և այլուր, ուր գործ ունեին անհամեմատ ավելի մեծ նյութական-ֆինանսական ռեսուրսներ ունեցող վրացա-ադրբեջանա-թուրքական հատուկ ծառայությունների հետ, որոնք ավելի շահեկան վիճակում էին գտնվում և հաճախ պարզապես առատորեն վարձատրվում էին տարբեր ոչ պետական և պետական աղբյուրներից, որի շնորհիվ ավելի լիարժեք հնարավորություններ ունեին ագրեսիվ և արդյունավետ գործունեություն ծավալելու հայտնի աշխարհաքաղաքական միջավայրում: Այդ իրավիճակը շատ պատկերավոր է բնութագրել հայտնի հայ հետախուզիկ **Տիգրան Դեվոյանցը**, որն իր «Կեանքիս դրուագներից» հուշաշարքում ընդգծում է հետևյալը. «Իսկ բիւրոն այնքան պղտիկ էր, այնքան աննշան հայկական բուրբլիներով, որ Հայաստանից դուրս համարեայ արժեք չունէր: Մինչդեռ այդ ճիւղերին պէտք է յատկացնէին շատ խոշոր գումարներ՝ երկրի ինքնապաշտպանութեան համար, որովհետեւ այդ երկու ճիւղերը պէտք է կազմէին Հայաստանի պղտիկ պե-

⁶⁹ Նոյն տեղում, գ. 112 (126), ք. 12:

տուժեան աչքերը եւ ականջները, դիւանագիտական դիմումներէ հիմքը»⁷⁰: Այս ամենը լավ է երևում դարձյալ տարբեր արխիվային փաստաթղթերի մանրագնին ուսումնասիրութիւնից: Հետաքրքիր է նաև նշել, որ երբեմն-երբեմն նույնիսկ Նախարարների խորհրդի որոշումները կարծես թէ բավարար չէին լինում գործին ընթացք տալու համար, և տվյալ ֆինանսական-տեխնիկական խնդրի լուծումը հաճախ շաբաթներ, նույնիսկ ամիսներ էր տևում, ինչը խիստ բացասական երևույթ էր 1918-1920 թվականների ռազմաքաղաքական իրավիճակում: Եվ այնուամենայնիվ, ֆինանսական միջոցները դժվարութամբ հատկացվում էին, երբեմն էլ գալառամասերում փորձելով այն նպատակամղել տեղերում հետախուզութան գործի կազմակերպմանը: Այսպես, 1919 թ. օգոստոսի 25-ին, ՀՀ նախարարների խորհուրդը լսում է Կարսի նահանգապետի զեկուցումը հակահետախուզութան համար ամսական 40 հազար ռուբլի հատկացնելու մասին հարցը: Նախարարների խորհրդի նիստը որոշում է կայացնում Կարսի նահանգապետին տրամադրել 5 միլիոնանոց ֆոնդից՝ ամսական 40000 ռ.⁷¹: Զինվորական նախարարութան ղեկավարութիւնը ի դեմս զեներալ-լեյտենանտ Հ. Հախվերդյանի, Նախարարների խորհրդի գործերի կառավարչին ուղղված 1920 թ. մայիսի 10-ի գրութիւնում (N^o 7988) խնդրում էր Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Դեվոյանցի տրամադրութիւն տակ բաց թողնել 657 հազար ռուբլի գումար, շեշտելով, որ այդ գումարը ծայրահեղ անհրաժեշտութիւն է⁷²: Նշված գրութիւն վրա Զինվորական նախարարը մակագրութիւն էր արել՝ խնդրելով արագացնել նշված խնդրի լուծումը համապատասխան վարկի հաշվին (N^o 7629/2634)⁷³: Ի պատասխան՝ Նախարարների խորհրդի գործերի կառավարչի մայիսի 17-ին Զինվորական նախարարին հասցեագրված գրութիւն մեջ (N^o 2961) հայտնում է, որ հետախուզութան համար 657 հազար ռուբլի գումարը հարկավոր է դուրս գրել Զինվորական նախարարութիւն արտակարգ և չնախատեսված կարիքների համար նախատեսված վարկից, ավելացնելով նաև, որ Զինվորական նախարարութիւն հին վարկից դեռևս մնում է մեկ միլիոն, և բացի այդ, առաջարկ է մտցնում ևս 5 միլիոն ռուբլու վարկ բացելու մասին⁷⁴: Այս գրութիւն վրա Գլխավոր շտաբում մակագրութիւն է արվում՝ խնդրանքով, պարզաբանել 5 միլիոն վարկի հարցը (N^o 7772, 18 մայիսի, 1920 թ.): Փոխանակ օպերատիվ կերպով լուծելու բաց թողնված գումարների առաքման հարցը և հարգելու Նախարարների խորհրդի մայիսի 8-ի որոշումը, գործերի կառավարիչը (Գ. Խոջամիրյան) չա-

⁷⁰ **Տիգրան Դեղյանց**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N^o 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 84 -85:

⁷¹ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 42, մաս II, ք. 94:

⁷² Նույն տեղում, գ. 118ա (146), ք. 33:

⁷³ Նույն տեղում, ք. 34:

⁷⁴ Նույն տեղում, ք. 35-36:

րունակում է գրություններ ուղարկել Ջինվորական նախարարությանը (№ 2643) իբր թե բաց թողնված գումարները ստանալու մասին, սակայն արված մակագրություններից մեկը վկայում է, որ դեռևս մայիսի 17-19-ին Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ, կապիտան Դեվոյանցը Երևանի գանձապետարանից չէր ստացել հատկացված գումարը (№ 3585)⁷⁵, ինչը էսպես դժվարացնում էր ՀՀ հետախուզության և հակահետախուզության մարմինների գործունեությունը, նվազեցնելով կատարվող աշխատանքների արդյունավետությունը աստիճանը:

1920 թ. մայիսի 21-ին (№ 8814) գեներալ-լեյտենանտ Հախվերդյանը Ջինվորական նախարարության անունից միջնորդում էր Նախարարների խորհրդի առաջ արտակարգ միջոցների հաշվին բաց թողնել գործերի հրամանատարի շտաբի հունիս ամսվա հետախուզական և հակահետախուզական կարիքների համար 657 հազար ռուբլի՝ ներկայացրած նախահաշվի համաձայն, որը գտնվում է Նախարարների խորհրդի գործերում: Այդ դիմումագրի մասին հունիսի 1-ին համապատասխան հարցում է արվում Ֆինանսների նախարարությանը⁷⁶: Դժվարությունները շարունակվում են: Հետախուզության և հակահետախուզության կարիքների համար ամենամսյա գումարների հատկացումը դժվարություններ էր կատարվում, չնայած թվում էր, թե հանրապետության վիճակը ընդհանուր առմամբ կայունացել է և կարելի է լավ ակնկալիքներ ունենալ: 1920 թ. հունիսի 28-ին (№ 10643) Գլխավոր շտաբից գնդապետ Բ. Բաղդասարովը Նախարարների խորհրդի գործերի կառավարչին ուղղված գրությունում խնդրում էր (Ջինվորական նախարարին գեկուցելու համար) հայտնել, թե ինչ կարգադրություն է արվել Ջինվորական նախարարի մայիսի 19-ի գեկուցման հետ կապված (№ ՔՕ 437)՝ հետախուզության և հակահետախուզության կարիքների համար հունիս ամսվա 657 հազար ռուբլին հատկացնելու ուղղությամբ⁷⁷: Սակայն փոխանակ հարցին լուծում տալու, Նախարարների խորհրդի գործերի կառավարչը, իրեն երևակայելով ոչ թե սովորական կարգադրիչի դերում, այլ համարյա թե որպես վարչապետ, իր սեփական բյուրոկրատական սարդոստային է հյուսում, նոտացիա կարգավով ՀՀ Ջինվորական նախարարության գլխին: Այսպես, Նախարարների խորհրդի գործերի կառավարիչը 1920 թ. հունիսի 5-ի գրությամբ (№ 5323) պատասխանելով Գլխավոր շտաբի գրությանը (№ 10643/3552) հաղորդում էր, որ կառավարության արտակարգ ֆոնդը չի կարող ծառայել որպես մշտական վարկավորման աղբյուր հետախուզության և հակահետախուզության համար, եթե նույնիսկ նախկինում տրվել են այդ գումարները նշված ֆոնդից: Նախարարների խորհրդի գործերի կառավարիչը նշում էր, որ հատուկ վարկի բացմամբ Ջինվորական նախարարությունը

⁷⁵ Նույն տեղում, թ. 30:

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Նույն տեղում, թ. 126:

պետք է ժամանակին մտահոգվեր, միաժամանակ զանգատվելով, որ դեռևս կառավարությունը չեն ներկայացվել հաշվետվություններ ստացված գումարների և դրանց ծախսման մասին: Այդ առումով, զեկուցագրի ավարտամասում Նախարարների խորհրդի գործերի կառավարիչը նպատակահարմար էր գտնում, որ ներկայացվի հատուկ նախագիծ համապատասխան վարկի բացման և կարգադրություն՝ ծախսված գումարների հաշվետվության ներկայացման մասին⁷⁸: 1920 թ. հուլիսի 8-ին Գլխավոր շտաբի անունից գնդապետ Բաղդասարովը պատասխանում է վերը նշված հարցապնդմանը (N^o 11179): Գնդապետ Բաղդասարովը պարզաբանում էր, որ 1920 թ. հունիս ամսվա հետախուզական և հակահետախուզական ծառայությունների կարիքների համար գումարների հարցը հարուցվել է այն բանի հիման վրա, որ Նախարարների խորհուրդը հենվելով Զինվորական նախարարի մայիսի 4-ի (1920թ., N^o Po 354) զեկուցագրի վրա, անհրաժեշտ է գտել բաց թողնել պահանջվող գումարները ապրիլ և մայիս ամիսների համար՝ հենց արտակարգ Փոսդից, իսկ հունիս ամսվա համար միջնորդություն է ներկայացվում, սակայն ներկայացվելիք հաշվետվության հարցում իրենք ուշացել են, քանի որ դեռևս բաց թողնված գումարներն ամբողջությամբ չեն ծախսել⁷⁹: Ահա այսպես, Զինվորական նախարարությունից միջոցով չէ հետախուզական և հակահետախուզական ծառայությունները ստանում էին անհրաժեշտ սուղ միջոցներ, որոնք կենսական անհրաժեշտություն էին գործի արդյունավետ կազմակերպման համար: 1920 թ. հուլիսի 12-ին Նախարարների խորհրդին է ներկայացվում Զինվորական նախարարության նախագծի օրինագիծը սպարապետի շտաբի չէ հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի 1920 թ. հունիս-հուլիս ամիսների կարիքները բավարարելու համար 1.314.000 ռուբլի վարկ բանալու մասին: Քննարկելով սույն նախագիծը, Նախարարների խորհուրդը հանձնարարում է Զինվորական նախարարությանը նշված գումարը տալ իր հատուկ վարկերից⁸⁰: Հենց այսպիսի ձևերով Հայաստանի Առաջին Հանրապետությունը իր չափազանց համեստ միջոցներից գումարներ էր հատկացնում այս կարևոր գործի կազմակերպման համար, որն էական նշանակություն ուներ նաև հետախուզական գործի կազմակերպման տեսանկյունից, առանց որի անհնարին է պատկերացնել ցանկացած կազմակերպված պետության գոյությունն առհասարակ: Չնայած հարկ է ասել, որ այդ գումարները կարելի էր բազմապատկել, եթե իհարկե չլինեին ներքին անարխիան, մահաբազան ընդվզումները և այսպես կոչված մատուցելիստական «խմբերի» կամայականությունները, չինովնիկների բյուրոկրատիան զսպելու և ճնշելու անհրաժեշտությունը, ինչպես նաև միլիցիայի և այլ օղակների կողմից իրականացվող բացահայտ կողոպուտի միանգամայն

⁷⁸ Նույն տեղում, թ. 126, 140:

⁷⁹ Նույն տեղում, թ. 154:

⁸⁰ Նույն տեղում, գ. 146ա (149), թ. 159, 172:

անթույլատրելի քաղաքականությունը: Արդարև, հարկ է ընդգծել, որ սույն հուլիսի կարևոր պետական գործի կազմակերպումը ընթացում էր հենց վերը նշված և այլ պատճառներով զգալի, երբեմն պարզապես անհաղթահարելի դժվարություններով, երբեմն էլ ուղղակի անտեղի քաղաքական առարկա դառնալով, երբ մի նախարարություն մյուսի վրա էր գցում պատասխանատվությունը, էլ ավելի խճճելով այդ բնագավառում ընթացող գործընթացները: Այդ մասին մենք տեղեկանում ենք Նախարարների խորհրդին ներկայացված 1920 թ. հունվարի 21-ի ղեկուցագրից (N° 324), որի հեղինակը դատելով փաստաթղթի ուսումնասիրությունից, հավանաբար հենց ինքը միևնույն-նախագահն էր: Այդ ղեկուցագրում նշվում էր, որ 1919 թ. մայիսից Վրաստանում Հայաստանի դեվանագիտական ներկայացուցչությունը կից գործող գինվորական ներկայացուցչի վարչությունը տնօրինելով ռազմական բոլոր գործերի ղեկավարությունը, ինչպես նաև դաշնակից երկրների հետ հարաբերությունները և ռազմական առնչությունները, միաժամանակ իրականացնում էր հետախուզություն և Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարությունը տեղեկատվություն ներկայացնում Վրաստանի, Ադրբեջանի և Կամավորական բանակի կողմից ձեռնարկվող միջոցառումների մասին: Զեկուցագրում նշվում էր, որ ըստ դեվանագիտական ներկայացուցչության ղեկավար Լևոն Եվանգուլյանի մտահղացման, գեներալ Ղորղանյանի կողմից ներկայացված նախագիծը ենթադրում էր այդ կառույցի լրիվ ինքնուրույն գործունեություն պրոֆեսիոնալ հարցերում, սակայն պարտավորվելով համաձայնեցված գործել դեվանագիտական ներկայացուցչության ղեկավարի հետ՝ ՀՀ Արտաքին Գործերի նախարարի համաձայնությամբ: Զեկուցագրում նշելով, որ այդ նախագիծը լրիվ հավանություն է արժանացել ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. ապրիլի 8-ի նիստի կողմից, միաժամանակ նաև ընդգծվում էր այն մասին, որ Արտաքին Գործերի նախարարությունն էլ հանձնարարվել է իր նախահաշիվի մեջ մտցնել 9 ամսվա գումարը՝ 90 հազար ռուբլի գրասենյակային և այլ ծախսերի համար⁸¹:

Կազմակերպական-ֆինանսական փնտրտուքները շարունակվում էին և 1920 թ. մարտի 17-ին Արտաքին Գործերի նախարար Ալ. Խատիսյանը կառավարությունը ներկայացնելով (N° 767) Հանրապետության Տփղիսի (Թիֆլիս) և Բաթումի գինվորական ներկայացուցչությունների 1919թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին կատարված ծախսերի հաշիվները (N° 1604 գրություն) և հայտնելով, որ ծախսերը ծածկելու համար իր կողմից ղեկավարվող նախարարությունը չունի համապատասխան վարկ, հետևաբար ինքը խնդրում է Նախարարների խորհրդի համապատասխան որոշումը ծախսված գումարները վերադարձնելու մասին⁸²:

⁸¹ Նույն տեղում, Ֆ.Պ -199, ց. 1, գ. 118, ք. 58; գ. 112, մաս I, ք. 17; գ. 96, ք. 62:

⁸² Նույն տեղում, գ. 112 (126), ք. 19:

Հարկ է ասել, որ Թիֆլիսում Հայաստանի զինվորական վարչության դժվարություններին մասին գեներալ-մայոր Քիչմիչյանը բազմիցս զեկուցել էր թե՛ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին, թե՛ Հայաստանի քաղաքական ղեկավար շրջաններին՝ ակնկալելով հոգատար և օպերատիվ մոտեցում այս բնագավառի նկատմամբ, հաճախ մանրամասն պարզաբանումներ տալով այն մասին, որ զինվորական վարչության գործընթացների խելամիտ կազմակերպումից և տեխնիկա-ֆինանսական հարցերի լուծումից մեծապես կախված է հայկական հետախուզչության օգտաշատ գործունեությունը և տարվող աշխատանքների արդյունավետությունը Թիֆլիսում, հետևաբար նաև տարածաշրջանային հիմնախնդիրների Հայաստանի օգտին լուծումը: Այսպես, գեներալ-մայոր Քիչմիչյանը 1920 թ. մայիսի 10-ի (N^o 645) զեկուցագրում՝ ուղղված Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին, նշելով, որ իր կողմից ղեկավարվող վարչությունը գործում է 1919 թ. ապրիլից սկսած, և այդ կապակցությամբ ինքը խնդրել է նախահաշվի մեջ մտցնել զինվորական ներկայացուցչության կարիքների համար անհրաժեշտ 90 հազար ռուբլի գումար, որը ժամանակին չի վարկավորվել ՀՀ պառլամենտի կողմից նշված վարչության հաստիքակազմի չհաստատման պատճառով: Գեներալ-մայոր Քիչմիչյանը նշելով, որ դեռևս հունվար ամսին Արտաքին Գործերի նախարարության գլխավոր քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը առաջարկել է Արտաքին Գործերի նախարարություն ներկայացնել կատարված ծախսերի մասին հաշիվները, հենվելով այդ ժամանակ տվյալ նախարարությունը գլխավորած Ալ. Խատիսյանի թույլտվությամբ հիման վրա՝ նախարարների խորհուրդ ներկայացնելու առաջարկ՝ նշված գումարները կառավարության 10 միլիոնանոց ֆոնդից ստանալու համար, չնայած դրան, մինչև սույն զեկուցագրի պահը այդ գումարները չեն փոխանցվել և ծայրահեղ ծանր վիճակի մեջ է դրել իր կողմից ղեկավարվող վարչության աշխատանքները դրամի բացակայության պատճառով: Քիչմիչյանը նշում էր, որ իր կողմից ղեկավարվող վարչության 10 ամսյա գործունեության ընթացքում ոչ մի կոպեկ պետական գանձարանից չի ստացվել (և դա այն ժամանակ, երբ Հայաստանում գանազան կասկածելի նպատակներով էական գումարներ էին ծախսվում - Վ. Ա.): Գեներալ-մայոր Քիչմիչյանը նշելով, որ 1919 թ. հոկտեմբեր ամսին իրեն հաջողվել է զինվորական շտաբից փոխադարձաբար վերցնել 50 հազար ռուբլի, իսկ 1920 թ. հունվար-ապրիլ ամիսների համար Զինվորական նախարարությունը թույլատրել է իրեն ստանալ 60 հազար ռուբլի իր բարեկամ կոստանդնուպոլսյան և եգիպտոսյան հարուստ հայերի կողմից հայկական բանակի օգտին հանգանակված 120 հազար ռուբլի գումարից, միաժամանակ շեշտելով, որ իրեն վստահված վարչությունը շարունակում է գոյատևել պատահական մուտքերով, ինչպես նաև օգտագործելով իր սեփական խնայողությունները՝ շուրջ 40 հազար ռուբլի: Նույն զեկուցագրում գեներալ-մայոր Քիչմիչյանը արդարացիորեն

դժգոհում էր, որ այդ ամենը ընդամենն այն պատճառով է, որ զինվորական վարչության հաստիքակազմը դեռևս չի հաստատվել, ինչպես նաև այդ կապակցությունում Զինվորական և Արտաքին Գործերի նախարարությունների միջև ընթացող վիճաբանությունն պատճառով, թե որ նախարարության նախահաշվի մեջ պետք է մտնեն նշված ծախսերը 15 հազար ռուբլու չափով, որը նախատեսված էր շենքի վարձակալության, տաքացման, լուսավորության, հեռախոսային, գրասենյակային և այլ ծախսերի համար, ինչպես նաև ազատավարձու ծառայողներին պահելու, քաղաքում երթևեկելու, նամակագրությունը Երևան ուղարկելու, հիվանդությունների և բժշկական, չնախատեսված ծախսերի համար և այլն: Շեշտելով այդ մասին՝ գեներալ-մայոր Քիչմիչյանը աջակցություն էր խնդրում դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարությունից⁸³: Բնականաբար, վերջինս էլ իր հերթին դիմում է ՀՀ քաղաքական ղեկավար շրջաններին: Երևանում տեղյակ էին գործերի վիճակին, և վեհերոտ փորձեր արվեցին շտկելու իրավիճակը: Այդ մասին տեղեկանում ենք Արտաքին Գործերի նախարարի 1920 թ. մայիսի 13-ի գրությունից՝ հասցեագրված Նախարարների խորհրդին, որում վերջինիս քննությունն էր ներկայացվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի մայիսի 13-ի գրությունը (N^o 1786) և դրան կից Զինվորական նախարարի համապատասխան գրության պատճենը (N^o 645)⁸⁴: Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Տիգրան Բեկվադյանը 1920 թ. մայիսի 13-ի գրությունում՝ ուղղված Արտաքին Գործերի նախարարին (N^o 1786), վկայակոչելով գեներալ-մայոր Քիչմիչյանի մայիսի 10-ի գրության մասին, շեշտում էր, որ այդ կապակցությամբ ինքն իրեն թույլ է տալիս կարծիք արտահայտելու, որ կամ պետք է լուծարել զինվորական ներկայացուցչությունը թիֆլիսում՝ կարևոր չհամարելով այդ հիմնարկության գոյությունը, որի վերաբերյալ պառլամենտը չի ընդունել և հաստատել համապատասխան նախահաշիվ, կամ էլ, նկատի ունենալով դրա պահպանման նպատակահարմարությունը, կառավարությունը հոգում է նրա գոյության հարցը՝ մտադրություն ունենալով բավարարել վերջինիս դրամական ծախսերը որևէ հատուկ ֆոնդի հաշվին, ժամանակին փակելով բոլոր դրամապարտքերը: Եզրակացության մեջ Տ. Բեկվադյանը խնդրում էր շտապ փոխանցել այդ հիմնարկությանը հասանելիք գումարները, միաժամանակ հաղորդելով, որ սովյակ գրության պատճենը ինքն ուղարկում է նաև Զինվորական նախարարին⁸⁵: 1920 թ. մայիսի 22-ին սույն գրության վրա արվում է Արտաքին Գործերի նախարարի համապատասխան մակագրությունը, որում նշվում էր այն նախարարների խորհրդին ներկայացնելու անհրաժեշտության մասին:

⁸³ Նույն տեղում, թ. 14:

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ Նույն տեղում, թ. 15:

Այնուամենայնիվ, որոշ քայլեր արվեցին ստեղծված փակուղուց դուրս գալու համար: 1920 թ. մայիսի 19-ի Նախարարների խորհրդի գործերի կառավարչի գրուեթյունից (N^o 313) տեղեկանում ենք, որ Նախարարների խորհուրդը, հաշվի առնելով գեներալ Քիչմիշյանի հաշիվները Արտաքին Գործերի նախարարության հետ և համապատասխան գրուեթյան առկայությունը, մայիսի 18-ին որոշեց այդ հարցը լուծել Զինվորական և Արտաքին Գործերի նախարարների փոխարարձ համաձայնությամբ: Այդ մասին Գլխավոր շտաբին տեղեկացվում է մայիսի 21-ին (N^o 7955 գրուեթյուն), վերջինս էլ իր հերթին՝ Զինվորական նախարարին: Փաստաթղթի վրա կա համապատասխան մակագրություն⁸⁶: Այդ կապակցությամբ ներկայացված օրինագծում նշվում է Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչությանը կից գինվորական ներկայացուցչության 1919 թ. ապրիլի 1-ից մինչև տարվա վերջ 1920 թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը կատարած ծախսերը ծածկելու համար 180 հազար ռուբլի բաց թողնելու մասին: Օրինագծի տակ ստորագրել են մինիստր-նախագահը և Զինվորական նախարարը⁸⁷: Կարծես թե հարցը, թեկուզև այսքան մեծ դժվարությամբ, լուծվեց, և գեներալ Քիչմիշյանը կարող էր մի փոքր շունչ քաշել դժվարություններից: Վերջապես ստացվեց բավականաչափ համեստ և կոնկրետ մի գումար: 1920 թ. հունիսի 9-ին դիմելով Նախարարների խորհրդի գործերի կառավարչին (N^o 1966) և տեղեկացնելով, որ ինքը Գլխավոր շտաբի պետից ստացված հեռագրի միջոցով իմացել է ՀՀ Նախարարների խորհրդի որոշման մասին իրեն վստահված վարչության համար հատկացված գումարների վարկավորման մասին՝ 90 հազար ռուբլի գումարի չափով՝ 1920 թ. առաջին կեսի համար, և այդ կապակցությամբ ինքը խնդրում է չմերժել համապատասխան կարգադրություն անել նշված գումարը իր անունով Թիֆլիս փոխանցելու համար ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կից Ֆինանսական գործակալի միջոցով: Փաստաթղթի վրա արված է համապատասխան մակագրություն նշված գումարը վարկավորելու մասին⁸⁸: Եվ այնուամենայնիվ, քաջքույր չգաղարեց, և նորանոր բարդուեթյուններ առաջացան:

Հետախուզության աշխատանքների կազմակերպման տեսանկյունից առավել մեծ ֆինանսական բարդուեթյուններ առաջացան Կ.Պոլսում, որտեղ ավելի մեծ գումարներ էին անհրաժեշտ այնտեղ գործուղված Տ. Դեվոյանցի կոստանդնուպոլսյան խմբի գործունեության համար: Ինչպես պարզվում է Փարիզ՝ գեներալ Գ. Գ. Ղորղանյանին (*Ղորղանով*, *Կորգանով*) ուղարկած Տ. Դեվոյանցի 1919 թ. հոկտեմբերի 25-ի ղեկուցագրից (N^o 44), Կոստանդնուպոլսում Հետախուզական աշխատանքներ կազմակերպելու համար նա վարկավորվել էր սկզբում ամիսը 30.000 ռ., իսկ հետո՝ 50.000 ռ. կովկասյան

⁸⁶ Նույն տեղում, թ. 18:

⁸⁷ Նույն տեղում, թ. 17:

⁸⁸ Նույն տեղում, գ. 118ա (146), թ. 60:

բոններով: Հետախուզական գործունեութեան կազմակերպման Համար Տ. Դեվոյանցը ավանս է ստանում մինչև 1919 թ. Հոկտեմբերի 1-ը: Դեվոյանցը նշում էր, որ նկատի ունենալով թանկութեանը, աշխատանքներն ավելի լայն թափով ծավալելու համար գնդապետ Ա. Ծնեուրն իրեն խոստացել էր բյուջեն մեծացնել մինչև ամիսը 500 լիրա (50.000 ռ.) և ուղարկել 2-3 ամսվա համար ավանս: 1919 թ. սեպտեմբերի 9-ի նամակում Ա. Ծնեուրը հայտնում էր Տ. Դեվոյանցին, որ մոտ օրերին կուղարկի 100.000 ռ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ծախսերի համար (մոտ 1000 լիրա)⁸⁹: Սակայն դա տեղի չի ունենում, գումարի առաքումը ձգձգվում էր, իսկ Տ. Դեվոյանցն օգտագործելով իր բազմաթիվ կապերը, խրվում էր պարտքերի մեջ՝ աշխատանքները շարունակելու համար (հոկտեմբերի 20-ի վիճակով Տ.Դեվոյանցն ուներ 470 լիրա պարտք)⁹⁰:

Դժվարութեանները շարունակվում են: Հոկտեմբերի 12-ին Դեվոյանցը Բաթումում Հայաստանի Հանրապետութեան զինվորական ներկայացուցիչ կապիտան Անիլեից նամակ է ստանում, որով վերջինս հայտնում էր, որ հասանելիք գումարը դեռ ինքը չի ստացել⁹¹:

Ղորղանյանին ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 25-ի գեկուցագրում Դեվոյանցը գրում էր, որ իր փողերը վերջացել են, այլևս ոչ մի տեղից ինքը չի կարող պարտք վերցնել, և ստեղծված իրավիճակում ինքը ստիպված է հրաժարվել վարձված կոնսպիրատիվ բնակարանից, ետ կանչելով անհրաժեշտ մարդուն, ավելացնելով նաև, որ Անգորայում և այլ քաղաքներում գտնվող իր գործակալներին չի կարող վճարել⁹²: Դեվոյանցը Ղորղանյանից խորհուրդ էր խնդրում, թե այսուհետև ինքն ինչպես վարվի, ավելացնելով, որ այդ նույն խնդրով բազմիցս դիմել է Երևան, սակայն ոչ մի պատասխան չի ստացել, իսկ այդ իրավիճակում այլևս չի կարող այդպես ապրել Կ. Պոլսում⁹³ և մնում է թողնել գործերը և փախչել Սևաստոպոլ՝ Հարազատների մոտ⁹⁴: Տ. Դեվոյանցը ափսոսանք էր հայտնում այս կապակցութեամբ, ասելով, որ հենց այս պահին ինքը կարողացել է հրաշալի «փոխհարաբերութուններ» հաստատել ռազմական նախարարութեան որոշ օղակների (բնականաբար՝ Թուրքիայի - Վ. Վ.) հետ և ինքը հնարավորութեան ունի մշտապես ստանալ Հայերին վերաբերող գաղտնագրված հեռագրերը, իսկ այդ ամենի համար՝ ապրելու հետ միասին անհրաժեշտ էր ընդամենը ամիսը 500 լիրա (4500[0]ռ.)⁹⁵:

⁸⁹ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 17/17, պահ. 12, դ. 3:

⁹⁰ Նույն տեղում:

⁹¹ Նույն տեղում:

⁹² Նույն տեղում:

⁹³ Նույն տեղում:

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ Նույն տեղում:

Դեվոյանցը Ղորղանյանին հայտնում էր, որ ինքը գիտի, որ Երևանը ի վիճակի չի ամխը 500 լիրա ուղարկել, նամանավանդ, որ ռուբլու կուրան էլ ընկել է, և ընդամենը ՀՀ հետախուզության կարիքների համար ամխը բաց է թողնվում 189.400 ռուբլի, որ Հայաստանին հարևան պետություններում ևս իրենք ունեն կազմակերպություններ, գումարած դրան հակահետախուզությունը ՀՀ տարածքում, սակայն ստեղծված իրավիճակում ինքը կարևոր է համարում աշխատանքների շարունակելը Կ. Պոլսում՝ թեկուզև ամխը 400 լիրա աշխատավարձով, ավելացնելով, որ ինքը իրեն մի քիչ նեղություններ տալուց չի հրաժարվի: Միաժամանակ Դեվոյանցը գրում էր, որ աշխատանքի բնույթով իրեն անհրաժեշտ է ունենալ նաև հագուստ, քանզի ինքը համազգեստով է ման գալիս⁹⁶:

Գեներալ Ղորղանյանին ուղղված 1919 թ. նոյեմբերի 7-ի գեկուցագրում Դեվոյանցը նշելով, որ ինքն արդեն 105 նամակ է ուղարկել Երևան, ստանալով ընդամենը 3-ը (սեպտեմբերի 3-ին, 20-ին և 26-ին), որոնցից առաջինին գնդապետ Շենուրը պատասխանել էր, որ մոտ օրերին կուղարկի 100.000 ռ., իսկ վերջին երկու նամակում այն մասին, որ մոտ օրերին կուղարկի 150.000 ռ., որ շատ բարձր է գնահատում իր աշխատանքը⁹⁷:

Դեվոյանցը նաև ավելացնում էր, որ այդ աշխատանքները դադարեցնել չի կարելի, քանզի կիզվեն օգտակար կապերը, որի համար ուր ասես դիմել է՝ խնդրելով փոխարինաբար տալ 300-400 լիրա և բոլորը մերժել են: Դեվոյանցը գրում էր, որ այնուհանդերձ իրեն հաջողվել է այլ հասցեատերերից 20 օրով վերցնել 300 լիրա, սակայն ժամկետի ավարտից հետո ինքը հարկադրված պարտք է վերցրել Կամավորական բանակի ներկայացուցիչ գեներալ Աջապակեից 4000 Ֆրանկ, որի առաջին մասն արդեն վճարել է: Դեվոյանցը հայտնում էր, որ վաղն իրեն խոստացել են տալ ևս 3000 Ֆրանկ՝ մինչև դեկտեմբերի 1-ը ժամկետով: Դեվոյանցը Ֆինանսական այս դժվարությունների մասին հայտնելով Ղորղանյանին, նշում էր, որ մինչև դեկտեմբերի 1-ը իր աշխատանքները կշարունակվեն, իսկ այդ ընթացքում ինքը հույս ունի, որ կստանա անհրաժեշտ գումարները և կփակի պարտքերը: Դեվոյանցը գրում էր, որ ինքը վաղուց կթողներ գործերը և կհեռանար, սակայն ինքը մի կողմից ամոթ է զգում օտարների առաջ, իսկ մյուս կողմից այլոք, որոնք չնչին այլ աշխատանքների համար խելացնոր գումարներ են ծախսում (դեռ հոկտեմբերի 4-ի գեկուցագրում նա նշում էր, որ իր կողքին, գտնվող Կ. Պոլսում գտնվող Գլխավոր շտաբի մի քանի ռուս գնդապետներ յուրաքանչյուր ամիս ծախսում են 20.000 Ֆրանկ՝ իրական արդյունք չստանալով) չստանալով դրա դիմաց փոխհատուցում 1/1000-ի չափով, ինչն ինքը ստանում է չնչին գումարներով, իրեն շատ վատ է զգում, որ որոշել է ամեն գնով դիմանալ և եթե մինչև դեկտեմբերի 1-ը գումարները չստանա, ինքը

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ Նույն տեղում:

այլ տեղերից կվերցնի ևս ինչ-ինչ գումարներ, կվճարի պարտքերը... և կշարունակի աշխատանքը: Ամեն դեպքում Դեվոյանցը փորձում էր հասկանալ բարդությունների իմաստը, լավ ըմբռնելով, որ Հայաստանը գտնվում է Ֆինանսա-տնտեսական ծանր իրավիճակում, սակայն միանգամայն արդարացիորեն կարևորում էր հետախուզության աշխատանքների հետագա շարունակումը և ծավալումը, և այն էլ՝ Կ. Պոլսում, ինչքան էլ որ դժվար չլինեք, նորանոր խնդրանքներով դիմելով Երևան՝ ՀՀ հետախուզական բաժանմունքի պետին՝ այլևայլ եղանակներով գումարներ փոխանցելու իրեն⁹⁸, իսկ եղած նամակները թողնել Կ.Պոլսի «Ճակատամարտ» թերթի խմբագրությունում: Վերջին տեղեկության համաձայն, Ֆինանսական ծախսերը գործակալուժյան վրա հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների համար (մինչև դեկտեմբերի 1-ը) կազմել են 285 լիրա (նոմինալ գնով 2400 ու., իսկ ըստ կուրսի՝ 60.000 ու.), փակելով նաև գրասենյակի, փոստի և ներկայացուցչության և վարձված 2 սենյակների (1-ը՝ կոնսպիրատիվ) ծախսերը և այլն⁹⁹:

Հարկ է սակայն նորից հատուկ ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ հետախուզությունը և հակահետախուզությունը աշխատում էին՝ հաղթահարելով սոսկալի Ֆինանսա-տնտեսական և կադրային դժվարություններ: Եվ այնուամենայնիվ, երիտասարդ հանրապետությունը իր սուղ Ֆինանսական միջոցներից որոշ գումարներ էլ հատկացնում էր վերջինիս, իսկ ուժային գերատեսչությունները՝ Ռազմական և Ներքին Գործերի նախարարությունները ժամանակ առ ժամանակ օժանդակում էին նրանց: Այդ մասին են վկայում ստորև բերված արխիվային կարևոր փաստաթղթերը, որոնք զգալի արժեք են ներկայացնում: Այսպես, Գլխավոր շտաբի պետին ուղղված գեկուցագրում Գլխավոր շտաբի բաժնի պետ փոխգնդապետ Շնեկը 1919 թ. հունիսի 8-ին հայտնում է, որ ստացված տեղեկությունների համաձայն Կարսի քաղաքացիական նահանգապետն իր տրամադրության տակ ունի 250 թուրքական ոսկյա լիրա, որ բռնագրավել են գերված ասկյարներից: Այնուհետև նշելով, որ հետախուզական նպատակներով լիրաների ծայրահեղ անհրաժեշտության նկատառումով, ինչպես նաև շուկայում դրանց սակավության պատճառով խնդրվում է միջնորդել այդ լիրաները իրեն վստահված բաժնի տնօրինությունը հանձնելու: Զեկուցագրի վերջնամասում Շնեկը նշում էր, որ ասկյարներից լիրաների բռնագրավման պահին դրանք արժեին 350 ուլբլի, և որ այդ գնահատումով լիրաները մտել են մատյան¹⁰⁰: Թե ինչքան դժվար էր այդ խնդիրը լուծել, երևում է հետագա գեկուցագրերից, որոնցից ակնհայտ է դառնում բյուրոկրատական քաշքշուկների հաղթահարման ողջ պատկերը: Իր հերթին, Գլխավոր շտաբի պետ

⁹⁸ Նույն տեղում:

⁹⁹ Նույն տեղում:

¹⁰⁰ ՀԱԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 37, ք. 58:

Մ. Մ. Զինկևիչը¹⁰¹ դիմում է Զինվորական նախարարին (1919 թ. Հունիսի 28): Զեկուցագրում նա հայտնում է, որ հետախուզության բաժնի համար ոսկյա լիրաների ծայրահեղ անհրաժեշտության պատճառով, ինքը միջնորդագրություն է հարուցում Ներքին Գործերի նախարարի առաջ պատշաճ ձևով Կարսի նահանգապետին կարգադրություն անելու՝ նշված փողերը ըստ կուրսի Գլխավոր շտաբի հետախուզական բաժնին փոխանցելու մասին¹⁰²: Հատուկ ծառայության սպաները առհասարակ գումարները և այդ մասին փոխանցումների տվյալները ճշտապահորեն գրանցում էին, և դա այդ բնագավառում ծածուկ չէր արվում: Ընդունված էր բոլոր «մանրուքները» խելամորհեն և ճշմարտացիորեն գրանցել և գնահատել: Եվ դա այդ բնագավառում չգրված սովորույթ է և արարողակարգ: Վերը նշված թուրքական ոսկյա լիրաները հետախուզական բաժնին փոխանցելու մասին է հայցում նաև գեներալ-մայոր Արարատյանը ներքին գործոց նախարարի առաջ 1919 թ. Հուլիսի 3-ի գրությունում¹⁰³: Դրա վրա ներքին գործոց նախարարը մակագրում է, որ նշված փողերն արդեն գտնվում են Ֆինանսների նախարարության տրամադրության տակ¹⁰⁴: Ներքին Գործերի նախարարը գրությունը վերադարձնելով (1919 թ. Հուլիսի 5) Զինվորական նախարարին, հայտնում էր, որ նշված գրամներն արդեն գտնվում են Ֆինանսների նախարարությունում, և որ արվել են համապատասխան կարգադրություններ¹⁰⁵: Սակայն քաջքռուկները չարունակվում են, իսկ ոսկյա լիրաները ծայրահեղորեն անհրաժեշտ էին հետախուզական բաժնին: Վերջինս էլ, ի դեմս Գլխավոր շտաբի պետ Զինկևիչի (փաստաթուղթը ստորագրել էր նաև բաժնի պետի պարտականությունները կատարող շտաբս-կապիտան Դեվոյանցը) այս անգամ էլ դիմում է Ֆինանսների նախարարին՝ խնդրելով նրա կարգադրությունը ըստ կուրսի թուրքական լիրաները իրեն վստահված Գլխավոր շտաբի հետախուզական բաժնին փոխանցելու համար¹⁰⁶:

Այստեղից միանգամայն ակնհայտ է, թե ինչպիսի դժվարություններ էին ստիպված լինում հաղթահարելու Հայաստանի հատուկ ծառայությունները, իրականացնելով անհրաժեշտ հետախուզական աշխատանքները թուրքիայի՝ Հայաստանին հարող տարածքներում և այլուր: Վերջապես, մի ար-

¹⁰¹ **Զինկևիչ Միխայիլ Միխայիլի, գնդապետ [03.01.1883 թ. - 24.12.1944 թ.]** - Մինչև 07.1918 թ. եղել է Անդրկովկասում /Հայկական կորպուսի շտաբի պետ/: 09. 1918 թ. - 1920 թ. եղել է Կամավորական բանակում [փաստացի մշտական գործողման մեջ է եղել Հայաստանի Հանրապետությունում, հանդիսացել է հայկական բանակի շտաբի պետ, ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետ]: Տե՛ս **А. В. Ганин**, Корпус офицеров Генерального штаба в годы гражданской войны, 1917 - 1922 гг., Справочные материалы, стр. 227, 460, 593, 727, 835:

¹⁰² ՀԱԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 37, ք. 58:

¹⁰³ Նույն տեղում, ք. 57:

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Նույն տեղում:

¹⁰⁶ Նույն տեղում, ք. 56:

խիվային փաստաթուղթ ևս, որն ավարտուն կդարձնի վերը բերված միտքը. այսպես, Ֆինանսների նախարարին ուղղված 1919 թ. սեպտեմբերի 13-ի գրությունում Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի պետ գնդապետ Շեսեռը և նրա օգնական, ծովակալության ("Адмиралтейство") գծով պորուչիկ Խան-Կոտուրակին Հայտնում են, որ Գլխավոր շտաբի Հետախուզական բաժինը արտասահմանյան դրամների խիստ կարիք է զգում, առանց որի անհնար է աշխատել: Վերջիններս խնդրում էին Հայտնել, թե չկա՞ արդյոք Հնարավորություն իրենց համար որոշ գումար փոխանակել թուրքական լիրաների և ֆրանսիական ֆրանկների՝ Պողոս Նուբար փաշայի կողմից ուղարկված գումարների հաշվին, որոնք Հնարավոր է, կան նախարարության տրամադրության տակ, և ի՞նչ կուրսով կարելի է իրականացնել փոխանակումը¹⁰⁷: Եվ առհասարակ, Հայաստանի հատուկ ծառայությունները տարադրամի (վալյուտայի) խիստ կարիք էին զգում, և դրանք անհրաժեշտ կարևոր միջոց էին նրանց աշխատանքների արդյունավետ կազմակերպման տեսանկյունից: Այսպես, հասկանալի նկատառումներով Ֆինանսների նախարարությունը Երևանի գանձապետարանին ուղարկված հատուկ գրությամբ տեղեկացնում էր ուղարկված ադրբեջանական դրամներ պարունակող կաշվե կնքված պալուսակի մասին, և խնդրում էր այն պահպանության առնել մինչև հատուկ կարգադրությունը¹⁰⁸:

Քանի որ Ֆինանսական հարցերն իրենցից մեծ կարևորություն էին ներկայացնում և առանց դրանց հնարավոր չէր կազմակերպել ՀՀ հետախուզության գործունեությունը, ապա կարելի է փորձել ըմբռնել այն ուշադրությունը, որ ցուցաբերվում էր ամեն մի կոպեկի համար, առավել ևս պատասխանատվության էին ենթարկվում բոլորը, անգամ նրանք, ովքեր նախկինում աչքի էին ընկել իրենց անբասիր ծառայություններով, սակայն դա ամենևին էլ չէր փրկում պատասխանատվությունից: Դրա մասին է վկայում Հայաստանի Զինվորական դատարանի Երևանյան տեղամասի գծով զինվորական քննիչի դիմումագիրը Արտաքին Գործերի նախարարին (այն ստացվել է 1919 թ. դեկտեմբերի 27-ին, N^o 7166), որում խնդրվում էր տեղեկացնել Ռուսաստանի հարավում գինված ուժերի գլխավոր հրամանատարի ներկայացուցչին (ասել է թե՛ գնդապետ Զինկելիչին -Վ.Վ.), որպեսզի կապիտան Շուստովը (Հայաստանի Հանրապետության զինված ուժերի Գլխավոր շտաբի ընդհանուր բաժնի նախկին պետերից մեկը) 1920 թ. հունվարի 2-ին ներկայանա քննիչի իր ընդունարան՝ հարցաքննության համար որպես վկա, կապված Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունքից ոսկե լիրաների գողություն հետ: Գրության մեջ նաև ասվում էր, որ այդ մասին կուղարկվի

¹⁰⁷ Նույն տեղում, ք. 116:

¹⁰⁸ Նույն տեղում, ք. 100, ք. 37:

Հատուկ գրություն¹⁰⁹: Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարի ներկայացուցիչ գնդապետ Զինկևիչին ուղղված 1920 թ. հունվարի 6-ի գրությունում (N^o 110-եկից՝ N^o 7161) հայտնվում էր, որ կապված Հայաստանի Հանրապետութան Զինվորական դատարանի քննիչի 1919 թ. դեկտեմբերի 26-ի գրության հետ (N^o 4382) ինքը՝ գրասենյակի ղեկավորը պատիվ ունի հաղորդելու, որ կապիտան Շումովին խնդրվում է 1920 թ. հունվարի 2-ին ներկայանալ Զինվորական դատարանի բանտախուց հարցաքննության համար որպես վկա՝ կապված Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունքից ոսկե լիրաների կողոպուտի հետ¹¹⁰:

Հետագա փաստերը վկայում են, որ ըստ երևույթին կապիտան Նիկոլայ Ալեքսանդրի Շումովը պատվով է դուրս եկել այդ իրավիճակից, ժամանելով Հայաստան և այնուհետև հնարավորութուն ստացել 1920 թ. նոյեմբերի սկզբին անխոչընդոտ հեռանալու Հայաստանից՝ Վրաստան, այնտեղից էլ՝ Ռուսաստան: 1920 թ. նոյեմբերի 9-ի գրության մեջ (N^o 6302) Արտաքին Գործերի նախարարութան Գլխավոր քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանը խնդրում էր սահմանային գործասերին պաշտոնական աջակցություն ցույց տալ նրան և նրա հետ մեկնող երկու այլ անձանց, նրանց ուղեբեռը ազատելով մաքսային ստուգումից¹¹¹: Բերված փաստերը ակնբախորեն վկայում են այն մասին, թե՛ ինչքան կարևոր էր Ֆինանսական հարցերի լուծումը, որից կախված էր թե՛ Հայաստանի Առաջին Հանրապետութան ռազմական-քաղաքական ծառայության՝ հետախուզական և հակահետախուզական ծառայությունների ստեղծումն ու կազմակերպումը, և՛ ձեռնարկվող կանխարգելիչ գործողությունների հաջողությունը, և՛ առհասարակ դրանց արդյունավետ գործունեության ապահովումը:

¹⁰⁹ Նույն տեղում, ֆ. Գ - 200, ց. 1, գ. 412, ք. 3:

¹¹⁰ Նույն տեղում, ք. 2:

¹¹¹ Նույն տեղում, ք. 47:

**3. Հայկական հետախուզական ծառայություն կազմերը:
ՀՀ Կառավարության գործունեությունը կազմային
հիմնախնդիրները լուծման ուղղությամբ**

Կազմային հիմնախնդիրները ամեն մի հարցի, ամեն մի քիչ թե շատ լուրջ պետական գործի արդյունավետ լուծման անկյունաքարն է, նրա աքիլեսյան դարչապարը, դրանով են պայմանավորված բոլոր ձեռնարկվող գործողությունների ու ընթացող գործընթացների թե հաջողությունը, և թե ձախողումը, պետաքաղաքական բոլոր տեսակի ծրագրերի իրականացումը, որը ցանկացած պետություն մեջ առաջնային հիմնախնդիրներից է, իշխանությունների կողմից տարբեր գործառույթների իրականացման հիմնաքարը: Հայաստանի հատուկ ծառայությունների պատմության, նրա կազմային հիմնահարցերի ուսումնասիրման ուղղությամբ որոշակի աշխատանք է կատարել **Ա. Մանուկյանը**, որն իր մի հոդվածում շրջանառության մեջ է դրել մեր հարցի քննարկման տեսանկյունից կարևոր Անդրկովկասյան երկրամասային ՌԿ(Բ)Վ վերահսկողության հանձնաժողովի 1927 թ. հոկտեմբերի 20-ի նիստի հետ անմիջականորեն առնչվող քրեական գործի նյութերը, որոնք հարուցվել էին 1927 թ. հուլիսին **Վահագն Մուրադյանի, Միքայել Դոզոխյանի, Գրիգորի Խաչատրյանի և Գրիգորի Երամովի** նկատմամբ, ինչի շնորհիվ ընթերցողի սեփականությունն են դառնում մի շարք արժանահիշատակ փաստեր, որոնցով ակնհայտ է դառնում այն բոլոր մեղադրանքների ողջ սնանկությունը, որոնք ներկայացվել են Առաջին Հանրապետության հետախուզության և հակահետախուզության կազմակերպիչների նկատմամբ¹¹²: Ինչպես պարզորոշ է դառնում արխիվային և այլ կարգի նյութերի և, մասնավորապես այդ տիրահաշակ հետաքննության արխիվային որոշ վավերագրերի մանրագնին վերլուծությունից, Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թվականներին կայացման ոչ միանշանակ ու դժվարին գործընթացներում են գտնվել, համառորեն որոնումներ են կատարվել այն ղեկավարող կազմային սպայակազմի ձևավորման և տեղերում գործնական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Վկաները, որոնք հանդես են եկել 1927 թ. նշված «գործով», ինչպես երևում է նիստի արձանագրությունից, պարզապես «առաջադրանք» են կատարել վարկաբեկելու Հայաստանի Հանրապետության այդ չափազանց օգտակար կառույցները և այն ղեկավարող մարմինները, օգտագործելով միանգամայն սնամեղ և ոչնչով իրապես չհիմնավորված «փաստարկներ»: Միևնույն ժամանակ հենց այդ «չինձու փաստարկներն» էլ իրենց հերթին ա-

¹¹² Տե՛ս **ЕФ МНЮИ - XXI век** (газета-журнал), 1998, № 07-08, сентябрь - октябрь, стр. 8-10:

նուղղակիորեն պատմութեան սեփականութիւնն են դարձնում որոշ արժանահիշատակ փաստագրութիւնն այդ ժամանակաշրջանի հատուկ ծառայութեան կառույցների գործունեութիւնից և կադրային հիմնախնդիրների վերաբերյալ, նրա նվիրյալների ուսանելի կյանքից՝ նվիրված հայրենիքին և նրա ազգային-պետական անվտանգութեան համակարգի անհրաժեշտ օղակների ձևավորմանը և նպատակաուղղմանը հակառակորդների դեմ: Ա. Մանուկյանի նշված հոդվածից և հայտնի գործի մասին ՌԿ(Բ) Անդրկովկասյան երկրամասային վերահսկողութեան հանձնաժողովի 1927 թ. հոկտեմբերի 20-ի նիստի արխիվային փաստաթղթերի համակողմանի հետազոտութիւնից բացահայտվում է, որ Հայկական բանակում Գլխավոր շտաբի ստեղծման գաղափարի համահեղինակներից մեկը եղել է ռուսական բանակի կադրային սպա, գնդապետ Միխայիլ Զինկևիչը¹¹³ (ի դեպ, որոշ փաստաթղթերում նա ոչ թե գնդապետ է, այլ գեներալ¹¹⁴), որը նպատակադրում ուներ ստեղծելու Դեմիկիևի Կամավորական բանակի ավտոնոմ՝ ինքնավար կառուցվածքը, որպեսզի ցանկացած պահի կատարի այդ բանակի բարձրագույն ղեկավարութեան ցուցումները և անմիջական հրահանգները, որի ոչ պաշտոնական ներկայացուցիչն էր նա սկզբնապես: Դեմիկիևի ներկայացուցչութեան դերն այն

¹¹³ Հարկ է նաև այստեղ նշել **Գ. Պետրոսյանի** տեսակետի մասին **Մ. Մ. Զինկևիչի** գործունեության դեռևս լիովին չբացահայտված մի էջի մասին ևս. Ըստ գիտականորեն հիմնավորված տեսակետի, ինչն ապացուցելու համար Գ. Պետրոսյանի կողմից վկայակոչվում են առաջին անգամ պատմագիտության մեջ շրջանառվող չափազանց հետաքրքիր և գործնականում հավաստի արխիվային և այլ փաստեր, որոնք միանշանակ վկայում են այն մասին, որ Հայկական բանակի Գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը Երևանի Ռուսական Ազգային խորհրդի գործուն աջակցությամբ Երևանում ստեղծել է գաղտնի հետախուզական խումբ իր գործակալներով, որն անմիջական կապի մեջ էր Կամավորական բանակին կից «**Հատուկ խորհրդակցության**» և Թիֆլիսում Անդրկովկասի Ռուսական Ազգային խորհրդի հետ: Այդ խումբը կանոնավոր տեղեկություններ էր հաղորդում Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը» հայկական բանակի, Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական դրության տարաբնույթ հարցերի, Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի քաղաքականության մասին: Հանրապետության Ներքին Գործերի նախարարությունը կոնկրետ փաստեր ուներ ռուսական հետախուզական խմբի գոյության և գործունեության մասին, սակայն Հայաստանի կառավարությունը դրսևորեց զսպվածություն, նախ այն պատճառով, որ մի կողմից՝ տվյալ պահին այն վտանգ չէր ներկայացնում երկրի անկախության համար, իսկ մյուս կողմից՝ չհասթաբելու համար ձևավորվող հայ-ռուսական հարաբերությունները. - տե՛ս **Գ. Հ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության նախաբերությունները ռուսական նախկին կայսրության ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս - 1920 թ. ապրիլ) // Է. 00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն. Սեղմագիր. - Երևան, ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2005, էջ 15, 17, 22. Տե՛ս նաև **Գ. Հ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության նախաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Եր., Եր. համալս. հրատ., 2006, էջ 20, 80, 83-84, 132, 137, 138-139, 189: Տե՛ս նաև **Գ. Հ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության նախաբերությունները Ռուսաստանի հետ (1918 - 1920 թթ.), Եր., ԵրԳՀ հրատ., 2011, էջ 72-101 և այլն:

¹¹⁴ **ՀԱՍ, Ֆ. Պ - 200, ց. 1, ք. 412, ք. 35:** Տե՛ս նաև **R. G. Hovannisian**, The republic of Armenia, vol. II, p. 470, 474, 516 -517, 524:

էր, որպեսզի Հայաստանում ապրող և գործող ուսական բանակի կազմային սպաներին հավաքագրեն և հայկական ձևավորվող բանակի այլևայլ կառույցներում տեղաբաշխելով, նրանց օգտագործեն հեռու գնացող ռազմավարական բազմաբնույթ խնդիրների լուծման գործում, ընդհուպ մինչև գուցե նաև Հայաստանում Դեմոկրատիայի իշխանութիւնի հաստատումը, համատեղ պայքարը բոլշևիզմի վտանգի դեմ: Մ. Զինկեիչն էլ հենց այն մարդկանցից մեկն էր, որի առջև դրվեցին համապատասխան բնույթի առաջադրանքներ: Հարկ է նաև առանձնահատուկ նշել, որ դա այն Զինկեիչն էր, որը Հայաստանի Առաջին Հանրապետութիւնի ակամա ծնունդի անմիջական ականատեսներից էր, և նոր պետութիւնի ուստի կառույցների ակտիվ ստեղծողների և կազմակերպիչների համահեղինակներից մեկը (վերն ասված հայտնի վերապահումներով հանդերձ):

Զինվորական նախարարի գինվորական գերատեսչութիւնի գծով հերթական՝ 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով Հայկական դիվիզիայի շտաբի պետ Մ. Զինկեիչը նշանակվում է Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար¹¹⁵: Զինկեիչն ամենուր էր: Նա հաճախ գործուղումների էր մեկնում, և նրան փոխարինում էին կազմային այնպիսի փորձառու սպաներ, ինչպես Ալ. Շնեուրը և ուրիշներ: Այսպես, 1919 թ. սեպտեմբերի 9-ի գինվորական գերատեսչութիւնի գծով հրամանագրում (N^o 356) նշվում էր, որ Զինվորական նախարարութիւնի Գլխավոր շտաբի պետ Զինկեիչին օգոստոսի 7-ից պետք է համարել արձակուրդի մեջ, իսկ Գլխավոր շտաբի պետի պաշտոնի ժամանակավորապես կատարումը դրվում էր նույն շտաբի ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար Շոմովի վրա, իսկ գործերի հրամանատարի շտաբի պետի պաշտոնում հաստատվում էր (ժամանակավորապես) Գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պետի պաշտոնակատար կապիտան Մեդվեդևը: Հրամանը ստորագրել էր Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը¹¹⁶: 1919 թ. սեպտեմբերի 27-ին Նախարարների խորհրդի նիստը լսելով մինիստր-նախագահ Ալ. Խատիսյանի զեկուցումը գնդապետ Զինկեիչին Կամավորական բանակում Հայաստանի գինվորական ներկայացուցիչ նշանակելու մասին, որոշում է տալ կառավարութիւնի համաձայնութիւնը¹¹⁷: Զինկեիչը իր շնորհաշատ գործունեութիւնի համար կառավարութիւնի կողմից բազմիցս արժանացել է շնորհակալագրերի իր պարտականութիւնների անթերի կատարման համար, և հատկապես Գլխավոր շտաբի պետի պաշտոնը վարած ժամանակահատվածում, հաճախ սերտ համագործակցութիւնի մեջ գտնվելով ՀՀ Զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանի հետ¹¹⁸: Դադարեցնելով իր գինվորական, ռազմահետախուզական բազմապլան գործունեութիւնը

¹¹⁵ ՀԱԱ, Ֆ.Պ. - 200, ց. 1, գ. 131, ք. 24:

¹¹⁶ Նույն տեղում, ք. 31:

¹¹⁷ Նույն տեղում, Ֆ.Պ. - 199, ց. 1, գ. 100 (85), ք. 215:

¹¹⁸ Նույն տեղում, Ֆ.Պ. - 204, ց. 1, գ. 91, ք. 65 և այլն:

Հայաստանում, Ջինկելիչը 1920 թ. սկզբից սկսած Հարավային Ռուսաստանի՝ Կամավորական բանակի կառույցներում ևս ծավալում է օգտաշատ գործունեություն և հաճախ էլ՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետություն: 1920 թ. նոր իրավիճակ է առաջանում և նոր հնարավորություններ են ստեղծվում Մ. Ջինկելիչի գործունեության համար Հայաստան-Հարավային Ռուսաստան փոխհարաբերություններում: 1920 թ. հունիսի 27-ի գրություն մեջ (N° 5205) հասցեագրված Արտաքին Գործոց նախարարությունը, Նախարարների խորհրդի ղեկանի վարիչը տեղեկացնում էր, որ 1920 թ. հունիսի 25-ի նիստում Նախարարների խորհուրդը որոշել է գնդապետ Մ. Ջինկելիչին ընդունել որպես Հարավային Ռուսաստանում իր ներկայացուցիչ¹¹⁹: Իսկ արդեն 1920 թ. հունիսի 29-ի գրությամբ (N° 3922) ՀՀ Արտաքին Գործոց նախարարություն գլխավոր քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանը տեղեկացնում էր Ջինկելիչին, որ Հայաստանի կառավարությունը ճանաչել է նրան որպես Հայաստանի կառավարությանը կից Հարավային Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչ¹²⁰: Այս նոր պաշտոնում ևս Ջինկելիչը փորձում է օգտակար լինել Հայաստանի Հանրապետությանը: Հարկ է ասել, որ Հայաստանում նրան վստահում էին և հաճախ էին դիմում տարբեր հարցերով: Հայաստանի կառավարությանը կից Հարավային Ռուսաստանի գիտնական ռեժերի գլխավոր հրամանատարի գինվորական ներկայացուցիչ գնդապետ Ջինկելիչին հասցեագրված 1920 թ. ապրիլի 11-ի գրություն մեջ (N° 2313) ՀՀ մինիստր-նախագահ Ալ. Խատիսյանը տեղեկացնում էր, որ իրենց կողմից հայթայթված տվյալներից, ինչպես նաև Հայաստանի ղեկանադիրական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի՝ գեներալ Դ. Պ. Դրացենկոյի¹²¹ հետ ունեցած զրույցից դատելով, պարզ է դարձել, որ Կամավորական բանակի գլխավոր հրամանատարի ներկայացուցիչ գեներալ-մայոր Դ. Պ. Դրացենկոյի կողմից կամավոր սկզբունքով Բաքվում Ադրբեջանի կառավարությանն է հանձնվել ավելի քան 100 թնդանոթ, 200 գնդացիր, 40 հազար եռազիծ հրացան, հսկայական քանակի ական և փամփուշտ, 2 զրահամեքենա, ռազմանավ և այլն, ինչպես նաև այլ ռազմաինժեներական ունեցվածք: Խատիսյանը գտնում էր, որ այդ ռազմական ունեցվածքը կամ պետք է ունենար այլ նշանակում, կամ էլ ջրասույզ արվեր ծովում, այլակերպ լուծումը դիտելով որպես թշնամական ակտ Հայաստանի նկատմամբ, որի դեմ վճռական բողոք էր արտահայտվում, ընդգծելով, որ դա առավել ևս անթույլատրելի է, քանի որ Հայաստանի վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ եղել է անփոփոխ բարեկամա-

¹¹⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 412, ք. 33:

¹²⁰ Նույն տեղում, ք. 33-34:

¹²¹ **Դրացենկո Դանիլի Պավելի** [08.12.1876 թ. -1945 թ.] - ցարական բանակի գեներալ, 1915-1918 թ. եղել է Անդրկովկասում, 15.11.1918 թ. -1920 թ. - սերտ առնչություններ է ունեցել Կամավորական բանակի հետ, լինելով նրա բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչ - Տե ս **А. В. Ганин**, Корпус офицеров Генерального штаба в годы гражданской войны, 1917 - 1922 гг., Справочные материалы, стр. 213, 458, 587, 725::

կան բոլոր ժամանակներում¹²²: Ակնհայտ էր, որ գնդապետ Զինկեիչից՝ որպես հին բարեկամից, հայկական կողմը իրական աջակցություն էր սպասում, բացատրություն կատարվածի համար: ՀՀ մինիստր-նախագահին հասցեագրված 1920 թ. ապրիլի 20-ի պատասխան ուղերձում (N^o 2219) գնդապետ Զինկեիչը ընդգծում էր, որ Ազրբեջանին զենք ու հանդերձանք հանձնելու փաստը համապատասխանում է իրականությունը, չնայած դրա համար ինքը ուղղակի ապացույցներ չունի, բայց և չի ժխտում, որ դրա նկատմամբ ինքը միայն ընդգծված բացասական վերաբերմունք կարող է ունենալ, որ մեղավորները կլրեն հարկ եղած պատիժը: Զինկեիչը ընդգծում էր, որ իր վերաբերմունքը Ազրբեջանի նկատմամբ անփոփոխ է, ավելացնելով, որ այն ձևավորվել է դեռևս 1917 թ. վերջին իրադարձություններից հետո, միաժամանակ բացատրելով Հայաստանից հեռանալու իր պատճառները: Ուղերձի վերջնամասում Զինկեիչը հատուկ ընդգծում էր, որ ինքը անչափ ուրախ է, որ կարող է շարունակել իր աշխատանքը ծանր փորձություններով ստուգված Հայաստանի, հայ և ռուս ժողովուրդների միջև բարեկամական կապերի ամրապնդման ուղղությամբ, իսկ ներկայումս միջնորդությամբ մասնակցում է Հայաստանի կառավարության կողմից կազմակերպվող հայ փախստականներին ցուցաբերվող օգնության գործին¹²³:

Միանգամայն ակնհայտ է, որ 1918-1920 թթ. դժվարին տնտեսա-ֆինանսական և ռազմաքաղաքական իրավիճակում հատուկ ծառայությունները աշխատում էին, ջանքեր էին գործադրում կայանալու որպես ինքնուրույն օրգանիզմ՝ դժվարությունների հաղթահարելով կադրային սովը և ձևավորելով հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման համար անհրաժեշտ կադրեր: Վերը հիշված Զինկեիչը և նրա զինակիցները այդ գործի կազմակերպման պիոներներն էին Հայաստանում: Վերադառնալով Զինկեիչի դերակատարմանը՝ որպես բարձրաստիճան կադրային սպայի, որը 1918-1920 թթ. բազմաթիվ փոխառնչություններ ունեցավ Հայաստանի կառավարության հետ պետական ռազմաքաղաքական մեքենայի գանազան կառույցների ձևավորման հարցում, հարկ է ավելացնել, որ ձևավորելով Գլխավոր շտաբը 1919 թ. սկզբին, նա որպես այդ կառույցի ղեկավար մնաց շատ կարճ ժամանակ, որից հետո մեկնեց Դենիկինի բանակի Գլխավոր շտաբ և այնտեղից վերադարձավ որպես նրա կողմից լիազորված դիվանագիտական ներկայացուցիչ Հայաստանում: Նա իր շուրջը հավաքեց կադրեր, որոնք տեղում բավարար գործունեություն ծավալեցին և շարունակեցին նրա կազմակերպած գործը, որը Հայաստանին շատ էր անհրաժեշտ գլխավորապես թշնամական պետությունների աշխարհաքաղաքական միջավայրում գոյատևելու և զարգանալու համար: Ինքնին հասկանալի է, որ Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունը իր ենթակառույցներով ստեղծվել է հենց ռազմա-

¹²² ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 412, ք. 22:

¹²³ Նույն տեղում, ք. 23:

կան նախարարութեան կազմում, ինչը բնական է մի երկրի համար, որն անընդհատ գտնվելիս է եղել պատերազմական իրավիճակում:

Գլխավոր շտաբի կազմակերպման և Զինվորական նախարարութեան ղեկավարման մասին կանոնադրութեան մեջ (*Положение, 1919 թ. ապրիլի 14*) շեշտվում էր, որ Գլխավոր շտաբը զբաղվում է զորքերի ռազմատեսչական հաստատութիւնների պարամունքների կազմակերպման գործառնութիւններով և լրտեսութեան դեմ պայքարի հարցերով, ինչպես նաև տալիս է զորքերի զորահավաքային խնդիրների մասին ընդհանուր առաջադրանքները¹²⁴:

Այս կարևոր փաստաթղթում ընդգծվում էր, որ Գլխավոր շտաբը անմիջականորեն զբաղվում է վերը նշված բոլոր հիմնահարցերի մշակմամբ: Բացի այդ, սույն փաստաթղթում հատուկ ընդգծվում էր, որ Գլխավոր շտաբը բաղկացած է նաև Հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքից, որն զբաղվում է Հակառակորդի և տեղանքի մասին տեղեկութիւնների հավաքմամբ, այդ տվյալների մշակմամբ, համակարգմամբ և դրանց դեպի զորքերը ժամանակին առաքմամբ, ղեկավարում է բրիգադների շտաբների հետախուզական աշխատանքները, հսկում է հետախուզութեան համար բաց թողնվող դրամական գումարների հաշվառումը, և վերջապես կազմակերպում է պայքար Հակառակորդի կողմից ծավալած լրտեսական գործունեութեան դեմ¹²⁵: Կարևոր է նաև առանձնահատուկ նշել Գլխավոր շտաբի կազմում գործող հետախուզական բաժանմունքի հաստիքակազմի մասին: Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի (հատուկ գաղտնի պլանով կազմակերպված) պետն ուներ 2 օգնական, որոնցից մեկը տնօրինում էր հակահետախուզութիւնը, իրենց տրամադրութեան տակ ունենալով 2 գրագիր (մեկը՝ ավագ գրագիր, մյուսը՝ կրտսեր)¹²⁶: Հետաքրքիր է նշել նաև ևս մի հանգամանքի մասին: Վերը բերված փաստաթղթի հավելվածում արձանագրվում էր այն մասին, որ օպերատիվ անհրաժեշտութեան ղեկավարման հետախուզական, ինչպես նաև օպերատիվ և ընդհանուր բաժինները կարող էին ունենալ ևս 2 օգնական, ինչպես նաև 1 ավագ և 1 կրտսեր գրագիրներ, ավելացնելով, որ լրացուցիչ հաստիքները թույլատրվում էր պահել մինչև 1919 թ. հուլիսի 1-ը¹²⁷:

Չնայած Առաջին Հանրապետութեան կայացման գործընթացների դժվարութիւններին, կառավարութեան և մասնավորապես Զինվորական նախարարութեան կողմից որոշակի ջանքեր էին գործադրվում հետախուզութիւնն ուժեղացնելու, այն գրագետ, բանիմաց և օտար լեզուների լավագիտակ մարդկանցով համալրելու առումով: 1919 թ. հունվարի 21-ի հրամանով

¹²⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, ք. 52 -54:

¹²⁵ Նույն տեղում, ք. 54:

¹²⁶ Նույն տեղում:

¹²⁷ Նույն տեղում, ք. 54 -55:

Զինվորական նախարարը կարգադրութիւնն արեց՝ Գլխավոր շտաբ ներկայացնել տեղեկանք այն սպաների աստիճանակարգի և զինվորների մասին, որոնք Հնարավորինս լավ գիտեին Քրանսերեն, անգլերեն, կամ թուրքերեն լեզուները, ընդ որում թուրքերենին զուգահեռ անհրաժեշտ էր համարվում նաև Քրանսերենի կամ անգլերենի իմացութիւնը: Զինվորական նախարարը պահանջում էր մատնանշել լեզվի իմացութեան մակարդակը, լեզուների սովորելու վայրը և հաստատութիւնը¹²⁸ (միանգամայն հասկանալի նկատառումներից ելնելով - ընդգծումը մերն է՝ Վ.Վ.): Սույն հրամանագիրը ուղարկվել էր Զինվորական նախարարութեան շարային և մոբիլիզացիոն (գորահավաքային) բաժինների շտաբներին:

Անհետաքրքիր չէ նշել նաև մի այնպիսի էական փաստի մասին, որ այդ դժվար տարիներին նույնիսկ փորձ է արվել կազմակերպել հետախուզութեան և զինվորական գործի համար անհրաժեշտ կադրերի ուսուցման ու պատրաստման նման մի բան, ինչի մասին կան անուղղակի վկայութիւններ: Այսպես, 1920 թ. սեպտեմբերի 27-ին (№ 384/с) Զինվորական նախարարի օգնականին ուղարկված գեկուցագրում Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչութեանը կից զինվորական վարչութեան ղեկավար, ռազմական կցորդ Քիչմիշյանը զինվորական գործում կատարելագործման նպատակով հայկական բանակի մի շարք սպաների Ֆրանսիա գործուղման հետ կապված միջնորդութիւն էր հարուցում նախատեսվող թեկնածուների ցուցակի մեջ մտցնել նաև պորուչիկ Եղիազարովին՝ Գլխավոր շտաբի Ակադեմիա ընդունվելու համար, պորուչիկ Նանասովին՝ նույն տեղը, պորպորուչիկ Ումիկյանին՝ ինժեներական գործերի մեջ գործուղելու նպատակով, քանի որ վերջինս մեծ գիտելիքներ ուներ ռազմավտոմոբիլային գործի վերաբերյալ և որպես ավիացիոն շոկատի սպա-գիտորդ: Զեկուցագրում նաև նշվում էր, որ վերը նշված բոլոր սպաները լիովին և բոլոր առումներով արժանի են խրախուսանքի, լրջորեն են վերաբերվում իրենց վրա դրված պարտականութիւնների կատարմանը և պատրաստ կլինեն արտասահմանում ձեռք բերված գիտելիքները կիրառել մեծ օգտաշահութեամբ¹²⁹:

Պետութեան, և տվյալ դեպքում հետախուզական և հակահետախուզական ծառայութիւնների համար կադրային հիմնախնդիրները համարվում էին առաջնային, ինչից կախված էր բոլոր տեսակի ծրագրերի մշակումը և իրականացումը: Գլխավոր շտաբի կազմում ընդգրկվեցին փորձառու զինվորականներ՝ փոխգնդապետներ **Ալեքսանդր Շենուրը և Վլադիմիր Պրիտոմասնովը**, որոնց անունները բազմիցս հայտնվում են պատերազմական և այլ արտակարգ իրավիճակների հետ կապված տեղեկագրերում, ինչի մասին բազմանշանակորեն վկայում են տարաբնույթ արխիվային փաստաթղթերը և մասնավորապես ՀՀ Ազգային Արխիվի մի շարք ֆոնդերի վավերագրերը),

¹²⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 104, ք. 61:

¹²⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 154, ք. 222:

ինչպես նաև կապիտաններ Նիկոլայ Ալեքսանդրի Ծուժովը, Միխայիլ Ռադիոնի Մեդվեդևը և հայկական դիվիզիայի շտաբի զորամասերի մի շարք սպաներ¹³⁰:

Գլխավոր շտաբն իր ստեղծման պահից ուներ մի շարք բաժիններ: Ընդհանուր բաժնի պետը **Ն. Ա. Ծուժովն** էր, իսկ նրա օգնականը՝ պորպորուչիկ **Մենիկ (Միլենտի) Իվանի Դվերնիցկին**: Սակայն այդ պաշտոնները ցմահ և մշտական չէին, և հաճախ այս սպաների անունները կարելի է հանդիպել այլ բնագավառներում: Տանք մի քանի մանրամասներ: Զինվորական գերատեսչության գծով 1919 թ. մարտի 24-ի հրամանով (N° 96) շտաբ-կապիտան Ծուժովը ազատվում է Զինվորական դատարանի հատուկ պաշտոնատար անդամի պարտականություններից: Կառավարությունն նախագահ Հովհ. Քաջագունու և Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանի ստորագրությամբ 1919 թ. ապրիլի 7-ի հրամանով շտաբ-կապիտան Նիկոլայ Ծուժովը ստանում է կապիտանի կոչում, իսկ 1919 թ. մայիսի 6-ի հրամանով Միխայիլ Դվերնիցկին՝ պորուչիկի կոչում¹³¹: Հարկ է նշել նաև, որ ՀՀ Զինվորական նախարար Արարատյանի 1919 թ. մայիսի 30-ի հրամանով, ի փոփոխումն զինվորական գերատեսչության գծով 1918 թ. N° 176 և 1919 թ. N° 98 և N° 113 հրամանների և նախկին Կովկասյան ճակատի զորքերի Գլխավոր հրամանատարի հրամանների վերանայման համար ստեղծված իրադրությունում պետական հանձնաժողովի նոր կազմ առաջարկվեց, որը պետք է զբաղվեր սպաների աստիճանակարգման և պարգևատրման հարցերով: Այդ հանձնաժողովի կազմում ընդգրկվեց Գլխավոր շտաբի ընդհանուր բաժնի պետի օգնական կապիտան Ծուժովը, իսկ նախագահը՝ Գլխավոր շտաբի Տեսչական բաժնի պետ գնդապետ Աթանես էր¹³²: Իսկ արդեն Զինվորական գերատեսչության գծով 1919 թ. Հոկտեմբերի 27-ի հրամանով Զինվորական նախարարի պարտականությունները կատարող գեներալ-մայոր Սիլվիյանը կապիտան Նիկոլայ Ծուժովին իր խնդրանքի համաձայն ազատում է Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի բաժնի պետի օգնականի պարտականություններից¹³³: Այս կարգի փոփոխություններ այն ժամանակ հաճախակի էին տեղի ունենում:

Օպերատիվ բաժնի պետը նրա ստեղծման պահից փորձառու **Վլադիմիր Պրիտոմանովն** էր, որի մարտական, հետախուզական կենսագրությունն զանազան էջերի լրջամիտ բացահայտումը դեռ իր հետազոտողներին է սպասում: Գլխավոր շտաբում հետախուզական բաժանմունքի պետը նրա ստեղծման առաջին օրերից սկսած բազմաճյուղ փոխգնդապետ **Ալեքսանդր Կոնստան-**

¹³⁰ Նույն տեղում, Ֆ.Կ - 91, ց. 3, գ. 3594, թ. 2 - 20, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 180, թ. 14, Ֆ.Պ - 368, ց. 1, գ. 4, թ. 4 և այլն:

¹³¹ ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, թ. 42, 382-383, 386:

¹³² Նույն տեղում, թ. 78:

¹³³ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 131, թ. 77:

տիների Շնեռըն էր, որն իր տրամադրություն տակ ուներ սակավ թվով աշխատակիցներ: Հետագա տարիներին այդ բաժանմունքը գլխավորեցին մի շարք սպաներ, որոնց անունները մեկընդմիջտ կմնան այդ ծառայության կենսապարտության ծալքերում: 1919 թ. սեպտեմբերից սկսած մինչև 1920 թ. ապրիլը որպես հետախուզական բաժնի պետ աշխատել է ոչ անհայտ կապիտան **Վահագն Գալուստի Մուրադյանը**, որն անկուսակցական էր: 1920 թ. ապրիլից մինչև հունիսի վերջը հետախուզական բաժանմունքի գործունեությունը ղեկավարում էր **Տիգրան Թադևոսի Դեվոյանցը**, որը քաղաքական համոզմունքներով Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության անդամ էր (վերջինս, իր իսկ վկայությամբ՝ Դրոյի դառնկերն է եղել¹³⁴), 1920 թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը ընկած ժամանակահատվածում (դեկտեմբերի 2-ը) հետախուզական բաժինը որպես նրա պետ գլխավորել է **Միքայել Նիկիտայի Դողոխյանը**:

Հետախուզություն բաժանմունքում և նրա ենթաձյուղերում աշխատում էին պողպորուհիկ **Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը** (հանձնարարությունները գծով սպա, այնուհետև՝ հետախուզություն ռեգիդենտ Վրաստանում: **Լևոն Գեորգի Բաշինջաղյանը** (կեղծանունը՝ Լևոն Բաշ) հանրաճանաչ հայ նկարիչ և բանաստեղծ Գեորգ Զաքարի Բաշինջաղյանի չորս որդիներից ավագ որդին էր, որի մասին խորհրդային հայտնի հետախուզյ **Կարեն Արմենի Խաչատուրովը** չափազանց մեծ դրվատանքով է արտահայտվում¹³⁵:

Նա ծնվել է Թիֆլիսում 1893 թ. հայտնի մտավորական և անվանի հայ նկարիչ Գեորգ Բաշինջաղյանի ընտանիքում, վախճանվել 1948 թվականին: Դատելով ժամանակակիցների մի շարք արժանահիշատակ վկայություններից, Լևոն Բաշինջաղյանը ևս տաղանդավոր նկարիչ էր ու ինքնատիպ բանաստեղծ: Պահպանվել է Լ. Բաշինջաղյանի շատ հետաքրքիր և տպավորություններով լի «Կովկասյան օրագիրը», որը վերաբերում է առաջին աշխարհամարտի 1918 թ. դեպքերին ու իրադարձություններին¹³⁶:

Խորհրդային կարգերի հաստատման և արդեն տիրապետության ընթացքում նա անցնում է կյանքի մեծ բովով, դառնալով ակնապարտ կովկասագետ և արևելագետ-լեզվաբան, պրոֆեսոր, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի լեզվի և մտածողության ինստիտուտի գիտաբարտուղար: Լ. Բաշինջաղյանը Ն. Յ. Մառի մերձակա կողմնակիցներից էր:

Լևոն Բաշինջաղյանի որպես հասուն մարդ կայացման առաջին իսկ քայլերը եղել են հստակ և անպաճույճ: Դեռևս 20-րդ դարասկզբին՝ 1903-

¹³⁴ Տե՛ս **Տիգրան Դեղեանց**, Հետախույզի մը յուշերը (Պատասխան իմ քննադատներուն), «ՎԷՄ» (Փարիզ), 1938, Յոմար-Մայիս, թիւ 2, էջ 49:

¹³⁵ Տե՛ս **Ա. Ե. Մարգարյան**, Հետախուզություն և հակահետախուզություն Հայկական հետք կենսագրական ակնարկներ հետախույզների և հակահետախույզների մասին, Եր., «Անարատ», 2005, էջ 194-195:

¹³⁶ «Независимая газета», 1994, 8 мая.

1912 թթ. Լևոն Բաշինջաղյանը ավարտել է 3-րդ Թիֆլիսյան գիմնազիան, իսկ այնուհետև՝ 1913-1916 թթ. Հանդիսացել է Պետերբուրգի Համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի ուսանող:

Այնուհետև նա դարձել է Հայտնի Պավլովյան յունկերական ուսումնարանի սան: Առաջին աշխարհամարտը նոր և անակնկալներով, ինչպես նաև փորձություններով հագեցած էջ բացեց նրա ճակատագրի ելևէջումների մեջ, և Լևոն Բաշինջաղյանը զորակոչվում է ցարական ռուսական բանակ: Իսկ արդեն 1917 թ. փետրվարից դառնում է ռուսական Կովկասյան բանակ մարտական սպա:

Հայաստանի Հանրապետություն անկախության հռչակումից հետո Լևոն Բաշինջաղյանը դառնում է նոր ոտքի կանգնող և իրական կայացման ձգտող Հայկական պետություն պետական անվտանգության համակարգի՝ հետախուզական ծառայություն կարևորն դեմքերից և նոր պետականություն համար կենսականորեն կարևոր, գործնականում խիստ անհրաժեշտ ուժային կառույցների ձևավորման մասնակիցներից և հիրավի երդվյալ նվիրյալներից մեկը: *Այդ կապակցությամբ պրոֆեսոր Կարեն Խաչատուրովը ջերմությամբ անդրադառնալով Լևոն Բաշինջաղյանի կերպարին և հիշատակումներ անելով նրա Կովկասյան ձեռագիր օրագրի մասին, փաստում է այն մասին, որ դրանում հետաքրքիր փաստեր կան 1918 թ. դարնանից մինչև 1920 թ. հունվար ամիսը տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձությունների մասին՝ Առաջին Հանրապետության հռչակումից մինչև ՀՀ դե-ֆակտո ճանաչումը դաշնակիցների կողմից:*

Եվ ինչպես ակնհայտ է դառնում Հայկական դիվիզիայի գծով ՀՀ Զինվորական նախարարի 1918 թ. օգոստոսի 26-ի հրամանագրից, Հայաստանի Հանրապետության հակահետախուզության պետ Բաշինջաղյանը վերագործուղվել էր Գլխավոր շտաբ՝ հատուկ հանձնարարությունների համար¹³⁷:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ հռչակման պահից սկսած պողպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի կազմում էր, նրա տարբեր ենթաճյուղերում: Եվ եթե Լ. Բաշինջաղյանը 1918-1919 թթ. հանձնարարությունների գծով սպա էր, ապա 1920 թվականի՝ սկզբին՝ ՀՀ Զինվորական դատարանի քարտուղարի օգնական, իսկ այնուհետև՝ հետախուզության ռեզիդենտ Վրաստանում, որտեղ հետախուզական ծառայությունը փաստացի ղեկավարում էր գեներալ-մայոր Հովսեփ Արտեմի Քիչմիշյանը¹³⁸, որը համակողմանի պատրաստված անձնավորություն էր և կիրթ, տիրապետում էր Ֆրանսերենի և մի շարք լեզուների, որը կարևոր էր այլ երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ հարաբերվելու տեսանկյունից:

¹³⁷ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 42, ք. 52 -55:

¹³⁸ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 131, ք. 24, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 75, ք. 35, գ. 26, ք. 203:

1920 թ. ապրիլի 5-ի N 108 զեկուցագրում Հ. Քիչմիշյանը հայտնում էր այն մասին, որ զինվորական գործի գլուխ կանգնած անձանց հերթափոխության խնդիրը իրեն մղում է անհապաղ զեկուցել, որ զինվորական գործակալի վրա դրված գլխավոր խնդիրներից մեկը հանդիսանում է հետախուզության կազմակերպումը, ընդգծելով, որ այդ նպատակով իր կողմից գրվել է մանրամասն հրահանգ, որն այնուհետև հաստատվել է Զինվորական նախարարի կողմից: Սակայն Քիչմիշյանը դժգոհում էր, որ ո՛չ նյութական միջոցները, ոչ էլ այդ բնագավառում իրավասու անձինք իր մոտ չեն ուղարկվել, եթե նկատի չառնվի պողպորուչիկ Բաշինջաղյանի գործուղումը (ի դեպ, դիվանագիտական հավատարմատարին կից զինվորական վարչության ղեկավարի կարգադրության տակ գտնվող պողպորուչիկ Լևոն Գեորգիի Բաշինջաղյանը որոշ ժամանակ անց նշանակվում է Բորչալուի գավառի «Զեզոք» գոտու ղեկավարությանը իրականացնող ամերիկյան սպային կից կապերի գծով սպա, ինչի մասին հաղորդվում էր ՀՀ զինվորական գերատեսչության 1920 թ. նոյեմբերի 13-ի հրամանում (N 467), հիմք ընդունելով զինվորական կցորդի N 284 զեկուցագիրը)¹³⁹: Քիչմիշյանը սակայն հայտնում էր վերջինիս, որ ժամանելով նոյեմբեր-հունվարին, պողպորուչիկ Բաշինջաղյանը հեռացել է անհայտ հասցեով՝ ո՛չ մեկին տեղյակ չպահելով (ակնհայտ է, որ այս հանգամանքը նյարդային վիճակի մեջ էր գցել գեներալ Քիչմիշյանին, և հետո ինքնին հասկանալի է, որ նա չէր էլ կարող ամեն ինչի մասին տեղյակ լինել և բոլոր օղակները չէ, որ պետք է ենթարկվեին իրեն, վերջին հաշվով, դա հատուկ ծառայություն էր, և ամեն մեկն ուներ իր իրավասությունների շրջանակը, գումարած այն հանգամանքը, որ հայկական հետախուզության կառուցվածքը նոր-նոր էր ձևավորվում, շատ բան դեռ հստակ չէր - Վ. Վ.): Վերոհիշյալ հանգամանքը հաստատում է նաև հենց Քիչմիշյանը, Բաշինջաղյանի վարքագծից եզրահանգելով, որ վերջինս գործուղվել է ինքնուրույն գործառնություններով: Այդ մասին գեներալ Քիչմիշյանը կարող էր տեղյակ չլինել, քանզի Լ. Գ. Բաշինջաղյանը Թիֆլիս էր գործուղվել դեռևս նախկին դիվանագիտական հավատարմատար Լ. Գ. Եվանգուլյանի ժամանակ: Այդ մասին մենք տեղեկանում ենք Սաշա (Ալեքսանդր) Խատիսյանի 1919 թ. հուլիսի 14-ի հեռագրից՝ ուղղված Լեոյին (Լեվոնին՝ Լ. Եվանգուլյանին), որում խնդրվում էր հիշատակվող գրություններ կայացրող Լ. Գ. Բաշինջաղյանին լիովին վստահել մեր քաղաքականության բոլոր գաղտնիքներում, ընդգծելով, որ նա Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունքից է: Ալ. Խատիսյանը սույն գրությունը խնդրում էր Լ. Բաշինջաղյանին Հնարավորություն տալ հարաբերությունների մեջ մտնել բոլոր այն անձանց հետ, որոնց հետ ինքը նպատակահարմար կգտնի՝ ցան-

¹³⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, ք. 185, գ. 131, ք. 24:

կացած նրան հետաքրքրող հարցի վերաբերյալ¹⁴⁰: Հենց այդ հանգամանքն էլ առաջ էր բերում գեներալ Հ. Քիչմիշյանի դժգոհությունը, որը ցանկանում էր ըմբռնել իրավիճակի բոլոր նրբերանգները, տնօրինել կադրուժը: Այդպես շարունակվում է նրա գործունեությունը:

Լ. Բաշինջաղյանի հետախուզական-գինվորական կենսագրությունում բեկումնային են դառնում 1920 թ. նոյեմբեր- դեկտեմբերին տեղի ունեցած իրադարձությունները, որոնք հանգեցնում են խորհրդային կարգերի հաստատմանը: Այդ ժամանակաշրջանը բարդ էր և խճճված, ինչը անդրադառնում է նաև Լ. Բաշինջաղյանի կյանքի և հետախուզական կենսագրության հետագա ընթացքի բովանդակային մասի վրա:

1920 թ. դեկտեմբերին - 1921 թ. փետրվարին եղել է Երևանում Լուսժողովոմի արվեստի բաժնի քարտուղար: Սակայն մինչ ձևավորվելու և Լուսժողովոմի տրամադրություն տակ անցնելը, նա հայտնվում է խորհրդային իշխանությունների կողմից ձեռքարկվածների ցուցակում, որպես նախկին՝ դաշնակցական կառավարության ռազմական «կոնտրոսզվեգկայի» պետերից մեկը, որն անբարեհույս էր համարվում, հայտնի իր սկզբունքային առումով ինքնատիպ և առողջ դիրքորոշումով ՀՀ կառավարության ռազմավարության հիմնախնդիրներում¹⁴¹: Սակայն այս գործի ընթացքին վճռական և համարձակ միջամտություն է ցուցաբերում ՀՀ լուսժողովոմ Աշոտ Հովհաննիսյանը, որը 1921 թ. հունվարի 26-ի գրությամբ՝ ուղղված Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին, խնդրում էր Լուսժողովոմի արվեստի բաժնի քարտուղար նախկին սպա Լևոն Բաշինջաղյանին իբրև անփոխարինելի և անհրաժեշտ աշխատակցի, դուրս բերել Ռուսաստան ուղարկվող նախկին սպաների ցուցակից և իր երաշխավորությամբ թողնել իր տրամադրության տակ¹⁴²:

Այնուհետև Լ. Բաշինջաղյանը 1921 -1923 թթ. թղթակցել է Լուսժողովոմի «ПЛЯМЯ» ամսագրին, հանդիսացել նրա առավել գործունյա թղթակիցներից մեկը:

1921 թ. մայիսից մինչև 1922 թ. նոյեմբերը աշխատել է Թավրիզում գեղարվեստական ստուդիայում որպես ռուսաց լեզվի դասախոս:

1922 թ. դեկտեմբերից Լ. Բաշինջաղյանը Թիֆլիսում, աշխատելով Վրաստանի Լուսժողովոմատում, զբաղվել է նաև գրական գործունեությամբ: 1923 թ. Պետրոգրադում ավարտել է Լենինգրադի պետական համալսարանի հասարակագիտական գիտությունների ֆակուլտետի հաբեթական թեքման գծով հին աշխարհի բաժանմունքները (հայագիտություն և ընդհանուր լեզվաբանություն, 1923 -1927 թթ.):

1926 թ. Լ. Բաշինջաղյանը դառնում է ԽՍՀՄ-ի բնակչության ցեղային կազմի ուսումնասիրման գծով հանձնաժողովի պրակտիկանտ: 1929 թ. մար-

¹⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ - 204, ց. 1, գ. 116, ք. 69:

¹⁴¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ - 113, ց. 3, գ. 3, ք. 40:

¹⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ - 113, ց. 3, գ. 3, ք. 53:

տին նա տեղափոխվում է ԳԱ Հաբեթական ինստիտուտ, և հաջողությամբ գլխավորում է արտադրական տերմինների խումբը, իսկ արդեն 1929-1937 թթ. ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հաբեթական լեզվի և մտածողության ինստիտուտը, և այդ նպատակի իրագործման համար մեկնում է Անդրկովկաս՝ լեզվագիտական բնույթի նյութեր հավաքելու և դասախոսություններ կարդալու համար: Իր իսկ սաների վկայությամբ, և մասնավորապես **Տ. Ա. Շումովսկու** հաստատագրմամբ, Լևոն Բաշինջաղյանը եղել է շատ հարգված և հեղինակություն վայելող դասախոս, փայլուն հոետոր, որին համեմատել են նույնիսկ նշանավոր պատմաբան Ե. Վ. Տաուբի հետ, որը տիրապետում էր հղկված և տարողունակ դարձվածքների, որոնք դասախոսվում էին մի հրաշալի և ավարտուն ամբողջության մեջ¹⁴³: **Ա. Կրասնով-Լիտվինը** ևս իր «*Հիշողություններ*» գրքում Լ. Բաշինջաղյանի մասին գրում է որպես փայլուն «էրուզիտի» մասին, որը եղանակ է ստեղծել լեզվաբանություն մեջ¹⁴⁴: Լևոն Բաշինջաղյանի մասին ջերմությամբ է արտահայտվում հայտնի խորհրդային դերասան, գրող **Գեորգի Ստեփանի Ժժեհովը**¹⁴⁵:

Այդ ընթացքում նա հանդիսացել է նաև Ղազախստանի պատմահնագիտական ինստիտուտի արտահաստիքային թղթակից: Այդ նույն ժամանակահատվածում Լ. Բաշինջաղյանը ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1934 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում: 1929 -1936 թթ. որպես պրոֆեսոր դասավանդել է Լենինգրադի պետական համալսարանում, իսկ արդեն 1930 թ. սեպտեմբերից նաև գրականության և պատմության ինստիտուտի դոցենտ էր:

1935 թ. մայիսին Լևոն Բաշինջաղյանը ժամանակավորապես ազատվում է Հաբեթական ինստիտուտի գիտքարտուղարի պարտականություններից (մինչև 1936 թ.) «Խոսքի պալեոնտոլոգիայի փորձ բալկարա-կարաչեևյան լեքսիկայի հիման վրա» դոկտորական ատենախոսություն վրա աշխատելու համար:

1937 թ. Հաբեթական ինստիտուտի պլանի համաձայն նա աշխատել է «Կրճատված բառեր (բառակազմության եղանակների հարցի շուրջ)» աշխատասիրություն վրա:

1937 թ. դեկտեմբերից նա դառնում է ԽՍՀՄ Լեզվի և ժողովուրդների գրերի կենտրոնական ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ղեկավոր, իսկ 1937 թ. նոյեմբերի 20-ից սեփական դիմումի համաձայն ազատվում է այդ պաշտոնից: Լևոն Բաշինջաղյանը եղել է Ն. Մառի առավել եռանդուն

¹⁴³ Տե՛ս **Т. А. Шумовский**, У моря арабистики: По страницам памяти и неизданных документов, М., 1975. стр. 296.

¹⁴⁴ Տե՛ս **А. Красно-Литвин**, Лихие годы. Воспоминания, Париж, Имка-Пресс, 1977, стр. 319:

¹⁴⁵ Տե՛ս **Г. С. Желенов**, Саночки : Рассказы и повесть / предисл. Л. Филатова, М., 1997, стр. 203:

Համախոհներից մեկը¹⁴⁶, որոնց թվում էին նաև Վ. Բ. Ապտեկարը և Ս. Ն. Բիկովսկին:

Սավայն Լևոն Բաշինջաղյանի կյանքը կարճատև է լինում: Ինչպես սրընթաց և փոթորկուն է լինում նրա վերելքը, նույնչափ էլ՝ անկումը: Շուտով նա դառնում է ստալինյան Համակարգի անմեղ զոհերից մեկը: Ըստ մի վարկածի, 1938 թ. նա անհիմն ձեռքարկվում է և գնդակահարվում 1938 թ. հոկտեմբերի 11-ին: Մեկ այլ վարկածի համաձայն, Լևոն Բաշինջաղյանը ամենևին էլ չի գնդակահարվել, այլ զոհվել է 1948 թ. ԳՈՒԼԱԳ-ում, մաքադանյան ճամբարներից մեկում, ինչը դեռ պետք է ճշգրտել: Ահա այսպիսի սրընթաց ավարտ է ունենում Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության կայացման ակունքներում կանգնած լավագույն հետախուզիչներից մեկի՝ Լևոն Բաշինջաղյանի բազմաբեղուն կյանքը, մարդ, որը խորհրդային կարգերի ժամանակ դառնում է խորհրդային լեզվաբանության, հաբեթագիտության խոշորագույն դեմքերից մեկը, որի մասին ջերմ դրվատանքով են արտահայտվել ժամանակակիցները:

Վրաստանում և մասնավորապես մայրաքաղաք Թիֆլիսում հետախուզական ծառայությունը փաստացի ղեկավարում էր գեներալ-մայոր **Հովսեփ Արտեմի Գիլմիշյանը**¹⁴⁷, **Սեմյոն Հովսեփյանը** (գրասենյակի և Ղամարլուում հետախուզության վարիչ), որին հետագայում գրասենյակի վարիչի պաշտոնում փոխարինել է **Միքայիլ Նազարբեկովը**, ինչպես նաև **Արշակ Սարգիսյանը** (ռեզիդենտ Բաքվում), Գրիգորի Ստեփանի Երամովը (գլխորդ Վրաստանում), շտաբ-կապիտան **Մարգար Սարգսի Սարգիսյանը**, պորուչիկներ **Արտեմի Նիկիտայի Ահարոնովը**, **Վենիամին Համբարձումի Ներսեսովը** և ուրիշներ: Այդ գործում իր որոշակի մասնակցությունն է ունեցել նաև գեներալ **Հակոբ [Յակով] Գերաիմի Բազրատունին** (25. 08. 1879 թ. - 23. 12. 1943 թ.¹⁴⁸), որը 1919 թ. օգոստոս-նոյեմբերին գլխավորել է ԱՄՆ մեկնած շճ ուղևորական պատվիրակությունը, իսկ այնուհետև ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունը Լոնդոնում որպես դեսպան, անշուշտ, աննշմարելի եզրեր ունենալով Հայկական հետախուզական ծառայության հետ, մատուցելով անհրաժեշտ թանկարժեք տեղեկատվություն շճ իշխանություններին և բարձրագույն զինվորական այրերին, անկախ այն բանից, թե ձեռքբերված արժեքավոր տեղեկությունները ինչպես կգնահատվեին վերջիններև կողմից և ինչ արդյունքի կարժանանային:

¹⁴⁶ Տե՛ս **Б. Б. Пиотровский**, Страницы моей жизни, 2-е изд., испр. и доп. / отв. ред. Ю. Ю. Пиотровский, Л., Издательской дом “Руда и металлы”, 2009, стр. 44, 76, 149: Տե՛ս նաև Дьконов И. М., Книга воспоминаний, Санкт-Петербург, 1995, стр. 261, 309, 316, 745:

¹⁴⁷ Տե՛ս **ՀԱԱ**, ֆ.Պ - 204, ց. 1, գ. 131, ք. 24, ֆ.Պ - 276, ց. 1, գ. 75, ք. 35, գ. 26, ք. 203:

¹⁴⁸ Տե՛ս **Տիգրան Հայազն**, **Փարեզին Ղազարյան**, 1000 հայագի գեներալներ, ծովակալներ. Կենսագրական հանրագիտարան, էջ 114-115: **Տե՛ս նաև Ով ով է. Կենսագրական հանրագիտարան**, հ. 1, Եր., Հայկ. հանրագիտ. հրատ., 2005, էջ 187:

Գլխավոր շտաբի հակահետախուզութան բաժանմունքը ղեկավարում էր **Արտեմի Նիկիտայի Հովհաննեսովը՝ Հովհան Խան-Կոտուրսկին (կամ Խան-Ղոթուրի)**, որին փոխարինում և գործակալներին հետևում էր հանձնարարությունների գծով սպա **Գրիգորի Խաչատրյանը**: Հակահետախուզության բնագավառում էր աշխատում նաև պորուչիկ **Բեկզադովը (Բեկզադյանը)**, որն ավելի շատ հայտնի է իր Թիֆլիսյան գործունեությամբ՝ Հայաստանի դեվանագիրտական ներկայացուցչության կազմում: Մի շատ ուշաբաղարևիվային փաստաթղթից, որի հեղինակը հենց նույն Բեկզադովն է, լույս է սփռվում վերջինիս կողմից հակահետախուզության գործի կազմակերպման որոշ մանրամասների վրա: Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարին ուղղված իր 1919 թ. ապրիլի 5-ի գեկուցագրում (N^o 144) Կարսի մարզի Բրիտանական զինվորական նահանգապետին¹⁴⁹ կից հանձնարարությունների գծով սպա պորուչիկ Բեկզադովը դժգոհելով, որ իր դերը մարզում շատ չնչին է, որ ինքը մինչև կոկորդը զբաղված է ամեն տեսակի մանր-մունր գործերով, ինչը նույնպես հաջողությամբ կարող էին կատարել անգլիական սպաները, միաժամանակ հատուկ նշում էր, որ ոչինչ չի կարող անել իրենց համար (այսինքն՝ Հայաստանի համար - Վ. Վ.), իսկ հակահետախուզության առումով իր վիճակը փոխվել է (նախկինում բոլոր փաստաթղթերը իր ձեռքով էին անցնում, իսկ այնուհետև՝ մնում էր այդ մասին ընդամենը գլխի ընկնել) ակնարկելով, որ այդ բնագավառում գործերի ռեալ վիճակի վրա իշխում են անգլիական սպաները (ի դեպ, այդ ժամանակ արդեն գնդապետ **Կ. Է. Թեմպերլեյը** պատրաստվում էր մեկնել Անգլիա և նրան փոխարինելու էր գալիս անգլիական բանակի մեկ այլ սպա): Բացի այդ, վերոհիշյալ փաստաթղթում Բեկզադովը արձանագրում էր մի շարք այլ հետաքրքիր փաստեր. դրանում նշվում էր, որ էրզրում է մեկնել մի սպա հակահետախուզ, որը պետք է այնտեղ գործեր մինչև ապրիլի կեսերը, որի վերադառնալուց հետո նոր ինքը պետք է մեկներ Թիֆլիս: Բեկզադովը Զինվորական նախարարից խնդրում էր իր տեղափոխման հարցին դրական լուծում տալ, շեշտելով, որ անգլիացիները շահագործում են իր աշխատանքը, որոնք ինչպես և մյուս դաշնակիցները ՀՀ կառավարությունը վերաբերվում են ոչ ավելի լավ, քան Վրաստանի և Ադրբեյջանի կառավարությունների

¹⁴⁹ Կարսի մարզի բրիտանական ռազմական նահանգապետը 1919 թ. հունվարի 12-ից մինչև մարտի 2-ը եղել է կապիտան , այնուհետև գնդապետ դարձած **Կ. Է. Թեմպերլեյը**, մարտի 2-ից մինչև 26-ը՝ փոխգնդապետ **Ջ. Ա. Պրեստոնը**, իսկ արդեն մարտի 26-ից մինչև ապրիլի 4-ը՝ կապիտան **Հ. Ա. Պրեստերը**, որից հետո ապրիլի 19-ին մարզը հանձնվել է Հայաստանի Հանրապետության իշխանություններին, որից հետո ապրիլի 24-ին արդեն այնտեղ մտան հայկական զորքերը, իսկ անգլիացիները շարունակել են պահպանել իրենց ներկայությունը, այնտեղ՝ Կարսում ունենալով իրենց ռազմական ներկայացուցիչներին. Տե՛ս **Գ. Махмурия**, Политика Великобритани в Армении и Закавказье в 1918-1920 гг.: Бремя белого человека.- Ер., изд-во “Лусакн”, 2002, стр. 53-65, **Գ. Գրիգորյան**, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային կառուցվածքը 1918-1920 թթ., Կանթեղ, N^o 1 (22), էջ 91:

նկատմամբ, քողածածկվելով արդարության «պահպանման և արյունահեղության կանխման» կարգախոսներով¹⁵⁰, այսինքն՝ պարզապես իրենց քիթը խոթում են հայկական հակահետախուզության գործերի մեջ: Այստեղից ակնհայտ է, թե ինչպիսի դժվարին պայմաններում էր ստեղծվում հայկական հակահետախուզութունը, որը փորձում էր ինքնուրույն լինել և ձեռքագատվել զանազան ազդեցություններից, ինչը հեշտ խնդիր էր: Եվ այնուամենայնիվ, Բեկզադովի օրինակը վկայում է, որ լավագույն, մինչև վերջ հայրենիքին նվիրված հայ հակահետախուզյ սպաները ձգտում էին անգամ իրենց Անտանտյան «եղբայրակիցների հետ» փոխհարաբերություններում պահպանել սեփական դեմքը, ապավինելով ազգային շահի գերակայության սկզբունքին:

Հետախուզական բաժանմունքի ընդհանուր մասը գլխավորում էր **Պյոտր Պալիևը**¹⁵¹: Հատուկ ծառայության այդ գերատեսչությունը իր հիմնադրման պահից իսկ զբաղվում էր ոչ միայն ռազմական բնույթի խնդիրներով, այլև քաղաքական-հետախուզիչ, հետաքննչական գործունեությամբ: Հարկ է ընդգծել նաև, որ հատուկ ծառայության այդ մարմինները ստեղծվել էին դեմոկրատիայի բանակի համապատասխան օգակի նմանությամբ, իսկ վերջինս փաստորեն և ըստ էության ժառանգել էր ցարական Ռուսաստանի հատուկ ծառայությունների կառուցվածքը: Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում Դեմոկրատիայի պահանջվում էր համապատասխան նմանօրինակ գործունեություն ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպությունների նկատմամբ, որը օրակարգային հարց էր և նոր կազմավորված Հայաստանի Առաջին Հանրապետության համար (այդ էին պահանջում նաև Երևանում գտնվող անգլիական քաղաքական ներկայացուցչության ղեկավար կապիտան **Ջ. Ֆ. Գ. Գրեյսին** և նրա ռազմական կցորդ կապիտան **Գ. Դ. Կուրտը**, որոնցից առաջինը Երևանում հաստատվել է բրիտանական զորքի մեկնելուց հետո՝ սեպտեմբերի 24-ից, իսկ երկրորդը՝ 1920 թ հունվարի 25-ից)¹⁵²:

Հայաստանի Հանրապետության հետախուզական ստորաբաժանումը զբաղվում էր հաղորդագրությունների հավաքմամբ և ընդհանուր տեղեկատվական բնույթի գեկուցագրերի, ամփոփագրերի կազմմամբ: Այստեղ նաև հավաքվում էր տեղեկատվություն և կազմվում էին տեղեկագրեր Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին:

Հակահետախուզության բաժնի գործառնությունները ձեռքբերված տեղեկատվության հիման վրա իրականացվող օպերատիվ-հետաքննչական խնդիրներն էին: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության հետախուզական բաժինը որոշակի աշխատանք էր իրականացնում իր երկրի սահմաններում:

¹⁵⁰ ՀԱԱ, Ֆ.Կ - 91, ց. 3, գ. 3594, ք. 2-20, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 92, ք. 206:

¹⁵¹ Նոյն տեղում, Ֆ.Կ - 91, ց. 3, գ. 3594, ք. 6 -7, 8 -13, Ֆ.Պ - 204, ց.1, գ. 131, ք. 206:

¹⁵² Տե՛ս Գ. Махмурын, Политика Великобритании в Армении и Закавказье, стр. 45, 57,

62. - **Գրեյսին լավ տիրապետում էր հայերենին, քրդերենին**- Տե՛ս Մ. Туманян, նշվաշխ., էջ 209:

րից այն կողմ: Բաժինն իր գործունեությունը դաշտի մեջ էր ներառել առաջին հերթին Անդրկովկասը, ինչպես նաև Ռուսաստանի Հարավը և Հյուսիսային Կովկասը: Աշխատանքն իրականացվում էր Արտաքին Գործոց նախարարության միջոցով, որն ինչպես արդեն նշվել է վերը, իր ներկայացուցչություններին կից ուներ հետախուզական ապարատ և ռեզիդենտուրա՝ գործակալական ցանց:

Ամբողջապես հետախուզական ապարատն ուսումնասիրում էր Հայաստանի ռազմաքաղաքական դրությունը, իսկ մյուս կողմից, իր հաստատած ռեզիդենտներին՝ ներկայացուցիչ-գործակալների միջոցով տեղեկություններ հաղորդում Անդրկովկասի հանրապետությունների մակարդակով, Դենիկինի Կամավորական բանակի և, մասնավորապես Կարմիր բանակում իշխող իրավիճակի և զինվորական տրամադրությունների մասին: Այդ հետախուզական բաժինը անցկացնում էր նաև հետախուզական գործունեությունը ընդդեմ Թուրքիայի և Իրանի, կապված Թուրքական բանակի վիճակի, նրա տեղադրություն, թվաքանակի, պլանների և տարածաշրջանային աշխարհաքաղաքական այլ հարցերի մասին: Ի դեպ, հարկ է հատուկ նշել նաև այն մասին, որ Հայաստանի Հանրապետության հետախուզության և հակահետախուզության գործունեությունն սկզբնական փուլը բնութագրվում է սպիտակգլարդիական Կամավորական բանակի ազդեցություններից: Եվ դա այնքան շոշափելի ու զգալի էր, որ հետագայում նույնիսկ Հայաստանի Առաջին Հանրապետության դաշնակցական կառավարությունը սկսեց միջոցներ ձեռնարկել, որպեսզի մեկուսացնի սպիտակգլարդիական սպաներին հետախուզական գործունեությունում անմիջական դերից, որը նրանք վարում էին միտումնավոր կերպով և հարմարեցնելով գլխավորապես Դենիկինի Կամավորական Բանակի շահերին¹⁵³: Այդ վերջին իրողությունը հետ էլ հենց կապված կառավարությունը առաջ քաշեց հետախուզական բաժնի պետի և Գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնում կապիտան **Վահագն Գալուստի Մուրադյանին**՝ նրան ցուցում տալով սպիտակգլարդիական միտումնաբարավոր չեզոքացման ու մեկուսացման մասին, որը տարվում էր Հայաստան

¹⁵³ Այն, որ Դենիկինի Կամավորական բանակի հրամանատարությունն ուներ նման նպատակադրումներ, այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ այսպես կոչված «Հատուկ խորհրդակցությունը» 1918 թ. նոյեմբերին Երևան գործուղեց գնդապետ **Լեսլիին**, որը և այլ բարձրաստիճան սպաներ ծառայության անցան հայկական բանակի Գլխավոր շտաբում և գաղտնի գործողության հետախուզական խմբում՝ նպատակադրում ունենալով ամուր կապեր հաստատել ՀՀ-ի և Կամավորական բանակի միջև՝ հայկական հանրապետությունը դարձնելով իրենց պատվարը բոշլիզմի դեմ պայքարում, ինչպես նաև ձգտելով դարձնել իրենց զինակիցը վրաստանը գրավելու ծրագրերում և այլն, որի համար առիթ հանդիսացան 1918 թ. վրաց-հայկական պատերազմի շուրջ ծավալված դեպքերն ու իրադարձությունները, որոնց խաչով հայկական կողմը սակայն կույ չտվեց, նամանավանդ որ ՀՀ հետախուզական ծառայությունները և Ներքին Գործերի նախարարությունը բավականաչափ պատկերացումներ ունեին Դենիկինի սպաների գործունեության գաղտնի կողմերի մասին. - տե՛ս **Գ. Պետրոսյան**, նշված աշխատությունը, էջ 87-88:

տանի Հանրապետության տարածքում: Այդ ժամանակաշրջանում Հայաստանն ավելի շատ քաղաքական առումով հակված էր դեպի արևմուտք՝ անգլիացիները, քան Դենիկինը, չնայած վերջինիս հետ էլ ձգտում էին չփչացնել հարաբերությունները, քանզի այդ բանակից երբեմն-երբեմն ձեռք էին բերում գեներալ և գերամթերք, զինվորական հանդերձանք և այլն: Եվ այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր սեփական ոտքերի վրա կանգնել բոլոր բնագավառներում, այդ թվում նաև ուժային կառույցների առումով, հատուկ ծառայություն ցանց ստեղծելով ամենուր, ուր այն հնարավոր էր գործնական առումով:

Արևիվային փաստաթղթերով և այլ վավերագրերով (չնայած և բավականին սուղ) հաստատվում է այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության հակահետախուզությունն իր կազմով և ներկայացուցիչներն ուներ Հայաստանի տարբեր շրջաններում: Ավելին, հակահետախուզության մարմինները գործում էին նույնիսկ Լեռնային Հայաստանում (Սյունիք-Զանգեզուրում), որի ղեկավարը հայտնի *Յապոն* էր (Արմենակ Հովհաննեսի Պարոնյանը), իսկ աշխատակիցն էր *Ավետիս Դադայանց*¹⁵⁴:

Այդ տարիներին հատուկ ծառայության բնագավառում են աշխատել նաև մի շարք անձինք, ինչպիսիք են եղել Թիֆլիսում գործող հանձնարարությունների գծով սպա *Ալեքսանդր Սուլխախնովը*, Թուրքեստանում՝ *Ելենա Մոսկովիևան*, գործակալ-դիտորդ Ավո Հարությունյանը և ուրիշներ: Անհետաքրքիր չէ նշել նաև այլազգիների մասնակցությունը Հայաստանի հատուկ ծառայությունների աշխատանքին (*Հոսեյն Հաջիև*, *Միրզաբաիրով* և ուրիշներ, սակայն ինչպես երևում է առկա նյութերից, որոշ անուններ ճշգրտման կարիք են գգում): Եվ վերջապես, նույնիսկ բուլղարիկների միջավայրում գոյություն է ունեցել գործակալական ցանց¹⁵⁵:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության հատուկ ծառայություններում ընդգրկված սպաները եղել են հայրենիքին մինչև վերջ նվիրված անձնուրաց մարդիկ, որոնց գործունեության այս կամ այն կողմի վերհանելը մեծ կարևորություն է ներկայացնում Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի, և մասնավորապես հայկական հետախուզության պատմությունը, նրա կազմային հիմնախնդիրները ամբողջական ու լիարժեք ներկայացնելու տեսանկյունից: Անդրադառնանք նրանցից մի քանիսի կենսագրականներին, միաժամանակ վերհանելով պետական կարևորություն ներկայացնող նրանց գործունեության որոշ արժանահիշատակ կողմեր և բնութագրականներ:

Հայաստանի Հանրապետության հատուկ ծառայությունների, և մասնավորապես հետախուզության վառ դեմքերից է եղել Գլխավոր շտաբի Հայկա-

¹⁵⁴ Տե՛ս ԷՓ ՄՈՒՈՒ - XXI ԵԿ. - 1998, № 07-08, сентябрь-октябрь, стр. 8 - 13, ՀԱԱ, ֆ.Պ - 204, ց. 1, գ. 131, ք. 24:

¹⁵⁵ ԷՓ ՄՈՒՈՒ - XXI ԵԿ, 1998, № 07-08, сентябрь-октябрь, с. 8-10:

կան հետևակային զբվիզիայի շտաբին կից հանձնարարությունների գծով սպա, փոխգնդապետ **Ալեքսանդր Կոնստանտինի Ծնեուրը** (ազգանունը գործածական է եղել *Chneour &ևով, իսկ թերթերում և գրքերում 1917 թ. և հետո տարածված են եղել Schneur, Schneour, Shneur &ևերը և անգամ կիրառական է եղել Schneour տարբերակը*), որը ծագումով էլգաս-լոթարինգցի էր, գերմանացի¹⁵⁶: Ծնեուրների տոհմը Ռուսաստանում հայտնվել է XIX դարից սկսած, նրանք մեծամասամբ եղել են հայտնի իրավաբաններ և զինվորականներ: Ա. Կ. Ծնեուրի նախնիներից մեկը Գլխավոր շտաբի գնդապետ **Նիկոլայ Յակովևիչ Ծնեուրը (1848 -1894 թթ)**, թուրքական Արդահան քաղաքամրցի գրավման համար պարգևատրվել է Գեորգիեյան խաչով: Նիկոլայ Յակովևիչ Ծնեուրի քեռին՝ Վլադիմիր Կոնստանտինի Ծնեուրը, որը եղել է 1904 -1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի մասնակից, այնուհետև մասնակցել 1917 թ. փետրվարյան-հոկտեմբերյան փոթորկալից իրադարձություններին, ծանոթ է եղել **Լ. Դ. Տրոցկու** [Լ. Դ. Բրոնշտեյն] հետ, մեղադրվել գերմանացիների հետ լրտեսական կապերի մեջ և անգամ որոշակի հանգամանքներում համագործակցության մեջ մտնելով բոլշևիկյան ռեժիմի հետ, նրանց կողմից 1918 թ. գործուղվել է Փրանսիա՝ հատուկ հետախուզական առաջադրանքով և այն: Վլադիմիր Կոնստանտինի Ծնեուրը ունեցել է երկու քույր և երկու եղբայր, որոնցից մեկը՝ Նիկոլայ Կոնստանտինովիչ Ծնեուրն է եղել [մահացել է Ճապոնիայում 1934 թ.], իսկ մյուսը՝ ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի գնդապետ՝ **Ալեքսանդր Կոնստանտինի Ծնեուրը** (20. 08. 1884 թ. - 16. 09. 1977 թ.):

Ա. Կ. Ծնեուրը ծնվել է 1884 թ. օգոստոսի 20-ին Ս.Պետերբուրգում: Ա. Կ. Ծնեուրը ավարտել է Գուբերնիի գիմնազիայի ութամյա դասընթացը, այնուհետև Միխայլովյան հրետանային դպրոցը և 1916 թ. Նորին Մեծոթյան կայսերական Նիկոլաևյան ռազմական ակադեմիան: Այդ ընթացքում նա ավարտել է նաև Ս.Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետը: Այն ավարտելուց հետո մտել է հեծյալ հրետանային գորակազմի մեջ: Ակտիվորեն մասնակցել է Առաջին աշխարհամարտին, և պարգևատրվել 5 մարտական շքանշաններով: 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո նա հայտնվել է Ռուսաստանի հարավում, այնուհետև ծառայության անցել Կովկասում: Այդ ընթացքում Ա. Ծնեուրը զբաղեցրել է պատասխանատու շտաբային պաշտոններ, այդ թվում ՀՀ գործերի Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատարի պարտականությունները: Այդ օրերին Ալ. Կ. Ծնեուրը բանակցություններ է վարել անգլիացիների հետ՝ կապված Հայաստանի Հանրապետություն ղեկնախառն առաքման խնդիրների հետ:

Շատ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև մի այլ փաստաթուղթ, որի բովանդակությունը իր մեջ հետախուզական խորհրդավորու-

¹⁵⁶ Տե՛ս **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 223:

Թյունն է պարունակում: 1919 թ. նոյեմբերի 13-ին թվազրվող փաստաթղթում նշվում է Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար գնդապետ Շենուրի նոյեմբերի 4-ի զեկուցագրի (№ 02202) մասին, որում վերջինս հաղորդում էր, որ ինքն իրեն թուլատրված երկամսյա արձակուրդի ընթացքում մեկնել է Ռուսաստանի բոլոր քաղաքները և այդ կապակցությամբ հրամայվում է նույն շտաբի հետախուզական բաժնի պետ կապիտան Մուրադյանին ձեռնամուխ լինել Գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարմանը¹⁵⁷: Այդուհանդերձ, հանրագումարի բերելով և համադրելով առկա փաստերը, հանգում ենք այն կարևոր հետևություն, որ գործնականում 1918 թ. հունվարից մինչև 1919 թ. նոյեմբերի 8-ը գնդապետ Ալ. Շենուրը եղել և գործել է Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմում¹⁵⁸: Ուշագրավ փաստ է: Սակայն դրանից հետո, հանգամանքների բերումով, որոնք դեռ չեն բացահայտվել, նա հեռանում է Հայաստանից և ծառայության անցնում Դենիկինի բանակում¹⁵⁹:

Մի փոքրիկ փաստ սակայն օգնում է քիչ լույս սփռել այդ ամենի վրա: Ինչպես պարզվում է Տ. Դեվոյանցի կողմից Փարիզ՝ գեներալ Ղորղանյանին ուղարկած 1919 թ. նոյեմբերի 23-ի զեկուցագրից (№ 57), Դեվոյանցը 1919 թ. նոյեմբերի 11-ին նամակ է ստացած լինում գնդապետ Ալ. Շենուրից, որով վերջինս հայտնել էր, որ ինքը վերջնականապես մեկնում է Կամավորական բանակ, որտեղ նա ծառայում է մինչև 1920 թ.¹⁶⁰, իսկ այնուհետև նա հայտնվում է տարագրության մեջ, համարելով ռուս էմիգրանտների շարքերը:

Այնուհետև որպես կամավոր Ալ. Կ. Շենուրը ծառայության է անցել Ֆրանսիական բանակի կազմում: Երկու անգամ վիրավորվել է և կոնտուզիա ստացել: Այդ ընթացքում Գալլիպոլում (Կ.Պոլիս) և Բուլղարիայում եղել է դասավանդող սպա ռազմական դպրոցում: Որոշակի փոթորկալից իրադարձություններից հետո տարբեր առիթներով եղել է Բուլղարիայում, Թունիսում [1934-1946 թթ.], Ֆրանսիայում, սակայն ի վերջո արտագաղթել է ԱՄՆ, հանգրվանել Սան-Ֆրանցիսկոյում: Այդ ընթացքում մտել է Մեծ պատերազմի ռուս վետերանների ընկերության մեջ որպես դրա իսկական անդամ, հրապարակել է հուշեր *“Вестник”* ամսագրում, հրատարակել է «Հայերը» հանրահայտ գիրքը: Հայտնի հետախույզ գնդապետ **Ա. Կ. Շենուր**

¹⁵⁷ Նույն տեղում, ք. 185:

¹⁵⁸ Տե՛ս **А. В. Ганин**, Корпус офицеров Генерального штаба в годы гражданской войны, 1917 – 1922 гг., Справочные материалы, стр. 131, 381, 495, 599, 738:

¹⁵⁹ Տե՛ս **Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ.** (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 399:

¹⁶⁰ **Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն)**, քիվ 17/17, պահ. 12, դ. 3, ք. 4:

ուրը վախճանվել է 1977 թ. սեպտեմբերի 16-ին, և հողին հանձնվել ԱՄՆ-ի Սան-Փրանցիսկո քաղաքի Սերբական գերեզմանոցում¹⁶¹:

Մի շարք փաստեր օգնում են ավելի ամբողջական և գուցեղ դարձնելու այս ինքնատիպ և՛ հայկական պետականություն, և՛ այն ուժային կառույցները մարմնավորող հետախուզական և հակահետախուզական ծառայությունների կայացման ակունքներում կանգնած հետախուզ-սպայի՝ Ա. Կ. Շենուերի կերպարը: Դեռ 1918 թ. մայիսյան հերոսական ռեկոնզման օրերին հայկական զորքերի Սարգարապատի խմբի շտաբի պետն էր, և այդ հերոսամարտի մասին հրատարակել է բարձրարժեք հուշեր¹⁶²: Հայկական դիվիզիայի գծով 1918 թ. օգոստոսի 21-ի (N° 12) հրամանում զորքերի հրամանատար Սիրիկյանը իրեն վստահված դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով շտաբային սպաների հաստիքային պաշտոնում է նշանակում որպես Գլխավոր շտաբի փոխգնդապետներ **Ալ. Շենուերին և Իվան [Հովհաննես] Դավիդի Վեքիլյանին** (Վեքիլով Իվան Դավիդովի [6 դեկտեմբերի, 1894 թ. - 16 հունիսի 1953 թ.]¹⁶³, օգոստոսի 15-ի դրությամբ), միաժամանակ դիվիզիայի շտաբի ավագ համհարգների հաստիքային պաշտոնում նշանակելով պոգոպորուչիկ **Ահարոնովին**, պորուչիկ **Մեդվեդևին**, պրապորչիկ **Սարգիսյանին**, շտաբս-կապիտան **Շոմոնովին** և պոգոպորուչիկ **Դվերնիցկուն**¹⁶⁴:

Հայաստանի Հանրապետության գինվորական գերատեսչության գծով գինվորական աստիճանների մասին 1918 թ. հոկտեմբերի 11-ի հրամանագրով (N° 21) Զինվորական նախարար Հախվերդյանը իրենց զբաղեցրած պաշտոններում հաստատում է մի շարք սպաների, այդ թվում և Շենուերին: Այսպես, 2-րդ հատուկ հայկական հետևակային բրիգադի շտաբի նախկին պետ, փոխգնդապետ Շենուրը հաստատվում է որպես Հայկական հետևակային դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով սպա¹⁶⁵: Իսկ արդեն Զինվորական նախարարի 1918 թ. դեկտեմբերի 5-ի (N° 42) Հայկական դիվիզիայի գծով հրամանագրում (N° 58/137) Գլխավոր շտաբի փոխգնդապետ, դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով սպա Ալ. Շենուրը և նրա հետ միասին 1-ին հետևակային բրիգադի հրամանատար գեներալ-մայոր Փիրումյանը ստանում են հատուկ նշանակում, համարվելով մշտական գործողման մեջ սկսած դեկտեմբերի 3-ից, առանց իրավունքի զբաղեցնելու թափուր

¹⁶¹ Ст'ю Русские в Северной Америке. Е. А. Александров. Хэмден (США)-Сан-Франциско (США)-Санкт-Петербург (Россия), 2005, стр. 576, **Архив Общества русских ветеранов Великой войны в Сан-Франциско. Генерального штаба полковник Александр Константинович Шнеур // 1977. Сентябрь. Альбом VI. 30-В. Некролог // Часовой (Брюссель). 1977. Декабрь. № 609.** стр. 19.

¹⁶² Ст'ю **Սարգարապատի հերոսամարտը, գրեց Գլխավոր Սպայակոյտի գնդապետ Ալեքսան Գ. Շենուր**, Մասնակցողի Յուշեր. Թարգմանեց Ա. Ամուրեան, Ասպարեզ տպարան, հրատարակութիւն Հ. Կ.Գ. Կեդր. Կոմիտէի, 1967, Ֆրէզնո, էջ 7:

¹⁶³ Ст'ю Маршалы, генералы и адмиралы армянского происхождения, стр. 99:

¹⁶⁴ Ст'ю **ՀԱԱ**, ֆ.Պ - 204, ց. 1, գ. 42, ք. 19 -20, 34-35:

¹⁶⁵ Նույն տեղում, գ. 40, ք. 55:

մնացած պաշտոնը և առանց պահպանելու ուժիկը, որը նրանք պետք է ստանային իրենց ծառայությունն ուր վայրում: Դա Զոդի Հանրահայտ փայլուն օպերացիայի նախապատրաստական փուլն էր: 1918 թ. դեկտեմբերի 31-ից սկսած **Ալ. Շենոլը** արդեն Առանձին Ղարաբաղյան բրիգադի պետն էր¹⁶⁶: Անշուշտ, հետաքրքիր է նշել, որ Ալեքսանդր Շենոլը՝ որպես բարձրաստիճան կադրային սպա, բազմիցս կատարել է ամենադժվարին հանձնարարությունները, և գտնվելով գինվորական և հետախուզական ծառայությունների վերին էջերում, հաճախակի փոխարինել է Գլխավոր շտաբի պետ Զինկեիչին զբաղեցրած պաշտոնում՝ վերջինիս բազմակի գործուղումների ժամանակ, որի մասին արխիվներում կան համապատասխան վկայություններ¹⁶⁷:

Ալեքսանդր Շենոլը Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի, նրա հատուկ ծառայությունների այն բացառիկ սպաներից էր, որն անուբանակի ներդրում ունի նրա կայացման համար մղված համառ և դժվարին պայքարի տարեգրությունում: Նրա վաստակը մեծ էր 1919 թ. սկզբի Զոդի օպերացիայում, որին նա մասնակցեց որպես գեներալ-մայոր **Դանիել Բեկ-Փիրումյանի** կողմից գլխավորած ջոկատի շտաբի պետ: Զոդի օպերացիան նաև հայկական բանակի և հետախուզական ծառայությունների փոխհամագործակցության ուսանելի օրինակներից է: Ուշագրավ է, որ այդ ջոկատի գործողությունները Զոդ գյուղի շրջանում բարձր գնահատականի արժանացավ նույնիսկ անգլիական ծառայությունների գնդապետ **Կ. Թեմպերլեյի** կողմից: Թաթարական գյուղերը մարտով գրավելու ժամանակ գործառնական գործողությունները կարգապահության և սպաների ու գինվորների խիզախության առումով այնքան գերազանց էին, որ գնդապետ Թեմպերլեյը օպերացիայի ավարտից հետո ժամանելով Երևան, իրեն պարտավորված համարեց բարեխոսել Հայաստանի կառավարության առաջ ջոկատի տոկոսն և կարգապահ գործողությունների մասին: Նախարարների խորհուրդը ապրիլի 24-ին լսելով գնդապետ Թեմպերլեյի կարծիքը, որոշում ընդունեց շնորհակալություն հայտնել գեներալ-մայոր Փիրումյանին և բոլոր սպաներին ու գինվորներին մարտական փայլուն գործողությունների համար Զոդի շրջանում: Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը իրեն երջանիկ էր համարում՝ ի դեմս երիտասարդ Հայկական բանակի, շնորհակալություն հայտնել գեներալ-մայոր Փիրումյանին և նրա շտաբի պետ Շենոլին՝ որպես փառավոր մարտական փորձ ունեցող սպաների, որոնք ստեղծեցին և ոգեշնչեցին Զոդի ջոկատը և նրա կողմից իրականացված հրաշալի ու անթերի ռազմական օպերացիան, որն էլ առաջին անգամ բարեհունչ գնահատական ստացավ անգամ անգլիական բանակի ներկայացուցչի կողմից: Որոշման մեջ Զինվորական

¹⁶⁶ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 104, ք. 53, Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 223:

¹⁶⁷ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 129, ք. 6 -7:

նախարարը կարգադրեց հատկապես աչքի ընկած սպաներին ներկայացնել զինվորական կոչման հերթական աստիճանի, իսկ զինվորների պարգևատրման համար շտաբի պետին (նկատի ունի Շնեոլերին) իր տրամադրություն տակ վերցնել Գեորգիեյան 4 խաչեր յուրաքանչյուր վաշտի, մարտկոցի՝ հեծելավաշտի համար առանձին-առանձին վերցրած¹⁶⁸: Այս օպերացիայի ավարտից հետո արգեն, Զինվորական գերատեսչության գծով 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով (N° 64) Առանձին Ղարաբաղյան բրիգադի պետ Ալ.Շնեոլը նշանակվում է Գլխավոր շտաբի բաժնի պետ¹⁶⁹:

Շնեոլը բազմակողմանի գործունեություն էր ծավալում, նրա կարիքը զգացվում էր բոլոր բնագավառներում: Ալ. Շնեոլը բազմիցս փոխարինել է Զինվորական նախարարության գործերի հրամանատարի Գլխավոր շտաբի պետ Զինկեիչին նրա բազմաթիվ գործուղումների ժամանակ: Այսպես, օրինակ, 1919 թ. մայիսի 17-ին Զինկեիչը ծառայողական գործուղումով Թիֆլիս և Բաթում է մեկնում, կապված Անդրկովկասյան վեհաժողովի աշխատանքների հետ և այլն: Թիֆլիս էր մեկնել նաև Հայաստանի գործերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը: Այդ իսկ կապակցությամբ Զինկեիչը որպես իրեն փոխարինող թողնում է Գլխավոր շտաբի փոխգնդապետ Շնեոլերին¹⁷⁰: Մայիսի 23-ի գրություն (N° 94) փոխգնդապետ Շնեոլը զինվորական գերատեսչության ղեկավարին՝ Զինվորական նախարարին, տեղեկացնում էր, որ ինքը ձեռնամուխ է եղել իր պարտականությունների կատարմանը, այն է՝ Զինկեիչի բացակայության պայմաններում ժամանակավորապես ստանձնելով Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի և գործերի հրամանատարի շտաբի պետի պաշտոնները (Տեղեկանք: Հիմք Զինվորական նախարարի N° 183 հրամանը և N° 0578 գեկուցագիրը)¹⁷¹:

Ալ. Շնեոլը մշտապես շարժման մեջ էր, նրան կարելի էր տեսնել Հայաստանի բոլոր շրջաններում, որոշակի նպատակներով և տարբեր առումներով՝ մասնակցելով նաև ՀՀ զանազան գործառնություններում իշխող իրավիճակի ստուգմանը, տարաբնույթ բացթողումների և չարաչափումների բացահայտմանը:

Այս առումով չափազանց ուշագրավ է Գլխավոր շտաբի գնդապետ Ալ. Շնեոլերի 1919 թ. օգոստոսի կեսի մի գեկուցագիր-հաղորդագրություն, ուղղված Փարիզում գտնվող հայկական զինվորական ներկայացուցիչ գեներալ Ղորղանյանին՝ կապված փախստականների և էրզրումի շրջանում իշխող ռազմաքաղաքական իրավիճակի որոշ հարցերի հետ: Ի լրացում իր ավելի վաղ ուղարկված մեկ այլ գեկուցագրի՝ Շնեոլը դրանում նշելով այն մասին, որ իր ունեցած տեղեկատվության համաձայն ֆրանսիական հրամանա-

¹⁶⁸ Նույն տեղում, գ. 132, թ. 68:

¹⁶⁹ Նույն տեղում, գ. 131, թ. 24:

¹⁷⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, թ. 75, գ. 129, թ. 6:

¹⁷¹ Նույն տեղում, գ. 132, թ. 77:

տարության առաջարկութեամբ խնդիր է դրվել կազմել փախստականների վերադարձի պլան, ինչի կապակցութեամբ ստեղծված Հանձնաժողովի կազմում ընդգրկվել է նաև ինքը՝ նպատակադրում ունենալով զբաղեցնելու Վանի, Մուշի, Էրզրումի գավառները, ինչպես նաև Ալաշկերտի և Խնուսի հովիտները, ինչից էլ ելնելով իր կողմից խնդիր է դրվում վերականգնել Մակվի ճանապարհը, որով ինչպես և Էրզրումի նեղ երկաթուղագծով առավել հարմար կլինի տեղափոխել փախստականներին և բեռները: Ծնեուրը տեղեկացնում էր, որ սուլային վերաբերող պլանները և սխեմաները ներկայացվել են գեներալ Նազարբեկովին (Նազարբեկյան): Սակայն այս տեղեկատվության մեջ մեզ համար առավել կարևորն այն է, որ հետախուզական ծառայության ղեկավարներից մեկը՝ Ծնեուրը, խիստ կարևորելով ժողովրդագրական առումով Արևմտահայաստանը հայերով վերաբնակեցման քաղաքականությունը, պարզապես խնդիր էր դրվում վերացնել Էրզրումի կառավարությունը, այնտեղից դուրս բերել թուրքական զորքերը և այդ տարածքը գրավել ամերիկյան զորքերի միջոցով, ավելացնելով, սակայն, որ լավ կլինի միաժամանակ կոստանդնուպոլսյան-կիլիկյան և Բուլղարիայի հայերից կազմավորել զորքեր¹⁷²:

Ինչպես Զինկևիչի պարագայում, որին նա հաճախ փոխարինում էր, Ծնեուրին ևս հաճախակի փոխարինում էին Գլխավոր շտաբի իր գործընկերները: 1919 թ. սեպտեմբերի 9-ին Զինվորական նախարար Արարատյանի հրամանով ծառայողական գործուղումից վերադարձած Ծնեուրը ձեռնամուխ է¹⁷³ լինում իր պարտականությունների կատարմանը որպես Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար, միաժամանակ այդ հրամանագրով կապիտաններ Շումովին և Մեդվեդևին կարգադրվում էր անցնել իրենց անմիջական պարտականությունների կատարմանը:

Հարկ է ընդգծել, որ դեռ 1919 թ. սեպտեմբերին գեներալ-մայոր Արսենի Սերգեյի Դուռնխանյանի փոխարեն, ՀՀ ղինվորական շտաբի պետ է նշանակվել արդեն գնդապետ Ալեքսանդր Ծնեուրը, որի մասին վերն արդեն ասել ենք¹⁷⁴: Ալեքսանդր Ծնեուրը ամենուր էր, որտեղ դժվար էր և անհանգիստ: 1919 թ. հոկտեմբերի 25-ին Զինվորական նախարարին հասցեագրված զեկուցագրում (№ 02167) Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար գնդապետ Ծնեուրը տեղեկացնում էր, որ նույն օրը ինքը մեկնել է գործուղման Կարս և Կողզվան, ժամանակավորապես Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատարի պարտականությունները դնելով նույն շտաբի բաժնի պետ Վ. Մուրադյանի վրա¹⁷⁵:

¹⁷² Հայաստանի Հանրապետության արխիվ (Թոստոն), թիվ 9/9, պահ. 12, դ. 3:

¹⁷³ ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, թ. 131:

¹⁷⁴ Նույն տեղում, գ. 131, թ. 27, 43, 46, 55-56, 61, 67:

¹⁷⁵ Նույն տեղում, գ. 132, թ. 174:

Հայկական հետախուզութեան պատմութեան մեջ իր վաստակն ունի **Տիգրան Թադևոսի Դեվոյանցը**, որն այդ համակարգի կարկառուն ղեմքերից է, նրա ոչ ստանդարտ կերպարներից և ռեալ ղեկավարներից մեկը¹⁷⁶:

Տիգրան Թադևոսի Դեվոյանցը ծնվել է Երևանում: Նրա ընտանիքը բազմամղամ է եղել. ունեցել է չորս եղբայր և երեք քույր: 1903 թ. արդեն ռուսական միջնակարգ դպրոցի սան էր: Այդ ընթացքում նա մասնակցում է ցարական իշխանութիւնների կողմից Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման և Հայկական դպրոցների փակման հետ կապված աշակերտական հուզումներին, որի պատճառով հեռացվում է դպրոցի երրորդ դասարանից, և փախչում է Թիֆլիս: Նրա փոխարեն ձերբակալվում է եղբայրը՝ Հակոբը, որը 5-6 ամսվա բանտարկութիւնից հետո ոստիկանապետին 5000 ռ. կաշառք տալով ազատվում է բանտից: Ռուսական կայսրութիւնը հեղափոխական հուզումների մեջ էր: 1904-1905 թթ., երբ Ռուսաստանում սաստկացան հակամիապետական տրամադրութիւնները, ցարական իշխանութիւնները հեղափոխական խմորումների ղեմն առնելու նպատակադրումով Բաքվում, Թիֆլիսում, Նախիջևանում և այլ հայաշատ վայրերում կազմակերպում են հայ-թաթարական բախումներ: Ինչպես իր մարտական դասընկերը՝ **Դրոն (Դրաստամատ Կանայան)**, Դեվոյանցը նույնպես հայտնվում է այն հայրենանվեր մարդկանց շարքում, որոնք փորձում էին սատար կանգնել Հայ ազգաբնակչութեանը Անդրկովկասի հայաշատ քաղաքներում: Այդ նպատակով, Դեվոյանցը Թիֆլիսի մեջ կազմակերպում է մատուցներով գինված 12 հոգանոց թռուցիկ մի խումբ՝ Շեյխան բազարի շրջանում, գործելով **Ռոստոմի (Ջորջան Ստեփան Գրիգորի, 1867 ~ 1919 թթ.)** հրահանգներով:

Այդ ընթացքում՝ 1906 թ. վերաբացվեց Թիֆլիսի առևտրական դպրոցը, և ռուսումնաբուցութիւնը կիսատ թողած Տ. Դեվոյանցը փորձում է այն ավարտել, սակայն դպրոցական վարչութեան բացասական վերաբերմունքի պատճառով, վերցնելով բոլոր վկայականները, նա մեկնում է Երևան, որտեղ նույն տարում ընդունվում է Երևանի գիմնազիայի 8-րդ դասարան, և Հաջողութեամբ հանձնում ավարտական քննութիւնները՝ ավարտում այն: Չորս տարվա ուսման ընթացքում Երևանի գիմնազիայում նրա դասընկերը Դրոն էր: Նրանք համատեղ ջանքերով ստեղծում են աշակերտական մարտական խումբ, որին անդամակցում էին **Դրոն, Ս. Զալալյանը, Ղարիբյանը, Խոսրովը** և ուրիշներ՝ թվով 9-10 հոգի¹⁷⁷:

¹⁷⁶ Տե՛ս **R. G. Hovamian**, The republic of Armenia, vol. II, From Versailles to London, 1919-1920, Berkeley. Los Angeles, 1982, pp. 68, 177, 489: Երևանի ռուսական գիմնազիայի նախ կին սան, «Բորեսա» մարտական խմբի նախկին անդամ, 1917-1918 թթ. Երզնկայի ճակատում տեղաբաշխված գեներալ Կալիտինի գլխավորած 2-րդ կորպուսի հետախուզական բաժնի աշխատակից. - տե՛ս **Հ. Գևորգյան**, Սեբաստացի Մուրադ, Եր., «Հրազդան», 2003, էջ 224:

¹⁷⁷ Տե՛ս **Դեհոյանց Տիգրան**, Դրաստամատ Կանայան (Դրոն), «Հայրենիք» (Բոստոն), 1957, N 9 (379), էջ 11, տե՛ս նաև **Հ. Գևորգյան**, Սեբաստացի Մուրադ, Եր., 2003, էջ 224:

Հավանաբար Երևանի գիմնազիայում ավարտական քննությունների ավարտից՝ 1906 թ. մայիսից հետո, որոշ ժամանակ անց, նա ընդունվում է Տոմսկի համալսարանի լեռնային ճարտարապետական բաժինը, իսկ ծախսերը հոգում է նրա ընտանիքը: Այդուհանդերձ, Դեվոյանցը, մասնավոր դասեր տալով, փորձում է օգնել իր ընտանիքին՝ հոգալով չորս եղբայրների և երեք քույրերի կարիքները: Տոմսկի համալսարանում ուսանելու տարիներին Դեվոյանցը գործուն մասնակցություն է ունենում հեղափոխական շարժումներին՝ կապեր հաստատելով ՀՅ Դաշնակցության, Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության, հրեական Բունդի, լեհ հեղափոխականների հետ, աջակցել է նաև Սիբիրից մի շարք հայ հեղափոխականների փախուստի կազմակերպմանը:

Ռուսական պատմության մեջ հայտնի ռեակցիայի ժամանակաշրջանում (1907-1912 թթ.) հետադիմականությունը հարձակման է անցնում հեղափոխության դեմ և կազմակերպում մեկը մյուսից անարդար դատավարություններ՝ բազմաթիվ հեղափոխականների նկատմամբ: Բանտարկվում է նաև Տ. Դեվոյանցը, սակայն որոշ ժամանակ անց հոր երաշխավորությամբ ազատ է արձակվում ու մեկնում Երևան, որտեղ ապրում է մեկուկես տարի՝ գիմնազիայի քննությունների համար նախապատրաստելով աշակերտներին՝ գտնվելով նոր ձերբակալման առկա վտանգի ներքո:

Լիժինյան դատավարություն ընթացքում (Լիժին՝ ցարական քննիչ, որը հայտնի է 1907-1912 թթ. Դաշնակցության նկատմամբ կազմակերպած անօրինական դատավարությամբ) Տոմսկի համալսարանի ուսանող Տ. Դեվոյանցը կրկին ձերբակալվում է: Նրա բանտային ընկերն է դառնում Բաֆֆու «Խենթի» հերոսի նախատիպ Սամսոնը (Տեր-Պողոսյան, ըստ Բաֆֆու՝ Վարդան-Խենթ¹⁷⁸), որին Դեվոյանցը դասեր է տալիս՝ ունենալով դասատուի բարի համբավ: 1910 թ. նա փախչում է բանտից, և այդ գործում նրան օգնում է նաև հայ նշանավոր ահաբեկիչ, ազգային ազատամարտի նվիրյալ Յապոնը (Հովհաննես Պարոնյան)¹⁷⁹: Դեվոյանցի փախուստին, իր իսկ վկայությամբ,

¹⁷⁸ **Ըստ Բաֆֆու**՝ Վարդան-Խենթի նախատիպը եղել է **Սամսոն Տեր-Պողոսյանը** (1846 - 1911 թթ.). ըստ պատմական իրողության, թուրքական քսան հազարանոց բանակը պաշարել էր Բայազետի բերդը, որտեղ ամրացել էր փոքրաթիվ՝ մոտ երկու հազարանոց ռուսական կա յազորը, և ըստ փաստերի, պաշարումը տևել է 23 օր, և կապն արտաքին աշխարհի հետ կտրված է եղել: Այդ իրավիճակում էլ, պաշարվածներից մի համորդուն և քաջ հայ երիտասարդ՝ Վարդան ամուսնով, հանձն է առնում բերդապատի մամակը հասցնել ռազմաճակատի հրա մանատար գեներալ **Արշակ Տեր-Ղուկասովին**: Դա 1877 թ. հունիսին էր, և հենց այդ ժամանակաշրջանի փաստերն է իր համրահայտ «Խենթ» գործի հիմք դարձրել հանրահայտ վիպա սան Բաֆֆին, ստեղծելով **Վարդան-Սամխանի** կերպարը: Սամսոն Տեր-Պողոսյանի գերեզմանը գտնվում է Էջմիածին քաղաքի Գալան վանքի բակում՝ վրան համապատասխան գրա ռուբյամբ // Տե՛ս **Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում**, Նոյեմբեր-Դեկտեմբեր, N 6, 1985, էջ 19: ¹⁷⁹ Այլ կերպ՝ **Պարոնյան Հովհաննես - Սարգիսյանյան Համարձույն (Յապոնեացի Սաքո)**: ՀՅԳ-նվիրյալներից է: 1903 թ. հայ եկեղեցու կալվածքները բռնագրավող ցարական ոստիկանների և կոզակների դեմ կազմակերպում է զինված դիմադրություն, իսկ արդեն 1905-1906

զգալի չափով աջակցում է Երևանի ՀՅ Դաշնակցության Կենտրոնական կոմիտեն, որը ոչ մի ջանք չի խնայում Դեվոյանցին ազատելու համար: Դեվոյանցը մեկ ամսի չափ հյուսիսահարավում է Դրոյի մոտ: Հենց Դրոյի գործուն աջակցությամբ էլ (Դրոն Դեվոյանցին Թավրիզ տեղափոխող կառավարման հրահանգ է տալիս աչքի լույսի պես պահպանել վերջինիս) Դեվոյանցը ուղևորվում է դեպի Թավրիզ, որտեղ կար մեծ թվով հայություն¹⁸⁰: Բայագետից Թավրիզ տանող ճանապարհին նա մի շարք ծածկանուններ է փոխում՝ *Հակոբ Հակոբյան, Աշոտ Հովսեփյան* և այլն: Թավրիզում նրան դիմավորում է *Սարգիս Կուկունյանի* նախկին զինակիցը՝ *Նորքեցի Մերուկը՝ Բալաջանովը (Ստեփան Ստեփանյան)*, որը փախչելով Սախալինի տաժարակիր բանտից՝ հաստատվել էր Թավրիզում: Թավրիզում Դեվոյանցը ուսաց լեզու, երկրաչափություն և հանրահաշիվ է դասավանդում Հայոց կեդրոնական դպրոցում: Ապրելով *Նիկոլ Դումանի* մոտ, նա մասնակցում է Դումանի խմբի աշխատանքներին: Միաժամանակ, Բաքվից Խ(Ք)բիստափոր Վերմիչևից առաջարկ ստանալով՝ Դեվոյանցը թղթակցում է «Բագու» և «Կավկասկի տեղեգրագ» թերթերին: Համագործակցությունը այդ թերթերի հետ շարունակվում է շուրջ 9 տարի՝ մինչև այդ թերթերի փակվելը: Իր հեղինակած նոթերը նա ստորագրում էր «*Տիգր Դեվո*», «*Օմեգա*» և «*Աշոտ*» կեղծանուններով, իսկ «*Ալֆա*» կեղծանունով թղթակցում էր ուս սոցիալիստ-հեղափոխականների «*Զնամյա տրուդա*» և Թավրիզի «*Առավոտ*» թերթերին:

Շուտով Թավրիզում ևս դժվարություններ են առաջանում, և քանի որ առկա էր ձերբակալման վտանգը (Պարսկաստանը հեղափոխական կռիվների մեջ էր, գահընկեց էր արվել Մահմեդ Ալի շահը, Թեհրանի ուղղությունը շարժվում էր հայագրի հայտնի ռազմաքաղաքական և հասարակական գործիչ *Եփրեմ Խանը* (Դավթյան Եփրեմ Դավթի, ծնված 1886 թ. Շամխորի շրջանի Բարսում հայկական հայտնի գյուղում), որը Թեհրանի դեմ գործող զորքերի զինվորական ընդհանուր հրամանատարն էր, և որին համարում էին Պարսկաստանի Նապոլեոն: Այդ իրադարձությունները փոթորկում էին Պարսկաստանի հասարակական-քաղաքական կյանքը, և հայերը վճռական դեր էին կատարում հեղափոխական իրադարձություններում), և Դեվոյանցը ձեռք էր բերել տաճկական հյուսիսարևմտյանի վկայական՝ Նիկոլ Դումանի (նա գոր-

թ. հայ-թաթարական կռիվների ժամանակ ահաբեկչական գործողությունների հեղինակ է դառնում և Շուշիում իրագործում ցարական մի շարք պաշտոնյաների, այդ թվում՝ քաղաքի գլխավոր ոստիկանապետ Սախարովի, պրիստավ Շումակիչի և այլոց ահաբեկումները: 1918-1920 թթ. նա դառնում է Չանգեզպարում խորհրդային իշխանության դեմ գիմված հակամարտության կազմակերպիչներից մեկը: Սակայն Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Յապոնը ձերբակալվում է և 1920 թ. հոկտեմբերին գնդակահարվում Գորիսի բանտում:

¹⁸⁰ **Տիգրան Կոչեանց**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բուստոն), 1944, N 1 (240), Յունուար-Փետրուար, էջ 77-82:

ծում էր Թավրիզի շրջանում՝ Կարա-Բաբա անունով), Իշխանի և այլոց հետ Դիլմանի վրայով անցնում է Վանա լճի շրջան, որտեղ նրանց ընկերակցում է Դրոն, և բոլորը միասին այցելում են Ախթամարի վանք: Այնուհետև պայմանավորվում են մեկնել Բայազետ և էրզրումի վրայով անցնել Կ.Պոլիս¹⁸¹: Դեվոյանցին հաջողվում է ձեռք բերել տաճկական հյուպատոսարանի վկայական իր համար՝ Հակոբ Հակոբյան անունով Թավրիզից Դիլման-Վան ուղևորվելու համար, իր հետ ընկերակցելով նաև երկու զինվորների և Սարգիս Օհանջանյանին, չնայած վերջինս մեկնելու պահին նախընտրում է մնալ Թավրիզում:

Առաջին աշխարհամարտի նախօրյակն էր: Դեպի Կ.Պոլիս ճանապարհի մի մասը նրան ուղեկցում է Դրոն, որին քրդերը մեծ պատվով են ճանապարհում: Կ.Պոլիս ճանապարհին՝ Սամսունում Տ. Դեվոյանցը հանդիպում է *Խաթակին* (Չազալյան Գարեգին, ծնված 1867 թ., 1915 թ. Մեծ եղեռնի զոհ), որին նույնպես հաջողվել էր ձերբազատվել Լիժինյան դատավարության կապանքներից և բանտային կյանքի շղթաներից, և հայտնվել Սև ծովի առափնյա Օրդու քաղաքում (Օրդու քաղաքում մեծ թվով հայուկներն էին կարճ մի մասը լուսավորչական, մյուսը՝ բողոքական դավանանքի պատկանող): Վերջինս Տ. Դեվոյանցին առաջարկում է այդ քաղաքի ազգային վարժարանների տեսուչի պաշտոնը՝ ավելի քան 20-25 դասատուների և 800-ի չափ աշակերտության նկատմամբ վերահսկողության իրավունքով: Տ. Դեվոյանցը միջնակարգ դպրոցի տեսուչի պաշտոնը ստանձնելու համար հանձնում է համապատասխան քննություն և ստանում «Մաթեմատիկայի մասնագետ» տիտղոս¹⁸²:

1913 թ. գարնանը Տ. Դեվոյանցը գտնվում էր Կ.Պոլսում, իսկ սեպտեմբերին արդեն Օրդու քաղաքում էր, ուր ստանձնում է ազգային երկու դպրոցների տնօրինությունը: Այդ ժամանակամիջոցում նա շարունակում էր աշխատակցել մի շարք ռուսական թերթերի. թղթակցություններում կային փաստեր և զանազան տվյալներ թուրքական զորքերի տեղաշարժերի մանրամասների մասին: Սակայն սկսվում է Առաջին աշխարհամարտը, և փորձելով խուսափել զորակոչից (1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո համապատասխան օրենքի համաձայն հայերին ևս սկսում են զորակոչի ենթարկել, մինչդեռ նախկինում վերջիններս զինվորական տուրք էին վճարում դրա փոխարեն), քանզի թրքահպատակի անձնագիր ուներ՝ Ղազրամյան Աբրահամյան անունով, նա հարցումով դիմում է Բաթումի և խնդրում իրեն ուղարկել պարսկահպատակի անձնագիր, որը շուտով ստանալով՝ դրանով ներկայանում է Կ.Պոլիս ռուսական փոխհյուպատոս *Մաքսիմովին*, որը նրան աշակցում է բոլոր գործերում (ռուսական զորքերի կողմից էրզրումը գրավելուց հետո ռուսական զորքերի կողմից էրզրումի գրավման օպերա-

¹⁸¹ Նույն տեղում, էջ 90:

¹⁸² Նույն տեղում, Մարտ-Ապրիլ, 1944, 2 (241), էջ 88 -90:

ցիան տեղի է ունեցել 1915 թ. դեկտեմբերի 28 ~ 1916 թ. փետրվարի 18] Մաքսիմովը Կովկասյան բանակի սպայակույտում էր: Տ. Դեվոյանցը մտերմանում է նրա հետ, և երբ Մաքսիմովը 1917 թ. փետրվարյան օրերին ձերբակալվում է բանակի զինվորների և բանվորների խորհրդի կողմից, Տ. Դեվոյանցի միջնորդությամբ նրան ազատում են կալանքից)¹⁸³: Տ. Դեվոյանցը Բաթումիի ճանապարհին շարունակում է Հայթայթել տարաբնույթ նյութեր թուրքական զորահավաքի, ինչպես նաև Սամսունի, Օրդուի, Տրապիզոնի, Ռիզիեի իրադարձությունների մասին՝ ռուսական բանակի հետախուզական մարմիններին ներկայացնելու համար: Նա իր հետ վերցնում է Մակու-Թավրիզ-Վան-Բայազետ-Էրզրում-Տրապիզոն-Կ.Պոլիս ճամփորդության մասին նոթագրությունը՝ ռուսական բանակի հետախուզական մարմիններին ներկայացնելու համար: Բաթումիում նրան սպասում էին, քանզի այդ մասին Մաքսիմովը տեղեկացրել էր Բաթումիի զինվորական իշխանություններին¹⁸⁴: Բաթումիում եղած ժամանակ, կապված Լիժնյան դատարանի կողմից դատապարտված լինելու և դեռևս օրինապես արգարացված չլինելու հանգամանքի հետ, նրան ներում շնորհելու միջնորդությամբ է հանգես զալիս Պետական Դոմայի անդամ *Միքայել Պապաջանյանը*, և ըստ այդմ Տ. Դեվոյանցը արդեն կարող էր անարգել վերադառնալ Ռուսաստան:

Այդ ամենից հետո Տ. Դեվոյանցը նորից փորձում է մտնել Թիֆլիսի զինվորական դպրոց¹⁸⁵, սակայն այդ մտադրությունը իրագործել չի հաջողվում: Դա 1914 թ. Հոկտեմբերին էր՝ Կ.Պոլսից վերադառնալուց որոշ ժամանակ անց: Հանգամանքների բերումով նա կրկին հանդիպում է իր նախկին դարձկերտը՝ Դրոյին: Դրոն Տ. Դեվոյանցին իր հետ տանում է Իգդեր, նրան է նվիրում մի ճերմակ ձի՝ *Ջեմլյակի*¹⁸⁶ հեծյալ Հարյուրյակում ծառայելու համար, և պատվիրում գրել այդ զորամասի կռիվների պատմությունը¹⁸⁷: Տ. Դեվոյանցը պաշտոնապես կցված էր Իգդերում այդ ժամանակ հաստատված Չորրորդ կորպուսի սպայակույտին, բայց աշխատում էր Հայկական «չտաբում»: Այդ ժամանակից սկսած նա լիովին նվիրվում է հետախուզական գործունեությանը:

Առաջին աշխարհամարտի ժամանակ, մասնավորապես այն բանից հետո, երբ կազմվում է զորավար *Պ. Օգանովսկու* (գեներալ *Օգանովսկի Պյոտր*

¹⁸³ Տե՛ս *Տիգրան Դեվոյանց*, Հետախույզի մը յուշերը, «ՎԷՄ» (Փարիզ), 1938, թիւ 2, Յունար-Մայիս, էջ 48:

¹⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

¹⁸⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁸⁶ *Նանունյան Հարություն*. Առաջին աշխարհամարտի տարիներին հայտնի էր որպես հեծյալ հարյուրյակի պետ, որի կազմում էր նաև Տ. Դեվոյանցը: Ջեմլյակը գտնվեց 1917 թ. : տե՛ս «*Աշխատավոր*». Թիֆլիս, 3. VI. 1919, N 108:

¹⁸⁷ *Դեվոյանց Տիգրան*, Հետախույզի մը յուշերը, «ՎԷՄ» (Փարիզ), 1938, թիւ 2, Յունար-Մայիս, էջ 49, տե՛ս նաև *Դեվոյանց Տիգրան*, Կեսնիսի դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1943, N° 5, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 52:

Ի վանովիչ [Օհանով, Օհանյան Պետրոս Հովհաննեսի], 26 օգոստոսի, 1851 թ. [այլ աղբյուրների վկայությամբ՝ 1866 թ.¹⁸⁸] ~ 1917 թ.¹⁸⁹) գլխավորությամբ գործող գործառն, որի սպայակազմը հաստատվում է Իգդիրում, Ազգային բյուրոյի կողմից ընտրվում է մի «Կարգադրիչ մարմին», որը պետք է զբաղվեր կամավորական շնորհների կազմակերպման և ուղղորդման գործերով: Այդ մարմնի կարգադրությամբ Իգդիրում ստեղծվում է «Հայկական շտաբ», որտեղ Տ. Դեվոյանցը հանդիսանում էր ռուսական զինվորական իշխանությունների հետ հարաբերությունները կարգավորողը, կամ ավելի ճիշտ՝ ռուսական Զորորդ կորպուսի սպայակույտի հետ հարաբերությունների ապահովման պատասխանատու էր: Տ. Դեվոյանցը թուրքական ուժերի մասին Իգդիրի Հայկական շտաբի միջոցով ձեռքբերած արժեքավոր տեղեկությունները հաղորդում էին Պ. Օգանովսկու գլխավորած կորպուսի հետախուզական բաժնի պետ գլխապետ (կապիտան) Վլադիմիր Օզոլին՝ Հայերի և Հայկական հարցի նկատմամբ շատ լավ տրամադրված մի անձնավորություն, որի ջանքերով Քանաքեռում հիմնվել էր սպաների պատրաստման դպրոց Հայ կամավորական խմբերի համար. այստեղ Օզոլը նաև դասախոսում էր: Հաճախելով սպայական դասընթացներին, Դեվոյանցը գիտելիքներ էր ձեռք բերում հետախուզական գործի կազմակերպման մասին: Միաժամանակ, այստեղ ձեռքբերված տեղեկությունները, պայմանավորվածությամբ համաձայն, ուղարկվում էին Ռոստոմին, որը Կամավորական խմբերի Կարգադրիչ մարմնի անդամ էր¹⁹⁰:

Միաժամանակ անց Տ. Դեվոյանցը հայտնվում է Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր սպայակույտի հետախուզական բաժանմունքի պետ գնդապետ Դ. Պ. Դրացենկոյի ուշադրություն կենտրոնում, որը սկզբում Հայ հետախույզի մասին հարցում է անում Օզոլին, որից հետո դիմում է Ռոստոմին՝ խնդրադրով Տ. Դեվոյանցին Իգդիրի Հայկական շտաբից դուրս բերելու և իր տրամադրության տակ դնելու՝ հետախուզական հատուկ աշխատանքների համար, մասնավորապես Մանգլիքերտի շրջանում գործելու նպատակով՝ ապահովելու համար կապը Մուշի և Բիթլիսի միջև: Դրանից հետո Դրացենկոյի պահանջով Տ. Դեվոյանցը և Ռոստոմը մեկնում են Կարս, որտեղ գտնվում էր բանակի ողջ սպայակազմը: Որոշ ժամանակ անց Տ. Դեվոյանցը ուղևորվում է Մանգլիքերտ, որը նոր էին գրավել ռուսական զորքերը (Բուլանուխ - Մանգլիքերտի ազատագրումին նախորդել էր Վանի գրավումը, ինչը հուլյան էր առաջ բերել, որ շուտով կազատագրվի նաև Տարսնը), և

¹⁸⁸ Տե՛ս 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ. Կենսագրական հանրագիտարան, էջ 321: Տիգրան Հայազն, Հրաչյա Պետրոսյան, 200 հայ գորավարներ, Եր., Հեղ. հրատ., 2011, էջ 104:

¹⁸⁹ Տե՛ս Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге. Биографический справочник, стр. 181:

¹⁹⁰ Տե՛ս Դեվոյանց Տիգրան, Կենսաբնութագրերից, «Հայրենիք» (Բոստոն), 1943. N 5, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 52-53:

ուսական հրամանատարութեան ու հայ ազգային մարմինների փոխադարձ համաձայնութեամբ սկսում է զբաղվել Մուշի և Բիթլիսի միջև կապի հաստատմամբ՝ փորձելով նաև տեղեկութիւններ հայթայթել Էրզրումի ռազմաճակատի վերաբերյալ (1915 թ. ամռանը)¹⁹¹։ Նրան էր հանձնարարվել Էրզրումի հետախուզութիւնը։ Պետք է նշենք, որ Էրզրումը գրավելուց հետո նա տեղափոխվում է այնտեղ, իսկ Երզնկան գրավելուց հետո՝ Երզնկա՝ տեղի հետախուզութիւնը կազմակերպելու համար։ Այդ ընթացքում Դեվոյանցին հաջողվում է ինուսի, Մուշի և Բիթլիսի շրջաններ ուղարկել 10-15 հետախուզյանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մանազկերտի (Վանա լճի) շրջանում գտնվում էին Հալեպից, Տիգրանակերտից, Խարբերդից, Մալաթիայից, Մուշից ու այլ հայաբնակ վայրերից տարագրված տասնյակ հազարավոր հայ փախստականներ, և այդ հանգամանքը խիստ կարևորել էր մշտական կապի ապահովումը *Ռուբեն Տեր-Մինասյանի և Վ. Փափազյանի (Կոմս)* հետ՝ Մուշ-Սասուն տարածքի նկատմամբ վերահսկողութեան ապահովման նկատառումներից ելնելով¹⁹²։ Այդ խնդրի իրագործման համար Դեվոյանցին են տրամադրվում նաև Հինգ կամավոր¹⁹³։ Ստացված արդյունքների մասին զեկուցագրերը ներկայացվում էին գնդապետ Դ. Դրացենկոյին, Ազգային բյուրոյին և ՀՅԴ բյուրոյին¹⁹⁴։

Որպես հայ հետախուզիչ՝ Տ.Դեվոյանցի կենսագրութեան մեջ հատուկ տեղ է զբաղեցնում հենց 1915 թ. ապրիլ-մայիսի ժամանակահատվածը, երբ նա իր 5 զինակիցներով հայտնվում է Մանազկերտում՝ Մուշի և Բիթլիսի միջև կապ հաստատելու հեռահար նպատակով։ Այնուհետև Կովկասյան բանակի հրամանատարութեան կողմից Դեվոյանցը գործուղվում է Էրզրում՝ հետախուզութեան, իսկ արդեն Երզնկան գրավելուց հետո հիմնավորվում է նաև այնտեղ։ Սակայն շուտով, կապված Վան-Մանազկերտի շրջանից ռուսական զորքերի հայտնի «անակնկալ», «Մեծ նահանջի» հետ, Ռոստոմի և *Արամի (Արամ Մանուկյան)* առաջարկութեամբ շտապ Մանազկերտ է գործուղվում *Կ. Սասունին*՝ իր կուսակցական ընկերների հետ՝ պարտականութիւն ունենալով քննել Տիգրան Դեվոյանցի գործը, որը տվյալ պահին լինելով գոր. Օգանովսկու գլխավորած 4-րդ կորպուսի հետախուզական բաժնի վարիչ, իբր թե սխալ, անճիշտ զեկուցումներ էր ներկայացրել ռուսական հրամանատարութեանը և այդ կապակցութեամբ էլ ամեն ջանք չէր գործադրել, որպեսզի ռուսական զորքերը չարժվեին դեպի Մշո դաշտ՝ իրենց գործողութիւնները համաձայնեցնելով դեպի Դատվան և Բիթլիս առաջացող հայկական կամավորական գնդերի հետ։ Այդ կապակցութեամբ հարկ է նշել,

¹⁹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կենտրոնական արխիվ (Բոստոն), Թղթածրար, ՍՎ. 78/8:

¹⁹² Տե՛ս *Գեղեցանց Տիգրան*, Կեանքիս դրուագներից, էջ 54:

¹⁹³ Տե՛ս նույն տեղում:

¹⁹⁴ Տե՛ս նույն տեղում:

որ հիմնովին սխալ են Կ. Սասունու մեղադրանքները Տ. Դեվոյանցի հասցե-
 ին, թե իբր վերջինիս հանձնարարված էր «ամեն ջանք թափել», որպեսզի
 «ռուսական բանակը տրամադրվեր առաջ գնալու», որը, սակայն չի հաջող-
 վում¹⁹⁵: Իբր թե Տ. Դեվոյանցը չափազանցել էր թուրքական հարձակողա-
 կան ուժերի թիվը՝ 70000 զինվոր, այն իբր եղել է 30000-ի մոտ, և դա էլ
 իբր պատճառ է դարձել ռուսական զորքերի ընդհանուր նահանջի համար
 ամբողջ ճակատում¹⁹⁶: Սա, իհարկե, անլուրջ մոտեցում էր և չի կարող դիտ-
 վել որպես խորապես փաստարկված պատճառաբանվածություն: Տ. Դեվո-
 յանցը՝ ինքն էլ հետևողականորեն ու վճռականորեն տարբեր առիթներով
 հերքում էր դա¹⁹⁷: Նա բազմաթիվ ապացույցներ է բերում այն մասին, որ
 անկախ որևէ հանգամանքից, ռուսական բանակը միշտ էլ ամենաճիշտ և
 ստուգված տեղեկություններ ուներ թշնամու ուժերի դասավորման, քանա-
 կի և այլնի մասին իրենց գործասերի NN-ով, մնում էր միայն հետևել թի-
 կունքում թշնամու ուժերի փոփոխություններին, ինչով և մանրակրկիտ
 կերպով զբաղվում էին հետախուզական գործի կազմակերպիչները: Ուստի
 Տ. Դեվոյանցը գալիս է հետևյալ եզրակացություն. «անկարելի էր սխալվել
 թշնամու ուժերի տեղավորման, դասավորման մասին, իսկ կովի միջոցին
 միշտ ունեինք գերի կամ փախստականներ, որոնց միջոցով ճշտում էինք
 թշնամու նոր դասավորությունը»¹⁹⁸:

Առնվազն միամտություն է ռուսական զորքերի 1915 թ. հուլիսյան
 (20-23) նահանջը միակողմանիորեն կապել Տ. Դեվոյանցի հաղորդած տեղե-
 կությունների և հենց նրա բուն հետախուզական գործունեության հետ: Կ.
 Սասունու անհիմն մեղադրանքների կապակցությամբ **Փ. Լազյանը** գրում է.
 «Կը կարծենք, թե այս մեղադրանքները չափազանցություն են. ռուս հրա-
 մանատարությունը այս կամ այն զինվորական կարեւոր շարժումը՝ նահանջ
 կամ հառաջխաղացում՝ չի կատարել միայն մեկ տեղեկության վրա հենվե-
 լով»¹⁹⁹: Անշուշտ, սխալ է նաև **Վ. Փափազյանը**, որը, մեզմ ասած, անլուրջ
 պատճառաբանությամբ, Տ. Դեվոյանցին մեղադրում է ռուսական զորքերի
 նահանջի մեջ՝ կարծելով, թե գեներալ Պ. Օգանովսկին և առահասարակ ռու-
 սական բանակի հետախուզական ծառայությունը իրենց ողջ գործելակերպը
 կառուցել էին՝ հենվելով միմիայն Դեվոյանցի տեղեկությունների վրա, և
 ինչը հետագայում վերը հիշյալ գորավարը փորձել է սուփեստ և անհեթեթ

¹⁹⁵ Տե՛ս **Կ. Սասունի**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918). Տաճկահայոց գաղթաշարժի եւ ամոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 77:

¹⁹⁶ Տե՛ս **Կ. Սասունի**, Նշված տեղում, էջ 80- 81:

¹⁹⁷ Տե՛ս **Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն)**, Թղթածրար, ՍՎ. 78/ 8:

¹⁹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹⁹ **Փ. Լազյան**, Հայաստան եւ Հայ դատը, Եր., 1991, էջ 182:

«արզարացումներով» Հերքել²⁰⁰: Բոլորովին էլ չի կարելի համակարծիք լինել նաև այն տեսակետի հետ, որի համաձայն, զորավար **Անդրանիկը** ռուսական զորքերի այդ հայտնի նահանջի ու իրադարձությունների զարգացման վրա ազդող վճռորոշ պատճառ է համարել Կովկասյան բանակի շտաբին կից հետախուզություն աշխատակից, գեներալ Պ. Ի. Օբանովսկու գլխավորած 4-րդ կորպուսի հետախուզական բաժնի վարիչ, պրապորշչիկ Տիգրան Դեվոյանցին: Առավել ևս, երբ ինքն՝ Անդրանիկը ևս Տ. Դեվոյանցին նաև իր կողմից ներկայացվող մեղադրանքների կապակցությամբ կարծում է, որ դա կարող է լինել ցարական կառավարություն հերթական դավը հայ ժողովրդի դեմ²⁰¹: Հարկ է ասել, որ զորավար Անդրանիկը 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին տեղի ունեցած Հայոց Ազգային համախորհրդակցություն (ՀԱՀ) նիստերի օրերին կրկին անդրադառնում է 1915 թ. հուլիսին Վան-Մանազկերտ ուղղությամբ ռուսական զորքերի նահանջի պատմությունը (երբ Աբգուլ Քերիմ փաշայի զորքերի հարվածների ներքո ռուսական 4-րդ կորպուսը խուճապահար նահանջում էր), և այդ հարցի հետ կապված հին մեղադրանքներ նետում Տ. Դեվոյանցի հասցեին: Տ. Դեվոյանցը չի երկնչում մեղադրանքների տարափից և գրավոր դիմումագիր է ներկայացնում Ազգային համախորհրդակցություն նիստի նախագահին՝ մեղադրանքների առնչությամբ հիմնավոր բացատրություն տալու պահանջով. «Պ. նախագահ. որովհետև Վանի ընդհանուր նահանջի մասին պ. Անդրանիկի կողմից հայտարարություն եղավ, իբր թե ես սխալ տեղեկություն եմ տվել թշնամու ռուսերի մասին (2-րդ դիվիզիա) և հետևաբար նահանջի պատճառը ես եմ եղել, կինդրեի կրկին բարեհաճեիք ժողովի համաձայնությամբ թույլ տայիք ինձ, որպես բացառություն, տայի իմ բացատրությունները այդ ընդհանուր նահանջի մասին»²⁰²: Բայց քանի որ Տ. Դեվոյանցը պատգամավոր էլք, ուստի այդ հարցի շուրջ պարզություն մտցնելու իրավունքը վերջինիս կողմից տրվում է, կամ ավելի ճիշտ՝ վերապահվում է նրա դատընկեր ու գինակից **Դրաստամատ Կանայանին (ԴԲՈ)**, որից հետո Հայոց Ազգային համախորհրդակցությունը հարցը համարում է փակված: Զբավարարվելով խնդրի այդպիսի հանգուցալուծումով և իրեն մեղավոր չզգալով, Տ. Դեվոյանցը «Հորիզոն» թերթի 1917 թ. նոյեմբերի 16-ի համարում հանդես է գալիս ծավալուն հոդվածով, և առաջ քաշում այն տեսակետը, որ եթե գեներալ Պ. Օբանովսկին ժամանակին ուշաբուրություն դարձներ հայ հետախուզների

²⁰⁰ Տե՛ս Վ. Փափագեան, Իմ յուշերը, Կ. Երկրորդ, Պէյրոս, 1952, էջ 412- 415:

²⁰¹ Տե՛ս Հր. Միմնյան, Անդրամիկի ժամանակը. Երկու գրքով. Գ-իքք Ա., Եր., 1996, էջ 464-465:

²⁰² Տե՛ս Հայոց ազգային համախորհրդակցությունը, Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, փաստաթղթերու նյութեր, պրոֆ. Վ. Ն. Դազարյանի խմբագր.: (Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, N 1-2, էջ 150): Տե՛ս նաև Համահայկական խորհրդակցությունը (1918-1920 թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ. Ա. Վիրաբյան և ուրիշներ, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2004, էջ 275:

տեղեկություններին և հարկ եղած միջոցները ձեռնարկեր, ապա չէին լինի ինչպես ողբերգական խուճապային նաճանջը, այնպես էլ այդ օրերի հայ բնակչության կոտորածները: «Մանազկերտից առաջ շարժվելիս, - գրում է Տ. Դեվոյանցը, - ամենակարևորը՝ պետք է ապահովվեր մեր գորքերի աջ թևը Մանազկերտ-Խնուս գծի վրա, որպեսզի թույլ չտրվեր թշնամուն Քյոփ-րիքոյի ուղղությունից դուրս գալ մեր թիկունքը: Գեներալ Օգանովսկին և իր շտաբի նաչալնիկ, կաթվածահար, բայց Յուզենիչի [ցարական բանակի գեներալ Ն. Ն. Յուզենիչ, 18 հուլիսի, 1862 թ. - 5 հոկտեմբերի 1933 թ.] բարեկամ գեներալ Ռյաբինսկին այդ չարեցին: Նրանք մինչև անգամ Եփրատ գետի միևս ափում Կարաչաբանի ուղղութեամբ չթողեցին փոքրիկ ձիավոր խուզարկու խմբեր, այլ մէկ բատալիոն հետևակ դնելով Մանազկերտի մէջ, որպէս պահեստ, շարժեցին Մշոյ վրայ՝ առանց կազմակերպելու մատակարարման գործը և առաջ անցան Մանազկերտից մօտ 200 վերստ»²⁰³, որից օգտվեցին թուրքերը և հակահարձակման անցնելով՝ կրակի տակ առան հարկադիր նաճանջի ճանապարհը բռնած ռուսական զորքերին և գաղթականների սովալյուկ խմբերին: Հետևանքն այն է լինում, որ ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունը պաշտոնանկ է անում գեներալ Պ. Օգանովսկուն, որը այդ օրերին ռազմաճակատ եկած Կ. Սասունու և Ռուբեն Տեր-Մինասյանի հետ հանդիպման ժամանակ, որին ներկա է եղել նաև Դեվոյանցը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով՝ «ռուսական բանակի նաճանջի» խնդրում մատնացուց է անում վերջինիս: Այդուհանդերձ, Տիգրան Դեվոյանցը պարզևատրվում է Սբ. Աննայի անվան «Քաջության համար» շքանշանով, և էրզրումը գրավելուց հետո նույն պաշտոնով տեղափոխվում է բանակի շտաբ: Այդ մասին «Հորիզոնի» 1917 թ. նոյեմբերի 17-ի համարում Դեվոյանցը գրում է հետևյալը. «Այստեղ պէտք է նկատի առնել մի այլ պարագայ: Ես՝ գտնելով խուզարկու գործի վարիչ պաշտոնով Մանազկերտում, ոչ մէկ կապ չունէի Վանի շրջանի ռազմեղկայի հետ, միայն թէ պարտք էի համարում իմ ստացած լուրերի պատճէնները յայտնել Արարատեան գնդին (Վարդանին) ի գիտութիւն: Իսկ ինչ վերաբերում էր իմ պաշտօնին, ես ապրելով Մանազկերտում, անկախ էի իմ պաշտօնի մէջ և ստացած լուրերը, եթէ կասկածելի էին, վերապահութեամբ հաղորդում էին կորպուսի շտաբին, որն ունէր իրեն խուզարկու գործերի վարիչները, որոնք ստուգում էին իմ լուրերը այլ աղբիւրներից, ապա հաղորդում գործամասերին»²⁰⁴: Այնպես որ, դիմելով Համազգային խորհրդաժողովին՝ Դեվոյանցը ներքին ամուր համոզմունք ուներ իր իրավացիության մեջ և վստահաբար մերժում էր ինչպես Կ. Սասունու, այնպես էլ այլոց առաջին հայացքից «անհրեքելի և անխոցելի ապացույցները» Վան-Մանազկերտի 1917 թ. հուլիսյան իրողու-

²⁰³ «Հորիզոն», Թիֆլիս, 17. XI. 1917, N 246 (ճշում. «Հորիզոնի» 17.11.1917թ. համարը պետք է լինի N 246-ը, իսկ N 247-ը վերաբերում է 18. XI. 1917-ի համարին):

²⁰⁴ Նույն տեղում:

Թյունների ժամանակահատվածում Թույլ տրված շահարկումների հարցում, այդ Թվում իբր թե 20.000 հազար փուլ ցորենի վատնման, դրամաշորթու-
 Թյան, կողոպուտների և սպանությունների խնդրում՝ վկայակոչելով տար-
 բեր փաստացի տվյալներ և ազգային գործիչները: Տիգրան Դեվոյանցը իր
 Թողած վկայակոչումներում, որոնք պահվում են նաև Հայաստանի Ազգային
 արխիվի համապատասխան պահոցներում ձեռագիր վիճակում, հերքում է
 իրեն ներկայացված մեղադրանքը իբր թե Թուրքական զորքերի մասին ուռ-
 ճացված տվյալներ (70 հազար զինվոր) ներկայացնելու խնդրում, ինչը ինքը
 երբեք ձեռքի տակ չի ունեցել, այլ ընդհակառակը, Ս. Վրացյանին, Ռ. Տեր-
 Մինասյանին և Վ. Փափագյանին ներկայացվել են ընդամենը 25-35 հա-
 զարի չափով Թուրքական զորքի մասին տվյալներ: Ինչ վերաբերում է
 Հայտնի նահանջի պատճառներին, Տ. Դեվոյանցը այդ չարաբաստիկ նա-
 հանջի պատճառներից ամենապլևավորը համարում է հենց այն, որ գեներալ
 Օգանովսկին առանց ապահովելու իր կորպուսի աջ Թևը, առանց պատնեշ
 դնելու Եփրատի մյուս ափին Մանազկերտի մոտ (Նուրբեյգլին գեղի
 ուղղութեամբ), Թողնելով Մանազկերտի մեջ միայն մեկ գումարտակ զինվոր
 (600 հոգի), տեղաշարժվել է դեպի Մուշ և Բիթլիս²⁰⁵: Վերն ասվածի կապակ-
 ցութեամբ միանգամայն տրամաբանված է Տ. Դեվոյանցի եզրակացությունը.
 «...Որովհետև ես պատգամավոր չէի, խորհրդաժողովը մերժեց ինձ ձայն
 տալ այդ մասին բացատրություններ ներկայացնելու համար, իսկ նախագա-
 հը խոստացավ ձայն տալ ինձ հաջորդ նիստի ժամանակ, կրկին խոսք չտրվեց
 ինձ: Ընկ. Դրոն, ստանալով ինձանից այդ հարցի նկատմամբ իմ ունեցած
 փաստաթղթերը՝ հերքեց պ. Անդրանիկի ասածը, և խորհրդաժողովը հարցը
 համարեց փակված»²⁰⁶: Տ. Դեվոյանցը ցավով գրում է. «Բայց հարց է ծա-
 գում, կարելի՞ էր, արդյոք, այդպես թեթև կերպով անցնել մի խնդրի վրա-
 յից, որ դարձավ այդքան մեծ դժբախտությանց պատճառ ամբողջ գրավված
 վայրերի ազատված Հայերի համար: Կարծում եմ՝ ոչ, նամանավանդ, եթե
 նկատի ունենանք ժողովրդի մեջ մինչև օրս էլ շարունակվող շշուկները, որ
 իբր թե այդ նահանջը եղել է նախօրոք կազմակերպված և մտածված: Կար-
 ծում եմ, որ ամենակալ ելքերից մեկը այն կլիներ, որ Ազգային խորհրդաժո-
 ղովը կազմեր մեկ Հանձնախումբ, որին Հանձներ այս նահանջի պատճառնե-
 րը մանրամասն կերպով քննել գեթ ապագա պատմության համար»²⁰⁷:

Վիճելի խնդրի կապակցութեամբ Տ. Դեվոյանցի գործունեությունը
 քննելու համար ՀՅԴ Բյուրոյի կողմից կազմվում է Հանձնախումբ, որը հե-

²⁰⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ - 1457, ց. 2, գ. 28, քք. 12-17 հալ.

²⁰⁶ «Հորիզոն». Թիֆլիս, 17. XI. 1917, N 246:

²⁰⁷ Նույն տեղում: Նշենք, որ ըստ Ա. Հարությունյանի, գեներալ Պ. Օգանովսկուն Վան-
 Մանազկերտ նահանջի համար մեղադրական ներկայացնելը անիմն է, չպատճառաբանված:
 Ա. Հարությունյան, Մարիդամիչի ճակատամարտի դերը Կովկասը թուրքական ներխուժման
 վտանգից փրկելու գործում (1914 թ. դեկտեմբեր): «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1967, N
 2, էջ 102:

տագայում արդյունքները ներկայացնում է 1919 թ. նոյեմբերին Երևանի մեջ բացված ՀՅԴ 9-րդ Ընդհանուր Ժողովին²⁰⁸, որի կուսակցական դատական առյանը քննարկում է տվյալ գործը, սակայն այն անավարտ է մնում, ըստ երևույթին նաև ներկայացված փաստարկումների կիսատագատուծյան պատճառով²⁰⁹: Հատկանշական է, որ ժամանակակիցներից ոչ բոլորն են համաձայնվում Տ. Դեվոյանցին ներկայացված մեղադրանքներին: Այսպես, Ս. Վրացյանը պարզապես գրում է. «Դեյոյանցը մեր Երևանի ընկերներից էր: Իբրև տարագիր, ապրել էր Թուրքիայում, ուր լայն ծանոթութիւններ ունէր: Այժմ սպայ էր, 4-րդ կորպուսի հետախուզական մասի վարիչ: Ճարպիկ եւ բանգէտ երիտասարդ էր: Արագ լուրեր էր հայթայթում թշնամու ուժերի, ծրագիրների եւ գործողութիւնների մասին, որոնց շուրջ երբեմն կասկածներ ու վէճեր էին ծագում: Հակառակ որ ինքը վճռական հերքումներ է հրատարակել, մինչեւ այժմ էլ նրան մեղադրում են, որ անճիշտ տեղեկութիւններով թրքական ուժերի եւ գործողութիւնների մասին՝ պատճառ է եղել Տարօնի շրջանի հայութեան բնաջնջման: Ես անձնապես փաստ չունեմ նրան մեղադրելու այդ ուղղութեամբ»²¹⁰: Հարցի առնչությամբ բազմաշանակ և սպառիչ պարզաբանումներ է տալիս Տ. Դեվոյանցը՝ բերելով հիմնավոր և համոզիչ հակափաստարկներ. «Ես...ուղարկւած էի բանակի հետախուզական բաժանմունքի պետ Դրացենկոյի, Ազգ. եւ Հ.Յ.Դ. Բիւրօներու կողմէն Մանագկերտ՝ կապելու Մշոյ եւ Սասնոյ ուժերուն հետ, գիտակ պահելու զանոնք կատարած շարժումներուն եւ անոնցմէ ստացած տեղեկութիւնները հաղորդելու յիշեալ մարմիններուն եւ Դրացենկոյին: Այդ չէր նշանակեր «լուրեայն կը հասկցւեր, որ Տ.Դ. ամէն ջանք պիտ թափէր, որ ռուսական բանակը տրամադէր յառաջ խողալու»: Ո՞վ էի ես, ի՞նչ իրաւունքներ ունէի ձեռքս, որո՞՞ հետ կը տեսնէի Մանագկերտի մէջ - յառաջապահ բանակի սպաներու հետ միայն: Եթէ ես զօրք ունենայի, կամ իրաւունք, վստահ եղէք, ձեռքէս եղածը կընէի բանակը յառաջ շարժելու համար, բայց ձեռքիս ոչ մէկ իրաւունք չկար: Մի մոռացէք, որ նոր էի սպայ եղած եւ նոր եկած Մանագկերտ, ուր մնացի ընդամենը երկու եւ կէս ամիս: Բանակը «առաջ խողցնելու» պարտականութիւնը Կ. Սասունիներուն էր վերապահւած, թիկունքի գործիչներուն, ես միայն մէկ պարտականութիւն ունէի՝ ստացած լուրերս տեղեկագրել ուր հարկն է, մնացեալը կը մնար Ազգային եւ Հ. Յ. Դ. Բիւրօներուն, որոնք շատ աւելի լաւ կապեր ունէին կեդրոնի սպայակոյտի հետ, քան թէ ես: Անոնք է, որ պէտք է ստացւած լուրերը ոչ թէ կարգային, որպէս լրագրական լուրեր, այլ կեդրոնի սպայակոյտի միջոցով օգտագործէին, որ «բա-

²⁰⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ - 1457, ց. 2, գ. 22, քթ. 1 -2, 4- 9 հալ., գ. 28, քթ. 12 -17 հալ.:

²⁰⁹ Գեոյանց Տիգրան, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ» (Փարիզ), 1938, Յունար-Մայիս, քիւ 2, էջ 48-55, քիվ 3, Յունիս-Սեպտեմբեր, էջ 58-73:

²¹⁰ Ս. Վրացյան, Կեսնքի ուղիներով. Դէպքեր. Դէպքեր. Ապրումներ. հ. Գ., Պէյրոս, 1963, էջ 96-97:

նակը տրամադրվել էր առաջ խողալու»²¹¹: Իսկ ահա թե ինչ է գրում Հովհ. Քաջագնունին. «Ռուսների ընթացքը (նահանջը - Վ. Վ.) բացատրելու համար բնառ անհրաժեշտ չէր ենթադրել, թէ նրանք ծրագիր ու դիտավորություն են ունեցել մեզ կոտորելու, այլ բաւական էր միայն ենթադրել, թէ նրանք չեն ունեցել նպատակ փրկել թուրքահայությունը ինչ գնով էլ լինի: Իսկ այդպիսի նպատակ նրանք, իհարկե, չեն ունեցել, մենք ենք եղել, որ վերագրել ենք նրանց մեր ցանկությունները, եւ երբ իրականացրած չենք տեսել այն՝ դաւադրություն ենք որոնել»²¹²: Կարծում ենք, սրանով ամեն ինչ ասված է, քանզի ակնհայտ է, որ եթե ռուսները կարողանային իրադարձությունների զարգացման այլ ռազմավարություն զարգացնել, նրանք դա, անկասկած, կանեին և դրանում հայ բնակչությունը խոչընդոտի կամ ավելորդ «բալաստի» դերում չէր լինի, առավել ևս, երբ նրանք լիովին համոզված էին հայերի հավատարմության խնդրում՝ գտնելով նաև, որ հայ բնակչության պահպանումը տվյալ տարածքում անհետաձգելի և էսպես անհրաժեշտ խնդիր է:

Տ. Դեվոյանցի եզրակացությունները ևս հիմնավոր են. «Մանազկերտի նահանջին յետոյ ես այլեւս ո եւ է յանձնարարություն չունէի Ազգ. եւ Դաշն. Բիւրօներէն եւ անցայ Գ-րդ կորպուսի սպայակոյտի մէջ: Եթէ այդպիսի սխալ արած լինէի, վստահ եղէք, որ ոչ թէ միայն զիս չէին պահեր որպէս հետախոյզ, այլ դատի կուտային կամ կը վճռէին հետախուզական բաժանմունքէն: Ընդհակառակը, վերջը՝ էրզրումը գրաւելէ երեք ամիս առաջ, ինձ յանձնեցին միաժամանակ էրզրումի հետախուզությունը եւ աստիճանաբար ես բարձրացայ մինչև Կովկասի ճակատի հակահետախուզական բաժանմունքի պետի պաշտօնը»²¹³: Տ. Դեվոյանցը, որը միակ հայ սպան էր ռուսական հետախուզական ծառայության մեջ, և պատերազմի առաջին իսկ օրից մինչև վերջին օրը գտնվում էր այդ համակարգում, պնդում էր, որ ռուսական բանակի նահանջը պայմանավորված է եղել զուտ ռազմադիտական նպատակով՝ անհրաժեշտաբար, իսկ ինքը դրա հետ որևիցե առնչություն չուներ: Ամեն դեպքում, տեղին է նաև նշել, որ ինքը՝ Դեվոյանցը շատ հասկանալի պատճառներով կարող էր ամենևին էլ լիակատար տեղեկացված չլինել ռուսական զորքի ողջ անց ու դարձից, ինչը կատարված իրադարձությունների հետևանքների գնահատման տեսանկյունից ամենևին էլ նրան չի կարող դարձնել գլխավոր պատասխանատուն, առավել ևս մեղադրյալը:

Էրզրումում Դեվոյանցը օգտաշատ գործունեություն է ծավալում՝ տարածաշրջանի մասին հավաքելով մեծ արժեք ներկայացնող տեղեկություններ: Էրզրումում ստեղծվում է Հայ գինվորական խորհուրդ, որը պետք է

²¹¹ Տե՛ս **Կեդեանց Տիգրան**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ» (Փարիզ), 1938, թիւ 3, Յունիս-Սեպտեմբեր, էջ 69-70:

²¹² **Յովհ. Քաջագնունի**, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք շունի այլ եւս, Վիեննա, 1923, էջ 9:

²¹³ **Կեդեանց Տիգրան**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ» (Փարիզ), 1938, թիւ 3, Յունիս-Սեպտեմբեր, էջ 72:

կառավարեր ամբողջ Կովկասյան ճակատը՝ սեփական, հայկական ուժերով: Իր հուշագրություն մեջ Ս. Դեվոյանցը գրում է, որ ինքը կարգադրում է ձերբակալել էրզրումցի 6 հայտնի տաճիկ պարագլուխներին, որոնք մեղադրվում էին հայկական կոտորածների մեջ և հանձնում է զինվորական դաշտային դատարանին, որի վճռով էլ նրանք կախաղան են բարձրացվում: Այն բանից հետո, երբ Դեվոյանցը դառնում է Կովկասյան բանակի սպայակույտի հակահետախուզական բաժանմունքի պետ, համապատասխան միջոցառումներ է ձեռնարկում՝ ձերբակալելով Երզնկայի շրջանի՝ հակառակորդի գրեթե բոլոր լրտեսներին, որոնց գործի քննությունը թիֆլիսում զբաղվում են 65 քննիչներ, սակայն հետագայում այդ գործակալները կասկածելի հանգամանքներում ազատ են արձակվում²¹⁴: Ըստ երևույթին՝ դա կապված էր վրացական կողմի ցանկություն հետ՝ չվտանգելու վրաց-թուրքական բավակահին շահավետ բարեկամական կապերը:

Տիգրան Դեվոյանցի գործունեությունն այդ փուլը ևս լի է հիշարժան փաստերով և իրադարձություններով: Երբ 1918 թ. ապրիլի 25-ին Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի հիման վրա դատարկվում է Կարսի մարզը, ռազմաքաղաքական իրադրությունը սկսում է դասավորվել ոչ ի նպաստ հայերի: Վրացիները այդ շրջանում սկսում են կատարել «տրոյական ձիու» դեր, որի մասին հիշատակում է Ս. Դեվոյանցը. «Այստեղ շատ տխուր դեր էին կատարել **Ջիսենկելին եւ գօր. Օդեկելիդզեան** (Օդեշելիձե Իլյա Զ. - Վ. Վ.)²¹⁵: Վերջինս մեղադրում էր արդեն լրտեսություն մեջ ի նպաստ Գերմանիոյ արեւմտեան ճակատում: Իսկ երբ նա տեղափոխուեց որպես հրամանատար Կովկասեան ճակատը, ես բռնեցի նրա գաղտնի նամակները, ուղղուած Վէհիբ փաշային, եւ յայտնեցի նրա սպայակույտի պետ գօր. Վիլինսկուն»²¹⁶:

Անդրկովկասյան հանրապետությունների անկախության շրջանում Ս. Դեվոյանցին նոր փորձություններ էին սպասում: Թիֆլիսում նա այցելում է Հայաստանի Հանրապետության զինվորական ներկայացուցիչ գեներալ **Հովսեփ Արտեմի Քիչմիշյանին**, որը, հայտնելով, թե շուտով պատերազմի մեջ են մտնելու վրացիների հետ, ուստի անհրաժեշտ է տեղեկություններ ձեռք բերել վրացական գործերի դասավորության և գորահավաքի մասին,

²¹⁴ Տե՛ս **Դեվոյանց Տիգրան**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1944, N 3, Մայիս-Յունիս, էջ 96:

²¹⁵ Նա դարձավ անկախ մենշևիկյան Վրաստանի ռազմական նախարար, որի առաջին գործերից մեկը եղավ բանուից 600-700 տաճիկ լրտեսների ազատ արձակելը, բացի մեկ-երկու հոգուց, որոնց հետ Դեվոյանցը համադիպում է 1919 թ.՝ Մետեխի բանտում եղած ժամանակ: **Ս. Դեվոյանց**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1944, N 5 (244), Մեպտեմբեր-ձեկտեմբեր, էջ 85-86, 1945, N 1 (246), Յունուար-Փետրվար, էջ 54, «**Մշակ**», Թիֆլիս, 29. XII. 1918, N 269, 7. I. 1919 թ., N 5, 31. I. 1919, «**Кавказское слово**», Тифлис, 30. I. 1919, N 10:

²¹⁶ **Դեվոյանց Տիգրան**, Գրաստամատ Կանայեան (Դրօ), «Հայրենիք» (Բոստոն), 1957, N 9, Մեպտեմբեր, էջ 15:

ինչպես նաև վրացական ժողովրդական զվարդիայի քանակի և գործողությունների պլանի մասին: Դեվոյանցը արագ գործի է անցնում և օգտագործելով իր բոլոր կապերը Վրաստանի մայրաքաղաքում՝ շտապ ձեռք է բերում անհրաժեշտ տեղեկատվություն, որն էլ Քիչմիչյանը հույժ գաղտնի ծածկագրով ուղարկում է Երևան՝ ակնկալելով, որ այն, օգտակար կլինի վրաց-հայկական բռնկված բախումների ժամանակ²¹⁷:

Այնհետև **Տիգրան Դեվոյանցը** հայտնվում է Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման գործընթացներում, և արդեն որպես փորձառու հետախույզ մասնակցում է հայկական հետախուզական ծառայության ձևավորման բարդ, հակասական և չափազանց դժվարին գործառույթներին՝ դառնալով նորաստեղծ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետերից մեկը և ծավալում օգտաշատ գործունեություն ի փառս հայրենիքի, հանուն սեփական երկրի պատվի ու արժանապատվություն:

Հետաքրքիր է նշել, որ մինչև իր հայտնի ուղևորությունը Արևմտահայաստանի քաղաքները և Կ.Պոլիս, Տիգրան Դեվոյանցը շատ ծանր փորձություն առաջ էր կանգնել Վրաստանում: Տ. Դեվոյանցը հետախուզական ծառայության հայտնի դեմքերից էր, կադրային մի սպա, որը եղել էր Կովկասյան բանակի սպայակոլյուտի հակահետախուզական բաժնի կարևոր սպաներից, և բնականաբար վրացիները այդ հանգամանքը օգտագործելով, ինչպես նաև որոշ հին գործեր առիթ դարձնելով, էլ ավելի են շրկացնում իրավիճակը վերջինիս շուրջը: 1918 թ. մայիսյան անկախական գործընթացների օրերին Վրաստանի Հանրապետության տարածքով զնայքով անցնելու ժամանակ, Սամտրեդիա կայարանում անակնկալ ձերբակալվում է վրաց միլիցիայի և հատուկ ծառայությունների կողմից՝ վրացական բանակի մատակարարման ճյուղի պետի մատնությունը, որը ժամանակին, Տ. Դեվոյանցը հատուկ հրամանով որպես տաճկական լրտես, մի շարք այլ անձանց հետ միասին ձերբակալվել էր Երզնկայում: Բանտ փոխադրվելու ճանապարհին Դեվոյանցը հասցնում է ոչնչացնել մի շարք կարևոր ծածկազրկված թղթեր, որոնք կարող էին դիվանագիտական բարդությունների առաջ կանգնեցնել ՀՀ ռազմաքաղաքական ղեկավար շրջաններին: Տ. Դեվոյանցի ձերբակալության օրը «վրաց հեռագրական գործակալությունը բաց էր թողել մի հեռագիր, որով հաղորդում էր թէ կապիտան Տիգրան Դեվոյանցը, կովկասեան բանակի սպայակոլյուտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետը ձերբակալուել է Սամտրեդի կայարանի մէջ, մեղադրուում է լրտեսութեան մէջ եւ պէտք է յանձնուի զինուորական դատարանի»²¹⁸: Նրան տանում են Մետեխի բանտ, որը լեփ-լեցուն էր հայերով: Այնտեղ էին գտնվում նաև մահվան

²¹⁷ Տե՛ս **Կեդեանց Տիգրան**, Կեսնիսի դրուագներից, «Հայրենիք» (Բսսոսոն), 1944, N 6 (245), Նոյեմբեր- Դեկտեմբեր, էջ 80-81:

²¹⁸ Տե՛ս նույ՛մ տեղում, 1945, N° 1 (246), Յունուար-Փետրուար, էջ 54:

դատապարտված հետախույզ գնդապետ **Շմադայուզը և Միխոն (Միխայիլ Քուչարյանց)**, որն իբր թե «Հայ Յեղափոխական Դաշնակցության անդամ էր, հետևաբար և ըստ վրացիների՝ ահաբեկիչ»²¹⁹: Նրանք անգլիացիների հրահանգով պայթեցրել էին Մցխեթի բանտի մերձակա Ձեգվիի կամուրջը՝ խոչընդոտելու համար գերմանացիների ակնկալվող մուտքը Թիֆլիս, որի համար ձերբակալվել էին վրաց իշխանությունների կողմից, և 1918 թ. դեկտեմբերին Վրաստանի Գերագույն դատարանի կողմից դատապարտվել 12 տարվա տաժանակիր աշխատանքի: Սակայն շուտով վերջիններս Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների և հատուկ ծառայությունների ջանքերով ազատվում են բանտից, իսկ **Տիգրան Դեվոյանցի** հարցն ավելի է լրջանում: Նրա մասին շուտով տեղեկացվում է Թիֆլիսում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար **Լևոն Եվանգուլյանը**, որը Տ. Դեվոյանցին Օրթաճալայի բանտը տեղափոխելուց հետո որոշ ջանքեր է գործադրում, որ բանտում բժավոր տիֆով վարակված հիվանդին այցելեն հայ բժիշկներ, այդ մասին տեղեկացնում է Հայաստանի իշխանություններին, Զինվորական ու Արտաքին Գործերի նախարարներին, ինչպես նաև Տ. Դեվոյանցի հարազատներին ու մտերիմներին, որոնք տենդագին քայլերի են դիմում՝ բանտից անհասպաղ ազատելու նրան և տեղափոխելու Հայաստան²²⁰: Այսպես, Զինվորական նախարարին հասցեագրված Հայկական դիվիզիայի պետ, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի 1919 թ. մարտի 1-ի գեկուցագրից (№ 26/19) տեղեկանում ենք, որ Թիֆլիսում վրացական հակահետախուզության կողմից ձերբակալվել է Հայկական զորամասերում ծառայող և տվյալ պահին Կամավորական բանակում ծառայության մեջ գտնվող Տ. Դեվոյանցը՝ կարևոր փաստաթղթերով հանդերձ, հանձնվել է դատի և դատապարտվել գնդակահարության: Սիլիկյանը հայտնում էր, որ անգլիացիները բողոքել են դատարանի այդ որոշման դեմ, քանզի հայկական իշխանությունները Դեվոյանցի գործի կապակցությամբ դիմել էին վերջիններս, կարծելով, որ նրանք կարող են ազդել վրացիների վրա՝ Դեվոյանցի գործին տալով դրական հանգուցալուծում՝ ազատելով բանտից: Դատարանի որոշումը չի կիրառվել Տ. Դեվոյանցը հիվանդության պատճառով, քանի որ բանտում գտնվելու ժամանակամիջոցում Տ. Դեվոյանցը հիվանդացել է բժավոր տիֆով, ինչի մասին ինքը՝ Տ. Դեվոյանցը վկայում է իր «Կեանքիս դրուագներից» հուշագրությունում, նշելով նաև վրացական իշխանությունների բիրտ վերաբերմունքի մասին բանտախցում

²¹⁹ Տե՛ս «Մշակ», 29. XII. 1918, № 269, 7. I. 1919, № 5, 31. I. 1919, № 23, «Աշխատավոր», Թիֆլիս, 3. V. 1919, № 85, «Кавказское слово», Тифлис, 30. I. 1919, № 10, Տե՛ս **Ա. Ի. Մենտե-շաշվիլի**, Октябрьская революция национально-освободительное движение в Грузии, 1917-1921, Тбилиси, Изд-во «Танат леба», 1987, стр. 150::

²²⁰ Տե՛ս **Դեվոյանց Տիգրան**, Կեսնիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, № 1 (246), Յունուար-Փետրուար, էջ 54:

եղած ժամանակ: Սիլիկյանը ցանկանում էր անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Դեվոյանցի վիճակը թեթևացնելու համար²²¹: Նշված զեկուցագրի վրա մարտի 5-ին Զինվորական նախարար զեներալ-մայոր Հ. Հախվերդյանի և շտաբի պետ Մ. Զինկելիչի ստորագրութամբ գրություն է ուղարկվում Արտաքին Գործերի նախարարին՝ խնդրելով հարաբերություններ հաստատել անգլիացիների հետ²²², տվյալ հարցի հանգուցալուծումը գտնելու նպատակով: Այդ ընթացքում, 1919 թ. մարտի 7-ին Հայաստանի Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանը Վրաստանի արտգործնախարար Եվզենի Գեզեկորիին ուղղված հեռագրում խնդրում է կասեցնել դատավճիռը²²³: Սակայն վրացիները այդքան հեշտ մտադիր չէին ընդառաջելու Հայկական կողմին: Այսպես, ՀՀ արտգործնախարարին հասցեագրած 1919 թ. մարտի 25-ի հեռագրում (N^o 1661) ի պատասխան N^o 485 դիմումագրի Վրաստանի Արտաքին Գործերի նախարարի օգնական **Կ. Բ. Սաբախտարաչվիլիին** հայտնում էր, որ Դեվոյանցը մեղադրվում է ռազմական լրտեսության մեջ, հետաքննությունը չի ավարտվել, և գործը պետք է լավի դատարանի նիստում²²⁴: Վերջ ի վերջո, ինչպես պարզվում է հենց իր իսկ Տիգրան Դեվոյանցի հուշերից, նա փախչում է Թիֆլիսի Մետեխի բանտից²²⁵: Մինչ այդ նա մի ընդարձակ նամակով դիմում է ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին՝ տեղյակ պահելով պատերազմական ատյանի գինվորական քննիչ Կեկելիձեի հարցաքննությունների մասին և խնդրելով, որ Եվանգուլյանը օգնի իրեն փախուստը կազմակերպելուն՝ այդ նպատակի համար խնդրելով 700 ռուբլի դրամ, ինչը վերջինս մերժում է՝ Դեվոյանցին համարելով խելագար, երևի թե վախենալով Հայ հետախույզի այդ հանդուգն նպատակադրումից և թերևս չհավատալով նմանակարգ ծրագրերի հաջողության մեջ: Սակայն վերջ ի վերջո նա էլ է աջակցում Դեվոյանցին նրա փախուստի իրագործման ժամանակ: Վրացական իշխանություններն, անշուշտ, հենվելով իրենց հայտնի որոշ փաստերի վրա, չէին հավատում Տ. Դեվոյանցի հավաստիացումներին, որ ինքն անմեղ է և Վրաստանի նկատմամբ վտանգավոր ձեռնարկումներ չունի, ինչն ավելի էր բարդացնում հետախույզի վիճակը և դրդում տենդագին որոնումներ կատարել փախուստի ուղղությամբ: Ի վերջո, նրա փախուստի կազմակերպիչներից մեկը դառնում է Դեվոյանցի սիրեցյալներից մեկը՝ Ասյան: Օգտագործելով կեղծ փաստաթղթեր, ինչպես նաև կաշառելով բանտի պաշտոնյաներին ու վերակացուներին, և վերջիններիս զգոնությունը բթացնելու համար նրանց հավասար

²²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց. 1, գ.1, ք. 64: Տե՛ս նաև **Գեոյեանց Տիգրան**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N^o 1 (246), Յոմուար- Փետրուար, էջ 54-56:

²²² Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց. 1, գ. 1, ք. 64 :

²²³ Տե՛ս նույն տեղում, գ. 1, ք. 64, գ. 211, ք. 40:

²²⁴ Տե՛ս նույն տեղում, գ.1, ք. 111:

²²⁵ Տե՛ս **Գեոյեանց Տիգրան**, հետախույզի մըլուշերը, «ՎԷՄ» (Փարիզ), 1938, Յոմուար - Մայիս, քի 2, էջ 71:

տիացնելով ինչ-ինչ հարցերում օգնելու իր պատրաստակամության մասին՝ վրացական իշխանություններին, Տ. Դեվոյանցը ժամանակ է շահում, շտապ իրականացնում է փախուստը, և Ասիայի հետ միասին՝ հայտնվում է Երևան ուղևորվող գնացքում: Այդ մասին նա շատ տպավորիչ գրում է իր հուշերում. «Պատուտուած զգեստով, կէպին գլուխս անցկացրած, գոյնգոյն մեծ թաշկինակին մէջ կապոց չինած, դուրսը ցցուած հացով, թեւերս անցկացրած եւ միւս ձեռքիս մէջ մի սղոց առած՝ Հաւաքարից լուսաբացին շարժուեցինք Նավթլուր: Թիֆլիս հասանք ճիշդ Երեւան մեկնող գնացքի գնալու ժամանակ:...Մէր դիւանադիտական ներկայացուցիչը Վրաստանում՝ Եւանգուլեանը, իրագեկ էր անցուգործին: Առաջին կայարանից նրան ուղարկուեց պայմանաւորուած հեռագիրը: Ինձ ուղեկցողները, բացի Ասիայից, վերադարձան Թիֆլիս...»:

Եւանգուլեանը ծածկազիր հեռագրել էր Երեւան, եւ Հայաստանի հեռագրական գործակալութիւնը իմ Երեւան հասնելուս միջոցին, արդէն բաց էր թողել հետեւեալ հեռագիրը. «Կովկասեան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժնամուռքի նախկին պետ՝ կապիտան Տիգրան Դեւոյանցը, որը ձերբակալված էր վրացիների կողմից և մեղադրուած էր լրտեսութեան մէջ, յաջող կերպով փախչելով Մեղեխի բանտից, հասաւ Երեւան եւ նշանակուեց Հայաստանի բանակի հետախուզական եւ հակահետախուզական բաժնի պետի պաշտօնին»:

Այս հեռագիրը, երբ ստացուել էր Վրաստանում, սկսուել էր քննութիւն: Քննիչը, դատախազը, պատերազմական նախարարութեան ներկայացուցիչները իսկոյն եւ եթ գնացել էին բանտ եւ քննել էին բոլոր թղթերը: Հետեւանք եղած էր այն, որ հեռացրել էին պաշտօնից բանտապետին, քննիչին ու դատախազին:

Այդ առթիւ Վրաստանի պաշտօնական թերթի՝ «Գրուզիա»-ի մէջ լոյս էր տեսել առաջնորդող մի յօդուած «Կեցցէ Դեւոյանց» վերնագրով: Յօդուածագիրը յարձակում էր գործադրում բարձր իշխանութեանց վրայ, որ նրանք չէին կարողացել պահել մի կարեւոր բանտարկեալ: Այնքան խիստ էր գրուած այդ առաջնորդողը, որ լոյս տեսնելուց յետոյ, ներքին գործոց նախարարութիւնը հրամայել էր հաւաքել թերթի թիւերը կիսակներից:

Երեւան հասնելուն պէս, ինձ կանչեց իր մօտ մեր պատերազմական նախարար զօր. Արարատեանը, որին ներկայացայ պլուրի տոպրակից կարած բլուզով: Այնտեղ էր նաեւ զօր. Կ., Հայաստանի գինուորական կցորդը Վրաստանում: Նա հանեց իր վրայի սուրը, համբուրեց ինձ եւ յանձնեց իբր նուեր»²²⁶: Հիրավի, ռազմահայրենասիրական, դատախարակչական լիքջ պա-

²²⁶ **Վեյդանց Տիգրան**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N° 1 (246), Յունուար-Փետրուար, էջ 59-60:

րունակող մի ուշագրավ իրադարձություն, որ կարող է զարգարել ցանկացած ժողովրդի պատմությունը²²⁷:

Առաջին Հանրապետության կայացման ոչ միանշանակ և բարդ գործընթացների պայմաններում, և մասնավորապես 1919 թ. երկրորդ կեսին - 1920 թ. սկզբին, **Տիգրան Դեվոյանց** հետախույզի կողմից իրականացվում են ակտիվ հետախուզական աշխատանքներ Վան-Մուշ-Բիթլիս շրջանում, և որից հետո նա է վերջո 1919 թ. վերջում - 1920 թ. սկզբին հանգրվանում է Կ.Պոլսում²²⁸, որտեղ կազմակերպում է հետախուզական խումբ, որի ջանքերով էլ հայթայթում է Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ թուրքական գորուծի թվաքանակի և նախապատրաստությունների, ինչպես նաև հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական գորուծի տեղաբաշխման մասին: Տաղանդաշատ և իր սիրած գործին մինչև ուղն ու ծուծը նվիրված հետախույզի գործունեությունը ընդհատվում է Առաջին Հանրապետության մայրամուտով, և է թիվս այլոց, անցնելով ծանր փորձությունների միջով, Տ. Դեվոյանցը է վերջո հանգրվանում է հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգների Բոստոն քաղաքում, և արդեն այստեղ հրապարակում բարձրարժեք հուշագրություն իր հետախուզական կենսագրության ողբականի մասին:

Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության և մասնավորապես հակահետախուզության կոհորտայում իր անգնահատելի տեղն ու անմար կերպարն ունի **Հովհան Խան-Կոտուրսկին (Արտեմի Նիկիտայի Հովանեսով)**: Այս առումով ուշագրավ է Զինվորական նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի (փաստաթղթի տակ ստորագրել էր նաև ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Ա. Դոլուխանյանը) 1918 թ. օգոստոսի 7-ի հրամանը զինվորական գերատեսչության

²²⁷ Հարկ է ավելացնել, որ տաղանդաշատ այս հայ հետախույզի հետագա գործունեության էջերը դեռևս լիովին պարզաբանված չեն, սակայն որոշ կցկտուր փաստեր երբեմն-երբեմն հաջողվում է գտնել, որոնք էլ ավելի ամբողջական են դարձնում նրա ոչ միայն նշանակ և տեղտեղ հակասական դիմանկարի և փոթորկուն հետախույզական կենսագրության ծալքերը: Դատելով որոշ փաստերից, ակնհայտ է դառնում, որ Առաջին Հանրապետության անկումից և խորհրդայնացումից հետո Տիգրան Դեվոյանցի անունը (ինչպես նաև հետախույզներ **Նազար Բեկովի, Գևորգիցյու, Գրիգորի Խաչատուրյանի** անունները) հայտնվել է ազատված և ծառայության վայրերում թողնված այն սպաների ցուցակում, որոնք ենթակա էին ուղարկման Բարո՝ հանձնվելով XI Կարմիր բանակի շտաբի տնօրինությանը և հետագա հրահանգներին, ինչից կախված էր նրանց հետագա ճակատագիրը: Տե՛ս **ՀԱՄ**, ֆ. Կ - 113, ց. 3, գ. 3, քթ. 40-47, 53, 68-70 և այլն:

²²⁸ Տե՛ս այդ մասին մանրամասն: **Վ. Վիրաքյան**, Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., 2006, 119-130, 181-182: **Նույնի՝** Հայաստանի Հանրապետության հետախույզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., 2009, էջ 34-63: **Նույնի՝** Հայկական հետախույզական խմբի գործունեությունը Կ. Պոլսում Տիգրան Դեվոյանցի գլխավորությամբ 1919 թ. երկրորդ կեսին - 1920 թ. սկզբին: Տե՛ս Տարեգիրք. Բ. (պատմագիտական հանդես), Եր., 2010, էջ 134 - 150 և այլն:

գծով, որում նշվում էր, որ Ռուսիական ռազմաճակատի զորակայանին կից Սևծովյան նավատորմի Հրամանատարի շտաբի Հետախուզական-Հակահետախուզական բաժնի նախկին պետ, ծովակալության գծով պորուչիկ Խան-Կոտուրսկին (Հովանյեսով) գործուղվում է Գլխավոր շտաբ՝ Ռեզերվի Համար նախատեսված հաստիքակազմի մեջ ընդգրկվելով՝ համապատասխան ռոճիկի նշանակումով, այն գործողութայն մեջ գնելով օգոստոսի 5-ից²²⁹: Այսպես սկսվում է տաղանդաշատ, փորձառու և շատ համարձակ մի հետախուզի գործունեությունը հայկական հողում, որի վրա նա շատ շուտով աչքի է ընկնում հայրենանվեր, անբասիր և ազնիվ գործունեությամբ: Սկզբնապես նա նշանակվում է Ծարային և Զորահավաքային բաժնի պետի օգնական՝ 1918 թ. օգոստոսի 5-ից սկսած, հիմք ընդունելով կորպուսային դատարանի նախագահի 1918 թ. օգոստոսի 25-ի գեկույցը (N^o 871), որն ամրագրվել էր գեներալ-մայոր Հախվերդյանի կողմից²³⁰:

Հովհան Խան-Կոտուրսկին ՀՀ հատուկ ծառայությունների կողմից ձեռնարկվող գործողությունների ամենավճռական տեղամասերում էր, հմտորեն գուզակցելով բազմաձևուտ հակահետախուզի և հետախուզի տաղանդները: Հաճախ նրան Երևանից գործուղում էին Հայաստանի թեժ կետերը: 1919 թ. մարտի սկզբներին գտնվելով Ալեքսանդրապոլում, Խան-Կոտուրսկին եռանդուն գործունեություն է ծավալում սահմանային այս գոտում ռազմաքաղաքական բնույթի մի շարք հարցերի պարզաբանման ուղղությամբ, որոնց մասին հաղորդվում է նաև այդ շրջանում որոշակի ռազմաքաղաքական բնույթի վերահսկողական գործառնություններ իրագործող անգլիական գնդապետ Կ. Թեմպերլեյին, որը լայն լիազորություններ ուներ: Այդ մասին է վկայում Հովհան Խան-Կոտուրսկու կողմից Ալեքսանդրապոլից Գլխավոր շտաբի պետին ուղարկված 1919 թ. մարտի 11-ի հեռագիրը (N^o 0619): Դրանում վերջինիս հայտնում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն Արփաչայից այն կողմ գտնվող հայկական գյուղերը զբաղեցրած թաթարները հրդեհում են հայկական գյուղերը և հեռանում Կարսի մարզի խորքերը: Սույն հեռագրի վրա կար Զինվորական նախարարի համապատասխան մակագրությունը, համաձայն որի սույն հաղորդագրությունը ուղարկվում էր նաև Արտաքին Գործերի նախարարին և գիտություն: Փաստաթղթի տակ կան Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Զինկեիչի և Ծարային և Զորահավաքային բաժնի պետ Պինկովսկու ստորագրությունները: Մի այլ փաստաթղթից մենք տեղեկանում ենք նրա գործունեության մասին Նախիջևանի շրջանում²³¹: Այսպես, Նախիջևանի շրջանի նահանգապետը ՀՀ Ներքին Գործերի նախարարությունն ուղղված 1919 թ. հունիսի 25-ի գեկուցագրում, կապված մահմեդականների կողմից խռովության նա-

²²⁹ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 40, ք. 51, գ. 131, ք. 24:

²³⁰ Նույն տեղում, գ. 40, ք. 51, գ. 131, ք. 24:

²³¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 92, ք. 177:

խապատրաստման հետ, տեղեկացնում էր, որ հունիսի կեսերին Երևանից այդ խոռովության հետ կապված հարցերը պարզելու, այն ճնշելու նպատակադրումով ժամանած «կոնտրոլավեդչիկ» (հակահետախույզ) Խան-Կոտուրսկին ձեռնամուխ է եղել մուսուլմանական գյուղերում խուզարկությունների կազմակերպմանը, փորձելով օգնել տեղական իշխանություններին գտնելու մահմեդական գյուղերում թաքցված զենքն ու զինամթերքը, ինչպես նաև թշնամու ծախված գործակալներին: Միաժամանակ, փորձելով կանխել աղբբեջանաթուրքական տարրերի հակաքայլերը, Խան-Կոտուրսկին օգնության խնդրով դիմում է զենեղալ **Գրիգորի Ելկովնիկովին** (Գրիգորի Արտեմի Ելկովնիկով - Ելկովնիկյան [Մեսաքայան Գրիգոր Հարովթյունի], 28 հուլիսի, 1867 թ. - 1921 թ.²³²)՝ համապատասխան պատժամիջոցներ ձեռնարկելու համար²³³:

Աստիճանաբար Խան-Կոտուրսկին հարմարվում է միջավայրին և արագ դառնում յուրային, անցնելով մի պաշտոնից մյուսին: 1918 թ. սեպտեմբերի 13-ի հրամանագրով, որն ստորագրել էր Զինվորական նախարար զենեղալ-մայոր Հ. Հախվերդյանը, Հայկական Հետևակային Դիվիզիայի Ծարային և Զորահավաքային բաժնի պետի օգնական, ծովակալության գծով պորուչիկ Հովանենետով Խան-Կոտուրսկին անցնում է Գլխավոր շտաբի պետի ենթակայության տակ, ազատվելով վերը նշված պաշտոնից՝ սկսած սեպտեմբերի 13 - ից (1918 թ.)²³⁴:

Հովհան Խան-Կոտուրսկու հետախուզական գործունեությունը լավագույն էլերից է նրա ուղևորությունը Արդահան, Լազիստան (Լազք-Կողքիսին հարևան Գողթնականից վերև՝ Վիրք, ավելի հավանական է այն համարել Քուրթայիսի նահանգի մեջ գտնվող տարածք, իսկ ներկայիս իմաստով՝ Աջարիային կից երկրամաս՝ հավանաբար՝ Բաթումի մարզ) և Սև ծովի անատոլիական ափամերձ գոտով՝ 1919 թ. մայիս ամսվա նախօրյակին: Այդ մասին նա թողել է շատ ուշագրավ տեղեկատվություն-ամփոփագրեր թվագրված 1919 թ. մայիսի 1-ով և 1919 թ. մայիսի 16-ով, որոնց տակ ստորագրել են նաև այդ ուղևորությունների ընթացքում նրա օգնականների դեր կատարած ոչ հայտնի լեյտենանտ Վարանովսկին՝ ուղևորության սկզբում, և բավականաչափ հայտնի՝ շտաբս-կապիտան Տիգրան Դեվոյանցը²³⁵: Հովհան Խան-Կոտուրսկին այս ամփոփագրերում կարևոր տեղեկություններ է հաղորդում տարածաշրջանային խնդիրների և ընդհանուր իրավիճակի մասին: Այսպես, Հովհան Խան-Կոտուրսկին իր զեկուցագրերից առաջինում

²³² Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге. Биографический справочник, стр. 235-236:

²³³ Տե՛ս **Նախիջևան-Շարդրը 1918 - 1920 թթ.**, Փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1993, № 1-2, էջ 177-180:

²³⁴ Տե՛ս **ՀԱՄ**, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 40, ք. 49:

²³⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 11-12, 17-18;

Հայտնում էր, որ տվյալ պահին ողջ Լազիստանում տեհզագին պատրաստություններ են տեսնվում բնակչության կազմակերպման և զինման ուղղությամբ: Խան-Կոտուրսկին Հայտնում էր, որ Հայկական կոտորածներում մեղավոր «Իթիհաթ[ը]» կուսակցությունն էին ռեժիմի գործիչները, որոնք փախել էին դատ ու դատաստանից և դաշնակիցների հետապնդումից (Անտանտ), թաքնվում են նաև Լազիստանում, միաժամանակ շարունակելով իրենց մռայլ գործունեությունը: Հ. Խան-Կոտուրսկին Հայտնում էր, որ դրանց գլուխ է կանգնել Էնվեր փաշայի նախկին համհարզը՝ Նաիլ բեյը: Խան-Կոտուրսկին ընդգծում էր, որ Լազիստանի թուրքերը ցանկանում են մշտական սպառնալիք ստեղծել Հայաստանի և նրա դաշնակիցների համար: Ամփոփազրում խորիմաստ տեղեկատվություն էր հաղորդվում այն մասին, որ Լազիստանում թուրքերի կազմակերպմանը մեծապես աջակցել և ծառայամտություն է դրսևորել Սամսունում Հայերի ջարդերի կազմակերպիչ, նախկին թուրք սպա, իսկ տվյալ պահին վրացական ծառայություն (ըստ երևույթին նկատի ունի հատուկ ծառայությունները, ինչը շատ ուշադրավ փաստ է-ընդգծումը մերն է՝ Վ. Վ.) գնդապետ Ասլան բեյ Սանդգակ բեյ-գարգե իշխան Աբաշիձեն, որը խոշոր կապեր ուներ Լազիստանում: Միաժամանակ Խան-Կոտուրսկին կարևոր տեղեկություններ էր հաղորդում բոլշևիզմի մասին, նշելով, որ Լազիստանի և առհասարակ թուրքական գործիչների ձեռքում ընդհանրապես վերջին խողաթուղթը հենց բոլշևիզմն է: Նա ավելացնում է, որ վերջին հանգամանքը պաշտպանվում է նույնիսկ պաշտոնական իշխանությունների և թուրք էմիսարների կողմից: Խան-Կոտուրսկին ընդգծում էր, որ թուրքիան իր փրկությունը Անտանտի դաշնակից պետություններից և Հայերի ու հույների պահանջատիրությունից տեսնում է բոլշևիզմի և ռուսական բոլշևիկյան շարժման հետ միավորման մեջ: Փաստաթղթում ասվում էր, որ դեռևս կանոնավոր թուրքական զորքեր Լազիստանում չկան, սակայն էլեկտրականացված բնակչությունը լավ զինված է՝ մեծ սպառնալիք ներկայացնելով հարևանների համար²³⁶:

Վերոնշյալ ամփոփազրում Խան-Կոտուրսկին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Սամսունի շրջանում այն ժամանակ իշխող իրավիճակի մասին, նշելով, որ այնտեղ թուրքական զորքեր չկան, շատ են անգլիացիները, որոնց աջակցությամբ փախստականները խմբերով վերադառնում են, ասելով, որ Սամսունում կան 400 հայեր: Սույն ուշադրավ հետախուզական ամփոփազրը ավարտվում է հեղինակի կողմից ընդհանուր եզրափակիչ դրույթներով, որոնցում շեշտվում է անգլո-ֆրանսիացիների, իտալացիների և հույների լավ վերաբերմունքի մասին Հայերի նկատմամբ, որպես իրենց դաշնակիցների, որոնց իրենք շատ ժամանակ են հատկացնում: Միաժամանակ Խան-Կոտուրսկին եզրակացնում էր, որ թուրքերը հաշվի առ-

²³⁶ Նույն տեղում, թ. 11:

ներով առկա դրուժյունը, արտաքինապես տրամադրված են «չատ խաղաղասիրաբար» և ձգտում են «մերձենալ» Հայերի Հետ²³⁷: Սուլյն գեկուցագիր-ամփոփագիրը, ըստ երևույթին ամենայն ուշադրությամբ ընթերցվել է Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պաշտոնակատար գնդապետ Զինկևիչի կողմից, որը 1919 թ. մայիսի 4-ին այդ փաստաթղթի վրա արել է համապատասխան մակագրութուն (N^o 0056/0201)՝ հասցեագրելով այն մինիստր-նախագահին (վարչապետին), իսկ պատճենը՝ Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանին²³⁸:

Սուլյն հետախուզական ամփոփագիր-գեկուցագրին հաջորդող Խան-Կոտուրսկու մյուս ամփոփագիր-գեկուցագիրը դարձյալ տվյալներ էր հաղորդում ինչպես Լազիստանի և Սև ծովի անատոլիական ափամերձ շրջանի, այնպես էլ Արդահանի և հարակից շրջանի մասին, հենվելով նաև տեղերից ստացված գործակալական տեղեկատվության վրա: Դրանում ընդգծվում էր, որ Արդահան քաղաքի զբաղեցումից հետո վրացական բանդաները և մուսուլմանները գնացել են երեք ուղղություններով՝ 1) Կաղզվան, 2) Աջարիայի խորքերը և Լազիստան, 3) Օլթի: Հովհան Խան-Կոտուրսկին սուլյն հետախուզական ամփոփագրում նշում էր, որ Լազիստանի սահմանը անմիջապես կպած է ապագա Հայաստանին, որի նկատմամբ մեծ է թուրքերի հետաքրքրությունը, որպես փաստ բերելով Ռիգիե ժամանած 1000 ասկյարների ափ իջնելը՝ կանոնավոր բանակի գորամասերի թվաքանակից: Խան-Կոտուրսկին նշում էր, որ վերջիններս ուղարկվել են գյուղերը կազմակերպական աշխատանքի համար, որի հետևանքով Լազիստանը վերածվել է համատարած ռազմական ճամբարի՝ հազեցված ամեն ինչով²³⁹:

Միաժամանակ սուլյն ամփոփագրում Խան-Կոտուրսկին ուշադրավ միտք է արտահայտում այն մասին, որ եթե հայկական զորքերը այդ ժամանակ հասնեն Երզնկա և Էրզրում, ապա թուրքական զորքերի ապակազմակերպվածությունը կհասնի իր ապոգեյին (գագաթնակետ), որպես հետևանք ունենալով ոգու և էներգիայի անկումը (սակայն այդպես տեղի չունեցավ, որովհետև աշխարհաքաղաքական իրավիճակը Հայաստանի շուրջ շուտով կտրուկ փոխվեց, հայերը սկսեցին գահավիժել Սևրյան «բարձրունքներից» և ջարդուփշուր եղան, այդ ընթացքում ամերիկացիները մերժելով Հայաստանի մանդատը, Փրանսիացիները լքելով Կիլիկիան, ռուսներն էլ ընկղմվելով Վ. Ի. Լենինի Հոկտեմբերյան հեղափոխության մթին հորձանուտներում՝ լքեցին Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքները և Անդրկովկասը, գերմանացիներն էլ հովանավորելով իրենց բարեկամներին՝ թուրքերին և եզրեր գտնելով նոր ընկերներ՝ Ադրբեջանի ու Վրաստանի հետ, հայտնվեցին հայ ժողովրդի նկատմամբ ոչ բարյացակամների շարքում):

²³⁷ Նույն տեղում:

²³⁸ Նույն տեղում, ք. 12:

²³⁹ Նույն տեղում, ք. 17:

Շատ հետաքրքիր են Սամսունի մասին Հովհան Խան-Կոտուրսկու տեղեկությունները: Վերջինս փաստեր է հաղորդում այն մասին, որ հայկական կոտորածներում մեղավոր Սամսունի վալի Մուշտակ բեյը և քաղաքացիական տեսուչ Մուֆտի գազե Շաքիր բեյը տարվել են Կոստանդնուպոլիս՝ իբր թե զինվորական դատարանին հանձնելու համար: Հովհան Խան Կոտուրսկին շատ հետաքրքիր մի այլ փաստ է բերում այն մասին, որ Մուշտակ բեյը հանդիսանում է մի այլ «հերոսի», այսպես կոչված վրացական ծառայության գնդապետ Ասլան բեյի կամ իշխան Աբաշիձեի մերձավորագույն կողմնակիցը և պետը: Այնուհետև Խան-Կոտուրսկին չափազանց արժեքավոր տեղեկատվություն է մեջբերում իր հետախուզական անչափ բովանդակալից ու նպատակալաց կենսագրությունից մինչև այդ դեպքերն ընկած ժամանակահատվածի մասին, երբ նա դեռ գտնվում էր Սևծովյան նավատորմի հակահետախուզությունում: Ըստ այդ տեղեկատվության, դեռ 1917 թ. մայիսի 16-ին, կատարելով ադմիրալ Կուչակի հրամանը, Սամսունի գնդակոծումից անմիջապես հետո, ինքը ամ է իջել (գետնտ), որի ժամանակ նավամատույց է կանչվել Մուշտակ բեյը իր համհարզի հետ, և անձամբ հարցաքննվել Ասլան բեյի գործունեության մասին: Խան-Կոտուրսկին նշում է, որ այդ ուշագրավ հարցաքննության ժամանակ Սամսունի նահանգապետը հերքել է իր մեղավորությունը հայերի բնաջնջման մեջ և ողջ մեղքը գցել է Ասլան բեյ Աբաշիձեի վրա: Դրանից հետո, ինչպես վկայում է Խան-Կոտուրսկին, հարցաքննության արձանագրությունը Մուշտակ բեյի (վալիի) և նրա համհարզի ստորագրությամբ ներկայացվել է ադմիրալ Կուչակին: Վերջում Խան-Կոտուրսկին տեղեկացնում էր, որ այդ դեպքերից հետո Մուշտակ բեյը ձերբակալվել է իր կառավարության կողմից նավահանգստում ցուցաբերած ամոթալի վարքագծի և իրավիճակի համար, և միայն որոշ հանգամանքներ պարզելուց հետո, ըստ երևույթին ավելի նպատակահարմար է գտնվել դադարեցնել հետագա պատժամիջոցները Մուշտակ բեյի նկատմամբ և վերջինս վերականգնվել է իր իրավունքներում²⁴⁰:

Ամփոփազիր-գեկուցազրի վերջնամասում Խան-Կոտուրսկին տվյալներ է բերում թուրքական զորքերի տեղաբաշխման մասին Բայբուրդում, Երզնկայում և Էրզրումում: Չնայած Խան-Կոտուրսկին հայտնում էր թուրքական զորքերի մեջ տիրող վատ տրամադրության, բարոյալքված վիճակի և դասալքության մասին, միաժամանակ փաստում էր, որ անհայտ նպատակներով մայրաքաղաքից Էրզրում է ժամանել գնդապետ Քյադիմ փաշան (ըստ երևույթին թուրքական կենտրոնական իշխանությունները ձգտում էին կանխելու բանակի քայքայման այդ գործընթացները, և իշխել իրավիճակի վրա)²⁴¹:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված երկու փաստաթղթերն էլ անհերքելիորեն վկայում են ոչ միայն հակահետախույզ Խան-Կոտուրսկու թշնամու

²⁴⁰ Նույն տեղում:

²⁴¹ Նույն տեղում:

թիվունքում ծավալած հայրենանվեր գործունեություն մասին, այլև առհասարակ հայկական հատուկ ծառայությունների կայացման և դժվարին, լարված գործունեություն մասին Հայաստանին հարակից շրջաններում:

Հայկական հետախուզություն վառ դեմքերից է կապիտան **Վ. Գ. Մուրադյանը**, որը հայրենիքի իսկական զինվոր էր: Կապիտան **Վահագն Գալուստի Մուրադյանը** Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետն էր 1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ մինչև 1920 թ. մայիսյան բոլշևիկյան ապստամբությունը: Հանդես գալով հետախուզական բաժնի պետի պաշտոնում՝ Վ. Գ. Մուրադյանը «սպիտակգլարդիական» Շնեկերի կողմից ներմուծված կազմակերպական սկզբունքները հմտորեն կիրառեց հետախուզական գործում, հետագայում ճշգրտելով և ընդլայնելով դրանց եղանակները: Վ. Գ. Մուրադյանի՝ որպես կադրային սպա-հետախուզի կենսագրությունը ուշադրալ է և ուսանելի: **Վահագն Գալուստի Մուրադյանը** ծնվել է 1896 թվականին: Նա ավարտել է Կարսի ուսումնարանը և որոշ ժամանակ անց պետական քննություն է հանձնել Պետրովսկ-Ռազումովյան գյուղատնտեսական ակադեմիայում: Սակայն առաջին աշխարհամարտը կտրուկ փոփոխություններ է մտցնում նրա կենսագրությունում, և ստեղծված նոր իրավիճակում ընդունվում է ռազմական ուսումնարանի արագացված դասընթացները, 4 ամիս անց ավարտելով այն: Այնուհետև որպես պրապորշչիկ գործուղվում է Կովկասյան գործող բանակ: Պատերազմի ողջ ընթացքում եղել է հարավային ճակատում (Պարկաստան-Թուրքիա): Ռուսական Կովկասյան բանակի քայքայումից հետո մնում է հայկական զորամասում, լինելով հրամանատարական պաշտոններում և ակտիվորեն մասնակցում թուրքերի դեմ ուղղված բոլոր ռազմական գործողություններին²⁴²:

Հայաստանի ռազմական գերատեսչության ղեկավար գեներալ-մայոր Արարատյանի 1919 թ. մայիսի 13-ի հրամանը վերաբերում էր նաև գործերի Երևանյան ջոկատի շտաբի պետի պաշտոնակատար **Վահագն Գալուստի Մուրադյանին**, որը 1919 թ. ապրիլի 27-ից նշանակվում է Առանձին միլիցիոն բրիգադի շտաբի պետի պաշտոնակատար²⁴³: Իսկ այնուհետև Հայաստանի կառավարության կողմից նա արդեն նշանակվում է Զորահավաքի և դասալքությունների դեմ պայքարի գծով կոմիսար: 1919 թ. օգոստոսի 20-ի զինվորական գերատեսչության հրամաններից մեկով նրա կարիերայում փոփոխություն է կատարվում: Քանի որ Երևան քաղաքի պարետ կապիտան Ա. Շահախաթունին նշանակվում է Զորահավաքի և դասալքությունների դեմ պայքարի գծով կոմիսար, կապիտան Մուրադյանը ազատվում է զբաղեցրած պաշտոնից: Որպես սույն հրամանի հիմք ընդունվում էր Ներքին Գործերի նախարարի դիմումագիրը (N^o 9129), որը ստորագրվել էր նաև Զինվորական

²⁴² Նույն տեղում, Ֆ.Կ - 91, ց. 3, գ. 3594, ք. 16-17:

²⁴³ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 131, ք. 26:

նախարար գեներալ-մայոր Արարատյանի կողմից²⁴⁴: Մեկ ամիս անց, Վ. Գ. Մուրադյանը նշանակվում է ստանում Գլխավոր շտաբում, սկզբում որպես Հետախուզուժյան և Հակահետախուզուժյան պետ, իսկ այնուհետև՝ Գլխավոր շտաբի պետ: 1920 թ. մարտին ուսանում է Գլխավոր շտաբի դասընթացները Երևանում, իսկ 9 ամիս անց, թուրքերի դեմ ռազմական գործողությունների վերսկսման հետ կապված՝ նշանակվում գնդի հրամանատարի օգնական: Հայաստանի խորհրդայնացումից հետո տեղափոխվում է Գլխավոր շտաբ՝ որպես Հանձնարարությունների գծով շտաբի պետին առընթեր աշխատակից: Այնուհետև, որպես Անդրկովկասի ռազմաքաղաքական իրադարձությունների լավագիտակ տեղափոխվում է արտգործնախարարություն և ակտիվորեն ձեռնամուխ լինում Մոսկվայում թուրքերի հետ կայանալիք կոնֆերանսի (1921 թ.) համար նյութերի նախապատրաստմանը: 1920 թ. դեկտեմբերի վերջերին նշանակվում է ՀԽՍՀ պատվիրակության քարտուղար Մոսկվայում թուրքիայի հետ կայանալիք հաշտության բանակցություններում, ուր և մեկնում է Ալ. Բեկլագյանի հետ միասին: Դրանից հետո վերագառնալով Թիֆլիս, որպես քարտուղար առժամանակ աշխատում է Բեկլագյանի մոտ՝ արտգործնախարարությունից գծով: 1921 թ. օգոստոսին «Միացարտառ»-ը (*"Объединенная внешняя торговля"*) նրան գործուղում է Թավրիզ՝ որպես իր մաքսային գրասենյակի քարտուղար, և այդ կարգավիճակում մնում է մինչև 1925 թ. փետրվարը: Թավրիզում եղած ժամանակահատվածում Վ. Մուրադյանը աշխատում է սկզբում որպես «Միացարտառ»-ին կից, իսկ այնուհետև «Անդրարտառ»-ին (*"Закавказская внешняя торговля"*) առընթեր, և վերջապես «Անդրպետառ»-ին (*"Закавказская государственная торговля"*) կից գրասենյակի քարտուղար, որից հետո՝ որպես գրասենյակի քարտուղար և կառավարչի տեղակալ: 1922 թ. ապրիլին Վ. Մուրադյանը Թավրիզի գլխավոր հյուպատոսությունը կից կուսբջջի կողմից երաշխավորվում է և ընդունվում է Կոմունիստական կուսակցության շարքերը, որից հետո ընտրվում տեղկոմի քարտուղար, այնուհետև՝ սովակուսմբի և «Տրուզ» («Աշխատանք») կոոպերատիվի անգամ-կազմակերպիչ և այլն: Վ. Գ. Մուրադյանի բնակարանը դառնում է տարբեր կարգի գործակալների հանդիպատեղի: 1925 թ. փետրվարի վերջերին Վ. Գ. Մուրադյանը վերջնականապես թողնում է Պարսկաստանը: Վ. Գ. Մուրադյանին նշանակվում են «Անդրպետառ»-ի (*"Загосторг"*) թուրք-պարսկական գրասենյակի դիրեկտորի տեղակալ: Այդ ամենից հետո նա պատրաստվում է մեկնել Արզվին, սակայն թուրքերը անցազիբ չեն տալիս (ըստ երևույթին թուրքական հետախուզուժյունը տեղեկություններ ուներ նրա գործունեության մասին հատուկ ծառայություն համակարգում):

²⁴⁴ Նույն տեղում, գ. 132, թ. 117:

Վերջապես, 1926 թ. մարտին Անդրերկրկոմի որոշմամբ նա նշանակվում է «Անդրպետառ»-ի լիազոր-ներկայացուցիչ Հյուսիս-արևմտյան Պարսկաստանում, սակայն այն դառնում է նրա վերջին նշանակումը, քանի որ Վ. Գ. Մուրադյանը ապօրինաբար ձերբակալվում է, և դատապարտվում է 10 տարի ազատազրկման: Այսպես ավարտվում է Առաջին Հանրապետության Հատուկ ծառայությունների շնորհաշատ կադրային սպայի հայրենանվեր գործունեությունը²⁴⁵:

Հարկ է ավելացնել նաև, որ մի շարք անձինք, որոնք վերոհիշյալ դատաքննչական մեղադրական ակտով դատապարտվել են հանիրավի, 1918-1920 թթ. ժամանակահատվածում զբաղված են եղել հայրենանվեր աշխատանքով, և նրանց շարքում ամենևին էլ վերջիններից չի եղել 1895 թ. ծնված պորուչիկ **Միքայել Նիկիտայի Դոդոխյանը**, որն ավարտել էր հոգևոր սեմինարիան: 1919 թ. հունիսին նա արդեն դաշնակցական հատուկ ծառայության հետախուզական բաժնի աշխատակից էր, իսկ 1920 թ. հուլիսից մինչև Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը՝ դեկտեմբերի 2-ը աշխատեց որպես այդ բաժնի պետ: Մ. Ն. Դոդոխյանը ղեկավարում էր ստացված տեղեկատվության համակարգման և այլ աշխատանքներ²⁴⁶: Միքայել Նիկիտայի Դոդոխյանը Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության վառ անհատականություններից մեկն էր, որը ժամանակ առ ժամանակ հմտորեն իրականացնում էր նաև հակահետախուզության բաժանմունքի ոլորտին վերաբերող գործառնություններ, այդ առումով ունենալով առանձին հատուկ հանձնարարություններ հակահետախուզության պետ Խան-Կոտուրակու կողմից, իրականացնելով ձերբակալություններ, խուզարկություններ և հետաքննություն: Եղել են նաև դեպքեր ու իրադրություններ, երբ Մ. Դոդոխյանը օպերատիվ գործառնություններ է իրագործել հենց Վ. Մուրադյանի հանձնարարությամբ՝ ուղևորվելով Հայաստանի տարբեր թեժ կետեր: Հայաստանի խորհրդայնացումից հետո որոշ ժամանակ թաքնվելով Ղրիմում (խուսափելով խորհրդային բանակում ծառայելուց), բնակվում Սիմֆերոպոլի Հայկական նրբանցքում տեղավորվում է աշխատանքի հայկական մի ընկերությունում որպես հաշվապահ: Հետագայում Դոդոխյանը անցնում է քաղաքացիական աշխատանքի ֆինանսների ժողովմատում, միաժամանակ մտնում հայկական ազգային ընկերության մեջ՝ իրականացնելով ակումբային աշխատանք²⁴⁷:

Բավականաչափ հետաքրքիր է նաև Հայաստանի Առաջին Հանրապետության հակահետախուզության աշխատակիցներից մեկի՝ **Ստեփան Գրիգորիի Երամովի** կերպարը, որը զբաղվել է արտաքին դիտարկմամբ: Նա սկզ-

²⁴⁵ Տե՛ս **ЕФ МНЮИ - XXI век**. 1998, N° 07-08, стр.8-10, **ՀԱԱ**, ֆ.4 - 91, ց. 3, գ. 3594, ք. 16-17:

²⁴⁶ **ՀԱԱ**, ք. 12-14:

²⁴⁷ Նույն տեղում, ք. 13-14:

բում աշխատել է Խաչատրյանի և Հետագայում՝ Խան-Կոտուրսկու անմիջա-
կան ղեկավարութեամբ: Անտեղի չէ նշել նաև, որ Ս. Գ. Երամովը Հակահե-
տախուսութիւնն է մտել Հայտնի դաշնակցական Արմենակ Կանավոզովի ե-
րաշխավորութեամբ և այնտեղ աշխատել մեկ ու կես տարի: Այդ ընթացքում
նա իրեն բավականին ակտիվ և նախաձեռնող է դրսևորել, լինելով պրպտող
Հակահետախուզի ղեկում, որի համար նա պաշտոնի բարձրացում է ստա-
նում որպէս դիտարկման գծով ավագ աշխատակից: Բացի այդ, կարճ ժամա-
նակով (մոտ երեք ամիս) աշխատել է որպէս շարքային միլիցիոներ՝ Ներքին
Գործերի նախարարութեանը կից հեծյալ միլիցիայում: Ի դեպ, այդ ջոկատը
գլխավորում էր ոչ անհայտ դաշնակցական **Լևոն Քալանթարովը** և այն
հատկապէս նախատեսված էր ներքին անկարգութիւնների և խռովութիւն-
ների ճնշման համար: Հայաստանի խորհրդայնացումից հետո Ս. Գ. Երամովը
աշխատում է Կարմիր բանակի շարքերում՝ հետագայում դառնալով Անդր-
կովկասյան և Վրաստանի Գլխավոր Քաղաքական Վարչութեան (ԳՔՎ) (Зак.
и Грыз. ГПУ) հանրակացարանի պարետ և այլն: Որոշ ժամանակ այնտեղ աշ-
խատելով Թիֆլիսում Արտգործնախարարութեան համակարգում, զբաղվել է
օտարահաստակների բնակարանատեղավորման թուղթովութեան հարցերով,
այնուհետև տեղափոխվել Բաքու, ուր աշխատել է որպէս Բաքվի պարետա-
տան հակիչ և այլն: Սակայն ինչպէս շատերը, ի վերջո ձեռքակալվել է և ա-
նարգարացի, կեղծ մեղադրանքների հիման վրա՝ դատապարտվել²⁴⁸:

Հետաքրքրութիւնն է ներկայացնում նաև **Գրիգորի Իսահակի Խաչատ-
րյանի** կերպարը, մարդ, որն ակտիվ մասնակցութիւն է ունեցել հետախու-
զական և հակահետախուզական աշխատանքներում, եղել է Վահագն Գա-
լուստի Մուրադյանի մերձավորագուշին գինակիցներից: Գրիգորի Իսահակի
Խաչատրյանը Հայաստանի Հանրապետութեան հետախուզական ծառայութե-
լուն է մտել նրա կազմակերպման սկզբնական պահից սկսած՝ գնդապետ
Շնեկերի հանձնարարական-երաշխավորագրի հիման վրա: Սկզբնական շրջա-
նում նա կատարել է հակահետախուզութեանն առընթեր հանձնարարու-
թիւնների գծով աշխատակցի պարտականութիւնները: Հետագայում, նրան
հանձնարարվում է իրազեկութիւնը և արտաքին դիտարկումների խումբը:
Գ. Խաչատրյանի գործունեութիւնը տարբեր փուլերում հետախուզութեան և
հակահետախուզութեան գծով գործունեութեան ամենատարբեր ձևերի հա-
մակցութիւնն էր: Այդպիսի կազմակերպչական-քաղաքական աշխատանքի ո-
լորտում նա գործել է մինչև խորհրդայնացումը: Գ. Խաչատրյանը 1921 թ.
փետրվարյան ապստամբութեան ձախողումից հետո ապստամբների հետ
միասին տեղափոխվում է Պարսկաստան, ուր մնում է երկուս ու կես տարի:
Պարսկաստանում գտնված ժամանակաշրջանում նա բացառապէս չփումներ է
ունենում դաշնակցական էմիգրանտների հետ, միաժամանակ ծառայութեան

²⁴⁸ Նույն տեղում, թ. 14-17:

մեջ լինելով խորհրդային կազմակերպությունում՝ «Անդրպետառ»-ում ("Закроостр"), ուր նա տեղավորվում է իր նախկին պետ Վ.Գ.Մուրադյանի ջանքերով: Վերադառնալով Պարսկաստանից, նա տեղավորվում է մի գյուղացու տանը՝ պահպանելով իր բոլոր կապերը և փոխառնչությունները դաշնակցականների հետ:

Ի հավելումս վերն ասվածին՝ մի կարևոր մանրամասն ևս: Անդրժողովոմ-խորհրդին առևտրի Պետական Քաղաքական Վարչություն կողմից դատապարտման պահին (1927 թ. Հոկտեմբեր) նրանցից կապիտան **Վահագն Գալուստի Մուրադյանը** (Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ) ընդամենը 31 տարեկան էր, պորուչիկ **Գրիգորի Իսահակի Խաչատրյանը** (Հատուկ Հանձնարարությունների գծով Հակահետախուզության աշխատակից) 35 տարեկան էր, պորուչիկ **Միքայել Նիկիտայի Դողոխյանը** (Հետախուզական բաժանմունքի պետ) 32 տարեկան էր, **Գրիգորի Ստեփանի Երամովը** (Հակահետախուզության աշխատակից) 30 տարեկան էր և այլն: Անդժողովոմ-խորհրդին առևտրի Պետական Քաղաքական Վարչության դատական կոլեգիայի նիստի որոշմամբ նրանք բոլորը դատապարտվեցին 10 տարվա բանտարկություն²⁴⁹: Այսքանը միանգամայն բավարար է պատկերացում կազմելու ուժերի ծաղկման շրջանում գտնվող այս տաղանդաշատ մարդկանց մասին, որոնք Առաջին Հանրապետության հետախուզության և Հակահետախուզության ընտրանին են եղել՝ իրենց կյանքը նվիրաբերելով սեփական հայրենիքի ազգային անվտանգության ապահովման չափազանց պատվաբեր ու դժվարին գործին, որի ռազմավարներն էին 1918 - 1920 թթ. ծանր, սովյալ տարիներին: Հարկ է եղածին նաև ավելացնել, որ հատկապես վերը նշված հայկական հետախուզության սպաներն են դեկավարել հետախուզական և Հակահետախուզական գործունեությունը Առաջին Հանրապետության դժվարին տարիներին, հնարավորինս ապահովել երկրի պետական անվտանգությունը արտաքին և ներքին թշնամիներից հակառակորդի հետ առճակատման տարբեր տեղամասերում, ինչպես նաև նպաստել Հանրապետության ընդհանուր ռազմավարության մշակմանը: Աշխատելով բարդագույն ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական իրադրություն ոչ ստանդարտ պայմաններում, նրանք ամեն ինչ անում էին, իրենց ուժերի և առկա հնարավորությունների շրջանակներում, որպեսզի հատուկ ծառայությունները լիարժեքորեն կայանան և օգտակար լինեն հայրենիքին՝ նրա ներքին և արտաքին անվտանգության հիմնախնդիրների ապահովման, Հանրապետության միջազգային-դիվանագիտական և տնտեսաքաղաքական դժվարությունների հաղթահարման, հաղորդակցության ուղիների անխափան աշխատանքի ապահովման տեսանկյունից՝ մի խոսքով՝ նպաստեն Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ապահովմանը, և առհասարակ՝ ազգային պետական անվտանգության կարևորագույն հիմնախնդիրների լուծմանը:

²⁴⁹ Նույն տեղում, թ. 2, 20:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918 - 1920 ԹԹ.

1. ՀՀ հետախուզական ծառայության գործունեությունը հանրապետության տարածքում ադրբեջանա-վրացական և թշնամական այլ ուժերի քայքայիչ գործունեության բացահայտման ուղղությամբ 1918 - 1920 թթ.

Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայու-
թյունն իր առաջին քայլերը կատարել է 1918 թ. կեսերին:

Արևիվային փաստաթղթերն ակնհայտորեն վկայում են, անառարկելիո-
րեն փաստում այն մասին, որ ՀՀ հետախուզական ծառայությունը ոչ միայն
աշխատել է հայթայթել արժեքավոր տեղեկատվություն թշնամական ուժերի
կողմից նախապատրաստվող ու ծրագրավորվող սադրանքների մասին, որը
ևս փոքր ծավալի և կարևորության աշխատանք էր, այլև ծառայությունը
ձեռք բերելով կարևոր տեղեկատվություն, որոշակի քայլեր էլ ձեռնարկել՝
հակազդելու ՀՀ նկատմամբ թշնամական գործողություններին՝ մերկացնե-
լով և կանխելով հակառակորդի լրտեսների ծավալած գործունեությունը
հանրապետության տարածքում:

Անդրկովկասի և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության
շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաններում
հայկական հետախուզական ծառայությունը փորձում էր ոչ միայն սեփական
ոտքերի վրա կանգնել, լուծել հանրապետության պետական անվտանգ-
ության ապահովման խնդիրները, այլև հնարավորինս արժեքավոր
տեղեկություններ ձեռք բերել Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռու-
սաստանի և այլ երկրների մասին՝ որոշակի պատկերացումներ կազմելով
վերջիններիս ռազմաքաղաքական պատրաստությունների, սադրանքների,
զորքերի թվաքանակի, տեղաբաշխման, զինվածության մասին՝ արդյունա-
վետորեն հակազդելու երիտասարդ հանրապետության նկատմամբ նրանց
մեքենայություններին: Եվ քանի որ հնարավորություն չկա անդրադառնալ
հարցի բոլոր նրբերանգներին ու մանրամասներին, փորձենք ընդհանուր
գծերով պատկերացում տալ ծառայության գործունեության մասին:

Այն, որ ՀՀ հատուկ ծառայությունները իրենց ընձեռված հնարավորությունների և առկա կադրային ռեսուրսների պայմաններում հնարավորինս ձգտել են աշխատել, լավագույն կողմերից դրսևորվել, երևում է մի շարք փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունից: Այլ բան է ասել, որ նրանք ի վիճակի չէին քիչ թե շատ շոշափելի առավելություն հասնել, հենց թեկուզ թուրքական հատուկ ծառայությունների դեմ պայքարում: Մի կողմից՝ աշխարհակալ կայսրության դարավոր փորձը, կադրերի ու ռեսուրսների առկայությունը, իսկ մյուս կողմից՝ նոր կազմավորվող պետություն՝ Հայաստանի Հանրապետության դերում գտնվելը, կադրային սովը, եղածն էլ անչափ երիտասարդ, չթրծված և օպերատիվ աշխատանքի փորձ չունեցող: Այդ ծառայությունների կայացման վրա բացասաբար էին ազդում իշխող բացառապես արևմտամետ կողմնորոշումները: Այդուհանդերձ, հատուկ ծառայությունները ստեղծված իրավիճակում էլ փորձեցին կանխել թշնամու գործակալներին, հայրենիքի համար ծայրահեղ լարված պահերին գորավիզ լինել Հայաստանի Հանրապետության անվտանգությունը (Բոյուք-Վեդի և Զանգեզուր, 1918 թ. դեկտեմբերյան հայ-վրացական պատերազմ Լոռու և հարակից շրջանների համար և այլն):

Թշնամական գործակալների գործունեության աշխարհագրությունը լայն էր, և Հայաստանն իր հետախուզական ծառայությունների համեստ հնարավորություններով հարկադրված էր լուրջ կռիվ մղել հակառակորդի զգալի ուժերի դեմ: Կառավարություն 1919 թ. մարտի 26-ի մի գրությունից տեղեկանում ենք, որ օգտվելով ՀՀ խճճված իրավիճակից, ադրբեջանաթուրքական գործակալները ծավալել են վտանգավոր գործունեություն ինչպես սահմանի ողջ երկայնքով, այնպես էլ բուն ՀՀ տարածքում՝ մահմեդական բնակչությանը գինելով, կազմակերպելով ռազմական ուսուցում, ձեռվորելով ինքնուրույն մահմեդական կառավարություններ Ախալցխայում, Կարսում, Արախխում (Սուրմալուի գավառ) և Նախիջևանում, և այդպիսով Զանգեզուր-Ղարաբաղի միջոցով կապվելով Ադրբեջանի հետ, գործակալական ցանցով օղակելով Հայաստանը՝ աղետաբեր սպառնալիք դառնալով նրա ժողովրդի խաղաղ, ստեղծարար աշխատանքի համար²⁵⁰:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի ընդհանուր մասի պետ **Պյոտր Պալիևը** 1919 թ. մի հաղորդագրության մեջ՝ ուղղված ՀՀ Տարածքի, վարչակարգի և միլիցիայի կոմիսարին, գրում էր, որ գործակալական տեղեկությունների համաձայն Բոյուք-Վեդիից էջմիածնի շրջանի Սաչախարախ գյուղն է ժամանել ոմն Իրգա Ալի օղլի՝ բոյուքվեդիցիների համար փամփուռներ ստանալու, ըստ այդմ էջմիածնի գավառական կոմիսարից պահանջելով անհապաղ ձերբակալել նրան և հանձնել իրեն վստահված բաժան-

²⁵⁰ Нагорный Карабах в 1918 - 1923 гг.. Сборник документов и материалов, стр. 139:

մունքի տրամադրությունը²⁵¹: 1919 թ. սեպտեմբերի 7-ին կապիտան **Շուճովը** հեռագրում է Թիֆլիս՝ ուղղմական կցորդ գեներալ Հ. Քիչմիշյանին, որում տեղեկություն էր տալիս օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 4-ը ընկած ժամանակահատվածում մահամեղական բնակչության նախապատրաստությունների ու տեղաշարժերի մասին Բասարգեչար-Թաղաքենդ-Դարալագյազ-Նոր Բայազետ-Ղամարլու գծի վրա, ուր տեղի էին ունեցել բախումներ քրդական փոքրաթիվ խմբերի հետ: Հաղորդվում էր նաև Մերգենեկի ուղղությամբ քրդերի ակտիվացման, նրանց և հայկական կողմի կորուստների մասին²⁵²: ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1920 թ. մայիսի 26-ի գեկուցագրում Գլխավոր շտաբի պետ փոխգնդապետ **Ալ. Շենուրը** և Հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար, Ծովակալության գծով պորուչիկ **Հ. Խան-Կոտուրսկին** տեղեկացնում էին Թիֆլիսում ստեղծված Մոսուլմանական կոմիտեի («Վաթանդանկար», որի գլուխ կանգնած էր Խալիլ բեկ-Քասումբեկովը, որը Երևանում հայտնի էր իր նախկին լրտեսական գործունեությամբ) մասին, որի գլխավոր նպատակը, պայքարն էր վերածնվող և ամրապնդվող Հայաստանի դեմ, քարոզչական և գործնական-լրտեսական գործունեությունը Բաքվի, Ելիզավետպոլի, Թիֆլիսի երիտասարդությունը շրջանում՝ աշխատելով իր գործակալական ցանցը ունենալ նաև Երևանի նահանգի մոսուլմանների շրջանում, դրամական և այլ տեսակի օգնություն ստանալով Ադրբեջանի իշխանություններից: Ուշադրությունը բեկոելով այն հանգամանքի վրա, որ նշված Մոսուլմանական կոմիտեի անդամները մահամեղականներին թունավորելով ՀՀ իշխանությունների վայրագությունների մասին հորինված քննություն, կոչ անելով Հայաստանի իրենց հայրենակիցներին գենքը թաքցնել և չհանձնել օրինական իշխանություններին՝ աշխատելով իրենց կողմը գրավել վրացիներին, եզրակացնում էին, որ հակահայկական գործողությունների վերջնական նպատակադրումը Հայաստանի տարածքային անդամահատումն է, չթաքցնելով իրենց մտադրությունները Ղարաբաղի և այլ տարածքների նկատմամբ²⁵³: ՀՀ կառավարությունը, այս բնույթի հազեցած տեղեկություն ստանալուց հետո, մնում էր անհրաժեշտ եզրահանգումների գալ և իրական քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար երկրի ու հայ ժողովրդի անվտանգությունը, ինչը իրականում կամ չարվեց, կամ էլ կիսատ-պուստ՝ անորոշ հայաքան ուղղած Արևմուտքի երկրներին: Հետախուզությունը աշխատում էր ձեռք բերել անհրաժեշտ տեղեկությունները, իսկ այդ գործի կարևոր օղակներից էին հյուպատոսարանները. 1920 թ. մայիսի 22-ի տեղեկատվությամբ Բաթումի ընդհանուր հյուպատոսությունը հաղորդում էր ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ադրբեջանական կառավարության և նրա ղեկավանագիտական ներկայացու-

²⁵¹ ՀԱՍ, Ֆ.Պ - 201, ց.1, գ. 168, ք. 4:

²⁵² Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 177, ք. 119:

²⁵³ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 13, 13 հսկ.:

ցիչների միջև փոխանակված գաղտնի գրությունների մասին, որոնք վերաբերում էին Ադրբեջանի կառավարության, նրա ներկայացուցիչների ու գաղտնի գործակալների Հայաստանում ծավալած հակապետական գործունեությունը²⁵⁴:

Առհասարակ, Հայաստանի տարածքում ապրող մահմեդական տարրերը լոյս վերաբերմունք չէին դրսևորում օրինական իշխանությունների նկատմամբ, հաճախակի ապստամբում էին, և իրենց խռովահույզ տրամադրություններով լարված վիճակում պահում իշխանություններին: Ստեղծված վտանգալից իրավիճակում հատուկ ծառայությունները հարկադրված զբաղվում էին այս կամ այն վայրում (Զանգիբասար, Կարս, Բասարզեչար և այլուր) հակառակորդի ծաղրած գործակալներին, հետախույզներին ու լրտեսներին մերկացնելով, դրանով իսկ կանխելով նրանց հակահայկական գործողությունները: 1919 թ. հուլիսի 26-ի հեռագրում (N 097/BX N 2657)՝ ուղղված Ն Գ նախարարին, Դրոյին և գնդապետ Շենուրին, Նոր Բայազետի գավառի կոմիսար Խոսրուբ Հայտնում էր, որ հետախույզ «Քուրդը» (Ալի Ալահվերդի) Շիշկայա գյուղում 2 թաթարներից տեղեկացել է, որ թաթարները պատրաստվում են վերցնել Բասարզեչարը, Հայերին քշելով, ակնկալելով հաջողության դեպքում Հայերին վռնդել նաև Ղարաբաղից և Ելիզավետպոլից՝ այնտեղ տեղաբաշխելով թաթարներին²⁵⁵: Նոր Բայազետի գավառային կոմիսար Խոսրուբը 1919 թ. հուլիսի 30-ին գնդապետ Շենուրին ուղղված մեկ այլ հեռագրում տեղեկացնում է, որ «Քուրդ» անունով հետախույզը հաղորդում է, որ թաթարները պահանջալիր են ուղարկել Ելիզավետպոլ՝ խնդրելով ուղարկել զորքեր, սպառնալով հակառակ դեպքում՝ ենթարկվելու Հայաստանի իշխանությունը²⁵⁶: Դրոյին և ՀՀ Ն Գ նախարարին ուղարկված 1919 թ. օգոստոսի 7-ի հեռագրում (N 88) Համազասպը շեշտում էր Դալար-Չարդախլու-Գետաբեկ-Ղալաքենդ գծի վրա տեղաբաշխված ադրբեջանական զորքերի կողմից Զող-Շիշկայա շրջանին սպառնացող վտանգի մասին, խնդրելով միլիցիոներներով և այլ ուժերով շտապ ամրացնել նշված տարածքը, ձերբազատվելով թշնամու հետախույզական մասերի քայքայիչ գործողություններից²⁵⁷: Բնականաբար, հայկական հատուկ ծառայությունները տեղական իշխանությունների հետ համագործակցությամբ ձգտում էին խափանել և չեղոքացնել թշնամու հակահայ գործողությունները, նրա գործակալական ցանցը Հայաստանի տարածքում: Երբեմն էլ ՀՀ հատուկ ծառայությունները բախվում էին «տեղական» բնույթի խնդիրների հետ՝ կանխելով գավառական հայ իշխանավորների օրինազանցությունները, կաշառակերություն փաստերը: Ն Գ նախարարին ուղղված տեղեկատվության մեջ (1919 թ.)

²⁵⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 368, ց. 1, գ. 4, ք. 56:

²⁵⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 75:

²⁵⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 168, ք. 12:

²⁵⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 1, ք. 311:

Գլխավոր շտաբի մի գնդապետ գրում էր, որ 3-րդ Հետևակային բրիգադի պետի ունեցած տեղեկությունների համաձայն՝ Փարվանսարայի կոմիսարը ազատ բաց է թողնում զինված մարդկանց Ազրբեջանից Հայաստան քոչի համար (բնականաբար՝ կաշառքի դիմաց), որից ելնելով պահանջվում էր անհապաղ ձեռնարկել միջոցառումներ՝ դադարեցնելու զինված մարդկանց ապօրինի անցումը սահմանով²⁵⁸:

1918 թ. հոկտեմբերի 20-ի գնդապետ Շենուրի և դիվիզիայի Գլխավոր շտաբի Հետախուզության գծով ավագ համհարզ պոզպորուչիկ Սարգիսովի ներկայացրած տեղեկագրում ասվում էր՝ 1918 թ. հոկտեմբերի 14-ին Բաքու-Բաթումի-Թիֆլիս երթուղով Ալեքսանդրապոլ ժամանած թուրքական զորքերի էջելունի մասին, որն այնուհետև նպատակադրված էր ուղղություն վերցնել դեպի Կարս²⁵⁹:

Հարկ է անդրադառնալ նաև Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի պետի օգնական պրապորշչիկ Հովսեփյանի գրություն մասին՝ հակահետախուզական բաժնին՝ կապված ազրբեջանա-թուրքական նկրտումների հետ Կարսի մարզի մի շարք բնակավայրերում (ինչը հաստատվում է նաև Հայաստանի Հանրապետությունում գտնվող Փրանսիական ռազմական ներկայացուցչության սպա Ա. Պուադեբարի²⁶⁰ տվյալներով, որը պնդում է 1918 թ. վերջերին -1919 թ. սկզբներին թուրք գործակալների քարոզչություն փաստի մասին վերը նշյալ տարածքում)²⁶¹: Հետախուզական ամփոփագրում հաղորդվում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն, «Շուրայի» (այսպես կոչված «Միլի Շուրա», Կարսի մարզում գտնվող մահմեդական «ինքնավարությունը») նախկին «փոխարեգիդենտ» Ալի Ռիզան փախչելով Բաթումի բանտից, Թիֆլիսով անցել է Ղարաչախ, այնտեղից էլ՝ Աղբաբայի շրջան, որից հետո՝ Ջարուշատով Օլթիի շրջան (1919 թ. հուլիս), ավելացնելով, որ կասկածներ չկան, որ Ազրբեջանը ձգտում է Աղբաբայի, Ջարուշատի, Արդահանի և Օլթիի շրջանում ստեղծել «երկրորդ Ղարաբաղ, որ նկատվում է նաև վրաց-ազրբեջանական համադաշնակցություն, որ Ախալքալաքի գավառի սահմանամերձ Գորլովկա և Տրոիցկ գյուղերն են ժամանել ավելի քան 300 վրացական զինվորներ: Պրապորշչիկ Հովսեփյանը տվյալներ էր բերում թաթարների՝ քրդերի հետ համագործակցության մասին, որ այդ կապակցությամբ գրույց է ունեցել էրզրումում գտնվող անգլիական շտաբի գնդապետ Ա. Ռաուլենսոնի հետ²⁶²: 1919 թ. մայիսի 24-ի օպերատիվ Հետախուզական ամփոփագրում փոխգնդապետ Շենուրը քուրդ-թաթարական և թուրք-

²⁵⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 168, ք. 32:

²⁵⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 222, ց. 1, գ. 24, մաս III, ք. 413:

²⁶⁰ Պուադեբար Անտուան (1878 -1955 թթ.) – հնագետ, պատմաբան, օդարու, քարտեզագիր, միսիոներ, որը լավ հայերեն գիտեր. –Տե՛ս Մ. Туманян, նշվ. աշխ., էջ 402:

²⁶¹ Տե՛ս Ա. Տր-Միմայան, Անտուան Պուադեբարը և Հայաստանը// «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2004, N 2, էջ 97:

²⁶² ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 168, ք. 38:

վրացական ոտնձգությունների մասին հաղորդում է Կաղզվանում, Մերզե-
նեկում և Արդահանի շրջաններում, ավելացնելով, որ Արդահանի ուղղութ-
յամբ ուղարկվել է հայկական զորամաս²⁶³: Կարսի նահանգապետ Ստ. Ղոր-
ղանյանը 1919 թ. օգոստոսի 22-ի (N 1134) ղեկուցում՝ ուղղված ՀՀ ՆԳ
նախարարին, հաղորդում է Արդահանի շրջանում վրացական զորամասերի
լրտեսական-հրահրիչ գործողությունների մասին²⁶⁴: Իրավիճակն արմատա-
կան փոփոխության չենթարկվեց նաև 1919 թ. երկրորդ կեսին, վրացիները
չարունակեցին իրենց քայքայիչ-քարոզչական աշխատանքները Արդահանի
շրջանում, այդ մասին տեղեկանում ենք ՀՀ Արտաքին Գործերի նախարա-
րության գլխավոր քարտուղարի 1919 թ. սեպտեմբերին Թիֆլիս՝ ՀՀ դիվա-
նագիտական հավատարմատարին ուղղված հեռագրից, որում հայտնվում էր,
որ հայկական հակահետախուզության ձեռքն է ընկել Արդահանի վրացական
ջոկատի պետ Կվիտաշվիլու ձեռքով գրված կոչը, որից ակնհայտ է դառնում,
որ Արդահանի շրջանի բնակիչների ցանկությունը Վրաստանին միանալու
աղմուկը ոչ այլ ինչ է, եթե ոչ վրաց պաշտոնական անձանց կողմից նախա-
պատրաստված սաղրիչ գործողություն, որի մասին բողոք հայտնվեց Երևա-
նում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ *Մախարաձեին*, և դա
այն դեպքում, երբ Հայաստանը խաղաղասիրաբար էր մոտենում բոլոր վիճե-
լի համարվող հարցերի նկատմամբ²⁶⁵: Վրացական կողմն իր հակահայկական
գիրքորոշումը Արդահանի հիմնախնդրում շարունակեց պահպանել նաև
1920 թվականին: Հետախուզական բաժանմունքի 1920 թ. սեպտեմբերի 3-ի
(N 21) գաղտնի ամփոփագիրը վկայում է Վրաստանի օգտին քարոզչության,
նրանց գործերի տեղաբաշխման մասին Արդահանից Արդվին ընկած մի-
ջակայքում (9-րդ և 12-րդ գումարտակները, հեծյալ մուսուլմանական դի-
վիզիոնը, 2 հրետանային մարտկոցները և այլն): Դրանում նաև նշվում էր,
որ Արդահանը Վրաստանին միացնելու համար Ախալքալաքից Արդահան է
ուղարկվել 3-րդ լեռնային մարտկոցը և 400-500 հեծյալներից բաղկացած 2-
րդ հետևակային գունդը, ինչպես նաև Ախալքալաքում պատրաստի վիճա-
կում է գտնվում ժողովրդական զվարդիան, 531 զինվոր ունեցող 12-րդ գու-
մարտակը, սպասվում է Ախալցխայից նոր զորուժի ժամանումը՝ բաղկացած
7 սպաներից և 800 զինվորներից, ավելացնելով, որ Ախալքալաքում կա 180-
200 արկղ փամփուշտ, իսկ Եկատերինֆելդում տեղաբաշխված են մոտ 200
հոգանոց ժողովրդական զվարդիա և հրետանային պահեստներ²⁶⁶: Վրացիները
օգտվելով Հայաստանի համար ստեղծված անբարենպաստ ռազմաքաղա-
քական իրավիճակից, 1920 թ. հոկտեմբերի վերջերին՝ կապված թուրքական
սպառնալիքի հետ, էլ ավելի ակտիվացրեցին իրենց գործողությունները՝

²⁶³ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 21:

²⁶⁴ Նույն տեղում, ք. 126:

²⁶⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 353, ք. 80:

²⁶⁶ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 25 / 25:

Բաթումիից զորքեր տեղափոխելով Արդաճանի և Արդվիհի մարզ, ինչի մասին վկայում են 11-րդ Կարմիր Բանակի օպերատիվ բաժանմունքի պետը, կոմիսարը և հետախուզական բաժանմունքի պետը Անդրկովկասի վերաբերյալ իրենց բացատրական գրություն մեջ²⁶⁷: Այս հանգամանքն շատ խորաթափանցորեն է նկատել **Հովհ. Քաջազնունին**. «վրացիները շատ վարպետորեն (աւելացնեմ՝ նաև ցինիկաբար) օգտուում էին հայ-թուրքական ու հայ-թաթարական հակառակութիւններից՝ իրանց արտօնեալ դիրքը ամրացնելու համար: Յենւելով թուրքերի ու թաթարների վրայ կամ՝ սպառնալով, թէ այն ուղղութեամբ կը շիտկեն իրանց ճակատը, անելանելի կացութեան մէջ էին դնում մեզ ու հարկադրում՝ իրանց ցանկութիւններին յարմարւելու: Ապա՝ երեսները մեր կողմը դարձնելով, մեզ մերձենալով (կամ մերձենալու մտադրութիւն ցուցադրելով), կաշկանդում էին ու որոշ չափով ահաբեկում նաև ազրբեյջանցիներին:

Քաղաքական շանտաժ էր սա, որ մեծ առավելութիւն էր տալիս վրացիներին ու ապահովեցնում նրանց գերիշխանութիւնը»²⁶⁸:

Հետևաբար, վրացիներն օգտվելով Հայաստանի համար ստեղծված աննպաստ քաղաքական կացությունից, ակտիվացնում էին իրենց ռազմաքաղաքական գործունեությունը և հետախուզությունը սահմանակից բոլոր շրջաններում՝ հավակնություններ ներկայացնելով Արդաճանի և Կարսի շրջանների տարածքների նկատմամբ՝ համազործակցելով ազրբեյջանական իշխանությունների հետ, չնայած Տ. Դեվոյանցը այդ մտքի հետ համաձայն չէ, ասելով, որ «վրացիները այստեղ չէզոք էին, եվ Կարսի նահանգի մէջ չունէին իրենց գործակալները»²⁶⁹, ինչը սակայն չի համապատասխանում իրականությունը: Արդաճանի շրջանում վրացիների կողմից սերմանվող խուճապային տրամադրությունների մասին է վկայում Հետախուզական բաժնի պետի պաշտոնակատար **Հ. Խան-Կոստուրսկու** 1919 թ. սեպտեմբերի 13-ի (№ Р0 496) գեկուցագիրը: Հենվելով գործակալական տվյալների վրա, **Հ. Խան-Կոստուրսկին** հայտնում էր Արդաճանից անդլիական ներկայացուցչությունների հեռացման և մարզի քրիստոնեական բնակչության շրջանում տարածված խուճապի մասին, նշելով, որ օրեցօր աճող տազնապի պայմաններում վրացիները չեն հեռանում Արդաճան քաղաքից և շրջակայքից, սպասելով վրաց գեներալի ժամանմանը՝ կապված Արդաճանի մարզի հյուսիսային մասի զբաղեցման հետ, զորքեր կենտրոնացնելով Աջարիայում, Ախալքալաքի գավառում²⁷⁰:

²⁶⁷ Տե՛ս **Нагорный Карабах в 1918-1923 гг.**, Сборник документов и материалов, стр. 595-596:

²⁶⁸ **Յովհ. Քաջազնունի**, Հ. Յ. Գաշնակցութիւնը անելիք շունի այլ եւս, էջ 17:

²⁶⁹ **Տիգրան Գեոյեանց**, Կեանքիս դրոսագներից // «Հայրենիք» (Բնստոն), 1946, N 2 (253), Մարտ-Ապրիլ, էջ 106:

²⁷⁰ Տե՛ս **ՀԱՄ**, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 148:

1919 թ. հոկտեմբերի 20-ի հետախուզական ամփոփագրում կապիտան *Մուրադյանը* և *Դողոսյանը* նշում են, որ Աղբաբայի, Ծորագյալի և Զարուշատի շրջաններում թաթարները շարունակում են կազմակերպվել՝ քայլեր ձեռնարկելով իբր թե պաշտպանվելու համար հայերի հնարավոր հարձակումից: Դրանում ընդգծվում էր, որ Թուրքիայից, Ադրբեջանից և Վրաստանից եկած էմիգրանտների կողմից թաթարական բնակչությանը հրահրվում է ընդդեմ Հայաստանի ապստամբական գործողությունների, ինչի մասին տեղին է նկատում *Տ. Դեվոյանցը*. «Ինչպես եւ միշտ, նրանք գերազասում էին գործել ոչ կանոնաւոր զօրքով՝ եւ այդ դէպքում նրանք կարող էին վստահ լինել յաջողութեան մէջ: Յաջող ապստամբութիւնը կը ստեղծէր «Հարաւային Ազերբէյջան» կամ Թուրքիա սահման կունենար Արփաչայի հետ: Իսկ անյաջողութեան դէպքում իրենց թոյլ կը տրուեր մեղադրելու հայերին ամէն տեսակ վայրագութիւնների ու բռնութիւնների մէջ, որոնցից ոչ ամէն անգամ կարելի է խուսափել ապստամբութիւնները ճնշելու ժամանակ:

Հայաստանի դէմ ապստամբութեան լաւագոյն ժամանակը Թուրքերը նկատում էին ձմեռը, երբ հայկական կանոնաւոր զօրամասերի գործողութիւնները խիստ ծանր եւ դժուար պիտի լինէին ցրտի եւ մանաւանդ Կարսի դաշտի անանցանելի ձիւների պատճառով: Ահա թէ ինչու յայտնի աւագակ քիւրդ Սելիմը եւ Քերբալայ Հաջի Աբաս օղլին Տաճկաստանի եւ Ազերբէյջանի գործակալների հետ յունուար 12-ին (1920) Գեգիբջին եւ Զարուշաղ գիւղերի մէջ ընդհանուր ժողով էին հրաւիրել Զարուշաղի եւ Աղբաբայի շրջանների թաթարներին: Այդ ժողովը որոշում է, որ Զարուշաղի եւ Աղբաբայի թաթարները շատ կարճ ժամանակի մէջ պիտի հրաժարուին Հայաստանի հանրապետութեան ճանաչելուց եւ բռնի ուժով պիտի հեռացնեն հայկական պաշտօնէութիւնը այնտեղից»²⁷¹:

Ադրբեջանի կողմից չէր դեմ ձեռնարկվող գաղտնի ռազմական նախապատրաստությունների, ադրբեջանա-թուրքական գործակալների քայքայիչ հակահայկական գործունեություն մասին է վկայում Ադրբեջանում չէր դեմականագիտական ներկայացուցիչը Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1919 թ. սեպտեմբերի 22-ի (N 932) հաղորդագրություն մեջ. «Համարյա ամէն օր Բագում հրատարակող ռուսերէն և թաթարերէն «Ադրբէյջան» թերթում լույս են տեսնում երեւանի, Նախիջևանի, Շարուրի, Օրդուբաղի, Սուրմալուի շրջաններում բնակող թուրքերի կողմից յիշատակագրեր, յայտարարություններ, դիմումներ թէ Ադրբէջանի կառավարութեան և թէ Դաշնակից պետությունների ներկայացուցիչների, որոնցով աշխատում են վարկաբեկել Հայաստանի Կառավարութիւնը ու նորա վարչական պաշտօնէութիւնը, նկարագրելով բազմատեսակ բռնութիւնների, հալածանքի և կողո-

²⁷¹ Տիգրան Գեղեցեցի, Կեանքիս դրուագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1946, N 2 (253), Մարտ-Ապրիլ, էջ 106-107:

պուտի դէպքեր, ուղղված թուրքերի դէմ»²⁷², որոնք կազմակերպված էին տաճկա-աղբբեջանական գործակալների կողմից՝ ՀՀ դեմ ավազակային հարձակումների համար²⁷³, նպատակ ունենալով խարխլելու հայկական պետականությունը, նրա անվտանգությունն ապահովման հիմքերը:

Հետախուզական բաժանմունքի 1919 թ. նոյեմբերի 9-ի ամփոփագիրը տեղեկություններ էր պարունակում ինչպես Զարուշատի շրջանի քրդերի գինվածություն, նրանց առաջնորդ Սելիմ մուլլա Բրո-օղլիի համագործակցության մասին թաթարների և առկա կապերի մասին Աղբբայի շրջանի թաթարների առաջնորդ Քերբալայ Մահմեդ Հաջի Աբբաս օղլու հետ, վրացիների աջակցության մասին վերջիններիս՝ նրանց հակահայկական գործողություններում²⁷⁴: Նմանատիպ տեղեկատվություն է հաղորդվում նաև 1919 թ. նոյեմբերի 23-ի Հետախուզական ամփոփագրում (N 7), որի տակ ստորագրել են այդ ժամանակ Հետախուզական բաժնի պետի պարտականությունները կատարող պողպորուչիկ Խաչատուրյանը և բաժնի պետի օգնական պողպորուչիկ Դոդոխյանը: Դրանում նշվում էր, որ նոյեմբերի 21-ին վրացական գորագույնարտակը Արդահանից մեկնել է Խանախ գյուղը՝ Ախալցխա ուղևորվելու նպատակով, որի հրամանատարը՝ կապիտան Կվիտաշվիլին մնացել է՝ իր տրամադրության տակ ունենալով 80 սվինանոց գումարտակ²⁷⁵: Հետախուզությունը հայթայթելով տեղեկատվություն, փորձում էր դրանք ժամանակին հրամցնել իշխանություններին՝ կանխարգելիչ քայլեր ձեռնարկելու համար: 1919 թ. դեկտեմբերի 17-ին վերաբերող փաստաթղթում Հետախուզական բաժանմունքի պետի օգնական պրապորչիկ Հովսեփյանը հայտնում էր Չալդիրի (Չըլդըր), Աղբբայի, Զարուշատի և Շորա գյուղի շրջանի հյուսիսային մասում թաթարների նախապատրաստությունների, գորահավաքի մասին 16-ից 40 տարեկանների մեջ, այդ շրջաններում հայտնված աղբբեջանական էմիսարների մասին, որոնք բերել էին մեծ քանակությամբ դրամ և գինհանդերձանք: Նշվում էր, որ Ախալքալաքից եկած ամերիկյան մայոր Պայտոնը անձամբ Կանարվել գյուղի մոտ տեսել է գորախաղեր աղբբեջանական բանակի սպա Ուսուբովի զլխավորությամբ, որը գործուղվել էր Կարսի մարզ՝ ապստամբություն կազմակերպելու համար: Ամերիկյան մայորի այն հարցին, թե ինչու՞ են ՀՀ տարածքում թաթարները գորախաղեր անցկացնում, Ուսուբովը պատասխանել է, որ այն պատկանում է Աղբբեջանին, սպառնալով, որ շուտով գրավելու են այդ տարածքը՝ քչելով վարչակարգին: Ընդգծվում էր, որ թաթարները գինված են «Լյուխ», «Մաքսիմ-1» զնդացիրներով, ունեն 3 թնդանոթ, որոնցից 2-ը գտնվում են Գրենադերնայից արևմուտք գտնվող Լըզըլ-Քիլիսայ գյուղ-

²⁷² Հայաստանի Հանրապետության արխիվ (Բճստոռն), թիվ 69ա / 1ա, պահ.12, դ. 5:

²⁷³ Նույն տեղում:

²⁷⁴ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց.1, գ.133, ք. 31:

²⁷⁵ Նույն տեղում, ք. 35:

ղում, իսկ մյուսը՝ Գրենադերնայից հարավ՝ Կարակյալ գյուղում: Տեղեկագիրն ուղարկվում է Արտաքին Գործերի և Զինվորական նախարարներին, և Անդրկովկասում դաշնակիցների գերագույն կոմիսար գնդապետ Վ. Ն. Հասկելին (1878 ~ 1952 թթ.²⁷⁶) ի գիտություն²⁷⁷:

Հետախուզությունը ձգտում էր հնարավորինս իր կողմից ձեռք բերվող տեղեկատվությունը ավելի ճշգրիտ դարձնել, քանզի այն դրվում էր վարչապետի, Զինվորական և Արտաքին Գործերի նախարարներին սեղանին, երբեմն էլ՝ այն հաշվառելու պարագայում՝ դառնում գործողությունների ծրագիր ՀՀ իշխանությունների համար: 1919 թ. նոյեմբերի 11-ին վարչապետը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին ուղարկած հեռագրում (N 643), հենվելով Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի հայթայթած տեղեկատվության վրա, վերջինիս հայտնում էր ադրբեջանա-թուրքական գործակալների նախաձեռնությամբ հունվարի կեսերին տեղի ունեցած Զարուշատի և Աղբաբայի չրջանի թաթարների խորհրդակցության մասին, որում բանաձև է ընդունվել ընդհատել առևտրական և այլ հարաբերությունները հայկական վարչակարգի հետ, հայտարարելով 18-ից 40 տարեկան մահամեղականների գորահավաք, Ղըզըլ-Չախչախ երկաթգծի վրա դնելով սեփական պահակազորը և հետախուզությունը: Հայտնվում էր նաև, որ հունվարի 24-ին Զարուշատից և Աղբաբայից վճռվել են հայկական միլիցիան և վարչակարգը, որից հետո չաղբիրյան թաթարները համերաշխվելով գարուշատցիների հետ, Զուրգունայի մոտ դիրքեր են գրավել, 500 հեծյալներ են ուղարկել Արդահան, այդ ընթացքում անկարգություններ ու կողոպուտներ են հրահրվել Բալախի և Ղոնջալի գյուղերում, որի ընթացքում սպանվել է 8 հայ: Գեներալ Հովսեփյանցի բոլոր ջանքերը՝ համոզելու Զարուշատի թաթարներին գերծ մնալ հնարավոր սադրանքներից և ենթարկվելու օրինական իշխանություններին՝ անհետևանք են անցել: Ավելին, թաթարները հակառաջարկներ են անում՝ հայկական կողմից պահանջելով մաքրել Չաղբիրի և Արդահանի չրջանները: Ի վերջո, համոզվելով կոնֆլիկտը խաղաղ միջոցներով հանգուցալուծելու ապարդյունության մեջ, հայկական իշխանությունները հրահանգ են տալիս փոխգնդապետ Մազմա-նովին և Շահբուլաթովին՝ ցրելու խռովարարներին, որից հետո հայկական զորքերը գրավում են Նովոպոկրովկան և Կոչաբուրը, ավելի քան 3000-ոց քրդա-թաթարա-թուրքական հեծելազորը նահանջում է լեռները, հայկական կողմը տալիս է 2 գոհ, 12 վիրավոր, որից հետո Կարսի մարզի Զարուշատի և այլ չրջանների թաթարական բնակչությունը հանդարտվում է, խռովարարները իրենց պատգամախոսներին ուղարկում են Կարս, որպես միջնորդ ընտրելով գնդապետ Կադիմովին: Թաթարները ՀՀ կառավարությանը հայ-

²⁷⁶ Հասկել Վիլյամ Նեֆյու – 1919 թ. հուլիսի 5-ից մինչև 1920 թ. օգոստոսի 17-ը՝ Դաշնակիցների Գերագույն կոմիսարը Հայաստանում:

²⁷⁷ ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց.1, գ. 353, ք. 108-109:

տարարութիւն են տալիս իրենց օրինապաշտութեան մասին, խնդրելով իրենց համարել ՀՀ քաղաքացիներ²⁷⁸: Այսպէս, ոչ առանց հետախուզական մարմինների կողմից գործադրված ջանքերի, զինվորական իշխանութիւնները Կարսի մարզում վերահաստատում են քաղաքացիական վարչակարգը՝ որպէս ՀՀ անբաժանելի մաս, իսկ լրտեսական-հետախուզական կրքերը դեռևս երկար ժամանակ չեն հանդարտվում, և թափարները քողարկված ձևով շարունակում են փորձել լարվածութեան մեջ պահել մարզը և հարակից շրջանները:

1920 թ. հունիսի 17-ի հետախուզական բաժանմունքի գաղտնի ամփոփագիրը (N 19) տեղեկատվութիւն էր պարունակում ոչ միայն Թուրքիայում, Վրաստանում և Ադրբեջանում տեղի ունեցած վերջին կարևոր իրադարձութիւնների մասին, այլև ՀՀ տարածքի մահաբերական բնակչութեան շրջանում տեղի ունեցող խմորումների մասին: Ամփոփագրում հետախուզական բաժանմունքի պետի պարտականութիւնները կատարող Հ. Խան Կոտուրակին և նրա օգնական՝ պողպորուչիկ Նազարբեկյանը տեղեկացնում էին ոչ միայն Կարսի մարզում ընթացող դեպքերի, այլև Ղամարուի շրջանում ադրբեջանա-թուրքական գործակալների քայքայիչ աշխատանքների մասին, որոնք Բուղանլու գյուղը վերածել էին ապստամբների բացահայտ խարդալանքների հենակետի՝ ծավալելով հակահայկական քարոզչութիւն, փորձելով իրենց կողմ գրավել Զելալիի քրդերին, և վատացնել հայ-պարսկական հարաբերութիւնները, որոնք սակայն Թավրիզի մոլդեհիզի ջանքերով և հորդորներով կանխվել են, իսկ լարվածութիւնը, որ թուրք-ադրբեջանական գործակալների գործունեութեան հետևանքով առաջացել էր հայ-պարսկական սահմանագծում՝ վերացվել, որում որոշակի լուծման ունեցան հետախուզակները՝ իրենց խորհրդատվութիւնը ներկայացնելով ՀՀ կառավարութեանը²⁷⁹: Ադրբեջանի ակտիվացման մասին ընդգեմ Հայաստանի հստակ վկայում է Հետախուզական բաժանմունքի 1919 թ. նոյեմբերի 23-ի ամփոփագիրը. Ադրբեջանի Զինվորական նախարարը կարգադրել էր զինվորական հրամանատարներին ՀՀ սահմանամերձ վայրերում կազմակերպել պարտիզանական ջոկատներ՝ նպատակ հետամտելով պարզել հակառակորդի առկա ուժերի թվաքանակը և մարտավարութիւնը, իրականացնելով հանկարծակի հարձակումներ առանձին գործասերի վրա: Ամփոփագրում նշվում էր, որ Ադրբեջանի Զինվորական նախարարի հրամանի համաձայն անցկացվել է 20-ից 25 տարեկան նորակոչիկների գորահավաք, ձգտելով հավաքել 10.000 մարդ, նշելով սակայն, որ այն տվել է ընդամենը 2000 նորակոչիկ, ինչը Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Սուլթանովը բացատրել է հայերի քարոզչութեամբ, որոնք խաղաղ գոյակցութեան կոչ են արել երկու ժողովուրդ-

²⁷⁸ Նոյն տեղում, գ. 249, մաս I, ք. 79, 117:

²⁷⁹ Մ. Միրզոյեան, Հայաստանի Հանրապետութեան հետախուզութեան պատմութիւնից// «Գորոշակ», Պաշտօնաթերթ Հ. 3. Գաշնակցութեան, քի 2 (1574), Ապրիլ, 2002, էջ 113-114:

ների միջև, դրա հետ մեկտեղ ավելացնելով նաև, որ Ադրբեջանի Զինվորական նախարար գեներալ **Մամեդ բեկ Մեհմանդարովը** [16 հոկտեմբերի, 1855 թ. - փետրվար, 1931 թ.] հրաման է արձակել Ղարաբաղի լեռնային մասի գինավթափման մասին²⁸⁰: Իսկ Հետախուզական բաժանմունքի 1920 թ. հունվարի 22-ի ամփոփագիրը (N 10 - այն ստորագրված է հետախուզական բաժնի պետ կապիտան **Վ. Մուրադյանի** և պրավորչչիկ **Մ. Դողոխյանի** կողմից) տեղեկություններ է պարունակում ադրբեջանական գործակալների ու լրտեսների քայքայիչ գործունեություն մասին Կարսի մարզում, փաստեր բերելով նրանց գործունեություն մասին Օլթիի մարզում, որտեղ հակահայկական քայքայիչ գործունեություն համար Նագարիկը ամսական 100 հազար ռ. կովկասյան բոներով գումար էր հատկացրել քուրդ առաջնորդ Զիյա բեկ Հաչիմբեկովին: Ամփոփագրում նշվում էր թաթարական ուղեկալների մասին Զարուշատի Նովոպոկրովկա, Խորոշևկա, Գրենադերսկայա բնակավայրերում, ինչպես նաև թաթարների որոշման մասին՝ իրենց գյուղերից վաճառել հայերի դեմ մղված պայքարին չմասնակցած ռուս մոլոկան-գուլուբորներին, մեղադրելով նրանց ՀՀ կառավարություն հետ վարած բանակցությունների համար²⁸¹: 1919 թ. դեկտեմբերի 11-ի հետախուզական ամփոփագրում (N 8) նշվում է թուրք-թաթարական ձգտման մասին «չուրաներ» ստեղծել ոչ միայն Զարուշատում և Աղբաբայում, այլև ուր որ հնարավոր է, և միավորել դրանց գործունեությունը էրզրումի կոմիտեի գլխավորությունը²⁸²: Ադրբեջանա-թուրքական ագրեսիան հաճախ էլ եզրվում էր վրացական հատուկ ծառայությունների քայքայիչ գործունեության հետ, ինչի մասին է վկայում Հայկական բանակի Երևանյան խմբի շտաբի օպերատիվ հետախուզական ամփոփագիրը, որը վերաբերում է 1919 թ. օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 20-ը ընկած դեպքերին. համաձայն շտաբ-նոտմիստր Մարտիրոսովի հաղորդագրություն, Կավիիշարից թաթարները պատրաստվում են հարձակվել Բասարգեչարի վրա՝ հավաքելով շուրջ 2000 հոգիանոց ջոկատ Ասկեր բեկի գլխավորությամբ²⁸³: Ադրբեջանա-թուրքական այդ ագրեսիվ նկրտումների մասին է վկայում **Տ. Դեվոյանցը**. «Ազերբեյջանի թաթարների յարձակումները Սեևանյ լճի հարաւ-արեւելեան շրջանների վրա, նույնպէս Նախիջևանի կողմից եւ Արեւելքից՝ Չանգեզուրի վրայ, միայն լրացնում են այդ ուղղութեամբ մահմեդականների աշխատանքը: Այս ենթադրությունը հաստատում է նաեւ մեր գործակալների լուրերով էրզրումում կայացած գաղտնի ժողովի մասին, որ որոշել է ամբողջ ուժով հակառակուել հայերի մուտքին Տաճկահայկական նահանգները, նոյնիսկ եթէ պէտք լինի պատե-

²⁸⁰ Նույն տեղում:

²⁸¹ Նույն տեղում, ք. 41:

²⁸² Նույն տեղում, ք. 37:

²⁸³ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, գ. 1, գ. 155, ք. 126:

րազմիլ մեծ պետութիւններէ, Դաշնակիցներէ հետ»²⁸⁴: Ուշագրավ է ևս մի փաստ վրացական կողմի երկդիմի վերաբերմունքի մասին Հայաստանի նկատմամբ, այն մշտական անկայուն քաղաքական կուրսի մասին, որ վարում էր «եղբայրական» Վրաստանը բլոկադայի մեջ գտնվող և թշնամիներով շրջապատված Հայաստանի նկատմամբ՝ քողածածկված եզրեր փնտրելով ադրբեջանական կողմի հետ: Այսպես, ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի շտաբի Հետախուզական բաժնի 1920 թ. հունիսի 3-ի ամփոփագիրը (N 18) արժեքավոր տեղեկութիւններ է հաղորդում այն մասին, որ դեռևս 1918 թ. վրաց-հայկական պատերազմի ժամանակ Բորչալուում վրացական իշխանութիւնների կողմից կազմակերպվել է ժողովրդական գվարդիա՝ շուրջ 1000-1500 թաթարներից կազմված, որն էլ 1920 թ. կեսերին մտցվել է ադրբեջանական զորամասերի մեջ²⁸⁵: Ակնհայտ է վրաց-ադրբեջանական մերձեցումը, փոխհամաձայնեցած գործողութիւնները ընդհանուր շահերի տեսանկյունից²⁸⁶: Դա հաստատվում է նաև այլ փաստերով: Կամավորական բանակից ձեռք բերված տվյալների համաձայն, որի մասին մենք տեղեկանում ենք Հետախուզական բաժնանունքի 1919 թ. հոկտեմբերի 16-ի ամփոփագրից (N 2), հոկտեմբերի 4-ին Վրաստանի կառավարութեան կողմից Ադրբեջան է ուղարկվել 5000 հատ երեք դյուլմանոց արկ, հրացան և փամփուշտ²⁸⁷: Իսկ արդեն 1919 թ. նոյեմբերի 13-ի հետախուզական ամփոփագրի (N 5) տվյալների համաձայն, վրացական կառավարութիւնը Ադրբեջանին վաճառել է 3,5 միլիոն եռաբիծ փամփուշտ և 3 վագոն երեք դյուլմանոց արկ, որոնց մի մասը թողնվել է Լյակում, իսկ մի մասն ուղարկվել է Բաքու²⁸⁸: Իսկ արդեն Հետախուզական բաժնի 1919 թ. դեկտեմբերի 11-ի ամփոփագրի համաձայն, Վրաստանի կողմից Ադրբեջանին ուղարկվել է մեկ գումարտակ՝ 8 զնդացիներով 48 սպաների ուղեկցութեամբ²⁸⁹: Վրաստանը կովկասյան տան մասին պատկերացումները կառուցում էր սեփական էզոիզմի վրա, համազոր-

²⁸⁴ **Տիգրան Գեղեցեց**, Կեսանքիս դրուագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 5 (250), Սեպտ. - Հոկտ., էջ 95:

²⁸⁵ Նույն տեղում, գ. 33, թ. 33:

²⁸⁶ Դա երևում է մի շարք փաստաթղթերից, որոնք առնչվում են Ռուսաստանի հարավում գործող Կամավորական բանակի ռազմաքաղաքական գործունեության հետ: **Գ. Պետրոսյանը** նշում է այդ կապակցությամբ, որ 1919 թ. հոկտեմբերի վերջին Անդրկովկասի ռուսական հետախուզությունը Կամավորական բանակի վարչության պետին ուղղված գեկուցագրում հաղորդում է, որ վրացիների և մասնաբաժանների հարաբերությունները ամրապնդվել են Ադրբեջանի հետ կնքված երկրորդ ռազմաքաղաքական բնույթի գաղտնի դաշնագրով (1919թ. սեպտեմբեր), որն ուղղված է Ռուսաստանի հարավի, ինչպես նաև Հայաստանի դեմ, որը լրացվեց թուրք-ադրբեջանական ռազմական գաղտնի դաշինքով (1919թ. հոկտեմբերի 29), որն իր սուր ծայրերով դարձյալ ուղղված էր հայերի դեմ. - Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը Անդրկովկասի տեղիում հարցում (1919թ. օգոստոս - 1920 թ. ապրիլ) // «Բանբեր Երևանի Համալսարանի», 2006, N 1 (118), էջ 34:

²⁸⁷ **ՀԱՍ**, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, թ. 30:

²⁸⁸ Նույն տեղում, թ. 33:

²⁸⁹ Նույն տեղում, թ. 38:

ծակցելով բոլոր այն ուժերի հետ, որոնք իրեն ձեռնտու էին՝ թե աղբբեջանական, և թե թուրքական կողմերի հետ, ինչը հաստատվում է նաև Հետախուզական բաժանմունքի 1920 թ. հունիսի 17-ի տեղեկագրով (N 19), որում փաստեր են բերվում ինչպես Կաղզվանի շրջանի Օրթա-Կալա վայրում տեղաբաշխված թուրքական ասկյարների շոկատների և նրանց համագործակցության մասին Դիլիսերանակի ու Ջեմալինակի քրդերի հետ, այնպես էլ Արդահանից դեպի հարավ-արևմուտք գտնվող Կաղնախասարչի Ջամալ, Ջաքի և Իբրահիմ բեկերի և վրացիների միջև՝ ի դեմս մահմեդական դիվիզիոնի պետ Բախչի բեկի, միլիցիայի պետի օգնական Սեիդ բեկի և Դադիգուլսկի ավագի²⁹⁰: Հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հ. Խան-Կոտուրակին և պոզպորուչիկ Մ. Դոդոխյանը փաստեր են բերում Խոփի շրջանում կազմակերպված «Բաթումիի մուսուլմանական բնակչության միլիցիոն շոկատի» մասին, որի պետը՝ Օսման բեյը դրանում մեծամասամբ ընդգրկել էր վրացի-մուսուլմանները՝ նրանց մատակարարելով զենք, ռազմամթերք և պարեն²⁹¹, որն էլ հենց աղբբեջանա-վրացա-թուրքական համագործակցության մասին է վկայում:

Այդ տարիներին թշնամին ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Շարուր - Նախիջևանում, ուր ինչպես ընդգծում է **Ռ. Հովհաննիսյանը**, դեռ 1918 թ. թուրքերը, ստիպված լինելով դուրս գալ Երևանի նահանգից, այդուհանդերձ, թողել էին որոշ թվով սպանների՝ մահմեդական ազգաբնակչությանը օգնելու համար, իսկ 1919 թ. ամռանը նաև ուղարկելով գործակալներ XV կորպուսից, ժխտելով, սակայն, որևիցե կապ նրանց հետ և մտցնելով վերջիններիս դասալիքների ցուցակի մեջ²⁹²: Հայկական հետախուզական ծառայությունները ստիպված էին հակազդելու հակառակորդին՝ ձեռնարկելով համապատասխան գործողություններ: Այսպես, 1919 թ. հունվարի 8-ին Դավալուից Երևան՝ դիվիզիայի հրամանատարի հասցեով ուղարկված հեռագրում (N 116) շոկատի պետ գնդապետ Դոլուխանովը տեղեկացնում էր պորուչիկ Բաղալյանցի և Յապոնի միջոցով իրեն հասած գործակալական հետախուզական տվյալների մասին՝ Պարսկաստանից, Օրդուբադից և Նախիջևանից Շարուր ներթափանցող թաթարական ուժերի, ավելի քան 700 թուրքական ասկյարների մասին, որոնք Խալիլ-բեկի և Յուսուպ-բեկի գլխավորությամբ հակահայկական գործողություններ էին ձեռնարկում²⁹³:

1919 թ. մարտի 1-ին ՀՀ գործերի Գլխավոր շտաբի հատուկ բաժանմունքի կողմից պատրաստված հուշ գաղտնի գեկուցագրում (N 127), որն արժանանում է Զինվորական նախարարի ուշադրությունը, հատուկ նշվում էր նոր ձևավորված «**Նախիջևան-Արագոսյան**» **հանրապետության** մասին,

²⁹⁰ Նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց.1, գ. 33, ք. 48:

²⁹¹ **Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն)**, քիվ 25/ 25:

²⁹² **Ռ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն: Հատոր 1, էջ 469:

²⁹³ **ՀԱԱ**, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 33, գ. 212, ք. 13:

նշելով, որ դրա առաջացման գլխավոր պատճառը գառնիբասարյան իրադարձություններն են՝ իբր թե հայկական ներխուժման դեմն առնելու և մահ-մեղականների կյանքն ու զուգըը պահպանելու համար: Դրանում ասվում էր, որ այդ հանրապետության գեներալ-նահանգապետը Զաֆար Ղուլի խան Նախիջևանսկին է, օգնականը՝ Կալաբեկ Թաիրովը, զորքերի հրամանատարը՝ Քերբալայ Ալի խան Նախիջևանսկին (Զաֆար Ղուլի խանի որդին), իսկ Հայաստանի սահմանին մոտ գործող շոկատի պետը՝ Բազրամ խան Նախիջևանսկին: Փաստեր էին բերվում գինուժի մասին, նշելով, որ կա մոտ 100 հոգանոց սպայություն և 2000 զինվոր, որոնք պատշաճ զինվածություն ունեն՝ զինամթերքի որոշ պակասություն զգալով: Զեկուցագրում ընդգծվում էր, որ նպատակադրումը Արազգայանի հանրապետությունը Ազրբեջանին միացնելն է, ինչի համար բանակցությունների նպատակով փետրվարի 28-ին անգլիական գնացքով Կարսի «Շուրայի» անդամ Աբբաս-Ղուլի-բեյի ղեկավարությամբ պատգամավորություն է ուղարկվում Թիֆլիս-Բաքու-Ելիզավետպոլ՝ Ազրբեջանից ստացվելիք օգնության ակնկալիքով: Խան-Կոտուրսկու կազմած կարևոր այս զեկուցագիրը արժանանում է ՀՀ Զինվորական նախարարի ուշադրությունը²⁹⁴: Նախիջևանում հակառակորդի հակահայկական գործողությունների, գործակալական ցանցի մասին հետաքրքիր փաստեր են պարունակվում հատուկ բաժնի պետի 1919 թ. մարտի 13-ի զեկուցագրում (N 136), որի տակ ստորագրել է հանձնարարությունների գծով սպա պոդպորուչիկ Բաչինջաղյանը: Փաստեր էին բերվում «Նախիջևանյան Հանրապետության» մասին, նշելով, որ այդ նպատակով Թիֆլիս-Ելիզավետպոլ-Բաքու է ուղարկվել Բազրամ խանը, ընդգծելով, որ անգլիացիները նրան շատ սիրալիր են ընդունել սկզբունքորեն ընդունելով Նախիջևանյան այդ կառավարության նպատակները: Ասվում էր, որ Բազրամ խանը արժանացել էր ընդունելության Վրաստանի վարչապետի և Արտաքին Գործերի նախարարի կողմից, որոնք շնորհավորել են վերջինիս նախիջևանյան կառավարության հաջողությունների կապակցությամբ՝ Հայաստանի դեմ պայքարում, խնդրելով ողջունել փառապանծ թաթարական զորքերին: Նշվում էր, որ Բազրամ խանի նպատակներից մեկն էլ Ելիզավետպոլից և Բաքվից օգնության ձեռքբերումն է փողով և գենք ու զինամթերքով, որ խոսվարարներն ունեն Պարսկաստանից բերված մեծ քանակությամբ փամփուշտներ, զինվորական հրահանգավորումը անցկացվում է թուրքական և ազրբեջանական սպաների կողմից, որոնք ղեկավարում էր Խալիլ բեյը: Այդ կապակցությամբ նաև նշվում էր, որ ձեռքակալվել է Նախիջևանյան կառավարության հրահանգով Երևան ժամանած Հաջի Ռիզա Քասումբեկովը՝ լրեստության մեղադրանքով, որից պահանջվել է վճարել 100 հազար ռուբլի տուգանք և հեռանալ Թավրիզ, նշելով, որ Նախիջևանի և Բաքվի միջև պահպանվում է

²⁹⁴ Նույն տեղում, թ. 61:

կայուն հեռագրակապ՝ Թավրիզ-Թեհրան գծով: Տեղեկատվության մեջ նշվում էր նաև, որ ապստամբների համար անհրաժեշտ հաղորդակցությունը իրականացվում է Մակու-Բայազետ-Ղարաքիլիսա գծով²⁹⁵:

Ուշագրավ տեղեկատվություն է պարունակում հետախուզական բաժանմունքի 1919 թ. դեկտեմբերի 11-ի ամփոփագիրը (N 8), որում ասվում է Քուլայի շրջանում Ադրբեջանի ակտիվության մասին, նշելով, որ դրություն տեղը Շամիլ-բեյ Արզլիխանին է՝ Պառնաուտ գյուղից, որն իր տրամադրություն տակ ունեւր 3 օդնական և 400 հեծյալ, որոնցից 80-ը թուրք ասկարներ էին²⁹⁶, ավելացնելով, որ Ադրբեջանից մեծ քանակությամբ դրամ և 50 ասկյար՝ սպայի գլխավորությամբ ուղարկվել է քարոզչության և ջոկատների կազմակերպման համար՝ խոչընդոտելու Քուլայի գրավմանը²⁹⁷: Հետախուզական բաժնի պետ փոխգնդապետ **Ալ. Շնեուրը** Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1919 թ. հունիսի 21-ի դիմումագրում շեշտում էր թուրքերի քայքայիչ աշխատանքի մասին Նախիջևանի շրջանում, և մասնավորապես թուրքական «Միություն և առաջադիմություն» կազմակերպության կոմիտեի ագիտատորների ծավալած գործունեության մասին՝ խոչընդոտելու հայերի վերադարձը հարազատ բնակավայրերը²⁹⁸: Հետաքրքրություն է ներկայացնում գործերի Երևանյան խմբի պետ Դրոյի 1919 թ. հուլիսի 2-ի գաղտնի գեկուցագիրը (N 00156)՝ ուղղված ՀՀ գործերի հրամանատարին, որից պարզվում է, որ բրիտանական զինվորական ներկայացուցիչ գեներալ **Ջ. Պ. Պլաուդենի** Նախիջևանում եղած ժամանակ թաթարները բողոքել են հայկական իշխանությունների անօրինական գործողություններից, և մասնավորապես հայկական հակահետախուզության կարգադրությամբ ձեռնարկված իբր թե «ոչ մի պատճառ» չունեցող ձերբակալություններից, որոնք մահամեղականների վրա ճնշող տպավորություն են թողել, որոնցից շատերը սկսել են դուրս գալ Նախիջևանից²⁹⁹: Հենց այդ հանգամանքն էլ վկայում է հայկական հատուկ ծառայությունների նախաձեռնողական գործողությունների մասին Նախիջևանի շրջանում: 1919 թ. հուլիսի 8-ի հետախուզական օպերատիվ տեղեկատվության մեջ **Ջինկևիչը** հայտնում էր, որ իրավիճակը շատ տագնապալի է Զանգեզուրում, և համաձայն Շահթախի շրջանի պետի հաղորդագրության, նկատվել է մահամեղական հեծյալ հարյուրյակի տեղաշարժ լեռներում՝ հյուսիսային ուղղությամբ, թուրքերի և քրդերի մի ջոկատ՝ մոտ 8000 հոգի նախապատրաստվել է հարձակվել Իգդիրի վրա, և այդ նպատակով հուլիսի 6-ին հակառակորդի կողմից ուժեղ հրացանածղություն է կատարվել (Ալի-Մամեդ գյուղի տարածքից) հայկական

²⁹⁵ Նույն տեղում, ք. 75:

²⁹⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 37:

²⁹⁷ Նույն տեղում, ք. 38:

²⁹⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 41:

²⁹⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 67:

դիրքերի աջ կողմի վրա, որին հայկական գործառնական հավասարակամ է տվել: Հաղորդվում էր, որ Սաղարակից մոտ 500 զինյալներ հուլիսի 5-6-ին Մեշաղի Ալասկեր Գամգանի գլխավորությամբ Ենգիշայից ժամանել են Բոյուք-Վեդի, սակայն Ենգիշայի ներկայացուցիչները զուգարբար դիմել են 3-րդ գնդի հրամանատարին՝ խնդրանքով իրենց ակապակներին ուղարկել Բոյուք-Վեդի՝ համոզելու համար ենթարկվել օրինական իշխանություններին³⁰⁰: Դա վկայում է հայկական իշխանությունների կողմից ձեռք բերած որոշ հաջողությունների մասին մահմեդական բնակչության հնազանդեցմանն ուղղված քաղաքականությունում, որին նպաստել են նաև հետախուզական ծառայություններն իրենց արդյունավետ աշխատանքով:

1920 թ. հունվարի 3-ին Հետախուզական բաժանմունքի պետ Մուրադյանի և նրա օգնական պողպորուչիկ Խաչատրյանի կողմից ՀՀ վարչապետին ներկայացված տեղեկագրում ասվում էր Նախիջևանի շրջանում թաթարների խռովության, դրանում թուրքական ռազմական ուժերի մասնակցության, **Խալիլ փաշայի** նախաձեռնությամբ Նախիջևանում հրավիրված Արալիսի, Վեդիբասարի և Միլիստանի ներկայացուցիչների (Թուրքիա) համագումարի մասին³⁰¹: Իսկ 1920 թ. հունվարի 22-ի ամփոփագիրը (N 10) վկայում է Ադրբեջանի քայքայիչ գործունեության մասին ոչ միայն Նախիջևան-Շարուրում, այնպես էլ գաղտնի Ջանգեզուր ուղարկված թուրք սպանների և ասկյարների մասին՝ ապստամբության կազմակերպման համար. ավելին, ադրբեջանական կառավարությունը զինվորական հարկից ազատել էր քրդական գյուղական համայնքները, որի դեմաց վերջիններս պարտավորվում էին տալ հրաձիգներ՝ հանդերձանքով, զենքով ու ձիով, քանի որ նախատեսվում էր քրդական գործառնակների կազմակերպում Սուլթանովի գլխավորությամբ³⁰²: Կապիտան Մուրադյանի և նրա օգնական պողպորուչիկ Դոդոխյանի 1920 թ. փետրվարի 7-ի հաղորդագրության մեջ նշվում էր Շարուր-Նախիջևանի շրջանում տիրող իրադրություն, Բոյուք-Վեդիում թաթարների կենտրոնացման մասին³⁰³:

1920 թ. որոշ հետախուզական տեղեկագրեր ու զեկուցագրեր հետաքրքիր տվյալներ են հաղորդում ադրբեջանա-թուրքական փոխհամաձայնեցված գործողությունների մասին Շարուր-Նախիջևանում, Սուրմալույում, Կարսի մարզում, Ջանգեբասարում, որի մասին վկայում է նաև **Տ. Դեվոյանցը**. «Մեր գործակալների տեղեկությունները ցոյց են տալիս, որ Հայաստանի մահմեդական բնակչությունը մասնաճորտապես Կարսի նահանգի մէջ եւ Շարուր-Նախիջևանի շրջաններում չէր ուզում հաշտուել Հայկական իշխանու-

³⁰⁰ Նույն տեղում, գ. 27, ք. 293:

³⁰¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, գ.1, գ. 441, ք. 41, **Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ.**, էջ 165:

³⁰² ՀԱԱ, Ֆ.Պ - 204, գ.1, գ.133, ք. 42:

³⁰³ Տե՛ս **Նախիջևան-Շարուրը 1918 -1921 թթ.**, էջ 166-167:

Թեան ենթարկուելու մտքի հետ եւ տեղի վրայ մնացած ու նոր եկող տաճկական սպաների ու զինուորների օգնութեամբ կազմակերպում էր զինուած խմբեր ու պատրաստուում ապստամբուել Հայաստանի դէմ»³⁰⁴: Հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Վ. Մուրադյանը և նրա օգնական կապիտան Տ. Դեվոյանցը 1920 թ. մարտի 20-ի տեղեկագրում փաստեր են բերում մահճակալի շարժման ակտիվացման, թուրք-ադրբեջանական գործակալների գործունեութան, Եաճախից Դավալու ժամանած 300 ասկյարների մասին: Հաղորդվում էր, որ թաթարները շահագրգռված լինելով քրդերի հետ բարեկամութան մեջ, նրանց առաջնորդներին պարզևատրում են մեծ գումարներով և նվերներով՝ Ֆաթիի բեկ Եամաշադինսկուն ուղարկելով 60 հազար ռուբլի, որ Նախիջևանյան ուժերի գլխավոր հրամանատարը դարձել է Քերբալայ Խան Նախիջևանսկին, որը սկսել է զբաղվել քրդական ջոկատների կազմակերպմամբ՝ սպասելով 500-600 հոգեանոց հեծյալ ջոկատի, բազմաթիվ սպա-հրահանգիչների ժամանմանը³⁰⁵:

1920 թ. մարտի 20-ի այդ տեղեկագրում հայտնվում էր Սուրմալուում մահճակալանների ակտիվութան մասին, արձանագրելով, որ Քուլալում Եամիլ-բեկ Այրումլինսկու մոտ, բացի տեղական ավազակախմբերից, կան նաև 200 թուրք ասկյարներ և 2 թնդանոթ, ավելացնելով, որ Բայազետից 7 ուղտերով Քուլալ է ուղարկվել զինամթերք³⁰⁶: 1920 թ. ապրիլի 5-ի հետախուզական ամփոփագիրը վկայում է Բայազետի սանջակից Նախիջևան ժամանած թուրք ասկյարների մասին, որոնց գլխավորում էին Ջաֆար Ղուլի Խանը և Քերբալայ Խան Նախիջևանսկին³⁰⁷: Ամփոփագրում կապիտան Դեվոյանցը և պողպորուհիկ Դոդոյանը հայտնում էին, որ Նախիջևանի շրջանի թաթարները գլխավին զինվում են, սովորում հրացանածգութան արվեստը, ինչպես նաև Բաքվից ստանում զնդացիները³⁰⁸: 1920 թ. ապրիլի 23-ի ամփոփագրում (N 15) պարունակվում են փաստեր Նախիջևանում գտնվող 300 թուրքական և 550 ադրբեջանական ասկյարների ու 15 սպաների ժամանման մասին, որոնք իրենց հետ բերել էին 17 միլիոն ռուբլի³⁰⁹:

Հետախուզական բաժանմունքի 1920 թ. մայիսի 7-ի ամփոփագիրը (N 16) տվյալներ էր հաղորդում շարուբյան ուժերի Բաշ-Նորաշենյան շտաբի մասին, որը գլխավորում էր թուրք սպա Օսման փաշան, որը Զանգեբասարի հետ կապեր հաստատելու համար ուղիներ էր որոնում³¹⁰: 1920 թ. մայիսի 23-ի ամփոփագիրը (N 17) տազնապ էր արտահայտում շրջանում տիրող

³⁰⁴ Տիգրան Դեյնանց, Կեանքիս դրուագներից // «Հայրենիք» (Բուսոնն), 1945, N 4 (249), Յուլիս-Օգոստոս, էջ 84:

³⁰⁵ ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց.1, գ. 33, ք. 11-12:

³⁰⁶ Նույն տեղում:

³⁰⁷ Նույն տեղում, գ. 427, մաս II, ք. 252:

³⁰⁸ Նույն տեղում:

³⁰⁹ Նույն տեղում, ք. 262:

³¹⁰ Նույն տեղում, ք. 279:

ուզմաքաղաքական իրավիճակի վերաբերյալ, հայտնելով, որ դրամը և փամփուշը Նախիջևան է մտնում Ադրբեջանից Պարսկաստանի վրայով՝ մաքսանենգային ուղիով³¹¹, իսկ 1920 թ. հուլիսի 6-ի ամփոփագրում (N 20) հայտնվում էր Մակվից Յայլի և Վ. Ազա (Ջուլֆա կայարանից 10 վերստ հեռու) ժամանած սուլթանի մասին՝ 125 մարդով և երկու թուրք սպաների ուղեկցությամբ, էդիֆ բեյի կողմից ակնկալվող հարձակման մասին Ցգ[ը]նախի (Չանանաբ) և Գողթանի վրա³¹²: Եվ վերջապես, ՀՀ զորքերի Գլխավոր շտաբի 1920 թ. սեպտեմբերի 25-ի հետախուզական ամփոփագիրը արդեն վկայում է Կարմիր խորհրդային զորքերի ռեալ ակտիվացման մասին Նախիջևանի շրջանում, ընդգծելով Կարմիր զորքերի գրեթե կեսի անմարտունակության մասին³¹³, ինչը հետագա փաստերով չհաստատվեց:

Հետաքրքրություն են ներկայացնում նաև Կարսի շրջանում թուրքերի ակտիվացման մասին տվյալները, թեկուզև 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախապատմության տեսանկյունից. բավականաչափ հետաքրքիր է Գլխավոր շտաբի հետախուզական մի ամփոփագիր (N 8), որը վերաբերում է մինչև 1919 թ. հունվարի 5-ը ընկած ժամանակահատվածում Կարսի մարզում ծավալված իրադարձություններին ու զանազան անցքերին: Ամփոփագրի հեղինակը՝ հանձնարարությունների գծով սպա Լ. Բաշինջաղյանը անդրադառնում է Կարսի մարզի որոշ զորամասերում իշխող կարգուկանոնին, շեշտելով, որ չնայած ձեռնարկված միջոցառումներին, դասալքությունը շարունակվում է, գուգահեռաբար անդրադառնալով նաև մնացած ոչ մեծաթիվ թուրքական զորամասերում իշխող իրավիճակին, թուրք սպաների լայն քարոզչության մասին Կարսի մարզի բնակչության, և մասնավորապես քրդերի մեջ՝ ընդգեմ հայերի: Տեղեկագրում նշվում էր, որ մարզի թուրքական բնակչությունը լավ գինված է, փաստելով, որ Կաղզվանի օկրուգի Նախիջևանի շրջանում, Դիզորում և այլ գյուղերում, ինչպես նաև Կիզիլ-Չախչախ (կամ Ղըզըլ-Չախչախ) կայարանում թուրքերի կողմից մթերքի մեծ պաշարներ են կուտակվել: Վերջնամասում նշվում էր Ծահթախթի թաթարների ակտիվության, ինչպես նաև քրդերի եռանդուն կուտակումների մասին Արալիխի շրջանում (Բաշքենդ, Օրթաքենդ, Ծախլեր և այլ գյուղերում)³¹⁴: Հետաքրքիր է նաև ՀՀ զորքերի հրամանատարի օպերատիվ-հետախուզական ամփոփագիրը, որում տվյալներ են բերվում մինչև օգոստոսի 23-ը ընկած ժամանակահատվածում Կարսի մարզում տիրող դրություն մասին: Դրանում հաղորդվում էր, որ էրզրումում կազմավորված ժամանակավոր կառավարությունը որոշել է գրավել Կարսի մարզը՝ ընդհուպ մինչև Արփաչայ, նշելով հետախուզության նպատակով թուրք սպաների կողմից

³¹¹ Նույն տեղում, գ. 441, ք.122:

³¹² Նույն տեղում, գ. 33, ք. 40:

³¹³ Նույն տեղում, գ. 427, մաս II, ք. 383:

³¹⁴ Նույն տեղում, գ. 92, ք. 60:

Հայկական սահմանի խախտման մասին: Եզրահանգում էր արվում այն մասին, որ Հայաստանի տարածքում մահմեդականների բոլոր ապստամբությունները տեղի են ունենում թուրքական գործակալների ցուցումներով, որոնք Հայաստանի Հանրապետությունում կազմակերպել էին համատարած լրտեսություն, հենվելով տեղական մահմեդական բնակչության վրա: Նշվում էր, որ Հայկական գործասանների կողմից դուրս չարտվելով Նախիջևանի և Կարսի շրջաններից, թաթարական բանդաների լիզերները իրենց գործունեությունը տեղափոխել են Կարսի մարզ: Ամփոփադիրն ուղարկվում է Վրաստանում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին՝ Անդրկովկասում Դաշնակիցների գերագույն կոմիսար Վ. Հասկելին հանձնելու համար³¹⁵: Կարսի մարզին վերաբերող արժեքավոր տեղեկատվություն կա Հետախուզական բաժանմունքի 1920 թ. ապրիլի 5-ի ամփոփագրում (N 14), որում Տ. Դեվոյանցը և Մ. Դոդոյանը Հայտնում էին, որ Չալդիրյան ապստամբության նախօրյակին մի թուրքական գունդ՝ 700 հոգի, ուղարկվել է Մերզենեկի ուղղությամբ, որից 300-ը մեկնել են Օլթի, սակայն Դերսիմում տեղի ունեցած դեպքերի հետևանքով հարկադրված են եղել դրանց ուղարկել Երզնկայի ուղղությամբ, որ իբր թե Չալդիրյան [չըլդըրյան] շարժման նախօրեին էյուբ փաշան կանչվել է էրզրում, ուր նրան առաջարկել են կազմակերպել չեթնիկների խումբ և գործել Սարիղամիշի ուղղությամբ, դրա հետ մեկտեղ Հայտնելով, որ 3-րդ Կովկասյան հրաձգային դիվիզիայի նախկին պետ Խալիլ բեյը մի քանի թուրք սպաների ու ասկյարների հետ 18-ից 40 տարեկանների գորահավաք է անցկացնում Օլթիի մարզում, այն ուղեկցելով վարժանքներով և դրանից հետո կազմակերպված խմբերին ուղարկում սահմանամերձ գյուղերը³¹⁶: 1920 թ. ապրիլի 14-ին գեներալ-մայոր Հովսեփյանցը գլխավոր հրամանատարին և ՆԳ նախարարին Կարսից ուղարկված հեռագրում (N 00322) Հայտնում էր, որ Չալդիրյան մարտերից հետո իր կողմից ձերբակալվել են ապստամբության առաջնորդները՝ Քյամիլ Աբդուլլա Օդլին, Վեյսալ Յուսուպ օդլին, որոնք նահանգապետի խնդրանքով հանձնվել են վերջինիս, ավելացնելով, որ ձերբակալվածները գիտեին արժեքավոր տեղեկություններ ապստամբության կազմակերպման մեջ աղբբեջանական և թուրքական գործակալների մասնակցության մասին, շեշտելով, որ ինքը ձերբակալվածներին համարում է կարևոր հանցագործներ և երկրամասի բարորության համար անհրաժեշտ է գտնում դրանց խիստ դատական պատժի ենթարկելը: Սույն կարևոր հաղորդագրությունը 1920 թ. ապրիլի 15-ին (N P 0269) կապիտան Դեվոյանցը ուղարկում է մինիստր-նախագահին ի գիտություն³¹⁷: 1920 թ. հունիսի 3-ի հետախուզական տեղեկագիրը վկայում էր Կարսի մարզի տեղական մահմեդականների, և

³¹⁵ Նույն տեղում, ք. 387:

³¹⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 427, մաս II, ք. 249:

³¹⁷ Նույն տեղում, գ. 271, ք. 172-173:

նույնիսկ մոլոկանների համաձայնեցված գործողութիւններին մասին թուրքական Քյամիլ փաշայի բանակի հետ, ինչի համար էլ Բաշքեյ և Բեքքեյ էին ժամանել 4 թուրք սպա և 15 ասկյար, իսկ Նոր Սելիմում խորհրդակցութիւն էր տեղի ունեցել Կարսի մարզի մոլոկանների ներկայացուցիչներին հետ³¹⁸: Այն հանգամանքը, որ ՀՀ կառավարութիւնը համեմատաբար լավ տեղեկացված էր Կարսի մարզում ընթացող իրադարձութիւններին (1919 թ. հունիս-հուլիս), այդ թվում նաև Դենիկիին Կամավորական բանակը ներկայացնող գնդապետ **Գ. Դ. Լեալիի**³¹⁹ ծավալած հետախուզիչ, քաղաքական ուղղվածութիւն ունեցող գործունեութեան մասին՝ կապված մարզում ռուսական Կամավորական բանակի ազդեցութեան ամրապնդման հետ, անշուշտ, ակնհայտորեն վկայում է Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի և տեղում նրա համապատասխան ստորաբաժանման կողմից ծավալած բավարար գործունեութեան մասին, ինչքան էլ որ Լեալին քողածածկված էր գործում, որպես զինվորական հետախուզյա պահպանելով գաղտնապահութեան կանոնները: Հայկական կողմին պարզ է դառնում, որ Կամավորական բանակին կից այսպես կոչված «**Հատուկ խորհրդակցութեան**» հանձնարարականով ՀՀ կառավարութիւնում վերջինիս զինվորական և քաղաքական ներկայացուցիչ Լեալին Կարսում բանակցութիւններ է վարում մահմեդական ներկայացուցիչներին և թուրքական 12-րդ բանակի հրամանատարութեան հետ, որպեսզի նրանց հեռանալուց հետո մարզը հանձնվեր ռուսներին, փաստեր բերելով նրա ցուցաբերած հետաքրքրութեան մասին հայերի, անգլիացիների և ռուսների միջև իշխող հարաբերութիւնների մասին³²⁰, ինչը կարծում ենք, շատ լուրջ չպետք է ընդունել, քանզի արդեն այդ ժամանակ ակնհայտ էր ինչպես Մեծ բոլշևիկյան Ռուսաստանի զբաղվածութիւնը ներքին խնդիրներով, և թե այն, որ Կամավորական բանակը, Վրանգելը և բոլորը միասին վերցված ի վիճակի չէին հաղթող դուրս գալ այդ հակամարտութիւնից: Ինչևիցե, գնդապետ Լեալիի 1919 թ. հունվարի կեսերի հանդիպումը «Շուրայի» և թուրքական հրամանատարութեան հետ, ինչից ՀՀ զինվորական իշխանութիւնները և կառավարութիւնը, հետախուզական մարմինները դարձյալ տեղեկացված էին, առաջ բերեց հայ հասարակական-քաղաքական շրջանների դժգոհութիւնը, և այդ կապակցութեամբ հունվարի 21-ին Ս. Տիգրանյանը գնդապետ Լեալիին ուղղված գրութեամբ պահանջեց բացատրութիւն տալ Կարսի անգլիական նահանգապետ **Կ. Թեմպերլեյի** հետ ունեցած բանակցութիւններին մասին,

³¹⁸ Նույն տեղում, գ. 33, ք. 33:

³¹⁹ **Լեալի Գեորգի [Յորի] Գ-միտրիի** [01.04.1887 թ. - 02.02.1957 թ.] - (01.12.1917 թ. - 1920 թ. - **Ամավորական բանակ**): **А. В. Ганин**, Корпус офицеров Генерального штаба в годы гражданской войны, 1917-1922 гг., Справочные материалы, стр. 266, 481, 537, 595, 730:

³²⁰ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ , էջ 156:

Թե արդյոք եղե՞լ է մտադրություն «Հաստատել ոչ Թե հայկական, այլ մուսուլմանական կառավարում ռուս նահանգապետի զլխավորությամբ»³²¹ Դրան Լեալին հունվարի 22-ին պատասխանում է, որ «Կարում պաշտոնական խոսակցություն քաղաքական խնդիրների շուրջ չեմ ունեցել, սակայն անգլիական զինվորական նահանգապետ գնդապետ **Կ. Թեմպերլեյին** խորհուրդ եմ տվել, որ այդ ծանր վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է նահանգապետ նշանակել ազգությամբ ռուսի, որն անմիջապես կապի մեջ կլինի Հայաստանի կառավարութեան հետ: Իմ կողմից երբեք չի պահանջվել նահանգում հաստատել մուսուլմանական կառավարում»³²²: Այս ամենը սակայն Լեալի գործունեության նկատմամբ դժգոհությունը խորացնում է, իսկ Երևանի «Ժողովուրդ» թերթը 1919 թ. N 10-ում պարզապես գրում է, որ «գեներալ Դենիկինի ներկայացուցիչ գնդապետ Լեալին ինքնազուլխ բանակցությունների մեջ է մտել անգլիական գնդապետ Կ. Թեմպերլեյի հետ և հակահայկական պրոպագանդա է վարել Երևանում, էջմիածնում և ձգտում է անգլիացիներին հակադրել մեզ հետ: Նրա նպատակն է Կարսի նահանգում ստեղծել ռուս-թաթարական վարչակազմ»³²³: Ըստ այդմ չէ պառլամենտի ժողովրդական խմբակցությունը պահանջում է չչ խորհրդի նախագահությունը՝ հարցում անել Արտաքին Գործերի և Զինվորական նախարարներին, Թե հայտնի՞ է արդյոք իրենց, որ «Կամավորական բանակի ներկայացուցիչ գնդ. Լեալին բացարձակ կերպով ագիտացիա է մղում Հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության դեմ և ճիշտ է արդեօք, որ գնդ. Լեալին առնում է Զինվորական մինիստրությունից 1000 ռուբլի ամսական և եթե առնում է, ապա ինչ գումարներից»³²⁴: Բնականաբար, չէ պառլամենտի 1919 թ. փետրվարի 11-ի նիստը անդրադառնում է այդ խնդրին և արտահայտում իր վերաբերմունքը, բերելով փաստեր, փորձելով բացահայտել, Թե ով է Լեալին, ում է ներկայացնում, ինչ պաշտոն ունի³²⁵, սակայն շատ հարցեր էլ չեն հրապարակվում: Թե ինչու, դա ակնհայտվում է չչ կառավարության և զինվորական իշխանությունների գործունեության խորքային ծալքերում կուտակված նստվածքներից: Ակնհայտորեն հասկանալի էր, որ չչ կառավարությունը, ռազմական գերատեսչությունը և համապատասխան կառույցները, այդ թվում և հետախուզական ծառայությունը փորձում էին գաղտնի կապեր պահել Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական և այլ կազմավորումների հետ, որոնք կարող էին խորհրդարանական, քաղաքական տարբեր շահարկումների, թյուրեմբոնման տեղիք տալ: Դրանից ելնելով, չչ Արտաքին Գործերի և զինվորական գերատեսչությունների ղեկավարները

³²¹ ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 164, ք. 4, 10:

³²² Նույն տեղում, ք. 5, 11:

³²³ Նույն տեղում, ք. 6, 14:

³²⁴ Նույն տեղում, ք. 17:

³²⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, ք. 133:

Հավաստիացրին, որ Կամավորական բանակի գնդապետը չի չարաշահել իր դիրքը, և որոշակի Հակահայկական գործունեություն չի ծավալել: Այստեղից ակնհայտ երևում է երկու կողմերի հատուկ ծառայությունների միջև համագործակցություն փաստը, սակայն այլ բան է պարզել, թե ինչ անփութություն հետևանքով է այդ կարևոր տեղեկատվությունը սպրդել մամուլ և խորհրդարանական բամբասանքի ոլորտը՝ տեղիք տալով կրքերի բորբոքմանը, և նորանոր բարդությունների ստեղծմանը կայացման գործընթացներ սպրդող ՀՀ շուրջը:

Հետախուզությունը որոշակի տեղեկատվություն ուներ գրեթե բոլոր սահմանակից շրջանների, Վրաստանի և Ադրբեջանի հետ վիճարկելի համարվող տարածքներում տիրող իրադրություն, դրանցում ընթացող տեղաշարժերի, և ռազմաքաղաքական բնույթի լուրջ փոփոխությունների մասին: Իսկ 1919 թ. մայիսի 2-ին ՀՀ մինիստր-նախագահին հասցեագրված հեռագրում (N 45) գնդապետ Զինկևիչը հայտնում էր, որ միլիցիոն գնդի հրամանատարի տվյալներով ապրիլի 23-ին Յաղուբլիով դեպի Զիլ են ուղևորվել ադրբեջանական զորքերը, միաժամանակ սպասվում է դրանց ժամանումը Նովոսարատովկա և Նովոիվանովկա, շեշտելով, որ այդ մասին Զինվորական նախարարը հրամայել է տեղյակ պահել վարչապետին³²⁶: Հետախուզական բաժանմունքը 1919 թ. նոյեմբերի 9-ի իր ամփոփագրում կոնկրետ փաստեր է բերում Ադրբեջանի քաղաքականության մասին Բաքվի և Ելիզավետպոլի հայերի նկատմամբ, ձգտելով նշված գավառներում ստեղծել համահավաք և միատարր էթնիկական զանգված³²⁷: Ամփոփագրերը հավաստում էր Ադրբեջանի կառավարության ցուցումով Ղազախ-Օքյուզլիի և Գետաբեկի շրջանները գործուղված հետախուզիկների մասին, որոնց առաջ խնդիր է դրվել 1) վարչակազմի հետ միասին պարզել, թե ինչ ժամկետում և ինչքան հետևակ ու հեծյալ պարտիզան կարող է տալ բնակչությունը, որպես հավաքակայաններ նշելով Ղազախ-Օքյուզլիի և Գետաբեկը, 2) պարզեցնել պարտիզանական ջոկատների կազմակերպման համակարգը, 3) պարզել, թե ինչքան գնաք ու զինամթերք, փամփուռներ, կապի միջոցներ (հեռախոս, հեռագրաթիվ) կա բնակչության մոտ³²⁸: Հենվելով հետախուզությունից ստացված գործակալական տեղեկությունների վրա, **գեներալ-մայոր Հախվերդյանը** Զանգեզուրյան իրողությունների հետ կապված, փաստեր էր բերում Ադրբեջանի կողմից ձեռնարկվող հատուկ միջոցառումների մասին Հայաստանի հետ սահմանամերձ գոտում Օքյուզլիում և Գետաբեկում, Ղազախում գտնվող Ադրբեջանի Ն Գ նախարարության միլիցիոն գումարտակի մասին՝ 112 մարդուց բաղկացած, որն ուներ 3 գնդացի և սահմանապահ ջոկատ 80 հեծյալներով և 50 հետևակով: Այնուհետև ասվում էր, որ զորքերի հրամանատարը

³²⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 10:

³²⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ.133, ք. 31:

³²⁸ Նույն տեղում:

հրամայել է Դիլիջանի և Նոր Բայազետի շրջանների պետերին մշտական գործակալական հետախուզությամբ ստուգել իրազրույթյունը Ղազախի և ԳյանՂայի (Գանձակ) գավառների տարածքներում, նշելով այն մասին, որ կասկած չկա, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական գործողությունների պաշտոնապես սկսվելու դեպքում Ղազախի և Գետաբեկի շրջաններում կկենտրոնացվեն կանոնավոր զորքեր Դիլիջանի կամ Ղարաքիլիսայի և Բասարգեչարի վրա հարձակվելու համար³²⁹:

Հետախուզական բաժանմունքի 1919 թ. նոյեմբերի մեկ այլ ամփոփագրում տվյալներ են հաղորդվում Ադրբեջանի իշխանությունների մեքենայությունների մասին հայաբնակ տարածքների բնակչության նկատմամբ, որից հատկապես տուժել են ելիգավետպոլցիները, իսկ Արեշի, Նուխու և Շեմախու գավառներում հայերի թիվը երկու անգամ պակասել է, որ նախապատրաստություններ է տեսնվում Զանգեզուրի վրա հարձակվելու համար, ինչի համար դոկտոր Սուլթանովը ձգտելով «խաղաղ» ճանապարհով նվաճել Զանգեզուրը, երեք լեզուներով թուռցիկներ է տարածել՝ կոչ անելով միանալ Ղարաբաղին³³⁰: 1920 թ. մարտի 20-ի ամփոփագիրը դարձյալ փաստում է Ադրբեջանի կողմից իրականացվող հակահայկական քաղաքականության մասին Ելիգավետպոլի նահանգի լեռնային մասի նկատմամբ, նշելով, որ այդ արշավանքը գլխավորում են Խալիլ և Նուրի փաշաները, ինդիբ դնելով գինաթափել հայերին, միաժամանակ զեներալ-մայոր Նովրուզովի գլխավորությամբ էքսպեդիցիոն կորպուս ուղարկելով Զանգեզուր՝ մոտ 5000 հոգի (երեք զորատեսակի)՝ ունենալով 6 դաշտային, 8 լեռնային թնդանոթներ³³¹: Ադրբեջանը համառորեն ձգտում էր տիրել նաև Զանգեզուրին, ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, կաշառելով տեղական թաթարական լիդերներին, երբեմն էլ՝ դիմելով թուրքերային: Այսպես, 1919 թ. հոկտեմբերի 20-ին Հետախուզական բաժանմունքը հաղորդում է, որ սեպտեմբերի վերջերին ադրբեջանական զորքերի և տեղական ավագակախմբերի կողմից հարձակում է ձեռնարկվել Զանգեզուրի վրա՝ Կարաբաբա, Ագարակ, Եղվարդ և Ուջանիս գյուղերի ուղղությամբ, սակայն ադրբեջանական զորքերը ետ են շարտվել, որի հետևանքով սկսվել է դասավորություն, ուստի Ադրբեջանի կառավարությունը որոշում է կայացրել նոր զորահավաք անցկացնել³³²:

1919 թ. նոյեմբերի 9-ի հետախուզական ամփոփագիրն էլ ավելի ցայտունորեն է ներկայացնում Ադրբեջանի մեքենայությունները Զանգեզուրում, որն այնտեղ է ուղարկում նոր մեծաքանակ ուժեր՝ 1 հետևակային դիվիզիա (3 գունդ՝ ամեն մեկում՝ մոտ 3-5 հազար մարդ), 2 հեծյալ գունդ (800-ական սվին), 8 թեթև, 4 հաուբիցային թնդանոթ և 400 հեծյալ քուրդ,

³²⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 190:

³³⁰ Նույն տեղում, ք. 168:

³³¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 33, ք. 12:

³³² Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 29:

գորքերին գլխավորում էր գեներալ **Ալի աղա Իսմայիլ օղլի Շիրվանսկին** [23 ապրիլի, 1865 թ. - 18 օգոստոսի, 1943 թ.], իսկ հեծելազորը՝ գեներալ Եղի-գարովը, իսկ քրդերին՝ գոկտոր **Սուլթանովի** եղբայրը՝ **Սուլթան բեկ Սուլթանովը**, հայտնելով, որ ասկյարների թիվը հասնում է 400-ի՝ 3 գնդապետներով և 2 լեռնային թնդանոթներով³³³: 1919 թ. նոյեմբերի 4-ի ամփոփագիրը դարձյալ փաստում է Ադրբեջանի հետամտած նպատակների մասին Ձանգեզուրի շրջանում, ընդհանուր եզրեր ձեռք բերելով Թուրքիայի հետ իրենց համատեղ ռազմավարություն իրականացման խնդրում³³⁴: Կապիտան Մուրադյանը նշում էր, որ ձգտելով հարձակվել Ձանգեզուրի վրա, գոկտոր Սուլթանովը գանգեզուրյան գործողությունների ղեկավարությունը վստահել է էնվեր և Նուրի փաշաներին՝ փորձելով կապ հաստատել Ադրբեջանի և Թուրքիայի միջև³³⁵: Ահա այսպիսի պատկառելի ուժեր էր օգտագործում Ադրբեջանը Ձանգեզուրին տիրելու համար, որը ՀՀ տարածքային ամբողջականության և աշխարհաքաղաքական միջանցքի, հետևապես՝ ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից կարևոր ռազմավարական նշանակություն ուներ: Կապիտան Վ. Մուրադյանը 1920 թ. մայիսի 20-ի գաղտնի ամփոփագրում հայտնում էր, որ Ադրբեջանի գործողությունները ուղղորդվում են Բայազետից եկած Թուրք գործակալների կողմից, որոնք ձգտում են ՀՀ տարածքում ապրող մահմեդականներին դրդել ընդհանուր ապստամբություն³³⁶:

Թուրք-ադրբեջանական մեքենայությունները Հայաստանի նկատմամբ բավականաչափ հստակ դրսևորվում էին Երևանից ոչ հեռու գտնվող Ձանգիբասարում, Բոյուք-Վեդիում՝ մահմեդական բնակչության խռովարարական գործողությունների մեջ³³⁷: Ստեղծված իրավիճակը ճիշտ է ներկայացնում **Տ. Դեվոյանցը**. «Բայց թիկունքում, Ձանգիբասարի մէջ՝ Իգդիրի շրջանի, Ղամարուլի եւ Ծարուր-Նախիջևանի սահմանների մօտ, դրուժիւնը աւելի լուրջ կերպարանք ստացաւ: Ձանգիբասարի մէջ միշտ կը գտնուէին տաճկական եւ Ադրբեյջանի գործակալներ եւ ղեկավարներ, որոնք կը կազմակերպէին ժողովուրդը, կը հայթայթէին նրանց Ծարուր-Նախիջևանի շրջա-

³³³ Նոյն տեղում, ք. 31:

³³⁴ **ՀԱԱ**, Ֆ.Պ - 276, ց.1, գ.183, ք. 53. «**Յառաջ**», 10 դեկտեմբերի, 1919 թ., «**Азербайджань**», 6 декабря, 1919 г.

³³⁵ «**Нагорный Карабах в 1918-1923 гг.**», Сборник документов и материалов, стр. 350:

³³⁶ Նոյն տեղում, էջ 386:

³³⁷ Այդ նպատակով Ադրբեջանի առաջնորդները բացահայտ օգտվում էին Թուրքիայի պաշտոնական աջակցությունից, երբեմն էլ այցելելով Կ.Պոլիս, ինչի մասին, օրինակ, վկայում է Տ. Դեվոյանցը Փարիզ՝ գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 28-ի զեկուցագրում (N° 46): Գրանում ասվում էր, որ Կ.Պոլիս է ժամանել Ադրբեջանի վարչապետ Յուսուֆ Էեզիրովը, որը հանդիպումներ է ունեցել հայտնի բոլոր գործիչների հետ, ինչպես նաև պայմանավորվածությամբ ձեռք բերել հետախուզության ղեկավարների՝ Բիգա բեյի և Ջինգուն Կարա Վախվախի, և մասնավորապես Ջիլանի բեյի հետ.- **Հայաստանի Հանրապետության արխիվ (Քոստոն)**, թիվ 17/17, պահ. 12, դ. 3, ք. 75:

նից Արաքսի վրայով գէնք եւ փամփուշտ: Այս նոյն գործակալները բնակչութեան այն մասի վրայ, որ կ'ուզէր յայտնել իր հաւատարմութիւնը Հայաստանի կառավարութեան, ճնշում գործ կը դնէին, դիմելով ձեռքակալութեանց եւ այլ բռնի միջոցներ: Այս թշնամական բոյնը, որի մէջ էին համախառնում միշտ հարաւից եկող տաճկական եւ Ազրբէյջանի մարզիչները, գաղտնի կերպով դեկավարուում էին Հայաստանի ազրբէյջանական ներկայացուցչի կողմից եւ իրենից ներկայացնում էր մի տեսակ ամբողջ, որը պետք է խաղար մեծ դէր այն դէպքում, երբ սկսուէր ընդհանուր պատերազմ մահամեղականների կողմից հայերի դէմ, որովհետեւ նա կը գտնուէր պետութեան մայրաքաղաքի քթի տակ, շատ մօտիկ»³³⁸: Այդ իրադարձութիւնների սաղմնավորման հենց սկզբից հայկական հետախուզական ծառայութիւնը բավականաչափ տեղեկացված է եղել թաթարների նախապատրաստութիւնների մասին, դրա մասին է վկայում պողպորուզիկ Մ. Դոբոխյանի կողմից վերծանված ծածկագիրը գեկուցագիրը (1919 թ. մայիսի 23) հեղինակը Զանգիբասարի շրջանի պետ կապիտան Հարութիւնյանն է. տեղեկութիւններ են հաղորդվում թաթարական զորութի տեղաշարժերի, գինվածութիւն, Զանգիբասարի Ազգային խորհրդի կողմից իրենց օժանդակելու համար այնտեղ հրավիրված 467 ասկյարների, Նախիջևան-Դավալու-Տաշքենդ-Իլիսի-Ղորուդի-Քերիմբեքլու հեռախոսագծի մասին³³⁹: Այդ փաստաթուղթն ուղարկվում է վարչապետին ի գիտութիւն: Գնդապետ Ալ. Շնեուրը մինչև 1919 թ. մայիսի 24-ը ընդգրկող ժամանակահատվածին վերաբերող հետախուզական ամփոփագրում նշում է Բոյուք-Վեդիի և Կարաբաղյարսի (նաև՝ Կարաբաղիլյար) թաթարների հաճախակի հարձակումների մասին հայկական զորամասերի վրա, որի մասին տեղեկացվում է անգլիական հրամանատարութիւնը³⁴⁰: ՀՀ հետախուզական բաժնի 1919 թ. Հուլիսի 16-ի ամփոփագրում (N P 0309) Շնեուրը և Դեվոյանցը հաղորդում են Քյալբալայ Ասկյար Հաջի Աքփյար օղլու Թուրքիա մեկնելու մտադրութիւն մասին՝ 10-15 հրետանավորներ բերելու համար, որ Բոյուք-Վեդիում կենտրոնացել են 5000 զինյալներ, այդ թվում 15 թուրք ասկյարներ և 2 հրահանգիչներ, ինչպես նաև 30 ազրբէյջանական սպաներ, որ ամեն օր Ազրբէյջանից ստանում են դրամ, ավելացնելով, որ Հաջի Աքփյարը ուղարկել է 500 հազար ռուբլի. դա հավաստում էր, որ այդ ամենի նպատակը Հայաստանի կառավարութիւնը չենթարկվին է, հրահրողը Ազրբէյջանն էր³⁴¹:

Գլխավոր շտաբի 1919 թ. սեպտեմբերի 20-ի ամփոփագիրը տվյալներ էր բերում մահամեղական տեղաշարժերի մասին Բոյուք-Վեդիում, ինչպես նաև

³³⁸ **Տիգրան Դեղեանց**, Կեանքիս դրոսագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 5 (250), Սեպտ.- Հոկտ., էջ 97:

³³⁹ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ -290, ց. 2, գ. 30, ք. 1:

³⁴⁰ ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց.1, գ. 73 (71) , ք. 29:

³⁴¹ Նույն տեղում, ք. 99:

այդ շրջանում Հայ Հետախույզների գործունեությունը մասին³⁴²: 1919 թ. հոկտեմբերի 20-ի ամփոփագիրը արձանագրում է, որ Խալիլ փաշան հրամայել է շարային ծառայության ընդունակ գանգիբասարցիներին զինվել, հրամանը խախտողները լքեն Զանգիբասարը, ինչպես նաև ուլուխանկեցիներին միանալ իրենց, քանի որ թուրք ասկյարների թիվը հասնում է 20-ի, իսկ զինված ապստամբների թիվը՝ 2000-ի³⁴³: 1919 թ. հոկտեմբերի 29-ի գեկուցագրում (N KP 71)՝ ուղղված վարչապետին, կապիտան Մուրադյանը հայտնում էր, որ Նախիջևանից Խալիլ-բեյը Զանգիբասարի շրջանի Իլիս-Կորուզի (նաև Իլիս-Ղորուզի) բնակավայրը ոմն Մամեդ բեյի ծանուցագիր է ուղարկել, ըստ որի շրջանի մի մասը միանում է Հայաստանին, կոչ անելով ցանկացողներին տեղափոխվել այդ շրջանից, հակառակ դեպքում հրաժարվում է օգնության ցուցաբերումից: Զեկուցագրի վրա Խատիսյանը մակագրել էր՝ պարզել մանրամասները³⁴⁴: Վարչապետին ուղղված 1919 թ. նոյեմբերի 16-ի գեկուցագրում (N KP106) կապիտան Մուրադյանը հայտնում էր, որ գործակալական տվյալների համաձայն թաթարները իրենց շտաբը Իլիս-Կորուզից տեղափոխել են Շուրու-Դեմուրչի, որ թաթարների ձեռքակալությունները (վերջինս ընդգծում էր, որ իր կողմից անձամբ ձեռքակալվել են 7 հոգի) ուժեղ խմորումներ են առաջ բերել Զանգիբասարում, տեղի են ունենում գաղտնի ժողովներ՝ կապված ՀՀ իշխանությունը ճանաչելու հարցի հետ³⁴⁵: Զանգիբասարի շրջանի տազնապալից իրադարձությունների մասին է վկայում ՀՀ Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունքի 1919 թ. նոյեմբերի 20-ի ամփոփագիրը (N 6), որում կապիտան Մուրադյանը և պոդպորուչիկ Դոգոնյանը հաղորդում են տարբեր վայրերում տեղի ունեցած հավաքների մասին՝ կապված ՀՀ օրինական իշխանություններին ենթարկվելու կամ չենթարկվելու հարցի հետ, նշելով սակայն, որ ապստամբների ղեկավարներից մեկը՝ Ասաղ Հաջի Մանաֆը, նոյեմբերի 15-ին մեկնել է Ծարուր՝ այնտեղից զինվորներ և մոտ 60 թուրք ասկյարներ բերելու համար: Վ. Մուրադյանը նշում էր, որ վերջիններիս վերադարձի դեպքում ապստամբական տրամադրությունը կարող է ուժեղանալ և արդեն անհրաժեշտ կլինի այն ճնշել զինված եղանակով³⁴⁶: Իսկ արդեն 1919 թ. դեկտեմբերի 11-ի ամփոփագիրը (N 8) վկայում է, որ Ենգիշա վայրն են ժամանել (Մակվի վրայով) 11-րդ թուրքական դիվիզիայի զորամասերը՝ 1800 ասկյար, սպաներ՝ Խալիլ փաշայի գլխավորությամբ՝ ունենալով 6 թնդանոթ, մեկը՝ դաշտային, 5-ը՝ լեռնային³⁴⁷:

³⁴² Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 125:

³⁴³ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 29:

³⁴⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 182:

³⁴⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 271, ք. 37:

³⁴⁶ Նույն տեղում, ք. 203, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 34-35:

³⁴⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 37-38:

Հետախուզողների հավաքած տեղեկատվությունը հնարավորություն էր տալիս գործողությունների ծրագիր մշակել թշնամու նկատմամբ: Հետախուզական բաժանմունքի 1920 թ. հունվարի 2-ի ամփոփագիրը կարևոր տեղեկություններ էր հաղորդում ղեկտեմբերի 24-ին Իլիխ-Կորուզիում (Ջանգիբասար) Մամեդ բեյի մոտ կայացած խորհրդակցության մասին, որին ներկա են եղել Ջանգիբասարի բոլոր գյուղերի, ինչպես նաև քրդերի ներկայացուցիչները Սուրմալուի գավառից՝ Քյարիմ բեկ Շամշատդինովը (Օրգով գյուղից) և Ալի Միրզոն (Խիզիրլու գյուղից): Ամփոփագրում նշվում էր, որ Մամեդ բեյը առաջարկել էր քրդերին միանալ իրենց, սակայն վերջիններս պայման են դրել, ռազմական գործողությունների սկսվելու դեպքում զինվորական ծառայության մեջ գտնվող բոլոր քրդերը անցնելով Ջանգիբասար՝ տեղում վարձատրվեն, ստանան պարեն և փամփուշտ, ինչի հետ Մամեդ բեյը չի համաձայնվել: Խորհրդակցությունը եզրակացնում է՝ հանձնվել հետևյալ պայմաններով. 1) տեղական և գավառային կոմիսարները, ինչպես նաև միլիցիոներները պետք է ընտրվեն մահմեդականներից, 2) ասկյարները չպետք է գեներ հանձնեն, 3) հայերին չթողնել զինված վիճակում, 4) վճարել հարկեր, անհրաժեշտության դեպքում հավաքել դրամ և Երևանում ձեռք բերել պահանջվող ձիասայլերի քանակը: Սակայն ինչպես արձանագրվում է ամփոփագրում, դրանից հետո թուրքական սպաները շարունակել են թաթարներին համոզել, որ Բայազետից 11-րդ թուրքական դիվիզիան շուտով կժամանի Ջանգիբասար³⁴⁸: Հետախուզական բաժնի 1920 թ. հունվարի 22-ի ամփոփագրում նշվում էր, որ հայկական կառավարության կողմից նշանակված Ջանգիբասարի շրջանի պետ Ֆարմարզ բեկը շրջանի ներքին կյանքում ոչ մի էական փոփոխության չհասավ, այլ ընդհակառակը՝ դրանով իսկ կարծես թե հեշտացվեցին աղբբեշանական էմիսարների աշխատանքի պայմանները, նրանք ունենալով խոշոր գումարներ, և օգտվելով հայկական կառավարության կողմից Ջանգիբասարի ճանաչվելու փաստից՝ ակտիվացան³⁴⁹: Հետախուզական բաժանմունքի 1920 թ. մայիսի 7-ի ամփոփագրի տվյալներով, Բոյուք-Վեդիում գտնվող 350 զինված տեղական թաթարներ, 50 թուրքական ասկյարներ Նուրի էֆենդու գլխավորությամբ հեռացել են Նախիջևան, միաժամանակ նշելով Նախիջևանից Ջանգիբասար ժամանած 11-րդ դիվիզիայի 10 թուրքական ասկյարների մասին, որոնք սկսել են քարոզչություն ծավալել Իզդիրի վրա ենթադրվող հարձակման և հայերին Սուրմալուից քշելու մտադրության հետ կապված³⁵⁰:

Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի 1920 թ. մարտի 20-ի ամփոփագիրը (N 13) վկայում է թաթարների խմորումները գլխավորելու համար Բայազետից ժամանած ոմն էկսամ փաշայի կողմից լիազորված մի

³⁴⁸ Նույն տեղում, ք. 40:

³⁴⁹ Նույն տեղում, ք. 41:

³⁵⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 184, ք. 140:

Թուրք սպայի մասին՝ խնդիր ունենալով կապեր հաստատել Շարուր-Նախի-
Ղևանի և Զանգիբասարի միջև՝ խոստանալով Բայազետում գտնվող 1000-ից
ավելի ասկյարների աջակցությունը³⁵¹:

ՀՀ Հետախուզական բաժանմունքի 1920 թ. ապրիլի 5-ի ամփոփագրում
(N 14) կապիտան Տ. Դեվոյանցը և պոզպորուչիկ Մ. Դոդոխյանը տեղեկաց-
նում էին, որ մարտի 23-ին Շարուրից Սաղարակ է ժամանել Խալիլ բեյը և
զորահավաք է անցկացնում, միաժամանակ Արալիս ուղարկում գործակալնե-
րի, այնտեղի քրդական ջոկատները «հրալիրում» Բոյուք-Վեդի, նշելով
Քյազիմ բեկ Շամշատդինովի 300 քրդերի, ինչպես նաև տեղական թաթար-
ների 400 հոգեխնոց հեծելազորի և հետևակի, ինչպես նաև Վ. և Ն. Նեջեր-
լուներից Սարվանլյար ժամանող զենք ու զինամթերքի քարավանների մա-
սին³⁵²:

Բավականաչափ մանրամասն է Զանգիբասարի և Բոյուք-Վեդիի վերա-
բերյալ Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի 1920 թ. հունիսի 17-ի ամ-
փոփագիրը (N 19), որում նշվում է Թուրքիայից գրեթե անընդմեջ ժամանող
ուղտաքարավանների մասին՝ զենքով և զանազան ապրանքներով լի, փաս-
տելով նաև Արալիս - Բաշքենդի և Բոյուք-Վեդիի միջև մշտական կապի վե-
րաբերյալ: Ամփոփագրի համաձայն Բոյուք-Վեդիում ապստամբների տրա-
մադրություն տակ կար 1 լեռնային թնդանոթ, 4 գնդացի, 3-ը՝ ձեռքի, 1
«Մաքսիմ», որ ապստամբներին զնդացրային գործ ուսուցանելու նպատա-
կով Թուրքիայից ժամանել են 9 գնդացրորդներ, որ Բոյուք-Վեդի-Սաղարա-
կի շրջանում կենտրոնացված են 500 զինված թաթարներ և 1 գումարտակ
ասկյարներ: Մանրամասն տվյալներ էին հաղորդվում Զանգիբասարի Ազգա-
յին խորհրդի ցուցակների մեջ հաշվառված 467 ասկյարների մասին: Ավե-
լացվում էր, որ հունիսի 9-ին Բուլաղ-Բաշից ժամանել են 100 զինված
տեղական թաթարներ՝ Թուրք սպաների ուղեկցությամբ, որ Զաֆարբազի և
Փարաքարի ճակատներում 10-15 օր առաջ եղել են մոտ 200 - 300 թաթար-
ներ, որոնք փորձել են խոչընդոտել ցորենի բերքահավաքը: Ամփոփագրի
վերջում արձանագրվում էր հարուստ զանգիբասարցիների տեղափոխման
մասին Պարսկաստան³⁵³, ինչը վկայում էր որոշ ձախողումների մասին
նրանց հակահայկական պլաններում, ինչպես նաև 1920 թ. սկզբներին ՀՀ
ուղտաքարաղբակալան իրավիճակի ժամանակավոր կայունացման մասին: Զան-
գիբասարյան իրադարձությունների, դրանցում աղբբեջանա-թուրքական
գործակալների ու լրտեսների քայքայիչ գործունեություն վերաբերյալ որոշ
վկայակոչումների ենք հանդիպում նաև ՀՀ տարածքում 1920 թ. ապրիլի 1-
ից մինչև սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած
ուղտաքարաղբակալան գործողությունների մասին ակնարկաչառում, որում զենքավա

³⁵¹ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 33, ք. 11:

³⁵² Նոյն տեղում, գ. 427, մաս II, ք. 250:

³⁵³ Նոյն տեղում, ք. 49:

Հավաքողյանը հայտնում էր, որ Զանգիբասարի մահմեդական բնակչութիւնը Եւրոպայի միջոցով ամուր կապեր հաստատելով Նախիջևանի և Բայազետի հետ, և այնտեղից ստանալով զենք, զինամթերք ու հանդերձանք, թուրքական զործակալների ու սպանների գլխավորութեամբ կազմակերպվելով՝ դարձել է ծանրակշիռ ռազմական ուժ, բավականաչափ վարժեցված և կարգապահ, իսկ 700-800 ասկարների առկայութիւնն էլ ավելի մեծ վստահութիւն է ներշնչել նրանց՝ ապստամբելու Հայաստանի օրինական իշխանութիւնների դեմ: Ամփոփաբերում նաև հայտնվում էր, որ Նախիջևան-Եւրոպայի և Վեդիբասարի շրջանների աշակցութեան շնորհիվ Բոյուք-Վեդիի դարձավ ապստամբական գլխավոր կենտրոնատեղի, որը նաև Արբեշյանից և Թուրքիայից ժամանած զործակալների կողմից անընդհատ հրահրվեց հակապետական քայլերի շէ իշխանութիւնների դեմ, անընդմեջ ստանալով դրամական և ռազմաքաղաքական աշակցութիւն: Դա երկար հնարավոր էր հանդուրժել, այդ իսկ պատճառով 1920 թ. սկզբին շէ կառավարութիւնը որոշեց ուժի միջոցով ճնշելով խռովարարական շարժումները Կարսի մարզի Զարուշատ, Աղբաբա և Եայնալյար բնակավայրերում՝ ստիպելով ճանաչել շէ իշխանութիւնը, սկզբնապես սակայն փորձարկելով բախումնային իրավիճակը հանգուցալուծելու խողող տարբերակը, այդ նպատակով դիմելով Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչների միջնորդութեանը, որից հետո այդ շրջանում որպես փոխգիշում նշանակվեց մահմեդական կոմիսար, սակայն վերջինս օգտվեց Երևանում գտնվող Արբեշյանի դիվանագիտական ներկայացուցչութեան բացահայտ աշակցութիւնից, ապալինեց ավելի քան 3000-ոց զինված հրոսակախմբին, որը թուրք հրահանգիչների օգնութեամբ վարժեցվել էր, ըստ այդմ իրական սպառնալիք ներկայացնելով Հայաստանի և մայրաքաղաքի՝ Երևանի համար, ստիպելով հայկական զորքերը մշտապես պատրաստ վիճակում պահել: Վերջ ի վերջո, ինչպես նշվում է այդ հետաքրքիր փաստաթղթում, շէ կառավարութեան համբերութիւնը սպառվեց, և նա վճռեց հունիսի կեսերին (հունիսի 18 - 25) զորքի միջոցով գրավել և հնազանդեցնել Հայ բուլչեիկների մայիսյան խռովութիւնից ոգևորված Զանգիբասարի բնակչութեանը. զորքերը գրավեցին Վեդիբասարը, այնուհետև՝ Եւրոպայը՝ մինչև Եւրոպայի կայարանը՝ ապահովելով հանրապետութեան անվտանգութիւնը³⁵⁴: 15-ից ավելի թաթարական գյուղերի հակահայկական խռովութիւնը ճնշվում է, և հունիսի 20-ին վերջնականապես գրավելով Զանգիբասարը, հայկական զորքերը վերցրեցին 2 թնդանոթ, 3 զնդացիք, 40 հազար փամփուշտ և բազմաթիվ հրացաններ³⁵⁵: Հետախուզութիւնը մշտապես տեղեկացված լինելով իրադարձութիւնների մասին, ձգտում էր վերահսկել իրադրութիւնը: Հետախուզական բաժանմունքի 1920 թ. հուլիսի 6-ի

³⁵⁴ Նույն տեղում, թ. 180-183: Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ., էջ 270-276:

³⁵⁵ «Յառաջ», 24 հունիսի, 1920, N 131, «Ռազմիկ». Երևան, 20 հունիսի, 1920, N 1:

ամփոփազրուում նշվում էր Աբբաս Ղուլի բեկի հրամանի մասին սպաների և զինված բանդաների ղեկավարների գործողման մասին խրամատներ, ուր պետք է մնային շուրջօրյա, իսկ Բոյուք-Վեդիում այդպիսի զինված թափարների թիվը հասել էր 700-ի (յուրաքանչյուրն ուներ 200 փամփուշտ), իրենց տրամադրությունն տակ ունենալով 2 լեռնային թնդանոթ, 3 «Մաքսիմ» և «Լյուրա» գնդացիներ, 40 գնդացորդ (որից 20-ը՝ թուրք), 11 թնդանոթաձիգ (որոնցից 1-ը՝ սպա) և այլն, իսկ ձիավորների թիվը հասել է 300 մարդու, որոնք զինված են եղել մի մասը՝ թրով, մյուս մասը՝ «Մաուզեր» տիպի ատրճանակով, ընդ որում հեծելազորին սպասարկում էր 6 սպա, որից 4-ը՝ թուրք³⁵⁶: Ինչպես տեսնում ենք, հետախուզությունը բավականաչափ տեղեկացված էր հարավային շրջաններում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի, թափարների տեղաբաշխման, զինվածության մասին, որը կարևոր դեր խաղաց հակակառավարական, հակահայկական ելույթների ճնշման գործում, որն էական էր ՀՀ անվտանգության ապահովման տեսանկյունից:

Ուշադրություն արժանի են Սուրմալուի շրջանի մասին Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունքի հաղորդած տեղեկությունները. 1919 թ. հունվարի 27-ի ամփոփազրուում (N 12) նշվում է, որ Սուրմալուից թուրքերի հեռանալուց անմիջապես հետո՝ ադրբեջանա-թուրքական գործակալների կողմից ձեռնարկվեց հայկական գործասերին դիմադրություն ցույց տալու գործը, նշելով, որ տեղական մահմեդականության կազմակերպման գործով Իգդիրում զբաղվել են զինվորական նահանգապետ Մամեդ-բեկը, իսկ Ղա-մարլուում՝ Սուլեյման բեկը: Հայտնվում էր, որ Արալիս է ժամանել Մակի սարգարի (հավանում էր Ծարուր-Նախիջևանի շրջանը միացնել իր խանությունը) ներկայացուցիչ Սաֆո Ալի բեկը 30 սարբազների հետ, որոնցից 15-ը քրդեր էին: Ասվում էր, որ նրանց կողմից հավաքվել է 100 խավար ցորեն և 100 հազար ռուբլի, և յուրաքանչյուր տան պարտավորեցրել են տալ 1 սակյար կամ էլ վճարել 5000 ռուբլի: Ամփոփազրուում նշվում էր, որ քրդերը կենտրոնացած են Արալիսում (2000 հոգի՝ Ալի Միրզայի գլխավորությամբ), Դաշբուռում և Արարատյան բարձրավանդակում՝ 1500 հեծյալ Սաֆո Ալիի հրամանատարությամբ, Պառնաուտում՝ 500 մարդ՝ 3 թնդանոթով (թուրք հրետանավորներով)՝ Օմար Աղայի և Ծամիլ բեկի գլխավորությամբ, Պառնաուտ-Կաղզվանում՝ 1000 մարդ Քերիմ բեկի, Ֆեթա բեկի և Համիդ բեկի առաջնորդությամբ, Գյուլուշա-Մուլամախարում՝ 1500 հոգի (կեսը՝ հեծյալ) Յուսուֆ բեկի գլխավորությամբ: Հայտնվում էր, որ 11 և 12 գործախաղաղումները թուրքերի կողմից չեն կազմացրվել, այլ թողնվել են Ծարուրի, Նախիջևանի, Կարսի, Արալիսի, Ալաշկերտի և այլ շրջաններում՝ հայերի դեմ մղվող պայքարում տեղական մահմեդական բնակչությանը

³⁵⁶ ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 33, ք. 44:

օժանդակելու համար³⁵⁷: 2-րդ Հայկական հետևակային զնդի զնդապետ Մելիք-Մուրադովը Հայկական դիվիզիայի հրամանատարին ուղղված 1919 թ. մարտի 19-ի ղեկուցագրում (N 151) նշում էր, որ Սուբմալու-Շախ[Հ]վուրդ - Հաջի Բայրամ-Պառնաուտի շրջանում մահմեդականների կազմակերպմամբ զբաղվում է տեղական թաթար Շամիլ-բեյը, որն իրեն անվանում էր 1-ին մուսուլմանական զնդի հրամանատար, ավելացնելով, որ վերջիններս լավ են գիտնում և հետախուզության տվյալներով՝ ենթարկվում են Կաղվանի թաթարական «Շուրայի» հարավ-արևելյան կոմիտեին: Ի հավելումն, Մելիք-Մուրադովը նշում էր Սուբմալու-Պառնաուտի շրջանում թուրքական հրահանգիչների գործունեությունը հաստատող փաստերի մասին³⁵⁸: Իսկ արդեն Արտաքին Գործերի նախարարին հասցեագրված 1919 թ. ապրիլի 5-ի (N 91) գրությունում Գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Դյուլխանյանը և բաժանմունքի պետի պաշտոնակատար պոգպորուչիկ Բաշինջադյանը տեղեկացնում էին, որ Արալիսի շրջանում (Բաշքենդ) կենտրոնացած են 3000 թաթարներ ու քրդեր, որոնցից 1000-ը ոչ վաղուց եկել են Մակվից³⁵⁹:

ՀՀ հատուկ ծառայությունները որոշակի տեղեկատվություն ունեին նաև տարածաշրջանում ընթացող հասարակական-քաղաքական գործընթացների և մասնավորապես, քաղաքական այնպիսի մի ուժի շուրջը ծավալված անց ու դարձի մասին, ինչպիսին **բոլշևիզմն** էր: Առանձին փաստաթղթեր թույլ են տալիս եզրահանգելու, որ նրանք տեղեկատվություն ունեին Հայաստանում գործող բոլշևիկների մասին, չնայած այն ոչ միշտ էր լիարժեք և ամբողջական, և որը հնարավորություն էր տալիս իրատեսական ցուցումներ տալ բոլշևիզմի ու բոլշևիկյան շարժման կանխարգելման հնարավորությունների մասին: Այսպես, Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի պետի օգնական պորուչիկ **Պ. Պալիևը** հաղորդում է 3-րդ առանձին հետևակային բրիգադի պետ գեներալ-մայոր **Բ. Բաղդասարովից** ստացված հեռագրի մասին, ուր նա տեղեկացնում էր Ղարաքիլիսայում, այնուհետև Դիլիջանում բոլշևիկների գործունեության մասին³⁶⁰: Մեկ այլ հաղորդագրության մեջ տեղեկացվում էր Ալեքսանդրապոլում ուժեղացող բոլշևիկյան խմորումների մասին և այլն³⁶¹: Գլխավոր շտաբի 1919 թ. հոկտեմբերի Հետախուզական ամփոփագիրը վկայում է բոլշևիկների ժամանման մասին Անդրկովկաս՝ հոկտեմբերի սկզբներին³⁶²: Հետախուզական բաժնի 1920 թ. հունիսի 3-ի ամփոփագիրը (N 18) հաղորդում էր 11-րդ Կարմիր բանակի առաջնադասման

³⁵⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 252, ք. 2:

³⁵⁸ Նույն տեղում, ք. 43:

³⁵⁹ Նույն տեղում, ք. 47:

³⁶⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 168, ք. 55-56:

³⁶¹ Նույն տեղում, ք. 66:

³⁶² Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 29:

մասին, նշելով, որ վերջիններին թիվը հասնում է 6-8 հազարի³⁶³: Հաղորդած տեղեկատվությունը գուցե և գերծ չէր թերություններին, ամբողջական չէր, և ճշգրտման կարիք էր զգում, այնուամենայնիվ արժեք ուներ: Ավելին, ՀՀ գործերի Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի 1920 թ. հունիսի 17-ի ամփոփագիրը (N 19) փաստում էր խորհրդային գործերի ժամանման մասին Բաքու, վերջիններին փոխհարաբերությունների մասին թաթարների հետ, նշելով նաև հայերի նկատմամբ լավ վերաբերմունքի մասին³⁶⁴: Իսկ արդեն 1920 թ. հուլիսի 6-ի ամփոփագիրը (N 20) որոշակի տեղեկություններ էր հաղորդում Ազրբեջանում սովետական գործերի տեղաբաշխման մասին, փաստեր բերելով 11-րդ բանակի մասին, որի շտաբը գտնվում էր Բաքվում (հրամանատար՝ **Լևանդովսկի Մ. Կ. [1890-1938 թթ.]**), խորհրդային գործերի վատ հանդերձավորման մասին, ընդգծելով, որ շատ կարմիր բանակայիններ ոտաբոբիկ են և քրջերի մեջ, գերակշռում են պատանյակները, շատերն էլ առանց զենքի են, իսկ եղած զենքն էլ իբր թե շատ վատն էր, ժանգոտած, սվինները ծռուված, և հաճախ էլ լիովին բացակայում էին³⁶⁵: Վրաստանում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին կից գինվորական վարչությունների կայացուցչի 1920 թ. հուլիսի 19-ի Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետին հասցեագրված գրություն մեջ (N 325) նշվում էր, որ գործակալական տվյալների համաձայն հուլիսի կեսերին կարմիր ազրբեջանցիների և ռուսների նշանակալից ուժեր եվլախ կայարանից խճուղիով ուղարկվել են Ղարաբաղի ուղղությամբ: Փաստաթղթի կազմողները՝ պորուչիկ Նանասովը և հետախուզության գծով վարիչ, պորուչիկ Բեկագոյանը, հենվելով Վրաստանի գործերի Գլխավոր շտաբի տեղեկությունների վրա, հայտնում էին, որ կարմիր գործերը՝ թվով մոտ 4000 սվին, երեք զրահագնացքների ուղեկցությամբ կենտրոնացել են Թովուզ կայարանի շրջանում՝ Հայաստանի վրա հարձակվելու նպատակով: Փաստաթուղթը, որի տակ կա նաև ՀՀ Հետախուզական բաժանմունքի պետի օգնական պորուչիկ Նազարբեկյանի ստորագրությունը, ուղարկվում է վարչապետին ի գիտություն, արժանանալով նաև գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանի և Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար գեղապետ Վլ. Պրիտոմանովի ուղաբերությունը³⁶⁶: 1920 թ. սեպտեմբերի 3-ի (N 21) ամփոփագրում Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հ. Խան-Կոտուրսկին և պորպորուչիկ Դոդոխյանը փաստեր են բերում Ղազախի շրջանում բոլշևիկների ակտիվացման մասին, նշելով այնտեղ կենտրոնացած հետևակի մասին՝ 5 հրետանիով և Կուրիչկինի 4 էսկադրոնով, որոնցից 3 գումարտակ և 2 մարտկոց ուղղություն են վերցրել դեպի Ուզունթալա, ռեզերվում պահելով

³⁶³ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 33, ք. 33:

³⁶⁴ Նույն տեղում, ք. 48:

³⁶⁵ Նույն տեղում:

³⁶⁶ Նույն տեղում, գ. 581, ք. 210:

2 հեծելազունդ (600 սվին), փաստելով նաև Գյանջայի շրջանում տեղաբաշխված 20-րդ և 28-րդ դիվիզիաների, Չախմախչիում կանգնած 400 հոգանոց հեծելազնդի մասին: Փաստաթղթում տեղեկատվություն էր տրվում նաև բոլշևիկների գործունեություն, նրանց կողմից զանգեզուրցիների գինաթափման, պարենի և անասունների բռնազրավումների, Սիսիանում տեղաբաշխված 300 հոգանոց հետևազորի և այլնի մասին³⁶⁷: 1920 թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը Թիֆլիսից գաղտնի հեռագրում է Ն. Օհանջանյանին. «Դիլիջանի, Նոր Բայազետի ուղղություններ կենտրոնանում են կարմիր զորքեր՝ նպատակ ունենալով գրավել մեր ուշադրությունը եւ մեր ուժերը թուլացնել Ղարսի շրջանում»³⁶⁸: Իսկ արդեն Հայկական բանակի շտաբի հետախուզական ծառայություն 1920 թ. հոկտեմբերի 28-ի գաղտնի ամփոփագրից տեղեկանում ենք Ղազախում կենտրոնացված Կարմիր Բանակի զինվորականության մեջ տարածված լուրերի մասին՝ Հայաստանի վրա շուտափույթ հարձակման վերաբերյալ³⁶⁹, ինչը վկայում էր, որ բոլշևիկները լրջորեն տրամադրված էին ներխուժել տարածաշրջան և մնալ այնտեղ՝ սեփական աշխարհաքաղաքական կնճռոտ խնդիրների լուծումները գտնելու նպատակադրումով: Չնայած իր մեջ պարունակող փաստերի որոշ հակասականությունը հաղորդած տեղեկությունների լիարժեք հավաստիության տեսանկյունից, վերոնշյալ փաստաթղթերն, անկասկած, արժեք ունեն: Սակայն հարկ է հատուկ ընդգծել, որ ոչ բարձր կամ ավելի ճիշտ բացասական կարծիք արտահայտելով խորհրդային զորքերի հանդերձավորման և մարտական հնարավորությունների մասին, հետախուզական ծառայությունների սպաները առաջին հերթին իրենք չփոթմունքի մեջ ընկան և երկրորդ՝ ապակողմնորոշեցին քաղաքական շրջաններին, որոնք առանց այդ էլ հակաբոլշևիկյան կեցվածք ունեին, և չհավատալով Վ. Լենինի կառավարության հնարավորություններին, հետագայում ճաշակեցին դրա դառը պտուղները, այդ թվում թերահավատություններ վերաբերվելով Կարմիր բանակին, որի կարմիր կոմունարկաներ կրող ցնցոտիավոր գինվորները ջարդ ու փշուր արեցին թե՛ Դենիկինի, թե՛ Կոլչակի, թե՛ Վրանգելի լավ գինված, ռազմամթերքով հագեցած բանակները: Իսկ ցավալի վրիպում էր, իսկ դա գալիս էր նաև հետախուզական ծառայությունների բացթողումներից, մի շարք սխալներից և, անշուշտ՝ ակնհայտ անփորձությունից:

Դատելով Հայկական հետախուզական ծառայության գործունեություն մասին տարաբնույթ նյութերից, կարելի է եզրակացնել, որ ինչքան էլ որ դժվարին և խրթին են եղել նրա առջև կանգնած խնդիրները, դա ամենևին խոչընդոտ չի հանդիսացել, որպեսզի վերջիններս ուժերի ներածին չափով պայքարեն ադրբեջանական և վրաց-ադրբեջանական մեքենայությունների

³⁶⁷ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 25/ 25:

³⁶⁸ ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 486, ք. 309:

³⁶⁹ Նոյն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 184, ք. 132:

ու խարդավանքների դեմ, կատարել կառավարութեան հանձնարարութեանները՝ դրանով իսկ իրենց լուսման ներդրելով ՀՀ անվտանգութեան ապահովմանը նպատակաուղղված ծրագրերի իրականացման գործում: Ստացված արդյունքները գուցե և առաջին հայացքից այնքան էլ արդյունավետ չեն, եղան ցավալի վրիպումներ և բացթողումներ, սայթաքումներ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեկ օրում հետախուզութեան չի ծնվում, որ դրա համար անհրաժեշտ են երկար ու ձիգ տարիներ, պետականութեան գոյութեամբ պայմանավորված անհրաժեշտ փորձ և արմատավորված սովորույթներ, ապա միանգամայն պարզ կդառնա, որ կատարվածն ստեղծված իրադրութեանում առավելագույն հնարավորն էր, ինչն էլ փորձեցին իրագործել ոչ փորձառու, սակայն բավականաչափ ազնիվ ու խիզախ հայ հետախույզները:

**2. Հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքի
գործունեությունը ադրբեջանական գործակալների
սադրանքների կանխաման ուղղությունները:
Խան-Թեքլինսկու դավադրության մերկացումը**

Հայկական բանակի և Հետախուզություն³⁷⁰ Հիմնախնդիրներին վերաբերող Հիմնարար աշխատություններ հրատարակելի վրա գրեթե չկան, առավել ևս, բանակի և ՀՀ Հետախուզական ծառայություն հետ ունեցած ռազմաքաղաքական փոխառնչությունների կտրվածքով: Թերևս այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Մ. Կարապետյանի աշխատությունը³⁷¹, որում հեղինակը անդրադարձել է Հայկական բանակի ձևավորման և զարգացման որոշ հարցերի: Տեղին է նշել նաև Սփյուռքում հրատարակված մի շարք գրքեր³⁷², որով սակայն քննարկվող Հիմնահարցը իր որոշ չբացահայտված էջերով իր վրա է բեռել մեր ուշագրությունը: Ընդհանուր առմամբ, դրանք, անկասկած, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, սակայն դրանցում մեզ հետաքրքրող Հիմնախնդիրները քննության են առնվել մեկնակետ ընտրելով կառավարող կուսակցության՝ ՀՅ Դաշնակցություն գործունեությունը, ուշագրությունը գլխավորապես բեռնելով բուլշեիկների կողմից իրականացվող ռազմավարության վերլուծության վրա, հայկական բանակի սայթաքումների և սխալների մեղքը բարդելով գլխավորապես բուլշեիկների վրա, սովորում թողնելով ավելի խորքային բնույթի պատճառահետևանքային վերհանումները, առանց խորամուխ լինելու ՀՀ կառավարության կողմից իրականացվող ներքաղաքական ռազմավարության բացթողումների և խոտորումների վրա: Քննարկվող Հիմնահարցի ուսումնասիրությունը մասնավորապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության **Պետական Անվտանգություն** համակարգի ձևավորման հայեցակարգի տեսանկյունից, և ըստ այդմ հետաքրքրություն կիզակետում են Հայտնվում նաև այն հարցերը, որոնք առնչվում են 1918-1920 թթ. Հանրապետության համար ստեղծված ճգնաժամային-բախումնային իրավիճակների և դրանց հաղթահարման թե՛ հաջող, և թե՛ անհաջող փորձերի հետ, նկատի ունենալով ինչպես, օրինակ, 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա՝ հայերի

³⁷⁰ «**Բանակ**» բառը առաջացել է լատիներեն **armare** բառից և բառացի նշանակում է զինել կամ էլ պետության ողջ զինված ուժերի ամբողջություն: Տե՛ս **Военный энциклопедический словарь**, М., Военное изд-во, 1986, стр. 45:

³⁷¹ Տե՛ս **Մ. Կարապետյան**, Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920 թթ., Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996 և այլն.

³⁷² Տե՛ս **Յովհ. Մահակեան**, Երկու տարի հայկական բանակին մեջ, Փարիզ, Հրատ. Հայ կամատրներու եւ մարտիկներու Միության, 1937:

Համար հաղթական վրաց-հայկական պատերազմը³⁷³, այնպես էլ 1920 թ. ադե-տալի Հայաստանի Հանրապետության Համար կորստաբեր թուրք-հայկական պատերազմը, և մասնավորապես Կարսի անփառունակ անկումը հոկտեմբերի 30-ին, որի շուրջն այսօր իրարամերժ տեսակետներ են բախվում, առաջադրելով ինչպես առողջ մոտեցումներ, այնպես էլ պատեհաժամ, էգոիստական մղումներից թեկադրված տեսակետներ: Այստեղից տպավորություն է առաջանում, որ կարծես թե Կարսը համաշխարհային ռազմաքաղաքական ուժերի առճակատման գլխավոր հանգուցակետերից էր, և շատ հիմնախնդիրների լուծումը գլխավորապես պայմանավորվածություն մեջ է դրվում հայերի վճռական կամքի, ոգու ուժի և այլնի հետ, դրանք կտրված դիտելով տարածաշրջանային բարդ իրողություններից: Քննարկվող հիմնախնդիրների լուսաբանման անհրաժեշտությունը բխում է նաև նրանից, որ այսօր որոշ հեղինակներ անդրադառնալով հայկական բանակի հիմնախնդիրներին, առանց հարցի մեջ իրապես խորամուխ լինելու և խնդրին համալիր մոտեցում ցուցաբերելու փոխարեն, առանց իրական հիմքերի փորձում են հայկական զինուժի անհաջողությունների և սայթաքումների պատճառները որոնել այլ հարթություններում, մասնավորապես մեղքերի առյուծի բաժինը բարդելով հայկական հետախուզության վրա, ինչը արվում է միակողմանիորեն և գլխավորապես հենվելով հուշագրային բնույթի գրականության վրա, դրանց նկատմամբ չցուցաբերելով քննական և քննադատական մոտեցում, գրեթե բոլորովին չհենվելով արխիվային տվյալների վրա, կարծես թե դրանք բոլորովին էլ գոյություն չունեն, կամ էլ այնքան էլ պիտանի կամ հարմար չեն գործածություն համար, հակասության մեջ մտնելով նեղ անձնական բնույթի նպատակադրումների հետ: Կարելի է ասել, որ այդ խնդրում, որոշ վերապահումներով հանդերձ, մի առումով շատ տեղին է նկատել **գնդ. Տ. Բաղդասարյանը**. «Հայ բանակի պարտությունն պատճառներուն մասին գրելը իմ ուժերէս դուրս է բացարձակապես: Հում նիւթ մը, որուն մասին կրնան գրել ռազմագետ, հմուտ զինուորականները: Իմ գրածներս անձնական յուշերս են, խիստ սահմանափակ, իբրեւ համեստ ատաղձ մը»³⁷⁴:

Այսպես, կրկին անդրադարձ կատարելով այն հեղինակների հրապարակումներին, որոնցում մեծ հենք է կատարվել որոշակի առումով քննադատական վերաբերմունք պահանջող հուշագրային բնույթի գրականության վրա, որոնց հեղինակները հայկական բանակի կրտսեր հրամկազմի ներկայացուցիչներ են, և շարքային ու ռազմական գերատեսչությունների հետ ան-

³⁷³ Տե՛ս այդ մասին մանրամասն **Վ. Վիրաբյան**, 1918թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., «Ատրիկ» հրատ., 2003, **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ», 2005, էջ 99-135: Տե՛ս նաև **Հ. Գևորգյան**, Դրո (Կյանքը և գործունեությունը), Եր., Հեղ. հրատ., 2007, էջ 269-316 և այլն:

³⁷⁴ Տե՛ս **Յովհ. Մահակեան**, Երկու տարի հայկական բանակին մեջ, էջ 130-131:

միջական առնչություններ չունեցող (ինքնին հասկանալի է, որ նրանք պետք է ավելի վատ տեղեկացված լինեին ընթացող իրադարձությունների վերաբերյալ, առավել ևս այդ անձերի դերում հանդես են գալիս քաղաքացիական, թեկուզև բարձրաստիճան չինովնիկներ) ոչ բարձրաստիճան պաշտոնյաներ են (Հայկական բանակի զոր. Սեպուհի գլխավորությամբ գործող 8-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատար հարյուրապետ Հայ Գնդուհի (Համբարձում Թօփճեան)³⁷⁵, ինամատարութեան նախարար Արտաշես Բաբալեան³⁷⁶, որոնց վկայակոչումներին պետք է վերապահումներով վերաբերվել. դրանցում տեղ են գտել լիովին չստուգված, միակողմանի, հաճախ անստույգ և թերի փաստեր, որոնց թիրախը այլ նպատակադրումների հետ մեկտեղ, նաև ՀՀ հետախուզական ծառայություն ծավալած գործունեությունն է 1918 -1920 թթ. և ըստ այդմ` հայ հետախույզները` շարքայինից մինչև սպայական կազմի ներկայացուցիչները: Հարկ է ընդգծել, որ միանգամայն անընդունելի են և ապացուցողական առումով թույլ, ոչ ճշգրիտ և միակողմանի այն պնդումները, որոնք հանգում են նրան, որ մերկապարանոց ժխտեն ՀՀ հատուկ ծառայությունների գոյությունը և ծավալած որոշակի գործունեությունը, չնայած մեր իսկ կողմից նշված ՀՀ հետախուզական բաժանմունքի սխալներին և սայթաքումներին, որոնք բնորոշ պետք է լինեին կայացման գործընթացներ ապրող հայկական պետությունն ամբողջությամբ վերցված, և դրանք սքողելու կամ առավել ևս մերկապարանոց ժխտելու մտադրություն ամենևին էլ չկա: Հետևապես, ամփոփելով ասվածը, մենք մերժելի ենք համարում «պնդումները» հայկական հետախուզական ծառայության ինչպես չգոյություն, միանշանակ գորշություն և բացարձակ անգործության վերաբերյալ, այնպես էլ, վերջիններիս լիովին անհասու լինելու մասին «թշնամի Թուրքիայի ծրագիրներուն և հաշիվներուն», Թուրքական գործի քանակական կազմի և պլանների վերաբերյալ, որ Թուրքիայում Հայաստանի Հանրապետությունը գործակալներ չունեն, և այլն, ինչը միանշանակ և բազմաթիվ փաստերի անառարկելի ճնշման տակ ժխտվում է մեր կողմից հրապարակված մենագրություններում: Չնայած արտահայտված տեսակետների որոշ ռացիոնալ հատիկներին, դրանք երբեմն այնքան հակասական են և նպատակային առումով անորոշ, որ կարող են շփոթություն մեջ գցել ոչ փորձառու ընթերցողներին, և թյուր կարծիք ստեղծել Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի, և մասնավորապես հետախուզական ծառայության պատմության վերաբերյալ, բերելով սխալ եզրահանգման հայկական պետականության չգոյություն վերաբերյալ: Անտեսելով Ադրբեյջանի, Վրաստանի հանրապետությունների և այլ ուժերի

³⁷⁵ Տե՛ս «Մարտկոց», (Փարիզ), 29 հոկտեմբերի, 1932, N⁰ 16, 1, 3, 5, 8, 10 նոյեմբերի, 1932, N⁰ 17, 18, 19, 20, 21:

³⁷⁶ Տե՛ս Արտ. Բաբալեան, Կարաի անկումը//«Հայրենիք» (Բոստոն), 1923, N⁰ 12, հոկտեմբեր, էջ 53:

դեմ երիտասարդ հայկական հետախուզութան գործունեությունը վերաբերյալ առկա փաստերը, և հատկապես բանակազինությունների բնագավառում անհաջողությունների և սայթաքումների, հայկական բանակի պարտությունների պատճառահետևանքային արձանագրությունները, փնտրելով միմիայն ՀՀ հետախուզական ծառայությունների գործունեության ծավալներում, ինչը չի կարելի անել՝ հենվելով գրեթե բացառապես հուշագրային բնույթ կրող և այլ լիովին չստուգված աղբյուրների վրա: Ըստ այդմ անելով կամայական եզրահանգումներ բանակային հիմնախնդիրների և հետախուզությունների գործունեության վերաբերյալ, ինչպես կարելի է անտեսել այն հանգամանքը և ակներև պատմափաստը, որ, ինչքան էլ չկազմակերպված և թույլ լինե՞ր հայկական հետախուզությունը, ինչպես պնդում են ՀՀ հետախուզական ծառայությունների չգոյություն ունեցող «կողմնակիցներ» և պարզապես «պոլիտիկան ժխտարարներ», հենց կայացման բարդ և ոչ միանշանակ գործընթացներ ապրող, սովի և քայքայման գործոնների դժվարին պայմաններում ծնվող և համառորեն կայանալու ձգտող հայկական հետախուզական ծառայություն ջանքերով է որոշակիորեն, գործնականում հաջողվել կանխել Ազգերեջանի Հանրապետության ազբնական Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսած մինչև 1920 թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած տևական և համառ մարտերում³⁷⁷ (նշված հիմնախնդիրը հայ պատմագիտությունում բոլորովին, բացար-

³⁷⁷ 1919 թ. վերջին ադրբեջանական 2 զորքանակ՝ գեներալներ **Ալի աղա Իսմայիլ Աղա օղլի Շիրվանկու** (23 ապրիլի, 1865 թ. - 18 օգոստոսի, 1943 թ.) և **Մամեդ բեկ Մադիս բեկ օղլի Մեհմանգարովի** (16 հոկտեմբերի, 1855 թ. - փետրվար, 1931 թ.) հրամանատարությամբ [*Ա. Միխլինսկայ, Мои воспоминания, Баку, Азербешр, 1984, 209 стр: Д. Ибрагимов, Генерал Али Ага Шихлинский, Баку, Азерб. гос. изд-во, 1975, 138 стр.*], ներխուժեցին Չանգեզուր: Գ. Նժդեհը Գորիսի տակ կազմակերպեց հակազոր, ... թշնամիս խուճապահար փախուստի դիմեց դեպի Ալդալար [այժմ՝ Լաչին]: Այս պարտությունից հետո ադրբեջանցիները մինչև 1920 թ. ապրիլը չհամարձակվեցին հարձակվել Չանգեզուրի վրա: Ադրբեջանը օգտագործեց մաս թուրքական ուժերը, որոնք 1920 թ. ապրիլին Նուրի փաշայի գլխավորությամբ փորձեցին գրավել Կապանը, սակայն ջախջախիչ պարտություն կրեցին Որոտանի կիրճում: Ապրիլի վերջերին Նժդեհը ոչ միայն ետ մղեց թշնամու բոլոր գրոհները, այլև Գորիսի հետ անցավ Արցախ և օգնություն հասցրեց հերոսական արցախահայությանը// Տե՛ս **Ա. Մեյքոնյան**, Հայոց պատմություն: Գաախուսությունների ձեռնարկ, Եր., «Հայագիտակ», 1998, էջ 217. Տե՛ս **Է. Լ. Դանիելյան**, **Ա. Ա. Մեյքոնյան**, Հայոց պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, «Չանգալ-97», 2008, էջ 297-299. - Հենց այս իրադարձությունների կապակցությամբ և Չանգեզուրում 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից սկսած մինչև 1920 թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած տևական և համառ մարտերի ընթացքում **Արսեն Ծահնագյանի, Գարեգին Նժդեհի** և այլ ազգային նվիրյալների, անվանի ռազմական գործիչների ծավալած հերոսական գործունեության կապակցությամբ վերմ արժարժվում է հայ պատմագիտության բացառապես յուրաքանչյուր և անհայտ էջերից մեկը՝ կապված հայկական հետախուզության, և առաջին հերթին այն ուղղորդող ՀՀ Չինվերական մախարարության Գլխավոր Շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի դերակատարման հետ Հայաստանի Հանրապետության համար չափազանց կարևոր այդ իրողություններում, ինչն ամենևին էլ ստվեր չի գցում նշանավոր գորավար **Գարեգին Նժդեհի** ռազմաքաղաքական գործունեության վրա. - Վ. Վ.

ձակապես չուսումնասիրված հարցերից է), ինչի շնորհիվ նաև հայկական գիտնուծը **Գարեգին Նժդեհի** գլխավորութամբ կարևոր և վճռորոշ հաղթանակ տարավ և դրանով իսկ ապահովագրեց ՀՀ տարածքային անձեռնմխելիութունը Հայաստանի ռազմավարական տեսանկյունից այդ կարևոր տարածքային սահմանահատվածում: Ինչպես պարզ է դառնում հայտնի հայ հետախույզ **Տ. Դեվոյանցի** հուշագրությունից, որը հաված յուզի տեղ չենք ընդունում, ասկայն անտեսել էլ չենք կարող, քանզի այն բացահայտորեն վկայում է հայկական հետախուզության օգտաշատ գործունեության մի չափազանց կարևոր փաստի՝ պատմադրվագի մասին, որն ըստ էության ուղղակիորեն և գործնական առումով որոշակիորեն նպաստել է **Գ. Նժդեհի (Գարեգին Եղիշի Տեր-Հարությունյան, 1. 01. 1886 - 21. 12. 1955 թթ.)** գլխավորությամբ խիզախող Հայոց գինուժին ջարդել և վտարել Ադրբեջանի ագրեսոր բանակին Ջանգեզուրից, ինչպես դա ժամանակին արել է անկոտրում հայրենասեր գիտնուծը Դավիթ Բեկի գլխավորությամբ: Այս կապակցությամբ **Տ. Դեվոյանցը** շատ հստակ պնդում է. «*Հայաստանի հետախուզական բաժանմունքը 200,000 ըուբլիով կաշառեց Նժդեհի դէմ գտնուող Ազրբէյջանի բանակի սպայակոյտի պետին, որը դասաւորեց իր զօրքերը, թնդանօթները եւ զնդացիրները մեր ուղած ձեռով եւ, երբ կռիւը սկսուեց, Նժդեհի ուժերը ջախջախեցին Ազրբէյջանեան շատ աւելի ուժեղ բանակը, գրաւեցին կամ ոչնչացրին թշնամու ուժեղ հրետանին եւ զնդացիրները:*

Ազրբէյջանի այդ շրջանի զօրքերի սպայակոյտի պետը ազգութեամբ վրացի էր:

Դրանից յետոյ էր, որ Գարեգին Նժդեհը դարձաւ սպարապետ...»³⁷⁸:

Որպեսզի տպավորություն չառաջանա, որ մենք մի կողմից պահանջում ենք քննադատական վերաբերմունք հուշագրական գրականության նկատմամբ, իսկ մյուս կողմից ինքներա ենք վկայակոչում միայն հենց այդ բնույթի աղբյուրները, վերոնշյալ վկայությունները հաստատելու համար դիմենք նաև արխիվային փաստերի օգնությանը: Արխիվային մի շարք կարևոր փաստաթղթեր օգնում են լույս սփռել ականհայտորեն անբավարար կամ ավելի ճիշտ բոլորովին չուսումնասիրված հիմնախնդիրների վրա, դրանով իսկ հաղթահարելով մի շարք քարացած կաղապարամտքեր, կաղապարացված եզրահանգումներ ու դատողություններ: Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը կից գլխավորական կցորդի, ասել է թե՛ հետախուզության գծով գործերի կոորդինատորի և ղեկավարի՝ գեներալ-մայոր **Հովսեփ Արտեմի Քիչմիշյանի** հետ կապված առաջին իսկ փաստաթղթերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հենց վերը ներկայացված հարցադրումների տեսանկյունից, չնայած իրենց մեջ պարունակած տեղեկատվության որոշ հակասականությունը: Հարկ է հաշվի առնել նաև

³⁷⁸ Տիգրան Գեղեցեցի, Կեսանքիս դրուագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1944, N° 6 (245), Նոյ.- Գեկտ., էջ 75:

այն հանգամանքը, որ չնայած հայկական հետախուզությունը դեռևս բավականաչափ երիտասարդ էր, անփորձ, ընդամին էլ առաջին քայլերն էր անում լուրջ ծառայություն դառնալու ճանապարհին, սակայն դա բարոյաքաղաքական առումով խոչընդոտ չհանդիսացավ նրա կողմից հայթայթվող տեղեկատվության օգտակարություն գործակցի տեսանկյունից: Ստորև բերվող փաստաթուղթը դրա լավագույն և անառարկելի ապացույցներից մեկն է, ինչը հաստատում է **Տ. Դեվոյանցի** վերոնշյալ պնդումը հայ հետախույզների արգասաբեր գործունեություն մի հերավի շատ հետաքրքիր պատմաէջի մասին, փաստելով նաև այն մասին, որ նրա գործունեությունն ամենեևս էլ այնքան դժգույն չի եղել, ինչպես այդ մասին «փորձում են վկայել» որոշ ակադեմիկոսներ և ժամանակակից հեղինակներ: Այսպես, Թիֆլիսում Հայաստանի հատուկ ծառայության ղեկավարը՝ **Հ. Քիչմիշյանը**, 1920թ. հունվարի 17-ի իր գեկուցագրում (№ 33) ուղղված ՀՀ Զինվորական նախարարին, տեղեկացնում էր, որ լիովին վստահություն արժանի անձը՝ **Բողզան Դավիդովիչ Ավան-Յուզբաշի Խան Սազնախսկին** (որին Թիֆլիսում Հայաստանի գինվորական ներկայացուցչության շրջանում համարում էին իրենց հավատարիմ մարդ) իր կողմից ղեկավարվող վարչության հանձնարարությունամբ համաձայնություն գալով Զանգեզուրում գործելու «իրավունք» ստացած աղբբեջանական գորբբերի ջոկատի շտաբի պետ փոխգնդապետ իշխան **Էրիստովի** հետ, վերջինից խոստում է ստացել 200-300 հազար ռուբլու դիմաց իրենց տրամադրել աղբբեջանական բանակի շիֆրը (ծածկագիրը, գաղտնագիրը), ողջ գաղտնի գրադրությունը, աղբբեջանական գորբբերի դիսկոկացիան (տեղաբաշխումը) և Զանգեզուրի վրա ենթադրվող հարձակման պլանը, պարտավորվելով նաև մարտական հրամանը կազմել իրենց համար ցանկակի իմաստով և մշակել օպերացիայի ողջ պլանը՝ համաձայն հայկական կողմի ցուցումների, միաժամանակ պահպանելով մշտական կապ, տեղյակ պահելով Աղբբեջանի բոլոր ռազմական գործողությունների մասին: Ինչպես տեսնում ենք, շատ հետաքրքիր տեղեկատվություն է, որն անշուշտ, միանշանակ չի կարելի ընդունել, չի կարելի անտեսել նաև աղբբեջանական հետախուզության նմանատիպ մտադրությունները և նախապատրաստվող ձեռնարկումները, չնայած գեներալ Քիչմիշյանը տեղեկատվության մեջ վստահորեն ավելացնում էր, որ Խան Սազնախսկին իրենց վստահեցրել էր հաղորդած տեղեկությունների հավաստիության մեջ, ավելացնելով, որ այն տեղ կհասցվի փոխգնդապետ Էրիստովի միջոցով, ընդ որում դրամը կվճարվի միայն վերոհիշյալ փաստաթղթերի ստուգումից հետո: Ըստ երևույթին, գրեթե լիովին համոզվածություն արտահայտելով, որ աղբբեջանական այս սպաներն արդեն լիովին կարելի է կաշառված կամ իրենց կողմը գրաված համարել, գեներալ Քիչմիշյանը այս խիստ հետաքրքիր գեկուցագրում նաև նշում էր, որ իր կարծիքով անհրաժեշտ է անհապաղ Թիֆլիս գործողել կապիտան **Վ. Գ. Մուրադյանին** դրամի հետ միասին, որպեսզի վերջինս անմի-

Չական հարաբերության մեջ մտնի հիշյալ փոխզնդապետ էրիտոլի հետ բուր Վանգամանքների մանրագնին պարզաբանման համար: Քիչմիշյանը հայտնում էր, որ կապիտան Մուրադյանի գործողման նախօրյակին անհրաժեշտ է հարցում անել գորքերի շտաբի պետին այն հարցերի մասին, որոնք անհրաժեշտ է տեղյակ պահել փոխզնդապետ էրիտոլին՝ 1) գորքերի թվաքանակի, 2) դրանց խմբավորումների, 3) ռազմական գործողությունների ռեզուլտիտյունների, 4) օժանդակ օպերացիաների մասին: Այս հետաքրքիր զեկուցագրի վերջնամասում զեներալ Քիչմիշյանը հայտնում էր, որ կապիտան Մուրադյանը պետք է տեղեկացվի իր աշխատանքի համար անհրաժեշտ մանրամասն և սպառիչ հրահանգով, որի մեջ և կմտնի բոլոր տեղեկությունների ստուգումը: Բացի այդ, Քիչմիշյանը տեղեկացնում էր, որ բանավոր զեկույցի համար այդ նպատակով իր կողմից Երևան է գործողվել Թիֆլիսի հետախուզական ցանցի լավագույն աշխատակիցներից մեկը՝ **պորուչիկ Եղիազարովը**: Փատաթղթի վրա կա նաև համապատասխան գրառում (N^o 34) Զինվորական նախարարի անունով այն մասին, որ 200-300 հազար ռուբլով կարելի է ձեռք բերել շիֆրը, և ադրբեջանական գորքերի տեղաբաշխման ողջ գաղտնի գրազրույթյունը³⁷⁹: Վերջին հաշվով, այստեղ կարևորն այն է, որ չնայած կարելի է մտածել, որ հայկական հետախուզությունը միամտություն ուներ հավատալու ադրբեջանական բանակի սպաներին նման կարևոր հարցերում, այնուամենայնիվ, հարկ է հատուկ արձանագրել, որ հայ հետախույզները այս պարագայում պարզապես հաշող գործեցին և ձեռք բերեցին կարևորագույն տեղեկատվություն, որ կարող էր ծառայել Հայաստանի անվտանգության և պաշտպանունակության ապահովման հարցերին [նման օրինակների կարելի է հանդիպել նաև այլ երկրների պրակտիկայում], դեմելով անգամ կաշառքի և կարևոր տեղեկատվություն ձեռք բերելու այլ միջոցների ու եղանակների՝ գործնականում ծառայեց **Ք. Նժդեհի** կողմից գլխավորվող գորամասերի Ադրբեջանի դեմ տարած վճռորոշ հաղթանակին: Հարկ է կրկին հավաստել, վկայակոչելով **Տ. Դեվոյանցին**, որ երբ Ադրբեջանը խոշոր քանակությամբ գորքեր էր կենտրոնացնում Զանգեզուրի դեմ, ի դեմս հայկական հետախուզական ծառայության, չէ կառավարությունը կարողացավ ձեռք բերել ռազմավարական մեծ արժեք ներկայացնող տեղեկատվություն, ինչն օգնեց հակառակորդի հետ ռազմաքաղաքական հակամարտությունում հասնել ծանրակշիռ արդյունքների: Այդ մասին **Տ. Դեվոյանցը** ռեզուլտի շեշտում է հետևյալը. «*Հայաստանի կառավարութիւնը կարողացաւ կաշառել Ատերբեյճանի գորքերի սպայակոյտի պետին, որ մի վրացի զնդապետ էր: Վերջինս ոչ միայն տուեց մեզ Ատերբեյճանի գորքերի դասաւորութիւնը, այլև դասաւորեց թաթարական գորամասերը այնպիսի ձեւով, որ մեր բանակը շատ հեշտութեամբ ջարդեց նրանց եւ գրաւեց նրանց թնդանօթնե-*

³⁷⁹ ՀԱՍ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 184, ք. 3-4:

ըր, գնդացիները եւ բաւական ռազմամթերք»³⁸⁰: Կարծում ենք, լրացուցիչ և հավելյալ բնույթի մեկաբանութիւններն այստեղ ավելորդ են և անտեղի:

Այն, որ Հայաստանի Առաջին Հանրապետութեան հատուկ ծառայութիւնները իրենց ընձեռնված հնարավորութիւնների և առկա ուժերի, կազմակերպչին ռեսուրսների պայմաններում հնարավորինս ձգտել են աշխատել, ձգտել են լավագույն կողմերից դրսևորվել, դա երևում է մի շարք այլ փաստաթղթերի փաթեթի մանրագնին ուսումնասիրութիւնից: Այլ բան է, որ նրանք ի վիճակի չեղան քիչ թե շատ շոշափելի առավելութեան հասնել, հենց թեկուզ թուրքական հատուկ ծառայութիւնների (մասնավորապէս հակահետախուզութեան դեմ) դեմ պայքարում, որոնք իրենց ավելի վստահ ու ապահով էին զգում, և որոշ իրավիճակներում ավելի նախաձեռնող ու համարձակ էին: Մի կողմից՝ հզոր աշխարհակալ կայսրութեան դարավոր փորձը (թեկուզև ասիական տարբերակի, վայրագ ու նենգ), կազմերի ու ռեսուրսների առկայութիւնը, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի նոր կազմավորվող պետութեան դերում գտնվելը, կազմակերպչին սովոր, որը նա զգում էր, եղածն էլ անչափ երիտասարդ, չթրծված և օպերատիվ աշխատանքի մեծ փորձ չունեցող: Այդ ծառայութիւնների կայացման վրա բացասաբար էր ազդում նաև կտրվածութիւնը Ռուսաստանից, նրա ուսումնական ու ռազմաօժանդակ կառուցյաներից, աշխարհաքաղաքական մեկուսացվածութիւնը, ինչպէս նաև իշխող արևմտամետ տրամադրութիւնները, որոնք հետո բումբերանգի նման հարվածեցին՝ մերկացնելով թիկունքը: Եվ այնուամենայնիվ, գոյութիւն ունեցող հայկական հատուկ ծառայութիւնները ստեղծված իրավիճակում էլ փորձում էին կանխել թշնամու գործակալներին, հայրենիքի համար ծայրահեղ լարված պահերին գորավիզ լինել հանրապետութեան անվտանգութեանը (Բոյուք-Վեդի և Զանգիբասար, 1918 թ. դեկտեմբերյան հայ-վրացական պատերազմ Լոռու և հարակից շրջանների համար և այլն):

Հայաստանի Առաջին Հանրապետութեան հետախուզական ծառայութեան պատմութեան քիչ թե շատ լիարժեք և ամբողջական բացահայտման տեսանկյունից կարևոր է նշել հայկական հետախուզական ծառայութեան գործունեութեան մի կարևոր էջի մասին՝ կապված Ադրբեջանի հատուկ ծառայութիւնների մեքենայութիւնների հետ հենց Երևանում ի դեմս նրանց գործունեութեան կենտրոնատեղի հանդիսացող Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչութեան և գործակալական ցանցի, որի մասին բազմանշանակ նկատում է Ա. Խատիսյանը. «ՀՀ կառավարութիւնը ամէն օր կը ստանար իր խուզարկու մարմիններու միջոցով տեղեկութիւններ այս կամ այն շրջանի մէջ տեղի ունեցող պատրաստութիւններու մասին»³⁸¹, ինչն ինքնին հենց ժխտում են Վ. Արծրունու և այլոց կողմից բեր-

³⁸⁰ Տիգրան Դեյնեանց, Կեանքիս դրուագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1945, N⁰ 4 (249), Յուլիս-Օգոստոս, էջ 83:

³⁸¹ Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 205:

ված այն փաստերը, համաձայն որոնց իբր թե Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին գործած «Հայկական հետախուզությունն իր ավանդական ապիկարությունը ցույց կտար նաև հայ-ազրբեջանական ճակատի վրա»: Գործնականում այդպես չէր. և արդեն 1919թ. հուլիսի 31-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ա. Խատիսյանը Բոյուք-Վեդիի դեպքերի կապակցությամբ Վճռական բողոք է ներկայացնում Ազրբեջանի կառավարությանը նրա կողմից ծավալած դավադրական բնույթի լրտեսական-հետախուզական քայքայիչ գործունեության առնչությամբ, ընդգծելով իր լավ տեղեկացվածությունն մասին. «Հայաստանի կառավարությունը ունի ճշուտ, անհերքելի փաստաթղթերի վրայ հիմնված տեղեկանք ոչ միայն Բէյլիք Վեդիցիների գինման և դրսից դրամական օժանդակություն ստանալու մասին, այլ նաև այն մասին, որ բոլոր յետագայ ապստամբական բռնկումները մի կազմակերպության գործ են, որ հետապնդում է մի նպատակ՝ արհեստական կերպով գրգռել մահմեդական ազգաբնակչությունը Հայաստանի կառավարության դեմ և բռնի կերպով փաթաթել այդ գրգռումը մահմեդական ազգաբնակչության վզին, դրսից եկած բազմաթիվ գործակալների միջոցով, առանց որոնց մահմեդական ազգաբնակչությունը Հայաստանի յիշեալ գաւառներում մինչև այժմ էլ կը շարունակէր ապրել խաղաղ կուլտուրական կեանքով, ինչպէս որ այդ տեղի ունի Հայաստանի միւս վայրերում: Այս սպառող բացատրություններից յետոյ ըստ հարցի էություն, Հայաստանի կառավարությունը անհրաժեշտ է գտնում, հիմնված հաստատ տեղեկանքի վրա ցաւ ի սիրտ յայտարարել, որ իր գործողություններով Պ. Թեքինսկին անձամբ, նպաստել է Հայաստանի Հանրապետության և երկրի անդորրության դէմ ուղղված շարժումներին»³⁸²: Հենց այդ մասին շատ հստակ փաստում է Տ. Գեվոյանցը իր նշանավոր «Կեանքիս դրուագներից» հուշաշարքում. «Երեւանի մէջ Ազրբեյջանը շատ լաւ լրտեսակ ան ցանց ունէր կազմակերպւած»³⁸³: Այնուհետև նա, մի այլ կապակցությամբ ավելացնում էր հետևյալը. «Երեւանում գտնուող Ատերբեյջանի դիւանագիտական միսիան ոչ միայն անսովոր արագութեամբ յայտնում էր թիֆլիս եւ Բագու Հայաստանի գօրքերի դասաւորութեան եւ գօրքերի ու ռազմամթերքի փոխադրութեանց մասին, այլեւ իր ձեռքի տակ ունեցած էր Հայաստանի գաղտնի հրամանագրերն ու հրահանգները:

Հայաստանը իր Խորհրդարանի մէջ տեղ էր տուել ե՛ւ մահմեդականներին, որոնց պատգամաւորների ընտրութեան համար Ատերբեյջանի կառավարությունը բաց էր թողել 40,000 բուբլի: Նրանց բազմաթիւ լրտեսները ամէն օր անարգել կերպով Երեւանի թաթարական թաղի ետեւի կողմից անցնում էին Թոխմախեան Գեօլը եւ նրա մոտից գնում Շարուր-Նախիջևեան, Բէ-

³⁸² Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», Երևան, 19 օգոստոսի, 1919, N 123:

³⁸³ Տիգրան Գեղեցեանց, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N° 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 88:

յուկ[ք] Վէդի, Զանգիբասար՝ Երեւանից փոխադրելով այնտեղ ռազմամթերք, հրահանգներ, լուրեր, ուտեստեղեն: Դրանք գնում էին զինուած ամէն տեսակի վկայականներով, տրուած ոստիկանութեան, Հայաստանի խորհրդարանի այս կամ այն անդամի կամ նախարարի կողմից»³⁸⁴: Միաժամանակ, **Տիգրան Դեվոյանցը** ի պատիվ հայկական հետախուզական ծառայութեան կողմից ծավալած գործունեութեան և ձեռնարկած հավամիջոցների, ընդգծում է հետևյալը. «Բարեբախտաբար, Հայաստանի կառավարութիւնը օրը օրին այս հեռագրերի միջոցով իրագեկ էր պահուած թշնամու ծրագրերներին եւ ըստ այնմ միջոցների դիմում: Եթէ Ատերբէյճանի դիւանագիտական ներկայացուցիչը չէզոք գօտիի վրայ չթալանուէր «աւազակների» կողմից, Թիֆլիսի վրայով Բագուից ուղարկուած գումարով միայն Ծարուր Նախիջևանի շրջանի թաթարական բանակի թիւը պետք է հասնէր 10,000-ի. նոյն համեմատութեամբ պէտք է աւելանար կռուող թաթարների թիւը Բէյյուկ-Վիդիի, Զանգիբասարի եւ այլ շրջանների մէջ, եւ ամբողջ Հայաստանի հայութիւնը պիտի գտնուէր բնաջնջման սպառնալիքի տակ»³⁸⁵: Այս տեսակետն է պաշտպանում նաև **Ս. Վրացյանը**. «Խան-Թեքինսկիի Երևան հասնելու առաջին իսկ օրից Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ծանոթ էր նրա ծածկագրին. Խան-Թեքինսկիի ուղարկած և ստացած բոլոր հեռագրերը, նախքան իրեն հասնելը, հայտնի էին դառնում Հայաստանի կառավարութեանը: 1920 թ. մայիսին, Ազրբէջանի խորհրդայնացումից հետո, այդ հեռագրերը հրատարակեցին առանձին գրքուկով՝ «*Գաղտնի փաստաթղթեր*» (Ազրբէջանի դավադրական գործունեութեան մի էջ), 1920 թ., Երևան, հրատ. «Ռազմիկի»³⁸⁶: Մեկ այլ տեղ **Ս. Վրացյանը** ավելացնում է. «Անկախութիւնների հենց առաջին օրերից, Ազրբէջանը հանգիստ չթողեց Հայաստանը: Թուրքերի աջակցութեամբ, ազրբէջանցիները աշխատում էին գրգռել Հայաստանի թուրք-թաթարական բնակչութիւնը Հայկական իշխանութեան դէմ: Ազրբէջանեան դէսպան՝ *Խան Թեքինսկին* գլխաւոր դերակատարն էր այդ գործում: Երկրի զանազան կողմերում նա պահում էր գործակալներ, առատ դրամ էր ստանում Բագուից եւ գաղտնի տեղեկութիւններ էր հաղորդում իր կառավարութեան: Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեայ **Եակոբեանը** (**Պ. Յակոբյան - Վ. Վ.**), չուտով բացեց շիֆրը, որով Խան-Թեքինսկին հեռագրերն էր փոխանակում իր կառա-

³⁸⁴ Նույն տեղում, 1945, N° 4 (249), Յուլիս-Օգոստոս, էջ 81:

³⁸⁵ Նույն տեղում:

³⁸⁶ **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 310: **Ռուբին**, Հայ հեղափոխականի մը յիշատակները, Է. հատոր, Գ. հրատ., էջ 193: Ս. Վրացեան, Կեսանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ, Ե. հատոր. - Պէյրոս, 1966, էջ 102. Հարկ է ավելացնել, որ այս խնդրում կարևոր մասնակցություն է ունեցել Տ. Դեվոյանցը, որին առաջինն է հաջողվել բացահայտել դրանց բանալին, գաղտնագրերով դրամք և կամ խարգելել քայքայիչ ձեռնարկումները Հայաստանի, նրա իշխանությունների դէմ. - **Տիգրան Կեոյեանց**, Կեսանքիս դրուագներից// «Հայրենիք» (Բնոստոն), 1945, N° 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 87:

վարութեան հետ»³⁸⁷: Այդ մասին է գրում նաև Աբր. Գյուլիսանդանյանը. «Թէեւ արտաքննապես պահվում էին բարեկամական յարաբերութիւններ եւ այդ երկու երկիրները միմեանց մօտ ներկայացուցիչներ ունէին, սակայն Ադրբէջանի կառավարութիւնը ամէն ճիգ էր գործադրում, որպէսզի Հայաստանի մէջ եղած մահամետական տարրերը չենթարկուեն հայկական կառավարութեան: Եւ այդ նպատակով Ադրբէջանը աշակցում էր նրանց գէնքով, գինուորական ղեկավարներով, մանաւանդ դրամով: Այդ մասին հստակ հաստատագրում է նաև Ռ. Հովհաննիսյանը, նշելով դրանում հայկական հետախուզութեան քաջատեղյակութեան մասին. «Հայկական հետախուզական ծառայութիւնը շուտով սովորեց վերծանել ճեպագրերը և կառավարութեան ու սպայակույտի պետին մատուցեց գաղտնազերծված տեքստերը»³⁸⁸:

Հայաստանի Հանրապետութիւնում նստած Ադրբէջանի ներկայացուցիչը, օգտուելով իր դիրքից, ծածկագիր հեռագիրներով անդադար հաղորդում էր իր կառավարութեան իր կատարած աշխատանքների մասին եւ հրահանգներ էր ստանում...

Հայաստանի կառավարութիւնը, որը առաջին օրուանից տեղեակ էր այդ բոլոր հեռագիրների բովանդակութեան, ստիպուած եղավ վերջի վերջոյ փաստացիօրեն մերկացնելու այդ ինքնատիպ պետական դեսպանի իրական պատկերը եվ պահանջելու, որ Ադրբէջանի կառավարութիւնը յետ կանչի նրան: Ու թէեւ այդ ներկայացուցիչը փոխարինուեց մի ուրիշով, սակայն նա եւս շարունակեց իր նախորդի սկսած գործը»³⁸⁹:

Ադրբէջանի ներկայացուցիչը Երևանում՝ Մամեդ Խան-Թեքիսկին, անդադրում աշխատում էր արգելել Հայաստանին միացնելու Շարուրը և Նախիջևանը, և սկսած իր ժամանման օրից նա ծածկագրված հաղորդագրութիւններին միջոցով իր կառավարութեանը իրազեկ էր պահում հարավային և այլ շրջաններում տիրող ռազմաքաղաքական իրավիճակին: Եվ այդ նպատակների իրագործման համար Խան-Թեքիսկին Ադրբէջանի կառավարութիւնից անընդհատ խոշոր գումարներ էր պահանջում՝ միաժամանակ պահանջելով ուժ գործադրել չէ կառավարութեան վրա³⁹⁰:

³⁸⁷ Մ. Վրացեան, Կյանքի ուղիներով, Ե. հատոր, էջ 102: Հարկ է այս կապակցությամբ հատուկ նշել, որ այս կապակցությամբ հայտնի հետախույզ Տիգրան Գեվոյանցը հայտնու է, որ ինքն է գաղտնագրածել բոլոր հայտնի 75 գաղտնագիր-հեռագրերը, որոնք չէ Արտաքին Գործերի նախարարությունն ապօրինաբար իրեն է վերագրել. - Տ. Դեռյանց, Կեանքիս դրոսագներից// «Հայրենիք» (Բոստոն), 1945, N° 2 (247), Մարտ - Ապրիլ, էջ 87-90, 1945, N 4 (249), Հուլիս-Օգոստոս, էջ 82-83:

³⁸⁸ ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 299, ք. 9, քիվ 150: Ֆ.Պ - 206, ց. 1, գ. 84, ք. 27, Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ., էջ 110:

³⁸⁸ Ռ. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, էջ 213:

³⁸⁹ Ա. Գիլիանդանեան, Անդրկովկասի Հանրապետությունները, «Հայրենիք» (Բոստոն), 1967, N° 4, էջ 76:

³⁹⁰ Ռ. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին տարին, 1918-1919, էջ 263-264:

Հետևաբար, միանգամայն օրինաչափ է, որ այդ տարիներին հայկական հատուկ ծառայությունները ոչ միայն որոշակի հետաքրքրություն, այլև վերահսկողություն ունեին նաև Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեության նկատմամբ (այն բացվել էր 1919 թ. մարտին և դարձել հակահայկական գործողությունների մշակման և ուղղորդման լրտեսական-հետախուզական կենտրոնատեղի, որում կենտրոնացած լրտեսական ուժերը տեղեկություններ էին հավաքում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, զորաշարժերի մասին, քաղաքական դիտարկումներ կատարում, տվյալներ հավաքում ՀՀ Ֆինանսական հնարավորությունների վերաբերյալ և հրահանգներ ու խորհրդատվություն տալիս սեփական կառավարությանը, թե ինչպես և ինչ ձևով է հնարավոր Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգությունը վնաս հասցնել), և այդ առումով վերջիններիս կողմից Բաքու ուղարկված մի շարք ծածկագրված հեռագրերի գաղտնագրածումը հնարավորություն է տվել բացահայտել թշնամական գործունեության որոշ կարևոր կողմեր: Եվ դեռ ավելին, հակառակորդի նպատակների մեջ մտնում էր երկրի ներսի թշնամական ու ապստամբ տարրերին դրամական-ֆինանսական ու ռազմական աջակցություն ցույց տալը, ինչպես նաև պետաքաղաքական շինարարության տարբեր հիմնախնդիրների իրագործման ձախողումը: Որպեսզի պարզորոշվի, թե Ադրբեջանը ինչ քայքայիչ-վնասարարական, լրտեսական-հետախուզիչ հետևողական աշխատանք է ծավալել Հայաստանի Հանրապետության դեմ ի դեմս Երևանում իր դիվանագիտական ներկայացուցիչների, բերենք մի շարք փաստական տվյալներ, գաղտնի գրագրություններից վկայակոչումներ: Այդ մասին է առաջին գաղտնի ծածկագրի հեռագիրը, որը Երևան ոտք դնելուց անմիջապես հետո Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկին 1919 թ. մարտի 22-ին ուղարկեց Բաքու: Դրանում ասվում էր. «Մարտի 14-ին Հայաստանը Թիֆլիսից ստացաւ 14 միլիոն բօն, բայց եթէ ֆինանսական տեսակէտից դժարութիւններ յարուցանեք, շուտով ծանր դրութեան մէջ կընկնի: Եկամտների բացակայութեան պատճառով, Հայաստանը չի կարող ինքնուրոյն կեանք վարել»³⁹¹:

1919 թ. ապրիլի 10-ին, Երևան ժամանելուց մի քանի օր հետո, Խան-Թեքինսկին ճեպագրով տեղեկացնում էր Ադրբեջանի կառավարության նախագահին և Արտաքին Գործերի նախարարին. «Հայաստանը ունի 6 հետևակ գունդ, յուրաքանչյուրը բաղկացած 3 գումարտակից, բացի այդ, կազմավորվում է Ղարաբաղյան 6 գումարտակ և Երևանյան մի գումարտակ: Կազմավորվում են խմբապետական գործասեր: Ամբողջ հետևակը 10 հազարից չի անցնում: Գնդերը համալրելու համար հայտարարվել է զորակոչ: Հեծելազոր-

³⁹¹ Գաղտնի փաստաթղթերը. Աղբյուրների դասադրական գործունեությունից մի էջ, էջ 18:

ըը բաղկացած է 3 դիվիզիոններից՝ յուրաքանչյուրում 3 էսկադրոն: Ձիերով ապահովված է միայն մեկ էսկադրոն: Կա 2 դաշտային, 5 լեռնային և 1 հեծյալ մարտկոց, 3 զրահագնացք, որը զբաղվել են վրացիներից»³⁹²: Հատուկ ուշադրություն դարձնելով Նախիջևանի շրջանի իրադարձություններին ու դեպքերին՝ Խան-Թեքինսկին ապրիլի 18-ին իր կառավարությունը տեղեկացնում էր Զոդ-Բասարգեչարի շրջանում մահմեդականների ցուցաբերած դիմադրություն, հայկական զորամասերի հետ սկսած մարտերի մասին³⁹³: Ապրիլի 29-ին Խան-Թեքինսկին ցանկանում էր պարզել, թե ինչպիսի օգնություն ցույց կտա կառավարությունը Նախիջևանի մահմեդականներին՝ հայկական զորքերի այնտեղ մտնելու ժամանակ դիմադրություն ցույց տալու դեպքում. «Կուղարկի՞ արդյոք զորք, թեկուզ կամավորների անվան տակ»: ³⁹⁴ Խան-Թեքինսկու հակահայկական դավերի ու սաղորանքների մասին Ս. Վրացյանը վկայում է. «Ապրիլի 30-ին, հետևեց մեծ գումարներով, Երևան են հասնում Ազրբեջանի գործակալներ Նախիջևանսկին և Մակինսկին՝ Նախիջևան հասնելու համար... սկսվեց ազրբեջանյան գործակալների դավերի մի նոր շրջան»³⁹⁵: Այդ մասին անմիջական վկայություն կա հենց Ազրբեջանի նախարարապետին ուղղված Երևանում այդ երկրի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկու 1919 թ. մայիսի 1-ի հեռագրում, որում ասվում էր. «Ապրիլի 30-ին ժամանեցին Մակինսկին (Գանիզադե) և Նախիջևանսկին: Տօմսօնը Երևանում արգելեց Մակինսկուն անցնել Նախիջևան, այն պատճառաբանությամբ, թէ այդ շրջանը գտնվում է Հայաստանի կառավարության վարչությունների ներքոյ: Մակինսկին դրամները յանձնեց ինձ. սպասում եմ ցուցմունքների, թէ ինչպես գործադրեմ Նախիջևանին յատկացած գումարները. Նախիջևանսկին հարկաբերած է վերադառնալ: Անբլիտցիները Մակինսկու վազօնը վերցրին»³⁹⁶: 1919 թ. մայիսի 4-ին, խնդրելով շտապ պատասխանել ապրիլի 29-ի իր հեռագրին, Խան-Թեքինսկին ավելացնում էր. «Ինձ նախիջևանցիները հարցնում են. ինչպես վարվել կգա՞ արդյոք նրանց օգնության Ազրբեջանը, եթե նախիջևանցիները հայերին ցույց տան դիմադրություն»³⁹⁷: Նույն օրվա մեկ այլ հեռագրում Խան-Թեքինսկին հայտնում էր Ազրբեջանի կառավարությանը. «Դեպի Նախիջևան շարժվեցին հայկական զինվորը. որպեսզի գործադրվի ճնշում Հայաստանի վրա, անհրաժեշտ եմ համարում մեր զինվորը անհապաղ կենտրոնացնել Հայաստանի սահմանների վրա: Նախիջևանի շրջանի բնակչությունը պատրաստ է ցույց տալ դիմադրություն: Դիլիջանում կանգնած է հայկական 4-

³⁹² ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց. 1, գ. 299, ք. 3, թիվ 41:

³⁹³ Նույն տեղում, ք. 4, թիվ 60:

³⁹⁴ Նույն տեղում, թիվ 72:

³⁹⁵ Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 311, 312:

³⁹⁶ Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեջանի դատադրական գործունեությունից մի էջ, էջ 21:

³⁹⁷ ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց. 1, գ. 299, ք. 5, թիվ 83:

րդ գունդը ոչ լրիվ կազմով: Ծարունակվում է հայկական զորքերի կուտակումը Դավաղուում, Սադարակ գյուղի մոտ՝ Գայլի Դուռքի շրջանում, կանգնած են մուսուլմանները»³⁹⁸: Խան-Թեքինսկին Ազրբեջանի կառավարությունից պահանջում էր դիվանագիտական ներկայացուցչությունը տրամադրել մեծ քանակությամբ դրամ՝ զինված ուժեր կազմակերպելու, Հայաստանի դեմ այն օգտագործելու համար: «Շնորհիվ իմ ձեռնարկած միջոցառումների, Ծարուրը, Նախիջևանը, Օրդուբադը միավորվել են ի դեմս Նախիջևանի (մուսուլմանական) Ազգային խորհրդի, որը ինձ հետ մշտապես պահպանում է կապ»³⁹⁹, - տեղեկացնում էր Խան-Թեքինսկին: Ահա և Արտաքին Գործերի նախարար Ջաֆարովի պատասխանը վերջին՝ թիվ 130 հեռագրին. «Հավանություն եմ տալիս Ծարուր-Նախիջևանի հետ կապի ստեղծման միջոցառումներին. համաձայն եմ բաց թողնել Ֆինանսական միջոցներ՝ զինվորական կազմակերպությունների համար: Հայտնեցեք նշված պլանի իրականացման և կազմակերպման ձևերը»⁴⁰⁰: Արտաքին Գործերի նախարար Ջաֆարովը 1919 թ. հուլիսի 24-ի հեռագրով Խան-Թեքինսկուն տեղեկացնում էր նաև Ազրբեջանի կառավարության պաշտպանության կոմիտեի որոշման մասին՝ Հայաստանին նավթ տալը մերժելու վերաբերյալ. «Այդ մասին հայտնում եմ Ձեզ, հայերին չասե՛ք»⁴⁰¹:

Հայաստանի Հանրապետությունում մուսավաթական Ազրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին, օգտվելով դիվանագետի անձեռնմխելիության քողածածկույթից, փաստորեն զբաղվում էր բացահայտ լրտեսություն արժեքավոր տեղեկություններ հաղորդում շատ հարցերի վերաբերյալ, այդ թվում հայկական բանակի կառուցվածքի և զինված ուժի մասին: Խան-Թեքինսկին Բաքու՝ նախարարապետին ուղարկած 1919 թ. մայիսի 10-ի թիվ 94 գաղտնի հեռագրում գրում է. «Բուլչևիկների կողմից Բաքվին վտանգ սպառնալը պատճառ բերեցեք և խնդրեցեք անգլիացիներին, որ Կարսի թնդանոթները փոխադրեն Բաքու»⁴⁰², ինչը հետագայում ձեռք է բերում Ազրբեջանը, որի մասին էլ տեղեկանում ենք ՀՀ նախարարների խորհրդի նախագահ Ալ. Խատիսյանի՝ 1920 թ. ապրիլի 14-ի նամակից՝ ուղղված Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության զինվորական ներկայացուցիչ գնդապետ Մ. Զինկևիչին, որի մասին մենք ունենք անդրադարձ: Այս և նման 75 այլ գաղտնի ու ծածկագրված հեռագրեր ժամանակին հետախուզություն ջանքերով անցել է ՀՀ Արտաքին Գործերի նախարարության ձեռքը, որը դրանք հրատարակել է:

³⁹⁸ Նույն տեղում, թիվ 82:

³⁹⁹ Նույն տեղում, ք. 8-9, թիվ 129, 130, 151:

⁴⁰⁰ Նույն տեղում, ք. 9, թիվ 1599:

⁴⁰¹ Նույն տեղում, ք. 13, թիվ 54:

⁴⁰² Տե՛ս **Կ. Հարությունյան**, Հայկական ազգային գործադիրությունները 1918-1945 թթ., էջ

Մի քանի օրինակ ևս. այսպես, ի պատասխան Արտաքին Գործերի նախարարի 1919 թ. Հունիսի 5-ի թիվ 1599 հեռագրի, Խան-Թեքինսկին հայտնում էր, որ Շարուր-Նախիջևանի շրջանը ունի կիսականոնավոր զորք՝ մինչև 6000 զինվոր, հեծելազորով, թնդանոթով, գնդացիներով, «մարտական հատկանիշներով նրանք հայերին չեն զիջում», պատերազմական գործողությունների ժամանակ կարող են հասցնել մինչև 10.000-ի: «Կարծում եմ, հայտնում էր Խան-Թեքինսկին, մենք պետք է ծախսեր անենք 6000 զինվորի համար, հին հրամանատարական կազմով, զորքը տեղաբաշխել այն տեղերում, որտեղ գտնվել են մինչև հայերի գալը, մեկ զորամաս կենտրոնացնել Զանգեզուրի լեռներում: Դրամի ճիշտ ծախսումը լրիվ երաշխավորել դժվար է, գործի կարևորությունը ստիպում է հաշտվել նույնիսկ ոչ մեծ չարաչահումների հետ»⁴⁰³: Ադրբեջանի կառավարության պահանջին՝ շտապ հայտնել Նախիջևանի, Շարուրի, Վեդիբասարի, Գողթնի, Օրդուբադի, Զուլֆայի վիճակի մասին, Հունիսի 26-ին Խան-Թեքինսկին գեկուցում էր. «Նախիջևանի, Շարուրի, Վեդիբասարի, Շահթախթի շրջանները գրավված են հայկական զորքերի կողմից, հաստատված է հայկական վարչություն: Զուլֆան հայերի ձեռքին է, մոսուլմանական զորքերը ցրված են: Կա ընդամենը 300 չեթնիկ»⁴⁰⁴: «Բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար» Հայաստան ժամանած Ադրբեջանի դիվանագիտական հավատարմատարը, ծավալելով րոտեսական-հետախուզական ակտիվ և սադրիչ գործունեություն, 1919 թ. Հունիսի 22-ին խիստ թշնամաբար տրամադրված գրում է. «Ադրբեջանը բացի Հայաստանից, կարծում եմ, այժմ չունի այլ թշնամի, Հայաստանի վրա պետք է դարձնել հատուկ ուշադրություն. քուրդ Սմկոյին հարկավոր է գրավել մեր կողմը»⁴⁰⁵: 1919 թ. Հուլիսի 16-ին նրա կողմից Թիֆլիսում Ադրբեջանի զինվորական կցորդ գնդապետ Մահմեդ բեկ Ալիևին ուղարկած գաղտնագրված հեռագրում հայտնվում էր. «Հայաստանն ունի 3 հետևակ բրիգադ՝ յուրաքանչյուրը բաղկացած 2 գնդից: Գունդն ունի 3 հետևակ գումարտակ: Երեք ձիավոր գունդ՝ յուրաքանչյուրը բաղկացած 6 էսկադրոնից, բայց բոլոր էսկադրոնների կազմակերպումը դեռ չի վերջացել. 12 մարտկոց՝ յուրաքանչյուրը 4 թնդանոթով: Բացի դրանից, կա մեկ Ղարաբաղի շոկատ՝ բաղկացած մեկ հետևակ գումարտակից, 3 էսկադրոնից և 4 թնդանոթից: Կարծում մոտավոր հաշվով կա 500-ից ավելի թնդանոթ՝ 8 դյուլմանոցից մինչև դաշտային, որոնց վրա սպաներ և ծառայողներ կան: Երեք զրահապատ գնացք: Ներկայումս ուժեղ զորահավաք կա: Կարծում եմ, որ միայն զորահավաքով կարող են լրացվել մատնանշված գնդերի քանակը,

⁴⁰³ ՀԱՍ, Ֆ.Պ-200, ց. 1, գ. 299, ք. 9, թիվ 150, Ֆ.Պ-206, ց. 1, գ. 84, ք. 27, **Հայաստանի Հանրապետությունը 1918 -1920 թթ.** (քաղաքական պատմություն), էջ 110:

⁴⁰⁴ Նույն տեղում, Ֆ.Պ-200, ց. 1, գ. 299, ք. 10, թիվ 184, 1695; Ֆ.Պ-206, ց. 1, գ. 84, ք. 28, **Հայաստանի Հանրապետությունը 1918 -1920 թթ.** (քաղաքական պատմություն), էջ 114:

⁴⁰⁵ ՀԱՍ, Ֆ.Պ-200, ց. 1, գ. 10, թիվ 202:

որովհետև դասալքուժյուն շատ կա: Խնդրում եմ այս ամենը հաղորդեք Զինվորական նախարարին»⁴⁰⁶: Երկու օր անց, հուլիսի 19-ին նույն հասցեատիրոջը ուղղված մի այլ հեռագրով Հայաստանի Հանրապետության դեմ լրտեսական գործունեությունը զբաղվող ադրբեջանցի դիվանագետը շտապում էր կատարել հետևյալ լրացումը. «Բացի վեց հետևակային զնդերից գոյություն ունի յոթերորդը...: Կա նաև սահմանապահ բրիգադ և զինվորական շտաբի գործառն: Զանգեզուրում կան Հայաստանի գործառն, բայց դրանց թվաքանակը հայտնի չէ»: Այնուհետև նա ավելացնում է. «Հինգերորդ գունդը կանգնած է Կարսում: Չորրորդը՝ Դիլիջանի և Սուրմալուի գավառի շրջաններում: Վեղիբասարի, Ծարուրի և Նախիջևանի շրջանում են գտնվում 7-րդ գնդի 1-ին, 2-րդ և 3-րդ գործառնները, ինչպես նաև սահմանապահ բրիգադի մեկ բաժին, զինվորական շտաբի վաչտը, ականանետային գործառն, երկու գրահագնացք, հեծելագործի և լեռնային ձիավոր մարտկոցի փոքրաթիվ գործառնները: Երևանում են ուսումնական գործախումբը և Երևանյան առանձին գումարտակը: Ամբողջ Ղարաբաղյան ջոկատը, գնդապետ Կաֆիլի հրամանատարությունում, հավանաբար տեղաշարժվել է Զանգեզուր: Հեծելագործ կանգնած էր Ալեքսանդրապոլում, իսկ թե ուր է հիմա, դժվար է ճշտել, քանի որ միայն երեք էսկադրոններ են ձիերով, մնացածը՝ առանց ձիերի: Տեղի ունեցած մարտական գործողությունների պատճառով գործառնների տեղակայման վայրերը ենթարկվում են փոփոխություն: Գնդերի հրամանատարներին ուղղված գեներալ Շելկովնիկովի գաղտնի հրամանների պատճենները ուղարկված են ի գիտություն Ծարուր-Նախիջևանի մահմեդականներին, որի մասին հայկական իշխանությունները հավանաբար չգիտեն»⁴⁰⁷:

Ինչպես պարզ է դառնում Ադրբեջանի գործակալների ծավալած դավադրական գործունեություն մասին գրագրություններից, Հայաստանի Հանրապետությունում ներքին խլրտումներ կազմակերպելուց բացի, Ադրբեջանը ջանք ու միջոցներ չէր խնայում այն տնտեսապես կազմալուծելու համար, որպես հենակետ ընտրելով իր ձեռքին կենտրոնացած նավթի, մագնիզիտի և բենզինի պաշարները: Ինչպես ակնհայտ է դառնում հայտնի գրագրությունից, Ադրբեջանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել նաև երկաթուղուն՝ որպես հայկական պետության առևտրա-արդյունաբերական համակարգի գործունեությունը ապահովող գլխավոր զարկերակի, սպրանքների ու գործքերի տեղափոխման արագ միջոցի: Այդ տեսանկյունից Ադրբեջանի ռազմաքաղաքական շրջանները, հետախուզիչ մարմինները և ՀՀ տարածքում գործող գործակալները մշտապես իրենց կառավարությունը հրահանգներ ու ցուցմունքներ են տվել, որպեսզի վերջինս դեպի Հայաստան նավթի ու մագնիզիտի տարանցման պարագայում լինի շատ հաշվենկատ և

⁴⁰⁶ Տե՛ս «Յառաջ», 6 հունիսի, 1920, N° 117:

⁴⁰⁷ ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 299, մաս I, թ. 6:

զգուշավոր՝ խուսափելով ավելորդ «առատաձեռնությունից»: Այսպես, Թեքինսկին Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1919 թ. հունիսի 4-ի հեռագրում ընդգծում է հետևյալը. «Որևիցէ պատճառ բռնելով յետաձգեք Հայաստանի երկաթուղիների համար մագուլթ ուղարկելը, որոհետեւ Նախընթացի շրջանում դէպքեր են սպաւում»⁴⁰⁸: Իսկ Արտաքին Գործերի նախարար Զաֆարովի 1919 թ. հուլիսի 24-ի հեռագրում Խան-Թեքինսկուն հրահանգ է տրվում, թե ինչպես վարվել ստեղծված իրավիճակում. «500,000 փութ նավթ ուղարկելու մասին Բէկզադեանի արած միջնորդութեան (մասին - Վ. Վ.)... Ապահովութեան խորհուրդը որոշել է նաև թ քաջ չթողնել մինչև Ադրբեջանի կառավարութիւնը փոփոխութեան կենթարկէ դաշնագրի հաստատման երկու պայմանները»⁴⁰⁹: Ադրբեջանցի ղեկավանագետ լրտեսները խորապես համոզված էին, որ Ֆինանսական դժվարություններ հարուցելով Հայաստանի առաջ, իրենց կհաջողվի նաև առաջ բերել ռազմաքաղաքական բարդացումներ ու անլուծելի դժվարություններ: Ավելին, ադրբեջանական գործակալները Հայաստանի դեմ ուղղված իրենց խարդալանքների մեջ որոշակի տեղ էին հատկացնում նաև արտաքին ուժերին, փորձելով գտնել նրանց վրա ազդելու առավել արդյունավետ ուղիներ և միջոցներ, համապատասխան հրահանգներ ու խորհուրդներ տալով սեփական կառավարությանը: Այսպես, Խան-Թեքինսկին Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1919 թ. ապրիլի 16-ի հեռագրում ընդգծում է հետևյալի մասին. «անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Ալգանիստանի, Մալայեան կղզիների և Կովկասի ողջ մահմեդականների, նոյնպես և Հաշտութեան Վեհաժողովի առաջ անգլիացիների այն ցանկութեան դէմ, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թուով կէս միլիոն հայերին»⁴¹⁰: Ադրբեջանական գործակալները գտնում էին, որ իրենց կառավարությունը պետք է որոշ նախազգուշական միջոցներ ձեռնարկի հաղորդակցության ուղիներում իր շահերն ապահովելու համար, այդ կապակցութեամբ խնդրելով նաև իրականացնել գործողություններ, որպեսզի անգլիացիները չվնասեն իրենց և չխոչնդոտեն ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ: Այդ տեսակետն է պաշտպանվում Խան-Թեքինսկու 1919 թ. հուլիսի 28-ի հեռագրում՝ ուղղված նախարարապետին. «Կարծում եմ, որ մեր կառավարութիւնը պէտք է վճռական առաջարկ անէ անգլիացիներին, մեզ յանձնելու Զուլֆա-Շահթաթի երկաթուղին, Ալեքսի-Զուլֆա գծով, Պարսկաստանի հետ առևտուր սկսելու համար: Յանձնման ենթակայ այդ գիծը պէտք է երկարի մինչև Դաւայու գիւղը: Անգլիացիներին այդ առաջարկն անելու հետ միաժամանակ, մատնանշեցէք Հայաստանի անընդունակութիւնը, զնայքների երթևեկութեան յաճախակի ընդհատումը. ընդ սմին, խոս-

⁴⁰⁸ Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեջանի դատադրական գործունեությունից մի էջ, էջ 26:

⁴⁰⁹ Նույն տեղում, էջ 37:

⁴¹⁰ Նույն տեղում, էջ 19:

տացեք Շարուր Նախնջևանում նոր կարգ հաստատել: Կարծում եմ, անգլիացիք կհամաձայնեն»⁴¹¹: Վերջապես, երբ-որ խոսքը գնում է Ջուլֆա-Երևան երկաթուղազծի գործարկման մասին՝ առևտրական դիտումների տեսանկյունից, առանց որևիցե պետություն գերիշխանությունը նկատի առնելու, Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1920 թ. փետրվարի 10-ի հեռագրում Ազրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը բացահայտ հակահայկական դիրքորոշում ընդունելով, բառացիորեն ընդգծում է հետևյալի մասին. «Նախքան մեր փոխյարաբերությունների կարգաւորումը և սահմանների որոշումը, Երևան-Ջուլֆա ճանապարհի բանալը համարում եմ աննպատակալարմար: Տնտեսական տեսակէտից այդ նպատակը է միայն Հայաստանին: Մեզ համար ճանապարհի բացումը դեռ ևս տնտեսական շահ չի ներկայացնում, իսկ քաղաքական շահերը թէ՛ Նախիջանում և թէ՛ պարսկական Ազրբեջանում մենք կարող ենք հետապնդել առանց այդ ճանապարհի»⁴¹²:

Դեռ 1919 թ. հուլիսի 21-ին Խան-Թեքլինսկին իր կառավարությունից պահանջում էր ազրբեջանական զորքերը կենտրոնացնել Հայաստանի սահմանների վրա, ահազանգում, որ հայկական զորքերը շարունակում են շարժվել Շարուր, որտեղ ծավալվում են խոշոր իրադարձություններ, գնում են մարտեր. «Հայաստանը լարում է իր բոլոր ոյժերը:... Սահմանների վրայ մեր զորքերի երևալը խուճապ կձգե հայերի մեջ, կուժեղացնէ դասակարգությունը և կը բանձրացնե մահմեդականների ոգին: Հայաստանի զորքերի քանակի մասին արդէն հաղորդել եմ Թիֆլիս, գինևորական կցորդ Ալիեին, խնդրելով, որ այդ մասին տեղեկացնէ զօրական նախարարին: Եթե ուզում էք օգտել ըստ էության, ձեռք առէք շտապ և վճռական միջոցներ»⁴¹³: «Մենք պետք է անհապաղ պատերազմ հայտարարենք Հայաստանին»⁴¹⁴ և «երկու շաբաթվա ընթացքում վերջ տանք Ձանգեղուրին, զորքերը շարժենք Ղամարու»,- գրում է Խան-Թեքլինսկին Ազրբեջանի կառավարության նախագահին 1919 թ. օգոստոսի 1-ին և 3-ին. «Այժմ ամենահարմար ժամանակն է. Հայաստանի կոմիսար ամերիկյան գնդապետ Հասկելի գալուց հետո կլինի ուշ: Հարձակումը կազմակերպեցեք առանց պատերազմ հայտարարելու: Շատ եմ խնդրում օգտագործել պահը և չկորցնել ժամանակ»⁴¹⁵: 1919 թ. օգոստոսի 3-ին Ազրբեջանի կառավարությանը գեկուցելով դեպի Դիլիջան, Նոր Բայազետ ու Բասարգեչար 8 բեռնատար մեքենաներով հրետանի ու արկեր ուղարկելու և այդ շրջաններում 4-րդ գնդի գտնվելու մասին, «դիվանագիտական ներկայացուցիչ-հետախույզը» եզրակացնում էր, որ «որ հայերը այդ նախապատ-

⁴¹¹ Նույն տեղում, էջ 38-39:

⁴¹² Նույն տեղում, էջ 51:

⁴¹³ Նույն տեղում, էջ 36:

⁴¹⁴ ՀԱՍ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 299, մաս I, ք. 14, քիվ 601; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), էջ 116:

⁴¹⁵ ՀԱՍ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 299, մաս I, ք. 14-15, քիվ 601, 606:

րաստում են մուսուլմանների դեմ» և կառավարութունից պահանջում՝ «ձեռք առնել Հարկ եղած միջոցները»⁴¹⁶: Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի հակահայկական սադրիչ և քայքայիչ գործունեությունը, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում լրտեսական-հետախուզական ցանցի և գործակալական խմբերի ստեղծումը ոգևորում էր մահմեդական գանգվածին, որոնց առաջնորդները նրանց դրդում էին գանազան մեքենայությունների, նպատակամղում ապստամբական գործողությունների ՀՀ օրինական իշխանությունների և Հայ ժողովրդի դեմ: Եվ այդ հանգամանքից ոգևորվելով՝ Զանգիբասարում, Զոդ-Բասարգեչարում, Կարսի մարզում և այլուր հակապետական խռովության դրոշ բարձրացրած մահմեդական հրոսակախմբերը՝ թուրք սպաների և հատուկ ծառայությունների գործակալների գլխավորությամբ և զինվորականների, սելջարների մասնակցությամբ հայկական գորքերին և տեղական իշխանություններին համառ դիմադրություն էին ցույց տալիս: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում հայկական հատուկ ծառայությունների կողմից հայթայթված այն տվյալները, որոնք վերաբերում են Զանգիբասարի նկատմամբ ադրբեջանական նկրտումներին: Այդ մասին էլ հենց բազմաանշանակ վկայում են Բաքու՝ Արտաքին Գործերի նախարարին ուղարկված հեռագրերը. այսպես, Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1919 թ. դեկտեմբերի 20-ի հեռագրում Երևանում Ադրբեջանի դիվանագիտական հավարամատարի պաշտոնակատար Միրբաբաևը ուղղակի գրում է հետևյալը. ...եթե գանգիբասարցիք անձնատուր լինեն, ապա մենք քաղաքական, բարոյական և նիւթական տեսակէտից շատ բան կը կորցնենք: Խնդրում եմ ամեն ջանք գործ դնել, որպէսզի հայերի յարձակումը՝ գանգիբասարցիների վրայ՝ յետ չպրտվի: Նրանց կողմից բոլոր հնարաւոր միջոցները ձեռնարկւած են»⁴¹⁷: Հայաստանի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի հատուկ ծառայությունների ծավալած դավադրական-կազմալուծիչ գործունեությունը բացահայտման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում Զանգիբասարին և Նախիջևանին վերաբերող Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի պարտականությունները կատարող Մուսաևի 1920 թ. մարտի 4-ի հեռագիրը՝ ուղղված Արտաքին Գործերի նախարարին. «Մինչև այսօր փող չստանալը Նախիջևանի համար ոչինչ է դարձնում գեներալ նահանգապետի աշխատանքը և էական վնաս է պատճառում հանրապետության: Զանգիբասարը նոյնպէս սոսկալի կացութեան մէջ է առանց մեր դրամական օժանդակութեան, ինչ ձեռնտու է Հայաստանին: Երկու շրջանները ես պաշտպանում եմ նրանով, որ փողերը արդէն Թիֆլիսում են և Երևանում ստացելուց յետոյ, առանց դանդաղելու պիտի ուղարկեն ըստ պատկանելոյն: Դանդաղեցման իւրաքանչիւր մի րոպէն ուժեղ

⁴¹⁶ Նոյն տեղում, ք. 15, թիվ 616:

⁴¹⁷ Գաղտնի փաստաթղթերը. Աղբրէջանի դատադատական գործունեութիւնից մի էջ, էջ 47:

կերպով անդրադառնում է մեր շահերի վրայ. խնդրում եմ ձեր կարգադրու-
թիւնը, քանի դեռ ուշ չէ»⁴¹⁸: Բնականաբար, այդ մասին արդեն սակ ենք,
Հայկական հետախուզութիւնը լավ տեղեկացված էր այս բոլոր նախապատ-
րաստութիւնների մասին, քանզի ուշի-ուշի հետևում էր այդ ամենին: Հայ-
կական հատուկ ծառայութիւնների կողմից Հայաստանում Ադրբեջանի գոր-
ծակալական ցանցի վնասազերծումից հետո ակնհայտ է դառնում, որ ադրբե-
ջանցիները լուրջ հավակնութիւններ են ներկայացրել նաև Բոյուք-Վեդիի
և Կարսի շրջանների նկատմամբ՝ սատարելով տեղական անջատողականնե-
րին: Այդ մասին մենք տեղեկանում ենք Ադրբեջանի նախարարապետ Խան-
Խոյսկու 1919 թ. մայիսի 6-ի հեռագրից՝ ուղղված Երևանում Ադրբեջանի
Հանրապետութեան դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկուն.
«Անյապաղ կապ հաստատեցեք Ղարսի կառավարութեան հետ: Յույց տվէք
նրան ամէն տեսակ աջակցութիւն, իմացէք ինչ կարիքներ ունի, հեռագրե-
ցէք մեզ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու»⁴¹⁹: Իսկ 1919 թ. հուլիսի 14-
ի հեռագրում՝ ուղղված Արտաքին Գործերի նախարարին, Խան-Թեքինսկին
անդրադառնում էր Բոյուք-Վեդիի խնդրին. «Բէխլը-Վէդիի դրութիւնը
լուրջ է, Հայաստանը կենտրոնացնում է իր բոլոր ոյժերը: Յայտարարւած է
գորահավաք... Մուսուլմաններին կարող է ազատել Ադրբեջանի զինւած մի-
ջամտութիւնը... Կռիւը շարունակւում է: Առանց մի օր կորցնելու ուղարկե-
ցէք խոշոր գումար՝ զինւորական կազմակերպութիւնների համար»⁴²⁰: Այդ
դիրքորոշումը պաշտպանվում է կառավարութեան կողմից, ինչի մասին
Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարար Ջաֆարովը 1919 թ. հուլիսի 19-
ին հեռագրով տեղեկացնում է Խան-Թեքինսկուն. «Հետևեցէք Բէխլը-Վէ-
դիում և միևս գիւղերում կատարւող դէպքերին. եթէ Հնարաւոր է, ուղարկե-
ցէք պաշտօնական ներկայացուցիչ, հակառակ պարագային նշանակեցէք
գաղտնի գործակալ: Դէպքերի մասին հաղորդեցէք»⁴²¹: Վերջապես, այդ
նույն մտայնութիւնն է իշխում նաև Արտաքին Գործերի նախարարին
ուղղված Խան-Թեքինսկու 1919 թ. հուլիսի 22-ի հեռագրում. «Ես այն տպա-
ւորութիւնն ստացայ, որ Հայկական զօրքերը Բէխլը-Վէդիից չեն հեռանայ,
այլ, կանգնելով միայն դիրքերի վրայ, կընդհատեն պատերազմական գործո-
ղութիւնները: Միջոցներ ձեռք առէք, որ Հայկական զօրքերը հեռանան, ա-
պա թէ ոչ Բէխլը-Վէդիի մահաբերականների դրութիւնը կդառնայ ծանր և,
նոյնիսկ, վտանգաւոր»⁴²²:

Ինչպես պարզ է դառնում Հայաստանում Ադրբեջանի գործակալների
ծավալած դավադրական գործունեութեան մասին գրադրութեան նյութերից,

⁴¹⁸ Նույն տեղում, էջ 55:

⁴¹⁹ Նույն տեղում, էջ 23:

⁴²⁰ Նույն տեղում, էջ 31-32:

⁴²¹ Նույն տեղում, էջ 33-34:

⁴²² Նույն տեղում, էջ 36-37:

Հայաստանի Հանրապետությունում ներքին խլրտումներ կազմակերպելուց բացի, Ադրբեջանը ջանք ու միջոցներ չէր խնայում ՀՀ-ն տնտեսապես կազմավորածելու համար, որպես հենակետ ընտրելով իր ձեռքին կենտրոնացած նավթի, մագնեզիտի և բենզինի պաշարները՝ որպես ուժեղ միջոց հարևանի վրա ազդելու համար: Դրա հետ մեկտեղ, ինչպես ակնհայտ է դառնում հայտնի գրադրությունից, Ադրբեջանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել նաև երկաթուղուն՝ որպես հայկական պետությունից առևտրա-արդյունաբերական համակարգի գործունեությունը ապահովող գլխավոր գարեկերակի, ապրանքների ու գորքերի տեղափոխման արագ միջոցի:

Հայաստանում **Մամեդ Խան-Թեքինսկու** ծավալած դավադրական-լրտեսական հետախուզիչ գործունեությունից «արդյունքն» այն է լինում, որ փաստորեն վերջինս հայտարարվում է *persona non grata*, ինչի մասին ընդգծվում է **Ալ. Խատիսյանի** նոտայում՝ ուղղված Ադրբեջանի կառավարությունը. «Հայաստանի կառավարությունն անհրաժեշտ է գտնում հիմնված հաստատ տեղալների վրա, ցաւ ի սիրտ յայտարարել, որ իր գործողութիւններով **պ. Թեքինսկին** անձամբ նպաստել է Հայաստանի Հանրապետութեան և երկրի անգործութեան դեմ ուղղված շարժումներին»: **Ալ. Խատիսյանը** Ադրբեջանի կառավարությունը խորհուրդ էր տալիս այդ տեղեկությունները ստանալուց հետո համապատասխան հետևություններ անել Խան-Թեքինսկու գործունեության վերաբերյալ⁴²³, սակայն վերջինս իր մատուցած ծառայությունների համար նշանակվում է Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարի օգնական և «հաջողությամբ» շարունակում իր հայադավ գործունեությունը, իսկ նրա տեղը զբաղեցնում է «ազգային բանաստեղծ» նախկինում Լեոնականների Հանրապետությունում Ադրբեջանի ներկայացուցիչ **Աբդուռախման բեկ Հախվերդովը**, որին էլ 1920 թ. մարտից հետո փոխարինում է Մակինսկին (համաձայն Ադրբեջանի վարչապետ **Ն. [Յուսուֆբեյլի] Բեկ-Ուսուբբեկովի** 1920 թ. փետրվարի 25-ի որոշման)⁴²⁴, որոնք և շարունակում են Թեքինսկու արատավոր պրակտիկան, ինչի մասին հայկական հետախուզությունը և կառավարությունը տեղյակ էր: Ադրբեջանական գործակալների անփութությունից հետևանքով հայկական կողմը հեշտությամբ ձեռք բերեց կողի համարը, որի մասին որոշակի ուշացումով Ադրբեջանում գլխի ընկան⁴²⁵, բայց դա նրանց էական արդյունք չտվեց, ինչն էլ վկայում է հատուկ ծառայությունների ոչ վատ աշխատանքի մասին ՀՀ նկատմամբ թշնամաբար տրամադրված Ադրբեջանի հետախուզիչ-քայքայիչ գործունեությամբ զբաղվող գործակալների կանխարգելման և վնասազերծման խնդրում:

⁴²³ Տե՛ս **Է. Ա. Չոխրաբյան**, Նախիջևանյան հիմնախարքը և Հայաստանի դաշնակիցները, էջ 179-181:

⁴²⁴ Տե՛ս «Слово» (Тифлис), 25 февраля, 18 марта, 1920:

⁴²⁵ Տե՛ս **ՀԱՄ**, ֆ.Պ - 200, ց. 1, մաս II, գ. 299, ք. 105:

Որպեսզի պարզ լինի, որ իսկապես Ադրբեջանը դրամական խոշոր օգնություն է հասցրել Եսրուր-Նախիջևանին ու Ջանգիբասարին, որի շնորհիվ էլ կազմակերպվել են այդ շրջանների ապստամբությունները, բավական է մատնանշել այն մասին, որ 1919 թ. Նախիջևանի նահանգապետին է ուղարկվում մոտ 5 միլիոն դրամ՝ բռնեղով ու չեկերով, որոնք «Չեզոք» գոնայով անցման ժամանակ կողոպտվում են գնացքի վրա հարձակված «ավագակների» կողմից, որոնք Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովից խլում են ողջ դրամական գումարը⁴²⁶, ինչի մասին վերը գրում է **Տ. Դեվոյանը**: Այդ մասին փաստում են նաև **Կ. Սասունին, Ռ. Տեր-Մինասյանը, Ալ. Խատիսյանը**⁴²⁷, հավաստելով, որ դրանք նախատեսված էին Հայաստանի իշխանությունների դեմ Ջանգիբասարում, Եսրուրում և այլուր խռովարարական-անջատողական տրամադրությունները ուժեղացնելու համար՝ հայտնի տարածքները Հայաստանի Հանրապետությունից անդամահատելու և Ադրբեջանին կցելու նպատակադրումով: «Մի օր, հեռագիր ստացուեց. Ադրբեջանի նոր դեսպան Հախվերդովը եւ ժողովրդական կուսակցության պարագլուխ Ս. Յարութիևեանը, նոյն գնացքով, Թիֆլիսից մեկնում էին Երևան: Ռուբէնի հետ անմիջապէս համապատասխան կարգադրութիւններ արինք եւ մարտի 8-ի լուսաբացին, Լոռիի չէզոք գոտիում, Սանահին-Քոբեր կայարանների միջեւ, մի խումբ դիմակաւոր ու զինուած երիտասարդներ կանգնեցրին գնացքը եւ Հախվերդովից ու Յարութիևեանից խլեցին նրանց գոյքը: Հախվերտովի մօտից առել էին 3.400.000 ռուբլի ազրբէջանեան եւ 2 միլիոն ռուբլի անդրկովկասեան բռնեղ, իսկ Յարութիւնեանից 296.000 անդրկովկասեան բռնեղ, որ նա տանում էր իրենց կուսակցության Երևանի «Ժողովուրդ» թերթին: Այս դէպքը ահագին իրարանցում առաջ բերեց: Ազրբէջանեան կառավարութեան կողմից բողոքներ տեղացին Երևան: Վրացիք ծիծաղում էին ազրբէջանցի իրենց բարեկամների վրայ: Հայաստանի կառավարութիւնը ցաւակցութիւն յայտնեց Ս. Յարութիւնեանին: Վերադարձրեց նրանից խլուած դրամը եւ ոսկէ ժամացույցը, թէեւ Յարութիւնեանի բերած դրամը «Ժողովուրդ» թերթին՝ պիտի ծախսուէր պայքարելու համար կառավարութեան դէմ»⁴²⁸: Այդ մասին հետաքրքիր վկայակոչում և դիտարկում կա «Նեմեսիսիսի» ակունքներում կանգնած հայ վրիժառու **Միսաք Թոռլաքյանի**⁴²⁹ (1915-1918 թթ. ծառայել է ռու-

⁴²⁶ Տե՛ս **Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեջանի դատադական գործունեությունից մի էջ**, էջ 9:

⁴²⁷ Տե՛ս **Կ. Սասունի**, Մայիսեան խռովությունները և թաթարական ապստամբ շրջանները: /Հայաստանը 1920-ին/. - Բեյրութ, տպ.«Մշակ», 1968: էջ 173, **Ռուբէն**, Հայիեղափոխականի մր յիշատակները, Է հ., էջ 246, **Ալ. Խատիսյան**, նշված աշխատությունը, էջ 205:

⁴²⁸ **Մ. Վրացեան**, Կյանքի ողիներով, Ե. հատոր, էջ 103;

⁴²⁹ Միսաք Թոռլաքյանը եղել է ՀՀ Դաշնակցության ակտիվ անդամներից : 1910 թվականին, ինչպես և Օսմանյան կայսրության բազմաթիվ հայեր, Մ. Թոռլաքյանը գորակոչվեց բանակ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ **Մ. Թոռլաքյանը**

սական բանակի հետախուզությունում: Հետագայում անցել է Բաթում, Կ. Պոլիս, որտեղ 1921 թվականի հուլիսի 18-ին սպանել է Բաքվի հայոց ջարդարար Բեհրոթ խան Ջիվանշիրին: 1921 թ. հոկտեմբերի 6-ին անզլիական

գտնվում էր Երզրումում Օսմանյան կայսրության 12-րդ բանակի 4-րդ գնդի կազմում: Ջգալով բանակում հայ զինվորների ոչնչացման հնարավորությունը, Մ. Թռուլբյանը գաղտնի փախչում է միանում է Երզրում-Տրապիզոն ուղղությամբ գործող հայրուկների խմբին: **1915 թ. Թռուլբյանն անցնում է Թիֆլիս, այնտեղից էլ Երևան: Այնտեղև Միսաք Թռուլբյանը սկզբում որպես կամավորական 6-րդ ջոկատի, իսկ հետո նորաստեղծ Հայկական կորպուսի (հրամանատար գեներալ Թ. Նազադբեկյան) կազմում մասնակցել է մի շարք մարտերի, այդ թվում՝ Բաշ-Ապարանի ճակատամարտին (1918 թ. մայիսին): Այնտեղ նա մտնում է Իշխանի (Հովսեփի [Արդության-Երկայնաբազուկ] Արդությանի) կամավորական գնդի մեջ, մասնակցում է մի քանի կարևոր մարտերի, որից հետո կուսակցության որոշմամբ իր ջոկատով Սուխումի վրայով անցնում է Տրապիզոն: Շուտով նա դարձավ Տրապիզոնի շրջանի Ինքնապաշտպանական ռազմական մարմնի անդամ: 1915 թ. դեկտեմբերի հայտնի դարձավ, որ Սարիղամիշի ճակատամարտում պարտություն կրելուց հետո մոլի հայստայաց Էնվեր փաշան մտադիր է Տրապիզոնի վրայով անցնել Ստամբուլ: Գաղտնի ժողովում որոշվեց նրան ահաբեկել Տրապիզոնում: Սակայն վերջին պահին Էնվերին հաջողվեց խուսափել արժանի պատժից: Տրապիզոնում հայերի 1915 թ. կոտորածների ժամանակ Մ. Թռուլբյանը և մնացած հայրուկները կազմակերպեցին հայերի ինքնապաշտպանությունը՝ դրանով մահից փրկելով շատ հայերի: **1916 թ. ռուսական զորքերն ազատագրեցին Տրապիզոնը: Թռուլբյանը իր հուշերում հայտնել է այն մասին, որ Տրապիզոնում իր առաջին գործը եղել է Տրապիզոնի ռուսական բանակում հետախուզական ծառայության անցնելը, դրանով նա հնարավորություն ստանալով մտնել թուրքական գյուղերը, խաղաղություններ կատարել, փնտրել և գտնել այնտեղ թաքնված հայերին, լավ հնարավորություն ձեռք բերելով նաև վրեժխնդիր լինել թուրք հանցագործներից և ջարդարաններից: Ռուսական բանակում ծառայելու համար Մ. Թռուլբյանը պարգևատրվել է Մարտական խաչով: 1918 թ. հունվարին սկսվեց թուրքական զորքերի արշավանքը Անդրկովկաս: Հայրուկների Տրապիզոնյան խումբը միանում է Գրաստամաս Կասալանի (Դոն) հրամանատարությամբ գործող զորքերին: Մինչ այդ Տրապիզոնյան ջոկատը տեղայնացվել էր Կարսում, որտեղ հսկում էր հայկական զորքերի և խաղող հանդիպության մահանջը մինչև Արաքս գետը: Մայիսի վերջին ջոկատը մասնակցեց Բաշ-Ապարանի ճակատամարտին: Այդ աշխատանքում մեծ հերոսին օգնում էր բազում մարտերում կոփված Միսաք Թռուլբյանը: Նա գտնվում էր այն առաջապահ ջոկատում, որը Դոնյի հրամանով Բաշ-Ապարանի ճակատամարտում սկսեց հարձակումը թուրքական զորքերի դիրքերի վրա:****

1921 թ. Մ. Թռուլբյանը գալիս է Ստամբուլ և այստեղ Հարություն Հարությունյանի ու Երվանդ Ֆունդիկյանի հետ դաշնակցականների Կ.Պոլսի խմբի կազմում դառնում է «Նեմենսիս» գործողության մասնակիցներից մեկը:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակընթացում Գրոնի և Նոդեհի հետ Թռուլբյանը մասնակցեց հայ զորամիավորությունի ձևավորմանը Վերմախտի կազմում: Ղեկավարում էր Հայկական լեգեոնի գործակալական և դիվերսիոն-հետախուզական ստորաբաժանումները: Անձամբ ղեկավարել է պանթրոքիզմի տարածմանը և Կոմկասի նվաճմանը վերաբերող թուրքական ղեկավարության գաղտնի փաստաթղթերի գավթման գործողությունը: Թուրքիայում ձեռքբերված փաստաթղթերը, որոնք ներկայացվեցին Ռոզենբերգին, պատճառ հանդիսացան Ռեյխին չվստահել Թուրքիային որպես դաշնակցի: Դրանից հետո Ռեյխի ղեկավարությունը հրաժարվեց օգտագործել թուրքական բանակը Կոմկասում: Փայլում անցկացված գործողության համար կապիտան Միսաք Թռուլբյանը և բազում այլ հետախույզներ պարգևատրվեցին և բարձրագույն կոչումներ ստացան / Տես Ուլովի Է. Հայեր, կենսագրական հանրագիտարան, հատոր Ա., Երևան, 2005, էջ 435, Թրուլբեան Միսաք, Օրերում հետ, Գ. հրատարակություն, Պէյրոթ, 2001, էջ 357-490:

դատարանը Միսաք Թողաքյանին անմեղաունակ է ճանաչել և ազատ արձակել) մոտ, որը լրացնում է և ամբողջացնում վերն ասվածը Հայաստանի Հանրապետությունում Ազդեցության քայքայիչ գործունեություն վերաբերյալ. «..Հայաստանի մէջ Հ. Յ. Դ. Բյիթոն կը յանձնարարէ Վրաստանի Կեդր. Կոմիտէին, թալանել չէզօք գօտիի մէջ. Ատրպեճանին դեսպան Հախվերտովի շոգեկառքը եւ ձեռք բերել պէտք եղած փաստաթուղթերը: 1920 թուի Մարտի վերջերը, երբ Հախվերտովը Պաքու տուած իր հերթական այցելութենէն կը վերադառնար, չէզօք գօտիի մէջ, գիշեր ժամանակ, խումբ մը զինուած երիտասարդներ, վրացական հագուստ հագած, կը յարձակին շոգեկառքին վրայ: Յարուժիւն Յարուժիւնեան զէնքը ձեռքին կը հրամայէ վարիչին կեցնել շոգեկառքը: Տղայքը կը խուժեն Հախվերտովի վակոնը, կը թալանեն մէջը գտնուողներուն ունեցած-չունեցածը: Եւ որպէսզի ձեռնարկին գուտ աւազակային բնույթ տան, չեն խնայեր նոյնիսկ Հայ Հասարակական գործիչ Սամսոն Յարուժիւնեանին, որ կը գտնուէր վակոնին մէջ եւ կ'երթար Երեւան:

Ձեռք բերած փաստաթուղթերը որեւէ կասկած չէին թողուր Հայաստանը ներսէն պայթեցնելու Ատրպեճանի եւ Տաճկաստանի նպատակներու մասին: Այդ փաստաթուղթերէն մաս մը տպուեցան Ռուբէնի յուշերու եօթներորդ հատորին մէջ⁴³⁰: Նման Հանդուհան ձեռնարկումը, որը պատիվ էր բերում այն իրագործողներին, ունեցաւ անցանկալի ելեւէջումներ, ինչի մասին մենք տեղեկանում ենք **Մ. Թողաքյանի** հուշերից: Իսկ **Մ. Թողաքյանը** ուղղակի փաստում է հետոյալ. «Ձեռնարկին մասնակցողներէն խումբ մը հետագային չուզեց այդ գումարը տալ Կեդր. Կոմիտէին: Այդ իսկ պատճառով Կեդր. Կոմիտէն որոշեց անոնց գլխաւորները ահաբեկել:

Այս ձեռնարկը կատարողներուն մէկ մասը մնացեր էր չէզօք գօտիի մէջ, ուր եւ տեղի ունեցաւ անոնց գլխաւորներէն **Պաքում Ռուբէնի** ահաբեկումը՝ Յարուժիւն Յարուժիւնեանի ձեռքով: Այս ահաբեկումէն ետք, մնացեալները կու գան Թիֆլիս իրենց ընկերոջ վրէժը լուծելու Կեդր. Կոմիտէին:

Նկատի ունենալով այս լարուած դրութիւնը, Վրաստանի Կեդր. Կոմիտէն ինձի եւ ընկերներուս Պաթումէն կանչեց Թիֆլիս:

Սպաննուածին ընկերներն ու գործակիցները, սաստիկ զայրացած, կու գան Թիֆլիս թէ՛ Յարուժիւնը եւ թէ՛ անոր ետին կեցող Կեդր. Կոմիտէի անդամները ահաբեկելու համար:

Մեր Թիֆլիս հասնելէն հազիւ շաբաթ մը անցած՝ Երեւանսկի Հրապարակին վրայ կը սպաննուի երկրորդ լիտ[ե]րը **[Հիդերը] Ռուբէն Սաֆարեան,**

⁴³⁰ **Թողաքյան Միսաք**, Օրերուս հետ, Գ. հրատարակութիւն, Պէյրոս, 2001, էջ 455-456:

Երուանդ Ֆունտուքեանի ձեռքով: Այս ահաբեկումէն ետք միւսները կը փախչին եւ հարցը կը փակուի»⁴³¹:

Հետախուզութիւնը բացահայտել էր, որ Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչութեան քարտուղար և փոխարինող **Միր Բաբաևի** 1919 թ. սեպտեմբերի 18-ի (N^o 736) և սեպտեմբերի 21-ի (N^o 757) հեռագրերում՝ ուղարկված Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարին, պարունակվում են հետաքրքիր մանրամասներ Ադրբեջանի կողմից Հայաստանի տարածքում խռովարարական-հակապետական շարժումներին ցույց տրված Փինանսական-դրամական աջակցութեան, ինչպես նաև քայքայիչ լրտեսական-հետախուզիչ գործունեութեան մասին: Այսպես, 1919 թ. սեպտեմբերի 18-ի հեռագրում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը Երևանում տեղեկացնում էր Արտաքին Գործերի նախարարին, որ Բաբվի հայկական գործակալը հաղորդել է Հայկական հակահետախուզութեան պետին, որ ներկայացուցչութեանը կից հատուկ հանձնարարութիւնները գծով սպա կապիտան Քասումբեկովը (հետաքրքիր է նշել, որ նոյեմբերի 5-ին հայ մառգերիտների կողմից կողոպտված Ադրբեջանի ներկայացուցչութեանը կից հատուկ հանձնարարութիւնները գծով սպա Քասումբեկովի բնակարանից տարվել էր մոտ կես միլիոն ռուբլի, ինչի մասին 1919 թ. նոյեմբերի 21-ին (N^o 1455) հաղորդում է նաև Հախվերդովը Ադրբեջանի վարչապետին, միաժամանակ ավելացնելով, որ կատարվածի դեմ Հայաստանի կառավարութիւնը անուժ է, ոչինչ չի կարող ձեռնարկել (հասկանալի է, որ այդպիսի խռչոր գումարը անձնական գումար չէր, և որոշակիորեն կարելի է ասել, հենց հետախուզական նպատակների համար էր), և կողմնու Ալի խան Մակինսկին հաշվառման մեջ են գտնվում Ադրբեջանի հակահետախուզութիւնում և իր կարծիքով հայերը ամեն կերպ փորձում են զանազան պատրվակներով ազատվել դրանցից: Միր Բաբաևը հաղորդելով, որ հայկական հատուկ ծառայութիւնները բացահայտել են իրենց գործունեութիւնը Երևանում, խնդրում էր Արտաքին Գործերի նախարարից, որպեսզի Քասումբեկովին և Մակինսկուն տրվի զինվորական համազգեստ, և նրանք մտցվեն Ադրբեջանի բանակի կազմի մեջ և դրանով իսկ նրանց կարողանան ազատել զանազան պատահականութիւններից, դնելով ներկայացուցչութեան հովանու տակ, դրանով իսկ ազատվելով նաև հայկական հակահետախուզութիւնից⁴³²:

Իսկ Միր Բաբաևի 1919 թ. սեպտեմբերի 21-ի հեռագրի գաղտնագրերումից ականհայտ է դառնում հետևյալի մասին. Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը տեղեկութիւններ էր հաղորդում այն մասին, որ Հայաստանում ընթանում է 19-ից 30 տարեկանների գորահավաք, որ Երևանի քաղաքապետ **Ա. Շախհաթունին** մեկնել է Դիլիջան՝ դիրքերն անձամբ դիտարկելու համար: Միր Բաբաևը նշում էր նաև, որ հապճեպ գենք ու զինամթերք

⁴³¹ **Թորլաքեան Միսաք**, Օրերուս հետ, էջ 456-457:

⁴³² ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 155:

է մոտեցվում⁴³³: Ասել է, թե Միր Բաբանը Երևանում լրտեսութեամբ էր զբաղվում, իսկ երիտասարդ Հայկական Հակահետախուզութիւնը ուղտի ականջում քնած չէր, և ուշի-ուշով հետևում էր թշնամուն և վնասագրծում վերջինիս մեքենայութիւնները և խարդախ գործարքները: Որպես այս ամենի հետևանք, Երևանում Հայկական հետախուզական և Հակահետախուզական ծառայութիւնների աշխատանքը թշնամական գործակալների մերկացման և Հայաստանի դեմ ուղղված նրանց դավադրութիւնը կանխելու առումով տվեց իր ցանկալի արդշունքները:

Այս ամենի հետևանքով 1920 թ. մայիսի կեսերին (մայիսի 19 -22) ՀՀ Արտաքին Գործերի նախարարութեան Տեղեկատվական բաժինը ՀՅԲ Բյուրոյին, ՀՀ Արգարադատութեան, Ներքին Գործերի և Զինվորական նախարարութիւններին, բանակի սպարապետ գեներալ Նազարբեկյանին, պառլամենտի նախագահին, ինչպես նաև Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական Հավատարմատարին, Բաթումի ընդհանուր հյուպատոսին, Հայաստանի պատվիրակութեանը Փարիզում, Հայաստանի Հանրապետութեան ղեկավարներին Իտալիայում, Լոնդոնում, Վաշինգտոնում և այլուր՝ հղեց մի հեռագիր-հաղորդագրութիւն, որում հայտնվում էր, որ ՀՀ Արտաքին Գործերի նախարարութեան կողմից հրատարակվել է Ադրբեջանի Հանրապետութեան Երևանում գտնվող դիվանագիտական ներկայացուցչութեան ներկայացուցիչների ու նրանց գործակալների միջև փոխանակված գաղտնի ողջ զրադրութիւնը: Դրանում ասվում էր, որ այն վերաբերում է Ադրբեջանի կառավարութեան ու նրա ներկայացուցչի Հայաստանում ունեցած հակապետական, հակահայկական ագրեսիվ գործունեութեանը, որը նպատակաւորված է եղել Հայաստանի շրջաններում հակապետական հոսանքների և ելույթների կազմակերպմանը, և նրան, որ ամեն կերպ խարխլվեն պետականութեան հիմքերը Հայկական Հանրապետութիւնում, իսկ վերջին հաշվով և գործնականում՝ Զանգիբասարում ապստամբական դրութեան խորացմանը, ՀՀ իշխանութիւնների հեղինակութեան խարխլմանը, դրանց տապալմանը և ՀՀ տարածքի օրինական ու անբաժանելի մասը կազմող Զանգիբասարի շրջանի բռնակցմանը Ադրբեջանին⁴³⁴: Բացի դրանից, Արտաքին Գործերի նախարարութիւնը դիմելով «Յառաջ»⁴³⁵, «Ժողովուրդ», «Ռազմիկ», «Սոցիալիստ-հեղափոխական» (միայն վերջին պահին «Սոցիալիստ-հեղափոխական» թերթի կառավարութեան հրահանգով փակվելու պատճառով այդ կարևոր նյութը չհրատարակվեց, թեկուզև նախատեսվել էր) և այլ թերթերի, վերջիններս առաջարկեց տպագրել Ադրբեջանի գործակալների գաղտնի հակապետական

⁴³³ Նոյն տեղում, ք. 156:

⁴³⁴ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 427, մաս II, ք. 284, 288, 290, գ. 461, ք. 24-27, 28-31, 40:

⁴³⁵ Տե՛ս օրինակ, «Յառաջ», 5 հունիսի 1920, N° 116, 6 հունիսի 1920, N° 117, 8 հունիսի 1920, N° 118, 14 հունիսի 1920, N° 121:

գործունեություն մասին հայտնի գրադրությունը՝ հենվելով այդ գործի ամբողջական տարբերակի վրա, այն տպագրելով նաև անգլերեն լեզվով:

Վերջապես, 1920 թ. հունիսի 3-ին ՀՀ ղինվորական դատարանի կողմից լավեց Երևանում Ադրբեջանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության նախկին աշխատակիցների (այսպես կոչված կավասների, պահակագործի աշխատակիցների՝ Մաշադի Մամեդով, Մաշադի Հուսեյն օղլի, Հուսեյն Վալի օղլի, Մուսա Մաշադի Մամեդ օղլի, ինչպես նաև այդ ցուցակում հայտնված դիվանագիտական ներկայացուցչության վարորդ Իվախենյան) դատը, որոնք մեղադրվում էին տարբեր քրեական-քաղաքական հանցանքների մեջ, մասնավորապես Զանգիբասարյան խռովարարներին աջակցելու և այնտեղ անկարգություններ հրահրելու մեջ, որոնք կատարվել էին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական հավատարմատար **Թեմուր Բեկ Մակինսկու** անմիջական հանձնարարությամբ և վերջինիս հետ պայմանավորվածություն ձեռք բերելով ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև խոստանալով Զանգիբասար տեղափոխել խռովարարներին հասցեագրված ավելի քան 600.000 ռուբլի ադրբեջանական և կովկասյան բռնություն (ավելի ճշգրիտ՝ 449.750 ռ. ադրբեջանական բռնություն և 117.050 ռ. անգրկովկասյան բռնություն) և այն հանձնել Զանգիբասարյան «կառավարություն» ղեկավար մոլլա Քասումին, սակայն Զաֆարբադ գյուղում [ներկայումս՝ Արգավանդ - Վ. Վ.] կալանվում են էջմիածնի գավառական միլիցիայի՝ Զաֆարբադի ուղեկալի ավագ հեծյալ միլիցիոներ՝ **Համբարձում Հակոբյանի** կողմից, որին 100.000 ռուբլի կաշառք է առաջարկվում, վերջինս վճռականապես հրաժարվում է վերցնել, ձեռքազրկվում է նրանց և գործին օրինական ընթացք տալու համար առգրավված դրամի հետ միասին հանձնում իրավապահ մարմիններին: Ծառայողական պարտականություններին բարեխղճորեն և ազնվորեն վերաբերվելու համար ավագ միլիցիոներ **Համբարձում Հակոբյանին** ՆԳ նախարար **Ա. Գյուլիանդանյանի** կողմից հայտարարվում է շնորհակալություն⁴³⁶: ՀՀ ղինվորական դատարանը ընդունված որոշման մեջ կայացնում է դատավճիռ, ըստ որի մեղադրյալներից մեկը՝ Հուսեյն Վալի օղլին դատապարտվում է անժամկետ աքսորի, մյուս երկուսը՝ Մաշադի Մամեդ Հուսեյն օղլին և Մուսա Մաշադի Մամեդ օղլին *[տե՛ս Երևանում Ադրբեջանի դիվանագիտական առաքելության երեք ղալասների՝ պահակագործների մասին 1920 թ. հունիսի 3-ի դատական գործի նյութերը]* տաժանակիր աշխատանքների՝ 10 տարի ժամկետով յուրաքանչյուրին⁴³⁷: Գործն այսքանով չի ավարտվում, քանզի Ադրբեջանը դիմում է պատասխան

⁴³⁶ Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 181:

⁴³⁷ ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 249, մաս II, ք. 415, 427, գ. 461, ք. 31, 40, գ. 427, մաս II, ք. 322-327: Տե՛ս նաև Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեջանի դատարանական գործունեությունից մի էջ, էջ 56:

քայլերի, ձեռքավազելով Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն մի քանի աշխատակիցների, ինչի մասին մենք տեղեկանում ենք Արտաքին Գործերի նախարարության հեռագրից՝ ուղղված ՀՀ դիվանագիտական հավատարմատարին: Ի վերջո ադրբեջանցիները համաձայնվում են կալանքից ազատել Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցներին՝ ի պատասխան Հայաստանի կառավարության կողմից Երևանում ձեռքավորված և դատապարտված Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության գաղտնի գործակալների ազատագրման, չնայած լիովին ակնհայտ էր նրանց մեղսակցությունը ՀՀ դեմ ուղղված հակապետական և լրտեսական-հետախուզական քայքայիչ գործունեությունում⁴³⁸:

Մի բան լիովին ակնհայտ է, որ ՀՀ կառավարությունը հենվելով Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչներ Խան-Թեքինսկու, Հախվերդովի, Մակինսկու Բաքու ուղարկված գաղտնի հեռագրերի ու գրությունների, ինչպես նաև այլ աղբյուրների վրա, «Հայաստանի հակահետախուզությունը կարողանում էր գաղտնագրածել, չէր հավատում լուրերին»⁴³⁹, այսինքն՝ փորձում էր լիարժեքորեն ու արդյունավետ աշխատել, և ձեռք բերել ՀՀ անվտանգության ապահովման տեսանկյունից արժեքավոր տեղեկություն՝ նպատակաուղղված երկրի ներքին անգործության ապահովմանը, ՀՀ տարածքում մահմեդական ընդվզումների չեզոքացմանը և ընդհանրապես անվտանգության կարևորագույն հիմնախնդիրների լուծմանը, և վերջին հաշվով՝ Հայաստանի Հանրապետության որպես պետության կայացման գործընթացներին:

⁴³⁸ ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 249, մաս II, ք. 431:

⁴³⁹ Է. Ա. Չոխրաբյան, Նախիջևանյան հիմնախարքը և Հայաստանի դաշնակիցները, էջ 233:

**3. Հետախուզական բաժանմունքի ձեռնարկած միջոցառումները
Թուրքիայի և այլ երկրների կողմից Հայաստանի
Հանրապետության նկատմամբ սադրիչ գործողությունների
կանխարգելման ուղղություններ**

1918-1920 թթ. ստեղծված բարդ իրադրությունում էլ Հայկական Հետախուզական ծառայությունը փորձում էր ոչ միայն սեփական ոտքերի վրա կանգնել, այլև Հնարավորինս արդյունավետ հակազդել թուրքական մեքենայություններին Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որի կուսակցական-քաղաքական ու ռազմական առաջնորդների պատկերացումները և ընդհանուր մարտավարությունը գտնվում էին Սևրյան ոգորումների շրջանակներում, որի պայմաններում էլ Հայ Հետախուզիչների կողմից Հայթայթված տեղեկատվությունը նրանց կողմից հաշվի էր առնվում այնքանով, որքանով նրանք պատկերացնում և նպատակահարմար էին գտնում, և նման իրավիճակում հաճախ քաղաքական հեռատեսությունը և խելամիտ ռազմավարությունը իր տեղը զիջում էր կարճատես Հանգուցալուծումներին հեռուն տեսնելու անկարողենակությանը: Այնպես, որ պետք չէ անտեղի միակողմանիորեն սխալներ և բացասական որակներ որոնել միայն այնտեղ, որտեղ, իհարկե, սայթաքումներ և սխալներ կան, սակայն բավարարվել դրանցով կամ դրանք հրամցնել որպես բարձրագույն կարգի ճշմարտություն, անտեղի գբադունք է և որոշակի առումով հերքվում է նաև Թուրքիայի վերաբերյալ Հայկական Հետախուզություն Հայթայթած տվյալներով, որոնք պարզապես անհարկի կերպով հարկ եղած ուշադրությունը չեն արժանացել պատասխանատու քաղաքական-պետական մարմինների կողմից: Դրանով իսկ էլ ավելի են բարդացրել և խճճել Հայկական բանակի գործերը, էսպես ազդելով նրա մարտունակության գործակիցների և, առհասարակ՝ գործունեություն վրա, պատճառ դառնալով՝ նրա ցավալի սայթաքումների և անթաքույց սխալների, մթազնելով նաև այն Հաջողությունները, որոնք նախկինում եղել էին: Եվ այն, որ այդ դժվարին օրերին ՀՀ Հետախուզական ծառայությունն իր գործակալն ունեցավ Թուրքիայում, դա էլ արդեն քիչ չէ, և անտեսել այդ փաստը, անտրամաբանական է, քանզի հենց Կ.Պոլսից ձեռք բերվող փաստերը կարող էին օգտակար լինել՝ նպատակելով Հայկական բանակի Հաջողություններին, ինչը խելամտորեն լիովին և իրապես չհաշվառվեց պետաքաղաքական, զինվորական այրերի վերին «Հարկերի» կողմից, երբեմն էլ նույնիսկ հեզնական վերաբերմունքի արժանացնելով Հայ Հետախուզիչների քրտնաջան աշխատանքը՝ ավելի շատ վստահելով օտար սպաների «ազնիվ խոսքերին և շաղակրատական բնույթի դատարկ ու սնա-

մեջ հավաստիացումներին»՝ գավառական քաղաքական մտածելակերպի մեջ պարսիակվելով:

Հայտնի է, որ հաղթահարելով զգալի ֆինանսական, տեխնիկական-տնտեսական և կազմակերպչական-կադրային դժվարություններ, ՀՀ հետախուզական և հակահետախուզական ծառայությունը հնարավորինս ձգտում էր լուծել անվտանգության ապահովման հիմնախնդիրները, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն ռազմաքաղաքական կացություն և Անդրկովկասում ու նրա շուրջ աշխարհաքաղաքական ուժերի դասավորվածություն, Թուրքիայի կողմից ձեռնարկվող ռազմաքաղաքական պատրաստությունների ու մեքենայությունների մասին: Ակներև է սակայն, որ հատուկ ծառայությունների թուլությունն արտահայտվեց նրանում, որ նրանք մասնավորապես 1920 թ. աշնանը բռնկված Թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, համեմատաբար աղոտ պատկերացումներ ունեին հենց այդ Թուրքական բանակի թե՛ թվաքանակի, թե՛ պլանների և թե՛ առհասարակ շատ հարցերի վերաբերյալ: Արդյունքն այն եղավ, որ չկարողացան պատնեշվել Թուրքական զավթողական պլաններից, և արդյունավետորեն հակազդել Ք. Կարաբեքիրի բանակի հետախուզական մարմինների գործունեությանը: Այդ փաստը որոշ հիմք ունի, այն էլ որոշակի կտրվածքով, միայն խիստ մասնակիորեն հաստատվում է թեկուզ նրանով, որ տարբեր հեղինակներ հակասական տվյալներ են բերում այդ ժամանակաշրջանի մասին, մասնավորապես Թուրքական բանակի թե՛ ռեալ կազմի, և թե՛ թվաքանակի մասին: «Տաճիկները լուռ ու անաղմուկ պատրաստվում էին Հայաստանի վրա արշավելու: Հայկական կառավարությունը շատ ուշ իմացավ նրանց այդ դիտավորության մասին», - գրում է ժամանակակիցը՝ Յ. Իրազեկը⁴⁴⁰: Մեկ այլ ժամանակակից՝ Կ. Սասունչին, ևս անդրադառնալով այդ հարցին, գրում է, որ այն ժամանակ, երբ Թուրքական բանակը Հայաստանի սահմանների վրա, Նախիջևանի և Կարսի նահանգներում նախապատրաստություններ էր տեսնում և ուներ ճյուղավորված լրտեսական ցանց, որի միջոցով ստանում էր անհրաժեշտ և տեղին տեղեկատվություն, ապա Հայկական բանակի թիկունքն այդ ժամանակ անապահով վիճակի մեջ էր, և մասնավանդ գրեթե «անգոյ էր Հայկական հետախուզությունը Թուրքական գործում», որ «գինուորական հետախուզությունը շատ ողբալի վիճակ մը՝ ունէր: Ոչ մէկ հայ կար Արեւելեան նահանգներու մէջ, որպէս զի կողմնակի ճանապարհով հայ գինուորականութիւնը հաւաստի լուրեր ստանար»⁴⁴¹, որը միայն մասամբ է համապատասխանում իրականությանը և որոշակի իմաստով ժխտվում է ինպես մեր կողմից նախկինում հրատարակված, այնպես էլ ներկա հետազոտություն

⁴⁴⁰ Տե՛ս Յ. Իրազեկ, Մօտիկ անցեալից: Պատմական դէպքեր, ապրումներ, 1917-1922, Պէյրոս, Տպ. «Համազգայինի», 1956, էջ 67:

⁴⁴¹ Տե՛ս Կ. Սասունի, Հայ-թուրքական պատերազմը// «Հայրենիք» (Բոստոն), 1926, N° 5 (41), էջ 75:

արդյունքներով, որոնցում շրջանավում են չափազանց էական և նորահայտ մի շարք արխիվային կարևոր վավերագրեր: Այդուհանդերձ, կրկին դիմենք **Կ. Սասունուն**։ Եզրափակելով իր ասելիքը, Կ. Սասունին ավելացնում է. «Մենք գուրկ կը մնայինք շարք մը ճշգրիտ տեղեկութիւններէ, որոնց չգոյութեան պատճառով՝ բավական վնասներ կրեցինք⁴⁴², մինչդեռ թրքական Արեւելեան բանակի հրամանատարութիւնը, օրը օրին, ճշգրիտ տեղեկութիւններ կը ստանար մեր զինուորական եւ քաղաքական վիճակի մասին: Անոնց լրտեսական ցանցը շատ լաւ կազմակերպուած էր, օժանդակ ունենալով Հայաստանի ամէն կողմ ցրուած թուրք-թաթար ազգաբնակչութիւնը»⁴⁴³:

Այս հեղինակների հետ համերաշխվում է նաև մեկ այլ ժամանակակից՝ **Վ. Արծրունին**, գտնելով, որ Հայկական հետախուզութիւնը մասնագիտորեն թույլ էր, և նրա կողմից կատարված աշխատանքներն անբավարար էին, նկատելով, որ «չնորհիվ մեր հետախուզական բաժնի անփութութեան, հակառակորդի յաջորդ քայլերուն մասին կը տիրէր ընդհանուր անորոշութիւն», ընդհանուր առմամբ ճիշտ կերպով նկատելով, որ «ներքին գործոց եւ ռազմական նախարարութեանց ու ճակատի հրամանատարութեան պարտականութիւնն էր ի գործ դնել իրենց բոլոր միջոցները՝ թոյլ չտալու, որ մեր երկիրը յանկարծակի գար»⁴⁴⁴, թեև տեղ-տեղ վերջինս ընդունում է, որ հետախուզները հնարավորինս ձգտում էին, որպեսզի Հայթայթին արժեքավոր տեղեկատվութիւն թշնամու ձեռնարկած և նրա կողմից ձեռնարկվելիք գործողութիւնների մասին, ավելացնելով, օրինակ, որ «այսինչ» գինվորականը «լայն տեղեկութիւններ է հաղորդեր թուրքերու շարժումներուն մասին», միաժամանակ ընդգծելով, որ «թշնամին անիրազեկ չէր Կարսի խուճապին: Հայկական հրամանատարութիւնը գոհ էր իր հետախուզական աշխատանքէն եւ կո՛ղէր հավատացնել, որ ինքը գիտէր տաճիկ հրամանատարութեան ռազմագիտական յաջորդ խաղը», միաժամանակ ընդգծելով, որ իշխող պլան-թպանի, իշխանութիւնների մասնագետական ընդվզումները ճնշելու անկարողնակութիւն «պայմաններուն մէջ պատմութիւնն արձանագրող մեծապէս անզօր կ'զգայ մեղադրել հետախուզական բաժանմունքները»⁴⁴⁵: Իհարկե, հենվելով Հայ Գնդունու (Համբարձում Թօփճեան) տվյալների վրա, արդարացիորեն բնականոն երևույթ չի կարելի համարել նաև այն հանգամանքը, որ 1920 թ. պատերազմի անմիջական նախօրյակին «Արդահանի և Կարսի բնիկ թուրք երևելիներէն ոմանք Երեւանի կառաւարութեան ապշեցուցիչ աչառութեամբ ու ծանծաղամտութեամբ, պաշտօնա-

⁴⁴² Տե՛ս Նույն տեղում:

⁴⁴³ Տե՛ս **Կ. Սասունի**, Հայ-թուրքական պատերազմը (1920-ին), Պէյրոս, 1969, էջ 21, 71:

⁴⁴⁴ Տե՛ս **Վ. Արծրունի**, Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Եր., «Մոլոնի» հրատ., 2002, էջ 71, 165:

⁴⁴⁵ Նույն տեղում, էջ 32, 72, 73, 159, :

կան պատերազմը չսկսած» նույնիսկ հաճախակի այցելություններ են կատարել սահմանային շրջանի բնակավայրերը, այցելել են «սահմանադուրը պաշտպանելու կոչված մեր զնդերը», այսպիսով գիտակ պահվելով «մեր բոլոր պետական-զինվորական բնույթ կրող» խնդիրներին⁴⁴⁶, այսինքն ըստ էություն առանց որևիցե դժվարությունների հայթայթելով անհրաժեշտ տեղեկատվությունը սահմանային շրջանի անց ու դարձի մասին, մեկ այլ կապակցությամբ բոլորովին հակառակ օրինակն է բերում: Սակայն միաժամանակ չի կարելի ողջունել նաև Կարսի նահանգապետի (Ստ. Ղորղանյան-Վ. Վ.) այն գործողությունները և բռնած դիրքորոշումը, որն իրեն անհրաժեշտ «կարևոր» տեղեկատվությունը ձեռք էր բերում Արգահանի գավառապետ, *Կաղիմովի* և այլ քուրդ երեւելիների միջոցով (ինչը տեսականորեն չի բացառվում, և այնուամենայնիվ), և այն հրամցնում ՀՀ իշխանություններին որպես «բարձրագույն, անառարկելի ճշմարտություն» ընթացող իրադարձությունների ու ղեկավարի մասին, ինչը նույնքան կասկածելի է և վստահություն չնրջնչող, որքան և բերված առաջին օրինակի պարագայում: Ավելին, եթե նույնիսկ ճշմարտության հատիկներ կան նրանում, Երևանի Հետախուզական բաժանմունքի կողմից ձեռքբերված տեղեկությունները իբր թե անբավարար էին հերքելու Կարսի նահանգապետի հաղորդած ավելի կարևոր տեղեկությունները, դրանով իսկ պրոֆեսիոնալներին ավելի ցածր դասելով, քան քաղաքացիական անձին, այդուհանդերձ չի կարելի լիովին համերաշխվել Հայ Գնդունու այն պնդումների հետ, թե «Երևանը ձեռք էջր առած եւ էջր առնէր ոչ մէկ ազգու գեներ` թախանցելութչամի Թուրքիայի ծրագիրներուն եւ հաշիւներուն», որ «հետախուզութեան, թչնամին ուսումնասիրելու, անոր մտածումներն ու ծրագիրները հրապարակ հանելու, առած քայլերը կշռելու եւ ըստ այնմ գործելու տարրական գիտելիքը պարզապէս մոռցուած, անտեսուած էին հայկ. բանակին իրաւասու եւ պատասխանատու պետերէն»⁴⁴⁷, ինչը նշանակում էր պարզապես չտեսնել նույնիսկ այն, ինչ որ առկա էր, իսկ այն, որ հայ հետախուզները այդ ծանր տարիներին համառ, դժվարին ջանքեր են գործադրել թչնամուն հակադրվելու և արժեքավոր տեղեկություն ձեռք բերելու, որ կծառայեր ՀՀ անվտանգության ապահովմանը, դա հաստատվում է բերված բազմաթիվ արխիվային փաստաթղթերի, այլ վավերագրերի շրջանառմամբ, որոնք տեղ են գտել մեր կողմից հրատարակված մի շարք աշխատանքներում⁴⁴⁸: Ժամանա-

⁴⁴⁶ Տե՛ս «Մարտկոց» (Փարիզ), 3 նոյեմբերի, 1932, N° 18:

⁴⁴⁷ Նույն տեղում:

⁴⁴⁸ Տե՛ս Վ. Վրդաբաճի Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ., Եր., «ՀՊՐՀ» հրատ., 1999, **Ույցի**` Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Եր., «Ատոլիկ», 2003, **Ույցի**` Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., «Լուսակն» հրատ., 2006, Հայաստանի Հանրապետության բանակը և հետախուզությունը 1918-1920 թթ., Եր., «Լուսակն» հրատ., 2009 և այլն:

կակից այն հեղինակները, որոնք փորձել են անդրադառնալ թեմային, նշում են հետախուզական ծառայությունների թուլություն կամ նույնիսկ դրա անգործություն մասին: Այդ տեսակետն են պաշտպանում պատմաբաններ **Է. Զոհարյանը**, **Մ. Կարապետյանը**⁴⁴⁹: **Կ. Սարգսյանը** ևս այդ տեսակետի կողմնակից է. մասնավորապես, վերջինս չբերելով կոնկրետ փաստեր, գրում է. «Քանի որ չկար կանոնավոր հետախուզական ծառայություն, ուստի հայկական գործքերի հրամանատարությունը տեղեկություն չունեի, թե ինչ է կատարվում սահմանից այն կողմ»⁴⁵⁰, ինչը ժխտող փաստեր վերն արդեն բերվել են, սակայն ստորև կբերենք այդ տեսակետն ամրապնդող այլ օրինակներ ևս, թեկուզև դրանք կարելի է գտնել հենց մեր կողմից 2006, 2009 թթ. հրատարակված մենագրություններում⁴⁵¹: Արևիվային փաստաթղթերն, ակնհայտորեն վկայում են, որ գործնականում, իրոք, դա այնքան էլ այդպես չէր. ՀՀ հետախուզական ծառայությունը ոչ միայն աշխատել է հայթայթել արժեքավոր տեղեկատվություն թշնամական ուժերի կողմից նախապատրաստվող ու ծրագրավորվող սադրանքների մասին, որը ևս փոքր ծավալի և կարևորության աշխատանք չէր, այլև, ինչպես ստորև կտեսնենք, ծառայությունը՝ ձեռք բերելով թանկարժեք և լուրջ տեղեկատվություն, որոշակի քայլեր էլ ձեռնարկել հակազդելու ՀՀ նկատմամբ թշնամական գործողություններին՝ մերկացնելով և կանխելով հակառակորդի լրտեսների ծավալած գործունեությունը ՀՀ տարածքում, ինչպես նաև հնարավորինս արդյունավետ և գործուն միջոցներ ձեռնարկելով բանակը գորեղացնելու ուղղվածությամբ՝ փորձելով շտկել նրանում տեղ գտած թերությունները: Այդ մասին վկայակոչում կա **Ա. Գյուլխանդանյանի** մոտ. «Միաժամանակ Հայաստանի զինուորական հետախուզական գեկոյցները ցոյց էին տալիս, որ թուրք կանոնաւոր գործառններ են շարժում Օլթիի, Սարըղամիշի եւ Ալաշկերտի ուղղվածեամբ եւ Արդահան Օլթիի շրջաններում կազմակերպել էին գնդակահիրներով զինուորած քրտական հրոսակախմբեր: Նոյնը կատարում էր նաեւ Կաղզուան-Սարիղամիշ տարածութեան վրայ»⁴⁵²: Հետախուզական ծառայությունների կողմից հայթայթված տեղեկատվության արժեքավորությունը

⁴⁴⁹ Տե՛ս **Է. Զոհարյան**, 1920 թ. բուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., «Ոսկան Երևանցի», 1997, էջ 85-86, 167-171, 174-176, 348, **Ուլյանի**՝ Հայաստանի Հանրապետության արքեպիսկոպոսական շրջանների հնագանդեցումը 1920 թ. հունիս-հուլիսին// «Բանբեր Երևանի Համալսարանի, 2006, № 1 (118), էջ 11-12, 16-17: **Մ. Կարապետյան**, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), էջ 98-99:

⁴⁵⁰ **Կ. Սարգսյան**, Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում (ինչպե՛ս կործանվեց Հայաստանի Հանրապետությունը), Եր., «Նաիրի» հրատ., 2007, էջ 110:

⁴⁵¹ Տե՛ս **Վ. Վիրապյան** Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, էջ 124-182, **Ուլյանի**՝ Հայաստանի Հանրապետության բանակը և հետախուզությունը 1918-1920 թթ., և այլն:

⁴⁵² **Ա. Գյուլխանդանյան**, Անդրկովկասի Հանրապետությունը// «Հայրենիք» (Բոստոն), 1967, № 4, Ապրիլ, էջ 77:

Հաստատում է նաև **Ս. Վրացյանը**. «Հունիս ամսից սկսած, Հայկական Հետազոտությունները (ասել է թե՛ Հետախուզություններ. - Վ. Վ.) նկատում էր թուրքերի կողմից զինվորական շտապ պատրաստություններ Հայաստանի ուղղությամբ: «Թուրքահայաստան ուղարկված գործակալները, կարգում ենք Հայաստանի Գլխավոր սպայակուլտի Հունիսի 17 գաղտնի գեկուցման մեջ, վկայում են թուրք կանոնավոր զորամասերի ներկայությունը Օլթիի և Սարիղամիշի ուղղությամբ և Ալաշկերտի շրջանում: Կատարելապես ստույգ կերպով Հաստատված է, որ թուրքական 12-րդ դիվիզիան գտնվում է Խորասան-Ջիվիխում, կենտրոն ունենալով Խորասանում: Քարոզչությունը թուրքիայի և Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է: Այդ նպատակով մեծ քանակությամբ թուրք գործակալներ են ուղարկված Հայաստանի ներսերը, մահմեդական գյուղերը, և ամեն տեղ Հայտնաբերվում են մեր վարչության և Հակահետախուզության կողմից: Մասնավորապես զորավոր է թուրք գործակալների ազդեցությունը Արդահան-Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիներով զինված քրդական հրոսակախմբեր: Նույն պատրաստությունը կատարվում է և՛ Սարիղամիշ-Կարգվան տարածություն վրա, և՛ ավելի հեռուները՝ Բարթոլյան լեռնաշղթայի քրդաբնակ մասերում՝ մինչև Արարատ»⁴⁵³:

Ավելին, **Ռ. Հովհաննիսյանը**, բերելով վկայակոչումներ թուրքական նախապատրաստությունների և այն մասին, որ դեռ 1918 թ. Թուրքիայի ռազմական նախարարը արտոնել էր Անդրկովկասում գտնվող բանակային սպաներին ծառայության մտնել Հյուսիսային Կովկասի և Ադրբեջանի հանրապետությունում, իսկ նոյեմբերին թուլյատրեց ի դեմս Նուրի փաշայի վերջինիս Հետ պայմանագիր կնքել, որով թուլյատրվում էր օսմանյան բանակի սպաներին ու զինվորներին հոժարակամ ծառայության մտնել ադրբեջանական բանակում, որոնք հետագայում գործուն դեր խաղացին Հայ-ադրբեջանական սահմանային կռիվներում⁴⁵⁴, ինչպես նաև Երևանի նահանգում հրահրված խռովություններում, միաժամանակ Հաստատապես փաստում է Հայկական Հետախուզության տեղեկացվածության մասին այդ խարդավանքների նախապատրաստության մեջ. «Այն ժամանակ, երբ Կարաբեքիրը բազմաթիվ չափազանցված լուրեր էր տարածում, Հայկական բանակի Հետախուզության սպաները և գլխավոր սպայակուլտը հաղորդում էին Ալաշկերտում, Օլթիում և Սարիղամիշում թուրքական կանոնավոր զորքերի առկայության մասին (1919 թ. կեսերի տվյալներով - Վ. Վ.): Կարսի մարզում նկատվել էին նաև թուրքական գործակալներ, որոնք մահմեդական գյուղերին կոչ էին անում մարտահրավեր նետել Երևանի կառավարությունը և Հայտնում էին, որ Կարմիր բանակը մասնակցում է Հայերի դեմ ուղղված

⁴⁵³ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 314:

⁴⁵⁴ Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, 1918-1919, էջ 61-

արչավանքին»⁴⁵⁵: Այնուհետև այդ կապակցութեամբ Ռ. Հովհաննիսյանը նկատում է, որ հենց դրանում էր իրավացի **Ք. Կարաբեքիրը**, գտնելով, որ հայերը երբեք չէին կարող այնքան պարենամթերք ու պաշարներ ձեռք գցել, որ պահեին 30.000-անոց զորք, և որ առավել ևս **Անդրանիկի** համար (Ք. Կարաբեքիրը վկայակոչում էր նշանավոր հայդուկապետ և քաջազուն զորապետ **Անդրանիկին**, քանզի վերջինս մահմեդականների ահուսարսափին էր) անհնարին կլինի նույնիսկ 10.000 «մուրացկան հայեր» հավաքել», որ հենց այդ պատճառով էլ «Հայաստանը չի կարողանա իրականացնել արևելյան վիլայեթների միացումը առանց Դաշնակից տերութիւնների գործուն մասնակցութեան, որի համար հղված անվերջ խնդրանքները մնում էին անպատասխան»⁴⁵⁶. Հենց այդ հանգամանքից «տազնապած» **Ա. Ահարոնյանը** ահագանգում է Փարիզի Հաշտութեան Վեհաժողովին, սակայն անարդյունք և անարձագանք, դա որևիցե կերպ ազդեցութիւն չթողեց Խորհրդային Ռուսաստանի և ազգայնական Թուրքիայի միջև հաստատվելիք վերահաս կապերի վրա ⁴⁵⁷:

Ինչպես արդեն կարելի է նկատել, Առաջին Հանրապետութեան վերը բերված ժամանակակիցների «գաղտնիութիւններում» ակնհայտորեն արծարծված մտքերի ու եզրահանգումների որոշակի շփոթ է նկատվում, և մեր կարծիքով, չի կարելի միանշանակ, իրադարձութիւնների ժամանակակից կողմից արտահայտված ամեն մի միտք հալած յուրի տեղ ընդունել, քանզի վերջիններս հանդիսանալով այդ դեպքերի անմիջական մասնակիցները, այդ թվում նաև **Վ. Արծրունին** և այլոք, հոգեբանորեն փորձելով ազատվել որոշակի բարդություններից, փորձել են իրական պատճառահետևանքային կապերը, այդ թվում նաև Հայկական բանակի 1918-1920 թթ. սպիթաբուսների և ձախողումների բոլոր հնարավոր և անհնարին թվացող պատճառները որոնել որոնել այլ տեղ և այլ չափումների մեջ դիտարկել պատմաքաղաքական հայտնի իրողութիւնները, որը, մեր կարծիքով, անբավարար է խորքային և ճշգրիտ եզրակացութիւնների հանգելու տեսանկյունից: Այդուհանդերձ, արտահայտած տեսակետներում կան նրբերանգներ, որոնք, իրապես օգտակար են և ինչ-որ բաներ անուղղակիորեն հուշում են մեզ: Այսպես, հենց նույն **Վ. Արծրունին** գրում է. «Մեր երկրի *de facto* ճանաչումը յառաջ բերու մասսայական հոգեկան արբեցում... բիւրօ-կառավարութիւնը, ամբողջապէս տարուած ներքին մաքրագործումի եւ մեր սահմանները մեր իսկ ուժերով ուղղելու ինքնավստահ խանդավառութիւնէն, անկարող էր կշռել ահաւորութիւնը ստեղծուած վիճակին: Շնորհիվ այս դժբախտ հանգամանքին տաճիկները հնարաւորութիւն ունեցան հանդարտ եւ աննկատ ինքզինքնին կազմ ու պատրաստ վիճակի մէջ դնել յետոյ միայն պարզել իրենց վերջ-

⁴⁵⁵ Ռ. Հովհաննիսյան, նշված աշխատությունը, էջ 490:

⁴⁵⁶ Նույն տեղում, էջ 469:

⁴⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 457:

նական մտադրութիւնը»⁴⁵⁸: Ինչպես տեսնում ենք, չափազանցությունը ևս լավ զբաղմունք էջ, մանավանդ, երբ գործի մասին դատում են և դատավորի դեր են ստանձնում ոչ պրոֆեսիոնալներ, հետախուզական գործից հեռու այնպիսի մարդիկ, ինչպիսիք Հանդիսանում են **Կ. Սասունին, Վ. Արծրունին** և այլք, չնայած ավածի ռացիոնալ հատիկներին: Եվ դեռ ավելին: Այդ նույն հեղինակների տեսակետների մանրագնին ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում որոշակի շփոթ և հակասականություն: Այսպես, Վ. Արծրունու կողմից բերած մի կարևոր փաստ ինքնին ժխտող դեր է կատարում նրա հայտնի աշխատության մեջ բերված բազմաթիվ այլ պնդումների նկատմամբ, ինչը շատ կարևոր է պատմական իրողությունները ճիշտ ներկայացնելու տեսանկյունից: **Այսպես, Վ. Արծրունին, նշելով, որ «ողբալի էր նաեւ հայկական հետախուզական բաժնի կատարած գործը», որ «հայկական հետախուզութիւնը երբէք մասնագիտութեան տպաւորութիւն թողուցած չէր»,** դրան զուգահեռ մեկ այլ տեղ գալիս է շատ ուշագրավ և կարևոր եզրահանգման. «Քանիցս մեր հետախուզական բաժնիները զանազան տեղերէ հաղորդեցին, թէ Մոսկուայի եւ Անգորայի միջեւ կապեր կը հաստատուին զինուորական օժանդակութեան: Քանի, քանի անգամ սահմանազլխին վրայ գործող մեր հետախոյզները փաստերով արձանագրեցին թուրքերու ռազմական նախապատրաստութիւնները, բայց ի՞նչ ըրին մեր կառավարութիւնը եւ զինուորական իշխանութիւնը. երկուքն ալ հաւասարապէս ոչինչ ըրին: Ենորհիվ այս դատապարտելի անտարբերութեանը չէ՞ր, միթէ, որ օգոստոս 21-ին, թուրքերը գիծերով Պարտուսի ուղղութեամբ առաջանալով, յարձակեցան մեր պահակներուն վրայ, լաւ դաս մը տուին եւ ապահով կերպով քաշուեցան իրենց տեղերը»⁴⁵⁹:

Ավելին, որոշ փաստաթղթերի, ռազմահետախուզական ամփոփագրերի մանրագնին վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ չնայած հետախուզական ծառայությունների կողմից հաղորդած տեղեկատվության որոշակի հակասականությանը և աղոտությանը, Հայաստանի քաղաքական և կուսակցական ղեկավար շրջանները հարկ եղած ուշադրությամբ չեն վերաբերվում ստացված տեղեկատվությանը, և ավելի շուտ կողմնորոշվել են աշխարհաքաղաքական կոնյուկտուրայի թելադրանքով և մեծ տերությունների քաղաքական շահերին հարմարվելով, քան թե իրատեսական և իմաստուն որոշումներ կայացնելով՝ հարգելով սեփական հատուկ ծառայությունների տքնաշան աշխատանքը: Դա է հաստատում **Ալ. Խատիսյանը. «Առաջին տեղեկութիւնները պատրաստուող յարձակման մասին հայկական կառավարութեան խուզարկու մարմինները սկսան ստանալ Օգոստոսին: Անոնք այս տեղեկութիւնները հաղորդեցին Դաշնակիցներու ներկայացուցիչներուն՝**

⁴⁵⁸ Տե՛ս **Վ. Արծրունի**, Հայ-տաճկական պատերազմը, Հայ սպայությունը, Շատախ, էջ 103:

⁴⁵⁹ Տե՛ս **Վ. Արծրունի**, նշված աշխատությունը, էջ 33-34, 70, 185, 330:

պատրաստուող դէպքերը կանխելու նպատակով: Այս տեղեկութիւնները հասան մինչև և Փարիզ, բայց անոնց առանձին նշանակութիւն չտրուեցաւ»⁴⁶⁰: Այս առումով մի շարք փաստաթղթեր ևս իրենց վրա ուշադրութիւն են հրավիրում, պահանջելով վերամաստավորել և վերազնահատել, նորովի դիտարկել և արժեքավորել պատմական անցյալի քաղաքական իրողութիւնները, դէպքերն ու զանազան անցքերը: Դրանցից ակնհայտ է դառնում, որ հայկական հետախուզութիւնը որոշակի ջանքեր էր գործադրում քիչ թե շատ արժեքավոր տեղեկութիւն ձեռք բերելու համար, որը կծառայեր ՀՀ ազգային պետական անվտանգութեան շահերի ապահովմանը տարածաշրջանում: Գլխավոր շտաբի հետախուզական բաժինն իր հնարավորութիւններին շրջանակներում տեղեկութիւններ է հայթայթել և՛ 1919 թվականին, երբ արդեն կարծես թե կազմակերպվել էր նրա տարբեր օղակների աշխատանքը, թե՛ 1920 թվականին, որը բարենպաստ էր նրա գործունեութեան համար՝ ընդհուպ մինչև 1920 թ. Սևրյան օգոստոսյան խանդավառութեան օրերը, և թե՛ կազմալուծիչ 1920 թվականի երկրորդ կեսին, երբ բռնկվեց թուրք-հայկական պատերազմը, և Անտանտի դաշնակից երկրները մեկը մյուսի հետևից լքեցին Անդրկովկասը, տեղը զիջելով տարբեր բեւեռներից մոտեցող քեմալականներին և բոլշևիկներին, որոնք էլ Հայաստանը բաժանեցին ազդեցութեան ոլորտների: Ազգերի Լիգան, որ պարզապէս *Պիղատոսի* պես ձեռքերը լվաց և երես դարձրեց հայերից, ի դեմս մեծ տերութիւնների, լուռ մնաց և գեթ մեկ գինվոր չուղարկեց Հայաստան: Ոչինչ չտվեց նաև Թուրքիայի և Հայաստանի միջև միջնորդի դերի ստանձնումը ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի կողմից, իսկ ԱՄՆ-ի սենատը դեռևս հունիսի 1-ին հրաժարվել էր Հայաստանի նկատմամբ կարծեցյալ խնամակալութիւնից: Հայաստանը լքվեց Անտանտի երկրների համախմբի, Ազգերի Լիգայի կեղծ բարեկամների կողմից, և թողնվեց թուրք գիշատչի դեմ միայնակ և անօգնական, այն թուրքին դեմ առ դեմ, որին «Թրքատյացի» համբավ ունեցող Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Զորջը **համարում էր ժանտախտ և այն վայրերի անեծք, որտեղ նա փռում էր քոչվորի իր վրանը, և որն ի տարբերութիւն լեզենդից հայտնի վայրի գազանի, նույնիսկ երախտագիտութեան զգացում չուներ այն մարդու նկատմամբ, որը բուժել էր նրա վիրավոր ձեռքը**⁴⁶¹:

Ասվածից ակնհայտ է, որ այդ տարիներին ռազմական և կուսակցական-քաղաքական շրջանները չըմբռնեցին կատարված և կատարվող փոփոխութիւնների խորքային իմաստները, չընկալեցին ու հաշվի չառան, որ Մեծ Բրիտանիայի մեկնումից հետո, հետևաբար, հենց ինքնազգային Ռուսաստանը

⁴⁶⁰ Ալ. Խատիյան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ. տպ., Պէյրոս, տպ. «Համազգայինի», 1968, էջ 254:

⁴⁶¹ St'u Ллойд Джордж, Европейский хаос, М; 1924 // St'u Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919-1927, Т. I. Первые шаги национально-освободительного движения, 1919, М., Гос. изд-во "Лениздат" Н.К.И. Д., 1929, стр. XXIII.

և վերականգնացող Թուրքիան էին այն երկու պետությունները, որոնք Կովկասյան այդ դատարկությունը պետք է լցնեին: Բայց, իրերի բերումով, Հայաստանը չկարողացավ համաձայնության գալ այդ պետություններից որևիցե մեկի հետ: Հայաստանի և Թուրքիայի միջև Աևրի դաշնագրի ուրվականն էր, իսկ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կախվել էր Հայաստանի Հանրապետության խաբուսիկ հույսը՝ դաշնակիցների օժանդակության հետ կապված, դաշնակիցներ, որոնք ինչպես շատ դիպուկ նկատում են անգլիացի հետազոտողներ, Կովկասի պատմության գծով մասնագետներ **Գ. Մ. Լանգը և Ք. Զ. Ուոքըրը**, հայերին և հայ ժողովրդի քաղաքական լիզերներին հմտորեն կերակրում էին «Սև ծովից մինչև Միջերկրական ծով տարածվող Հայաստան ստեղծելու երազային գաղափարով»⁴⁶²: Կար իրավիճակի անորոշության զգացողություն: ՀՀ հետախուզական ծառայության որոշ ներկայացուցիչներ, բարձրագույն սպայական-հրամանատարական և կուսակցական-քաղաքական որոշ շրջաններ ավելի զգուշավոր էին այս կամ այն երկրին նախապատվություն տալու հարցում, նույնիսկ աղոտ կալածներ կային, թե ով է իրականում ավելի ուժեղ՝ բոլշևիկյան Ռուսաստանը, Կոլչակը, թե՞ Դենիկինը (ինչը երևաց 1919 թ. կեսերին Կամավորական բանակի կողմից Երևան գործուղված **գնդապետ Լեսլիին** հայկական կառավարական շրջանների կողմից ցուցաբերված սառն ընդունելության ժամանակ)⁴⁶³, անգլիացիները, ամերիկացիները թե՞ այլ ուժեր: Այդ մասին էր հենց զգուշացնում գեներալ **Գ. Ղորղանյանը** 1919 թ. հունվարի 20-ին Թիֆլիսից **Ս. Տիգրանյանին** ուղղված գաղտնի գեկույցում. «Մեր արտաքին քաղաքականությունը պետք է լինի չափազանց զգուշավոր: Մենք չենք կարող և չպետք է վարենք բացառապես անգլիամետ կամ ուսսամետ քաղաքականություն: Մենք պատերազմի հենց սկզբից մեր ճակատագիրը կապել ենք Համաձայնության երկրների հետ և դրանից չենք հրաժարվել մինչև վերջին օրը: Այժմ մենք բոլորին պիտի հասկացնենք, որ մեր հարցերի լուծումը սպասում ենք ոչ թե Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից կամ Ամերիկայից առանձին-առանձին, այլ Համաձայնության երկրներից: Մեր ճակատագիրը պետք է որոշի Դաշնակիցների խորհրդաժողովը Փարիզում: Իսկ մինչ այդ որոշումը սխալ կլինի մեր բարեկեցությունը կապել Համաձայնության անդամ այս կամ այն երկրի հետ, քանի որ հնարավոր չէ կանխատեսել այդ երկրի դիրքորոշումը ապագա խորհրդաժողովում: Հնարավոր է, որ մենք ժամանակավոր հաջողություն ունենանք, սակայն, հնարավոր է

⁴⁶² Տե՛ս **Դեյվիդ Մարշալ Լանգ, Քրիստոֆեր Ջեյմս Ուոքըր**, Հայերը (Հայ ժողովրդի պատմություն), Խմբ. Կ. Մ. Խոնդավերդյանի, Երևան, Հայկ. համր. գլխ. խմբ., 1992, էջ 31:

⁴⁶³ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 -1920 թթ.), Երևան, «Եր. Համալս. հրատ.», 2005, էջ 88:

նաև, շատ բան կորցնենք»⁴⁶⁴: Այդ հույսերը տարան ՀՀ ճակատագրական մեկուսացման և անկման: Երբեք էլ էական օգնություն դաշնակիցների կողմից չեղավ, եղան անամեջ հայտարարություններ ու խրախուսանքներ: Իսկ հարևանների հետ այդպես էլ տարբեր պատճառներով հնարավոր չեղավ լեզու գտնել: Եվ սակայն Դեմոկրատիկ բանակի բոլշևիկներից պարտություն կրելուց հետո էր միայն, որ 1920 թ. հունվարին, Դաշնակիցները Անդրկովկասյան հանրապետություններին իբրև անկախ պետություններ ճանաչեցին, նպատակադրելով Կովկասը և Պարսկաստանը հետ պահել բոլշևիկյան ազդեցությունից, որի պայմաններում գործնական քայլերի ձեռնարկումը ու դրանց ապահովման ռազմավարությունը հայտնվեցին փակուղում. իշխող տրամադրությունների մասին պատկերավոր մեջբերում է անում Ռ. Հովհաննիսյանը՝ վկայակոչելով **Ա. Գյուլխանդանյանի** ելույթը Կառավարական տանը, կապված ՀՀ դե-ֆակտո ճանաչման շուրջ առաջացած ոգևորության հետ: ՆԳ նախարարը իր ելույթում նշել էր, որ Հայաստանը նման է մի հսկայի, որի սիրտը Երևանում է, ձեռքերը՝ Ալեքսանդրապոլում, գլուխը՝ Ղարաբաղում, իսկ ոտքերը՝ Դիարբեքիում և Սև ծովում: շարունակելով ասելիքը, նա նկատում է, որ այժմ հսկան արթնանում է դարբերի քնից և զարմանում, որ դեռ ինքը ողջ է: Բայց մենք գիտենք, որ սիրտը երբեք չի դադարել բաբախելուց, շարունակել է ասելիքը Ա. Գյուլխանդանյանը, որ այսօր Դաշնակիցները իրականացրել են այդ երազանքը, և մենք համոզված ենք, որ շուտով տիտանը կշարժի գլուխը, ոտքերը կողզի, և ուղիղ կկանգնի, և այդ ժամանակ նորից կհավաքվենք ու կնշենք Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի ճանաչումը⁴⁶⁵: Ռ. Հովհաննիսյանը իրատեսական է գնահատում այդ պատմափաստը, գրելով, որ Արևմտյան կողմնորոշումը ռիսկ էր, քանզի այն Հայաստանը ետ էր չլրտում Ռուսաստանին իր նկատմամբ «կախվածությունից» դեպի «ավելի հուսալի, ավելի հզոր» երկրները, որոնք այդքան շատ բան էին «ներդրել» Հայկական ողբերգություն մեջ՝ վերջին հիսուն տարվա մեջ⁴⁶⁶: Քաղաքական-ռազմական և կուսակցական-

⁴⁶⁴ ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց. 1, գ. 193, մաս I, ք. 35- 36:

⁴⁶⁵ Տե՛ս «Յառաջ», Երեան, Յունվար, 28/1-2, 29 // 2. 1920, Ռ. Գարքինյան, Հայաստանի Հանրապետության օրերնե՛մ // «Հայրենիք» (Բնստոն), հատոր 28, N 6 (293), 1950, հունիս, էջ 24-25, **R. G. Hovannisian**, The republic of Armenia, vol. II, p. 513:

⁴⁶⁶ **R. G. Hovannisian**, The republic of Armenia, From London to Sevres, February - August, 1920. - Berkeley, Los Angeles, London, 1996, vol. III, p.1: Ավելին, Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ հակառակ իրենց հաստատուն արևմտյան արևելամին, Դաշնակցությունը և հայկական կառավարությունը մնացին առամծին և լքված Արևմտքի կողմից, որը Արևմտյան Հայաստանը զո՛ղ էր թողի վրա, երկիրը ուժասպառ եղավ, օժանդակություն չեղավ, և հավելյալ ուշացումը ամհրաժեշտություն դարձրեց ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանի և Թորքիայի գործակցությունը, այլև առիթ տվեց թուրքերին Հայաստանը քնաջնջելու և ճնշող պայմաններ պարտադրելու - Ռ. Հովհաննիսյան, Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը Հայաստանի Հանրապետության մեջ // «Գրոշակ», քիւ 19 (1402), 13 յունվարի, 1993, էջ 32-33: Թեկուզև քիչ թե շատ ուշացումով, հենց այդ ժամանակ քաղաքական որոշ գործիչների մոտ արդեն կար ոչ

կառավարող շրջանները չէին ցանկանում այդ տարիներին, և հատկապես 1920 թ. սահմանագծում նկատել այն, ինչ արդեն տեսանելի էր, կաշուն հուլյաներ էին փայփայլում, որ հանկարծ Դաշնակիցները կկերպարանափոխվեն և հանուն Անտանտի գծով իրենց կրտսեր եղբայրակցի և պատերազմում ծանր կորուստներ ունեցած Հայաստանի ու Հայ ժողովրդի կորուկ և արդյունավետ քայլեր կձեռնարկեն, և հողմացրիվ կանեն Կարմիր-բոլշևիկյան ցնցոտիավոր բանակներին, որոնք սակայն իրենք ջարդուփշուր արեցին թե՛ Կոլչակի, թե՛ Դենիկինի, թե՛ Վրանգելի, թե՛ Անգլիայի կազմակերպած այսպես կոչված «14 երկրները» և թե՛ առհասարակ մնացյալ բոլոր սպիտակ և ոչ սպիտակ բանակները, և այդ տեսանկյունից տեղին է նկատվել, որ քանզի «արտաքին քաղաքական տեսակետին, միացեալ Հայաստան մը՝ ունենալու խնդիրը գրեթէ լուծուած էր և դիւանագիտութիւնն էր, որ խելահեղ վազքով մը իր ետեւէն կը քաշէր Հայ դեկավար միտքը», հետևաբար էլ «Անգրկովկասի եւ Տաճկաստանի հակամարտութիւնները ժամանակաւոր երեւոյթներ կը նկատուէին»⁴⁶⁷: Դա դիպուկ է նկատել հետախույզ **Տ. Դեվոյանցը**. «Բայց Տրոցկիներն եւ Չիչերինները չկան այլևս: Նրանց փոխարինել է Սովետական մի նոր դիւանագիտութիւն, որ այժմ զբաղուած է իր նախորդների դիւշած հողամասերը հաւաքելով եւ կցելով Խորհրդային Ռուսաստանին: Այսպէս, նա վարուեց Լադիխայի, Լիտուանիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Բեսարաբիայի ու Բուկովինայի հետ: Այդպէս պիտի վարուի նաև իր կորցրած միւս հողերի հետ»⁴⁶⁸: Աշխարհաքաղաքական իրավիճակի և դաշնակիցների վերաբերմունքի էական փոփոխությունները Հայաստանի նկատմամբ դիպուկ նկատել են **Դ. Մ. Լանգը և Ք. Զ. Ուոքըրը**. «1920-ի ընթացքում աշխարհի իրավիճակը այնպիսի դրամատիկ փոփոխություններ կրեց, որ այլևս իմաստազրկվեցին դաշնակից տերությունների Հայաստանին տված խոստումները, բուռն վիճաբանություններից հետո դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկ-

շատ հաստատուն, սակայն աստիճանաբար որոշակիացող հասնողները բոլշևիկների հնարավոր հաստատունության և համաշխարհային նոր շեղումից հետո դառնալու տեսանկյունից: Դա նրբորեն նկատել է **Ալ. Խառոյանը** չ՛ պառլամենտի արդեն 1920 թ. ապրիլի 30-ի նիստում (N° 86) ունեցած ելույթում. «այնուամենայնիվ, չպետք է անտեսել, որ բոլշևիկներն են հանդիսանում Ռուսաստանի իրավունքի, այդ փաստը մատուցում է մասնավորապես Եվրոպայում, ուր նկատվում է դեպի Ռուսաստան ունեցած քաղաքականության բեկում. ֆրանսիական պառլամենտը հանձնարարել է կառավարությանը՝ բանակցություններ վարել Ռուսաստանի հետ: Նույն տեսակետին է Իտալիան, Ամերիկայի դիրքը հայտնի է ձեզ, այն ինչ հնարավոր էր հունվարին, այն հնարավոր է դառնում, և մեծ տերությունները մտածում են կամ գուցե սկսել են բանակցություններ վարել Ռուսաստանի հետ թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական հարցերի վերաբերյալ» // «Յառաջ», 15 մայիսի, 1920, N° 91:

⁴⁶⁷ **Կ. Մասունի**, Հայ-թրքական պատերազմը // «Հայրենիք» (Բոստոն), 1926, N 4 (40), էջ 57, 58:

⁴⁶⁸ **Տիգրան Դեյդեանց**, Կեսանքիս դրոսագներից // «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 4 (249), Յուլիս-Օգոստոս, էջ 82:

ներին և ինչպես առածն է ասում, նրանք զերազասեցին «կարմիր լինել, քան մեռած»⁴⁶⁹: Դա հրաշալի են հասկացել թուրք քաղաքական գործիչները՝ իրենց մարտավարությունը կառուցելով ՀՀ Անտանտյան Դաշնակիցների անվճռականություն և բոլշևիկների հետ փաստացի բարեկամություն վրա, որից ոգևորվելով թուրքերը լավագույն դեպքում դեմ չէին Հայաստանի կազմավորմանը Անդրկովկասի հաշվին, իսկ թուրքահայաստանի ճակատագիրը պետք է որոշվեր միայն հենվելով **Մ. Քեմալի կողմից հռչակված այսպես կոչված «ազգային սահմանների» և «ազգային սովերենիտետի» դադարների վրա⁴⁷⁰, որպես հիմնական նպատակադրում ունենալով «բոլոր ուժերով, մինչև արյան վերջին կաթիլը համատեղ պաշտպանել հայրենիքը ցանկացած ներխուժումից և հատկապես դադտնի մտադրությունից նրա տարածքում ստեղծել հունական կամ հայկական պետություն», օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում դիմելով և՛ զենքի, և՛ բարոյական կարգի զանազան միջոցների օգնությամբ: Եվ դեռ Ավելին, Մ. Քեմալը գտնում էր, որ անգամ դաշնակիցների միջամտություն պարագայում նրանք ևս կդասվեն իրենց հակառակորդների շարքում, ովքեր կփորձեն ոտնձգություն կատարել իրենց իրավունքների նկատմամբ ⁴⁷¹:** Դեռ 1919 թ. հոկտեմբերի 13-ին Վելիզ բեյին հասցեագրված հեռագրում Մուստաֆա Քեմալ փաշան հատուկ ընդգծում է, որ ազգը ոչ մի դեպքում չի կարող համաձայնվել, որ իրենց երկրի սահմանների մեջ գտնվող թեկուզ մեկ թիզ հող միանա Հայաստանին⁴⁷²: Դա լավ է նկատել Տ. Դեվոյանցը գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 15-ի գեկուցագրում⁴⁷³, գտնելով, որ այդ նպատակի իրագործման համար նրանք հարմար են գտնում կողոպտել անգամ սեփական հարուստներին՝ հավաքելով անհրաժեշտ գրամաքանակը: Դրանից հետո, գրում է Տ. Դեվոյանցը, թուրքերը լուրջ և տենդաբի նպատրաստություններ տեսան, որի արդյունքում 1919 թ. նոյեմբերին նոր ազգային ուժերի քանակը հունական ճակատի վրա հասավ շուրջ 30 հազարի, որից հետո Ֆրանսիայի անհաջողությունները 1920 թ. Մարաշի շրջանում և հայերի կոտորածը խրախուսեցին «Միլի» ուժերին, և նրանք գրոհներով գրավեցին համարյա ողջ Կիլիկիան, սկսեցին հաջող ռազմական գործողություններ անգլիացիների դեմ Միջագետքում: Դեռ 1920 թ. մայիսին Դեվոյանցը եկել էր այն եզրակացություն, որ նկատի ունենալով ստեղծված պայմանները, ինքն անհավանական չի համարում, որ

⁴⁶⁹ Տե՛ս Գ. Մ. Լանգ, Զ. Ջ. Ուոքըր, Հայերը, Հայերը (Հայ ժողովրդի պատմություն), էջ 32:

⁴⁷⁰ Տե՛ս Кемаль Ататурк, Избранные речи и выступления, М., "Прогресс", 1966, стр. 47-48, 76 и т. п.

⁴⁷¹ Տե՛ս Мустафа Кемаль, Путь новой Турции, Т. I, М.: Гос. Изд-во Литиздат Н.К.И.Д., 1929, стр. 414:

⁴⁷² Տե՛ս Мустафа Кемаль, Путь новой Турции, Т. II, М.: Гос. Изд-во Литиздат Н.К.И.Д., 1932, стр. 10-11, 208:

⁴⁷³ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոտանո), քիվ 17/17 պսuh., 12, դ. 3, ք. 52:

Թուրքերը կսկսեն ռազմական գործողություններ Հայաստանի դեմ՝ խորտակելու համար հայկական պետականությունը⁴⁷⁴:

Տ. Դեվոյանցը վերլուծություն է անց կրել վերաբերող այդ տարիների բարդ աշխարհագրապական իրադարձություններին վերաբերող հետախուզական մի շարք տեղեկագրեր, նույնիսկ պնդում է, որ «Հայաստանի պատերազմական նախարարությունը եւ Փարիզի Հայաստանի Պատուիրակությունը դեռ 1920 թ. ապրիլին դիտէին տաճիկ-մեծամասնական յարձակումների մասին»⁴⁷⁵: Դրան Տ. Դեվոյանցը խիստ բազմանշանակ ավելացնում է հետևյալը. «Հայաստանի հետախուզական բաժանմունքի ստացած գաղտնի զեկուցումների մէջ շատ անգամն էր շեշտուում էր, որ Տաճկաստանի ազգային ուժերը Մուստաֆա Քէմալ փաշայի ղեկավարութեամբ շտապ վերակազմւում, կազմակերպւում են: Եւ, հակառակ Դաշնակիցների կտրուկ հրահանգներին, երիտասարդ Թուրքերը [] հասան իրենց նպատակին, այն է՝ կազմեցին Ֆերիզ Ռիզա փաշայի նոր դահլիճը, բացառաբար իրենց կուսակիցներից, եւ այդպիսով «Միլլի Թաշկիլաթի» դրուժիւնը դարձավ օրինական»⁴⁷⁶: Իսկ Սովետական Ռուսաստանի բռնած դիրքորոշման վերաբերյալ Տ. Դեվոյանցը գալիս է աքսիոմատիկ եզրակացություն. «Եվրոպական պետություններից ամէնից շատ Անգլիան էր օգնում ռուսական ճերմակ բանակներին, ուստի սովետները որոշ շարժում առաջ բերին Անգլիոյ դէմ մահմեդական երկրների մէջ եւ հովանաւորեցին էնվեր եւ Նուրի փաշաներին ու նրանց նմաններին: Ի հարկե, Սովետական Ռուսաստանի այս քայլը վնասում էր Հայաստանին, բայց նկատի ունեցէք, որ դիւանազիտությունը գուժ չուներ: Այստեղ պէտք է աւելացնեմ իմ համոզումը, որ Սովետական Ռուսաստանը թէեւ այդ շրջանին հովանաւորում էր Քեմալին, բայց «չան հետ բարեկամանալով՝ փայտը միշտ իր ձեռքին էր պահում ու հետեւում նրա բոլոր քայլերին:

Եւ այժմ մենք՝ Հայերս, մնացել ենք մեն մենակ Դաշնակիցների թշնամիներով շրջապատուած, որոնք սպառնում են փոքրիկ Հայաստանի վերջին ծուխը մարել: Օգնութիւն ենք խնդրում Ֆրանսիայից, Անգլիայից, Ամերիկայից - բոլորն էլ խուլ են ձեւանում եւ իրար վրայ են նետում մեր գործը: Ապերախտ աշխարհ. մէկ տարի առաջ նրանք մեզ պէտք ունէին, քաջալերում էին մեր դիմադրությունը Բաբուլի տակ, իսկ այժմ... Ի հաշիւ Հայաստանի Ազրբէյջանը շարունակում էր ամէն միջոցներով միշտ իր սահմանները ընդարձակել, գրաւել զուտ հայաբնակ հողամասերը եւ այդ իր քայլերը ոչ միայն չէին կասեցւում մեր երեկուայ Դաշնակիցների կողմից, այլ եր-

⁴⁷⁴ «Ռազմիկ», Ա. տարի, 1920, N 1, 15 մայիսի, Երևան, Ջորական շաբաթաթերթ, էջ 9:

⁴⁷⁵ Տիգրան Գեյդաբեկ. Կեանքիս դրուագներից/ «Հայրենիք» (Բոստոն), 1947, N 2 (259), Մարտ-Ապրիլ, էջ 107:

⁴⁷⁶ Նույն տեղում, 1946, N 2 (253), էջ 103:

բեմն խրախուսւում էին, որովհետեւ իրենց համար ձեռնտու էր տկարացնել Ռուսաստանը, ուժեղացնելով Ազրբէյջանը»⁴⁷⁷:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ բոլշևիզմը, որպէս ռազմաքաղաքական ուժ Ռուսաստանում ամրապնդման գործընթաց էր ապրում, սակայն առաջին պահին ոչ ըմբռնելի, որի հետեանքով հայկական կուսակցական-քաղաքական և դիվանագիտական-ռազմաքաղաքական շրջանները ավելի շատ հենվում էին Պ. Վրանգելի, Ա. Կոլչակի, Ա. Դենիկինի և այլոց վրա՝ կորցնելով թանկարժեք ժամանակը և ռազմավարական հնարավորութիւնները՝ օգտագործման բոլոր հույսերը՝ ապավինելով եվրոպական մեծ տերութիւնների վերացական հավաստիացումներին, բացարձակապէս չփորձելով կռահել, թե իրադարձութիւններին ու դեպքերի մոտակա սրընթաց զարգացումները ինչպիսի աղետաբեր աշխարհաքաղաքական դրութիւն են ստեղծելու առաջին հերթին հենց Հայաստանի Հանրապետութեան համար: Շատերը չէին ցանկանում ըմբռնել, որ ժամանակավոր շահերը, ժամանակավոր հաշիվները հարկադրում էին պատմականորեն իրար թշնամի երկու պետութիւններին՝ Վ. Ի. Լենինի Ռուսաստանին և Մ. Քեմալի Թուրքիային «եղբայրական» ձեռք մեկնելու իրար և մի ճակատ կազմելու՝ ընդդէմ ընդհանուր թշնամու՝ «գրամատիրական» Եվրոպայի, ինչի նրբերանգները հետագարձ հայացքով ընդհանուր առմամբ ճիշտ է նկատել Ալ. Խատիսյանը. «Միւս կողմէ, Փարիզի Վեհաժողովը չափազանց կ'ուշացնէր Թուրքիոյ խնդիրներով զբաղուիլը եւ քեմալականներուն ժամանակ տուլաւ ուժեղանալու համար: Իսկ յետոյ, երբ Ռուսաստանը վերջացուց իր ներքին քաղաքացիական կռիւները, Իշահիյցները վախցան բարդութիւններէն եւ հեռացան՝ բախտի բերմունքին ձգելով նորակազմ հանրապետութիւնները»⁴⁷⁸: Եվրոպայի հակաթուրքական թղթային բնույթ կրող որոշումները Թուրքիային մղեցին դեպի բոլշևիկներին հետ մերձեցման, թեկուզ և իրենք՝ «միլլիական» շարժման թուրք քաղաքական գործիչները, իհարկե, կնախընտրէին շփման ամուր եզրեր ունենալ ու լուրջ բարեկամութիւն անել Բրիտանական կայսրութեան հետ, քանզի նրանք Թուրքի և ռուսի միջև երկարատե համաձայնութիւնը, լինի դա բոլշևիկ թե ոչ, միշտ էլ համարել են ոչ հարատե բնույթի քաղաքական քայլ, որն անհարիր էր նրանց ռազմավարական ձգտումներին: Այդուհանդերձ, թե բոլշևիկները և թե քեմալականները ստեղծված իրադրութիւնը գնահատեցին շատ իրատեսորեն, և արեցին անհրաժեշտ քաղաքական եզրակացութիւններ, որոնք բխում էին իրենց շահերի խորքային ըմբռումից, ինչը գրեթե լիովին անտեսվեց հայկական կողմից: Այդ մասին են վկայում մի շարք փաստեր, որոնց ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ թե՛ բոլշևիկները և թե՛ Թուրքերը դատարկախոսութեամբ չեն

⁴⁷⁷ Նույն տեղում, 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 79, 1945, N 5 (250), Մեպտ. - Հոկտ., էջ 100:

⁴⁷⁸ Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 193:

զբաղվել, և ավելին՝ վերջիններին Կարմիր Ռուսաստանի կողմից ցուցաբերվել է ռազմաքաղաքական աջակցություն: Այսպես, ինչպես երևում է գեներալ **Գ. Ղորղանյանին** հասցեագրված **Տ. Դեվոյանցի** 1919 թ. հոկտեմբերի 22-ի հեռագրից (№ 42), դեռ 1919 թ. վերջերին անգամ, Սև ծովով մոտորանավակով Թուրքիա է հասցվել անհրաժեշտ քանակի գինք ու զինամթերք, հանդերձանք (հավանաբար՝ հենց իտալացիների օգնությամբ), որոնք ուղարկվել են գավառները՝ «Միլի» շարժման գրոհայիններին զինելու համար⁴⁷⁹: Դա հաստատվում է նաև ՀՀ բանակի շտաբի հետախուզական բաժանմունքի կապիտան Տ. Դեվոյանցի կողմից՝ 1920 թ. ապրիլի 23-ի գաղտնի ամփոփագրի (№ 15) տվյալներով, որտեղ հաստատվում է, որ գինքն ու զինամթերքը դեղորայքի և այլ իրերի անվան տակ, քողարկվելով Կարմիր Նաչի դրոշի քողածածկույթի ներքո, մասնավորապես փոխադրվել է Սվազ ու Մալաթիա, իսկ այնտեղից էլ բաշխվել հունական ու հայկական ռազմաճակատներին⁴⁸⁰:

Հաղթահարելով զգալի Ֆինանսական, տեխնիկական-տնտեսական և կազմակերպչական-կազրային դժվարություններ, Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները հնարավորին չափ աշխատում էին՝ ձգտելով լուծել հանրապետության անվտանգության ապահովման խնդիրները, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն ռազմաքաղաքական կացության և Անդրկովկասում ու նրա շուրջ աշխարհաքաղաքական ուժերի դասավորվածություն, ինչպես նաև Թուրքիայի կողմից ձեռնարկվող ռազմաքաղաքական պատրաստությունների ու մեքենայությունների մասին:

ՀՀ գործերի հրամանատարի շտաբի 1920 թ. պաշտոնական հաղորդագրության մեջ շատ կարևոր եզրակացություն է արվում արդեն կայացած հայկական հետախուզական ծառայության ծավալած գործունեության մասին. «Անցյալ տարվա դեկտեմբերի վերջերից սկսած (1919 թ. - Վ. Վ.) մենք ունեցել ենք մշտական գործակալական կապ Թուրքիայի և Ադրբեջանի բոլոր քաղաքների հետ, սխտեմատիկ կերպով ստանալով ամենաստույգ ինֆորմացիա Արևելյան Անատոլիայի ազգայնական շարժման մասին, որի գլուխ կանգնած է **Մուստաֆա Բեմալ փաշան**, որն իրեն նպատակ է դրել միանալով բոլշևիկների և թրքական Ադրբեջանի հետ՝ ոչնչացնելու համար ատելի հայ ժողովուրդը, որը խանգարում է իրենց ձգտումները իրականացնելուն, այն է՝ միացնել Թուրքական ցեղերը, որոնք զինվելով և կազմակերպվելով, պետք է սկսեն պայքար Անտանտի լուծը թոթափելու համար:

Այն ժամանակ, երբ **Մուստաֆա Բեմալ փաշան** կազմակերպում է ամբողջ կորպուսներ, որոնք իբր թե չեն հպատակվում Կոստանդնուպոլսի կենտրոնական իշխանությունը և մի կողմից այդ գործերը կենտրոնացնում

⁴⁷⁹ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 17/ 17, պահ. 12, դ. 3, ք.17:
⁴⁸⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս I, ք. 176, գ. 441, ք. 111:

է հայկական սահմանի վրա, իսկ մյուս կողմից պատրաստվում է հարձակման ֆրանսիացիների և անգլիացիների վրա, այդ ժամանակ Խալիլ և Նուրի փաշաները բազմաթիվ թուրքական գործակալ սպաներով գործում են Ադրբեջանում և Դաղստանում, որտեղ նրանք պատրաստում են զինված ուժ թուրքիայի հետ միանալու և աշխատում են միաժամանակ նեղ օղակով շրջապատել Հայաստանը՝ մուսուլմանների ապստամբություններ յարուցանելով Նախիջևանում, Զանգեզուրում, Վեդիբասարում և Ղարսի շրջանում (Աղբաբա)»⁴⁸¹:

Ինչպես տեսնում ենք, ամեն ինչ չափազանցները ևս լավ զբաղմունք է, մանավանդ, երբ գործի մասին դատում են և դատավորի դեր ստանձնում ոչ պրոֆեսիոնալներ, հետախուզական գործից հեռու այնպիսի մարդիկ, ինչպիսիք հանդիսանում են **Կ. Սասունիին**, **Վ. Արծրունիին** և այլք, չնայած ասվածի ռացիոնալ հատիկներին: Միաժամանակ պետք է հատուկ նշել ևս մի կարևոր հանգամանք: Որոշ փաստաթղթերի, ռազմահետախուզական ամփոփագրերի մանրագնին վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ չնայած հետախուզական ծառայությունների կողմից հազորգած տեղեկատվություն չունի որոշակի հակասականությունը և աղոտությունը, Հայաստանի քաղաքական և կուսակցական ղեկավար շրջանները հարկ եղած ուշադրությամբ չէին վերաբերվում ստացված տեղեկատվությանը, երբեմն էլ նույնիսկ այն դեռում էին դադարաժի մամլիչի տակ, և ավելի շուտ կողմնորոշվում էին աշխարհաքաղաքական կոնյուկտուրայի թելադրանքով և մեծ տերությունների քաղաքական շահերին հարմարվելով, քան թե իրատեսական և իմաստուն որոշումներ կայացնելով՝ հարգելով սեփական հատուկ ծառայությունների տքնաշան աշխատանքը, որը հաճախ ընթանում էր Ֆինանսատնտեսական կադրային սովի դժոխային պայմաններում: Այն, որ հայկական հետախուզությունը ձգտել է հնարավորինս չափով կայանալ և տեղին գործունեություն ծավալել՝ հայթայթելով արժեքավոր տեղեկատվություն, որը միշտ չէ, որ խելամորեկ հաշի է առնվել և գնահատվել՝ համապատասխան ռազմաքաղաքական եզրակացություններով հանդերձ և մասնավորապես կապված թուրքական կողմից Հայաստանի Հանրապետությանը սպառնացող վտանգի հետ, դա բազմիցս հաստատվել է հենց կուսակցական-քաղաքական բարձր այրերի՝ **Ա. Խատիսյանի**, **Ս. Վրացյանի** և այլոց կողմից: Այս առումով մի շարք փաստաթղթեր իրենց վրա ուշադրություն են հրավիրում, պահանջելով վերամաստավորել և վերազնահատել պատմական անցյալի քաղաքական իրողությունները, ղեկքերն ու զանազան անցքերը: Դրանցից ակնհայտ է դառնում, որ հայկական հետախուզությունը ամեն ջանք գործադրում էր քիչ թե շատ արժեքավոր տեղեկատվություն ձեռք բերելու համար, որը կծա-

⁴⁸¹ «Յանաջ», Երևան, 9 մայիսի, 1920, № 95:

ուայեր Հայաստանի Հանրապետության ազգային պետական անվտանգութ-
յան շահերի ապահովմանը:

Արդյունքում, 1920 թ. օգոստոսի 24-ի խորհրդարան-Թուրքական համա-
ձայնությունը, պայմանավորվածությունը Թուրքիային 5 մլն ռուբլի ոսկու
օգնություն ցույց տալու վերաբերյալ, որից 1 միլիոնը Մոսկվա մեկնած
Թուրքական պատվիրակության ղեկավար **Յուսուֆ Քեմալը** տարավ իր հետ
Անատոլիա⁴⁸²: Դրանից հետո 1920 թ. ամռան վերջերին **Ս. Օրջոնիկիձեի**
հրահանգով Թուրքիա ուղարկվեց 6000 հրացան, ավելի քան 5 մլն փամ-
փուշտ, 17600 արկ, իսկ սեպտեմբերին էրզրումում՝ Թուրքական կառավա-
րության ներկայացուցիչներին և զինվորական հրամանատարությունը
հանձնվեց 200 կգ ձուլածո ոսկի⁴⁸³:

Դատելով հետախուզական բաժանմունքի 1920թ. սեպտեմբերի 25-ի (№
22) ամփոփագրից, մինչև Թուրք-հայկական պատերազմի սկսվելը, օգոստոսի
16-ին **Ք. Կարաբեքիրը** հայտարարություն է արել այն մասին, որ իրենց
դաշնակիցները՝ բոլշևիկները, մշտապես իրենց մատակարարել են զենք ու
զինամթերք, որի շնորհիվ իրենց դժվար օրերը մնացել են ետևում⁴⁸⁴: Հե-
տևաբար, հարկ է արձանագրել, որ ՀՀ կուսակցական-քաղաքական ղեկավար
չըջաններում լուրջ էջր ընդունվում քեմալաթուրքական-բոլշևիկյան համա-
գործակցության հնարավոր և գործնական հեռանկարը, որովհետև անսթափ
հաշվարկներ կային, որոնց համաձայն եվրոպական երկրների հաղթանակած
Անտանտյան Դաշինքը մոտ ապագայում վճռականորեն ու անվերապահորեն
կայացնելու էր «հիվանդ մարդու»՝ Թուրքիայի դատավճիռը, որի հետևան-
քով էլ իրականացվելու էին Սևրյան հույսերը և խոստումները: **Միաժամա-**
նակ, կարծում ենք, չի կարելի կատեգորիկ ձևով պնդել, թե իբր քեմալա-
կանները համար ծանր 1919 թ. ՀՀ «ձևական» համարվող կառավարությունը
հույս դրած Փարիզի վեհաժողովի վրա, փորձ անգամ չարեց լսելու «Թուր-
քերին», թե նրանք ինչ են առաջարկում, և համոզված հաստատել, թե «Հա-
յաստանի նման դիրքորոշումը զգալի, եթե չասենք վճռորոշ դեր խաղաց
քեմալա-բոլշևիկյան դաշինքի ստեղծման գործում»⁴⁸⁵: Կարծում ենք, որ
դժվար թե դա համապատասխանում է տարածաշրջանի և նրա շուրջ ստեղծ-
ված աշխարհաքաղաքական իրողությունների խորքային, ոչ թվայցյալ
զարգացումներին, առավել ևս որ մենք արդեն փաստել ենք, որ անգամ
Թուրքիայի նկատմամբ հաղթական 1919 թ. Անտանտի երկրները քողածածկ-
ված եզրեր էին պահպանում դեպքերի և իրադարձությունների անկանխա-

⁴⁸² **Ю. А. Багиров**, Из истории советско-турецких отношений в 1918-1920 гг.: По мате-
риалам Аз. ССР, Баку, Изд-во АН Аз. ССР, 1965, стр. 40, 120.

⁴⁸³ **Документы внешней политики СССР**, т. 3, под ред. А. А. Громыко, М., "Госполит-
издат", 1954, стр. 675.

⁴⁸⁴ **ՀԱՄ**, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 427, մաս II, ք. 351:

⁴⁸⁵ **Տե՛ս Կ. Մարդարյան**, Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան
խաչմերուկում (ինչպե՞ս կործանվեց Հայաստանի Հանրապետությունը), էջ 40-41:

տեսելի և իրենց համար ոչ հեռանկարային, ոչ շահավետ զարգացումների պարագաներում Թուրքիայի քեմալական առաջնորդների հետ հնարավոր համաձայնության գալու համար: Այս ամենն էլ մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ ամեն դեպքում ստեղծված իրավիճակում Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությանը, զինվորական-քաղաքական առաջնորդներին ավելի շուտ պետք է մտահոգեին Հայկական բանակի և առհասարակ երկրի և պետության ամրապնդման խնդիրները, բանակում տեղ գտած անառողջ և բացասական երևույթների հաղթահարման ու հայ ազգային բանակի կազմավորման հարցերը, քան արտերկրի ուժերի վրա հույսեր կառուցելը: Անշուշտ, Հայաստանի Հանրապետության 1918 -1920 թթ. կառավարությունը բավականաչափ տեղեկացված էր քեմալականների մտադրություններին⁴⁸⁶, սակայն կառավարական շրջանները դա կարծես թե չէին ցանկանում լուրջ ըմբռնել, նրանց բոլոր հաշվարկները կառուցված էին այսպես կոչված «գրամատիրական» Եվրոպայից ակնկալվող օգնության և ցուցաբերվելիք հնարավոր աջակցության վրա, ըստ այդմ կանխավ հակադրվելով բոլշևիկյան Ռուսաստանին, գործնական նշանակություն չտալով և ըստ էության չկարևորելով վերջինիս ռազմավարական նկրտումները Հարավային Կովկասում, և առհասարակ Անդրկովկասի շուրջ: Հավանաբար հենց դա է այն գլխավոր պատճառներից և առկա գործոններից մեկը, որ ՀՀ կառավարությունը և դեկավար ռազմաքաղաքական մարմինները լրջությամբ չէին վերաբերվում Հայկական հետախուզության կողմից իրենց ներկայացվող տեղեկատվությանը, ինչը բավարար էր իրատեսական եզրակացությունների գալու համար և հնարավորինս ճիշտ քայլեր ձեռնարկելու Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական մեքենան, գործող ազգային բանակը կարգի բցելու, լրջորեն նորոգելու համար՝ առավելագույնս խնամքով շտկելով սեփական սխալները, հաղթահարելով անհարկի վայրիվերումները, խմբապետական-էգոիստական տրամադրությունները և բոլշևիկյան խոտորումները, անկանոն զորամասերի կամայականությունները, վախն ու ամոթը, փորձելով արժանապատիվ ու վեհ կեցվածքով դիմակայել քեմալական վայրենաբարո հորդանների անհագուրդ բնազդներին: Հենց այդ պատճառով էլ ժամանակակիցների, և մասնավորապես՝ կուսակցական-քաղաքական դեկավար այրերի կողմից նկատվում է ակնհայտ ձգտում կոծկելու սեփական սխալները, գործած և չգործած սխալների ու սայթաքումների պատասխանատվությունը բարդելով մասնավորապես հետախուզական մարմինների անկազմակերպվածության վրա, ստվերում թողնելով քաղաքացիական և ռազմական դեկավար մարմիններին ու այրերին, ինչն իրապես խիստ մասամբ է արդարացված: Բանակաչինության խնդիրները պետք է լինեին առաջնային, և ըստ այդմ պետք է կարևորվեին բանակում տեղ գտած բացասական լիցքե-

⁴⁸⁶ Տե՛ս **Կ. Մարդարյան**, նշված աշխատությունը, էջ 57:

րը և բացասական բարդույթները (դարերով արձատարված և հոգեբանորեն պարտադրված անասնական վախ, հոգեբանական ընկճվածություն, դասակարգություն, կանոնավոր և անկանոն գիտնականների հակադրվածություն և այլն) հաղթահարելու հիմնախնդիրները, քան թե անտեղի տեղը դրսից ստացվելիք ռազմաքաղաքական աշակցություն վրա օգեղեն ամբողջներ կառուցելը:

Հայկական հետախուզությունը անցնելով ձևավորման և կայունացման գործընթացների ոչ միանշանակ և դժվարին ուղիով, զգալի ջանքեր էր գործադրում ձեռքբերելու անհրաժեշտ տեղեկատվությունը հարևան թշնամական պետությունների, և առաջին հերթին Թուրքիայի, Ադրբեջանի և այլ ուժերի քայքայիչ-լրտեսական գործունեություն, հայկական սահմանի ողջ երկայնքով Թուրք-ադրբեջանական գործերի կենտրոնացման, հակառակորդի ուժերի տեղբաշխման և այլ կարևոր խնդիրների վերաբերյալ, ինչն անչափ կարևոր էր նորաստեղծ հայկական պետականություն կայացման և վերջինիս ազգային-պետական անվտանգություն ապահովման հիմնախնդիրների լուծման տեսանկյունից:

Այս առումով շատ ուշագրավ է 1919 թ. ապրիլի 22-ի տեղեկատվությունը, որը հենված էր գործակալական տվյալների վրա (N^o 2452): Տեղեկագրի հեղինակը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը կից Ինֆորմացիոն բյուրոյի պետ **Ա. Մելիք-Քարամյանն** էր: Սույն տեղեկատվության մեջ կարևոր հետախուզական տվյալներ էին բերվում երիտթուրքերի գործունեության մասին: Փաստաթղթում նշվում էր, որ պատերազմից հետո տեղի ունեցած կառավարական հեղափոխումից հետո երիտթուրքական կոմիտեները ոչ միայն չեն դադարեցրել իրենց գործունեությունը, այլ ընդհակառակը, ուժեղացրել են իրենց աշխատանքները և ագիտացիան (քարոզչություն), կենտրոնատեղի ընտրելով Կոստանդնուպոլիսը, որտեղից երկրի խորքերն էին ուղարկում իրենց էմիսարներին և գործակալներին: Տեղեկատվության մեջ կարևոր նշում էր արվում նաև այն մասին, որ երիտթուրքերը ողջ Հուլյսը դրել են ներպետական բարդությունների և բոլշևիզմի զարգացման վրա, երբ դաշնակիցները ստիպված կլինեն լքել Կոստանդնուպոլիսը: Բացի այդ, ինֆորմացիոն տեղեկագրում նշվում էր, որ դրան գուրահեռ Թուրքերը գինում են ժողովրդին: Այնուհետև շատ հետաքրքիր փաստ էր բերվում, ըստ որի հայկական «մասնավոր հակահետախուզությունը» երիտթուրքերի հանցավոր գործունեությունը հաստատող փաստեր էր ձեռք բերել, ինչի մասին տեղեկացրել էր անգլիական հրամանատարությունը, որը սակայն դրանց ոչ մի ուշադրություն չէր դարձրել: Ի հավելումն դրան, շուտով **հայկական «մասնավոր հակահետախուզությանը»** այս տեղեկատվությունը հաստատող երկու նոր փաստեր է ձեռք բերում, ինչն արդեն անգլիացիներին հարկադրում է համոզվել դրանց հավաստիության մեջ. Կոստանդնուպոլիսում հայտնաբերված երիտթուրքական ընդհատակյա կենտ-

րոնակայանները Դաշնակցային հրամանատարութեան կարգադրութեամբ կնքվում են, երիտթուրքերի գործունեութիւնը արգելվում է, սակայն վերջիններս իրենց դավադրութեան ձախողումից հետո տեղափոխվում են պրովինցիա, կենտրոննապով Քոնիայում, որտեղ սկսեցին կուտակել զինհանրերձանքի և զինամթերքի, պարենի մեծ պաշարներ, զբանք ցրելով բոլոր ծայրամասերում: Վերջապես, այս հուլիս հետաքրքիր տեղեկատվութեան մեջ փաստեր էին բերվում այն մասին, որ զենքի մեծ քանակներ էին ուղարկվում նաև Անդրկովկաս և Թուրքահայաստան: Փաստաթղթում կարևոր տվյալ էր բերվում այն մասին, որ համաձայն գործակալական հետախուզական հաղորդագրութիւններէ, էրզրումում գտնվում են հոյակապ զինված երեք ղեկիզիաներ: Բացի այդ, նշվում էր, որ երիտթուրքերը ուժեղ նախապատրաստութիւններ էին տեսնում Սվազի, Անկարայի, Սեբաստիայի և այլ վայրերի քրդերի մեջ՝ նրանց նպատակամղելով հայերի դեմ: Հետախուզական տեղեկագրի վերջնամասում կարևոր եզրահանգում էր արվում այն մասին, որ միանգամայն հավանական է, որ մոտ ժամանակներում, հենց որ դաշնակիցները ձեռնամուխ լինեն Թուրքահայաստանի տարածքի մաքրագործմանը, ապա այնտեղ կծագեն նախիջևանյան կամ կարսյան տիպի խնդիրներ, նկատի ունենալով Քոնիայից այս շրջանների մահմեդական բնակչութեան ապստամբական, խռովարարական տրամադրութիւններէ ղեկավարումը, և ցուցումներ տալը տեղական առաջնորդներին⁴⁸⁷:

Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար փոխգնդապետ **Ա. Շնեուրը** 1919 թ. մայիսի 24-ի օպերատիվ ամփոփագրում, որի տվյալները վերաբերում էին մինչև մայիսի 23-ը ընկած ժամանակահատվածին, ընդգծում էր, որ Թուրքական զորքերի մնացորդները կուտակվում են Կաղզվանից հարավ՝ նպատակ հետապնդելով հարձակվել Կաղզվանի շրջանի վրա, միաժամանակ նշելով քուրդ ավագակախմբի գործողութիւններէ մասին Մերգենեկի շրջանում⁴⁸⁸:

1919 թ. հունիսի 9-ի օպերատիվ ամփոփագրում գնդապետ **Զինկելիչը** տեղեկութիւններ է հաղորդում գեներալ Սիլիկյանի զորքերի Ալեքսանդրապոլյան խմբի մասին: Այդ կապակցութեամբ նշվում էր, որ 1919 թ. հունիսի 9-ի տվյալներով էյուբ փաշայի քրդական ավագակախմբերը Թուրքերի հետ համատեղ ուղարկվել են Բարդուսի ուղղութեամբ՝ կենտրոննապով Բարդուս, Ղըզըլ-Քիլիսա, Զերմուկ (Զերմուկ), Վերիտան բնակավայրերի շրջանում: Զինկելիչը հայտնում էր, որ հունիսի 6-ին հետախուզութեան նպատակով Սարիղամիշից Բարդուս ուղարկված գումարտակը Ղըզըլ-Քիլիսա գյուղի կողմից ենթարկվել է հրացանային զնդակոծման, և զրանից ելնելով ձեռնարկվել են միջոցառումներ այդ բանդայի լիկվիդացման ուղ-

⁴⁸⁷ ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 92, ք. 212:

⁴⁸⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 41:

դուժյամբ⁴⁸⁹: Իսկ արդեն 1919 թ. Հունիսի 12-ի օպերատիվ ամփոփագրում նշվում է, որ Հունիսի 8-ին էյուբ փաշայի ավազակախումբը, աջակցություն ստանալով թուրքական կանոնավոր զորամասերի կողմից Ջիլխերես գյուղի շրջանում՝ Բարդուսի հարավարևմտյան սահմանագծում, ուժեղ դիմադրություն է ցույց տվել հայկական զորամասերին: Նշվում է, որ ավազակախումբում հաշվվում են 500 հետևակ և 100 հեծյալ: Ամփոփագրի վերջնամասում արձանագրվում է, որ ստացված տեղեկությունների համաձայն, Հունիսի 12-ին քրդա-թուրքական ուժերը դուրս են մղվել գրաված դիրքերից և հայկական զորամասը ետ է վերցրել կորցրած մատուցյաները⁴⁹⁰:

Բավականաչափ ուշադրով է Արտաքին Գործերի նախարարին ուղղված Գլխավոր շտաբի պետ գնդապետ **Զինկեիչի** և հետախուզական բաժանմունքի պետ, փոխգնդապետ **Շենոլրի** ստորագրություն հայտնի 1919 թ. Հունիսի 17-ի գրությունը (№ P 0175), որն ըստ երևույթին տեղեկատվական նկատառումներով ուղարկվել է նաև Թիֆլիսի, Փարիզի, Բաքվի համապատասխան հասցեատերերին: Արտաքին Գործերի նախարարությունում, Հունիսի 21-ին, կապված այդ գրության հետ, համապատասխան մակագրություններ են արվել (№ 230, 2308, 2309): Հետախուզական բաժանմունքի վերոնշյալ գրությունում պարունակվում էին տազնապալից տեղեկություններ մահմեդական շրջանների մասին: Դրանում հստակ նշվում էր, որ թուրքահայաստան ուղարկված գործակալները հաստատել են թուրքական կանոնավոր զորամասերի անվերապահ ներկայությունը Օլթիի և Սարիգամիշի ուղղություններում, ինչպես նաև Ալաշկերտի շրջանում: Հետախուզական բաժանմունքի սույն գրությունում նշվում էր, որ զորամասերի համարները դեռևս պարզված չեն, սակայն բավականաչափ հավաստի պարզվել է 12-րդ թուրքական դիվիզիայի տեղադրությունը Խորասան-Ջիվինի շրջանում, ընդգծելով, որ շտաբը գտնվում է Խորասանում: Զինկեիչը և Շենոլըրը նաև նշում էին, որ թուրքական զորամասերը էջելոնացված են դեպի երկրի խորքը և դրանց կորպուսային շտաբները, ըստ հայթայթված տվյալների, գտնվում են էրզրումում և Վանում: Հայտնվում էր նաև մի դիվիզիայի առկայության մասին Սդերթ[դ]ում (Վանա լճից հարավ): Հայաստանի գլխավոր հետախուզչները Արտաքին Գործերի նախարարին նաև կարևոր տեղեկատվություն էին հայտնում այն մասին, որ թուրքիայում և Անդրկովկասի մահմեդական շրջաններում հակահայկական ագիտացիան ուժեղանում է, այդ նպատակով մեծ քանակությամբ թուրքական էմիսարներ են ուղարկվել Հայաստանի խորքերը՝ մահմեդական գյուղերը, սակայն ամենուր հայտնաբերվել են տեղական հայկական վարչակազմի և հակահետախուզության կողմից: Նշվում էր, որ թուրքական էմիսարների ազդեցությունը հատկապես ուժեղացել է Արդահան-Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր վերջիններիս կողմից կազ-

⁴⁸⁹ Նույն տեղում, ք. 34:

⁴⁹⁰ Նույն տեղում, ք. 39:

մակերպվել են գնդացիներով հագեցված քրդական բանդաներ: Փաստաթղթում նշվում էր, որ նույն նախապատրաստութիւնները ընթանում են նաև Սարիղամիշի և Կաղզվանի շրջաններում, քրդերով բնակեցված Ազրիդաղի լեռնագագաթներից մինչև Արարատ ներառյալ: Զինվե՛լքը և Շնեուրը եզրահանգում էին, որ այդպիսով ստացվել է ապստամբութեան ազդեցիկ և նախապատրաստման գոնա ընդգեմ Հայաստանի՝ Արգահանից սկսած, իր մեջ ներառնելով հարավից Կարսի մարզը՝ ընդհուպ մինչև Մակու: Ուշագրավ միտք էր արծարծվում այն մասին, որ պանիսլամիզմի գաղափարները թեթևորեն յուրացվում են բնակչութեան կողմից՝ նկատի ունենալով համառորեն տարածվող լուրերը՝ կապված անգլիացիների հեռացման հետ, ինչպես նաև ռուս բոլշևիկների հետ դաշինքի և թուրքական զորամասերի ենթադրվող հարձակման մասին, որոնք երկրի խորքերում համալրման գործընթացներ էին ապրում, ձգտելով դեպի հյուսիս: **Զինկէիչը և Շնեուրը** Արտաքին Գործերի նախարարին տեղեկացնում էին, որ արևելքի ուղղութեամբ Մակվի շրջանը կապող դեր է կատարում Ազրբեջանի և Թուրքիայի միջև, իսկ Մակվի սարգարը լիովին օգտագործում է իր խանութեան աշխարհագրական դիրքը պանիսլամիստական գաղափարների իրականացման համար, խրախուսելով՝ Շարուրի, Նախիջևանի, Հարավային Զանգեզուրի, արաքսյան թաթարների քայքայիչ գործողութիւնները ընդգեմ Հայաստանի և ընդհանրապես քրիստոնյաների (վկայակոչվել են 1917-1918 թթ. Մուղանի իրագործութիւնները), ինչպես նաև Զանգեզուրի և Ղարաբաղի հարցը, Շուշվա իրագործութիւնները, որոնք համընկնում էին Թուրքիայում ընթացող մահմեդականների կազմակերպման գործընթացների հետ: Վերջապես, կարևոր եզրահանգում էր արվում այն մասին, որ Ազրբեջանի ողջ քաղաքականութիւնը պլանաչափորեն ղեկավարվում և կազմակերպվում է ինչ-որ մի մուսթ ուսթի կողմից՝ հետամտելով հեռուն գնացող պանիսլամիստական նպատակներ⁴⁹¹: Հետախուզական ծառայութեան կողմից հայթայթված այս տեղեկատվութեան արժեքավորութիւնը հաստատող վկայակոչման ենք հանդիպում **Ս. Վրացյանի** մոտ, որն ընդգծում է ծավալած գործունեութեան կարևորութեան մասին՝ ելնելով թուրքական ոտնձգութիւններից պատնեշվելու ռազմավարութիւնից. «հունիս ամսից սկսած, հայկական հետազոտութիւնը (ասել է թե՛ հետախուզութիւնը - Վ. Վ.) նկատում էր թուրքերի կողմից գինավորական շտապ պատրաստութիւններ Հայաստանի ուղղութեամբ: «Թուրքահայաստան ուղարկված գործակալները, կարգում ենք Հայաստանի Գլխավոր սպայակոչութի հունիսի 17 գաղտնի գեկուցման մեջ, վկայում են թուրք կանոնավոր զորամասերի ներկայութիւնը Օլթիի և Սարիղամիշի ուղղութեամբ և Ալաշկերտի շրջանում: Կատարելապես ստույգ կերպով հաստատված է, որ թուրքական 12-րդ դիվիզիան գտնվում է Խորասան-Զիվինում՝ կեն-

⁴⁹¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 158, ք. 102:

տրոն ունենալով Խորասանում: Քարոզչութիւնը Թուրքիայի և Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է: Այդ նպատակով մեծ քանակութեամբ թուրք գործակալներ են ուղարկվում Հայաստանի ներսերը, մասնաբաժաններ գոյազերը, և ամեն տեղ Հայտնաբերվում են տեղական վարչութիւն և հակահետախուզութիւն կողմից: Մասնավորապես գորավոր է թուրք գործակալների ազդեցութիւնը Արդահան-Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիներով զինված քրդական հրոսակախմբեր: Նույն պատրաստութիւնը կատարվում է և՛ Սարիղամիշ-Կաղզվան տարածութիւն վրա, և՛ ավելի հեռուները՝ Բարթոլյան լեռնաշղթայի քրդաբնակ մասերում՝ մինչև Արարատ»⁴⁹²:

ՀՀ գործքերի Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1919 թ. հունիսի 26-ի ամփոփագրում փոխգնդապետ **Շենուրը** նշելով քրդերի հարձակման մասին Մերգենեկի շրջանի հայկական, հունական և մասնաբաժան բնակչութիւն վրա, միաժամանակ վկայում էր, որ տեղեկութիւններ են ստացվել թուրքերի առկայութիւն մասին Ալաշկերտ-Բայազետի շրջանում, ինչպես նաև Իգդիր-Քուլայի ուղղութեամբ: Դրա հետ մեկտեղ փաստեր էին բերվում թաթարների տեղաշարժի մասին Նախիջևանի շրջանում (մոտ 400 հոգի), Հայտնելով նաև, որ վերջիններիս մոտ եղել է մի գնդացի, որը գնված է եղել Երևանում՝ հայերից⁴⁹³: Զինվորական նախարարութիւն Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի օգնականի պարտականութիւնները կատարող պրապորշչիկ Հովսեփյանի ստորագրութեամբ առկա փաստաթղթում՝ 1919 թ. օգոստոսի 7-ի թվագրութեամբ հեռագրում (N^o 376) գեներալ-մայոր Փիրումյանի կողմից գործքերի Գլխավոր հրամանատարին տեղեկացվում էր, որ Թուրքիայում ընթանում է գորահալաք⁴⁹⁴:

Հայկական հետախուզական ծառայութիւն գործունեութիւն քիչ թե շատ լիարժեք լուսաբանման տեսանկյունից կարևոր է նաև գեներալ-մայոր **Հակոբերդյանի** 1919 թ. օգոստոսի 16-ի հեռագիրը (N 0414)՝ ուղղված Թիֆլիսում Հայաստանի գլխավորապետական ներկայացուցչութիւնը կից զինվորական կցորդ գեներալ-մայոր **Հ. Քիչմիշյանին**, որի հիմքում ընկած է օգոստոսի 15-ի հետախուզական ամփոփագիրը: Դրանում մասնավորապես նշվում էր այն մասին, որ էրզրումում կազմակերպվել է ինքնուրույն կառավարութիւն՝ «Շուրա», որն իբր թե չի ընդունում կենտրոնական թուրքական պետութիւն իշխանութիւնը, սակայն հավանաբար գործում է նրա ցուցումների համաձայն, և նրա հետ լիովին գտնվում է փոխհամագործակցութիւն պայմաններում: Հեռագրում ասվում էր, որ «Շուրայի» կառավարութիւնը կազմակերպվել է կենտրոնական թուրքական կառավարութիւն հրահանգի համաձայն՝ նպատակ ունենալով իր վրայից զցել պատասխանատվութիւնը

⁴⁹² Մ. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 314:

⁴⁹³ ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 60^ա:

⁴⁹⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71) , ք. 118:

Դաշնակից պետութիւններին առաջ՝ հայերին Թուրքահայաստանի 6 վիլայեթները մուսթի թուլլտուլթուն չտալու համար, որի իրականացումը դրվում էր «Շուրայի» կառավարութեան վրա: Այդ իսկ նպատակով էլ «Շուրայի» տրամադրութեան տակ դրվել էին ու կային կանոնավոր թուրքական գործաճան՝ Կարաուրգան-էրզրում-Երզնկա գծի վրա, իսկ Ալաշկերտի հովտում տեղաբաշխվել էին 3-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ և 36-րդ դիվիզիաները, մերձծովյան հատվածում՝ Տրապիզոնի շրջանում՝ 31-րդ դիվիզիան, ընդ որում հավանաբար Երևանի ուղղութեամբ հայտնվել է 2 հազարանոց չեթեյական հրոսակախումբը՝ զինված 4 թնդանոթներով և 8 զնդացիներով: Հեռագրում նաև հայտնվում էր, որ էրզրումում նիստեր է գումարում «Շուրայի» խորհրդակցութիւնը, որոնց ներկա էին պատգամավորներ Ադրբեջանից, Վրաստանից, Լազիստանից և Աջարիայից, և ընդունված որոշման մեջ կարևոր տեղ էր հատկացվել ողջ տղամարդ բնակչութեան զինմանը: Հեռագրում նշվում էր, որ կոնֆերանսն արդեն օգոստոսին ավարտվել է, նախագահել է Մուստաֆա Քեմալը: Հեռագրում մասնավորապես կարևորվում էր այն հանգամանքը, որ կոնֆերանսի կողմից ընդունված կոչում մասնագրականներին սրբազան պատերազմի էին ուղղում, հրահանգ տալով 6 վիլայեթները պաշտպանել հայերի ոտնձգութիւններից, հաշվի չնստել նույնիսկ Կ.Պոլսից եկած հրահանգների հետ, եթե նույնիսկ Դաշնակիցները իրականացնեին թուրքական տարածքների զբաղեցում: Առավել հետաքրքրութիւն է ներկայացնում այս հեռագրի վերջնամասը, որում հայտնվում էր, որ էրզրումից Սարիղամիշ ուղարկված զենքը, զինամթերքն ու հանդերձանքը, ինչ-որ մութ ուժերի հրահանգով նորից ետ է վերադարձվել էրզրում: Հեռագրում հայտնվում էր նաև Ադրբեջանում հայտարարված 18-ից 45 տարեկանների զորահավաքի մասին⁴⁹⁵:

Հետախուզական ծառայութեան (կամ բաժանմունքի) գործունեութեան մասին հետաքրքիր տվյալներ են պարունակվում Զինվորական նախարարութեան Գլխավոր շտաբի պետ զնդապետ **Շնեուրի** և օպերատիվ բաժնի պետ կապիտան **Մեդվեդևի** կողմից կազմված ռազմական ակնարկներում, որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետութեան ռազմական դրութեանը՝ մինչև 1919 թ. սեպտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում: N^o 1 ակնարկում վերոհիշյալ հեղինակները նշում են Շարուր-Նախիջևանում, ինչպես նաև Կարսի մարզում և այլուր (որոնք մարտին միացան Հայաստանի Հանրապետութեանը) նկատելիորեն ուժեղացած թուրքական գործակալ-սպաների և ասկյարների գործունեութեան մասին, նպատակ հետապնդելով կազմակերպել զինված ուժեր և պրոպագանդելով ապստամբութիւն բարձրացնել հայկական կառավարութեան դեմ⁴⁹⁶: Հենվելով հետախուզութեան տվյալների վրա, նշվում էր, որ հակահայկական գործողութիւնների կազ-

⁴⁹⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 133, ք. 166:

⁴⁹⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 2:

մակերպման ուղղությամբ եռանդուն գործունեություն է ծավալել Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին, որը գաղտնի հարաբերություններ էր պահպանել Եւրոպական Միության հետ՝ նրանց դրդելով ապստամբություն, մատակարարելով փող և այլն: Ակնարկում նշվում էր, որ հակահայկական տրամադրությունների պայմաններում ոչ մեծաթիվ հայկական պահակազորի գրությունը լավ զինված և բավականաչափ կազմակերպված մահախուժական բնակչության միջավայրում դարձել է վտանգավոր: Ռազմական ակնարկի հեղինակները նաև նշում էին, որ նկատի ունենալով Թուրք-քրդաթաթարական վերակազմակերպումները Սուրմալուի շրջանի և Կարսի մարզի վրա, ինչպես նաև հաշվի առնելով ստացված գործակալական հետախուզական տվյալները մահախուժականների կողմից նախապատրաստվող ընդհանուր հարձակման մասին՝ ողջ հարավային տարածքում և Հայաստանի արևմուտքում, որոշվեց հայկական զորքերը ետ քաշել Վեդիբասարից (Բոյուք-Վեդի) ինչքան հնարավոր է դեպի հյուսիս, որպեսզի նրանց հանգստանալու հնարավորություն տրվի՝ հատկացնելով նաև հնարավոր ռեզերվներ⁴⁹⁷: Ռազմական ակնարկում անդրադառնալով Իգդիր-Քուլայի շրջանի (Սուրմալուի գավառ) գրություն մասին, Երևանը և Մեղվեղևը նշում էին, որ վերոնշյալ տարածքը մայիսի 2-ից սկսած զբաղեցվել է հայկական զորքերի կողմից, սակայն արդեն մայիսի վերջերին սկսել է նկատվել Թուրք-թաթարական ագիտատորների գործունեությունը, ուղեկցվելով զինված ուժերի ավելի նկատելի գորահավաքով: Վերոհիշյալ հեղինակները նաև արձանագրում էին, որ Ալաշկերտի հովտից սկսել են ներթափանցել Թուրք սպաներ, գլխավորապես կենտրոնանալով Քուլայ գյուղից հարավ-արևմուտք ընկած շրջանում, մշտական կապ պահպանելով քրդական և թաթարական գյուղերի հետ, որոնք տեղաբաշխված էին Քուլայից հարավ, հայկական զորքերի թիկունքում, որոնք առաջ էին քաշված դեպի հարավ՝ Աբաս-գեյ լեռնանցքի ուղղությամբ: Նշվում էր, որ նման տեղեկությունները ստացվել են հայկական հետախուզական ծառայության գործակալներից, սակայն դրանով չեն բավարարվել, այլ վտանգից ապահովագրվելու համար հարկ եղավ հայկական թիկունքում գտնվող գյուղերը մաքրել մահախուժական զանգվածից⁴⁹⁸: Երևանը և Մեղվեղևը նշում էին, որ մահախուժական տարրերի այդ հակահայկական գործողությունների ողջ ընթացքում հետախուզությունը ծավալել է որոշակի գործունեություն՝ գսպելու համար թշնամական գործակալների եռանդը թե՛ Զանգիբասարում, թե՛ Բոյուք-Վեդիում, թե՛ Քուլայում, թե՛ Եւրոպական Միության հետ⁴⁹⁹: Հենվելով հայ գործակալների հաղորդագրությունների վրա, նշվում էր, որ Թուրքական զորքերի հեռացումից հետո մնացած բազմաթիվ Թուրքական գործա-

⁴⁹⁷ Նույն տեղում, ք. 4:

⁴⁹⁸ Նույն տեղում, ք. 5:

⁴⁹⁹ Նույն տեղում, ք. 6:

կալ-սպանները և զինվորները, որոնք հեղեղել էին Կարսի մարզը իրենց եւուանդուն ազիտացիայով, առաջ էին բերում թաթարական բնակչության այնպիսի անզուսպ թշնամական վերաբերմունք հայկական իշխանությունների նկատմամբ, որ բրիտանական իշխանությունների աջակցությամբ նույնիսկ ձեռքավորվեց տեղական «Շուրա» կառավարությունը, սակայն բրիտանացիների հեռանալուց հետո թաթարական և թուրք գործակալները վերսկսեցին իրենց հակակառավարական և հակահայկական գործողությունները⁵⁰⁰: Ենուրը և Մեդվեդևը նշում էին, որ իրենք տեղեկություններ ունեն (մինչև սեպտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածին վերաբերող) թուրք-թաթարական գործակալների գործունեության մասին Սարիգամիչի, Մերդենեկի և Կաղզվանի շրջանում, փաստեր բերելով նաև Զաֆար բեյի Ղոկատի գործունեության մասին Օլթիի, ինչպես նաև էյուբ փաշայի Սարիգամիչի շրջանում ծավալած գործողությունների մասին, փաստելով, որ վերջիններս զինված են եղել գնդացիներով ու հրետանիով, և որոնց ուղեկցում էին քրդական բանդաները⁵⁰¹: Ռազմական այս ակնարկում նշվում էր վերջիններիս կապերի մասին Օլթիի մարզում և Սարիգամիչի ուղղությամբ գտնվող թուրքական գործքերի հետ: Սույն ռազմական ակնարկ-ամփոփագրում նշվում էր նաև սեպտեմբերի 1-ին քուրդ-թաթարների փորձի մասին Կաղզվանը գրավելու և ստիպելու Մերդենեկի հայկական Ղոկատի պետին անհապաղ մաքրելու Մերդենեկի շրջանը և գործը ետ քաշել դեպի Կարս, ինչպես նաև հայկական կողմի պատասխանի, թշնամու ջանքերի մասին և էյուբ փաշայի փախուստի մասին Օլթիի մարզի խորքերը: Դրա հետ մեկտեղ Ենուրը և Մեդվեդևը հենվելով վերջին գործակալական հետախուզական տվյալների վրա, նշում էին, որ այդ ամենից դաս չքաղելով, թշնամու գործակալները վերսկսել են իրենց հանցագործ գործունեությունը, նախապատրաստելով մահամեղականների նոր խումբներ հայկական տարածքներում: Փաստեր էին բերվում քրդերի կուտակման մասին Կաղզվանի շրջանում և դրանց դեմ ձեռնարկվող միջոցառումների մասին: Այնուհետ Ենուրը և Մեդվեդևը հայտնում էին, որ հետախուզության տվյալների համաձայն էրգրումում հրավիրված խորհրդակցությունը որոշում է ընդունել գրավել Կարսի մարզը մինչև Արփաչայ, բոլոր ուժերով խոչընդոտելով և հակառակվելով հայերի վերադարձին թուրքական վիլայեթները, եթե նույնիսկ դրա համար հարկ լինի պայքարի մեջ մտնել տերությունների դեմ⁵⁰²:

Ենուրի և Մեդվեդևի կողմից 1919 թ. սեպտեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածին վերաբերող ռազմական գրության մասին կազմված N^o 2 ակնարկը, որը հենված էր գլխավորապես հետախուզությունից ստացված տվյալների վրա, դարձյալ փաստում էր թշնամա-

⁵⁰⁰ Նույն տեղում, ք. 7:

⁵⁰¹ Նույն տեղում, ք. 8:

⁵⁰² Նույն տեղում, ք. 10-11:

կան գործակալների գործունեություն մասին Կարսի, Ծարուր-Նախիջևանի, Զանգեզուրի և այլ շրջաններում⁵⁰³: Կարևոր է նշել, որ Ծնեուրը և Մեղվեղևը հենվելով հետախուզական և այլ կարգի տվյալների վրա, հետաքրքիր եզրակացություն էին գալիս Հայաստանի ռազմական դրություն վերաբերյալ, նշելով, որ այն ընդհանուր պլանով մնում է բավականին տառնապալից, չնայած սկսված հայ-ադրբեջանական կոնֆերանսին, որի նպատակն էր խաղաղ ճանապարհով լուծել բոլոր վիճելի հարցերը, միաժամանակ արձանագրելով, որ համաձայնություն գալու հնարավորություններ չկան՝ նկատի ունենալով Ադրբեջանի մասնագրականների ձգտումը՝ միավորվելու Թուրքիայի հետ, ինչպես նաև Ադրբեջանի համոզմունքը, որ առանց իրենց ուժեղ դաշնակիցների հայկական ուժերը կցրվեն ողջ սահմանի երկայնքով և հնարավոր կլինի հաղթահարել վերջիններիս դիմադրությունը: Անհրաժեշտ է նշել նաև Ծնեուրի և Մեղվեղևի ևս մի եզրակացություն մասին Հայաստանի ռազմական դրություն վերաբերյալ 1919 թ. սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում. այսպես, նրանք նշում էին (անշուշտ, հենվելով գործակալական հետախուզություն տվյալների վրա), որ իր սահմանների պաշտպանության համար Հայաստանը պետք է զենքի տակ պահի տղամարդ բնակչության չափազանց մեծ տոկոս (12 տարիք), որին ի վիճակի չէ հյուծված ժողովուրդը, և եթե մինչև գարուն հնարավորություն չառաջանա փոքրացնել բանակը մինչև խաղաղ ժամանակների վիճակը, ապա դա, ըստ երևույթին, բացի բանձարանի համար ուժից վեր ծախսերից, կհանգեցնի վերջնական տնտեսական փլուզման և սովի, քանի որ այն դաշտերը, որոնք լիովին անբավարար են ժողովրդին կերակրելու համար, կմնան չմշակված: Ռազմական ակնարկի հեղինակները նշում էին ավազի վրա կառուցված հայ քաղաքական շրջանների այն մոլորյալ, անհեռատես մտայնություն մասին, որն իշխում էր այդ ժամանակաշրջանում՝ անվերապահ հույսը և հավատը Արևմուտքից ցուցաբերվող օգնության հետ կապված. այսպես, գինվորական այս ակնարկում նշվում էր, որ անհրաժեշտ է իրական օգնություն ի դեմս չեզոք զորքերի, որոնք իրենց ներկայությամբ կզաղարեցնեին մասնագրականների ոտնձգությունները հայ ժողովրդի գոյություն իրավունքի նկատմամբ և հնարավորություն կտային նրան ազատ շնչել⁵⁰⁴:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1919 թ. հոկտեմբերի 4-ի ամփոփագիրը (№ 1) հետաքրքիր տվյալներ է հաղորդում Տրապիզոնի շրջանում թուրքական ձեռնարկումների մասին, որն առնչություններ ունենր Հայաստանի հետ: Այսպես, հետախուզական ամփոփագրում նշելով ռազմական գործողությունների դադարեցման մասին, միաժամանակ հենվելով գործակալների հաղորդածի վրա, հայտնվում էր, որ նախատեսվում է անցկացնել 19-21 տարեկանների զորահավաք, ինչպես նաև տեղեկացվում էր

⁵⁰³ Նույն տեղում, ք. 13-16, 21:

⁵⁰⁴ Նույն տեղում, ք. 22:

ադրբեջանական գործակալների ժամանման մասին նշված շրջան, նպատակ հետապնդելով իրենց մոտ ծառայությունների վերցնել ցանկացող սպաններին և ասկյարներին՝ սուլայ խնդրի լուծման համար էրզրում ուղարկելով 2 սպա: Բացի այդ, հետախուզական ամփոփագրում ասվում էր այն մասին, որ երիտթուրքերը Լազիստանից և Օլթիից Աջարիա և Շավչեթիա էին ուղարկել գործակալներին՝ տեղական մահմեդական բնակչությունը գինեխու համար⁵⁰⁵: Ավելին, հայկական հետախուզություն կողմից հայթայթված տվյալները փաստում են, որ թուրքական ռազմաքաղաքական շրջանները և հատուկ ծառայությունները Հայաստանի դեմ իրենց ազդեցիկ գործողություններում ձգտում էին հնարավորինս ներգրավել հայերի դարավոր հարևաններին՝ վրացիներին և կովկասյան մյուս ժողովուրդներին: Կապիտան Դեվոյանցը Կ. Պոլսից Փարիզ՝ գեներալ Ղորղանյանին ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 7-ի զեկուցագրում (N° 33) ընդգծում է Գերմանիայում պատերազմի տարիներին սպայական դպրոցն ավարտած ոմն «Հասան» անունով վրացի սպայի մասին, որ Իգմիթի շրջանում կազմակերպված աշխատանք էր ծավալել լազերի, չերքեզների և թուրքերի մեջ՝ լայն կապեր պահպանելով Վրաստանի հետ⁵⁰⁶:

Հայկական հետախուզությունը աշխատում էր օբյեկտիվ, հավաստի տեղեկատվություն հավաքել՝ ի նպաստ հանրապետություն անվտանգության խնդիրների լուծմանը: Այդ հարցերի լուծմանն էր ծառայում նաև 1919 թ. նոյեմբերի 9-ի հետախուզական ամփոփագիրը, որը կցված էր N° 21 գործին: Դրանում Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ, կապիտան **Վ. Մուրադյանը** և նրա օգնական, պոզպորուչիկ **Միքայել Դողդուխյանը** արժեքավոր տվյալներ էին հաղորդում Մալաթիայում և Խարսիսթում երիտթուրքերի, Ալաշկերտ-Արաքսիլիսայի շրջանում թուրքական 11-րդ դիվիզիայի գործունեության մասին, որի շտաբը գտնվում էր Բայազետում: Հետաքրքիր է նշել, որ այս հետախուզական հաղորդագրության հեղինակները նաև ուշադրավ տվյալ էին ներկայացնում այն մասին, որ իբր թե Անդրկովկասում գտնվող էնվեր փաշան իր ծառայություններն է առաջարկել **Մուստաֆա Քեմալին**՝ պատրաստակամություն հայտնելով վերջինիս տրամադրել 18 հազար զինված մարդ (հետաքրքիր է նշել, որ ինչպես գրում է այդ օրերին Կ. Պոլսում հայկական հետախուզական ծառայության գործունեության կազմակերպիչ Տ. Դեվոյանցը Փարիզ՝ գեներալ Ղորղանյանին ուղարկված 1919 թ. նոյեմբերի 23-ի զեկուցագրում, **էնվեր փաշան Մ. Քեմալին նաև խոստացել է դրամ՝ ոսկով**)⁵⁰⁷, նաև նշելով, որ Բրուսում ազգային բանակի կազմակերպմամբ զբաղվում է հայտնի երիտթուրք, Բաղդադի նախկին ոստիկանապետ Նուրի Ահմեդ Նուրի փաշան: Սակայն առավել հետաքրքիրն այս ամ-

⁵⁰⁵ Նույն տեղում, ք. 28:

⁵⁰⁶ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 17/17, պահ. 12, դ. 3:

⁵⁰⁷ Նույն տեղում:

փոփազրի մի այլ տվյալ է. դրանում ասվում էր ծովային մինիստր Սալիհ փաշայի հեռագրի մասին Զինվորական մինիստրին, որում «Միլլի» շարժման զինվորականներին, զինվորներին խորհուրդ էր տրվում արտաքնապես ցույց տալ իրենց պատրաստակամությունը Անտանտի առաջ՝ ցրելու ազգային զինված ուժերը, իսկ իրականում գաղտնապես չբազմաթիվ զինված ուժերի ձևավորման գործընթացները, նախատեսելով բացահայտ հանդես գալ միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը և պատեհ առիթը կլինի: Թատերական ներկայացում կազմակերպելով, թուրք քաղաքական-զինվորական առաջնորդները օրենքով, իբր թե ասենք վերացված էին համարում 17-րդ կորպուսը, որպեսզի հնարավորություն ունենային ուժեղացնելու 14-րդ կորպուսը հուլյանի դեմ հանդես գալու համար (իրականում 17-րդ կորպուսի բոլոր զինվորները և սպաները մտան 14-րդ կորպուսի մեջ): Հետախուզական ամփոփագրում նշվում էր այն մասին, որ Տրապիզոն-Էրզրումի շրջանում գտնվող 3-րդ զիվիզիայում հաշվվում է 1750 սվին, Վան-Ալաշ-կերտ, Բայազետի շրջանում գտնվող 11-րդ զիվիզիայում՝ 3300 մարդ, իսկ Խորասան-Հասան Կալայի շրջանում գտնվող 12-րդ թուրքական զիվիզիայի կազմում՝ 2000 զինվոր⁵⁰⁸: Իհարկե, սրանք շատ ամբողջական և հավաքական տվյալներ չէին, պակասող օղակները քիչ չէին, սակայն եղածն էլ վկայում է այն մասին, որ հայկական հետախուզությունը փորձում էր լավ պատկերացումներ ունենալ թուրքական ուժերի մասին, ինչը տարբեր պատճառներով ոչ միշտ էր հաջողվում: Եվ այնուհանդերձ, փորձեր արվում էին ոտքի կանգնելու, կայանալու և իրապես հակազդելու թշնամուն, իսկ հավաքված տեղեկատվությունը բավարար էր թշնամուց իրապես զգուշանալու և պատասխան ռազմաքաղաքական լուրջ նախապատրաստություններ տեսնելու համար:

Որոշակիորեն հետաքրքիր է նշել նաև Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի 1919 թ. դեկտեմբերի 1-ի ամփոփագիրը (N^o 8), որը թեկուզև առաջին հայացքից այնքան էլ կարևոր տեղեկատվություն չի պարունակում, և այնուամենայնիվ, դրանում կա մոտեցում, որն արժանի է ուշադրության: Այսպես, ամփոփագիրը կազմողները՝ կապիտան *Մուրադյանը* և պոգպորուչիկ *Դողդիսյանը* նշում էին, որ *Մուստաֆա Քեմալը* կանգնած է այն տեսակետի վրա, որ Փարիզի վեհաժողովից հետո, երբ պարզ կդառնա թուրքիայի ճակատագիրը, իրենք ձեռնամուխ կլինեն վճռական գործողություններ⁵⁰⁹: Այստեղ կարևորն այն է, որ ամփոփագիրը բացահայտում է հետախուզության վերին էշելոնի սպաների տեղեկացվածությունը տարածաշրջանային քաղաքականությունից, և այն հնարավոր ու ռեալ քայլերից, որ կարող էին ձեռնարկել թուրքիայի նոր ղեկավարները իրենց հակահայկական քաղաքականությունում:

⁵⁰⁸ ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73 (71), ք. 187-188:

⁵⁰⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 25, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 271, ք. 85:

Միաժամանակ, ինչպես շատ տեղին նշվում է **Տ. Դեվոյանցի** 1919 թ. օգոստոսի 13-ի ղեկուցադրում (N^o 3) ուղղված Փարիզում գտնվող գեներալ Ղորղանյանին, չնայած այն հանգամանքին, որ Էրզրումում գտնվող Դաշնակցային ռազմաքաղաքական միսիայի ներկայացուցիչները թուրքերի նախապատրաստութունների մասին տեղյակ են պահում Կոստանդնուպոլսում գտնվող Դաշնակցային հրամանատարությանը խնդրանքով՝ գինված ուժ գործադրել՝ աղետից խուսափելու համար, վերջիններս դրսևորում են հենց Ռաուֆ բեյի և մյուսների մատնանշած անվճարականութունը, ինչն էլ, ինչպես վկայում է Դեվոյանցը, համարձակութուն է տալիս թուրք առաջնորդներին գնալու դեպի 5-6 նոր դիվիզիաների կազմավորմանը՝ գլխավոր նպատակ դնելով Կարսի և Բիթլիսի ուղղությամբ ռազմաքաղաքական առաջխաղացումը, ընդ որում 36-րդ դիվիզիան կենտրոնացնելով Օլթիի (3-րդ, 7-րդ, 11-րդ գնդերը), 9-րդ և 36-րդ դիվիզիաները Էրզրում-Հասան Կալայի շրջանում, 12-րդը՝ Խորասան-Քեթակի ուղղությամբ, 11-րդը՝ Վան-Բայազետի հովտում (33-րդ, 126-րդ և 127-րդ գնդերը, որոնք մտնում էին Մ. Քեմալի գլխավորած 15-րդ կորպուսի կազմի մեջ): Դեվոյանցը նաև ավելացնում էր, որ միլիականները օգտվելով այդ բարենպաստ վիճակից, գնացին դեպի շարքային թուրքերի գինումը՝ Էրզրումի մարզում, բացի վերոհիշյալից բնակչությանը բաժանեցին մոտ 60.000 հրացան, դրան զուգահեռ կազմակերպելով չեթնիկների խմբեր, և դա այն դեպքում, երբ անգլիացիները բավարարվում էին խաղաղ զգուշացումներով, ինչը բնականաբար ազդեցութուն չէր գործում թուրքերի վրա⁵¹⁰:

Տարածաշրջանային, այդ թվում և Հայաստանի շուրջ կատարվող իրադարձութունների մասին կարևոր հետախուզական փաստեր են պարունակվում նաև Գլխավոր շտաբի պետի 1919 թ. դեկտեմբերի 21-ի ղեկուցադրում՝ ուղղված Զինվորական նախարարին՝ կապված մինչև դեկտեմբերի 21-ը ընկած ժամանակահատվածի ռազմական անցքերի ու իրադարձութունների հետ: Դրանում նշվում էր, որ թուրքերի շարժման և իրականացվող տենդագին աշխատանքի մեջ զգացվում է ինչ-որ հիստերիկութուն, որը ճգնաժամի նախանշան է, սակայն կապիտան Մուրադյանը դրա հետ մեկտեղ տեղին զգուշացնում էր, որ այդ խաղը պետք է միանգամայն լուրջ, նույնիսկ վտանգավոր համարել Հայերի համար:

Հենվելով Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի ամփոփագրի վրա, Գլխավոր շտաբի պետը նշում էր, որ վերջինիս կողմից բազմիցս փաստեր են բերվել **Մուստաֆա Քեմալի** կողմից գլխավորվող ազգային ուժերի հապճեպ կազմակերպման մասին թուրքիայում, որը դիտվում էր շատ վտանգավոր Հայաստանի համար, ինչը անհեռատեսորեն անտեսվում և բոլորովին հաշվի չէր առնվում Հայաստանի Հանրապետության քաղաքական-

⁵¹⁰ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 9/9, պս. 12, դ. 3:

կուսակցական ղեկավար շրջանների, կառավարական օղակների, առանձին կուսակցությունների և այլ ուժերի կողմից, որոնք 1919 թ. մայիսի 28-ի Միացյալ Անկախ Հայաստանի մասին հայտարարության և Դաշնակիցների կողմից տրված խախուտ խոստումների մագնիսական դաշտի ազդեցության տակ էին: 1919 թ. դեկտեմբերի 21-ի վիճակով Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատարը հաղորդում էր (նկատի ունենալով Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի № 8 տեղեկագիրը), որ չնայած թուրքական ազգային շրջանների ղեկավարների միջև առկա որոշ տարածայնություններին, հենց ինքը՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան և Ռաուֆ բեյը, հույս դնելով Անտանտի «դաշնակից» երկրների անվճռականության վրա, ի դեմս նրանց ձեռքի տակ առկա բավարար ուժերի բացակայության (սա վկայում է այն մասին, որ վերջիններս ավելի լավ էին տեղեկացված, և լավ էին պատկերացնում համաշխարհային իրավիճակը, և տարածաշրջանային խնդիրներն ու անելիքները - Վ. Վ.) ցանկանում էին իսկույն և եթ սեփական ուժերով գրավել Սմիռնան (Իզմիր, Զմյուռնիա) և մինչև Արփաչայ ընկած տարածքի հյուսիսային մասը, համարելով դա որպես ամենաբարենպաստ պահը խանգավառության համար և համախոհների միջև ընդհանուր տրամադրությունների ստեղծման համար՝ ի նկատի ունենալով նշված գաղափարների իրականացման հնարավորության նկատմամբ հավատը, և երկրորդ, որպեսզի Փարիզի վեհաժողովին կանգնեցնեն կատարված փաստի առաջ, իրապես ազգային ուժերով գրավելով Թուրքիայի տարածքը և ուժեղացնելով Թուրքիայի անբաժանելիության մասին սկզբունքների քարոզչությունը, իրականացնելով Հայկական հարցի վերացումը: Նշված փաստաթղթում նաև ասվում էր, որ հավաստի հետախուզական աղբյուրներից հայտնի է դարձել, որ 1919 թ. նոյեմբերի վերջերին էրզրումում պետք է կայանար թուրքական կորպուսների հրամանատարների համագումարը քրդերի, աշարների, Ադրբեջանի գինվորական ներկայացուցիչների և ռուս բոլշևիկների մասնակցությամբ (ուշադրավ փաստ է, չնայած որոշ «եթեների»՝ հարցականների - Վ. Վ.)՝ նպատակ հետամտելով հանդես գալ ընդդեմ Հայաստանի կազմավորման և Դաշնակիցների ուժեղացման, խոչընդոտելով Թուրքիայի տարածքի անդամահատմանը, և վերջին հաշվով մշակելով գործողությունների ընդհանուր ծրագիր ընդդեմ Թուրքիայի թշնամիների: Միաժամանակ դարձյալ հենվելով հետախուզական գործակալական տվյալների վրա, նշվում էր, որ երկրորդ այդպիսի համագումար նախատեսվում է անցկացնել Սվազում, (Կ.Պոլսում գտնվող Տ. Դեվոյանցը գեներալ Ղորղանյանին ուղղված 1919 թ. հոկտեմբերի 6-ի գեկուցագրում (№ 32) հետևյալ հետաքրքիր նշում է անում այն մասին, որ Սվազում Մուստաֆա Քեմալ փաշային կից գտնվելիս են եղել երեք վրացական և երկու ադրբեջանական սպաներ, որոնք էլ հենց մասնակցել են Սվազի

կոնգրեսին⁵¹¹), քննարկելու համար թուրքական սահմանների պաշտպանութ-
յան հարցը մեծ մասշտաբով, վերջապես բոլոր միջոցները ձեռնարկելով
ուժեղացնելու համար բանակային զորամասերը և քրդա-թաթարական բան-
դաները հայկական սահմանի ողջ երկայնքի եզրերով, վկայակոչելով 15-րդ -
թուրքական կորպուսի հրամանատարի՝ էրզրուժից Կոստանդուպոլիս՝
Ջինվորական նախարարի հասցեով ուղարկված հեռագիրը, որում շեշտվում
էր, որ մոտեցող իրադարձությունների կապակցությամբ հայկական սահմա-
նագծի վրա ձեռնարկվում են նախապատրաստական միջոցառումներ: Զե-
կուցագրում ընդգծվում էր, որ այդ նախապատրաստությունները իրակա-
նում էլ իրենց սպասեցնել չտվեցին, արագ արտահայտվելով կոնկրետ գոր-
ծընթացներում: Որպես ասպցուլյց հայկական սահմանին հարող տարածքնե-
րում թուրքական ուժերի աշխուժացման, զեկուցագրում նշվում էր հետա-
խուզական տվյալներով հաստատվող թուրքական զորամասերի մանևրում-
ների մասին, և մասնավորապես 9-րդ թուրքական դիվիզիայի շարժման մա-
սին Օլթիի շրջանի ուղղությամբ, 11-րդ դիվիզիոնի գործողությունների
մասին Շարուր-Նախիջևանի և Զանգեզուսի շրջաններին հարող տարածք-
ներում, և 3-րդ ու 12-րդ դիվիզիաների վերախմբավորումների մասին Տրա-
պիզոնի և էրզրուժի շրջաններում, որոնք հաստատվում էին նաև այլ աղբ-
յուրներով: Սույն փաստաթղթում արձանագրվում էր, որ Երզնկայի և Եր-
նիխ-Գարահիսարի շրջաններից էրզրուժի վրայով Կովկաս էին ուղևորվում
չեթնիկների մանր խմբեր: Բացի այդ, ասվում էր, որ «Միլլի» կազմակեր-
պությունը ավելի հաջող ձևով ծավալվում է Թուրքիայի շրջանում, որոնցից
առանձին ջոկատներ ուղևորվում են Օլթիի, Ալաշկերտի հովիտները, Սարի-
ղամիշի, Կաղզվանի, Քուլպի, Շարուր-Նախիջևանի շրջանները⁵¹²: Զեկու-
ցագրում նաև կարևոր եզրահանգում էր արվում այն մասին, որ բոլշևիկնե-
րի հաջողություններին զուգընթաց Թուրքիայում ոգևորվել են և շտապում
են այն օգտագործել իրենց պանիսլամիստական նպատակների ուժեղացման
համար՝ Հայկական հարցի ոչնչացման նպատակով: Դրա հետ մեկտեղ կապի-
տան Մուրադյանը տազնապ էր արտահայտում դաշնակիցների՝ իրենց
նկատմամբ հնարավոր անտարբեր վերաբերմունքի դրսևորման հնարավոր-
ությունների կապակցությամբ, նշելով, որ անցած տարվա մղձավանջը կարող է
ավելի սարսափելի ձևերով կրկնվել: Ելնելով դրանից, Հայաստանի գլխավոր
հետախուզյանից մեկը՝ կապիտան Մուրադյանը եզրակացնում էր, որ ան-
հրաժեշտ է իսկույն ևեթ ամեն ինչի մասին տեղեկացնել Դաշնակիցներին
(իբր թե վերջիններա անտեղյակ էին անցուղարձից, քաղաքական գործըն-
թացների իրական ընթացքից- Վ. Վ.), որպեսզի նրանք ձեռնարկեն պատե-
հաժամ միջոցներ հայերի ֆիզիկական գոյությունից ասպարհում համար: Այ-
նուհետև Մուրադյանը անդրադառնում էր ևս մի կարևոր հանգամանքի:

⁵¹¹ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բաառն), քիվ 17/17, պահ. 12, դ. 3, ք. 40:

⁵¹² ՀԱԱ, Ֆ.Պ.-200, ց. 1, գ. 271, ք. 85-86:

Վերջինս նշում էր, որ Թուրքերը օգտվելով այն բանից, որ իրենք Գերագույն կոմիսար Հասկելի առաջարկի համաձայն ձեռնպահ են մնացել բոլոր տեսակի ռեպրեսիաներից (պատժիչ միջոցներից) ապստամբած Թաթարների նկատմամբ, որոնք օրինական հայկական տարածքի վրա հակաիրավական գործողությունների են դիմում, անընդմեջ ապստամբներին մատակարարում են զենք, զինամթերք, նույնիսկ հրետանի, կազմակերպելով Թաթարներին և Զանգիբասարի, Վեդիբասարի, Ծարուրի ու Նախիջևանի բոլոր գյուղերում: Մուրադյանը անդրադառնում է նաև Խալիլ փաշայի հակահայկական գործողություններին Նախիջևանում, ուր վերջինս իր ելույթներում կոչ էր անում միավորվել Թուրքիայի հետ: Միաժամանակ նշվում էին այլ կոնկրետ փաստերի մասին. դեկտեմբերի սկզբներին Ադրբեջանի ներկայացուցչի կողմից Կոստանդնուպոլսից Բաքու է ուղարկվել մոտ 100 թուրք սպա, իսկ թուրքերի մոտ՝ որպես պոլիցմեյստեր (ոստիկանապետ) աշխատած Միրալայ Ռիզա բեյը Նուրի փաշայի կողմից նորից ուղարկվել է Ադրբեջան՝ իր հին պաշտոնը զբաղեցնելու համար և այլն: Սուլյն հուլիս կարևոր զեկուցազրի վրա կա գեներալ-մայոր Հալավերդյանի մակագրությունը, որում վերջինս ընդգծում էր իր լիակատար համաձայնությունը մասին կապիտան Մուրադյանի զեկուցազրում ներկայացված փաստերի և արտահայտված տեսակետների հետ⁵¹³:

Ի դեպ, հարկ է ասել, որ Դաշնակիցների հնարավոր անտարբերություն և կասկածների մասին Անտանտի գծով իրենց փոքր դաշնակցի՝ Հայաստանի նկատմամբ, և այդ առումով Թուրքիայի կողմից ձեռնարկվող ազդեցիկ գործողությունների կապակցությամբ ուշադրով տեսակետ է արտահայտում Տ. Դեվոյանցը՝ համերաշխվելով նաև Վ. Մուրադյանի վերը բերված մի շարք մտքերի հետ. «*Թե՛հե իրենց պահանջները առաջ քաշելու համար քե՛մալականները բաւականաչափ ուժն չունէին, բայց իրենց յոյսը դրած էին Դաշնակիցների անվճռական լինելու վրայ: Կ'ուղէին իրենց ունեցած ուժերով առ այժմ գրաւել Իզմիրը եւ Անդրկովկասի մասը մինչեւ Արփաչայ, որովհետեւ կը խորհէին թե այս անելու ժամանակը ամենանպաստաւորն էր: Այդ կերպով կարող էին իրենց ազգակիցների մէջ ստեղծել ոգեւորութիւն և վստահութիւն իրենց հետապնդած դադափարների գործադրութեան համար: Միաժամանակ նրանք ուղում էին Փարիզի Խորհրդաժողովը դնել կատարուած իրողութեան առջեւ:*

*Հայ ժողովրդի հողային արդար պահանջները տաճիկների համար անընդունելի էին, եւ այդ պատճառով նրանք դիմում էին քայլերի՝ ընդմիջտ հաշուեյարդարի ենթարկելու համար Հայկական Հարցը»*⁵¹⁴: Սակայն նա նաև ավելացնում էր, որ Ռուսաստանի վրա էլ չէին կարող հույս դնել, և այդ ա-

⁵¹³ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 26-27, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 271, ք. 86:

⁵¹⁴ Տիգրան Գեղեցնց, Կեանքիս Դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1946, N° 2 (253), Մարտ -Ապրիլ, էջ 104:

ուումով շատ հետաքրքիր ձևով նկատում է. «Տաճիկ-թաթար պատրաստու-
թիւնների մասին Հայաստանի կառավարութիւնը իրազեկ էր պահում մեր
արտասահմանի պատուիրակութիւնը, որը զուր ծեծում էր եվրոպական դի-
ւանագետներին դռները... Մեզ կարող էր փրկել միայն մեզ մօտ գտնուող
ուսուրը, եւ Հայերից շատերը իրենց աչքերը յառել էին դէպի Հիւսիս՝ Սովետ-
ների կողմը: Բայց նա հեռու էր մեզանից եւ զբաղուած իր ներքին քաղա-
քացիական կռիւներով, թեւ հետզհետէ մօտենում էր Անդրկովկասին»⁵¹⁵:

Հետախուզութեան միջոցով ձեռք բերված այս և այլ կարգի փաստերով
զեկուցազրի հեղինակները հիմնավորում էին կոնկրետ գործողութիւնների
ձեռնարկման անհրաժեշտութիւնը: Գլխավոր շտաբի 1920 թ. հունվարի 2 ի
հետախուզական ամփոփագիրը (N^o 9) դարձյալ վկայում է թուրք-թաթարա-
կան ձեռնարկումների մասին ընդդէմ Հայաստանի, Կոստանդնուպոլսում
Ադրբեջանի ներկայացուցիչ Ռիզակի քայլերի մասին պանիսլամիզմի գաղա-
փարներին նվիրված սպաների հավաքագրման և դրանց Ադրբեջան ուղար-
կելու ուղղութեամբ և այլն⁵¹⁶:

Թուրքիայում տեղի ունեցող իրադարձութիւններին, ինչպէս նաև
թուրքական նկրտումների մասին Հայաստանին սահմանամերձ շրջաննե-
րում, և առհասարակ տարածաշրջանում ցուցաբերվող ակտիվութեան մասին
հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում Գլխավոր շտաբի հետախու-
զական բաժնի 1920 թ. հունվարի 2-ի ամփոփագիրը: Դրանում նշվում է
Հայկական սահմանի վրա ձեռնարկվող միջոցառումների մասին՝ կապված
վերահաս իրադարձութիւններին հետ, ինչպէս նաև «Միլլի» կազմակեր-
պութեան ձեռնարկումների մասին թորթումի շրջանում, որտեղից նորակո-
չիկները շարժվում էին դեպի Օլթիի շրջան, ձգտելով ամրապնդել Սարիղա-
միշի, Կաղզվանի, Քուլպի, Իգդիրի և Նախիջևանի ուղղութեամբ: Դրա հետ
միասին հետախուզական ամփոփագրում նշվում է թուրքական գործակալնե-
րի պանիսլամիստական քարոզչութեան մասին Բաթումի մարզում, որոնց
չնորհիվ նորից դուրս է լողացել Բաթումի, Արզահանի և Կարսի մարզերից
միասնական մահմեդական հանրապետութեան ստեղծման հին պլանը՝ Թուր-
քիայի հովանավորութեան ներքո, օգտագործելով նաև տեղական մահմեդա-
կան մամուլի քարոզչական հնարավորութիւնները: Ամփոփագրում ասվում
էր նաև, որ թուրքական այդ քայլերին և ագիտացիային անգլիական իշխա-
նութիւնը ոչ մի կերպ չի հակադրվել⁵¹⁷:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թ. փետրվարի 7-
ի ամփոփագրում (N 11) կապիտան Վ. Մուրադյանը և նրա օգնական, պող-
պորուհիկ Մ. Դոզոխյանը հայտնում են, որ թուրքական 15-րդ կորպուսը
առգրավելով կազմացրված 4-րդ բանակի զինանոցները, պատրաստվում է

⁵¹⁵ Նույն տեղում, էջ 105:

⁵¹⁶ ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 133, ք. 39:

⁵¹⁷ Նույն տեղում:

դուրս գալ հայկական սահմանի վրա, միաժամանակ ուժեղացվում են 12-րդ, 13-րդ, 14-րդ և 20-րդ կորպուսները: Ամփոփագրում հատուկ նշվում էր, որ հենց այդ կորպուսների գործողությունների հետ էլ պետք է համաձայնեցնի իր գործողությունները Ադրբեջանի բանակը, և մշակի համատեղ պլան, ինչի համար Ադրբեջանի բանակ են հրավիրվել թուրք սպա հրահանգիչներ⁵¹⁸: **Շատ ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ զորքերի Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունքի 1920 թ. ապրիլի 5-ի ամփոփագիրը (N 14), որը կարևոր, թեկուզև տեղ-տեղ այսօրվա մոտեցումների տեսանկյունից վիճարկելի տեղեկատվություն է հաղորդում թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների ու դեպքերի մասին: Դրանում ասվում էր, որ թուրքական բանակի թիվը կազմում է 51.476 մարդ, իսկ էրզրումում գտնվող 15-րդ կորպուսինը՝ 13.338 մարդ: Ամփոփագրում հայտնվում էր, որ 15-րդ կորպուսի դիվիզիաներից 12-րդի շտաբը գտնվում է Խորասանում, 35-րդ գնդինը՝ Քեփրի-Քեյում, 36-րդ գնդինը՝ Զիվիում, Հասան-Կալայում գտնվում է հրետանային մարտկոց՝ 4 հրանոթներով: Գործակալական այդ տվյալների համաձայն, 15-րդ կորպուսը պատրաստվում էր գործողությունների հայկական սահմանի վրա՝ նպատակ հետապնդելով հայերին ետ շարտել Կարսի նահանգից և վերականգնել այսպես կոչված Հարավարևմտյան մահաբազան հանրապետությունը, դրանով իսկ կապ հաստատելով Ադրբեջանի հետ: Ամփոփագրում նաև ասվում էր այն մասին, որ Կ.Պոլսի կառավարությունը առաջարկել է կորպուսի հրամանատար Քյազիմ փաշային մինչև թուրքական հարցի լուծումը, առաջիկայում ձեռնպահ մնալ գործողություններից, որպեսզի չխանգարեն թուրքական խնդրի լուծմանը թուրքիայում, սակայն մշտապես պատրաստ լինելով հնարավոր ակտիվ գործողությունների: Դրանում նաև ասվում էր, որ կորպուսի զորամասերի առջև դրված են որոշակի նպատակներ, այդ թվում Խալիլ բեյի զորամասին հրահանգ է տրվել ամրապնդվել Մերդենեկ-Արդահան ուղղությամբ՝ Արդահանի և Կարսի մարզերը գրավելու համար, իսկ մյուս դիվիզիաները պետք է գործեն Սարիղամիշի ուղղությամբ, որի համար Զարաբխանյան Շուրային հատկացվել է 700 բերդանկա, 4400 փամփուշտ⁵¹⁹, ինչը գրեթե այնքան էր, ինչքան ըստ Դեվոյանցի թուրքիային թուլյատրվում էր ունենալ ըստ Դաշնակիցների հետ ունեցած համաձայնություն, չնայած թուրքերը դատելով այդ փաստերից, դիմում էին քողածածկված քայերի, իրական իրենց գործողությունները ի ցույց չդնելով իրենց հակառակորդներին, ինչպես նաև Փարիզի քաղաքագետներին՝ աշխարհի ճակատագիրը տնօրինող եվրոպական լիգերներին, չնայած դրա կարիքը չկար, քանզի եվրոպական Դաշնակիցները, և մասնավորապես բրիտանացիները ներքուստ հակված էին սերտ եզրեր ունենալու քեմալական առաջնորդների և Մ. Քեմալի հետ՝ ընդդեմ բոլշևիկ-**

⁵¹⁸ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 441, ք. 33:

⁵¹⁹ Նույն տեղում, գ. 427, մաս II, ք. 249:

յան Ռուսաստանի կայսերապաշտական ծրագրերի իրականացման և նոր ռուսաստանյան «Իմպերիայի» ստեղծման: **Գեներալ Գ. Ղորղանյանին ուղղված 1919 թ. նոյեմբերի 7-ի զեկուցագրում (N° 51) Տ. Դեվոյանցը Կ. Պոլսից գրում էր, որ Թուրքիան պետք է ունենար 9 կորպուս՝ 20 դիվիզիաներով, որոնց մեջ պետք է ունենային ընդամենը 54503 մարդ, այսինքն՝ ամեն մի դիվիզիան՝ 2020 զինվոր, և քանի որ 12-րդ և 9-րդ դիվիզիաների թվա-կազմն այդ պահին ավելին է եղել՝ 2296 մարդ, իսկ գեներալ տակ են եղել 39947-ը, դաշնակիցների կողմից թուլյատրվել է զորակոչել ևս 12260-ը⁵²⁰: Սա, իհարկե, հետո խախտվել է, սակայն այս և 1920 թ. ապրիլի 5-ի տվյալ-ները գրեթե համընկնում են, ինչը վկայում է, որ Թուրքական բանակի թվա-կազմը եղել է ընդհանուր առմամբ կայուն՝ տատանվելով 51-54 հազարի մի-ջակայքում:**

Թուրքական զորքերի տեղաբաշխման մասին պատկերացումների ամբողջականացման, ճշգրտման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև շէ գորքերի Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ կապիտան **Դեվոյանցի** գեներալ **Ղորղանյանին** ուղարկված 1919 թ. ապրիլի 29-ի գաղտնի ամփոփագրի (N° 33) տվյալները, որում նշված էր, որ Ալաշկերտից Բայազետ ընկած տարածքում տեղաբաշխված են 1000 կանոնավոր ասկյարներ, իսկ Ալաշկերտի հովտում և բարձունքներում՝ շուրջ 6000 ոչ կանոնավոր քուրդ կամավորական զորամասեր, որոնք մտնում են Քյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորած 15-րդ - կորպուսի մեջ: Հայտնվում էր նաև, որ Քուլաի շրջանում (Սուրմալու) Շամիլ բեկի տրամադրություն տակ կան 250 թուրք կարգապահ ասկյարներ, իսկ սպա Յուզբաշի Քեմալ էֆենդու գլխավորությամբ գործում են մինչև 3000 զինված տեղական թաթարներ և քրդեր՝ որպես պարտիզաններ՝ ձեռքի տակ ունենալով 4 հրանոթ (2-ը՝ լեռնային) և 4 գնդացի: Ավելացվում էր, որ Շամիլ բեկը ուղարկվել է Բայազետ, Ալաշկերտ և Ղարաքիլիսա՝ 25 ուղտերի քարավանի ուղեկցությամբ՝ գեներալ զինամթերք ստանալու համար, իսկ Սարիկամիշի շրջանում՝ գործում է այսպես կոչված «Թուրք կոմունիստներ» բանդան⁵²¹:

Առհասարակ, փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ հետախույզները իրենց կողմից հաղորդվող տեղեկատվության հարցում նախանձախնդիր էին, չահագրգռված էին դրանց հավաստիության և գաղտնիության ապահովման մեջ, մանավանդ, երբ դա վերաբերում էր Թուրքադրբեջանական մեքենայություններին, և դրանց շուտափույթ բացահայտմանը: Այսպես, 1920 թ. մարտի 13-ին շէ Արտաքին Գործերի նախարարու-թյանը կից Տեղեկատվական բաժնի պետին ուղղված դիմումագրում (ՔՕ 4030) շէ գորքերի հրամանատարի Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի

⁵²⁰ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 17/17, պահ. 12, դ. 3:
⁵²¹ Նույն տեղում:

պետ *Տիգրան Դեվոյանցը* տեղեկացնում էր Արտաքին Գործերի նախարարությունը իր վրդովմունքի մասին՝ կապված Հետախուզական ամփոփագրերից մեկի անթույլատրելի ապագաղտնազերծման հետ, որի հետևանքով էլ մամուլ էր սարգել գաղտնի տեղեկատվություն Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձությունների, և որ շատ ավելի կարևոր էր՝ հայկական սահմանի վրա թուրքական նախապատրաստությունների մասին, որոնք էլ կասկածելի հանգամանքներում ընկել էին «Յառաջ» թերթի խմբագրություն և տպագրվել մայիսի 13-ի համարում⁵²²։ *Տ. Դեվոյանցը* խիստ դժգոհում էր այդ փաստից և պահանջում ոչ միայն գտնել մեղավորներին, այլև՝ պատժել դրանց՝ հանցավոր անփութություն համար։ Այդ կապակցությամբ ՀՀ Արտաքին Գործերի նախարարությունը Տեղեկատվական բաժինը հայտնում էր, որ ինքը ոչ մի մեղք չունի դրանում, և չգիտի, թե ինչպես է տեղի ունեցել տեղեկատվության արտահոսք և որտեղից, ինչ ճանապարհներով։ Իր հերթին իր վրայից պատասխանատվությունը գցում էր նաև «Յառաջ» թերթը, տեղի տալով ամիսներ տևող նոր քաջաչուկների⁵²³։ Այս ամենը անթաքույց ցույց է տալիս, թե ինչպիսի պայմաններում էր աշխատում հայկական Հետախուզությունը, դժվարություններ հայթայթելով Հայաստանին վերաբերող թուրքական պլանների ու գործողությունների, թշնամական մեքենայությունների մասին փաստեր ու վկայակոչումներ, որոնք չափազանց կարևոր էին ՀՀ - պետական անվտանգության ապահովման տեսանկյունից, հաղթահարելով սեփական մամուլի միջոցների երբեմն կրավորական, անպատասխանատու և անգրգռված վերաբերմունքից առաջացած խոչընդոտները։

1920 թ. մայիսի 7-ի ամփոփագրում Հայաստանի գործերի Գլխավոր շտաբի Հետախուզական բաժինը տեղեկացնում էր, որ Օլթի է գործուղվել Խալիտ բեյը մոտ 150 ասկյարներով, որպեսզի այսպես կոչված հայկական գազանությունների մասին լուրերի հաստատման դեպքում կազմակերպի տեղական մահմեդականներին։ Հայտնվում էր նաև, որ Մերդենեկի շրջանում աստիճանաբար ավելանում է այնտեղ ժամանող ասկյարների և կամավոր քրդերի քանակը։ Ավելին, վերոհիշյալ ամփոփագրում միաժամանակ տեղեկացվում էր թուրքական գործակալների գործունեություն մասին հայկական որոշ սահմանային շրջաններում։ Այսպես, հայտնվում էր Շարուրյան ուժերի կենտրոնացման մասին Բաշ-Նորաշենում, որը նրանց շտաբատեղին էր դարձել, և որտեղ առկա ուժերին գլխավորում էր թուրքական սպա Օսման փաշան, իսկ տեղական դպրոցի բակում 42 թուրքական ասկյարներ Մաշադի Ալեքսանդր Ջամանխանովի գլխավորությամբ անցկացնում էին տեղական թաթարների ռազմական ուսուցում՝ իրենց տրամադրություն տակ ունենալով 260 մարդ⁵²⁴։

⁵²² ՀԱՍ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 427, մաս II, ք. 300-301:

⁵²³ Նույն տեղում, մաս II, ք. 299, 303, 304:

⁵²⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 184, ք. 140:

Շատ հետաքրքիր և ուշագրավ է Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի 1920 թ. հուլիսի 3-ի ամփոփագիրը (թիվ 18): Դրանում հաղորդվում էր, որ գործակալական տվյալների համաձայն թուրքերը Կոստանդնուպոլսում կազմակերպել են հետախուզական բյուրո, որի գործակալները պետք է աշխատեին Վրաստանի սահմաններում և հետևեին Հայաստանի իրադարձություններին և շարժումներին: Հայտնվում էր, որ այդ նպատակով հավաքագրվել են հայերեն լեզվին տիրապետող բազմաթիվ վրացիներ և ռուսներ, որոնք մոտ ժամանակներում պետք է ժամանեն Հայաստան: Բացի այդ, հետախուզական ամփոփագրում հատուկ շեշտվում էր, որ ստուգված տվյալների համաձայն Գերմանիայում տպագրվել են մեկ միլիոն կեղծ թուրքական լիրաներ, որոնք պետք է ուղարկվեին Կովկաս: Այնուհետև ավելացվում էր, որ Արբեշանին օգնելու նպատակով այդ փողերը պետք է գլխավորապես ծախսվեին Հայաստանում՝ նպատակ հետապնդելով վերջնականապես զցել Հայկական չեկերի կուրսը: Հետախուզական տեղեկագրում նաև ընդգծվում էր, որ վերոնշյալ «Հետախուզական բյուրոյի» գործակալների թվում կան նաև հայեր, որոնք պետք է մասնակցեին Հայաստանում, և մասնավորապես մայրաքաղաքում՝ Երևանում նշված կեղծ փողերի տարածման գործին⁵²⁵:

Ակնհայտ է, որ հայկական հետախուզությունն աշխատում էր և փորձում է արդյունավետ լինել՝ նպատակով հայրենիքի պաշտպանություն արդար գործին: Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի 1920 թ. հուլիսի 6-ի ամփոփագիրը տեղեկություններ էր հաղորդում թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին, և ուշագրավ է որոշակի տեսանկյունից՝ բուլղերիների կողմից տարվող քարոզչության մասին թուրքիայի մահմեդականների շրջանում՝ հանուն այսպես կոչված «համաշխարհային հեղափոխության իրագործման»⁵²⁶, որի քողածածկույթի տակ կատարվում էին միանգամայն այլ բաներ, և ընթանում էին շատ բարդ քաղաքական գործընթացներ, որոնք ամենևին էլ չէին համապատասխանում մի շարք փոքր ժողովուրդների և առանձնապես՝ հայերի շահերին:

Արխիվներում որոշ հետաքրքիր տեղեկություններ կան նաև հայկական հետախուզության գործունեության մասին Պարսկաստանի հետ կապված տեղեկատվություն հավաքելու ուղղությամբ: 1920 թ. հուլիսի 6-ի հետախուզական ամփոփագրում այդ ժամանակ հետախուզական բաժնի պետի պարտականությունները կատարող Գլխավոր շտաբի ծովակալության գծով պորուչիկ *Հովհան Խան-Կոստուրսկին* և նրա օգնական պողպորուչիկ *Մ. Դոդոխյանը* փաստեր են բերում հայ-պարսկական առևտրական փոխհարաբերությունների, Մեղրիում տեղի ունեցող առևտրի, ինչպես նաև այն մասին, որ նախիջևանյան խաները և օրդուբադցիները բողոքել էին պարսկական

⁵²⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 33, ք. 32:

⁵²⁶ Նույն տեղում, ք. 40:

սահմանապահներին և իշխանություններին, որ պարսիկները Ղափանի և Զանգեզուրի հայերին գենք ու զինամթերք են մատակարարում: Ամփոփաբարում նշվում էր, որ քանի որ պարսկական խաները ազգակցական կապերով կապված են Օրդուբադի և Նախիջևանի խաների հետ, ապա այդ պատճառով վերջիններս գնացին այն քայլին, որ առևտուրը երկու ամսով դադարեց, այդ ընթացքում Արբեշանի գործակալների կողմից Թավրիզում ընթանում էր որոշակի հակահայկական ագիտացիա՝ նպատակ հետապնդելով առաջ բերել հայերի ջարդ: Սակայն միաժամանակ ասվում էր, որ Թավրիզի Մուշտի միջամտությունից հետո, երբ վերջինս կոչով դիմեց բնակչությանը լոյս վերաբերմունք դրսևորել հայերի նկատմամբ, իրադրությունը որոշ չափով հստակվեց ու խղաղվեց, և մայիսի 10-ից սկսած Մեղրիում առևտրական հարաբերությունները Պարսկաստանի հետ վերականգնվեցին⁵²⁷:

Սակայն հայկական հետախուզական ծառայություններն ավելի շատ խնդիրներ ունեին Թուրքիայի հետ, և հետևաբար հայթայթված տեղեկությունները ավելի շատ վերաբերում էին հայ-թուրքական հարաբերություններին, տարբեր ռազմական և քաղաքական բնույթի տարածաշրջանային գործընթացներին: Այսպես, 1920 թ. հուլիսի 6-ի հետախուզական ամփոփագիրը Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը գլխավորապես նվիրել էր Թուրքիայի հետ կապված իրադարձություններին, ինչպես նաև բուլղարիկների քարոզչությունը մահմեդական շրջաններում: Բացի այդ, նշված ամփոփագիրը հետաքրքիր տեղեկություններ էր հաղորդում Հայաստանի սահմանների մոտ թուրքական ուժերի դիսլոկացիայի մասին: 1920 թ. հուլիսի 6-ի այս ամփոփագիրը փաստում էր, որ Հայաստանի սահմանների մոտ տեղաբաշխված են **Քյազիմ Կարաբեքիր փաշայի** 15-րդ թուրքական կորպուսը, ընդ որում նշելով, որ էրզրումում է գտնվում Ռուշտի բեյի գլխավորած 9-րդ դիվիզիայի շտաբը, 17-րդ հետևակային գունդը, Հասան-Կալայում՝ 28 -րդ հետևակային գունդը (ինչպես նաև շտաբը), մի մարտկոց, 4 լեռնային թնդանոթ: Տեղեկագիրը հաղորդում էր, որ Թորթումում են գտնվում 28-րդ գնդի երկու գումարտակ, Բարդուսում՝ 28-րդ գնդի մի գումարտակ և 29-րդ հետևակային գնդի զորամասերը, Խորասանում՝ Խալիլ բեյի գլխավորած 12-րդ դիվիզիան իր շտաբով, Զիվինում՝ 34-րդ հետևակային գունդը, Քեփրիկեյում՝ (նաև՝ Քյոփրիքյոյ) 35-րդ հետևակային գունդը, Ալաշկերտի Ղարաքիլիսայում՝ 36-րդ հետևակային գունդը: Սույն փաստաթղթի ծանոթագրություն մեջ նշվում էր, որ 36-րդ հետևակային գնդի զորամասերը նկատվել են Օլթիի շրջանում, ինչպես նաև Խալիտ բեյի 3-րդ դիվիզիան, 7-րդ, 8 -րդ, և 11-րդ հետևակային գնդերը: Նշվում էր, որ թուրքական ամեն մի դիվիզիա ուներ 1100-1500 սվին: Ուշագրավ է, որ հետախուզական ամփոփագրում նշվում էր, որ ասկյարները վատ են հագնված, սակայն շատ լավ են զինված: Այնուհետև շեշտվում էր, որ

⁵²⁷ Նույն տեղում:

Տրապիզոնի և Էրզրումի միջակայքում նշմարվել են 31-րդ դիվիզիայի զորամասերը, որոնք շարժվելիս են եղել Բայազետի ուղղությամբ, ավելացնելով, որ 11-րդ հետևակային դիվիզիան և շտաբը գտնվում են Բայազետում, այդ թվում Բայազետում՝ 18-րդ հետևակային դիվիզիան, Վանում՝ 32-րդ հետևակային գունդը, Բայազետ-Արչայում՝ 53-րդ հետևակային գունդը: Երկրորդ ծանոթագրություն մեջ նշվում էր, որ սահմանի վրա խմբավորված գնդերում ավինները թիվը գերազանցում էր 400-ը: Հիշյալ ուշագրավ փաստաթղթում տվյալներ էին բերվում ոչ կանոնավոր զորամասերի մասին: Այդ կապակցությամբ նշվում էր, որ Մերդենեկի ուղղությամբ կան 1200 հոգի՝ ոչ կանոնավոր ուժեր, Օլթիում՝ Էրզրումյան ժանդարմերիայի գումարտակը՝ 350 հոգի, Օլթի-Բանբայից հյուսիս՝ 1500 հոգիանոց խումբ, իսկ Օլթիի և Տրապիզոնի (գլխավորապես Հասան-Վալայում) միջակայքում՝ 1600 հոգի ոչ կանոնավոր հեծելակ: Այնուհետև արձանագրվել էր, որ Տրապիզոնում է գտնվում ժանդարմերիայի 300 հոգիանոց գումարտակը: Երրորդ ծանոթագրություն մեջ ավելացվում էր, որ անհրաժեշտության դեպքում Լազիստանը կարող է դուրս բերել 15000 ձիավոր: Ավելորդ է նշել, որ վերոնշյալ հետախուզական ամփոփագրի տակ ստորագրողներն էին զորքերի հրամանատարի շտաբի հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար, ծովակալության գծով պորուչիկ Հովհան Խան-Վոտուրսկին և նրա օգնական, պորպորուչիկ Նազարբեկյանը⁵²⁸:

Ուշագրավ է նաև Հայաստանի զորքերի Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին փոխարինած *Մամիկոնյանի* և գնդապետ *Բաղդասարովի* ստորագրությամբ Թիֆլիս՝ գեներալ *Քիչմիշյանի* ուղարկված 1920 թ. նոյեմբերի 14-ի հաղորդագրությունը (№ 11010), որն ուղարկվել էր վերջինիս ի գիտություն: Դրանում հետախուզության վերահիշյալ սպաները նշում էին, որ գերված մի թուրք սպայի վկայությամբ ողջ ճակատի վրա հայերի դեմ գործում են 3-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ թուրքական և մեկ միացյալ-համահավաք դիվիզիաները, մեկ հեծյալ բրիգադ, մոտ 1000 հեծյալ, 2 աշիրեթյան գունդ՝ մոտ 1500 հոգուց բաղկացած, ադրբեջանական հարյուրյակը, հեծյալ լեզգիները՝ 350 հոգի: Նաև նշվում էր, որ դիվիզիաները բաղկացած են երեքական գնդերից, իսկ յուրաքանչյուր գունդ կազմված է 1500 ավինից: Հայտնվում էր, որ 9-րդ դիվիզիան գործում է Զաջուռի ուղղությամբ, 12-րդը՝ Երևանի, 11-րդը՝ Շարուրի և Իգդիրի ուղղություններում, իսկ 3-րդ դիվիզիան նոր-նոր Տրապիզոնից տեղափոխվում էր ճակատ: Բացի այդ, հայտնվում էր, որ Կադավանի շրջանում գործում է առանձին քրդական զորամաս: Այնուհետև ասվում էր, որ յուրաքանչյուր դիվիզիա ուներ մի հետևակային մեքենա, իսկ 12-րդ դիվիզիան ունի հաուբիցային մարտկոց⁵²⁹: Չնայած իրենց որոշ կիսատ-պուատություններ, այս տեղեկությունները արժե-

⁵²⁸ Նույն տեղում, ք. 40-42:

⁵²⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 184, ք. 138:

քավոր էին, և հարկ եղած դեպքում, կարող էին զգաստացնել քաղաքական ու զինվորական առաջնորդներին, եթե նրանք իրավիճակի ողջ լրջությունը ամբողջովին և խորությամբ պատկերացնեին, դուրս գալին իրենց կաբինետների նեղ շրջանակներից և զգաստամիտ հետևություններ անեին, և ոչ թե հույս դնեին Ազգերի Լիգայից սպասվող թղթային օգնության, Սևրյան մեծ Հայաստան ստեղծելու մասին ավագի վրա գրված խոստումների, Անտանտի իրենց մեծ եղբայրներից ականկավող ռազմական և քաղաքական հնարավոր աջակցության վրա, որոնք կառուցված էին մշուշապատ հիմքի վրա, իրատեսական չէին, և լրջորեն հաշվի չէին առնում աշխարհաքաղաքական նոր իրավիճակի սրընթաց գահավիժումները և նորօրյա ընթացքը, հնարավոր միտումները և երանգները:

Եվ այնուամենայնիվ, դժվարությամբ և հերոսաբար դիմակայելով այդ դժվարություններին, հետախուզության աշխատակիցների համառ ջանքերով հայթայթվում էին ուշադրավ տեղեկություններ, որոնց միջոցով հնարավոր էր դառնում պարզել Անգլիայի, Ֆրանսիայի և այլ երկրների դերքորոշումը տարածաշրջանային հարցերում, թուրքերի նկատմամբ, նրանց գործողությունների որոշ անհասկանալի շարժառիթները: Այս առումով ուշադրավ է գեներալ-մայոր **Հ. Քիշմիշյանի** 1920 թ. հունիսի 18-ի հեռագիրը (N^o 277) Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնին, որում հայտնվում էր, որ Փոքր Ասիայում Ֆրանսիական զորքերի կողմից գերի վերցված թուրքական զինվորների մոտ հայտնաբերվել են նոր անգլիական հրացաններ անգլիական փամփուռների մեծ պաշարով: Հեռագրում ասվում էր, որ այդ գեներալ թուրքերն անմիջականորեն մատակարարվել են անգլիացիների կողմից⁵³⁰: Այս փաստաթուղթը վկայում է, որ անգլիացիների համար իրենց մերձավորարևելյան քաղաքականությունում ոչինչ հաստատուն և մաքուր բան չկար, որ նույնիսկ մինչև Սևրը, Մեծ Բրիտանիան քողածածկված եզրեր էր փնտրում թուրքիայի հետ, փորձելով ելնել 1917 թ. հոկտեմբերյան բոլշևիկյան ռուսական հեղաբեկիչ բնույթի հեղափոխությունից հետո աշխարհում ստեղծված աշխարհաքաղաքական նոր ռեալությունների հաշվառումից: Միաժամանակ, պետք է ընդգծել, որ այս կարգի հետախուզական տվյալները ոչ մի լուրջ տպավորություն հայկական քաղաքական և կուսակցական շրջանների վրա չէին թողնում, 1920 թ. կեսերին դեռևս զգալի էր Անտանտի դաշնակիցների նկատմամբ խանդավառ վերաբերմունքը՝ սնահավատ, ոչնչով իրապես չհիմնավորված նվիրվածությունը: Աշխարհաքաղաքական վիճակի ամբողջական պատկերացման տեսանկյունից հետաքրքիր է նաև անդրկովկասյան տարածաշրջանում ստեղծված իրադրության որոշ կողմերի վերահանումը: Այս առումով մեր կողմից արխիվներում կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ այդուհանդերձ, ընդամենը մասամբ են իրավացի

⁵³⁰ ՀԱՍ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 184, ք. 65:

այն հեղինակները, որոնք ՀՀ հետախուզական ծառայություններին մեղադրում են խիստ թուլության կամ անգործության մեջ, թշնամուն հակադրելու անկարողունակության, և առավել ևս՝ մատուցված տեղեկատվության արժեքավորության և օգտակարության առումով: Այլ բան է եզրակացություն գալ, ինչի մասին արդեն վերը մասամբ նկատել ենք, որ հետախուզական գործունեության հաջողությունները և սայթաքումները շատ դեպքերում պայմանավորված էին ոչ միայն նրանով, որ այդ հետախուզությունը կազմակերպվեց ֆինանսական առումով գտնվում էր սովորական ճիշտացման, այլև նրանով և թերևս առաջին հերթին նրանով, որ այդ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական այրերը կլանված լինելով 1919 թ. Փարիզում բացված Մեծ տերությունների վեհաժողովով և այնուհետև 1920 թ. օգոստոսյան Սևրով ծնված խանդավառությամբ, որ վերջապես արդարությունը կհաղթանակի, և ամեն ինչ իր տեղը կգտնի, գործնականում, «բնականաբար» լուրջ էին ընդունում [այն էլ նորելուկ հայկական հետախուզության գործունեությունը], կակածամիտ վերաբերմունք դրսևորելով նրա կողմից մատուցված տեղեկատվության, նրանց կողմից պատրաստված փաստաթղթերի նկատմամբ, դրանք ամուր փակելով իրենց կաբինետների գրոցներում: Իսկ իրավիճակը 1918-1920 թթ. շատ խճճված էր և տաղնապալից: 1920 թ. ապրիլի 25-ին պողպորուհիկ Մ. Դոդոխյանը մի շատ հետաքրքիր գեկուցադիր է ուղարկում իր վերադասին՝ Հետախուզական բաժնի պետ, կապիտան Տ. Դեվոյանցին, որն այն անմիջապես ուղարկում է ՀՀ Արտաքին Գործերի նախարարին: Դրանում ասվում էր, որ առկա տեղեկությունների համաձայն, որոնք հենվում են թուրքական աղբյուրների վրա, Կոստորը Օլթիի, Իդի և այնուհետև էրզրումի հետ կապված են մեկ միասնական հեռագրակապով, որտեղից էլ կապված են Կ.Պոլսի հետ: Հենց Կ. Պոլսից էլ թելագրվում է, թե ինչ վարքագիծ պետք է որդեգրեն էրզրումյան միլիտանները: Տեղեկատվության ևս շատ կարևոր մի մանրամասն ներկայացնենք. ըստ դրա, իբր թե էրզրումում գտնվող 15-րդ կորպուսը պատրաստվում է իրեն հայտարարել բոլշևիկյան և շարժվել Հայաստանի վրա, որպեսզի իբր թե պահանջի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի իրագործումը, և ըստ այդմ զբաղեցնի դրանով նախատեսված տարածքները: Մ. Դոդոխյանը հենվելով դարձյալ նույն աղբյուրների վրա, տեղեկացնում էր, որ իբր թե 15-րդ կորպուսի հրամանատարները գտնվում են կապերի մեջ անգլիացիների հետ, որոնք համաձայնվել են այդ տարածքների զբաղեցման հետ, սակայն պայմանով, որ թուրքերը խաղաղ բնակչությանը ձեռք չեն տա (այս հանգամանքը գարմացնում է Հայ հետախուզիկին, քանզի հայերը և Հայաստանը մեծ ակնկալիքներ ունեին Դաշնակիցներից, սակայն խորքային փաստերը այլ բաների մասին էին վկայում - Վ. Վ.): Մ. Դոդոխյանը նաև տեղեկացնում էր, որ Օլթիում գտնվող թուրքական զննարկատն Ջաֆար բեկը հուլյաներին ուղարկված նամակում շնորհակալություն էր հայտնում այն բանի համար, որ վերջիններս բացա-

սաբար են վերաբերվել Հայաստանի կառավարութան կողմից հայտարարված գորահավաքին: Զեկուցագրում նաև նշվում էր Օլթիում կենտրոնացած շուրջ 2000-ոց թուրքական կանոնավոր զորքի մասին, դրան հավելելով նաև այն, որ թուրքերի մեջ այդ կապակցութամբ քարոզչություն է տարվում այն մասին, որ թող հայերը ինչ ուզում են՝ անեն, շուտով թուրքերը գալու են: Զեկուցագրում փաստեր կան նաև Նախիջևանում տեղի ունեցած շարժումների, և այնտեղ գտնվող 200 հոգանոց չեթնիկական խմբի մասին⁵³¹:

Թիֆլիսում գտնվող հայ հետախուզյունները ևս օգտակար աշխատանքներ էին ծավալում պարզելու համար ադրբեջանական, խորհրդային և թուրքական զորքերի տեղաբաշխումը Հայաստանի սահմանների շուրջ, զենքի ու զինամթերքի առաքումների, ադրբեջանական գործակալների քայքայիչ գործունեություն և այլնի մասին: Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին հասցեագրված Քիչմիշյանի 1920 թ. հունիսի 23-ի հեռագրով տեղեկացվում էր խորհրդային զորքերի տեղաբաշխման մասին Կովկասում, որը ձեռք էր բերվել պրապորշչիկ Յաբլովի միջոցով անգլիական ծառայության կապիտան **Կորդից (Կուրտ)**, որը մայոր **Տ. Դ. Դեյլի** տեղակալն էր: Հեռագրում հայտնվում էր, որ սովետական զորքերի կազմում Ադրբեջանում գտնվում են 11-րդ բանակը և 4 գրահագնացքներ, իսկ ընդհանուր առմամբ, ռուսական, սովետական զորքերի թիվը Ադրբեջանում հաշվվում էր 18-20 հազար սվին, 3000-3500 թուրք, 120 -160 գնդացիր, 36 թեթև թնդանոթ, 8 հատուցի և այլն⁵³²:

Առավել հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի սահմանների շուրջ թուրքական զորքերի տեղաբաշխման մասին տեղեկատվությունը: **Քիչմիշյանը** հայտնում էր թուրքական 4-րդ և 15-րդ կորպուսների մասին, որոնց գլխավորում էր Քյազիմ Կարաբեքիրը, ինչպես նաև 9-րդ դիվիզիայի մասին, որի շտաբը գտնվում էր Էրզրումում, իսկ հրամանատարը Ռուշտի բեյն էր: Տեղեկագրում նշվում էր 12-րդ դիվիզիայի մասին, որի շտաբը գտնվում էր Խորասանում, հրամանատարը Խալիլ բեյն էր: Բացի այդ, նշվում էր, որ Խալիլ բեյի գլխավորած 3-րդ դիվիզիան շարժվում է Օլթիի ուղղությամբ, իր կազմում ունենալով 7-րդ, 8-րդ և 11-րդ գնդերը, սվինների թիվը կազմում էր 1100-1800: Քիչմիշյանը նաև հայտնում էր, որ ասկյարները վատ էին հագնված, սակայն լավ էին զինված և ունեին շատ զինամթերք: Նշվում էր, որ 31-րդ դիվիզիան շարժվում է Բայազետի ուղղությամբ: Հետաքրքիր տեղեկություններ էին հաղորդվում ոչ կանոնավոր գորամասերի մասին, որոնցից Մերդենեկի ուղղությամբ գտնվում էին 1200, Օլթիում՝ 350 հոգիանոց Էրզրումյան ժանդարմերիայի գումարտակները, Տրապիզոնում՝ 300 հոգիանոց ժանդարմերիայի գումարտակը, Օլթիից հյուսիս գտնվում էր 1500 մարդուց բաղկացած մի բանդա, իսկ Օլթիի և Տրապիզոնի միջև (գլխավորապես Հասան-Կալայում) 1600 հոգիանոց ոչ կանոնա-

⁵³¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 441, ք. 116:

⁵³² Նույն տեղում, ք. 74:

վոր բանակի Հեծելազորը: Ամփոփագիրն ավարտվում էր տեղեկատվությամբ այն մասին, որ ոչ կանոնավոր Հետևակի թիվը հասնում է 17 հազարի (մինչև 15 հազար Հեծյալ, Նսպիլ-բեյի գլխավորությամբ գործում էր 1600 հոգիանոց Հեծելազորը), ժանդարմների թիվը՝ 650 հոգի էր, զինված բանդանների մեջ ընդգրկվածների թիվը կազմում էր 3000 մարդ⁵³³:

Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թ. սեպտեմբերի 3-ի (N^o 21) գաղտնի ամփոփագիրը թեև տառապում է որոշ թերութուններով, այնտեղ ի տարբերություն նախորդ ամփոփագրերի, կա միլիական-քեմավական շարժման որոշ թերազնահատում, ռազմաքաղաքական իրավիճակի որոշակի թյուրմբուռում՝ հունական զորքերի էլիտների վրա հաջող հարձակման և այլ իրողութունների դիտարկման առումով, սակայն դարձյալ հետաքրքրութուն է ներկայացնում, քանզի նրանում ակնարկներ կան բուլչեիկա-թուրքական համագործակցության, Մոսկվայի կողմից ցուցաբերվող դրամական-ֆինանսական օժանդակության, էրզրումի շրջանում թուրքական ուժերի տեղաշարժերի և այլնի մասին⁵³⁴:

Ամփոփագրում ասվում է **Քյազիմ Կարաբեքիր** փաշայի հաճախակի ռազմաճակատ կատարած այցելութունների և բուլչեիկների հետ նրա հանդիպումների մասին էրզրումում: Տեղեկութուններ են հաղորդվում Վանի շրջանում կազմակերպված պահեստի 2 գնդերի, էրզրում ժամանած Հեծյալ գնդի, Թագակերտի տեղամասում 2000 մարդուց բաղկացած կանոնավոր զորքի (2 հրետանիով) առկայության մասին և այլն: Ամփոփագրում տեղեկութուն է տրվում Ադրբեջանից թուրքիա ներթափանցած բուլչեիկների խմբերի, Օլթիի շրջանում 400 հոգանոց կարմիր ռուսների հայտնվելու և թուրքական զորքերի մեջ բուլչեիկ-պրոպագանդիստների գործունեության վերաբերյալ⁵³⁵:

Անշուշտ, հասկանալի է, որ այս տեղեկատվութունները չեն հավակնում լիարժեք լինել, դա ընդամենը կատարված հնարավոր աշխատանքի արտացոլումն էր, որոշ թվական տվյալներ գուցե ճշգրտման և հավելման կարիք ունեին, սակայն եղածն էլ բավական էր, որոնք հաղորդվում էին հետախուզական ծառայության կենտրոնին թուրք-հայկական 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված պատերազմից⁵³⁶, ուղիղ երեք ամիս առաջ, հունիսի 23-ին և կարող էին լուրջ նախագուշացում հանդիսանալ քաղաքական շրջաններին ակնկալվող և նախապատրաստվող փոթորկալից իրադարձութունների

⁵³³ Նույն տեղում, թ. 74 -75:

⁵³⁴ **Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն)**, թիվ 25/25:

⁵³⁵ Նույն տեղում:

⁵³⁶ Կան մի շարք տարբերակներ, այդ թվում նաև պատերազմը սեպտեմբերի 28-ին սկսված լինելու վերաբերյալ, սակայն առավել ընդունելի տարբերակը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Ա. Ձոհրաբյանինն է, որը գիտականորեն հիմնավորված է և փաստարկված, ըստ որի թուրք-հայկական 1920 թ. պատերազմի սկիզբը պետք է համարել հենց սեպտեմբերի 23-ը. - **Է. Ա. Ձոհրաբյան**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 159-166:

նախօրյակին: Ինչևիցե, հարկ է եզրակացնել, որ ինչպես այս, այնպես էլ մի շարք հետախուզական տեղեկագրեր, ոչ միայն Թիֆլիսից ստացվող, գուցե և այլ աղբյուրներից, այդպես էլ իրենց նպատակին չհասան, և դրա մեջ ամենևին էլ միայն հետախուզական ծառայությունները չեն մեղավոր, և որոշ իմաստով մենք պետք է ճշգրտենք 1999 թ. մեր կողմից հրատարակված գրքուկներում⁵³⁷ արտահայտված որոշ մտքեր՝ կապված Թուրք-Հայկական պատերազմում Հայկական հետախուզության գործունեության մասին արտահայտված տեսակետների հետ: Հետախուզությունը գուցե և ուներ իր մեղքի բաժինը, տվյալները հակասական էին, ոչ ամբողջական, երբեմն էլ ճշգրտման կարիք զգացող, բայց որ դրանք վկայում էին Թուրքական գործերի ռեալ տեղաշարժերի մասին, պետք էր դրանց ուշադրություն դարձնել, սակայն զգուշավորության բոլոր ազդանշանները խլացվեցին աշխարհաքաղաքական հետագա գործընթացների մամլիչի տակ, և կրկնում ենք՝ մասնավորապես Սևրյան ոգևորիչ և «հեղձուցիչ» միջոցառում, որը շատ դիպուկ է նկատել ՀՀ առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին. *«Սեւրի դաշնագիրը շլացրել էր բոլորիս աչքերը, կաշկանդել միտքը, միջնացրել իրականութեան գիտակցութիւնը»*⁵³⁸:

Որոշ փաստեր ուղղակիորեն և անուղղակիորեն վկայում են, որ Հայ ժողովրդի Անտանտի գծով մեծ «եղբայրները» հաճախ պարզապես քողարկվելով Հայ ժողովրդին անշահախնդիր օգնելու խոստումներով և Անդրկովկասում ժողովուրդների միջև կայուն խաղաղություն ապահովելու կարգախոսներով, հաճախ էլ այդ ամենին հավատարիմ չէին մնում և հակառակն էին անում: Դա մասնավորապես արտահայտվեց նրանում, որ անգլիացիներն իրենց քողարկված պրոմահանդեպական դիրքորոշման մեջ այնքան առաջ գնացին, որ օգտվելով իրենց ռազմավարական դիրքային առավելություններից մեծ քաղաքականություն բնագավառում, երբեմն էլ շատ քողարկված եղանակներով հովանավորում էին Հայաստան ներթափանցող ադրբեջանա-թուրքական հետախուզության գործակալներին, կամ էլ թե լավագույն դեպքում ձգտում էին թե՛ Հայերին, թե՛ ադրբեջանցիներին, և թե՛ վրացիներին պահել իրենց հսկողության տակ և ստացված կամ առկա հետախուզական տեղեկատվությունը օգտագործել այնպես, ինչպես իրենք էին նպատակահարմար գտնում՝ Հարմարեցնելով իրենց աշխարհաքաղաքական նպատակներին: Այսպես, դեռևս 1918 թ. մարտի 4-ին Ղարաբախի շրջանի գլխավորական շտաբի անունով գեներալ-մայոր *Բաղդասարովի* կողմից ուղարկված հեռագրում նշվում էր, որ Ղարաբախի գավառում բռնվել է թուրքական բանա-

⁵³⁷ Տե՛ս Վ. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կոնսկրությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից), էջ 22-27, **Յուլի**՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ. (Հայոց քաղաքական պատմության նորագույն էջերից):

⁵³⁸ Տե՛ս **Յովհ. Քաջազնունի**, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ես, էջ 43:

կի գինվոր Ամիր Բաբա Խալիլ Օղլին, որին ուղեկցել են Ալավերդի՝ գնդապետ **Ա. Մ. Զ. Դուզլասի** տրամադրության տակ: Ինքնին Հասակնալի է, որ խոսքը գնում էր թուրքական հետախուզության նկրտումների մասին⁵³⁹: 1918 թ. ապրիլի 8-ի հետախուզական տեղեկագրից ակնհայտ է դառնում, որ մարտի 28-ին **Քերիմ խան էրիվանսկին** (նախկին Արագսայան-Նախիջևանյան Հանրապետության Զինվորական մինիստր) այցելությունը գտնվել է անգլիական շտաբի մայր **Սանդերսի** մոտ⁵⁴⁰: Նույն ձեռագիրը շարունակվեց նաև Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք:

Մի այլ փաստաթղթից, որ ուղարկվել է գեներալ-մայոր **Սիլիկյանի** և Գլխավոր շտաբի, նրա հետախուզական և հակահետախուզական ծառայությունների կազմակերպիչ գնդապետ **Զինկեիզի** կողմից ռազմական նախարարին, ակնհայտ է դառնում անգլիացիների դերքորոշումը որոշ կարևոր իրադարձությունների կապակցությամբ, մասնավորապես Հայաստան-Արբելյան և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների որոշ ելակետային խնդիրների առումով: 1919 թ. մարտի 2-ին թվագրված այդ գրությունում վերոհիշյալ անձինք կարևոր տեղեկատվություն են հաղորդում այն մասին, որ մեր կառավարության կողմից Հայաստանում սովի մասին հայտարարությունից հետո, Բաքվում գտնվող անգլիական հրամանատարությունը չեղյալ էր հայտարարել իր իսկ որոշումը Բաքվից Հայաստան մի էջերին հայ գինվորներ ուղարկելու մասին, որոնց հետ ենթադրվում էր առաքել ռազմաժողով և որոշ քանակությամբ ուսեստեղեն: Այնուհետև, այդ նույն աղբյուրից պարզվում էր, որ համաձայն որոշ ստուգված տեղեկությունների Բաքվում պատրաստված են դեպի Հայաստան առաքման (անգլիացիները ձգձգում էին տարբեր պատրվակներով) 2 վագոն պյուր, 6 վագոն ցորեն, 350 հատ եռագիծ հրացան դրանց համար նախատեսված 400 հազար փամփուշտով, 2-ական «Կոլտ» և «Մաքսիմ» սիստեմի գնդացիներ: Ավարտում էին այս կարևոր տեղեկությունը Սիլիկյանը և Զինկեիզը, ռազմական նախարարից խնդրելով, ծայրահեղորեն անհրաժեշտ այդ ամենը Հայաստան տեղափոխելու համար համապատասխան միջնորդությամբ հանդես գալ Բրիտանական հրամանատարության առաջ, կարևորելով այդ խնդրի լուծումը ՀՀ ազգայնապետական անվտանգության տեսանկյունից, որպես կարևոր նախապայման թուրքական ագրեսիվ նկրտումներից անջրպետվելու համար և ՀՀ պահանջ-մուկները գեներալ և գինամթերքի պաշարների լրացման առումով⁵⁴¹: Հասկանալի է, որ այդ հիմնախնդիրների լուծման մեջ շահագրգռված էին նաև հայկական հետախուզության աշխատակիցները, ինչի համար գործադրվում էին ռեալ ջանքեր:

⁵³⁹ ՀԱԱ, ֆ. 71 - 200, ց. 1, գ. 155, ք. 3:

⁵⁴⁰ Նույն տեղում, ք. 4:

⁵⁴¹ Նույն տեղում, գ. 180, ք. 14:

Հայտնի է, որ այդ օրերին Երևանում էին գտնվում անգլիական ռազմաքաղաքական ներկայացուցչությունը ներկայացնող **Ջ. Գրեյսիս** և նրա ռազմական կցորդ կապիտան **Գ. Կուլտոլ** և ուրիշներ: Երբեմն էլ անգլիական ռազմահետախուզական գործակալները իրենց այնքան վստահ էին զգում, որ ինքնակամ ձերբակալություններ էին իրականացնում, հետաքննության ողջ ընթացքը գաղտնի պահելով: 1919 թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ ՆԳ նախարար **Ա. Գյուլխանզանյանը** Արտաքին Գործերի նախարարին ուղղված դիմումագրում (N 6145) Հայտնում էր, որ իրենց անհայտ հանգամանքներում, անգլիական զինվորական իշխանությունների կողմից ձերբակալվել է Սուրմալուի գավառային կոմիսար, պրապորչիկ **Արտաշես Ստեփանյանը**, և ուղարկվել Բաղդադ և գտնվում է հսկողության տակ: ՆԳ նախարարը նաև հաղորդում էր, որ իր ունեցած տեղեկությունների համաձայն, անգլիացիները համոզվել են նրանում, որ Արտաշես Ստեփանյանը թյուրիմացաբար է ձերբակալվել (որը քիչ է հավանական, ուղղակի անգլիացիները թրեւս չէին կարողացել իրենց ձեռքը գցել այն, ինչ-որ ուզում էին, հնարավոր է՝ որևիցե փաստաթուղթ, որը կհաստատեր նրանց կասկածները, և կարելի է ենթադրել, որ լինելով գավառային կոմիսար, Արտաշես Ստեփանյանը կարող էր զբաղվել նաև հետախուզական բնույթի գործերով, ինչը կարող էր նաև շոշափել բրիտանական ռազմաքաղաքական շահերը՝ Վ. Վ.): ՆԳ նախարարը խնդրում էր Արտաքին Գործերի նախարարություն միջոցով անգլիացիներին հարցում կատարել և պարզել Արտաշես Ստեփանյանի ձերբակալության պատճառները, և միջնորդել՝ վերջինիս ազատել կալանքից⁵⁴²: Ելնելով դրանից, ՀՀ Արտաքին Գործերի նախարարը հարցապնդումով (N 4407) հոկտեմբերի 20-ին դիմում է Անդրկովկասում անգլիական բարձր կոմիսար Գրեյսիսին, ինչպես նաև Թիֆլիսում գտնվող ՀՀ դիվանագիտական հավատարմատարին՝ գործին ընթացք տալու նպատակադրումով⁵⁴³: 1919 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարարություն գլխավոր քարտուղարը Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանին ուղղված հեռագրում այդ փաստի մասին է շեշտում, ասելով, որ 1919 թ. սկզբին անգլիացիների կողմից Երևանում ձերբակալվել է Հայ սպա Արտաշես Ստեփանյանը և տարվել Բաղդադ: Գլխավոր քարտուղարը նշում էր, որ անգլիական կապիտան Գրեյսիսից ստացված գրություն համաձայն Ստեփանյանը հանցանշանների բացակայության պատճառով ազատվել է կալանքից և գտնվում է Համադանում: ՀՀ Արտաքին Գործերի նախարարություն գլխավոր քարտուղարը խնդրում էր Բեկզադյանից պարսկական Հյուսիսատոսի միջոցով կամ էլ այլ ճանապարհով ու ձևով Ստեփանյանին դուրս բերել Համադանից և բերել Երևան, ուր վերջինիս սպասում էր սեփական ընտանիքը, ինչը և կատար-

⁵⁴² ՀԱԱ, Ֆ.Պ -200, ց.1, գ. 242, մաս II, ք. 268-269:

⁵⁴³ Նույն տեղում:

վում է⁵⁴⁴: Ակնհայտ է, որ հայկական հետախուզական ծառայությունները փորձում էին կայացման գործընթացներն ավարտել, լիարժեքորեն կանգնել սեփական ոտքերի վրա, ձեռքազատվելով տարբեր ազդեցություններից, հաղթահարելով զանազան մոլորություններ և դուրս գալ կազուսային վիճակներից, ամեն ինչ նպատակամղելով Հայաստանի Հանրապետության անվտանգության հրատապ խնդիրների լուծմանը, կուտակելով նաև այդ գործի համար կարևոր տեղեկատվություն:

Չնայած դժվարություններին, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հետախուզությունը և՛ Երևանում, և՛ Թիֆլիսում աշխատում էր գերլարումով, ձեռք բերելով կարևոր տեղեկատվություն Հայաստանում և նրա շուրջը տիրող, Թուրքիայում, Ադրբեջանում և Վրաստանում առկա քաղաքական տրամադրությունների և այլնի մասին: Այսպես, ուշացումով (որն անհասկանալի է, թե ինչու է այդպես պատահել, կարծես թե դրանում դիտավորություն կար - Վ. Վ.) 1920 թ. հոկտեմբերի 6-ին Թիֆլիսում Հայաստանի գինվորական կցորդ (ինչպես նաև հետախուզական գործերի ղեկավար) **Քիչմիշյանի ստորագրությամբ Հայաստանի գործերի Գլխավոր շտաբ է ուղարկվում** բավականին արժեքավոր մի տեղեկատվություն, որն ստացվել էր էրզրումից Հայաստանի վրայով Թիֆլիս վերադարձած Վրաստանի գինված ուժերի Գլխավոր շտաբի մի սպայի միջոցով: Այդ տեղեկատվական բնույթի փաստաթղթում տվյալներ էին բերվում Քեմալ փաշայի ուժերի դասավորման մասին Կովկասյան ճակատում՝ սեպտեմբերի 3-ի դրությամբ: Սույն տեղեկագրում նշվում էր, որ. 1) Թուրքական 3-րդ կովկասյան դիվիզիան (6 հազար սվին) ժամդարմական գումարտակի հետ միասին տեղաբաշխված է Սև ծովի ափին, իսկ շտաբը՝ Տրապիզոնից 18 վերստ հեռավորության վրա, դեպի Բայբուրդի կողմն՝ ըստ այդ տեղեկատվության, 2) 9-րդ դիվիզիան, որի պետը Խալիտ բեյն էր, ուներ մոտ 5 հազար գինվոր իր գլխավորած գորամիավորման կազմում և մեկ հրետանային գունդ, իսկ շտաբն ըստ մի վարկածի գտնվում էր Օլթիում, մյուս տարբերակի համաձայն՝ Կոստրում, 3) 12-րդ դիվիզիան, որը տեղաբաշխված էր Կարսի մարզում՝ մինչև Արոս, իր կազմում ուներ 6 հազար սվին՝ գումարած հրետանային գունդը, իրեն կից ունենալով 15-րդ հեծելագունդը, 4) 11-րդ դիվիզիայի շտաբը գտնվում էր Բայազետում, պետը՝ Զավադ-բեյն էր, շտաբին կից կար մեկ պահակային գումարտակ և սակրավորների վաշտ՝ 250 հոգուց բաղկացած, իսկ դիվիզիայի ընդհանուր թվաքանակը հասնում էր 5000-ի և նախատեսված էր Իգդիրի ուղղությամբ օպերացիայի համար: Տեղեկատվության մեջ նաև հայտնվում էր, որ 15-րդ կորպուսի շտաբը գտնվում է էրզրումում, և որի հրամանատարը Գլխավոր շտաբի գնդապետ Քյազիմ բեյն էր, կորպուսի շտաբի պետը՝ Գլխավոր շտաբի մայոր Մուսթաֆա բեյը: Բացի դրանից, սեպտեմբերի 3-ի հաղորդագրության մեջ նշվում էր,

⁵⁴⁴ Նույն տեղում, գ. 211, ք. 392, գ. 242, մաս II, ք. 268:

որ էրզրուճում է գտնվում ադրբեջանական բանակի թաթարական հեծյալ գունդը՝ 250 մարդ թվաքանակով և պահակային 200 հոգիանոց գումարտակը և հրետանավորների գնդի մարտկոցը (2 հրետանիով): Հետախուզական սուլյն ամփոփազրի ամփոփիչ հատվածում ասվում էր, որ Կովկասյան ռազմաճակատի շտաբը գտնվում է էրզրուճում, իսկ հրամանատարը՝ թուրքական զորքերի Գլխավոր շտաբի գեներալ Քյաղիմ Կարաբեքիր փաշան է, իսկ Գլխավոր շտաբի պետը՝ գնդապետ Քյաղիմ բեյը (էնվեր փաշայի փեսան): Փաստաթղթում ասվում էր, որ իբր թե զորամասերը հանդերձանք չունեն, որ այն չկա և համբարակապետական պահեստներում: Նշվում էր պարենամթերքի սակավութայան մասին (ինչը թուրքական զորամասերի գինվորները (ավելի շուտ ասկարները) վայրագաբար հայթայթեցին հայկական տարածքներում, որոնցով նրանք անցան ավերակների վերածելով գյուղերը, իսկ մարդկանց զազանաբար ոչնչացրին - Վ.Վ.): Ինչևիցե, սուլյն շատ հետաքրքիր փաստաթղթում արձանագրված էր, որ մարտական փամփուշտները քիչ են, իսկ հրետանային արկերը մոտ 20 հազար արկը (ինչն ամենևին էլ քիչ չէր - Վ. Վ.): Այնուհետև ասվում էր, որ դրամի բացակայութայան պատճառով, սպաներին և գինվորներին 6 ամսվա ընթացքում ոչ մի անգամ ռոճիկ չի վճարվել, որի հետևանքով աճել են դժգոհությունները և խմորումները զորամասերում (այդ դժգոհությունները վերջիններս պարպեցին խաղաղ հայ բնակչութայան վրա, անխղճաբար կողոպտելով քաղաքներն ու գյուղերը - Վ. Վ.): Ըստ այդ տեղեկատվութայան, թուրքերը հեռագրագիծ ունեին էրզրուճից մինչև Նախիջևան (Մակվի խանութայան վրայով), չնայած այն հանգամանքին, որ Մակվի խանը, ըստ եղած տվյալների, չէր էլ համակրում անատոլիականներին: Վերջապես ասվում էր, որ ներկայումս, ըստ Վրաստանի Գլխավոր շտաբի տվյալների, թուրքական կանոնավոր զորամասեր չկան Թախտակրանում, ուր մնացել էին ընդամենը մի քանի հարյուր չեթնիկներ, իսկ Մերդենեկում՝ մի վաշտ և չեթնիկներ: Վերջնամասում շատ կարևոր տեղեկություն էր հաղորդվում, որ վրացիները, կանխատեսելով բարդացումները Արգահանում, մոտ օրերին ենթադրում են իրականացնել տեղական բնակչութայան զորահավաք՝ ժողովրդական գվարդիայի ուժեղացման համար, որը տեղաբաշխված էր Բաթումի մարզում⁵⁴⁵:

Ինչպես տեսնում ենք, սուլյն տեղեկատվությունը որոշակի արժեք ունի, քանզի կարևոր տվյալներ էր հաղորդում թուրքական զորքերի տեղաշարժերի և թվաքանակի մասին, մանավանդ, որ այն թվազրված է հենց սեպտեմբերի 3-ի վիճակով, այսինքն մինչև թուրք-հայկական պատերազմի սկսվելը, որին դեռ երկու շաբաթից ավելի ժամանակ կար, իսկ այդ ընթացքում կարելի էր շատ լուրջ նախապատրաստություններ տեսնել: Միաժամանակ պետք է նշել, որ այն տառապում էր որոշ թերություններով, որոնցից են թուրքական բանակի թվաքանակի, մարտական հնարավորությունների և

⁵⁴⁵ ՀԱՍ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 154, ք. 118:

բարոյահոգեբանական պատրաստվածութեան ու ոգու, ինչպէս նաև նյութատեխնիկական բազայի որոշ կողմերի թերազնահատումը, գուցե և անտեղյակութիւնը որոշ այլ հարցերից: Մյուս կողմից էլ հնարավոր է, որ վրացական գործերի Գլխավոր շտաբը միտումնավոր էր այդպիսի տեղեկատվութիւն տվել, որոշ տվյալներ աղճատելով, միտումնավոր ձգտելով հայկական կողմին գցել շփոթութեան մեջ, խճճել վերջինիս, ելնելով թուրքերի հետ իրենց ընդհանուր շահերից հայտնի տարածքներում (Կարս, Բաթումի, Արդահան և այլն): Այնուհանդերձ, հարկավոր է հատուկ նշել, որ գլխավոր խնդիրը նրանում էր, որ սուլայն տեղեկատվութիւնը, որն անկասկած իր բոլոր թերութիւններով հանդերձ, որոշակի արժեք ուներ, անհասկանալի պատճառներով բավականին ուշ հասավ Երևան՝ հոկտեմբերի սկզբին, երբ թուրք-հայկական պատերազմը իր սրմանն էր գնում, ակնհայտորեն Հայաստանի համար դժվարին իրավիճակում և վճռական դեր չկատարեց ռազմաքաղաքական ուժերի վերադասավորման տեսանկյունից: Այն որոշ չափով հետաքրքրեց Զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին, որն էլ որոշ հարցերի պարզաբանման նպատակով 1920 թ. հոկտեմբերի 7-ին հեռագրով (N^o 331), դիմեց գեներալ Քիչմիշյանին: Նա հայտնում էր Զինվորական նախարարութեան բանաձևի մասին N^o 397 հեռագրի կապակցութեամբ, որին ստորև կանդաղառնանք: Գլխավորը, որ նշվում էր այդ հեռագրում, կայանում էր հետևյալում. վերջինս հայտնում էր, որ հաղորդած տվյալները համընկնում են իրենց ունեցածի հետ, սակայն խնդրվում էր ստուգել, թե 1) ինչ ուժեր են թուրքերը կետորոնացրել Արդահանի մարզում, 2) շեշում էր, որ վրացական և հայկական կամավորները կարող են գալ, 3) հրահանգում էր Քիչմիշյանին մնալ իր տեղում, սակայն բոլոր այն սպաներին, ովքեր գեկուցադիր են ներկայացրել ռազմաճակատ մեկնելու վերաբերյալ, ընթացք տալ այդ սպաների գործերին, ընդգծելով, որ Հայաստանում դրանց կարիքը խիստ զգացվում է, 4) որ ուսանողուհիներին կարող են տեղաբաշխել: Հեռագրի ամփոփիչ մասում Ռ. Տեր-Մինասյանը խնդրում էր պարզել, թե որտե՞ղ են գտնվում 12-րդ դիվիզիան, 35-րդ և 36-րդ գնդերը⁵⁴⁶:

Հետախուզութիւնը անում էր հնարավորին ամեն ինչ, ձգտելով՝ հայթայթել արժեքավոր և Հայաստանի հանրապետութեան պետական անվտանգութեան տեսանկյունից կարևոր տեղեկատվութիւն, գործելով չափազանց լարված աշխարհաքաղաքական իրավիճակում, դեմ առ դեմ անհամեմատ ավելի հզոր հետախուզական կարողութիւններ ունեցող երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի և այլ երկրների հետ, որոնք իրենց հատուկ ծառայութիւններն ունեին տարածաշրջանում, իսկ մի քանիսն էլ իրենց պաշտոնական ռազմաքաղաքական ներկայացուցչութիւնները՝ Անդրկովկասի կարևորագույն քաղաքներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումիում, Երևանում և այլուր:

⁵⁴⁶ Նույն տեղում, թ. 119:

4. Տիգրան Դեվոյանցի խմբի հետախուզական գործունեությունը Կ.Պոլսում

Հայաստանի Հանրապետության հետախուզական ծառայությունը, ինչպես նկատել է Տ. Դեվոյանցը, դառնալով «ամէն ...պետութեան աջքերն եւ ականջները», «խաղաղ ժամանակ պատրաստել է պատերազմի համար. ուսումնասիրել է ամենապզտիկ մանրամասնութեամբ տուեալ պետութեան Ղդային բոլոր գծերը, որպէսզի ապագայ պատերազմի պարագային դիւրացնի իր պետութեան ռազմագիտական ծրագիրների գործադրումը»⁵⁴⁷: Այն դարձավ քիչ թե շատ ավարտուն կառույց, որի անմիջական խնդիրների մեջ մտավ հակառակորդի և տեղանքի մասին փաստերի հավաքումը, այդ տվյալների մշակումը և դրանց մասին ժամանակին տեղեկատվության հաղորդումը, բրիգադների շտաբների կողմից հետախուզական աշխատանքի ղեկավարումը, հետախուզության համար տրամադրվող գումարների հաշվառումը, լրտեսություն դեմ պայքարի կազմակերպումը⁵⁴⁸:

1919 -1920 թթ. գոյություն ունեցող բարդ իրադրությունում էլ հայկական հետախուզական ծառայությունը փորձում էր ոչ միայն սեփական ոտքերի վրա կանգնել, այլև հնարավորինս արդյունավետ հակազդել Հայաստանի նկատմամբ թուրքական մեքենայություններին, որի կուսակցական-քաղաքական առաջնորդների պատկերացումները և ընդհանուր մարտավարությունը գտնվում էին Սևրյան ոգորումների շրջանակներում, և հայ հետախուզիչների հայթայթած տեղեկատվությունը հաշվի էր առնվում այն չափով, որքան նրանք պատկերացնում և նպատակահարմար էին գտնում: Այդուհանդերձ, 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին (կամ առաջին կեսում) այդ հետախուզությունը բավականաչափ գործուն աշխատում էր տեղեկատվություն հավաքելով Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, բուլղարիայի և Բուսաստանի և այլ երկրների մասին և, որոշակի պատկերացում կազմելով վերջիններիս գործերի թվաքանակի, տեղաբաշխման, գինվածության և այլնի մասին, ինչպես նաև վերջիններիս դեմ ձեռնարկելով որոշ հակամիջոցներ: ՀՀ գործերի հրամանատարի շտաբի 1920 թ. պաշտոնական հաղորդագրություն մեջ շատ կարևոր եզրակացություն է արվում արդեն կայացած հայկական հետախուզական ծառայության գործունեության մասին. «Անցյալ տարվա դեկտեմբերի վերջերից սկսած (1919 թ. - Վ. Վ.) մենք ունեցել ենք մշտական գործակալական կապ Թուրքիայի և Ադրբեջանի բոլոր քաղաքների հետ, սիստեմատիկ կերպով ստանալով ամենաստույգ ինֆորմացիա Արևելյան Անատոլիայի ազգայնական շարժման մասին, որի գլուխ կանգնած է

⁵⁴⁷ Գեորգյանց Տիգրան, Զինուորական հետախուզութիին և եսկա-հետախուզութիին, «Հայրենիք» (Բուսոուն), 1943, N 3 (236), Մայիս-Յունիս, էջ 91:

⁵⁴⁸ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, ք. 54- 55:

Մուստաֆա Քեմալ փաշան⁵⁴⁹, որն իրեն նպատակ է դրել միանալով բոլշևիկներին և թրքական Ադրբեջանի հետ՝ ոչնչացնելու համար ատելի հայ ժողովուրդը, որը խանգարում է իրենց ձգտումները իրականացնելուն, այն է՝ միացնել թուրքական ցեղերը, որոնք զինվելով և կազմակերպվելով, պետք է սկսեն պայքար Անտանտի լուծը թոթափելու համար: Այն ժամանակ, երբ Մ. Քեմալ փաշան կազմակերպում է ամբողջ կորպուսներ, որոնք իբր թե չեն հպատակվում Կոստանդնուպոլսի կենտրոնական իշխանությանը և մի կողմից այդ գործերը կենտրոնացնում է հայկական սահմանի վրա, իսկ մյուս կողմից պատրաստվում է հարձակման ֆրանսիացիների և անգլիացիների վրա, այդ ժամանակ Խալիլ և Նուրի փաշաները բազմաթիվ թուրքական գործակալ սպաներով գործում են Ադրբեջանում և Դաղստանում, որտեղ նրանք պատրաստում են զինված ուժ թուրքիայի հետ միանալու և աշխատում են միաժամանակ նեղ օղակով շրջապատել Հայաստանը՝ մուսուլմանների ապստամբություններ յարուցանելով Նախիջևանում, Զանգեզուրում, Վեդիբասարում և Ղարսի շրջանում (Աղբաբա)»⁵⁵⁰:

ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1919 թ. մայիսի 24-ի գաղտնի գրույթյամբ (N 0084) Գլխավոր շտաբի պետի և Հետախուզական բաժնի պետի պաշտոնակատարներ Ալ. Շենոուրը և Հ. Խան-Կոտուրսկին հայտնում էին, որ Գլխավոր շտաբի կողմից շտապ էրգրում, Մուշ, Վան և Թուրքահայաստանի մյուս քաղաքներն է գործուղվել շտաբ-կապիտան Դեվոյանցը (Զինվորական գերատեսչության գծով 1919 թ. հուլիսի 18-ի հրամանով, որն ստորագրել էին կառավարության նախագահ Ալ. Խատիսյանը և Զինվորական նախարար գեներալ-մայոր Աբարատյանը, «Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի բաժնի պետի օգնական շտաբ-կապիտան Տիգրան Դեվոյանցը ստանում է կապիտանի կոչում»)»⁵⁵¹: Գրույթյան մեջ ասվում էր, որ միաժամանակ նրա կողմից կարող են կատարվել Արտաքին Գործերի նախարարության կողմից առաջադրված խնդիրները, եթե այդպիսիք նրան առաջիկայում կհանձնարարվեն, խնդրելով այդ մասին շտապ հաղորդել Գլխավոր շտաբի Հետախուզական բաժանմունք⁵⁵²: Ուղևորության վերջնական նպատակը Կ.Պոլիս հասնելն էր և այնտեղ Հետախուզական գործը կազմակերպելը: Իր «Կեանքիս դրուագներից» հուշագրությունում Տ.

⁵⁴⁹ Հարկ է ի դեպ նշել, որ մաթեմատիկայի բնագավառում իր հաջողությունների համար նա ստացել է «*Քեմալ*» անվանումը, ինչը նշանակում է որևիցե բնագավառում «կատարելություն»: Տե՛ս Майкл Ли Лэннинг, 100 великих полководцев, М., “Вече”, 1998, стр. 323: Իսկ ինչ վերաբերում է «Արաբադրք» անվանմանը, ապա *Մուստաֆա Քեմալը* այն որպես իր ազգանուն ընտրել է իր խորհրդական, հայտնի հայ լեզվաբան Հակոբ Մարքայանի խորհրդով՝ 1935 թ. վերջինիս առաջարկությամբ հրավիրված խորհրդակցության ժամանակ, Մ. Քեմալի առաջարկով ազգանուններ մշակելով պետական գործիչների և լեզվաբանների համար: Տե՛ս Ծ. Աղայան, Հայերը Թուրքիայում, Եր., «Հայաստան», 1994, էջ 61:

⁵⁵⁰ «Յառաջ», Երևան, 9 մայիսի, 1920, N 95:

⁵⁵¹ Տե՛ս ՀԱՄ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, ք. 392, 394:

⁵⁵² Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 10:

Դեվոյանցը պատմում է այդ մասին, բերում որոշ մանրամասներ, որոնք, անշուշտ, միանշանակ չի կարելի ընդունել՝ անհրաժեշտ քննադատական մոտեցում ցուցաբերելով: Դրանք չափազանց հետաքրքիր են և հնարավորություն են տալիս ամբողջականացնել շատ պատմաքաղաքական դրվագներ: **Տ. Դեվոյանցը** գրում է. «Ես գնդապետ **Շնձուրի** (հարկ է ասել, որ «**Շնձուրը**» Սարգարապատյան ճակատամարտաշարքից հանրահայտ **Ալեքսանդր Շնեուրի** աղավաղված ազգանունն է - Վ. Վ.) հետ պետք է ուղեւորուէի Պոլիս եւ Կիւլիկիա որոշ զինուորական միսիայով: Վերջը Շնձուրը պետք է վերադառնար Հայաստան, իսկ ես պետք է մնայի Պոլիս՝ հետախուզական գործը կազմակերպելու համար: Գնդ. Շնձուրը վերադարձաւ Երեւան, իսկ ես մնացի Պոլիս: Կարճ ժամանակուայ մէջ կապ հաստատեցի Դաշակից պետութեանց ինդելիթեան սերվիսների հետ: Հայաստանի կողմից թէ՛ ապրելու եւ թէ՛ հետախուզական գործը վարելու համար ամսական ինձ տալիս էին ընդամենը 20 լիրա (այս տվյալը չի հաստատվում իր իսկ՝ Տ. Դեվոյանցի վկայութեամբ, քանզի Փարիզ՝ Կորգանովին ուղարկված 1919 թ. սեպտեմբերի 29-ի գեկուցագրում (այն ուղարկվում է նաև ՀՀ հետախուզական բաժանմունքի հասցեով - № 26) այլ տվյալի ենք հանդիպում, այնտեղ վերջինս փաստում է, որ ինքը օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար գնդապետ Շնեուրից բնակվելու և աշխատանքների կատարման համար ստացել է 60.000 ռուբլի՝ կովկասյան բոններով, որը կազմում էր 450 թղթյա լիրա, այսինքն ամիսը՝ 225 լիրա)⁵⁵³: Յուսահատուած՝ առաջին շաբաթին իսկ ուզում էի հեռագրել Հայաստան, որ ինձ յետ կանչեն: Բայց այդ միջոցին ինձ այցելեց Դաշակիցների հետախուզական բաժանմունքի մի ներկայացուցիչը ու առաջարկեց իրենց հաշուին կազմակերպել ամբողջ Արեւելքի հետախուզական գործը: Համաձայնուեցի մի պայմանով, որ իմ բոլոր ստացած տեղեկութիւնները ուղարկեմ նաև Հայաստան: Համաձայնուեցին»⁵⁵⁴: Կ.Պոլսում Տ. Դեվոյանցը համագործակցելով մի շարք հետախուզիչների, և մասնավորապես հետագայում Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրի աշխատակից **Հայկազ Ղազարյանի** հետ, որը այդ ժամանակ անգլիական զինվորական ծառայության մեջ էր գտնվում, սկսում են միասին հայթայթել և զանազան եղանակներով Հայաստան ուղարկել արժեքավոր տեղեկատվություն Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների, տարածաշրջանային այլևայլ քաղաքական փոփոխությունների ու շրջադարձերի մասին. «Տեղեկատուութ-

⁵⁵³ Այս տվյալը չի հաստատվում իր իսկ Տ. Դեվոյանցի վկայությամբ, քանզի գեներալ Գ. Արդյանյանին ուղարկված 1919թ. սեպտեմբերի 29-ի գեկուցագրում (N 26) այլ փաստի ենք հանդիպում. Դեվոյանցը այնտեղ գրում է, որ ինքը օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար գնդապետ Շնեուրից աշխատանքների կատարման և բնակվելու համար ստացել է 60.000 ռուբլի կովկասյան բոններով, որը կազմում էր 450 թուրքական թրթյա լիրա, այսինքն՝ ամիսը 225 լիրա: **Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն)**, թիվ 17/17, պահ. 12, դ. 3):

⁵⁵⁴ **Տիգրան Կոչեանց**, Կեսանիս դրոսագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 1 (246), Յուն-Փետր, էջ 60-61:

եան տեսակէտով շատ արժէքաւոր էին Ե. Թ.-ի⁵⁵⁵ ամեն օր ինձ տուած լուրերը: Ամէն օր նա տալիս էր ինձ պատճէնները Թուրքիոյ բոլոր նախարարութիւնների գաղտնի նամակների, հրահանգների, հեռագիրների, ստացուած ու ուղարկուած: Այդ միջոցին սկսուել էր Միլլի շարժումը, եւ Պոլսոյ Կեդրոնական կառավարութիւնը աջքակապուկ էր խաղում Դաշնակիցների հետ, հակառակ այն բանին, որ նա էլ ուժ էր տալիս գաղտնի կերպով այդ շարժումին»⁵⁵⁶: Սակայն ամեն ինչ հարթ չէր ընթանում, երբեմն էլ առաջանում էին քաջքուկներ ու նույնիսկ ընդհարման հասցնող լարված իրավիճակներ, առավել ևս երբ դա տեղի էր ունենում բուն հետախուզական աշխատանքներն իրականացնող խմբի ներսում, որի ղեկավարներից մեկը Կ.Պոլսում Տ. Դեվոյանցն էր՝ իր 2 օգնականներով, թարգմանչով՝ անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն լեզուների իմացութեամբ⁵⁵⁷: Տ. Դեվոյանցի մի հաղորդագրութեանից ակնհայտ է դառնում, որ տարածայնութեաններ կային Կ.Պոլսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ **Փերնանդ Թախթաշյանի** հետ, որն այդ հետախուզական ամփոփագրերն ուղարկում էր Երևան: Ըստ Տ. Դեվոյանցի, դա հետեւանք էր այն բանի, որ Երևան ուղարկած տեղեկատվութեանն ավելի արժեքավոր էր, քան այն, ինչ Փ. Թախթաշյանը ներկայացում էր ՀՀ ղեկավար ռազմաքաղաքական մարմիններին: Դա էլ հանգեցնում էր նախանձոտ, կասկածամիտ վերաբերմունքի միմյանց փոխհարաբերութեաններում, որն էլ, անկասկած, վնասում էր հետախուզական գործին: Փ. Թախթաշյանը բազմիցս դիմել էր Երևան՝ Տ. Դեվոյանցին Կ.Պոլսից ետ կանչելու պահանջագրով⁵⁵⁸, որն էլ բացասական երևույթ էր հետախուզական գործի առօրյայում, քանզի ավելորդ քաջքուկները ընդամենը անդամալուծում էին պետականորեն կարևոր գործի՝ հետախուզութեան կազմակերպումը և նրա հետագա ուղղորդումը՝ ի օգուտ Հայրենիքի:

Տ. Դեվոյանցը այդ ժամանակ շատ մեծ կարևորութեան էր տալիս տեղեկատվութեան օգտագործման ճիշտ կազմակերպմանը, և ամեն ջանք գործադրում էր, որ այն լինի նպատակային ու կարողանա ծառայել հիմնական նպատակին, այն է՝ Հայաստանի Հանրապետութեան պետականութեան և ազգային-պետական անվտանգութեան ամրապնդմանը և հայկական պետութեան սահմանների ընդարձակմանը մինչև իր բնապատմական սահմաններին. **«Կարեւոր լուրերի առաքումը միայն այն ժամանակ արժէք կուեննայ, երբ**

⁵⁵⁵ Հավանաբար, խոսքը վերաբերում է Կ.Պոլսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ **Ֆ. Թախթաշյանին** կամ էլ երբեմն որոշ փաստաթղթերում նշվող **Քախտ աջյանին**: Դրանք նույն անձնավորության ազգանվան քիչ այլափոխված տարբերակներն են. - Վ. Վ.:

⁵⁵⁶ Նույն տեղում:

⁵⁵⁷ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 17/ 17, պահ. 12, դ. 3:

⁵⁵⁸ **Տիգրան Կոչեանց**, Կեսանքիս յրոտագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 1 (246), Յուն-Փետր, էջ 61:

այդ լուրերը լաւ կը դասաւորուին եւ օգտակար կը դարձնին նրանց, որոնք կազմում են պետութեան աչքերն ու ականջները»⁵⁵⁹:

Այս առումով Հետաքրքրութիւնն են ներկայացնում Կ.Պոլսից Փարիզ՝ գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված մի շարք տեղեկատվական ծրարներ, որոնցում կարևոր փաստեր են բերվում թուրքական գորքերի տեղաշարժերի, նրանց ձեռնարկումների և նախապատրաստութիւններին մասին, որոնք ընդգծված հակահայկական միտվածութիւնն ունեին, և կարող էին օգտակար լինել ռազմաքաղաքական ղեկավար շրջանների համար: Գ. Ղորղանյանին ուղղված 1919 թ. օգոստոսի 18-ի գեկուցագրում Տ. Դեվոյանցը փաստեր էր բերում Վանի շրջանում 11-րդ դիվիզիայի գործունեութեան (4 մարտիոց-ների հետ միասին), ինչպես նաև 2-3 գինամթերքի պահեստների կազմակերպման, Դիմանի և Ուրմիայի շրջանում քուրդ Սմկոյի և Իսմայիլ-աղայի մասին (1500 գինված քուրդ և այլն)⁵⁶⁰:

1919 թ. օգոստոսի 19-ին գեներալ **Ղորղանյանին** ուղղված գեկուցագրում նշում է, որ Բրուսում (Պրուս - մասնագիտական գրականութեան մեջ այս պատմական տեղանվան առավել կիրառական տարբերակը «Բուրսա» անվանումն է - Վ. Վ.) իշխանութիւնը աստիճանաբար հանձնվում է երիտթուրքերին, որոնք գաղտնի կազմակերպում են չեթնիկների խմբեր, Տ. Դեվոյանցը ավելացնում է, որ Բրուսի երիտթուրքերից դաշնակիցների համար իրենց գործողութիւններով հատկապես վտանգավոր են իրավաբան Օսման Նուրին, «Էրթողրուլ» թերթի խմբագիր Զիյա Շաքիրը, հայտնի չեթնիկ Դավուդը, որոնք եգիպտոսյան հայտնի հեղափոխական Աբդուլ-Վադիի հետ միասին ձգտում են շարժում առաջ բերել անգլիացիների դեմ, նրանք բազմիցս հայտարարել են, որ Մ. Քեմալը իրենց լիազորել և հանձնարարել է կազմակերպել աշիրեթական խմբեր, որ իրենք համագործակցում են նաև Ադրբեջանի հետ, ուր ապաստան են գտել շատ թուրք և արաբ «հեղափոխականներ»՝ տեղեկութիւն տալով նաև Վան-Ալաշկերտի շրջանում Ք[Գ]-նիայից տեղափոխված չեթնիկների մասին՝ Հուսեյն փաշայի գլխավորութեամբ, որոնք կառավարութիւնից խոշոր գումարներ են ստացել⁵⁶¹:

Ինչպես պարզվում է կապիտան **Տ. Դեվոյանցի** 1919 թ. օգոստոսի 19-ի գեկուցագրից (8a/ 8a-6)՝ ուղղված գեներալ Ղորղանյանին, Կ. Պոլսում հետախուզական գործերը կապված էին մեծ բարդութիւններին հետ, և դրանցից հնարավորինս ապահովագրվելու նպատակով նա դիմում փորձում է ապավինել վերջինիս օգնութեանը: Զեկուցագրում նշվում էր, որ Կ. Պոլս է գործուղվել ՀՀ Զինվորական նախարարութեան Գլխավոր շտաբի կողմից, և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանը դեռևս ընդունված չէ Դաշնակիցների կողմից, զանազան պատահականութիւններին ապահովագր-

⁵⁵⁹ Նույն տեղում:

⁵⁶⁰ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 9/ 9, պահ. 12, դ. 3:

⁵⁶¹ Նույն տեղում:

վելու նպատակով (մասնավորապես՝ Թուրքիայից), ինքը թախանձագին խնդրում է, որ եթե հնարավոր է՝ ուղարկել որևիցե վկայական Դաշնակցա-յին հրամանատարութայան կողմից (լինի դա անգլիական, Ֆրանսիական, իտալական, հունական), որպեսզի ինքը լեզու և անունով և հարաբերու-թյուններ հաստատի անգլիական հետախուզութայան հետ (կապիտան **Նեռ**), որին տալիս էր տեղեկությունների ամփոփադրերը՝ դա համարելով ոչ բա-վարար: Դեվոյանցը գտնում է, որ վկայականը ուղարկվի Կ.Պոլիս ժամանող եկող հայկական պատվիրակութայան միջոցով կապի անհրաժեշտ ապահովման նպատակները ելնելով⁵⁶²:

Կապիտան Դեվոյանցը Ղորղանյանին Կոստանդնուպոլսից ուղարկած 1919 թ. օգոստոսի 23-ի գաղտնի գեկուցագրում (8a/ 8a-5) տեղեկացնում էր, որ Տրապիզոնի վիլայեթում բոլոր թուրքական կուսակցությունները միավորվել են ու գործում են «Միութուն և առաջադիմություն» կուսակ-ցության հրահանգների համաձայն, իսկ էրզրումի համագումարից հետո խնդրի է դրվել հակադրվել թուրքական տարածքները գրավելու բոլոր փոր-ձերին՝ ընդգծելով, որ Տրապիզոնում, Ռիզիեում, Ունիայում և ընդհան-րապես Լազիստանում բնակչությունը հոյակապ կազմակերպված է, և կա-պեր ունի Աջարիայի ու Ադրբեջանի հետ: Դեվոյանցը փաստում էր վրացի-ների հակահայկական գործունեության մասին և նրբանկատության աստի-ճանի ուշադրավ վկայակոչումներ բերում Կ.Պոլսում Վրաստանի ներկայա-ցուցիչ Ռիսցլաձեի գործունեության մասին, որը հաճախակի հանդիպում-ներ էր ունենում ստամբուլյան Չուրուկ Սուլի Մահմուդ փաշայի հետ՝ բա-նակցություններ վարելով երիտթուրքերի հետ հայերի դեմ համատեղ գոր-ծողությունների վերաբերյալ: Ասվածին Դեվոյանցը հավելում էր, որ իբր թե ընդառաջ գնալով տեղական թուրք բնակչության խնդրանքին՝ խոչըն-դոտելու Հայկական պետության կազմավորման գործին, կառավարու-թյունում որոշվել է Գոնիայի և Անկարայի շրջաններում գտնվող 50.000 և 40.000 փախստական թուրքերին ու քրդերին համապատասխանաբար տեղա-փոխել Վանի, Մուշի և Բիթլիսի շրջանները: Դեվոյանցը հետաքրքիր փա-տեր էր բերում թուրքական գորքերի տեղաշարժման մասին, որոնք Վանից նետվել են Բայազետի հովիտ (33-րդ, 126-րդ, 127-րդ գնդերը), իսկ 9-րդ դի-վիզիայի 34-րդ, 50-րդ, 51-րդ գնդերը (յուրաքանչյուրում 2000-2500 սպին) տեղաբաշխվել էին էրզրում-Հասան-Կալայի շրջանում, 3 դիվիզիա Օլթի ուղղությամբ և այլն, 36-րդ դիվիզիայի 106-րդ, 107-րդ և 108-րդ գնդերը 15-րդ կորպուսի կազմի մեջ չեն մտել, 36-րդ դիվիզիան ապրիլի վերջերին էրզրումի վրայով անցել է Սվազ և դրանից այն կողմ՝ այդ ընթացքում հար-կադրելով տեղական հարուստներին դրամ հավաքել գորքի համար⁵⁶³:

⁵⁶² Նույն տեղում:

⁵⁶³ Նույն տեղում:

Գ. Ղորղանյանին ուղարկված 1919 թ. օգոստոսի 24-ին Ս. Դեվոյանցը գեկուցագրում (N 10-8a/8a-4) փաստեր է բերում «Միլի Թաշկիլաթ» շարժման կազմակերպման մասին Դիարբեքիբում, Աղերթ[ը]ում, Նարզանում և Բիթլիսում, որտեղ Աթար Հաքքի բեյը, Շեվքի բեյը, Սմիլունայի ժանդարմերիայի նախկին պետ գնդապետ Ազիզ Փիրինջի Սիթթին և այլոք Հայաստանի կազմավորմանը հակադրվելու համար դրամ են հավաքել, կազմակերպել չեթնիկների խմբեր, իսկ Մուշի շրջանի քրդերի առաջնորդ Մուսա բեկը Մ. Քեմալի կողմից նշանակվել է Մուշի հովտում գտնվող բոլոր քրդական ուժերի հրամանատար: Դեվոյանցը միաժամանակ տվյալներ էր բերում 11-րդ կովկասյան դիվիզիայի և 18-րդ, 33-րդ, 34-րդ գնդերի, 3-րդ կորպուսի 5-րդ դիվիզիայի, 15-րդ կորպուսի մասին և այլն,⁵⁶⁴ որոնք չնայած ունեին որոշ կիսատ-պուստուլթյուն, և լրացման, ճշգրտման կարիք էին զգում, սակայն միանգամայն բավարար էին, որ սթափեցնող դեր կատարեին և ազդակ հանդիսանային ՀՀ գինվորական-քաղաքական իշխանությունների համար լուրջ նախապատրաստություններ տեսնելու:

Որոշումները շարունակվում էին, հետախուզությունը Կ.Պոլսում փորձում էր լիարժեք կայանալ, ինչքանով որ դա հաջողվում էր առկա հնարավորությունների շրջանակներում, որոնք շատ սահմանափակ էին, հատկապես՝ Ֆինանսական: Այդ մասին կարելի է դատել Տ. Դեվոյանցի 1919 թ. նոյեմբերի 3-ի մի գրառումից, որում նա նշում է, որ ինքը սեպտեմբերի 26-ին գնդապետ Շենուրից նամակ է ստացել, ուր վերջինս Հայտնում էր, որ շուտով կուղարկի 150.000 ու: Տ. Դեվոյանցը Հայտնում էր, որ մինչև դրամի հասնելը ինքը ուսուսական դիվանագիտական միսիայից պարտք է վերցրել 4000 Ֆրանկ, որպեսզի աշխատանքները չդադարեն⁵⁶⁵: Դեվոյանցը ջանադրուժյամբ լծվում է գործի, և շուտով արդյունքները երևում են: Ինչպես ակնհայտ է դառնում Դեվոյանցի՝ գեներալ Ղորղանյանին Փարիզ ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 25-ի գեկուցագրից, այդ ժամանակ արդեն հաջողվել էր հրաշալի փոխհարաբերություններ հաստատել անգլիացիների հետ, որոնցից նաև փաստաթուղթ էր ստանում, որ ինքը ծառայում է Գերագույն կոմիսարիատին կից, Հայտնելով, որ գալառներում սեփական գործակալների միջոցով իր անունից կազմված ամփոփագրերը հանձնվում էին անգլիական ներկայացուցչին, որը հեռագրով դրանք Հայտնում էր Կ.Պոլսի շտաբ, որտեղից էլ հաղորդագրությունների պատճենները փոխանցվում էին իրեն, և ինքը չէր ցանկանա այս ամենը թողնել Ֆինանսական բարդությունների պատճառով⁵⁶⁶: Կ.Պոլսում հետախուզական աշխատանքների կազմակերպումն ընթանում էր բարդություններով, քանզի Դեվոյանցի գործունեությունը համար անհրաժեշտ փաստաթղթային ապահովվածությունը բավարար

⁵⁶⁴ Նույն տեղում:

⁵⁶⁵ Նույն տեղում, թիվ 17/17, պահ. 12, դ. 3, ք. 87:

⁵⁶⁶ Նույն տեղում:

չէր: Դա երևում է Տ. Դեվոյանցի՝ գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված 1919 թ. նոյեմբերի 7-ի գեկուցագրից (N 53), որում վերջինիս հայտնում էր, որ ձեռքի տակ ունի միայն Զինվորական նախարարութիւնից ստացված միայն մեկ փաստաթուղթ և այն էլ կազմված այնպես, որ անհարմար է ցույց տալ, քանզի այնտեղ գրված է, որ «գործուղվում է Կ.Պոլիս՝ դիվանագիտական ներկայացուցչութուն, և Կիլիկիա՝ հայկական զորքերի գլխավոր հրամանատարի մոտ»⁵⁶⁷: Վերը նշվածից ելնելով՝ Դեվոյանցը գեներալ Ղորղանյանից խնդրում էր հայկական պատվիրակութիւնի անունից կամ իր կողմից իրեն տրամադրել անհրաժեշտ փաստաթուղթ, որը հնարավորութիւն կտա ապահովել ավելի լավ կապ⁵⁶⁸:

1919 թ. գեկտեմբերի մոտերքը **Տ. Դեվոյանցը** ՀՀ Զինվորական նախարարութիւնի գեկավարութիւնի պահանջագրով ետ է կանչվում Կ.Պոլսում իր կարևոր առաքելութիւնից, ուր նա պետք է մնար մինչև 1920 թ. մայիսը, սակայն հանգամանքներն ավելի զորեղ են գտնվում: Այս խնդրի վերաբերյալ որոշ կարևոր փաստերի ենք մենք հանդիպում Դեվոյանցի հերթական՝ 1919 թ. նոյեմբերի 11-ին գեներալ Ղորղանյանին ուղարկված գեկուցագրից, որում վերջինս հայտնում էր, որ Կ.Պոլիս է ժամանել պորուչիկ **Խան-Կոտուրսկին**, որը հայտնել է, որ իրենց մոտ տեղի է ունենում ազգայնացում (նկատի ունի երևի հայացման գործընթացը, որի պատճառով շատ ուսարկեղ սպաներ զորացրվեցին Հայկական բանակից), և գնդապետ **Շնեուրը**, գեներալ **Նազարբեկովը և Հախվերդովը** գեկուցագրեր են ներկայացրել պաշտոնաթողութիւնի մասին, որ Գլխավոր շտաբը իբր թե լուծարվում է և այդ իսկ պատճառով էլ որոշել են լուծարել հետախուզական ծառայութիւնը Թուրքիայում, բավարարվելով միայն «դիվանագիտական հետախուզութիւն»-ով, որի համար 15 օր հետո Երևանից կուղարկեն 300 լիրա՝ հրահանգավորումով՝ մեկնել Երևան: Դեվոյանցը այդ կապակցութիւնը սրտնեղութիւն է արտահայտում, ասելով, որ դեռ պարտքեր ունի, որ քանի դեռ պաշտոնական գրութիւն չի ստացել, ինքը մինչև գեկտեմբերի 5-ը ստիպված կլինի մնալ Կ.Պոլսում⁵⁶⁹: Այնուամենայնիվ, Տ. Դեվոյանցը շարունակում է դժվարութիւններով լի աշխատանքը՝ հետևողականորեն և նախանձախնդրորեն ձեռնարկելով հարկ եղած հետախուզական միջոցառումների իրականացումը, փորձում նաև հետևել, թե ինչ չափով են իր կողմից կատարված աշխատանքները իրականութիւն դառնում: Ինչպես պարզ է դառնում Դեվոյանցի գեներալ Ղորղանյանին Փարիզ ուղարկված 1919 թ. նոյեմբերի 17-ի գեկուցագրից (N = 55), ինքը կրկնակի հանդիպում է ունեցել գնդապետ Շնեուրի օգնական պորուչիկ Խան-Կոտուրսկու հետ, և պարզել է, որ իր կողմից Երևան ուղարկված նյութը չի մշակվում, չի հաղորդվում Արտաքին

⁵⁶⁷ Նույն տեղում:

⁵⁶⁸ Նույն տեղում:

⁵⁶⁹ Նույն տեղում:

Գործերի նախարարին, այլ ընդամենը զորամասերի համարները մտցվում են ամփոփագրերի մեջ և շաբաթը մեկ հաղորդվում զորամասերին: Դեվոյանցը բողոքում է դրա դեմ՝ ասելով, որ Երևանում չկան գործը հասկացող մարդիկ, և էլ ինչ խոսք կարող է լինել աշխատանքի գնահատման մասին, և դա այն դեպքում, երբ ինքը շարունակում է չքավորանալ՝ վախենալով մարդկանց աչքերին նայել, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների բնակվելու ու աշխատանքի համար ծախսելով ընդամենը 735 լիրա, որի մասին արգարացնող փաստաթղթերը «Դաշնակցություն» կուսակցության վկայականի, կատարված բոլոր ծախսաթղթերի հետ միասին՝ անհրաժեշտ ստորագրություններով, նոյեմբերի 1-8-ը ուղարկվել են Երևան՝ վավերացված տեղական ռազմական միություն սպաների, ՀՀԴ կուսակցության կողմից:

Եվ այնուհանդերձ, հետախուզական աշխատանքները փակուղի են մտնում, ու ինչպես պարզվում է գնդապետ Ա. Շնեռլի՝ կապիտան Տ. Դեվոյանցին ուղարկած հոկտեմբերի 28-ի նամակից, Ֆինանսավորումը, որ անընդհատ ուշանում էր, լավագույն դեպքում կատարվել է միայն հոկտեմբեր ամսվա համար, հետևաբար նրան մնում էր մտածել ետ գնալու մասին⁵⁷⁰: Ստեղծված իրավիճակում Տ. Դեվոյանցը նախապատրաստվում էր դեկտեմբերի 1-5-ը ընկած ժամանակահատվածում մեկնել Բաթումի, որպեսզի նոր պարտքերի և կազմակերպական բնույթի դժվարությունների առաջ չկանգնի՝ որպես պահեստային տարբերակ ունենալով Սևաստոպոլ մեկնելու հնարավորությունը (Սևաստոպոլ, Բազարնայա հրապարակ, N 1)⁵⁷¹: Իսկ գեներալ Գ. Ղորանյանին ուղարկած 1919 թ. նոյեմբերի 23-ի գեկուցագրում՝ Տ. Դեվոյանցը, Կ.Պոլսից դեպի Երևան իր ետ կանչելու կապակցությամբ դժկամություն արտահայտելով՝ միաժամանակ վրդովվում էր, որ Ֆինանսական հարցերի խնդրում ինքը աջակցություն չստացավ Կ.Պոլսի ոչ մի հայկական հաստատությունից, այդ թվում նաև Թախթաշյանից, չստացավ անհրաժեշտ ջերմություն իր համար ողբերգական այդ օրերին, և այդ իրավիճակում ինքը խնդրում է Նորին Գերագանցությունից վարվել իր հետ, ինչպես նպատակահարմար կգտնի⁵⁷²: Ահա այսպես լուծարվեց հայկական հետախուզություն խումբը Կոստանդնուպոլսում, դադարեցվեց վերջինիս օգտաշատ գործունեությունը:

Ուստի հետաքրքիր է նշել, որ Կ.Պոլսից մեկնելուց առաջ, ինչպես այդ մասին պատմում է իր հուշերում Տ. Դեվոյանցը, Դաշնակից պետություններից մեկը դիմում է նրան իրենց մոտ ծառայություն անցնելու առաջարկով, սակայն հայ հետախուզվող չի համաձայնվում՝ նախընտրելով աշխատել հայկական հետախուզական ծառայությունում և վերագաս մարմինների կարգադրությունները կատարել, հավատարիմ մնալ իրեն հանձնարարված գործի

⁵⁷⁰ Նույն տեղում:

⁵⁷¹ Նույն տեղում:

⁵⁷² Նույն տեղում:

և հայրենիքի գաղափարին. «Պոլսից մեկնելուց առաջ, մի Դաշնակից պետութեան պատասխանատու ներկայացուցիչը ինձ փորձեց համոզել, որ հրաժարուեմ իմ Հայաստանի պաշտօնից, մնամ իրենց մօտ շատ լաւ ամսականով՝ ամբողջ Արեւելքի հետախուզական գործը կազմակերպելու համար իրենց հաշուին: Առաջարկում էր 10,000 տոլար ամսական բիւճէ: Ես կտրուկ կերպով մերժեցի: Երեւանը, իմ հայրենիքս, ինձ կանչում էր, պէտք է մեկնէի»⁵⁷³: Ճանապարհն անցնում էր Բաթումիով, այնուհետև Թիֆլիսի վրայով նոր պետք է գար Երևան, ուր նրան լավ հիշում էին, և ղեռու թարմ էին Մետեխի բանտից փախչելու հիշողութիւնները⁵⁷⁴: Չնայած Տ. Դեվոյանցը զինված էր ամեն տեսակի հանձնարարականներով անգլիական, Քրանսիական սպայակազմի և մասնավորապես անգլիական հետախուզական ծառայութիւնների կողմից, որոնք նրան աջակցում էին Վրաստանի վրայով անցնելու և այլևայլ հարցերում, և ըստ այդմ էլ նա համազործակցութեան մեջ էր գտնվում վերջիններիս հետ, այդուհանդերձ, այդ միջոցին նրանք այդքան օգտակար չէղան, մանավանդ անգլիացիները, որոնք պատրաստվում էին հեռանալ Բաթումիից և Անդրկովկասից: Տ. Դեվոյանցին ղեպի Երևան իր ուղևորութեան հաջող ավարտի իրականացման հարցում օգտակար է լինում Բաթումիի Քրանսիական հյուպատոսը և մասնավորապես Հայաստանում գտնվող Քրանսիական ռազմական ներկայացուցչութեան աշխատակից կապիտան Ա. Պուլադեբարը, որը նաև հետախուզական բաժանմունքի վարիչ էր: Նա Բաթումում ընդունում է Տ. Դեվոյանցին, և ղեպի Երևան նրա ուղևորութեան ընթացքում իր սպուն-վագոնով կազմակերպում անցումը վրաց-հայկական սահմանով: Դեվոյանցը հայտնվում է Երևանում և սպասում հերթական ծառայողական նշանակմանը: Նա Երևանում ներկայանում է ընդհանուր սպայակազմի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանին, որին համարում էր կանոնավոր կրթութիւնը չստացած մեկը, և լավ կարծիքի չէր նրա մասին⁵⁷⁵, որը չէր համապատասխանում իրականութեանը, և ամենևին էլ չի հաստատվում համապատասխան փաստերով: Հետախուզական և հակահետախուզական բաժնի պետ Վ. Գ. Մուրադյանը նրան ուղարկում է Կարս՝ այնտեղի գործառնների հետախուզութիւնը վարելու: Ինչպես նշում է Տ. Դեվոյանցը, ինքն այդ վերաբերմունքից շատ հուսախաբ էր, որովհետև մինչև

⁵⁷³ Տիգրան Կեղեանց, Կեանքիս դրոսագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 83:

⁵⁷⁴ Այդ կապակցությամբ մա 1919թ. նոյեմբերի 11-ին Գ. Կորդանյանին ուղղած գեկուցագրում նշում էր, որ Աջարիայով և Արդահանով գնալուց խուսափելու համար ավելի լավ կլինի պաշտոնաթող լինի և մեկնի Սևաստոպոլ՝ հարազատների մոտ, ուր իրեն կգորա կոչեն Կամավորական բանակ: Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 17/17, պահ. 12, դ. 3:

⁵⁷⁵ Տիգրան Կեղեանց, Կեանքիս դրոսագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 1 (246), Յուն-Փետր. էջ 53, 61, 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 83-84:

Կ.Պոլիս ուղևորութիւնը վարել էր ՀՀ պատերազմական նախարարութեան Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետի պաշտօնը և իր համար վերավորական էր համարում նման նշանակումը, որը, մեր կարծիքով, շատ էլ կարևոր էր, քանզի նրան էր վստահվում Կարսի անկյունաքարային նշանակութիւն ունեցող հանգույցը, իսկ այդ հանգամանքը չէր կարելի անկարևոր համարել և անտեսել: Թերևս այստեղ Տ. Դեվոյանցը չափն անցնում էր՝ գտնելով որ Վ. Մուրադյանը «չունէր եւ ոչ մի հետախուզական գործակալ, իսկ հակահետախուզական ճիւղի մէջ արձանագրուած էին 15-ի չափ գործակալներ, որոնք մտել էին այդտեղ միայն զինուորագրութիւնից ազատուելու համար ու միանգամայն անպէտք էին այդ գործի համար»⁵⁷⁶:

Այդուհանդերձ, հայկական հետախուզական ծառայութիւնը ի դեմս Տ. Դեվոյանցի՝ ունեցավ իր հենակետը Թուրքիայի սրտում՝ Կ. Պոլսում, որտեղից Հայաստան էր ուղարկվում կարևոր տեղեկատվութիւն քաղաքական տարբեր փոփոխութիւնների, քեմալական ուժերի ձեռնարկումների և Դաշնակիցների վերաբերմունքի ու դիրքորոշման հնարավոր վայրկեկումների մասին. «Լաւ էր, որ Պոլսից մեկնելուս միջոցին (1919 թ. վերջերին) այնտեղ թողցի մի կորիզ (Ժ. Ա.-ի գ[հ]լխաւորութեամբ, որը Կ.Պոլսից հունական «Աւերով» զբաղաւորի ռադիոյի կայանի միջոցով եւ «Աւերովի» ծածկագրով հեռագրեր էր հաղորդում Երևան գնդապետ Խօթիին⁵⁷⁷), որ խոստացաւ պարբերաբար, առանց վարձատրութեան, Հայաստանի սիրոյն համար, ուղարկել ինձ կարևոր հետախուզական լուրեր, առնչութիւն ունեցող Հայաստանի հետ: Այդ կորիզը հին, փորձուած հայ հետախույզներից էր բաղկացած: Նրանք ծախսում էին ամսական տասնեակ հազար տոլարներ՝ աշխատելով Դաշնակից պետութիւնների համար:

Երևանում ստացայ այդ մարմնից առաջին ծրարը, վաւերական հեռագիրների պատճէններով, ծածկագիր, էրզրումից Պոլիս Կարաբէքիր Քեազիմ փաշայի ուղարկած պատերազմական նախարարին: Ամփոփեցի եւ տպագրելով N 14, սեպտեմբերին խիստ դաղտնի ուղարկեցի իմ նախարարին, զօրամասերի պետերին եւ մի օրինակ էլ տուի կապ. Մ.-ին՝ մեր սպայակոյտի «պետին»: Այդ հեռագիրները ցոյց էին տալիս, թէ ինչ՞ դասաւորութեամբ (N N գնդերի եւ դիվիզիաների), ինչ՞ ուղղութեամբ եւ երբ՞ թրքական ուլժերը պէտի յարձակուէն Հայաստանի վրայ ու գրաւեն Կարսը, Օլթին, Սարիղամիշը, Արդահանը, Իգդիրը եվ այլն: Այդ ամփոփումն ունեմ այսօր ձեռքիս տակ:

⁵⁷⁶ Նոյն տեղում, 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 83- 84:

⁵⁷⁷ Տե՛ս Տիգրան Գեղեցեցի, Կեսնիս դրուագներից // «Հայրենիք» (Բոստոն), 1946, N⁰ 6 (257), Նոյ-Գեղեցեցի, էջ 109-110. - հավանաբար դա վերաբերում է Երևանում հավատարմագրված բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության գիմփոթական կցորդ *Կոլտաին*, որի հետ կային բազմակողմանի կապեր, ինչը բխում էր առկա իրավիճակից. - Վ. Վ.

Մաթեմատիկական ճշգրտութեամբ հետազային գործադրուեց այդ հեռագիրներին բովանդակութիւնը Հայաստանի նկատմամբ: Բայց ինչպէս՞ ընդունուեց լուրը մէր պաշտօնական իշխանութեան կողմից: Լսեցի, որ մեր քաջ սպայակոյտի պետը անուանել էր ինձ խելագար, իսկ նախարարներից մեկը ասել էր. «Այդ Դեւոյեանցի ցնդաբանութիւններն էն»⁵⁷⁸: Չափազանց կարևոր է արձանագրել, որ դեռևս 1919 թ. հոկտեմբերի 6-ին գեներալ Ղորղանյանին ուղարկած գեկուցազրում (N 3) Տ. Դեվոյանցը հենց Երևան ուղարկված այդ փաստաթղթի մասին է խոսում՝ ընդգծելով, որ կից ուղարկում է Զինվորական մինիստրութիւնից [Թուրքիա] ձեռք բերված գործերի տեղաշարժերի և այլնի մասին մի շարք հեռագրեր, որոնք ծածկագրված վիճակում փոխանակվել են Թուրքական 15-րդ կորպուսի հրամանատար Բ. Կարաբեքիր փաշայի և ռազմական նախարարի միջև⁵⁷⁹:

1919 -1920 թթ. աշուն-ձմեռ ժամանակահատվածում Տ. Դեվոյանցի կողմից Կ.Պոլսից ուղարկված և նրա բացակայութեան ժամանակ այնտեղից ստացված վերը հիշյալ բնույթի հեռագրերի, գեկուցազրերի և ամփոփագրերի նշանակութեան կարևորութեան մասին հաստատագրում է նաև Ռ. Հովհաննիսյանը⁵⁸⁰: Կարծում ենք՝ այս առումով լրացուցիչ մեկնաբանութիւնները միանգամայն ավելորդ են և անտեղի, այստեղ են ասում՝ ասողին լսող է պետք և այն էլ նման բարդ և վտանգալից իրավիճակում, երբ խաղաքարտի վրա էր դրված ՀՀ պետական անվտանգութեան, ժողովրդի ֆիզիկական գոյութեան հարցը:

Ինչպես տեսնում ենք, Տ. Դեվոյանցի կենսագրութիւնը լի է իրադարձութիւններով, ծառայողական հետաքրքիր գործունեություններով և մասնավորապես կոստանդնուպոլսյան հայկական հետախուզական խմբի ղեկավարման արժանահիշատակ փաստերով, վերելքներով և թվացյալ վայրէջքներով, որոշ վրիպումներով, որոնք նրա դիմանկարն ավելի գունեղ և ամբողջական են դարձնում. 1919 թ. մայիսին Տ. Դեվոյանցը ձեռնամուխ է լինում իր հայտնի ուղևորութեանը Արևմտահայաստանի կարևոր քաղաքները՝ Էրզրում, Մուշ, Վան, Կ.Պոլիս և այլուր, իսկ այնուհետև՝ 1920 թ. ապրիլից, գլխավորում է Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը որպես պետ, ինչն էլ ուղղակի վկայում է նրա բարձր աստիճանակարգի մասին հետախուզական ծառայութեան համաստեղութիւնում, հրաշալի պրոֆեսիոնալ որակի մասին: Հայկական հետախուզութիւնն աշխատում էր, և այս առումով Դեվոյանցը բացառութիւն չէր:

⁵⁷⁸ Տիգրան Գեղեցեց, Կեանքիս դրոագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, N 2 (247), Մարտ-Ապրիլ, էջ 85:

⁵⁷⁹ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), քիվ 17/17 պահ. 12, դ. 3:

⁵⁸⁰ Տե՛ս R. G. Hovannisian, The republic of Armenia, vol. II, p. 68, 177-178, 489:

5. Օտարերկրյա գործակալների ծավալած հակահայկական գործունեությունը: Անտոն Մարոկոուտտի գործը (1919 - 1920 թթ.)

Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայություններն իր առաջին քայլերը կատարել է 1918 թ. կեսերին. օգոստոսի 13 -ին Նախարարների խորհրդի նիստի որոշմամբ կատարվում է շուրջ 40 հազար ուղբուղբ դրամական հատկացում հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման համար⁵⁸¹: Ծառայության կայացման ճանապարհին կարևոր էր ՀՀ Զինվորական նախարարի 1919 թ. ապրիլի 14-ի հրամանագրերը, որով հիմնականում ավարտվեցին հետախուզական ծառայության ձևավորման ուղղությամբ ընթացող կազմակերպչական գործընթացները, և ստեղծվեց Գլխավոր շտաբի հետախուզական ու հակահետախուզական բաժանմունք, որը, ինչպես նկատել է **Տ. Դեվոյանցը**, դառնալով «ամէն մէկ պետութեան աչքերն եւ ականջները»՝ «խաղաղ ժամանակ պատրաստուած է պատերազմի համար. ուսումնասիրուած է ամենապզտիկ մանրամասնութեամբ տուեալ պետութեան ջղային բոլոր գծերը, որպէսզի ապագայ պատերազմի պարագային դիւրացնի իր պետութեան ռազմագիտական ծրագրերների գործադրումը»⁵⁸²: Այն դարձավ քիչ թե շատ ավարտուն կառույց, որի անմիջական խնդիրներն էին՝ հակառակորդի և տեղանքի մասին փաստերի հավաքումը, այդ տվյալների մշակումը և դրանց մասին ժամանակին տեղեկատվության հաղորդումը, բրիգադների շտաբների հետախուզական աշխատանքի ղեկավարումը, հետախուզության համար տրամադրվող գումարների հաշվառումը, լրտեսության դեմ պայքարի կազմակերպումը⁵⁸³:

Արևիվային փաստաթղթերն ակնհայտորեն վկայում են հակառակը. ՀՀ հետախուզական ծառայությունը ոչ միայն ձգտել է հայթայթել արժեքավոր տեղեկատվություն թշնամական ուժերի կողմից նախապատրաստվող ու ծրագրավորվող սադրանքների մասին, որը նույնպես քիչ աշխատանք էր, այլև, ինչպես ստորև կտեսնենք, ծառայությունը, ձեռք բերելով կարևոր տեղեկատվություն՝ որոշակի քայլեր էլ ձեռնարկել՝ հակադրելու ՀՀ նկատմամբ թշնամական գործողություններին՝ մերկացնելու և կանխելու հակառակորդի լրտեսների գործունեությունը հանրապետության տարածքում:

⁵⁸¹ ՀԱՍ, ֆ. Դ - 201, ց. 1, գ. 484, ք. 9, ֆ. Դ - 202, ց. 1, գ. 13, ք. 12, ֆ. Դ - 204, ց. 1, գ. 216, ք. 1:

⁵⁸² Տիգրան Դեմոյանց, Զինոսրական հետախուզութիւն եւ հակա-հետախուզութիւն, «Հայրենիք» (Բոստոն), 1943, N 3 (236), էջ 91;

⁵⁸³ ՀԱՍ, ֆ. Դ - 204, ց. 1, գ. 132, ք. 54 - 55:

Վերջապես, Հայկական հետախուզական ծառայությունների գործունեությունը պատմությունը քիչ թե շատ ամբողջականացնելու և թշնամական գործակալներին մերկացնելու ու նրանց խարդավանքները կանխելու տեսանկյունից կարևոր է նշել այսպես կոչված, **Անտոն Մարոկոլուտտի** գործը: Այսպես, 1919 թ. դեկտեմբերի 19-ին հենվելով Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի հուլիսի 29-ի որոշման և զինվորական գերատեսչության 1919 թ. հուլիսի 26-ի հրամանի վրա՝ Երևանի զինվորական դատարանում լավեց ավստրիական ծառայության նախկին սպա, տվյալ պահին վրացահատակ Անտոն Մարոկոլուտտի մեղադրանքին վերաբերող գործը⁵⁸⁴, որին դատում էին Քրեական օրենսգրքի 198, 119 հոդվածների համաձայն: Քաղաքային դումայի շենքում ընթացող այդ դատավարությունը ներկա են եղել պառլամենտի պատգամավորներ, հասարակական գործիչներ, զինվորականներ և այլք: Փաստաթղթերից մեկում նշվում է, որ 32 տարեկան այդ անձնավորությունը Հարավսլավիայի Հարավային Ստերիա շրջանի Ցելի քաղաքի ծնունդ է: Այնուհետև տեղեկանում ենք, որ սույն կարևոր դատավարության ընթացքում որպես վկաներ հանդես են եկել Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար, Հայկական հետախուզական ծառայության ղեկավարներից կապիտան **Վահագն Մուրադյանը**, Արտաքին Գործերի նախարարության գլխավոր քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանը և Արտաքին Գործերի նախարարության քաղաքական բաժնի վարիչ **Պ. Յակուլովը**⁵⁸⁵: Իսկ ամեն ինչ սկսվեց նրանից, որ 1919 թ. դեկտեմբերի 8 -ին Ներքին Գործերի նախարարության աշխատակիցները բռնեցին Թիֆլիսից եկած մի գաղտնագրված հեռագիր, որի հեղինակը Վրաստանում Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ Վեքելովն էր: Նա Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ իր գործընկերոջը՝ Հախվերդովից, խնդրում էր աջակցել Անտոն Մարոկոլուտտին Երևան մեկնելու: 1919 թ. դեկտեմբերի 5-ի հեռագրում (N° 120) ասվում էր հետևյալը. «Մոտ օրերին Երևան է մեկնում ավստրիական կապիտան Հրետանավոր Անտոն Մարոկոլուտտին: Նա մտադիր է անցնել Խալիլ բեյի բանակ: Ցույց տվեք նրան աջակցություն, եթե հարկ լինի»⁵⁸⁶: 1919 թ. դեկտեմբերի 12-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին ուղարկված հեռագրում (N° 202/c.o) Արտաքին Գործերի նախարարը Հայտնելով այն մասին, որ դեկտեմբերի 5-ին Արտաքին Գործերի նախարարության քաղաքական բաժնի կողմից գաղտնագրվել է Վեքելովի՝ Հախվերդովին հասցեագրած հեռագիրը, որի հիման վրա արվել է համապատասխան կարգադրություն, և դեկտեմբերի 8-ին Երևան-Ալեքսանդրապոլ գնացքում ձերբա-

⁵⁸⁴ Տե՛ս նաև **Գաղտնի փաստաթղթերը: Ադրբեջանի դատարանական գործունեությունից մի էջ**, Եր., Գլխավոր շտաբի տպ., 1920. N 1, («Ռազմիկի» տպարան, N 1) , էջ 45-46:

⁵⁸⁵ Տե՛ս **ՀԱՄ**, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 212, ք. 162:

⁵⁸⁶ Տե՛ս Նույն տեղում, ք. 175:

կազմել է Մարոկոուտին: Միաժամանակ տեղեկացնում էր, որ ձերբակալվածի մոտ գտնվել է 7000 ռուբլի նիկոլաևյան փող, Շարուրի և Նախիջևանի շրջաններին վերաբերող քարտեզներ, որոնք հանձնվել են հատուկ կարևոր գործերի գծով քննիչին: Արտաքին Գործերի նախարարը նաև տեղեկացնում էր, որ Անտոն Մարոկոուտիի մոտ հայտնաբերվել է վրացական անձնագիր, որը նշագրվել է Դենիկինի ներկայացուցչի, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության և Ադրբեջանի Հանրապետության Թիֆլիսյան ներկայացուցչության կողմից: Հեռագրում ՀՀ Արտաքին Գործերի նախարարը խնդրում էր գաղտնագրված հեռագրի պատճենը և գործի հանգամանքները ներկայացնող մյուս փաստաթղթերը կոնֆիդենցիալ կերպով՝ խորհրդապահորեն հաղորդել գնդապետ Վ. Հասկելին՝ մատնանշելով, որ չնայած կայացած համաձայնությանը՝ Ադրբեջանը դեռ չարունակում է աջակցել նախիջևանյան անշատողականներին և Հայաստանի նկատմամբ չարունակում է վարել ոչ անկեղծ քաղաքականություն⁵⁸⁷: Մեղադրյալի հարցաքննությունը և պաշտոնական դատաքննության հրապարակային գործընթացը պարզեցին մի շարք հետաքրքիր մանրամասներ, որոնք էլ հնարավորություն տվեցին հայկական հետախուզությանը այդ խճճված օրերին գլուխ հանել ստեղծված իրավիճակից, պարզել աշխարհաքաղաքական տվյալ միջավայրում որոշ անհայտ ուժերի գործողությունները, ինչ-ինչ հակաքայլեր ձեռնարկել: Դատարանի նախագահի հարցին, թե արդյո՞ք ինքն իրեն մեղավոր ճանաչում է, թե ոչ, մեղադրյալը տալիս է բացասական պատասխան: Այնուհետև դատարանը հետևողականորեն փորձում է պարզել, թե մեղադրյալը կոնկրետ ու՞մ մոտ է ցանկացել հյուրընկալվել՝ ձեռնարկելով իր ուղևորությունը Թավրիզ: Մեղադրյալը պատասխանում է, որ ինքը մտադրություն է ունեցել կանգ առնել իրեն ծանոթ ինժեներ էկարտի մոտ, որն ավստրիահայտակ էր և 10 տարուց ավելի ապրել էր Թավրիզում, որի հետ ինքը ծանոթացել էր դեռ այն ժամանակ, երբ այնտեղ թուրքերն էին, հյուրընկալվելով 4 օր: Այս կապակցությամբ մեղադրյալին ուղղված հարցապնդումով հանդես է գալիս կապիտան Մուրադյանը: Նշելով այն մասին, որ 1915 թ. մարտին, երբ ռուսական զորքերը մտել են Թավրիզ, ինքը ծառայության մեջ է եղել Կովկասյան հրաձգային գնդերից մեկում և տեղյակ է, որ այդ պահին գերմանական բոլոր լրտեսները փախել էին: Սակայն կապիտան Մուրադյանը կարևոր նշում է անում, որ հենց այդ ժամանակ ռուսական հակահետախուզության կողմից հայտնաբերվել են այդ լրտեսների ցուցակները, որոնց մեջ էին նաև ինժեներ էկարտի և գերմանական գվարդիայի սպա էլմանի անունները: Կապիտան Մուրադյանը այնուհետև նշում է, որ Թավրիզում եղած ժամանակ ինքը հաճախ այցելել է Ամերիկյան ներկայացուցչություն, որոնց աշխատակիցների հետ մոտ հարաբերու-

⁵⁸⁷ Տե՛ս Նույն տեղում, Ֆ. Պ - 276, ց. 1, գ. 196, ք. 91, 95, 96, 97:

թյունների մեջ էր: Ըստ Մուրադյանի հենց այդտեղ էլ ծանոթացել է էլ-մանի կնոջ հետ, որից էլ հավաստի տեղեկություններ է ստացել, որ էկարտը լրտես է և ռուսների գալով թաքնվել է: Սակայն մեղադրյալը՝ Անտոն Մարոկուտտին, ժխտում է այսչափ կարևոր վկայի փաստարկները մերկապարանոց պնդելով, որ ինքը տեղյակ չի եղել, թե երբևիցե իրեն էկարտը ասած լինի, որ ինքը լրտես է, ընդհակառակը, նա ասել է, որ ինքը 10 տարուց ավելի ապրում է Թավրիզում և զբաղվում առևտրով: Կապիտան Մուրադյանից հետո ելույթով հանդես է գալիս վկա **Հակոբ Տեր-Հակոբյանը**, որը դատարանին տեղեկություն է տալիս Թավրիզում ապրած իր վեց տարիների գործունեություն ժամանակ իրեն հայտնի որոշ փաստերի մասին՝ հիշատակելով նաև ոչ անհայտ ինժեներ էկարտի մասին: Տեր-Հակոբյանը նշում է, որ գերմանական հյուպատոսի ձեռքակալությունից և աքսորից հետո էկարտը թաքնվել է և Թավրիզում ռուսական զորքերի ներկայություն ժամանակահատվածում հորիզոնում չի եղել: Տեր-Հակոբյանը տեղեկացնում է, որ թուրքերի գալով էկարտը նորից հայտնվում է: Իր ելույթի վերջնամասում Հ. Տեր-Հակոբյանը հայտնում է, որ Թավրիզում էկարտին գիտեին որպես մեծ պետությունների քաղաքական գործակալ: Մեղադրյալ Ա. Մարոկուտտին դարձյալ սկսում է հերքել իրեն ներկայացված մեղադրանքը՝ պնդելով, որ ինքը Թավրիզ է ուղևորվել առևտրական նպատակներով, իր հետ տանելով անհրաժեշտ փաստաթղթեր: Սակայն Մարոկուտտին չժխտեց, որ Նախիջևանի վրայով Պարսկաստան մեկնելու մտադրությունը իրականացնելու համար ինքը դիմել է ադրբեջանական դիվանագիտական ներկայացուցչությանը՝ աջակցություն խնդրանքով: Մարոկուտտին արդարանալով նաև անպացույց պնդում է, որ ինքը տեղյակ չի եղել Խալիլ-բեյի ռազմական գործողություններին (նկատի ունի դրանց հակահայկական ուղղվածությունը - Վ. Վ): Մարոկուտտին իր մոտ հայտնաբերված տեղազրական քարտեզների կապակցությամբ պնդում է, որ դրանք պարզապես աշխարհագրական բնույթի են, ռազմաաշխարհագրական նշանակություն չունեն և իբր թե իր մոտ մնացել են ավստրիական ներկայացուցչության վերացումից հետո ու վերցրել է տեղանքում կողմնորոշվելու նկատառումներով⁵⁸⁸: Հ. Տեր-Հակոբյանից հետո կրկին ելույթով հանդես է գալիս կապիտան Վ. Մուրադյանը: Վերջինս ընդգծում է, որ իրեն՝ որպես «կոնտրազվեդկայի» պետի, հավաստի հայտնի է, որ Ադրբեջանը բազմիցս Նախիջևան է ուղարկել իր հրահանգիչներին, տեղական մահմեդական բնակչության կազմակերպման համար՝ ծախսելով 3 միլիոն ռուբլի, հետևաբար, ժխտելով Ա. Մարոկուտտի այն ստահոգ փաստարկը, որ ինքը տեղյակ չէր, թե ինչ է կատարվում Նախիջևանում, որի տարածքով ինքը պետք է անցներ Պարսկաստան, ով է

⁵⁸⁸ Տե՛ս նույն տեղում, ք. 163-165:

Խալիլ-բեյը և ինչ տրամադրվածություն ունեւ հայկական պետականութեան նկատմամբ:

Այս և այլ կարգի փաստարկները չեն օգնում Մարոկուտտիին՝ ձերբազատվելու Հայաստանի դեմ կատարված լրտեսական գործունեութեան մեղադրանքից: Վերջին խոսքում Անտոն Մարոկուտտին համառորեն պնդում է, որ ինքն ընկել է Ադրբեյջանի քաղաքական խարդալանքների ցանցի մեջ, և եթէ ինքը ցանկանար զբաղվել այդպիսի գործերով (լրտեսական - Վ. Վ.), ապա ծառայութեան մեջ կմտներ ում մոտ ասես, միայն ոչ մահամեղականներ: Ա. Մարոկուտտին պնդում էր, որ ինքը Թիֆլիսում գտնվող ավատրական միսիայի վերացումից հետո, որտեղ ծառայութեան մեջ էր, մնացել է Կովկասում, քանի որ այդ ժամանակ իր հայրենիքում բռնկվել էր հեղափոխութիւն, որպէս կադրային սպա մնացել է Վրաստանում՝ զբաղվել առևտրական գործերով և ընդդէմ Հայաստանի ոչինչ չի ունեցել և չունի: Խնդրում է հավատալ իր խոսքերի անկեղծութեանը՝ արդարացնել իրեն: Այդ խնդրանքը, իհարկէ, հիմնազուրկ էր⁵⁸⁹: Ներքին Գործերի նախարարութեան աշխատակիցների կողմից դեկտեմբերի 8-ին Երևանում ձերբակալվելու պահին Մարոկուտտի մոտ հայտնաբերվել էին մի շարք փաստաթղթեր և քարտեզներ, որոնք անհերքելիորեն ապացուցում էին նրա մեղսակցութիւնը: Այդ փաստաթղթերի թվում որոշակի հետաքրքրութիւն էին ներկայացնում՝ 1) Վրաստանի ՆԳՄ վարչական բաժնի կողմից տրված անձնագիրը, 2) Կովկասի լեռնականների անկախութեան և առաջընթացի, միասնութեան լիզայի կողմից Մարոկուտտի անունով տրված վկայականը, 3) վերջինիս վրացական քաղաքացիութիւնը հաստատող Թիֆլիսի հաշտարար դատարանի 1-ին բաժանմունքի կողմից տրված վկայականը, 4) Մերձավոր Արևելքին, Արևմտյան Պարսկաստանին, Կովկասին և Թուրքեստանին, Հայաստանին վերաբերող 5 ռազմատեղագրական քարտեզները: Վերջին քարտեզը տեղագրական առումով վերաբերում էր Սևանա լճի ավազանին և դրան հարող տարածքներին: Կապիտան Մուրադյանի կարծիքով, այդ քարտեզներից մեկը ռազմաքաղաքական տեղագրական արժեք ունեւ և դրա հայտնվելը Մարոկուտտի ձեռքին, նրա կարծիքով, ամենևին էլ պատահականութիւն չէր⁵⁹⁰: Անտոն Մարոկուտտի մոտ եղած մյուս փաստաթղթերը՝ նամակները և հետաքննութեան հետ կապված մյուս նյութերը լուրջ արժեք չէին ներկայացնում, այդ իսկ պատճառով էլ դատարանը դրանց հանգամանորեն չանդրադարձավ, իսկ եթէ քննարկեց էլ, ապա հետաքննչական կարևոր փաստեր չգտավ: Ինչ վերաբերում է տեղագրական քարտեզներին, ապա դրանց առկայութիւնը իր մոտ Մարոկուտտին բացատրեց նրանով, որ ինքը որպէս կրթված մարդ և ճանապարհորդ պետք է հետաքրքրութիւն ցուցաբերեր

⁵⁸⁹ Տե՛ս նույն տեղում, ք. 131, 165, 167:

⁵⁹⁰ Տե՛ս նույն տեղում, ք. 172:

այն տեղանքի նկատմամբ, որով պետք է անցներ⁵⁹¹, ինչն, իհարկե, դատարանը լուրջ չընդունեց: Մեղադրական գործի տեսանկյունից թերևս կարևորություն է ներկայացնում այն հանգամանքը, որ ձերբակալման պահին Ա. Մարոկուտտիից ազդարարվել են Երևանում բնակվող ոմն Մելիք-Շահնազարովին և Գլխավոր համբարակապետություն վարչության չինովնիկ Տարականովին հասցեագրված նամակները, հեղինակը՝ Դրեյեր անունով ոմն մեկն էր, որ բնակվում էր Թիֆլիսում (հավանաբար հենց այն նույն Դրեյերն է, որ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանի միջոցով փորձում է օգտակար լինել Ա. Մարոկուտտին և ազատել կալանքից, անշուշտ, որոշակի շահերից ու նկատառումներից ելնելով): Նա խնդրում էր սույն նամակով ներկայացած Ա. Մարոկուտտիին հյուրընկալել⁵⁹²: Մեղադրական ակտի վերջնամասում ներկայացված է դատարանի որոշումը, ըստ որի Անտոն Մարոկուտտին մեղադրվում էր նրանում, որ 1919 թ. դեկտեմբեր ամսին, նախապես ստանալով Վրաստանում Ադրբեյջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի աջակցությունը, որն ապացուցվում է Հայաստանի Հանրապետությունում Ադրբեյջանի դիվանագիտական ներկայացուցչին ուղարկված հեռագրով, պատրաստվել էր մեկնել Խալիլ-բեյի բանակը, որը գտնվում էր Հայաստանի Հանրապետության նկատմամբ թշնամական և ռազմական գործողությունների մեջ: Մեղադրական ակտում նշվում էր, որ այդ նպատակով Անտոն Մարոկուտտին իր ձեռքի տակ ունենալով Հայաստանի և դրան սահմանակից պետական կազմավորումների տարածքների ռազմաքաղաքական քարտեզներ, ինչպես նաև ռազմական բնույթի այլ տեղեկություններ՝ դեկտեմբերի 8-ին Թիֆլիսից դուրս գալով՝ ժամանել է Հայաստանի տարածք, որպեսզի նախիջևան քաղաքում գտնվող Խալիլ-բեյի շտաբ ուղևորվի, հենց այդ պահին էլ կալանվել է միլիցիայի ռեզերվի աշխատակիցների կողմից, ինչը նախատեսված է քրեական օրենսգրքի 108 և 109 հոդվածներով: Վերջնամասում ասվում է, որ վերը նշված հանցագործ գործողությունների համար ավտորիական ծառայության նախկին սպա, այդ պահին վրացահպատակ Անտոն Մարոկուտտին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի 1919 թ. հուլիսի 29 -ի որոշման հիման վրա (N^o 279) հանձնվում է չլ գինավորական դատարանին: Սույն փաստաթղթի տակ 1919 թ. դեկտեմբերի 14-ին ստորագրել են գինավորական դատարանի անդամները⁵⁹³: Եվ, այդուհանդերձ, գինավորական դատարանը երկարատև խորհրդակցությունից հետո չի արդարացնում Ա. Մարոկուտտիին, ներկայացնելով դատապարտող վճիռ: Եվ այսպես, 1919 թ. դեկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության Զինվորական դատարանի Հատուկ ատյանը բաց դատական նիստում գեներալ-մայոր Խորոմանյանի

⁵⁹¹ Տե՛ս նույն տեղում:

⁵⁹² Տե՛ս նույն տեղում, ք. 1 հակ.:

⁵⁹³ Տե՛ս նույն տեղում, ք. 173:

նախագահությունը և ի դեմս ժամանակավոր անդամներ Հայկական հետևակային 5-րդ գնդի փոխգնդապետ Ամբարդանովի, Երևանյան ինժեներական գումարտակի փոխգնդապետ Կեզամովի, Երևանի պահակային գումարտակի շտաբա-կապիտաններ Տեր-Օզանեզովի և Բուռնուսուզյանի, Գլխավոր դատավորի օգնական պրավորչչիկ Լազարևի և զինվորական ժամանակի չինովնիկի քարտուղարի օգնական Տեր-Աբրամովի, լսելով ավստրիական ծառայության նախկին սպա, տվյալ պահին վրացահպատակ (32 տարեկան) Անտոն Անտոնի Մարոկուտտի գործը՝ վերջինիս ճանաչեց մեղավոր ընդդեմ Հայաստանի՝ հակառակորդի ձեռնարկած գործողություններին նպաստելու և օժանդակելու մեջ, հետևաբար հենվելով Քրեական օրենսգրքի 108 և 119 հոդվածներին վրա որոշեց՝ 1) մեղադրյալ, ավստրիական ծառայության նախկին սպա Անտոն Մարոկուտտիին զրկել բոլոր իրավունքներից և ուղարկել տաժանակիր աշխատանքների 15 տարի ժամանակով, 2) դատական ծախսերը փոխհատուցել մեղադրյալի ունեցվածքի հաշվին, վերջինիս անվճարունակությունը ղեկավարելու գործերի գլխավոր հրամանատարի կողմից: Մեղադրյալ Մարոկուտտին դրանից անմիջապես հետո ներման խնդրանքով դիմեց Հայաստանի պառլամենտին: Մեղադրական բանաձևի բնօրինակի տակ կան Զինվորական դատարանի նախագահ գեներալ-մայոր Խորոմանսկու, փոխգնդապետ Ամբարդանովի և Կեզամովի, շտաբա-կապիտաններ Տեր-Օզանեզովի և Բուռնուսուզյանի ստորագրությունները⁵⁹⁴:

Սակայն գործն այսքանով չի ավարտվում: Դատաքննչական գործընթացին միջամտելու փորձ են կատարում Թիֆլիսից: Այդ մասին տեղեկանում ենք ՀՀ Արտաքին Գործերի և Արդարադատության նախարարներին ուղղված Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար **ՀԼՈՆ Եվանգուլյանի** 1919 թ. դեկտեմբերի 20-ի հեռագրից (N° 280): Լ. Եվանգուլյանը նշում է, որ դեկտեմբերի 19-ին պարսկական Հյուսիսարևելյան թարգման Գերման Դրեյերը և ավստրիական ծառայության սպա Վոդեցկան դիմել են իրեն՝ խնդրելով կալանքից ազատել Երևանում գտնվող և հօգուտ Ավստրիայի լրտեսություն մեջ մեղադրվող Ավստրիայի նախկին հպատակ և սպա, տվյալ պահին Վրաստանի հպատակ քաղաքացի Ա. Մարոկուտտին: Հեռագրում Լ. Եվանգուլյանը հայտնում էր, որ խնդրարկուների հայտարարության համաձայն Մարոկուտտին ցանկացել է մեկնել Պարսկաստան՝ Թավրիզ քաղաք Երևանի վրայով, որտեղից մտադիր է եղել շարժելով (ավտոմեքենայով) գնալ մինչև Զուլֆա, սակայն ինչ-որ մեկի մատնություն կամ կասկածանքի պատճառով ձերբակալվել է և պահվում է կալանքի տակ՝ չափազանց ծանր պայմաններում: Լ. Եվանգուլյանը հայտնում էր, որ Դրեյերը և Վոդեցկան իրեն խնդրել են ամեն միջոց ձեռնարկել Մարոկուտտին

⁵⁹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 170, 174:

կալանքից ազատելու համար և այդ մասին իրենց տեղեկացնել: Այնուհետև Լ. Եվանգուլյանը Արտաքին Գործերի և Արգարադատություն նախարարների տեղեկացնում էր, որ նույն օրը իր մոտ եղել է վրացական ծառայությունների գնդապետ Տուլաևը (սա արդեն շատ հետաքրքիր է, հավանաբար այս փաստից կարելի է կռահել, թե ինչու էր վրացական հատուկ ծառայություն սպան շահագրգռված Մարտիկոտտի խնդրում - Վ. Վ.), որը նույնպես դիմել է Մարտիկոտտի կալանքից ազատելու խնդրանքով՝ միաժամանակ հայտարարելով, որ ինքը վերջինիս գիտի ամենալավագույն կողմից, որ նրան գիտեն նաև նախարարությունում, որ նա Երևան է մեկնել, հավանաբար, առևտրական գործերով (առաջին հայացքից ստացվում է, որ իբր վրացական հատուկ ծառայությունում տեղյակ չէին իրենց հպատակ քաղաքացու մտադրությունների մասին - Վ. Վ.): Ելնելով այդ ամենից՝ Լ. Եվանգուլյանը խնդրում էր իրեն շտապ հրահանգներ ու ցուցումներ տալ, թե ինչպես պետք է վարվել Դրեյերի և այլոց միջնորդագրերի հետ, թե ինչու է մեղադրվում Մարտիկոտտին, ընդ որում հարկ եղած ձևով մատնանշելով մեղադրանքի ճիշտ բնույթը (դատական քննիչի որոշումը ցույց տալով) և համապատասխանությունը Քրեական օրենսգրքի հոդվածին, և թե խափանման ինչ միջոցներ են ձեռնարկվել մեղադրյալի նկատմամբ հետաքննությունից և դատարանից խուսափելու առումով: Հեռագրի վերջնամասում Լ. Եվանգուլյանը պարզաբանում էր, որ այդ մանրամասն տվյալները իրեն անհրաժեշտ են, քանի որ հնարավոր է, որ Վրաստանի Արտաքին Գործերի նախարարությունը որպես Վրաստանի հպատակի՝ Մարտիկոտտի ձերբակալության առիթով հարցապնդում կատարի⁵⁹⁵: Կա ևս մի փոքր փաստաթուղթ, որում Հայաստանի Զինվորական դատարանի նախագահ գեներալ-մայոր Խորոմանսկին հայտնում էր, որ Արտաքին Գործերի նախարարության գլխավոր քարտուղարի հասցեով ուղարկվում է Անտոն Մարտիկոտտի գործի կապակցությամբ ընդունված մեղադրական ակտի պատճենը և դատարանի ղեկավարների 19-ի բանաձևի պատճենը: Հայաստանի զինվորական դատարանի 1919 թ. ղեկավարների 21-ի այս փաստաթղթի տակ (N^o 2633) կա գեներալ-մայոր Խորոմանսկու ստորագրությունը, որով և վերջինս տեղեկացնում էր վերոնշյալ դատաքննչական նյութերի առաքման մասին Արտաքին Գործերի նախարարության հասցեով⁵⁹⁶: Որպես հետգրություն նշենք, որ ղեկավարների 23-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության ղեկավանադիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին ուղղված հեռագրում՝ ի պատասխան վերջինիս կողմից Երևան առաքված N^o 280 հեռագրի, սավում էր, որ Մարտիկոտտի նկատմամբ ներկայացվել է մեղադրանք քրեական օրենսգրքի 108 և 109 հոդվածներով, այսինքն՝ Հայաստանի դեմ թշնամական գործողությունների, դրանց կրողներին աջակցելու և նպաստելու մեջ, որի հիման

⁵⁹⁵ Տե՛ս նույն տեղում, ք. 177:

⁵⁹⁶ Տե՛ս նույն տեղում, ք. 176:

վրա էլ ՀՀ Զինվորական դատարանը նրան դեկտեմբերի 19-ին դատապարտել է 15 տարվա տաժանակիր աշխատանքների, որից հետո Մարոկոուտոն դիմել է ՀՀ պառլամենտին խնդրագրով⁵⁹⁷: Դեկտեմբերի 24-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարարը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին ուղարկելով Մարոկոուտի գործի հետ կապված մի փաթեթ՝ գրագրուծյուն՝ վերջինից խնդրեց կազմակերպել դրա հնարավորինս ամբողջական հրապարակումը Թիֆլիսյան ռուսական և հայկական թերթերում⁵⁹⁸: Այս դատավարուծյան հետ կապված՝ հարկ է նշել օգտաշատ այն գործունեությունը, որ իրականացրել են հայկական հետախուզական ծառայությունները՝ Ներքին Գործերի մարմինների հետ համագործակցելով և մերկացնելով թշնամական գործակալներին Հայաստանի դեմ վերջիններիս ձեռնարկած հակահայկական գործողություններում: Սակայն կարևորը միայն դա չէ, այլ և այն, որ հատուկ ծառայությունները, որոնք իրենց չխնայելով մինչև վերջ ծառայեցին հայրենիքին՝ ամեն ինչ անելով թշնամական գործակալներին մերկացնելու և գաղտնագրծելու ուղղուծյամբ, որը ճնշող տպավորություն է թողնում աղբբեշանցիների վրա, որի կապակցուծյամբ Երևանում Աղբբեշանի դիվանագիտական հավատարմատրի պաշտոնակատար Միրբբբբբբբբբբ հետագրով հայտնում է Արտաքին Գործերի նախարարին. «Խնդրում եմ հաղորդեք Թիֆլիս՝ Վեքիլովին, որ նրա Երևան ուղարկած N^o 120 ծածկագրի հեռագրիը հայերի կողմից բացւած է: Աւստրիացի սպան ձերբակալւած է: Երէկ հաղորդեցին, որ Զինվորական դատարանը նրան դատապարտել է 15 տարւայ տաժանակիր աշխատանքների: Անհրաժեշտ է, որ Վեքիլովը պարզէ, թե հայերին ինչպէս է յաջողւել ծածկագրիը բանալ և ուղարկէլ մեզ մօտ ծածկագրի: Խատիսովը այդ մասին յայտնել էր Հախվերդովին, բայց նա, ինչպէս երևում է, մոռացել է Թիֆլիսում Վեքիլովին նախագրուշանցնել, ընդհակառակը, հէնց ինքը նոյն ծածկագրով հեռագրի է խփել Երևան»⁵⁹⁹:

Այդուհանդերձ, հայկական հետախուզական ծառայուծյան գործունեությունյան այս չախագանց հետաքրքրի էջը՝ կապված Հայաստանի Հանրապետուծյան դեմ սաղրանքներ և մեքենայուծյուններ ձեռնարկած թշնամական լրտեսների մերկացման ու կանխարգելիչ քայլերի հետ, ունեցալ դրամատիկ շարունակուծյուն: Այսպես, ՀՀ Արտաքին Գործերի նախարարուծյան ընդհանուր քարտուղարի 1920 թ. մարտի 13-ի գրուծյունից (N^o 1508, 1509, 1510)՝ ուղղված Հայաստանի պառլամենտի օրենսդրական-վարչական հանձնատողովին, տեղեկանում ենք, որ Մարոկոուտի գործը հետաքրքրել է նաև Անդրկովկասում գտնվող բրիտանական հետախուզական բաժնին, որն իր գործակալ կապիտան **Կուրդին** (ավելի ճիշտ՝ **Գ. Կուրտ**) մի փաստաթղթով

⁵⁹⁷ Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 357, մաս II, ք. 70:

⁵⁹⁸ Տե՛ս նույն տեղում, ք. 79:

⁵⁹⁹ Գաղտնի փաստաքրքրերը. Աղբբբբբբբբբբ դատախազական գործունեութիւնից մի էջ, էջ 47-

Հանդերձ ուղարկում է Երևան: Ընդհանուր քարտուղարն այն կարծիքն էր արտահայտում, որ իբր Կուրտի մոտի փաստաթղթերով անհերքելիորեն հաստատվում է, որ Թիֆլիսում Անտոն Մարոկոտտիի՝ վրացական հետախուզական ծառայության ներկայացուցչի և Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի մասնակցությամբ Մարոկոտտիի Երևան ժամանելուց 2 շաբաթ առաջ կայացել է գաղտնի խորհրդակցություն, որտեղ էլ որոշվել էր վերոհիշյալ լրտեսին ուղարկել Հայաստան և Նախիջևան՝ որոշակի լրտեսական-հետախուզական նպատակով: Սակայն, ըստ ՀՀ Արտաքին Գործերի նախարարության ընդհանուր քարտուղարի, Գ. Կուրտը բավարարվում է միայն նախարարության կաբինետում Հայկական բանակի կապիտան Խնձորյանի ներկայությամբ իր ձեռքի տակ առկա փաստաթուղթը կարդալով և հրաժարվել է կատարել Խնձորյանի խնդրանքը՝ այն հանձնել իրենց՝ Մարոկոտտիի գործին կցելու համար: Սակայն Կուրտը հրաժարվում է բավարարել այդ խնդրանքը, ասելով, որ ինքն իր պետից նման հրաման չի ստացել: Գրուժյան վերջնամատում արդեն պարզ ընդգծվում էր, որ Թիֆլիսում բրիտանական հետախուզական բաժանմունքի կապիտան Կուրտին թույլտվություն չէին տվել այդ կարևոր փաստաթուղթը հանձնել Հայաստանի կառավարությանը⁶⁰⁰: Եվ ըստ երևույթի գուցե հենց այն պատճառով, որ իրենք էլ իրենց շահերն ու հետաքրքրություններն ունեին, որոնք չէին համընկնում Հայկական կողմի դիրքորոշման և ունեցած տեսակետի հետ: Սույն փաստաթուղթը ևս ուղարկվում է Արդարադատության նախարարին, որտեղ կուտակվում է 18 թերթից բաղկացած գրադրություն Անտոն Մարոկոտտիի մասին, այդ թվում վերջինիս նամակը՝ ուղղված Հայաստանի կառավարությանը՝ ներում չնորհելու խնդրանքով⁶⁰¹: Ավելացնենք, որ դրան հաջորդում է նախարարների խորհրդի տեսուչի 1920 թ. նոյեմբերի 24-ի գրուժյունը (N^o 3909)՝ ուղղված Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությանը՝ կապված Երևանի Կենտրոնական բանտի բանտարկյալ Անտոն Մարոկոտտիի խնդրի հետ, որի վրա կա համապատասխան մակագրություն, ըստ որի հրահանգ էր տրվում վարվել նրա հետ ըստ հարկի, որն էլ կառավարությունում ստացվում է նոյեմբերի 25-ին⁶⁰²: Գործն այսքանով կարճվում է, և Հայաստանի իշխանությունները բավականին մարդասիրական վերաբերմունք են դրսևորում Անտոն Մարոկոտտիի նկատմամբ, որի մեղքն ապացուցված էր, իսկ ներկայացված մեղադրանքը՝ հիմնավորված: 1920 թ. նոյեմբերի 26-ին այս մասին գեկուցվում է նաև Արտաքին Գործերի նախարարին, որից եզրակացնում ենք, որ գործին ընթացք էր տրվել՝ Տոգուտ Ա. Մարոկոտտիի: Ի վերջո, երկար, սակայն ոչ տանջալից վերլուծությունից հետո Հայաստանի իշխանությունները խորապես հա-

⁶⁰⁰ ՀԱԱ, Ֆ. Պ - 200, ց. 1, գ. 216, ք. 50, 51, 52, 56:

⁶⁰¹ Տե՛ս նույն տեղում, ք. 56-57, 64-65:

⁶⁰² Տե՛ս նույն տեղում:

մոզված լինելով Անտոն Մարոկոուտտի կողմից ձեռնարկված հակահայկական գործողությունների ակնհայտ իրողություն մեջ հօգուտ Ազրբեջանի և Վրաստանի քայքայիչ հետախուզական-լրտեսական գործունեություն, այնուհանդերձ որոշում են մարդասիրաբար վարվել, և ըստ այդմ վերջինիս վտարել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս: Դա հստակ երևում է ՀՀ Արտաքին Գործերի նախարար Ս. Վրացյանի Նախարարների խորհրդին ուղղված 1920 թ. նոյեմբերի 27-ի գրությունից (N^o 6740), որում ընդգծելով, որ գրություն հետ միասին ներկայացվում է նաև Անտոն Մարոկոուտտի խնդրագիրը իրեն ներում շնորհելու մասին, Ս.Վրացյանը հարկ էր համարում Հայտնել, որ իր ժամանակին այդ գործընթացը ունեցել է իր ցանկալի նշանակությունը, և ըստ այդմ Մարոկոուտտի բանտում մնալը այլևս անհրաժեշտություն չէ, ուստի և առաջարկում էր վերջինիս ներում շնորհել՝ աքսորելով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս⁶⁰³: Իսկ ՀՀ Նախարարների խորհրդի գիվանապետի պարտականությունները կատարող Մ. Խոջամիրյանի 1920 թ. դեկտեմբերի 1-ի գրությունից (N^o 6797)՝ ուղղված Արդարադատության նախարարությունը, մենք տեղեկանում ենք, որ Անտոն Մարոկոուտտին ազատված է բանտից, և կառավարության որոշմամբ նրան են հանձնվել երկու ծրար⁶⁰⁴: Որպես հետգրություն ավելացնենք, որ 1921 թ. փետրվարյան քաղաքացիական կռիվներից հետո Հայաստանի Փրկություն կոմիտեի նախագահ Ս. Վրացյանի կարգադրությամբ Ա. Մարոկոուտտին ազատ արձակվեց բանտից. այնուհետև Երևանի նախկին քաղաքագլուխ Արշալույս Աստվածատրյանի կարգադրությամբ, որը ժամանակավորապես պաշտոնավարում է քաղաքային ինքնավարության մեջ, որից հետո Ս. Վրացյանի հանձնարարականի հիման վրա անցագիր է ստանում թուրքական կառավարության ներկայացուցչից և Թուրքիայի վրայով մեկնում Եվրոպա⁶⁰⁵:

Հետախուզական գործերի մասին գրելիս չի կարելի շրջանցել նաև, այսպես կոչված, **Իվան Տարականովի** գործը, որը Մարոկոուտտի գործի հետ անմիջական եզրեր ունի, և վկայում է այն մասին, որ Հայ հետախուզակները լուրջ ջանքեր են գործադրել Հայաստանի Հանրապետության տարածքում հակառակորդի քայքայիչ լրտեսական գործունեություն կասեցման ուղղությամբ: Այսպես, 1920 թ. մարտի 4-ին, Մարոկոուտտի գործին գուգահեռ, Երևանի քաղաքային ինքնավարության դահլիճում տեղի ունեցավ Ռուսաստանի Օւլովի նահանգի Վոլխով քաղաքի բնակիչ, Ռուսաստանի քաղաքացի, Հայաստանի Հանրապետության գինվորական գլխավոր Հայթայթիչ գրասենյակի նախկին վարիչ **Իվան Ալեքսեևիչ Տարականովի** (կամ Տարականո-

⁶⁰³ Տե՛ս նույն տեղում, ք. 113:

⁶⁰⁴ Տե՛ս նույն տեղում, ք. 114 հակ., 115:

⁶⁰⁵ **Ս. Վրացյան**, Կեսաճի ուղիներով, Գ-էպքեր. Գ-էմքեր. Ապրումներ. Զ. հատոր, Պլյուրոպ, տպ. «Համազգային», 1967, էջ 210-211:

վիչի) դատը⁶⁰⁶: Տարականովը մեղադրվեց դավաճանության և զինվորական գաղտնիքները թշնամուն հայտնելու մեջ: Արդեն վերն ասվել է, որ դեռ 1919 թ. դեկտեմբերին ձերբակալված Անտոն Մարոկուտտիի մոտ խուզարկության ժամանակ հայտնաբերվել էր Իվան Տարականովի անունով մի նամակ՝ գրված Թիֆլիսաբնակ սերբուհի տիկին Իովանովիչի կողմից: Հարցաքննություն ժամանակ Մարոկուտտին պատասխանել էր, որ ինքն այդ նամակը Իովանովիչից ստացել է Դրեյեր եղբայրների միջոցով, որոնցից մեկը պաշտոնավարում էր Թիֆլիսի պարսից գլխավոր հյուպատոսարանում և աջակցություն էր ցույց տվել վերջինիս՝ Երևան և Պարսկաստան ուղևորություն ժամանակ⁶⁰⁷:

Որոշակի կասկածանքներ ունենալով՝ հատուկ մարմինները Տարականովին ենթարկում են խուզարկության և հայտնաբերում գաղտնի հեռագրերի ծածկատառեր ու տիկին Իովանովիչից ստացված նամակներ: Նամակներից պարզվում է, որ Իվան Տարականովը շատ մտերիմ հարաբերություններ է ունեցել սերբուհի տ. Իովանովիչի հետ և ծանոթ է եղել Դրեյեր եղբայրներին, որոնք ապրելիս են եղել ոմն Մեյերի տանը, և նրանց միջև գաղտնի կապ է եղել: Մանրազնին հետաքննությունից նաև պարզվում է, որ Դրեյերը աջակցել է Ա. Մարոկուտտին՝ մասնակցելով Թիֆլիսում մի ինչ-որ գաղտնի խորհրդակցության⁶⁰⁸:

Ի. Տարականովը դատավարություն ժամանակ փորձում է հերքել իրեն ներկայացված մեղադրանքը, սակայն գործի կապակցությունաբ որպես վկաներ հանդես եկած զինվորական հայթայթիչ վարչության պետը, նրա օգնականը և աշխատակիցները, գրասենյակի վարիչը և մի շարք այլ անձինք նշելով, որ Տարականովը ուժեղ կամքի տեր, ճշտապահ պաշտոնյա է եղել, միաժամանակ պնդում են, որ գաղտնի ծածկագրերի բանալին, անշուշտ, մշտապես եղել է հայթայթիչ վարչության պետի օգնականի մոտ, այսինքն՝ այն հաճախ գործածվել է Տարականովի կողմից: Գործի կապակցությամբ արվում է նաև մասնագիտական եզրակացություն, որը լիովին հերքում է Տարականովի անմեղակցությունը կատարված հանցանքում, ինչի համար հրապարակվում են մի շարք գաղտնի հեռագրեր⁶⁰⁹: Մեղադրյալը ժխտելով, որ ճանաչում է Ա. Մարոկուտտին, դրա հետ մեկտեղ չի հերքում տիկին Իովանովիչի, Դրեյեր եղբայրների և Մեյերի հետ իր ծանոթ լինելու հանգամանքը՝ ասելով, որ իբր թե ինքը նրանց հետ ոչ մի ընդհանուր բան չունի, որ իր մոտ գտնված ծածկագրերը և նրանց կանոնները ինքն արտագրել է, որպեսզի, իբր թե

⁶⁰⁶ «Յառաջ», 9 մարտի, 1920, N ° 2:

⁶⁰⁷ Տե՛ս նույն տեղում:

⁶⁰⁸ Տե՛ս նույն տեղում:

⁶⁰⁹ Տե՛ս նույն տեղում:

ավելի լավ ուսումնասիրի դրանք՝ իր համար դեռևս ոչ պարզ, անծանոթ այդ ծածկագրերը⁶¹⁰:

Վերջ ի վերջո, դատախազը ի մի բերելով ձեռքի տակ եղած բոլոր փաստերը, հենվելով առկա նամակների, գաղտնի հեռագրերի և վկաների ցուցմունքների վրա՝ գտնում է, որ Իվան Տարականովը, Դրեյեր եղբայրները, տանտեր Մեյերը և տիկին Իովանովիչը ունեցել են մի ընդհանուր կապ՝ գաղտնի հանցագործ նպատակադրումով Հայաստանի Հանրապետության ու նրա կառավարության դեմ, և որ հենց դրա համար էլ Տարականովը գաղտնի ծածկագրերը և դրանց կանոնները շատ մանրամասնորեն ու ճշգրիտ արտագրել է և ուսումնասիրել՝ որոշակի հանցավոր գործունեության շահերից ելնելով⁶¹¹: Այդ ամենից ելնելով՝ դատախազը եզրահանգում է, որ Տարականովին որպես հայրենիքի դավաճանի և ռազմական գաղտնիքները թշնամուն հանձնող անձի պետք է դատել զինվորական օրենսգրքի 273 հոդվածով ու ենթարկել համապատասխան դատավճռի⁶¹²:

Մեղադրյալ Տարականովի պաշտպան իրավաբան Նաջարյանը աշխատում է ապացուցել, որ վերջինս որևէ կապ չունի ո՛չ Մարոկուտտիի, ո՛չ Դրեյերի, և ո՛չ էլ Մեյերի հետ, որ նա ընդամենը մտերմական-սիրային կապ է ունեցել տիկին Իովանովիչի հետ, նրան Ֆինանսական օժանդակություն է ցույց տվել: Միաժամանակ դատապաշտպանը մեղադրյալի մոտ գտնված ծածկագրերի հետ կապված՝ մերկապարանոց պնդում է, որ իբր Տարականովը դրանք արտագրել է՝ ավելի լավ ուսումնասիրելու նպատակով: Դրանից էլ ելնելով նա դատավորներին խնդրում է Տարականովի նկատմամբ կայացնել արդարացնող դատավճիռ⁶¹³:

Վերջապես, մեղադրյալը ևս հանդես է գալիս ելույթով. փորձում է բացատրել, թե ինչպես է ինքը ընդունվել հայկական պետական ծառայության: Այդ կապակցությամբ նա հայտնում է, որ մինչ այդ ծառայել է ռուսական բանակում, սակայն բոլշևիկյան շարժումների հետ կապված՝ չկամենալով ծառայել նրանց, եկել է Հայաստան՝ հաստատ հավատացած լինելով, որ Կովկասում Ռուսաստանի ամենալավ բարեկամը Հայաստանն է: Փորձել է իբր ուժերը ներածին չափով ծառայել Հայաստանի Հանրապետությանը, որ ինքը հետևաբար չէր կարող ռազմական գաղտնիքները դավաբար հայտնել թշնամուն⁶¹⁴: Այս ամենը ոչ մի վճռորոշ դեր չեն կատարում, և դատարանի դատավճռով Իվան Տարականովը ճանաչվում է հանցավոր և դատապարտ-

⁶¹⁰ Տե՛ս նույն տեղում:

⁶¹¹ Տե՛ս նույն տեղում:

⁶¹² Տե՛ս նույն տեղում:

⁶¹³ Տե՛ս նույն տեղում:

⁶¹⁴ Տե՛ս նույն տեղում:

վում 10 տարվա տաժանակիր աշխատանքները՝ գրկվելով բոլոր իրավունքներե-
րից, կոչումից և ստացված քննությունները⁶¹⁵:

Հարկ է, սակայն, այս կապակցությամբ անդրադառնալ այս խիստ ուշա-
գրավ գործի մեկ այլ մանրամասնի հետ՝ կապված Անտոն Մարոկուտտիի և
Իվան Տարականովի գործի նկատմամբ արդեն խորհրդային իշխանությունների
վերաբերմունքի դրսևորման մի շատ ուշագրավ պատմափաստի հետ: Ինչ-
պես հայտնի է դարձել մի շարք նորահայտ հետախուզական բնույթի փաս-
տաթղթերից, Անտոն Մարոկուտտիի և Իվան Տարականովի հետաքննչական
գործի հետագա ընթացքը այլ սցենարով է սկսում զարգանալ, նոր բովան-
դակություն ձևաք բերում: Այդ գործի կապակցությամբ խորհրդային իշ-
խանության հաստատման պահին ստեղծված, այսպես կոչված, ՀԽՍՀ Կենտ-
րոնական լիկվիդացիոն-հետաքննչական հանձնաժողովի 1921 թ. հունվարի
12-ի եզրակացությունից հայտնի է դառնում, որ այս վերաքննման ոչ են-
թակա գործը, այդուհանդերձ, փորձ է արվել տանել այլ ուղղությամբ, և
գտնվել են Հայաստանի նկատմամբ թշնամական-լրտեսական գործողու-
թյունների մեջ արդարացիորեն մեղադրվող Ա. Մարոկուտտիի և Ի. Տարա-
կանովի գործերի ապօրինի վերանայման կողմնակիցները⁶¹⁶: Սակայն ահա թե
ինչ է այնուհետ պարզվում. Հայաստանի նկատմամբ հետախուզական-քայ-
քայիչ և դավադրական գործողությունների կապակցությամբ ձեռքարկված
անձերի հետաքննչական այս հետաքրքիր գործի նմանատիպ հանգուցա-
լուծման և կայացրած վճռին իր վճռական անհամաձայնությունն է հայտ-
նում անգամ Հայհեղկոմը ի դեմս նրա նախագահ Սարգիս Կալանյանի՝ գտնե-
լով, որ Խորհրդային Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի (Չեկայի) կող-
մից տրված համապատասխան հրահանգի համաձայն անհրաժեշտ էր կալան-
ված վիճակում պահել նշված անձանց և հարցում անել ժողովախորհին այն
մասին, թե ինչու են նրանք ազատ արձակվել՝ առանց նախօրոք Հայհեղկոմի
թույլտվությունը և կարգադրազիրը ստանալու⁶¹⁷: Իսկ ամենակարևորը, որ
պարզվում է գործի հանգամանքների վերլուծությունից, դա այն է, որ հա-
մաձայն ՀԽՍՀ Կենտրոնական լիկվիդացիոն-հետաքննչական հանձնաժո-
ղովի հունվարի 18-ի դիմումագրի՝ ուղղված Հայաստանի կառավարությանը,
մեղադրյալներ Անտոն Մարոկուտտիի և Իվան Տարականովի երևանի Կենտ-
րոնական բանտից ազատ էին արձակվել Խորհրդային Հայաստանի Արդարա-
դատության ժողովում, ազգությունը թուրք Սուլեյման Նուրիի և փոխժողովում
Չուբարյանի կարգադրության համաձայն⁶¹⁸, ինչը վկայում է որոշակի դիտա-
վորության, միտումնավորության և հետաքննվող գործի նման ընթացքի
նկատմամբ քաղաքական-կուսակցական շահագրգիռ մոտեցման մասին, որի

⁶¹⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶¹⁶ Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 113, գ. 3, գ. 3, թ. 78:

⁶¹⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 79:

⁶¹⁸ Տե՛ս Նույն տեղում, թ. 76:

Համար որպես քողածածկույթ ծառայում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարադրույթը, որը հմտորեն օգտագործվում էր՝ սքողելու ազգամիջյան հարաբերություններում առկա ողջ բարդույթը և հայտնի տարածքային-քաղաքական, գաղափարախոսական հակասությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև՝ անկախ զանազան «իզմերից» ու սոցիալական կողմնորոշումներից և քաղաքական-կառավարման համակարգի կառուցվածքի ընտրությունն նկատմամբ այս կամ այն հակվածությունից:

Սրանք ուշադրավ փաստաթղթեր են, որ անհերքելիորեն ապացուցում են, որ չնայած հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության ծննդի, գոյություն ծանր ու անտանելի պայմաններին, 1918-1920 թվականներին որոշակի քայլեր են արվել ոչ միայն կազմակերպելու հատուկ ծառայություններ՝ հետախուզություն և հակահետախուզություն, որոնք աշխատել, համառորեն ձգտել են կայանալ և ծավալել օգտաշատ գործունեություն՝ կանխարգելելով Հայաստանի Հանրապետության նկատմամբ դավադրական-լրտեսական և հակահայկական գործողությունները, վնասազերծելով և ձերբակալելով հանրապետության տարածք ներխուժած դավադրական տարրերին, նաև դիմելով պատասխան հակաքայլերի, ու վերջին հաշվով՝ ապահովելով Հայաստանի ազգային-պետական անվտանգությունը:

**6. Հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքի
գործունեությունը թշնամական գործակալների
ներթափանցումը ՀՀ տարածք կանխարգելելու ուղղությամբ**

Հետախուզական աշխատանքները չեն դադարեցվել ընդհուպ մինչև Առաջին Հանրապետության մայրամուտը: Նույնիսկ 1919 թ. տվյալները վկայում են, որ հայկական հետախուզական շրջաններում ոչ վատ պատկերացումներ ունեին թուրքական ռազմաքաղաքական նախապատրաստությունների մասին, և չէին կորցրել զգուշավորությունը հնարավոր անակնկալ քայլերի նկատմամբ: Կան հետաքրքրական ևս մի շարք փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է դառնում, որ ռազմական նախարարությունը իր ուժերի և հնարավորությունների շրջանակներում զբաղվել է հետախուզական գործի կազմակերպմամբ, տարել է որոշակի գործնական աշխատանք թշնամու լրտեսների հայտնաբերման ուղղությամբ: Այսպես, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի խորհրդական Մ. Թումանյանի [Մ. Թումանյան] երևան՝ Արտաքին Գործերի նախարարին ուղարկված 1918 թ. սեպտեմբերի 7-ի հեռագրից (ԹԻԸ № 6421) մենք տեղեկանում ենք, որ պատրաստվում է երևան մեկնել վրացական քաղաքական և զինվորական խուզարկու բաժանմունքի՝ հակահետախուզական բաժանմունքի պետի օգնական սպա *Դորբովեանսկին*, որը իբր թե գնում էր այցելության իր հորը, որը աշխատում էր ՀՀ Արդարադատության նախարարությունում: Թումանովը հայտնում էր, որ այն բանից հետո, երբ դիվանագիտական ներկայացուցչության տրամադրություն տակ հայտնվեցին փաստեր, որոնք ապացուցում էին, որ Դորբովեանսկին երևան է մեկնում իր պաշտոնի հետ կապված գործերով, իրենք նպատակահարմար գտան շտապ նախազգուշացնել ՀՀ Արտաքին Գործերի նախարարությունը՝ հսկողություն սահմանելու վերջինիս նկատմամբ: Ստանալով այս գրությունը, ՀՀ Արտաքին Գործերի նախարարը կարգադրում է այն շտապ ուղարկել Ներքին Գործերի և Ռազմական նախարարներին՝ ի գիտություն, ինչի մասին մենք տեղեկանում ենք փաստաթղթի վրա արված համապատասխան մակագրությունից⁶¹⁹:

1919 թ. հունիսի 2-ին Գլխավոր շտաբի պետ գնդապետ Զինկելիչի և հետախուզական բաժնի պետ Շնեուրի ստորագրությամբ գրություն է ուղարկվել (№ 97) Արտաքին Գործերի նախարարության հասցեով, որում հայտնվում էր Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանի հեռագիր-հաղորդագրություն մասին: Համաձայն վերջինիս հաղորդագրություն, որը հենվում էր հետախուզական գործակալների կողմից հավաքված տեղեկությունների

⁶¹⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 2:

վրա, թուրքերը և քրդերը Բայրամի տոնից 2 շաբաթ անց մտադրություն ունեն հարձակվելու Սուրմալուի շրջանի վրա: Այնուհետև ավելացվում էր, որ այդ տվյալները մի շաբաթ առաջ ստացվել են Արալիսի շրջանի հետախուզական գործակալական ցանցի միջոցով⁶²⁰:

1919 թ. հունիսի 8-ի հետախուզական ամփոփագրի տակ ստորագրած հետախուզական բաժնի պետ, փոխգնդապետ **Շնեուրը** արձանագրում էր թուրք ասկյարների և գործակալների գործողությունների մասին Զինվորի և Նորասանի մոտակայքում (Արգոսի մոտ), ուր նրանք կուտակել էին մարտական լիցքի և ուտելիքի պաշարներ, ինչպես նաև կիրառված բռնությունների մասին հուշերի և հայերի նկատմամբ, հատկապես ներքին նահանգներում: Շնեուրը սույն հետախուզական ամփոփագրում նշում էր զինվորների կուտակման մասին Արդահանում, միաժամանակ բացահայտելով թուրք սպաների հակահայկական քարոզչութունը Հայաստանի դեմ⁶²¹:

Հայաստանի գորքերին ուղղված 1919 թ. հունիսի 14-ի հրամանում գեներալ-լեյտենանտ Նազարբեկյանը արձանագրում էր հետևյալը. տեղեկացվում էր, որ էջմիածնի գավառի գյուղերում բնակչության շրջանում հայտնաբերվել են թուրքական էմիսար-սպաներ և ասկյարներ: Զինվորական նախարարի պաշտոնակատարի հրամանով պահանջվում էր թուրքական գործակալներին թաքցնող գյուղերին ենթարկել էկզեկուցիայի, իսկ այն տների բնակիչներին, որոնցում կապրեն այդպիսիք, գյուղից վճռվել: Հրամանի վերջնամասում հանձնարարվում էր այդ մասին անհապաղ տեղեկացնել նաև գավառական վարչակազմին⁶²²:

Ներքին Գործերի նախարարին հասցեագրված 1919 թ. հունիսի 21-ի գրությունում գեներալ-լեյտենանտ **Սիլիկյանը** հաղորդում է, որ ստացված տեղեկությունների համաձայն Աշարիայից, Վրաստանից և Ադրբեջանից լրտեսական նպատակներով Հայաստան է ուղարկվել լրտեսների մեծ թիվ, որոնք ցանկություն են հայտնել զանազան մանր պաշտոններով ծառայության մտնելու Հայաստանում, օրինակ, բուֆետապաններ երկաթուղում և այլն: Այնուհետև ներքին Գործերի նախարարից խնդրվում էր հաղորդել, թե կա՞ն արդյոք այդպիսի անձնավորություններ, որոնք ցանկություն են դրսևորել որոշակիանալու աշխատանքի և ծառայության մեջ: Պահանջվում էր նրանց ազգանունները և եթե նրանցից ոմանք ընդունվել էին աշխատանքի, ապա դրանց անհապաղ հեռացման իրականացումը Ղարաբաղի խառնակ, Ալեքսանդրապոլի, Կարսի, Երևանի շրջաններից, մի խոսքով՝ սահմանային շրջաններից⁶²³: 1919 թ. հուլիսի 17-ին Ղամարուից Երևանյան խմբի պետ Դրոն և նրա օգնական, Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հե-

⁶²⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 53:

⁶²¹ Նույն տեղում, ք. 22:

⁶²² Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 129, ք. 10:

⁶²³ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 167, ք. 147:

տախուզական բաժանմունքի պետ կապիտան Տ. Դեվոյանցը Երևան՝ բանակի հրամանատարին ուղղված հեռագրում (№ 016) նշում են, որ տեղամասում հանգիստ է, ինչպես նաև հայտնում, որ Ագուլիսի կոմիսարը հաստատում է այնտեղ անցած ադրբեջանական սպաների և ասկյարների ժամանման մասին փաստը: Միաժամանակ հայտնվում էր, որ Նորաշենից ստացված հաղորդագրություն համաձայն, ժամանած սպաները և ասկյարները ձեռնամուխ են եղել մահմեդականների շրջանում ռազմական ուսուցման անցկացմանը, քարոզելով չընդունել Հայաստանի Հանրապետության իշխանությունը և ապստամբել⁶²⁴:

Մեկ այլ փաստաթղթում չէ գործերի Գլխավոր շտաբի Հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքի պետ Վահագն Մուրադյանը և նրա օգնական Տիգրան Դեվոյանցը չէ իշխանությունների, և մասնավորապես ՆԳՆ-ի առաջ լուրջ հիմնախնդիրներ են առաջադրում: Այսպես, Ներքին Գործերի նախարարին ուղղված 1920 թ. մարտի 15-ի գաղտնի գրությունում (№ Ք01511), որն արդեն մարտի 25-ին գտնվում էր ՆԳՆ Վարչություն և Միլիցիայի բաժանմունքում, հետախուզության սպաները հայտնում էին, որ մինչև այդ պահը լրտեսության և հակառակորդին աջակցության մեջ մեղադրվող բոլոր անձինք մշտապես հանձնվել են հակահետախուզության ձեռքը, ուստի ելնելով դրանից, ՆԳՆ նախարարից խնդրում էին վարչակարգի բոլոր աստիճանավորներին կարգադրություն անել բոլոր գործերը, ինչպես նաև լրտեսության և հակառակորդին աջակցելու մեջ մեղադրվող և կասկածվող, կապանքի մեջ գտնվող անձանց հանձնել հետախուզական բաժանմունքին⁶²⁵: Այսինքն, այստեղ ակնհայտ երևում է հետախուզական ծառայության ձգտումը՝ համագործակցության եզրեր գտնել և համատեղ աշխատել մեկ այլ ուժային կառույցի՝ ՆԳՆ ներկայացուցիչների հետ: Հաշվի առնելով գործի կարևորությունը, ՆԳՆ նախարարը գործի վրա մակագրություն է անում՝ անհապաղ ձեռնամուխ լինել խնդրի իրագործմանը, և այդ նպատակադրումով էլ կարգադրում է իր մոտ հրավիրել կապիտան Վ. Մուրադյանին: Ի վերջո, սկզբունքային համաձայնությունը կայացվում է, և ՆԳՆ - նախարարը կարգադրում է առավել շահագրգռված կողմին՝ հետախուզական բաժանմունքին հանձնել ռազմական գործողությունների և լրտեսության հետ կապված բոլոր գործերը⁶²⁶:

1918 -1920 թթ. վերաբերող տեղեկատվության մեջ հանդիպում են հետաքրքիր տվյալներ՝ կապված թշնամու կողմից լրտեսական գործունեություն բացահայտման և նրանց գործակալների ձեռքակալման հետ, որոնք ցույց են տալիս հետախուզական ծառայությունը գործունեություն մեջ, և երբեմն՝ շահավետ արդյունքներով: Այսպես, Ադրբեջանում չէ գիվանադի-

⁶²⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 254, ք. 133-134:

⁶²⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 26, ք. 61:

⁶²⁶ Նույն տեղում:

տական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը 1920 թ. ապրիլի 23-ի իր գրու-
թյան մեջ՝ հասցեագրված Ներքին Գործերի նախարարությանը և հետախու-
զական բաժանմունքին, հայտնում էր, որ ամսի 20-ին Բաքվից Երևան են
ճանապարհվել երկու ազրբեջանցի թուրքեր, որոնցից մեկի ազգանունն է
Աբդուլլահ կամ Աբդուլլա օղլի: Դիվանագիտական հավատարմատարը տեղե-
կացնում էր, որ ազրբեջանական լրտեսների գործնական նպատակն է ան-
պատճառ 1920 թ. ապրիլի 4-ին Ջաֆարաբադ գյուղի մոտ տեսնվել Երևա-
նում Ազրբեջանի ներկայացուցչության կալանավորված գործակալների
հետ, և խորհուրդ էր տալիս, որ եթե դա նրանց չհաջողվի, բոլոր միջոցները
ձեռք առնել նրանց «օգնելու», և մեկնումեկին կամ էլ երկուսին ազատելու,
որպեսզի նրանք կարողանան նախատեսված գործակալական հանդիպումին
ներկա լինեն՝ իրենց հետ տարված գումարով, ինչն էլ հնարավորություն
կտա օպերացիան հաջողությամբ ավարտել և կանխել թշնամական գործա-
կալների գործունեությունը Հայաստանում⁶²⁷: Այս բովանդակությամբ
գրությունը շտապ ուղարկվում է ՀՀ ՆԳ նախարարություն, որտեղ այն մա-
յիսի 12-ին արդեն մուտքագրված էր: Միաժամանակ, կարգադրություն է
արվում բանտապետին զգուշացնել, որպեսզի նա շատ ուշադիր լինի և ձգտի
կապերի մեջ մտնել Ազրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության
ձեռքակալված գործակալների հետ, նրանց նկատմամբ հաստատելով խիստ
հսկողություն, ինչին ներգրավում են նաև հետախուզական բաժանմունքի
աշխատակիցներին: Դրան գուգահեռ, ՀՀ ՆԳՆ Վարչակարգի և Միլիցիայի
բաժնին 1920 թ. մայիսի 14-ին կարգադրություն (N 414) է արվում ձեռնա-
մուխ լինել՝ շտապ և ամենակտրուկ ձևով գործողությունների՝ Ազրբեջա-
նից Հայաստան ժամանած լրտեսների ձեռքակալությունը կազմակերպելու
համար⁶²⁸:

Եվս մեկ ուշագրավ օրինակ: 1920 թ. մայիսի 8-ին ՆԳ նախարարութ-
յան կողմից փոստ-հեռագրատան պետին գրություն է ուղարկվում, որում
հայտնվում էր այն մասին, որ Ղարաբքիլիսայից Երևան է ժամանել ոմն
գնդապետ *Սամոյլենկո*, որը կասկածվում է լրտեսության մեջ: Գրության
մեջ խնդրվում էր անհապաղ կարգադրություն անել առ այն, որ վերջինիս
հասցեով ստացվող բոլոր նամակները կամ գրությունները առգրավվեն ու
ստուգվեն, խիստ հսկողության պայմաններում, առանց գրաքննության ոչ
մի դեպքում վերջինիս չհանձնել ստացվող նամակները: Վերջնամասում
խնդրվում էր կարևոր և ակներև փաստերի հայտնաբերման պարագայում
անհապաղ զեկուցել ՆԳՆ համապատասխան բաժին⁶²⁹:

Ֆինանսական առումով խախուտ վիճակում գտնվող հայկական հետա-
խուզական ծառայությունները ուժերի ներածին չափով աշխատում էին՝

⁶²⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 26, ք. 186:

⁶²⁸ Նույն տեղում, ք. 184-185:

⁶²⁹ Նույն տեղում, ք. 177:

ձգտելով ամեն կերպ կանխել թշնամական գործակալների հնարավորինս քայքայիչ գործողությունները՝ ուղղված Հայաստանի Հանրապետություն դեմ՝ համագործակցելով ՆԳՆ և գլխավորական իշխանությունների այլևայլ օղակների հետ: 1920 թ. հունիսի 1-ին ՀՀ երկաթուղային միլիցիային զգուշացվում է այն մասին, որ գործակալական տվյալների համաձայն Վրաստանից Հայաստան է ուղարկվել ոմն Օրլով՝ «*Քարոն Ռոզեն*», «*Պոսվեչկին*» մականուններով, ավելացնելով նաև, որ վերջինս իբր թե նաև Լենքորանում եղել է բոլշևիկյան ջոկատի հրամանատար: Բացի այդ, տեղեկացվում էր, որ վերջինս փորձված կազր է, կատարելապես տիրապետում է բազմաթիվ եվրոպական լեզուների, և հատկապես՝ գերմաներենի: Գրություն վերջնամասում ընդգծվում էր, որ Օրլովը կամ Օւլովը մեղադրվում է լրտեսություն մեջ, և ըստ այդմ առաջարկվում էր երկաթուղով վերջինիս ուղևորության ժամանակ իրականացնել խուզարկություն, այսինքն՝ ձեռնարկելով անհրաժեշտ կանխարգելիչ գործողություններ՝ լրտեսական գործունեությունը կանխելու համար⁶³⁰:

Եվս մեկ խոսույն փաստ հայկական հետախուզության կայացման կենսագրությունից: Դատելով արևիվային կցկուտեր որոշ տվյալներից, հետախուզությունը միշտ չէ, որ հաջողակ է եղել, սակայն դրանք վկայում են, որ անգամ Առաջին Հանրապետություն դժվարին տարիներին հայ հետախույզների կողմից իրական և զգալի ջանքեր են գործադրվել ձեռք բերելու կարևոր և նպատակային տեղեկատվություն տարածաշրջանային գանազան ռազմաքաղաքական իրողությունների, և հատկապես Թուրքիայի վերաբերյալ: Այսպես, դատելով Տ. Դեվոյանցի 1919 թ. հոկտեմբերի 29-ի գեկուցագրից՝ ուղղված գեներալ Ղորղանյանին, հոկտեմբերի 28-ին էրզրումում գտնվող Ք. Կարաբեքիր փաշայի կողմից հրաման է ստորագրվել մի հայի գնդակահարության մասին, որը գողացել էր գորային շիֆրը (ծածկագիրը), և այդ կապակցությամբ Կ.Պոլիս ուղարկված հեռագրում Կարաբեքիրը ռազմական նախարարից պահանջում էր հոկտեմբերի 29-ին անհապաղ կորպուսների հրամանատարներին ուղարկել նոր՝ ավելի բարդ շիֆր⁶³¹: Դա վկայում է հայ հետախույզների դժվարին «*ողխսականի*» և այն մասին, որ հետախուզությունը այդ տարիներին ոչ միայն պարզապես գործում էր, այլև փորձում խիզախել՝ գործելով շատ ավելի փորձված և նենդ թշնամու դեմ, կանխարգելելով թշնամու գործակալների գործունեությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության:

⁶³⁰ Նույն տեղում, ք. 87:

⁶³¹ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բուստոն), քիվ 17/17, պահ. 12, դ. 3, ք. 81:

7. Հայկական Հետախուզողության ծավալած գործունեությունը Վրաստանում

Հայկական Հետախուզողության կայացման դժվարությունները և Հաջողությունները հստակ երևում են նրա ծավալած գործունեությունից Անդրկովկասի ամենահայաշատ քաղաքում՝ Թիֆլիսում և առհասարակ Վրաստանում: Այն ըստ էություն գլխավորվում էր Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության, և մասնավորապես ուղղորդվում գինվորական կցորդ գեներալ-մայոր **Հ. Ա. Քիչմիշյանի** կողմից: Այդ գործունեությունը առավել ամբողջական ծավալվեց 1919 թ. երկրորդ կեսին- 1920 թվականին: Թիֆլիսից կարևոր տեղեկություններ էին ստացվում Վրաստանին և Հայաստանին հարող տարածքներում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի, վրացական զորքերի տեղաշարժերի, հակահայկական որոշ տրամադրությունների, ադրբեջանա-վրացա-թուրքական մերձեցման և այլնի մասին, որոնք կարևոր նշանակություն ունեին Հայաստանի ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից: Արևիվային կցկտուր տվյալների մանրազնին ուսումնասիրությունից պարզվում է, որ հայկական հետախուզական ծառայությունները բավականին նախաձեռնող են եղել հայ-վրացական առնչություններում, և առանձնապես 1918 թ. դեկտեմբերյան պատերազմում: Հետախուզողությունը բավականաչափ տեղեկացված էր **Լոռու** և **Վրաստանի հայաբնակ տարածքներում ընթացող գործընթացներին**, ինչի մասին հայտնվում է ոչ միայն **Զինվորական նախարարին**, այլև **վարչապետին**, որն էլ առկա փաստերը ներկայացնում է 1918 թ. դեկտեմբերի 12-ի Հայաստանի պառլամենտի նիստի քննարկմանը, տեղեկատվություն տալով **Լոռվա շրջանում սկսված ընդհարումների մասին վրաց զորքի և հայ ազգաբնակչության միջև, Ուզունլար և Ծաթեր գյուղերի վրացիների կողմից հրետանակոծման ու գնդացրային կրակի ենթարկման մասին**⁶³²: Քաջատեղյակությունը **Լոռվա շրջանում ընթացող իրադարձություններին** հնարավորություն տվեց **Իրոյի գլխավորությամբ գործող հայկական զորամիավորումներին վճռականորեն հաղթահարելու Վրաստանի Հանրապետության մեծաթիվ բանակի դիմադրությունը՝ էապես ազդելու պատերազմի ընդհանուր ելքի վրա**: Որոշ բաներ, այնուամենայնիվ, հայկական հատուկ ծառայություններին հաջողվում էր, և դա երևում է նաև նրանց գործունեությունից **Արգահանի շրջանում**, և որտեղ հայերն ստիպված էին միայնակ պայքարել **ադրբեջանա-թուրքական-վրացական միացյալ ոտնձգությունների դեմ հայկական տարածքների և ազգաբնակչության նկատմամբ**: Գլխավոր

⁶³² ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ.15, ք. 34, 38-39:

շտաբի հակահետախուզության բաժնի պետ պորուչիկ Հ. Խան-Կոտուրակին և նրա օգնական պորպորուչիկ Մ. Դոդոխյանը 1920 թ. սեպտեմբերի 20-ին գորքերի հրամանատարին ներկայացված համահավաք տվյալներում արձանագրում էին, որ Արդահանի շրջանի մահմեդական բնակչության շրջանում լուրեր են տարածվում, որ մոտ ապագայում մարզը պետք է անցնի Վրաստանին, տեղեկացնելով Արդահանից Արզվին ընկած տարածքում գեներալ տեղափոխման ու Նիկոլաևկայում վրաց գորքերի, հեծյալ մահմեդական դիվիզիոնի տեղաբաշխման մասին⁶³³:

Իր կազմավորման օրից ՀՀ կառավարությունը գործնական քայլեր ձեռնարկեց Թիֆլիսում և հարակից վայրերում հետախուզական գործի կազմակերպման ուղղությամբ: Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Տ. Դեվոյանցը 1920 թ. մարտի 14-ին (N 10150) դիմելով Քիչմիշյանին, հայտնում էր, որ գործակալական տվյալների համաձայն վրացիները օգնում են չաղբիրցիներին զինամթերքով, որ Զուրգունու են ժամանել Բախչի բեկը, 3 վրացի և 3 աղբբեջանցի սպաներ, գոկտոր Հաջիևը, որոնք դիմելով մահմեդականներին, տեղեկացրել են, որ մոտ ապագայում տեղի է ունենալու ընդհանուր հարձակում Օլթիից մինչև Չաղբիր (Չըլդըր): Տ.Դեվոյանցը սույն դիմումագրով ի կատարումն գլխավոր հրամանատարի հրամանի, խնդրում էր կարգադրություն անել այդ տեղեկությունների ստուգման համար, ինչի մասին հեռագրով շտապ հաղորդել իրեն վստահված բաժանմունք: Սակայն ելնելով ստեղծված ֆինանսատնտեսական ծանրագույն իրավիճակից, Քիչմիշյանը մարտի 22-ին սույն փաստաթղթի վրա մակագրություն է անում այն մասին, որ դրամի բացակայության հետևանքով ինքը զրկված է հանձնարարությունը կատարելու հնարավորությունից, և մարտի 23-ին համապատասխան բովանդակությամբ հեռագիր է ուղարկում Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի հասցեով (N 69, ք. Թիֆլիս, N P 0150)⁶³⁴: Հետախուզությունը աշխատում էր աննկարագրելի դժվարին պայմաններում, և այնուամենայնիվ, նվիրվածությունը մաքառում էր՝ փորձելով դուրս գալ այդ ոչ ստանդարտ իրավիճակներից: Որոշ հապաղումից հետո, այնուամենայնիվ, Թիֆլիսի հետախուզական ռեզիդենտուրայի ղեկավար **Քիչմիշյանը** ինչ-որ միջոցներ է գտնում որոշ չափով բավարարելու համար վերը նշված հարցապնդումը՝ կապված վրացիների գործողությունների հետ Չաղբիրի մերձակայքում: Արդյունքում, 1920 թ. ապրիլի 1-ին (N 92՝ ի պատասխան N P 0150 հեռագրի) Քիչմիշյանը հաղորդում է ՀՀ հետախուզական բաժնի պետին, որ Վրաստանի Զինվորական նախարարի օգնական **Ա. Կ. Գեդևանովը** [**Գեդևանիշվիլի**] մասնավոր գրուբյում իրեն վստահեցրել է (վրացիներին հատուկ գործելաոճ-Վ.Վ.), որ վրացական սպա-

⁶³³ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց.1, գ. 607, ք. 40:

⁶³⁴ Նույն տեղում, ք. 10, 11: Տե՛ս նաև **С. Е. Сеф**, ”Демократическое правительство” Грузии и английское командование, Тифлис: “Закнига”, 1928, с. 28, 34-35, 41, 43.

ները Զուրգունու են ժամանել բացառապես *Սերվեր-բեյի (Սերվեր (բեյ) բեկ Աթաբեկով* - Թուրքական էմիրսար- Վ.Վ.) պլաններին հակադրվելու նպատակով, որը Ախալցխայի գավառում տիրում էր մի քանի հազար զենյատին հողի և որին վրացական կառավարությունը փնտրում է և մտադիր էր հանձնել դատի⁶³⁵: Այս հանգամանքը Հայկական հետախուզությունը հրաշալի ըմբռնում էր, և աշխատում էր գուր տեղը գոհ չգնալ և դուրսհանալու նման չընդունել եղբայրության մասին վրացիների մեղրածոր արտահայտությունները: Նույն օրը, Քիչմիշյանը հեռագրով (N 93)՝ ուղղված Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին, տեղեկացնում է, որ իրեն արժանահավատ աղբյուրներից հաջողվել է պարզել, որ իբր թե Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված է լրացուցիչ գաղտնի պայմանագիր այն մասին, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև գինված կոնֆլիկտի ծագման պարագայում, բոլոր վրացի սպաները ետ են կանչվելու այդ ճակատից⁶³⁶:

Վրացական իշխանությունները խոչընդոտներ էին հարուցում Հայկական հետախուզական ծառայությունների առաջ, որոնց իրենք այնքան էլ վատ չգիտեին, երբեմն էլ ուղղակի կասեցնում առանձին Հայ զինվորականների գործունեությունը: Քիչմիշյանին հասցեագրված 1920 թ. ապրիլի 3-ի գրությունում (N 533) Գլխավոր շտաբի տեսչական բաժնի պետի պաշտոնակատար գնդապետ **Բ. Բաղդասարովը** տեղեկացնում էր այն մասին, որ վրացական իշխանությունների կարգադրությամբ թիֆլիսում ձերբակալվել է Հայ սպա **Մինաս Գեորգիի Շապոշնիկովը**, որը ծառայության մեջ գտնվելով Կամավորական բանակում, ոչ քիչ ծառայություններ է մատուցել և Հայկական հետախուզությանը: Բաղդասարովը Քիչմիշյանի առաջ խնդիր էր դնում դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի աջակցությամբ ազատել կալանքից և տեղափոխել Հայաստան՝ Զինվորական նախարարի տրամադրության տակ, քանի որ այդ նա կարող էր միանգամայն օգտակար լինել Հայկական կողմի համար: Բաղդասարովը հայտնում էր, որ այդ մասին ավելի մանրամասն տեղեկություններ գեներալ-մայորը կարող է ստանալ պրոֆեսոր **Հ. Զավրիևից (Զավրիյան)**:⁶³⁷ Ստանալով այս հրահանգը, թիֆլիսում չէր դիվանագիտական հավատարմատարը անմիջապես գործի է անցնում: Գլխավոր շտաբի պետին հասցեագրված 1920 թ. ապրիլի 8-ի հեռագրում (N 114) Քիչմիշյանը հայտնում էր Մ. Շապոշնիկովի ազատման հետ կապված խոսակցության մասին Վրաստանի ռազմական նախարարի օգնական գեներալ **Ա. Կ. Գեդեանովի (Գեդեանիչվիլի)** հետ, որը հաղորդել էր, որ նշված սպան մեղադրվում է պետական հանցագործության մեջ և ողջ հավաքված փաստերը հանձնվել են Արդարադատության նախարարությանը: Քիչմիշյանին նաև տեղեկացրել էին, որ խափանման միջոցը կարող է փոխ-

⁶³⁵ ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 184, ք. 12:

⁶³⁶ Նույն տեղում, ք.13:

⁶³⁷ Նույն տեղում, գ. 154, ք. 62:

վել միայն դատախազի եզրակացությունից հետո⁶³⁸: Համադրելով այս բոլոր փաստերը, 1919 թ. հուլիսի 17-ին Վրաստանի Արտաքին Գործերի նախարարին հասցեագրված հեռագրում Քիչմիչյանը խնդրում էր չմերժել իրենց հայտնել պրապորշչիկ Ծապոչնիկովի ձեռքակալության պատճառները, տեղեկացնելով նաև, թե ինչ պայմաններում է պահվում, և ներկայացվել է արդյո՞ք մեղադրանք⁶³⁹: Ի պատասխան, Վրաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարի գրասենյակի փոխդիրեկտորը հայտնում էր Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին, որ պրապորշչիկ Ծապոչնիկովը ներկա պահին գտնվում է Սուխումիի բանտում, և ենթարկվում է պատիանատվության որպես Կամավորական բանակի լրտես⁶⁴⁰: Սույն գրույթյան վրա կա Քիչմիչյանի մակագրությունը, որում վերջինս խնդրում էր պարզել, թե ինչ հոդվածի հիման վրա է կապանավորված Ծապոչնիկովը, և հնարավորություն չկա արդյո՞ք կիրառել խափանման միջոց, և ըստ այդմ՝ բավարարվել վտարելով Վրաստանի սահմաններից դուրս⁶⁴¹: Վրաստանի Արտաքին Գործերի նախարարության ընդհանուր բաժնի պետի 1919 թ. հուլիսի 21-ի գրությունից պարզ է դառնում, որ Ծապոչնիկովի գործն ուղարկվել է ՆԳ նախարարություն⁶⁴²: Ի պատասխան, հայկական կողմը 1919 թ. հուլիսի 21-ին նոր գրություն է ուղարկում Վրաստանի Արտաքին Գործերի նախարարությանը՝ խնդրելով արագացնել գործի քննությունը: Վրաստանի Արտաքին Գործերի նախարարությանը հասցեագրված 1919 թ. հոկտեմբերի 13-ի գրությունում (N 2339) ՀՀ դիվանագիտական հավատարմատարին փոխարինող Մ. Թումանյովը խնդրում էր չմերժել հայտնել, թե չի ներկայացվել արդյո՞ք մեղադրական եզրակացություն Ծապոչնիկովին, և ի՞նչ հոդվածի հիման վրա է նա գտնվում վարչական կալանքի մեջ: Թումանյովը խնդրում էր հայտնել, թե հնարավոր չէ՞ արդյո՞ք Ծապոչնիկովի ձեռքակալությունը փոխարինել նրան արտաքսելով Վրաստանի սահմաններից դուրս⁶⁴³: Դիվանագիտական-գրասենյակային քաջքուկներից հետո, Վրաստանի Արտաքին Գործերի նախարարության ընդհանուր բաժնի պետը տեղեկացնում էր, որ համաձայն Աբխազիայի Ռազմական արտակարգ դատարանի նախագահի պաշտոնագրի՝ ուղղված Վրաստանի ՆԳ նախարարին, Մ. Ծապոչնիկովի գործը հանձնվել է Վրաստանի Հանրապետության Ռազմական նախարարության Գլխավոր շտաբի Հակահետախուզական բաժնի պետին, իսկ ինքը՝ Ծապոչնիկովը փոխադրվել է Թիֆլիսի Մետեխի բերդը⁶⁴⁴: 1920 թ. մարտի 1-ին Վրաստանի Արտաքին Գործերի նախարարությանը հերթական գրությունը

⁶³⁸ Նույն տեղում, գ. 154, ք. 60:

⁶³⁹ Նույն տեղում, ք. 1:

⁶⁴⁰ Նույն տեղում, ք. 2:

⁶⁴¹ Նույն տեղում:

⁶⁴² Նույն տեղում, ք. 5:

⁶⁴³ Նույն տեղում, ք. 7:

⁶⁴⁴ Նույն տեղում, ք. 10:

Հանձնելով, ՀՀ ղեկավանադիտական ներկայացուցչության գործերի կառավարիչը խնդրում էր հայտնել, թե ինչ նոր տեղեկություններ կան Մ. Շապուշնիկովի գործի վիճակի մասին, և լավել է թե ոչ նրա գործը դատարանի կողմից, և ինչպես է այն ավարտվել⁶⁴⁵:

Գլխավոր խնդիրը, որ հարուցում էր Քիչմիչյանը, դա հետախուզության կազմակերպման գործն էր, ասելով, որ բազմաթիվ գրույցները ինչպես գնդապետ Մ. Զինկևիչի հետ (օգոստոս ամսին), որն այդ ժամանակ դեռ գտնվում էր իրենց ծառայության մեջ, այնպես էլ գեներալ Սիլիկյանի և կապիտան Մուրադյանի հետ (1919 թ. սեպտեմբերին և 1920 թ. հունվարին) ավարտվել են այդ անձնավորությունների կողմից կատեգորիկ հավաստիացմամբ, որ մոտ ժամանակներում Թիֆլիսում հետախուզության մասին հարցը կդրվի ռեալ հիմքի վրա՝ այդ գործի համար բաց թողնելով ամսական 15 հազար ռուբլի, նաև գործողելով հատուկ սպա: Սակայն ի հիասթափություն իրեն, Քիչմիչյանը արձանագրում էր, որ հետախուզության գծով գրեթե տեղեկություններ չունի, ինչպես մարդկանց բացակայության պատճառով, որոնց կարելի էր մանրամասն հանձնարարություններ տալ, այնպես էլ գանձարանից համապատասխան դրամական միջոցների լրիվ բացակայության պատճառով, գալով լուրջ եզրահանգման, որ Վրաստանը և Ադրբեջանը դրամ չէին այելով, լրտեսության ընդարձակ ցանց են ստեղծել և անընդհատ գտնվում են իրենց հարևանների քաղաքականության և ռազմական հզորության մասին հարցերի կուրսում, բոլոր բնագավառների մասին տեղեկացվելով, իսկ իրենք՝ ոչ: Վերջնամասում Քիչմիչյանը շեշտում էր, որ անհրաժեշտ է Թիֆլիս գործողել անհրաժեշտ ընդունակություններ ունեցող սպայի այնպիսի բարդ և պատասխանատու աշխատանքի կատարման համար, ինչպիսին է հետախուզությունը: Եվ այդ առումով էլ հետաքրքիր մեջբերում է կատարում *Դյուրհեմից*. «Բավարար չէ փողերը վատնել, անհրաժեշտ են ջանքեր, հետևողականություն և փորձառություն», գտնելով, որ այդ սպան պետք է գտնվի իր անմիջական ենթակայության տակ և նրա առաջին իսկ խնդիրը պետք է լինի Վրաստանի և Ադրբեջանի գաղտնագրի ձեռքբերումը, ծածկագրված հեռագրերի պատճենների, այլ երկրների գործքերի թվաքանակի ու տեղաբաշխման մասին, գիտվորական գերատեսչության գծով հրամանների ձեռքբերումը⁶⁴⁶: Ինչպես տեսնում ենք, Թիֆլիսի հայկական հետախուզական ցանցի գործունեությունը ամեն ինչում չէ, որ հարթ էր ստացվում, խնդիրները ծնվում էին մեկը մյուսի հետևից, իսկ հնարավորությունները մնում էին շատ սահմանափակ: Երբեմն էլ խնդիրները առաջանում էին ոչ միայն դրամական ռեսուրսների սղության հետևանքով, այլև կադրային հողի վրա: Կադրերի միջև փոխհարաբերությունների անհարթության, ինչպես նաև գործի գրվածքի անհասկացողության, թյուրմբուրում

⁶⁴⁵ Նույն տեղում:

⁶⁴⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 184, ք. 14:

ղության կամ էլ պարզապես անձնական զրդապատճառներով հետախուզու-
թյունում խճճված իրավիճակներ էին ստեղծվում, որոնք այդպես էլ գործ-
նական լուծում չէին ստանում և էլ ավելի էին խճճում իրադրությունը, ան-
ներդաշնակութուն ստեղծելով հետախուզության տարբեր օղակների միջև
ուղղորդված աշխատանքի կազմակերպման առումով:

Զինվորական նախարարին ուղղված 1920 թ. ապրիլի 5-ի գեկուցա-
գրում (N 111) **Հ. Քիչմիչյանը** նշում էր, որ N 14 հրահանգի համաձայն
ինքը պարտավոր է ղեկավարել Արտաքին Գործերի նախարարության դիվա-
նադիտական ներկայացուցչությանը կից կապի գծով բոլոր սպաների գոր-
ծունեությունը, ընդգծելով, որ այդ հանգամանքի հետ կապված ինքն իրեն
պարտավորված է համարում գեկուցել, որ եթե շտաբս-կապիտան **Ե. Եղիա-
զարովը**, հրաչալի կատարելով իր վրա դրված պարտականությունները՝ օգ-
տվում է մեծ ազդեցութունից ֆրանսիական ներկայացուցչությունում և
արժանի է ամեն մի գովասանքի, ապա նույն բանը չի կարելի ասել պորուչիկ
Բեկզադովի մասին, որ համարվում է գնդապետ **Հասկելին** կից կապի գծով
սպա: Քիչմիչյանը հայտնում էր, որ պորուչիկ Բեկզադովը բացարձակապես
չի տեղեկացնում իր աշխատանքի մասին, այնպես որ իրեն անհայտ է վերջի-
նիս գործունեությունը, որը ուղևորվելով Թիֆլիսից և վերադառնալով գոր-
ծուղումից, տեղեկատվութուն չի ուղարկել այդ մասին: Քիչմիչյանը լուրջ
դժգոհություն էր արտահայտում Բեկզադովից և կարծես թե՝ ոչ անհիմն,
հայտնելով, որ Բեկզադովը, հրաչալի իմանալով վրացական կառավարության
կողմից դեպի Հայաստան զինվորական բեռների արտահանման դեմ հարուց-
վող արգելքների մասին, ոչ մի անգամ չի աշխատել դրանց հաղթահարման
ուղղությամբ և չի առաջարկել իր ծառայությունները այդ բնագավառում
զինվորական վարչությանը այն դեպքում, երբ շտաբս-կապիտան Եղիազա-
րովը մշտապես **Ա. Պուադեբարի** վագոնն է մտցրել մաքսանենդ բեռներ,
հաճախ վրացական կառավարության կողմից մերկացված լինելու վտանգին
ենթարկվելով՝ ոչ լոյալության մեջ այն առավելությունների առումով,
որոնցից օգտվում էին Դաշնակիցների կուպեները: Քիչմիչյանը իր վրդով-
մունքն էր արտահայտում, որ Բեկզադովը անհրաժեշտ հետաքրքրություն և
ուշաբերություն չէր ցուցաբերում այն դեպքերում, երբ իր ծառայողական
դիրքով կարող էր գալ օգնության. օրինակ, երբ Երևանի հետ փետրվար ամ-
սին երկաթուղային հաղորդակցության ընդհատման ժամանակ ջանք չի
գործադրել ամերիկյան վագոնում տեղավորելու գնդապետ **Ստ. Ղորղանյա-
նին**, որը մեկնում էր ձիեր գնելու՝ իր տրամադրության տակ ունենալով
կես միլիոն ռուբլի: Քիչմիչյանը անհասկանալի էր համարում, հետևաբար
այն հանգամանքը, որ Բեկզադովը չգիտես ինչու, դրամական աշխատավճա-
րը ստանում էր Գլխավոր շտաբից, իսկ նրա ծախսերը դիվանադիտական
ներկայացուցչության գծով վճարվում էին Արտաքին Գործերի նախարարու-
թյան գումարներից, սակայն ինչ չափով և ինչ հաշիվներով, իրեն հայտնի

չի դարձել: Զինվորական նախարարութեանը հաղորդելով այդ մասին, Քիչ-միշյանը խնդրում էր նախարարի կարգադրութեանը պորուչիկ Բեկզադովին կատարել հրահանգի պահանջները՝ տալով մանրամասն հաշվետվութեան գինվորական վարչութեան ղեկավարին և աշխատավճարի մասին վկայականը փոխանցել Գլխավոր շտաբից իրեն վստահված վարչութեանը, իսկ գնդապետ Հակելիին կից շտաբում հանձնարարութեանները կատարել աշխատանքից ազատ ժամանակ⁶⁴⁷: Այս փաստաթղթերը ակնհայտորեն վկայում են հայկական հետախուզական ծառայութեանների կայացման ոչ միանշանակ գործընթացների, հիասթափութեանների և անհաջողութեանների, ներպաշտոնական փոխհարաբերութեանների խճճվածութեան ու լարվածութեան, գուցե նաև օտարերկրյա գործակալութեանների միջամտութեան մասին: Հետախուզական ծառայութեան ղեկավարները ջանքեր էին գործադրում գործակալական ցանցը արդյունավետորեն կազմակերպելու և օտար ազդեցութեաններից զերծ պահելու ուղղութեամբ (ինչը միշտ էլ, որ հաջողվում էր), հաղթահարելով ահռելի կազմակերպական-կադրային և ֆինանսական բարդութեաններ:

1920 թ. ապրիլի 6-ի հեռագրով (N 236) **Տ. Դեվոյանցը Քիչմիշյանից** խնդրում էր հրամայել լեյտենանտ Մաքսին մեկնել Ադրբեջան⁶⁴⁸ (մեզ չհաջողվեց պարզել, թե ով է Մաքսը իրականում, և այդ հարցի իրական բացահայտումը մնում է օրակարգում - Վ. Վ.): 1920 թ. մայիսի 20-ին Բաթումիի գլխավոր հյուպատոսը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին է ուղարկում հաղորդագրութեան, որին կցված էր լեյտենանտ Մաքսի խիստ գաղտնի ծածկագրով հեռագիրը, որում վերջինս տեղեկացնում էր Տրապիզոնի, Օլթիի և Օպայի շրջաններում թուրքական կանոնավոր բանակի գործառնների կենտրոնացման և աջարների հետ վերջիններիս կապերի մասին, կարևորելով էրզրումի շրջանում թուրքերի կողմից ձեռնարկվող նախապատրաստութեանները, ավելացնելով, որ գործերի կենտրոնացումը տեղի է ունենում Բայբուրդի, Մամախաթունի և Կակիթի միջև ընկած միջանցքում, միաժամանակ նշելով նաև Ռեչիդ բեկի հրամանատարութեամբ գործող գործառնների տեղաբաշխման մասին Հասան-Կալայի և Քեփրի-քոյի միջև ընկած տարածքում: Հայտնելով թուրքական գործերի տեղաշարժերի մասին, Մաքսը նաև տեղեկացնում էր, որ թուրքական մարտկոցները գինված են Շնայդերի սիստեմի լեռնային և դաշտային հրետանիով, շեշտելով, որ վերը նշված ուժերի նպատակն է շարժվել Ենի-Քեյի, Օլթիի և Արդահանի ուղղութեամբ, եթե թուրքական հարցի վերաբերյալ Դաշնակիցների Գերագույն խորհրդի վճիռը աննպաստ լինի թուրքիայի համար: Ստանալով սույն արժեքավոր տեղեկատվութեանը, Քիչմիշյանը Բաթումիի հյուպատոսի միջոցով իրեն հասած լեյտենանտ Մաքսի հաղորդագրութեանը թուր-

⁶⁴⁷ Նույն տեղում, ք. 15-16:

⁶⁴⁸ Նույն տեղում, ք. 18:

քական զորքերի տեղաբաշխման և գործունեությունից մասին անհապաղ ուղարկում է ՀՀ Զինվորական նախարարությունը⁶⁴⁹:

1920 թ. ապրիլի 13-ին (N 0931) Թիֆլիսի Գանդակայա 22 հասցեով՝ գեներալ **Քիչմիշյանի** անունով ուղարկվում է մի հեռագիր, որում **Տ. Դեվոյանցը** խնդրում էր հնարավորին չափով շտապ արտաքին դիտարկում սահմանել **կապիտան Մեղվեղևի** նկատմամբ, որը մեկնել էր Թիֆլիս, խնդրելով նաև պարզել նրա կապերը և ծանոթությունները վրացիների ու թաթարների հետ, միաժամանակ հաղորդելով, որ տոներից հետո ավանսով հետախուզություն համար դրամ է ուղարկվում մի քանի ամիսների համար: Ստացման վերաբերյալ փաստաթղթի վրա արված է համապատասխան մակագրություն (14 ապրիլի, 1920 թ., N 113) Քիչմիշյանի կողմից⁶⁵⁰: Սակայն ՀՀ հետախուզական ծառայությունից պետի հասցեով 1920 թ. ապրիլի 17-ին ուղարկված հեռագրում (N 149) Հ. Քիչմիշյանը հայտնում էր, որ դրամ չստանալու հետևանքով չկարողանալով պարզեցնել փորձառու և հուսալի հետախուզության գծով մասնագետի, ինքը չի կարողացել կատարել իր վրա դրված հանձնարարությունը, խնդրելով գործուղել հետախուզական բաժնի մի գործակալի կամ էլ շտապել դրամ ուղարկել, կամ էլ նշել տվյալ պահին Թիֆլիսում գտնվող հարմար մասնագետի հասցե⁶⁵¹: Ի պատասխան սույն հեռագրի, 1920 թ. ապրիլի 17-ին կապիտան **Դեվոյանցը** հայտնում էր իր համաձայնությունից մասին գեներալ-մայորի հետ, և տեղեկացնում, որ բանակի հրամանատարի հրամանով համբարակապետություն միջոցով ուղարկում է 70 հազար ռուբլի, իսկ Թիֆլիսում հետախուզության կազմակերպումը դրվում է վերջինիս վստահված ներկայացուցչության վրա, հայտնելով, որ հետախուզության իրականացման համար անհրաժեշտ անձանց ընտրությունը հանձնվում է գեներալի հայեցողությունը, գտնելով նաև, որ այդ պատասխանատու աշխատանքի համար բոլոր տվյալներն ունի **պողպորուչիկ Ումեկյանը**, և իր կողմից խնդրում էր, եթե հնարավոր է՝ վերջինիս վրա դնել գործի վարույթը և կազմակերպումը⁶⁵²: Այսքանը բավական էր, որ Քիչմիշյանը շտապ և ոգևորությամբ գործի անցներ, իր ձեռքի տակ ունենալով բավականաչափ համեստ գումար: Անցնելով գործի, 1920 թ. ապրիլի 19-ին Քիչմիշյանը Գլխավոր շտաբի հետախուզական ծառայությունից պետին է ուղարկում հերթական հեռագիրը (N 156), որում հայտնվում էր, որ բավականին վստահելի աղբյուրի համաձայն 1200 հեծյալ զինված քրդեր Ծահթախի շրջանից շարժվել են դեպի Նախիջևան, հաղորդելով, որ Թավրիզի աբբեջանական հյուպատոսը Թեհրանից ստանալով 40 հազար թուման, դրանք ուղարկել է Նախիջևան, կեսը փոխանակելով անդրկովկասյան բռնների հետ: Տեղեկաց-

⁶⁴⁹ Նույն տեղում, գ. 184, ք. 46:

⁶⁵⁰ Նույն տեղում, ք. 19:

⁶⁵¹ Նույն տեղում, ք. 20:

⁶⁵² Նույն տեղում, ք. 22:

վում էր, որ մոտ օրերին մի անձի միջոցով, որը կապեր ունի Կամավորական բանակի հետ, Նախիջևանի համար մոտ 80 միլիոն ռուբլի անդրկովկասյան բռնեթով գումար է փոխանցվում՝ Երևանով: Հեռագրում Քիչմիշյանը եզրահանգում էր, որ հիշյալ տեղեկությունները, անկասկած, կարիք ունեն ստուգման⁶⁵³: Հետախուզությունը ձգտում էր հնարավորին չափով օբյեկտիվ լինել և հայթայթած տվյալները Հայաստանի համար ունենային որոշակի արժեք: Հ. Քիչմիշյանի 1920 թ. մարտի կեսերին Չալգիբի մասին հաղորդած տեղեկատվության մեջ հավելումներ են մտցվում. 1920 թ. ապրիլի 19-ին Երևանում ՀՀ բանակի հրամանատարը գեներալ-մայոր Հովսեփյանցի և պոգոպորուչիկ Դոդոխյանի կողմից գրուծվում է ստանում (N 00343), որում վերջիններս հայտնում էին, որ Չալգիբի ապստամբության գլխավոր կազմակերպիչը՝ դոկտոր Հաջիևը տվյալ պահին գտնվում է Ախալքալաքի գավառի Սագայուլ գյուղում, որ Աջարիայում նախապատրաստվում է ապստամբություն: Հարց էին բարձրացնում, թե հնարավորություն չկա՞ արդյոք վրացական իշխանությունների միջոցով ձեռքբերել Հաջիևին և տեղափոխել Հայաստան՝ դատի համար⁶⁵⁴:

Վրաստանը հայկական հետախուզության համար կարևոր հենակետ էր, տեղեկատվության խաչմերուկ, արտաքին աշխարհի հետ կապի հանգուցակետ, այդ իսկ պատճառով Հայաստանը իր սուղ միջոցներից ձգտում էր գոնե ինչ-որ բաժին հատկացնել հայ հետախուզիչների գործունեության կազմակերպման համար: 1920 թ. ապրիլի 28-ին Հ. Քիչմիշյանին հասցեագրված հեռագրով (N P 0325) Տ. Դեվոյանցը և Մ. Դոդոխյանը տեղեկացնում էին, որ Վրաստանում հետախուզության կազմակերպման համար հատկացված է ամսական 15 հազար ռուբլի, միաժամանակ շեշտելով, որ այդ գումարը ոչ հեռու ապագայում պետք է ավելացվի, որի պատճառով կարելի է խստորեն չհետևել այդ գումարին և անհրաժեշտության դեպքում փոխանցված ավանսը կարելի է ծախսել, նաև հրահանգելով պահել հատուկ մուտքի և ելքի (ելեմտից) տետր, իսկ ամենամսյա հաշվետվությունները՝ ուղարկել ամսի 1-ի գրուծյամբ⁶⁵⁵: Ի պատասխան, Քիչմիշյանը 1920 թ. ապրիլի 29-ին հետախուզական բաժնին ուղղված հեռագրում (N 169) խնդրում էր տեղեկացնել, թե ի՞նչ հաշվարկով է անհրաժեշտ ծախսել վերը նշված գումարը, ինչպիսի՞ հաշվետվություն վարել և ի՞նչ հաստատություն առաջ, և հավասարապես, ի՞նչ ժամկետներում ուղարկել⁶⁵⁶: Ինչպես տեսնում ենք, հետախուզիչները բժախնդիր և օրինապահ ժողովուրդ էին, որոնց մոտ ամեն ինչ հաշվարկված էր, ավելորդ չքեղություն չէր թույլատրվում, իսկ հետախուզությունը պետք է ցանկացած իրադրությունում աշխատեր: Հետախուզությունը աչ-

⁶⁵³ Նույն տեղում, ք. 21:

⁶⁵⁴ Նույն տեղում, ք. 25:

⁶⁵⁵ Նույն տեղում, ք. 26:

⁶⁵⁶ Նույն տեղում, ք. 23:

խատում էր, ձգտելով արդյունքների, իսկ ապացույցները դրսևորվում էին Երևան ուղարկված հաղորդագրությունների, հեռագրերի, դիմումագրերի տեսքով: Ծտապ Թիֆլիս ուղարկված 1920 թ. ապրիլի 30-ի հեռագրով ֆինանսների նախարար Արարատյանը Քիշմիշյանից և Եվանգուլյանից խնդրում էր Ադրբեջանում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ տեղեկատվություն հաղորդել, անդրադառնալով նաև Բաթումիում տիրող իրավիճակին, անգլիացիների տրամադրություններին և քաղաքականաւտերական շրջաններում իշխող խոճապային վիճակին⁶⁵⁷: Հասկանալի էր ՀՀ ֆինանսների նախարարի տազնապը, քանի որ Բաթումը արտաքին աշխարհի հետ կապող կարևորագույն աւտերական-տնտեսական մայրուղիներից էր, դրանից էր կախված վաւտելիքի, գինամթերքի, ցորենի և այլնի մատակարարումը: Այստեղից էլ քաղաքացիական իշխանությունների համագործակցությունը հետախուզոււտյան հետ:

1920 թ. մայիսի 4 -ին Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին ուղղված հեռագրում (N 175/с) Հ. Քիշմիշյանը նշում էր, որ հավաստի աղբյուրներից հայտնի է դարձել, որ վրացական կառավարությունը դիմել է Անգլիայի ներկայացուցչին՝ խնդրանքով Վրաստանին օգնություն ցուցաբերել՝ մատակարարելով գինամթերք ու հանդերձանք ինքնապաշտպանության կազմակերպման համար, նաև հաղորդելով վրացիների ակտիվացման մասին Բաթումիի մարզում և ընթացող գորահավաքի մասին⁶⁵⁸:

Հայաստանում տազնապով էին հետևում Վրաստանում և դրա շուրջ ընթացող իրադարձություններին: Հայկական կողմին խորապես հետաքրքրում էին թե՛ տնտեսական, թե՛ ռազմական բնույթի փոփոխություններն ու տեղաշարժերը Վրաստանում, վրացական գորքերի վիճակը, տեղաբաշխումը, վրաց-ադրբեջանական փոխհարաբերությունների վիճակը, վերաբերմունքը թուրքիայի նկատմամբ և այլն: Տ. Դեվոյանը 1920 թ. մայիսի 4-ի հեռագրով (N 166. «Արագած» ծածկագրով)՝ ուղղված Քիշմիշյանին, վերջինից խնդրում էր տեղեկություններ հաղորդել Ադրբեջանի սահմանների մոտ վրացական գորքերի վերախմբավորումների մասին, որի վրա գեներալը մակադրել էր, հանձնարարելով Ումիկյանին նախապատրաստել անհրաժեշտ տեղեկանքը⁶⁵⁹: Որոշ բարդություններից խուսափելու համար, կապված պողպատուղիկ Ումիկյանի շուրջ վրացական հետախուզոււտյան ավելորդ հետաքրքրություն հետ, Քիշմիշյանը 1920 թ. մայիսի 8-ին հետախուզական բաժնի պետին ուղղված հեռագրում խնդրում էր աւտաշիկայում բոլոր գաղտնագրված ձեպադրերը, դիվանագիտական կամ ռազմական շտապ հաղորդումները ուղարկել բացաւտապես իր հասցեով, որպեսզի պողպատուղիկ Ումիկյանը չընկնի վրացական հակահետախուզոււտյան ձեւքը, քանի որ վերջինս

⁶⁵⁷ Նույն տեղում, ք. 24:

⁶⁵⁸ Նույն տեղում, ք. 27:

⁶⁵⁹ Նույն տեղում, ք. 28:

վարում էր դիվանագիտական կորպուսին կից հետախուզական վարչություն որոշակի ճյուղի աշխատանքները⁶⁶⁰: Արանով փորձ էր արվում կարգավորել առկա խնդիրները, և դա ստացվում էր, ինչից հետախուզությունը շահում էր՝ պահպանելով իր լավագույն կադրերին: Ումիկյանը հենց այդ դասին էր պատկանում և բազմիցս բարեխղճությամբ ու ճշտորեն կատարել ու կատարում էր գինվորական բնույթի մի շարք առաջադրանքներ, զբաղվելով ՀՀ համար կարևոր նշանակություն ունեցող գեներլ ու գինամթերքի առաքման հարցերով, հաճախակի ուղևորություններ կատարելով դեպի Բաթումի և Ռուսաստանի քաղաքները, կապերի մեջ մտնելով նաև Կամավորական բանակի գինվորական-հետախուզական ծառայությունների հետ:

Այդ ընթացքում փորձ էր արվում կարգավորել Ֆինանսական հարցերը. 1920 թ. մայիսի 8-ի հեռագրում (N 191/с)՝ ուղղված հետախուզական բաժնի պետին, **Քիչմիչյանը** հայտնում էր, որ դեռևս ոչ միայն չի ստացել 70 հազար ռուբլի խոստացված գումարը, այլև չի ուղարկվել փոխանցման տոմսը, որի հետևանքով խնդրում էր շտապ կարգադրություն անել գումարի անհասպաղ առաքման մասին, քանի որ առանց դրա անհնարին է կարգավորել հետախուզական աշխատանքները⁶⁶¹: Հետախույզները զգալի խոչընդոտներ հաղթահարելով, արժեքավոր տեղեկություններ էին ուղարկում Երևան, որտեղ այդ ամենը հանձնվում էր քաղաքական-կուսակցական լիդերների տնօրինությունը: 1920 թ. մայիսի 10-ին Քիչմիչյանի կողմից ուղարկվում է հերթական հեռագիրը (N 193/с), որում արժեքավոր տեղեկություններ էին հաղորդվում Ախալքալաքի փախստականների օգնության ամերիկյան կոմիտեի տեղափոխման, Ազրբեջանում բոլշևիկների գործողությունների և նրանց ձեռնարկումների մասին «Չեզոք» գոտում, վերջիններիս կողմից նախապատրաստվող Բաթումից Հայաստան տեղափոխվող գինամթերքի առաքման նկատմամբ ենթադրվելիք կանխարգելիչ քայլերի, Վրաստանի Պաշտպանության խորհրդում մտցված Հայաստանի հետ ուղղորդված ռազմական գործողությունների նախագծի, ժողովրդական զվարդիայի շտաբի պետ Վ. Զուղեղու գլխավորած զորքերի Բորչալուի գավառ ժամանման⁶⁶², որոնք Հայաստանի համար ռազմավարական արժեք ունեին:

Վերջապես, Թիֆլիսում գտնվող հայկական հետախուզական ծառայություն կարիքների համար անհրաժեշտ գումարները ստացվում են, ինչի մասին 1920 թ. մայիսի 14-ի գրությունը (N P^o 406) **Տ. Դեվոյանը** տեղեկացնում է Քիչմիչյանին, որ ուղարկվել է ևս 59 հազար ռուբլի, ավելացնելով, որ մնացյալ փողերը (ավանսի լրացումը) կուղարկվեն առաջիկա ամսին, հունիս ամսվա վրա վարկ բացելով, խնդրելով կապիտան **Անիկին** հանձնել 35 հազար ռուբլի գումար՝ մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների համար:

⁶⁶⁰ Նույն տեղում, ք. 31:

⁶⁶¹ Նույն տեղում, ք. 32:

⁶⁶² Նույն տեղում, ք. 33-35:

Վերջում Դեվոյանցը հայտնում էր, որ ըստ գանձարանում արված տեղեկանքների՝ արդեն 70 հազար ռուբլի փոխանցվել է⁶⁶³: Այս համեստ գումարները հնարավորություն էին տալիս հետախուզուլթյանը գործել և պայքարել, երբեմն էլ նաև իրենց անմիջական դրկիցներին՝ «եղբայրական Վրաստանի» հետախուզուլթյան դեմ: Այդ մասին է վկայում Քիչմիչյանի 1920 թ. մայիսի 18-ի հեռագիրը (N 207)՝ ուղղված Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին, արժեքավոր տեղեկատվություն էր հայտնվում այն մասին, որ մայիսի 7-ին Բաքու են մտել Կարմիր բանակի զորամասերը՝ 20 հազար հոգի, որոնց մի մասը տեղափոխվել է Գյանջա, որ Վրաստանի հակահետախուզուլթյան կողմից Հայաստան են ուղարկվել գործակալներ, ավելացնելով, որ վերջիններիս ազգանունները կհաղորդվեն լրացուցիչ: Տեղեկատվությունը ամփոփվում էր Վրաստանում սկսված 1888 և 1889 թթ. ծնվածների գորահավաքի մասին տեղեկություն հաղորդմամբ⁶⁶⁴:

Հարկ է ընդգծել, որ 1920 թ. Հայաստանի համար շատ հազեցած տարի էր իրադարձությունների ու դեպքերի գլխապտուլտ զարգացման տեսանկյունից: Օրերն անգամ նշանակություն ունեին, և Հայկական հետախուզական ծառայությունը Թիֆլիսում ստիպված էր գործել քաղաքական շրջաններում աստիճանաբար ուժեղացող ցայտնոտի պայմաններում, փորձելով հայթայթել ստուգված, ոչ խաբուսիկ տեղեկատվություն ընթացող աշխարհաքաղաքական լուրջ գործընթացների, սահմանների շուրջ թշնամական գորքերի տեղաշարժերի, գեներալ ու գինամթերքի առաքումների մասին, ամեն կերպ խուսափելով հնարավոր ապատեղեկատվությունից: Այսպես, հետախուզական բաժանմունքի պետին ուղղված 1920 թ. մայիսի 21-ի հեռագրում (N 216/c) **Քիչմիչյանը** տեղեկացնում էր Վրաստանի գինված ուժերի գլխավոր հրամանատարի շտաբում այսպես կոչված **լեյտենանտ Մաքսի** հետ հանդիպման մասին, որը գրուցելով շտաբի պետ Զախարիաձեի հետ, հայտարարել էր, որ այժմ ինքը ծառայում է անգլիացիների մոտ, որոնց հանձնարարությամբ մեկնել է Օլթի և Սոչի, իսկ Ադրբեջան չի կարողացել մեկնել միջոցներ չունենալու հետևանքով, քանի որ հայկական հետախուզական ծառայությունից ստացել է ընդամենը 5 հազար ռուբլի՝ հայկական չեկերով: Քիչմիչյանը հայտնում էր, որ լեյտենանտ Մաքսից ստացել է տեղեկություններ, որոնք, նրա կարծիքով, արժեքավոր են (իհարկե, չպետք է անտեսել անգլիացիների սեփական պլանները, որոնք պարտադիր չէր, որ բոլոր մանրամասներում, երբեմն էլ կարևոր «մանրամասներում» համընկնեին հայկական պլանների հետ, քանի որ անգլիացիները մշտապես ձգտում էին իրենցից ունեցած կախվածությունը պահպանել, ազդելով նաև հայկական հետախուզական ծառայությունների գործելակերպի վրա - Վ. Վ.): Քիչմիչյանը հայտնում էր, որ Մաքսից ստացված տեղեկությունների համաձայն (և

⁶⁶³ Նույն տեղում, ք. 43:

⁶⁶⁴ Նույն տեղում, ք. 39:

սա դեռ 1920 թ. մայիսի տվյալներով ~ Վ. Վ.) Տրապիզոնի շրջանում կենտրոնանում են գործեթեր, ընդ որում գորքերի վերաբառնալորումներ են կատարվում Օպայի և Օլթիի շրջաններում, որ նշված թուրքական ուժերը մտադիր են Դաշնակիցների կողմից թուրքական հարցի ոչ բարենպաստ լուծման դեպքում հարձակում ձեռնարկել Ենիքեյի, Օլթիի և Արգասանի ուղղությամբ⁶⁶⁵: Ուշադրավ փաստ, որը հաստատվեց: Հետևաբար, հետախուզությունը քնած չէր, և ոչ էլ շատ աղոտ պատկերացումներ ուներ, ինչպես այդ մասին նշում են **Կ. Սասունիին** և ուրիշները, այլ ինչպես պարզվում է փաստերի վերլուծությունից, հետախուզական ծառայությունների կողմից կատարված քրտնաշնչան աշխատանքը պարզապես շուրն է գցվել կամ էլ շատ անլուրջ է ընդունվել քաղաքական-գիտնական վերնախավի կողմից: Հարկ է նաև մասնավորապես այս կապակցությամբ ամենայն լրջությամբ հաստատաբերել, որ դժվարությամբ հայթայթվող այս տեղեկությունները անհրաժեշտ ազդեցությունը չէին թողնում քաղաքական ղեկավար շրջանների կողմից ընդունվող բոլոր կարևոր որոշումների վրա, դեռևս խիստ զգալի էին Դաշնակիցների կողմից բարենպաստ քաղաքական լուծումների առումով ակնկալիքները: Չնայած աշխարհաքաղաքական իրավիճակի մեջ կատարվող տազնապալի խմորումներին և սրընթաց գահալիժումներին, որոնք հաստատվում էին թեկուզև ոչ ամբողջական, կիսատ-պուստ, որոշ չափով աղոտ հետախուզական տվյալներով, անհրաժեշտ եզրահանգումներ, այնուամենայնիվ, չէին կատարվում, թեկուզև կարող էին կատարվել և պետք է կատարվեին, ինչն ավելի խորացավ 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրյան շլացումից հետո, որը երրորդ պլան մղեց զգուշացվածությունը և տազնապալի բոլոր տեղեկատվությունները տարածաշրջանի ու Հայաստանի սահմանների շուրջ կատարվող իրադարձությունների մասին, իսկ արդյունքում՝ 1920 թ. վերջի աղետը՝ պատերազմը թուրքիայի հետ և Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագիրը, որը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ ՀՀ համար, ինչին հետևեց հապճեպ կատարված «զգեստափոխությունը»՝ բոլշևիկացումը և սովետական կարգերի հաստատումը:

Հետախուզական ծառայությունը Վրաստանում, անկախ որևիցե բանից աշխատում էր և բախվում որոշ խնդիրների, անկազմակերպվածություն էր և քրտնաշնչան երևույթների հետ, որոնց մասին նշում է **Հ. Քիչմիշյանը** Զինվորական նախարարին ուղղված 1920 թ. մայիսի 21-ի գեկուցագրում (N 217/с): Կապված Գլխավոր համբարակապետություն վարչության մայիսի 13-ի գրություն հետ (N 5824), գեկուցագրում տեղեկացվում էր, որ այն իրեն ուղարկվել է փոստով, առանց գաղտնապահության տարրական նորմերը պահպանելու այն հարցերում, որոնք վերաբերում են հետախուզականին: Քիչմիշյանը գրում էր, որ Վրաստանում ռազմական գրաքննության հաստատման հետևանքով

⁶⁶⁵ Նույն տեղում, թ. 46-47:

Թղթակցութիւնը հավասարապես ենթարկվեց հսկողութեան, շեշտելով պետական գաղտնիքները բացահայտ, բացեիբաց հրապարակելու և առաքելու անթուլյատրելիութեան մասին, գտնելով, որ դրանով հարևանի ձեռքն են ընկնում թվային տվյալներ հետախուզութեան վերաբերյալ ծախսերի մասին, եզրահանգելով, որ նման թափթփվածութիւնը, ավելի շուտ հանցագործ և թեթևամիտ վերաբերմունքը այնպիսի կարևոր հարցի նկատմամբ, ինչպիսին է հետախուզութիւնը, իրեն և իր ղեկավարած վարչութեան աշխատակիցներին դնում է ծայրահեղ ոչ շահավետ և ոչ բարենպաստ դրութեան մեջ վրացական իշխանութիւնների, և մասնավորապես վրացական հակահետախուզութեան առաջ, և կարող էր անդամալուծ անել կատարվող աշխատանքներն այդ բնագավառում: Քիչմիշյանը Զինվորական նախարարից խնդրում էր, որ վերջինս կարգադրութիւն անի, որ այսուհետ Թիֆլիս ուղարկվող ողջ գաղտնի և հասարակ թղթակցութիւնը ուղարկվի Արտաքին Գործերի նախարարութեան նամակատարների, թղթատարների (կուրյեր) միջոցով⁶⁶⁶: Սույն փաստաթուղթը վկայում է, որ Թիֆլիսում շահագործողական ծառայութիւնը ձգտում էր կարգավորել իր գործունեութիւնը, ձեռքառնել անկազմակերպվածութիւնից, ուժեղացնել գաղտնիութիւնը, գերծ մնալով վրացական հակահետախուզութեան քայքայիչ քայլերից, լուծել կադրային խնդիրները: Կադրերը չէին բավարարում և քանակական, և որակական տեսանկյունից: Զինվորական նախարարին ուղղված 1920 թ. մայիսի 24-ի գեկուցագրում (N 229/с) Քիչմիշյանը նշելով, որ պողպորուչիկ Ումիկյանը մեկնում է Ղրիմ, և ընդ որում նրա գործուղումը տևելու է մոտ վեց շաբաթ, նշում էր, որ նրա բացակայութեան ժամանակ հետախուզութիւնը, որը սկսել էր կարգավորվել, կանգնել է ձախողվելու խնդրի առաջ, քանի որ նրան փոխարինող հարմար կադրեր չկային: Քիչմիշյանը նշում էր, որ աշխատանքներն անընդհատ ավելանում են, և այդ պայմաններում իրավասու աշխատակիցների բացակայութիւնը զգացնել է տալիս, խնդրելով անհապաղ կարգադրութիւն անել հետախուզական բաժանմունքի սպաներից մեկին գործուղելու մասին, առանձնացնելով պողպորուչիկ Պ. Բեկգադյանին⁶⁶⁷: Սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, այդ ընթացքում խնդիրները չլուծվեցին, ընդհակառակը, ավելի բարդացան: Այդ մասին է վկայում Քիչմիշյանի 1920 թ. մայիսի վերջի մի հեռագիր ևս (N 240), որում վերջինս տեղեկացնում էր շահագործողական բաժանմունքի պետին, որ «Արագածին» (ասել է, թե՛ Քիչմիշյանին հասցեագրված) ուղարկված հեռագրերի (N 461, N 473) պահանջները, համաձայն որոնց Դեվոյանցը խնդրում էր ավելի լիարժեք տեղեկատվութիւն հաղորդել Ադրբեջանում խորհրդային Կարմիր գործերի առկայութեան, նրանց տեղաբաշխման մասին Ադատաֆ-

⁶⁶⁶ Նույն տեղում, գ. 154, ք. 121:

⁶⁶⁷ Նույն տեղում, գ. 184, ք. 48:

այում և Ղազախում⁶⁶⁸, ինչպես նաև Պոլլինսկի ուղղությամբ, չեն կարող կատարվել պողպորուչիկ Ումիկյանի Բաթումի և Փոթի մեկնելու, նրա վրա դրված հատուկ գաղտնի բնույթի հանձնարարության կապակցությամբ, հիշեցնելով Զինվորական նախարարին ուղղված մայիսի 24-ի իր գեկուցագրի մասին (N 229), որում խնդրում էր Թիֆլիս գործուղել վերջինիս տրամադրության տակ գտնվող սպաներից մեկին, ցանկալի համարելով Պ. Բեկզագյանին, որը պետք է ժամանակավորապես փոխարիներ Ումիկյանին՝ մինչև վերջինիս գործուղումից վերադառնալը: Քիչմիշյանը շեշտում էր, որ ինքը շատ է խնդրում շտապել այդ հարցում և Թիֆլիս գործուղել մի սպայի, քանի որ ինքը իր տրամադրության տակ չունի որևէ մեկը, որին կարելի լիներ հանձնարարել հետախուզության վարումը⁶⁶⁹: Քիչմիշյանը համառորեն ձգտում էր հետախուզական ապարատը Թիֆլիսում պահպանել և ուժեղացնել, հենվելով խելամիտ և փորձառու սպայական կադրերի վրա: Երբեմն առաջացած խնդիրները ավելի էին ընդգծում կադրերի անհրաժեշտությունը: Թիֆլիս ուղարկված 1920 թ. մայիսի 25-ի հեռագրում (N 468) Դեվոյանցը տեղեկացնում էր անգլիական թարգմանիչ **Օկոնեի** մասին, որը եղել է իրենց մոտ՝ անցագիր վերցնելու համար և երկար գրուցել է իր օգնական Խաչատուրյանի հետ, ըստ երևույթին ձգտելով ծառայություն մեջ մտնել հայերի մոտ. Դեվոյանցը պահանջում էր ձեռքակալել Օկոնեին և ուղարկել Երևան⁶⁷⁰: Հուլիսի 5-ի հեռագրով Դեվոյանցը Քիչմիշյանից խնդրում էր անգլիական թարգմանիչ Օկոնեի (կամ Ակոն) կողմից Դոդոնյանին հասցեագրված նամակ լինելու դեպքում այն ուղարկել իրեն⁶⁷¹: Հայաստանում հետևում էին Թիֆլիսից ստացվող տեղեկատվությանը, և հաճախ էլ՝ անհրաժեշտության դեպքում, այս կամ այն փաստը ստուգելու, կադրերի հետ կապված որոշ խնդիրներ պարզաբանելու համար դիմում էին Քիչմիշյանին: 1920 թ. մայիսի 24-ի հեռագրով (N KP 320) Դեվոյանցը Քիչմիշյանից խնդրում էր հայտնել, թե Թիֆլիսում է գտնվում արդյոք Զեմալ-բեյ Նակաչիձեն (Հյուբանոց «Օրինետ»), շարունակում է արդյոք իր գոյությունը պահպանել Բեհբուլունի փողոցի վրա գտնվող (տուն N 22) Մուսուլմանական ակումբը, խնդրելով դրական պատասխանի պարագայում հաղորդել որոշակի տվյալներ նրա գործունեության մասին՝ գլխավորապես՝ ընդգնմ Հայաստանի⁶⁷²: 1920 թ. հունիսի 4-ին ուղարկված պատասխան հեռագրում (N 256/c) Քիչմիշյանը հայտնում էր, որ Զեմալ-բեյ Նակաչիձենին ինքն անձամբ գիտի, ավելացնելով, որ նա մասնակցել է Մուսուլմանական ակումբի ավազների խորհրդի աշխատանքներին, չահագրված լինելով գործի ձեռ-

⁶⁶⁸ Նույն տեղում, ք. 50-51:

⁶⁶⁹ Նույն տեղում, ք. 48:

⁶⁷⁰ Նույն տեղում, ք. 52:

⁶⁷¹ Նույն տեղում, ք. 61:

⁶⁷² Նույն տեղում, ք. 58:

նարկման նյութական կողմով, սակայն ակումբը վրացական կառավարութեան կարգադրութեամբ 1919 թ. դեկտեմբերին փակվել է և այլևս չի վերակախել իր գործունեութիւնը: Քիչմիշյանը նշում էր, որ տարբեր լուրերի համաձայն՝ Նակաչիձեն Թուրքիայի գաղտնի գործակալ է, և Կ.Պոլսում ոստիկանութիւնում պաշտոն է զբաղեցրել, եզրակացնելով, որ Զեմալ-բեյի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ անորոշ է, և վերջինս դրսևորում է ակտիվ գործողութիւն, թե ոչ՝ անհայտ է, ավելացնելով, որ ամեն դեպքում Զեմալ-բեյ Նակաչիձեն կասկածելի տիպ է⁶⁷³: Սակայն արդեն 1920 թ. հունիսի 7-ի հեռագրում (N 260) որոշակիորեն ճշգրտելով նախորդ տեղեկատվութիւնը, Քիչմիշյանը ՀՀ Գլխավոր շտաբի հետախուզական բաժնին տեղեկացնում էր, որ Զեմալ-բեյ Նակաչիձեի նկատմամբ իր կողմից ձեռնարկվել են քայլեր, միաժամանակ հաղորդվել է ՀՀԴ կուսակցութեանը, և ըստ այդմ՝ նպատակահարմար է գտնվել հսկողութիւն սահմանել նրա նկատմամբ՝ կապված ընդդէմ Հայաստանի նրա ծավալած գործունեութեան⁶⁷⁴:

Թիֆլիսի հետախուզական գործակալութիւնը երբեմն էլ առիթներ էր ունենում հարաբերվելու Անդրկովկասում անգլիական, ամերիկյան, ֆրանսիական զինված ուժերի սպաների. 1920 թ. մայիսի 7-ին ՀՀ հետախուզական բաժնի պետին ուղղված հեռագրում (N 235) Քիչմիշյանը հայտնում էր այն մասին, որ Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչ **գնդապետ դե-Կորբեյլը** խնդրել է թույլ տալ իրեն ծանոթանալու բոլշևիկներին Մ. Քեմալի համաձայնութեան մասին ապացույցների հետ: Այդ կապակցութեամբ Քիչմիշյանը խնդրում էր ուղարկել այդ պայմանագրի վերաբերյալ առկա գրավոր ապացույցների և ամփոփագրերի բոլոր պատճենները⁶⁷⁵: Հունիսի 4-ին ստացվում է պատասխան հեռագիրը (N P0517) կապիտան Դեվոյանցի և նրա օգնական, **պրապորշչիկ Նազարբեկյանի** ստորագրութեամբ, որում վերջիններս Քիչմիշյանին լիազորում էին դե-Կորբեյլին ծանոթացնել բոլշևիկներին հետ Մ. Քեմալի համաձայնութեան մասին բոլոր տեղեկութիւններին՝ նյութերը վերցնելով հետախուզական ամփոփագրերից, սկսած N 14-ից, որոնցում տեղեկութիւնները քաղված էին միանգամայն արժանահավատ աղբյուրներից՝ թուրքական 15-րդ կորպուսի հրամանատարի և Զինվորական նախարարի՝ միմյանց հասցեագրված ծածկագրված հեռագրերից: Հենց դա էլ Քիչմիշյանը հունիսի 18-ին կարգադրում է հաղորդել դե-Կորբեյլին, ասելով, որ ուղարկվում է թուրք-ադրբեջանական ռազմական միութեան պայմանագրի պատճենը, միաժամանակ սույն փաստաթղթի հավելվածին կցելով ադրբեջանա-թուրքական պայմանագրի պատճենը, որն այդ երկրների միջև ստորագրվել էր 1919 թ. հոկտեմբերի 29-ին, որում թուրքական կողմը պարտավորվում էր կազմակերպել ադրբեջանական բանակը, պատրաստել հրահանգիչ

⁶⁷³ Նույն տեղում, ք. 59:

⁶⁷⁴ Նույն տեղում, ք. 60:

⁶⁷⁵ Նույն տեղում, ք. 53:

ներ, սպաններ, մատակարարել զենք ու զինամթերք, չկնքել որևիցե պայմանագիր այն պետությունների հետ, որոնք կլինեին Ադրբեջանի հետ թշնամական հարաբերություններում⁶⁷⁶:

1920 թ. մայիսի վերջերին-հունիսի սկզբներին հայտնվելով Ֆինանսական դժվարությունների մեջ, Քիշմիշյանը ՀՀ Զինվորական նախարարությունից Գլխավոր համբարակապետին ուղղված հեռագրում (N 261) տեղեկացնում է, որ դեռևս մայիսի 18-ի դիմումագրի և ավանսային օրգերի համաձայն (N 2790) Թիֆլիսում Հայաստանի Ֆինանսական գործակալի միջոցով պետք է իրեն հանձնվեր հետախուզության համար նախատեսված 100 հազար ռուբլուց 59 հազարը, ընդգծում էր, որ ոչ մի փոխանցում, ոչ էլ որևիցե գումար չի ստացվել⁶⁷⁷: Ավելի տազնապալի է Քիշմիշյանի 1920 թ. հունիսի 9-ի դիմումագրերը՝ ուղղված ՀՀ նախարարների խորհրդի գործերի կառավարչին: Քիշմիշյանը իր վարչությունը հասանելիք 180 հազար ռուբլի գումարի առաքման կասեցման հետ կապված դժգոհություն էր հայտնում, խնդրելով աջակցել շտապ փոխանցելու նշված գումարը, քանի որ իր վարչության աշխատակիցները և ինքն անձամբ գտնվում են ծայրահեղ նեղ նյութական պայմաններում, ստիպված լինելով ապրել պարտքով վերցված գումարների կամ տնային իրերի վաճառքի հաշվին, արդարացիորեն նշելով, որ նման պայմանները ջլատում են զինվորական ներկայացուցչությունը, հույս հայտնելով, որ վերջ ի վերջո երևանում խորամուկս կլինեն իրենց դժվարությունների ու կարիքների մեջ, աջակցելով նշված խնդրում⁶⁷⁸: Անկախ որևիցե բանից, հետախուզությունը 1920 թ. կեսերին դեռ շարունակում էր իր գործունեությունը Վրաստանում, իսկ թե քաղաքական շրջանները ուշադրություն կհետևեին իրենց հաղորդագրություններին, թե ոչ, միևնույն է, նրանք ամենօրյա աշխատանքային եռուզեռի մեջ էին, չնայած կադրային ներուժը մեծաթիվ չէր, պահեստի նստարանը դատարկ էր, համալրման հույսերն էլ գրոյական էին:

Այդուհանդերձ, Թիֆլիսի հայ հետախուզական շնկատի մտահոգությունն կենտրոնում էին գտնվում նաև բոլշևիզմի նկատմամբ վերաբերմունքի հարցերը. 1920 թ. հունիսի վերջի մի հեռագրում (N 298)՝ ուղղված Գլխավոր շտաբի պետին, Քիշմիշյանը հայտնում էր, որ Ադստաֆայից քարոզչության համար բոլշևիկների կողմից ուղարկված է 32 միլիոն նիկոլաևյան ռուբլի, և խնդրվում էր այդ մասին հայտնել ՆԳ նախարարությանը: Բավականին ուշադրալ է նաև Թիֆլիսի հայկական հետախուզության գործունեության մի էջ ևս, որը վկայում է վերջինիս ձգտման մասին վերահսկել իրադրության նկատմամբ, որը փորձում էր հաճախ անվերահսկելի դառնալ, ինչին երբեմն կարող էր նպաստել մամուլի դիրքորոշումը: Քիշ-

⁶⁷⁶ Նույն տեղում, ք. 66-67:

⁶⁷⁷ Նույն տեղում, գ. 154, ք. 149:

⁶⁷⁸ Նույն տեղում, Ֆ.Պ- 199, գ. 1, գ. 111 (98), ք. 134:

միշյանին հասցեագրված 1920 թ. հունիսի 28-ի հեռագրում (N KP 414) հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար պորուչիկ Հ. Խան-Վոտուրսկին հայտնում էր, որ իրենց կողմից բազմիցս արվել են հայտարարություններ, որ շատ հաճախ թերթերն են ընկնում, և մասնավորապես *"Слово"* թերթը միանգամայն գաղտնի տեղեկություններ հայկական բանակի առանձին զորամասերի կանգատեղերի, նրանց համարագրման և զենքի, նույնիսկ սվինների և թրերի մասին: Քանի որ բոլոր այդ հայտարարությունները մինչ այդ չէին հասել իրենց նպատակին, Խան-Վոտուրսկին խնդրում էր չմերժել, և եթե կարելի է, մասնավոր ձևով խնդրել թերթի հրատարակչության գլուխ կանգնած անձանցից չհրապարակել տեղեկություններ, որոնք կարող էին վնասել Հայաստանին: Ելնելով այդ հանգամանքներից, Քիշմիշյանը 1920 թ. հուլիսի 5-ին հանձնարարական է տվել զրուցել այդ թերթի խմբագրություն աշխատակիցների հետ⁶⁷⁹:

1920 թ. հետախուզյունները փորձում էին պարզել ռազմաքաղաքական բնույթի ցանկացած հարց, կապված գործերի տեղաբաշխման, զենքի ու զինամթերքի թվաքանակի, տարբեր երկրների գործակալական ցանցի և այլնի մասին: 1920 թ. հունիսի 26-ի հեռագրով (N 591) Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի պարտականությունները կատարող Խան-Վոտուրսկին Հ. Քիշմիշյանից խնդրում էր, որպեսզի Բեկզադյանը հաղորդի, թե ինչքանով արգասաբեր է Բախչիկի աշխատանքը, ինչումն է կայանում նրա թիֆլիսում մնալու անհրաժեշտությունը: Միաժամանակ սույն հեռագրում խնդրվում էր հայտնել, թե արդյոք կապ կա՞ Բաքվի գործակալների հետ⁶⁸⁰:

1920 թ. հունիսի 28-ի հեռագրում (N 302) զեներալ Քիշմիշյանը հայտնում էր Հայկական բանակի շտաբի պետին, որ հնարավոր է 10 հազար ռուբլով ձեռք բերել վրացական զինվորական զորային նոր գաղտնազիբը, և խնդրում էր այդ մասին հաղորդել Խան-Վոտուրսկուն⁶⁸¹: 1920 թ. հունիսի 29-ի հեռագրում՝ ուղղված ՀՀ գործերի Գլխավոր շտաբի պետին, Քիշմիշյանը բավարարում էր 1920 թ. հուլիսի 26-ի հարցապնդմանը՝ կապված Մ. Ա. Բախչիկի անվան հետ, հայտնելով, որ հետախուզության նպատակով գործուղված պորուչիկ Միխայիլ Ալեքսանդրի Բախչիկը թիֆլիսում՝ վրացական հեռագրատանը ընդունվել է աշխատանքի: Նշված հեռագրում առաջին հերթին խնդրվում էր ջանքեր գործադրել ձեռք բերելու առաջարկվող նոր վրացական զորական շիֆրը՝ ծածկագրված հեռագրերի իսկությունը ստուգելու և բովանդակությունը պարզելու համար ⁶⁸²: Իսկ արդեն 1920 թ. հուլիսի 1-ին (N 587) Երևանից Խան-Վոտուրսկին Քիշմիշյանից խնդրում էր տեղեկություններ հաղորդել վրացական գործերի տեղաբաշխման մասին Արզահան-

⁶⁷⁹ Նույն տեղում, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 154, ք. 157:

⁶⁸⁰ Նույն տեղում, ք. 79:

⁶⁸¹ Նույն տեղում, ք. 77:

⁶⁸² Նույն տեղում, ք. 78:

Արդվիհի շրջանում⁶⁸³: 1920 թ. Հուլիսի 11-ին ՀՀ գորքերի հրամանատարի շտաբի պետի հասցեով Թիֆլիսից ուղարկվում է Քիչմիշյանի գրությունը (N 320/c), որում տրվում էր 1920 թ. Հունիսի 26-ի Խան-Կոստոբուկու հարցապնդումի քիչ թե շատ լիարժեք պատասխանը՝ կապված Բաքվի հայ գործակալների գործունեության հետ, տեղյակ էր պահվում պորուչիկ Բեկզադյանի զեկուցադրի մասին՝ կապված Վրաստանում հետախուզության կազմակերպման և այդ նպատակի համար դրամական հատկացումների մասին: Հայտնելով պորուչիկ Բեկզադյանի նկատառումների մասին, Քիչմիշյանը միաժամանակ տեղեկացնում էր, որ ինքը բոլոր առումներով համաձայն է նրա նկատառումների հետ, եզրահանգելով, որ կարելի է բացել հատուկ վարկ Վրաստանի և Ադրբեջանի սահմաններում հետախուզության կազմակերպման համար, կենտրոնացնելով ողջ աշխատանքը իրեն վստահված վարչության ենթակայության ներքո⁶⁸⁴: Հայկական հետախուզությունը փորձում էր Անդրկովկասի շրջանակներում կորդինացնել իր ջանքերը, այն ավելի նպատակալաց դարձնել, և ուժեղացնել կադրային ներուժը: 1920 թ. Հուլիսի կեսերին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին կից զինվորական վարչության աշխատակից պորուչիկ Եղիազարովի կողմից հեռագիր է ուղարկվում Երևան՝ պորուչիկ Սաֆարյանին, խնդրելով շտապ Թիֆլիս գործուղել **Նիկոլայ Նադիրովին**, շեշտելով, որ դա ծայրահեղորեն անհրաժեշտ է⁶⁸⁵:

1920 թ. Հուլիսի կեսերին նկատվում են ռազմաքաղաքական իրավիճակի որոշակի լուրջ փոփոխություններ Հայ-ադրբեջանական սահմանագծի ողջ երկայնքով, որն էլ իր արտացոլումն է գտնում Թիֆլիսից Երևան ուղարկվող հետախուզական հաղորդագրություններում, վկայելով նաև այն մասին, որ իրադրությունը սկսել էր անընդհատ նրբերանգները փոխել: 1920 թ. Հուլիսի 19-ին **Եղիազարովը** ՀՀ Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին հայտնում էր, որ գործակալական տվյալների համաձայն Հուլիսի կեսերին կարմիր զվարդիականների և ռուսների նշանակալից ուժեր ուղարկվել են Եվլախ կայարանից խճուղիով դեպի Ղարաբաղ: Եղիազարովը հայտնում էր, որ Կարմիր գորքերը (4 հազար սվին) երեք զրահագնացքների ուղեկցությամբ կենտրոնանում են Թովուզ կայարանի շրջանում՝ Հայաստանի վրա հարձակվելու նպատակով⁶⁸⁶: 1920 թ. Հուլիսի 23-ին Եղիազարովի ստորագրությամբ նոր հետախուզական ամփոփագիր է ուղարկվում ՀՀ Հետախուզական բաժնի պետի հասցեով, որում հաղորդվում էր այն մասին, որ Հայաստանի սահմանում, Չախմախի դյուղում կանգնած հայկական զորամասերը (2 էջելոն - 1200 թվաքանակով) փոխարինվել են ռուսական Կարմիր

⁶⁸³ Նույն տեղում, ք. 80:

⁶⁸⁴ Նույն տեղում, ք. 81:

⁶⁸⁵ Նույն տեղում, ք. 84:

⁶⁸⁶ Նույն տեղում, ք. 83, 85:

գորքերով, իսկ հանված հայկական գործասերը որոշ տեղեկությունների համաձայն ուղարկվել են լեհական ռազմաճակատ, որ Աղստաֆայի և Բաքվի միջև երթևեկում են երեք զրահագնացքներ, տեղական վարչությունը գտնվում է Հեղկոմի ձեռքում, որի կազմում են Ա. Նուրիջանյանը, Ա. Վարդանյանը, Հ. Յաղոբչյանը և Մարտիրոսյանը: Վերջում նշվում էր, որ Զանգեզուրի ուղղությունը ուղարկված է 28-րդ սովետական հետևակային դիվիզիան⁶⁸⁷:

Հայ-ադրբեջանական լարվածությունը գուզահեռ որոշակի լարվածություն է ստեղծվում նաև վրացիների կողմից՝ Օլթիում, որի մասին տեղեկանում ենք գորքերի շտաբի պետ գնդապետ Ի. Վեքելովի 1920 թ. հուլիսի 30-ի հեռագրից (N 715)՝ ուղղված Քիչմիշյանին: Դրանում հայտնվում էր օլթեցիների հետ վրացիների բանակցությունների մասին՝ նպատակ հետամտելով խողաղ ճանապարհով գավթել շրջանը և նախապատրաստել նոր ուժերի ժամանումը՝ Արգահանի և Օլթիի շրջանները զբաղեցնելու համար: Վեքելովը Քիչմիշյանին հայտնելով Զինվորական նախարարի առաջարկի մասին՝ ծանոթանալ վրացիների իսկական նպատակադրումներին Օլթիի և Արգահանի շրջանների վերաբերյալ, խնդրում էր անհապաղ հեռագրել արգյունքների մասին⁶⁸⁸:

Տագնապը Հայ-ադրբեջանական և Հայ-վրացական սահմանագծում օր օրի խորանում էր և հայկական հետախուզության Վրաստանի շրջանը փորձում էր հակազդել հակահայկական այդ քայլերին, չնայած ամեն ինչ չէ, որ լավ էր ստացվում: Եղիազարովը 1920 թ. օգոստոսի 4-ին հայտնում է Երևան՝ Զինվորական նախարարին, որ համաձայն Վրաստանի գորքերի Գլխավոր շտաբի հաղորդագրություն, Աղստաֆայում կենտրոնացվում են սովետական գորքեր⁶⁸⁹: Այս հաղորդագրություններում մտահոգիչն այն էր, որ հայկական հետախուզության տվյալները հաճախ հենվում էին Վրաստանի Գլխավոր շտաբի աղբյուրների վրա, որոնք հնարավոր է մատուցված լինեին: Քանի որ այլ ելք չկար, մնում էր որոշակի տեղ տալ նմանակարգ տեղեկատվությանը: Այնուհանդերձ, 1920 թ. օգոստոսի 6-ին Թիֆլիսում ՀՀ զինվորական կցորդի պարտականությունները ժամանակավորապես կատարող պորուչիկ Եղիազարովը Զինվորական նախարարին ուղղված գեկուցագրում հաղորդում էր, որ Վրաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի կողմից ձեռք բերված հավաստի տվյալների հիման վրա, Ղազախի շրջանում կենտրոնացված են Կուրիշկինի ուժերը՝ բաղկացած 8 գումարտակ հետևակից, 5 մարտկոցից և 4 հեծելավաշտից, որոնցից 3 գումարտակ և 2 մարտկոց ուղղվածություն էին վերցրել դեպի Ուզունթալա, որ վերջիններս իրենց ռեզերվում ունեն 2 հեծելազունդ (600 սվին՝ յուրաքանչյուրում), իսկ Գյան-

⁶⁸⁷ Նույն տեղում, ք. 89:

⁶⁸⁸ Նույն տեղում, ք. 91:

⁶⁸⁹ Նույն տեղում, ք. 92:

Չայի շրջանում՝ 20-րդ և 28-րդ դիվիզիաների զորամասերը⁶⁹⁰: Այսպես թե այնպես, հայկական հետախուզությունը Վրաստանում որոշակի պատկերացումներ ուներ Անդրկովկասի և Հայաստանի շուրջ նոր ռազմաքաղաքական ուժերի, և այդ թվում խորհրդային ուժերի տեղաբաշխման, զորքերի թվաքանակի ու այլնի մասին: Վերը նշված տեղեկատվության մեջ հաղորդվում էր նաև, որ «կարմիրները» գլխավոր հարվածը նախապատրաստում են Ղազախի ուղղությամբ, քեմալականների հետ միացման հնարավոր կարճատև ելքի ապահովման նպատակով, հետևաբար շահավետ համարելով նաև ապահովագրվել Գոկչայից հյուսիս գտնվող շրջանի թաթարներից, նրանց տրամադրվածությունը շահելով՝ վերջիններին գանազան խոստումներ տալու միջոցով: Միաժամանակ Եղիազարովը հայտնում էր, որ գեներալ Զախարիաձեն առայժմ աննպատակահարմար է գտել հետագա առաջխաղացումը Նախիջևանի վրա, ինչպես նաև այն մասին, որ Վրաստանի Զինվորական նախարար Գ. Ս. Լորդկիպանիձեն գեներալ Զախարիաձեի հետ նախատեսում է այցելութուն կատարել Երևան, սակայն Լորդկիպանիձեի հիվանդության պատճառով, այդ այցելությունը հետաձգվել է⁶⁹¹:

Վերը նշված հաղորդագրությունները՝ խորհրդային ուժերի առաջխաղացման մասին, հաստատվում է նաև պորուչիկ Եղիազարովի 1920 թ. օգոստոսի 7-ի հեռագրով՝ ուղղված Զինվորական նախարարին, որում նշվում էր նաև Քերպիլիի շրջանում ընթացող նախապատրաստությունների մասին⁶⁹²: Սակայն արդեն դրանից հետո ընկած ժամանակահատվածի ամփոփագրերի ընդհանուր ոգին և բովանդակությունը փոխվում է, և մասնավորապես սկսում են տառապալի լուրեր ստացվել Զանգեզուրից: Գնդապետ Վ. Պրիտոմանովի ստորագրությամբ 1920 թ. օգոստոսի 9-ի ռազմական բնույթի հայտնի ամփոփագրում նշվում էր, որ հայկական զորամասերը նշանակալից չափով գերազանցող Կարմիր ուժերի ճնշման տակ (որոնց նաև աջակցում էին թաթարական ուժերը) ստիպված են եղել թողնել Գերյուսին (Գորիս) և նահանջել Զանգեզուրի գավառի սահմանները⁶⁹³: Իսկ 1920 թ. օգոստոսի 24-ի հետախուզական ամփոփագրում գեներալ Քիշմիշյանը, հենվելով բուլղարիկյան զինվորական շրջաններում ունեցած իրենց «մարդու» տվյալների վրա, պնդում էր, որ ինտենսիվ քայլեր են ձեռնարկվում XI Կարմիր բանակի ուժեղացման համար՝ Հայաստանի, սակայն գործնականում առաջին հերթին Վրաստանի վրա հարձակվելու նպատակադրումով⁶⁹⁴, որը, ինչպես ցույց տվեց կյանքը, հիմքից գուրկ պնդում չէր:

⁶⁹⁰ Նույն տեղում, ք. 93:

⁶⁹¹ Նույն տեղում:

⁶⁹² Նույն տեղում, ք. 94:

⁶⁹³ Նույն տեղում, ք. 96:

⁶⁹⁴ Նույն տեղում, գ. 184, ք. 103:

Հայաստանի վիճակն օր օրի բարդանում էր, տազնապը խորանում, թեկուզև արտաքուստ իշխում էր Սևրով ծնված ոգևորությունը: Դա հաստատվում է այդ ժամանակաշրջանի որոշ այլ տեղեկություններով, որոնք ձեռք էր բերում գինվորական հետախուզությունը: Գեներալ Քիչմիշյանը 1920 թ. օգոստոսի 20-ին ՀՀ զորքերի հրամանատարի շտաբի պետին հաղորդում էր (N 352/с), որ համաձայն ստուգված և միանգամայն հավաստի գործակալական տվյալների, Վրաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է ուժեղ քարոզչություն՝ նպատակ հետապնդելով խաղաղ ճանապարհով տիրել Արդահանի, Օլթիի մարզերին և Չալդիրին: Դրա հետ մեկտեղ, Հ. Քիչմիշյանը նշում էր, որ ինչ վերաբերում է Օլթիի շրջանը գինված եղանակով գրավելու մասին տեղեկություններին, որի համար վրացիները հավաքում են զորքերը, ապա իբր թե դրանք չեն համապատասխանում իրականությունը, քանի որ կայազորները հինն են, չեն փոխվել, հայտնելով, որ Վրաստանի կառավարությունը կենտրոնացել է երկու գլխավոր կետերում՝ Ախալցխայում և Ախալքալաքում, ուժեղացնելով գեներալ Չիկվաիձեի սահմանապահ շոկատը, հենվելով նաև մի շարք մահմեդական գործիչների՝ ինչպես օրինակ, Ջալալ բեկ Մաչաբելայի վրա, որը գործուղվել էր Օլթի՝ մեծ լիազորություններով և գումարներով, սակայն մնացել էր Ախալցխայում, որտեղ գտնվում էր նաև Օմար էֆենդիի՝ Ախալցխայի կառավարության նախկին նախագահի շտաբը: Սույն ամփոփագրում Քիչմիշյանը նաև տեղեկացնում էր, որ Օլթիի շրջանում քարոզչական աշխատանքները տարվել են Սերվեր բեկ Աթաբեկովի միջոցով, իսկ Արդահանի շրջանում այն իրականացրել է գավառապետ *Կադիմովը*, որը մեծ գումարներով կաշառվել էր և աշխատանքներ էր տանում հօգուտ Վրաստանի, որ Ախալքալաքի շրջանից մի շարք մահմեդական սահմանային գյուղերի միջոցով վրացիները կապեր են հաստատել Չալդիրի և Աղբաբայի հետ և օգոստոսի 6-ին Չալդիրից թիֆլիս են ժամանել մահմեդական բնակչության ներկայացուցիչները՝ Վրաստանի ՆԳ նախարար Ն. Վ. Ռամիշվիլու հետ տեսակցելու: Ամփոփագիրն ավարտվում էր եզրակացությունից այն մասին, որ վրացական կառավարության մարտավարությունն Արդահանի և Օլթիի մարզերի, «Չեզոք գոտու» նկատմամբ, արտահայտվում է ուժեղ քարոզչությունում՝ առանց գինված ուժերի կուտակման և կառավարության կողմից մի շարք գաղտնի որոշումների ընդունումով՝ բնակչությանը խաղաղ ճանապարհով իրենց ազդեցություն տակ գցելու համար, հենվելով բնակչության ազատ կամքի արտահայտման վրա⁶⁹⁵:

Առհասարակ, իրավիճակը 1920 թ. աշնան մատույցներին սկսել էր շիկանալ, որն էլ երևում է հետագա հետախուզական հեռագրերի և տեղեկագրերի բովանդակության վերլուծությունից: Դրան նորից գումարվեց բու-

⁶⁹⁵ Նույն տեղում, գ. 184, թ. 101:

չևիկյան գործոնը, որը 1920 թ. կեսերին ռեալ ակտիվացման նշաններ էր ցույց տալիս, դառնալով տարածաշրջանային գորեղ գործոն, իր համար հաջող քաղաքական ելքի կոնկրետ ակնկալիքներով: 1920 թ. սեպտեմբերի 14-ի տեղեկագիր-ամփոփագրում՝ ուղղված ՀՀ Զինվորական նախարարին, դիվանագիտական հավաստարմատարին, Արտաքին Գործերի և ՆԳ նախարարներին, Կենտրոնին (այսինքն Գլխավոր շտաբի հետախուզական բաժնամուկներն) և ՀՅ Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեին (N 370/с), Քիչմիչյանը Վրաստանից հաղորդում էր, որ գործակալական տվյալների վկայությամբ Բաքվից Ախալքալաքի վրայով Հայաստան է ուղևորվել այսպես կոչված մեծամասնականների՝ կոմունիստների մի խումբ (փորձնական նպատակով), և մեծ գումար փողով, Հայաստանում խաղաղ ճանապարհով հեղաշրջում իրագործելու համար, որի գլուխ կանգնած է պարսկահայատակ Սինաքերիմը, որը պետք է Թիֆլիսի, Բորժոմի և Բակուրիանի վրայով անցնի Երևանի նահանգ, որպես իր գործունեություն կենտրոնատեղի ընտրելով Քանաքեռը կամ Ղամարլուն:⁶⁹⁶ Վրաստանում գործող Հայկական հետախուզությունը սեպտեմբերյան այս օրերին, բացի բոլշևիկյան խնդրի հետ ալեկի իրատեսորեն բախվելուց, կանգնեց նաև որոշ կադրային և իրավիճակային խնդիրների առաջ, երբեմն հարկադրված լինելով դեմ հանդիման կանգնել որոշ հետախույզների գործունեություն կասեցման կամ պարզաբանման փաստի առաջ, կապված վերջիններիս պրակտիկ գործունեություն արդյունավետության կամ անորոշության հետ: Այսպես, օրինակ, 1920 թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ գործերի Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի պարտականությունները կատարող Խան-Կոտուրսկին հատուկ հեռագրով (N 795) Քիչմիչյանից խնդրում էր կարգադրություն անել պ. Բախչիևին ծառայության վայր՝ Երևան ետ կանչելու մասին՝ կապված նրա աշխատանքի անարտադրողականության հետ:⁶⁹⁷ Հեռագրի վրա կա Քիչմիչյանի հատուկ մակագրությունը այն մասին, որ սույն փաստի կապակցությամբ պորուչիկ Բախչիևը զեկուցագիր է ներկայացրել: Սակայն իրագործությունները զարգանում են անհասկանալի սցենարով: Ըստ երևույթին, ինչ-որ հարցերից տաքնապելով (կարելի է ենթադրել, որ Երևանում հետախուզական կենտրոնը որոշ կասկածներ կամ լուրջ խնդիրներ ունեւր նրա գործնական հատկանիշների և գործունեության վերաբերյալ, և ետ էին կանչում (փաստերը ստուգելու համար - Վ. Վ.), հետախուզության ղեկավարությունը նախահարձակ էր լինում: Այս վերջին հանգամանքը հաստատվում է նրանով, որ պորուչիկ Բախչիևը Բաթումի մեկնելուց հետո, որը տեղում է 2 ամիս, դադարում է իր մասին տեղեկատվություն հաղորդելուց, իսկ դա արդեն ներքին կանոնակարգի խախտում էր, որն էլ առաջ բերեց հետախուզության երևանյան կենտրոնի ղեկավարության արդարացի դժգոհությունը: Սեպտեմբերի

⁶⁹⁶ Նույն տեղում, ք.107-108, 110:

⁶⁹⁷ Նույն տեղում, ք. 109:

24-ին հետախուզական բաժնի պետին ուղղված հեռագրում (N 383/c)՝ ի պատասխան սեպտեմբերի 13-ի հեռագրի (N 795), հայտնվում էր, որ ուղարկվում է պորուչիկ Բախչիևի զեկուցագիրը՝ Բաթումիում իր գործունեության բացատրականով (սուլյն փաստաթուղթը մակագրված է ՀՀ Գլխավոր շտաբի պետ գնդապետ Բաղդասարովի կողմից): Ինչ-ինչ պատճառներով Բախչիևը խուսափում էր Երևան գնալուց, և ըստ երևույթին, այդ հանգամանքը նկատի ունենալով, Քիչմիշյանը հայտնում էր, որ անկախ դրանից, իր կողմից պորուչիկ Բախչիևին հրահանգ է տրվել ուղևորվել Երևան՝ ՀՀ Գլխավոր շտաբի տրամադրություն տակ⁶⁹⁸:

Խորնված ռազմաքաղաքական իրավիճակը Հայ-թուրքական սահմանագծի ողջ երկայնքով մեծ տազնապ էր առաջ բերել: ՀՀ զորքերի Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին ուղղված 1920 թ. օգոստոսի 27-ի զեկուցագրում (N 687), որն ստորագրվել է պորուչիկ Բեկզադյանի կողմից, նշվում էր, որ դեռ հուլիսի 10-ին զեկուցագիր (N 657) է ուղարկվել Հայաստան, որում ներկայացվել է գործերի վիճակը, հետախուզության բնագավառում տիրող դրուժյունը, ինչպես նաև խնդրանք էր հարուցվել՝ հաղորդել գործի կազմակերպման և վարման համար բաց թողնվելիք գումարի չափի մասին: Օգոստոսի 27-ի զեկուցագրում նշվում էր, որ իրենք դեռ չեն ստացել հուլիսի 10-ի զեկուցագրի պատասխանը, չնայած գրավոր խոստմանը՝ ուղարկել հրահանգներ, նշելով նաև, որ ոչինչ հայտնի չէ նաև բաց թողնված գումարների մասին, որ գինվորական ներկայացուցչի տրամադրության տակ եղած հետախուզության համար նախատեսված 68 հազար ռուբլուց հետախուզական ցանցի հաստատման և տեղեկությունների ստացման համար մինչ այդ ծախսվել է 45 հազար ռուբլի, մնացել է 13 հազար ռուբլի, որի մասին հաղորդվել է Երևան⁶⁹⁹: Զեկուցագրի վերջնամասում Բեկզադյանը ընդգծում էր, որ ինքը ևս մեկ անգամ կրկնում է, որ գործի հաստատման և հաջող զարգացման համար շատ անհրաժեշտ է դրամ, և խնդրում էր չմերժել իրեն և հաղորդել ուղարկված զեկուցագրի ձևատառերի մասին, ինչպես նաև անել համապատասխան կարգադրություն աշխատանքի շարունակման և հետախուզական ցանցի ընդլայնման, և միանգամայն հուսալի գործակալ-աշխատակիցների ցանցի հաստատման մասին հետաքրքրություն ներկայացնող բոլոր շրջաններում⁷⁰⁰: Սուլյն կարևոր փաստաթղթի վրա պորուչիկ Բեկզադյանը հատուկ մակագրություն էր արել, որը ներկայացվել է գինվորական կցորդ Քիչմիշյանին, հավելելով, որ դրամի բացակայությունը դեպքում միանգամայն անպատկերացելի է աշխատանքը և աննպատակահարմար է Թիֆլիսում հետախուզության գծով հատուկ սպայի ներկայու-

⁶⁹⁸ Նույն տեղում, ք. 114:

⁶⁹⁹ Նույն տեղում, ք. 105, 112:

⁷⁰⁰ Նույն տեղում, ք. 112:

թյունը⁷⁰¹: Որոշ ժամանակ անց, այս կապակցությամբ ՀՀ գործերի Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետը հրահանգում է Քիչմիչյանին կարգադրել պորուչիկ Բեկզադյանին տալ հետախուզական բաժնի համար նախատեսված գումարը⁷⁰²: Դրամական գումարները շատ դժվար էին հայթայթվում, իսկ հանրապետության վերջին ամիսներին այն ավելի դժվարացավ: 1920 թ. սեպտեմբերի 4-ին Երևանից հետախուզական գծով պատասխանատու գանձապահը հատուկ հեռագրով (N KP 627) հայտնում էր Քիչմիչյանին, որ ուղարկվում է փոխանցման տոմսը (N 5141), որով կարելի էր ստանալ օգոստոսի 18-ին ուղարկված 50 հազար ռուբլին, տեղեկացնելով նաև, որ սույն օրերով անհրաժեշտ է գումարը ստանալ և տալ կապիտան Եղիազարովին՝ վերջինիս հայտնի նպատակների համար⁷⁰³:

Այդ ընթացքում իրադարձությունները թուրք-հայկական ռազմաճակատում ծավալվում էին ողջ թափով: Դեռ 1920 թ. հոկտեմբերի 2-ին **գեներալ Հախվերդյանը** Երևանից հեռագրում է Թիֆլիս՝ Քիչմիչյանին, հաղորդելով այն մասին, որ Սարիգամիչից ետ քաշվելուց հետո Կարսի մարզում բոլոր գործերը կենտրոնացած են Նոր-Աելիմի և Բեզլի Ահմեդի դիրքերի մոտ, միաժամանակ հայտնում, որ թուրքերը ձգտել են իրականացնել մասնակի հարձակում՝ շրջանցելով հայկական աջ թևը, սակայն ետ են մղվել: Հախվերդյանը հայտնում էր, որ թուրքերը սեպտեմբերի 30-ի գիշերը գրավել են Արդահանը և շարժվել Չաղիր, այն ժամանակ, երբ Արդահանի հյուսիսային մասում էլ գտնվում են վրացական զորքերը: Հախվերդյանը հայտնում էր, որ իրենց կողմից հաշվի են առնված հարձակման կանխման միջոցները, հրահանգելով արձակուրդ մեկնածներին ետ կանչել իրենց գործառնելու, իսկ գործուղվածներին՝ կախված հանձնարարությունների կարևորությունից՝ թուլյատրել մնալ, միաժամանակ խնդրելով ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ հեռագրակապի 7 օր ընդհատումը՝ ակնհայտորեն ամենամահաբեր ժամանակ, հավանաբար սարքվել է հակառակորդի գործակալների կողմից «Ձեզոք գոտում»⁷⁰⁴: Հոկտեմբերի 5-ի գեկուցագրում, հենվելով գործակալական տվյալների վրա, Քիչմիչյանը ՀՀ գործերի հրամանատարի շտաբի պետին հայտնում էր թշնամու մտադրություն մասին պայթեցնելու Շահալիի կամուրջը և Ջաջուռի թունելը⁷⁰⁵:

Այս ժամանակահատվածն արդեն Հայաստանի Հանրապետության գոյապայքարի այն վճռական պահն էր, երբ ստեղծված ռազմաքաղաքական կացությունում հայկական բանակը դժվարություններ էր դիմակայում թուրքական ավելի լավ զինված, ռեսուրսներով անհամեմատ ավելի հարուստ բա-

⁷⁰¹ Նույն տեղում:

⁷⁰² Նույն տեղում, ք. 113:

⁷⁰³ Նույն տեղում, ք. 111:

⁷⁰⁴ Նույն տեղում, ք. 125:

⁷⁰⁵ Նույն տեղում, ք. 117:

նակին, զգացվում էր սպաների, զենքի ու զինամթերքի մեծ կարիք, զինվորական կազմը համալրման հարցում մեծ բարդություններ ուներ: Ստեղծված արտակարգ իրավիճակը հարկադրեց նույնիսկ ՀՀ հետախուզական ծառայությունից սպաներին վճռական որոշում կայացնել (հասկանալի է, որ դա հարցի լուծումն էր, և այնուամենայնիվ՝ Վ. Վ.) իրենց գործուղել ռազմաճակատ, ուր նրանք ուզում էին գործող զորքերի կազմում կռվել թուրքերի դեմ: Այն բխում էր ստեղծված իրավիճակի հուսահատականությունից, որին լուծումն էր չտրվեց, որովհետև անգամ այդ իրավիճակում Զինվորական նախարարը իր համաձայնությունը չտվեց հետախուզության լավագույն սպաներին ուղարկել ռազմաճակատ, ավելի կարևոր համարելով նրանց թողնել այնտեղ, որտեղ նրանք կային: Եվ այնուամենայնիվ, 1920 թ. հոկտեմբերի 7-ին գեներալ Քիչմիշյանը Զինվորական նախարարին ուղղված հեռագրում (N 307) հայտնում էր, որ իրեն վստահված վարչության սպաները՝ պորուչիկ Եղիազարովը, Նանասովը, Ումիկյանը, Բաղդասարովը և զինվորներ Գապարյանցը, Փահլավունին, Աբուլյանցը և կամավոր վարորդ Դավիթովը իրեն են հանձնել անձնագրերը և զեկուցագրեր՝ խնդրանքով՝ իրենց ժամանակավորապես ուղարկել գործող բանակ: Զեկուցելով այդ մասին, Քիչմիշյանը ևս խնդրում էր իրեն գործուղել բանակի հրամանատարի տրամադրության տակ, իսկ վարչության գործերը ժամանակավորապես հանձնել ղեկանադիտական ներկայացուցչության տնօրինությանը⁷⁰⁶: Սակայն Զինվորական նախարարն ըստ էության այս քայլի հետ էլ չհամաձայնեց, հարցին միայն մասնակի լուծում տրվեց, որովհետև վերջին հաշվով դեռ հույսերը չէին մարել, ինչ-ինչ հույսեր դեռ պահպանվում էին, քանի դեռ հանրապետությունը մաքառում էր գոյատևման համար, իսկ հոգեբանական պահը շատ վճռական էր: Հետախուզությունը, որ կանգնած էր լուծարման եզրին, շարունակեց իր գոյությունը և գործունեությունը, ձեռք բերելով արժեքավոր տեղեկատվություն, որի օգտակարությունը գործակիցը՝ ոչ իր մեղքով, մեծ էր: Շուտով Հայաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքը արժեքավոր տեղեկություններ ստացավ Կարմիր խորհրդային զորքերի նոր ակտիվացման մասին ազդեցունա-հայկական սահմանագծում, որն էլ ավելի խճճեց իրավիճակը, ցայտնոտային իրավիճակ առաջ բերեց, որի պայմաններում կողմնորոշվելը դարձավ խրթին գործ: 1920 թ. հոկտեմբերի 14-ի հեռագրով (N 403/с) Քիչմիշյանը ՀՀ հետախուզական բաժանմունքի պետին հայտնում էր, որ խորհրդային 28-րդ դիվիզիան բեռնաթափվում է Եվլախ կայարանում, միաժամանակ նշելով, որ Բաքվում զինվորական շրջաններում ուժեղ կերպով լուրեր են տարածվում, որ 1-ին սովետական բանակը թուրքեստանից տեղափոխվում է Արբբեջան, ընդ որում իբր թե արդեն պահանջվել են նավեր՝ Կրասնովոդսկում, նշելով, որ որոշ

⁷⁰⁶ Նույն տեղում, թ. 118, 120:

աղբյուրների համաձայն, Հյուսիսային Կովկասից Ադրբեջան է տեղափոխվում ոչ թե 9-րդ, այլ 8-րդ բանակը, որը գտնվում էր Գրոզնու շրջանում⁷⁰⁷: Հոկտեմբերի 16-ին Քիչմիչյանը Երևան է ուղարկում մի ամփոփագիր (N 409), որում նշվում էր Ադրբեջանում խորհրդային զորքերի տեղաբաշխման, նրանց թվաքանակի մասին՝ հոկտեմբերի 1-ի դրությամբ: Այսպես, ամփոփագրում արձանագրված էր, որ 1) Ղազախում են գտնվում 60-րդ բրիգադը (2 հեծյալ գունդ), 1 սակրավորական վաշտ, 1 վաշտ մոտոցիկլավարներ, 2 հեծյալ-լեռնային մարտկոցներ և 20-րդ հրետանային բրիգադը, 2) Ադստաֆայում՝ հատուկ բաժնի վաշտը, 3) Ելիզավետպոլում՝ 20-րդ դիվիզիայի 58-րդ և 59-րդ բրիգադները, դիվիզիայի շտաբը, ձևավորվող պահակային գունդը, ինչպես նաև քաղաքում են գտնվում 4 անրոպյան, 2 ինժեներական վաշտ, 2 հեծյալ-լեռնային մարտկոց, 1 ավտոմոբիլային վաշտ, համբարակային 20-րդ դիվիզիոնը: Նշվում էր, որ Ելենդորֆում, Զուռնաբաղում են գտնվում 2 հեծյալ բրիգադներ և այլն, ինչպես նաև 32-րդ դիվիզիայի 1 գումարտակ՝ բաղկացած 2000 մարդուց, կից ունենալով 4 զրահամեքենա, 4) Եվլախում՝ 2 անրոպյան, 28-րդ դիվիզիայի 2 վաշտ, 28-րդ դիվիզիայի որոշ զորամասեր գտնվում են Բարդայում, Խանքենդում, Աղբամում, Տերտերում, Շուշիում և Գերյուսիում (Գորիս): Հայտնվում էր, որ վաշտերն ունեն 50-ից մինչև 100 մարդ: Տեղեկատվություն էր տրվում 3 հեծյալ բրիգադների (ամեն գնդում՝ 1000 մարդ), 2 հեծյալ-լեռնային մարտկոցների, 1 բրիգադի մասին: Նշվում էր, որ 28-րդ դիվիզիայի շտաբը գտնվում է Աղբամում, ավելացնելով նաև, որ Եվլախի կամուրջը պահպանվում է գնդացրային դասակի միջոցով, տեղեկացնելով նաև, որ 1) Նուխիում է գտնվում հեծյալ կորպուսի շտաբը, 18-րդ հեծյալ դիվիզիան, 7-րդ հեծյալ դիվիզիան օգոստոսի 22-ին մեկնել էր Կովկասյան ճակատ, 2) Բաքվում՝ 11-րդ բանակի շտաբը, գեներթային մարտկոցը (4 թնդանոթ), 32-րդ հրաձգային դիվիզիայի շտաբը, 3 հեծյալ գնդեր (յուրաքանչյուրում հաշվվում էին 300-ից 800 մարդ), 32-րդ հրետանային բրիգադը, 3) Ապշերոնի թերակղզում՝ 2 հեծյալ գնդեր՝ կազմված կարմիր ասկարներից⁷⁰⁸: Ստանալով այս փաստերը, Երևանում դրանք միանշանակ չէին ընդունում, երբեմն էլ տարբեր աղբյուրներով ու միջոցներով դրանք վերստուգվում էին, կամ էլ թիֆլիսի գինվորական կցորդ Քիչմիչյանից պահանջում էին ճշգրտել ուղարկված տեղեկատվություն մեջ պարունակվող գանազան փաստեր: 1920 թ. հոկտեմբերի 18-ին Քիչմիչյանին Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Պրիտոմանովի և հետախուզական բաժնի պետի պաշտոնակատար պողպորուչիկ Մ. Դոդուխյանի ստորագրությամբ հեռագիր է ուղարկվում (N P 0924), որում հենվելով փախստականների և լրտեսների հարցաքննությամբ ձեռք բերված փաստերի վրա, հաստատվում էր, որ 28-րդ դիվիզիան ի սկզբանե գտնվելիս է եղել

⁷⁰⁷ Նույն տեղում, ք. 124:

⁷⁰⁸ Նույն տեղում, ք. 127:

Զանգեզուրում, ուր և կանգնած էր մինչ այդ: Նկատի ունենալով այս վերջին հանգամանքը, Երևանից Թիֆլիսի իրենց գործընկերներից Պրիտոմանովը և Դոդոխյանը խնդրում էին ուշադրություն դարձնել գործակալական ցանցի միջոցով հաղորդվող տեղեկությունների ճշգրտություն վրա⁷⁰⁹: Չնայած այս խնդիրներին, և երբեմն էլ, ոչ միշտ արդյունավետ աշխատանքին, հետախուզական ծառայությունը Վրաստանում չէր հուսահատվում: Դատելով փաստաթղթերի վերլուծությունից, հայ հետախուզյունքը շարունակել են նույնիսկ 1920 թ. նոյեմբերի տաղնապալի, սկսվող ռազմաքաղաքական փլուզման, խորհրդա-քեմալական գործերի ակտիվացման պայմաններում աշխատել, և համառորեն պայքարել պահպանել իրենց դեմքն ու արժանապատվությունը, պրոֆեսիոնալ պատիվն ու ձգտումը ձախողելու թշնամական մեքենայությունները՝ ձեռք բերելով արժեքավոր և անհրաժեշտ տեղեկություններ տարածաշրջանում իշխող իրավիճակի մասին:

Գեներալ Քիչմիշյանի կողմից 1920 թ. հոկտեմբերի կեսերին Զինվորական նախարարին ուղարկված մի այլ հեռագրի (N 410) մեջ տվյալներ են բերվում շէ սահմանների շուրջ թե՛ թուրքական և թե՛ բուլղարական ռազմական ուժերի տեղաբաշխման ու թվաքանակի մասին, որոնք դարձյալ հենված էին վրացական աղբյուրների վրա, հենց այդ պատճառով էլ դրանց հարկավոր էր որոշ վերապահումներով մոտենալ: Եվ այնուամենայնիվ, Քիչմիշյանը դրանում հայտնում էր, որ 9-րդ թուրքական դիվիզիան կենտրոնանում է Մերդենեկի շրջանում, ուր հայտնաբերվել է 3 հազար սվին կանոնավոր բանակի զորամաս, որի հետ միասին Տաճկաստանից տեղափոխվել է վերջինիս շտաբը: Հայտնվում էր նաև, որ Աղստաֆայում տեղաբաշխված է բուլղարիկների 6 էլեոն⁷¹⁰: Զինվորական նախարարին ուղարկված հոկտեմբերի 21-ի հեռագրում (N 412) Քիչմիշյանը հայտնում էր, որ Ղազախի շրջանում են գտնվում 1-ին դիվիզիայի 2-րդ բրիգադը, 2 հեծելազորային գնդեր, սակրավորների գումարտակը, մոտոցիկլավարների դասակը, Հայաստանի սահմանի վրա՝ 600 սվին և լեռնային-հեծյալ դիվիզիոնը, հրետանին, իսկ Գյանջայում՝ 12-րդ դիվիզիայի 1-ին և 3-րդ բրիգադները հրետանու հետ միասին⁷¹¹: 1920 թ. հոկտեմբերի 23-ին Քիչմիշյանը շէ Զինվորական նախարարին ուղարկված գեկուցագրում (N 415) նոր տվյալներ է հաղորդում բուլղարական գործերի տեղաբաշխման մասին պարսկական ճակատում և Աղբբեջանում⁷¹²: Հետագա հետախուզական ամփոփագրերը, որոնք վերաբերում են հոկտեմբերի երկրորդ տասնամյակին և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, վկայում են բուլղարիկների ուժերի աշխուժացման մասին Հայաստանի սահմանների շուրջ, նրանց կողմից նախապատրաստվող և իրակա-

⁷⁰⁹ Նույն տեղում, թ. 133:

⁷¹⁰ Նույն տեղում, թ. 128:

⁷¹¹ Նույն տեղում, թ. 129:

⁷¹² Նույն տեղում, թ. 130:

նացվող ռազմաքաղաքական գործողությունների մասին: 1920 թ. հոկտեմբերի 25-ի տեղեկագրում Քիչմիշյանը հետաքրքիր տվյալներ էր ներկայացնում հայկական բանակի վերաբերյալ, որոնք ձեռք էին բերվել Բաթումի խորհրդային ներկայացուցիչ Ջվերևի տրամադրություն տակ գտնվող փաստաթղթերի ցուցակից: Դրանում Կարմիր բանակի բարձրաստիճան սպայի կողմից արված են հետաքրքիր եզրահանգումներ, որոնք հնարավորություն են տալիս ավելի ամբողջական, դինամիկ պատկերացում կազմելու հայկական բանակի, նրա թվաքանակի, մարտական կարողությունների, հրամանատարական կազմի և այլնի մասին: Դրանում նշվում էր, որ հայկական բանակն ունի 5 բրիգադ, որոնք իրենց մեջ ներառում էին 10 հետևակային գնդեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ 1500 մարդ, այդ թվում յուրաքանչյուր գնդում՝ 1000 սվին: Նշվում էր գնդացրային հրամկազմի, հետախուզական հեծյալ անձնակազմի մասին, հաղորդելով նաև Դրոյի շոկատի մասին: Սույն փաստաթղթում նշվում էր նաև, որ Երևանյան գնդի կազմում կար 2000 մարդ, սակայն մասնակցելով Ջանգեզուրի մարտերին, այն կորցրել է մարտիկների մի մասը, որի հետևանքով թվաքանակն իջել է մինչև 800-ի: Տեղեկություններ էին հաղորդվում հատուկ հետևակային և Ալեքսանդրապոլի պահակային գումարտակների և այլնի մասին: Սակայն Քիչմիշյանի հաղորդած տեղեկատվության մեջ առավել հետաքրքրականը հայկական բանակի մասին Ջվերևի կատարած եզրահանգումներն են: Սույն ամփոփագրի ծանոթությունում նշվում էր, որ հայկական հետևակի վատ մարտունակության մասին ընդհանուր կարծիքը հաստատվում է: Ըստ Ջվերևի մոտ առկա վերոնշյալ ամփոփագրի, հայկական բանակի մարտունակությունը էլ ավելի նվազել է ռուսական սպաների հեռացումից հետո (ազգայնացում), իսկ բոլշևիկյան քարոզչության հետ կապված՝ նաև ուժեղացավ դասալքությունը: Միաժամանակ ասվում էր լավագույն զորամասերի մասին, որոնց թվում էին Երևանյան հետևակային գունդը (Դրոյի), 1-ին հետևակային գումարտակը, շեշտելով, որ հեծելազորի մարտունակությունը ցածր է միջինից, բացի եզդիների դիվիզիոնից: Ծանոթության վերջնամասում արձանագրվում էր, որ հրամանատարական կազմը գերազանց է: Ամփոփագիրը ավարտվում էր նշումով, որ քեմալականների հարձակման և զորահավաքի հետ կապված զորքերի քանակը և նրանց տեղաբաշխումը էական փոփոխություններ չեն կրել⁷¹³: ՀՀ ռազմաքաղաքական մեկուսացումը օր օրի խորանում էր, էլ ավելի դժվարացնելով վերջինիս գոյատևումը և պայքարը արտաքին թշնամու դեմ: Տագնապը քաղաքական-գիտնվորական շրջաններում ուժեղանում էր. 1920 թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 12-ին, Կարսի անկման ոչ հեռու նախօրյակին, Հայաստանի զորքերի Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի՝ պորուչիկ Դոբոխյանի ստորագրությամբ հեռագիր (N 951) է

⁷¹³ Նույն տեղում, թ. 131:

ուղարկվում Բիշմիշյանին, որում Զինվորական նախարարի անունից խնդրվում էր տեղեկացնել Վրաստանի կառավարությունը, որ Ղազախստան՝ ղեկավար բոլշևիկյան շրջաններում լուրեր են պտտվում, որ մոտ ապագայում սպավում է հարձակում Վրաստանի և Հայաստանի վրա, որ իբր թե միայն Կենտրոնից հրամանի են սպասում, և որ սահմանային շրջաններում տեղի է ունենում սովետական զորքերի կենտրոնացում: Նույն բովանդակությամբ հեռագիր (N 426/ C) ուղարկվեց նաև նոյեմբերի 2-ին⁷¹⁴:

Սակայն խուսափել վերջնական փլուզումից՝ չհաջողվեց: Շատ սպաների մեկնումով Թիֆլիսից գործող բանակ, հետախուզությունը զգալի չափով թուլացավ և անգործունյա դարձավ: Դա ցայտուն երևում է Հ. Բիշմիշյանի վերջին գեկուցագրերից մեկից, ուղղված Զինվորական նախարարի օգնականին: 1920 թ. նոյեմբերի 6-ի իր գեկուցագրում (N 424, 441) գեներալ Բիշմիշյանը նշում էր, որ պորուչիկ Բեկզադյանի մեկնումով և պոգպորուչիկ Ումիկյանի գործուղումով հետախուզական ապարատի դրությունը զգալիորեն վատացել է, շեշտելով, որ գործակալները չեն համարձակվում անմիջապես իրեն հաղորդել տեղեկությունները, իսկ ինքն իր տրամադրություն տակ չունի միջնորդներ, որոնց կարող էր լիովին վստահել: Այդ իսկ պատճառով, Բիշմիշյանը պահանջում էր հետախուզության նկատմամբ ամենաուշադիր վերաբերմունք, առավել ևս, որ վրացիների հետ բանակցությունների նպատակով Թիֆլիս է ժամանել քեմալականների գործակալը, ծայրահեղ անհրաժեշտություն է առաջացել նրա նկատմամբ սահմանել մանրագնին դիտարկում գործին նվիրված, վճռական և հավատարիմ մարզկանց միջոցով, որոնք պատրաստ կլինեն ցանկացած միջոց գործադրել անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերման համար: Գեներալ Բիշմիշյանը, շեշտելով Թիֆլիսում հետախուզական գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովման, այն ամրապնդելու կարևորության մասին Հայաստանի համար դժվարին պայմաններում, վերոհիշյալ գեկուցագրի վերջնամասում խնդրում էր կարգադրություն անել Թիֆլիս՝ իր տրամադրության տակ հետախուզության գծով մասնագետի կամ էլ ծայրահեղ ղեկավարում՝ այդ գործին լավ ծանոթ մի սպայի գործուղման մասին, միաժամանակ տեղեկացնելով, որ այդ նպատակի համար պ. դիվանագիտական ներկայացուցիչը խոստացել է դրամ բաց թողնել՝ նվիրաբերված գումարներից⁷¹⁵: Ակնհայտ է Թիֆլիսում ՀՀ զինվորական ներկայացուցչությունը կից գործող հետախուզական վարչությունից ղեկավարի մտահոգությունը՝ Վրաստանում գործակալական ցանցի պահպանման առումով, հետախուզական աշխատանքների արդյունավետության բարձրացման, թշնամական մեքենայություններն ու խարդախությունները ձախողելու ուղղությամբ քայլերի ձեռնարկման անհրաժեշտության մասին:

⁷¹⁴ Նույն տեղում, ք. 132, 134:

⁷¹⁵ Նույն տեղում, ք. 134, 137:

Հետագա իրադարձությունները, և առաջին հերթին՝ 1920 թ. վերջի թուրք-հայկական պատերազմը, ինչպես նաև թուրք-բուլղարիկյան առաջխաղացումը Անդրկովկասում, ազդեցություն ուր աշխարհաքաղաքական ոլորտների և իրողությունների ձևավորումը հանգեցրին հայկական հետախուզություն աշխատանքների վերջնական ձախողմանը, որին հետևեց պետական այդ կարևորագույն ծառայություն կազմալուծումը: Արխիվային փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հետախուզական ծառայությունը Վրաստանում, և մասնավորապես Թիֆլիսում, գործեց մինչև նոյեմբերի վերջերը, ընդհուպ մինչև ՀՀ անկումը՝ պահպանելով արժանապատիվ կեցվածքը և նվիրվածությունը հայ ժողովրդի նվիրական գաղափարներին և ձգտումներին, իր արժանի ներդրումն ունենալով հանրապետության անվտանգության ապահովման այս կամ այն խնդրում: Եղան և հաջողություններ, և սայթաքումներ, սակայն անբարենպաստ իրավիճակը հարկադրեց հայ հետախուզներին 1920 թ. նոյեմբերի վերջերին, դեկտեմբերի սկզբներին դադարեցնել իրենց գործունեությունը Վրաստանում և վերջինիս մայրաքաղաքում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՉԵՌՆԱՐԿԱԾ ԶԱՅԼԵՐԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՄԻԼԻՑԻԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 1918 - 1920 ԹԹ.

ՀՀ միլիցիայի, Ներքին Գործերի նախարարության ուժային ստորաբաժանումների ստեղծումը

Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի կարևոր օղակներից էին միլիցիան և Ներքին Գործերի նախարարության ուժային ստորաբաժանումները, որոնց ստեղծման ու աշխատանքների կազմակերպման ուղղությամբ 1918 -1920 թվականներին որոշակի ջանքեր գործադրվեցին ՀՀ կառավարության և իշխանության այլ մարմինների կողմից: Այդ գործընթացներին ակտիվորեն մասնակցեցին թե՛ Հայաստանի Հանրապետության խորհրդարանը, և թե՛ նախարարների խորհուրդը: Հնարավոր թյուրիմացությունից խուսափելու համար հարկ է հենց սկզբից հստակ արձանագրել, որ սկզբնական, և հատկապես Արամ Մանուկյանի «ղիկատորություն»՝ Ներքին Գործերի նախարար եղած ժամանակահատվածում Ներքին Գործերի նախարարությունն իրենից ներկայացնում էր մի ճյուղավորված համակարգ, որի մեջ մտնում էին և՛ ՆԳՆ-ին հատուկ ուժային ու միլիցիոն կառույցներ, և՛ տարաբնույթ այլ գործառնություններ ու նեցող վարչական հաստատություններ, որոնք իրականացնում էին զեմսովային-քաղաքային, նահանգական ու զավառային կառավարման գործառնություններ: Այդ ամենը ըմբռնելու համար ամենանպատակահարմարը **Ռուբեն Տեր-Մինասյանին** ղեմելն է, որն էլ պարզապես գրում է հետևյալը (ինչն ընդհանուր առմամբ, կարելի է ընդունել որպես հիմք). «Ներքին Գործոց նախարարությունը, այնպէս ինչպէս Արամի ժամանակը կը ներկայանար՝ նրանից յետոյ մինչև Հանրապետութեան անկումը այլեւս գոյութիւն չունեցաւ: Արամի մահուանից յետոյ Ներքին գործոց նախարարութիւնը մեռաւ եւ դարձաւ մի պարզ վարչութիւն:

Հայաստանի Հանրապետության ստեղծումից առաջ, Արամը Երեւանի նահանգի ղեկավարներն էր ընտրուած եւ յանձինս նրան՝ փաստական Հայկական իշխանութիւն էր ստեղծուած դեռ 1917-ից: 1918-ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան՝ Քաջազնունու դահլիճն էր կազմված, փաստօրէն կառավարութիւնը մնում էր Արամը, թէեւ նա ներքին գործոց նախարար էր միայն: Նրա ձեռքն էին, այն ժամանակները, ե՛ւ լուսաւորութեան, ե՛ւ Խնամատարութեան, Պարենավորման ե՛ւ Հաղորդակցութեան բաժինները, որոնք հետագային բաժանուեցին առանձին նախարարութիւնների: Բայց էականը գործերի բարդութիւնը չէր, այլ նրանց ուղղութիւնը: Արամի ժամանակ, Ներքին գործոց նախարարութիւն ասելով պետք էր հասկանալ պետութեան Ֆիզիքական ոյժը եւ կառավարական վարչամեքենան, մարմնացումը պէտական եւ կուսակցական բարոյական հասկացողութեանց, օրենքների գործադրման եւ պարտադրման միակ խողովակն ու միջոցը, կեդրոնը, որտեղ ամփոփում էին Հայաստանը կազմակերպելու բոլոր ձգտումներն ու ճիգերը: Արամի ատեն, Ներքին գործոց նախարարութիւնը կը ներկայացնէր ամէն ինչ»⁷¹⁶: Այդուհանդերձ, այդ ճյուղավորված համակարգի շրջանակներում էլ կատարվում են առաջին քայլերը միլիցիա և ՆԳՆ համակարգին հատուկ ուժային մյուս մարմինների կազմակերպելու ուղղությամբ, և ամեն դեպքում, ինչպէս այդ մասին գրում է Ռ. Հովհաննիսյանը, Արամ Մանուկյանի ՆԳՆ-ն մնում էր որպէս ՀՀ կաբինետի «անկյունաքարը»՝ մինչև դրա մի շարք դեպարտամենտների, առանձին մինիստրութիւնների վերածվելը 1919 թ. կեսերին⁷¹⁷: Եվ որպէսզի այն դառնար լիարժեք ու գործուն օրգանիզմ, որի արգասաբեր գործունեութիւնից էր կախված երկրի ներքին անվտանգութեան ապահովումը և բարօրութիւնը, Առաջին Հանրապետութեան ՆԳ նախարարներից մեկը՝ **Աբրահամ Գյուլիանդանյանը**, կարծես թէ ի մի բերելով որոշակի մի փորձ, եզրահանգում է. «Իմ ցանկութիւն էր այդ կենտրոնական օրգանը (Վարչութիւն և Միլիցիայի բաժին) դնել այնպիսի պայմանների մեջ, որ համարեա ամբողջ Դիւանը բաղկացած լինէր համալսարանական կրթութեամբ մարդկանցից, որպէս զի ապագայում նրանցից մշակուէին երկրի վարիչներ: Այդ որոշ չափով կծառայեր նրանց իբր եւ վարչական մի վարժութիւն, որը փորձառութիւն կտար նրանց»⁷¹⁸:

Առաջին իսկ քայլերն արվում են արդեն 1918 թ. երկրորդ կեսին, երբ իրավիճակը Հայաստանում ու նրա շուրջ դեռ բավականաչափ խճճված էր և լի անորոշութեամբ: Եվ չնայած այդ հանգամանքին, 1918 թ. նոյեմբերի 18-ին Նախարարների խորհուրդը լսելով Զինվորական նախարարի զեկուցումը Անդրսեանյան (Գոկչայի շրջան) գորական միլիցիա կազմակերպելու մասին,

⁷¹⁶ **Ռուրիկ**, Հայ Յեղափոխակնի մը յիշատակները, Է հատոր, Գ հրատ., էջ 312:

⁷¹⁷ **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, էջ 47- 49, 159; **R. G. Hovannisian**, The republic of Armenia, vol. II, p. 287:

⁷¹⁸ **ՀԱՍ**, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 523, մաս I, ք. 95, 95 հսկ.:

որոշում է զեկուցումը հաստատել և ուղարկել ՀՀ պառլամենտի զորական հանձնաժողովին ի հաստատումն⁷¹⁹, 1918 թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ խորհուրդը ընդունում է օրենք՝ զինվորական միլիցիա կազմակերպելու մասին: Տվյալ հարցի վերաբերյալ հաստատված փաստաթղթում ասվում էր. «Դիլիջանի շրջանի արևելյան մասի անվտանգությունը ապահովելու համար կազմակերպել առանձին զորական միլիցիա՝ Զինվորական մինիստրի իշխանություն տակ. 2) զինվորական միլիցիայի պահուստի համար մինչև 1919 թվականի հունվարի 1-ը բանալ վարկ Զինվորական մինիստրի անունով՝ 96.406 ռուբլի 40 կոպեկ»⁷²⁰, իսկ 1920 թ. Նախարարների խորհրդի փետրվարի 10-ի նիստը, լսելով Ն.Գ.Ն. զեկուցումը Դիլիջանի շրջանում 100 հոգուց բաղկացած սահմանապահ ձիավոր զորամաս կազմակերպելու համար մոտ 4,5 միլիոն ռուբլի հատկացնելու մասին, հավանություն է տալիս, խնդրելով միայն համաձայնություն գալ Ֆինանսների հարցի շուրջ⁷²¹:

Անհրաժեշտ քայլեր են արվում նաև ՀՀ քաղաքներում և տարբեր գավառամասերում անվտանգության համակարգի այդ կարևոր օղակները ձևավորելու և դրանց աշխատանքներին նպատակասլացություն հաղորդելու ուղղությամբ: Այսպես, դեռ 1918 թ. դեկտեմբերի 19-ի նիստում ՀՀ Նախարարների խորհուրդը լսում է Ներքին Գործերի նախարարի գրություն մասին, որով ներկայացվում էր Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության ներկայացուցիչների դիմումագիրը՝ Ալեքսանդրապոլում քաղաքային միլիցիա կազմակերպելու և նրա պահպանություն ամբողջ ծախսերը պետություն հաշվին անելու մասին՝ ի նկատի ունենալով քաղաքի նյութական վիճակը⁷²²:

1918 թվականի երկրորդ կեսին անհրաժեշտ հաջորդ քայլերն են արվում այդ ուղղությամբ, որին ակտիվորեն փորձում են մասնակցել պետական երկու կարևորագույն կառույցներ՝ ՀՀ խորհրդարանը և Նախարարների խորհուրդը: Հարկ է ասել, որոշ սահմանամերձ շրջաններում հայկական միլիցիան կազմակերպվում էր բացի քաղաքացիական մասից, այլ նաև զինվորական կացությունը և սկզբունքները հաշվառելով: Սույն հարցի կապակցությամբ Նախարարների խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ քաղաքային միլիցիայի ծախսերն ըստ օրենքի հոգալու են իրենք՝ քաղաքները, իսկ միջոցների պակասությունը պետությունը օգնություն է գալիս քաղաքներին, իր վրա վերցնելով ծախսերի մի մասը, սակայն ոչ ամբողջը: Ընդ որում Նախարարների խորհուրդը նշում է, որ այդպիսի օգնություն ցուցաբերելու համար կառավարությունը պետք է ունենա քաղաքային դու-

⁷¹⁹ Նույն տեղում, գ. 13, ք. 87, 91:

⁷²⁰ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 1249, ք. 54: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, Երևան, ՀՀ ազգային ժողով, ՀՀ Պատմ. Կենտր. Պատմ. Արխիվ, 1998, էջ 25:

⁷²¹ ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 491, ք. 304:

⁷²² Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, ք. 32:

մայի համապատասխան որոշումը և տեղյակ լինի քաղաքի Ֆինանսական դրուժյանը, ուստի որոշվում է. ա) առկա գրուժյունը վերադարձնել, թողնելով, որ Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը նոր դիմում ներկայացնի կառավարությանը, եթե քաղաքային դուստն այդ հարկ համարի և համապատասխան որոշում ընդունի, բ) եթե այդպիսի դիմում լինի, Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությանը տալ միլիցիա պահելու համար պետական գանձարանից նպաստ՝ երկու ամսվա ծախսերի (հունվար-փետրվար) չափով, պայմանով, որ ըստ նախահաշվի ծրագրվի 200 միլիցիոներների թվի կրճատումը մինչև 150 հոգի, և որ միաժամանակ ներկայացվի կառավարությանը քաղաքային նախահաշիվը, գ) միլիցիայի աշխատանքը թեթևացնելու համար խորհուրդ տալ քաղաքային ինքնավարությանը խնդրքով դիմել տեղական զինվորական հրամանատարությանը՝ քաղաքի պահակային ծառայությունը զինվորների միջոցով կատարելու համար⁷²³:

Հետագա գործընթացներում շարունակվեցին որոնումները միլիցիան պետական անվտանգության համակարգի քիչ թե շատ լիարժեք ու ավարտուն օղակ դարձնելու ուղղությամբ, այն նպատակամղելով Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականության տարաբնույթ խնդիրների լուծմանը: Հայկական միլիցիայի պատմության լիարժեք լուսաբանման տեսանկյունից կարևոր է ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված յուրաքանչյուր քայլի վերլուծություն, ամեն մի առաջին հայացքից անկարևոր թվացող փաստ: Միլիցիայի մարմիններ ստեղծելու նպատակադրում կար նաև Հայաստանի նորաստեղծ հանրապետությանը միացվող այս կամ այն պատճառով անցնող տարածքներում, որոնք Դաշնակիցների Գերագույն մարմինների որոշմամբ պետք է դառնային ձևավորման գործընթացներ ապրող և ընդարձակվող Հայաստանի նորաստեղծ հանրապետության բաղկացուցիչ մասը: Այսպես, 1919 թ. հունվարի 10-ին Նախարարների խորհրդի նիստը լսում է Արտաքին Գործերի նախարարի գեկուցումը դաշնակից երկրների ռազմաքաղաքական ներկայացուցիչների հետ դեպի Ալեքսանդրապոլ կատարած ուղևորության և արևմտյան Անդրկովկասի անգլիական ներկայացուցիչ գեներալ **Ջ. Թ. Յորեստյեր-Ուոքերի** (1866 - 1939 թթ.) հետ Կարսի նահանգը ժամանակավորապես Հայաստանին միացնելու վերաբերյալ կայացրած գրավոր համաձայնության մասին, ըստ որի ի թիվս մի շարք այլ հիմնախնդիրների, Հայաստանին նոր անցնող տարածքներում ենթադրվում էր ստեղծել նաև տեղական քաղաքացիական վարչություն և կազմակերպել միլիցիայի մարմիններ: Ընդունված որոշման մեջ Ներքին Գործերի նախարարին հանձնարարվեց սկզբի համար նշանակել միայն քաղաքացիական մասի բարձր պաշտոնեությունը, այսինքն՝ նահանգային կոմիսարին և նրա օգնականներին, վերջիններիս թողնելով նրանց զավառամասերի և գյուղական

⁷²³ Նույն տեղում:

վարչության կազմակերպումը: Այս հարցի կապակցութեամբ ընդունված որոշման մեջ հանձնարարվեց Ներքին Գործերի նախարարի պաշտոնակատար **Ալ. Խատիսյանին** իսկույն կեթ անձամբ գնալ Ալեքսանդրապոլ և պայմանավորվածութիւն ձեռք բերել Կարսի հանձնման հետ կապված բոլոր խնդիրներն անմիջապէս կարգավորելու համար, և այդ թվում որոշել ա) Կարսի նահանգում քաղաքացիական վարչութիւն և միլիցիայի մարմիններ ու ժանդարմերի կազմակերպելու մասին, բ) Կարսի նահանգում ժանդարմերի ու միլիցիա կազմակերպելու համար հանձնարարել Զինվորական նախարարին Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գործառններից հատկացնել անհրաժեշտ մարդկանց քանակը, տալով նաև վերջինիս պետական պահեստներից հարկավոր հանդերձանք, զենք և ուղարկել պատշաճ սպայական կազմով Կարսի նահանգ, դնել կազմակերպված քաղաքացիական վարչության տրամադրութեան տակ՝ միլիցիոներական և ժանդարմերիական պարտականութիւններ կատարելու և այլն⁷²⁴: Ավելին, շուտով հաջորդում է սույն հուլիսի կարևոր պետական խնդրի լուծմանը նպատակաուղղված մեկ այլ որոշում ևս: 1919 թ. հունվարի 14-ին ՀՀ կառավարութիւնը ընդունեց Կարսի նահանգը հանրապետութեանը միացնելու մասին որոշումը: Ներքին Գործերի նախարարի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի կարգադրութեամբ կազմակերպվեց նաև ոչ միայն, «ա» նահանգի և շրջանների քաղաքացիական վարչութիւն, բ) այլև նահանգի և շրջանների միլիցիա և ժանդարմերիա 400 հոգուց՝ համապատասխան սպայական կազմով»⁷²⁵: Հունվարի 16-ին Հայաստանի հանրապետութեան կառավարութիւնը ընդունեց Կարսի նահանգում քաղաքացիական իշխանութիւն հաստատելու մասին որոշումը: Կարսի քաղաքացիական իշխանութիւնը կազմված էր 41 պաշտոնյայից: Պետ նշանակվեց **Ստ. Ղորղանյանը**, իսկ ընդհանուր ոստիկանութեան պետ՝ Ծահբազյանը: 1919 թ. հունվարի 17-ին **Ալ. Խատիսյանը** Հայաստանի խորհրդում հայտնեց, որ հունվարի 25-ին Կարսը հանձնելու են Հայաստանին, և իշխանութիւնը պատրաստ է ընդունել այն. «Մենք վճռել ենք մտցնել 2 էսկադրոն զինուորութիւն ընտիր մասերից և 400 պահակ իբրև միլիցիա՝ յոյս ենք տուիլ, որ ոչ մի անպատասխանատու խումբ մուտք չպիտի ունենայ Կարսի նահանգը, թէև դրութիւնը բաւական լարված է, բայց կամայ-կամայ լաւանում է»⁷²⁶:

Ակնհայտ է, որ կենտրոնական իշխանութիւնները այս և այլ քայլերով, ձեռնարկված միջոցառումներով ձգտում էին կոնկրետացնել միլիցիայի կազմակերպման հարցը ինչպէս կենտրոնում, այնպէս էլ տեղերում: ՀՀ Կառավարութեան քաղաքական գործունեութիւնը նպատակաուղղված էր ողջ երկրով մեկ ՆԳՆ ճյուղավորված համակարգի ստեղծմանը: Միլիցիայի և

⁷²⁴ ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 6, 9:

⁷²⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ. (քաղաքական պատմութիւն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 84:

⁷²⁶ ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, ք. 71:

Ն ԳՆ մարմինների ստեղծման ու կազմակերպման պատմութան տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև միլիցիայի հաստիքակազմը հանրապետության որոշ կարևոր քաղաքների օրինակով: 1920 թ. կեսերի վիճակով Կարսի քաղաքացիական միլիցիան ուներ 176 հոգիանոց կազմ, այդ թվում ձիավոր կրտսեր միլիցիոներների թիվը կազմում էր 10, հետևակ ավազ միլիցիոներներին՝ 15, հետևակ կրտսեր միլիցիոներներին՝ 126 հոգի, իսկ նույն քաղաքի քրեական միլիցիան ուներ 28 հոգիանոց կազմ⁷²⁷: Կարսի շրջանում միլիցիա կազմակերպելու մասին վերն ասվածը լրացնելու և ամբողջացնելու տեսանկյունից հարկ է նաև նշել, որ 1920 թ. փետրվարի 10-ին Նախարարների խորհուրդը նիստ հրավիրեց, որում որոշում ընդունվեց՝ հենվելով Ներքին Գործերի նախարարի գեկուցադրի վրա՝ Կարսի նահանգի հայ-վրացական սահմանազծում սահմանապահակ կազմակերպելու անհրաժեշտություն մասին: Նիստը ընդունված որոշումով գործին ընթացք տվեց⁷²⁸, վերը նշված սահմանապահակի վրա դնելով նաև յուրահատուկ միլիցիոներական պարտականություններ: Այդ նույն ժամանակ հանրապետության գլխավոր քաղաքը՝ Երևանը, ուներ 329 հոգիանոց միլիցիակազմ, որից հետախույզ միլիցիոներներ էին 25-ը, հետևակ պահակային ծառայություն կրտսեր միլիցիոներներ՝ 230-ը, ձիավոր կրտսեր միլիցիոներներ՝ 10 և այլն⁷²⁹:

Ներքին Գործերի նախարարության և նրան ծառայող օժանդակ մասի մարդկանց թիվը կազմում էր 13, որից 2-ը՝ Ն ԳՆ նախարարի օգնականներ էին, իսկ Ներքին Գործերի ղեկարտամենտում աշխատում էր 25 մարդ⁷³⁰: Միլիցիայի հաստիքակազմի, գանազան այլ մանրամասների ուսումնասիրությունը ևս հետաքրքիր է, քանզի դրանցից պարզ է դառնում, որ ՀՀ Ն ԳՆ-ն ձգտել է ունենալ և ստեղծել այդ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան Ն ԳՆ բոլոր տեսակի կառույցները և անգամ փորձել կազմակերպելու միլիցիոներների ուսուցում:

Դժվարին 1918 -1920 թվականներին հայկական պետությունը ձգտելով լիարժեքորեն և անվերապահորեն կայանալ, փորձում էր իր դիրքերն ամրապնդել ոչ միայն Երևանում, Ալեքսանդրապոլում և այլուր, այլև անկայուն, թշնամիներով շրջապատված Ղարաբաղում (Արցախ), այնտեղ ևս փորձելով ստեղծել Ներքին Գործերի մարմիններ, միլիցիա: Այդ մասին է վկայում ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. մարտի 4-ի նիստը, որում լավում է Ներքին Գործերի նախարարի գեկուցումը Ղարաբաղի Ջրաբերդի շրջանում միլիցիա և ադմինիստրացիա (վարչակազմ) կազմակերպելու համար 120 հազար ռուբլի վարկ բանալու մասին: Նախարարների խորհրդի այս նիստում որոշ-

⁷²⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 114, ք. 36, 39:

⁷²⁸ Նույն տեղում, գ. 146, ք. 30:

⁷²⁹ Նույն տեղում, ք. 32-33, 38:

⁷³⁰ Նույն տեղում, գ. 114, ք. 14, 16; Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 3, ք. 65-67:

վում է հարցին տալ դրական լուծում՝ բաց թողնելով ներքին Գործերի նախարարությունը 150.000-ական ռուբլի Ղարաբաղի և Զանգեզուրի հայրենակցական միություններին տալու համար՝ այդ շրջաններում միլիցիա և ազմիխիստրացիա կազմակերպելու, ինչպես նաև Ղարաբաղի դպրոցներին 8 միլիոն ռուբլի վարկից գումար հատկացնելով, որը բաց էր թողնված Զինվորական նախարարությունը՝ Ղարաբաղի առանձին բրիգադ կազմակերպելու համար⁷³¹:

Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ստորև բերվող փաստաթուղթը, որի հեղինակը ՀՀ Զինվորական նախարար գեներալ-մայոր **Հ. Հախվերդյանն** է: Այսպես, 1919 թ. հունվարի 28-ով թվագրված ռազմական գերատեսչության գծով հայտնի այդ հրամանագրում, ելնելով հանրապետության կառավարության որոշումից, Զինվորական նախարարը հրամայում էր Զանգեզուրում կազմավորել մեկ երեք գումարտակահոց միլիցիոն գունդ՝ համապատասխան հաստիքակազմով, գնդի ձևավորումը մասամբ իրականացնելով տեղական Զանգեզուրյան զինկազմավորումների հաշվին, սակայն դրա հետ մեկտեղ՝ մեկ գումարտակի չափով գործառնապահ մշտական զորահավաքի վիճակում: Հրամանագրում շեշտվում էր, որ այդ գնդի կազմավորումը պետք է իրականացնել վաղ հասակի զինապարտների հաշվին՝ սկսած 20 տարեկանից և ոչ մեծ՝ մինչև 25 տարեկանը: Հրամանագրի վերջնամասում ընդգծվում էր, որ Զանգեզուրի միլիցիոն գունդը պետք է գտնվի կառավարական կոմիսարի տրամադրության տակ, իսկ այդ գնդի պետ է նշանակվում փոխգնդապետ Կոնդախյանը⁷³²: Այդ նույն օրը ներկայացվեց Միլիցիոն գնդի կազմավորման մասին Կանոնադրությունը, որի տակ կա Հայկական զորքերի գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր **Ա. Դոլուխանյանի** ստորագրությունը: Ըստ այդ կանոնադրության, Միլիցիոն գունդը կազմակերպվում էր կոնկրետ և որոշակի հիմունքների հիման վրա. գնդի հրամանատարը, սպաները, զինվորական չինովնիկները և այլոք իրենց պաշտոնում նշանակվում էին հայկական զորքի կադրային ներուժի կազմից: Զինվորների կադրուժը հավաքագրվում էր տեղերում պահեստի զինվորներից, որոնք հաշվվում էին իսկական զինվորական ծառայության մեջ, շարքայինները՝ տեղական բնակչությունից, սակայն գուտ միլիցիոնների կարգավիճակի իրավունքներով: Ըստ այդ կանոնադրության, միլիցիոն գունդը պետք է ունենար տարածքային կազմակերպվածություն, պետք է գործեր տարածքային սկզբունքին համաձայն, ընդ որում միլիցիոնները պետք է ապրեին իրենց տներում, և սեփական միջոցների հաշվին հոգային իրենց կարիքները, հավաքվեին միայն զինուսուցման և ծառայողական պարտականությունների կատարման համար: Զինհավաքներին չներկայանալու պարագայում, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կա-

⁷³¹ Նույն տեղում, գ. 100 (43), թ. 35:

⁷³² Նույն տեղում, ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, թ. 15:

տարման ժամանակ թույլ տված զանցանքների համար միլիցիոներները պատասխանատվության էին ենթարկվում որպես զինվորականներ: Միլիցիոն գնդի պահուստի ծախսերը արտահայտվում էին սպաների, զինվորական աստիճանավորների և կազրային զինվորների դրամական ռոճիկի, և վերջիններիս պարենավորման ցուցակներում, քանի որ նրանք պետք է մշտապես գտնվեին իրենց պարտականությունների կատարման մեջ և իրենց գյուղերի տարածքից դուրս: Բացի այդ, սույն կարևոր փաստաթղթում արձանագրվում էր, որ միլիցիոներները պետություն կողմից ռոճիկով պետք է ապահովված լինեին նաև այն դեպքում, երբ կատարում են պահակազորի դեր, որի համար պետք է օգտագործվեր գնդի առկա կազրուծի մեկ քառորդից ոչ ավելին: Զինվորական հանդերձանքի պարագայում միլիցիոներները պետք է ունենային սեփականը, փամփուռների հարցում՝ նույնպես: Վերջապես, ըստ ռազմական նախարարություն կողմից հաստատված հաստիքացուցակի, երեք գումարտակներից բաղկացած հայկական միլիցիոն գունդը պետք է ունենար 33 սպա, 2280 զինվոր, ոչ շարային 28 զինվոր, 6 զինվորական չինովնիկ⁷³³: Ավելի ուշ, 1919 թ. մարտի 18-ին հաստատվեց նաև Հայկական 4 վաշտանոց միլիցիոն գումարտակի հաստիքակազմը, ըստ որի սպաների և զինվորական չինովնիկների թիվը պետք է լիներ 22, շարային զինվորների թիվը պետք է կազմեր 712, ոչ շարային զինվորներինը՝ 33 հոգի: Սույն փաստաթղթի տակ կար գեներալ-մայոր Զանկովսկու ստորագրությունը⁷³⁴: Պետություն մեջ միլիցիայի դիրքերի ուժեղացման, և երկրի ազգային-պետական անվտանգություն ապահովման տեսանկյունից կարևոր էր նաև նախարարների խորհրդի 1920 թ. հունիսի 14-ի նիստը, որում լավում է Զինվորական նախարարի գեկուցումը սահմանապահ միլիցիոն գնդերի կազմակերպման մասին: Ընդունված որոշման մեջ խնդիր է դրվում հանձնարարել Ֆինանսների նախարարին Զինվորական նախարարության հետ համատեղ քննարկել այդ հարցը, և դրան գուգահեռաբար արագացնել այդ գնդերի կազմակերպման աշխատանքները⁷³⁵:

Հայկական միլիցիայի քիչ թե շատ ամբողջական պատմության տեսանկյունից որոշակի արժեք է ներկայացնում նաև գորքերի Երևանյան ջոկատի պետ **Դրոյի** կողմից 1919 թ. մարտի 12-ին հրավիրված խորհրդակցություն կողմից ընդունված բանաձևը (հրավիրված էին մի շարք զինվորական այրեր, այդ թվում Հայկական դիվիզիայի պետ գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, գլխավոր շտաբի պետ Միխայիլ Զինկևիչը և ուրիշներ), որում շոշափվում էր նաև միլիցիայի մասին հարցը. այսպես, դրանում նշվեց, որ Ներքին Գործերի նախարարությունը ենթակա ռեզերվային միլիցիոն գունդը գտնվում է կազմավորման գործընթացների մեջ, և դեռևս ունի ընդամենը

⁷³³ Նույն տեղում, ք. 15-17:

⁷³⁴ Նույն տեղում, ք. 38-39:

⁷³⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 591, ք. 167 հալկ.:

300 ավին մարդ, որոնք գտնվում են Իգդիրում⁷³⁶: 1919 թ. մայիսի 24-ի մի այլ ամփոփագրի տվյալներով Հայաստանի զորքերն իրենց կազմում ունեին 1 ռազմամիլիցիոններիական գունդ և 2 ռազմամիլիցիոն գումարտակ⁷³⁷: Ըստ զինվորական գերատեսչութայան կողմից հաստատված հաստիքացուցակի, որի տակ կա Գլխավոր շտաբի գնդապետ Զինկեիչի ստորագրությունը, 2 գումարտականոց ռազմամիլիցիոն գունդը (ներառյալ հրամանատարական, գնդացրային, կապի և հեծյալ-հետախուզական հրամկազմերը) ուներ հետևյալ սպայական հրամկազմը՝ 44 հոգի ռազմական, 36-ը՝ խաղաղ ժամանակաշրջանի համար: Գնդին պատերազմի ժամանակ սպասարկելու էին 3 բժիշկ, իսկ խաղաղ ժամանակ՝ 1-ը: Համապատասխանաբար զինվորների թիվը խաղաղ ժամանակ կազմելու էր 336, որը մեծանալու էր և ռազմական իրագրություն ժամանակ հասնելու էր 1710-ի: Ընդամենը շարային և ոչ շարային զինվորների թիվը խաղաղ ժամանակ կազմելու էր 360 մարդ, իսկ պատերազմի ժամանակ այն հասնելու էր 1846-ի⁷³⁸: Վերջապես, կարևոր նշանակություն տրվեց նաև սահմանային գոտիներում միլիցիայի կազմակերպմանը: Ըստ Զինվորական նախարարությունից Գլխավոր շտաբի պետի տեղեկությունների, որոնք հենված էին Դիլիջանի պառլամենտական հանձնաժողովի եզրակացությունների վրա, 1920 թ. հունվարի 28-ին Ներքին Գործերի նախարարի կողմից Նախարարների խորհուրդ է մտցվել գեկուցագիր՝ 100 հոգիանոց հրամկազմ ունեցող սահմանապահ միլիցիա կազմակերպելու մասին միջնորդագրով հանդերձ⁷³⁹: Սակայն միաժամանակ, այդ ժամանակաշրջանի մի շարք փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ երբեմն էլ փորձելով միլիցիայի կազմակերպման բնագավառում կուտակված հիմնական գործերը լուծել, մասնավորապես որոշ գավառամասերում միլիցիոն զորամասերը լիաթիվ դարձնել, ՆԳՆ և զինվորական իշխանությունները բախվում էին բարդությունների հետ: Այսպես, 4-րդ Առանձին հեծյալ բրիգադի հրամանատար **Սեպուհ** Զինվորական նախարարին ուղղված 1920 թ. ապրիլի 1-ի իր դիմումագրում, նշելով այն մասին, որ Կարսի մարզում **Սմբատի և Իշխանի (Կնյազ)** կողմից կազմավորվում է միլիցիա և ամեն մի միլիցիոներ ստանում է 4200 ռ., դեմ չէր արտահայտվում այդ ծրագրերի իրականացմանը, սակայն հանդես էր գալիս մի շարք սկզբունքային բնույթի առարկումներով: Ասելով այն մասին, որ ինքը ձեռնամուխ է եղել հեծյալ հարյուրյակի կազմակերպմանը և այդ նպատակով մարդիկ է ուղարկել Ալեքսանդրապոլ, սակայն քանզի իր մոտ հերթագրված զինվորացուներից շատերը գայթակղվել են միլիցիայում աշխատելու գաղափարով, նրանք լքել են իր կողմից կազմակերպվող հեծյալ զորամասը, միաժամանակ փաստեր բերելով, որ այդ

⁷³⁶ Նույն տեղում, գ. 27, թ. 147:

⁷³⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, գ. 1, գ. 79, թ. 48:

⁷³⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, գ. 1, գ. 132, թ. 321-322:

⁷³⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, գ.1, գ. 118, մաս II, թ. 136:

միլիցիոն խմբերի մեջ են ընդգրկվել նաև 7-րդ հետևակային գունդը լքած դասալիք զինվորները: Սեպուհը այդ երևույթը արդարացիորեն համարում էր չարիք թե՛ բանակի, և թե՛ միլիցիայի համար: Ասելով, որ ինքը ընդհանրապես դեմ չէ միլիցիայի կազմավորմանը, Սեպուհը միանգամայն անթույլատրելի էր համարում, որ բանակային զորամասերի, այդ թվում իրեն վստահված 7-րդ հետևակային գնդի զինվորները (թվով մոտ 500 հոգի) մտնեն միլիցիայի կազմի մեջ, գտնելով, որ համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում շուտով Հայկական բանակի զորամասերը նկատելիորեն կնոսրանան, և այդ նպատակով Զինվորական նախարարից խնդրում էր շուտափույթ կարգադրուեթյուն անել նշված հարցի լուծման համար: Սույն կարևոր փաստաթղթի վրա կա Զինվորական նախարարի մակագրութունը՝ հասցեագրված Կարսի նահանգապետ Կարո Սասունուն, որում ռազմական նախարարը կարգադրում էր զինվորական հասակ ունեցողներին արգելել մտնել կազմակերպվող միլիցիայի մեջ⁷⁴⁰:

Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի կարևորագույն բաղկացուցիչ օղակը հանդիսացող միլիցիոն զորքերը տեղաբաշխված էին տարածքային-կազմակերպական որոշակի սկզբունքով. 1-ին ռազմամիլիցիոն գունդը գտնվում էր Քարվանսարայում, Դարպաղյազյան միլիցիոն գումարտակը՝ Քելիչքենդում, 2-րդ առանձին հետևակային գումարտակը՝ Ղարանլուղում, և վերջապես՝ Գողթի ռազմամիլիցիոն գումարտակը՝ Դարպաղյազում⁷⁴¹:

Առաջին Հանրապետության տարիներին կառավարության, և մասնավորապես ուժային կառույցների, զինվորական գերատեսչության կողմից ջանքեր գործադրվեցին նաև հաղորդակցության ուղիներում պետական անվտանգության համակարգի անհրաժեշտ ստորաբաժանումներ ունենալու համար, իսկ դա արդեն ենթադրում էր ունենալ միլիցիոն օղակներ այդ բնագավառում ևս, քանզի Հայաստանի Հանրապետության տնտեսական-սոցիալական կյանքի բնականոն վիճակը գրեթե լիովին կախված էր հաղորդակցության ուղիներում տիրող վիճակից: Հայաստանի տարածքում երկաթուղային ճանապարհների, ինչպես նաև ապրանքների պահպանության հարցն էր լրջորեն բարձրացվում ՀՀ Նախարարների խորհրդի նիստում Զինվորական նախարարի 1919 թ. ապրիլի 14-ի զեկույցում: Նշելով այն մասին, որ մի կողմից երկաթգծի կայարանները, որտեղ զորքեր չկան, միանգամայն ապահովագրված չեն ավազակաբարո խմբերի հարձակումներից և կողոպուտներից, իսկ մյուս կողմից՝ նկատի ունենալով ապրանքների օրեցօր ուժեղացող թալանի աստիճանը (ինչպես պետական, այնպես էլ մասնավոր պատկանելիության), միաժամանակ ասվում էր, որ Հաղորդակցության ուղիների նախարարության կողմից հաստատվել է երկաթուղային ճանապարհագծի միլի-

⁷⁴⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 81, ք. 79, 86:

⁷⁴¹ Նույն տեղում, գ. 51, ք. 162:

ցիակազմ, որը սակայն իր փոքրամիավորության և որակապես ոչ ուժեղ կազմի պատճառով լիովին ի վիճակի չէր կարգավորելու այդ գործը: Նախարարների խորհրդում ունեցած իր զեկուլյցում Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը պահանջում էր կամ զգալի չափով ավելացնել երկաթուղային ուղիների միլիցիայի կազմը և վերափոխել այն նոր հիմքերի վրա, կամ էլ այն հիմնովին վերացնել, և ողջ գործի կազմակերպումը հանձնել Զինվորական նախարարությանը՝ կազմավորելով 250 հոգեանոց 2 հեծելավաշտ, որոնք և պետք է տեղաբաշխվեն երկաթգծի բոլոր կայարաններում⁷⁴²: Այս մտահղացումներից շատերը, բնականաբար, կյանքում չեն կենսագործվում հասկանալի պատճառներով, և գլխավորապես աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության հետևանքով, որի շնորհիվ Հայաստանը ներքաշվում է պատերազմի մեջ հարևան Թուրքիայի հետ, և այդ հանգամանքը ձախողում է շատ բան. միաժամանակ, դրանք նաև վկայում են այն պետականատեղծ գործունեության մասին, որ այդ դժվար տարիներին փորձում էր ծավալել Ներքին Գործերի նախարարությանը, որն ամեն մի երկրի համար էլ հանդիսանում է անկյունաքարային նախարարությաններից մեկը:

Հայկական միլիցիայի և Ն Գ Ն ստեղծման պատմության լիարժեքորեն ըմբռնման տեսանկյունից կարևոր է նաև արձանագրել, որ այդ անորոշ տազնապաներով ու բարդություններով լի տարիներին գործի կազմակերպման նկատմամբ անհասկացողության, ոչ բարեխիղճ վերաբերմունքի հետ մեկտեղ եղել են պոզիտիվ բնույթի փորձեր, ինչպես նաև պետականամետ մտածելակերպ ունեցող պետական-քաղաքական, կուսակցական գործիչներ, որոնք լավ էին զգում անվտանգության համակարգի այդ կարևոր մարմինների ստեղծման անհրաժեշտությունը, և հենց դրանք էլ դարձան այդ բնագավառի ուժավորանքը, փորձելով հաղթահարել այն ահուկի դժվարությունները և արգելքները, որ հարուցում էին ժամանակաշրջանը և մարդիկ՝ պետականորեն կարևորագույն այդ գործընթացների առաջ: Հենց այս տեսանկյունից էլ խիստ բնութագրական է **Ա. Գյուլխանդանյանի** հետևյալ տեսակետը. «պետության այս օրգանի նկատմամբ այսպիսի վերաբերմունքը իր կողմից լրիվ հասկանալի է, քանի որ բոլոր պետություններում, ուր իշխում է իրավակարգը, միլիցիան հանդիսանում է այն անկյունաքարը, որի վրա խարսխված է պետության ապահովությունն ու հանգստությունը»⁷⁴³:

1918 -1920 թթ. երկիրն ամենուր կանգնած էր լուրջ խնդիրների առաջ, և կազմակերպչական ահուկի խնդիրներ էին կուտակվել թե կենտրոնում, և թե գավառներում: Այդ մասին է փաստում **Ս. Վրացյանը**. «Երկրի վարչությունը բարելավելու նպատակով, մայիսի 25-ին (1919 թ.) Երևանում գումարվեց գավառապետների անդրանիկ համագումարը ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասյանի նախագահությամբ: Ներկա էին Երևանի գավառա-

⁷⁴² Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 27, ք. 168:

⁷⁴³ Նույն տեղում, գ. 160, ք. 32:

պետ Լ. Ամիրխանյանը, էջմիածնի՝ Սեդրակ Ջալալյանը, Դարապաղյազի՝ Ն. Հակոբյանը, Նոր Բայազետի՝ Բենո Նաչաշյանը, Դիլիջանի՝ Մեսրոպ Սարատիկյանը, Ղարաքիլիսայի՝ Սիգո Տեր-Սարգսյանը, Ալեքսանդրապոլի՝ Թալանյանը, Կարսի նահանգից՝ Սո.Ղորղանյանը, Ջանգեզուրից՝ Նիկ. Հովսեփյանը, Սուրմալուից՝ Հ. Խորհրդի անդամ Յուսուֆ Բեգ Թեմուրյանը (Եզդի): Համագումարին մեջ ընդ մեջ մասնակցեցին նաև Հայ. Խորհրդի ու կառավարության անդամներ, նախարարությանց ներկայացուցիչներ և այլն: Օրակարգի մեջ դրված էին բազմաթիվ հարցեր: Զուտ վարչա-ոստիկանական հարցերից հիշենք. 1. երկրի վարչական սահմանների սրբազրույթյան հարցը, 2. մասնագետ ոստիկանների պատրաստությունը և ոստիկանական դպրոցի բացումը, 3. պաշտոնեություն և ոստիկանություն տնտեսական վիճակի բարելավումը, 4. ոստիկանների համազգեստի խնդիրը»⁷⁴⁴:

Երկրի պետական անվտանգության ընդհանուր համակարգի ձևավորման գործընթացների շրջանակներում միլիցիայի և ՆԳՆ ուժային կառույցների կայացման տեսանկյունից կարևոր էր նաև ՀՀ նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 9-ի նիստը, որը լսում է Ներքին Գործերի նախարարի կողմից ներկայացված օրինագիծը՝ քաղաքային միլիցիան Ներքին Գործերի նախարարությանը հանձնելու մասին (գեկ. 7347, հունիսի 7): Դրանից ելնելով, որոշվում է ի լրումն 1919 թ. մայիսի 8-ի որոշման, հաստատել օրինագիծը՝ համաձայն 1919 թ. հունիսի 5-ի պառլամենտի կողմից հաստատված օրենքի⁷⁴⁵:

Միլիցիայի և Ներքին Գործերի նախարարության ցանկացած օղակի ստեղծման խնդիրներն ամեն մի երկրի ներքին անվտանգության պետական համակարգի կայացման տեսանկյունից կարևորություն են ներկայացնում: Այս իմաստով Հայաստանը բացառություն էլք կազմում, քանզի եթե պետություն էր ուզում դառնալ, ուրեմն պետք է ձգտեր ունենալ վերջինիս հատուկ պետական անվտանգության անհրաժեշտ կառույցներ և հատկանիշներ, հետևաբար նաև աշխատանքներ տաներ կազմակերպելու միլիցիատիպ կառույցների ու զանազան ստորաբաժանումների գործունեությունը, և նոր դարամակարդակ սահմանադեբի ձգտեր: 1918-1920 թթ. իրականության տեսանկյունից միլիցիայի աշխատանքների կազմակերպումը մեծ կարևորություն էր ներկայացնում առաջին հերթին մայրաքաղաքի՝ Երևանի համար, իսկ այդ ճանապարհին կային շատ խոչընդոտներ ու դժվարություններ և դիվալորապես տեխնիկական-ֆինանսական և կադրային-մարդկային բնույթի:

Այս իմաստով Երևանի քաղաքային միլիցիայի կայացման համար կարևոր էր «Երևանի քաղաքային միլիցիան քաղաքային ինքնավարությունից վերցնելու և Ներքին Գործոց Մինիստրությունը հանձնելու մասին» օրեն-

⁷⁴⁴ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 372:

⁷⁴⁵ ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 23, մաս I, ք. 39: Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 1174, ք. 41:

քը: Այդ կապակցութեամբ ընդունված որոշման մեջ ասվում էր, որ «Երևանի քաղաքային միլիցիան 1919 թ. մայիսի 1-ից վերցնել քաղաքային ինքնավարութիւնից և հանձնել Ներքին Գործոց Մինիստրութեանը»: Այս օրենքը հաստատվել էր ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. մայիսի 8-ի նիստում, ըստ Հայաստանի խորհրդի ապրիլի 27-ին ընդունված օրենքի⁷⁴⁶:

Հարցի հանգուցալուծումն իհարկե, այդքան հարթ չի ընթանում, քանի որ Երևանի քաղաքային խորհուրդը կապված տնտեսական-կազմակերպական բնույթի հիմնախնդիրների հետ, այնքան էլ կամեցողութիւն չի դրսևորում այդ անցման հարցում: Այս առումով հետաքրքրութիւն է ներկայացնում Երևանի քաղաքային խորհրդին ներկայացված քաղաքային վարչութեան գեկուցումը միլիցիան ժամանակավորապես Ներքին Գործոց նախարարութեանը հանձնելու մասին (30 մայիսի, 1919 թ.): Այդ գեկուցման մեջ մասնավորապես ասվում էր հետևյալը. «Միլիցիան յանձնելու արժի՞վ բավարար համարելով և եղած թշուրհմանները պարզած, վարչութիւնը առաջարկում է խորհրդի՞ կայացնել հետևյալ որոշումը. Երևանի քաղաքային միլիցիան ժամանակավորապես հանձնվում է Ներքին Գործոց Նախարարութեան հետևյալ պայմաններով. 1) Միլիցիայի ամբողջ ծախսը վերցնում է իր վրա Ներքին Գործոց նախարարութիւնը՝ հաշված մայիսի 15-ից, 2) Միլիցիայի մի կոմիտեոսը 30 միլիցիոներներով ամբողջապես դրվում է քաղաքային վարչութեան անմիջական տրամադրութեան տակ նորա ներքին գործերի և կարիքների համար»⁷⁴⁷:

Այնուհետև փաստաթղթում ընդգծվում էր, որ Երևանի քաղաքային խորհրդի 1919 թ. հունիսի 4-ի հերթական նիստի որոշումն ընդունված է 28 ձայնային կազմով, որը միաձայն որոշեց Քաղաքային վարչութեան վերոնշյալ գեկուցումը հաստատել հետևյալ հավելումով. «Միլիցիան Ներքին Գործերի Մինիստրութիւնից յետ ստանալու ժամանակը որոշում է Քաղաքային խորհուրդը, այն վայրկյանին, երբ մենք կգտնենք, որ քաղաքային ինքնավարութիւնը հնարավորութիւն ունի միլիցիան իր ձեռքում պահել ու կառավարել, միլիցիան անմիջապես պիտի հանձնի քաղաքային ինքնավարութեանը»⁷⁴⁸: Այս ամենի տրամաբանական ավարտը և արդյունքը հանդիսացավ «Երևանի քաղաքային միլիցիան Ներքին Գործերի Մինիստրութեանը հանձնելու մասին» օրենքը, որում մասնավորապես արձանագրվում էր հետևյալը. 1) «Երևանի քաղաքային միլիցիան քաղաքային ինքնավարութիւնից հանձնել ժամանակավորապես Ներքին Գործերի Մինիստրութեանը՝ ցնոր կարգադրութիւն Հայաստանի կառավարութեան, 2) Հիշյալ միլիցիայի պահպանութեան ծախսերը հոգալ Ներքին Գործերի միջոցներից, 3) Ռուսաստանի

⁷⁴⁶ ՀԱԱ, ֆ.Պ - 199, ց. 1, գ. 23, մաս I, ք. 39, ֆ.Պ - 201, ց. 1, գ. 1174, ք. 41, Հայաստանի Հանրապետության պաշտպանության օրենքները, էջ 71:

⁷⁴⁷ ՀԱԱ, ֆ.Պ - 199, ց. 1, գ. 89, ք. 23:

⁷⁴⁸ Նույն տեղում:

տանի ժամանակավոր կառավարութեան գործող կանոնադրութիւնը (*Поло-
жение*) համաձայն ընդամին կցած փոփոխութիւնների և լրացումների փո-
խել՝ հարմարեցնելով ներքո օրինազօնին»: Հավելվածում նաև սսվում էր, որ
սույն օրենքը հաստատված է Նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 9-ի
նիստում, համաձայն Հայաստանի խորհրդի 1919 թ. հունիսի 5-ի ընդունված
օրենքի: 1919 թ. մայիսի 10-ին Հայաստանի Հանրապետութեան պառլամեն-
տը ընդունում է օրենք՝ Երևանի քաղաքային միլիցիայի 1919 թվականի
ուլթնամսյա նախահաշիվը (1919 թ. մայիսի 1-ից մինչև 1920 թ. հունվարի 1-
ը) հաստատելու մասին⁷⁴⁹:

Հայաստանի երկրորդ քաղաքում՝ Ալեքսանդրապոլում ևս նմանատիպ
խնդիրներ առաջացան, որոնք 1920 թ. այլ լուծում ստացան՝ հօգուտ ինք-
նավարութեան լուծելով միլիցիայի գործերը տնօրինելու հարցերը: Սակայն
այս փաստաթղթերը միաժամանակ բացահայտում են այն հակասութիւննե-
րը և անորոշութիւնները, որոնք կային այդ ժամանակաշրջանում միլիցիա-
յի և Ներքին Գործերի մարմինների գործունեութեան կազմակերպման
խնդրում, առկա Ֆինանսական դժվարութիւնները, որոնք առաջնային նշա-
նակութիւն ունեին այդ գործերում, և վերջին հաշիվով՝ նորաստեղծ պետա-
կանութեան կայացման բարդութիւնները և ոչ միանշանակ գործընթացնե-
րը, որոնք ընթանում էին այդ խճճված, քառասային, սակայն հերոսական մա-
քառուններով լի ժամանակաշրջանում: Այս ժամանակաշրջանում ընթացող
միլիցիաստեղծ գործընթացների էութիւնը հակառակուսի համար կարևոր է
վերհասնել ամեն մի մանրամասն՝ կապված կառավարութեան և պետութեան
գործելակերպի ու ջանքերի հետ: Որոշակիորեն հետաքրքիր է նաև Նախա-
րարների խորհրդի նիստի կողմից քննարկված ևս մեկ հարց՝ կապված միլի-
ցիան գորացնելու խնդրի հետ: 1919 թ. հուլիսի 17-ին Նախարարների խոր-
հրդի կողմից լսվում է Ներքին Գործերի նախարարի գեկուցումը գալառա-
կան միլիցիայի կազմը գինվորականներով ուժեղացնելու մասին, առանց
նրանց ռոճիկ վճարելու, այլ տպով նրանց միմիայն օրապարենի փոխարեն
օրապահիկ և պարտավորեցնելով նրանց ծառայել սեփական ձիերով և ձիա-
սարքերով: Նախարարների խորհրդի նիստում ընդունվում է որոշում, ըստ
որի հանձնարարվում է Ներքին Գործերի և Զինվորական նախարարութե-
լիւններին համատեղ վճուել այս հարցը՝ փոխադարձ համաձայնութեամբ⁷⁵⁰:

Ներքին Գործերի նախարարութիւնը և միլիցիան գործունակ աշխա-
տանքային մարմիններ դարձնելու ուղղութեամբ կարևոր նշանակութիւն
ունեցալ Ներքին Գործերի նախարարի կողմից 1919 թ. հուլիսի 1-ին հաս-
տատված Օրենքը Հայաստանի Հանրապետութեան բնակիչների և զինա-

⁷⁴⁹ ՀԱՍ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 1174, ք. 41, Հայաստանի Հանրապետության պառլամենտի
օրենքները, էջ 74:

⁷⁵⁰ ՀԱՍ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 160, գ. 96ա, ք. 14:

պարտների հաշվառում մտցնելու, զորքերի զորակոչի կազմակերպման մասին⁷⁵¹:

Ներքին և արտաքին անվտանգութան համակարգի տարբեր օղակների, այդ թվում միլիցիայի և ՆԳՆ ու ժային ստորաբաժանումների ստեղծման և գործունեություն կազմակերպման պատմություն տեսանկյունից կարևոր է ամեն մի նոր մանրամասնի ներկայացումը, որն էլ ավելի ամբողջական է դարձնում այդ գործընթացների իրական նկարագիրը: 1919 թ. հուլիսի 12-ի նիստում Նախարարների խորհուրդը լսում է Ներքին Գործերի նախարարի զեկուցումը միլիցիոներական դասընթացներ բացելու համար 80.640 ուղարկելու լրացուցիչ վարկ բացելու մասին: Ընդունված որոշման մեջ Նախարարների խորհուրդը միաձայն որոշում է՝ համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի 80.640 ու. լրացուցիչ վարկ բացել Հայաստանի Հանրապետության դավառներում 8 ամսով միլիցիոներական դասընթացներ կազմակերպելու համար⁷⁵²: Իսկ արդեն արխիվային փաստաթղթերից մեկում էլ տրվում է միլիցիոներական դպրոցի անձնակազմի հաստիքացուցակի փաստական վիճակը որոշ թվերի տեսքով: Ըստ դրա, 1920 թ. հուլիսի 1-ից մինչև 1921 թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում այն պետք է ունենար 100 հոգիանոց անձնակազմ որից 8-ը՝ դասատու⁷⁵³:

Այդ գործընթացների կազմակերպական ավարտունությունն ապահովման տեսանկյունից շատ կարևոր էր ՀՀ պառլամենտի կողմից 1920 թ. ապրիլի 21-ին Միլիցիայի մասին ժամանակավոր Օրենքի ընդունումը՝ հաստատված ժամանակավոր կառավարություն կողմից 1917 թ. ապրիլի 17-ին և փոփոխված Հայաստանի պառլամենտի կողմից 1920 թ. ապրիլի 21-ին: Իսկ 1920 թ. հունիսի 16-ին օրենքը հավելում է ստանում⁷⁵⁴:

Փաստերը վկայում են, որ **1918 -1920 թթ.** Ներքին Գործերի նախարարություն և միլիցիայի գործի կազմակերպման կազմակերպիչների դերում են եղել ինչպես Հայաստանի Հանրապետության «գեիկտատոր» հռչակված և առաջին Ներքին Գործերի նախարար դարձած **Արամ Մանուկյանը** (Արգիս Հարությունի Հովհաննիսյան, Արամ փաշա, 1879 -1919 թթ.), որը ՀՀ մինիստր-նախագահ **Հովհ. Քաջազնունու** 1918 թ. հուլիսի 26-ի հրամանագրով (№ 24) հաջորդում է Երևանի Հայոց Ազգային խորհրդի Ներքին Գործերի բաժնի վարիչ **Սահակ Դավիթի Թորոսյանին** (1885 -1940 թթ.) արդեն որպես Ներքին Գործերի նախարար⁷⁵⁵, և որպես ՆԳՆ նախարար է աշխատել 1918 թ. հուլիսի 6-ից մինչև 1919 թ. հունվարի 29-ը, այնպես էլ Ա. Մանուկյանի հիվանդություն պատճառով 1919 թ. հունվարի 3-ից վերջինիս փոխարինած,

⁷⁵¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 28, ք. 133:

⁷⁵² Նույն տեղում, գ. 100 (43), ք. 155; գ. 221, ք. 38, Ֆ.Պ - 203, ց. 1, գ. 60, ք. 114:

⁷⁵³ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 114, ք. 41:

⁷⁵⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, էջ 262-268, 343:

⁷⁵⁵ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 10, ք. 1; ց. 2, գ. 10, ք. 2:

իսկ փետրվարի 9-ից մինչև 1919 թ. ապրիլի 16-ը նախարարի պարտականու-
թյունները ստանձնած **Ալեքսանդր Հովհաննեսի Խատիսյանը (1874 -1945 թթ.)**⁷⁵⁶, որին այնուհետև հաջորդեց այդ գործի գլխավոր կազմակերպիչնե-
րից մեկը՝ **Սարգիս Ստեփանի Մանասյանը (1875 -1920 թթ.)**, ինչի մասին
վկայում է **Սիմոն Վրացյանը** իր «Հայաստանի Հանրապետութուն» գրքում,
վերջինիս համարելով պետականորեն այդ կարևոր գործի ռահվիրաներից մե-
կը: Ինչևիցե, Սարգիս Մանասյանը այդ պատասխանատու պաշտոնը վարել է
1919 թ. փետրվարի 28-ից մինչև ապրիլի 28-ը ընկած ժամանակահատվածը,
որից հետո 1919 թ. օգոստոսի 10-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը՝ **Աբրահամ
Իսահակի Գյուլխանդանյանը (1875 -1946 թթ.)**, այնուհետև այդ պարտակա-
նությունները մինչև 1920 թ. սեպտեմբերի 19-ը կատարում է **Ռուբեն
Կարապետի Տեր-Մինասյանը (Ռուբեն փաշա, 1882 -1951 թթ.)**, որին 1920 թ.
սեպտեմբերի 20-ից փոխարինում է **Սարգիս Շահնազարի Արարատյանը
(Շահնազարյան)** մինչև նոյեմբերի 23-ը, և վերջապես՝ Առաջին Հանրապե-
տության Ներքին Գործերի վերջին նախարար է դառնում **Սիմոն Ղազարի
Վրացյանը (Գրուզիյան, 1882 -1969 թթ.)**, որն այդ պաշտոնը վարում է նո-
յեմբերի 24-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը այսինքն՝ մինչև Հանրապե-
տության անկումը և խորհրդայնացումը⁷⁵⁷:

ՆԳՆ, միլիցիայի գործի այս կազմակերպիչների գլխավորութայամբ փոր-
ձեր արվեցին կատարելագործել միլիցիայի մարմինների գործունեությունը,
որոշ միջոցներ նպատակաուղղվեցին կադրային հիմնախնդիրներ լուծելու
ուղղութայամբ և այլն: 1920 թ. նոյեմբերի 5-ին Նախարարների խորհուրդը
լսեց կամավորների հավաքման ու պահպանման գործի համար ՆԳՆ 20 մլն -
վարկ բանալու մասին: Ընդունված որոշման մեջ որոշեց բանալ Ներքին
Գործոց նախարարութայան համար 20 միլիոն վարկ՝ կամավորների հավաք-
ման ու պահպանման համար⁷⁵⁸: Ինչպես տեսնում ենք, կառավարութայան
կողմից դա ամենևին էլ անիմաստ քայլ չէր, ընդհակառակը, այն դեպի հե-
ռուն նպատակաուղղված քայլ էր, գործողութայուն, որի նպատակն էր ապա-
հովել անհրաժեշտ կադրուժ միլիցիայի ու Ներքին Գործերի համակարգի հա-
մար, որը 1918 -1920 թվականների դժվարին ֆինանսական իրադրութայան
պայմաններում դյուրին խնդիր չէր, և պատիվ էր բերում ՀՀ կառավարու-
թայանը:

Փաստաթղթերը վկայում են, որ 1918 -1920 թթ. Ներքին Գործերի նա-
խարարութայունը ձգտում էր դառնալ աշխատող և գործուն մարմին, որի ար-
դյունավետ, արգասաբեր աշխատանքից էր կախված թե երկրի ներքին քա-
ղաքականութայան այլևայլ հարցերի ճիշտ լուծումը, թե՛ օրինականութայան և
կարգ ու կանոնի հաստատումը երկրում, թե՛ արդյունավետ պայքարը ներ-

⁷⁵⁶ Տե՛ն «Ուրբաթ» (շաբաթաթերթ), Երևան, 25 .05. 1990:

⁷⁵⁷ Տե՛ն **ճույն տեղում; Մ. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 372:

⁷⁵⁸ **ՀԱՍ**, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 107, մաս III, թ. 63:

քին թշնամու և մահճեղական մութ զանգվածների ընդվզումների դեմ, մի խոսքով՝ անվտանգության հիմնական դիրքերից շատերի հանգուցալուծումը: Այդ իսկ նպատակադրումով Ներքին Գործերի նախարարությունը ձգտում էր զորեղանակ, ընդունել մի շարք գործուն օրենքներ, որոնք նպատակաուղղված էին միլիցիայի և ՆԳՆ աշխատակիցների դրությունների բարելավմանը, ֆինանսական-տնտեսական կադրային ցավոտ խնդիրների լուծմանը և առհասարակ՝ միլիցիայի և Ներքին Գործերի մարմինների դիրքերի ամրապնդմանը հասարակության մեջ: Այսպես 1920 թ. մայիսի 25-ին Ներքին Գործերի նախարարությունը ընդունում և հաստատում է օրենք՝ Երևանի, Շիրակի և Գերիուսի (Գորիսի) պահեստի միլիցիայի համար վարկ բացելու, մայիսի 27-ին օրենք է հաստատվում Ներքին Գործերի նախարարության Օլթիի գավառի վարչությունից կազմակերպման համար 4.105.850 ռ. վարկ բանալու մասին⁷⁵⁹, հուլիսի 30-ին՝ Կողբի, Բարանայի, Շամշադինի և Ղազախի շրջաններում ուժեղացված պահակախմբեր ստեղծելու համար կազմակերպել 1000 հոգուց բաղկացած միլիցիա՝ հատկացնելով ավելի քան 52 միլիոն ռուբլի գումար՝ 1920 թ. օգոստոսի 1-ից մինչև 1921 թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար նախօրոք հաստատված հաստիքների համաձայն⁷⁶⁰, օգոստոսի 3-ին օրենք է հաստատվում միլիցիոներներին տարեկան երկու ձեռք հագուստի արժեքի չափով վարկ տրամադրելու և Վայոց ձորի պահակախումբը ուժեղացնելու մասին, օգոստոսի 6-ին՝ Արալիսի շրջանում 120 անձից բաղկացած միլիցիոներական պահակախումբ կազմակերպելու համար՝ հատկացնելով 7 միլիոն ռուբլուց ավելի գումար⁷⁶¹, սեպտեմբերի 4-ին օրենք է ընդունվում գաղտնի ոստիկանություն 1920 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ծախսի համար 56.740.000 ռ. վարկ բանալու մասին, իսկ սկսված թուրք-հայկական աղետալի պատերազմի սկզբին՝ սեպտեմբերի 25-ին օրենք է ընդունվում «Զեզոք» գոտու 1920 թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսների արտակարգ ծախսերի համար, հոկտեմբերի 2-ին օրենք է ընդունվում դասալքություն դեմ կռվի մասին, իսկ հոկտեմբերի 26-ին՝ Երևանի, Վանանդի և Շիրակի նահանգային միլիցիան վերակազմելու համար վարկ բաց թողնելու մասին, և այլն⁷⁶²: Վերջ է վերջո, ստեղծվեց մի քիչ թե շատ կայուն և ամբողջական համակարգ, որի մասին էլ պատկերացում է տալիս ներքոհիշյալ աղյուսակը⁷⁶³:

Աղյուսակ N^o 1.

⁷⁵⁹ Նույն տեղում, գ. 504, թ. 65-66:

⁷⁶⁰ Նույն տեղում:

⁷⁶¹ Նույն տեղում, թ. 111:

⁷⁶² Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 115, մաս I, թ. 1-2:

⁷⁶³ Տե՛ս նույն տեղում, գ. 115, մաս II, թ. 78:

N	Փավատ	միլիետ	օդավան	վավերադ	ավազ ձխավ- միլիցիոներ	կրտսեր ձխավոր միլիցիոներ	կրտսեր հետևակ միլիցիոներ	Ընդամենը
	1	2	3	4	5	6	7	8
1.	Երևանի	1	2	7	14	350	60	434
2.	Էջմիածնի	1	2	6	9	160	90	268
3.	Սուրմալուի	1	2	4	9	150	70	236
4.	Ղարաքիլիսայի	1	2	4	8	150	70	235
5.	Ալեքսանդրապոլի	2	2	6	14	180	70	273
6.	Իրիլջանի	1	2	5	15	210	20	253
7.	Ն.Բայազետի	1	2	5	9	160	70	247
8.	Գարապետյանի	1	2	3	6	100	50	162
9.	Գաղզվանի	1	2	12	14	250	140	419
10.	Օլթիի	1	2	12	14	250	140	419
11.	Արդահանի	1	2	12	14	350	140	519
12.	Կարսի	1	2	12	14	250	140	419
13.	Գողթնի	1	2	6	9	160	50	228
14.	Նախիջևանի	1	2	6	9	160	50	228
15.	Շարուրի	1	2	3	6	100	50	162
	Ընդամենը	10	30	103	164	2980	1210	4562

Կարծում ենք, որ այս առումով վերը բերված աղյուսակի (N 1) տրամաբանական շարունակությունն են կազմում Ղարաբաղի և Զանգեզուրի միլիցիայի հաստիքացուցակի մասին տվյալները, քանզի միշտ էլ Հայաստանի Առաջին հանրապետության կառավարությունը և խորհրդարանը նշված գավառները, անկախ Ադրբեջանի ազդեցիկ մտադրություններից և հավակնություններից համարել են Հայաստանի Հանրապետության տարածքի անբաժանելի մաս, ուրեմն բնական էր նաև այդ գավառամասերում ինչպես քաղաքացիական վարչակազմ ունենալը, այնպես էլ միլիցիայի և Ներքին Գործերի նախարարության անհրաժեշտ օղակներ և ստորաբաժանումներ ստեղծելու քաղաքականությունը: Դրանք պետք է հանդիսանային ՀՀ անվտանգություն հիմնականներին լուծման կարևոր և անհրաժեշտ ստորաբաժանումները տեղերում՝ ապահովելով հայ բնակչության օրինական շահերը և իրավունքները Ղարաբաղում և Զանգեզուրում:

**Ղարաբաղի և Զանգեզուրի գավառային միլիցիայի
աշխատակիցների կազմը, 1920 թ.⁷⁶⁴**

№	Գավառ	միլիտետ	օրենական	վախճանար	ավագ ձիավոր միլիցիոներ	կրտսեր ձիավոր միլիցիոներ	կրտսեր հեռակակ միլիցիոներ	Ընդամենը
1.	Զանգեզուրի	1	2	6	9	160	90	268
2.	Ղարաբաղի	1	2	6	9	160	90	268
Ընդամենը		2	4	12	18	320	180	536

Այդ դժվարին ու անորոշ բարդուժյուններով լի տարիներին պետութ-
յունը և կառավարութայունը որոշակի ուշադրութայուն էին դարձնում Հանրա-
պետութայան երկրորդ քաղաքում՝ Ալեքսանդրապոլում և սանվտանգութայան
ուժային որոշ կառույցներ, և առաջին հերթին Ներքին Գործերի նախարա-
րութայան գործուն ստորաբաժանումներ ունենալու խնդրին: Այս տեսանկ-
յունից էլ Ներքին Գործերի նախարարը իր 1920 թ. մայիսի 4-ի գրութայուն-
ում (№ 1397) նշում էր այն մասին, որ 1920 թ. ապրիլի 7-ի պառլամենտի
կողմից Հաստատված օրենքի Համաձայն միլիցիան անցնում է ինքնավա-
րութայունների իրավասութայանը: Սակայն Հաշվի առնելով առկա դժվարու-
թյունները, վերջինս խնդրում էր և միջնորդում, որպեսզի Ալեքսանդրապո-
լի միլիցիայի ծախսերի Համար Հաշվարկված 8.925.600 ռ. գումարը բաց
թողնվի Ներքին գործոց նախարարի անվամբ⁷⁶⁵: Վերջապես խոսքից անցում
է կատարվում գործի, և 1920 թ. մայիսի 11-ին կառավարութայունը Ալեքսան-
դրապոլի միլիցիային պահելու Համար Ներքին Գործերի նախարարի անու-
նով թույլատրում է վարկ բացել 8.925.600 ռուբլի չափով՝ Ալեքսանդրապոլի
ինքնավարութայանը Հանձնելով: Փաստաթղթի տակ կա չձ մինիստր-նախա-
բահ Հ. Օհանջանյանի ստորագրութայունը⁷⁶⁶:

1920 թ. Հուլիսի 30-ին չձ պառլամենտը ընդունում է օրենք՝ Վեդիբա-
սարի շրջանի Համար միլիցիոներական Հատուկ խումբ կազմակերպելու մա-
սին՝ 120 հոգուց, կարգադրութայուն անելով բացել վարկ այդ խմբի պահպան-
ման Համար՝ սկսած 1920 թ. Հուլիսի 15-ից մինչև 1921 թ. Հունվարի 1-ը՝
7.169.287 ռուբլի 70 կոպեկ չափով⁷⁶⁷: Իսկ 1920 թ. օգոստոսի 13-ին չձ -

⁷⁶⁴ Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 115, մաս II, ք. 140:

⁷⁶⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 115, մաս I, ք. 15:

⁷⁶⁶ Նույն տեղում:

⁷⁶⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, էջ 394:

պառլամենտը օրենք է ընդունում Ներքին Գործերի նախարարության արտակարգ ծախսերի համար 10 միլիոն ռուբլի վարկ բացելու մասին⁷⁶⁸:

Հայաստանի Հանրապետության միլիցիայի համակարգի մեջ ամեն մի օղակ իր տեղն է զբաղեցնում, և այդ առումով էլ այդ համակարգում կարևոր դեր են խաղացել ՀՀ ՆԳՆ նախարարին կից գործող Հայաստանի Տարածքի Վարչակազմի ու Միլիցիայի կոմիսարիատը, այնուհետև՝ Վարչակազմի և Միլիցիայի բաժինը, ըստ այդմ էլ որոշակի տեղ է հատկացվել այդ հաստատությունների կոմիսարների պաշտոններին, որոնք կարևոր դեր էին կատարում հասարակության մեջ, և կոչված էին ապահովել անդորրն ու պետությունների անվտանգության նորմերն ու պահանջները: Այս առումով կարևոր էր ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. հուլիսի 17-ի որոշումը, համաձայն որի հուլիսի 24-ին հրամանագիր է արձակվում, որի հիման վրա էլ Հայաստանի Տարածքի Վարչակազմի և Միլիցիայի Կոմիսարիատը վերանվանվում է Վարչակազմի և Միլիցիայի բաժին՝ սկսած հուլիսի 1-ից⁷⁶⁹:

Արևիվային վավերագրերը բազմանշանակ վկայում են այն մասին, որ Առաջին հանրապետության միլիցիան, նրա գանազան օղակները և ՆԳՆ համակարգն առհասարակ ստեղծվեցին և փորձեցին ծավալել իրենց աշխատանքները շատ խճճված և բարդ տնտեսաքաղաքական իրավիճակում, իրենց վրա կրելով ճակատագրի բոլոր այն հարվածները, որոնք պատմության գարգացման անկասելի և անողոք ներքին տրամաբանությունաբար պարտադրվում էին: Դժվար էր միլիցիա, և այն էլ օրինապաշտ ու ժողովրդին ծառայող միլիցիա և Ներքին Գործերի մարմիններ ստեղծել այնպիսի մի երկրում, ուր կային հարյուրհզարավոր սովալլուկ գաղթականներ, մահմեդական գրեթե կես միլիոնանոց մուսլիմ և Հայաստանի ու նրա իշխանությունների նկատմամբ ոչ լոյալ տրամադրված գանգված և այլն: Ակնհայտ է, որ տնտեսական աճավոր քայքայվածություն և պետական իշխանության մարմինների ստեղծման ոչ միանշանակ գործընթացների պայմաններում դժվար էր գտնել թե՛ անհրաժեշտ կադրերը, որոնք գրեթե չկային, և թե՛ ֆինանսական միջոցներ, որոնք շատ կարևոր գործոններ են գործուն և պետականամետ գործելակերպ ունեցող միլիցիա և առհասարակ Ներքին Գործերի մարմիններ ստեղծելու համար: Ընդ որում, այդ կազմակերպական և այլ բնույթի գործընթացների ընթացքում անհրաժեշտ էր հաղթահարել պետությունից դուրս գտնվող կամ պետության մեջ պետություն դառնալու ու ինքնիշխան լինելու ձգտում դրսևորող որոշ ապապետական ուժերի, և մասնավորապես այսպես կոչված, «խուժբերի» ավազակաբարո տրամադրությունները և նպատակադրումները, որոնց համար Հայաստանի Հանրապետության դժվարությունները անըմբռնելի էին, իսկ երկիրը՝ իրենց «հայրական ոտչինան» էր, ուր կարելի էր անել ամեն ինչ, ինչ խելքներին փչի, ընդհուպ մինչև մուսայլ

⁷⁶⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 422:

⁷⁶⁹ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 21:

միջնադարը հիշեցնող խոշտանգման ինկվիզիցիոն մեթոդների կիրառումը այլախոհության դրսևորում ցուցաբերող կամ իրենց բռի, հոռի ձգտումների ենթարկվելու ցանկություն չունեցող բնակչության խմբերի կամ պարզապես առանձին անհատների վրա: Առհասարակ, երկրի ներքին խճճված, տնտեսաքաղաքական ծանր վիճակը, որը նաև դրսի ուժերի կողմից խորացվում էր, էլ ավելի էր բարդացնում պետական անվտանգության համակարգի ուժային այս անհրաժեշտ և կարևորագույն պետական կառույցների ստեղծումը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1918 - 1920 ԹԹ.:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայկական բանակը Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգում

Առաջին Հանրապետության բանակը ստեղծվել է անկարգերի ծանր սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական պայմաններում, ուղեկցվելով երկունքի ծանր ցավերով: Հայաստանի անկախության հաստատման պահին հայկական զորքը կազմված էր առանձին Հայկական կորպուսից և կորպուսի իրավունքներ ունեցող Հատուկ ջոկատից: Ինչպես կորպուսը, այնպես էլ ջոկատը Անդրկովկասի փլուզմամբ դուրս եկան Կովկասյան բանակի հրամանատարության ենթակայությունից, և դարձան ինքնուրույն միավորներ, ընդ որում ղեկավարությունն անցավ կորպուսի հրամանատարին՝ Ազգային ժողովի համաձայնությունով, որը կառավարության դեր էր կատարում: Արխիվային փաստաթղթերի վկայությամբ, 1918 թ. մայիսի 15-ին թուրքերի Ալեքսանդրապոլի վրա ուխտադրուժ հարձակումից և Ղարաքիլիսայի ու Սարգարապատի մատույցներում մղված ճակատամարտերից, կամ ավելի պատկերավոր կարելի է ասել՝ ճակատամարտաբույրից հետո հայկական զորքերի մեծ մասը հայտնվեց անմխիթար վիճակում, ինչպես ընդհանուր վիճակի, այնպես էլ մատակարարման առումով, քանի որ բոլոր պահեստները մնացին թուրքերի ձեռքին, մի մասն էլ կենտրոնացավ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում, ուր հետագայում բարդություններ առաջացան, կապված մասնավորապես 1918 թ. վրաց-հայկական ղեկոսմբերյան բախման կամ ավելի տեղին է ասել՝ պատերազմի հետ, ինչի պատճառով վրացիները կամայականորեն արգելափակեցին «եղբայրակից» ժողովրդին հասանելիք զենք ու զինամթերքի առաքումը Թիֆլիսից Երևան: Եստ զորամասեր չունեին զինվոր և զույգ, որոշ մասը նահանջելու հնարավորություն չունեցավ և

կորպուսի հետ միասին ետ քաշվեցին դեպի Թիֆլիս, ուր և հավաքվեցին նրանց մնացորդները⁷⁷⁰:

Ռազմական նախարարության կազմավորումը սկսվեց 1918 թ. հունիսի 15-ին՝ ռազմական նախարարի նշանակմամբ, որին կից դեռևս Թիֆլիսում ձևավորվեց վարչական կարևոր մի մարմին՝ Գլխավոր շտաբն իր 3 բաժիններով՝ գրասենյակով, տեսչական բաժիններով, և շարային ու գորահավաքային բաժանմունքներով⁷⁷¹, և միայն դրանից հետո որոշ ռազմաքաղաքական պատկերացումների իրականացումը սկսեց միս ու արյուն դառնալ. առաջին քայլերն սկսեցին կատարել ամեն մի պետութային համար մեծ կարևորութուն ներկայացնող ռազմական գերատեսչութային համապատասխան կառույցները: ՀՀ անդրանիկ Զինվորական նախարարը դարձավ տաղանդաշատ գորավար գեներալ-լեյտենանտ **Հովհաննես Բարսեղի Հախվերդյանը** (6 հուլիսի, 1918 թ. - 27 մարտի, 1919 թ.), որից հետո կարևորագույն այդ ռազմաքաղաքական կառույցը գլխավորեց **Քրիստափոր Գերասիմի Արարատյանը** (27 մարտի, 1919 թ. - 3 ապրիլի, 1920 թ.), այնուհետև՝ **Ռուբեն Կարապետի Տեր-Մինասյանը** (3 ապրիլի, 1920 թ. - 23 նոյեմբերի, 1920 թ.), իսկ ՀՀ վերջին ռազմական նախարարը՝ հանրապետութային հերոսական մայրամուտին, կամ ավելի ճիշտն ասած՝ բոլշևիկյան շրջադարձի պահին հանդիսացել է **Դրոն՝ Դրաստամատ Մարտիրոսի Կանյանը** (24 նոյեմբերի, 1920 թ. - 2 դեկտեմբերի, 1920 թ.)⁷⁷²: Այդ ընթացքում ձևավորման գործընթացներ գնացին նաև զինվորական գերատեսչութային մի շարք այլ կառույցներ կազմակերպելու ուղղությամբ: Տարբեր վարչությունների և զինվորական հաստատությունների ղեկավար պաշտոններում նշանակվեցին հայկական սպայակուլտի բարձրատիճան զինվորականները: Այսպես, Զինվորական նախարարութային Գլխավոր շտաբի պետ նշանակվեց գեներալ-մայոր Արսենի Դոլուխանովը (Դոլուխանյան), հրետանային վարչութային պետ՝ գեներալ-մայոր Կ. Գամաղովը, համբարակային վարչութային պետ՝ գեներալ-մայոր Հ. Բ. Զումարովը, Զինվորական նախարարութային ռազմատեխնիկական վարչութային պետ՝ գեներալ-մայոր Շահբուղաղովը, իսկ ՀՀ զինվորական դատարանի նախագահ դարձավ գեներալ-մայոր **Հովսեփ Արտեմի Քիչմիշևը** (**Քիչմիշյանը**), որը 1919 թ. հուլիսից պաշտոնաթող եղավ՝ դառնալով Թիֆլիսում Վրաստանի հանրապետութային կառավարութայինը կից ՀՀ դեվանագիտական հավատարմատարին առընթեր զինվորական վարչութային ղեկավար (ռազմական կցորդ), իսկ ՀՀ զինվորական դատարանի նախագահի պաշտոնում նրան փոխարինեց գեներալ-մայոր **Մելիք-Շահնազարովը**, և այլն: 1919 թ. սեպտեմբերին գեներալ-մայոր **Ա. Դոլուխանովի** փոխարեն ՀՀ զինվորական շտաբի պետ է նշանակվում **Ալեքսանդր Կոնստանտինի Շենուրը**, որին

⁷⁷⁰ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 79, ք. 44-45:

⁷⁷¹ Նույն տեղում:

⁷⁷² Տե՛ս «Ուրբաթ» (շաբաթաթերթ), Երևան, 25. 05. 1990.

հետագայում փոխարինում է գեներալ-մայոր **Քոզզան Բաղդասարովը**⁷⁷³: Անվտանգության համակարգի ձևավորման և բանակաստեղծ գործընթացների ճանապարհահին, անշուշտ, կարևոր քայլ էր 1919 թ. սկզբին ՀՀ Զինվորական նախարարութայանն առընթեր Ռազմական խորհրդի ստեղծումը, որը կոլեգիալ ձևով պետք է քննարկեր ռազմական-բանակային շինարարութայան և մարտական գործողութայունների սկզբունքային հարցերը՝ որոշումներ կայացնելու դրանց վերաբերյալ: Ռազմական խորհրդի կազմի մեջ մտան Հայկական դիվիզիայի ավագ գորահրամանատարները և զինվորական վարչութայունների պետերը: 1919 թ. մարտի 25-ին Ռազմական խորհրդի նախագահ նշանակվեց Հայկական կորպուսի նախկին հրամանատար գեներալ-լեյտենանտ **Թ. Հ. Նազարբեկյանը**, որի վրա ապրիլի 24-ի կառավարութայան հրամանագրով դրվեց նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի՝ Հայկական բանակի սպարապետի պարտականութայունը⁷⁷⁴: Զորքերի ղեկավարումը բոլոր առումներով մնաց առանձին Հայկական կորպուսի հրամանատարի ձեռքին, որն ուներ գլխավոր հրամանատարի իրավունքներ: ՀՀ Ռազմական կազմակերպութայան ստեղծման ուղղութայամբ հետագա աշխատանքները շարունակվեցին 1918 թ. հուլիսի 20-ից հետո՝ Հայաստանի կառավարութայան Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո:

Հայկական զինվորականութայունը, որն անցել էր 1918 թ. մայիսյան Սարգարապատյան հերոսական ճակատամարտաշարքերի բովով և ձեռք բերել անհրաժեշտ մարտական փորձ, ու կուսակցական-քաղաքական որոշակի շրջաններ ձեռնամուխ եղան ռազմական մեքենայի ձևավորմանը, և այդ ճանապարհահին կատարված ամեն մի քայլ բանակի հիմնախնդիրների տեսանկյունից էական էր: 1918 թ. սեպտեմբերի 9-ին Թ. Նազարբեկյանը հրապարակում է հրամանագիր Հայկական դիվիզիայի գծով, ըստ որի ազգարարվում էր Առանձին Հայկական կորպուսի լուծարման և փոխարենը Հայկական դիվիզիայի կազմավորման մասին, նշելով, որ կառավարութայան որոշման և կնքված հաշտութայան պայմանագրի համաձայն կորպուսը արձակվում է՝ դադարեցնելով գործունեութայունը՝ գործելով շուրջ 10 ամիս, որից 5 ամիսը՝ մարտական ամիսներ էին: Հրամանագրում ընդգծում էր հետևյալը. «Ես հույս եմ տածում, որ մեր ունեցած անհաջողութայունների դասերը անհետք չեն կորչի: Այս պահին իմ մարտական եղբայրակիցներ՝ հրաժեշտ տալով ձեզ, ես իմ սրբազան պարտքն եմ համարում խորին շնորհակալութայուն հայտնել կորպուսի բոլոր ծառայողներին՝ գեներալից մինչև շարքայինի, ով ազնվորեն այն ծանր օրերին կատարել է իր պարտքը»⁷⁷⁵:

⁷⁷³ Տե՛ս **Մ. Կարապետյան**, Հայաստանի Հանրապետության բանակը (1918 - 1920), էջ 30-31:

⁷⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

⁷⁷⁵ Տե՛ս **ՀԱԱ**, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 42, ք. 73:

Բանակաստեղծ և պետական անվտանգություն համակարգի ձևավորմանը նպատակաուղղված գործընթացներում իր արժանի ներդրումն ունեցավ ՀՀ կառավարությունը, որի գործունեություն հիմքում, այլ հիմնախնդիրների հետ միասին, խոր արմատներ էին գցել նաև պետական անվտանգության գլխավոր երաշխավոր և հիմք հանդիսացող ազգային կանոնավոր բանակի շինարարության ցավոտ հարցերը, որոնք առաջնային նշանակություն ունեին Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական համակարգի՝ քիչ թե շատ լիարժեք կայացման տեսանկյունից: Հիմք ընդունելով ՀՀ Նախարարների խորհրդի 1918 թ. օգոստոսի 10-ի որոշումը, Զինվորական նախարար Հ. Հախվերդյանը 1918 թ. օգոստոսի 13-ին մի շատ կարևոր հրամանագիր է ստորագրում գինվորական գերատեսչության գծով, որի նպատակը բանակի առողջացումն էր և նրա շարքերից վնասակար և ոչ օգտակար տարրերի վտարումը՝ հրամանագրելով ընդունել հետևյալ միջոցները. 1) գործառնների պետերին դիվիզիայի շտաբ ներկայացնել բոլոր այն սպաների և գինվորական աստիճանավորների վերաբերյալ հիմնավորված առեստացիաները, որոնց ծառայության մեջ թողնելը կճանաչվի վնասակար և անօգտակար, 2) Առանձին Հայկական դիվիզիայի պետի կարգադրությամբ դիվիզիայի շտաբին կից կազմավորել Որակավորման (Ատեստացիոն) Հանձնաժողով՝ բաղկացած 7 հոգուց՝ դիվիզիայի գործառնների ներկայացուցիչներից՝ նշված առեստացիաները դիտարկելու համար⁷⁷⁶: Ընդ որում Հանձնաժողովը համակողմանիորեն պետք է վերհաներ այն գինվորականներին վերաբերող գործերը և դրանց կից առեստացիաները, որոնց վերաբերյալ կային գործառնների հրամանատարների անհրաժեշտ հարցումները: Համապատասխանաբար Հանձնաժողովը առեստավորումով որակավորման ենթարկված անձերին բաժանում էր երեք կատեգորիաների. ա) անձինք, որոնց վարքագծում կան գինվորական օրենքների համաձայն պատժի ենթակա հանցագործություն նախանշաններ, բ) ծառայության համար վնասակար և անօգտակար անձինք, գ) այնպիսիք, որոնց օգտակարությունը կամ ոչ օգտակարությունը ծառայության տեսանկյունից ոչ լիովին էր որոշակիացվել: Օբեր-սպաների նկատմամբ Հանձնաժողովի որոշումները հաստատվում էին դիվիզիայի պետի, իսկ շտաբի սպաներին՝ դիվիզիայի պետի կողմից, 3) Համապատասխանաբար Հանձնաժողովի որոշման համաձայն առանձին կատեգորիաների վերաբերող անձինք Հանձնվում էին գինվորական դատի. երկրորդ կատեգորիայի անձինք որպես բանակի շարքերին ոչ արժանի վտարվում էին ծառայությունից՝ զրկվելով բոլոր տեսակի լիկվիդացիոն նպաստներից և այդ մասին նշումներ էին կատարվում նրանց ծառայողական ցուցակներում. երրորդ կատեգորիայի անձանց հարցը Հանձնաժողովի որոշմամբ տեղափոխվում էին փորձառություն այլ գործառն՝ որոշակի ժամկետով, իսկ զորացրումը կատարվում էր

⁷⁷⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 215, թ. 2:

ուզմական գերատեսչության գծով հրամանի համաձայն, 4) բացահայտ դասակարգման կարգադրվում էր հանձնել դատի՝ թեկուզև հեռավա դատապարտման համար՝ իսկույն ևեթ զրկելով բոլոր տեսակի առավելություններից և շնորհներից, 5) բոլոր նրանց, ովքեր ենթարկվել էին պատժի՝ դատարանով, ինչպես նաև ոչ համապատասխանաբար հեռացվածների մասին գործառնների պետերի միջոցով հրահանգվում էր հայտնել զավառական զինվորական պետերին և վարչական իշխանություններին ըստ հեռացվածների բնակություն վայրերի⁷⁷⁷: Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցան նաև, կազմակերպական ոչ միանշանակ գործընթացներ ապրող հայկական բանակի բարձրագույն սպայակույտի ներկայացուցիչները, նրա Գլխավոր շտաբը և կառավարական մարմինները: Հայկական բանակի կազմակերպման, նրա սպայական կրտսեր և բարձրագույն հրամանատարական կազմի որակական հատկանիշների բարելավման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ նաև Հայկական դիվիզիայի սպաների ատեստացիայի ստուգման՝ անվանականչի համար հանձնաժողովի ստեղծումը: Այսպես, Հայկական դիվիզիայի գծով 1918 թ. օգոստոսի 26-ի հրամանագրում (N^o 15) դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը հայտարարագրում էր այդ հանձնաժողովի անդամ-սպաների ցուցակի մասին, միաժամանակ հրամայելով բոլոր գործառնների պետերին հանձնաժողովի անդամներին տրամադրել անհրաժեշտ ամեն կարգի բանավոր և գրավոր տեղեկություններ սպաների ծառայողական և բարոյական հատկությունների մասին, որոնց ատեստացիոն փաստաթղթերը գտնվում էին հանձնաժողովի անդամների տրամադրության տակ: Հանձնաժողովի նախագահն էր Գլխավոր շտաբի գնդապետ Մ. Զինկևիչը, անդամակցում էին գնդապետ Արարատյանը, փոխգնդապետ Գոգձիկը, կապիտան Նեստերովսկին, շտաբ-կապիտան Խաչատուրյանը⁷⁷⁸: Եվ վերջապես, շուտով պատրաստվում է ատեստավորման մասին համապատասխան փաստաթուղթ: 1919 թ. հուլիսի 9-ին Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Մ. Զինկևիչը ստորագրում է հրամանագիր Ռազմական նախարարության սպաների և պաշտոնյաների ատեստավորման մասին Կանոնագրությունը, տալով դրանց ընդհանուր դրույթները⁷⁷⁹:

Բանակի՝ պետական անվտանգության համակարգի այդ անքակտելի բաղկացուցիչ օղակի նկատմամբ կար համակ ուշադրություն, և դա հստակ երևում է կառավարության և քաղաքական-կուսակցական ուժերի գործունեության վերլուծությունից: Հայկական բանակը 1918 -1920 թթ. ստեղծվում և ապրում էր կայացման ոչ միանշանակ գործընթացներ: Ռազմական մի տեղեկագրի համաձայն, զինվորական ծառայություն մեջ գտնվողների թիվը

⁷⁷⁷ Նույն տեղում:

⁷⁷⁸ Նույն տեղում, գ. 42, ք. 30, 52:

⁷⁷⁹ Նույն տեղում, գ. 132, ք. 77:

1919 թ. գարնանը հասնում էր 16 հազարի⁷⁸⁰, **Հովհ. Քաջազնունու** հուշագրի տվյալներով, որը ներկայացվել էր եվրոպական տերությունների ուշադրությանը, 1920 թ. հուլիսի վերջերին գորքերի ընդհանուր թիվը հասնում էր 18 հազար մարդու: Այնտեղ նշվում էր գորքի թվակազմի որոշ բաղադրիչներ, հագուստեղենի պակասության մասին⁷⁸¹: Այս պարագայում իրականությունը բացահայտելու համար անհրաժեշտ է համադրել մի շարք տվյալներ՝ պարզելու համար փաստացի վիճակի իրական պատկերը, լեզենդն ու ճշմարտությունը: **Կ. Սասունու** տվյալներով 1920 թ. հայ-թուրքական պատերազմի նախօրյակին հայկական բանակի թվակազմը հասնում էր 35 հազար մարդու⁷⁸²: Այլ կապակցությամբ **Կ. Սասունին** ուրիշ տվյալ է բերում, միաժամանակ իր կարծիքն արտահայտելով Հայկական բանակի վերաբերյալ. «Հայաստանի Հանրապետության կազմութենէն տարի մը յետոյ՝ ընդհանուրի համար ընդունելի էր 40.000 զինուորի մասին խօսելը: Հայկական բանակը մնաց բոլորի մտքին մէջ 40.000-նոց բանակ մը: Հայկական մեծախօսիկութիւնը «անպարտելի» տիտղոսն ալ տուաւ անոր. իսկ սահման չունեցող երեւակայութիւնը (որ ասիական յատկանիշ մըն է) երբեմն այդ բանակին օգնական կամաւորներ կը զրկէր դեպի Կարս եւ թիւը այդ կամաւորներուն կը հասցնէր 60,000-ի, ու այդ մասին, մէկը միւսի բերանէն թռցնելով, արտասահմանի մամուլի մէջ շունդալից լուրեր կը տրպուէին»⁷⁸³: Ժամանակակիցներից **Գ. Չախուռչյանը** գտնում է, որ բանակի թիվը թղթի վրա հասնում էր 27 հազարի, գտնելով որ իրականում 10 հազարի⁷⁸⁴ էլ չէր հասնում, **Հ. Փաստրմաճեանը** բանակի թվակազմը հասցնում էր ընդամենը 30 հազարի⁷⁸⁵, իսկ արդեն 1920 թ. նոյեմբերի վերջերին Զինվորական նախարար **Ռ. Տեր-Մինասյանի** ներկայացրած մի տեղեկագրի համաձայն հայկական բանակի զինվորների և սպաների քանակը՝ օժանդակ կազմով հանդերձ հասնում էր 34 հազարի, իսկ խմբերի հետ միասին՝ 40 հազարի⁷⁸⁶: Տեղին է նշել, որ ՀՀ ԳԱ կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի՝ 8 հատորյակի 7-րդ հատորում բերվում է տվյալ 40 հազարանոց բանակի մասին, որն իբր թե եղել է 1920 թ.⁷⁸⁷: Վերջապես մի տվյալ ևս հարկ է մեջ բերել, որից հետո կանցնենք եզրահանգումների: Հայաստանի պառլամենտի անդամ **Հ. Տեր-Հակոբյանի** տվյալներով Հայաստանի բանակի ընդ-

⁷⁸⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 79, ք. 47:

⁷⁸¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 498, ք. 33:

⁷⁸² **Կ. Սասունի**, Հայ-թուրքական պատերազմը// «Հայրենիք» (Բոստոն), 1926, քիվ 11-12, էջ 112:

⁷⁸³ Նույն տեղում, էջ 104:

⁷⁸⁴ Տե՛ս **Գ. Չախուռչյան**, Ի՞նչ էր եի ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 20:

⁷⁸⁵ Տե՛ս **Հ. Փաստրմաճեան**, Լեռնային պատերազմ, Փարիզ, Հրատ., Հայ Կամախորհրդու եի մարտիկներու Միության, 1938, էջ 16:

⁷⁸⁶ Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, էջ 514:

⁷⁸⁷ **Հայ ժողովրդի պատմություն**, Երևան, ԳԱ հրատ., 1967, հ. 7, էջ 52:

Հանուր թիվը 1920 թ. հոկտեմբերին հասնում էր 55 հազարի⁷⁸⁸: Իսկ այժմ ըստ էության: Փաստերի համադրի խոր վերլուծությունը ցույց է տալիս, որ այս թվական տվյալների մի մասը, որ բերվում է ժամանակակիցների և ոչ ժամանակակիցների կողմից, անիրական է, կամ էլ լավագույն դեպքում ենթակա է քննական խոր և անաչառ վերլուծության, ինչն էլ հնարավորություն կտա իրապես պարզելու ճշմարտությունը Հայկական բանակի, իրոք, մարտունակ թվակազմի մասին, ինչպես նաև նրա մարտական հնարավորությունների և ունեցած ներդրումի մասին հանրապետության անվտանգություն համակարգի առջև ծառայած խնդիրների լուծման տեսանկյունից, ըմբռնելու այդ բանակի հաղթանակների և ցավալի պարտությունների պատճառները, ամփոփելու պատերազմական դասերը: Այս ուղեցույցած թվական տվյալները առավել ևս անընդունելի են, երբ ակնհայտ է դառնում, որ այդ ահուկի Հայկական բանակը գրեթե առանց լուրջ դիմադրություն պարտություն է կրել Հայաստանի Հանրապետության համար ճակատագրական նշանակություն ունեցած 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված պատերազմում՝ իրեն գրեթե ոչնչով, կարծես թե, էսպես չգերազանցող թուրքական բանակից, իսկ դա նսեմացնում է մեր ժողովրդի իրական արժանիքները, նրա հերոսական պատմությունը: 40-50 հազարանոց բանակի մասին պատկերացումը չափազանց վտանգավոր հայեցակետ է, քանզի այն լավ ծառայություն չի մատուցել մեզ ռազմահայրենասիրական, քաղաքական և աշխարհայացքային դաստիարակության հիմնախնդիրների տեսանկյունից: Այն, որ 1918 -1920 թթ. գոյություն ունեցած Հայկական բանակի ընդհանուր թվաքանակից մարտունակ էր իրապես ընդամենը 16 -18 հազարը, դա մեկ անգամ ևս **Ս. Վրացյանը** հաստատում է ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեին 1919 թ. մայիսի 18-ին հասցեագրված նամակում, մասնավորապես ընդգծելով այն մասին, որ «մոտ 16 -17 հազարանոց բանակը կարգապահ է և քաջ»: Այնուհետև նա ավելացնում է, որ «աշխատել են ստեղծել նոր զորամասեր»՝ հենց սա կարելի է տեղավորել 40-50 հազարանոց բանակի ստեղծման երազանքի ու գոյություն ունեցած լինելու պատկերացումների անիրական շրջանակներում, եղածն ուղեցույց⁷⁸⁹: Սակայն միանգամայն այլ բան է պնդել, որ ինչպես նշվում է մի արևիվային փաստաթղթում, նորին մեծություն «բրիտանական կառավարությունը» ապահովել է Հայկական բանակին՝ 40 հազարանոց զինվորության համար նախատեսված գենքով ու զինամթերքով, որ այն ժամանակվա գներով արժեք 1.200.000 ֆունտ ստեռլինգ⁷⁹⁰: Այստեղ տեղին է ավելացնել, որ դա ամենևին էլ բրիտանացիների

⁷⁸⁸ **Հ. Տեր-Հակոբյան**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 88:

⁷⁸⁹ **Ս. Վրացյան**, Հինթղթեր նոր պատմության համար, Բէյրութ, տպ. «Մշակ», 1962, էջ 88:

⁷⁹⁰ Տե՛ս **ՀԱԱ**, ֆ.Պ - 200, ց. 1, գ. 498, ք. 768, ֆ.Պ -199, ց. 1, գ. 146, ք. 96. **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 183. - հեղինակը մաս այդ

կողմից բարեգործական վերաբերմունքի դրսևորում չէր, կամ էլ ամենևին նպատակ չէր հետապնդում անշահախնդիր օգնությունն ցուցաբերել «բարեկամ» հայկական պետությունը իր զինված ուժերի ստեղծման հարցում, և ավելի շատ հիշեցնում է Երրորդ Հանրապետության օրոք Դաշնային Ռուսաստանի կողմից «այսպես կոչված գույք պարտքի դիմաց» ստանալու գործընթացը, քան որևիցե այլ բան, առավել ևս այն չի կարելի որակել որպես օգնության դրսևորում. ինչպես այդ մասին ուղղակիորեն վկայում է **Ռ. Հովհաննիսյանը**, Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության կողմից 25000 հրացանների և 40000 համազգեստի մատակարարումը պետք է կատարվեր միայն այն բանից հետո, եթե **Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան** ստորագրություն տալին տեղափոխման ծախսերի համար և Անգլիական բանկի կողմից պահանջվող գանձապետական պարտավորակները որպես ավանդ դնելու, այսինքն՝ տալու անգլիացիներին⁷⁹¹: Անգամ դա բրիտանացիների կողմից «մաքուր» չկատարվեց, քանզի ինչպես ցույց տվեցին հետագա գործընթացները, Հայկական բանակին մատակարարվող հրացանների մի զգալի մասը ոչ պիտանի դուրս եկան, որի համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը գանձապետարանի կողմից հատկացրեց 829634 ֆունտ ստեռլինգ, 9 շիլինգ և 3 պենս, ինչն է ամենևին էսպես չնպատեց ընթացող բանակաշինության դժվարին գործընթացներին⁷⁹²: Դրան ավելացրած այն հանգամանքը, որ իրականում հայկական բանակի ստորաբաժանումներից ոչ մեկը մարդկանց քանակական առումով համարված չէր ըստ հաստիքով նախատեսվածի: Դրա հիմքում ընկած էին լուրջ պատճառներ, այդ թվում՝ Առաջին Հանրապետության օրոք այդպես էլ անհաղթահարելի մնացած դասակարգության հիմնախնդիրը և դա էլ հիմք է տալիս պնդելու, որ գործի վերաբերյալ մի շարք տվյալներ պետք չէ լուրջ ընդունել, դրանք ուժեղացված են և ավելորդ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Այդ օրերի արժանահիշատակ ժամանակակից **Ս. Վրացյանը** ավելի է մանրամասնում իր ասելիքը Հայկական բանակի ընդհանուր թվակազմի և որակական հատկանիշների վերաբերյալ: Այսպես, իր «Կեանքի ուղիներով» հուշաշարքում նա ընդգծում է, որ 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի նախօրյակին Հայաստանի Հանրապետությունը «հազիւ 20 հազար կանոնաւոր զօրք ունէր՝ երկրի բոլոր սահմանները պաշտպանելու եւ ներքին կարգ ապահովելու համար: Այդ զօրքի մէկ մասը հին, տասը տարուց աւելի զէնքի տակ էր, յոգնած ու տկարացած, միւս

կապակցությամբ բազմաճյուղային հավելում է. «Հայերը կը մեղադրէին անգլիացիները այն քանի մէջ, թէ այդ զէնքը հաստ շատ ուշ, թէ զէնքը այն տեսակէն չէր, որուն սովոր էին հայ զինուորները, եւ այդ մեղադրանքներն ու դժգոհութիւնը զուգարկաբար 1920 թ. աշնան հայ-տաճկական աղետալի անյաջող ելքի հետ»:

⁷⁹¹ Տե՛ս Ք. Գ. Օվաննիսյան *Международные отношения Республики Армения 1918-1920 гг.*, Եր., «Тигран Мец», 2007, стр. 563:

⁷⁹² Տե՛ս **Աշխատությունը**, էջ 566:

մաքը նորակոչիկներ էին, պատերազմի անվարժ, մի մասն էլ անկանոն զօրամասեր՝ խմբապետների հրամանատարութեան տակ»⁷⁹³: Իսկ արդեն իր հիմնարար աշխատանքում՝ «Հայաստանի Հանրապետություն» գրքում ճշգրտելով տարբեր առիթներով բերված փաստական տվյալները, նշում է, որ Թուրք-Հայկական պատերազմի ժամանակահատվածում Հայկական բանակի ընդհանուր թիվը հասնում էր շուրջ 40 հազարի, որից 25-26 հազարը կանոնավոր բանակի զորամասեր էին, իսկ մոտ 10-12 հազարը՝ կամավոր աշխարհազորայիներ⁷⁹⁴: Ակնհայտ էր, որ ազգային բանակի ստեղծումը դժվարին գործ էր, և արդյունքներն էլ գոհացուցիչ չէին: Ստորև բերվող փաստաթուղթը ևս նպատում է Հայկական բանակի թվաքանակի վերաբերյալ պատկերացումների ամբողջականացմանը և հնարավորություն է տալիս գալ ավելի ճիշտ եզրակացությունների բանակի և անվտանգություն համակարգի ստեղծման ուղղությամբ ծավալված գործընթացների վերաբերյալ: Այն հնարավորություն էր տալիս նաև ըմբռնելու անվտանգության ամբողջական և քիչ թե շատ ավարտուն համակարգի ստեղծման դժվարությունները, որոնք մեղմ ասած, այնքան էլ գոհացուցիչ չէին: **Ալ. Խատիսյանը** 1919 թ. մարտի 14-ի Լեռի ռզղված իր նամակներից մեկում, պատմելով նախօրյակին կայացած կառավարության նիստի մասին, որին մասնակցել են բանակի գլխավոր պաշտոնյաները (գեներալ **Մ. Սելիկյանը**, գեներալ **Չուճարովը**, երևանյան ջոկատի հրամանատար **Դրոն (Դրաստամատ Կանայանը)**), և ուրիշներ, այնուամենայնիվ ընդգծում է բանակի անմխիթար վիճակի մասին: Նա գրում է, որ զինվորները սոված և զգզված են, 4 ամսից ավել լողացած չեն, 50 տոկոսով հյուծված են տիֆից, վերածվել են կիսակմախքի, վազում են և ընկնում: Դրանց թիվը հասնում է 31-32 հազարի՝ ունենալով մոտ 900 սպա: Ահա դա էր Հայկական բանակը: Զինվորները հագուստ չունեն: Գեներալ **Մ. Սելիկյանը** այդ նիստին ելույթ ունենալով, շեշտում է, որ ինքը մինչև ապրիլի 1-ը պետք է իր ձեռքի տակ ունենա 16 հազար զինվոր՝ հակառակ դեպքում՝ Հայաստանը ոչնչացված է: Այդ նպատակով էլ որոշվում է. 1) խնդրել անգլիացիներին իրենց ջոկատները դնել Քարվանսարայում, Ալեքսանդրապոլում, Իզմիրում և Քուլպում, թեկուզև փոքրաթիվ ջոկատներ, 2) խնդրել տալ հաց, հագուստ և սապոզներ Թիֆլիսից, 3) խնդրել Վրաստանին վերադարձնել իրենց Հայկական կորպուսի ունեցվածքը, 4) խնդրել գեներալ **Վ. Հ. Բելչին** այստեղ ուղարկել Հայաստանին անհրաժեշտ բոլոր բեռները (ցորեն, հաց, Թիֆլիսից ապրանքներ): Դրանից ավելին անել հնարավոր չի, եզրափակում է իր նամակը **Ալ. Խատիսյանը**⁷⁹⁵:

⁷⁹³ **Մ. Վրացեան**, Կեսնքի ուղիներով. Դեպքեր, Դեմքեր, Ապրումներ, Հ. Ե., Պեյրոթ, տպ. «Համազգայինի», 1966, էջ 171:

⁷⁹⁴ **Մ. Վրացեան**, Հայաստանի հանրապետություն, Պեյրոթ, 1958, էջ 477:

⁷⁹⁵ Տե՛ս **ՀԱԱ**, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 116, ք. 36:

Մատնանշելով այս և այլ նմանատիպ փաստեր՝ հեղինակները միշտ «մոռանում են» նշել, որ դրանք հաճախ թղթային տվյալներ էին, և որ դրանք բոլորը հավաստիացումների և խոստումների մակարդակով պետք է ընկալել, ասենք մոտավորապես այսպես. «այդ գեներ ու հանդերձանքը հասել է Փոթի և դրա մի մասն արդեն Երևանում է»։ Անշուշտ, անտեսել չի կարելի կամ էլ չի կարելի անտարբեր վերաբերմունք դրսևորել ևս մի կարևոր փաստաթղթի նկատմամբ՝ Փրանսերեն լեզվով, որի հեղինակը Փարիզում ՀՀ ազգային պատվիրակության քարտուղարի օգնական **Ղազարյանն** է։ Այսպես, ըստ այդ տվյալների՝ հայկական բանակի ճակատային (այսինքն՝ ռազմաճակատային խնդիրներին պիտանի) զինվորների թիվը 1920 թ. հասնում էր 24.715 մարդու, սպաներինը՝ 1515-ի, վարչական սպաներինը՝ 309-ի, կամավորներինը՝ 4023 մարդու և այլն։ Ընդհանուր առմամբ, ըստ այդ աղբյուրի, դարձյալ ընդհանուր հաշվարկի արդյունքներով ստացվում է այդ նույն 40 հազարից քիչ ավելի թիվը, որն իհարկե, պետք է դիտարկել ստորև բերվող եզրահանգումների շրջանակներում⁷⁹⁶։ Մատնանշելով վերը բերված և այլևայլ փաստեր՝ հեղինակները մեծմասամբ չեն փորձում խորանալ իրերի իսկական էություն մեջ, հաճախ կարծես անտեսելով, որ դրանք իրականությունը չհամապատասխանող անիրական և ուժեղացված տվյալներ են։ Հանրագումարի բերելով փաստական տարաբնույթ տվյալները Հայկական բանակի վերաբերյալ՝ կարելի է գալ հետևություն, որ ինքնին հասկանալի պատճառներով 55 հազարանոց բանակի վերաբերյալ վկայությունը ժխտվում է, քանզի այն միանգամայն հիմնադրուկ է և ոչ մի քննադատություն չի դիմանում, չնայած կան նույնիսկ այնպիսի վկայություններ, որ իբր թե 1920 թ. հայկական բանակի թիվը հասած է եղել անգամ 60 հազարի⁷⁹⁷։ Իսկ արդեն 40 հազարանոց բանակի մասին փաստարկումները կարելի է ընդունել լուրջ վերապահումներով, խորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր հեղինակներ Հայկական բանակի ընդհանուր թվակազմից գործող կանոնավոր բանակի ռազմաճակատային կարիքների համար պիտանի թվակազմը տեղավորում են 24-25 հազարի շրջանակներում, որից իրապես մարտունակ կարելի էր համարել միայն 16-18 հազարը, ինչի մասին էլ բազմանշանակ վկայում են ՀՀ բարձրագույն սպայակուլտի և կառավարությունների կայացուցիչները։ Վերջապես, մոտ 40 հազարանոց թվաքանակ կարող է ստացվել, եթե այդ 20-25 հազարին հավելենք 10-12 հազարից ավելի աշխարհազորայիններին և կամավորներին, որոնց մի մասի «**թէեւ արտաքին կերպարանքը զինուորի կը նմանէր, բայց անիկա զինուոր չէր**»⁷⁹⁸,

⁷⁹⁶ Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 160, ք. 2:

⁷⁹⁷ **Հ. Կաղապետյան**, Սերի պայմանագիրը Հայոց ճակատագրում, Եր., «ՀՀ Ազգային Արխիվ», 2004, էջ 27, **ՀԱԱ**, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 290, ք. 36-38:

⁷⁹⁸ **Կ. Մասունի**, Հայ-թուրքական պատերազմը// «Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11 (47), էջ 111:

- դիպուկ նկատել է **Կ. Մասունին**: Այնպես որ, մի բան ակնհայտ է, որ 1918-1920 թթ., Առաջին Հանրապետություն կառավարությունը, կառավարող քաղաքական կուսակցությունը և զինվորականությունը գուցե և ձգտում էին իրականացնել ընդհանուր երազանքը՝ ունենալ մեծ և մարտունակ ուժեղ բանակ, այն տեղավորելով շուրջ 40 հազարանոց և ավելի մեծաթիվ բանակի մասին պատկերացումների շրջանակներում, ընդ որում մշտապես նկատի ունենալով նաև այն կարևոր հանգամանքը, որ 1919 թ. տվյալներով 961,7 հազար բնակչություն ունեցող երկրի համար դա բավականին դժվար իրագործելի խնդիր էր⁷⁹⁹: Եվ այդ առումով էլ Հայկական բանակի վերաբերյալ շատ թվեր պետք է մնային և մնացին թղթի վրա, և ստեղծված տնտեսա-քաղաքական ծանրագույն պայմաններում ստիպված էին հաշտվել այն մտքի հետ, որ այդ բանակից մարտունակ կարող էր համարվել ու լինել ընդամենը 16-18 հազարը՝ այն էլ լուրջ վերապահումներով:

1919 թ. դեկտեմբերի վերջի տվյալներով Հայաստանի Հանրապետությունում զինակոչից խուսափող նորակոչիկների ու զինապարտների, այսինքն՝ դասալիքների թիվը կազմում էր 17.665 մարդ, իսկ նման իրավիճակում ձեռնամուխ լինել բանակի և անվտանգության համակարգի ստորաբաժանումների՝ հետախուզական ծառայություն, ՆԳՆ ուժային օդակների ձևավորմանը, նշանակում էր դնալ մեծ դժվարությունների, և երբեմն էլ պարզապես անհաղթահարելի բարդությունների և դժվարությունների ճանապարհով⁸⁰⁰:

1918 -1920 թթ. Հայկական բանակը որոշակի չափով դեռ շարունակում էր մնալ կիսաֆիդայական տիպի բանակ՝ թե իր դեկավար կադմի, և թե զինվորների տեսանկյունից: Իսկ խմբապետական մտայնություն ունեցող զինվորական առաջնորդները, զորահրամանատարները ետ չկանգնեցին Հայկական զորքի կազմակերպման խմբապետական սկզբունքներից և գաղափարներից, որոնք ունեին հեղափոխական-ապստամբական լիցք և ազգային ոգի, գործնականում անընդունակ գտնվեցին դարամակարդակ զինվորական կազմակերպության եղանակների կիրառմանը: Արտաքուստ Հայկական բանակը նմանվում էր կանոնավոր բանակի, և ռուսականի ազդեցություն տակ փորձում էր նմանվել վերջինիս: Սակայն Հայկական իրականությունը պայմաններում դժվար էր այդ անցումը կատարել, քանզի կանոնավոր բանակի պահանջներն ու ձևականությունները դուր չէին գալիս հայրուկապետներին և կամավորական շրջանի «զորապետներին»: Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական առաջնորդներին չհաղողվեց վճռականություն ցուցաբերել հաղթահարելու ձևավորվող Հայկական կանոնավոր բանակի սպայական կազմի և ֆիդայա-խմբապետական առաջնորդների մեջ առկա խուլ արհամարհանքը և տարակարծությունները, ինչը խիստ բացասական ազդեցու-

⁷⁹⁹ Հայկական հարց. Հանրագիտարան, Եր., «Հայկ. հանր. հրատ.», 1996, էջ 212:

⁸⁰⁰ ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 29ա, ք. 348:

Թյուն ունեցավ գորքի բոլոր գործողությունների վրա: Կամավորական գործամասերից անցումը կանոնավոր գորազնդերի չուղեկցվեց կարգապահության ամրապնդմամբ, քանզի խմբապետական տրամադրությունների ազդեցության տակ գտնվող այսպես կոչված «խմբերի» զինվորները հաճախ սանձարձակ, վնասակար գործեր էին կատարում՝ պաշտպանություն գտնելով իրենց խմբապետների կողմից, ինչն էլ ասպես ազդեց կանոնավոր բանակի կազմակերպման գործընթացների վրա, չնայած զուտ անձնական հատկանիշներով հայդուկապետներից շատերը խիզախ մարզիկ էին, ինչը սակայն ամենևին էլ չէր ներդաշնակվում կանոնավոր բանակի կողմից առաջարկվող խնդիրներին: 1918 -1920 թթ. Հայկական բանակը հիվանդ էր խմբապետականությամբ, իսկ զինվորական ու քաղաքական առաջնորդները բավարարվճուկանություն չէին ցուցաբերում իրոք դարձակարգակ խնդիրներ լուծելու: Դարերով ռազմական կյանքի կազմակերպումից գրեթե զուրկ մնալով (հաշվի առնելով նաև Դավիթ-Բեկյան բռնկումը և այլն), հայ ժողովուրդը դժվարությամբ էր գնում անհրաժեշտ հեղաբեկումների և նոր անցումների ռազմազինական ու զինվորական կյանքի կազմակերպման բնագավառում, իսկ հայկական ռազմաքաղաքական մտքի և ռազմական փառավոր ավանդույթների վերականգնումը ընթանում էր կայունացած կադավարները չափազանց մեծ դժվարությամբ հաղթահարելու ճանապարհով: Առաջին Հանրապետությանը նախորդող ժամանակահատվածում, հայ ժողովուրդի մեջ արթնացավ որոշակի ըմբոստ ոգի, հեղափոխական եռանդ, արդյունքում ստեղծվեցին առաջին զինատար-Ֆիդայական-հարեկչական բնույթի խմբեր, որոնք դարձան զինվորական կյանքի կազմակերպման նախատիպերը ինչպես 90-ական թվականներին, այնպես էլ 1918-1920 թթ., որոնք չկարողացան դառնալ իրական մարտունակ և կազմակերպված կանոնավոր բանակի թե՛ հիմքը, և թե՛ կորիզը: Պետաքաղաքական գործընթացները պահանջում էին հնարավորինս սեղմ ժամկետում ստեղծել հայկական բանակ, որի լուծման համար սկզբնապես հնարավոր ուղին Ֆիդայական-հեղափոխական զինատար խմբերի հիման վրա ռազմավարության կառուցումն էր, և այդ առումով պատահական չէր, որ Առաջին Աշխարհամարտի տարիներին հայկական գորքը արտացոլվեց կամավորական խմբերի գործունեության մեջ:

Այդուհանդերձ, այս ամենին զուգահեռաբար որոշակի քայլեր արվեցին Հայկական բանակի համար անհրաժեշտ և համապատասխան որակական հատկանիշներ ունեցող սպայական կազմ պատրաստելու և ուսուցանելու ուղղությամբ, որը կանոնավոր մարտական բանակի կազմակերպման տեսանկյունից էական հանգամանք է: Բոլոր թերություններով և բացթողումներով հանդերձ, տարաբնույթ փաստաթղթերից ակնհայտորեն երևում է, որ 1918-1920 թթ. ընթացել են լուրջ բանակաշինական գործընթացներ, և այդ առումով թե՛ չէ կառավարությունը, թե՛ պառլամենտը և՛ թե զինվորական իշխանությունները տվյալ բնագավառում ծավալել են բազմաբնույթ աշխարհ

տանքներ՝ դրանք նպատակաձեռնորդ բանակի կազմակերպմանը և նրա մեծացմանը, վերջինիս սպայական և այլ կադրերի պատրաստմանը: Բերենք ընդամենը մի փաստ. 1920 թ. հունվարի 28-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը «Գեներալնի շտաբի սպայական կուրսեր և նախապատրաստական ուսումնարան բանակու և այդ նպատակով 1.828.412 ռուբլու վարկ բաց անելու» մասին: Քննարկելով սույն ուշադրամ զեկուցումը, Նախարարների խորհուրդը որոշում է սկզբունքով ընդունել և առաջարկել զինվորական շտաբին մտցնել ընդհանուր նախահաշվի մեջ⁸⁰¹: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև այսպես կոչված Հայաստանի Փոքր խորհրդի բանակաշինություն և առհասարակ ռազմական գործի, անվտանգություն համակարգի ձևավորման խնդիրների հետ այս կամ այն կերպ առնչվող որոշումները: Այսպես, Հայաստանի Փոքր խորհուրդը 1920 թ. մայիսի 24-ի իր նիստում լսում է Զինվորական նախարարի զեկուցումը «Հատուկ բարձրագույն հանձնաժողով» կազմելու մասին: Ընդունված բանաձևում որոշվում է սկզբունքորեն համաձայնվել ներկայացված առաջարկի հետ, նշելով վերջինիս արժեքավորությունը, և ըստ այդմ ի նկատի ունենալով գործի լրջությունը, հարցը լուծելու համար այն մտցնել պառլամենտ⁸⁰²: 1920 թ. հունիսի 3-ի նիստում Հայաստանի Փոքր խորհուրդը լսում է ռազմական նախարարի զեկուցումը բարձրագույն շրջանի դասընթացների և սպայի նախապատրաստական դպրոցի նախահաշվին հատկացումների հաստատման մասին: Ընդունված որոշմամբ այն հաստատվում է⁸⁰³: 1920 թ. սեպտեմբերին Ալեքսանդրապոլում սկսվեցին զինվորական գիմնազիայի, իսկ Կարսում՝ մեկամյա ուսուցմամբ զինվորական ուսումնարանի կազմակերպման աշխատանքները, և այդ նպատակադրման իրականացման համար ՀՀ կառավարության օգոստոսի 16-ի որոշմամբ, գիմնազիայի 3 դասարանների կահավորման համար պետական գանձարանի սուղ միջոցներից հատկացվեց 24.495.380 ռուբլի, իսկ ուսումնարանի համար՝ 36.129.513 ռուբլի⁸⁰⁴: Ըստ ՀՀ կառավարության կողմից նախատեսված ծրագրի, զինվորական գիմնազիայում, որում պետք է սովորեր 350 սան, ընդգրկվելու էին առավելագույն զինծառայողների՝ Հայկական բանակի սպաների, դասային աստիճանավորների, զինվորական բժիշկների, ինչպես նաև որբանոցների 10-12 տարեկան ծնողազուրկ երեխաները: Ուսումնական ծրագրի համաձայն, ուսումնական գործընթացը զինվորական գիմնազիայում տևելու էր 7 տարի՝ նպատակ հետապնդելով գիմնազիայի սաներին մտավորապես, բարոյապես և ֆիզիկապես նախապատրաստել զինվորական ուսումնարան ընդունվելու համար: Իսկ մեկամյա ժամկետով զինվորական

⁸⁰¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 146, մաս I, ք. 19:

⁸⁰² Նույն տեղում, գ. 237, ք. 10:

⁸⁰³ Նույն տեղում, ք. 26:

⁸⁰⁴ Տե՛ս Մ. Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակը, էջ 74:

ուսումնարանում պետք է պատրաստվեին անհրաժեշտ սպայական կադրեր հետևազորի, հրետանային զորքերի և հեծելազորի համար: Զինվորական ուսումնարանում սովորելու էին 17-28 տարեկան միջնակարգ կրթությամբ և զինվորական գիմնազիան հաջողությամբ ավարտած ընդամենը 145 յունկերներ, ընդ որում շրջանավարտները ավարտելու պահին ստանում էին պողպորուչիկի սպայական աստիճան⁸⁰⁵: Կառավարությունը խորապես զգում էր այդ խնդրի իրագործման կարևորությունը Հայկական բանակի և անվտանգության համակարգի կայացման տեսանկյունից, ինչի մասին նշվում էր ՀՀ կառավարության 1920 թ. օգոստոսի 16-ի որոշման մեջ. «Համակողմանի պատրաստականություն ունեցող սպայական կազմը ամենալազ գրաւականն է բազմակողմանի ռազմական պատրաստություն»:

Ներկայ ժամանակ սպաների կադրը, այսինքն այնպիսի սպաների, որոնք սովորել են կադետական կորպուսներում եւ զինւորական դպրոցներում, Հայաստանում սաստիկ աննշան տոկոս է կազմում. մնացած սպայությունը բաղկացած է նախկին վառատարների դպրոցների սաներից, այն է՝ այնպիսի մարդկանցից, որոնք ունեն շատ թեթեւ հասկացողություն Ռազմական գիտություն մասին եւ յաճախ իրենց պատրաստականությունամբ չեն համապատասխանում ժամանակակից բարդ Ռազմական գործին:

Մօտիկ ապագայում բանակը զգալու է Ռազմական պատրաստականություն ունեցող սպայական կազմի պակաս:

Հոգ տանելով բանակի մարտունակությունը, ինչպէս եւ ապագայ սպայություն բանակում ընդհանուր եւ ռազմական գիտական պատրաստականությունը բարձրացնելու, անհրաժեշտ [են] գտնում շտապ կարգով բանալ Ռազմական գիմնազիտն և ռազմական դպրոց:

Հայաստանի ապագա սպայությունը եւ ընդհանուր ռազմական պատրաստականությունամբ չը պէտք է ցածր լինի իւր հարեւանների, վրացիների եւ ադրբեյջանցիների սպայությունից»⁸⁰⁶:

Եվ այսպիսով, ըստ էության Հայկական այդ բանակը բոլոր փորձերն անում էր կայանալու համար, ձգտելով դառնալ գործուն համակարգ՝ պատրաստելով անհրաժեշտ սպայական և այլ կադրեր. կառավարությունը զգալի ջանքեր էր գործադրում այդ կարևոր բնագավառում, և աշխատում էր նմանվել բանակի, կազմավորելով համապատասխան կառույցները, ձեռք բերելով գեներալ ռազմադրամաք, հայթայթելով սննդեղեն և այլն, և սպասելիքները բանակի՝ որպես ՀՀ պետական անվտանգության համակարգի կարևորագույն բաղկացուցիչ օղակի կայացման առումով բոլորովին էլ անիրական չէին: Կառավարությունը, Հայկական զինվորականությունը, պառլամենտը և կառավարող կուսակցությունը այլ առողջ ուժերի հետ համատեղ համառորեն ուղիներ էին որոնում այդ բանակի կարիքները գեներալ, գիմնաթերքի և հան-

⁸⁰⁵ Տե՛ս նույն տեղում:

⁸⁰⁶ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 190, ք. 9:

դերձանքի առուձով լուծելու, որպեսզի Հայկական բանակը՝ որպես պետական անվտանգության համակարգի կարևորագույն ստորաբաժանում և երկրի սահմանների պաշտպանվածության գլխավոր երաշխավոր, կայանար և դառնար գործուն, ուժեղ աշխատող մարմին: 1920 թ. հուլիսին վերաբերող մի տեղեկագրում նշվում է հետևյալը. «Հարավային Ռուսաստանի գինված ուժերի հրամանատարությունը տրամադրել է մեզ 3000000 փամփուշտ: Կառավարությունն այդ փամփուշտների կեսը գիջել է Վրաստանին, մնացածը (մեկ ու կես միլիոն) ամսոյ սկզբին ստացել է Երևանը:

Ամսոյ 3-ին Փոթի է հասել անգլիական նավով հետևյալ զենք ու ռազմամթերքը 25000 (քսանհինգ հազար) Րոչ սիստեմի հրացան, 400 (չորս հարյուր) Թեթև մաքսիմ սիստեմի գնդացիք, 58000000 (հիսուսուեթ միլիոն) Վիկկեր սիստեմի փամփուշտ, 80 (ութսուն) բիսկվիթ, 40000 (քառասուն հազար) համազգեստ (վերարկու, գլխարկ, կոշիկ և այլն), 500 (հինգ հարյուր) հատ հեռագրիտակ, մեծ քանակությամբ դեղորայք և անդամահատության գործիքներ: Այդ ռազմամթերքի մի մասն արդեն տարվել է Երևան:

Վրաստանի Յունաց զինանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում հայտնել է Բեզգադյանին, որ Յունաստանի կառավարությունը պատրաստ է, ձրիաբար բաց թողնել Հայաստանին 10000 (տասը հազար) Գրա սիստեմի հրացան. 400 (չորս հարյուր) փամփուշտ ամեն մի հրացանի վրայ, պայմանով, որ մեր կառավարությունը համաձայնվի՝ ստանձնելով այդ զենքը Պիրեյոս տեղափոխելու բոլոր ծախսերը»⁸⁰⁷: Եվս մի օրինակ: 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայից ստացվել և Հայկական բանակին էր հատկացվել 29 հազար լրակազմ հագուստեղեն (վերարկուներ, բաճկոններ, գլխարկներ, կոշիկներ) և զինասարք (փամփուշտակներ, գոտիներ, ջրամաններ և այլն⁸⁰⁸), ինչպես նաև 25 հազար միավոր հրագեն⁸⁰⁹: Դրան զուգահեռաբար հաջող փորձ արվեց տեղում՝ Հայաստանում զենքի և զինամթերքի արտադրություն կազմակերպելու համար, որն անվտանգության համակարգի ձևավորման ապագայի քաղաքականության տեսանկյունից էական էր: Չբավարարվելով զենքի ու զինամթերքի, փամփուշտների ստացումով Անտանտի երկրներից, Վրաստանից, Ղրիմից, Հունաստանից և այլ տեղերից՝ կառավարությունը Քանաքեռում կազմակերպեց փամփուշտի 75 ուժանոց գործարան, ուր աշխատում էին 171 հոգի, դրան զուգահեռաբար փամփուշտի 35 ուժանոց գործարան կազմակերպել Ալեքսանդրապոլում: Այդ գործողությունների հետևանքով 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը Քանաքեռի գործարանում

⁸⁰⁷ Տե՛ս ՀԱՍ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 607, ք. 54:

⁸⁰⁸ Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 142, ք. 186:

⁸⁰⁹ Տե՛ս Հ. Տեր - Հակոբյան, նշված աշխատությունը, էջ 86:

պատրաստվեց 296.000 փամփուշտ, իսկ Ալեքսանդրապոլի գործարանում՝ 492.000 փամփուշտ, ընդամենը՝ 798.000 փամփուշտ⁸¹⁰:

Որոշակի քայլեր արվեցին նույնիսկ օգուժի կազմակերպման ուղղությամբ, որն այդ ժամանակ ողջ աշխարհում առաջին քայլերն էր անում: 1919 թ. մարտի 1-ին Նախարարների խորհրդի նիստում լավեց Զինվորական նախարարի զեկուցումը օգադնաց ատրեադի (Չոկատի) շտաբը կրճատելու, Ֆրանսիական հրահանգիչներ հրավիրելու և 20-25 զինվորականների օգազնացության արվեստը սովորեցնելու համար Ֆրանսիա ուղարկելու մասին: Նիստում հավանություն է տրվում Զինվորական նախարարի առաջարկին, որի համար նրան երաշխավորում են վարել այդ առթիվ հարկավոր բանակցությունները⁸¹¹: Ըստ այդմ էլ արվել են գործնական քայլեր այդ ժամանակի համար արդեն հրատապ դարձող օգուժի կազմակերպման ուղղությամբ: 1919 թ. վերջերին արդեն հավաքվել էին Ֆրանսիական արտագրության «Վուազեն Լ.Ա.Ն» տիպի 3 և «Մորան» տիպի 3 ինքնաթիռներ, սակայն երեսածածկման համար պահանջվող նյութերի բացակայության պատճառով, որոնք Հայաստանում չկային, երկու ինքնաթիռներից (անբոպլան) լիովին պատրաստ էին ընդամենը մեկական նմուշ⁸¹²: Հետաքրքիր է նշել, որ «Վուազեն» տիպի մեկ ինքնաթիռ մասնակցեց վրաց-հայկական պատերազմին, սակայն 1918 թ. վերջին Ալեքսանդրապոլում վառողի պահեստի պայթյունի հետևանքով ոչնչացավ: Այլ վկայությամբ, հակառակորդի վրա սարկառնակային շոկատի կողմից 30 անգամ ուղմբեր են նետվել: Եվ այսպես, չնայած առկա դժվարություններին և աշխարհաքաղաքական բարդութիւններին, հայկական օգուժը՝ ավիացիան իր առաջին գործնական քայլերն էր անում⁸¹³: Ավելին, 1920 թ. փետրվարի 2-ին Նախարարների խորհրդի նիստը լսում է արտասահմանում 12 սավառնակներ գնելու մասին հարցը և հավանություն տալիս նշված խնդրին, դրա համար հատկացնելով 3.5 միլիոն ուղբլի՝ անդրկովկասյան բոներով⁸¹⁴: Այդ մասին մենք տեղեկանում ենք Զինվորական նախարար, գեներալ-մայոր **Արարատյանի** 1920 թ. փետրվարի 10-ի գրությունից (N^o 2019)՝ ուղղված Ֆինանսների նախարարության բյուջետա-գանձապետական բաժնին: Կարճ ժամանակ անց, ի լրումն վերը նշված որոշման, հատկացումները հաստատվում են նաև պառլամենտի կողմից, սակայն նշված 3,5 միլիոն հատկացումը կատարելով կառավարության 12 միլիոնանոց Ֆոնդի հաշվին, նկատի ունենալով այդ

⁸¹⁰ Տեն ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 199, ք. 183:

⁸¹¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 486, մաս I, ք. 62:

⁸¹² Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 79, ք. 5:

⁸¹³ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 119, ք. 186:

⁸¹⁴ Նույն տեղում, ց. 146, մաս I, ք. 21, 23:

խնդրի իրականացման համար անհրաժեշտ բեռնակիր անասունները, սայլա-կառքերը և հանդերձանքը⁸¹⁵:

Բանակատեղծ, և հետևաբար նաև անվտանգության համակարգի տարբեր օղակների, ինչպես բանակի, այնպես էլ այլ կառույցների ձևավորման գործընթացները դժվարանում էին և հաճախ էլ անլուծելի դառնում տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի պատճառներով: Կառավարութունը ի գործ չէր հաղթահարել բոլոր դժվարությունները և բարդությունները, քանզի երկիրը գտնվում էր տնտեսական փլուզման և աշխարհաքաղաքական մեկուսացման, հաղորդակցության ուղիների բացակայության պայմաններում: Սովը, տնտեսաքաղաքական փլուզվածությունը և մատչելիստական անարխիան ծնում էին հիմնախնդիրներ, որոնք հաղթահարելու համար անհրաժեշտ էր դրամ, դեղորայք, իսկ պետական աղքատիկ գանձարանը չէր կարող լուծել այդ խնդիրները, գումարած դրան՝ մատչելիստական խմբերի և անկանոն գործառնների սերմանած անարխիան և ավազակաբարո գործողությունները, որոնք էլ ավելի էին խճճում կառավարության գործունեությունը: Ավելին, 1918 թ. ամռանից մինչև 1920 թ. հունվարը ընկած ժամանակահատվածում երկիրը ընկավ խոլերայի, տիֆի, մալարիայի, գրիպի և այլ համաճարակների մեջ: Բոլոր այդ հիվանդությունները հանգեցրին մեծ զոհերի զինվորների մեջ, բժավոր և անդրադարձ տիֆով հիվանդացավ Հայկական բանակի կազմի շուրջ 60 %ը, ընդ որում մահացածությունը բժավոր տիֆից կազմեց մոտ 6%, մալարիայով հիվանդացան Սուրմալուի գործառնները և Երևանի շրջանում տեղաբաշխված գործառնների գրեթե բոլոր զինվորական աստիճանավորները: 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. հունվարի 1-ը հիվանդությունները և մահացածությունը գործերում արտահայտվեց հետևյալ կերպ. ընդամենը հիվանդացավ 27.443 մարդ, մահացան 2359-ը, և 1920 թ. հունվարի 1-ին բուժական հիմնարկություններում հիվանդ վիճակում գտնվում էր 1164 մարդ: Այսպիսով, մահացածության %-ը բոլոր հիվանդությունների հետ հարաբերությամբ՝ կազմեց 8,59%, իսկ Հայկական բանակի ընդհանուր թվի համեմատությամբ՝ 8,78%⁸¹⁶:

Բանակի, ռազմական շինարարության հարցերի լուսաբանման տեսանկյունից կարևոր է անդրադառնալ նաև ստորև բերվող մի փաստաթղթի, որը վերաբերում է 1919 թ. մարտի 12-ին Երևանում կայացած խորհրդակցությանը և վերջինիս կողմից ընդունված բանաձևին: Խորհրդակցությունը, որը վարում էր գործերի Երևանյան ջոկատի պետ Դրոն, ներկա են եղել նաև մի շարք կարևոր զինվորական անձինք և մասնավորապես Հայկական դիվիզիայի պետ գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը (*Մովսես Սիլիկովը*), Զինվորական նախարարության համբարակապետ (ինտենդանտ) գեներալ-մայոր *Չուճաբովը*, Հայկական հրետանային բրիգադի հրամանատար գեղապետ Արար-

⁸¹⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 303, մաս II, ք. 251-252:

⁸¹⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 79, ք. 51:

տովը, Հայկական դիվիզիայի շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը, 2-րդ գնդի հրամանատար գնդապետ Մելիք-Մուրադովը, 3-րդ գնդի հրամանատար Հալաբյանցը, Հայկական հրետանային բրիգադի 1-ին դիվիզիոնի հրամանատար, փոխգնդապետ Բաղդասարովը, գրահագնացքի պետ կապիտան Սիրունյանցը և ուրիշներ: Այս կարևոր խորհրդակցությունում լավում են գործառնաբերի պետերի գեկուցագրերը իրենց վատահամար գործառնաբերում իշխող ռեալ իրավիճակի մասին, որի հիման վրա էլ արվում է համապատասխան եզրահանգում գործքերի ողջ Երևանյան ջոկատի փաստացի վիճակի վերաբերյալ թե՛ ռազմական-մարտունակության և թե՛ բարոյաքաղաքական մթնոլորտի տեսանկյունից: Ըստ էության դրանք հանգում էին հետևյալին.

1. ա) Զորքերը հացի, սննդի և անասնակերի զգալի պակասություն ունեն, բ) զգացվում էր գինվորական հանդերձանքի և կոշիկեղենի բացակայություն, գ) զգացնել է տալիս կահավորված գորանոցների բացակայությունը, դ) անկողնային պիտույքների բացակայության գործոնը: Խորհրդակցությունում նշվեց, որ այս պատճառները և հանգամանքները հանգեցրել են գործառնաբերում տարածված հյուսիսային, որոնք զգալի չափով, այլ պատճառների հետ միասին ուժեղացրել են դասալքությունը բանակում: Խորհրդակցությունում նաև նշվեց. 1) գինվորների և սպաների ծանր նյութական-կենցաղային վիճակի մասին, 2) գումակի բացակայության, 3) կապի միջոցների բացակայության մասին և այլն: Խորհրդակցությունը քննարկեց նաև գործառնաբերի մարտունակության հարցը և արձանագրեց, օրինակ՝ հետևյալը. ա) 2-րդ հետևակային գունդը կարող է մարտաշարք դուրս բերել միայն 482 սվին, ունենալով, սակայն, 665 մարդ, բ) ձիերի բացակայության պատճառով այն չի կարող շարք դուրս բերել ոչ շարժական գնդացրային դասակը և երեք գնդացրային հրամկազմեր⁸¹⁷: Ելնելով վերոնշյալից և այլ հանգամանքներից՝ խորհրդակցության մասնակիցները ընդգծում են, որ գործքերի ծանր վիճակը և գոյություն անտանելի պայմանները հաղթահարելու, գործքերի մարտունակությունը գործնականում պահպանելու համար անհրաժեշտ է. 1) Զորքերին պարեն մատակարարել ոչ պակաս, քան մեկ ամիս առաջվա հաշվարկով, 2) գործառնաբերը ժամանակին ապահովել անհրաժեշտ և բավարար քանակությամբ դրամով, 3) ձեռք բերել անկողնային պիտույքներ, 4) բացել լազարեթներ Իգդիրում և Ղամարլուում, 5) պարենային պահեստներ բացել Իգդիրում, 6) սպաներին ձրի տրամադրել պետական գինվորական հանդերձանք և կոշիկ՝ առձեռն (թեկուզև տեղական արտադրության, եթե ուրիշը չլինի), 7) Զորանոցները կարգի բերել, 8) գործառնաբերի տրամադրության տակ դնել 2 բեռնատար ավտոմոբիլ և գնացք: Սարքին հեռախոսային ապարատներ չունենալու պատճառով դիվիզիայի հրամանատարի կարգադրությունները թիֆլիս գործուղել ինժեներ-սպայի՝ անհրաժեշտ ապարատները գնելու

⁸¹⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 27, ք. 147:

նպատակով, 9) հետախուզական նպատակների և կապի ապահովման համար հետևակային գնդերի հրամանատարներին թուլյատրել մարտի 20-ից սկսած ունենալ 12 հեծյալ հանձնակատար զինվորներ: Հատուկ զորատեսակների գծով բոլոր պետերին թուլյատրել (հրետանային, «կայծային» (էլեկտրական) կայան, զրահագնացքներ, գնդացրային դասակներ) ունենալ վարձու զինվորներ՝ ոչ զինապարտների թվից, 9 ամսից ոչ ավելի ժամանակամիջոցով, յուրաքանչյուրին տալով ամսական 150-ից 200 ռուբլի աշխատավարձ՝ հրետանային մարտկոցի համար՝ մինչև 22 վարձու զինվոր, գնդացրային հրամկազմերի համար՝ մինչև 24 վարձու գնդացրորդ, զրահագնացքների համար՝ մինչև 45 հոգի, 10) շտապ միջոցներ ձեռնարկել դասալիքների դեմ, ընդ որում գանազան հաստատութայինների, գյուղական կոմիսարների ենթարկելով դրամատուգանքի մինչև 3000 ռ. չափով կամ 1-3 ամիս բանտարկութան: Յուրաքանչյուր ծուխը (ընտանիքը) նյութապես պատասխանատու էր համարվում դասալիք զինվորների և պետական հանդերձանքի ու զենքի համար: Խորհրդակցութային այս եզրակացութայինները հաստատվում են խորհրդակցութայինը նախագահող գործերի Երևանյան գորաջոկատի պետ **Դրոյի**, Հայկական զիվիզիայի պետ գեներալ **Մ. Միլիկյանի** և գեներալ-մայոր **Ք. Արարատյանի** ստորագրութայիններով⁸¹⁸:

Հայկական բանակի կայացման և ռազմական շինարարութային, հանրապետութային անվտանգութային համակարգի տարբեր օղակների ձևավորման պատմութային հիմնահարցերի լուսաբանման տեսանկյունից հետաքրքրութային են ներկայացնում բոլոր այն փաստաթղթերը, որոնցում շոշափվում են բանակաստեղծ գործընթացներին վերաբերող խնդիրները, առավել ևս, երբ դրանց հեղինակները հենց Հայկական բանակի սպայական հրամկազմի լավագույն ներկայացուցիչներն են: Որոշակի փաստեր անհերքելիորեն վկայում են, որ Հայկական բանակի լավագույն զորամասերից մեկը **Դրոյի** ջոկատն էր, և դա ամենևին էլ պատահականութային չէր, քանզի շատ բան պայմանավորված էր Դրոյի՝ որպես մարդու և գորավարի, պետաքաղաքական գործչի անձով, նրա բարոյաքաղաքական բարձր հատկանիշներով⁸¹⁹: Այս առումով որոշակի հետաքրքրութային է ներկայացնում ՀՀ Զինվորական նախարարութային Գլխավոր շտաբի բարձրատիժան սպաներից և Հայկական հետախուզական ծառայութային հիմնադիրներից մեկի՝ գնդապետ **Միխայիլ Զինկևիչի**, որի գործունեութայինը Հայաստանում չի կարելի միանշանակ, առանց վերապահումների գնահատել, քանզի պետք է լրջորեն և համակողմանիորեն հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նրա գործունեութային հիմքում ընկած են եղել Ռուսաստանի հարավում գործող **Ա. Դենիկինի** կամավորական բանակի ռազմաքաղաքական շահերը, որը սակայն խոչընդոտ չի հանդիսացել Հայ-ռուսական հարաբերութայինների բարելավ վիճակի, տարա-

⁸¹⁸ Նույն տեղում:

⁸¹⁹ Տե՛ս **Հ. Գևորգյան**, Գրո, Եր., Հեղ. հրատ., 2007, էջ 269-535:

բնույթ ռազմաքաղաքական հիմնախնդիրների լուծման համար, որոնք առնչվում էին Հայաստանի Հանրապետության հետ, ինչը չի կարելի բոլորովին անտեսել, աղավաղված ներկայացնելով **Մ. Զինկեիչի** որպես բարձրատիճան գինվորական սպայի և քաղաքական գործչի դիմանկարը, և գուցե՝ դեռ ավելին: Այս տեսանկյունից ուշադրություն է արժանի որպես օրինակ Մ. Զինկեիչի 1918 թ. հոկտեմբերի 1-ի գեկուցագիրը (№ 140-141)՝ ուղղված Հայկական դիվիզիայի պետին իր կողմից սեպտեմբերի 29-30-ին կատարված քննազննություն մասին: Նշելով այն մասին, որ ինքը սեպտեմբերի 29-30-ը ընկած ժամանակահատվածում եղել է Հայկական հետևակային գնդի գործառնաբերում, և այդ առիթով դրականորեն է արտահայտվում Դրոյի գնդի մասին: Զեկուցագրում նաև արձանագրվում էր այն փաստը, որ չնայած գործառնաբերող գործառնային պայմանները լավ չեն, որ դրանք ոչ պիտանի, խարխիված վիճակում են, գինվորների հանդերձանքն ու կոշիկները մաշված և զգզված են, միաժամանակ ընդգծում է, որ գնդը բավարար քանակի է, և ջրկառի պետ Դրոն ունի գնդի և գինամթերքի բավարար լրացուցիչ քանակ, իսկ գինվորների նոր գործահավաքի պարագայում կարող է լիարժեքորեն օգտագործվել, սակայն միաժամանակ ընդգծում, որ դրանք պահեստամասերի բացակայության հետևանքով դժվար է սարքին վիճակում պահել⁸²⁰: Այս առումով որոշակի արժեք է ներկայացնում նաև 1919 թ. հունիսի սկզբի վիճակով Զինվորական նախարարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Դրոյի գեկույցը Նախարարների խորհրդում 1919 թ. հունիսի 9-ին (№ 5755), որում վերջինս իր բարոյական պարտքն էր համարում կառավարությունը ներկայացնել հանրապետության գինված ուժերում տիրող իրական վիճակը: Նշելով, որ **Արարատովի, Մ. Սիլիկյանի (Սիլիկովի)** և իր կողմից ղեկավարվող գինված ուժերը որոշակի քայլեր են կատարել և ինչ-որ չափով ամրապնդվել, միաժամանակ ավելացնում էր, որ իրենց գործերի վիճակը պետք է ճանաչել որպես բավականին տխուր, քանզի գրեթե լիովին բացակայում է գինվորական հանդերձանքը և կոշիկները, ժամանակին չի տրվում հաց և պարեն, և գինվորները գտնվելով մշտական արշավանքների և առաջնադասումների մեջ, կիսահոգնած են, կեղտոտ, զգզված, իսկ երբեմն էլ, բարձրաբերձ սարերում, ցուրտ պայմաններում (Իգդիրի և Կարսի շրջաններ) մշտապես և անընդհատ գնում են դեպի դժոխային քայքայում, որի դեպքում ուժեղացել է դասավորությունը, ինչպես նաև դրա հետ կապված հանցավորությունը՝ գնդի և գինվորական հանդերձանքի, պետական ունեցվածքի վաճառքը և այլն: Այնուհետև Դրոն նշում էր, որ հանդերձանքի բացակայության հետևանքով հուլիս ամսին Իգդիրի լազարեթում հիվանդ պառկել է մոտ 20 հիվանդ՝ թոքերի բորբոքումով: Սույն գեկույցում Դրոն փաստում էր ևս մի էական հանգամանք. գինվորների

⁸²⁰ ՀԱՍ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 42, ք. 96:

կողմից արվել են միանգամայն արդարացի բողոքարկումներ, որ միջոցներ չեն ձեռնարկվում այն զինապարտ քաղաքացիներին զորակոչել ենթարկելու առումով, ովքեր այս կամ այն պատրվակով տեղավորվել են աշխատանքի և դրանով իսկ խուսափել զինվորական պարտականությունների կատարումից: Վերջապես, Դրոն նպատակահարմար է գտնում վերոնշյալին զուգահեռ նաև արտահայտել իր նկատառումները Հայկական բանակի մարտունակությունը բարձրացման խնդրում, որոնք հանգում էին հետևյալին. 1) առանց հապաղման և առաջին հերթին անհրաժեշտ դրամով ապահովել զորամասերին և զինվորական հաստատություններին, 2) առաջին իսկ հնարավորության դեպքում գործերին ապահովել այլուրի բավարար պաշարով՝ մինչև նոր բերքահավաքը, 3) պարենավորման նախարարությունը հրահանգել դիմելու բոլոր քաղաքային ինքնավարություններին՝ հավաքելու սպիտակեղեն, հանդերձանք և կոշիկ՝ գործի համար: Միաժամանակ կարգադրություն անել համբարակապետությունը բաց թողնել բավարար չափով գումար՝ այդ նույն նպատակի համար, 4) բոլոր հնարավոր միջոցներ ձեռնարկել դասալքություն դեմ անդիջում պայքար ծավալելու և զինապարտ քաղաքացիներին զինվորական ծառայության մեջ ներգրավելու ուղղությամբ⁸²¹:

Հարկ է նաև նշել, որ անարդարացիորեն շատ դեպքերում փորձում են Հայկական բանակի թուլություն, դժվարությունների, սայթաքումների և անհաջողությունների ողջ խորքային արմատները որոնել բոլշևիկների գործունեության մեջ, և դա այն պարագայում, երբ Առաջին Հանրապետության վերջին վարչապետ և նրա տարեգիր **Ս. Վրացյանն** ինքն է խոստովանում, որ 1920 թ. սկզբներին «Հայաստանի ժողովուրդը, իշխանությունը և բանակը հակառակ էին բոլշևիկության, իսկ հայ բոլշևիկներն իրենք արհամարհելի քանակ էին ներկայացնում և անարժեք որակ՝ ընդամենը 500 անդամ, այն էլ՝ չափազանց աղքատ փորձված և պատրաստ ուժով»⁸²²: Այս առումով ավելի խոր վերլուծության ենթարկելով նշված հիմնախնդիրը և համադրելով մի շարք փաստեր՝ անհրաժեշտ է ավելի լուրջ եզրահանգումների գալ, փորձելով խոստովանել, որ շատ ավելի կարևոր պատճառներ էին ընկած Հայկական բանակի քայքայվածություն, անմարտունակություն, դասալքություն և այլ երևույթների հիմքում, որոնց մասին արժե խոսել և լրջորեն վերաբերվել, շայնամի նման ավազի մեջ մտցնելով գլուխը՝ անտեսելով իսկական իրական փաստերը: Հենց այդ տեսակի վկայակոչումների ու փաստերի կարելի է հանդիպել **Ս. Վրացյանի** մոտ, որը խոր անդրադարձ կատարելով դեպի Դրոյի՝ որպես զորահրամանատարի կերպարին, և վերհանելով Հայկական բանակի դժվարությունները և սայթաքումները 1919-1920 թթ. սովյակ տարիներին, **Ս. Վրացյանը** նշում է մասնավորապես հետևյալը. «Բոլշևիկներին ճնշելուց

⁸²¹ Տե՛ս նույն տեղում, ք. 249-250:

⁸²² Տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանը բոլշևիկյան Մոսկոյի և քրքակյան սպի միջև (Երկրորդ տպագրություն), տպարան «Համազգային» ընկերություն, Պէյրուֆ, 1953, էջ 53:

Տետոյ, Բիւրօ-կառավարութիւնը որոշեց զսպել եւ զանգիբասարցիներին՝ կանոնաւոր զորամասերի միջոցով⁸²³։ Դրօն բուռն կերպով բողոքեց վերջին որոշման դեմ։ Զանգիբասարի նուաճմանը նա, իհարկէ, հակառակ չէր և համոզուած էր, որ բոլշևիկներին սանձահարելուց յետոյ աւելի դիւրին կը լինի Զանգիբասարի մաքրագործումը, բայց, անընդունելի, վնասակար էր համարում կանոնավոր զօրքի մասնակցութիւնը Զանգիբասարի գրաւման։ Նա անվիճելի փաստերով և իրատեսութեամբ աշխատում էր համոզել, որ բանակի մասնակցութիւնը քաղաքացիական կռիւներում, անխուսափելի կերպով կը խախտէ զինուորութեան կարգապահական ոգին, կը բարոյալքէ ու կը տկարացնէ մարտունակութիւնը։ Այդպէս էլ պատահեց։ Զանգիբասարը նուաճեց, ճիշտ է, բայց թրքական զիւղերի մաքրագործման մասնակցող զորամասերն էլ բարոյալքուեցին ու գրեթէ կազմալուծուեցին։ Մաքրագործումը անխուսափելի կերպով կապուած էր թալանի ու հարստահարութիւնների հետ։ Դրօն գիտէր այս և թույլ չտուեց, որ իրեն ենթակայ զորամասերը մասնակցէին Զանգիբասարի գործողութեան։ Եւ հետագայ դէպքերը ցույց տուին, թէ որքա՞ն իրաւացի էր Դրօն, երբ միայն Սուրմալուի ճակատի վրայ, ուր գործում էին Դրօյի զօրամասերը, հայ բանակը ընդունակ եղավ վճռական հակահարված հասցնելու թշնամուն»⁸²⁴։ Հարկ է նաև ասել, որ ըստ էութեան Ս. Վրացյանը այդ հարցում համակարծիք է եղել Դրօյի հետ, և մի կապակցութեամբ էլ գրում է հետևյալը. «Բանակի հոգեբանութեան վրա մեծապէս ազդել է նրա մասնակցութիւնը ներքին քաղաքացիական կռիւներին, եւ երկրի մաքրագործման՝ հակապետական տարրերից, ինչպէս եւ բոլշևիկյան քարոզչութիւնը։ Իր կոչման բարձրութեան վրա չէր եւ բանակի հրամանատարութեան կազմը, ինչպէս նաև ղեկավարութիւնը։ Գործօն զօրամասերի հրամանատարական կազմի մեջ մնացել էին հայրենասիրութիւններից զուրկ, շահամօլ զօրավարներ եւ Զինվորական նախարարութիւնը հանդուրժում էր նրանց»⁸²⁵։

Հենվելով ժամանակակիցների կողմից արտահայտուած որոշ մտքերի և թողած վկայութիւնների հետ, կարելի է եզրահանգել, որ վարչապետ Հ. Քաջազնունու ժամանակ ռազմաքաղաքական շրջանների որոնումները և պատկերացումները բանակաշինութեան գործընթացների կազմակերպման բնագավառում գտնվում էին ռուսական ռազմական մտքի ազդեցութեան տակ, և այդ տեսանկյունից էլ նպատակ էր դրվում ստեղծել ռուսական ոճի զօրք։ Դրանից էլ ելնելով, ռուսական բանակի մեջ զատիբարակված, նրա շարքերում թրծված և մարտական բովով անցած հայ սպայութեան մի մասը

⁸²³ Տե՛ս Ս. Վրացեան, Կեսանքի ուղիներով, Կ. Պէյրոս, տպ. «Մշակ», 1965, էջ 192-193։

⁸²⁴ Տե՛ս նոյն տեղում, էջ 193։

⁸²⁵ Տե՛ս Ս. Վրացեան, Կեսանքի ուղիներով, Հ. Ե, Պէյրոս, տպ. «Համագալսիմ», 1966, էջ 171։

իր համար անընդունելի էր համարում զորքի կազմակերպման Հայաստանյան կազմակերպման ձևը՝ կիսաժողովրդական, կիսազինվորական ձևը:

Երկրորդ կարևոր խնդիրը, որը փորձ էր արվում այդ ժամանակ լուծել, դա զինվորական ուժը քաղաքականությունից դուրս բերելն էր, և այդ իմաստով հետևողական քայլ էր համարվում ոչ մի քաղաքական հոսանքի չպատկանող **Հ. Հախվերդյանի** նշանակումը որպես Զինվորական նախարար, որն, ավաղ, շարունակություն չունեցավ, և չլուծվեց այդ ժամանակաշրջանի կուսակցական-քաղաքական մտայնության հետևանքով: Դա համապատասխանում էր ռուսական ոգուն և այդ իրականության կողմից առաջադրված պահանջներին, իսկ ռուսական ռազմական ստանդարտները ամենևին էլ չէին կարելի տեղավորել պատմություն ետնախորշում, քանզի դրանք գտնվում էին դարամակարդակ մատուցյալում, և հայ ռազմաքաղաքական ուժերը կլանված էին դրանով, ինչը ըստ էության բացառում էր զորքի կազմակերպման անկանոն եղանակները, փաստացիորեն ժխտելով զորքի կազմակերպման ինչպես կիսաժողովրդական-կիսազինվորական, այնպես էլ պարզապես խմբապետական-հայդուկային համակարգի նպատակահարմարությունը, ինչին տուրք տալն էլ հենց բացասական դեր խաղաց 1920 թ. ռազմական աղետալի իրադարձությունների ժամանակ:

Եվ քանի որ Հայկական բանակը կազմակերպված լինելով որոշակի զինվորական մասնագիտական տվյալների վրա, ուներ իր արժանիքները ռազմագիտական տեսանկյունից, բայց ուներ նաև իր թերություններն ինչպես ոգու և կամքի տեսանկյունից, այնպես էլ հենց դարամակարդակ պահանջների հաշվառման, կանոնավոր բանակներին ներկայացվող հիմնարար պահանջների լույսի ներքո:

Բանակաստեղծ քաղաքականությունում կառավարությունը ոչ միշտ էր ճիշտ լուծումներ գտնում, երբեմն էլ ուղղակի պակասում էր շրջահայացությունը և կոնկրետ իրավիճակների օբյեկտիվ վերլուծությունը, հետևաբար էլ որոշ երևույթների տրվում էին անսթափ և հապշտապ լուծումներ, ինչը որոշակիորեն վնասում էր հանրապետության անվտանգության համակարգի ձևավորմանը նպատակաուղղված կառավարության, պառլամենտի քաղաքականությունը, անտեղի խոչընդոտներ հարուցում պետականորեն, ազգային տեսանկյունից կարևոր այդ գործերի առաջ: Այսպես, ռազմական նախարար **Ռ. Տեր-Մինասյանի** 1920 թ. հունիսի 26-ի N° 1073 շրջաբերական հրամանի հիման վրա ոչ ուշ, քան մինչև օգոստոսի 1-ը գործավարությունը և զբաղրությունը բոլոր շտաբներում, ռազմական հիմնարկություններում և զորամասերում պետք է կատարվեր հայերեն լեզվով, բացի տնտեսական մասի հաշվետվությունից: Սույն որոշմանը շտապողական, իրադրությունն անհամապատասխան և չհասունացած մոտեցում ցուցաբերեցին նաև Հայաստանյան իրականության մեջ գործող կուսակցությունները: Միաժամանակ, իրականությունը ցույց տվեց, որ դա այնքան էլ հեշտ չէր իրականացնել,

ավելի ճիշտ՝ անհնարին էր և ոչ միայն այն պատճառով, որ հայերեն տառերով գրամեքենաներ չկային, այլև այն պատճառով, որ հնարավոր չէր ռուս պաշտոնյաներին փոխարինել հայերեն իմացող գինվորական մասնագետներով, չնայած այն հանգամանքին, որ Գլխավոր շտաբի թարգմանիչ հանձնաժողովը զգալի աշխատանքներ ծավալեց և հայացրեց բազմաթիվ գրադրութային ձևեր, հրամաններ, մատյանների օրինակներ, կանոնադրքեր և այլն: Մինչև 1920 թ. հունիսի 1-ը հայկական զորքերում գտնվում էին օտարազգի և օտարազգու 256 սպաներ և աստիճանավորներ, որոնցից 81-ը հուլիսի 1-ից հայացման առթիվ տրված N^o 1073 շրջաբերական հրամանի հիման վրա ազատ արձակվեցին Հայկական բանակում ծառայությունից⁸²⁶: Ավելին, ձգտելով թուլացնել Դենիկինի Կամավորական բանակի ազդեցությունը Հայաստանում ընթացող բանակաստեղծ գործընթացների վրա, և դրանով իսկ ունենալ հնարավորինս ռուսական սպաների գերակշռությունից զերծ բանակային սպայական կազմ, ինչը կարևոր էր ՀՀ պետական անվտանգություն համակարգի կայացման տեսանկյունից (քանզի Հայկական բանակի սպաների կեսից ավելին ռուսներ էին⁸²⁷), 1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի պառլամենտի նիստում **Ալ. Խատիսյանը** միանշանակ հայտարարեց, որ ՀՀ կառավարությունը որոշմամբ Կամավորական բանակի հետ առնչություն ունեցող կամ նրանց գաղափարախոսությունը կրող սպաները, պաշտոնյաները և գինվորներն ազատ են Ռուսաստանի հարավ գնալու, իսկ նրանք, ովքեր կմնան, պարտավոր են ճանաչել միմիայն ՀՀ իշխանություն գերակայությունը⁸²⁸: Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությունամբ կազմվեց հանձնաժողով **Գ. Խատիսյանի** գլխավորությամբ՝ հայացման օրինագիծ մշակելու համար⁸²⁹: Սակայն զորամասերը, իրապես չկարողացան ժամանակին հասցնել արձակվելիք սպաների և աստիճանավորների ցուցակը, և այդ տեսանկյունից, փորձելով խուսափել խառնաշփոթ առաջ բերած իրավիճակից, ռազմական գործողություններին չվնասելու համար, Զինվորական նախարարությունը հնարավոր գտավ ժամանակավորապես կասեցնել այդ հրամանի կատարումը գործող զորամասերում՝ մինչև ներքին քաղաքացիական կռիվների և արտաքին այլևայլ պատերազմների վերջնապես: Դա բացատրվում էր նաև նրանով, որ հայազգի սպաների մեծագույն մասն ուներ ռուսական ռազմական կրթություն, և որոշ ժամանակամիջոց էր անհրաժեշտ նրանց հայացման համար, ինչը անհնարին էր 1918-1920 թթ. իրականության պայմաններում: Հրամանը համարվեց ժամանակավրեպ և ոչ տեղին, քանզի այն կործանարար նշանակություն կունենար առանց այն էլ դժվարին պայ-

⁸²⁶ ՀԱԱ, ֆ. 11 - 199, ց. 1, գ. 119, ք. 190:

⁸²⁷ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 190:

⁸²⁸ Տե՛ս նույն տեղում:

⁸²⁹ Տե՛ս «Հայաստանի աշխատավոր» (Երևան), 11 հունիսի, 1919, N^o 114:

մաններում գտնվող Հայաստանի Հանրապետության, նրա ռազմաքաղաքական իրավիճակի և ընդհանրապես անվտանգության համակարգի ձևավորման ուղղությամբ ընթացող բանակաստեղծ գործընթացների համար, էական ազդեցություն թողնելով Հայկական բանակի մարտունակության և կազմային հիմնահարցերի վրա⁸³⁰:

Այն, որ Հայկական բանակի հիմնախնդիրները առաջնային էին, և առանց այդ բանակի չէր կարող լինել արդյունավետորեն գործող անվտանգության համակարգ, ակնհայտ էր: Ակնհայտ էր նաև այն, որ այդ ժամանակաշրջանում, չնայած ահուգի դժվարություններին, ոչ օբյեկտիվ բնույթի բարդություններին, ՀՀ կառավարությունը, կուսակցությունները և պառլամենտը փորձել են ուղիներ որոնել բանակի հիմնախնդիրները լուծելու համար, և այդ կապակցությամբ արել են առաջարկներ, եզրակացություններ, գործադրել են ջանքեր, որոնք տվել են որոշակի արդյունքներ: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում էջմիածնի և Սուրմալուի գավառները գնացած պառլամենտական հանձնաժողովի զեկույցը, որը ներկայացվել է պառլամենտի 1919 թ. դեկտեմբերի 29-ի նիստում: Նշելով, որ Զինվորական նախարարության հաստատությունների գործերը հատուկ վերաքննության չեն ենթարկվել իրենց կողմից, էջմիածնի և Սուրմալուի գավառները գնացած պառլամենտական հանձնաժողովի նախագահ և այդ հարցի վերաբերյալ պառլամենտում զեկույց ունեցած **Ս. Թորոսյանը** ընդգծում էր հետևյալը. «Զորամասի պետի թուլյտվածությամբ գնացինք դիրքերը և հիացանք զինվորների պարտաճանաչությամբ և դիմացկունությամբ, սակայն չենք կարող չհիշատակել, որ դեկտեմբերի 21-ին՝ բանակի տօնի օրը, Իգդիրում գործը հաց չունեք, թեև այլուրն ընկած էր էջմիածնի կայարանում: Ընդհանրապես, գործի մթերքների մատակարարման գործը բավարար չէր»⁸³¹:

Այստեղից ակնհայտ են Հայկական բանակի կայացման դժվարությունները, որոնք գլխավորապես պայմանավորված էին այն տնտեսա-քաղաքական ծանրագույն պայմաններով, որոնցում գտնվում էր Հայաստանի Հանրապետությունը: Սակայն անգամ այդ դժվարին պայմաններում բանակաստեղծ գործընթացները և որոնումները համառորեն շարունակվում էին, և կառավարությունը որոշակի ուշադրություն էր դարձնում հանրապետության պետական անվտանգության համակարգի ձևավորմանը և կուտակված հիմնախնդիրներին լուծմանը, այն դիտելով որպես կարևոր նախապայման հանրապետության պաշտպանունակության ամրապնդման, երկրի սահմաններն արտաքին վտանգից ապահովագրելու խնդրում: ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար **Մ. Զինկևիչի** զինվորական գերատեսչության գծով 1919 թ. հունիսի 10-ի հրամանագրով հաս-

⁸³⁰ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 119, ք. 189-190:

⁸³¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 2, ք. 49:

տատվում է 1-ին Հայկական 1-ին Սահմանապահ բրիգադի հաստիքակազմը, ըստ որի բացի բրիգադի հրամանատարից և նրա 3 օգնականներից, բրիգադն ունենում է 3 բաժին և 6 ջոկատ՝ 6 շտաբային սպա, 42 օբեր-սպա, 3 բժիշկ, 1 անասնաբույժ, 1 գործակարգավար, 1136 զինվորներ, շարային ձիերի քանակը հասնում էր 294-ի, սայլակառքերինը՝ 590-ի: Նշված բրիգադի շտաբն ունենալու էր հրամանատար՝ 3 օգնականներով, 4 օբեր-սպա, 2 զինվորական աստիճանավորներ, 30 զինվոր, 7 հոգանոց կապի խումբ, պարետային ծառայություն՝ 25 հոգուց բաղկացած, այսինքն՝ շտաբն ունենալու էր 5 հոգանոց կազմ, իսկ զինվորներ՝ 148-ը, ներառյալ միացյալ գնդացրային հրամկազմը՝ 4 սպայով և 75 զինվորներով⁸³²: 1919 թ. հունիսի 14-ին Զինվորական նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Դրոն հրաման է արձակում հատուկ գումարտակ կազմավորելու մասին՝ կարգադրելով Երևանյան ջոկատի հրամանատարին, որպես այդ գործառնի ձևավորման և կազմահամալրման հիմքի նկատի ունենալ Առանձին Կամավորական հետևակային գումարտակի հաստիքակազմը՝ գորակոչային հասակի զինավարտներից, ավելացրած՝ հեծյալ-հետախուզական հրամկազմը: Ընդ որում, 1919 թ. հունիսի 14-ի վիճակով հաստատվում է նաև Հատուկ գումարտակին կից հեծյալ-հետախուզական հրամկազմի հաստիքակազմը, որը բաղկացած էր 2 սպայից, 53 զինվորից, այդ թվում կային՝ 5 Ֆելդշեր, ավագ ունտեր սպա, կրտսեր ունտեր սպա և այլն⁸³³:

Որոշակի քայլեր արվեցին Կարսի միջնաբերդի հրետանային հրամկազմը ուժեղացնելու ուղղությամբ (ինչը հետագայում արագ քարուքանդ արվեց անգլիացիների միջոցով - Վ. Վ.), որի ժամանակավոր հաստիքակազմը 1919 թ. օգոստոսի 25-ին հաստատվեց, որի տակ կար Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար կապիտան **Շումոյի** ստորագրությունը: Ըստ դրա, Կարսի բերդի հրետանային գունդը և ղեկավար վարչությունը ուներ 35 սպա, 8 զինվորական աստիճանավորներ, 965 զինվոր, 22 ձի, 16 բեռնակիր անասուններ և այլն⁸³⁴: 1919 թ. օգոստոսի 31-ին Զինվորական նախարար գեներալ-մայոր **Ք. Արարատյանի** կողմից հաստատվեց Հայկական սահմանապահ բրիգադի ուսումնական հրամկազմը՝ բաղկացած 7 հոգուց⁸³⁵: 1919 թ. նոյեմբերի 16-ին գործերի հրամանատարի Գլխավոր շտաբի պետի պարտականությունները կատարող **Հ. Հախվերդյանի** ստորագրությամբ հայտնի փաստաթղթի համաձայն Առանձին հատուկ հետևակային գումարտակի հեծյալ հետախուզիչների հրամկազմը բաղկացած էր 1 սպայից, 24 զինվորից ընդ որում՝ 1-ը՝ շտաբային էր, և 25 շարային զինվորներից⁸³⁶:

⁸³² Նույն տեղում, ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, ք. 296-297:

⁸³³ Նույն տեղում, ք. 132:

⁸³⁴ Նույն տեղում, ք. 372- 373:

⁸³⁵ Նույն տեղում, ք. 344:

⁸³⁶ Նույն տեղում, ք. 362:

1919 թ. դեկտեմբերի 19-ին Նախարարների խորհուրդը լսում է Ֆինանսների նախարարի զեկուցումը սահմանապահ գումարտակ կազմակերպելու համար հատկացումներ կատարելու մասին հարցը: Հիմնահարցը կրկին քննարկվում է ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. դեկտեմբերի 25-ի նիստում: Ընդունված որոշման մեջ հավանություն է տրվում գումարտակ կազմակերպելու խնդրին, և հանձնարարվում է. ա) այն կազմակերպել զինվորականներից և զինվորակոչից ազատ կամավորներից, բ) ամեն մի զինվորին ամսական նշանակելով 1000-ական ռուբլի ռոճիկ, հագուստ և ուտելիք տալով, գ) զինվորներին գլխավոր նշանակել սկսած տասնապետից, այնուհետև՝ շոկատապետ և այլ աստիճանավորներ՝ համապատասխան հավելումներով, ըստ այդմ՝ դ) գորակոչը կազմակերպել ՆԳ նախարարությունից աջակցությամբ, ե) զինվորական մասին իրավունք վերապահել այդ գումարտակին տալ թնդանոթներ, պատրաստել համապատասխան կարգի զինվորներ, զ) ծախսերի համար զինվորական մասին առաջարկել՝ հոգալ իր տրամադրությունից տակ եղած զինվորական կարիքների համար նախատեսված 7 միլիոն ֆոնդից, է) ռոճիկների համար ծախսերը հոգալ Հայաստանի Հանրապետությունից Նախարարների խորհրդի 10 մլն. ֆոնդից, ը) կազմակերպման համար նշանակել մեկ ամիս ժամանակ⁸³⁷: 1920 թ. ապրիլի 10-ին (N^o 2100) Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը կառավարությունից նիստին ունեցած զեկուցման մեջ նշում է, որ Հայաստանի սահմաններից հաճախակի չորոշված ձևերով դուրս են բերվում հում նյութեր, թանկարժեք գույք և անասուններ, ստեղծված իրադրությունում դուրս բերումը դադարեցնելու համար պահանջում էր վրացական սահմանի վրա՝ Քուռ գետի հովտով դեպի Արդահան, մինչև միացումը, 1-ին սահմանային բրիգադի ուժերով ապահովել սահմանային գիծ, ինչը ՀՀ պետական անվտանգությունից ապահովման տեսանկյունից կարևոր քայլ էր: Կառավարությունը ջանքեր է գործադրում 2-րդ կարսյան սահմանապահ բրիգադի կազմակերպումը արագացնելու համար: **Ռ. Տեր-Մինասյանը** խնդր էր դնում շուտափույթ քննել բրիգադի կազմակերպման, վարկավորման հարցը, տալ դրական լուծում բոլոր հարցերին, այդ թվում՝ Ֆինանսների նախարարի կողմից հաստատել բրիգադի նախահաշիվը՝ պաշտոնյաների ամենամսյա վարձը և հեծելակազմը: Զինվորական նախարարը ի նկատի ունենալով զինակոչի պիտանի հայ տղամարդկանց թվի պակասությունը, հնարավոր էր գտնում սահմանապահ պահակները լիաթիվ դարձնելու համար, զանազան ազգություններից՝ մահմեդականներից՝ քրդերից ու թուրքերից կամավորներով համալրել, պայմանով, որ սակայն ամբողջ կազմի մեկ երրորդը լինելու են հայ զինվորներ, հայ և ռուս կամավորների համար՝ 32 տարեկանից, իսկ թուրքերի և քրդերի համար՝ 25 տարեկանից, մնացածների համար՝ 18-ից բարձր տարիք ունեցողներին՝ 1000-ից մինչև 1400

⁸³⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100, թ. 270:

ու. վարձատրուծյամբ⁸³⁸: Ընդհանուր առմամբ, 2-րդ Կարսյան սահմանապահ բրիգադը ըստ հաստիքային տվյալների, պետք է ունենար 3 բաժին, 6 շտաբային սպա, 35 օբեր սպա, 5 բժիշկ, 146 ոչ շարային և 1087 շարային զինվորներ⁸³⁹: Այս գործընթացները ամբողջականորեն ներկայացնելու տեսանկյունից կարևոր է նշել նաև ՀՀ կառավարուծյան որոշումը սահմանապահ զնդերի կազմակերպման մասին, որի վերաբերյալ Զինվորական նախարարը 1920 թ. հունիսի 14-ին զեկուցումով հանդես եկավ Նախարարների խորհրդի նիստում, ինչի հիման վրա արվեցին համապատասխան եզրակացուծթյուններ և տրվեցին անհրաժեշտ հանձնարարականներ,⁸⁴⁰ որոնք էլ կարևոր էին պետական անվտանգուծթյան համակարգի ձևավորման, այդ թվում ՀՀ պետական սահմանը թշնամական տարաբնույթ ոտնձգուծթյուններից պաշտպանելու: 1920 թ. հուլիսի 27-ի մի փաստաթղթից, որի հեղինակները Ֆինանսների նախարար **Ա. Էնֆիալյանը** և Զինվորական նախարար **Արարատյանն** են, ակնհայտ է դառնում, որ իշխանուծթյունները այդ ժամանակահատվածում ձեռնամուխ են եղել ստեղծել ՀՀ զորքերի հրամանատարին շտաբին կից Սահմանապահ Բաժանմունք (գնդապետ Սկրիպին - նստավայրը՝ Երևան) և հետևել Կարսի սահմանապահ բրիգադի ձևավորման գործնական աշխատանքներին, որոնք բաղադրուծթյան էին ենթակա մասերի. Դարաքրիխայի 1-ին սահմանապահ բրիգադ (հրամանատար՝ գնդապետ Կորոկով, նստավայրը՝ Դարաքրիխա), որը պետք է բաղկացած լիներ 3 բաժանմունքից (նստավայրերը՝ համապատասխանաբար Իջևանում, գ. Դսեղում, գ. Զավալ-օղի), Կարսի 2-րդ սահմանապահ բրիգադ (հրամանատար՝ գեներալ-մայոր Խանկամալով, նստավայրը՝ Կարս)՝ իր 3 բաժանմունքներով (համապատասխանաբար՝ նստավայրերը՝ ք. Ալեքսանդրապոլ, ք. Արղահան, 3-րդի տեղը պետք է հետագայում ճշտվեր), Հատուկ Սահմանապահ բաժանմունք (հրամանատար՝ շտաբս-կապիտան Հովհաննեսով). այս բոլոր ենթակառուցյաներով հանդերձ սահմանապահ պահակազորը (ընդամենը կային 15 շտաբային սպաներ, 96 օբեր-սպաներ, 22 բժիշկներ և չինովնիկներ, 2889 կամավոր զինվորներ) կոչված էր ապահովել պետական սահմանի անվտանգուծթյունը, անխախտելուծթյունը արտաքին թշնամական ներթափանցումներից, արգելել երկրից ապրանքների և տարբեր արժեքների մաքսանենգային արտահանումը Կողզվան-Քուլպ գծով դեպի Դիլիշան տանող սահմանահատվածը, ապահովելով նաև Սարիղամիշ-Մեղրի-չայ սահմանագիծը, ինչպես նաև Հայաստանից Վրաստան թանկարժեք գույքերի և անասունների արտահանման կտրուկ արգելումը⁸⁴¹: Այս բոլորն անհամեմատ հաղող և նպատակային քայլեր էին երիտասարդ հանրապետուծթյան պետական ան-

⁸³⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 118, մաս III, ք. 181, 191:

⁸³⁹ Նույն տեղում, ք. 90:

⁸⁴⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 491, ք. 167:

⁸⁴¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 141, ք. 8, գ. 98, ք. 10-11 հսկ, 61.:

վտանգության համակարգի ձևավորման ճանապարհին, քիչ թե շատ կայուն նախահիմք հանդիսանալով երկրի պաշտպանունակության խնդիրների լուծման և պետական սահմանների անվտանգության ապահովման տեսանկյունից: Միաժամանակ, հետաքրքիր է նշել, որ թե՛ Ռուսաստանյան կայսրության տարիներին, թե՛ Առաջին, Երկրորդ, Երրորդ Հանրապետությունների օրոք Հայաստանում, պատմական հայկական հողի վրա պետական սահմանի ողջ վերահսկողությունն իրականացվում էր ազգությամբ ռուս սպաների, զինվորների և զինվորական աստիճանավորների միջոցով: Տպավորություն է առաջանում, որ կայսերապաշտական խնդիրները թե՛ ռուսական ցորի, թե՛ բուլղեղների օրոք, թե՛ Առաջին և թե՛ Երրորդ Հանրապետությունների ժամանակահատվածում նույնն էին, որ փոխվում էին միայն ռեժիմները, իսկ ռազմավարական նպատակադրումներն անփոփոխ էին, ռուսական զինվորին մնում էր ապահովել Ռուսաստանյան կայսրության ընդհանուր արգելապատնեշային օղակման անխախտելիությունը, այսինքն՝ ապահովել ընդհանուր պետական սահմանի ողջ երկայնքի անխախտելիությունը և անձեռնմխելիությունը: Բոլոր տեսակի փոփոխությունները, բարեփոխումները և կայսրության վերանորոգման ու նորացման ծրագրերը կանխորոշված էր իրականացնել ընդհանուր Ռուսաստանյան «արգելոցի» շրջանակներում:

Այդ քայլերը դժվարություններ էին արվում, և ամեն մի քայլ կատարելու համար կառավարությունը և պառլամենտը զգալի ջանքեր էին գործադրում, հաղթահարելով աշխարհաքաղաքական մեկուսացած իրավիճակից առաջ եկած բոլոր բարդությունները, հարևանների թշնամական, լավազույն դեպքում՝ կրավորական դիրքորոշումից բխող դժվարությունները: Այս կապակցությամբ հարկ է հատուկ ուշադրություն դարձնել նաև Վրաստանի Հանրապետության դիրքորոշման վայրիվերումներին այդ հարցում և հատուկ ընդգծել, որ բանակի ստեղծման, պետական սահմանի պաշտպանության ու ամրապնդման գործի դժվարությունները զգալի չափով պայմանավորված էին նաև նրանով, որ հարևան պետությունը, նրբորեն հարուցում էր մի շարք դժվարություններ գեներ ու զինամթերքի՝ դեպի Հայաստան տեղափոխման առումով: Իսկ ամենածանրն այն էր, որ հայկական կառավարությունը պարտավորեցրին, համաձայն կնքված պայմանագրի, Վրաստանին զինվել գեներ ու զինամթերքի շուրջ 27 տոկոսը, որն անցկացվում էր Վրաստանով Հայաստան⁸⁴²: Ինչպես երևում է Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության փաստաթղթերից և մասնավորապես **Լ. Եվանզուլյանի**, **Տ. Բեկզադյանի** և այլոց հաղորդագրություններից, Հայկական բանակի կայացման գործում բացասական դեր էր կատարում վրացական կառավարությունը, որը Վրաստանի հայերի՝ իր անհիմն գորակոչերով, հայ-վրացական

⁸⁴² Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 498, ք. 768:

սահմանադժուժմ անկայուն վիճակի ու լարվածության, ինչպես նաև զենքի ու զինամթերքի՝ զեպի Հայաստան տեղափոխման վրա իր արհեստական արգելքներով ապակայունացնում էր իրավիճակը⁸⁴³: Իրավիճակը էլ ավելի բարդացավ 1918 թ. դեկտեմբերի 13-ին սկսված վրաց-հայկական պատերազմով, որը հաղորդակցության ուղիների աշխատանքները խափանեց մինչև 1919 թ. մարտ ամիսը, ընդ որում այդ բախման ընթացքում Թիֆլիսում գտնվող հայկական ռազմական ունեցվածքի մեծ մասը բռնազրավվեց վրացական իշխանությունների կողմից: Վրաստանի կառավարության կողմից արգելվեց ամեն տեսակի պարենամթերքի, մանուֆակտուրայի արտահանությունը Վրաստանի սահմաններից դուրս, իսկ եթե թուլյտվություն տրվում էլ էր, ապա այն ուղեկցվում էր տարաբնույթ ֆինանսական-քաղաքական բարդություններով, ինչը շարունակվեց մինչև Առաջին Հանրապետության անկումը՝ լարվածության և խուլ առճակատման գոնաներ ստեղծելով հայ-վրացական սահմանի ողջ երկայնքով՝ Լոռի-Ախալքալաքի շրջանում՝ այսպես կոչված «Ձեզոք գոնայում»: Իսկ Արդահանի հյուսիսային հատվածում ՀՀ կառավարությունը, զինվորական իշխանությունները մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին պետական սահմանի պաշտպանվածության ուժեղացման, սահմանային պահակազորի կայունացման ուղղությամբ, որը նպատակաուղղված էր արգելափակել Հայաստանում մեծ պահանջարկ ունեցող արժեքավոր հումքի, անասունների և այլ թանկարժեք նյութերի արտահանումը զեպի Վրաստան:

Վրաստանի Հանրապետությունը վերոնշյալ և այլ հարցերում ոչ միայն չէր աջակցում դարավոր հարևանին, այլև ըստ էության բավարարվում էր միայն զեկլարատիվ բնույթի կարգախոսներով և հայտարարություններով, դիմում տարաբնույթ քողածածկված բնույթի գործողությունների: Հարկ է նշել, որ վրացիները դա անում էին խոսքի ու գործի հակասամբ, խոսքով հավաստիացնելով իրենց պատրաստակամության մասին՝ նպատելու զորակոչին, օգնելու իրենց մերձավոր «լավագույն» հարևանին, իրականում խոչընդոտում այդ ամենին: Այդպիսի տպավորություն է թողնում Վրաստանի ռազմական նախարար Տ. Գեորգաձեի ուղերձը Հայաստանի ռազմական նախարարին, Գլխավոր շտաբի պետ՝ Ա. Դոլուխանյանին⁸⁴⁴, որում նա հայցում էր հայկական կողմի անհապաղ կարգադրությունը շտապ կազմակերպել Հայկական կորպուսի բոլոր զինվորների Հայաստան ուղարկելու գործը, որոնք գտնվում էին Թիֆլիսում և Վրաստանի Հանրապետության տարածքում առհասարակ: Դրա համար վրացական կողմը խոստանում էր հատկացնել անհրաժեշտ երկաթուղային շարժակազմեր, սակայն գործնականում այդպես չէր: Դա երևում է 1919 թ. օգոստոսի 9-ի մի փաստաթղթից, ուր նշվում էր, որ վրացական իշխանությունները Վրաստանի տարածքում, մասնավոր

⁸⁴³ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 12, ք. 121, գ. 42, ք. 286:

⁸⁴⁴ Նույն տեղում, գ. 43, ք. 31, 74:

րապես Ախալքապաբի գավառում, որի բնակչուլթյան 77 տոկոսը կազմում էին հայերը (կամ 85 հազար մարդ)⁸⁴⁵, զբաղվում էին գորակոչային տարիքի երիտասարդների ցուցակների ստեղծմամբ, ձգտելով նրանցով համալրել վրացական բանակը՝ նրա սպասարկման, թիկունքային և այլ օժանդակ բնույթի աշխատանքների կատարման համար⁸⁴⁶: Նույնպիսի քաղաքակա- նություն էին վարում Վրաստանի իշխանությունները Հայկական Լոռու նկատմամբ⁸⁴⁷: **Ն. Ն. Ժորդանիայի** կառավարությունը 1918 թ. սեպտեմբերի վերջերին հրահանգներ էր տվել տեղական իշխանություններին, որի համա- ձայն գորակոչվող հայերը պետք է ծառայեին վրացական զորքերում, հրա- ժարվելու դեպքում ճնշում գործադրելով գյուղական կոմիսարների և զորա- կոչի չնեկայացողների ծնողների վրա, և այլ հակաօրինական քայլերի էին դիմում, ըստ էության խոչընդոտելով Հայկական բանակի կայացման գոր- ծընթացները: Վրացական կողմի վերաբերմունքը երկզիմի էր, խոսքով հա- վաստիացումներ բարեկամության և եղբայրության մասին, գործնականում ոչինչ և կայուն հաստատակամության դրսևորումներ սեփական վեհապետա- կան ծրագրերի իրականացման խնդրում: Այս հանգամանքը հրաշալի է հաս- կացել **Ալ. Խատիսյանը**, որը **Հ. Օհանջանյանին** ուղղված 1920 թ. ապրիլի 7- ի նամակում ընդգծում է. «Օգնել կարող են գլխավորապես վրացիները և մեր հզորությունը: Իսկ դա նշանակում է ռազմական հանդերձավորում և վրացիների հետ լրիվ մերձեցում: Իսկ դա նշանակում է գնալ տարածքային զիջումների, քանզի վրացիները բարեկամությունը մեր հետ միայն այդպես են հասկանում»⁸⁴⁸:

Անմասն էլը, անշուշտ, նմանատիպ քաղաքականությունից և մյուս հարևանը՝ Ադրբեջանը: Բերենք մեկ օրինակ. «Ադրբեջանի իշխանություն- ները, իրենց հանրապետության անբաժան մաս համարելով Չանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջևանը, Շարուրը, Սուրմալուն, Ղազախը, - գրում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը Բաքվում 1920 թ. սեպտեմբերի 10-ին, - զորակոչից չեն ազատում նաև Ադրբեջանի գանազան վայրերում ապրող տաճկահայերին, ինչպես օրինակ, Գանձակի շրջանի Չարգախլու գյուղում ժամանակավոր բնակություն հաստատած տաճկահայ գաղթականներին»⁸⁴⁹: Ադրբեջանական այս և այլ կարգի ոտնձգություններից և պարզապես հակա- հայկական ռազմատենչ գործողություններից էլ պատենչվելու համար դեռ 1918-1919 թթ. ՀՀ կառավարությունը մի շարք քայլեր ձեռնարկեց⁸⁵⁰: Այս- պես, դեռ 1918 թ. նոյեմբերի 16-ին Նախարարների խորհրդի նիստում

⁸⁴⁵ Նույն տեղում, գ. 96, ք. 2:

⁸⁴⁶ Նույն տեղում, գ. 62, ք. 84:

⁸⁴⁷ Նույն տեղում, գ. 12, ք. 195, գ. 67, ք. 35:

⁸⁴⁸ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3 (593), էջ 148:

⁸⁴⁹ ՀԱԱ, Ֆ.Պ - 278, գ. 1, գ. 321, ք. 95:

⁸⁵⁰ Տե՛ս **Հ. Մ. Հարությունյան**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1996, էջ 11-235:

լավում է Զինվորական նախարարի ղեկուցազիրը Ղարաբաղի և Զանգեզուրի համար զինվորական ուժեր կազմակերպելու մասին: Նխտը հավանություն է տալիս նախագծին: Նկատի ունենալով, որ Ադրբեջանը չսպասելով Ղարաբաղի և Զանգեզուրի սահմանների վիճարկելի հարցերի փոխադարձ համաձայնությունամբ լուծմանը, անցել է գործողությունների, և բռնագրավելով Ղարաբաղի և Զանգեզուրի լեռնային մասերը, ազգաբնակչության վերաբերմամբ գործադրում է բռնություններ՝ կազմակերպել զինված ուժեր վերոհիշյալ հայկական շրջաններում պահպանություն, ինչպես և ազգաբնակչությունը ոտնձգություններից պաշտպանելու համար⁸⁵¹: Հիմք ընդունելով ՀՀ նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 16-ի նիստի որոշումը և հենվելով 1919 թ. հունիսի 5-ի օրենքի վրա՝ կառավարություն կողմից ընդունվում է նոր օրենք Ղարաբաղի գործմաս կազմակերպելու համար 1.500 հազար ռուբլի հատկացնելու մասին՝ 8 միլիոնանոց դարաբաղյան ֆոնդից: Ըստ օրենքի՝ Ղարաբաղի գործմասը պետք է բաղկացած լիներ մի հետևակ գումարտակից, երկու լեռնային թնդանոթից և 54 հետախուզիչներից: Դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող մեկ այլ փաստաթղթում, հենվելով վերը նշված օրենքի վրա, Գլխավոր շտաբի պետ, գնդապետ **Բ. Բաղդասարովը** Զինվորական նախարարության անունից ՀՀ նախարարների խորհրդի գործերի կառավարիչ **Գ. Խոջամիրյանից** խնդրում էր արագացնել և իր տրամադրություն տակ գնել նշված գումարը, միաժամանակ նշելով, որ 8 միլիոնանոց գումարից մնացել է 3.238.640 ռուբլի⁸⁵²: Ցավոք, կառավարության կողմից ձեռնարկված այս և այլ գործողությունները էական արդյունքներ չեն տալիս: Հայկական Ղարաբաղի անվտանգությունը շուտով էսպես վտանգվում է, և հետևաբար Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգությունն իր երկրի այս ծայրամասում խարխլվում է: Այդ պարագայում **Անդրանիկին ու Դրոյին** ռազմաքաղաքական իրադարձություններում մասնակցությունից մեկուսացնելուց հետո, մուսավաթական Ադրբեջանը անցնում է ճնշիչ բնույթ ունեցող լայնածավալ գործողությունների Ղարաբաղի հայկական բնակչության, նրա օրինական ազգային-պետական իրավունքների նկատմամբ: Արդյունքում, դոկտոր **Խ. Բեկ-Սուլթանովի** մուսավաթական վարչակազմը կարողանում է 1919 թ. օգոստոսի 22-ի տիրահույսակ պայմանագրով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը «համոզել», իսկ ավելի ճիշտ՝ պարտադրել իր կամքը և ժամանակավորապես ընդունել Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղում՝ մինչև հարցի վերջնական լուծումը «արբիտրաժային» դեր կատարող Փարիզի վեհաժողովի մասնակից Անտանտյան դժով հայ ժողովրդի բարեկամներ հորջորջվող երկրների (Անգլիա, Ֆրանսիա և այլն) կողմից, և դրանով իսկ արմատապես վտանգում ՀՀ շահերը տարածաշրջանի այդ անկյունում, ինչը

⁸⁵¹ ՀԱԱ, ֆ.Պ - 199, ց. 1, գ. 6, ք. 9:

⁸⁵² Նույն տեղում, գ. 28, ք. 86-87:

չատ մեծ և կոպիտ քաղաքական սխալ հաշվարկ էր, որն էլ արտացոլվել է Անդրկովկասյան Հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովի արդյունքներում⁸⁵³: Հետևապես, կարելի է եզրակացություն գալ, որ Հայաստանը չկարողացավ ցանկալի արդյունքների հասնել և ուժեղացնել ՀՀ դիրքերը՝ կանոնավոր բանակի գործառնելու մտցնելով երկրամաս: Հայաստանը ամրապնդվելով Ջանգեզուրում, չկարողացավ հաստատվել Ղարաբաղում՝ կրելով ցավալի անհաջողություններ և պարտություններ, ինչին էապես նպաստում են նաև անդլիական իշխանությունները իրենց ադրբեջանամետ քաղաքականությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության ոչ հեռանկարային ու ոչ հաշվենկատ ռազմավարությունը, որը լիովին խաբսխված էր Անտանտի երկրների Փարիզյան վեհաժողովից ակնկալվող արդյունքների վրա, որի հետևանքով էլ սկզբում Ղարաբաղից խաբեություն է հեռացվում են **Անդրա-նիկի և Դրոյի** գործառնելը, ադրբեջանցիների դեմ մի շարք հաղթանակներ տարած **Արսեն Պավելի Շահմազյանը** [Ա. Պ. Շահմազյան, 1883 -1937 թթ.] և այլն, որն էապես թուլացնում է Հայկական բանակի դիրքերը Արցախում⁸⁵⁴: Անհրաժեշտ է ամենայն հստակությամբ կրկին նշել, որ Արցախ-Սյունիքի խնդրի հայանպաստ լուծման խնդրում բավականին բացասական էր Անդրկովկասում գտնվող բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչությունից դերակատարումը, որն իր երկդիմի կիսամիջոցային բնույթի քաղաքական վճիռներով խոչընդոտեց Հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա լարվածության թուլացմանը և ստատուս-քվոյի հաստատմանը, անշուշտ, կուտակված «կնճիռները» վերացումից հետո միայն: Պատմաքաղաքական այդ վայրիվերումների ընթացքում եղան նաև վտանգավոր շրջադարձեր, քաղաքական սայթաքումներ և խոտորումներ. այսպես, 1919 թ. օգոստոսի 12-ին կայացած Ղարաբաղի 7-րդ համագումարը, քննելով ստեղծված դրությունը և համոզվելով, որ դրսից ոչ մի շոշափելի օգնություն չի կարող ստանալ, անդլիացիներն էլ ըստ էության պաշտպանում են ադրբեջանցիներին, իր հերթին Հայաստանի կառավարությունն էլ ի վիճակի չէ որևիցե լուրջ ռազմաքաղաքական աջակցություն և իրական օգնություն հասցնելու, որի գործում Հայաստանի կառավարության և մասնավորապես առանձին ռազմական գործիչների կողմից թույլ տրվեցին անուղղելի սխալներ ու քաղաքական սայթաքումներ, ծանր ու թեթև անելով և կռելով սեփական հնարավորությունները, որոշեց օգոստոսի 15-ին ընդունել Բաքվի հետ համաձայնությունը, ինչի արդյունքում ստորագրվում է 1919 թ. օգոստոսի 22-ի հայտնի տիրահաճակ համաձայնագիրը, «հուսալով», որ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը իբր թե «անվերապահորեն և արդարացիորեն»

⁸⁵³ Տես **Վ. Վիքրայան**, Հայաստանը Անդրկովկասյան Հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում, Երևան, «Ասողիկ», 2004:

⁸⁵⁴ Տես **Հ. Մ. Հարությունյան**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, հ. I, էջ 169-215:

լուծվելու է մեծ տերութունների եվրոպական Հաշտության վեհաժողովում: Ստեղծված իրավիճակում **Վ. Մ. Թոմսոնը** (1878 - 1963 թթ.)⁸⁵⁵, **Դ. Ի. Շանկվորտը** (1876 - 1948 թթ.) բացահայտ սիրաշահում էին Ադրբեջանին, որոնց միջամտությամբ էլ 1918 թ. նոյեմբերին կանխվեց զորավար Անդրանիկի գործակառուի մուտքը Շուշի և Արցախ, որից հետո նրանց ակտիվ ջանքերով, բռնությամբ 1919 թ. հունվարի կեսերին արցախցիներին և զանգեզուրցիներին է պարտադրվում հայտնի հայաստյաց, հայության շրջանում դահճի համբավ ունեցող **Խոսրով-բեկ Փաշաբեկ օղլի Սուլթանովի** (1879 - 1947 թթ.) ռեժիմը: Բնականաբար Ադրբեջանի քաղաքական գործիչ Սուլթանովը դա համարեց նոր «գարաշջան» Ղարաբաղի կյանքում: Եվ ինչպես միանգամայն իրավացիորեն գրում է Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ **Ս. Վրացյանը**. «Նոր դարադուլն, դժբախտաբար, չբացվեց, բայց Սուլթանովը իրավունք ուներ հպարտանալու, որովհետև, թեև ժամանակավոր կերպով, Ղարաբաղը դառնում էր Ադրբեջանի մաս: «**Ժամանակավոր**»-ը «**մշտական**» դարձնելը ապագայի հարց էր, և ադրբեջանցի գործիչները չէին հրաժարվում այդ մտքից»⁸⁵⁶: Ադրբեջանն էլ ամեն տեսակի որոգայթ լարում էր՝ կոտրելու զարաբաղցիների դիմադրական ոգին, օգտագործելով նաև ռազմուժ, որին հայերն, անշուշտ, պատասխանում էին, ինչպես կարող էին: Ինչպես տեսնում ենք, Սուլթան բեկ Սուլթանովին, այդուհանդերձ, հաջողվում է խաբեությունը և նենգաբար հաղթահարել Արցախի հայության դիմադրությունը և պարտադրել **1919 թ. օգոստոսի 22-ի իրավահարգը**, որի համաձայն Արցախը պարտավորվում էր ժամանակավորապես ենթարկվել Ադրբեջանին՝ մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշումը, որի հայանպաստ որոշման մեջ, ցավոք սրտի, Հայաստանի Կառավարությունը ոչ մի կասկած չուներ, ինչն էլ, ըստ էության, հայկական կողմի քաղաքական սխալ հաշվարկների արդյունք էր, կոպիտ քաղաքական սխալ, և վերջին հաշվով՝ պարտություն Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական հակամարտությունում, որին մեծապես նպաստեց նաև Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատարության ադրբեջանամետ դիրքորոշումը: Այդ կապակցությամբ էլ **Ռ. Հովհաննիսյանը** շատ դիպուկ նկատում է. «Ժամանակավոր կառավարումը մի ազդու և խոշոր քայլ էր դեպի մշտական տիրապետություն: Ինչ մարտավարություն էլ ընդունեք ապագայում Հայաստանի Հանրապետությունը, նրան այլևս չէր հաջողվելու ստիպել Ադրբեջանին հեռանալու այդ հայաբնակ լեռնաշխարհից: Բացի իր կազուն համառությունից, Ադրբեջանը օգտվեց բրիտանական հրամանատարների հովանավորությունից, Փարիզի Հաշտության վեհաժողովի հապաղումներից՝

⁸⁵⁵ Թոմսոն Վիլյամ Մոնտհոմերի (1878 - 1963 թթ.) - գեներալ-մայոր, 1918 թ. նոյեմբերի 17-ից մինչև 1919 թ. մարտի 10-ը եղել է 39-րդ դիվիզիայի իրամասնատարը, որը գրավել է Բաքուն:

⁸⁵⁶ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 341-342:

վիճելի տարածքի նկատմամբ գործնական միջոցներ ձեռք առնելու հարցում և հայկական կառավարություն ընդհանուր անկարողությունից»⁸⁵⁷:

Հայկական բանակը ստեղծվելով ռուսական շաբլոնով (այլընտրանք կամ այլընտրանքի ժամանակ և հնարավորությունն այդպես էլ չգտնվեց), կոչված էր լուծելու ՀՀ առաջ կանգնած հիմնախնդիրները անվտանգության համակարգի կայացման տեսանկյունից, ինչը կոչված էր պաշտպանելու երկրի սահմանները, խաղաղությունը և անդորրը արտաքին և ներքին բազմաթիվ թշնամիներից, որոնք սակայն նա տարբեր պատճառներով ի գործ չեղավ լիարժեքորեն վճռելու, ահելի և հաճախ անլուծելի դժվարություններ ունեցավ անգամ մահմեդական շարժումների հանդարտեցման խնդրում, հյուժվեց և փոշիացավ, թուլացավ և որոշակի իմաստով բարոյալքվեց, ռուսահույն կորուստ ունեցավ, չկարողացավ իր մեջ բուն դրած չարորակ վախը հաղթահարել և դրանով իսկ անկարող եղավ դիմագրավել ավելի մեծ փորձություններին՝ Ադրբեյջանի հետ մեծածավալ ու տևական, հյուժիչ հակամարտությունը, որն ուղեկցվում էր արյունալի բախումներով, և վերջապես՝ թուրք-հայկական 1920 թ. աշնան պատերազմին, առավել ևս երբ այդ բանակի մի զգալի զանգված պարզապես անմարտունակ գտնվեց (մի մասն էլ՝ ինչպես դա տեղի ունեցավ Ղարաբաղի պարագայում, խաբեությունամբ դուրս բերվեց ռազմաքաղաքական առճակատման թատերաբեմից, որը Հայաստանի Հանրապետության թշնամիների կողմից լավ հաշվարկված ռազմավարություն արդյունք էր), և դա այն պարագայում, երբ այդ հայկական զորքը և սպաները լավ արդյունքներ էին ունեցել Սարդարապատյան 1918 թ. հերոսամարտի և վրաց-հայկական դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմում: 1918-1920 թթ. ՀՀ կառավարությունը զգալի ջանքեր գործադրեց պետական անվտանգության կարևորագույն բաղկացուցիչ մաս հանդիսացող հայկական բանակի ձևավորման կազմակերպական-քաղաքական հիմնախնդիրները ժամանակին և արդյունավետ լուծելու համար: Կարևոր նշանակություն էր տրվում ՀՀ գավառային ծայրամասերում ազգային-պետական անվտանգության հանգուցային խնդիրները լուծելուն, անհրաժեշտ քայլեր արվեցին ՀՀ պետական սահմանի պաշտպանության և սահմանապահ զորաջոկատների կազմակերպման ուղղությամբ, ուր հաջողությունների հետ մեկտեղ կային նաև ցավալի սայթաքումներ և սխալներ, սակայն որոնք ամենևին էլ չեն նսեմացնում ՀՀ կառավարության գործունեության դրական արդյունքները 1918-1920 թթ.:

⁸⁵⁷ Ռ. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, էջ 205:

**2. Հայկական բանակը, անվտանգության համակարգի ձևավորման
խնդիրները և կուսակցությունների դերքորոշումը
1918 - 1920 թթ.**

ՀՀ կառավարությունը, խորհրդարանը որոշակիորեն ձգտում էին ներդաշնակեցնել իրենց գործողությունները ռազմական շինարարության և անվտանգության համակարգի ձևավորմանը նպատակաուղղված գործողությունների բնագավառում՝ փորձելով օպերատիվ կերպով լուծել այդ բնագավառում կուտակված բազմաբնույթ հիմնախնդիրները, հասկանալով, որ ամեն մի լուրջ երկրի համար բանակը և Զինվորական նախարարությունը պետական անվտանգության համակարգի առաջնային կառույցներ են, ուժային լուրջ լծակներ, առանց որոնց հնարավոր չէ լուծել թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը որևիցե լուրջ հարց, այդ թվում՝ ունենալ արդյունավետ գործող պետական անվտանգության համակարգ: Այս առումով հետաքրքիր է նախարարների խորհրդի 1918 թ. օգոստոսի 8-ի միացյալ նիստը խորհրդարանի պատգամավորական խմբի հետ, որին ներկա էին պառլամենտի նախագահ *Ս. Մահակյանը* և պատգամավորներ *Հ. Տեր-Հակոբյանը*, *Ա. Խոնդկարյանը*, *Հ. Ազատյանը*, *Մխիթարյանը*, *Ա. Խաչատուրյանը*, ինչպես նաև Ֆինանսների, Զինվորական, Արդարագատության նախարարները: Միացյալ նիստում լսվում է «խորհրդի» (պառլամենտի) անդամների առաջարկը խորհրդի անդամներից հատուկ օրգանի ստեղծման մասին, որը կառավարության հետ համատեղ պետք է ընտրեր և լուծեր զինվորական գերատեսչության և արտաքին քաղաքականության, և առհասարակ ազգային-պետական անվտանգության համակարգի ստեղծմանը և գործունեությունն ապահովմանը վերաբերող կարևորագույն հարցերը: Միացյալ նիստը որոշում է խորհրդի անդամներից, վերջիններիս ընտրությունամբ, կազմել երկու հանձնաժողով՝ կառավարության հետ համատեղ զինվորական և արտաքին քաղաքականության, անվտանգության կարևորագույն հարցերը վճռելու համար: Ընդունված որոշման մեջ կարևորագույն հարցեր են ճանաչվում. 1) Հայաստանի խորհրդի կողմից օրենսդրական ճանապարհով քննարկման ենթակա հարցերը, 2) այն հարցերը, որոնք կարևորագույն կճանաչվեն Զինվորական և Արտաքին Գործերի նախարարությունների կողմից⁸⁵⁸:

Թե՛ կառավարությունը, թե՛ պառլամենտը բազմիցս անդրադարձել են զինվորական, ռազմական բնույթի հարցերին, քանզի միշտ էլ ռազմական շինարարության հարցերը դիտվել են առաջնային՝ երկրի ապագայի և ազգային-պետական անվտանգության տեսանկյունից, որպես լուրջ կռվան

⁸⁵⁸ ՀԱՍ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 13, ք. 4:

երկրի ներքին և արտաքին լիարժեք քաղաքականություն կենսագործման, ինչպես նաև անվտանգություն ապահովման տեսանկյունից: **Ալ. Խատիսյանի** վկայությամբ, ՀՀ պետբյուջեի ծավալի շուրջ 75 %-ը ծախսվում էր բանակի և երկրի պաշտպանության նպատակների վրա⁸⁵⁹:

1918 թ. նոյեմբերի 20-ին գինվորական հանձնաժողովը ներկայացնում է օրինագիծ Հայաստանի ազատագրության պայքարում զոհված գինվորականների զավակներին ձրի դասական (ասել է թե՛ դպրոցական - Վ. Վ.) պիտուկքներ մատակարարելու մասին⁸⁶⁰, ինչի իրականացման համար 1919-1920 ուսումնական տարում վերոհիշյալ կարգախմբի դպրոցական երեխաներին պետության հաշվին անվճար գրենական պիտուկք հատկացնելու նպատակով բացվում էր 100 հազար ռուբլու վարկ⁸⁶¹: 1919 թ. հուլիսի 8-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է Զինվորական նախարարի գեկուցումը գինվորների ռոճիկը 33%-ով ավելացնելու մասին: Ընդունված որոշման մեջ ընդգծվում է, որ համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի՝ հուլիսի 1-ից սկսած պետք է ավելացնել գինվորների ռոճիկը 33 %-ով, և այդ նպատակով մինչև 1919 թ. վերջը Զինվորական նախարարության հաշվին պետք է բացել հաշիվ 1.896.840 ռ. չափով⁸⁶²: Իսկ 1919 թ. հոկտեմբերի 21-ին պառլամենտի գինվորական հանձնաժողովը տալիս է իր եզրակացությունը Շարուր-Նախիջևանի շրջանում հայկական զորքերի անհավաքվածների պատճառների վերաբերյալ և առաջարկում ընտրել այդ ղեկավարները քննող հանձնաժողով⁸⁶³: Դեռ 1919 թ. դեկտեմբերի 29-ին էլջմիածնի և Սուրմալուի գավառները գնացած պառլամենտական հանձնաժողովի նախագահ **Ս. Թորոսյանը** մտահոգություն արտահայտելով գորքի անմխիթար վիճակի և հացի բացակայության, գավառային կենտրոնի գինապահեստի անտերություն, գենքի և գինամթերքի ցուցակների բացակայության մասին, կառավարության ուշադրությունը բևեռում էր թույլ տրված կեղծիքների վրա, և դրանով իսկ հարց բարձրացնում պետականորեն կարևոր այդ գործի նկատմամբ վերահսկողության ուժեղացման, գենքի բաշխման նկատմամբ խիստ հաշվառում մտցնելու և գավառային կոմիսարիատների ղեկավարներին պատասխանատվության ենթարկելու համար⁸⁶⁴: Իսկ 1920 թ. ձմռանը Կարս գործուղված պառլամենտական հանձնաժողովը, ամփոփելով իր հունվար-փետրվար ամիսներին Կարսի մարզի վերաբերյալ կատարած դիտարկումների արդյունքները, հայկական բանակի վիճակի բարելավման առումով եկավ որոշակի եզրահանգումների, որոնք հանգում էին հետևյալին. 1) անհասարակ

⁸⁵⁹ Տե՛ս «Ճակատամարտ» (Կ.Պոլիս), 3 հուլիսի, 1920 թ., Վ. Արծրունի, Հայ-տաճկական պատերազմը. Հայ սպայությունը, էջ 31, 34:

⁸⁶⁰ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 41, ք. 82:

⁸⁶¹ Տե՛ս նույն տեղում, գ. 333, ք. 73: «ՀՀ օրենքների հավաքածու», 1920 թ.», էջ 7:

⁸⁶² ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 7:

⁸⁶³ Նույն տեղում, գ. 41, ք. 73:

⁸⁶⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 2, ք. 49:

լուծել զինվորականների և շարքային զինվորների հագուստի հարցում եղած առկա թերուժթյունները՝ լրացնելով անդրավարտիքների, սպիտակեղևի, ձեռնոցների հարցը, տալ նրանց վերմակներ, 2) զորքի շարքերը համարել քաղաքաբնակ և ոչ մտավորական զինապարտներով՝ վերջ դնել դասավորությանը, 3) օտարազգի քաղաքացիներին և սամանակից դարձնել երկրի պաշտպանության գործին, 4) բարելավել սպաների իրավական դրությունը: Հանձնարարական տալ նրանց պետական ջանքերով ձեռք բերելու հագուստի և կոշիկի կաշվեկտորներ, իսկ նրանց ընտանիքների համար՝ հաց և մթերքի ձեռքբերման պայմաններ ստեղծել, 5) զրքեր և լրագրեր հասցնել զորամասերին, 6) զարկ տալ գրագիտության տարածմանը և բավարարել զինվորների կուլտուրական պահանջները և այլն⁸⁶⁵: Այդ նույն թվականին Նոր Բայազետի և Դարպազյազի գավառները դնացած պառլամենտական հանձնաժողովը ի դեմս հանձնաժողովի անդամներ **Ե. Սարգսյանի և Հ. Տեր-Հակոբյանի**, կարևոր առաջարկներ էր արել Նոր Բայազետում գտնվող հայկական զորքի վիճակի բարելավման վերաբերյալ, մասնավորապես կարևորելով այն հանգամանքը, ըստ որի անհրաժեշտ է կանոնավորել այսպես կոչված զինվորական «օբոզի»՝ առել է թե՛ գումակի հարցը, բնակչությանը ապահովագրելով զանազան անբարեխիղճ և շահամոլ զինվորականների կողմից ձեռնարկվող բռնագրավումների քաղաքականությունից և ըստ այդմ խստորեն պատժել հայկական զորքերի անունը վարկաբեկող զինվորականներին⁸⁶⁶: Իսկ Դիլիշան ուղարկված պառլամենտական հանձնաժողովը կարևորում էր զորակոչի ենթարկված դասալիքներին հավաքելու և զորակոչվածներին պետական մյուս հաստատություններից հեռացնելու հարցը⁸⁶⁷:

Երկու տարբեր հարցեր, սակայն երկուսի նկատմամբ էլ ուշադրություն ձգտում, որը վկայում է, որ այդ ժամանակաշրջանում համենայն դեպս առկա է եղել որոշակի բանակաստեղծ նպատակադրում: Տեղի ունեցած բանակաշինարարական որոշակի գործընթացներ, բանակի կազմակերպման քայլեր և իրական թվեր՝ որոշակի բովանդակություն բերում: Արդյունքում՝ բանակի և ազգային-պետական անվտանգության համակարգի կայացման իրական դրսևորումներ՝ իր բոլոր բարդություններով և սպաթաքումներով հանդերձ:

Ակնհայտ է, որ բանակի ստեղծման գործը դժվարին էր, և մեր խնդիրն է պարզաբանել նաև Հայաստանի տարածքում գործող կուսակցությունների վերաբերմունքը այդ խնդրի նկատմամբ, ինչը և կարվի ստորև: Փաստաթղթերը վկայում են, որ այսպես թե այնպես Հայաստանում գործող կուսակցությունների մեծամասնությունը 1918-1920 թթ. կանգնած էր ազգային դիրքերում, աշակցում էր ազգային կանոնավոր բանակի ստեղծման գործին: Այսպես, անգամ սոցիալ-դեմոկրատ **Հ. Ազատյանը** Հայաստանի խորհրդի

⁸⁶⁵ Նույն տեղում, ք. 2:

⁸⁶⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 2, ք. 8:

⁸⁶⁷ Նույն տեղում, ք. 6-7:

1919 թ. հունվարի 17-ի նիստում հանդես է գալիս հաշմանդամ զինվորների ապահովություն մասին օրինագծի քննարկման կապակցություններ, անելով հիմնավոր առաջարկներ, որոնք հանգում էին թե՛ զինվորների և թե՛ սպաների համար ապահովագրություն հավասար պայմանների ստեղծմանը⁸⁶⁸: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև Հայաստանի խորհրդի (պառլամենտի) հայ պատգամավորական խմբակցությունների 1919 թ. մարտի 16-ի և 19-ի խորհրդակցությունների նյութերը: Այսպես, Հայաստանի խորհրդի (պառլամենտի) 1919 թ. մարտի 16-ի նիստում «Հայաստանի սահմաններին սպառնացող վտանգի և զորքի անկազմակերպ վիճակի մասին» զեկուցումով հանդես է գալիս Նախարարների խորհրդի նախագահի (վարչապետի) պաշտոնակատար Ալ. Խատիսյանը, որին ունկնդրում են խմբակցության ներկայացուցիչները և իրենց կարծիքն արտահայտում երկրին, սահմաններին սպառնացող վտանգի և հայկական զորքերի անկազմակերպվածության մասին: Նկատի ունենալով, որ Հայաստանի խորհրդի նիստերը կանոնավոր չեն գումարվում, մինչդեռ զորքը վերակազմելու և զորեղացնելու համար կառավարությունը դրամի անմիջական կարիք ուներ, խորհրդակցությունը որոշում է թույլ տալ կառավարությունը զորական նախահաշվի այլ պարագրաֆներից դրամ ծախսել, այն է. 1) զինվորների սնունդը լավացնել՝ սննդագրամը ավելացնելով, 2) զորային գործը կանոնավորելու համար անհրաժեշտ ձիեր և ջրիներ գնել, 3) զորային գանազան մասնագիտություն աշխատանքների համար ուճիկով մասնագետ-ծառայողներ պահել: Հարկ է ավելացնել, որ սույն առաջարկն անցնում է միաձայն, միաժամանակ որոշելով, որ հաջորդ խորհրդակցությունը կգումարվի մարտի 18-ին⁸⁶⁹: Խորհրդակցությունը, սակայն, մարտի 18-ին չի գումարվում, այլ մեկ օր ուշ՝ մարտի 19-ին, ուր վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը, կրկին ելույթ ունենալով, հիմնավորում է նախորդ ժողովին արված զեկուցումը և առաջարկում կառավարությանը թույլ տալ՝ ա) ընդհանրապես զորային նախահաշվի մի պարագրաֆից մյուսի ծախսերը անել, բ) երկրի սահմաններն ապահովելու համար արտակարգ և համապատասխան միջոցներ ձեռնարկել, գ) կառավարության համար բանալ տալը միլիոն ութը վարկ այդ նպատակներով ծախքեր անելու համար: Ավելին, այս նույն խորհրդակցությունում **Ալ. Խատիսյանը** առաջարկում է առկա բացառիկ հանգամանքներում Նախարարների խորհրդին տալ ավելի լայն իրավունքներ համապատասխան միջոցների դիմելու, վստահեցնելով, որ վերջինս այդ իրավունքներից կօգտվի միայն բացառիկ հանգամանքներում: Ժողովը, քննություն առնելով կառավարության կողմից արված առաջարկությունը, ընդունում է Դաշնակցության խմբակցության կողմից ներկայացրած հետևյալ բանաձևը. «Երկրի պաշտպանության և զորքի վերակազմության գործը

⁸⁶⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 17, ք. 27, 77:

⁸⁶⁹ Նույն տեղում, Բ.Պ - 199, գ. 1, գ. 27, ք. 149, գ. 72, ք. 194:

փութացնելու համար՝ ա) լիազօրել կառավարութեանը արտակարգ միջոցներ ձեռք առնել, բ) թույլ տալ կառավարութեանը օգտվել զինվորական նախահաշվի գումարներից՝ մի պարագրաֆից մյուսին անցնել, և գ) նոր վարկ բանալ տասն միլիոն ռուբլու (10 մլն ռուբլի) կառավարութեան անունով նույն նպատակի համար»։ ՀՀ Դաշնակցութեան խմբակցութեան այս առաջարկի հետ համերաշխուժում է Հայ Ժողովրդական կուսակցութեան խմբակցութեանը, իսկ Սոցիալ-Դեմոկրատական խմբակցութեանը, պատճառ բերելով խորհրդարանի շենքում փետրվարի 28-ին տեղի ունեցած միջադեպը, կապված տեղական ինքնավարութեանների և նրա խորհրդի ընտրութեանների նախագծի հետ, առանց լուրջ հիմնավորման հեռանում է ժողովից, որը կարելի է դիտել որպէս սաբոտաժի նման մի բան, այն էլ երկրի համար կարևոր զինվորական խնդրում։ Սոցիալիստ-հեղափոխականների խմբակցութեանը համաձայնվում է ՀՀԴ կողմից ներկայացրած բանաձևին՝ այն պայմանով, որ կամ Ավագների խորհուրդը, կամ Խորհրդից ընտրված մի նոր հանձնաժողով կհսկի և կվարի արտաքին քաղաքականութեանը։ Սակայն քանի որ սոցիալիստ-հեղափոխականների այս առաջարկը ևս չի ընդունվում, վերջինս ևս հեռանում է ժողովից⁸⁷⁰։

Հարկ է նաև ասել, որ ՀՀ պառլամենտը այդ տարիներին ուներ համապատասխան զինվորական հանձնաժողով, որն էլ հենց զբաղվում էր բանակաստեղծ գործընթացների կազմակերպմամբ, բանակի ու Զինվորական նախարարութեան համար Ֆինանսական-դրամական միջոցների հայթայթման խնդիրներով։ Այդ հանձնաժողովն ուներ ութ անդամ՝ Նիկողայոս Աղբալյանը, Սիմոն Վրացյանը, Արտաշես Բաբայանը, Արշակ Զամայանը, Ռուբեն Տեր-Մինասյանը (նախագահ), Վարոս Բաբայանը, բժիշկ Հ. Տեր-Մելիքյանը (քարտուղար) և Աբրահամ Գյուլխանդանյանը⁸⁷¹։

Կուսակցութեաններն իրենց յուրահատուկ մոտեցումն ունեին ռազմաքաղաքական հարցերին։ Սակայն շատ հաճախ գործի մեջ իրատեսորեն խորանալու փոխարեն, նրանք նույնիսկ իրենց առողջ մտադրութեանները հաճախ խճողում էին կուսակցական քննադատամոլութեամբ՝ առանց լրջորեն խորամուխ լինելու կառավարութեան ու զինվորականութեան կողմից թույլ տրված բացթողումների, սայթաքումների և չարաչահումների, այլևայլ բացասական երևույթների իրական պատճառների վերհանման մեջ՝ հաշվի չառնելով թե՛ իշխող սովը կադրերի բնագավառում, թե՛ անձուկ աշխարհաքաղաքական միջավայրը, և թե՛ զանազան գործոններ՝ կապված Անտանտի դժով Հայաստանի դաշնակիցների կրավորական, երբեմն էլ ոչ բարեկամական դիրքորոշման հետ, որի պայմաններում արդյունավետորեն գործել և ստեղծել ուժեղ մարտունակ բանակ՝ դժվարագույն խնդիր էր։ Եվ այնուամենայնիվ, իրական մտահոգութեան Հայկական բանակի կայացման, դրանում իշ-

⁸⁷⁰ Նույն տեղում, գ. 27, ք. 150, գ. 72, ք. 194։

⁸⁷¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 198, գ. 1, գ. 32, ք. 10, 12։

խող անառողջ տրամադրությունների հաղթահարման առումով, կար: Օրինակ, 1919 թ. հոկտեմբերին Հայկական ռամկավարական և ժողովրդական կուսակցությունների, ՌՍԴԲԿ (մենչեիկներ), անկախ սոցիալիստների Ալեքսանդրապոլի կազմակերպությունների, Շիրակի գյուղացիների միությունների վարչություն մի ուղերձի նախագծում, ուղղված կառավարությանը, ասվում էր. «Երկրի ինքնապաշտպանության գործը՝ ազգայինի ամենապատասխանատու գործը հանձնված է նույնպես կուսակցական, բայց անձեռնհաս անհատների, դուրս են ձգված արժանավորները, միմիայն այն պատճառով, որ գործում է կուսակցական խտրությունը: Նկատելի է, որ փոխանակ ուժեղացնելու կանոնավոր բանակների կազմությունը, ընդհակառակը՝ նորից կենդանանում է խմբապետական կազմերի անկարգ և քայքայող դրությունը»⁸⁷²:

Բանակի, ռազմական քաղաքականությունից հարցերը կառավարող կուսակցության՝ ՀՀ Դաշնակցության ուշադրություն կենտրոնում էին: ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը գործի մասին հատուկ որոշում կայացրեց: Ջորջի մասին Դրոյի տված գեկուցման հիման վրա ընդունվեց համապատասխան որոշում Հայաստանի բոլոր քաղաքացիների պարտադիր երկամյա զինվորական ծառայության և կանոնավոր համաժողովրդական բանակի կազմակերպման, բանակը բոլոր առումներով հայացնելու, հրամանատարական կազմի վերակազմության, հին զինվորական ձևերից հրաժարման, գործը Հայրենիքին ծառայելու գաղափարի իրականացման և Հայոց պետության պաշտպանությունը և անվտանգությունը ծառայեցնելու հրամայականի մասին: Բանակի հայացման գործում կարևոր դեր ունեցան հատկապես թուրքական բանակից հարյուրի չափ հայ սպաների ժամանումը և ծառայության անցնելը: Մարտունակ և որակյալ բանակ ունենալը կուսակցությունը իրավացիորեն տեսնում էր՝ մի կողմից հզոր տնտեսության, մյուս կողմից՝ ռազմիկների բարոյական կայունության և հայրենիքին նվիրվածության մեջ⁸⁷³:

Կարևոր է անդրադառնալ նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և պառլամենտի անդամ Հանդիսացող տարբեր քաղաքական կուսակցությունների պատերազմական-բանակային հարցերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի դրսևորման որոշ նրբերանգներին և մի շարք արտահայտություններին: Հատկանշական է, որ ոչ միշտ է իրական, սրտացավ և ըմբռնումով մոտեցում ցուցաբերվել այդ հարցերին: Օրինակ, չնայած այն հանգամանքին, որ հայ իրականության մեջ գոյություն ունեցող բոլոր կուսակցությունները այս կամ այն կերպ վճռորոշ պահերին սատարել են

⁸⁷² Նույն տեղում, Ֆ.Կ - 4033, ց. 7, գ. 2, թ. 1, Ֆ.Կ - 404, ց. 1, գ. 36, թ.1:

⁸⁷³ Տե՛ս **Քաղաքացիական Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումների** ց, Երևան, «Ուրարդի» հրատ., 1920, էջ 10-11, **Ա. Հակոբյան**, Հ. Յ. Դ. 9-րդ ժողովը, Եր., «Մ. Վարանդյան» հրատ., 1994, էջ 34, 35, **Նույնի**՝ Հայաստանի խորհրդարանը քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., ՀՅԴ հրատ., 2005, էջ 154-155, 266-268:

կառավարությունը, և իրենց մոտեցման այս կամ այն տարբերություններ հանդերձ, կանգնած էին երկրի ու ազգային պաշտպանություն, պետական անվտանգության համակարգի կազմակերպման դիրքերում՝ կողմնակից լինելով ամուր ու կարգապահ բանակի ստեղծման գաղափարին՝ որպես պետական անվտանգության ապահովման հիմնաքարի, սակայն երբեմն ունեցել են նաև ոչ լուրջ, ոչ լիարժեք մոտեցումներ երկրի պաշտպանության, ռազմական և ներքին շինարարության հարցերին: Հետաքրքիր է այդ առումով Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 10-ի նիստի արձանագրությունը, ուր բանակի և ռազմական շինարարության, անվտանգության համակարգի այս կամ այն ստորաբաժանման ձևավորման հիմնախնդիրների նկատմամբ անսթափ մոտեցում է ցուցաբերվում սոցիալ-դեմոկրատական խմբակցություն կողմից: Վերջինս բոլորովին հաշվի չառնելով այն կարևոր հանգամանքը, որ առհասարակ ռազմական նախարարությունները ունենում են իրենց կորպորատիվ, ծառայողական բնույթի ներքին գաղտնիքները՝ կապված երկրի անվտանգության հարցերի հետ, պահանջում էին հրապարակայնություն: Այդ պահանջը անհիմն էր: Որպեսզի պարզ դառնա վերահիշյալ խմբավորման անհիմն մոտեցման ողջ հակասականությունը և որոշակի իմաստով նաև վնասակարությունը ազգային-պետական քաղաքականության ընթացման տեսանկյունից, ստորև մեջբերում ենք նրանց մոտեցումն ամբողջությամբ. «Նկատի ունենալով Զինվորական նախարարության վարած հետադիմական մեծածախս և կործանիչ քաղաքականությունը, նրա անտարբեր և հաճախ հանցավոր վերաբերմունքը դեպի զորքի նյութական և բարոյական պահանջները՝ մասնավորապես մահվան պատիժը վերականգնելուն վերաբերող հակաօրինական կարգադրությունը, ինչպես և այդ նախարարության ամբողջ նախահաշվի գաղտնի Հայտարարվելը, Սոցիալ-Դեմոկրատական խմբակցությունն առաջարկում է մերժել այդ նախահաշիվը»⁸⁷⁴: Սակայն սոցիալ-դեմոկրատական խմբակցության առաջարկը 3 ձայնից ավելի չի ստանում, և դա տրամաբանական էր, քանզի տվյալ իրադրությունում նմանատիպ որոշում ընդունելը նշանակում էր վնասել պետության պաշտպանունակությունը, Հայկական բանակի ձևավորման հիմնախնդիրների լուծմանը և վերջին հաշվով՝ անվտանգության համակարգի ձևավորմանը: Բացի այդ, այս դիրքորոշման միակողմանիությունը և կիսատ-պռատությունն արտահայտվում էր նրանում, որ կառավարությունը և, մասնավորապես, Զինվորական նախարարությանն արդարացիորեն քննադատելով ռազմական քաղաքականության բնագավառում թույլ տված զեղծարարությունների ու հափշտակումների, ինչպես նաև բանակի հիմնահարցերի նկատմամբ հանցագործ վերաբերմունքի համար, ընդդիմության ներկայացուցիչներն ընկնում էին մի ծայրահեղությունից մյուսի մեջ, զորքերում առկա բացթողումները

⁸⁷⁴ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, ք. 58:

փորձելով պայմանավորել միայն ՀՀ կառավարութեան քաղաքականութեամբ և ոչ թե սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական բնույթի ավելի բարդ գործոններով, չփորձելով խորքային ավելի ճշգրիտ վերլուծութիւններ կատարել, որոնք հնարավորութիւն կտային առավել ամբողջական և համակողմանի եզրահանգումների գալ, և, ըստ էութեան, Հայաստանի համար շատ դժվարին 1918-1920 թթ. սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական իրադրութեան պայմաններում սկզբունքային նշանակութիւն չէին տա կառավարութեան կողմից ռազմական քաղաքականութեան բնագավառում հրապարակայնութեան ասպնջումն ոչ առաջնային գաղափարին և այլ պահանջներին: Այդ իսկ պատճառով էլ բանակում առկա բացասական երևույթների առողջ քննադատութիւնն ուղեկցվում էր բանակի վերակառուցման ու բանակաշինութեան մասին ընդհանուր բնույթի վերացարկումներով, որոնց համար, ցանկութեան դեպքում, միշտ էլ հարմար փաստարկ կգտնվեր, եթե դրա անհրաժեշտութիւնը լիներ: Այդ են վկայում նույն սոցիալ-դեմոկրատական խմբակցութեան առաջադրած մի շարք տեսակետները ևս: Հայաստանի գրեթե բոլոր քաղաքական կուսակցութիւններն էլ իրենց մտտեցման այս կամ այն տարբերութեամբ հանդերձ, կանգնած էին երկրի ազգային պաշտպանութեան կազմակերպման դիրքերում, կողմնակից էին ամուր ու կարգապահ բանակի ստեղծման գաղափարին: Անգամ շատ քննադատված և շատերի կողմից երբեմն մերժված Ազգային խորհրդարանի Սոցիալ-Դեմոկրատական խմբակցութիւնն իր ծրագրային փաստաթղթերից մեկում շեշտադրում է հետևյալը. «Զինվորական ու երկրի պաշտպանութեան խնդիրներում բարձրաստիճան ու հասարակ գինվորականութեան շարքերից մեծաքանակ ավելորդ բերանների վտարումը, բանակի վերակազմութիւն ժողովրդի տնտեսական ու հասարակական ուժերի համեմատ և ժողովրդական ուժեղ միլիցիա քաղաքներում ու մանավանդ գյուղերում»⁸⁷⁵: Այս և այլ տարբերութեամբ փաստերի վերլուծութիւնից ակնհայտ է դառնում, որ ընդհանուր առմամբ, ընդդիմութեանը հետաքրքրել են հայկական բանակի հիմնախնդիրները, և այդ տեսանկյունից նրա արտահայտած մտքերն ու տեսակետները, անշուշտ, արժանի են ուշադրութեան: Եվ առհասարակ, այդ ժամանակաշրջանում Հայաստանում գործող քաղաքական ուժերի մեծ մասը իր մտտեցման մեջ հաճախ արդարացիորեն դատապարտում էր այն սխալներն ու սայթաքումները, որոնք թույլ էին տրվում ռազմական շինարարութեան և անվտանգութեան համակարգի այս կամ այն օղակի կազմակերպման բնագավառում, մերկացվում էին զեղծարարութիւններն ու հանցագործութիւնները հայկական բանակի շինարարութեան բնագավառում, ինչպես նաև շահամոլ գինվորականութեան որոշ մասի անվայելուչ կեցվածքը բանակի հիմնախնդիրների նկատմամբ: Այնուամենայնիվ, չնայած սոցիալ-դեմոկրատական և այլ

⁸⁷⁵ Նույն տեղում, Ֆ.Կ - 404, ց. 1, գ. 1, ք. 6:

խմբակցությունները կողմից Զինվորական նախարարութեան և կառավարութեան հասցեին ուղղված սուր և անաչառ քննադատությունում կային ռացիոնալ հատիկներ, սակայն դա հիմք չէր, որ դրանք առհասարակ ժխտական մոտեցում որդեգրեին բանակաշինութեան ու անվտանգութեան համակարգի ձևավորման բնագավառում պետական տարբեր մարմինների ձեռնարկած ամեն մի քայլի նկատմամբ: Քաղաքական-կուսակցական այդ ուժերի մոտեցումներում արժեքավոր և օգտակար առաջարկությունների հետ մեկտեղ կային այնպիսիք, որոնք չէին տեղավորվում մեծաթիվ ուժեղ և կարգապահ բանակ ստեղծելու ծրագրային նպատակադրումների շրջանակներում: Դրանք հանգում էին նրան, որ Հայաստանը լինելով փոքր և ոչ մեծաքանակ բնակչութեամբ երկիր, չպետք է ունենա մարտունակ ուժեղ բանակ ստեղծելու ռազմավարություն: Հետևաբար ՀՀ պետք է բավարարվի փոքրաքանակ զորքով՝ այդ տեսակետները քողարկելով որակի բարելավման մասին միակողմանի և սնամեջ ճամարտակումներով: Քաղաքական-կուսակցական այդ ուժերի մոտեցումներում արժեքավոր և օգտակար առաջարկությունների հետ մեկտեղ կային այնպիսիք, որոնք չէին տեղավորվում մեծաթիվ ուժեղ և կարգապահ բանակ ստեղծելու ծրագրային նպատակադրումների շրջանակներում՝ չցանկանալով և չկարողանալով «զանազանել պետությունը կուսակցական ընդհանուր ժողովից, հայրենիքը՝ սեփականատիրոջ ազարակից, քաղաքականությունը՝ խմբակցությունից: Ամեն մեկը տեսնում է, թե ինչպես փոտում և ճահճանում է պետական օրգանիզմը, երբ ամեն ինչ, և՛ պատիվ և՛ ամոթ՝ և՛ պարտականություն զոհ է բերվում կուսակցական մոլեգնություն: Ինչպես կարող է մի կառավարություն գողեր հալածել, երբ իր մեջ էլ գողեր կան նստած»⁸⁷⁶:

Այդուհանդերձ, կուսակցական-քաղաքական ուժերի մեծ մասը ավելի իրատեսական էին, և ավելի խորն էին ըմբռնում ուժեղ, մարտունակ բանակ ունենալու կանոնությունը, և ըստ այդմ էլ տարբեր առումներով արտահայտում էին իրենց վերաբերմունքը բանակաստեղծ գործընթացների նկատմամբ, որոնք սկզբունքորեն կարևոր էին անվտանգութեան համակարգի ձևավորման քաղաքականութեան տեսանկյունից: Այսպես, ՀՀ Զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Արարատյանին հասցեագրված 1919 թ. սեպտեմբերի 18-ի նամակում Հայկական ժողովրդական կուսակցութեան 2-րդ համագումարի նախագահ Ս. Հարությունյանը ողջունելով Հայկական բանակի բարձրագույն և կրտսեր սպայակազմին ու զինվորներին, ընդգծում էր հետևյալը. «Ժողովրդի համար սերտորեն համախմբված, ուժեղ, լավ զինված, հերոսութեամբ և ուժեղ կարգապահության մեջ իր ուժը կորցող բանակը հանդիսանում է նրա ֆիզիկական գոյութեան պահպանման և նրա բաղձալի նպատակներին հասնելու միակ միջոցը՝ տեսնելու Միացյալ, անկախ Հայաստան»:

⁸⁷⁶ «Մշակ» (Թիֆլիս), 3 դեկտեմբերի, 1920, N° 152:

տանը, որում հայ ժողովուրդը կապրեր հանգիստ կուլտուրական կյանքով ինչպես իր հողի վրա, այնպես էլ իրենց կողք-կողքի ապրող այլ ազգությունների ողջ մնացյալ բնակչության հետ հաշտ և համերաշխ»։ Նամակի վերջնամասում Ս. Հարությունյանը համագումարի մասնակիցների պատրաստակամությունն էր արտահայտում՝ աջակցելու բանակի ղեկավարությանը իրենց նվիրական, պետականորեն կարևոր գործում⁸⁷⁷։

Վերն ասվածին հարկ է նաև ավելացնել, որ բանակի ստեղծման, կառավարության ռազմաքաղաքական արդյունավետ գործունեությունների վրա բացասաբար էր ազդում Հայաստանի անտանտյան դաշնակիցների կողմից հաճախակի դրսևորվող երկրիմի քաղաքականությունը, երբեմն նույնիսկ շատ վնասակար և աղետալի հետևանքներ ունեցող քայլերը, որոնց դեմ բողոքում էին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող գրեթե բոլոր կուսակցություններն անխտիր։ Անգամ 1918 թ., երբ դեռ Հայաստանի Հանրապետության Անտանտի գծով դաշնակիցները կարծես թե չէին էլ «երագում» այլ բանի մասին, քան փլուզել Օսմանյան կայսրությունը, և հետևաբար շահագրգռված էին Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանի ստեղծմամբ, և թվում է, թե հետամուտ էին իրենց ռազմավարական ծրագրերի իրագործումը մինչև վերջ հասցնելուն, անգամ այդ իրավիճակում նրանք անկեղծ չէին, և ձգտում էին քողածածկված եզրեր որոնել թուրքերի հետ, որպես պահեստային տարբերակ ունենալով վերջիններիս հետ հնարավոր հարաբերությունների պահպանման հնարավորությունը, ինչի մասին հետաքրքիր վկայակոչման ենք հանդիպում Ս. Վրացյանի մոտ. «*Յուլիսի սկիզբը (հավանաբար՝ 1918 թ.) անգլիացիք գրաւել էին Էրզրումը։ Զինաթափ էին արել քաղաքը եւ սկսել էին դուրս տանել զէնքն ու ռազմամթերքը։ Զէնքի արտահանութիւնը սկսուել էր յուլիսի վերջերին։ Երբ դուրս եկավ առաջին գնացքը՝ բռնաւորված մէկ միլիոն փամփուշտներով, 15 թնդանօթներով ու 500 հրացաններով, Էրզրումից ոչ հեռու՝ նրա վրա յարձակուեց մի մեծ զինուած խումբ Էրզրումի թուրք զինուորներից, զինաթափ արավ անգլիացի պահակներին եւ գնացքը դարձրեց յետ Էրզրում։ Անգլիացիք ոչ մի միջոցի չգիմեցին զէնքերը ետ առնելու կամ խռովարար թուրք զինուորներին պատժելու համար։ Դրանից առաջ, անգլիացիները ստիպեցին յետաձգել Հայերի մուտքը Կարս եւ իրենք գրաւեցին Կարսի ռազմապահեստներում դիզուած ռազմամթերքը՝ թնդանօթներ, հրացաններ եւ փամփուշտ, եւ ուղարկեցին ռուս Կամավորական բանակին»⁸⁷⁸։*

Անգլիացիների այս դիրքորոշումը, վերջին հաշվով, խիստ բացասաբար անդրադարձավ նաև 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Կարսի պաշտպանունակության գործը կազմակերպելու առումով և բարոյահոգեբանական ճնշող տպավորություն թողնելով զինվորականության վրա՝ նսեմացնելով

⁸⁷⁷ ՀԱԱ, ֆ. 71 - 204, ց. 1, գ. 132, ք. 142:

⁸⁷⁸ Տես Ս. Վրացյան, Կեսանքի ուղիներով, հ. Ե, էջ 60:

նաև հայկական հետախուզութան ջանքերը, այդ թվում թշնամու մասին ձեռքբերված տեղեկատվության արդյունավետ օգտագործման առումով:

Գլխավոր շտաբի 1919 թ. հունիսի 11-ի հետախուզական ամփոփագրում (N 3687/N F 0133) փոխգնդապետ **Ա. Շենուրի** կողմից դարձյալ նշվում է անգլիացիների հակահայկական վարքագծի այդ փաստի մասին, լրացնելով վերն ասվածը. գործակալական տվյալների համաձայն անգլիացիները էրզրումում իբր թե գինաթափել են 12 հազար ասկյարների՝ պահանջելով հանձնել էրզրումում գտնվող, սակայն Կարսից դուրս բերված գինհանդերձանքը, ավելի քան 28 հազար հրացան և 4555 զնդացի՝ թուրք սպա Հայդար բեյի ուղեկցությամբ Խորասան-Կարաուրգան ուղարկելու համար՝ իբր թե հայերին հանձնելու համար: Սակայն ճանապարհին՝ Խորասանից 18 վերստ հեռավորության վրա նրանք վնասելով երկաթուղադիժը, այսինքն՝ արհեստական վթար կազմակերպելով, գողանում են այդ գնեք ու գինամթերքի կեսից ավելին⁸⁷⁹ (Հնարավոր է՝ հենց դա էլ ուղում էին անգլիացիները՝ քողածածկված եզրեր գտնելով թուրքերի հետ - Վ. Վ.)⁸⁸⁰: Սակայն անգլիացիները բոլորովին էլ մտադրություն չունեին ուժեղացնելու հայերին, և ազատ մանևրում էին, շահարկելով հայկական կողմի անտեղյակության կամ էլ պարզապես անճար վիճակի վրա, շահարկելով վերջինիս դյուրահավատությունը և կույր նվիրվածությունը Մեծ Բրիտանիային և Անտանտի մեծ շահերին, կամ էլ հուսալով, որ հայկական հետախուզությունն այդ ամենի մասին բոլորովին չի կարող տեղեկանալ, կամ էլ անուժ է նման խնդիրներ լուծելու, առավել ևս հակազդել, ինչը հարկ էր ասել՝ հերքվում է վերը նշված և հայ հետախուզյունների կողմից հայթայթված կարևոր տեղեկատվությամբ, և հետևաբար իրենք կարող են անել այն ամենը, ինչը համապատասխանության մեջ կգտնվի Մեծ Բրիտանիայի մեծապետական շահերի հետ: Միան-

⁸⁷⁹ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 62, 67:

⁸⁸⁰ Հնարավոր է, դա հենց այն փաստն է, որի մասին մշում է **Ռ. Հովհաննիսյանը**, ասելով, որ արտաքննապես համագործակցելով բրիտանական ավագ իրահանգիշ **Ալֆրեդ Ռասպինսոնի** հետ, հենց **Քյազիմ Կարաբեքի փաշան** է գաղտնի հրամայել իր մարդկանց քանդել երկաթուղադիժը, իսկ իր հրոսակախմբերին չհարձակվել գեներլորտի բերդների վրա, և անարգել կողոպտել գինապահեստները: Հափշտակված գեներլ ու գինա մթերքը պետք է խմանքով թաքցվեին և գաղտնի պահեստավորվեին 50 հազարանոթյալական զինուժի համար, որը Ք. Կարաբեքիրը անհրաժեշտ էր համարում Հայաստանի Հանրապետության սահմանին կենտրոնացնելու և վերջինիս հավակնած՝ արևելյան վիլայեթների արդյունավետ պաշտպանության համար, հույս ունենալով, որ Դաշնակիցների խոստումները հայերին կմնան անպատասխան, և դրանում, իրոք, չսխալվեց. // **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, Առաջին Տարին, 1918-1919, էջ 468-469: Արևելքում, և մասնավորապես Թուրքիայում գործած, և հայ իրականության հետ բազմիցս առնչություններ ունեցած և Արևմտահայաստանին քաջածանոթ բրիտանական հայտնի հետախույզ-սպա **Ալֆրեդ Ռասպինսոնի** մասին հետաքրքիր նյութերի և վկայությունների կարելի է հանդիպել հենց իր իսկ վերջինիս պաշտպանքում՝ **A. Rawlinson, C. M. G., C.B.E, D.S.O. Late Lt.-Col. R. G.A. Commander R.N. V. R.** Introduction by Admiral Sir Rency Scott, Adventures in the near East, 1918-1922, New York, Dodd, Mead and Company, 1924:

գամայն ճիշտ են նկատում այդ առումով **Գ. Մխամբրյանը** և **Գ. Պետրոսյանը**, նշելով, որ Լոնդոնում (արհեստավարժորեն և մշտապես) ապահովվում էին սեփական հասարակական շահերը և ՀՀ ցուցաբերվող օգնությունը բացահայտորեն փոխանակվում էին միայն նրա կողմից դրսևորվելիք հակասովետիզմի հետ⁸⁸¹: Դաշնակիցները, և, հենց առաջին հերթին անգլիացիները իրենց դանդաղ, անհաստատ ու անվճռական գործունեությունը նպատեցին քեմալական շարժման ուժեղացմանը և բոլշևիկների հետ դաշինքի հաստատմանը: Այդ մասին է փաստում նաև **Ալ. Խատիսյանը**. «Դաշնակիցները, գլխավորապես անգլիացիները, իրենց ժամանման սկզբի շրջանին, միանգամայն անկեղծօրէն կը ցանկանային ամրացնել եւ հաստատել նորակազմ հանրապետություններու անկախութիւնը: Բայց անոնք չափազանց դանդաղ կը լուծէին հասունացող հարցերը: Անոնց տրուած էր շատ թէ քիչ նախաձեռնութիւն եւ իրաւունք՝ ծագող հարցերը տեղւոյն վրա վճռելու համար: Այստեղէն առաջ կու գար որոշ անվատահուստիւն անոնց ընդունակութեան վրայ՝ կեանքը կանոնաւորելու համար: Միւս կողմէ, Փարիզի Վեհաժողովը չափազանց կուշացնէր թուրքիոյ խնդիրներով զբաղուիլը եւ քեմալականներու ժամանակ տուաւ ուժեղանալու համար: Իսկ հետոյ, երբ Ռուսաստանը վերջացուց իր ներքին քաղաքացիական կռիւները, Դաշնակիցները վախցան բարդութիւններէն եւ հեռացան՝ բախտի բերմունքին ձգելով նորակազմ հանրապետությունները»⁸⁸²: Իսկ այդ ընթացքում բոլշևիկյան-թուրքական մերձեցումը գնալով խորանում էր, հանգեցնելով 1920 թ. օգոստոսի 24-ի պայմանագրին: Միաժամանակ 1919 թ. օգոստոսից սկսած բրիտանական պետություն քաղաքական կուրսը անընդհատ վերախմբաբերման էր ենթարկվում: Բրիտանական դիվանագետները և ռազմաքաղաքական ու հետախուզական շրջանները հետևողականորեն Հայաստանի Հանրապետությանը ետ պահելով բոլշևիկների հետ մերձեցումից, փորձում էին քեմալականների հետ խորքային եզրեր գտնել, և իբր թե իրադրությունը Անդրկովկասում չչիկացնելու նպատակադրումից ելնելով, և իբր թե հարևանների նախանձը առաջ չբերելու համար չէին թույլատրում Երևանի տրամադրություն տակ թողնել դուրս բերվող գեներալ և գինամթերքի որոշ անհրաժեշտ մասը, ինչի կարիքը խիստ զգացվում էր: Ավելին, այդ տարիներին Անդրկովկասում գտնվող անգլիական ռազմաքաղաքական ծառայությունների գործունեություն մասին վկայող արխիվային փաստաթղթերը թեկուզև անուղղակիորեն վկայում են (չենք կասկածում, որ ապագայում կհայտնաբերվեն այդ գործունեություն մասին ուղղակիորեն վկայող անժխտելի արխիվային և այլ

⁸⁸¹ Տե՛ս **Գ. Գ. Махмурия**, *Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг.*, стр. 170, 210, տե՛ս նաև **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 122-125:

⁸⁸² **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 193:

վավերագրեր, որոնք քաղաքական նկատառումներով այսօր հրապարակ չեն հանվում, թաքցնելով անգլիացիների և Անտանտի գծով հայ ժողովրդի մյուս «ընկերների» բազմապլան մեքենայութունները Անդրկովկասում և տարածաշրջանի սահմաններից դուրս - Վ. Վ.), որ անգլիացիները Կովկասում և Հայաստանում իրենց բավականին վստահ են զգացել, իրենց պահելով ինչպես հայրենի Մեծ Բրիտանիայում, ալ ու ձախ հրամաններ տալով և հաճախ մի անգլիացի սպայի կարծիքն ավելի մեծ կշիռ ու նշանակություն է ունեցել, քան նույնիսկ ՀՀ որևիցե նախարարի, գեներալի, կամ էլ նույնիսկ վարչապետի:

Այդ հանգամանքը հնարավոր չէր լրիվ քողածածկված վիճակում պահել, ինչ-որ բաներ միշտ էլ դուրս էին սպրդում գաղտնիութան շղարչից, և ակնհայտ դառնում կուսակցական-քաղաքական և զինվորական շրջաններին: Սոցիալիստ-հեղափոխական խմբակցութան ներկայացուցիչ՝ պատգամավոր Վ. Մինախորյանը, ելույթ ունենալով Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 25-ի նիստում, ընդգծում է, որ «ոչ միայն հարևաններն են ուզում մեզ ոչնչացնել, այլև նույնն է անում Անգլիան: Կարելի է ասել, որ մեր դժբախտությունների 99 տոկոսի պատասխանատվությունը դաշնակիցների վրա է ընկնում: Այսօր միակ գործնական քայլը մեր պատկամենտի կողմից պիտի լինի այն, որ մենք ցույց տանք, թե դաշնակիցների այդ բոլոր խաբե[բայ]ութունները մենք զգում և հասկանում ենք»⁸⁸³: Այդպիսի մի շատ ուշադրավ վկայություն էլ մենք հանդիպում ենք Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչին 1919 թ. սեպտեմբերի 1-ին Հայաստանի պառլամենտի քարտուղար Հ. Տեր-Հակոբյանի կողմից ուղարկված հաղորդագրությունում, ուր ասվում էր հետևյալը. «Փարիզի մեր պատվիրակության գրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայություն ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ ու վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն: Անգլիան ամեն տեղ, ինչպես և Կովկասում, վարում է քողարկված մուսուլմանական քաղաքականություն»⁸⁸⁴:

Իրականում շատ բան ավելի մուսուլման էր, ինչի մասին մենք վերը որոշ մանրամասներ արդեն ներկայացրել ենք: 1919 թ. ՀՀ Արտաքին Գործերի նախարարի ապրիլի 24-ի հեռագրից՝ ուղղված Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, ակնհայտ իրողություն է դառնում այն հանգամանքը, թե ինչ վարքագիծ ունեին անգլիացիները, ինչ շահեր և նպատակադրումներ ունեին տարածաշրջանում և մասնավորապես՝ Հայաստանում, որը փորձում էր որպես պետություն կայանալ՝ գերմարդկային ճիգեր գործարարելով դուրս դալ տնտեսա-քաղաքական մեկուսացումից և սովի ճիւրաններից: Այսպես, վերոհիշյալ փաստաթղթում նշվում էր, որ անգլիացիներ-

⁸⁸³ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, ք. 89:

⁸⁸⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 97, ք. 126:

րը շարունակում են Կարսից դուրս բերել հրանոթները, արկերը, եռագլիծ փամփուռները: Արտաքին Գործերի նախարարը նշված հեռագրում վճռականորեն միջնորդում էր **Վ. Թոմսոնի** առաջ՝ դադարեցնելու այդ ապրանքների դուրսբերումը՝ խիստ կարիքի պատճառով, և մասնավորապես՝ արկերի: Արտաքին Գործերի նախարարը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարից խնդրում էր եռանդուն միջոցներ ձեռնարկել Հայաստանյան ունեցվածքի դուրսբերման դեմ, միաժամանակ փութացնելով բանակի կարիքների համար հազուստի պարազանների ստացման հարցը⁸⁸⁵: Ավելին, մի այլ փաստաթղթում ավելի ընդգծված է ասվում այդ մասին: Դեռ 1919 թ. ապրիլի 30-ին Հայաստանի կառավարութան նախագահ **Ալ. Խատիսյանը** Արևելքում անգլիական գլխավոր հրամանատար **Ջ. Ֆ. Միլնի** հետ գրույցի ժամանակ բողոքում է անգլիացիների կողմից Կարսից ռազմական ունեցվածքի, գեներալի, հազուստների և այլնի դուրսբերման դեմ՝ պահանջելով դադարեցնել այն: Դրան **Ջ. Միլնը** շատ բազմիմաստ պատասխանում է, որ նախ 1) իբր թե «պատերազմն ավարտվել է, կարիք չկա ուժեղացնելու բանակը, որ 4 տարի պատերազմել են ոչ թե նրա համար, որ ուժեղացնեն բանակը... բավական է ունենալ ոչ թե զորքեր, այլ լավ ժանդարմերիա. 2) որ Կարսում ամեն ինչից շատ կա, հատկապես հազուստ, որ ոչ բոլոր ֆորտերն են այնտեղ նայվել, և եթե անգլիացիները այնտեղից դուրս են բերել հրետանին և փամփուռները, ապա այն ուղարկված է գեներալ Դենիկինի բանակը, քանզի Դենիկինը կռվում է ընդդեմ բոլշևիկների, իսկ բոլշևիկներին անգլիացիները համարում են լուրջ թշնամիներ նաև Հայաստանի համար, իսկ մնացած 2 միլիոն փամփուռներ իբր թե լիովին կբավարարի Հայաստանի կարիքները⁸⁸⁶, ինչն այդպես չէր և անգլիացիների այդ հակահայ քայլերի դեմ վճռականորեն բողոքեց **Ալ. Խատիսյանը**, սակայն անարդյունք: Հարկ է ասել, որ անգլիական գեներալի տեսակետը չէր բխում իրական աշխարհաքաղաքական դրուժյան իրատեսական, ոչ հաշվենկատ և բոլոր գործոնների համակողմանի ու անկաշառ հաշվառումից և սթափ գնահատականից, որում գտնվում էր Հայաստանը այդ ժամանակ՝ շրջապատված թշնամիներով: Նա հաշվի չէր առնում, որ Հայաստանին իր առջև կանգնած խնդիրները լուծելու համար ոչ թե միայն լավ ոստիկանութուն էր անհրաժեշտ ներքին խնդիրների լուծման համար, այլև գլխավորապես լավ զինված և հանդերձավորված բանակ, որը կարողանար հայ ժողովրդին տալ անվտանգության իրական երաշխիքներ: Եվ վերջապես, այս ամենից ակնհայտ էր դառնում, որ ամեն ինչ հարմարեցվում էր Մեծ Բրիտանիայի նեղ վեհապետական շահերին, իսկ դա արդեն կործանարար էր Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից: Եվ ավելին, արխիվային փաստաթղթերի և զանազան այլ վավերագրերի ուսումնա-

⁸⁸⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 211, մաս I, ք. 92:

⁸⁸⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 101, ք. 48, գ. 114, ք. 196:

սիրությունը անհայտորեն վկայում է, որ այդ բնագավառում իրավիճակը շատ ավելի լուրջ էր և խճճված, քան կարելի էր պարզապես առաջին հայացքից պատկերացնել: Բրիտանական ռազմական ներկայացուցչությունը Հայաստանում գործում էր շատ հաշվենկատ գործելակերպով, քողածածկելով և գաղտնագրելով իր կողմից ձեռնարկված ռազմաքաղաքական բնույթի բոլոր գործողությունները: Այս հավահայկական քաղաքականությունն ավելի ուրուշակիորեն և ավելի բացահայտ արտահայտվեց հետագայում և ս, և մասնավորապես նրանում, որ անգլիացիները, չնայած հայկական կողմի բողոքարկմանը և գեներալ **Թ. Նազարբեկյանի** կտրուկ դերքորոշմանը, 1919 թ. կեսերին դեռ շարունակում էին զբաղվել Կարսից հրանոթների (ավելի քան 60 հատ), մեծ քանակությամբ արկերի, փամփուռույթների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրս բերմամբ, և այն մուսավաթական Բաքու տեղափոխելով⁸⁸⁷: Բրիտանական զինվորական իշխանությունների կողմից Կարսից 60-ից ավելի հրանոթների և մեծ քանակությամբ արկերի ու փամփուռույթների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրսբերման փաստը թողնում էր վատ տպավորություն նաև այն առումով, որ այն բացի Դենիլիկից, հասցեագրված էր նաև, գուցե և միայն ադրբեջանացիներին: Այդ հարցին անդրադառնում է նաև **Ա. Պուադեբարը**, նշելով անգլիական զորակայանի կողմից Կարսում ռուսների զինանոցից թուրքերի կողմից գեներալ ազգրավման մասին, և ՀՀ կառավարությունը հանձնելու փոխարեն 65 հրանոթ, վեց վազոն արկ և մի քանի միլիոն փամփուռույթ ու ուղարկվել Թիֆլիս, ինչի հետևանքով հայերը զրկվել են վերաբնակվող գաղթականներին պաշտպանելու համար խիստ անհրաժեշտ գեներալ զինամթերքից⁸⁸⁸: Դրան հավելենք նաև այն, որ անգլիացիները բացի հանրապետության զինանոցները դատարկելուց՝ Բաթումում արգելափակեցին 2 անրոպլանների Հայաստան տեղափոխման գործը, որոնք գնվել էին ՀՀ դեկավարության կողմից Փարիզում, կեղծ պատճառաբանություններով այն մասին, թե անհրաժեշտ է պարզել այդ ինքնաթիռների «ծագումնաբանությունը»⁸⁸⁹: Պետք է նաև ավելացնել, որ գեներալ **Նազարբեկյանը**՝ բողոքարկելով այդ գործողությունների դեմ, գտնում էր, որ բրիգադային գեներալ **Վ. Հ. Բիչի** (ռազմական հետախուզության պետ) կողմից իրականացվող այդ քայլերը լիովին անհասկանալի են, գումարած դրան նաև այն հանգամանքը, որ առանձին անձանց կողմից անգլիական գնացքներով Կարսից դուրս բերվող

⁸⁸⁷ Տե՛ս այդ մասին **Գ. Գ. Մախմյան**, *Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг.*, стр. 64-65, **Մ. Կարապետյան**, *Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920 թթ.*, էջ 92-93, **Ռ. Գ. Հովհաննիսյան**, *Հայաստանի Հանրապետություն, Հատոր I, Առաջին Տարին*, 1918-1919, էջ 243-245:

⁸⁸⁸ Տե՛ս **Ա. Տեր-Մինասյան**, *Անտոան Պուադեբարը եւ Հայաստանը*, «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2004 թ., N° 2, էջ 90:

⁸⁸⁹ Տե՛ս **Գ. Գ. Մախմյան**, *Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг.*, стр. 211.

ունեցվածքը, հատկապես երկաթուղային գույքը, ընկնում էր Վրաստան՝ վերավաճառքի նպատակով: Այս կապակցությամբ նաև հարց էր բարձրացվում *մայոր Չարլզի* միջոցով շտապ խնդրել գեներալ Վ. Թոմսոնից արգելելու վերը նշված ապրանքների ապօրինի դուրս բերումը⁸⁹⁰: Սակայն մեկ այլ վարկածի համաձայն, ինչպես այդ մասին պնդում է Ռ. Հովհաննիսյանը, Վ. Թոմսոնին հաջորդող գեներալ *Ջ. Ն. Կորիի*⁸⁹¹ կողմից վրացական կառավարությանը տված բացատրության համաձայն Կարսի զինամթերքը նախատեսված էր ոչ թե Կամավորական բանակի համար, այլ իբր բոլշևիկների դեմ կռվող թուրքմենական ուժերի համար⁸⁹²: Այդ մասին Մ. Միլիկյանի գեկուցազրի հիման վրա *Թ. Նազարբեկյանը* և շտաբի պետ, գեներալ-մայոր *Հ. Հախվերդյանը* 1919 թ. մայիսի 2-ին հայտնում են Զինվորական նախարար *Ք. Արարատյանին*. «Այդ բոլորը գորքի և ժողովրդի վրա թողնում են ճնշող տպավորություն, առավել ևս, որ այդ գույքը ուղարկվում է Բաքու, որը կարող է ընկնել Ադրբեջանի կառավարության ձեռքը»⁸⁹³:

Գործին միջամտում է նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարը: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը 1919 թ. ապրիլի 24-ին հեռագրով (N° 1327) դիմելով Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին, շեշտում էր, որ անգլիացիները շարունակում են Կարսից դուրս բերել արկերը, եռագիծ փամփուռները և այլն: Միաժամանակ, ՀՀ Արտաքին Գործերի նախարարը խնդրում էր միջնորդել գեներալ Թոմսոնի առաջ՝ դադարեցնելու վերը նշվածի արտահանումը, պատճառաբանելով դրանց մեծ կարիքը, և հատկապես արկերի ու փամփուռների անհրաժեշտությունը⁸⁹⁴: Մի շարք փաստաթղթերից էլ պարզ է դառնում, որ անգլիացիների նույնիսկ շարքային սպայական կազմը ոչ շատ հարգալից, երբեմն էլ պարզապես ոչ կոռեկտ վերաբերմունք էր դրսևորում Հայկական բանակի գլխավոր սպայակազմի և հրամանատարության նկատմամբ: Անգլիացիները ոչ միայն Կարսից, այլև Սարիղամիշից ու Ալեքսանդրապոլից դուրս էին բերում վերը նշվածը, ինչպես նաև երկաթուղային ունեցվածքը, դինամիտեքենաները, շոգեքարչերը, վագոնները և այլն: Սակայն չբավարարվելով այդքանով, նրանք դուրս բերեցին նաև N° 3 զրահակնացքը, որը կանգնած էր Կարսում, ինչի մասին հարդորում է գեներալ-մայոր *Միլիկյանը* ՀՀ զորքերի գլխավոր հրամանատար Նազարբեկյանին 1919 թ. մայիսի 4-ի գեկուցազրում⁸⁹⁵: Նշված գեկուցա-

⁸⁹⁰ ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 158, ք. 4, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 92, ք. 251, գ. 299, ք. 4, 7:

⁸⁹¹ Կորի Չորջ Նորթոն (1874-1968 թթ.) - *գեներալ-մայոր, 1919 թ. մայիսի 10-ից մինչև 1919 թ. սեպտեմբերի 6-ը եսնդիսացել է 27-րդ դիվիզիայի և առեսադրակ ողջ ըրիտ ա ն ա կ ա մ գ որքերի հրամանատարը Անդրկովկասում՝ ընդհուպ մինչև դրանց հեռացումը անդրկովկասյա մ տ ա ր ա ծ ա շ ը ց ա մ ն ի ց*:

⁸⁹² Տե՛ս Ռ. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, էջ 244:

⁸⁹³ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 158, ք. 4:

⁸⁹⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 92, ք. 208-209:

⁸⁹⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 67 (77), ք. 20:

գրում գեներալ-մայոր **Սիլիկյանը** ջերմորեն և եռանդուն բողոքում էր անգլիական հրամանատարություն կողմից զբաղեցրվող նմանատիպ անբարյացակամ գործողությունների դեմ և գլխավոր հրամանատարից պահանջում էր միջնորդություն հարուցել նրանց կողմից տարված ողջ ունեցվածքը ետ բերելու մասին⁸⁹⁶: **Գեներալ Նազարբեկյանը** ստանալով գորքերի Ալեքսանդրապոլյան խմբի պետ **Մ. Սիլիկյանի** վերը նշված գեկուցագիրը, 1919 թ. մայիսի 5-ին համապատասխան գրությունը (№ 0060 / 0228) դիմում է Զինվորական նախարարին, որում թախանձագին խնդրում էր միջնորդել ետ վերադարձնելու տարված գենքն ու զինամթերքը, մնացած ունեցվածքը և դադարեցնել դրանց դուրս բերումը առանց Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվության⁸⁹⁷: Ի վերջո, Զինվորական նախարարն էլ վերոհիշյալ գրությունը իր հերթին ներկայացնում է վարչապետին, ակնկալելով հարկ եղած կարգադրությունը այդ մասին: Փաստաթղթի տակ ստորագրել էին Զինվորական նախարար գեներալ-մայոր **Արարատյանը** և Գլխավոր շտաբի պետի պարտականությունները կատարող և Հայաստանում հետախուզական գործի գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ գնդապետ **Զինկևիչը** (№ 00921): Բացի այդ, համապատասխան կարգադրություն է արվում սույն փաստաթղթի պատճենները ուղարկել Հայաստանի Հանրապետության Փարզի պատվիրակությանը (6 մայիսի, 1919 թ., № 1553) և Կոստանդնուպոլսի ՀՀ Դիվանագիտական ներկայացուցչին⁸⁹⁸:

Այս իրողության հաստատումն ակնհայտորեն ցայտուն է երևում Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի **Խան-Թեքինսկու**՝ 1919 թ. մայիսի 10-ին կառավարության նախագահ **Ֆ. Խան-Խոյսկու**ն հղած հեռագրից. «Պատրվակով, թե բոլշևիկները սպառնում են Բաքվին, խնդրեք անգլիացիներին Կարսից թնդանոթները տեղափոխել Բաքու»⁸⁹⁹: Եվ շատ հավանական է, որ 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կրած ծանր և աղետալի հետևանքներ ունեցած պարտության, և, մասնավորապես, Կարսի հոկտեմբերի 30-ի անփառունակ անկման գլխավոր պատճառներից մեկը անգլիացիների հակահայկական քայլերն են: Անգլիական գեներալ **Ջ. Կորիի** հետ Հայկական կառավարության 1919 թ. հունիսի 7-ի տեսակցության ժամանակ **Ալ. Խատիսյանը** պահանջում է կարգադրություն անել՝ դադարեցնելու Կարսից զինվորական ունեցվածքի ապօրինի դուրսբերումը, քանի որ այն ՀՀ սեփականություն էր: Այդ պատճառով էլ **գեներալ Սիլիկյանը** կասեցրել էր անգլիացիների գնացքի երթևեկությունը, որը գեներալ Թոմսոնը օգտագործեց որպես պատրվակ՝ արդարացնելու համար ռազմական

⁸⁹⁶ Նույն տեղում:

⁸⁹⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 67 (77), ք. 20, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 92, ք. 251:

⁸⁹⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 92, ք. 251 - 252:

⁸⁹⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 299, ք. 7:

ուևնեցվածքի դուրս բերումը Կարսի բերդակառուցյից⁹⁰⁰: Այդ Հիմնախնդրի լուծումը Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ամրապնդման և առհասարակ ռազմական շինարարության տեսանկյունից ուներ կարևոր նշանակություն, և հենց այդ հանգամանքը նկատի ունեին ՀՀ վարչապետը և Արտաքին Գործերի նախարարը բրիտանական ռազմական ներկայացուցչին ուղղված 1920 թ. օգոստոսի 11-ի (№ 3155) ճեպագրում. «Այն մոմենտում, երբ Հանրապետության կառավարությունը ստիպված է իր բանակը կազմավորել, որպեսզի ճնշի մի կողմից թաթարական ապստամբությունը և մյուս կողմից իր սահմանները պաշտպանի քուրդ և թուրք հրոսակախմբերի հարձակումներից, այն մոմենտում, երբ Հայաստանը ռազմամթերք է ստանում բրիտանական հրամանատարությունից, Հայաստանից ռազմամթերքը դուրս տանելը մի հարված կլինի հայ ժողովրդի ապահովության գործին:

Բրիտանական ներկայացուցիչները թույլ չեն տալիս, որ Ղարսի Հայկական զինվորական իշխանություններն անհրաժեշտ զինվորական միջոցներ ձեռք առնեն և Ղարսի բերդը պաշտպանության ընդունակ դարձնեն»⁹⁰¹:

Նմանատիպ գործողությունների համանման բովանդակություն էր նկատվում մեկ այլ անգլոսաքսոնական պետության քաղաքականությունում Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Համանման քաղաքական վարքագծի հեղինակները Ամերիկայի Միացյալ Նահանգներն էին, որ այդ տարիներին ոչ միայն զուտ արտաքին-քաղաքական հետաքրքրություններ էր հետապնդում, այլև ուներ որոշակի տնտեսական նկատառումներ և շահեր, այդ թվում՝ Հայաստանում և առհասարակ՝ տարածաշրջանում, որոնք արտահայտվում էին իրական քաղաքական և տնտեսական գործողություններում: Այսպես, մինչ հիմնական թեմային անդրադառնալը, հարկ է նշել, որ երկար ժամանակ պատմագիտական գրականության մեջ մեծամասամբ իշխել է այն մտայնությունը, թե իբր ԱՄՆ-ի կողմից ցուցաբերվել է պարենային զգալի օգնություն՝ ներկայացնելով որպես Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող անհրաժեշտ և անշահախնդիր օգնություն, մասնավորապես նշելով, թե 1919 թ. երկրորդ կեսից հետո, կարճ ժամանակամիջոցում, ծովով Բաթումի և այնտեղից էլ երկաթուղով Հայաստան հասցվեց 1,3 մլն. փութ (569 վագոն) ալյուր և 257 հազ. փութ ցորեն⁹⁰²: Այնինչ փաստերը նաև ցույց են տալիս, որ դա այնքան էլ այդպես չէ, կա շատ ավելի մեծ ճշմարտություն, արժանահիշատակ պատմական փաստ: Դատելով *Ռ. Հովհաննիսյանի* կողմից շրջանառության մեջ դրված փաստերից, ամերիկյան ալյուրի դիմաց հայկական կողմը պարտավոր էր պարզապես ներկայացնել

⁹⁰⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 114, ք. 196:

⁹⁰¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 92, ք. 357ա:

⁹⁰² Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 255-256:

գանձապետական պարտամուրհակներ⁹⁰³: ԱՄՆ-ը, ինչպես և ցանկացած իր իրական շահերն հարգող պետություն, հետամտում էր իր հետաքրքրությունները Անդրկովկասյան տարածաշրջանում և Հայաստանում, և դա էր միակ իրողությունը, ինչն ապացուցելու համար ստորև կբերվեն այլ փաստեր ևս:

Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանի՝ Հայաստանի Հանրապետության պարենավորման նախարարին⁹⁰⁴: 1919 թ. նոյեմբերի 11-ի հեռագրում (№ 3422) պարզորոշվում են որոշ կարևոր մանրամասներ, որոնք լույս են սփռում ԱՄՆ-ի հետամտած քաղաքականության վրա Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Այդ հեռագրում Եվանգուլյանը հայտնում էր, որ ամերիկյան հյուպատոսը խնդրում է թուլյատրել դուրս բերել Երևանից 10 հազար և Ալեքսանդրապոլից՝ 30 հազար կաշվե մորթակտորներ՝ դրանք Ամերիկա ուղարկելու համար՝ պետական հաշվին «Ստուկեն» առևտրական գրասենյակի միջոցով: Գրություն մեջ խնդրվում էր շտապ հայտնել արտահանության պայմանների մասին⁹⁰⁵: 1919 թ. նոյեմբերի 16-ի մի այլ գրությունից, որի հեղինակը ԱՄՆ-ի փոխհյուպատոսն էր Անդրկովկասում, ակնհայտ է դառնում, որ ոմն **Նիկոլայ Սերգեևիչ Լավրով** ամերիկյան հյուպատոսարանի կողմից գործուղվում է Ալեքսանդրապոլ՝ բռնագրավելու և ձեռքագտնելից ազատելու 36 հազար ոչխարի մորթակտոր, որոնք գտնվում էին ռուսական Տրանսպորտային ապահովագրական ընկերության ներկայացուցիչ Բոգդան Լազարի Հարությունյանի տրամադրության տակ, նրա կողմից դաս դասված վիճակում: Այնուհետև տեղեկացվում էր, որ այդ մասին ամերիկյան հյուպատոսի կողմից Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ **Մ. Թումանովին** (իշխան Միքայել Թումանյան, որը նախորդեց **Լ. Եվանգուլյանին** դիվանագիտական հավատարմատարի պաշտոնում) դեռ նոյեմբերի 11-ին տեղեկացվել է, որ այդ ապրանքները գնվել են «Ստուկեն և ընկերություն» առևտրի տան կողմից՝ Ամերիկյան հյուպատոսարանի համար, և այդ ապրանքները պետք է ուղարկվեն Ամերիկա: Գրության վերջնամասում ամերիկյան հյուպատոսը ընդգծված պնդում էր, որ ինքը պաշտոնապես դեմ է ամեն տեսակի բռնագրավումներին, և խնդրում էր ձեռնարկել միջոցներ ամերիկյան հյուպատոսարանին պատկանող ապրանքների պահպանության համար⁹⁰⁶: Քաջըռուկները

⁹⁰³ Տե՛ս **Р. Ованнисян**, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., стр. 551.

⁹⁰⁴ 1918 թ. նոյեմբերի 4-ից մինչև 1919 թ. հուլիսը պարենավորման նախարարությունը կար և գործում էր որպես համակարգ, իսկ այնուհետև այն միացվեց հանրային խնամատարություն նարարարությանը, որի նախարարը 1919 թ. հոկտեմբերի 31-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը՝ **Արտաշես Բարսեղյան** էր, իսկ դրանից հետո ընկած ժամանակահատվածում՝ ընդհուպ մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը՝ **Սարգիս Արարատյանը**. - «Ուրբաթ» (Երևան), 25. 05.1 990.

⁹⁰⁵ ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 106, ք. 4:

⁹⁰⁶ Նույն տեղում, ք. 19 - 20:

այսքանով չեն ավարտվում, և ԱՄՆ-ի Հյուսիսատոսարանը շարունակում է պնդել Հայաստանի Հանրապետության բանակի համար շատ կարևոր նշանակություն ունեցող հումքի՝ ԱՄՆ արտահանելու անհրաժեշտության մասին, ինչի մասին մենք տեղեկանում ենք ՀՀ պարենավորման նախարարի մի գրությունից: Այսպես, 1919 թ. նոյեմբերի 26-ի հեռագրում (N^o 7186)՝ ուղղված Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, պարենավորման նախարարը տեղեկացնում էր, որ ինքը ուղարկում է Երևանում ամերիկյան ներկայացուցչին հասցեագրված իր նամակների պատճենները, միաժամանակ հաղորդում, որ մինչև «Ստուկեն և ընկերություն» առևտրի տան կողմից այդ 36 հազար ոջխարի մորթակտորների գնելը, դրանք վաճառված են եղել այլ անձի, ինչն ակնհայտ երևում է կցված փաստաթղթերից: Այնուհանդերձ, պարենավորման նախարարը իր այս հեռագրում, նշում էր, որ չնայած այդ հանգամանքներին, «Ստուկեն և ընկերություն» Առևտրական տունը ղեկավարության խնդրանքով դիմել են Թիֆլիսում ամերիկյան Հյուսիսատոսարանին և նրանից ձեռք բերել վկայագիր այն մասին, որ այդ ապրանքները ձեռք են բերվել ամերիկյան Հյուսիսատոսարանի կողմից, վերջինիս համար և հետևաբար, դրանք ենթակա են Ամերիկա արտահանման: Պարենավորման նախարարը վկայակոչելով առկա փաստաթղթաշարքը և հենվելով ՀՀ նախարարների խորհրդի նոյեմբերի 7-ի որոշման վրա, համաձայն որի առկա ողջ կաշին, մորթիները և բուրդը բռնագրավվում են ՀՀ պարենավորման նախարարության կողմից՝ Հայկական բանակի կարիքների համար, տեղեկացնում էր Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, որ պարենավորման նախարարությունը հնարավոր չի գտնում թուլյատրել այդ 36 հազար կտոր ոջխարի մորթեղենի արտահանությունը Ամերիկա⁹⁰⁷: Ակնհայտ է, որ ռազմավարական արժեք ներկայացնող այս հումքի նկատմամբ հետաքրքրությունը չի մարում, ԱՄՆ-ի Հյուսիսատոսարանը շարունակում է պնդել իր տեսակետի վրա, և դա այն դեպքում, երբ այդ կաշին ուներ լուրջ արժեք նաև Հայաստանի Հանրապետության Զինվորական նախարարության տարաբնույթ կարիքների համար, և կարող էր ծառայել վերջինիս պահանջների բավարարմանը: 1919 թ. նոյեմբերի 26-ի գրությունում (N^o 7187)՝ ուղղված ՀՀ կառավարությանը կից ամերիկյան ներկայացուցչին, պարենավորման նախարարը անդրադառնում էր այդ չարաբաստիկ հարցին, և նշում, որ ամերիկյան Հյուսիսատոսի կողմից իրեն ուղղված գրություններից եզրակացություն է արվել, որ վիճարկվող և «Ստուկեն և ընկերություն» առևտրական տանը պատկանող և ԱՄՆ արտահանության ենթակա 36 հազար կտոր ոջխարի մորթեղենը իրենց կողմից գնվել է առևտրական Միջոցայինից, որ այդ ապրանքը դեռ նոյեմբերի 4-ին է ձեռք բերել: Պարենավորման նախարարը, ի դիտություն ընդունելով վերո-

⁹⁰⁷ Նույն տեղում, թ. 10-11:

հիշյալը, տեղյակ էր պահում ամերիկյան հյուպատոսին, որ ՀՀ Նախարարների խորհրդի նոյեմբերի 7-ի որոշման հիման վրա հանրապետության տարածքում առկա ողջ այժի մորթին և ոչխարի մորթեղենը բռնագրավման միջոցով անցնում է հանրապետության ենթակայության տակ որպես նրա սեփականություն՝ նշված հումքի տերերի հետ ձեռքբերված համաձայնության հիման վրա հաստատագրված գներով: Գրուլթյան մեջ նաև նշվում էր, որ ապրանքները նախատեսված են բացառապես Հայաստանի Հանրապետության բանակի կարիքների համար: Գրուլթյան վերջնամատում պարենավորման նախարարը խնդրում էր այդ մասին տեղյակ պահել Թիֆլիսում գտնվող ամերիկյան հյուպատոսին⁹⁰⁸: Իսկ 1919 թ. դեկտեմբերի 6-ի գրուլթյունում (№ 4076)՝ հասցեագրված ամերիկյան հյուպատոսին (Թիֆլիս), ՀՀ դիվանագիտական հավատարմատարը տեղեկացնում էր, որ որպես բանավոր հարցապնդման հետևանք ինքը ուղարկում է ի գիտություն մորթեղենի բռնագրավված վերաբերյալ ողջ գրազրույթունը⁹⁰⁹: Ամփոփելով, կարելի է գալ եզրահանգման, որ ոչ միայն անգլիացիները, այլև նրանց անգլոսաքսոնական մյուս եղբայրակիցները աշխատում էին նրանցից ետ չմնալ և ամենևին էլ Անդրկովկաս և Հայաստան չէին եկել Անտանտի գծով իրենց կրտսեր եղբայրակցին փրկելու, այլ կոնկրետ քաղաքական-տնտեսական շահերի իրականացման համար, ինչը չափազանց դիպուկ է նկատել **Ալ. Խատիսյանը**. «Հաշիւը բերաւ զանոնք մեզ մօտ... որ Դաշնակիցները եկան Կովկաս ոչ թէ կովկասեան ժողովուրդներու սիրոյն համար»⁹¹⁰, ոչ թէ Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգը ձևավորելու և այն իմաստավորող կառույցները ուժեղացնելու նպատակադրումով, ինչի ցայտուն արտահայտությունն են հանդիսանում վերը բերված փաստաթղթերը: Այս և այլ կարգի հակահայկական գործողությունների դեմ Հայաստանի խորհուրդը և նրա կուսակցական խմբավորումները բողոքեցին կառավարությանը, սակայն, էական արդյունքներ ձեռք բերել չհաջողվեց:

Բնականաբար, որոշ փաստաթղթերի մանրագնին ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ստեղծված իրավիճակում Հայկական բանակի և ռազմական շինարարության հարցերը այս կամ այն առումով չէին կարող չհետաքրքրել Հայաստանի խորհրդի ընդդիմությանը: Հարկ է ընդգծել, որ նրանց արտահայտած մտքերը և տեսակետները բանակի, նրա գործունեության կազմակերպման ու ղեկավարման, պաշտպանական հիմնախնդիրների վերաբերյալ արժանի են ուշադրության: Դեռ հայկական պետության կազմակերպման արշալույսին, երբ կենսական նշանակություն ունեին ազգային բանակի կազմակերպման հիմնախնդիրները, Հայաստանի խորհրդի 1918 թ. օգոստոսի 5-ի նիստում իրարամերժ տեսակետներ են հնչում բանակի կազ-

⁹⁰⁸ Նույն տեղում, ք. 12-13:

⁹⁰⁹ Նույն տեղում, գ. 106, ք. 4:

⁹¹⁰ **Ալ. Խատիսյան**, նշված աշխատությունը, էջ 193:

մակերպման վերաբերյալ, որոնց սկզբունքային լուծումից էր էապես կախված երկրի ապագան: Մտավորված բանավեճի ընթացքում սոցիալ-դեմոկրատ պատգամավոր **Հ. Ազատյանը** առաջարկում էր հայկական գործի կազմակերպման հիմքից վերացնել միլիցիայի փթած սկզբունքը: Անկուսակցական **Ստ. Մամիկոնյանը** պահանջում է ավելացնել մշտական գործի թիվը⁹¹¹: Կառավարութունը, սակայն, չի համաձայնվում այդ երկու իրարամերժ տեսակետների հետ էլ, այլ ելնելով երկրի համար ստեղծված իրավիճակից, նպատակահարմար է գտնում ընդամենը գնալ ժամանակավոր կրճատումների, միաժամանակ պահպանելով մշտական գործի հիմնական կորիզը: Այդուհանդերձ, քննարկումները հետագայում շարունակվում են՝ տեղիք տալով նոր տարակարծութունների: Այսպես, բանավեճելով Զինվորական նախարարութան կողմից ներկայացված մասնակի գորացրման նախագծի շուրջ՝ կապված վրաց-հայկական պատերազմի ավարտի, երկրի վիճակի որոշակի կայունացման հետ, սոցիալ-դեմոկրատական խմբակցութունը 1919 թ. հունվարի 7-ի Հայաստանի խորհրդի նիստում «ուշաբրավ տեսակետ» է (որն անշուշտ, ամենևին էլ գերծ չէ միակողմանիութունից) արտահայտում, որի համաձայն «չառ ավելի լավ է ունենալ 5-6 հազարանոց լավ հագնված ու լավ սնված գործ, քան 16 հազար քաղցած ու տկոթ խուժան»⁹¹²: Սա, իհարկե, սոցիալ-դեմոկրատների կողմից ոչ լիովին հաշվարկված, ոչ իմաստուն մոտեցում էր հարցին, չնայած իր որոշ ռացիոնալ հատիկներին: Խորհրդում սոցիալ-դեմոկրատական տեսակետ ներկայացնողը ոչ անհայտ **Հ. Ազատյանն** էր: Նրանք ռազմական քաղաքականութան վերը նշված հարցերի մասին դատում էին՝ անջրպետվելով այն ռեալ իրականությունից, որը գոյութուն ուներ Հայաստանի Հանրապետության շուրջ: Միաժամանակ, նրանք անտեսում էին այն աշխարհաքաղաքական ռեալութունը և ռազմավարական հնարավորութունները, որոնցում գտնվում էր Հայաստանը այդ ժամանակ: Ավելին, նրանք, հիմք ընդունելով այն կեղծ ու փարիսեցիական պատճառաբանությունը, որ հայերը փոքր ու աղքատ ժողովուրդ են, և արտաքին գործի թշնամու հանգամանքը, պնդում էին, թե իբր իրենք չեն կարող 40-50 հազարանոց բանակ ունենալ՝ երկրի պաշտպանունակութան, ազգային անվտանգութան և ռազմական շինարարութան դժվարին և բազմապլան խնդիրները լուծելու համար⁹¹³: **Հ. Ազատյանը** գրում է. «Ժողովուրդը քաղցած է, գուրկ աշխատավոր ձեռքերից, իսկ նրա պառլամենտը հնարավոր է համարում ինչ-ինչ նպատակների համար 16 հազար մարդուց բաղկացած գործ պահել, ամսական նրա վրա մոտ յոթ միլիոն ռուբլի ծախսելով: Մեր գործի քանակն ու նրա վրա արված ծախսերը Հայաստանի համար ոչ թե շուայութուն պետք է համարել, այլ ժողովրդի շահերի դեմ ուղղված մի անորակելի

⁹¹¹ Տե՛ս «ՎԷՄ» (Փարիզ), Բ. տարի, 1934, թիւ 6, էջ 101-102:

⁹¹² ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 114, ք. 4, «Կայծ» (Երևան), թիվ 24, 30 հունվարի, 1919:

⁹¹³ Նույն տեղում:

Հանցանք»⁹¹⁴, ավելացնելով, որ միջոցները պետք է ծախսել պարենավորման վրա, այլ ոչ թե գորքի:

Սոցիալ-դեմոկրատները տվյալ դեպքում փոխարեն գործ անելու, ավելի շատ զբաղված էին պարզապես քննադատամոլությամբ կառավարող կուսակցության՝ ՀՀ Դաշնակցության Հասցեին, որոնց իհարկե, կարելի էր խստորեն քննադատել, բայց ոչ մերկապարանոց քննադատությամբ զբաղվել, դրա փոխարեն լրջորեն և խորությամբ վեր հանել բոլոր ամոթալի երևույթները ռազմաքաղաքական շինարարության բնագավառում՝ զեղծարարության և կաշառակերության, զանգվածային դասալքության փաստերը Հայկական բանակում և այլն, ինչն, անշուշտ, որոշակի իմաստ ուներ: Եվ որպես արդյունք, սոցիալ-դեմոկրատներն առաջարկում էին այս խնդրում շատ ավելի մի վատ բան, քան անում էր Դաշնակցական կուսակցությունը: Այսպես, նրանք գտնում էին, որ այժմ ևեթ հարկավոր է Հայաստանում մտցնել ժողովրդական միլիցիայի համակարգը, որն ի դեպ, վերցված էր դրսից և սկզբունքային առումով միանգամայն հիմնազուրկ գաղափար էր: Ավելին, սոցիալ-դեմոկրատական խմբակցության ներկայացուցիչները առանց լուրջ հիմնավորման և խորքային բնույթի հաշվարկներ կատարելու պնդում էին, որ գորքը պետք է լինի ժողովրդական միլիցիայի տեսքով, որ մոտ ապագայում իրենց որևիցե թշնամի չի սպառնում, ինչը ևս խիստ մոլորություն էր, իսկ առհասարակ պետական քաղաքականության տեսանկյունից՝ վնասակար և անհեռատես դիրքորոշում էր ռազմաքաղաքական շինարարության հարցերի և, մասնավորապես բանակատեղծ և պետական անվտանգության համակարգի ձևավորման հարցերի համար անցանկալի հետևանքներով հղի⁹¹⁵:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ինչքան էլ ոչ օբյեկտիվ լինեին Հայաստանի Առաջին Հանրապետության ընդդիմության ներկայացուցիչները բանակի ու երկրի ինքնապաշտպանության կազմակերպական հարցերում, այնուամենայնիվ, պետք է որոշակի արդարացիության երանգներ տեսնել նրանց քննադատությունում: Սակայն ամեն ինչի մասին կարելի է դատել չափի զգացումով՝ տեսնելով իրականությունը: Առհասարակ կուսակցությունների վերաբերմունքը (թե՛ դրական և թե՛ բացասական առումներով) պատերազմի, ռազմական ծախսերի և այլնի նկատմամբ արժանի է ուշադրության: Այդ առումով հետաքրքրական է նաև Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 10-ի նիստում կազմակերպված քննարկումը՝ կապված Զինվորական նախարարության նախահաշվի՝ 29 մլն. ռ. գումարի համար: Այս կապակցությամբ իր ելույթում սոցիալ-դեմոկրատ **Հ. Ազատյանը** պնդում է, որ նախարարությունը վարել է անպատասխանատու խմբակցությունների քաղաքականություն՝ բերելով փաստական տվյալներ այդ գումար

⁹¹⁴ Տե՛ս «Կայծ», 22 հունիսի, 1919:

⁹¹⁵ «Կայծ», թիվ 24, 30 հունվարի, 1919:

րի աննպատակ և ոչ նպատակահարմար օգտագործման մասին: Այնուհետև պնդում է, որ կան բազմաթիվ բողոքներ գինվորներից, որոնք ամիսներով ռոճիկ չեն ստանում, վատ են կերակրվում և այլն⁹¹⁶: Սակայն սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունների առաջարկը չի անցնում, ձայների մեծամասնությամբ անցնում է Հայ Հեղափոխական Դաշնակցության բանաձևը:

Կուսակցությունները Հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին զորավիզ են եղել Հայրենիքին, պետությունը: 1920 թ. աշնանը թուրք-հայկական ճակատագրական պատերազմի ժամանակ Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը և մյուս կուսակցությունները միասին հանդես եկան Հայրենիքի պաշտպանության և ոսոխին արժանի հակահարված տալու վճռականությամբ: Նրանք պատրաստակամություն հայտնեցին՝ աջակցելու կառավարությունը և ըստ կարելվոյն օգնելու ռազմաճակատում կռվող մեր զորամասերին: ՀՍԴԲԿ ԿԿ-ն հրապարակեց առանձին կոչ՝ ուղղված Հայ ժողովրդին՝ անարգ թշնամուն հակահարված տալու և Հայրենիքը պաշտպանելու վերաբերյալ⁹¹⁷: Հոկտեմբերի 26-ին Երևանում կայացած միջկուսակցական միտինգում կրակոտ ճառով հանդես եկավ **Ք. Իշխանյանը**՝ ընդգծելով երկրին սպառնացող վտանգն ու Հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտությունը⁹¹⁸: Հայրենիքի համար ծանր պահին բոլոր խմբակցությունները հայտարարեցին, որ տաճկական վտանգը իրենց էլ է նեղացնում: Ընդունվում է համակրանքի բանաձև կառավարության հասցեին, որը լիազորվում է իրականացնելու լիարժեք զորակոչ:

Քաղաքական կուսակցություններին ընդհանուր առմամբ մտահոգել են ռազմական քաղաքականության, կանոնավոր բանակի կազմակերպման և ազգային-պետական անվտանգության ցավոտ հարցերը, որոնց նրանք երբեմն էլ վճռականությամբ պաշտպան են կանգնել՝ սատարելով ՀՀ կառավարությանը, չնայած դա դրույթունը չփրկեց և այդ կապակցությամբ որպես հետզրույթուն նշենք ևս մի քանի հանգամանքի մասին. ՀՀ թվով երրորդ Զինվորական նախարարը՝ **Ռ. Տեր-Մինասյանը**, Հայկական բանակի թուլություն գլխավոր պատճառներից մեկը համարում էր Հայկական բանակում իրար կողքի երկու գինվորական համակարգերի՝ կանոնավոր բանակի կազմակերպման հին ռուսական և խմբապետական-ֆիդայական, անկանոն զորամասերի կազմակերպական համակարգերի առկայությունը, դրանց հակադրվածություն հանգամանքը, բոլշևիկյան-մոսկովյան գործոնը և այլն⁹¹⁹:

⁹¹⁶ Նույն տեղում, թիվ 13, 18 դեկտեմբերի, 1918, թիվ 25, 1 փետրվարի, 1919:

⁹¹⁷ «Յառաջ», 3 հոկտեմբերի, 1920:

⁹¹⁸ ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 74, թ. 2:

⁹¹⁹ Տե՛ս **Ռոպեճ**, Հայ Յեղափոխական մրյիշատակները, հ. 7 (Է), Գ. հրատ., Թեհրան, 1982, էջ 326, 329-338:

Հայ ռազմաքաղաքական միտքն էլ անընդունակ գտնվեց դարամակարդակի պահանջների իրականացման համար, որ ռուսական բանակում ծառայած և կրթված զինվորականությունից մի մասի ձգտումը՝ ռազմական գործը զինվորական գիտություն հիման վրա կազմակերպել, իրականություն չգարձավ: Բանակում տեղ գտած բացասական երևույթների ընդերքային լուրջ պատճառների շարքում պետք է տեսնել նաև կանոնավոր բանակի և ոչ կանոնավոր ուժերի, կամավորական ու մասնագիտական խմբերի միջև հակադրվածություն, և հրամանատարություն անկարողության մեջ հաղթահարելու պետություն մեջ պետություն դառնալու ձգտում ունեցող այդ ուժերի տրամադրվածությունները: Կանոնավոր բանակի և խմբապետական-հայդուկային համակարգերի անհամատեղելիությունը ևս կարևոր ազդակ հանդիսացավ դասակարգության և բանակը քայքայող նմանակարգ բացասական երևույթների արմատավորման համար, ինչը հեշտ չէր արմատախիլ անել: Զինվորական գործի կազմակերպման առումով իրար կողքի երկու հակադիր համակարգերի գործունեություն պայմաններում զանազան խմբերը, գործելով ՀՀ բանակին կից, չկարողացան և անգամ կամեցողություն չդրսևորեցին տարալուծվել բանակային կառույցների մեջ՝ կուլ գնալով ինքնազուլու գործելու անկազմակերպ բնագրերին: Այդ հանգամանքը լավ է նկատել դաշնակցական «Ջանգը» 1918 թ. «խմբապետական սիստեմը, որ խոշոր ծավալ ստացավ մեզանում համաշխարհային պատերազմի հենց առաջին օրից, չնայած իր համեմատաբար լավ կազմակերպման, այնուամենայնիվ չտվեց բավարար հետևանք»⁹²⁰: Ռազմաքաղաքական հայտնի իրավիճակում հայդուկային ու խմբապետական համակարգը ռազմավարական հեռանկարների տեսանկյունից անօգտակար դարձավ, ինչպես դա պատահեց 1988 թ. իրադարձություններից հետո, երբ ոչ կանոնավոր, երկրապահ ռազմական կազմավորումները, որոնք, անկասկած հիշեցնում էին 1918 թ. անկանոն գործախմբերին, միայն որոշակի անհրաժեշտ բունություն կիրառման պայմաններում տարալուծվեցին վերստեղծվող Հայկական բանակի կանոնավոր գործառնություն: Խմբապետականությունը 1918 թ. իրականություն պայմաններում հակադրվածություն դրսևորեց հայկական գործի կազմակերպման առողջ դարակազմիկ և դարամակարդակ բնագրերին: Ավելին, չնայած հայ կամավորների հատուկ հայդուկային խիզախականությունը, անգամ նրանց լավագույն ներկայացուցիչները փաստորեն ընդդիմացան ու խոչընդոտեցին կանոնավոր բանակի կազմակերպման առկա գործընթացներին, և իրենց անսանձ ու կարգապահություն չենթարկվելու անկազմակերպ բնագրի դրսևորումներով դարձան հայկական գործերի ընդհանուր տկարացման, դասալքման պատճառ, որն էլ բնականաբար անընդունակ դարձավ ճակատելու թշնամու դեմ հատկապես Առաջին Հանրապետություն մայրամուտին: Այդ և

⁹²⁰ Տե՛ս «Ձանգ» (Երևան), Հ. Յ. Դաշնակցութիւն. Հասարակական, քաղաքական և գրական թերթ, 31 հոկտեմբերի, 1918, N 66 (82):

այլ պատճառներով, ռազմական ռեֆորմներն այդ բնագավառում կիսատ մնացին, և ըստ էության չլուծվեցին հիրավի արդիական և իրապես կանոնավոր բանակ ունենալու հիմնախնդիրները, կուլ գնալով որոշ փարիսեցիական ու անլուրջ պատկերացումների, և թե հայ ռազմաքաղաքական միտքն ու կարող ռազմաքաղաքական ուժերը պատրաստ չեղան պետական անվտանգության ապահովմանը նպատակուղղված այդ խնդրի լուծմանը, ոչ հիմնավոր պատճառաբանություններ բերելով, որ դրա համար անհրաժեշտ են երկար ու ձիգ տարիներ: Ցավոք սրտի, այդ և այլ մտայնությունները իշխող էին նաև հայկական զորահրամանատարություն մի զգալի մասի մեջ և քաղաքական-կուսակցական որոշակի շրջանակներում, ինչն էլ էապես նպաստեց հայկական բանակի ոչ լիարժեք կայացմանը ու դարձավ նրա գլխավոր թուլություններից, ինչը նաև նշանակում էր չբացահայտել հայ ժողովրդի ռազմավարական նպատակադրումների էությունը: Ավելացնենք, որ հայկական բանակի տկարացմանը նպաստող կարևորագույն պատճառներից պետք է համարել Հայոց զորքի և ժողովրդի շարքերում կռվելու կորույթ, ոգու, անհրաժեշտ կամքի և վճռականությունից պակասը, հոգեբանական պարտվողական ընդհանուր տրամադրվածությունը և այլն: Ի հավելումն վերոհիշյալին, կարելի է ավելացնել, որ Հայկական բանակի հիմնախնդիրների լուծման տեսանկյունից հայ ռազմաքաղաքական շրջաններին պակասում էր նաև կանխատեսելու և ծրագրելու ընդունակությունը, սկսած գործը մինչև վերջ հասցնելու նպատակասլացությունը և տրամաբանականությունը, և առաջադրված խնդիրներին նորովի մոտենալու կարողականությունը բացակայությունը, որի հետևանքով էլ 1918-1920 թթ. իրականության պայմաններում կառչում էին զորքի կազմակերպման իր դարն ապրած խմբապետական-հայդուկային-ֆիդայական եղանակաճից, ինչպես դա տեղի ունեցավ 1980-ական թթ. վերջերին - 1990-ական թթ. սկզբներին Արցախյան հերոսամարտի օրերին. դա որոշակի իմաստով հիշեցնում է նաև բոլշևիկյան այն իրականությունը, երբ Կարմիր բանակի որոշ բարձրատիճան գլխավորականներ, իրապես կանոնավոր բանակի հիմնախնդիրներով զբաղվելու փոխարեն, նենգափոխում էին ժամանակակից զորքի կազմակերպման սկզբունքները և սխալ ենթադրություն եկան Հեծելազորի կիրառման մասին ապագա պատերազմում, դառնալով Կարմիր Բանակի ողբերգություններից շատերի պատճառահիմքը:

ԳԼՈՒԽ ՀԻՆ ԳԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ 1918 - 1920 ԹԹ.

1. ՀՀ կառավարության, ներքին Գործերի նախարարության մարմինների պայքարը դասալքուության դեմ հայկական բանակում

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային պատմության հարուստ փորձը, դասալքուությունը մշտապես եղել է բանակները և զորքերը քայքայող, դրանք ներքուստ ջլատող և անդամալուծող բացասական երևույթներից, որոնց դեմ բոլոր դարերում մղվել է անզիջում, հետևողական պայքար, որն ուղեկցվել է փոփոխական հաջողություններով՝ համարվելով ամեն մի կայացած և կայացման ձգտող պետության ներքին քաղաքականության հիմնախնդիրներից, որը ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացրել: Դասալքուություն եղել է հին աշխարհի բոլոր բանակներում՝ հռոմեական և հունական կայսրությունների փառապանծ լեգեոններում, Ալեքսանդր Մակեդոնացու, Հուլիոս Կեսարի և Տիգրան Մեծի զորքերում, փառավոր տրադիցիաներ ունեցող ռուսական և գերմանական բանակներում, ինչպես նաև թուրքական բանակում⁹²¹. այն դիտվել է որպես զինվորին բարոյալքող և հուսալքող լուրջ գործոն, հանդիսանալով ռազմական պարտությունների գլխավոր դրոպապատճառներից, որի դեմ փորձ է արվել անզիջում պայքար մղել Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին, որն ուղեկցվել է որոշ հաջողություններով և ցավալի սպիթաքուններով: Առ այսօր չափազանց քիչ է գրվել այն մասին, թե Հայաստանի Առաջին Հանրապետությունը, նրա կառավարությունը, մի-

⁹²¹ Ինչ վերաբերում է Թորքիային, ըստ թուրքական բանակի գնդապետ **Սեհմեդ Էմինի** կողմից «*Ալշան*» թերթում (1922 թ. սեպտեմբեր) հրատարակված պաշտոնական տվյալների. 1914 թ. վիճակով, թուրքական բանակ է գորակոչվել 2850000 մարդ, որից 1565000 մարդ արդեն պատերազմի ավարտամասում՝ զինադադարի կնքման պահին դա սայվել էր թուրքական բանակի շարքերից, մի մասն էլ անհայտ կորել. - Տե՛ս **Мустафа Кемаль**, Путь новой Турции, 1919-1927. Первые шаги национально-освободительного движения, М., Госуд. Изд-во Литиздат Н. К. И. Д., 1929, стр. XXXI.

լիցիան⁹²² և Ներքին Գործերի նախարարությունը ու վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող անհրաժեշտ ուժային ստորաբաժանումները ինչ գործունեություն են ծավալել այդ դժվարին տարիներին Հայկական բանակում տեղ գտած մի այնպիսի արատավոր և քայքայիչ նշանակություն ունեցող երևույթի դեմ, ինչպիսին հանդիսացել է դասալքությունը, ինչով է ավարտվել իշխանությունների պայքարը դասալքության դեմ, ինչ ձեռքբերումներ են եղել, ինչպիսի դժվարությունների առաջ են կանգնել ՆԳՆ և նրա կարևորագույն ստորաբաժանումներից մեկը՝ միլիցիան, որտեղ են սայթաքել և ինչու չեն կարողացել հիմնավորապես լուծել այդ չարաբաստիկ հիմնախնդիրը:

Դասալքությունը եղել է Առաջին Հանրապետության բանակի ամենակնճռոտ խնդիրներից մեկը, որը քարուքանդ էր անում բոլոր բանակային ռազմաքաղաքական կառույցները, անուժ դարձնում դրանք և հասցնում գինվորների մարտունակության վրա: Այդ չարաբաստիկ երևույթը և այն արմատախիլ անելու անհրաժեշտությունը հստակ ներկայացված է «Ժողովուրդ» թերթում տպագրված **Ն. Իշխանյանցի** «Դասալքումները գործերում» հոդվածում, որից մեջբերում ենք. «Մեր հայոց գնդերը կարծես հյուրանոցներ լինեն. այնտեղ ամեն մի գինվոր մտնում է, երբ ցանկություն ունի, և հեռանում է նմանապես, երբ կամենում է: Հայ գինվորը չունի հրացան, կմտնի յուր ցանկացած գունդը, մի քանի օրից հետո նա չկա, փախել է հրացանով: Գուցե ասենք, թե դասալիքների ընկերները սոված են, բայց այդ կարծիքն էլ սխալ է, փախչում են նրանք, որոնք ամենից հարուստն են, որոնց շտեմարանը լիքն է հացով՝ երեկ մի վաշտից փախան 10 գինվոր իրենց փամփուռներով Վարմազհար և շրջակա գյուղերից: Եվ վերջապես, մի քանի օր առաջ Թիֆլիսից եկած սպաների մի մասը կռվի դաշտից են փախել, չէ որ նրանք էլ են դասալիքներ: Ես զարմանում եմ, թե ինչպես բարձր իշխանությունը սուս ու փուս այդպիսի սպաների է ընդունում: Եվ երբ այժմյան խաղաղ ժամերին մեր հայ գինվորը չի ուզում սովորել, չի ուզում լսել, և փախչում է գնդերից, ապա ինչ պետք է անի քննության ժամանակ, այն է՝ կռվի դաշտում: Պատասխանը պարզ է»⁹²³: Հենց այդ հանգամանքներն էլ պայմանավորեցին Հանրապետության թե՛ քաղաքացիական, և թե՛ գինվորական իշխանությունների չթուլացող ուշադրությունը դասալքության խնդրի նկատմամբ, և ձեռնարկված բոլոր քայլերը և գործողությունները՝ բանակի շարքերից արմատախիլ անելու ուղղությամբ: Այս

⁹²² Առաջացել է լատիներեն *Militia* բառից, որը նշանակում է «գործ». XV դարից սկսած այդպես է կոչվել աշխարհագործ Եվրոպայի մի շարք երկրներում, ինչը հավաքվում էր պատերազմի ժամանակ: Ռուսաստանում XIX դարի սկզբին այդպես էր անվանվում Չեծնտոլոյական (այսիմքն՝ քաղաքային ինքնավարության) գործը, որը ներկայացվում էր հեծյալ գործի ձևով. Կովկասում և Անդրկասպյան մարզում այն կազմվում էր բնակչության կողմից. - Տե՛ս **Военный энциклопедический словарь**, М., Воен. изд-во, 1986, стр. 443:

⁹²³ «Ժողովուրդ» (Երևան), 15 նոյեմբերի, 1918, N° 32:

դժվարին խնդրի լուծման նպատակադրումով էլ այդ հակասություններով և բարդություններով լի ժամանակաշրջանում համախառն ՆԳ և Զինվորական նախարարությունները համագործակցում էին իրար հետ, քանի որ ունեին համատեղ լուծման ենթակա հարցեր ու խնդիրներ, և դրանք վճռելու համար օգտագործվում էին նաև ՀՀ ՆԳՆ մարմինների ու միլիցիայի առկա հնարավորությունները ևս:

Դասալքությունը Առաջին Հանրապետության չլուծված և ցավոտ խնդիրներից էր, գուցեև ամենադժվարներից, որը պետությունն ի վիճակի չեղավ հաղթահարել, և այս հիմնախնդրում ՆԳ մարմինների գործադրած ջանքերը ևս անհրաժեշտ և ակնկալվող արդյունավետությունը չունեցան, և նաև այն պատճառով, որ միլիցիայի աշխատակիցներն իրենք ևս մեծմասամբ տեղերում՝ գավառամասերում հովանավորում էին դասալիքներին, վերջիններիս թաքցնում իշխանություններից՝ տեղիք տալով կաշառքների և անհաշիվ զեղծարարությունների, ինչին նպաստում էր նաև այն հանգամանքը, որ ընդհանուր առմամբ, բազմաթիվ գործոնների «չնորհիվ» (հոգեբանական-մարդկային բնույթի, իշխող տնտեսական փրկզման և սովի, այդ թվում կաղրային, գինվորական իշխանությունների, ՆԳ մարմինների և խմբապետականությունների միջև գոյություն ունեցող հակադրվածություն, և բազմաթիվ այլ պատճառների հետևանքով) «գորահառաքի մարմինները եւ դասալքութեան դէմ կռուող վարչութիւնները թոյլ էին: Դասալքութիւնը արմատացած արտ մըն էր, որ Հայաստանի Հանրապետութիւնը ժառանգած էր ցարական Ռուսաստանէն»⁹²⁴: Այդ տարիներին, անշուշտ, որոշ գինվորական-քաղաքական գործիչների, միլիցիայի և ՆԳՆ մարմինների կողմից փորձեր արվեցին խորանալու դասալքության իրական պատճառների մեջ, չբավարարվելով միայն վարչահրամայական եղանակներով լուծել այդ չարբաստիկ հարցը: ՀՀ ՆԳ նախարար **Ա. Մանուկյանին** ուղղված 1918 թ. օգոստոսի 3-ի դիմումագրում (N^o 3946) գորքերի Երևանյան շոկատի պետ գեներալ-մայոր **Մ. Սիլիկյանը** փորձում է բացահայտել այդ չարբաստիկ երևույթն առաջ բերող պատճառները, ընդգծելով, որ Երևանյան գորաշոկատի հաջող ղեկավարման համար, որում ուժեղ տարածում է գտել դասալքությունը, անհրաժեշտ է, որպեսզի իշխանությունները տեղերում օժանդակեն այդ չարիքի դեմ մղվող պայքարում: **Մ. Սիլիկյանը** նշում էր, որ ինքը հանդես է եկել միջնորդություն՝ Զինվորական նախարարության միջոցով տեղերում՝ ամեն մի տեղամասում ստեղծելու հրամկազմ սպայի զլխավորությունմբ, սակայն առանց տեղամասային տեսուչներին այդ գործի մեջ ներգրավելու: Առավել կարևորվում է նշված գրություն վերջնամասը, որում Սիլիկյանն ընդգծում էր, որ դասալքությունը զլխավորապես զարգանում է թերանվածության, կոչիկի և հագուստի բացակայության հետևանքով: Այդ իսկ պատճառով

⁹²⁴ **Կ. Մասունի**, Հայ-թրքական պատերազմը // «Հայրենիք», 1926, N^o 5 (41), էջ 79:

վերջինս ՆԳ նախարարից խնդրում էր միջոցներ ձեռնարկել պարենամթերքների պահեստները լրացնելու համար, դասավորելով նաև կոշիկի վերանորոգման կետերը և դերձականոցները, բռնազրավելով առկա ողջ կաշվի նյութերը, ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետությունում ողջ տարածքում: Վերջապես, Սիլիկյանը գտնում էր, որ դասալքություն դեմ պայքարի խնդիրներին կարելի է ծառայեցնել նաև այն, որ գինվորական ծառայությունում մեջ գտնվող գինվորների ընտանիքներին տրամադրվի նպաստ⁹²⁵: Իսկ 1918 թ. օգոստոսի 12-ին Մ. Սիլիկյանը ստանում է ՀՀ գործերի գլխավոր հրամանատար Թ. Նազարբեկյանի օգոստոսի 10-ի հրամանը, որում կապված դասալքություն սպառնացող չափերի հետ, խստագույն կարգադրվում էր այդ չարիքի դեմ պայքարելու և դասալիքներին կարճաժամյա ժամկետներում հավաքելու նպատակով եռանդուն սպանների հրամանատարությունում ստեղծել հատուկ հրամկազմեր՝ ամենաեռանդուն կերպով իրականացնելով դասալիքների ձերբակալումը, համառ ջանքեր գործադրելով, որ վերջիններին հետ լինեն իրենց ամրացված զենքերը կամ վատագույն զենքում՝ դրանք հայտնաբերվեն, հակառակ դեպքում այդ պլանների ձախողումը կհանգեցնի հայոց գործի քայքայմանը և կործանմանը⁹²⁶:

1918 թ. օգոստոսի 24-ին Նախարարների խորհուրդը լսեց դասալքություն դեմ պայքարի մասին հարցը, ընդունված բանաձևում որոշում կայացրեց Զինվորական նախարարի հաշվին բաց թողնել 10 հազար ու՝ կառավարությունում 6 միլիոնանոց ֆոնդից՝ դասալքություն դեմ պայքարի նպատակով⁹²⁷: Զորահավաքի և դասալքություն խնդիրների լուծման հետ կապված կարելի է նշել Զինվորական նախարար **Հովհ. Հախվերդյանի** 1918 թ. նոյեմբերի 21-ի դիմումագրի մասին՝ ուղղված **Ա. Մանուկյանին**, որում մասնավորապես ընդգծվում էր հետևյալը. «նկատի ունենալով, որ շատ քաղաքացիներ խուսափում են գինվորական ծառայությունից, Հայաստանի խորհրդի Զինվորական հանձնաժողովը 1918 թ. նոյեմբերի 18-ին որոշել է. բոլոր կառավարական և հասարակական հիմնարկություններում, այդ թվում և միլիցիայում, անմիջապես ծառայությունից ազատ արձակել զորակոչային տարիքի բոլոր երիտասարդ մարզկանց, առաջին հերթին 20-ից մինչև 25 տարեկան»⁹²⁸: Դրան հաջորդում է ՀՀ Զինվորական նախարարի մեկ այլ դիմումագիր. «Զինվորական իրադրությունը պահանջում է գործերի համարում մարդկանցով: Մինչդեռ կան դասալիքների զանգված ու ծառայությունից խուսափողներ, որոնք ազատ ապրում են քաղաքում և գալառներում: Նրանք, ովքեր նշված ժամանակում չեն ներկայանա հավաքակետեր՝ կձեր-

⁹²⁵ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 84, ք. 17:

⁹²⁶ Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 43, ք. 27-28:

⁹²⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 484, ք. 17, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 216, ք. 4:

⁹²⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 83, ք. 8, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 86, ք. 55:

բակալվեն Հատուկ զինվորական պետերի կողմից և կհանձնվեն դատարանին՝ պատերազմական դրուժյան ժամանակի օրենքով»⁹²⁹:

Միլիցիան, ՆԳ ու Զինվորական նախարարութիւնները որոշակի դեր էին կատարում բանակի հետ կապված մի շարք խնդիրներ լուծելու, և դասալքութեան դեմ մղվող պայքարում: Դատելով արևիվային փաստաթղթերից և այդ ժամանակաշրջանի մամուլից, 1918-1920 թթ. այդ բնագավառում կուտակվել էին ահռելի խնդիրներ, քանզի հենց իրենք ՆԳ նախարարութեան համակարգի աշխատակիցները և միլիցիոներները, ինչպես նաև շահամոլ զինվորական պաշտոնյաները թույլ էին տալիս ամենամեծ ու զազրելի զեղծարարութիւնները, հաճախ էլ պարզապես չէին օժանդակում զինվորական իշխանութիւններին իրենց դժվարին աշխատանքում, որի արդույունքում Հայկական բանակն ուներ ռեկորդային թվով դասալիքներ: Իրապես գործող մարտունակ բանակում ընդգրկված էին այնքան թվով զինվորներ, ինչքան իրականում կազմում էր դասալիքների թիվը, չնայած որոշ իշխանավորների ջանքերին՝ փորձելու ստեղծել կայուն և օրինապաշտ երկիր՝ լուծելու նաև դասալքութեան և զինապարտութեան խնդիրը: Այդ մասին է վկայում ՀՀ ՆԳ նախարարի գեկուցումը Նախարարների խորհրդի 1918 թ. նոյեմբերի 22-ի նիստում դասալքութեան խնդրի հանգուցալուծման խնդրում գավառային ու գյուղական կոմիտարների, ինչպես նաև գյուղական ավագանու պատասխանատվութեան բարձրացման մասին⁹³⁰: Պետութիւնը և իշխանութիւնները, առանձին զինվորական այրեր փորձում էին գործնականորեն լուծել կուտակված խնդիրները, բանակը դիտելով որպես կարևոր գործոն Հայկական պետականութեան և անվտանգութեան համակարգի կայացման գործընթացներում, սուր կերպով դնելով նաև բանակային կառույցները քայքայող դասալքութեան խնդիրները: 1918 թ. դեկտեմբերի 19-ի գրութեան մեջ **Ա. Մանուկյանը** դիմելով գավառային կոմիտարներին, ընդգծում էր, որ պատերազմական իրադրութիւնը պահանջում է գորքերի անհապաղ համալրում, այն դեպքում, երբ դասալիքները և ծառայութիւնից խուսափողները ազատ ապրում են գավառներում և քաղաքներում: Ելնելով դրանից, ՆԳ նախարարը հրահանգում էր բնակչութեանը ամենալայն ձևերով տեղեկացնել, որ ամեն մի զինապարտ, որը ծառայութեան մեջ չի գտնվում գորքերում, պետք է ծառայողական փաստաթղթերով հանդերձ ներկայանա գորահավաքակայան, ներկայանա տվյալ «էտապի» պարետին՝ 20-ից 25 տարեկանները ներառյալ, դեկտեմբերի 23-ից ոչ ուշ, իսկ 26-ից 32 տարեկան տարիք ունեցողները՝ դեկտեմբերի 27-ից ոչ ուշ: Գրութեան վերջնամասում **Ա. Մանուկյանը** հստակ ընդգծում էր, որ նշված ժամկետներում չներկայացնողները կբռնվեն և կձերբակալվեն հատուկ զորաշուկատների կողմից և կտրվեն դա-

⁹²⁹ Նույն տեղում, ք. 10:

⁹³⁰ Նույն տեղում, գ. 484, ք. 70:

տի՝ ռազմական ժամանակին համապատասխան⁹³¹: Այսպես, գավառային կոմիտարներին, և մասնավորապես Նոր Բայազետի, Դարապետյանի, Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի, Ղարաքիլիսայի գավառային կոմիտարներին և ռազմական օկուպացիաների պետերին ուղղված 1918 թ. դեկտեմբերի վերջնամասի մի գրության մեջ **Արամը** ընդգծում էր, որ մինչև 25 տարեկան միլիցիայի ծառայողները ենթակա են զորակոչի, սակայն մինչև նրանց զորակոչային տարիքի այլ զինապարտներով փոխարինումը Զինվորական նախարարութայան կողմից նրանց տրվում է երկշաբաթյա տարկետում, առաջարկելով ամենուր կազմակերպել շուրջկայներ՝ համաձայն Զինվորական նախարարի 1918 թ. դեկտեմբերի 23-ի հրամանի, որպեսզի զորքերում ծառայողներին խուսափող այդ կարգի մարդկանց ուղեկցեն դեպի զորահավաքակայաններ⁹³²: Եվս մի ուշադրավ փաստաթուղթ վկայում է **Ա. Մանուկյանի** որպես պետաքաղաքական գործչի կողմից գործադրած ջանքերի մասին՝ նպատակաուղղված բանակի հզորացմանը, դասալքության դեմ մղվող անգիշխում պայքարին՝ այն արմատախիլ անելու համար: 1918 թ. վերջի մի գրությամբ վերջինս ընդգծում էր նաև այլազգիների նկատմամբ զորակոչային պարտավորությունների տարածման մասին, մի քիչ այլ շեշտադրմամբ. այսպես, Ա. Մանուկյանը վերոնշյալ գրության մեջ ընդգծում էր, որ զորակոչի ենթակա են նաև հուլյները, ինչպես նաև մոլոկանները, վերջիններիս առաջարկելով օգտագործել բանակի թիկունքը սպասարկելու համար⁹³³: Ինչ խոսք, դա էլ էր լուծում, պետական մտածողութայան հստակ դրսևորում: 1918 թ. դեկտեմբերի 24-ի հեռագրում՝ ուղղված բոլոր գավառական կոմիտարներին, Ա. Մանուկյանը մի շարք այլ պարզաբանումներ էր տալիս, ըստ որոնց զորակոչն իրականացվում է ՆԳ և Զինվորական նախարարությունների միջև գործողությունների լրիվ համաձայնություն պայմաններում, զինակոչից ազատվում էին միմիայն հաղորդակցություն-ռազմական նշանակություն ունեցող հաստատությունների ծառայողները՝ ՀՀ փոստային ծառայություն և երկաթուղու աշխատակիցները, ինչպես նաև պետական ծառայություն մեջ և կառավարություն կազմում գտնվողները, միլիցիայի մինչև 25 տարեկան աշխատակիցները, հուլյները ենթակա էին զորակոչի ընդհանուր հիմունքների հիման վրա⁹³⁴: ՆԳ նախարարի սույն հեռագիրն ուղարկվել է բոլոր գավառամասերը. Ա. Մանուկյանի նշված հեռագրում ընդգծվում էր նաև, որ Զինվորական նախարարություն միջոցով պարզաբանվել է, որ բոլոր օտարահավատակ հայերը ևս ենթակա են զորակոչի, և կոչ էր արվում վերն ասվածն ընդունել ի տեղեկություն դեկավարություն համար⁹³⁵:

⁹³¹ Նույն տեղում, գ. 75, ք. 35:

⁹³² Նույն տեղում, գ. 73, ք. 26, գ. 75, ք. 29:

⁹³³ Նույն տեղում, ք. 73:

⁹³⁴ Նույն տեղում, ք. 36-37:

⁹³⁵ Նույն տեղում:

1918 թ. դեկտեմբերի 31-ին դասալքության Հարցին է անդրադառնում Նախարարների խորհուրդը, որը լսում է Զինվորական նախարարի գեկուցումը դասալքության դեմ կռվելու մասին: Ընդունված որոշման մեջ առաջարկվում է ներկայացրած նախագիծը վերադարձնել, և Հանձնարարել Զինվորական նախարարին վերամշակել այն՝ ի նկատի ունենալով նիստում տեղի ունեցած մտքերի փոխանակությունը⁹³⁶: 1919 թ. մարտի 19-ին ՆԳ նախարար **Ս. Մանասյանը**, ելնելով մայրաքաղաքում դասալքությունն արմատախիլ անելու հրատապ անհրաժեշտությունից, Համապատասխան գրությամբ (N^o 1464)՝ ուղղված միլիցիայի տեսուչ, գնդապետ Ապրեսովին, կարգադրում է քաղաքային միլիտի, գավառային կոմիսարների և պարետի հետ Համատեղ իր նախագահությունում կազմել Հանձնաժողով, որը պետք է միջոցներ ձեռնարկեր քաղաքում դասալքության դեմ պայքարելու, իսկ բոլոր մինչև 25 տարեկան զինվորացուները պետք է Հանձնվելին գործերի Երևանյան Ղոկատի պետ **Դրոյին**⁹³⁷: Իսկ Նախարարների խորհուրդի 1919 թ. մարտի 24-ի նիստում որոշում է ընդունվում Նոր Բայազետում գտնվող գործերում կարգուկանոնը ամրապնդելու, մարտունակությունը և զորամասերի կողմից ձեռնարկվող գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու Համար ժամանակավորապես Հաստատել ռազմադաշտային դատարաններ՝ գորամասերը ինքնակամ լքող և փախչող զինվորականների նկատմամբ դատ ու դատաստան իրականացնելու Համար, որոնց վերաբերյալ վճիռները մեկ օրվա ընթացքում պետք է Հայտնեն Զինվորական նախարարին՝ վերջնական եզրակացություն Համար⁹³⁸: Հենվելով ՆԳ նախարարի 1919 թ. մարտի 22-ի գրություն վրա, մարտի 30-ին զինվորական գերատեսչության գծով հրամանագիր է ստորագրվում, ըստ որի դասալքության դեմ հաշտ պայքար մղելու, դասալիքների գտնվելու տեղերը շուտ Հայտնաբերելու Համար Զինվորական նախարարը գորամասերի հրամանատարներին և վարչություններին ու Հաստատություններին պետերին հրամայում էր ամեն մի գավառի գծով առանձին դասալիքների ցուցակները, նրանց գտնվելու տեղի մասին տեղեկատվությունը ներկայացնել ՆԳ նախարարությունը գրասենյակ, որոնք անհապաղ պետք է ուղարկվեին զինկոմիսարիատներ՝ անհապաղ միջոցներ ձեռնարկելու Համար⁹³⁹:

Հայկական բանակում տեղ գտած չարիքին՝ դասալքության վերացման հիմնախնդիրներին անդրադարձան նաև 1919 թ. մայիսի 11-ին հրավիրված միջգերատեսչական խորհրդակցություն մասնակիցները ի դեմս Զինվորական նախարարի օգնական **Դրոյի**, Երևանի դատաստանական պալատի դատախազ Գ. Մելիքյանի, Իլիլջանի գավառի կոմիսար Մ. Սարատիկյանի, գորահավա-

⁹³⁶ Նույն տեղում, գ. 6, ք. 43:

⁹³⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 85, ք. 20:

⁹³⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, ք. 42 հակադարձ երեսը:

⁹³⁹ Նույն տեղում, գ. 104, ք. 71:

քի գծով Գլխավոր վարչության քարտուղար Գ. Գավրիլովի և ուրիշների: Դրանում որոշվեց, որ բացի ռազմադաշտային դատարաններից, Հարկավոր է միավորել ՆԳ և Զինվորական նախարարությունների ջանքերը, այդ նպատակով երկու գերատեսչությունների համաձայնությամբ նշանակելով հատուկ սպայի, նրան գործուղելով ՆԳ նախարարի տրամադրության տակ, վերջինիս ենթարկելով ինչպես միլիցիան, այնպես էլ պահեստային զորամասերը, անցկացնելով զինապարտների խստագույն հաշվառում՝ դրանց գրանցելով հատուկ մատյաններում⁹⁴⁰: Դասալքության հարցը օրակարգային էր, դրան անդրադառնում էին բոլոր գերատեսչությունները, հատկապես ուժային նախարարությունները և դրանց ղեկավարները. Հայաստանի զորքերի սպարապետ գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը ՀՀ վարչապետին ուղղված 1919 թ. մայիսի 23-ի գրության մեջ նշում էր, որ չնայած ձեռնարկված միջոցներին, դասալքության դեմ պայքարը ցանկալի արդյունքների չի հանգեցրել, ընդհակառակը՝ զորամասերը զգալի չափով կազմալուծվել են և նոսրացած զորակազմը իրեն վստահված բանակը շատ ծանր վիճակի մեջ է դրել, առաջարկում էր ստեղծված ծանր վիճակից դուրս գալու և դասալքությունը հաղթահարելու համար կարճ ժամանակամիջոցում ընդունել արտակարգ միջոցներ, այն է՝ 1) ընդունել դասալքությունը խստորեն պատժող օրենք, 2) թուլյատրել զորքերում ռազմա-դաշտային դատարանների ստեղծումը և 3) օրենք ընդունել, որն արգելում է զինապարտներին քաղաքացիական ծառայության ընդունել: Նազարբեկյանը այդ ամենը համարում էր չափազանց կարևոր, գտնելով, որ հասարակությունը պետք է խորապես գիտակցի այդ հանգամանքը՝ ունենալու հայրենիքի ծառայության համար պատրաստ բանակ⁹⁴¹:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Նախարարների խորհրդի 1919 թ. Հունիսի 25-ի նիստի որոշումը: Նիստում լսվում է Արդարադատության նախարարի զեկուցումը ՆԳ նախարարության՝ դասալքության դեմ կռվելու վերաբերյալ ներկայացրած օրինագծի մասին. որոշվում է համաձայն 1919 թ. Հունիսի 5-ի կառավարության կողմից ընդունված օրենքի, հաստատել այդ օրինագիծը, հայտարարելով մասվան պատժի վերաբերյալ 10-րդ կետի քննության մասին⁹⁴²: 1919 թ. Հուլիսի 8-ին կառավարությունը կրկին քննում է դասալքության խնդիրը: Անդրադառնալով այդ խնդրին, Նախարարների խորհուրդն իր այս նիստում լսում է ՆԳ նախարարի պաշտոնակատար **Ա. Մաքսապետյանի** զեկուցումը դասալքության օրենքին մի քանի անհրաժեշտ լրացումներ անելու մասին: Նիստում որոշվում է 1919 թ. Հունիսի 5-ի օրենքի համաձայն հաստատել լրացուցիչ հոդվածներ, ըստ դրանց՝ 1) մեկից ավելի անգամ դասալքության մեջ գտնվող-

⁹⁴⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 86, ք. 58-61, 87:

⁹⁴¹ Նույն տեղում, գ. 86, ք. 55:

⁹⁴² Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 141:

ները հանձնվում էին զինվորական դատի, 2) սույն օրենքը ամենուրեք ուժի մեջ էր մտնում լույս տեսնելուց 24 ժամ անց⁹⁴³: 1919 թ. հուլիսի 23-ին Նախարարների խորհուրդը դարձյալ իր հերթական նիստում քննարկում է չարաբաստիկ դասալքության խնդիրը՝ լսելով ՆԳ նախարարի պաշտոնակատար **Ս. Մանասյանի** կողմից մտցվող օրինագծի մասին 26, 27 և 28 տարեկան քաղաքացիներին՝ Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում գորակոչի ենթարկելու մասին: Այս օրինագծի կապակցությամբ որոշվում է համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի՝ հաստատել ներկայացված օրինագիծը⁹⁴⁴:

Անդրադառնալով դասալքության և զինապարտության խնդրին, ՆԳ նախարար **Ա. Գյուլխանդանյանը** 1919 թ. օգոստոսի 21-ին ՀՀ Նախարարների խորհրդին ներկայացրած գեկուլցում (N^o 2713/BX 2606) անդրադառնում է Կարսի նահանգապետից ստացված օգոստոսի 10-ի գեկուցագրում (N^o 3074) արժարժված հարցերին, որոնք վերաբերում էին գորահավաքի խնդիրներին, վերջինիս դժգոհությանը, որ գորակոչը անհրաժեշտ արդյունքը չի տալիս, որ երիտասարդությունը, գրեթե բոլորը դրսում են և հետագայում գորակոչային տարիքը կարող է անբավարար լինել մեր գնդերի շարքերը համալրելու համար: Այնուհետև նշվում էր, որ դրա հիման վրա համաձայնվելով 4-րդ բրիգադի պետ Սեպուհի հետ, ինքը ենթադրում է, որ զինակոչի կարելի է ենթարկել մինչև 32 տարեկաններին ևս: Լիովին համաձայնություն արտահայտելով Կարսի նահանգապետի գեկուցագրում բերված հետևություններին հետ և հաշվի առնելով նահանգում տվյալ պահին գորական ուժի իրական պահանջները բավարարելու անհնարինությունը, որպես հետևանք գլխավորապես հայկական բնակչության սակավաթվություն, և որը էվակուացիայի էր ենթարկվել այդ նահանգից թուրք-թաթարական հարձակումների ժամանակ, և ետ չէր եկել, ՆԳ նախարարը Նախարարների խորհրդից խնդրում էր իրականացնել զինապարտների 29, 30, 31 և 32 տարեկանների գորակոչ: Արդյունքների մասին կարգադրություն արվեց հաղորդել գորահավաքի գծով գլխավոր վարչությունը՝ անհավաղ անհրաժեշտ կարգադրությունների համար⁹⁴⁵:

Սակայն ավելի դժվար էր դասալիքների այն կատեգորիայի հետ գործ ունենալուց, որոնք «զինված էին» պարսկական անձնագրերով, և օրը ցերեկով ազատ շրջում էին Երևանում և այլ քաղաքներում: Դա մեծ չարիք էր, և բարոյալքող ազդեցություն էր թողնում ողջ հասարակության և բոլոր խավերի վրա: Դեռ 1919 թ. օգոստոսին ՀՀ Զորահավաքի և դասալքություն դեմ պայքարի գծով հատուկ կոմիսարի պարտականությունները կատարող

⁹⁴³ Նույն տեղում, գ. 96ա, բ. 7:

⁹⁴⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 100 (43), բ. 167; գ. 96ա, բ. 28:

⁹⁴⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 2, բ. 157:

կապիտան **Վ. Մուրադյանը**⁹⁴⁶, որը նաև ՀՀ Հետախուզական ծառայության լավագույն սպաներից էր, առիթ է ունենում գործ ունենալ արդեն բավականաչափ ասեկոսների ու աղմկոտ խոսակցությունների նյութ դարձած, այսպես կոչված, պարսկական անձնագրեր ունեցող անձանց հետ, որոնք այդ ճանապարհով ևս խուսափում էին գորակոչից և բարոյալքություն մտցնում առանց այն էլ շատ դժվարությունների ու խնդիրների առաջ կանգնած Հայկական բանակի շարքերում: Դասալքության դեմ պայքարի պատմության տեսանկյունից կարևորվում է **Վ. Մուրադյանի** 1919 թ. օգոստոսի 7-ի պաշտոնական դիմումագրերը՝ ուղղված Երևանի զորքերի պետին և պարսկահատակ հայերի Հայրենակցական Միությունը, որում վերջինս ընդգծում էր ոչ պարսկահատակ հայերի կողմից գորակոչից ազատվելու նպատակով ոչ օրինական ճանապարհով պարսկական անձնագրեր ձեռք բերելու փաստերի ու դեպքերի մասին: Այնուհետև Վ. Մուրադյանը նշում էր, որ իր աշխատանքի ապահովվածություն և նման դասալիքներին բռնելու համար, և վերջապես այդ գորակոչներից իսկական պարսկահատակներին ձեռքազատելու և տրվող երաշխիքների արդյունավետության համար ինքը խնդրում է Հայրենակցական Միությունից իրենց եղբայրակիցներին լայնորեն տեղյակ պահել Հատուկ Կոմիտեի կամ Հանձնաժողովի ստեղծման մասին, որը պետք է զբաղվեր վերը նշված փաստաթղթերի (անձնագրերի) ստուգմամբ: Ընդ որում, **Վ. Մուրադյանը** գրություն մեջ շեշտում էր, որ իսկական կհամարվեն այն անձնագրերը, որոնք կնշագրվեն Հայրենակցական Միության ղեկավարության և ստեղծվելիք Հանձնաժողովի կողմից, իսկ այն անձինք, ովքեր կներկայացնեն առանց վերջիններիս կողմից նշումների փաստաթղթեր, իր կողմից կձեռքակալվեն՝ որպես գինվորական պարտականություններից խուսափողներ⁹⁴⁷: Այս նույն մտքերն են շոշափվում նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարար **Ս. Տիգրանյանի** 1919 թ. նոյեմբերի 22-ի դիմումագրում՝ ուղղված ՆԳ նախարարին, որում վերջինս տեղեկացնում էր վերոնշյալ «պարսկական անձնագրերով գինված» դասալիքների մասին, ասելով, որ Զորահավաքի դժով հատուկ կոմիսար **Վ. Վալադյանի** և գորամասերի հրամանատարների հաղորդագրություններից իրեն հայտնի է դարձել, որ գորակոչային տարիք ունեցող շատ անձինք իրենց գինվորական ծառայողական պարտականություններից ազատելու նպատակով անհայտ ճանապարհով ձեռք են բերել կեղծ պարսկական անձնագրեր: Արտաքին Գործերի նախարարը ընդգծում էր, որ ինքը բանակցությունների մեջ է մտել Երևանում գտնվող պարսկական հյուպատոսի հետ այն անձանց գորակոչելու հարցի հետ կապված, ովքեր ունեին կեղծ պարսկական անձնագրեր՝ չլինելով պարսկահատակներ: Արտաքին Գործերի նախարարը տեղեկացնում էր ՆԳ նախարարին, որ այդ

⁹⁴⁶ Տե՛ս **Վ. Հ. Վիրաբյան**, Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), էջ 64-67:

⁹⁴⁷ Տե՛ս **ՀԱԱ**, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 96, ք. 28, 30:

բանակցութիւնների արդունքով ընդունվել են ներքոհիշյալ որոշումները.

1) Պարսկական անձնագրեր ունեցող բոլոր անձանց, ովքեր կասկածվում են դրանք ոչ օրինական ճանապարհով ձեռք բերելու մեջ, անհրաժեշտ է ուղարկել պարոն պարսկական հյուպատոսի մոտ՝ հաղորդելով նրան բոլոր այն տվյալների և փաստաթղթերի մասին, որոնք կապացուցեն նրանց ՀՀ քաղաքացի լինելը: Պարսկական հյուպատոսարանում անցկացվելու է հետաքննութիւն նրանց պարսկահայաստակ լինելու վերաբերյալ՝ արդունքից կախված կլինի տվյալ գորակոչային տարիքի անձանց գորակոչից ազատելու հարցի հետագա վճռումը, 2) Պարսկական հյուպատոսը հանդես է գալիս հայտարարութեամբ, համաձայն որի բոլոր պարսկահայաստակ հայերը 20 օրվա ընթացքում պետք է իրեն ներկայանան բոլոր փաստաթղթերով, ապացուցելու համար իրենց հպատակութիւնը և ստանալու հատուկ վկայական, որը կտրվի մանրագնին ստուգումից հետո: Այդպիսի վկայականները պարտադիր են ՀՀ իշխանութիւնների համար և դրանց կրողները ազատվում են գորահալաքից: Փաստաթղթի վերջնամասում արված է մակագրութիւն, որում ասվում էր, որ այդ տեղեկատվութիւնը ուղարկվում է ի գիտութիւն, նկատի ունենալով դրանց անհրաժեշտութիւնը հյուպատոսի կողմից հարկ եղած կարգադրութիւնների տեսանկյունից ելնելով⁹⁴⁸: Այս գործն ունեցավ շարունակութիւն: Այսպես, Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար պ. **Լ. Եվանգուլյանը** սկսեց ստանալ զանազան բանգատներ ու բողոքագրեր, որոնք դիվանագիտական ուղիներով փոխանցվում էին Արտաքին Գործերի նախարարին, ինչպես նաև պարսկական հյուպատոսին, որոնցում հեղինակները փորձում էին պաշտպանվել կարծես թե իրենց նկատմամբ «անարդարացի» վարքագիծ որդեգրած գորահալաքային մարմիններից: Այսպես, դեռ 1919 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի անունից ՀՀ Ն Գ նախարարութեան դիվանագետին է ուղարկվում մի հեռագիր (N^o 4569). «Սրանց կից ուղարկվում է Ձեզ Վրաստանի մեր դիվանագիտական ներկայացուցիչ պ. Եվանգուլյանի N^o 212 հեռագրի պատճենը՝ պարսկահայաստակ հայերի զինակոչի կանչելու մասին: Խնդրում ենք այս մասին զեկուցել պ. մինիստրին՝ ի տեղեկութիւն և ի կարգադրութիւն. դիվանագետ»⁹⁴⁹: Իսկ բուն գրութեան մեջ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը մինիստր-նախագահին հաղորդում էր հետևյալ ուշադրավ բովանդակութեամբ հեռագիրը. «Երևանի պարսկական հյուպատոսի հաղորդումը. Զինվորական պարտականութիւնների գծով Կառավարական Հատուկ կոմիտարը չնայած բողոքներին, դրանցում է պարսկահայաստակ հայերին, ձերբակալում և ենթարկում է տուգանքի չներկայացածներին: Գլխավոր հյուպատոսի միջնորդագրի համաձայն խնդրում եմ արտակարգ

⁹⁴⁸ Նույն տեղում, գ. 71, ք. 171:

⁹⁴⁹ Նույն տեղում, ք. 149:

միջոցներ ձեռնարկել. Դիվանագիտական ներկայացուցիչ՝ Եվանգոլյան»⁹⁵⁰: Ըստ երևույթին, պարսկահպատակներին զինվորագրելու գործում թույլ էին տրվել որոշ սայթաքումներ ու սխալներ, վարկաբեկելով ճիշտ քաղաքական մոտեցումը սովյակ խնդրում, որից էլ օգտվել էին որոշ հայ քաղաքացիներ, օգտագործելով իրենց հնարավորութունները, դիմել էին պարսկական հյուպատոսին, վերջինս էլ դիմել էր Եվանգոլյանին, և նա էլ ձգտելով խուսափել դիվանագիտական սկանդալային իրավիճակների առաջացումից, դիմել էր կառավարութանը, ինչից էլ ելնելով հայկական կողմը փոքր-ինչ տեղի էր տվել, փորձելով լուծել խնդիրը և լարվածությունը վերացնել⁹⁵¹: Դժբախտաբար, խնդիրը դրանով չի ավարտվում ու չի էլ հանգուցալուծվում, ունենալով ավելի խոր արմատներ՝ կապված լինելով շատ մուլթ մեքենայութունների հետ: Լ. Եվանգոլյանին հասցեագրված 1919 թ. նոյեմբերի 7-ի հեռագրում ՀՀ Արտաքին Գործերի նախարարութան գլխավոր քարտուղարը արդեն ինքն էր խնդրում վերջինից պարսկական հյուպատոսից պարզել, թե ինչ փաստաթղթերի հիման վրա են տրվում պարսկական անձնագրեր, քանզի իրենք ունեն պաշտոնական տեղեկություններ, որ շատ հայեր ներկայացնում են կեղծ պարսկական անձնագրեր՝ հայկական բանակում զինվորական ծառայությունից խուսափելու համար⁹⁵²: Զորահավաքի և պարսկահպատակների գործերը կարգավորելու ու դասավորության դեմ պայքարում անհարկի դիվանագիտական բարդություններից խուսափելու նպատակով 1920 թ. օգոստոսի 24-ին (N^o 4910 - համապատասխան գրություն-շրջաբերական է ուղարկվում ինքնավարություններին՝ ի գիտություն): Արտաքին Գործերի նախարար Հ. Օհանջանյանը հատուկ գրությամբ դիմում է ՀՀ Ներքին Գործերի նախարարին. «Զանազան թյուրիմացությունների առաջն առնելու և Պարսից Հիւպատոսի հետ անախորժութիւններ չուեննալու համար նախարարութիւնը հետեւեալ համաձայնութեան եկալ Պարսից Հիւպատոսի հետ. 1. Բոլոր հայ պարսկահպատակները պարտաւոր են իրենց անցագրերը ներկայացնել Արտաքին Գործերի նախարարութեան - Վիզա անելու համար. 2. Այն դէպքում, երբ հաստատւի որ պարսկական անցագիր կրող անձը ոչ պարսկահպատակ է, նախարարութիւնը անմիջապէս կը յայտնի Հիւպատոսին, որ կը ջնջէ իր տոմարներից այդպիսինի անունը. 3. Հիւպատոսարանը այս մտքով կը յայտարարէ հայ պարսկահպատակներին: Խնդրում եմ կարգադրել յայտնել այդ մասին Ձեզ ենթակայ համապատասխան յիմնարկու-

⁹⁵⁰ Նույն տեղում, գ. 77, ք. 150:

⁹⁵¹ Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 403, ք. 22, 25; գ. 234, ք. 159, ՀՀ ՆԳ նախարարի օգնական Մ. Թորոսյանը մի ազդում (1920թ.) հենց կոչ էր անում գորահավաքը իրականացողներին նրբանկատ լինել պարսկահպատակների նկատմամբ, նրանց նկատմամբ չարաշահումներ չթույլատրել, որպէսզի դրանից չվնասվեն և չխաթարվեն հայ-պարսկական հարաբերությունները. - ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 54, ք. 16:

⁹⁵² Նույն տեղում, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 178, ք. 111:

թիւններին»⁹⁵³: Սակայն բարդությունները այդ հարցում չեն վերանում, առաջանում են նորերը, և ընդ որում՝ այլ տեղերից, այլ անհարթություններ առաջ բերելով պարսկահայտականների և առհասարակ օտարահայտականների գորակոչի ենթարկման խնդրում: Վրաստանում ՀՀ ղեկավանադիտական ներկայացուցիչ **Տ. Բեկզադյանի** 1920 թ. սեպտեմբերի 22-ի (№ 4267) հեռագրում՝ ուղղված ՀՀ Արտաքին Գործերի նախարարին, կապված ՀՀ-ում անցկացվող օտարահայտականների գորակոչի հետ, խնդրվում էր հրահանգներ տալ, թե ինչպես վարվել այն իրավիճակներում, երբ որոշ քաղաքացիներ գտնվում են Վրաստանի տարածքում՝ իրենց համարելով այդ երկրի հպատակներ⁹⁵⁴: Ելնելով նման փաստերից 1920 թ. հոկտեմբերի 9-ի մի փաստաթղթում Ն Գ նախարարութայն կողմից խնդրել էր դրվում ստեղծել մի հանձնաժողով, որը կզբաղվեր պարսկահայտականների զինվորական ծառայության խնդիրներով՝ ստուգելու համար փաստաթղթերը և դրանց համապատասխանությունը իսկականի հետ, թե ովքեր կարող են օրինական կարգով ազատվել գորակոչից⁹⁵⁵: Պարսկական կեղծ անձնագրերը իրենց «գերը» կատարում են, նպաստելով այդ չարաքաստիկ հարցի բարդացմանը: Սակայն իսկական չարիք էր, երբ դասալքութայնը, կարելի է ասել, նպաստում էին նաև Հայկական միլիցիան, Ն Գ մարմինների աշխատակիցները, որոնց շնորհիվ էլ դասալքությունն ահռելի չափերի էր հասել և դարձել գրեթե անգույն: Դասալքություն կոչված չարիքի դեմը չկարողացան առնել, իսկ կյանքը ցույց էր տալիս և ապացուցեց, որ իրավացի էին գեներալ **Ա. Գոլուխանյանի (Գոլուխանովի)** նման մարդիկ, որոնք իշխանութայն բոլոր օղակներին, այդ թվում և Ն Գ մարմիններին ու միլիցիային կոչ էին անում պայքարել Հայկական բանակը արատավորող և ջլատող այդ ուժի դեմ, կամ էլ փորձում էին ինչ-որ մի ավելի լավ ելք որոնել, չէին երկնչում խոչընդոտների ու դժվարությունների առաջ, առավել ևս չէին հուսահատվում կարծես թե ոչինչ չխոստացող Հայկական իրականությունից, և փորձում էին պայքարել այդ չարիքի դեմ: 1919 թ. փետրվարի 20-ին Նախարարների խորհրդի նիստում լավեց Զինվորական նախարարի զեկուցումը իսկական զինվորացուների (20-ից մինչև 25 տարեկան) և զինապարտների (26-ից մինչև 48 տարեկան) ընդհանուր թիվը ստուգելու և նրանց կանոնավոր զինվորակոչի ենթարկելու համար ցուցակագրական մարմին կազմակերպելու և այդ մարմին ծախսերի համար մոտ 100 հազար ռուբլու ավանս հատկացնելու մասին հարցը: Նախարարների խորհուրդը քննարկում է այդ հարցը, որոշում հետաձգել և քննութայն առնել Ն ԳՆ զինվորական առյանների վերաբերյալ ներկայացվելիք օրինագծի հետ միասին⁹⁵⁶:

⁹⁵³ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 280, ք. 90:

⁹⁵⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 330, ք. 38:

⁹⁵⁵ Նույն տեղում, ք. 35:

⁹⁵⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 28:

Դասալքությունը իսկական չարիք էր բանակի համար և ժանտախտի նման քայքայում էր այն, և դրանից վրդովված՝ ազնվաբարո զինվորականությունը փորձում էր այն արմատախիլ անել, անարգանքի սյունին դամելով այդ գործում միլիցիայի և ՆԳՆ մարմինների անբարո կեցվածքը, հաճախակի դրսևորվող հովանավորչության փաստերը: ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետին ուղղված իր 1919 թ. մարտի 4-ի գեկուցագրում (№ 1439) գեներալ-մայոր **Արսենի Սերգեյի Դոլուխանյան (Դոլուխանովը)** բառացի ընդգծում էր հետևյալը. «Գործուղման ժամանակ շրջագայելով Ղարաքիլիսա, Քոլազերան և Զալալ-Օղլի շրջանի գյուղերով, ես նկատեցի մեծ քանակությամբ դասալիք-զինվորներ, որոնք շրջում էին գյուղում: Դասալիք առողջ, ջահել տղային կարելի է տեսնել և գյուղի խանութում՝ մանր առևտրով զբաղվելիս: Ինձ մոտենում էին տեղի միլիցիայի հետ և խոսում, բոլորովին չամաչելով ու չվախենալով, որ իրենք հանցագործներ են, և իրենց կարող են ձերբակալել: Ողջ գյուղը, հազվադեպ բացառություններով, հազած է զինվորական հագուստ, հաճախ նույնիսկ ուսադիրներ: Ըստ երևույթին, տեղական վարչակազմը բոլորովին էլ չի պայքարում այդ չարիքի դեմ և մտադիր չէ ձերբակալել դասալիքներին ու պետական զգեստ գողացողներին՝ այն ժամանակ, երբ հայկական բանակի շարքերը նստրանում են օր-օրի և նա քայլում է համարյա տկլոր»⁹⁵⁷: Ի պատասխան Դոլուխանովի այս խիստ բնութագրականին, Ղարաքիլիսայի գավառային կոմիսար, պորուչիկ Անիևը 1919 թ. ապրիլի 16-ին Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին ուղղված պատասխան գեկուցագրում (№ 1403), կապված Դոլուխանովի գեկուցագրում պարունակված փաստերի հետ գյուղերում լի դասալիքների մասին, և այն մասին, որ նրանց տեղական վարչակազմը սոսկ մատների արանքով է նայում և ոչ մի միջոց չի ձեռնարկում արմատախիլ անելու այդ չարիքը, գտնում էր, որ վարչակազմի հասցեին Դոլուխանովի վերոնշյալ մեղադրանքները ուժեղացված են և մերկապարանոց: Ի պատասխան Անիևը փորձում էր արդարանալ՝ և իբր թե փորձում դասալքության իրական պատճառները մատնանշել, սակայն դա նրան, մեր կարծիքով, չի հաջողվում, քանզի հակափաստարկները շատ թույլ էին: Եվ այսպես, Անիևը գրում էր, որ գործասերի պետերի բոլոր պահանջները՝ բռնելու դասալիքներին, անմիջապես տեղական իշխանությունների կողմից կատարվել ու կատարվում են, ինչն, իհարկե, սուտ էր և իրականությունը բոլորովին չէր համապատասխանում, և այս առումով Դոլուխանովը լիովին իրավացի էր: Անիևը գրում էր նաև, որ դասալքությունն ունի ավելի խոր արմատներ և այդ չարիքը միայն ռեպրեսիաներով արմատախիլ անել հնարավոր չէ, ինչում նա մասամբ իրավացի էր, գտնելով՝ որ պեսզի զինվորը չփախչի, հարկավոր է նրա համար ստեղծել կյանքի ավելի

⁹⁵⁷ Նույն տեղում, թ. 85:

տանելի պայմաններ գորանոցներում և այլն⁹⁵⁸: Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարի տվյալներով, միայն 1919 թ. հունվարի 1-ից մինչև մայիսի 1-ը բռնված և զինվորական զորամասերի տրամադրությունը հանձնված դասալիքների թիվը Սուրմալուի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Երևանի, Ալեքսանդրապոլի և Դիլիջանի գավառներում կազմեց 5867 մարդ⁹⁵⁹, բավականին պատկառելի մի թիվ, որ Հայկական իրապես գոյություն ունեցող և գործող բանակի մարտունակ մասի գրեթե 1/4 մասն էր կազմում⁹⁶⁰: Դասալքություն դեմ, անշուշտ, ձեռնարկվում էին քայլեր, սակայն առանց էական արդյունքների: Ընդունվեցին ժամանակավոր և այլ օրենքներ, հետագայում էլ ընդունված «Զորքերի շարքերը գորակոչի մասին» օրենքի համաձայն գորակոչային տարիքը 25-ից բարձրացվեց մինչև 28-ի⁹⁶¹:

Բողոքում էին բոլոր գավառամասերից, դժգոհում էին դասալիքներից ու դասալիքների կողմից դրսևորվող անկարգությունների ու զանազան լստ-դժուրությունների դեմ: Ազետալի էր վիճակը Նոր Բայազետի գավառում, որտեղ միայն 1919 թ. մայիսի 1-ից մինչև հունիսի 15-ն ընկած ժամանակահատվածում միլիցիայի ու տեղամասային կոմիսարների ջանքերով ձերբակալվել էր 392 դասալիք⁹⁶²: Հենց այդ նկատի ունեն Հայաստանի Տարածքի կոմիսարը, երբ 1919 թ. մարտի 5-ին Նոր Բայազետի գավառային կոմիսարին ուղղված հեռագրում ընդգծում էր հետևյալը. «Ներքին Գործերի նախարարի և զինվորական իշխանությունների մոտ եղած տեղեկություններից երևում է, որ Ձեր գավառում դասալքությունը վիթխարի կերպով աճում է: Վարչակազմը այս հարցում անգործություն է մատնվել: Կրկին խստագույնս հանձնարարում եմ տեղամասային գյուղական հասարակական, միլիցիայի կոմիսարներին՝ ձեռնարկել բոլոր միջոցները դասալիքներին ձերբակալելու համար՝ հանձնելով զինվորական իշխանությունը: Զգուշացնում եմ՝ այս կարգադրությունը չկատարող պաշտոնակատար անձինք կենթարկվեն խիստ պատժի»⁹⁶³:

Այս խնդիրն այնքան խճճված ու ցավազին էր, որ այդ խնդրի լուծման համար հաճախ զինվորական և ՆԳ նախարարությունները համագործակցում էին իրար հետ, ինչի մասին ցայտուն վկայում է մշտական, չընդհատվող գրագրությունը այս երկու ուժային գերատեսչությունների միջև: ՆԳ նախարարին ուղղված 1919 թ. մարտի 10-ի գրությունում (N° 1544) Զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանը նշում է, որ ամեն օր ինքը

⁹⁵⁸ Նույն տեղում, ք. 86:

⁹⁵⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 88, ք. 135:

⁹⁶⁰ Տե՛ս Վ. Հ. Վիրաբյան, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, էջ 36:

⁹⁶¹ ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 280, ք. 27:

⁹⁶² Նույն տեղում, գ. 293, մաս II, ք. 473-486:

⁹⁶³ Նույն տեղում, գ. 83, ք. 48:

քաղաքացիներից խնդրագրեր է ստանում ընտանիքի միակ կերակրողին զինվորական ծառայությունից ազատելու մասին, որոնց համաձայն ՀՀ պառլամենտի զինվորական հանձնաժողովի որոշման պարտավոր են զորացրել ծառայությունից, ստուգելով հեղինակների խնդրագրերի ճշտությունը իսկույթով: Մյուս կողմից, ընդգծում էր ՀՀ Զինվորական նախարարը, դասալքությունը չի կրճատվում, քանզի դասալքներն ազատորեն ապրում են իրենց գյուղերում և քաղաքներում, և զորքերը համարում չունենալով, «հայհուց են», և ի վիճակի չեն կատարելու իրենց վրա դրված պարտականությունները: Զինվորական նախարարը ՆԳ նախարարին ուղղված դիմումագրում մեկ անգամ ևս համառորեն, վճռապես խնդրում էր ձեռնարկել շտապ և կատեգորիկ հրամաններ, գործողություններ՝ գավառային, տեղամասային, հասարակական և գյուղական կոմիսարներից պահանջելով հսկողություն սահմանել 20-ից 25 տարեկան տղամարդ բնակչության նկատմամբ, և անհապաղ բոլոր զինապարտներին քշել դեպի զորահավաքակայաններ՝ զորքերի շարքերը համարելու նպատակով, իրավացիորեն նկատելով, որ գյուղական և քաղաքային տեղամասային կոմիսարները չեն կարող չիմանալ իրենց համագյուղացիներին և համաքաղաքացիներին, ընդգծելով, որ դասալքների և զինվորացուների նկատմամբ թողտվությունը և թաքցնելը նշված կոմիսարների կողմից հանդիսանում է հանցագործություն, ուստի ինքը խնդրում է այդ մասին իրեն անհապաղ տեղեկացնել⁹⁶⁴:

1919 թ. հուլիսի 6-ին Նախարարների Խորհրդում լսվում է Զինվորական նախարար **Քրիստափոր Արարատյանի** զեկուցումը (N^o 00152^o), որում քննարկվում են ներքին քաղաքականության տեսանկյունից կարևոր մի շարք հարցեր, հենվելով ՆԳ նախարարից և զինվորական հրամանատարությունից ստացված հաղորդագրությունների վրա: Սույն զեկուցման մեջ առանձնահատուկ նշանակություն է տրվում Դիլիշան-Ղազախի շրջանում զինվորների դասալքության տարածմանը, որն ընդունել էր չափազանց մեծ չափեր, ընդ որում ընդունելով հասարակական կարգ ու կանոնին սպառնացող բնույթ: Զեկուցման մեջ ընդգծվում էր, որ դասալքները հավաքվելով զանազան խմբավորումների, ավելի ճիշտ ավազակախմբերի մեջ, նախապատրաստում և իրականացնում են հարձակումներ քոչվոր թաթարների վրա, իսկ տեղական վարչակարգի միջամտությունը դեմ էր առնում կազմակերպված զինված դիմադրություն: Զինվորական նախարարը զեկուցագրում նաև նշում էր, որ Նոր Բայազետի գավառում Զոդյան օպերացիայի իրականացման ընթացքում օրինականության ապահովման փորձի վրա հենվելով կարելի է ենթադրություն գալ, որ Դիլիշան-Ղազախի շրջանում անհրաժեշտ է զինվորական զրույթուն հայտարարել, Դիլիշանյան զորաջոկատի պետին իրավունք վերապահելով հիմնելու ռազմա-դաշտային դատարաններ: Ք.

⁹⁶⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 88, ք. 91:

Արարատյանի գեկուցման վրա հենվելով, Նախարարների խորհուրդը հունիսի 6-ին հանձնարարեց օրենք կազմել Դիլիջան-Ղազախի շրջանում գինավորական դրուժյուն հայտարարելու մասին, որը հաստատվեց 1919 թ. հունիսի 6-ի նիստում, համաձայն ՀՀ խորհրդարանի 1919 թ. հունիսի 5-ի ընդունած օրենքի: Դրանում ընդգծվում էր հետևյալը. ա) 1919 թ. հունիսի 6-ից Դիլիջան-Ղազախի շրջանում հայտարարել գինավորական դրուժյուն, և բ) վերապահել Դիլիջանի գորամասի պետին գինավորա-դաշտային դատարաններ հիմնելու իրավունքը⁹⁶⁵: Ավելին, ՆԳ նախարար Ս. Մանասյանը Դիլիջանից ՀՀ վարչապետին ուղղված 1919 թ. հուլիսի 8-ի հեռագրում նշում էր, որ դասալիքների հավաքն ավարտվել է, սակայն ընթացքում ձախողումներ են եղել, որոշ դասալիքներ փախել են, ինչը հարկադրել է ձեռքավալել դասալիքների 15 առաջնորդներին, խնդրելով թուլյատրել դրանց դատի տալ⁹⁶⁶:

1919 թ. հուլիսի 1-ին Նախարարների խորհուրդը օրենք ընդունեց բնակչության գրանցման, գինապարտների հաշվառման և գորակոչի ենթարկելու մասին⁹⁶⁷, որը նպատակաուղղված էր դառնալ լուրջ կռիվան դասալքություն դեմ ՀՀ կառավարության, տեղական վարչակազմի և գորահավաքային մարմինների ձեռքին: Դասալքությունը լուրջ խնդիր էր ողջ հանրապետության համար: Դասալիքների կենտրոնատեղի էր դարձել հանրապետության կարևորագույն քաղաքներից մեկը՝ Ալեքսանդրապոլը, և թվում էր, թե խնդիրները պարզապես անհաղթահարելի են: Այսպես, միայն 1919 թ. հունվարի 1-ից մինչև մարտի 23-ը բռնվել և Ալեքսանդրապոլի գավառային գինավորական պետի ու գանազան գորամասերի հրամանատարներին են հանձնվել 1358 դասալիք, սեպտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 10-ը՝ 198 դասալիք⁹⁶⁸, ապրիլի 4-ից մինչև 30-ը՝ 1067 հոգի, որոնցից 635-ը եղել են դասալիք գինավորներ, իսկ մնացած 432-ը՝ ծառայություն գծով չներկայացած գինապարտներ, ընդ որում դրամական տուգանքի են ենթարկվել 16-ը՝ 240 հազար ռ. գումարի չափով, որը բանձվել է դասալիքներից և գորակոչից խուսափողներից, իսկ տուգանվածների անունները հրապարակվել են առանձին թուղցիկներով՝ բնակչությանը ի գիտություն⁹⁶⁹: ՆԳ նախարարի օգնականը Ալեքսանդրապոլի գավառի գինավորական կոմիսարին ուղղված գրությունում կարևորում էր գորքերում չընդհատվող դասալքություն դեմ միջոցառումներ մշակելու անհրաժեշտությունը, արձանագրելով, որ տեղական վարչակազմը բավարարվում է միայն այդ խնդրի վերաբերյալ դատարկ գրադրություններ, առաջարկելով համատեղ ջանքերով ձեռնամուխ լինել միջոցառումների և գործողությունների ծրագիր մշակելուն՝ դասալիքներին բռնե-

⁹⁶⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 28, ք. 90-91, Ֆ.Պ - 201, ց. 2, գ. 609, ք. 3, 4, 5 և այլն :

⁹⁶⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 25, ք. 25:

⁹⁶⁷ Նույն տեղում, ք. 133:

⁹⁶⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 88, ք. 100, 260:

⁹⁶⁹ «Յառաջ», 11 մայիսի, 1920, № 96:

լու և գործառնաբ հասցնելու համար, հաճախակի կազմակերպելով և անց-կացնելով շուրջկալաներ⁹⁷⁰:

Սակայն անդրադառնալով դասալքության կանխարգելման ուղղու-թյամբ Ն Գ մարմինների, միլիցիայի և զինվորական իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերի պատմությանը, հարկ է առանձնահատուկ նշել, որ նույնիսկ այդ դժվարագույն օրերին Զինվորական և Ն Գ նախարար-ությունների վերին էջերուններում կային մարզիկ, որոնք ինչ-որ տեղ փոր-ձում էին հեռուն նայել, և սկզբունքորեն դեմ էին ամեն ցանկացած եղա-նակով դասալքության դեմ պայքարել, կիրառելով նաև անթույլատրելի, հա-կաօրինական մեթոդներ, ինչպես նաև չէին խրախուսում ինքնակամ ձեռ-նարկած գործողությունները, այլ ձգտում էին ելնել որոշակի օրինականու-թյունից, չվարկաբեկելով պետության գաղափարը: Այսպես, Զինվորական նախարար գեներալ-մայոր **Ք. Արարատյանը** 1919 թ. նոյեմբերի 21-ի հրամա-նագրում ընդգծում է իր կողմից բազմիցս նշված մի այնպիսի արատավոր երևույթի մասին, երբ մի շարք սպաներ, չունենալով ղեկավարության կողմից տրված թույլտվություն, իրենց գործառնաբը լրացնելու նպատակով ինքնակամ զբաղվել են դասալքների որսով, որով իսկական խառնաշփոթ են մտցրել դասալքության դեմ պայքարի խնդրում: Հենց դա էր պատճառը, որ Ք. Արարատյանը նշված վիճակը համարելով անթույլատրելի երևույթ, իր հրամանագրում կատեգորիկ կերպով արգելում էր հայկական բանակի սպաներին ինքնակամ ու միանձնյա, առանց տեղական իշխանությունների ներկայացուցիչների, և առանց իր ղեկավարության կողմից տրված հատուկ վկայականի, որ տվյալ անձինք գործողման էին մեկնում՝ դասալքներ բռնելու, այդ նպատակով գյուղերում հետախուզությամբ զբաղվելու հա-մար: Նախարարը զգուշացնում էր, որ հրամանագիրը խախտողները կեն-թարկվեն խիստ պատժի⁹⁷¹: Պայքարը դասալքության դեմ շարունակվեց: Ն Գ և Զինվորական նախարարությունների համատեղ ջանքերով 1919 թ. սեպ-տեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 5-ը՝ Երևանի գավառային զինվորական պետին ներկայացավ 1078 մարդ, որից 627-ը ընդգրկվեց գործող զորքի կազմում. նույն տվյալները սեպտեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 19-ը կազմում են համապատասխանաբար 1340 և 801 մարդ, իսկ մինչև հոկ-տեմբերի 28-ը՝ Երևանի գավառային զինկոմիտարին ներկայացավ 1524 մարդ, որից 923-ին ուղեկցեցին գործող բանակ⁹⁷²:

1919 թ. հոկտեմբերի 31-ին Նախարարների խորհրդի նիստում լավեց Ն Գ նախարարի հերթական զեկուցումը դասալքների դեմ կռվելու միջո-ցառումների մասին: Որոշվեց հանձնարարել Ն Գ և Զինվորական նախարար-ություններին՝ խնդրանքով դիմելու ՀՀ պառլամենտի զինվորական հանձ-

⁹⁷⁰ ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 85, ք. 23:

⁹⁷¹ Տե՛ս նույն տեղում, գ. 88, ք. 301:

⁹⁷² Նույն տեղում, գ. 75, ք. 97, 119, 122, 131:

նաժողովին, որպեսզի վերջինս կազմակերպի մի այլ Հանձնաժողով, որը պիտի ուսուսմանսիրեր գորքի դրուժյունը, նրա կարիքները և գործը բարելավելու միջոցները⁹⁷³: Հետաքրքրություն են ներկայացնում ՀՀ Զորահավաքի հարցով արտակարգ կոմիսար Վ. Վալադյանի ՆԳ նախարարին հասցեագրված 1919 թ. նոյեմբերի 9-ի գեկուցագրում պարունակվող տեղեկությունները գորահավաքի մասին. դրանում նշվում էր, որ նոյեմբերի 11-ից մինչև 18-ն իր կարգադրությամբ զինվորապլիետարան (գորահավաքակայան - Վ. Վ.) է ուղարկվել 231 մարդ, բոլորն էլ զինապարտ: Դրանցից 227-ը բերվել էր բռնի կերպով և միայն 4-ը հոժարակամ ներկայացել են գորահավաքի գծով կոմիսարին: Սակայն ՆԳ նախարարին ուղղված այս գեկուցագրում Վալադյանը նաև ընդգծում էր մի կարևոր մանրամասնի մասին ևս, ըստ որի իր հավաքած մարդկանց մի խոշոր մասը տեղ չի հասնում, այսինքն, դեռ գորահավաքը չմտած, շատերը փախչում էին զինվորապետարանից և հավաքման կայանից, որ առնվազն 40-50%-ը կարողացել են փախչել, ավելացնելով նաև, որ ինքը հնարավորություն չունի հսկելու զինվորապետարանի և հավաքման կայանի վարչությունների գործունեության վրա⁹⁷⁴: Ավելին, ինչպես ակնհայտ է դառնում էջմիածնի և Սուրմալուի գավառները գործողված պառլամենտական Հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության խորհրդարանին ներկայացված նյութերի վերլուծությունից (1919 թ. դեկտեմբերի 29), առանձնապես մեծ դժգոհություններ էին կուտակվել դասավորության պատճառով, որի մեջ, ըստ այդ Հանձնաժողովի տվյալների, գործնականում մեղավոր էր հենց գավառական իշխանությունը, որն ինքն էր իր գործողություններով նպաստում հայոց գործը քայքայող այդ չարաղետ ժանտախտի տարածմանը՝ այսպես կոչված «խեղճերին» հավաքելով, իսկ ուժեղներին ազատելով նույնիսկ «օրինական» միջոցներով: Նույն վիճակն էր իշխում Աշտարակում. պառլամենտական Հանձնաժողովը այդ կապակցությամբ բերում էր մի երիտասարդ ձիավորի օրինակը, որն ըստ անօգնական վիճակում հայտնված քաղաքի միլիցիայետի վկայություն, զինվորացու չէր, քանզի նա «ոմն Շահրյարցի Սուլեղն էր», որը ձեռքին ուներ Երևանի պարետից ձեռք բերած «վկայական», դա հնարավորություն էր տալիս ազատ ման գալ, և պարզապես խուսապել զինվորական պարտականությունների կատարումից⁹⁷⁵, որն այնքան էլ հազվադեպ երևույթ չէր այդ օրերին: 1920 թ. ՆԳ նախարարության ապրիլի 20-ի շրջաբերականում՝ ուղղված բոլոր գավառային կոմիսարներին, քաղաքային երկաթուղազծային պետերին, և մասնավորապես Կարսի նահանգապետին, կապված այն բանի հետ, որ որոշ վարչական ներկայացուցիչներ անհետևանք վերադարձնում են զինվորական մասերից ստացված գրությունները, դրանցում պահանջվում

⁹⁷³ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96ա, ք. 93, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 486, մաս II, ք. 375:

⁹⁷⁴ Նույն տեղում, գ. 77, ք. 160:

⁹⁷⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 607, ք. 14:

էր ձեռքբերել զորամասերից փախած զինվորներին, գտնել նրանց կողմից օտարված-վաճառված համազգեստները և զենքերը, ինչը դարձել է իսկական չարիք, կոչ էր արվում վերացնել նման երևույթները, ճշտորեն կատարել զորամասերից ստացված պահանջագրերը՝ ձեռքբերված դասալիքներին անհասպաղ հասցնել իրենց ծառայութան վայրերը, գտնելով և ազգաբնակչությանը զինվորական գույքը, զենքն ու զինամթերքը, հարկ եղած դեպքում նաև պատասխանատվության ենթարկելով զինվորացուների հարազատներին⁹⁷⁶։ Եվ չնայած ձեռնարկված միջոցառումներին, 1920 թ. կեսերին ևս դասալիքությունը մնում էր և մնաց որպես Առաջին Հանրապետության ցավոտ ու դժվարագույն խնդիրներից մեկը, և դա այն պարագայում, երբ ոչ քչերը հաճախակի նաև օգտվելով ՀՀ միլիցիայի, Ներքին Գործերի նախարարության բազմաթիվ ոչ պատասխանատու, անբարեխիղճ աստիճանավորների ու պաշտոնյաների հովանավորչությունից, երբեմն էլ ընկերակցությունից, խուսափում էին բանակում իրենց պարտականությունները կատարելուց։ Դա էր այն հիմնական պատճառներից մեկը, որ Հայաստանի Հանրապետությունում դասալիքության դեմ պայքարը 1918-1920 թթ. էական ու գործնական արդյունքներ չէին տալիս, իսկ թիվը պարզապես աճուկ էր մի փոքրիկ երկրի համար. այսպես, **1919 թ. դեկտեմբերի 22-ի վիճակով դասալիքների թիվն ամբողջ Հանրապետությունում կազմում էր 17665 մարդ** (այս բեռով էլ երկիրը թևակոխեց 1920 թվականը - Վ. Վ.), իսկ ըստ գավառների պատկերն հետևյալն էր 1919 թ. դեկտեմբերի 22-ի վիճակով⁹⁷⁷։

Աղյուսակ 3

Գավառները	Ինչ ժամանակամիջոցում	Դասալիքների թիվը
1. Երևանի գավառ	1 հունվարի-15 նոյեմբերի	3474
2. Էջմիածնի գավառ	1 հունվարի -15 նոյեմբերի	1265
3. Սուրմալուի գավառ	1 հունվարի - 15 դեկտեմբերի	729
4. Նոր Բայազետի գավառ	1 հունվարի - 1 դեկտեմբերի	2840
5. Դարալագյազի գավառ	1 հունվարի - 1 դեկտեմբերի	416
6. Ղարաքիլիսայի գավառ	1 հուլիսի - 15 նոյեմբերի	1399
7. Դիլիջանի գավառ	1 հունվարի - 15 նոյեմբերի	1208
8. Արեքսանդրապոլի գավառ	1 հունվարի - 1 դեկտեմբերի	4516
9. Կարսի գավառ	1 հունվարի - 15 նոյեմբերի	1729
10. Կողզվանի գավառ	1 հունվարի - 15 նոյեմբերի	24
11. Արդահանի գավառ	1 հունվարի - 15 նոյեմբերի	65
Ընդամենը	-	17665 մարդ

⁹⁷⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 26, թ. 150:

⁹⁷⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 29ա, թ. 348:

Սույն փաստաթուղթը գինակոչային պարտականությունների գծով Գլխավոր վարչություն պետի կողմից ներկայացվել է Նախարարների խորհրդի նախագահին (№ 4304 գրություն), և դա այն դեպքում, երբ Հայկական բանակի իրական մարտունակ մասի թիվը, որի մասին վերն արդեն ասել ենք, իրականում էջը գերազանցում 16-18 հազարի սահմանադիժը: Անշուշտ, այստեղից հավանալի է դառնում, որ վերը նշված գործոնները և երևույթները էապես նպաստել են դասալքություն ու այլ բացասական երևույթների տարածմանը Հայկական բանակի գործառնում՝ հանդիսանալով 1920 թ. թուրք-հայկական աղետաբեր պատերազմում Հայաստանի Հանրապետության գինված ուժերի պարտություն գլխավոր պատճառներից մեկը: Անդրադառնալով այդ հարցին, հայ հոգևոր գործիչ Գարեգին արք. Հովսեփյանը Հայաստանի Հանրապետության կրած ջախջախիչ պարտության գլխավոր պատճառը համարում էր Հայկական բանակի և ժողովրդի կռվելու կորովի, ոգու պակասը⁹⁷⁸, ինչի հետ լիովին համակարծիք է նաև Կ. Սասունին, ասելով, որ անհրաժեշտ կամքի և վճռականության պակասը նպաստել են հայկական զորքի կռվելու կորովի և մարտունակության անկմանը⁹⁷⁹: Վերջինս մի այլ կապակցություն ավելացնում է. «Հայաստանի Հանրապետության զորքը կը կազմակերպվեր ռուսական մեծ բանակի սիստեմով, ուր արևմտահայ գինվորական ուժերը տեղ չունեին իրենց սանձարձակ բնավորություն և գինվորական անկանոն անցեալին հետևանքով»⁹⁸⁰: ՀՀ Զինվորական նախարար **Ռ. Տեր-Մինասյանը** 1918-1920 թթ. Հայկական բանակի թուլություն գլխավոր պատճառներից մեկը համարում էր դասալքություն և անկարգապահություն ծնող գործոնները, ինչպես գործառնների մասնակցությունը Զանգիբասարի, Վեդիբասարի և այլ վայրերի՝ մահամեղական խռովարար բնակչությունից մաքրագործմանը նպատակաուղղված ռազմական գործողությունները, այնպես էլ Հայկական բանակում իրար կողքի երկու գինվորական համակարգերի՝ կանոնավոր բանակի կազմակերպման հին ռուսական և խմբապետական-ֆիզայական, անկանոն գործառնների կազմակերպական համակարգերի առկայությունը, դրանց հակադրվածության հանգամանքը, բուլշևիկյան-մոսկովյան գործոնը և այլն⁹⁸¹: Կարսի նահանգապետ **Ստ. Ղորղանյանը** իր մի գրություն մեջ՝ ուղղված ՆԳ նախարարին, ընդգծում էր, որ օրինակ, Սարիղամիշի և Կարսի գործառնում դասալքության խորացմանը մեծապես նպաստել է հայ զորքի մասնակցությունը իրենց

⁹⁷⁸ Տե՛ս **Գ. արք. Հովսեփյան**, Կարսի անկումը 1920 թ., Օրագրություն // «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1989, № 3, էջ 105-160:

⁹⁷⁹ Տե՛ս Կ. Սասունի, Հայ-թուրքական պատերազմը//«Հայրենիք» (Բոստոն), 1926, թիվ 11, Սեպտեմբեր, էջ 116:

⁹⁸⁰ Տե՛ս **Կ. Սասունի**, Մայիսյան խռովությունները և թաթարական ապստամբ շրջանները: Հայաստանը 1920-ին, Պէյրոս, տպ. «Համազգայինի», 1968, էջ 28:

⁹⁸¹ Տե՛ս **Ռուբեն**, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. 7 (Է), Գ. հրատ., էջ 326, 329-338:

Հպատակ 36 գյուղերի պլան-թավանին, որն ըստ նահանգապետի «այնքան ուկկամային էր, այնքան հմայիչ, որ այդ բոլոր դասալիքները փախչում էին դեպի Օլթի, գնում էին դեպի այն ավետյաց երկիրը, ուր մարդիկ հերոսաբար թավանում էին և հարստանում»⁹⁸², ինչն ամենևին հեռու չէ մերկապարանոց ճշմարտությունից, քանզի պատմություն փորձն այդպիսի օրինակներ քիչ չունի, և այն չի կարելի անտեսել կամ սվաղել: **Յ. Իրազեկը (Հ. Տեր-Հակոբյան), Յովհ. Սահակյանը և Վահե Արծրունին** դասալքություն ծնող պատճառների մեջ գլխավոր տեղ են հատկացնում բոլշևիկյան քարոզությունը, ասելով, թե մեծամասնականները կարողացան պղտորել և քայքայել Հայկական բանակը, հատկապես ազդելով Հայոց զորքի անվարժ և շտապով հավաքված զինվորական զանգվածի վրա, հնարավորություն տալով, որ փախուստի «ասպարեզ տեսած» դասալիքները հանգիստ լքեն ուղամաճակատը և ուղևորվեն դեպի Թիֆլիս կամ իրենց գյուղերը, կամ էլ Պարսկաստան, ինչը հաստատվում է նաև դեպի Անդրկովկաս և Հայաստան առաջնաղացող XI Կարմիր բանակի հրամանատարություն մի շարք հետախուզական և այլ բնույթի տեղեկագրերով⁹⁸³: Հենց այդ գործոններն էլ նպաստեցին դասալքության խորացմանը զորքերում, վերջին հաշվով հանգեցնելով Հայկական բանակի տկարացմանը: Այնուհանդերձ, դասալքության դեմ հետագա պայքար կար այդ տարիներին, սակայն ոչ ցանկալի արդյունքներով: Այս առումով հետաքրքիր է **Ա. Գյուլխանդանյանի** 1920 թ. ապրիլի 5-ի «Կառավարության լրաբերում» հայտարարությունը, որում վերջինս փորձում էր ըմբռնել ու բացահայտել դասալքության խնդիրը և գտնել դրա լուծման հնարավոր ուղիները, գործնական տարբերակները, իր հայտարարության մեջ ընդգծելով. «Չնայած մեր բացմիցս արած կարգադրություններին և ձեռք առած միջոցներին, դասալքությունը ոչ միայն չի պակասում, այլ բացմանում է և այդ ոճրագործությունների պարտավան որջերը դժբախտաբար գլխավորապես ներկա պահին մնում են Երևանը և Ալեքսանդրապոլը»: Ի նկատի ունենալով այս ամենը, ՆԳ նախարարը առկա օրենքի 1-ին հոդվածի համաձայն, որը հաստատված էր Նախարարների խորհրդի կողմից դեռևս 1919 թ. հուլիսի 1-ին, պահանջում էր, որ ՀՀ բոլոր արու քաղաքացիները՝ 16-ից մինչև 43 տարեկան, պետք է մշտապես իրենց մոտ ունենան իրենց շրջանի զինվորական ատյանից վերցված վկայականներ⁹⁸⁴: Այսքանով սակայն վերջինս չի բավարարվում, և հետագայում ևս անում է մի շարք այդպիսի հայտարարություններ, որոնք ինչ-որ տեղ հիշեցնում են հուսա-

⁹⁸² Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 636, ք. 20:

⁹⁸³ Տե՛ս **Յ. Իրազեկ**, Մօտիկ անցեալից, Պատմական Դէպքեր և ապրումներ, 1917-1922, էջ 66-68, 72, 80: **Յովհ. Մահակեան**, Երկու տարի Հայկական բանակին մէջ, էջ 130-131: **Վ. Արծրունի**, Հայ-ուսնկական պատերազմը, Հայ սպայաժողովը, Շատախ, էջ 10-11, 18-20, 30-34, 34-106, 122, 321 և այլն, «**Բանքեր Հայաստանի Արիսիմերի**», 1983, N° 2, էջ 88-89, 103 և այլն:

⁹⁸⁴ «**Կառավարության Լրաբեր**», 1920, 5 ապրիլի, երկուշաբթի, N° 9:

Հատ ճիգեր՝ փրկելու դրուժյունը և «Հաջողությամբ» լուծելու Հայկական բանակի զորահավաքային հիմնախնդիրները: 1920 թ. ապրիլի 17-ին ՆԳ նախարարը կրկին «Կառավարութեան լրաբերում» հանդես է գալիս կարևոր Հայտարարությամբ, որում նա ընդգծում էր, որ Հավառակ դասալիքների դեմ Կառավարական 1919 թ. հունիսի 5-ի օրենքի 1-ին կետի, մի քանի նախարարութայինների հիմնարկութայիններում ծառայում են գինակոչային Հասակի անձինք, 20-ից մինչև 32 տարեկան, որոնք ընդունվել են աշխատանքի առանց Համապատասխան գավառական զինվորական ատյաններից ստացված վկայականների, կամ թեպետև ունեն այդպիսիք, բայց դրանք տրված են այդ ատյաններից մինչև 1919 թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար, և այլևս ոչ մի նշանակութուն, այսինքն՝ իրավական ուժ չունեն, պահանջելով կարգ ու կանոն հաստատել այդ բնագավառում, ստուգել գործի նաև փաստաթղթային կողմը: Հայտարարութեան վերջնամասում ՆԳ նախարարը ընդգծում էր, որ խուսափելով բաժանմունքների պետերին պատասխանատվության ենթարկելուց, որոնք ծառայութեան են ընդունել մարզկանց, որոնք անհրաժեշտ փաստաթղթեր չունեն, այնուամենայնիվ ինքը հարկ է համարում նախարարութայինների լիազորված մարզկանց միջոցով անհապաղ խստորեն պահանջել ստուգելու բոլոր կասկածելի ծառայողների փաստաթղթերը, որոնք հնարավոր է՝ ենթակա են գորակոչի⁹⁸⁵: Կարծես թե որպես արձագանք, տեղերում որոշ տեղաշարժ նկատվեց, և ՆԳ-ն մարմինները, միլիցիան փորձեցին դասալքութեան խնդիրը լուծել, օգտվելով նաև տեղական վարչակազմի աջակցութունից: Այսպես, 1920 թ. ապրիլի 25-ի իր գեկուցագրում՝ ուղղված ՀՀ զորքերի հրամանատարին, 1-ին Առանձին Հայկական Հետևակային բրիգադի պետ գեներալ-մայոր Շելկովնիկյանը (Շելկովնիկովը) արդարացիորեն նշելով դասալիքների կողմից նկատվող պետական ունեցվածքի գողութեան ու վերավաճառքի մասին, միաժամանակ պահանջում էր անհապաղ անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկել տեղական վարչակազմի հետ միասին, ոչ միայն դասալիքներին բռնել, այլև բռնադրվել նրանց ողջ ունեցվածքը⁹⁸⁶: 1920 թ. ապրիլի մի այլ հետաքրքիր գրութեան մեջ, որի հեղինակը Դիլիջանի գավառային կոմիսարն է, և որի վրա կա մակագրութուն ռոտմիստր Զավրեևի անունով, խնդրվում է պարզել, թե գավառային կոմիսարը 1919 թ. հունվարի 1-ից մինչև 1920 թ. հունվարի 1-ը, և 1920 թ. հունվարի 1-ից մինչև նույն թվականի ապրիլի 1-ը ինչքան դասալիք է հասցրել զորահավաքակայանները. «Մեր գավառի ամենացաղոտ հարցերից մեկը դասալքութեան հարցն է, որոնք զբաղվում են գողությամբ և թալանով: Օր չի անցնում, որ տեղից 6-րդ գունդը չուղարկենք դասալիքներ և չստանալով նոր ցուցակ, Լևոն բեգը տեղ է հասցրել 65 դասալիք: Որպեսզի դասալքութեան դեմ կարելի լինի կռվել, պետք է Դիլի-

⁹⁸⁵ Նույն տեղում, 1920, 17 ապրիլի, N^o 10:

⁹⁸⁶ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 26, թ. 151:

Ջանի գավառի դասալիքներին ուժեղ պահակ[այ]ին հսկողության տակ քշել դեպի Սարիղամիշի կամ Իգդիրի գորամաքը, որտեղից դժվարությամբ կարող են փախչել: Համաձայն մեր որոշման սահմանապահ և մեր պահեստի միլիցիայից նշանակել Ղալաչայում՝ 15 մարդ, Ջողազում՝ 15 մարդ, Դովեղում՝ 5, Բաղանիսում՝ 15 և Կոթի գյուղում՝ 15 մարդ»⁹⁸⁷: Հետաքրքիր է նաև գավառային կոմիսար Շահինյանի հեռագիրը, որը Քեչիչքենդից ուղարկվել էր Հայաստանի վարչակազմի և միլիցիայի բաժնի դիրեկտորի հասցեով: Դրանում ոչ առանց հիմքի նշելով, որ գավառում անցկացվող մսի, վառելիքի, անասնակերի բռնի հավաքները հանգեցրել են զինված բախումների, որի հետևանքով եղել են նաև սպանություններ, այդ թվում նաև գավառային կոմիսարների, գրության հեղինակը եզրակացնում էր, որ զինված ուժի կիրառումով հարցի լուծումը անօգուտ է, առաջարկելով այլ լուծում գտնել, նշելով, զինվորները բացահայտ լքում են դիրքերը, դասալքությունը հսկայական չափերի է, չարամիտ տարրերը պղտորում են ժողովրդին, անպատիժ քարոզչություն անելով, որի հետևանքով անարխիան օրեցօր աճում է⁹⁸⁸: Ակնհայտ է, թե ինչ դժվարությունների առաջ էին կանգնում տեղական իշխանավորները և միլիցիան՝ գործելով սովի ու տնտեսական քայքայվածություն պայմաններում: 1920 թ. այդ օրերին իրավիճակն ավելի դյուրին չէր նաև Շիրակի նահանգում, ինչի մասին տեղեկանում ենք Շիրակի նահանգապետի գրադրությունից նահանգի ներքաղաքական իրավիճակի, դասալքության լուծման հարցի մասին: Դեռ 1920 թ. մայիսի 21-ին Շիրակի նահանգապետ Կ. Սասունին ՆԳ նախարարություն ուղարկված գրության մեջ հատուկ նշում է, որ դասալքության, այդ թվում նաև խռովարարների, թալանչիների, զանազան անպատասխանատու խմբերի դեմ կովելու նպատակով ինքը ձեռնամուխ է եղել ռեգեմի միլիցիայի կազմակերպմանը՝ նահանգում իրական կարգ ու կանոն հաստատելու համար⁹⁸⁹, ինչն առաջնային էր նաև դասալքությունն արմատախիլ անելու տեսանկյունից: 1920 թ. սեպտեմբերի 30-ին ՆԳ նախարար **Ք. Արարատյանին** և ռազմական նախարար **Ռ. Տեր-Մինասյանին** ուղղված հեռագրում (N^o 3405) **Կ. Սասունին** նշում էր, որ անհրաժեշտ կարգ պաշտպանելու համար մոտ 100 հոգի մեկ ամիս առաջ պաշտոնից ազատ են արձակվել անհամապատասխան լինելու պատճառով, որ վերջին 3 օրվա ընթացքում հավաքել են մոտ 2000 դասալիք, ընդգծելով, որ ինքը հույս ունի մոտ օրերում ևս 2000 հոգի հավաքել, և նահանգային միլիցիայից 60 հոգի պահվում են Աղբաբայի շրջանում՝ դասալիքներ հավաքելու նպատակով, միաժամանակ առաջարկելով գավառային միլիցիոներների թիվը հասցնել 400 մարդու՝ ազգաբնակչության ներքին խաղաղություն-

⁹⁸⁷ Նույն տեղում, գ. 26, ք. 43:

⁹⁸⁸ Նույն տեղում, ք. 71:

⁹⁸⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 2, գ. 631, ք. 1 -2;

նը ապահովելու և առաջադրված խնդիրները լուծելու համար⁹⁹⁰: Չնայած կիրառված խստուկություններին, **Կ. Մասուկնին**, կարծում ենք, նպատակին չկարողացավ հասնել, թեկուզև Կարսի անկման նախօրյակին կարծես թե շատ խիստ մի հրաման արձակեց. «Կարգադրում եմ բոլոր գյուղական կոմիտեաներին չորս օրվա ընթացքում գրավոր և իրենց ստորագրուկությամբ կազմել գյուղի բոլոր դասալիքների ցուցակը՝ յիշատակելով, թե [որմէ ու՞ր - որտե՞ղ] են գտնվում և ներկայացնել ինձ անձամբ: Այն բոլոր կոմիտեաները, որոնք չեն կատարի իմ այս կարգադրուկությունը կամ կտան անճիշտ տեղեկություններ, կենթարկվեն, համաձայն Հայաստանի օրենքների, ամենախիստ պատժի՝ մինչև մահվան պատիժը»⁹⁹¹:

1920 թ. հոկտեմբերի 2-ին Նախարարների խորհուրդը լսեց ՆԳ նախարարի առաջարկները դասալքուկության դեմ կռվելու միջոցների մասին, որոնք հաստատվեցին, լսելով նաև Զինվորական նախարարի ձևական առումով խստաշունչ, բայց ժամանակավրեպ գեկուցումը դասալիքների համար կախաղանով մահապատիժ գործադրելու մասին ընդունված որոշման մեջ արտոնվեց դասալիքների մահապատիժը գործադրել կախաղանով, որը կարող էր լինել հրապարակային⁹⁹²: Սակայն ապարդյուն. ՀՀ գործքերի հրամանատար գեներալ **Թ. Նազարբեկյանի** կողմից 1920 թ. նոյեմբերի 28-ին ՀՀ վարչապետին ուղղված հեռագրից տեղեկանում ենք, որ իջևանում «1-ին, 2-րդ և 6-րդ ռազմա-միլիցիոն վաշտերը թողել են դիրքերը և գնացել են տները», իսկ 3-րդ և 5-րդ վաշտերը անհայտ ուղղուկությամբ են գնացել, իսկ Բողանիս գյուղում դասալիքները փորձել են բանտից ազատել իրենց դասալիք ընկերներին, փորձելով նույնիսկ ձերբակալել իրենց խոչընդոտող պորուչիկ Սախումյանին⁹⁹³: Եվ այդպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել: Եվ այդ ամենը Հայաստանի և Հայ ժողովրդի համար ճակատագրական օրերին: Կարծում ենք՝ ուշացած ռեակցիա էր, քանզի հոկտեմբերի 30-ին Կարսն անփառունակ ընկավ, և դրանում քիչ դեր չի խաղացել դասալքուկությունը, ՆԳ մարմինների, միլիցիայի անձարակուկությունը, փախչելու-փրկվելու հոգեբանուկությունը, ամենագոր վախը և սարսափը թուրքի հանդեպ, պաշտոնյաների և զինվորական գործիչների շահամուկությունը և մորթապաշտուկությունը, բուշևիկյան գործոնի բարոյահոգեբանական լիցքը և այլն: Անտեղի չէ նշել ևս մեկ հանգամանքի մասին. մեր կարծիքով, հայկական բանակի շատ բարձրատիճան սպաների մոտ գրեթե բացակայում էր ինքնախիրուկությունը, ինքնուրուկությունը կամ ավելի ճիշտ՝ ինքնավստահ կեցվածքը: Ինչպես արտաքին-քաղաքական խնդիրներում, այնպես էլ այս խնդրում շատ դեպքերում հայ սպաների և ըստ այդմ էլ հայ զինվորականուկության և զինվորների վճռա-

⁹⁹⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 49, ք. 43, 79:

⁹⁹¹ Նույն տեղում, ք. 82:

⁹⁹² Նույն տեղում, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 107, մաս III, ք. 54:

⁹⁹³ Տե՛ս «**Քանքեր Երևանի Համալսարանի**», 1967, N° 2, էջ 20-21:

կանուլթյունը կախվածութեան մեջ էր գտնվում այն հանգամանքից, թե իր կողքին կամ իր թիկունքում կա արդյո՞ք քաջարի բրիտանական կամ ֆրանսիական սպա թե՞ ոչ, որոնք որպես մեծ տերուլթյունների ներկայացուցիչներ իրենց շատ վստահ էին զգում՝ աջ ու ձախ հրամաններ արձակելով: Հերիք էր, վերջին բրիտանական կամ ֆրանսիական սպան լքեր հայկական հողը (իսկ դա 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակին արդեն փաստ էր, կամ լավագույն դեպքում իրողութիւնն էր), որպեսզի խուճապային տրամադրուլթյունները համակերին հայ զորքին և նախկինում անհամեմատ ավելի ինքնավստահ և վճռական եղած հայ զորքին, հայ սպային և զինվորականին համակերին խուճապն ու վախը, և ըստ այդմ դասալքութեան անգուսպ և քայքայիչ երևուլթիւնները գերերին հայկական բանակին, անճար դարձնելին թուրք ավագակաբար զորքի առաջ, ինչին որպես արդյունք հետեւեցին իրար հաջորդող պարտուլթյունները ռազմաճակատում: Կարելի է ասել, որ հենց թուրք-հայկական պատերազմի այդ ճակատաբարական օրերին, երբ հայ զորքը խուճապահար փախչում էր, դասալքութիւնը (այս թեմային հարկավոր է դեռ առանձին և, մանրագնին և հնարավորինս անաչառ անդրադառնալ) անհաղթահարելի խնդիր դարձավ, չնայած ՆԳ և զինվորական իշխանութիւնների կողմից գործադրված ջանքերին. արդյունք չտվեցին նաև Հատուկ ջոկատի (չնայած վերջինս էլ առանձնապես չէր փայլում մաքրակենցաղութեամբ, նրա գործունեութեան մեջ տեղ էին գտել կաշառակերութեան, անհետեղականութեան և այլ բացասական փաստեր), ՀՀ Դաշնակցութեան Կենտրոնական կոմիտեի տեղական մարմնի գործողութիւնները թիֆլիսում և Վրաստանում կազմակերպելու հայ սպայութեան, և մասնավորապես դասալքների գորահավաքը, հակված չլինելով բունութիւն գործադրել այդ խնդրում, ինչի հետեւանքով վրացական իշխանութիւնների թողտուլթյան, փոխադարձ կաշառատու գործարքների պայմաններում գորակոչի ենթակա հայ սպաները նախընտրում էին կամ դառնալ վրացահպատակներ, ինչը ձեռնտու էր Վրաստանին, և որն արտաքուստ վկայում էր այդ խնդրում Հայաստանի իշխանութիւնների հետ համագործակցութեան պատրաստակամութեան մասին, ինչը տուրք էր ձեւին, և պարսկահպատակներ, որոշ դեպքերում էլ՝ փախչել Կախեթի և Բաթում, ինչը ցայտուն երևում է գեներալներ Մ. Սիլիկյանի և Հ. Քիչմիշյանի 1920 թ. նոյեմբեր ամսվա մի շարք գեկուցագրերից՝ ուղղված ՀՀ Զինվորական նախարարին⁹⁹⁴: Ավելին, գտնվեցին ոչ հիմնավոր, կեղծ պատճառաբանութիւններ, որոնք խոչընդոտեցին Վրաստանում հայ զինապարտների շրջանում ՀՀ չափազանց կարևոր գորակոչային խնդիրների իրագործմանը, ինչը բացասական քաղաքական, ռազմական և հոգեբանական ազդեցութիւն թողեց թուրք նվաճողի հետ անհավասար գոտեմարտում գտնվող Հայաստանի Հանրապետութեան

⁹⁹⁴ ՀԱՍ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 154, ք. 250, 259, 270, 286:

վրա. այսպես, գեներալ-մայոր **Հ. Քիչմիշյանի** ՀՀ ռազմական նախարարին հասցեագրված 1920 թ. նոյեմբերի 3-ի գեկուցազրից ակնհայտ է դառնում հայ սպաներին և զինվորներին բռնի կարգով Հայաստան տեղափոխելու մի նուրբ հանգամանք. գեկուցազրում նշվում է, որ այդ կապակցությամբ Թիֆլիսում ՀՀ ղեկնաազիտական հավատարմատարի մոտ խորհրդակցություն է հրավիրել, որին ներկա են եղել **Ստ. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը, Կ. Գազազյանը**, Ազգային խորհրդի անդամներ **Ա. Թոփչյանը, Միանսարյանը** և ուրիշներ. խորհրդակցությունը ամենավճռական կերպով բողոքում է հայ զինվորներին բռնի կերպով Հայաստան տեղափոխելու կապակցությամբ, կեղծ և ոչ լիովին պատճառաբանված հիմնավորում մեջտեղ բերում, թե իբր այդ միջոցառումը առաջ կբերի հայ աշխատունակ բնակչության բռնի վերաբնակեցում Թիֆլիսից և ողջ Վրաստանից, որն էլ իբր թե ցանկալի է, որ ավելի դեմոկրատական քայլ կլինի քրջերում գտնվող զինվորներին հագուստով և դրամով ապահովել, ավելին, կայուն երաշխիքներ տալ այն բանում, որ պատերազմի ավարտից հետո նրանք ազատվեն պարտադիր զինվորական ծառայությունից, որ հետո նրանք նորից իրավունք կունենան վերադառնալու Թիֆլիս, իսկ նրանց ընտանիքներին ապահովել վրացական իշխանությունների կողմից կիրառվելիք հնարավոր բռնարարքներից: Ասվածից կարելի է եզրակացության գալ այն մասին, որ անգամ Հայաստանի համար այդ դժվար օրերին, երբ անհրաժեշտ էր բռնուցքվել և թշնամուն վճռական հակահարված տալ, Թիֆլիսյան «քաղաքագետները», բառիս բուն իմաստով վատ որակի դեմոկրատիա էին խաղում, ինչը կեղծ ազգասիրություն էր, չէր բխում ՀՀ ռազմաքաղաքական հետաքրքրություններից, ավելին, մեծապես նպաստում էր սպառնացող վտանգի ահագնացմանը, խրախուսում դասալքությունը: Չնայած Վրաստանի իշխանությունները ձևականորեն տվել էին իրենց համաձայնությունը՝ Հատուկ ջոկատի ջանքերով բռնի միջոցներով իրականացնել հայ զինվորների և սպաների տեղափոխումը «եղբայրական» Հայաստան⁹⁹⁵, ինչն էլ վերջին հաշվով նպաստեց ՀՀ ռազմաքաղաքական պարտությունը 1920 թ. Թուրք-հայկական պատերազմում:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.) Հայկական բանակի շարքերում տեղ գտած զանգվածային, համատարած բնույթ կրող, ՀՀ ռազմուժը ներսից քայքայող դասալքության հիմնախնդրին, դրա հաղթահարման գործընթացներում պետություն ու կառավարություն, և մասնավորապես այդ խնդրի հանգուցալուծման առումով հայկական միլիցիայի ու առահասարակ ՆԳ նախարարությունից գործադրած ջանքերին և մարտավարությունը, և ըստ այդմ հանրագումարի բերելով արխիվային բազմաբնույթ փաստաթղթերը, այդ մասին ուղղակի և անուղղակի

⁹⁹⁵ Նույն տեղում, թ. 259:

արժեքավոր վկայակոչումներ պարունակող հուշագրությունը, մասնավորապես ականատեսներ և այդ ժամանակաշրջանի պետաքաղաքական, ռազմական, կրոնական և հասարակական գործիչներ հանդիսացող **Ս. Վրացյանի, Թ. Տեր-Մինասյանի, Կ. Սասունու, Ա. Խատիսյանի, Հովհ. Քաջազնունու, Գ. արք. Հովսեփյանի, Յովհ. Սահակյանի, Յ. Իրազեկի** և այլոց թողած արժեքավոր հուշերն ու տարաբնույթ աշխատանքները, խնդրո առարկայի վերաբերյալ կարելի է գալ մի շարք կարևոր եզրահանգումների. 1) Դասալքության առաջացման ու նրա տարածման գլխավոր գործոններից ամենակարևորները պետք է փնտրել հայտնի տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության ծանրագույն սոցիալ-տնտեսական կացությունում, որը նաև հետևանք էր ՀՀ աշխարհաքաղաքական մեկուսացված վիճակի: Արդյունքում էլ, 1919 թ. վիճակով 961 հազարից⁹⁹⁶ քիչ ավելի բնակչություն ունեցող Հայաստանը 1918-1919 թթ. անցման ժամանակահատվածում, չկարողանալով լուծել սովի հետևանքով առաջացած հիմնախնդիրները՝ սովեց 180 հազարից ավելի մարդկային կորուստ, չհաղթահարելով բազմաբնույթ տարափոխիկ հիվանդություններով հագեցած իրավիճակի բարդությունները, ինչին գոհ գնաց ինքը՝ **Ա. Մանուկյանը**, ՀՀ փաստացի «դիկտատորը», իսկ դա չէր կարող չազդել հայկական պետականության տկարացման և Հայկական բանակի մարտունակության վրա և առաջ չբերեր զանգվածային դասալքության երևույթներ, 2) դասալքություն և այլևայլ բացասական երևույթներ առաջ բերած պատճառների մեջ ամենևին էլ երկրորդական դեր չի խաղացել նաև պետաքաղաքական ու ռազմական գործիչների, միլիցիայի, ՆԳ և Զինվորական նախարարությունների չինովնիկների ու աստիճանավորների զգալի մասի ապիկարությունը, շահամոլությունը, ստորաքարշությունը, ստրկամտությունը, կաշառվածությունը, և անշուշտ՝ կաղրային մեծ անփորձությունն ու դրանց զգալի պակասը, 3) Հայաստանի կարևորագույն քաղաքներում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և գավառային ծայրամասերում իշխանության քաղաքացիական և զինվորական մարմինների ու բաժինների միմյանց հետ աններդաշնակ, երբեմն էլ հավակնոտ, թշանամականի հասնող փոխհարաբերությունները նպաստեցին կարգապահության անկմանը բանակային գործառնությունում և նպաստեցին դասալքության տարածմանը, 4) Հայկական բանակում դասալքության և այլ ոչ պատիվ բերող բացասական երևույթներին էապես նպաստեց հայկական կանոնավոր բանակի գործառնությունը ՀՀ տարածքի որոշ հատվածները մահմեդական զանգվածներից մաքրման Զանգիբասարի, Վեդիբասարի, Զոդ-Բասար-գեչարի և այլ գործողություններին, որին միանգամայն արդարացիորեն դեմ էին որոշ ռազմաքաղաքական գործիչներ, և հատկապես Դրոն, քանզի մասնակցելով այդ բնույթի ռազմական գործողություններին, հայ զինվորները

⁹⁹⁶ Տե՛ս **Հայկական Հարց, Հանրագիտարան**, Եր., «Հայկ. հանր. գլխ. խմբ.», 1996, էջ 212:

և Հրամանատարական կազմի մի մասը մասնակցեցին մասնագրքային գյուղերի կողմնակցության, թափանցիկ և հարստահարություններին, ինչից հայկական բանակային գործառնները էպակս անբարոյականացան, կազմալուծվեցին և դարձան շահամոլ, որն էլ վերջին հաշվով միանգամայն «խրախուսեց» դասալքություն արմատավորմանը, 5) Դասալքությունը նպաստող պատճառների և գործոնների մեջ պետք է տեսնել նաև 1920 թ. բոլշևիկյան մայիսյան ձախողված խռովությունը և ծավալած քարոզչությունը, որոնք որոշակի խթանիչ դեր կատարեցին, անշուշտ, այդ ամենին գուզընթաց՝ մոսկովյան բոլշևիկների ու Կարմիր բանակի ՀՀ սահմաններին մոտենալուն գուզահեռ քայքայման գործընթացները բանակում խորացան, դասալքությունը ծաղկեց և իր վատթարագույն դրսևորումները ունեցավ 1920 թ. թուրք-հայկական աղետալի պատերազմում, 6) Դասալքություն առաջ բերած երևույթների ու պատճառների մեջ նշելով բոլշևիկյան գործոնի մասին, հարկ է նաև ավելացնել, որ գյուղություն ուներ արդեն զգալի չափով արմատավորված համոզմունք, որ հայ գործը չի կռվի բոլշևիկյան, սակայն ըստ էություն գրեթե անխնայ ռուսական Կարմիր գործերի դեմ, որը պատմաքաղաքական խոր հիմքեր և պատճառաբանվածություն ուներ, և ըստ այդմ որոշակի շերտերով ամրագրվել էր հասարակական գիտակցություն մեջ, որից էլ հմտորեն օգտվեց Բ. Կարաբեքիրը 1920 թ. թուրք-հայկական պատերազմում՝ իր գիտություններին գրեթե անխնայ Կարմիր բանակի կոմունարկաներով, ակնկալելով, որ հայ գիտությունը չի կրակի նրանց վրա, ինչպես և տեղի ունեցավ, ինչն էլ մտնում է պատերազմի չգրված օրենքների մեջ, 7) Բանակում տեղ գտած բացասական երևույթների ընդերքային լուրը պատճառների շարքում պետք է տեսնել նաև կանոնավոր բանակի և ոչ կանոնավոր ուժերի՝ կամավորական ու մաուզերիստական խմբերի միջև առկա խոր հակադրվածություն, և Հրամանատարության բացահայտ անկարողունակություն՝ պետություն մեջ պետություն դառալու ձգտում ունեցող ուժերի տրամադրվածությունները հաղթահարելու մեջ, 8) Կանոնավոր բանակի և խմբապետական-հայդուկային համակարգերի անհամատեղելիությունը և ս կարևոր ազդակ հանդիսացավ դասալքություն և բանակը քայքայող նմանակարգ բացասական երևույթների արմատավորման համար: Զինվորական գործի կազմակերպման առումով իրար կողքի երկու հակադիր համակարգերի գործունեություն պայմաններում զանազան խմբերը գործելով ՀՀ բանակին կից՝ չկարողացան և անգամ կամեցողություն չդրսևորեցին տարալուծվել բանակային կառույցների մեջ՝ կուլ գնալով ինքնազուլու գործելու անկազմակերպ բնագրներին, 9) Ինչպես այդ մասին կարելի է դատել ժամանակակիցների հուշերից ու զանազան աշխատություններից, դասալքությունը և հայկական բանակի տկարացմանը նպաստող կարևոր պատճառներից պետք է համարել Հայոց գործի և ժողովրդի շարքերում կռվելու կորույթ, ոգու, անհրաժեշտ կամքի և վճռականության պակասը, հոգեբանական պարտվողական

ընդհանուր տրամադրվածությունը, ստրկամիտ ոգին, կամ ինչպես նկատել է ազգային գործիչ **Ե. Իշխանյանը**՝ ակնածանքը տաճկական-թուրքական ուժի նկատմամբ և ինքնվստահություն բացակայությունը⁹⁹⁷: Շատ բնութագրական են Հովհ. Քաջագնունու խոսքերը. «Պատերազմը վերջացավ մեր կատարյալ պարտությունով: Մեր բանակը, որ կուշտ էր, լաւ գինւած ու լաւ հագնւած, չկուեց. զօրքերը շարունակ նահանջում էին կամ դիրքերը լքում, գենքերը թափում ու ցրում՝ գիւղերը:

Բանակը բարոյալքւած էր ներքին կռիւների շրջանում, անմիտ աւերումների ու անպատիժ թալանների շնորհիւ: Բարոյալքւած էր ու յոգնած: Խմբային ու խմբապետական սիստեմը, որ մասնաւորապէս խրախուսուել էր Բիւրօ-կառաւարութեան կողմից, քանդուել էր գինւորական կազմի ամբողջութիւնը, միութիւնը: Բանակի դաստիարակութիւնը, ռազմական ոգին, կուռ կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը - ուրեմն եւ ընդդիմադրական ոյժը - թուլացած էին ծայր աստիճանի ու դա անակնկալ էր կառավարութեան համար. կառավարութիւնը եւ ինքը գինւորական միեւնոսորը՝ չէին ճանաչում բանակը»⁹⁹⁸:

Դասալքությունը դժվարին ու խրթին խնդիր էր, և երբեմն դատելով փաստերից, տպավորություն է առաջանում, որ Առաջին Հանրապետությունը և նրա ղեկավարներին այդպես էլ չհաջողվեց արմատապես լուծել այդ խնդիրը, ինչքան էլ որ Ն Գ և Զինվորական նախարարությունները ջանքեր չգործադրեցին, որը կարևոր նշանակություն ուներ երկրի անվտանգություն համակարգում Հայկական բանակի դիրքերի ամրակայման և պաշտպանական խնդիրներում նրա դերի բարձրացման տեսանկյունից:

⁹⁹⁷ Տե՛ս **Ե. Իշխանեան**, Լեոնայիմ Ղարաբաղ (1917- 1920), Եր., «Հայաստան», 1999, էջ 700-701:

⁹⁹⁸ **Յովհ. Քաջագնունի**, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, Վիեննա, «Մխիթարեան» տպ., 1923, էջ 43:

**2. Ն Գ Ն, միլիցիայի գործունեությունը երկրում
օրինականության հաստատման, ներքին անվտանգության
հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:
Պայքար անկանոն գործառնների և խմբերի դեմ**

Առաջին Հանրապետության տարիներին ՀՀ կառավարությունն ու պետությունը որոշակի ջանքեր են գործադրել սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակից բխող և այլ գործոններով պայմանավորված, զինված խմբերի կողմից կատարվող հանցագործությունների դեմն առնելու, հաղթահարելու համար, որոնք կարևոր էին նաև բանակում կարգ ու կանոն հաստատելու, զինվորների բարոյական կերպարն անաղարտ պահելու, բանակաշինական ու պետական անվտանգության համակարգի ձևավորմանը նպատակաուղղված գործընթացների իրականացման ապահովման տեսանկյունից. 1918 թ. օգոստոսի 12-ին, ՀՀ Նախարարների խորհուրդն իր նիստում լսում է Ն Գ նախարարի առաջարկության մասին՝ զինվորական գործառնների կողմից խաղաղ բնակչության, նրանց ունեցվածքի նկատմամբ գործադրված ապօրինությունների և քայքայիչ քայլերի դեմ պայքարելու միջոցառումների մասին⁹⁹⁹: Ն Գ նախարարությունը որոշակի ջանքեր էր գործադրում կարգ ու կանոնի, հասարակական անվտանգության տարրական նորմերի հաստատման ուղղությամբ, պետական, պաշտոնական և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարում, որին, որոշ վերապահումներով, աջակցում էին նաև քաղաքական կազմակերպությունները և կուսակցությունները: Մեծ չարիք էին այսպես կոչված «մատղեղիատական խմբերը» իրենց գործողություններով, որոնց սանձարձակություններն այնքան էին վրդովեցուցիչ, որ կառավարական մակարդակով հաճախակի, տարբեր առիթներով անդադարում էին այդ հիմնախնդիրն և փորձում արդյունավետ լուծումներ գտնել, որը ոչ միշտ էր հաջողվում¹⁰⁰⁰: Այս առումով շատ հատկանշական է Ն Գ նախարարի 1918 թ. սեպտեմբերի 24-ի շրջաբերական հրահանգը՝ ուղղված բոլոր գավառական և գավառամասային կոմիտեներին. «Ամեն օր տեղեկություններ եմ ստանում սպանությունների, կողոպուտների, գողությունների մասին, այն էլ մեծ մասամբ Երևան - Էջմիածին - Աշտարակ - Աբարան, Երևան - Ախտա - Եյենովկա - Դիլիջան - Քարվանսարայ գլխավոր խճուղիների վրա: Այժմ, երբ միլիցիայի կազմը բոլոր գավառներում ուժեղացված է և միլիցիոներների վարձատրությունն չափը ավելացված՝ գավառ

⁹⁹⁹ ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 484, ք. 8:

¹⁰⁰⁰ Տե՛ս նաև **R. G. Hovannisian**, *The republic of Armenia*, vol. III, Berkeley, Los Angeles, London, Un. of California, 1996, p. 5-10:

ուային և գավառամասային կոմիսարների վրա պարտք է ծանրանում ամենախիստ կերպով հետևել, որպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում վերջ տրվի բոլոր տեսակի անկարգություններին, հանցագործություններին և անդորրություն հաստատվի երկրի մեջ: Այնուհետև գավառային իշխանությունների կազմակերպությունը, եթե ժամանակին միջոցներ ձեռք չառնեն ճշելու հասարակությունը վնասող տարրերը և խափանելու ապագա դեպքերը, կենթարկվեն պատասխանատվության՝ իբրև օրինականացների»¹⁰⁰¹:

Դատելով արևիվային բազմաբնույթ նյութերի վերլուծությունից, հանրապետության համար այդ զանազան զինված «խմբերը» իրոք պարզապես չարիք էին, որից բողոքում էին անգամ դատախազություն և ՆԳ նախարարություն աշխատակիցները: Երևանի օկրուգային դատարանի դատախազը 1918 թ. դեկտեմբերի 13-ին դիմելով Արդարադատության նախարարին պաշտոնական դիմումագրով, նշում էր, որ իրենք բազմաթիվ բողոքագրեր են ստանում զանազան դրուժինաների պետերի (խմբապետների) և դրուժինաների հասցեով, վերջիններիս մեղադրելով իբր թե ջոկատների կարիքների համար կատարված, սակայն միանգամայն ինքնազուլու և ավազակային բռնագրավումների մեջ, քաղաքացիներից խլելով ձեռքերը, անասնակերը, ուտելիքը և այլն, ինչպես նաև ձեռնարկելով այլ անպատասխանատու գործողություններ, որոնք իբր թե կապված էին գործառնների իրավունքների հետ: Ելնելով դրանից, Արդարադատության նախարարը դեկտեմբերի 24-ին դիմում է ՆԳ նախարարությունը խնդրանքով՝ հաղորդել, թե ինքն ունի՞ արդյոք իր տրամադրության տակ հաղորդագրության մեջ նշված գործառնների, խմբապետների և նրանց զինվորների մասին տվյալներ, եթե՞ այո, ապա ինքը խնդրում է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի կանխարգելվի նրանց կողմից որևիցե անօրինական գործողություն և նրանց նկատմամբ հարուցվի քրեական գործ¹⁰⁰²:

Ակնհայտ է դառնում, որ այսպես կոչված «խմբերն» այդ ժամանակ պարզապես չարիք էին պետություն և հասարակայնություն համար, իսկ պայքար դրանց դեմ տարվում էր այնքանով, ինչքանով որ դա հաջողվում էր: Կուսակցությունները ևս շատ զգուշավոր ձևերով բողոքում էին ստեղծված իրավիճակից: Այդ մասին շեշտում է Հայ ժողովրդական կուսակցության պառլամենտական խմբակցության ներկայացուցիչ **Երվ. Հարությունյանը** 1919 թ. հունվարի 15-ի Նախարարների խորհրդի նիստում պարենավորման մասին հարցի շուրջ ծավալված բանավեճի ժամանակ. «միևնույն ժամանակ մենք պետք է ստեղծենք մեր ներքին կյանքում իրավակարգ, վերացնենք խմբերը, որոնք երկրի ներսում մի երրորդ իշխանություն են հաստատել»¹⁰⁰³:

¹⁰⁰¹ ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 15, ք. 118: Տե՛ս նաև «Կառավարության լրագրեր», 27 սեպտեմբերի, 1918, № 8:

¹⁰⁰² ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 504, ք. 4- 5:

¹⁰⁰³ Նույն տեղում, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, ք. 92:

Այդ միտքն է հաստատում նաև նիստում ելույթ ունեցած **Ս. Վրացյանը**. «լիազորները կատարյալ զեղծարարներ էին. ասում էին, որ զրանք բավականին ցորեն, բամբակ ին գնիլ, այնինչ ոչինչ չեն տեղափոխիլ մինչև հիմա Երևան. միջոցներից մեկը (պարենխնդրի լուծման)՝ ընդգծումը մերն է -Վ. Վ.) ներքին շուկայի օգտագործումն է, բայց դժբախտաբար ներքին օրգանները այնպես չին կազմված, որպեսզի օգտագործին»¹⁰⁰⁴ այդ հնարավորությունները:

Նախարարների խորհրդի 1919 թ. հունվարի 21-ի նիստում լավում է Ն Գ նախարարի պաշտոնակատար **Ալ. Խատիսյանի** զեկուցումը Դարալազյազի, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում գոյություն ունեցող անկարգություններին, խմբերի սանձարձակություններին ու ստեղծված անարխիային վերջ տալու համար այդ գավառներում ուժեղացված դրություն և գեներալ-նահանգապետություն հաստատելու, ու գանազան ոճիրների համար մահվան պատիժ մտցնելու մասին: Հավանություն է տրվում ներկայացված նախագծին¹⁰⁰⁵, վերջնական որոշումը սակայն հետագայում մինչև հունվարի 22-ի նիստը¹⁰⁰⁶. Ինչպես և որոշվել էր, նախարարների խորհրդի նիստը կրկին անդադրադադում է այդ հարցին: Դրանում մասնավորապես ասվում էր, որ ի լրումն և ի ձևակերպումն հունվարի 21-ի նիստում արված առաջարկության, **Ալ. Խատիսյանը** նոր առաջարկություն է ներկայացնում, որում ասվում էր, որ Դարալազյազի, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներից պետք է կազմվի մի գլխավորական շրջան և շրջանի պետ նշանակվի, որին պետք է ենթարկվեն թե՛ տեղական զորքը, և թե՛ միլիցիան, որը իբրև գլխավորական շրջանի պետ իր հերթին պիտի ենթարկվեր ՀՀ Ն Գ նախարարությունը, իսկ իբրև տեղական զորքերի հրամանատար՝ Հայկական դիվիզիայի պետին: Ընդունված որոշման մեջ նախարարների խորհուրդն իր համաձայնությունն արտահայտելով այդ առաջարկի հետ, միաձայն հանձնարարում է Ն Գ նախարարի պաշտոնակատարին այդ առաջարկը ձևակերպել հատուկ կարգադրությունք և ներկայացնել ՀՀ խորհրդին՝ ի հաստատումն:

Գավառամասերից ստացված հաղորդագրությունների հեղինակները ևս կարևորում էին միլիցիայի և օրինապահ մարմինների դերը նշված երևույթներն արմատախիլ անելու առումով. 1919 թ. մայիսի 27-ի դիմումագրում՝ ուղղված Ն Գ նախարարին, Կարսի նահանգապետը հիշեցնելով իր մայիսի 21-ի հեռագրի մասին, տեղեկացնում էր վրացիների կողմից ողջ Արդահանի մարզը զրավելու մասին, այս անգամ ավելացնում էր, որ վրացիները շարունակում են հույներին թունավորել քրդերի ու մահմեդականների դեմ, և

¹⁰⁰⁴ Նույն տեղում, ք. 43:

¹⁰⁰⁵ Նույն տեղում, գ. 486, մաս I, ք. 20:

¹⁰⁰⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, g. 1, q. 96, p. 13, q. 100 (43), p. 15, Ֆ.Պ - 201, g. 1, q. 486, մաս I, ք. 20:

ընդհանուր խառնաշփոթի պայմաններում զբաղված են կողոպուտով և բռնարարքների կիրառմամբ: Եզրակացության մեջ շեշտելով, որ բնակչությունը այնքան ուժեղ է տեւորի ենթարկված զանազան խմբերի կողմից և վախեցած անզուսպ «խրախճանքներից», ցոփ զինարբուքներից, որ ուրախանում է անզամ իրենց ամեն մի միլիցիոներների հայտնվելով, նրանում տեսնելով իր իրավունքների և հանգստության գլխավոր զբաղակարգը¹⁰⁰⁷: Հետաքրքիր դիտարկում է, որն արժանի է ուշադրության, մանավանդ վկայում է այն հանգամանքի օգտին, թե ինչ արդյունքների կարելի է հասնել, եթե ճիշտ կազմակերպվի ներքին անվտանգության համակարգը, որում իրենց արժանի տեղը կգտնեն միլիցիան և ՆԳ մարմինները, և իրենց օրինապահ վերաբերմունքով հասարակության նկատմամբ վայելեին վերջինիս հարգանք, երբեմն էլ՝ աջակցությունը:

ՆԳ նախարարության հետաքրքրությունների ոլորտում էին երկրի ներքին կյանքին վերաբերող բոլոր հարցերը և փորձում էր խորամուխ լինել դրանց մեջ, գտնել լուծման հնարավոր ուղիները գաղթականներով և սովից հյուսիս կողմից այդ երկրում, վերահսկել իրադրությանը: Բնականաբար, դրան էին նպատակառոգված այն քայլերը, որոնք ՆԳ-ն ձեռնարկում էր բնակչությունից գենքն ու զինամթերքը առգրավելու համար, ենթադրելով, որ դրանք էլ ավելի են սրում դրությունը, որ խառնաշփոթ և քրեածին իրավիճակը ձեռնտու էր զանազան ավազակաբարո խմբերին, որոնք հեշտությամբ էին ձեռք բերում հրազեն ու պատուհաս դառնում սեփական ազգաբնակչության գլխին: Այդ նպատակով 1918 թ. օգոստոսի 21-ին **Ա. Մանուկյանը** կառավարության քննարկմանը ներկայացրեց մասնավոր գենք-զինամթերքի պետականացման վերաբերյալ օրինագիծ, որը հավանության արժանանալուց հետո ներկայացվեց ՀՀ պառլամենտի քննարկմանը¹⁰⁰⁸: Հիմնավորելով օրինագիծը, **Ա. Մանուկյանը** գտնում էր, որ եթե երկրում իր ժամանակին ժողովրդին զինելը անհրաժեշտություն էր և ուներ ինքնապաշտպանական նպատակներ, արդեն պետականության գոյության պայմաններում, երբ կանոնավոր զորք ունենալու խնդիրներ են լուծվում, անձի անձեռնմխելությունը, ունեցվածքի և այլ իրավունքների պաշտպանությունը պետական իշխանության պարտականությունն է¹⁰⁰⁹: Սակայն երկրի ներքին, հետևաբար նաև պետական անվտանգության տեսանկյունից այս կարևոր մոտեցումը անհրաժեշտ համերաշխ ըմբռնումը չգտավ պառլամենտի օգոստոսի 27-ի նիստում, որտեղ մի շարք կուսակցությունների ներկայացուցիչներ **Ա. Մանուկյանի** ներկայացրած նախագիծը չընդունեցին: Սուցիալ-դեմոկրատ մենչևիկ **Թ. Ավդալբեկյանը** չհամաձայնվելով ՆԳ նախարարի այն տեսակետի հետ, որ ազգաբնակչության զինվելը մեծապես

¹⁰⁰⁷ Նոյն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 547, մաս I, ք. 95:

¹⁰⁰⁸ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 105, ք. 2:

¹⁰⁰⁹ «Չանգ» (Երևան), 28 օգոստոսի, 1918, N° 49:

նպատում է անարխիայի տարածմանը, բերելով մի շարք երկրների օրինակները, պատճառաբանություն է բերում, որ անարխիային նպատում է պետական իշխանության ապարատի թուլությունը և բացակայությունը: Հետևաբար, ըստ վերջինիս կարևորվում էր ուժեղ դատաստանական գործի և միլիցիայի կազմակերպումը երկրում, այն ազատելով կաշտակերներից, և դրանից հետո ձեռնամուկ լինել գինաթափման խնդրին: ՀԺԿ ներկայացուցիչ **Ս. Մալխասյանը** որպես անվտանգության պատվար դիտեց ուժեղ իշխանության ստեղծումը, որի դեպքում միայն կարելի է ժողովրդին գինաթափել, գտնելով, լավագույն դեպքում, գինաթափումը պետք է սկսել սահմանային գավառամասերից, աստիճանաբար շարժվելով դեպի մայրաքաղաք, կարծելով, որ միայն այդ պարագայում կարելի է ակնկալել ժողովրդի վստահությունը: Պատասխան ելույթով հանդես եկած ՆԳ նախարարը երկրում կարգ ու կանոնի, ամուր իշխանության ստեղծման խնդրի իրագործման համար պահանջեց աջակցել կառավարությունը, ինչին հակադրվեցին գլխավորապես սոցիալ-դեմոկրատները ի դեմս նրանց լիդեր **Հ. Ազատյանի**, գտնելով, որ ազգաբնակչությունը չպետք է գինաթափվի և իր քաղաքացիական իրավունքները պետք է պաշտպանի գենքով: Հ. Ազատյանը քննադատություն ենթարկեց Ա. Մանուկյանին և ՀՀ Դաշնակցությունը, ասելով, որ տարիներ շարունակ վերջինս գենքի է կոչել հայ ժողովրդին, սակայն այժմ այդ նպատակին հասնելուց հետո, կոչ է անում գինաթափել նրան: Հ. Ազատյանը պնդում էր, որ այդ խնդիրը իրապես կլուծվի միայն հաստատելով հեղափոխական օրենսգրքություն, իրականացնելով բարեփոխումներ առողջապահության, աշխատանքի և հողի բնագավառներում՝ ապրանքների հավասար բաշխմամբ: Դաշնակցական խմբակցության անդամ **Ս. Թորոսյանն** էլ իր հերթին պատասխանեց, որ էսդեկները դառնալով գենք կրելու շատագույներ, հանիրավի մոռացել են, որ իր ժամանակին դատապարտել են ՀՀ Դաշնակցությունը այդ ուղղությամբ գործադրած ջանքերի համար: **Ս. Թորոսյանը** եզրակացնելով, որ սուլթանների և ցարերի դեմ պայքարի ժամանակներն անվերադարձ անցել են, հետևաբար, անհրաժեշտություն չկա, որպեսզի բնակչությունը գինվի, քանզի Հայաստանը անկախ պետականություն է, որն էլ կոչված է պաշտպանելու ՀՀ բարեկեցությունը, հետևաբար նաև՝ անվտանգությունը: Ի վերջո, 15 ձայնով ընդգեմ 7-ի օրինադիժն անցնում է¹⁰¹⁰: 1918 թ. օգոստոսի 21 ին Նախարարների խորհրդի նիստը քննարկեց ՆԳ նախարարի կողմից առաջարկված օրենքի նախագիծը գենքի ազդրավման մասին, բացառությամբ սառը և որսորդական գենքի, և հավանություն տվեց այն պառլամենտ մտցնելու համար¹⁰¹¹: 1918 թ. օգոստոսի 29-ին Հայաստանի խորհրդարանն ընդունեց «Մասնավոր սեփականություն կազմող գենքերի և գինամթերքի պետականացման մասին»

¹⁰¹⁰ «Հորիզոն» (Թիֆլիս), 11 սեպտեմբերի, 1918, N° 182:

¹⁰¹¹ ՀԱԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 13, ք. 18:

օրենք, որը նախատեսում էր պետականացնել մասնավոր հրազենն ու զինամթերքը, բացի որսորդականից ու անպահուստակավոր տեսակներից: Զենքը կամովին չհանձնելու դեպքում այն առգրավվելու էր հարկադրաբար, իսկ օրինազանցները ՆԳ նախարարի որոշմամբ ենթարկվելու էին պատժի՝ մինչև 3000 ռ. տուգանքի: ՆԳ նախարարին էին վերապահվում գենք-զինամթերք հավաքագրող հանձնաժողովների կազմակերպման, մասնավոր անձանց ու կազմակերպությունների կողմից գենք-զինամթերք ձեռք բերելու, պահելու, դրանք կրելու արտոնություն տրամադրելու և այլ հարցեր: Վտանգված գյուղերի ինքնապաշտպանությունը չվնասելու նպատակով օրենքը թույլատրում էր գրավված գենքի մի մասը թողնել տեղում՝ հատուկ մարդկանց հսկողություն և պահպանություն ներքո¹⁰¹²: Այս առումով հետաքրքիր է նաև ՀՀ Ներքին Գործերի նախարարի մեկ այլ հրահանգ, որն այս անգամ մասնավորացված է և վերաբերում է հանրապետություն ամենալարված շրջաններից մեկին՝ Նոր Բայազետի գավառին: ՆԳ նախարարի 1918 թ. հոկտեմբերի 14-ի հրահանգում՝ ուղղված **Տիգրան Բաղդասարյանին**, ասվում էր հետևյալը. «1) Աջակցություն ցույց տալ Նոր Բայազետի գավառում գենքեր գրավող հանձնաժողովին, գրավելու գավառում բոլոր գենքերը, ռազմամթերքը ըստ օրենքի, 2) բոլոր գյուղերից պահանջել գանձարան մտցնել այս և անցյալ տարվա հարկերը և գանձարան չմտած կապալները, 3) հավաքել 20 տարեկանից մինչև 26 տարեկան դասալիքներին և ցուցակներով ներկայացնել Նոր Բայազետի գարնիզոնի պետ, շտ. կապիտան Բուդումյանցին և հրահանգել Նոր Բայազետի գավառի միլիցիայի պետ, պրապ. Թառումյանցին նրանց տեղափոխելու Երևան, միլիցիոներների հսկողությունում՝ Երևանի Զինվորական պետին [հանձնելու], 4) Հետապնդել, ձերբակալել բոլոր մարդասպաններին և քրեական հանցագործներին, ու հանձնել դատական իշխանությունը, 5) գործողություններ սկսել Նորադուզ գյուղից և վերջ դնել Նորադուզի ու Ղչլաղի կամայականություններին, որոնք հակառակ կառավարության հրահանգներին, որում են ձուլվում Քեալառի գետից և ծովից, վնասելով կապալառուներին, 6) Աշխատի[ե]լ բոլոր խնդիրները վերջացնել խաղաղ միջոցներով, որոնց սպառումից հետո միայն դիմել գենքի ուժի, վերջին դեպքում վարվել վերին աստիճանի կտրուկ կերպով, 7) Գյուղերը շրջել ամեն անգամ շրջանային կոմիտարների ուղեկցությամբ»¹⁰¹³: Այդ նույն նպատակադրումով էլ 1919 թ. հուլիսի 24-ի նիստում ՀՀ նախարարների խորհուրդը լսում է ՆԳՆ օրինագծի մասին ազգաբնակչությունից գենք ու զինամթերքի հարկադրական միջոցներով հավաքելու և զինային

¹⁰¹² ՀԱԱ, ֆ. Գ - 199, ց. 1, գ. 4, ք. 1, Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, էջ 2-3:

¹⁰¹³ ՀԱԱ, ֆ. Գ - 201, ց. 1, գ. 38, մաս I, ք. 484:

պարտադիր տուրք սահմանելու մասին: Որոշվում է Համաձայն Հունիսի 5-ի օրենքի՝ հաստատել ներկայացված օրինագիծը¹⁰¹⁴:

ՆԳ նախարարութան իրավասութան մեջ մտնում էին տարաբնույթ հարցեր, որոնց լուծման համար վերջինս համազործակցում էր այլ նախարարութիւններին հետ, փորձելով համատեղ ուժերով կանխել անիշխանութիւն դրսևորող երևույթները երկրում, գինվորական և այլ բնույթի խժոժութիւններն ու հանցագործութիւնները: Նախարարների խորհրդի 1919 թ. հունվարի 25-ի նիստում լավում է Արդարադատութան նախարարի առաջարկը՝ գինված անպատասխանատու խմբերի ինքնազուլի գործողութիւններին վերջ տալու մասին, հանձնարարելով ՆԳ և Զինվորական նախարարութիւններին համատեղ ծրագիր ներկայացնել ազգաբնակչութանը այդ խմբերի ինքնազուլի գործողութիւններից պակասովելու և նրանց զսպելու համար¹⁰¹⁵: Իսկ 1919 թ. փետրվարի 3-ի նիստում Նախարարների խորհուրդը լսելով ՆԳ Նախարարի զեկուցումը Դավալուի և Սուրմալուի շրջաններում գտնվող «խմբերը» գորամասերով փոխարինելու մասին հարցը, այն ընդունում է որպես ի գիտութիւն, ասել է, թե տալիս է իր համաձայնութիւնը¹⁰¹⁶:

ՆԳՆ և միլիցիան բազմաթիվ բողոքագրեր էին ստանում գինվորականների կողմից կատարվող անօրինականութիւններին, երբեմն էլ պարզապես հանցագործ գործողութիւնների մասին: ՀՀ Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին հասցեագրված Ալեքսանդրապոլի գավառային կոմիսարի 1919 թ. մարտի 20-ի զեկուցագրում նշվում էր, որ գավառի գյուղացիների և փախստականների վիճակը սովից օրեցօր դառնում է ավելի ու ավելի հուսահատական, նշելով, որ գավառի բնակչութիւնը փախստականների հետ միասին կազմում է 160.000 շուկ, որից իրենց գոյութիւնը մինչև նոր բերքահավաքը կարող են պահպանել միայն 12.000-ը, իսկ մնացած 148.000-ը չունեն ո՛չ հաց, ո՛չ ցորեն, և մինչև նոր բերքը նրանց պահելու համար անհրաժեշտ է 888.000 փութ ցորեն, յուրաքանչյուր շնչին հաշվելով ամիսը՝ մեկ փութ, իսկ սերմացու 1.170.228 փութ, և այդ պայմաններում գորամասերի անօրինական գործողութիւնները, մթերքների և սայլակառքերի բռնագրավումները սրում են առանց այն էլ վատ վիճակը՝ հանգեցնելով տարբեր գյուղերի բնակիչների բողոքներին: Գավառական կոմիսարը առաջարկում էր գավառում ունենալ այնպիսի վարչակարգ, որն օգտվեր ինչպես հայերի, այնպես էլ մահաճեղականների հարգանքից՝ վերջիններիս հետ մերձենալու համար¹⁰¹⁷: Այդ առումով առավել մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Դիլիջանի գավառային կոմիսար **Մ. Սարատիկյանի** 1919 թ. մարտի

¹⁰¹⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96ա, ք. 20, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 486, մաս II, ք. 284:

¹⁰¹⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 10, գ. 100 (43), ք. 11:

¹⁰¹⁶ Նույն տեղում, գ. 100 (43), ք. 21:

¹⁰¹⁷ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 135, ք. 29:

25-ի գեկույցը՝ ուղղված ՀՀ Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին, որը նաև ներքին քաղաքականության նրբությունների ըմբռնման տեսանկյունից արժանի է ուշադրութան. գեկուցազրույթում Մ. Սարատիկյանը նկատում էր, որ տնտեսական առումով բնակչութունը գտնվում է հուսահատական վիճակում, հաց գավառի շուկաներում գրեթե չկա և ՀՀ մեծ մասը սնվում է Ղազախի գավառի հաշվին և Դիլիջանի «տրակտով» (մեծ ուղի) բերվող հացով, որը Ղազախից ուղեկցվում է բարդություններով և գանազան խոչընդոտներով: Սարատիկյանը ընդգծում էր, որ տեղական բնակիչներին քիչ նեղություններ չեն տալիս նաև բախտի քմահաճույքին թողնված փախստականները, որոնք թափառում են գյուղերում և զբաղված են մուրացկանությամբ, հաճախ էլ տեղացիներից բռնաշորթելով վերջին կտոր հացը: Իսկ ամենակարևորը, դա այն էր, որ Մ. Սարատիկյանը կենտրոնական իշխանությունների ուշադրությունը բեռում էր գավառի գործատաների սպաներից շատերի կողմից դրսևորվող սպային ոչ վայել դիրքի ու կեցվածքի վրա. հաճախ գիշերները ավելորդ հրացանաձգությամբ զբաղվելը, ինչը տագնապ և վախ էր ներշնչում բնակչությանը: Սարատիկյանը վերջին հանգամանքից եզրակացնում էր, որ վերջիններս գտնվելով այդ վիճակում, չեն մտածում իրենց գինվորների մասին, որի հետևանքով դասավորությունը վերջ չունի: Այնուհետև Սարատիկյանը ընդգծում էր, որ թաթարական Հին Ակսիբարա, Ակսիբարա, Բուղանիս-Այրում, Կուչի-Այրում, Մագամլու, Փարախի, Շինիս-Այրում, Արաբաչիլյար և Յարադուլլա բնակավայրերը՝ թվով մոտ 12 հազար շունչ բնակչությամբ, խոր կերպով մտնում են իրեն վստահված գավառի բնակելի կետերի մեջ և աշխարհագրական նկատառումներով պետք է ընդգրկվեն ՀՀ տարածքի մեջ, սակայն գտնվում են Ադրբեյջանի իշխանությունների ղեկավարության ներքո, երևույթ, որը բացասաբար էր անդրադառնում դրության վրա, ցանկալի համարելով հարցի շուտափուլյթ լուծումը¹⁰¹⁸:

ՆԳ նախարարությանը չէր կարող չհետաքրքրել երկրի համար կարևոր նշանակություն ունեցող զանազան խմբերի, ոչ կանոնավոր գործատաների հետագա ճակատագրի հարցը, որոնք ավելորդ լարվածության մեջ էին պահում երկիրը և ժողովրդին, քանզի այն ուներ ռազմավարական կարևորագույն նշանակություն: Հետևաբար, հարկավոր էր վերջ ի վերջո այդ տեսակի բոլոր գինուժերը, անկանոն գինված խմբերը տարրալուծել կանոնավոր գործատաների կազմում: Այս առումով ուշադրավ է նախարարների խորհրդի 1919 թ. սեպտեմբերի 8-ի նիստը, որում լավում է ՆԳ նախարարի գեկուցումը անկանոն գործատաների մասին՝ հանձնարարելով ՆԳ և Զինվորական նախարարություններին մշակել անկանոն գորային միավորների կազմակերպվածության և այդ գործատաները անհրաժեշտորեն պահելու նպատակի մասին

¹⁰¹⁸ Նույն տեղում, թ. 33:

կանոնադրութիւն¹⁰¹⁹: Երկրի տարբեր շրջաններում տիրող անկայուն և քառասային վիճակի, անարխիայի, անկանոն խմբերի ու զորամասերի կամայականութիւնների, դրանց դեմ ՆԳ մարմինների պայքարի գործակցի «արդյունավետութեան» մասին է վկայում 1920 թ. վերջերի մի դիմումագիր՝ հասցեագրված ՀՀ պառլամենտի նախագահին և ՆԳ նախարարին, որում ՆԳ նախարարի ժամանակավոր պաշտոնակատար **Ա. Մաքսապետյանը** մասնավորապես ընդգծում է. «Շրջելով Շամշադինի, Իջևանի, Բարանայի շրջանները, հաստատում ենք իշխանութեան բացարձակ բացակայութիւնը: Ժողովրդի անտերութիւնը, հայտնի թալանների, ծանոթ յանցագործների միջոցով, երկրի տնտեսական քայքայութիւնը, աշխատանքի կազմալուծումը. անցեալի դժբախտութիւններից ճողոպրած այս հարուստ երկիրը փրկելու և ժողովրդին իշխանութեան գոյութիւնը ճանաչել տալու համար պահանջում ենք անմիջապես բանակցութիւններ սկսել՝ ադմինիստրացիային ընդառաջ գնալ ժողովրդի արդարացի պահանջին՝ ապահովելով նրանց կյանքը և տնտեսութիւնը»¹⁰²⁰:

Սակայն, դժբախտաբար հասարակութիւնն այդքան ներուժ չունեւր ազդելու հակապետական, հանցավոր տարրերի վրա, և դրանք ծաղկում էին: Լավագուշյն սպառազինութեամբ որոշակի խմբեր զբաղված էին ահաբեկչութեամբ, դրամաշորթութեամբ և պարզապես կողոպուտով: Հատկապես դժվարին իրավիճակ էր ստեղծված Կարսի նահանգում: ՀՀ ՆԳ նախարարի օգնական **Ս. Թորոսյանը** 1920 թ. հուլիսի 2-ի գեկույցում Նախարարների խորհրդում, վկայակոչում է այն փաստը, որ օգտվելով հանրապետութեան համար ստեղծված խառնակ իրավիճակից, «խմբերը» ահաբեկչութեամբ էին զբաղված նաև այլազգիների, մասնավորապես Կարսի նահանգի ռուսական գուղերի նկատմամբ, որոնց ներկայացուցիչները հուլիսի 29-ին բողոքազրով դիմել են ՆԳ նախարարի օգնականին: Շիրակի նահանգապետն այս կապակցութեամբ ևս իր բուռն բողոքն էր արտահայտում գինված անձանց կամայական ելույթներից¹⁰²¹: Այս կապակցութեամբ «Անիշխանութիւնը Կարսում» վերտառութեամբ հոդված է տպագրվում սոցիալիստ-հեղափոխականների կողմից «Սոցիալիստ-հեղափոխական» թերթում, որում անարգանքի այլուսին են գամվում մտուգերիստական «խմբերը» իրենց ծավալած անարգալից գործողութիւնների համար և կառավարութիւնը տեղական վարչակազմին կոչ էր անում արմատախիլ անել այդ ավազակաորջերը¹⁰²²: Հարկ է ավելացնել, որ վերոնշյալ անձինք անդրադառնալով այս ցավալի փաստերին, չէին բավարարվում այդ մասին արձանագրելով, այլ երբեմն էլ

¹⁰¹⁹ Նոյն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 200:

¹⁰²⁰ Նոյն տեղում, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 31, ք. 6:

¹⁰²¹ Նոյն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 287, ք. 4:

¹⁰²² Նոյն տեղում, գ. 300, ք. 109-110, «Սոցիալիստ-հեղափոխական», 18.09.1919, № 19; 29. 10. 1919, № 30:

փորձում էին ելք որոնել և դրանց դեմն առնելու միջոցներ ցույց տալ: Այսպես **Ս. Թորոսյանը** նշում է, որ միլիցիոներների մի մասը «խեղճ ու կրակ մարդիկ են, որոնք միայն զուր փող են ստանում, իսկ մյուս մասը՝ թալանի տենչով բռնված՝ մասնակից է թե՛ թալաններին և թե՛ գաղտնի ապստամբություններին»¹⁰²³, նաև ընդգծում էր, որ «միլիցիան գինված է պատահական գեներով, հաճախ չի ունենում փամփուշտ և այլն»: ՆԳ նախարարի օգնականը փորձում էր խորքային դիտարկումներ կատարել և նշել ստեղծված վիճակից դուրս գալու ուղիներ, ընդգծելով հետևյալը. «Ներքին Գործերի նախարարությունից ապարատի քայքայմանը նպաստում են այն հատուկ լիազորները, որոնք ցրված են զանազան տեղեր, և խառնվում են վարչական գործերին, բանտարկում են, արձակում և այլն»: Այնուհետև, **Ս. Թորոսյանն** անցնում էր կոնկրետ առաջարկների, որոնք հանգում էին հետևյալին. 1) Բոլոր միլիցիոներների ռոճիկը կրկնապատկել, 2) տալ ամսական մի փուլ ալյուր, 3) բոլոր միլիցիոներներին տալ հագուստ, 4) միլիցիան գինել լավ հրացաններով և ապահովել անհրաժեշտ քանակությամբ փամփուշտով, 5) միլիցիան ազատել գինվորական պարտականություններից, 6) 25 տարին լրացած բոլոր տղամարդկանց միլիցիոներական ծառայությունը ճանաչել որպես գինվորական ծառայություն, 7) Դ դասարանը ավարտած ու միջնակարգ կրթություն ստացած միլիցիոներներին հատուկ վարձատրություն տալ՝ միլիցիայի ռոճիկի 1/2 չափով, 8) կրկնապատկել նահանգապետի ու վարչակարգի մյուս պաշտոնյաների ռոճիկը, 9) վերացնել բոլոր արտակարգ կոմիսարների, հատուկ լիազորների պաշտոնները, 10) ինքնավարությունների ադմինիստրացիայի ու միլիցիայի պաշտոնները հանձնել պետականորեն աշխատող մարդկանց՝ առանց կուսակցական խտրություն, 11) երկրով մեկ սփռված գինված ուժերը ճանաչել հակապետական, գինաթափել, և նրանց դեմ կռիվ մղել զորքի ու միլիցիայի միջոցով, 12) գինվորական իշխանությունը պարտադրել պահանջված դեպքում օգնություն հասնել ադմինիստրացիային, 13) դատավարությունից ձևականությունները փոփոխելով՝ պարտադրել նահանգային դատարաններին շտապ քննել պետական հանցավոր պաշտոնյաների գործերը, 14) գինվորական իշխանություններին արգելել Ներքին Գործերի նախարարության գործերին խառնվել, հատկապես արգելել սայլեր, կենդանիներ, խոտ և այլ նյութերի բռնագրավել¹⁰²⁴: Սույն հետաքրքիր փաստաթղթի վրա կա ՆԳ նախարար **Ռ. Տեր-Մինասյանի** մակագրությունը՝ պատասխան առաջարկների ու տեսակետների հետաքրքիր փաթեթով՝ Ս. Թորոսյանի կողմից արված առաջարկների ամեն մի կետի վերաբերյալ ըստ հերթականության, որոնք հանգում են հետևյալին. «1) Համաձայն եմ՝ բյուրոյի Համաձայնությունամբ, 2) Համաձայն եմ՝ ինամատարություն միևնույնության միջոցով տալու պայմանով, 3) Համաձայն եմ, 4)

¹⁰²³ ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 287, ք. 5:

¹⁰²⁴ Նույն տեղում, ք. 5-6:

իսկ քաղաքներում՝ «Բերդան» և «Մոսին» -ով, իսկ շրջաններում՝ «Մոսին» հրացաններով, զինելով միլիցիան փամփուշտներով, 5) 32-ից բարձր պետք է արդեն ազատել, իսկ մնացածին՝ ազատել՝ կնշանակի քանդել զորքը, 6) եթե նախատեսել 32-ից բարձր հասակ ունեցողներին ազատել զորքի շարքերից, անհրաժեշտ է դրանց պատասխանին չսպասել, մտցնել միլիցիայի շարքերը իբրև պարտադիր՝ միլիցիայի ռոճիկով, 7) համաձայն եմ, 8) համաձայն եմ՝ բյուրոյի համաձայնությունով, 9) նորմալ վիճակում գտնվող շրջաններում համաձայն եմ, 10) այդ փորձը ճակատագրական նշանակություն կարող է ունենալ, ինչպես երևաց լուսավորություն միսիստրոնության փորձից. պետք է ընդունել սկզբունք միմիայն այս կառավարությունը և հայրենիքին սատարող տարրերին, 11) զինված ժողովուրդն է ստեղծել այս երկիրը, և նա է իսկական պաշտպանը հայրենիքի, ավելի՛ քան միլիցիան, ուստի ժողովուրդին պետք է զինել և նրան կազմակերպել, իսկ զորքին և միլիցիային հակադրել զինված ժողովուրդը՝ համարել անօրինական և կորստաբեր, 12) համաձայն եմ, բայց խոշոր դեպքերում և միայն ընդհանուր հրամանատարի թույլտվությամբ, բայց առհասարակ կարևոր է զորքը ներքին կյանքից պահել բոլորովին (հեռու), և նրա ուշադրությունը սևեռել դեպի արտաքին թշնամին, 13) համաձայն եմ, 14) համաձայն եմ, 15) զարգացնել ժողովրդական ինքնապաշտպանությունը և ժողովրդի մեջ քաղաքացիական պարտականությունների պարտաճանաչությունը, կազմակերպել քաղաքի և Դաշբուռուսի նման գնդեր, նրանց տալով կոմիտեաների, ոստիկանության ու զինվորական գործառնություններ, 16) մտցնել համաձայնական, կոմիտեական պարտականություններ»¹⁰²⁵:

Քննարկվող Հիմնահարցի կապակցությամբ ուշադրավ են նաև Ռնդամալ (Ջրառատ) և Վերին-Ախտա գյուղերի բնակչության ներկայացուցիչների բողոքագրերը՝ ուղղված պառլամենտի սոցիալ-դեմոկրատական խմբակցությանը, որում դժգոհում էին կառավարության ներկայացուցիչների և զորամասերի, ինչպես նաև 400-ից ավելի գաղթականների կողմից իրենց ունեցվածքը թալանելու, գործադրված բռնությունների և այլ անկարգությունների վերաբերյալ, խնդրվում էր քննիչ Հանձնաժողով ուղարկել¹⁰²⁶: Դարաչիչագի տեղամասի Ռնդամալ գյուղի կոմիտար Սարգիս Երամովը պառլամենտի սոցիալ-դեմոկրատական խմբավորմանը հասցեագրված դիմում-բողոքագրում, վրդովվելով խմբապետ Մեսրոպի և նրա 300 զինվորների ապօրինի գործողություններից, մեղադրելով, որ այդ վախկոտ խմբապետները դեռ երեկ փախչում էին Երզնկայից մինչև Երևան անամոթաբար փախչում էին պատերազմի դաշտից վախկոտ նապաստակի նման, շատ խիզախ դուրս եկան անպաշտպան գյուղացիների՝ իրենց սեփական հայրենակիցների նկատմամբ, մասնավորապես զինաթափման մասին օրենքի հրապարակումից

¹⁰²⁵ Նույն տեղում, ք. 6 հսկ.:

¹⁰²⁶ Նույն տեղում, Ֆ.Կ - 404, ց. 1, գ. 27, ք. 1-3:

հետո, առանց խտրականության իրենց հարվածները նշանակետ ընտրելով շատերին, մասնավորապես՝ քաղաքական հակառակորդներին: Այնուհետև դիպուկ նկատում էր. «Ինչ էին անում այդ երիտասարդները այստեղ, նկարագրել հնարավոր չի, վերցնում էին հացը, ալյուրը, գարին, խոտը, պահանջում էին ոչխար, հավ, բռնություններ էին գործադրում»¹⁰²⁷: Ս. Երամովը նաև ավելացնում էր հետևյալը. «այստեղ ուղարկվեց հրետանի. ինչու՞ մի քանի հարյուր լիազորներ և նրանց ազգականները պետք է հարստանան մեր գյուղացիների հաշվին. այժմ ստուգման փոխարեն ուղարկում են մեզ մոտ մեսրոպաների խմբերը. հասարակութունը վճռել է ընդունել մահ մեղականություն և դառնալ թուրքիայի հպատակներ (գոնե) գեթ փրկելու սեփական գոյությունը և կազմելով գյուղական որոշումը, լիազորել է ինձ խնդրանքով դիմել այստեղ գտնվող թուրքական ներկայացուցչին, սակայն հուրախություն չունեցանք, իրադրությունը փոխվեց և իմ դիմումը թուրքիային օգուտ չի տա, և քանի որ այլ ելք չկա, խնդրում եմ գյուղ գործուղել հատուկ հանձնաժողով և մանրազնի նուստմասիրել գյուղացիների վիճակը, այնուհետև վարվել՝ ինչպես խիղճը կթելադրի»¹⁰²⁸: Գյուղական կոմիտեարը գրում էր, որ այն ինչ կատարվում էր Ռեզամալում, այն չի եղել և չէր էլ կարող անկասկած լինել ոչ միայն Ռոմանովների կամ Աբդուլ Համիդի, այլև Լենկ-թեմուրի ժամանակ, որը չէր թույլատրում իր հորդաններին անել ինչ խելքներին փչի: Ամփոփելով իր միտքը, նա շեշտում էր, որ Մեսրոպը և նրա կողմնակիցները պարզապես հարստանում են գյուղացիների հաշվին, և եթե կառավարութունը վճռական միջոցներ չդիմի, ապա «հասարակայնությունը վճռել է ընդունել մահ մեղականություն և դառնալ թուրքիայի հպատակներ, գոնե իրենց գոյությունը փրկելու համար, և լիազորել է դիմել թուրքական ներկայացուցչին»¹⁰²⁹:

Բռնագրավումները առավել վատ անդրադարձ ունեցան այն շրջանների վրա, որոնք մահմեդական ուժեղ հարևանություն ունեին և ճանապարհների խաչմերուկի վրա էին, գումարած դրան գաղթականության և այլ խնդիրներ: 1918 թ. օգոստոսի 2-ի ՀՀ կառավարության պարենավորման բաժնի կառավարիչը Ն.Գ. և Զինվորական գործերի նախարարներին ուղղված բողոքագրում ընդգծում էր, որ գործառնները ինքնակամ բռնագրավում են ցորենը գյուղական բնակավայրերում, և չնայած իրենց պահանջներին և բողոքներին, բռնագրավումները ոչ միայն չեն դադարել, այլև ընդունել են սպառնալից չափեր: Պարենային բաժնի կառավարիչը խնդրում էր կարգադրություններ անել բոլոր գործառններին՝ դադարեցնելու բռնագրավումները, նշելով, որ հակառակ պարագայում պարենային բաժինը հարկադրված կլինի դադարեցնել հացի մատակարարումը գործառններին, քանզի նաև

¹⁰²⁷ Նոյն տեղում, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 17, ք. 6:
¹⁰²⁸ Նոյն տեղում, գ. 17, ք. 6:
¹⁰²⁹ Նոյն տեղում, Ֆ.Կ - 404, ց. 1, գ. 17, ք. 9-10:

իրենք այլևս ի վիճակի չեն լինի շարունակել իրենց աշխատանքը¹⁰³⁰: Կապված գինավորականների կողմից խաղաղ բնակչության նկատմամբ ինքնակամ գործողությունների, անկարգությունների և նրանց ունեցվածքի (անասնակեր, հավ, ուտելիք և այլն) բռնազրավումների, զանազան զորաջոկատների կողմից ապօրինի գործողությունների հետ, ՆԳ նախարարը 1918 թ. օգոստոսի 17-ին ՀՀ Զինվորական նախարարին հասցեագրված դիմումագրում խնդրում էր վերջինից իրեն չմերժել անհապաղ կարգադրություններ անել ապագայում զորամասերի կողմից նման ինքնակամ գործողությունները, և խաղաղ բնակչության նկատմամբ բռնությունները դադարեցնելու ուղղությամբ և այդ մասին իրեն տեղյակ պահել: Պատասխան հեռագրում Զինվորական նախարարի անունից Գլխավոր շտաբի պետը հավաստիացնում էր, որ արդեն արվել են կարգադրություններ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մասին, ինչպես նաև ձեռնարկվել են համապատասխան նախազգուշական միջոցառումներ¹⁰³¹:

Հացի խնդիրը շատ կարևոր էր, և այդ հանգամանքից ելնելով կառավարությունը հայտարարեց դրա նկատմամբ մենաշնորհային իրավունքի մասին, որից ելնելով էլ խնդիր դրվեց կարգավորել այդ խնդրի զորամասերին վերաբերող խնդիրները՝ կանխելու համար արտառոց երևույթները բնակչության նկատմամբ, և մասնավորապես գյուղի: Գեներալ-մայոր Դյուրխանյանը (Դյուրխանովը) Հայկական դիվիզիայի գծով իր հրամանում (N^o 23, § 38) ելնելով ՀՀ կառավարության հացի նկատմամբ մենաշնորհային իրավունքից, հայտարարեց այն մասին, որ ոչ մի զորամաս իրավունք չունի ցորենի գնումներ կատարելու ՀՀ սահմաններում, սպառնալով, որ հակառակ դեպքում գնված ցորենը կբռնազրավվի¹⁰³²: Զինվորականները օգտագործելով իրենց դիրքը, հաճախ պարենային խնդիրները լուծում էին բռնարարների միջոցով, և բնակչությունը ահույն թվով բողոքներ էր ուղղում ՆԳ և Զինվորական նախարարությունների դեկավար մարմիններին: Այդպիսի բողոքների հեղինակներ էին դառնում նաև իրենք՝ գինավորականները: Հետաքրքիր է այս առումով Հրետանային վարչության պետ գեներալ-մայոր Գամազովի 1918 թ. հոկտեմբերի 17-ի զեկուցագիրը՝ ուղղված Զինվորական նախարարին, որն էլ իր հերթին ուղարկել է ՆԳ նախարարին, որում ընդգծում էր, որ Բաշ-Ապարանում իր կողմից Հայկական հրետանային բրիգադի 4-րդ մարտկոցի զինման ժամանակ, այդ մարտկոցի հրամանատար կապիտան Խոգանովսկին իրեն բողոքագիր է ներկայացրել բռնազրավումի գծով զորաջոկատի պետ Արսեն-աղայի հասցեին, որ վերջինս մարտկոցի տնտեսական գծով չլինովնիկներին ստիպում է ընթացիկ օգտագործման և ձմռան համար որպես պահուստ գնել մթերքներ (կարտոֆիլ, կաղամբ), ինչպես նաև

¹⁰³⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 101, ք. 1:

¹⁰³¹ Նույն տեղում, գ. 15, ք. 90:

¹⁰³² Նույն տեղում, գ. 102, ք. 56-57:

անանական ճիւղերի համար և այլն: Այս կապակցութեամբ ՆԳ նախարարը ընդգծում էր, որ ինքն այն ուղարկում է Զինվորական նախարարին բանաձևի համար՝ խնդրելով անել հարկ եղած կարգադրութիւնները, քանի որ Արսեն-աղայի գործողութիւնների վերաբերյալ առաջին անգամ չէ, որ ստացվում են բողոքներ բնակչութեան կողմից, որը բացահայտվել է գնդապետ Ա. Պ. Բեյ-Մամիկոնյանի կողմից անցկացված հետաքննութեամբ¹⁰³³: Այդ հանգամանքի հաշվառումից էլ ելնելով, ՀՀ ՆԳ նախարարը 1918 թ. հոկտեմբերի 31-ին անդրադառնալով իր գրադրութեանը՝ ուղղված Հայաստանի զորքերի զինվորական շտաբի պետին, հաղորդում էր, որ համաձայն կառավարութեան ընդհանուր որոշման, բնակչութեանից պարենամթերքների բռնագրավումը պետք է իրականացվի միայն համաձայն պարենային բաժնի կարգադրութեան, և առանձին գործառնություններին այդպիսի իրավունք չի տրված, քանզի պարենով նրանք պետք է մատակարարվեն անմիջապէս համբարակապետութեան կողմից: Իսկ ինչ վերաբերում է գրադրութեան մեջ հիշված Արսեն աղայի չարաշահումներին բռնագրավման խնդրում, ավելացնում էր ՆԳ նախարարը, եթէ դրանք համապատասխանում են իրականութեանը, ապա պետք է նրան ենթարկել օրինական պատասխանատվութեան դատարանի միջոցով կամ կարգապահական կարգով¹⁰³⁴:

Այդուհանդերձ, որոշ տեղերում վճռական քայլեր ձեռնարկվեցին գործասերի կողմից բռնագրավումները կարգավորելու խնդրում: Գաղտնիք չէ, որ հայկական գործասերի մեջ լավագույններից մեկը, որի մասին նույնիսկ խորհրդային գորահրամանատարներն են ընդգծել, դա **Դրոյի** կողմից գլխավորվող գործընկալներն են եղել: Վերոհիշյալ խնդրում ևս այն բացառութիւն չկազմեց: Հետաքրքիր է այս առումով Դրոյի-Ղարաքիլիսայի զինվորական օկրուգի պետ Դրոյի 1918 թ. նոյեմբերի 26-ի հրամանը. «Ի նկատի ունենալով Դրոյի և մասնավորապէս Ղարաքիլիսայի գավառների գյուղական բնակչութեան ծանր տնտեսական դրութիւնը մթերքների, անասունի և անանականների բռնագրավումի համակարգը կարգավորելու համար հրամայում եմ բոլոր գործասերին միջոցներ ձեռնարկել, որպեսզի առանց գավառային և տեղամասային կոմիտարների թուլութեան իրենց և գյուղական կոմիտարների գիտութեան բնակչութեանից ոչինչ չբռնագրավվի: Ռեկվիզիցիան պետք է իրականացվի գեմատվայի կամ վարչակազմի և գյուղական հասարակութեան ներկայացուցչի ներկայութեամբ: Փողերը պետք է վճարվեն տեղում՝ առանց հսկողման»¹⁰³⁵: Միաժամանակ Դրոյն քաղաքացիական իշխանութիւններից խնդրում էր աշակցութիւնն ցույց տալ գործասերին իրենց վրա դրված պարտականութիւնների կատարման տեսանկյունից: ՀՀ Տարածքի վարչակազմի և միլիցիայի կոմիտարին ուղղված իր գեկուցագրում

¹⁰³³ Նոյն տեղում, թ. 83:

¹⁰³⁴ Նոյն տեղում, թ. 82:

¹⁰³⁵ Նոյն տեղում, թ. 89:

Էջմիածնի գավառային կոմիսարը 1919 թ. մարտի 13-ին գրում էր, որ գավառում բառիս ամենալայն իմաստով սով է, 3-րդ և 4-րդ տեղամասերի բնակիչները սնվում են լեռով և խոտով, պոկելով ցանքի կանաչը, գումարած դրան՝ տիֆի վարակը, որը մեծ զոհեր էր խլում, գտնելով, որ կարգ ու կանոն չկա, սպաները ինքնակամ վերցնում էին բնակիչներից անասունը՝ առանց տեղական իշխանությունների թույլտվության¹⁰³⁶: 1919 թ. հոկտեմբերի 29-ին ՆԳ նախարարության վարչակազմի ու միլիցիայի բաժնի պետը շրջաբերական է հղում գավառային բոլոր կոմիսարներին. «Դեպքերի մասին բոլոր գավառային կոմիսարների զեկուլցից երևում է, որ կողոպուտներն ու ավազակությունները գավառներում կրում են համաճարակային բնույթ: Դրա համար առաջարկում են կիրառել ամենավճռական միջոցները՝ գավառներում իրական հանգստություն և օրինական կարգ ու կանոնի հաստատման, ինչպես նաև ձեռնարկել բոլոր միջոցները ավազակության և կողոպուտի մեջ մեղավոր անձանց ձերբակալման համար»¹⁰³⁷: Բազմաթիվ բողոքներ էին ստացվում, որոնցում դժգոհություններ էին արտահայտվում մասնավորապես գավառային իշխանությունների և միլիցիայի հասցեին: Այս առումով շատ բնութագրական է Քարվանսարայի զեմսովոյի վարչության նախագահի դիմումագիրը ՆԳ նախարարին, որում ասվում էր հետևյալը. «Ամեն օր գյուղացիները մեզ են դիմում բողոքներով՝ հասարակական անվտանգության նկատմամբ հսկողության բացարձակ բացակայության կապակցությամբ, բացահայտ կողոպուտների առիթով, որոնք կատարվում են այն խումբ անձանց միջոցով, որոնց ազգանունները գյուղացիներին լավ հայտնի են: Թալանը գավառում կրում է գանգավածային բնույթ, գյուղացիների ընկճվածությունը հասել է աներևակայելի չափերի: Կան անձինք, որոնք ունեին հինգ-վեց գլուխ եզ, իսկ հիմա չունեն ոչինչ: Թալանը մեր գավառում ընթանում է կազմակերպված: Այդ գործով զբաղված են մի քանի կազմակերպված մեծ խմբեր, որոնք թշնամություն են անում մեկը մյուսի դեմ և որոնցից յուրաքանչյուրը սարսափի մեջ է պահում գավառի բնակչությանը: Վստահություն չկա և իշխանությունների նկատմամբ: Իշխանությունները չեն պաշտպանում աշխատավոր գյուղացիության շահերը: Նրանք հովանավորում են թալանչիներին: Եվ սպանվելու սարսափը մարդկանց ստիպում է լուել: Գյուղացիները մեզ հարց են տալիս. ի՞նչ է մտածում այս կապակցությամբ կառավարությունը: Մտադր՞ր է արդյոք նա բացահայտ կերպով կանգնել աշխատավոր գյուղացու կողմը: Ասում են, հին ռեժիմի օրոք երեք դաշնակցական ահ ու սարսափի մեջ էին պահում և՛ գյուղական վարչակազմը, և՛ վնասակար տարրերին: Այժմ ողջ իշխանությունը ժողովրդի կողմից հանձնված է իրենց ձեռքը: Եվ մի՞թե նրա համար, որպեսզի նրանք հովանավորեն ավազակությունները: Այդ կարծիքը իր հիմքում իրական հող ունի:

¹⁰³⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 135, ք. 15:

¹⁰³⁷ Նույն տեղում, գ. 299, ք. 30:

Զափազանց սառնորեն դիտելով իրերի վիճակը, մենք պետք է ընդունենք, որ դրուժյունը բացարձակորեն ծանր է»¹⁰³⁸:

Անշուշտ, Հետաքրքիր է ասել, որ փորձեր արվում էին իմաստավորելու այդ ժամանակաշրջանի խնդիրները, ուրվագծվում էին քայլեր այդ դժվարուժյուններից երկիրը դուրս բերելու համար: ՆԳ նախարարը ելույթ ունենալով Նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 11-ի նիստում, փորձելով վերհասնել ներքին դժվարուժյունների իրական պատճառները և արմատները, հետևյալն է արձանագրում. «որ ներկա անկարգուժյունները ժամանակավոր բնույթ են կրում և անցողական են: Դրանք գլխավորապես պայմանավորվում են սովով. բնակչուժյան մի մասը հանգիստ կերպով մեռնում է, իսկ մյուս ավելի անհանգիստ մասը անկարգուժյուն է անում: Վերջինս խոշոր չափերի է հասնում բնականաբար գաղթականների մոտ: Գլխավորապես սովով է պայմանավորվում նաև զինվորների անկարգուժյունը: Այստեղ ամենից առաջ պիտի հիշել զանազան խմբերին: Ես հրահանգել իմ դրանց ցրել»¹⁰³⁹: Իսկ ամենավատթար վիճակը ստեղծվել էր Զանգեզուսարի շրջանում, որը պարզապես ավազակային խմբերի մրցատեղի էր, իսկ մարդկանց մոտ ամրապնդվել էր անպատժելիության զգացումը: Իսկ այդ ամենին Հայաստանի ՆԳ նախարարուժյունը ռեալ հակադրելու ոչինչ չուներ: Ինչպես վկայակոչում է ՆԳ նախարարի օգնականը, միլիցիոնների թիվը թղթի վրա հասնում էր 5000-ի, իսկ իրականում այդ թիվը կեսն էլ չկար: Դա բացատրվում էր նրանով, որ պետուժյան տկարության, Ֆինանսական անկարողության հետևանքով շատերը պարզապես չէին էլ ցանկանում միլիցիոններ դառնալ, աշխատավարձը մինչև 1920 թ. ապրիլի 1-ը կազմում էր ընդամենը 2500 ռուբլի, իսկ դրանից հետո էլ՝ 5000 ռուբլի: Միլիցիոններն իրեն ապահով չէր զգում, իսկ առավել ակտիվները զբաղվում էին ալան-թալանով, աջակցում և հանցակից էին գողերին¹⁰⁴⁰: Բացի այն հանգամանքից, որ պետուժյունը ի վիճակի չէր լավ զինել և Ֆինանսավորել միլիցիային, կար ՆԳՆ աշխատանքին խանգարող ևս մի կարևոր հանգամանք: ՆԳ նախարարուժյան մարմինների աշխատանքին՝ երկրում կարգ ու կանոնի հաստատմանը, էականորեն խոչընդոտում էր նաև այն հատուկ լիազորների համակարգը, որոնք միջամտում էին իրենց չվերաբերող գործերի մեջ, զբաղվում էին մարդկանց բանտարկության և ազատ արձակման գործերի ընթացքին, ինչը բարոյալքում էր միլիցիայի համակարգը, վարկաբեկում միլիցիոնների բարոյական դիմադիծը: Եվս մեկ գործոն զգալի չափով խոչընդոտում էր միլիցիայի բնականոն աշխատանքին. նշված ժամանակաշրջանում ՆԳ

¹⁰³⁸ Տե՛ս Ռ. Ավագյան, Հանցավորությունը Հայաստանի Առաջին Համաշխարհային պատերազմում (1918-1920թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1995, էջ 47-49: Տե՛ս նույնի Հանցավորությունը Հայաստանում, Եր., «Նոյյան տապան», 1997, էջ 24-25:

¹⁰³⁹ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 15, ք. 135:

¹⁰⁴⁰ Նույն տեղում, Ֆ.Պ- 201, ց. 1, գ. 287, ք. 5:

նախարարութիւնը հաճախ անհիմն կերպով կադրային համալրումներ էր ստանում՝ ելակետ ունենալով կուսակցական պատկանելութիւնը: Սա վտանգավոր և անհեռատես մոտեցում էր խնդրին: Հաջորդ պատճառը, որը խոչընդոտում էր երկրում ներքին կարգ ու կանոնի հաստատմանը, դա երկրով մեկ սփռված «խմբերի» առկայութիւնն էր, որոնք ոչ մի իշխանութիւն չէին ճանաչում և օգտվում էին ամենաթողութիւնից, իսկ դա վերջին հաշվով հայկական պետականութեան թուլութեան, անկամոթեան կարևորագույն պատճառներից էր: Դա ցայտուն երևում է մասնավորապես Արդարադատութեան և ՆԳ նախարարութիւնների բազմաթիւ պաշտոնագրերից, որոնցում պահանջվում էր «միջոցներ ձեռք առնել նրանց կողմից ոչ օրինական գործողութիւնների չթուլատրութեան և դրանցից յուրաքանչյուրի դեպքում քրեական գործի հարուցման մասին», որոնք զբաղվում էին «ձիերի, ֆուրածի և սննդեղենի անհարկի բռնագրավումներով»¹⁰⁴¹:

Ե՛վ 1918, և՛ 1919, և՛ 1920 թթ. մշտապես օրակարգի մեջ էր գտնվում «խմբերի» կողմից դրսևորվող ինքնակամ, ավագակաբար գործողութիւնների հիմնահարցը, որը հնարավորութիւն կտար ուղիներ որոնելու և արդյունավետ միջոցներ գտնելու՝ ստեղծված անարխիկ վիճակին վերջ դնելու, և զինվորականների կողմից դրսևորվող պաշտոնական չարաչահումների դեմն առնելու համար: ՆԳ նախարարութիւնը հաճախակի հանդես էր գալիս այդ կնճռոտ խնդրի կարգավորման և լուծման նախաձեռնողի դերում: 1920 թ. մարտի 22-ին Նախարարների խորհուրդը լսում է ՆԳ նախարարի գեկուցումը զինվորական մասերի պաշտոնյաների ապօրինի գործողութիւնների մասին և առաջարկը՝ նշանակել հատուկ հանձնաժողով այդ գործողութիւնները քննելու համար: Քննարկելով հարցը, Նախարարների խորհուրդը հավանութիւն է տալիս ներկայացված գեկուցադրին և հանձնարարում կազմել մի հանձնաժողով ՆԳ, Զինվորական և Արդարադատութեան նախարարութիւնների ներկայացուցիչներից՝ այդ բոլոր ապօրինի գործողութիւնները քննելու համար¹⁰⁴²: Այն, որ զանազան «մտուցերիստական խմբերը», անկանոն զինվորական մասերը իրենցից չարիք էին ներկայացնում և իրենց գոյութեամբ իսկ խրախուսում էին բոլոր տեսակի անպատասխանատու, ավագակաբար խմբերի սանձարձակ գործողութիւնները՝ նպաստելով այնպիսի արատավոր երևույթների տարածմանը, ինչպիսիք էին դասալքութիւնը, կաշառակերութիւնը, գողութիւնները և պաշտոնական ու քրեական բնույթի զանազան զանցանքներն և հանցագործութիւնները, անհաստատ վիճակի մեջ դնելով ռազմաքաղաքական առումով առանց այն էլ ծանր կացութեան մեջ գտնվող երկրի ներքաղաքական կյանքը: Իսկ նրանք, ովքեր կփորձեին կամ նույնիսկ կհամարձակվեին իրենց իսկ վստահված տեղամասերում կարգ ու կանոն հաստատել, հետևել օրինակա-

¹⁰⁴¹ Նույն տեղում, գ. 504, ք. 4-5:

¹⁰⁴² Նույն տեղում, Ֆ.Պ - 199, գ. 1, գ. 146, ք. 49:

նության պահպանմանը, խմբերի կողմից դիմադրության էին հանդիպում, որոնք հաճախակի ավարտվում էին արյունալի բախումներով: Կարսի մարզում անիշխանության մասին է վկայում «Սոցիալիստ-հեղափոխական» թերթը 1919 թ. վերջերին այդ կապակցությամբ գրում էր, որ այն օրից, երբ Կարսի նահանգում զանազան խարդավանքների պատճառով վերացվեցին զինվորական դրությունը ու քաղաքացիական վարչակարգը, նահանգի տերն ու տնօրենը դարձան, այսպես կոչված «մաուզերիստները»՝ կենտրոնատեղի ընտրելով և ամրանալով «Սերբիա» հյուրանոցում, սկսեցին իրենց «արդյունավետ ու բովանդակալից գործունեությունը»¹⁰⁴³: Այնուհետև բառացիորեն ընդգծվում էր. «...այն ժամանակ, երբ որ մերկ ու սոված գորքը Կաղզվան-Կարաուրգան-Մերդենենկ-Արգահան Ֆրոնտների սառը սարալանջերում գերմարդկային ճիգեր է թափում իր հայրենիքի պատվի ու պրեստիժի համար, նույն ժամանակ, նույն գորքերից փախած ու հայ ժողովրդի արյամբ սնված այդ հերոսները Կարսում նստած՝ իրենց քեֆերով ականջ են խլացնում»¹⁰⁴⁴: Քաղաքացիական իշխանությունները, այդ թվում և միլիցիան փորձում էին զսպել «մաուզերիստական» խմբերի կամայականությունները. այդ նույն քաղաքի կոմիսար Վարդանեսյանը «...հանուն արդարության և հայկական կառավարության պրեստիժի գործի անցավ ու իր կյանքը վտանգի ենթարկելով՝ բանտարկել տվեց նրանց մեծերից երկուսին»: Սակայն վերջինս չկարողացավ նպատակին հասնել՝ վերջնականապես պատժել այդ հանցագործ տարրերին, որոնք հակահարձակման են անցնում, և հոկտեմբերի 7-ին, քաղաքի Ալեքսանդրյան փողոցի ամենաբանուկ տեղում, օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ, ցինիկաբար, արհամարհելով օրինական իշխանություններին՝ ՆԳՆ-ին ու միլիցիային, օրը ցերեկով, հարյուրավոր հասարակության առաջ, «նամարդորեն»՝ մաուզերի 10 գնդակով սպանում են կոմիսար **Վարդանեսյանին** իր պարտքի «գիտակցություն» դիրքերում: Սպանողներից ոչ մեկը չի բանտարկվում, այլ միայն նա, ով ստորագրել ու հաստատել էր սույն մահապատիժը¹⁰⁴⁵: Այս ամենը վկայում էր իշխանությունների և մասնավորապես պետական անվտանգության համակարգի ներքին թուլություն, միլիցիայում ու ՆԳ մարմիններում իշխող տիրահոնչակ բարքերի մասին, չնայած այս գործին, դատելով փաստերից, միջամտել է նաև ՆԳ նախարարը, և Կարսի նահանգապետը: Սակայն ապարդյուն: Ինչպես նշում էր Կարսի նահանգապետը, մարդկանց այդ հանցագործ մասը սպառազինված լինելով լավազույն գեներով, նահանգը դարձրել էին սարսափելի ահաբեկման օբյեկտ, որի դեմ վատ զինված և հոգեբանորեն, բարոյապես և տնտեսապես թույլ միլիցիան և ՆԳՆ մարմինները պարզապես ոչինչ չէին կարող անել, և պատրաստ չէին հակազդելու այդ խմբերի քայ-

¹⁰⁴³ Նոյն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 300, ք. 109-110:

¹⁰⁴⁴ Նոյն տեղում, «Սոցիալիստ-հեղափոխական», 29. 10. 1919, N° 30:

¹⁰⁴⁵ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 300, ք. 110:

քայիչ ու անպատախանատու գործողութիւններին: Ինչպես նշվում է արևմտահայ գաղթականութեան ներկայացուցիչների 1919 թ. ապրիլի 25-ի բողոքագրում՝ ուղղված պառլամենտի սոցիալ-դեմոկրատական խմբակցութեանը, «ոստիկանութիւնը դժբախտաբար չի գտնվել իր կոչման բարձրութեան վրա և շատ անգամ ինքն ևս նույն անարխիան սաստկացնելու դերին մեջ կը գտնվի»¹⁰⁴⁶: Բողոքագրում արձանագրվում էր պետական ապարատի սանձարձակ կամայականութիւնների ու երկրում տիրող ոստիկանական ռեժիմի, մայրաքաղաքում տարածված գողութիւնների և ավազակութիւնների, անիշխանական վիճակի մասին: Նման իրավիճակից դժգոհում էին Հայաստանի բոլոր գաղառամասերում: Կարսի քաղաքացիական նահանգապետը Ն Գ նախարարին ուղղված իր 1919 թ. սեպտեմբերի 23-ի դիմումագրում դժգոհում էր, որ գաղափարական և գործին նվիրված աշխատողներ չկան, ավելացնելով, որ բոլոր պատկերացումները պետականութեան և Հայրենասիրութեան մասին պտտվում են նյութական բնույթի հասկացութիւնների և ստացվող ռոճիկի ու նյութականի, հարստանալու շուրջ, գումարած դրան՝ մարգային բանտը իր 102 կալանավորներով և 65 միլիցիոներներով: Իր այս գրութեան մեջ նահանգապետը Ն Գ նախարարութիւնից խնդրում էր այս ամենի վրա բեւեռել նախարարների խորհրդի ուշադրութիւնը¹⁰⁴⁷:

Ամենը չէ, սակայն, որ հաջողվում էր. շատ բան հաճախ ավելի վատ էր, և այդ անմխիթարական վիճակից ելքը անհնարին էր թվում. դրութիւնն այդ օրերին հատկապես սրված էր մայրաքաղաքում՝ Երևանում, հանրային անդորրը վրդովված էր, օրինականութիւնը ոտնահարված, ոստիկանութիւնն էլ անգամ Հոսսահատ ճիգեր չէր կարողանում գործադրել, հաճախ էլ պարզապես չէր կարողանում ուղիներ որոնել խախտված օրինականութիւնը վերականգնելու համար, ինչը խորացնում էր ընդհանուր տագնապի զգացողութիւնը և անորոշութիւնը մտքերում և գաղափարներում, ինչի մասին չափազանց ցայտունորեն նկատում է «Աշխատանք» օրաթերթը 1919 թ. սկզբին. «Անոթիներն ու սովեալները չէ, որ կը խռովեն Հանրային անդորրութիւնը: Դժբախտաբար անոնք, դառներու նման վիզներնին ծռած ճաղարանի ապակու փեղկերու առջև և կամ փոռիին դիմաց՝ մահվան կսպասեն արտակարգ անդորրութեամբ: Չարիքը կուշտերէն, չափազանց շատ յղփացածներէն կուգայ, չարագործութիւնը արհեստի վերածող և գողութեան ու յափշտակութեան մոլուցքով բռնված ստահակներէն կուգա: Ու դժվար չէ բնավ կառավարութեան համար այսքան պզտիկ քաղաքի մէջ, ուր յուրաքանչյուր ժամին բոլոր բնակիչները քիթ-քիթ կուգան, մեկ քանի օրվա ընթացքին կտրել բոլոր շայկաներու արմատը: Կառավարութիւնը պարտավոր է ընել այդ բանը, զսպել միլիցիոներական շահատակութիւնները, դատի ենթարկել պատասխանատու կոմիսարները և միլիցիապետները, հեռաց-

¹⁰⁴⁶ Նոյն տեղում, Ֆ.Կ - 404, ց. 1, գ. 18, ք. 1:

¹⁰⁴⁷ Նոյն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 517, մաս III, ք. 265:

նել պարտազանցները և դիմել բոլոր միջոցներու հասարակաց կարգ ու կանոնին համար: Ամէն առաջ հանրային անդորութիւնն է հարկավոր»¹⁰⁴⁸: Իսկը և իսկը այսօրվան ուղղված դիպուկ հարցադրումներ, որոնք էլ ավելի մեծ արժեք են հաղորդում ներկայացված դիտողութիւններին, ինչը կարևոր էր գործերի առկա վիճակը շտկելու, խոտորումները և սայթաքումները հաղթահարելու տեսանկյունից: Իսկ «Հայաստանի աշխատավոր» թերթը 1919 թ. հունիսի 26-ի խմբագրականում շարունակում է վերն ասվածը և հիմնավորում այդ կապակցութամբ մի արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի հիմնման անհրաժեշտութիւնը, որոնք իրավունք և հնարավորութիւն ունենան արագ և արդար դատաստանով անդամահատել նեխած անդամները, հեռացնել և պատժել հասարակական ցեցերին և հանգստացնել հանրային խռովված խիղճը. «...երեկվայ կիսաքաղց գործակատարը կամ ուսուցիչը այսօր հարիւր հազարանոց տներ, գործարան և այգիներ է գնում, ձիեր ու կառքեր պահում, հանապաօրեայ հազարաթէք խրախճանքներ սարքում, իսկ ի՞նչ միջոցներով, երբ նա առաջ ամսեկան 40-50 ռ միայն ստանալով իր չոր գլուխն անգամ պահել չէր կարողանում. որովհետև ոչ ոք չի պատժում կամ երբեմն միայն ձու գողացողին կախում են, իսկ ձի գողացողին պատիւ ու դիրք տալիս-ուստի հասարակութիւնն ու ժողովուրդը լքում են, կորցնում ամէն հաւատ դէպի արդարութիւնն ու իրաւունքը, և այս յուսահատ անտարբերութեամբ քարշ տալիս իրենց գոյութիւնը, իսկ պաշտօնեան աւելի սանձարձակ դառնում և յայտարարում. «Ի՞նչ պարլամենտ կամ կառաւարութիւն, այդ բոլորը ես եմ, ինչ ուզեմ՝ կանեմ»¹⁰⁴⁹:

Միլիցիայում, ՆԳ մարմիններում, բանակային գործասերում իշխող իրավիճակի պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար, հարկ է ՆԳՆ և միլիցիայի, բանակի գործունեութեան պատմութեան ևս մի էջի անդրադառնալ. 1920 թ. փետրվարի 20-ին, ՀՀ խորհրդարանի նիստում լսվում է Վ. Մինախորյանի հարցապնդումը ՆԳ նախարարին՝ կապված Երևանում և Դիլիջանում ձերբակալված մի քանի բոլշևիկների հետ, որոնք մեղադրվում էին հակապետական և հակակառավարական գործերին մասնակցութեան, օրինականութեան, կարգ ու կանոնի խախտման մեջ, պահանջելով ազատել դրանց, պատճառաբանելով, որ նրանց մեղսակցութիւնը ապացուցող փաստեր չկան: Պատասխան ելույթում ՆԳ նախարարը հակառակն է պնդում, ասելով, որ իրենք ժամանակին բոլշևիկներին ապաստան են տվել, սակայն ոչ նրա համար, որ վերջիններս այլ գործողութիւնների դիմեն, որ դեռ հուլիս ամսին՝ Բոլուք-Վեդիի կռիվների ժամանակ նրանք տարածել են մի թուուցիկ, որով կոչ են արել չզնայ կռվի, իսկ այնուհետև՝ տեղի են ունեցել

¹⁰⁴⁸ «Աշխատանք» (Երևան), 26 ապրիլի, 1919, N 12: տե՛ս նաև ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 2, գ. 607, ք. 1:

¹⁰⁴⁹ «Հայաստանի աշխատավոր» (Երևան), 26 յունիսի, 1919, N 81:

մի շարք դեպքեր Սարիղամիշ-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի վրա և Ալեքսանդրապոլում: ՆԳ նախարարը տեղեկացնում էր, որ վերջին ժամանակներում Հայաստան եկող մեծամասնականները գալիս են փողի մեծ տոպրակներով՝ քարոզչության նպատակով, ինչը պետք է դիտել որպես Հանցյանք, որի պայմաններում ՆԳ նախարարությունը Հարկադրված է միջոցներ ձեռք առնել բոլոր նրանց դեմ, ովքեր ակտիվ քայլեր են անում պետության անվտանգության և կառավարության դեմ¹⁰⁵⁰: Հանրապետության Համար աղետալի ժամանակաշրջանում, երբ Համարյա Հայկական բանակը անձնատուր էր եղել թուրքերի առաջ, և կնքվել էր ամոթալի զինադադար, 1920 թ. նոյեմբերի 8-ին անգամ ՆԳ նախարարը Երևանի Արտակարգ դատարանին ուղղված գրույթյան մեջ ընդգծում էր, որ քաղաքական բնույթ կրող մի շարք անձինք, և առաջին հերթին որոշ պաշտոնյաներ, թիկունքը քայքայելու Համար ենթակա են Արտակարգ դատարանի, քանի որ Ալեքսանդրապոլի անկման ժամանակ լքել են իրենց պաշտոնները, հեռացել են քաղաքից: ՆԳ նախարարը ավելացնում էր, որ դրանք ձեռքակալված են կառավարության կողմից և պետք է դատվեն: Գրույթյան վերջնամասում ասվում էր, որպեսզի նրանք երկար ժամանակ չզրկվեն իրենց ազատությունից առանց դատաքննության, ինքը խնդրում է շտապ կարգով նշանակել դատարանի կողմից երկու քննիչ՝ նրանց հարցաքննելու Համար¹⁰⁵¹: Այս հանգամանքը ևս վկայում է, որ ՆԳ մարմինները ձգտում էին լուծել կուտակված հիմնախնդիրները, այդ թվում փորձելով նաև կանխարգելիչ քայլեր ձեռնարկել՝ բոլշևիկյան ազդեցությունից պաշտպանվելու Համար, որը օրինականության, կարգ ու կանոնի, անվտանգության ապահովման տեսանկյունից կարևոր էր: Մեկ այլ ցայտուն օրինակ ևս: Երևանի շրջանային դատախազ Մալխազյանը իր գեկուցադրում՝ հասցեագրված Արդարադատության նախարարությունը, գրում էր, որ ոստիկանական աշխատանքը շատ թերի կողմեր ունի, որովհետև «միլիցիայի կազմը պատահական է, նրա պաշտոնատարները կանգնած չեն իրենց կոչման բարձրության վրա»¹⁰⁵² և գալիս արդարացի եզրակացություն, որ «ոչ մի հիշատակություն կուսակցական գործունեության մասին չպետք է առիթ ծառայի, որ մարդասպանության (ոչ քաղաքական) և հափշտակության համար դատապարտվածն ազատվի պատժից»¹⁰⁵³: Դատախազը մի կարևոր նկատառում էլ է արտահայտում, կապված այն հանգամանքի հետ, որ որոշ բանտարկյալներ, չահարկելով բանակում ծառայելու հարցը, այն օգտագործում էին պատժից ազատվելու համար. «Բանտում պատիժը կրելու փոխանակ՝ բանակի շարքերում ծառայելու ցանկությունը, որ հաճախ Հայտնում են պատժապարտները, չի կարող հարգվել, քանի որ գորաբանակը

¹⁰⁵⁰ «Յառաջ», 25 փետրվարի, 1920, N° 41:

¹⁰⁵¹ ՀԱԱ, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 517, մաս III, գ. 122, թ. 1:

¹⁰⁵² Նույն տեղում, Ֆ.Պ - 198, ց. 1, գ. 56, թ. 3-4:

¹⁰⁵³ Նույն տեղում, թ. 4:

Հասարակութեան տականքների տեղը չէ: Եվ քրեական գործերով դատապարտվածների ամեն մի դիմումը պարլամենտին՝ ներում խնդրելու համար ոչ միայն անցանկալի է, այլ ուղղակի՝ անթույլատրելի»¹⁰⁵⁴: Միանգամայն արդարացի գնահատական, որ գուրկ չէ հիմքերից և փաստարկվածութունից: Առաջին Հանրապետութեան միլիցիայի, ՆԳՆ, բանակային համակարգը ստեղծվում էր երկունքի ծանր ցավերով և կրում իր վրա ճակատագրի այն բոլոր հարվածները, որոնք պատմութեան զարգացման անկասելի և անողոք ներքին տրամաբանութեամբ պարտադրվում էին նրան:

¹⁰⁵⁴ Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՎՁՈՒՄՆԵՐԻ ՃՆՇՄԱՆ, ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՈՒ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Մահմեդական բնակչության 1919 թ. Զոդ-բասարգեչարյան խռովության ճնշումը և ՀՀ ազգային-պետական անվտանգության ապահովումը

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության ապահովման տեսանկյունից առավել կարևորություն էր ներկայացնում այն շրջանների հարցը, ուր կառավարության տեսանկյունից հայկական բնակչության իրավունքների և ազատության ոտնահարման ավելի մեծ հնարավորություններ կային, քանզի այնտեղ ապրում էր մեծ թվով մահմեդական բնակչություն, որը հաճախ բողոքովին էլ օրինապաշտ դերքորոշում չունենր Հայաստանի Հանրապետության օրինական իշխանությունների նկատմամբ: Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ ներքին Գործերի նախարարության և կանոնավոր բանակի զորամասերի կողմից ձեռնարկված համատեղ միջոցառումների շնորհիվ, ինչին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև միլիցիոներական ջոկատները, Հայաստանից արտաքսվել է զգալի թվով մահմեդական բնակչություն, որոնք կենտրոնանալով գլխավորապես Հայաստանին հարող սահմանամերձ գոտիներում, դառել էին յուրահատուկ պայթուցիկ լիցքի կրողներ, ստեղծելով խռովարարության օջախներ: Մասամբ հենց դրանով էլ բացատրվում է մահմեդական շարժումների ակտիվացումը ամբողջ 1919 թվականի ընթացքում: 1918 թվականի երկրորդ կեսում - 1919 թվականի սկզբին տեղի ունեցան մահմեդական բնակչության Հայաստանի տարածքից արտաքսման բոլոր քիչ թե շատ նշանակալից դեպքերը, և ընդհակառակը, Ադրբեջանի հայկական շրջաններից դեպի Հայաստան: Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարը 1919 թվականի մարտի 11-ին Ներքին Գործերի նախարարին ներկայացրած զեկուցագրում ընդգծում էր, որ հայ-թուրքական բախումների ողջ ժամանակահատվածում Հայաստանի սահմաններից դուրս են

վտարվել կամ ավելի շուտ արտաքսվել 111560 թաթար, որից 15 հազար քուրդ, որոնցից մինչև այդ պահը ետ էին վերադարձել Հայաստան 29 հազար թաթար, իսկ արտաքսված քրդերը ետ չեն վերադարձել: Զեկուցագրի վերջնամասում Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարը հետաքրքիր տվյալներ էր հաղորդում Ներքին Գործերի նախարարին առհասարակ մահամեղական գյուղերի զբաղվածություն մասին, ընդգծելով, որ Հայաստանի տարածքում մահամեղական բնակչությունից ազատ մահամեղական գյուղերի թիվը հասնում է 248-ի, որոնցից 50-ը ավերված է, իսկ լիովին ազատ 56 գյուղերը զբաղեցվել են փախստական-հայերի կողմից, գլխավորապես Թուրքահայաստանից, Կարսի մարզից եկածներով՝ 142 գյուղ¹⁰⁵⁵: Դրանք պատկերացում են տալիս Հայաստանից դեպի Ադրբեջան մահամեղական բնակչության տեղաշարժերի մասին, որոնք հետևանք էին որոշակի արտաքսման քաղաքականություն, որն իրականացնում էր ՀՀ կառավարությունը, ձգտելով առաջին հերթին սահմանամերձ գոտիներում համեմատաբար միատարր բնակչություն ստեղծել, դրանով իսկ ապահովագրելով իրեն այն վտանգներից, որոնք գալիս էին Ադրբեջանից և Թուրքիայից: Հավանալի է, որ նման քաղաքականությունը պարզապես բխում էր տարածաշրջանում Հայաստանի աշխարհաքաղաքական շահերից, նրա ազգային-պետական անվտանգության ապահովման խնդիրներից:

Բուն Հայաստանի տարածքում ապրող մահամեղական զգալի զանգվածն էլ բավական էր, որ (ըստ *Հովհ. Քաջազնունու* կողմից ԱՄՆ-ի սենատին 1919 թ. նոյեմբերի 10-ին ներկայացված ՀՀ կառավարություն հուշագրի մահամեղականների թիվը [թաթար, թուրք, թուրքմեն, կարափափախ) կազմում էր 588.000 մարդ կամ ողջ բնակչության 27%-ը]¹⁰⁵⁶ ՀՀ կառավարությունը մշտապես գտնվել տազնապալից վիճակի մեջ, մանավանդ, որ գորշ ու մուխ բնազդներ ունեցող զանգվածին փորձում էին կազմակերպել Ադրբեջանից և Թուրքիայից Հայաստան ժամանած լրտեսները, զանազան էմիսարները՝ կեղծ փողերի հսկայական զանգվածով զինված, և դրդել ապստամբություն օրինական իշխանությունների դեմ, սատարելով անջատողական տրամադրությունները: Իսկ այս խնդրում զգալի գործ ունեին անելու բանակային զորամասերը, ՀՀ Ներքին Գործերի նախարարությունը, միլիցիան, որոնք պետք է տեղական իշխանությունների հետ համագործակցելով, ոչ միայն լրջորեն հակադրեին այդ հակահայկական գործողություններին, այլև արմատախիլ անեին դրանք: Առհասարակ մահամեղական շարժումները Հայաստանի Հանրապետության առաջ խնդիրներ էին հարուցում գրեթե ամենուր՝ թե՛ Բասարգեչարում, թե՛ Զանգեզուրում, թե՛ Կարսում և թե՛ առհասարակ:

¹⁰⁵⁵ Տե՛ս նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 44, ք. 16:

¹⁰⁵⁶ Տե՛ս *Յուլի. Քաջազնունի*, Հայաստանի Հանրապետություն, Երեւան, «Մ. Վարան-դեան», 1993, էջ 11:

Մասնագրական ընդվզումներն իրենց զգացնել էին տալիս ամենուր, ուր կար մասնագրական քիչ թե շատ հոծ բնակչություն, որի դեմ հաճախ Ներքին Գործերի նախարարության և միլիցիայի հնարավորություններով պայքարելը դժվարին էր լինում, և այդ խնդիրները լուծելու համար ներգրավում էին զորուժ, որն էլ դրանից ոչ թե ուժեղանում, այլ թուլանում էր՝ մասնակցելով ներքին կռիվներին: Ինքնին հասկանալի է, որ Ներքին Գործերի մարմինները և միլիցիան որոշակի դեր պետք է կատարեին երկրում ներքին կարգ ու կանոնի, օրինականության հաստատման, այն է՝ Հայաստանի տարածքում գտնվող մասնագրական բնակչության ընդվզումների «հանդարտեցման» ուղղությամբ, և օրինական իշխանությունների լիազորությունները ամրապնդելու, երբեմն էլ՝ այն վերահաստատելու համար: Դա շատ ցայտուն դրսևորվել է **Զոդ-բասարգեչարյան խնդրի** առաջացման և հանգուցալուծման ժամանակահատվածում, երբ Ադրբեջանի Հանրապետությունը օգտվելով որոշակի մասնագրական բնակչության կուտակումներից Սեւանա լճի ավազանում և հայ գաղթականության սովալլուկ վիճակի հետևանքով առաջ եկած հայ-թաթարական բախումից, փորձեց հավակնություններ ներկայացնել ՀՀ օրինական տարածքի մի մասի նկատմամբ: Այս մասին **Ռ. Տեր-Մինասյանը** գրում է. «Թաթարները կեդրոն ունենալով Զոդը, Հոն հաստատած էին Ադրբեջանի իշխանությունը եւ ամուր փակած էին Զիւլանշիրի ճանապարհները. Բայագետի շրջանի Բասարգեչարի շրջանում, Սեւանայ լճից հիւսիս մօտ 2000 քառ. վերստ տարածութեան վրայ գտնուող թաթար գիւղերը, որ անմիջապէս կապուած էին Զիւլանշիրի հետ եւ սահմանակից Ադրբեջանին, իրենց յայտարարում էին ոչ թե անկախ, այլ մասը Ադրբեջանի. Հոն նստած էին Ադրբեջանի գործակալներ եւ պաշտօնեաներ, իսկ մէր պաշտօնէութիւնը մուտք չուներ այդ երկրում: Այդ շրջանի կորուստը խիստ վնասակար էր Հայաստանի համար ոչ թե տնտեսական, այլ ռազմական տեսակետից: Ադրբեջանը մտած էր լինում դրանով Սեւանայ լճի աւազանը, նա կապ կարող էր պահել Զոդին վրայով Վեդիբասարի եւ Սադարակի հետ, ուրեմն եւ Տաճկաստանի հետ: Նրա առաջ բաց էին Հայաստանի բոլոր ճանապարհները եւ ուզած ատեն պիտի կարողանար կտրել Դարալագեզի եւ Զանգեզուրի շրջանները, ինչպէս եւ Դիլիջանի եւ Երեւանի շրջանները: Դա մի մուրճ էր բարձրացված հայկական գաւառների գլխին»: Անշուշտ, դժվար է միանշանակ համակարծիք լինել հեղինակի այն մտքի հետ, թե մեր պաշտօնեությունը բոլորովին մուտք չուներ այդ շրջանները, ինչպես նաև այն տեսակետի հետ, որ «այս վտանգի կարեւորությունը հարկ եղած չափով չէր զգացուում կառավարութեան կողմից» և նա իր վիճակը բարելավելու համար այդ գավառամասում զնաց նաև բանակցությունների, ինչը Ռուբենը կարծես թե աննպատակահարմար տարբերակ էր համարում, և այնուամենայնիվ պետք է նկատել, որ առկա ռազմաքաղաքական ռեսուրսների և հնարավորությունների պայմաններում, թերևս ՀՀ կառավարու-

թյունն ավելի ճիշտ էր՝ գնալով այդ նպատակահարմար տարբերակին և փորձել կնճիռը հանգուցալուծել նման եղանակով¹⁰⁵⁷:

Ադրբեջանա-թուրքական այդ նպատակադրումները քիչ թե շատ ունայ զգացել են նաև ՀՀ ուժային-զինվորական կառույցներում, մասնավորապես հատուկ ծառայություններում՝ հետախուզությունում և հակահետախուզությունում, որի ղեկավարները երբեմն կառավարությունը մատուցում էին անհրաժեշտ տեղեկատվություն հանրապետության տարածքում տեղի ունեցող անց ու դարձի մասին: Սևանի ավազանի և Հայաստանի շուրջը ստեղծված այդ իրավիճակը լավ է ներկայացնում Տ. **Դեվոյանցը**. «Հետագայ դէպքերը հետեւանք են մահմեդականների այն ծրագրի գործադրութեան, որով Ազերբեյջանը պէտք է միանար Թուրքիայի հետ եւ Հայաստանը պէտք է չէզօքացուէր, սահմանափակուելով Սեւանայ լճով, Երեւանով ու Ալեքսանդրապոլով: Միեւնոյն ժամանակ բացարձակ կերպով պարզուում է գոյութիւն ունեցող լրիւ կապը Ազերբեյջանի եւ Տաճկաստանի գործողութիւնների մէջ ու Ազերբեյջանի ղեկավարողի դերը բոլոր այն թշնամական գործողութիւնների մէջ, որ ուղղւած են անմիջականօրէն Հայաստանի դէմ այն միջոցին, երբ Թուրքիան ժամանակաւորապես աւելի զբաղուած է իր ներքին գործերով եւ Փարսիի խորհրդածողովի որոշումներին դիմադրելու կազմակերպութեամբ»¹⁰⁵⁸:

Հարկ է այս կապակցութեամբ նշել, որ տազնապալից նախանշանները, դատելով միլիցիայատերի, գավառապետերի և զինվորական մարմինների միջև եղած գրագրությունից, իրենց զգացնել են տվել դեռևս 1918 թ. դեկտեմբերին - 1919 թ. հունվարին, մի քանի ամիս առաջ՝ մինչև հայտնի Զոդբասարգեչարյան մահմեդական ընդվզումները իշխանությունների դեմ, երբ թաթարական բեկերի հրահրմամբ բնակչությունը հայտարարում է, որ միանում է Ադրբեջանին: Ստեղծված իրավիճակում Երևանում նստած հայկական իշխանությունները իրավիճակի նկատմամբ փորձում էին պահպանել վերահսկողությունը, գապել հնարավոր հակահայկական մահմեդական ընդվզումները և դա իրագործելու համար էլ պատժիչ զորամասերի ուղարկումը տվյալ շրջան դարձավ ոչ հազվադեպ երևույթ: 1918 թ. աշնանը Երևանից եկած պատժիչ զորամասը հայկական գյուղերում հարկահավաքութեան խնդիրը լուծելուց հետո մտավ Բասարգեչարի շրջան. հայտնի է, որ անդրկովկասյան հանրապետությունների ստեղծումից հետո Զոդ գյուղի բնակիչ, շրջանի նախկին գավառական կոմիսար Աբբաս Ալի բեկը, փորձեց Բասարգեչարի շրջանը միացնել Ադրբեջանի Հանրապետությանը: Այդ նպատակի իրագործման նպատակով շարքային ժողովրդից հավաքելով 60.000 ու., Ադրբեջանը միաժամանակ մի քանի ազդեցիկ թուրքեր գործուղեց Գանձակ,

¹⁰⁵⁷ Տե՛ս Ռայքեմ, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Է. հատոր, էջ 210, 326-327:

¹⁰⁵⁸ Տիգրան Դեյոնանց, Կեանքիս դրուագներից // «Հայրենիք» (Բոստոն), 1945, N° 5 (250), Սեպտ.-Հոկտ., էջ 96:

որպեսզի հպատակութուն արտահայտեն աղբբեջանական իշխանութիւններին՝ ակնկալելով վերջիններին հովանավորութիւնը և անմիջական ռազմական օգնութիւնը: Հնարավոր առճակատումը խողաղ եղանակով հանգուցալուծելու նպատակով Նոր Բայազետի գավառական կոմիսարը վերընշյալ Աբբաս Ալի բեկին կանչում է Նոր Բայազետ, սակայն վերջինս մերժում է, բացահայտ հայտարարելով, որ ինքը չի ճանաչում գավառային կոմիսարի իշխանութիւնը: Այս ամենի հետեանքն այն է լինում, որ Բասարգեչար է ժամանում վերը նշյալ պ. Տիգրան Բաղդասարյանի պատժիչ զորամասը. վերջինս իր մոտ է կանչում թուրքական գյուղերի ներկայացուցիչներին և հայտնում հայկական կառավարութեան որոշումը՝ զինաթափել ՀՀ տարածքում ապրող ժողովրդին, պահանջելով երեք օրվա ընթացքում հանձնել ունեցած զենքերը և հարկերը, հակառակ դեպքում սպառնալով ռմբակոծել գյուղերը¹⁰⁵⁹: Սակայն անցնում է 3 օր և թուրքերը պատրաստակամութիւն չեն արտահայտում հպատակվել հայկական իշխանութիւններին, ինչն էլ դրդում է պատժիչ զորամասին անցնել գործի և ռմբակոծել Մ. Մազրա գյուղը, որից հետո մահմեդական բնակչութիւնը, թնդանոթի ձայնից ահաբեկված սպիտակ դրոշով ներկայանում է պ. Տիգրան Բաղդասարյանին, հանձնելով զենքը և հարկերը, այդ թվում 20.000 ռ. և 400 զենք, խոստանալով տալ նաև պետական հացահատիկը, որից հետո պատժիչ զորամասը, 1918 թ. նոյեմբերի 12-ին ուղևորվում է դեպի Երևան¹⁰⁶⁰: Այսպես, հայկական զորքերի հայտնվելու սպառնալիքի վտանգի տակ տեղական թաթարները համաձայնվում են հպատակվել իշխանութիւններին՝ հանձնելով 450 հրացան, որին հետևում է հարկերի ավելացումը, ինչը անհետեանք չի անցնում, քանզի հայկական իշխանութիւնները չեն հապաղում դրանից օգտվել ևս մեկ անգամ՝ 1919 թ. փետրվար-մարտյան իրադարձութիւնների ժամանակ: Այդ հանգամանքին ավելանում է նաև սովալլուկ և գազազած գաղթականութեան առկայութիւնը թաթարական բնակավայրերի մոտակայքում¹⁰⁶¹: Այսպես, 1919 թ. հունվարի 31-ին Նոր Բայազետի գավառական կոմիսար Ծահինյանը Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին ուղղված հեռագրում հայտնում էր վերջինիս, որ մոտ 1000 զինված փախստական հայեր Բասարգեչարի շրջանում, կատարել և շարունակում են հարձակումներ կատարել մահմեդական գյուղերի վրա, որի պատճառով այնտեղ է ուղարկվել միլիցիայի պետը¹⁰⁶²: Փետրվարի 6-ին Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարից Նոր Բայազետի գավառային կոմիսարը պատասխան հեռագիր է ստանում, որում պահանջվում էր անհապաղ Վճռական միջոցներ ձեռնարկել կանխելու համար այն ամենը, ինչ կա-

¹⁰⁵⁹ Տե՛ս «Զանգ». N 78, 11 դեկտեմբերի 1918 թ.

¹⁰⁶⁰ Տե՛ս նոյն տեղում:

¹⁰⁶¹ Տե՛ս «Кавказское слово» (Тифлис), 7 декабря, 1918, № 265:

¹⁰⁶² Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, թ. 4:

տարվում էր շրջանում և անկարգութիւնների մեղավորներին ենթարկել դատական խիստ պատասխանատուութեան և ձեռնարկված միջոցների մասին հայտնել¹⁰⁶³: Սակայն դատելով որոշ փաստաթղթերից, իրադարձութիւնները դուրս են եկել վերահսկողութիւնից և սկսել են այլ սցենարով զարգանալ: Անվերահսկելի դառնալով, դրանք ստեղծել են նորանոր խնդիրներ, որի ընթացքում էլ, ինչպես ընդգծվում էր ՀՀ Արտաքին Գործերի նախարարի 1919 թ. փետրվարի 18-ի հեռագրում՝ ուղղված մինիստր-նախագահին, «...տեղական ադմինիստրացիան ցույց է տվել հանցավոր անփութութիւն և ասպիկարութիւն»¹⁰⁶⁴: Սակայն իրադարձութիւնները բացատրել միայն վարչակազմի անճարակութեամբ և այլնով, կլինի միակողմանի: Այստեղ կարևոր է վերհանել այդ իրադարձութիւնների սոցիալ-տնտեսական շարժառիթները, որոնք լրացուցիչ ազդակ հանդիսացան հայտնի դեպքերի համար, ինչից էլ օգտվեցին Ադրբեջանի հավակնոտ մահմեդական առաջնորդները, որոնք լարվածութիւն մտցրին տարածաշրջանում: Որոշակի տվյալներից պարզ է դառնում, որ 1919 թ. հունվարի վերջերին Բասարգեչարի շրջանում փախստական սովալլուկ հայերի ամբոխը ահապոր սովից հուսահատված հարձակում է գործում թաթարներով բնակեցված Վերին Զազալու, Ղըզըլ-Վանք և Սուբբուտան բնակավայրերի վրա, որի հետևանքով թաթարները փախչում են հարևան գյուղերը: Վարչակազմի կողմից ձեռնարկված միջոցների շնորհիվ, դիվիզիոնի ռոտմիստր Սիլիկյանի եռանդուն աջակցութեամբ փախստականները հանդարտվում են, մասամբ զինաթափվում, թաթարական գյուղերը ազատվում են այն զբաղված փախստականներից, վարչակազմը սկսում է թաթարներին տեղաբաշխել տեղերում՝ վերադարձնելով կողոպտված ունեցվածքը և ձեռնամուխ է լինում մեղավորներին պատասխանատուութեան ենթարկելու գործին: Այդ ընթացքում երկու սպա՝ *ռոտմիստր Սիլիկյանը և կոռնետ Սաջատուրովը* թաթարների հետ գնում են գյուղերը՝ բնակիչներին հանդարտեցնելու համար¹⁰⁶⁵: Իրադարձութիւնները սակայն արդեն դուրս են գալիս Բասարգեչար գյուղի միջավայրից և դառնում ազգամիջյան փոխհարաբերութիւնների լարվածութեան լուրջ օբյեկտ: Դրութիւնը բարդանում էր նաև նրանով, որ ինչպես այդ մասին իր ժամանակին ընդգծել էր դիվիզիոնի հրամանատար ռոտմիստր *Սիլիկյանը գեներալներ Սիլիկյանին և Փիրումյանին* ուղղված հեռագրում, իրադարձութիւնները սպառնում էին լուրջ բնույթ ընդունել Ադրբեջանի սահմանի մոտիկութեան հետևանքով¹⁰⁶⁶:

1919 թ. փետրվարի 12-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է Արտաքին Գործերի նախարարի գեկուցումը Ադրբեջանի Արտաքին Գործերի

¹⁰⁶³ Նույն տեղում, ք. 8:

¹⁰⁶⁴ Նույն տեղում, ք. 110:

¹⁰⁶⁵ Նույն տեղում, ք. 115:

¹⁰⁶⁶ Նույն տեղում, ք. 22:

նախարարից ստացված հեռագրի մասին, որով վերջինս հաղորդում է, որ իբր թե հայկական գործառնաբերը Սևանա լճի մոտակայքում անցնելով Ադրբեյջանի սահմանը, հարձակվել են մի քանի թուրքական գյուղերի վրա և կատարել են ճնշումներ ու հափշտակություններ, ուստի ինքը խնդրում է նման երևույթների դեմն առնել և մեղավորներին դատի ենթարկել, հակառակ դեպքում, Ադրբեյջանի կառավարությունը իրեն պատասխանատու չի համարի բոլոր այն գործողությունների համար, որ կարող են տեղի ունենալ թուրք ազգաբնակչության կողմից: ՀՀ Նախարարների խորհրդի նիստում ընդունված որոշման մեջ ընդգծվում է հետևյալը. « Ի նկատի ունենալով Զինվորական նախարարի զեկուցումը, որ հեռագրում մատնանշված շրջանում հայկական գործառնաբեր չկան, որ դա կարող է մասնավոր «խումբերի» հարձակում լինել, Ներքին Գործերի նախարարին հանձնարարական է տալիս անհապաղ խիստ քննություն նշանակել՝ հեռագրի մեջ հիշված հարձակումների և ճնշումների իսկությունը պարզելու և հանցավորներին պատասխանատվության ենթարկելու համար»¹⁰⁶⁷: 1919 թվականի փետրվարի 18-ին Նախարարների խորհուրդը իր հերթական նիստում լսում է այս խնդրի մասին՝ կապված Բասարգեչարի շրջանում մահմեդական շարժման ակտիվացման հետ և հանձնարարում է ՆԳ նախարարին քննություն կատարել տեղական վարչակազմի գործունեության մասին¹⁰⁶⁸: Շուտով ավելանում են նոր փաստեր, որոնք հիմք են տալիս կառավարությունը զալ ավելի իրատեսական և ամբողջական պատկերացումների Զողի շրջանում առաջացած խնդրի վերաբերյալ: Դա հստակորեն երևում է Արտաքին Գործերի նախարար **Ս. Տիգրանյանի** 1919 թ. փետրվարի 18-ի պաշտոնագրից (N^o 305)՝ ուղղված մինիստր-նախագահին. «Ադրբեյջանի կառավարության միջամտության առիթ դարձած Բասարգեչարի շրջանի անցքերը որոշ չափով արդեն պարզվիլ ին: Բացի մասնավոր անհատներից, որոնք կատարել են այդ հանցագործությունը, և կրելու են օրինական պատիժը, ես հարկ եմ համարում կառավարության հատուկ ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ըստ կարևորություն, տեղական ազմինիստրացիան ցույց է տվել հանցավոր անփութություն և ասպիկարություն: Անհրաժեշտ իմ համարում, որ այդ կառավարիչները խիստ դատի կանչվին, պատժի ենթարկվին, և թերևս հեռացվին պետական պաշտօնեությունից, իսկ դիվիզիոնի հրամանատար ռուսիստր Սիլիկյանը, որի միջամտությամբ է վերականգնվել կարգն ու խաղաղությունը, արժանացվի կառավարության շնորհակալություն: Խնդրում եմ մատակարարել ինձ մանրամասն և ստույգ տեղեկություններ անցքի շարժառիթների,

¹⁰⁶⁷ Նոյն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 25; գ. 100 (43), ք. 26; Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 486, մաս I, ք. 37:

¹⁰⁶⁸ Նոյն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 28; գ. 96, ք. 27:

բնույթի մասին, որպեսզի կարողանամ իրազեկ առնել թե՛ բրիտանական գլխավոր հրամանատարությունը, և թե՛ Ադրբեջանի կառավարությունը»¹⁰⁶⁹:

Արդեն ՀՀ Արտաքին Գործերի նախարարի փետրվարի 18-ի հեռագրից (№ 304)¹⁰⁷⁰ ուղղված Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարին, պարզ է դառնում, որ փետրվարի կեսերին հայկական զինուժի ձեռնարկված եռանդուն գործողությունների հետևանքով, որին մասնակցել էին նաև տեղական վարչակազմը և Ներքին Գործերի մարմինները, թաթարները հետ էին շարժվել դեպի իրենց բնակավայրերը, նրանց կողմից կողոպտված ունեցվածքը Զոդի շրջանում ետ է վերադարձվել, իսկ մեղավորները սկսել են քննվել՝ դատական կարգով պատասխանատվության ենթարկելու համար¹⁰⁷¹: Քիչ անց, Արտաքին Գործերի նախարարութայն ղեկավարի սույն գրությունը Բասարգեչարի շրջանի դեպքերի քննություն կատարելու մասին, ուղարկվում է Ներքին Գործերի նախարարին, որի մասին վերջինիս տեղյակ է պահում Նախարարների խորհրդի գործերի կառավարիչը 1919 թ. փետրվարի 20-ի գրությամբ (№ 419)¹⁰⁷¹: Այդ ընթացքում, փետրվարի 24-ին Սիլիկյանը դիվիզիոնի հետ գնում է Մազրա գյուղը, ուր թաթարները ներկայանում են աղ ու հացով, վստահեցնելով, որ իրենք արդեն հանդարտվել են, և որ դիվիզիոնը կարող է գալ իրենց մոտ: Երեկոյան Սիլիկյանը գնում է Բասարգեչար, և փետրվարի 25-ի առավոտյան 1-ին էսկադրոնով և 2-րդ էսկադրոնի կեսով վերադառնում Փոքր Մազրա գյուղը: Իսկ փետրվարի 25-ին, առավոտյան, 1-ին էսկադրոնը ռոտմիտր Սիլիկյանի և կոռնետ Խաչատուրովի հետ վերադառնում են Բասարգեչար գյուղը, իսկ դիվիզիոնի հրամանատար Սիլիկյանը իր համհարզ Շիմկեիչի հետ և կիսաէսկադրոնով մեկնում են Զոդ, ուր իջևանում են Ագիլյար Սամանդ Ադա Քեսամասկի անունով թաթարի մոտ: Այստեղ ռոտմիտր Սիլիկյանը գյուղացիներին հայտարարում է, որ դիվիզիոնի համար թաթարները պետական գներով նախապատրաստեն խոտ, ցորեն և գարի: Թաթարները խոստանում են իրար հետ խորհրդակցել և առավոտյան պատասխանել: Փետրվարի 27-ի առավոտյան, Զոդ գյուղի պատվելիները հայտարարում են ռոտմիտր Սիլիկյանին, որ հրաժարվում են տալ պահանջվող անասնակերը և հացը: Ռոտմիտր Սիլիկյանի համառ պահանջները ազդանշան հանդիսացան թաթարների կողմից նախահարձակ լինելու համար: Գյուղի թաթարների տներում տեղաբաշխված զինվորները՝ թվով 11 մարդ սպանվում են: Իսկ փետրվարի 28-ին ՀՀ Տարածքի վարչակազմի և միլիցիայի կոմիսարը Նոր Բայազետի գավառական կոմիսարին հրահանգ է տալիս տեղամասային քննիչի հետ անձամբ գնալ դեպի վայրը, անցկացնել հետաքննություն, պարզել մեղավորներին և տեղամասային տեսուչի, հասարակական գյուղական կոմիսարների, միլիցիո-

¹⁰⁶⁹ Նոյն տեղում, գ. 20, ք. 31:

¹⁰⁷⁰ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 211, մաս I, ք. 27:

¹⁰⁷¹ Նոյն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 20, ք. 35:

ներների ներկայութեամբ ու մասնակցութեամբ ձեռնարկել նրանց, անհրաժեշտութեան դեպքում դիմելով նաև զորքի օգնութեանը, չթույլատրելով սակայն գործին ներգրավել մահմեդական փախստականներից ներկայացուցիչ՝ խուսափելով նոր խռովութեան հրահրման վտանգից և բռնութեաններից: Միաժամանակ Ն ԳՆ Հանձնարարութեամբ դեպքի վայրն է գործուղվում դատախազի օգնականը՝ հետաքննութեանը ղեկավարելու և կարգ ու կանոնը վերականգնելու համար¹⁰⁷²:

1919 թ. մարտի 1-ին կրկին՝ Նախարարների խորհրդի հերթական նիստում լավում է Ներքին Գործերի նախարարի ղեկուցումը Բասարգեչարի շրջանի Զոդ գյուղում տեղի ունեցած դեպքերի մասին, որը վերաբերում է Ղարաբաղի հեծյալ գնդի սպաների և զինվորների սպանութեանը: Հանգամանակից քննարկելով ստեղծված իրադրությունը, Նախարարների խորհրդի նիստը որոշում է կազմել մի արտակարգ քննիչ Հանձնաժողով Արդարադատութեան նախարարութեան ներկայացուցիչների նախագահութեամբ, Զինվորական և Ն Գ նախարարութեանների ներկայացուցիչների մասնակցութեամբ, Հանձնարարել անմիջապես քննութեան կատարել տեղի ունեցած դեպքերի մասին՝ համաձայն ստորև բերված հրահանգների. 1) Արտակարգ քննիչ Հանձնաժողովը կազմվում է ՀՀ դատախազի օգնականի նախագահութեամբ, հատուկ գործերի քննիչից և Ներքին Գործերի ու Զինվորական նախարարութեանների մեկական ներկայացուցիչից, 2) Արտակարգ քննիչ Հանձնաժողովը ուղարկվում է Նոր Բայազետի գավառի Զոդ գյուղում փետրվարի վերջերին տեղի ունեցած դեպքերի պատճառները քննելու համար, որի հետևանքը եղել է հեծյալ ղեկիզիտնի 4 սպաների և մոտ 80 զինվորների սպանութեանը, պարզելու մեղավորների անձնավորութեանները և բանտարկելու ու Նոր Բայազետի բանտն ուղարկելու այն անձնանց, ովքեր որևիցե առնչութեան են ունեցել այդ հանցագործութեան հետ, 3) Թուրքերի կողմից՝ հայերի բռնութեանների մասին գանգատներ լինելու դեպքում Արտակարգ քննիչ Հանձնաժողովը պարտավորվում է միաժամանակ քննել և այդ գանգատները, պատասխանատվութեան ենթարկել մեղավորներին, 4) քննութեան ժամանակ նորմալ պայմաններ ստեղծելու նպատակով Հանձնաժողովի պահանջով քննութեան տեղը պիտի ուղարկվեն և Հանձնաժողովի տրամադրութեան տակ դրվեն բավականաչափ միլիցիոներական և զինվորական ուժեր, 5) եթե անհրաժեշտ համարվի, հասարակութեան կամ որևէ կազմակերպված խմբակի կողմից հանձնաժողովի զբաղմունքները խանգարելու դեպքում՝ արտակարգ միջոցների դիմելու պարագայում Հանձնաժողովը պարտավոր էր հեռագրով այդ մասին հայտնել Կառավարութեանը՝ նրանից ցուցմունքներ ստանալու համար¹⁰⁷³:

¹⁰⁷² Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 115:

¹⁰⁷³ Նոյն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100(43), ք. 34; գ. 96, ք. 33; Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 486, մաս I, ք. 58:

Դատելով զանազան փաստաթղթերից, Հայկական կառավարութունը ջանք չէր խնայում խուսափել թաթարների հետ ռազմական առճակատումից և օգտագործում էր բոլոր հնարավորութունները: Այդ մասին շեշտում է շտաբս-ռոտմիսոր Կուզրյավցևը Նոր Բայազետից 1919 թ. մարտի 5-ին Երևան գեներալ-մայոր Սիլիկյանի, գեներալ-մայոր Փիրումյանի և Հայաստանի Տարածքի կոմիսարի Հասցեով ուղարկված հեռագրում, որում նշվում է, որ մարտի 4-ին ժամը 20-ին ինքը՝ գավառային կոմիսարը, քննիչի հետ մեկնում են թաթարներով բնակեցված այդ շրջանը՝ վերջին խաղաղ փորձ անելու՝ միջադեպը հարթելու ուղղությամբ, սակայն դիմավորվում են հրացանազարկով: Կուզրյավցևը ելնելով դրանից, նշված գրությամբ համարում էր խնդրում, ընդգծելով, որ առանց թնդանոթների խնդիրն անլուծելի է, և մեծ կորուստների առաջ կկանգնեցնի: Կուզրյավցևը բողոքում էր նաև պարենամթերքների պակասից, և խնդրում էր հետագա հրահանգներ¹⁰⁷⁴:

Այդ տազնապալից վիճակին էր անդրադառնում գավառային կոմիսար Ծահիբյանը, իր մարտի 5-6-ի հեռագրում՝ ուղղված գեներալ Սիլիկյանին, որում գտնում էր, որ մահմեդականներին օրինական իշխանութուններին ենթարկեցնելու համար անհրաժեշտ է այդ շրջանը ուղարկել պատժիչ ջոկատ՝ թնդանոթներով զինված, ավելացնելով նաև, որ Ղարաբաղյան դիվիզիոնում կա ընդամենը 200 սվին, իսկ հրետանարկեր բոլորովին չկան¹⁰⁷⁵: Սրան որպես պատասխան, Զինվորական նախարար Հախվերդյանը 1919 թ. մարտի 7-ին գավառական կոմիսարի այս գրությունը ուղարկելով մինիստր-նախագահին, միաժամանակ անհրաժեշտ գտավ ընդգծելու, որ անհրաժեշտ է Նոր Բայազետ ուղարկել մեկ գումարտակ և երկու թնդանոթ, հաշվի առնելով թաթարների հնարավոր դիմադրութունը: Զինվորական նախարարը ասվածին նաև ավելացրել էր, որ գնդապետ Կ. Թեմպերլեյը իր հետ ունեցած գրույցում համաձայնվել է այն տեսակետի հետ, որ անհրաժեշտ է զինված ուժ օգտագործել, եթե թաթարները Քինչական հանձնաժողովին չթույլատրեն մեկնելու դեպքի վայրը¹⁰⁷⁶:

Կառավարության և զինվորական իշխանութունների որդեգրած կուրսի մասին կարելի է հստակորեն դատել նաև մեկ այլ փաստաթղթից, որի հեղինակը գեներալ-մայոր Սիլիկյանն է: Այսպես, 1919 թ. մարտի 7-ին Հայկական դիվիզիայի պետ Սիլիկյանը շտապ գաղտնի գեկուցագրով (№ 0014) դիմում է ՀՀ Զինվորական նախարարին, որում անդրադառնում է նաև զորյան խնդրին: Դրանում Սիլիկյանը ի դիտութուն նշելով գնդապետ Ա. Ծնեուրի ուղիղ հեռագրութելով իրեն հաղորդած այն տեղեկության մասին, որ Սեմյոնովսկու լեռնանցքը ծածկված է ձյունով, միաժամանակ նշում էր, որ գեներալ Փիրումյանը դեռևս գտնվում է Նոր Բայազետում, սպասելով

¹⁰⁷⁴ Նոյն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 64, ք. 3:

¹⁰⁷⁵ Նոյն տեղում, գ. 27, ք. 85:

¹⁰⁷⁶ Նոյն տեղում:

նոր զորաջոկատի ժամանմանը, որպեսզի միանգամից վճռական տոնով խոսի, հակառակ դեպքում տպավորութիւնը թաթարների վրա թույլ կլինի, քանզի թաթարները կազմակերպվում են: Սիլիկյանն ընդգծում էր, որ ըստ գեներալ-մայոր Դանիել Բեկ-Փիրումյանի կարծիքի, թաթարների հետ բախումն անխուսափելի է: Ըստ վերջինիս, ռոտմիտր Սիլիկյանի սպանութեան մասին գործը կունենա միայն քաղաքական նշանակութիւն, և հանձնաժողովն ուժեղացնելու անհրաժեշտութիւնը կզգացվի, ուղարկելով հատուկ հրահանգավորումով՝ ընտրելով առավել լուրջ հասարակական գործիչներին¹⁰⁷⁷:

Ձող գործուղված Արտակարգ քննիչ Հանձնաժողովին տրված հրահանգում, որի տակ ստորագրել են Արգարադատութեան նախարար Հարութիւնովը, ՆԳ նախարարի պաշտոնակատար *Մանասյանը* և Զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանը, ասվում էր, որ Հանձնաժողովը գործուղվում է Նոր Բայազետի գավառի Ձող գյուղը՝ փետրվարի վերջերին այնտեղ տեղի ունեցած իրադարձութիւնների հանգամանքները հետաքննելու համար, որի հետևանքով սպանվել են Ղարաբաղյան հեծյալ ղեկիչինի 4 սպա և 30 զինվոր, պարզելով նաև մեղավորների անձնավորութիւնները և ընդհանրապես այդ հանցագործութեան հետ առնչվող բոլոր հանգամանքները: Հրահանգում նաև ասվում էր, որ եթէ կլինեն հայտարարութիւններ նաև թաթարների կողմից հայերի վերաբերյալ և նրանց կողմից կատարված բռնութիւնների մասին, սպա քննչական Հանձնաժողովը պարտավոր է միաժամանակ հետաքննել այդ բողոքները և մեղավորներին պատասխանատվութեան ենթարկել¹⁰⁷⁸: Համապատասխան հրահանգներով գինված, Արտակարգ քննիչ Հանձնաժողովը մարտի 8-ին ժամանում է Բասարգեչար և ձեռնամուխ լինում անմիջական պարտականութիւնների կատարմանը դեպքի վայրում: Արտակարգ քննիչ Հանձնաժողովը երկու մահմեդականի է ուղարկում Ձող՝ առաջարկելով մարտի 10-ին ներկայանալ Բասարգեչար՝ տեղի ունեցածի հանգամանքները պարզելու, քննութեան կարգը մշակելու և գործառույթը վարելու: Բանակցութիւններն ընթանում են մարտի 11-ին Մազրա գյուղում: Արտակարգ քննիչ Հանձնաժողովը առաջարկում է հանձնել սպանված սպաների և զինվորների դիերը, ունեցվածքը, գենքերը, ձիերը, փաստաթղթերը, դիվիզիոնի դրոշը և այլն, վերապահութիւն անելով այն մասին, որ միայն այդ դեպքում Քննչական Հանձնաժողովը կհամաձայնվի մտնել Ձող գյուղը՝ գործի պատճառների, շրթառիթմների և հետևանքների անաչառ ու օբյեկտիվ հետաքննութիւնը անցկացնելու համար: Արտակարգ քննիչ Հանձնաժողովը իր բարոյական պատիվը համարեց նաև ընդգծելու, որ այդ ամենը անհրաժեշտ է, որպեսզի խուսափեն հատուկ միջոցների, և մասնավորապես զինվորական-ուսումնական ուժի գործադրումից:

¹⁰⁷⁷ Նույն տեղում, գ. 64 (48), ք. 2:

¹⁰⁷⁸ Նույն տեղում, ք. 4:

Այդ ամենին զուգահեռ, ՀՀ կառավարութիւնը պաշտոնազրով դիմում է Երևանում գտնվող Բրիտանական զինվորական ներկայացուցչությանը, վերջինս մարտի 12-ին իր սպային գործուղում է Բասարզեչար, որպէսզի անձամբ համոզվի, թէ ինչքանով օրինապաշտ են հայկական իշխանութիւնները մասնեղական համայնքի նկատմամբ, և ինչքանով են պատճառաբանված և հիմնավորված հայկական իշխանութիւնների կողմից ձեռնարկված գործողութիւնները¹⁰⁷⁹: 1919 թ. մարտի 17-ին Նախարարների խորհուրդը դարձյալ անդրադառնում է Բասարզեչար-Զողջան խնդրին, լսելով մինիստր-նախագահի զեկուցումը Զողջուղը պատժիչ գործնառու ռզարկելու մասին: Նիստում որոշվում է. 1) Քննիչ Հանձնաժողովը թողնել տեղում, որպէսզի Հնարավորութիւն ստեղծվելուն պես նա անմիջապէս անցնի գործի, 2) Հանձնարարել Զինվորական նախարարին կարգադրութիւն անելու գեներալ Փիրումյանին, որ նա հարկ եղած դեպքում անմիջապէս իր հայեցողութեամբ, որոշակի նախապատրաստութիւններ տեսնելուց հետո՝ զինվորական ուժը շարժի դեպի ապստամբ վայր¹⁰⁸⁰: Մարտի 17-ին դեպքի վայր է ժամանում Բրիտանական զինվորականութեան ներկայացուցիչը և լսելով Արտակարգ քննիչ Հանձնաժողովի զեկուցյը, թաթարների միջոցով նամակ է ուղարկում՝ պահանջելով թաթարների ներկայացուցիչներին անհապաղ ներկայանալ իր մոտ՝ Բասարզեչար՝ բանակցութիւնների համար, սակայն բանագնացները չեն վերադառնում ետ, և ստիպված բրիտանական սպան ետ է վերադառնում¹⁰⁸¹: Թաթարները Զողի շրջանում կենտրոնացնում են զգալի թիվով զինված ուժեր՝ զինված հրացաններով ու գնդացիներով, նախապատրաստվելով ռզգմական լուրջ գործողութիւններին, այդ լուրջ իրադարձութիւններից առաջ էվակուացնելով իրենց ընտանիքներին, ունեցվածքը, երեխաներին, դրան զուգահեռ հարևան գյուղերի երիտասարդութեանը կենտրոնացնելով Զողի շրջանում¹⁰⁸²: 1919 թ. մարտի 20-ին քննարկվում է մինիստր-նախագահի զեկուցումը Զողի դեպքերի առթիվ: Ընդունված որոշման մեջ նախարարների խորհուրդը հանձնարարում է. ա) Հայտադիր ուղարկել Ադրբեջանի կողմից հայկական սահմանը զինված խմբեր ուղարկելու և անցնելու առթիվ, բ) Հանձնարարել Զինվորական նախարարին գեներալ Փիրումյանին կարգադրելու, որ վերջինս Նոր Բայազետից դուրս գալուց առաջ ուղիղ հեռադրարով կապվի ու խոսի Երևանի հետ, գ) Հանձնարարել Արտաքին Գործերի նախարարին՝ Զողի դեպքերի մասին հրապարակում տալ մամուլում¹⁰⁸³:

¹⁰⁷⁹ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 115:

¹⁰⁸⁰ Նոյն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 486, մաս I, ք. 69; Ֆ.Պ -1 99, ց. 1, գ. 96, ք. 45:

¹⁰⁸¹ Նոյն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 115:

¹⁰⁸² Նոյն տեղում:

¹⁰⁸³ Նոյն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 48:

Հարցի որոշ կարևոր մանրամասներ՝ կապված Ջոզի շրջանում մահամեղական շարժման ակտիվացման հետ, ակնհայտ են դառնում նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարի 1919 թ. մարտի 22-ի հեռագրից (N^o 794)¹⁰⁸⁴ ուղղված Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարին (պատճենը՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին՝ Բաքվում): Դրանում ՀՀ Արտաքին Գործերի նախարարը շեշտում էր, որ վերջին ժամանակներում Ջոզ գյուղի շրջանում գյուղացիները սպանել են 4 սպայի և Ղարաբաղյան երկրորդ հեծյալ դիվիզիոնի ավելի քան 10 զինվորի, ընդգծելով, որ կառավարության կողմից ուղարկված Քննչական հանձնաժողովին դիմավորել են հրացանային համազարկով, և իշխանություններին հակառակվելը օժանդակվել է Ադրբեջանի տարածքից այդտեղ ժամանած զինված անձանց կողմից: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը գտնելով միանգամայն անթույլատրելի զինված անձանց անցումը Ադրբեջանի տարածքից Հայաստանի տարածք, ընդգծում էր, որ իր կառավարության հանձնարարությամբ ինքը եռանդուն բողոքում է նման գործողությունների դեմ և խնդրում շտապ կարգադրություններ անելու, որպեսզի տեղական վարչական իշխանությունները Ադրբեջանի քաղաքացիներին ետ պահեն զինված ելույթներից և Հայաստանի տարածքում կարգը խախտելուց¹⁰⁸⁴:

Ջոզյան հանգուցյը խնդիրներ է ստեղծում հայ-ադրբեջանական ողջ սահմանի երկայնքով, վառողալիցք լցնում դիվանագիտական հարաբերություններում, լարվածություն մտցնում նաև սահմանային շրջանների Ներքին Գործերի մարմինների և միլիցիայի աշխատանքներում, բանակային գործողություններում և այլն: Ինչպես պարզվում է գեներալ Բաղդասարովի Ղարաբաղի սպայից Երևան՝ հրամանատարին ուղարկված 1919 թվականի մարտի 21-ի հեռագրից (N^o 0229), որը հենված էր տեղերից ստացված գործակալական հետախուզական տվյալների վրա, իրավիճակը վատացել էր նաև Բաշքենդի շրջանում՝ կապված Ջոզում կատարված սպանությունների հետ: Հեռագրում հաղորդվում էր այն մասին, որ թաթարները նախապատրաստվում են, գյուղերում տեղի են ունենում հավաքներ՝ Ջոզի իրենց հայրենակիցներին օգնություն կազմակերպելու նպատակով: Ասվում էր նաև, որ Ադրբեջանի Գեղաբեկի շրջանից ուղարկվել է 200 մարդ, իսկ Ջեզամի կիրճով անցկացվել է երկու թնդանոթ և երկու գնդացի, չին կարողացել տեղափոխել մեկ լեռնային թնդանոթ, որը թողել են Շախթալ գյուղում: Դրանում ընդգծվում էր նաև մի հետաքրքիր մանրամասնի մասին, որ նշանառուները ռուսներ և վրացիներ են¹⁰⁸⁵: Մի այլ հեռագրից, որի հեղինակը միլիցիոն գնդի հրամանատար շտաբ-կապիտան Մկրտիչյանն է, հայտնի են դառնում այդ օրերի այլ նրբերանգներ: Այսպես, 1919 թ. մարտի 24-ին շտաբ-կապիտան Մկրտիչյանը դիվիզիայի հրամանատարին ուղղված հեռա-

¹⁰⁸⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 211, մաս I, ք. 62; Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 73, ք. 45:

¹⁰⁸⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 48:

գրում (պատճենը՝ Քարվանսարայում գտնվող գեներալ Բաղդասարովին) հայտնում էր, որ ստուգված տվյալների համաձայն թաթարները Շախթալա գյուղն են բերել դաշտային թնդանոթ, իսկ այնտեղ գտնվող լեռնային թնդանոթը Ջիլ գյուղով տարել են դեպի Ջոզ: Միլիցիոն գնդի հրամանատար շտաբս-կապիտան Մկրտիչյանը իր հեռագրի վերջնամասում նաև ավելացնում էր, որ առանց թնդանոթների տեղական ուժերը ի վիճակի չեն դիմադրելու և խնդրում էր անհապաղ կարգադրություններ անել՝ ինչպես գործել¹⁰⁸⁶: Հայկական դիվիզիայի հրամանատարին ուղղված 1919 թվականի մարտի 27-ի հեռագրում (N^o 329) միլիցիոն գնդի հրամանատար շտաբս-կապիտան Մկրտիչյանը Քարվանսարայից հայտնում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն թարսաչայի կիրճի թաթարները ցորեն և գարի են տեղափոխում Ջոզի ուղղությամբ, մարտի 25-ին բերվել է 300 փուլ՝ Դելիջանով դեպի Չիբուխլու¹⁰⁸⁷: Այս ընթացքում, անշուշտ պարզ է, որ հայկական թե՛ քաղաքացիական, թե՛ Ջինվորական և թե՛ Ներքին Գործերի մարմինները ինչ-որ նախապատրաստություններ էին տեսնում, զբաղվում գործի կազմակերպմամբ, համալրում գեներալ ու գինամթերքի պակաս պաշարները, գորակոչային խնդիրներ լուծում: Փերումյանի կողմից 1919 թ. մարտի 18-ին Նոր Բայազետից Ջինվորական նախարարին ուղարկված հեռագրում (N^o 300) հայտնվում էր, որ ավարտին է մոտ գորաջոկատի կենտրոնացումը, իսկ համալրումը կավարտվի մարտի 28-ին: Ավելացվում էր, որ ռազմական հետախուզությամբ հաստատվել է, որ Ջոզի շրջանում կուտակվել են մինչև 6 հազար գինված թաթարներ՝ գնդացիներով և հեծելակով, ինչի մասին տվյալները դեռ ստուգվում են¹⁰⁸⁸: Նախարարների խորհրդի 1919 թ. մարտի 22-ի նիստում լավում է Ջինվորական նախարարի գեկուցումը Նոր Բայազետի բավառում գինվորական դաշտային դատարան հիմնելու մասին: Որոշվում է բացառություն մասվան պատժի, օրինադիժը հաստատել և ի կատար ածել¹⁰⁸⁹: 1919 թ. ապրիլի 2-ին Նախարարների խորհրդի նիստում լավում է Ջինվորական նախարարի գեկուցումը Ջոզ գյուղի խնդիրների մասին, որի հիման վրա որոշվում է հանձնարարել Ջինվորական նախարարին կարգադրություն անելու գեներալ Փերումյանին, որ նա գործի գնդապետ Կ. Թեմպերեյի հետ համերաշխությամբ, գործի գնելով բոլոր հնարավոր միջոցները միջադեպը խաղաղ կերպով հարթելու, և քաղաքական, գինվորական ուժի դեմելուց խուսափելով՝ սպասել կառավարության հրահանգներին: Միաժամանակ սույն նիստում հերքվում է Արբեջանի կառավարության ստահոգ պնդումը Ջոզ գյուղի արբեջանական պատկանելության մասին, հատուկ ընդգծելով, որ այն մտնում է Հայաստանի Հանրապե-

¹⁰⁸⁶ Նույն տեղում, ք. 55:

¹⁰⁸⁷ Նույն տեղում, ք. 66:

¹⁰⁸⁸ Նույն տեղում, Ֆ.Պ-199, ց. 1, գ. 64 (48), ք. 5:

¹⁰⁸⁹ Նույն տեղում, գ. 100 (43), ք. 51:

տուժյան կազմի մեջ¹⁰⁹⁰: Այս ամբողջ նախապատրաստությունների ընթացքում, բնականաբար Հայկական կառավարութունը ձգտում էր բոլոր հնարավոր դիվանագիտական միջոցները օգտագործել միջադեպը խաղաղ վերջացնելու համար, քանզի պատերազմը ձեռնառու չէր Հայաստանին, որը գտնվում էր տնտեսաքաղաքական ծանր իրավիճակում: Միաժամանակ, ձեռնարկվում էին լուրջ ռազմաքաղաքական, ոստիկանական այլևայլ միջոցառումներ ամրապնդելու Հայաստանի համար ստրատեգիական մեծ նշանակություն և արժեք ունեցող Սևանա լճի ավազանը և Նոր Բայազետի գավառը, ուր և գտնվում էր չարաբաստիկ Զոդյան հանգույցը: Այդ շրջանում գործելու պատիվը վաստակած Ղարաբաղյան հատուկ գումարտակի ղեկավարութունը վստահվեց **գեներալ-մայոր Փիրումյանին և փոխգնդապետ Ա. Շենուրիին**, որը Զոդյան օպերացիայի ողջ ժամանակահատվածում ղեկավարեց նաև հետախուզական ծառայութունը: **Ք. Արարատյանի** դիմումագրում՝ ուղղված Մ. Սիլիկյանին (N° 1966), ասվում էր, որ ըստ կապիտան Մեդվեդևի և փոխգնդապետ Ա. Շենուրի ծառայողական խոսակցության՝ մինիստր-նախագահը կարգադրել է գեներալ Փիրումյանին ապահովել Հետաքննիչ հանձնաժողովի մոտքը Զոդ: Հեռագրում խնդրվում էր նորից ստուգել ամեն ինչ և հրահանգ էր տրվում ի՞նչ անել, եթե ձեռնարկված միջոցառումները Հետաքննիչ հանձնաժողովի մոտքը դեպի Զոդ խաղաղ ճանապարհով չհանգեցնեն դրական արդյունքների: Այդ պարագայում գեներալ Փիրումյանին հրահանգվում էր հրամանատարության միջոցով ուղիղ գծով կապվել կառավարության հետ և զինված ուժ չգործադրել՝ մինչև այդ մասին չ՛լ կառավարությունից համապատասխան թույլտվության ստացումը¹⁰⁹¹: Հետագա քայլերում չ՛լ կառավարությունը նորանոր ճշգրտումներ է մտցնում իր քայլերում, փորձում պատվով դուրս գալ ստեղծված ճգնաժամային իրավիճակից, մոբիլիզացնելով բոլոր ուժերը, այդ թվում նաև գավառային իշխանության մարմինների ներուժը: 1919 թ. ապրիլի 8-ին չ՛լ Արտաքին Գործերի նախարարը Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարից ստանում է հեռագիր (N° 593), որում Ադրբեջանի ներկայացուցչը Զոդ գյուղի շրջանը համարելով Ադրբեջանի սահմաններում գտնվող տարածք, անթույլատրելի էր համարում Հայկական զինված ուժերի հայտնվելը Ադրբեջանի տարածքում, և ցավալի թյուրիմացությունից խուսափելու պատասխանատվութունը դնում էր Հայաստանի կառավարության վրա¹⁰⁹²: չ՛լ Արտաքին Գործերի նախարարը Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարին (պատճենը՝ չ՛լ դիվանագիտական ներկայացուցչին Ադրբեջանում՝ Բեկզադյանին) ուղղված ապրիլի 3-ի հեռագրում (N° 1040) ընդգծում էր, որ

¹⁰⁹⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 486, մաս I, ք. 81, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 54, գ. 96, ք. 58, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 26, ք. 58:

¹⁰⁹¹ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 59:

¹⁰⁹² Նույն տեղում, ք. 64:

Զոդ գյուղում տեղի ունեցած դեպքերը հետաքննելու, մեղավորներին գտնելու և օրինական պատասխանատվության ենթարկելու համար ՀՀ կառավարության կողմից այնտեղ է ուղարկվել Արտակարգ քննիչ Հանձնաժողով, որին սակայն չի թույլատրվել դեպքերի վայրը հասնել՝ չըջանի գինված թափարների պատճառով: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը հայտնում էր, որ կառավարությունը գինվորական ջոկատին հրահանգ է տվել ապահովել Արտակարգ Հանձնաժողովի մուտքը՝ հետաքննությունն անցկացնելու համար: Միաժամանակ տեղյակ էր պահվում, որ բրիտանական զննապետ **Կ. Թեմպերլեյը** գեներալ **Վ. Թոմսոնի** հանձնարարությամբ մեկնել է Զոդ՝ նպաստելու Արտակարգ քննիչ Հանձնաժողովի ներթափանցմանը Զոդ և հետաքննության անցկացմանը: Հեռագրի վերջնամասում նշվում էր, որ Հայկական կառավարության կողմից հանձնարարված է կոնֆլիկտը հարթել խղաղ ճանապարհով, իսկ եթե դա չհաջողվի, գեներալ ռեյդինգի առանց կառավարության թույլտվությունը հայցելու¹⁰⁹³: Ինչպես ականհայտ է դառնում գեներալ-մայոր Փիրոմյանի հեռագրերից (№ 404, 406)՝ ուղղված դիվիզիայի հրամանատարին, դեպքերի վայր ժամանած զննապետ **Կ. Թեմպերլեյը** Զոդից վերադառնալով Բասարգեչար՝ թափարներին հայտարարել էր, որ ապրիլի 11-ին հայկական զորքերը պետք է գրավեն գյուղերը, որին թափարները պատասխանում են, որ գյուղերի գրավումը հայկական զորքերի կողմից հնարավոր է միայն անգլիական ներկայացուցչի մասնակցությամբ: 1-ին հեռագրի վերջնամասում Փիրոմյանը զորքերի համարում էր խնդրում, ավելացնելով, որ թափարները շարունակում են գինվել: Իսկ երկրորդ լրացուցիչ հեռագրով Փիրոմյանը հայտնում էր, որ **գնդապետ Կ. Թեմպերլեյի** հետ պայմանավորվածություն համաձայն իրենց զորքերը ապրիլի 13-ին կարող են սկսել միաժամանակ թափարական մի շարք գյուղերի՝ Տաչքենդ, Զոդ, Մեծ Մազրա և Փոքր Մազրա գյուղերի գրավումը, թափարների գինաթափումը իրականացնելով խղաղ ճանապարհով, միայն դիմադրություն ցույց տալու դեպքում՝ գեներալ¹⁰⁹⁴:

Մահմեդական շարժման ակտիվացմանը Բասարգեչար - Զոդի շրջանում նախարարների խորհուրդը հերթական անգամ անդադարեցնում է իր 1919 թ. ապրիլի 14-ի նիստում, որտեղ խնդիրներ են դրվում և՛ Զինվորական, և՛ Ներքին Գործերի, և Արտաքին Գործերի նախարարությունների առաջ: Նիստում լսվում է Զինվորական նախարարի զեկուցումը գեներալ Փիրոմյանին Զոդի դեպքերի առթիվ հրահանգներ տալու մասին: Նախարարների խորհուրդը որոշում է հանձնարարել Զինվորական նախարարին հեռագրել Փիրոմյանին, որպեսզի՝ 1) նա գործի **Կ. Թեմպերլեյի** ցուցմունքների համաձայն, 2) եթե անհրաժեշտ լինի գինված ուժի դիմելու, **Կ. Թեմպերլեյին** դիմել՝ գրավոր առաջարկ ներկայացնելու խնդրանքով, և 3) աշխատել չդի-

¹⁰⁹³ Նույն տեղում, թ. 62, 64:

¹⁰⁹⁴ Նույն տեղում, թ. 76:

մել գրավումների, և ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել, որպեսզի ազգաբնակչության վերաբերմամբ բռնություններ չկիրառվեն, այդ մասին հայտարարելով ժողովրդին¹⁰⁹⁵: Այդ նույն օրը ՀՀ Արտաքին Գործերի նախարարության գլխավոր քարտուղարը հատուկ գրույթամբ (N^o 1220) տեղեկացնում է Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, որ Ադրբեջանի կառավարության բողոքի և Բասարգեչարի շրջանում հայկական զորքերի գտնվելու հետ կապված, իրենք գտնում են, որ այդ տարածքը չի կարող դիտվել իբրև Ադրբեջանի տարածք: Սույնով նաև հաստատում են, որ Բասարգեչարի շրջանը մտնում է Հայաստանի տարածքի մեջ (նրա անբաժանելի մասը լինելով), կրկնելով, որ ՀՀ կառավարությունը բողոքում է ադրբեջանական իշխանությունների կողմից Ադրբեջանի տարածքից դեպի Հայաստանի սահմանները ուղարկվող զինված թաթարական խմբերի անցման դեմ, որոնք այնտեղ խռովություններ են տարածում և բնակչությանը գրգռում Հայաստանի իշխանությունների հետ զինված հակամարտության մեջ մտնելու¹⁰⁹⁶:

Ինչպես պարզվում է, գեներալ Սիլիկյանին ուղղված գեներալ-մայոր Փիրուսյանի ապրիլի 14-ի հեռագրից (N^o 0019), գնդապետ Կ. Թեմպերլեյի առաջարկի համաձայն, ապրիլի 14-ի առավոտյան ժամը 7-ին Հայկական զորքերի Նոր Բայազետի գորաշոկատը երկու գորաշարքերով սկսում է հարձակում թաթարական գյուղերը գրավելու համար: Սակայն Մեծ Մազրայի թաթարները հանկարծակի ուժեղ հրացանակրակ են բացում, որին Հայկական հետևակը չի պատասխանում, շարունակելով իր առաջնադասումը դեպի գյուղ, փոխարենը գյուղի վրա մի քանի հրետանազարկ է տրվում, որը թաթարներին ստիպում է նահանջել: Այդ ամենից հետո պարզվում է, որ գյուղը նախօրոք բնակչության կողմից լքված է եղել՝ իր հետ տանելով ողջ ունեցվածքը, որ հնարավոր էր տեղափոխել, իսկ կրակ արձակողները եղել են գյուղում մնացած թաթարական խմբերը: Այս նույն սցենարը կրկնվում է Հոսեյն Ղարալի, Աղալու, Կոչա Բալաղ, Գալբաշ և Սիրի Աղունի գյուղերի գրավման ժամանակ, իսկ Տաշքենդ գյուղի մերձակայքում տեղի են ունենում մարտեր, որից հետո Հայկական գորամասը գրավում է գյուղը, իսկ հակառակորդը փախչում է դեպի սարերը: Ապրիլի 14-ի մարտերում հայերը տալիս են 3 սպանված, վիրավորվում է փոխգնդապետ Իշխանովը, որը սակայն վիրավորվելուց հետո վերադառնում է մարտաշարք: Սակայն այնուհետ հայերը տալիս են 15 սպանված և 8 ձի: Հատկանշական է, որ բոլոր կարգադրությունները արվել են գնդապետ Կ. Թեմպերլեյի ներկայությամբ և վերջինիս գիտությունով, որը մարտերի ընթացքում զորքերի կողմից ոչ մի բռնություն և կողոպուտ չտեսավ: Հայկական բանակի առաջապահ գորամասերը գրավում են Մեծ Մազրան, Հոսեյն Ղում Աղալուն, Գալբաշին, Տաշ-

¹⁰⁹⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 65; Ֆ.Պ- 201, ց. 1, գ. 486, մաս I, ք. 96:

¹⁰⁹⁶ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 79, 82:

քենդը¹⁰⁹⁷: Իսկ ապրիլի 15-ին ժամը 7-ին Հայկական զորամասերը Ջոզ գյուղ են ուղարկում բանազնացիների՝ սպիտակ դրոշակներով, սակայն թաթարները կրակ են արձակում նրանց վրա, որից հետո Հայկական կողմը երկրորդ անգամ է բանազնացիներ ուղարկում, սրանք ևս չեն կարողանում գյուղ մտնել: Այս ամենից հետո միայն Ղարաբաղյան գումարտակը անցնում է Հարձակման և առանց կրակոցի գրավում Ջոզը, որտեղից թաթարները փախել էին: Այդ նույն բանը կատարվում է նաև Սար-Յաղուբ, Ղարա-Գոսլի, Աղքիլիսա, Ջարգիբիլ գյուղերի գրավման ժամանակ, որոնց բնակիչները նախօրոք լքել էին դրանք, ողջ ունեցվածքը դուրս բերելով: Այդ մարտերի ընթացքում վերավորվում են 1 սպա, 18 զինվոր և 2 ձի, սպանվում են 3 զինվոր և 3 ձի¹⁰⁹⁸: Ինչպես ակնհայտ է դառնում գեներալ-մայոր Փիրումյանի Բասարգեչարից 1919 թ. ապրիլի 16-ին գեներալ Սիլիկյանի Հասցեով ուղարկված հեռագրից (№ 00281), ապրիլի 15-ին հետախույզներ են ուղարկվում Շորժալու գյուղ, սակայն պարզվում է, որ գյուղում խաղաղ տրամադրություններ չեն իշխում, և վերջիններս ենթարկվում են գնդակոծման և ապրիլի 16-ին Թաղի-Քենդ գյուղի մատուցյանքը զբաղեցնող զորաջոկատները սկսում են տեղաշարժվել դեպի Շորժալու, դարձյալ գնդակոծվում են այնտեղ դարանակալած թաթարների կողմից: Գյուղը հրետանակոծման ենթարկելուց հետո Հայկական զորամասը կարողանում է մտնել գյուղ, և գրավել այն, իսկ փախած թաթարները ապաստանում են մոտակա լեռներում¹⁰⁹⁹: Գեներալ-մայոր Փիրումյանի հերթական, ապրիլի 23-ի հեռագրից՝ ուղղված գեներալ-մայոր Սիլիկյանին, մենք տեղեկանում ենք Հաջորդ օրերի մարտական գործողությունների ժամանակագրությունը և մանրամասներին: Ապրիլի 18-ին ժամը 16-ին Շիշկայա գյուղն է ուղարկվում Ղարաբաղյան գումարտակի մի վաշտ և հանդիպում է թաթարների կրակին: Չնայած թաթարների համառ դիմադրությունը, գյուղը գրավվում է, որից հետո պարզվում է, որ այնտեղ զգալի ուժեր են եղել՝ մոտ 1000 հետևակ և հեծելակ: Նախօրոք գյուղից թաթարները դուրս բերած են լինում իրենց ունեցվածքը և ընտանիքները: Այս մարտերի հետևանքով Հայկական կողմը տալիս է 8 զինվոր և 2 ձի վերավոր, 1 զինվոր սպանվում է, վերավորվում է նաև պրապորշչիկ Մխիթարյանցը¹¹⁰⁰:

Այս բոլոր գործողությունների ընթացքում Հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով լարվածություն էր իշխում, ադրբեջանցիները անցկացնում էին զորահավաք զորահավաքի ետևից, դիմում էին բազմաբնույթ խարդավանքների, քաղաքական գանազան մեքենայությունների, գորքերի զգալի տեղաշարժերի՝ բոլորն էլ ակնհայտ հակահայկական ուղղվածություն:

¹⁰⁹⁷ Նույն տեղում, ք. 86, 86ա, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 64 (48), ք. 9:

¹⁰⁹⁸ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 89; Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 64 (48), ք. 10:

¹⁰⁹⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 64 (48), ք. 8:

¹¹⁰⁰ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 97:

1919 թ. ապրիլի 29-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված հեռագրում (N^o 0119) Զինվորական նախարարութայն Գլխավոր շտաբի պետ գնդապետ Զինկևիչը հայտնում էր, որ Միլիցիոն գնդի հրամանատարից ստացված տեղեկատվության համաձայն ապրիլի 23-ին Յաղուբլիով Զիլի ուղղութայնք գնացել են ադրբեջանական զորքերի խմբեր, ապրիլի 25-ին սպավել է ադրբեջանական զորքերի ժամանումը Նովոսարատովկա և Նովոխվանովկա: Զինկևիչը նշում էր, որ միլիցիոն գնդի հրամանատարին կարգադրություն է արված այդ տեղեկությունները ստուգել և այդ մասին հայտնել իրեն¹¹⁰¹: Սակայն այդ ամենը չեն կարողանում խոչընդոտել ու խանգարել Հայկական բանակին եզրափակելու Զոլյան օպերացիան, մի լավ դաս տալու մահամեղական ազդեցիկ տրամադրված ուժերին, որոնք վերջին հաշվով ձգտում էին Բասարգեչարի շրջանը կտրել Հայաստանից և կցել Ադրբեջանին: Հայկական զորամասերը տանում են գեղեցիկ հաղթանակ, ազատագրելով հայրենի տարածքի մի կարևոր մասը, ընդ որում դրսևորելով իսկական լավ ու մարտունակ զորքին հատուկ կարգ ու կանոն, կարգապահություն, զերծ մնալով հախճապություններից և կողոպուտներից: Այս կարևոր խնդրի իրագործման մեջ հայկական զինվորական իշխանությունները որոշակի օժանդակություն և օգնություն են ստանում ոչ միայն իշխանության կենտրոնական քաղաքական մարմիններից, այլև Արդարադատության և Ներքին Գործերի նախարարություններից, իր մասնակցությունն է ունենում նաև հայկական միլիցիան, որը տեղերում զորքի կողքին նպաստում էր զանազան գավառային բնույթի խնդիրների լուծմանը, նաև անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելով թշնամու ուժերի, գյուղերում տիրող վիճակի և այլնի մասին: Եվ այնուամենայնիվ, ՀՀ կառավարության կողմից Զոլի շրջանը գործուղված Արտակարգ քննիչ Հանձնաժողովը բացահայտեց մի շարք խնդիրներ, հնարավորին չափով պարզորոշեց այն շարժառիթները, որոնք ընկած էին Զոլ-Բասարգեչարի շրջանի մահամեղականների ապստամբական-խռովարարական գործողությունների հիմքում: Այդ եզրակացություններն արվել են 1919 թ. ապրիլի 27-ի վիճակով, և հանգում են հետևյալին. 1) Մուսուլմանների շրջանում հետաքննության անցկացման անհնարինություն հետևանքով հնարավոր չեղավ ճշգրիտ պարզելու մահամեղական ապստամբության շարժառիթները ընդդեմ Հայաստանի իշխանությունների: Ենթադրվում է, որ ռոտմիստր Սիլիկյանի չափից ավելի մեծ պահանջները՝ իրենց տրամադրելու ցորեն և գարի, ընդամենը առիթ է հանդիսացել տխուր հանգուցալուծման համար, իսկ մահամեղականների դժգոհությունը իշխանություններից օրեցօր աճել է և վերածվել բախման: Պատճառների դեր կատարել են ստորև բերված հանգամանքները, 2) 1918 թ. օգոստոսին ողջ Զոլի շրջանը Ադրբեջանի Հանրապետության կառավարության

¹¹⁰¹ Նույն տեղում, թ. 100:

կողմից ճանաչվել է (կամ ընդունվել) որպես Ադրբեջանի սահմանների մեջ մտնող տարածք և հայտարարվել որպես Ելիզավետպոլի գավառի 9-րդ ոստիկանական տեղամաս, նշանակվել են իրենց կոմիսարները և միլիցիան: Իսկ 1919 թ. հոկտեմբերին այդ շրջանը ենթարկվեց Հայաստանին, մահմեդական բնակիչներն էլ, թեկուզ և չկամոթյամբ, իշխանություններին ենթարկվելու պատրաստակամություն արտահայտեցին, չկտրելով իրենց կապերը Ադրբեջանի հետ, 3) 1918 թ. վերջին Նոր Բայազետի գավառ է գործուղվում ռուսիսոր Սիլիկյանը՝ Ղարաբաղյան հեծյալ դիվիզիոն կազմավորելու նպատակով, սակայն դրա համար ոչ մի միջոց պետական գանձարներից բաց չի թողնվում: Սիլիկյանին հնարավորություն և իրավունք էր տրվել բռնազրավել ձիերը, հանդերձանքը, գենք և դիվիզիոնը պահելու համար անհրաժեշտ ամեն ինչ: Բռնազրավումներն անցկացվում էին, բացի այդ նպատակով և այդ դեպքերի համար նախատեսված հաստատությունները՝ հանձնաժողովների կողմից, սակայն դրանով սկսեց զբաղվել ամեն ոք, ցանկացած սպա, կոմիսար, ուրյադնիկ, միլիցիոներ և այլն. մեծմասամբ բռնազրավված ունեցվածքի դիմաց տրվում էին ընդամենը ստացականներ, այդ ընթացքում թույլ էին տրվում չարաչահուներ, գլխավորապես մահմեդական գյուղերում ձիերի բռնազրավումների ժամանակ, քանզի ոչ բոլոր բռնազրավման ենթարկված ձիերն էին գնում դիվիզիոնի կարիքներին ծառայելու, ձիերը պետական գներով վաճառվում էին կողմնակի անձանց, դիվիզիոնի հետ ոչ մի առնչություն չունեցող անձանց, կամ էլ վաճառվում էին պարզապես իրենց նախկին տերերին, իհարկե ավելի բարձր գներով, իսկ բռնազրավված անասնակերը վաճառվում էր: Այս բոլոր երևույթները առաջ էին բերում մահմեդական բնակչության դժգոհությունը, որին, իհարկե, առիթ էր պետք Հայաստանի օրինական իշխանություններին դեմ ապստամբելու: Եվ վերջապես. 4) 1919 թ. հունվարի վերջերին գաղթական հայերը ոմն Նիկոլայ Ավետիսովի գլխավորությամբ հարձակվում են մահմեդական Զաբալու-Ղըզըլ-Վանք և Սուբբոտան գյուղական բնակավայրերի վրա և թալանում դրանք, իսկ գյուղացիները փախչում են Զոդի շրջանի մյուս գյուղերը. նախապատրաստվող հարձակման մասին ժամանակին զգուշացված է լինում մահմեդական տեղամասային կոմիսարը, սակայն նրա կողմից ոչ մի միջոց չի ձեռնարկվում: Ծիշտ է, գործի դժով անցկացվում է նաև հետաքննություն և կողոպտված ունեցվածքի մի մասը վերադարձվում է մահմեդականներին, և առհասարակ՝ բոլոր նրանց, ումից վերցվել է կողոպտված ունեցվածքը, սակայն մեղավորներին, դեռ չեն բացահայտել: Այս կարևոր պատճառներն էլ, ըստ էության, Արտակարգ քննիչ հանձնաժողովի նախագահ Փարսաղանովի եզրակացությունում, առաջ բերեցին ուժեղ դժգոհություն մահմեդականների մեջ, որոնք նույնիսկ բացահայտ հայտարարում էին, որ Հայաստանում ոչ մի իշխանություն էլ չկա և իրենք չեն ցանկանում ոչ մեկի ենթարկվել: Այդ իսկ շարժառիթներով էլ Սիլիկյաններին և այլոց սպա-

նությունից մի քանի օր առաջ Ջող գյուղից հեռացվել է միլիցիոներների պոստը: Այս եզրակացութայն է գալիս ՀՀ կառավարութայն կողմից Ջող գործուղված Արտակարգ քննիչ Հանձնաժողովը 1919 թ. ապրիլի 27-ի վիճակով, իսկ մայիսի 2-ին այն հաստատում է նաև Արդարադատութայն նախարարութայն գրասենյակի ղեկավորը¹¹⁰²: Իսկ 1919 թ. մայիսի 5-ին լսելով Արդարադատութայն նախարարի պաշտոնակատարի ղեկուցումը Ջողի ղեկաքերի առթիվ կառավարութայն կողմից ուղարկված Արտակարգ քննիչ Հանձնաժողովի գործունեութայն մասին (գեկ. 951, մայիսի 2) Նախարարների խորհուրդը Հանձնարարում է Արդարադատութայն և Ներքին Գործերի նախարարներին օրինական պատասխանատվութայն ենթարկել մեղավորներին¹¹⁰³:

Ինչպես տեսնում ենք, հարցն այն աստիճան ղեկանադիտական-քաղաքական բարդություններ էր առաջ բերել, որ դրա լուծմանը ներգրավվել էին Հայաստանի Հանրապետութայն ողջ ներուժը՝ Արտաքին և Ներքին Գործերի, Զինվորական, Արդարադատութայն և այլ նախարարությունների կազմում: 1919 թ. ապրիլի 10-ին Նախարարների խորհրդի նիստը իր օրակարգում ուներ մինիստր-նախագահի ղեկուցումը՝ Ջողի ղեկաքերի առթիվ թեքինակու հարուցած միջնորդութայն մասին, Ջողի շրջանում գործերը ետ քաշելու և Քննիչ Հանձնաժողովի մեջ թուրք ներկայացուցչի մասնակցութայն մասին: Նիստը մանրագնին քննարկեց հարցը և Հանձնարարեց Արտաքին Գործերի նախարարին հայտարարել թեքինակուն, որ այդ պայմաններում գործը ետ քաշելը ուղիական պատճառներով անհնարին է, իսկ Արտակարգ քննիչ Հանձնաժողովի մեջ թուրք ներկայացուցչի մասնակցութայն դեմ առարկություն չկա¹¹⁰⁴: Ինչպես, տեսնում ենք, ամեն մի ղեկաքում էլ կարգ ու կանոն հաստատելով Ջող-Բասարգեչարի շրջանում, կենտրոնական հայկական իշխանությունները ձգտում էին ելնել որոշակի օրինականութայն սկզբունքներից, խուսափելով ավելորդ և անտեղի բարդացումներից ու սրացումներից: 1920 թ. ապրիլի 6-ին լսելով ՆԳ նախարարի ղեկուցումը Բասարգեչարի Հանձնաժողովի «ապօրինի գործողությունների մասին», Նախարարների խորհուրդը ընդունված որոշման մեջ Քննիչ Հանձնաժողովի կարգադրությունը ապօրինի համարեց և այդ կարգադրութայն հետևանքները պետական շահերի տեսակետից խիստ վնասակար՝ Հանձնարարելով ՆԳ նախարարութայնը բոլոր փաստաթղթերը և նյութերը Հանձնել Զինվորական դատարանի դատախազական եզրակացութայնը և առաջարկել նրան գործը վարել ըստ գործով առաջ եկած հանգամանքների¹¹⁰⁵:

¹¹⁰² Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 263, ք. 68-72; Ֆ.Պ - 1 99, ց. 1, գ. 64 (48), ք. 11-15:

¹¹⁰³ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 83, գ. 100 (43), ք. 84:

¹¹⁰⁴ Նույն տեղում, գ. 96, ք. 63:

¹¹⁰⁵ Նույն տեղում, գ. 146, ք. 56:

Ամեն դեպքում ստեղծված բարդ իրավիճակում հայկական իշխանութիւնները փորձել են 1918-1920 թթ. ամենևին էլ տեղի չտալ մահաբեղական ճնշմանը, և սեփական տարածքներին օրինական եղանակներով տեր կանգնել՝ ապահովելով Հայաստանի Հանրապետութեան պետական անվտանգութիւնը Սևանի ավազանում և դրա շուրջ հարևան Ադրբեջանի վտանգավոր տարածքային-քաղաքական հավակնութիւններից, ինչը դյուրին խնդիր չէր, այդ գործի մեջ ներգրավելով նաև հայկական միլիցիակազմի և ՆԳ նախարարութեան համակարգի առկա բոլոր հնարավորութիւնները և կադրութիւնը:

2. Հակապետական խռովութիւնների ճնշումը Հայաստանի Հանրապետութեան Դավալուի, Զանգիբասարի և մահմեդաբնակ այլ շրջաններում

Միլիցիայի և ՆԳՆ մարմինների ամբապնդվելու ձգտումը դրսևորվեց բավականին հակասական եղանակով, դժվար էր հաղթահարել որոշ խնդիրներ, որոնք աշխարհաքաղաքական գործընթացների հետևանք էին: Հայաստանի Հանրապետութիւնն առավել մեծ դժվարութիւնների հանդիպում էր Ելիզավետպոլի, Զանգեզուրի և այլ գավառամասերում: Ադրբեջանական գործակալները այդ տարիներին քայքայիչ աշխատանքներ էին ծավալում Հայաստանի տարբեր բնակավայրերում, հուզելով գյուղացիութեանը, որպեսզի հայկական զինուժը զբաղեցնելով՝ կարողանան ընկճել Զանգեզուրը և շարժվեն դեպի Երևան, ինչպես քարոզում էին ադրբեջանական իթթիհադականները: Դրան հաջորդեցին Սելիմի և ուրիշների ավազակախմբերի հաճախակի դարձած հարձակումները հայկական զորամասերի ու միլիցիոնների վրա Աղբաբայում, Զոգում, Զարուշատում և այլուր, որտեղ ադրբեջանական գործակալները մշտապես գաղտնի ժողովներ էին գումարում՝ ՀՀ կառավարութեանը տապալելու սադրիչ կոչեր անելով¹¹⁰⁶: Եվ այնուամենայնիվ, կարևորելով ուժային որոշ կառույցների՝ միլիցիայի և ՆԳՆ մարմինների ստեղծումը՝ ՀՀ կառավարութիւնը ջանում էր արդյունքների հասնել: Որոշակի քայլեր ձեռնարկվեցին այդ տարածքներում ՀՀ բանակային-միլիցիոն զորամասերն ուժեղացնելու ուղղութեամբ: Այդ գործում հատկապես լուրջ նշանակութիւն էր տրվում Զինվորական նախարարութեան համակարգին ենթակա միլիցիոն ստորաբաժանումների գործունեութեանը: 1919 թ. փետրվարի 5-ին Հայկական դիվիզիայի պետին ուղղված գեկուցադրում (N° 226) Հայկական զորքերի կազմում գտնվող 1-ին ռազմամիլիցիոն գնդի՝ հրամանատար կապիտան Մնացականյանը հայտնում էր, որ իրեն վստահված գնդի Քարվանսարայի գումարտակի հրամանատարը հաղորդագրութիւն է ուղարկել, որում տեղեկացրել է, որ ըստ Զարգախլու գյուղի (Ելիզավետպոլի գավառ) գյուղացիների տվյալների՝ Ադրբեջանում ընթանում է թաթարների ուժեղ գորահավաք, նպատակ հետապնդելով՝ ստեղծելու բանակ, որպեսզի մաքրեն Լեռնաշխարհը (Գետաշենից մինչև Բաղաբենդ գյուղը) հայերից: Վերջնամասում կապիտան Մնացականյանը տեղեկացնում էր նաև այն մասին, որ թաթարներին զինվորական գործ սովորեցնելու համար Ադրբեջան են եկել մոտ 100 վրացի սպաներ: Հայտնվում էր նաև, որ Բասարգեջարի

¹¹⁰⁶ «Յառաջ», 7 մայիսի, 1920, N° 49:

չըջանի թաթարները սկսել են տեղափոխվել Ելիզավետպոլի նահանգ և Հայ գյուղացիների Հարցերին՝ թե ինչու¹¹⁰⁷ եք հեռանում, պատասխանել են, որ գարնանն այստեղ մարտեր են լինելու¹¹⁰⁷:

Շուտով այս տվյալները հաստատվում են: Այդ մասին մենք տեղեկանում ենք Ներքին Գործերի նախարարի պաշտոնակատար **Ս. Մանասյանի** գաղտնի Հաղորդագրությունից (N^o 29 - N^o 2158) ուղղված Զինվորական նախարարին, որի վրա կա նաև գինված ուժերի Գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Հախվերդյանի մակագրությունը (N^o 545), որով վերջինս հայտնում էր, որ ինքը նշված փաստաթուղթը համաձայն Զինվորական նախարարի կարգադրության՝ ապրիլի 8-ին ուղարկել է Արտաքին Գործերի նախարարի Հասցեով: Դրանում Մանասյանը հաղորդում էր այն տեղեկությունների մասին, դրանց համաձայն անցած մարտ ամսից Ելիզավետպոլի գավառում սկսվել է ձիերի հավաք և 20-ից 25 տարեկան հասակի երիտասարդ մարդկանց գորահավաք: Մանասյանը նշում էր, որ Գեղ[տ]աբեկում, ուր կար պղնձի արտադրության գործարան, որտեղ նախապատրաստվել են գորանոցներ՝ մոտ 2000 մարդու համար, որ տեղական բեկերն աշխատում են ժողովրդի ուշադրությունը իրենցից շեղել, տեղական թաթարներին թունավորելով և ուղղորդելով Հայերի դեմ: Ս. Մանասյանը նաև ավելացնում է, որ այդ պայթյունավտանգ բնակավայրերը սահմանակից են Ղազախի գավառին¹¹⁰⁸:

Ասվածից լիովին ակնհայտ է դառնում, որ Հայաստանի նշված սահմանամերձ տարածքներում փաստորեն նկատվում էին մահամեղական շարժման ակտիվացման երևույթներ, որոնք հետո վերածվեցին ռազմական բնույթի գործողությունների, և ըստ էություն պատերազմի Հայաստանի դեմ: Հայկական կողմը փորձում էր հակազդել, օգտագործելով՝ ինչպես կանոնավոր բանակի, այնպես էլ Ներքին Գործերի նախարարության և միլիցիայի օրգանների տարածաշրջանում առկա նշված ուժերը:

ՀՀ կառավարությունը, Ներքին Գործերի նախարարությունը ձգտում էին ոչ միայն Երևանում իշխող դիրքեր ունենալ, այլև ծայրամասերում, որտեղ զգալի մահամեղական զանգվածներ և Հայաստանի նկատմամբ բացասական էներգիայի կրողներ կային, իսկ դա հնարավոր կլիներ իրականացնել ոչ միայն վարչական միջոցներով, այլև անհրաժեշտ էին ֆինանսական միջոցներ, որոնք սուղ էին կամ էլ ծայրահեղ դեպքում կենտրոնացված էին ոչ թե պետության ձեռքին ու պետական գանձարանում, այլև մասնավոր անձանց ձեռքում, որոնք հաճախ իրենց անպատասխանատու գործողություններով լարվածություն մեջ էին պահում երկիրը: 1919 թ. հունիսի 3-ին, Նախարարների խորհրդի հերթական նիստում լավում է Ներքին Գործերի նախարարի գեկուցումը Ղարաբաղի և Զանգեզուրի ծախսերը հոգալու մասին: Որոշվում

¹¹⁰⁷ Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 158, ք. 90 շրջ.:

¹¹⁰⁸ Նույն տեղում, ք. 99:

է հատկացնել 8 միլիոն ռուբլիանոց ֆոնդից՝ Ղարաբաղի և Զանգեզուրի համար յուրաքանչյուրին՝ 400.000-ական ռուբլի ամսական, ընդ որում Ղարաբաղի համար՝ սկսած մայիս ամսից, իսկ Զանգեզուրի համար՝ հունիսից¹¹⁰⁹:

Ծայրամասերը, որոնց նկատմամբ ուժեղ էին մահամեղականների քայքայիչ գործողությունների դրսևորումները ՀՀ կառավարությունից որոշակի հոգացողություն առարկա էին, իհարկե՝ հնարավորի շրջանակներում: ՀՀ կառավարությունը գործում էր այնպիսի աշխարհաքաղաքական գործընթացների միջավայրում, որում փորձում էին տեր ու տնօրեն լինել անգլոսաքսոնական քաղաքակրթությունը ներկայացնող երկրները՝ Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը և այլն: Իսկ այդպիսի պայմաններում գործելը դյուրին չէր, ինչ-որ տեղ դա էապես ազդում էր նաև ՀՀ կառավարությունից քաղաքականության ինքնուրույնության դրսևորումների վրա: Ինչևիցե: 1919 թ. սեպտեմբերի 18-ին Նախարարների խորհուրդը լսում է Ներքին Գործերի նախարարի առաջարկի մասին Զանգեզուրը ուժեղացնելու վերաբերյալ և այդ կապակցությամբ ընդունում համապատասխան որոշում՝ հավանություն տալով ՆԳ նախարարի կողմից ներկայացված օրինագծին:

1919 թ. սեպտեմբերի 13-ին Նախարարների խորհրդի նիստում լսվել էր Ներքին Գործերի նախարարի գեկուցումը Գանձակի գավառի հայ ազգաբնակչության մասին, և որոշվել Զինվորական նախարարությունից 5 միլիոնանոց ֆոնդից վերջինիս տալ 15 հազար ռուբլի այդ գործը կազմակերպելու համար¹¹¹⁰:

Բնականաբար, Հայաստանի կառավարությանը չէին կարող չմտահոգել նաև «Զեզոք գոտու» խնդիրները ներքին քաղաքականության խնդիրների տեսանկյունից: 1919 թ. նոյեմբերի 11-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է Ներքին Գործերի նախարարի գեկուցումը «Զեզոք գոնայի» պահպանման համար 750.850 ռ. վարկ բանալու մասին: Որոշվում է հավանություն տալ և պառլամենտին ներկայացնել ի հաստատումն, ինչպես նաև Արտաքին Գործերի նախարարությունը հանձնարարել այդ առթիվ բանակցություններ վարել Վրաստանի կառավարության հետ՝ ծախսերը հավասար չափով կատարելու համար¹¹¹¹:

Պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի համար ոչ միայն Վրաստանն էր խնդիրներ ստեղծում: Մեծմասամբ Հայաստանի կառավարությանը մտահոգում էին մահամեղականները և նրանց կողմից կազմակերպվող շարժումները: Վրաստանը Հայաստանի համար քաղաքական խնդիրներ ստեղծում էր, եթե նույնիսկ դրանք չէին լինում, հաճախ նա ներքին ու մութ գործարքներով օժանդակում էր այդ նույն մահամեղականներին, ներառյալ և Թուրքիան:

¹¹⁰⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 121, գ. 100 (43), ք. 120:

¹¹¹⁰ Նույն տեղում, գ. 100 (43), ք. 204:

¹¹¹¹ Նույն տեղում, ք. 244:

Հակահայկական տրամադրությունների դրսևորման համար կային թե՛ ներքին, և թե՛ արտաքին լծակներ, որոնց դեմ փորձում էին պայքարել ՀՀ կառավարությունը, տեղական իշխանությունները, միլիցիան, ՆԳՆ բոլոր ուժային մարմինները: Ինչպես մենք տեղեկանում ենք արխիվային փաստաթղթերից, դեռ 1918 թ. օգոստոսի 19-ին էջմիածին կայարանից 5 վերատ հեռավորության վրա թաթարների կողմից գազանաբար խոշտանգվում և սպանվում են Հայկական 1-ին միլիցիոն գնդի 4 զինվոր: Ինչպես պարզում է անցկացված հետաքննությունը, մահմեդական Սարվանյար գյուղի բնակիչների ցուցմունքների համաձայն, սպանությունը կատարվել էր թաթարական Չոբանքյար գյուղի բնակիչների կողմից, որոնք դրանից մի քանի օր առաջ տեղափոխվել էին Քյարիմ-Բեհլու գյուղը, որն էջմիածնի շրջանի մահմեդականների հավաքատեղիներից մեկն էր: Չոբանքարեցիները հայտարարել էին իրենց անհնազանդության մասին Հայաստանի իշխանություններին և կազմել 100 հոգուց բաղկացած ավազակախումբ: Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի տեսուչի հրամանով այստեղ է ուղարկվում խառը հանձնաժողով՝ հետաքննելու համար այս և այլ անցքերն ու դեպքերը, որոնք տեղի էին ունենում էջմիածնի գավառում, լսել նաև մահմեդականների բողոքները: Հետաքննության ընթացքում հայտնաբերվեցին թաթարների կողմից Մարգարա գյուղում սպանված մեկ հայ մարդու, մի աղջկա և 4 տարեկան երեխայի դիակները: Սեպտեմբերի 9-ին կառավարությունը հրաման է տալիս Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի տեսուչին՝ ըստ գյուղերի կազմակերպել թաթար վերաբնակեցված գանգաձի տեղաբաշխումը: Ձեռնարկված գործողությունների շնորհիվ, որին մասնակցում են նաև գավառային ուժերը, մեղավորները շուտով ձերբակալվում են, որը հաստատվում է թաթարներից և հայերից կազմված խառը հանձնաժողովի ստորագրությամբ և արձանագրություն կազմելով, հետաքննությունն անցկացվում է **ամերիկյան գնդապետ Ֆորդի** գլխավորությամբ: Պարզվում է նաև, որ թաթարական բնակչության նկատմամբ բռնության փաստեր չեն եղել, այլ ընդհակառակը, ապստամբությանը և խռովություններին մասնակից բոլոր թաթարներին ՀՀ կառավարության կողմից շնորհված է եղել համաներում¹¹¹²:

Դեռ 1919 թ. հունվարի 30-ին Նախարարների խորհրդի նիստում լավում է Զինվորական նախարարի և ՆԳ նախարարի զեկուցումը Ղամարլուի և Դավալուի շրջանում գինված հարձակումների, թուրքական այն ընդհանուր շարժման մասին, որ նկատվում է ոչ միայն մեր հանրապետության սահմաններում, այլ նաև Վրաստանի: Նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշման մեջ հանձնարարվում է Արտաքին Գործերի նախարարին հայկական սահմաններում թուրքերի շարժման և մեր զորքերի կողմից

¹¹¹² Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 230, ք.17:

նրանց վրա հարձակումների մասին տեղեկացնել անգլիական գլխավոր հրամանատարությունը Անդրկովկասում, և խնդրել մի անգլիացի սպա ուղարկել մեր Զինվորական նախարարի մոտ՝ իբրև անգլիական զորահրամանատարության ներկայացուցիչ¹¹¹³:

Հետաքրքիր է այս առումով նաև ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 28-ի նիստը, որում լավեց ՆԳ նախարարի հայտարարությունը, որ Դավալուի շրջանում թուրքերը հրաժարվում են հայկական կառավարության իշխանությունը ճանաչելուց, և որ Դավալուի կոմիտային հայտնել է երեք հայերի սպանություն և **գեներալ Լառտեռնի** կողմից ոմն Գայդարովի մահմեդական ազգաբնակչության ղեկավար նշանակելու մասին: Այս կապակցությամբ ընդունված որոշման մեջ Նախարարների խորհուրդը խնդրեց Արտաքին Գործերի նախարարից պարզելու Գայդարովի դերը և դիմել բրիտանական **գեներալ Լառտեռնին** ու **մայոր Չարլզին** կարգը վերահաստատելու համար միջոցներ ձեռք առնելու մասին: Միաժամանակ հանձնարարվում է խնդրել մինիստր-նախագահին վերոհիշյալի մասին տեղեկացնել **Քաջազնունուն՝ գեներալ Զ. Փորեստյեր-Ուոքերին** դիմելու համար¹¹¹⁴:

Դրուժությունը այդ շրջանում բավականին շիկացած էր, և օր օրի բարդանում էր, 1919 թ. մարտի 3-ին տեղական իշխանություններից Մինասյանը Ղամարուից Ներքին Գործերի նախարարին ուղարկված հեռագրում (№ 229) նշում էր, որ խաները ինչ-որ խարդավանք են հյուսում, որ Վեդիբասարի շրջանի թաթարները Չաթկրան և Շիրազու գյուղերի միջև ընկած տարածքում հարձակվել են Ղամարուից Դավալու գնացող հայերի վրա, 8 հոգու սպանել և մեկին վիրավորել, 11 հոգի էլ փախուստով փրկվել են: Մինասյանը Ներքին Գործերի նախարարից խնդրում էր գործուն միջոցներ ձեռնարկել բզկտված ժողովրդի կյանքի պահպանության համար¹¹¹⁵:

Այն, որ Դավալուի շրջանում մահմեդական թուրքերն իրենց սանձարձակ էին պահում, չենթարկվելով տեղական իշխանություններին, միլիցիայի և ՀՀ Ներքին Գործերի նախարարությունը, գավառային վարչակազմին՝ հաստատվում է բազմաթիվ փաստերով: Այսպես, 1919 թ. մարտի 8-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարարությունը հասցեագրված գրուժյան մեջ Ներքին Գործերի նախարարի պաշտոնակատարը շեշտում էր, որ վերջին ժամանակներում Դավալուի շրջանում հաճախակիացել են թաթարների կողմից Հայաստանի տարածքի խաղաղ բնակիչների վրա կատարվող մասսայական հարձակումները, որոնք ուղեկցվել են սպանություններով և կողոպուտներով, որ այդ շրջանի բնակիչները մշտապես գտնվում են խուճապի, վախի մեջ և զրկված են իրենց տնտեսությունից զբաղվելու հնարավորությունից: Ներքին

¹¹¹³ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 486, սաս I, ք. 32, գ. 47, ք. 47, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 96, ք. 20:

¹¹¹⁴ Նույն տեղում, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 33, գ. 96, ք. 32:

¹¹¹⁵ Նույն տեղում, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 209, ք. 63:

Գործերի նախարարի պաշտոնակատարը Արտաքին Գործերի նախարարից խնդրում էր չմերժել և շտապ կարգով՝ հեռագրակապով կապվել Թիֆլիսում ու Երևանում գտնվող անգլիական ներկայացուցչի հետ՝ թաթարների վրա ազդելու, որպեսզի վերջիններս դադարեցնեն թշնամական գործողությունները ՀՀ քաղաքացիների նկատմամբ, հակառակ դեպքում անգլիական Միսիայի թուլյտվումթյամբ այդ շրջան կմտցվեն հայկական զորամասեր՝ ետ մղելու թաթարների հարձակումները գեներալ Լեժոնով¹¹¹⁶:

Գրուժյուկը բավականին դժվար էր նաև Ղամարլուում, որտեղ միլիցիան, Ներքին Գործերի մարմինները որոշակի ջանքեր էին գործադրում լարվածությունը մեղմացնելու և տեղական վարչակազմի հետ ուղիներ որոնում մահմեդականներին զսպելու համար, կատարելով նաև կենտրոնական իշխանությունների համապատասխան հրահանգները: 1919 թ. մարտի 3-ին այդ գավառամասի կոմիսար **Տեր-Հովհաննիսյանը** Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին հայտնում էր, որ շրջանի թուրքերի հանդեպությունը օր օրի ավելի ու ավելի համառ բնույթ է ստանում, ամենադաժան և սահմուկեցուցիչ հանդեպությունը համարելով փետրվարի 26-ին դասալիքների սպանությունը, մինչ այդ Սաղարակ տեղափոխելով իրենց կանանց ու երեխաներին: Գրուժյան հեղինակը նաև տեղեկացնում էր, որ Ավչար, Երրազլու և մի շարք այլ գյուղեր լեփ-լեցուն են գինված տղամարդկանցով, որ թուրքերը կամաց-կամաց իրենց օղակի մեջ խեղդում են տեղացի հայերին: Տեր-Հովհաննիսյանը առանձնահատուկ ընդգծում էր, որ ամեն օր Ղամարլու տանող խճուղու վրա ճանապարհվողները ծաղր ու ծանակի են ենթարկվում թուրքերի կողմից, որ մեկ-մեկ Ղամարլու անցնելն անհնարին է, և միայն «խմբերն» են գնում գալիս՝ նկատի ունի ըստ երևույթին մատուցելուների հայտնի «խմբերը», որոնք իրենք էլ ըստ էության թուրք ավագակաբարո խմբերից իրենց վարքագծով չէին տարբերվում, ահ ու սարսափ տարածելով բոլորի վրա: Գավառային այս կոմիսարը իր խոսքն ավարտում է շատ պատկերավոր. «Ճանապարհը ամեն օր սևին է տալիս անցնող թուրքերով, բոլորն էլ տղամարդիկ և անպայման գինված ընտիր գեներով: Թեև օրական գինված թուրքերը 100-ով են անցնում անգլիացուց առաջից և թեև անգլիացիք գիտեն թուրքերի այդ սպառնական շարժումը, բայց լուռ ու անտարբեր ականատես էին»¹¹¹⁷: Վերջինը կարևոր է տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը, նրա իսկական շահերը ըմբռնելու տեսանկյունից, ըմբռնելու, թե ինչու էին սնանկ և անհիմք այն հույսերն ու ակնկալիքները, որոնք ուներ հայկական կառավարությունը՝ կապված անգլիացիների ռազմավարություն այս կամ այն դրսևորման հետ:

¹¹¹⁶ Նույն տեղում, ք. 60:

¹¹¹⁷ Նույն տեղում, ք. 67:

Մահճեղական շարժումները որոշակի բացասական դեր էին կատարում ամբողջ Վեդիբասարում, ուստի հնարավոր չէր, որ Ներքին Գործերի մարմինները և միլիցիան այստեղ ևս որոշակի «հետաքրքրություններ» չունենային: Այդ մասին է վկայում Նախարարների խորհրդի 1919 թ. ապրիլի 1-ի նիստը, որում լավեց բրիտանական **գեներալ Լաուտենի** հետ կապված համաձայնություն մասին հարցը՝ Վեդիբասարին վերաբերող պայմանները փոխելու մասին: Նիստում որոշվեց հանձնարարել Արտաքին Գործերի նախարարին Ներքին Գործերի և Զինվորական նախարարների հետ միասին բանակցությունների մեջ մտնել Լաուտենի հետ այդ առթիվ¹¹¹⁸: Արխիվային փաստաթղթերից ակնհայտվում է, որ վիճակն այս շրջանում բավականին խճճված էր, իսկ անգլիացիները արմատական լուծումներ չէին առաջադրում, հաճախ էլ քողածածկված եզրեր էին փնտրում թաթարների հետ, անտեսելով հայերի ու հայկական կառավարություն իրական շահերը: Դա մասնավորապես դրսևորվեց նրանում, որ անգլիացիները հետևողական չէին տեղական բնակչությունից գեներալ և զինամթերքի առգրավման խնդրում, հաճախ էլ խոչընդոտներ հարուցելով հայկական միլիցիայի առաջ այդ խնդրում, իսկ վերջինս բավականին շատ էր և օգտագործվում էր թաթարների կողմից կասկածելի նպատակներով: Իսկ իշխանությունների կողմից առգրավված գեներալ և զինամթերքները Զանգիբասարի բնակավայրերում վերնաավածի լավագույն ապացույցն է. այսպես, ինչպես պարզվում է Զանգիբասարի շրջանում գործող միլիցիայի հեծելավաշտի հրամանատարի 1919 թ. հունվարի 21-ի գեկուցագրից՝ ուղղված Հայաստանի Տարածքի միլիցիայի տեսուչին, մինչև այդ պահը համաձայն համապատասխան մարմնի կարգադրության, Զանգիբասարի շրջանի գյուղերում պահակային միլիցիայի հետևակ վաշտի միջոցով հավաքվել է 1209 հրացան, որոնցից 400-ը՝ հանձնվել է միլիցիայի գավառային կոմիսարին¹¹¹⁹, իսկ 1919 թ. մայիսի 23-ի վիճակով ռեզերվի միլիցիայի 1-ին հեծելակ հարյուրյակի միջոցով բնակչությունից (գլխավորապես մահճեղական) բռնագրավվել և հանձնվել է Հայաստանի Տարածքի միլիցիայի տեսուչի ներկայացուցչին «Նազան» տիպի 762 ռևոլվեր, 13124 ժանդարմական հրացան, 10276 «Բրաունինգ» տիպի հրազեն, ինչպես նաև եռագլի հետևակային 30151 հրացան՝ մոտ 3.5 միլիոն փամփուշտով¹¹²⁰:

Մահճեղական ընդվզումների տազնապն ավելի զգալի էր նաև մի այնպիսի տարաբնույթ շահերի բախման կիզակետ հանդիսացող շրջանում, ինչպիսին է Արդահանի մարզը, ուր թուրքական գործոնը ռեալ սպառնալիք էր դարձել Հայաստանի իշխանությունների համար, որից ծայրահեղ դժգոհում էին տեղական հայկական իշխանությունները, փորձելով թաթար-թուր-

¹¹¹⁸ ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100 (43), ք. 56, գ. 96, ք. 57:

¹¹¹⁹ Նույն տեղում, Ֆ.Պ - 201, ց. 1, գ. 318, ք. 84:

¹¹²⁰ Նույն տեղում:

քական, վրացական և այլ նկրտումներին հակադրել տեղական վարչակազմի, ներքին Գործերի մարմինների ու միլիցիայի միանգամայն սահմանափակ հնարավորությունները: Այն ըմբռնելու համար բերենք ընդամենը մեկ օրինակ: Այսպես, 1919 թ. օգոստոսի 16-ին Կարսի նահանգապետին ուղարկված զեկուցագրում (№ 16) Արդահանի օկրուգի միլիցիայի պետը հայտնում էր, որ ընդհանուր քաղաքական դրուժյունը՝ կապված ազգամիջյան հարաբերությունների հետ գտնվում է ծայրահեղ տաղնապալից վիճակում և լուրջ տագնապ է ներշնչում: Գրուժյան հեղինակը հայտնում էր, որ Արդահան-Օլթիի շրջանում չափազանց սուր բախվում են Հայաստանի, Վրաստանի և Թուրքիայի կառավարությունների տարածքային շահերը, որ շրջանում վրացական կառավարության և Օլթիի շրջանի մահմեդականների կողմից տարվում է ուժեղացված քարոզչություն, միաժամանակ տեղի է ունենում գործերի համատարած կենտրոնացում սահմանամերձ շրջաններում: Միլպետը տեղեկացնում էր, որ վրացա-ադրբեջանական գործերը տեղակայվելով Ախալքալաքում և Ախալցխայում, ուղարկում են հեծյալ պարեկախմբեր ու ուղեկալներ՝ ուժեղացված հետախուզություն իրականացնելով՝ ընդհուպ մինչև Խանասորի լեռնանցքը: Զեկուցագրում նաև նշվում էր, որ դրա հետ մեկտեղ վերջիններիս կողմից դիվանագիտական բանակցություններ են տարվում էրզրումի հետ և Թուրքական վիլայեթների ներկայացուցիչների համագումարում ներկա են եղել նաև ներկայացուցիչներ Ադրբեջանից: Գրուժյան հեղինակը նաև տեղեկացնում էր Կարսի նահանգապետին, որ անընդհատ էրզրումից շարունակում են ժամանել հարձակողական գործողությունների ուժեղացված կերպով նախապատրաստվող գործասեր, որոնց կողմից գործողություններ ձեռնարկելու սկիզբը վերջիններս կապում էին Հաշտության Վեհաժողովի (Դաշնակիցների, ասել է թե՛ ՀՀ Անտանտյան «բարեկամների» կողմից - Վ. Վ.) ավարտի արդյունքների հետ: Զեկուցագրում նաև նշվում էր, որ էրզրումում գտնվող և սահմանային ծառայություն իրականացնող 9-րդ Թուրքական դիվիզիայից բացի, տեղաբաշխված են նաև կամավորական գործասեր՝ մոտ 10.000 սվինից կազմված՝ հրետանիով և հեծելազորով հանդերձ: Զեկուցագրում նշվում էր, որ գորահավաքը ընդգրկում է 20-ից 60 տարեկաններին, որը հնարավորություն է տալիս հասնել առավելագույն արդյունքի: Զեկուցագիրը նաև փաստում էր, որ այդ բոլոր միավորումները գլխավորում է Շեֆթի փաշան, որի շտաբը գտնվում է էրզրումում, իսկ առաջատար ավանգարդային շրկատի հրամանատարը Օլթիի ճակատում Բիմբաշի Զաֆար բեկն է, որի շտաբն էլ գտնվում է Օլթիում: Արդահանի օկրուգի միլիցիայի պետը իր զեկուցագիրն ավարտում էր քաղաքական դրուժյան մասին ամփոփիչ եզրահանգմամբ, ըստ որի տեղական մահմեդական բնակչության հնարավոր ապստամբությունը կանխելու համար կառավարությունը պետք է վճռական միջոցներ ձեռնարկի ու-

Ժեղացնելու համար թիկունքը, Մերգենեկի ուղղությամբ գործող հայկական գործառնական և վճռական օպերացիա իրականացնի օկրուզում¹¹²¹:

Ինքնին հասկանալի է, որ բանակային գործառնականները, Ներքին Գործերի մարմինները, միլիցիան որոշակի դեր պետք է կատարեն երկրում ներքին կարգ ու կանոնի, օրինականության հաստատման ուղղությամբ մի շատ կարևոր հիմնախնդրի լուծման առումով, այն է՝ Հայաստանի տարածքում գտնվող մահմեդական բնակչության ընդվզումների «հանդարտեցման», խռովությունների ճնշման և օրինական իշխանությունների լիազորությունները ամրապնդելու, երբեմն էլ՝ վերահաստատելու համար այն՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության անվտանգությունը արտաքին և ներքին բազմաթիվ թշնամիներից:

¹¹²¹ Նույն տեղում, գ. 62, ք. 63:

ՎԵՐՉԱԲԱՆԻ ՓՈՆԱՐԵՆ

Չափազանց անիրական աշխարհաքաղաքական պայմաններում հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Պետականության և այն խորհրդանշող կառույցների կերտումը ընթացավ տնտեսա-քաղաքական ծանրագույն իրավիճակում: Պատմաքաղաքական զորագացման փորձը վկայում է, որ ամեն մի պետության անքակտելի բաղկացուցիչն են կազմում այդ պետության գոյություն, նրա ազգային-պետական անվտանգության ու նրա կողմից տարաբնույթ գործառնությունների իրականացման ապահովման երաշխավորողների դերում հանդես եկող կենսականորեն անհրաժեշտ այն ռազմաքաղաքական կառույցները, որոնք պետության զորագացման ներքին տրամաբանությամբ պարտադրվում են տվյալ հասարակությանը: Այնտեղ, որտեղ կա պետություն և քանի դեռ գոյություն ունի այդ կառույցը, կլինեն նաև հետախուզություն և հակահետախուզություն, միլիցիա (ստտիկանություն) և Ներքին Գործերի նախարարություն, բանակ և այլևայլ ուժային ստորաբաժանումներ: Բնականաբար էլ, Հայաստանի Առաջին Հանրապետության պետաքաղաքական գործընթացների հիմքում պետք է ընկած լինեին պետական անվտանգության համակարգի ձևավորման ու գործունեության կազմակերպման գործընթացները: Այդ գործընթացների հետևանքով ծնվեցին անվտանգության համակարգի այն անհրաժեշտ կառույցները, որոնք ձեռնամուխ եղան Հայաստանի Հանրապետության և նրա պետական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված գանազան ծրագրերի մշակմանը և համապատասխան գործողությունների ձեռնարկմանը, փորձելով հայ ժողովրդին որոշակի պատմական տարածքի վրա ապահովագրել այն բոլոր վտանգներից, որոնք սպառնում էին հարևան ոչ բարեկամ պետությունների կողմից և իրականացնել քայլեր, որոնք կհանգեցնեին Միացյալ Անկախ Հայաստանի ստեղծման գաղափարների իրականացմանը, որն անհնարին կլինե՞ր առանց համառ և տևական ձգտման՝ ունենալու պետական անվտանգության հուսալի ազգային-քաղաքական համակարգ:

Մենազրույթունը բերում է այն եզրահանգման, ըստ որի հնարավոր չէր, որ Հայաստանի Առաջին Հանրապետությունը ձգտեր ունենալ այլևայլ ուժային-ալաշտպանական և քաղաքական կառույցներ՝ բանակ, խորհրդարան և այլն, սակայն կարիք չգզար հատուկ ծառայությունների, Ներքին Գործերի նախարարության ուժային ստորաբաժանումների, միլիցիայի, զբոսնով իսկ արմատապես հերքելով տարիներ շարունակ իշխող այն թյուր պատկերացումները, թե իբր Առաջին Հանրապետությունը կազմակերպված պե-

տուժյունն չի եղել, որ այն կիսատ-պուատ, անլիարժեք պետուժյունն է եղել, և առհասարակ այդ ժամանակաշրջանի պետականուժյունը նսեմացնող բոլոր այն տեսակետները, որոնց հիմքում ընկած են ձևակերպումներ, որոնք առհասարակ պետուժյունը պատկերացնում են առանց այդ կարևորագույն հաստատուժյունների: Մենագրուժյունը ցույց է տալիս, որ Առաջին Հանրապետության պարագայում հաստատվեց պատմաքաղաքական այն ճշմարտուժյունը, որ պետական անվտանգության համակարգի ձևավորման և գործունեության կազմակերպման անհրաժեշտուժյունը պարտադրվեց պետուժյանը զարգացման հատուկ օրենքների ներքին անկասելի տրամաբանությամբ: Հետևաբար, նոր ձևավորված Հայաստանի Առաջին Հանրապետության պետաքաղաքական և ռազմական համակարգի անբաժան մասերը դարձան ինչպես բանակը, այնպես էլ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը կամ ասել է թե՛ հայկական հետախուզական և հակահետախուզական ծառայուժյունը, ՆԳՆ ուժային ստորաբաժանումները, միլիցիան և այլն, որոնք ձևավորելիս փորձ առհասարակ չկար, այլ կար ընդամենը ռուսական ցարական բանակի Արևմտահայաստանից ու Հարավային Կովկասից հեռացումից հետո մնացած սպայական կազրուժ, այդ բանակի բովով անցած և մարտական ուղիներում թրծված հայ զինվորականուժյունը, որը փորձում էր խարխալելով ու մաքառումների դժվարին ուղի հաղթահարելով՝ սեփական ոտքերի վրա կանգնել՝ պահպանելով վեհ հերոսականության ու ազգային արժանապատվության ոգին, հստակ նպատակադրում ունենալով՝ պաշտպանել ՀՀ ազգային-պետական անվտանգուժյունը նրա թշնամիներից և արտաքին ուժերի ոտնձգուժյուններից, ինչպես նաև տարածաշրջանային կատակլիզմներից և նպաստել Հանրապետության առաջ կանգնած ազգային-քաղաքական ծրագրերի իրականացմանը:

Հատուկ ծառայուժյունները՝ հետախուզուժյունը և հակահետախուզուժյունը այն կարևորագույն կառույցներն են, առանց որոնց անհնարին է պատկերացնել անկախ պետականության իրավիճակ, ինքնուրույնուժյուն և լիարժեք արտաքին քաղաքականուժյունն առհասարակ: Հատուկ ծառայուժյունները կազմել են Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական և պետական անվտանգության համակարգի անբաժան մասը՝ դրանով էր Հայաստանը համարվում կազմակերպված պետուժյուն: Հետազոտուժյունից պարզորոշ է դառնում, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայուժյունները ստիպված էին կազմակերպական գործընթացներ ապրել աշխարհաքաղաքական մեկուսացման պայմաններում՝ հաղթահարելով ահռելի Ֆինանսա-տնտեսական և կադրային-տեխնիկական դժվարություններ, փոխարենը հենվելով անտանտյան մեծ ու հզոր դաշնակիցների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի օգնության խախուտ հույսի վրա, դեմ առ դեմ կանգնելով ադրբեջանա-վրացական և թուրք-քեմալական-

խորհրդային սինդրոմի առաջ: Առկա արխիվային փաստաթղթերից և այլ վավերագրերից ակնհայտ է, թե ինչպիսի կադրային գերխնդիրների հետ էին բախվում Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզությունը և հակահետախուզությունը, որի ղեկավարներն իրենք իսկ անչափ երիտասարդ էին և սովորելու շատ բան ունեին: Այստեղից միանգամայն օրինաչափ էր, որ աշխարհաքաղաքական բարդ և խճճված ռազմաքաղաքական իրադրությունում ինչպիսի խրթին խնդիրների հետ էին բախվում հայկական հատուկ ծառայությունները՝ դեմ դիմաց ելնելով շատ ավելի գորեղ ու կադրային, տնտեսական, ֆինանսական անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ ու ռեսուրսներ իր մեջ պարփակող Թուրքիայի համանման կառույցների հետ, որն ուներ նաև տեսանելի և անտեսանելի հզոր դաշնակիցներ: Արդյունքում՝ Հայաստանի ջախջախիչ պարտությունը 1920 թ. սեպտեմբերի 23-ի սկսված թուրք-հայկական պատերազմում, որում հայկական հատուկ ծառայությունները չկարողացան քիչ թե շատ ռեալ հակադրվել թուրքական հատուկ ծառայություններին, որոնց թիկունքին զգացվում էր մեծ տերությունների ամենևին էլ ոչ հայանպաստ քայլերի կոպիտ շնչառությունը: Միաժամանակ պետք է հատուկ նշել, որ հայկական հետախուզական ծառայությունների գործունեության արդյունքները ոչ միշտ էին իրատեսորեն գնահատվում և հաշվի առնվում Հայաստանի Հանրապետության քաղաքական-կուսակցական ղեկավար շրջանների կողմից, որոնց դերքորոշումը դեպի Սևրյան երկրներն էր, ինչն էլ անշրջելի ազդեցություն թողեց տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների և դրանց արդյունքների վրա: Ամփոփելով վերն ասվածը, կարելի է եզրահանգել, որ Հայաստանի Երրորդ Հանրապետությունն ունի անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ (բոլոր առումներով, թեկուզև այստեղ էլ կան չլուծված խնդիրներ) ամենաբարձր մակարդակով կազմակերպելու և ուղղություն տալու Հայաստանի հատուկ ծառայությունների՝ հետախուզության և հակահետախուզության աշխատանքներին, հենվելով Առաջին, ինչպես նաև Երկրորդ՝ սովետական, սոցիալիստական հանրապետության ռեսուրսների պատմաքաղաքական փորձի վրա:

Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության տարիներին ՀՀ - Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը հենվելով տեղերից ստացված գործակալական տվյալների վրա՝ կազմել է տեղեկատվական բնույթի ահուգի հարստություն իր մեջ պարփակող հետախուզական խիստ բազմաթիվ ծածկազրով (չիֆր) ամփոփագրեր, որոնք հնարավորություն էին տալիս ռազմաքաղաքական առումով հնարավորինս ամենաբազմակողմանի պատկերացումներ կազմելու տարածաշրջանում, Հայաստանի շուրջ գործող համաշխարհային հայտնի ու անհայտ ուժերի մասին, ինչպես նաև ռազմաքաղաքական անց ու դարձի, հակառակորդի գործակալների ծավալած քայքայիչ գործունեության

և այլնի մասին, որոնք հրամցվում էին հանրապետության ղեկավարությունը ի գիտություն և որպես ուղեցույց՝ համապատասխան պրակտիկ ու կանխարգելիչ գործողությունների իրականացման համար՝ հակազդելով հակառակորդի ՀՀ պետական անվտանգության խարխլմանը նպատակաուղղված գործողություններին և ձեռնարկել պատասխան քայլեր: Իր գոյություն երկուս ու կես տարիների ընթացքում ՀՀ հետախուզական ծառայությունը ունեցել է չորս պետ: Մենագրությունը բերեց այն եզրակացություն, որ Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության իրավասությունների և հնարավորությունների շրջանակները չեն համապատասխանել դարամակարդակ պահանջներին, ոչ միայն այն պատճառով, որ այն ունենալու համար պետք էին փորձարկման երկար ու ձիգ տարիներ, այլև կադրային-քաղաքական լիցքի և որոշակի փորձի բացակայությամբ: Այդ ժամանակաշրջանի իշխանությունները, մեր կարծիքով, այնքան մեծ տեղ չեն ցանկացել տալ այդ կառույցներին, կամ էլ չեն հասկացել դրանց կարևորությունը հայկական պետականության կայանքում, կամ էլ շատ խնդիրների լուծումը և իրենց սպասելիքները պայմանավորել են Սևրյան երկրներով, հյուսիս-հարավ աշակերտի կեցվածք ընդունելով, կարծելով, որ դա կնպաստի կուտակված հիմնախնդիրների լուծմանը և մեծ տերությունները ըստ արժանվույն կգնահատեն իրենց հավատարմությունը դաշնակիցներին, ըստ այդմ էլ երբեմն դազվածի մամլիչի տակ դնելով Ֆինանսա-տնտեսական դժվարին պայմաններում գործող հայկական հետախուզական ծառայության կողմից հայթայթված արժեքավոր տեղեկատվությունը: Այն, որ ՀՀ իշխանությունները 1918-1920 թթ. կրավորական կեցվածք են ընդունել հետախուզության, Ն ԳՆ ու ժային ստորաբաժանումների և այլ կառույցների կազմակերպական խնդիրների լուծման բնագավառում, այդ ուղղությամբ զգալի ֆինանսական հատկացումներ կատարելու համար հատուկ ջանքեր չեն գործադրել, այդ մասին են վկայում նաև այն համեստ գումարները, որոնք հատկացվել են հետախուզական գործի, ինչպես նաև անվտանգության համակարգի այլ մարմինների կազմակերպման համար: Դատելով արխիվային փաստաթղթերից, տարբեր կառույցների գործունեությունն արտացոլող տնտեսա-ֆինանսական հաշվետվություններից և այլևայլ հաշվարկներից, զանազան ոչ առաջնային խնդիրների՝ տարբեր այցելությունների, ուղևորությունների, միջոցառումների, օտարերկրյա գինվորական-քաղաքական գործիչների և որպես հայ ժողովրդի «բարեկամներ» համարված գինվորական-քաղաքական «գործիչներ» պարզևատրումների համար հատկացվել են համեմատաբար մեծ գումարներ, ավելացրած դրան՝ պետական-պաշտոնական դիրքի չարաշահման հետևանքով կազմակերպվող պետական գանձարանի կողոպուտները և ավազակաբարո խմբերի գործողությունները: Գուցե և հնարավորություն կար ավելի մեծ գումարային հատկացումներ կատարելու, եթե, իհարկե, պետություն մեջ ավելի մեծ չափի կազմակերպվածություն լիներ, և նրա քա-

ղաքական-ազգային առաջնորդները խորապես ըմբռնելին, որ ամեն մի պետության հիմքը նրա ուժային և հետախուզական կառույցներն են, այդ թվում նաև և՛ բանակը, և՛ ՆԳՆ ուժային մարմինները, այլ ոչ թե իրենց ողջ հույսերն ու սպասելիքները պայմանավորվածություն, որոշակի կախվածություն մեջ պահելին Սևրյան ու Ազգերի Լիգայի երկրների ռազմաքաղաքական ծրագրերի հետ: Ավելին, քանզի 1920 թ. օգոստոսի 10-ից հետո ընկած ժամանակահատվածում, ընդհուպ մինչև նույն թվականի սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի աղետալի օրերը, իշխում էր Սևրով ծնված խանդավառության ոգին, այդպիսի իրավիճակում Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական-կուսակցական ղեկավարությունը և կառավարությունը չկարողացան ունենալ անհրաժեշտ հեռատեսությունը և շրջահայացությունը իրատեսորեն ու ճկունորեն կողմնորոշվելու, օր-օրի փոխվող աշխարհաքաղաքական իրադարձությունների քսոսային ընթացակարգում և ընդունել շրջահայաց, ոչ ժամանակավրեպ որոշումներ: Հենց այդ գործոններով էլ պայմանավորված հաճախ վերջիններս անտեսում էին հետախուզական ղեկավար մարմնի՝ ՀՀ Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի կողմից ներկայացրած տեղեկատվության մեջ պարունակվող արժեքավոր առաջարկները և հուշող խորհրդատվությունները՝ Սևրից հետո ստեղծված իրադրություն մեջ կողմնորոշվելու և ըստ այդմ հնարավոր վտանգներից հայկական պետությունը ձեռքագատելու համար: Ամենևին չփորձեցին ըմբռնել, որ տվյալ իրադրությունում ինչպես այլընտրանք չունեն քեմալա-խորհրդային մերձեցումը, այնպես էլ խորքային իմաստներով իր բացատրությունն ունեն վիստոյան բարեկամների հրաժարումն Անտանտի գծով իրենց եղբայրակցից, հետևաբար նաև 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Ազգերի Լիգայի երկրների կողմից ակնկալվող օգնության մերժումը, և վերջապես, միանգամայն ըմբռնելի է դառնում սեփական հետախուզական ծառայության կարծիքը իրատեսորեն հաշվի առնելու կարողունակության բացակայությունը, ուրեմն Հայաստանի Հանրապետությանը, նրա քաղաքական առաջնորդներին մնում էր գլորվել Սևրի բարձունքներից և ջարդուփշուր լինել, ինչը և տեղի ունեցավ: Բնականաբար, 1918-1920 թթ. ՀՀ կուսակցական-քաղաքական ղեկավարների կողմից էապես նսեմացվել է ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի դերն ու նշանակությունը, որը զգալի չափով պայմանավորված էր վերը նշված գործոններով: Հետևաբար, Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի գործունեությունը գերազանցում էր և նրա կողմից ներկայացրած արժեքավոր տեղեկատվության հետ լիարժեքորեն հաշվի չնստելը պայմանավորված էին մի կողմից՝ կառավարող կուսակցության՝ ՀՀ Դաշակցության ներսում իշխող անառողջ տրամադրություններով, իսկ մյուս կողմից՝ պատմաքաղաքական իրադարձությունների այն իրատեսական ու օբյեկտիվ գործընթաց-

ներով, որոնց մեջ հայտնվել էր Հայաստանի Հանրապետությունը: Հետևապես, հայկական հետախուզական և հակահետախուզական ծառայություն, Ն ԳՆ իրավապահ ուժային մարմինների պատմությունն էական պատմաճանաչողական դասերից մեկն իրավամբ պետք է այն համարել, որ հետախուզություն ու հակահետախուզություն, ինչպես նաև Ն ԳՆ ուժային կառույցների դերի ամեն մի նսեմացում առաջ է բերում պետականության դերի նվազեցման մասին պատկերացումների նենգափոխում՝ դրա բոլոր բացասական հետևանքներով: Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի կարևորագույն օղակները՝ հետախուզություն և հակահետախուզություն, Ներքին Գործերի նախարարություն, միլիցիայի փորձի հետևողական ու ամբողջական հետազոտությունը մեզ բերում է այն եզրահանգման, որ ներկայիս քաղաքական-սահմանադրական փոփոխությունների ընթացքում, որոնք շատ դեպքերում միանգամայն անտեղի դիտվում են որպես վերափոխումներ, նախընտրելի ու նպատակահարմար էր ոչ թե անցումը Ազգային Անվտանգության նախարարությունից դեպի Ազգային Անվտանգության ծառայություն, կամ էլ Ներքին Գործերի նախարարությունից Հայաստանի ոստիկանության կառույցին և այլն, որը հանգեցնում է հայկական պետականության, և առհասարակ պետության դերի մասին գաղափարի նսեմացմանը, որն էլ իր հերթին տանում է երկրի ներքին ու արտաքին քաղաքականության ինքնուրույնության անկման և նկատելի որակական ոչ ցանկալի փոփոխությունների, պետական անվտանգության համակարգի և նրա դրսևորման զգալի թուլությունը, եթե ոչ՝ գրեթե կործանմանը: Ասվածից կարելի է եզրակացնել, որ պետական անվտանգության համակարգի այս կամ այն ստորաբաժանման դերի նսեմացումը ներկայիս գործընթացների պայմաններում զգալի չափով թուլացնում է հայկական պետականության հիմքերը, քայքայում դրանք, խարխուլում նրա դերը հասարակական-քաղաքական արդի գործընթացներում և ազգապահպանիչ քաղաքականությունում:

Այս առումով կարևորվում է նաև Առաջին Հանրապետության պետական անվտանգության մեկ այլ օղակը՝ Ն ԳՆ և միլիցիայի դերի նորովի համակողմանի բացահայտումը, որը ևս բացառապես չուսումնասիրված հիմնախնդիրներից է: Ակնհայտ է, որ 1918-1920 թվականներին հայկական միլիցիան և ընդհանրապես Ներքին Գործերի նախարարությունը ստեղծվում էին նույնչափ դժվարին տնտեսական-քաղաքական և սոցիալական լարված պայմաններում, դրան ավելացրած՝ աշխարհաքաղաքական մեկուսացված և խճճված իրավիճակը Հայաստանի շուրջ: Դժվար էր միլիցիա, և այն էլ օրինապաշտ ու ժողովրդին ծառայող միլիցիա և Ներքին Գործերի մարմիններ ստեղծել այնպիսի մի երկրում, ուր կային հարյուր հազարավոր սովալուկ գաղթականներ, մահմեդական գրեթե կեսմիլիոնանոց մուսթ և Հայաստանի ու նրա իշխանությունների նկատմամբ ոչ լոյալ տրամադրված զանգված և այլն: Ակնհայտ է, որ տնտեսական ահավոր քայքայվածության և պետական

իշխանության մարմինների ստեղծման ոչ միանշանակ գործընթացների պայմաններում դժվար էր գտնել թե՛ անհրաժեշտ կադրեր, որոնք զբեթե չկային, և թե՛ Ֆինանսական միջոցներ, որոնք շատ կարևոր գործոններ են գործուն և պետականամետ գործելակերպ ունեցող միլիցիա և առհասարակ Ներքին Գործերի մարմիններ ստեղծելու համար: Ընդ որում, այդ գործընթացների ընթացքում անհրաժեշտ էր հաղթահարել պետութունից դուրս գտնվող կամ պետության մեջ պետութուն դառնալու ու ինքնուրույն լինելու ձգտում ունեցող որոշ ապապետական ուժերի, մասնավորապես այսպես կոչված «**մաուզերիստական խմբերի**» ավագակաբար տրամադրությունները, որոնց համար Հայաստանի դժվարությունները անըմբռնելի էին, իսկ երկիրը՝ իրենց «**Հայրական ոտչիւնան**» էր, ուր կարելի էր ամեն ինչ, ինչ խելքներին փչի, ընդհուպ մինչև մռայլ միջնադարը հիշեցնող խոշտանգման ինկվիզիցիոն մեթոդների կիրառումը այսպիսի ժողովրդական դրսևորում ցուցաբերող կամ իրենց հոռի ձգտումներին ենթարկվելու ցանկություն չունեցող բնակչության խմբերի, առանձին անհատների վրա: Երկրի ներքին խճճված, տնտեսա-քաղաքական ծանր վիճակը, որը նաև դրսի որոշ «մութ» ուժերի կողմից խորացվում էր, էլ ավելի էր բարդացնում ուժային այս անհրաժեշտ և կարևորագույն պետական կառույցների ստեղծումը: Անշուշտ, չի կարելի չըջանցել և այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին մարդկային գործոնն է, որը **Մովսես Խորենացու նշանավոր «Հայոց պատմություն» Հայտնի «Ողբ»-ի** ժամանակներից հետո շատ քիչ էր որակական փոփոխություն ենթարկվել, և ըստ էության նաև պետականամետ մտածողություն բացակայություն պայմաններում, Հնարավորություն էր ձեռք բերել 1918-1920 թթ. իրականությունում և սովի սցենարներով պայմանավորված դժվարին պայմաններում դրսևորելու նաև իր բոլոր բացասական հատկությունները, ինչպես նաև այն ամենը, որոնք մնացել էին մոնղոլ-թաթարական, չինգիսխանական և լենկթեմուրյան ժամանակներից որպես ժառանգություն: Կարելի է հանգել այն եզրահանգման, որ խորշակաբեր ու աղետալիցք այդ ավիքներն անցել էին հայ ժողովրդի վրայով և մարդկանց գիտակցություն մեջ արմատներ գցել, որը չէր մնացել միայն որպես հիշողություն, այլև սովորություն, բնավորության գծերի ձևով արմատավորված երևույթ էր դարձել՝ իր բոլոր հետևանքներով հանդերձ: Հետևաբար, և՛ միլիցիան, և՛ Ներքին Գործերի նախարարության ողջ համակարգն այդ տարիներին փորձեցին, սակայն չկարողացան արդյունավետորեն հակազդել զանազան մաուզերիստական և այլ տեսակի խմբերի կամայականություններին և սանձարձակություններին, չկարողացան արմատական լուծում տալ նաև դասայքության խնդիրներին:

Ամփոփելով, կարելի է եզրահանգել, որ Առաջին Հանրապետություն Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի կամ ծառայության, ինչպես նաև ՆԳՆ ուժային ստորաբաժանումների, միլիցիայի, բանակի ու առհասարակ պետական անվտանգության համակարգի ձևավորման նկատ-

մամբ ՀՀ կառավարության ու կուսակցությունների դիրքորոշման փորձի ուսումնասիրությունը մեզ հուշում է, որ անկախ պետականությունը ներկա գործընթացների ուղին բռնած Երրորդ Հանրապետության համար պետք է նախընտրելի դառնան ուժեղ պետականությունը՝ անվտանգություն մարմինների դերի ուժեղացումը պետություն մեջ, որոնք նրա իրական առաջընթացի և միջազգային ասպարեզում նրա դերի բարձրացումը պայմանավորող կարևոր երաշխիքներից են: Դա ամենևին էլ հակասություն մեջ չի գտնվում ներկայիս գլոբալիստական բնույթի փոփոխությունների հետ, երբ որ կեղծ փաստարկումներ են բերվում, որ պետք է ջարդել «Միասնական Եվրոպայի» կամ այլ նմանատիպ միասնական կառույցների մեջ չտեղավորվող ազգային անձուկ անջրպետները, հետևապես կարիք չկա ունենալու ուժեղ անվտանգության համակարգ, կամ էլ Ներքին Գործերի նախարարություն, կամ էլ ժամանակակից հզոր ազգային բանակ, դա փոքր պետությունների փոխարեն կարող են ունենալ մեծ տերությունները: Դա պատմաքաղաքական, պետականության զարգացման գործընթացների բուն էություն, մեղմ ասած, կոպիտ աղավաղում է, նենգափոխում է, որոնց նպատակն է՝ դիմացինին համոզել երկրորդական պետականություն լինելու գաղափարի հետ: Հետևապես, պետք է վերականգնել պետական անվտանգության մարմինների, Ներքին Գործերի նախարարություն և այլ կարևոր կառույցների դիրքերը հայկական պետականությունը ներկա գործընթացներում, այլ ոչ թե ճամարտակել ասենք նախագահի իշխանություն սահմանափակման և Ազգային ժողովի լիազորությունների նկատելի ընդարձակման մասին, որը վերնաաված օրինակների հետ միասին, թույլ պետականություն օրինակ է, ինչն անհարիր է Հայ ժողովրդի իրական ազգային պատմաքաղաքական իդեալի ու ձգտումների հետ:

Առաջին Հանրապետությունը պետական անվտանգության համակարգի՝ հետախուզական և հակահետախուզական ծառայություն, ՆԳՆ ուժային ստորաբաժանումների, միլիցիայի, ինչպես նաև հայկական ազգային բանակի որպես պետական անվտանգության ամբողջական համակարգի հիմնական օղակների գործունեության պատմաքննական վերլուծությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ դրանք եղել են ոչ թե սոսկ պրիմիտիվ իմաստով հասկանալի սաղմնային վիճակում գտնվող կառույցներ, ինչպես դա երբեմն պարզունակ կերպով ընկալում են, այլ հանդիսացել են բարձր կազմակերպվածություն և ռազմաքաղաքական համակարգում ուժեղ դիրքերի ձգտող անվտանգության համակարգի իրական, զարգացող և գործնական ստորաբաժանումներ: Դրանք, անշուշտ, այնքան էլ շատ բարձր պրոֆեսիոնալներ չէին, քանզի պակասում էր պետականություն երկարատև գոյությունը պայմանավորված և ըստ այդմ ձևով բերվող դարավոր փորձի սակավությունը: Այդ ժամանակաշրջանում պատմական զանազան հանգամանքները, ռազմաքաղաքական գոյություն ունեցող իրադրությունը, իրադարձությունների

ու դեպքերի գլխավորույտ արագությամբ ընթացող զարգացումները հնարավորություն չտվեցին այդ կարևորագույն ուժային կառույցներին քիչ թե շատ բնականոն, ավելի հարմարավետ ու տանելի պայմաններում ձևավորվելու և դրսևորվելու որպես իսկական ուժեղ պետականությունը հատուկ մարմիններ: ՀՀ կառավարության և խորհրդարանի, ՆԳՆ և ռազմական նախարարությունների կողմից ընդունված որոշումներն ու օրենքները որոշակի իմաստով քիչ թե շատ հաջող փորձեր ու ձգտումներ էին ավարտուն և լիարժեք դարձնելու այդ կարևոր պետական կառույցները, ժողովրդի մեջ մեծացնելու վստահությունը և արժանապատիվ հարգանքը անվտանգության մարմինների նկատմամբ: Ակներև է, որ կար պետականություն փորձի, պետական մտածողություն ու քաղաքական կուլտուրայի զգալի պակաս ինչպես պետական իշխանությունների, այնպես էլ հասարակության և կուսակցությունների տարբեր շերտերի կողմից: Այդուհանդերձ, Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության մարմինները՝ հետախուզական և հակահետախուզական ծառայությունը, ՆԳՆ ուժային ստորաբաժանումները, միլիցիան և այլ կառույցներ պետականությունը հատուկ դրսևորումներ էին, և բոլոր հիմքերը կան պնդելու, որ դրանք որոշակի իմաստով կազմակերպված կառույցներ էին, այնքանով՝ ինչքանով՝ որ ընդհանուր առմամբ Հայաստանի 1918-1920 թվականների Հանրապետությունը հանդիսանում էր կազմակերպված պետականություն:

Ուսումնասիրություն արդյունքներով եկել ենք այն եզրակացության, որ իր առանձին թերություններով ու անխուսափելի բացթողումներով հանդերձ, ՀՀ պետական անվտանգության համակարգը (հետախուզություն և հակահետախուզություն, ՆԳՆ ուժային ստորաբաժանումներ, միլիցիա՝ ոստիկանություն) կայացած համակարգ էր՝ պետականությունը հատուկ անկապտելի բոլոր կարևոր հատկանիշներով: Թե՛ ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանումները՝ այսինքն՝ հայկական հետախուզական ծառայությունը, թե՛ ՆԳՆ ուժային կառույցները, միլիցիան, և մի շարք այլ կարևոր կառույցներ կազմակերպական-քաղաքական տեսանկյունից անցան անհրաժեշտ բոլոր գործընթացների հիմնական ուղիներով: Սկզբնական փուլում, որն ընդգրկում է 1918 թ. անկախության հռչակումից մինչև 1919 թ. հունվարին Միացյալ Ազգատ և Անկախ Հայաստանի հռչակումը, այդ կառույցներն անցնում էին կազմակերպական-քաղաքական գործընթացների ամենաբարդագույն էտապը՝ սկսելով զրոյից, անհրաժեշտ փորձի կուտակման ցայտնոտային փուլ ապրելով և հերոսական ջանքերով ձգտելով ՀՀ ազգային-պետական անվտանգության այդ ստորաբաժանումներին հատուկ գործունեություն ծավալել արդեն 1919 թ. սկզբներին: 1919 թ. հունվարից հետո ընկած ժամանակահատվածում՝ մինչև 1920 թ. օգոստոսյան Սևրյան խանդավառության և սեպտեմբերի 23-ին սկսված Հայաստանի Առաջին Հանրապետության համար

աղետալի թուրք-հայկական պատերազմը այդ ուժային կառույցներն ապրեցին որոշակի հույսերով, վարդապետ ծրագրեր մշակելով և փորձելով դրանք իրականացնել պրակտիկ կյանքում՝ ակնկալիքներով, անշուշտ, իրենց գործունեությունում ստանալու բարեկամ մեծ տերությունների թե՛ բարոյական, թե՛ ռազմաքաղաքական աջակցությունը, վերջապես՝ 1920 թ. վերջնամասը, որտեղ պետական անվտանգություն այդ մարմիններին սպասում էին ոչ պատահական անհաջողություններ և փլուզումներ, այդ թվում պետականության խորհրդանիշ հանդիսացող բոլոր տեսակի կառույցների՝ թե՛ բանակի, թե՛ հետախուզական և հակահետախուզական ծառայության, և թե՛ ՆԳՆ ուժային ստորաբաժանումների ու հայկական միլիցիայի: Ընդ որում, հարկ է առանձնահատուկ նաև նշել, որ ՀՀ պետական անվտանգության համակարգի, և առանձին ստորաբաժանումների փլուզման-լուծարման գլխավոր պատճառները պետք է որոնել առաջին հերթին աշխարհաքաղաքական արտաքին բնույթի գործոնների մեջ, և վերջում արդեն՝ ներքին պայմաններում, որոնք ևս կարևոր հանգամանքներ էին, սակայն վճռորոշ չէին: Այդուհանդերձ, Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի, և նրա բաղկացուցիչների՝ թե՛ հետախուզական և հակահետախուզական ծառայության, թե՛ ՆԳՆ ուժային և այլ կառույցների մաքառումներով ու հերոսականությամբ դասառատ փորձը միանգամայն օգտակար և ուսանելի է հենց այսօրվա պետաքաղաքական, հայկական պետականության ամրակայման և զարգացման գործընթացների տեսանկյունից:

Հայկական բանակի, այդ թվում նաև Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության պատմության հիմնախնդիրներին գիտնականները դեռ բազմիցս կանգնադառնան, քանզի կան հարցեր, որ դեռ իրենց լուսաբանմանն են սպասում, մի շարք մոտեցումներ էլ հետագա ճշգրտման և լրամշակումների կարիք են զգում, պահպանելով իրենց արդիական հնչեղությունը: Դա է ժամանակի հրամայականը, քանզի այսօրվա պետաքաղաքական գործընթացների տեսանկյունից կարևորվում են նաև այն հարցերը, որոնք առնչվում են հայկական բանակի նորացման և հզորացման հիմնախնդիրներին ներկայիս գլոբալիզացման հարավուփոս գործընթացների պայմաններում:

Հայաստանի Հանրապետության բանակը կարծես թե ապահովված էր տվյալ ժամանակաշրջանի չափանիշներով արդիական զինատեսակով, զենք ու զինամթերքով: Հայտնի է, որ այդ օրերին զենքն ու զինամթերքը Հայաստան էին ներկրվում Մեծ Բրիտանիայից, Հունաստանից և այլ երկրներից, ինչպես նաև Ռուսաստանի հարավում գործող այսպես կոչված Դեմոկրատիկ Կամավորական և այլ սպիտակգլարդիական գորավարների զինապահեստներից: Սեփականը Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն չունեցավ կազմակերպելու, ասենք ստեղծված իրավիճակում այնքան էլ դյուրին չէր նման ձեռնարկումներ ունենալ, առավել ևս գործելով թուրք-թա-

Թարական և բուլղարական շրջափակման պայմաններում, չնայած որոշ փոքր նախապատրաստութիւններ այդ բնագավառում իրականացվեցին: Եթե հաշվի առնենք նաև այն կարևոր հանգամանքը, որ, Մեծ Բրիտանիայից Հայաստան ներմուծված հրացանները գործնականում ոչ պիտանի դուրս եկան, ծանր էին, ինչից հայ զինվորները իրապես դժգոհում էին, մեծմասամբ էլ պարզապես խոտան էին, ապա կարելի է պատկերացնել բանակաշինութեան համապետական խնդրի առաջ պատմական այդ պահին ծառայած բարդութիւնները:

Հաջորդ խնդիրը կապված էր սպայակազմի հետ: Հայկական բանակի սպայական-հրամանատարական կազմը հիմնականում ռուսական ցարական բանակի ներկայացուցիչներ էին, որը ևս որոշակի առումով հոգեբանական կախվածութեան մեջ էր դնում Հայաստանին ռուսական գործոնից: Եվ չնայած ՀՀ կառավարութիւնը փորձեց այդ հիմնախնդիրն էլ լուծել, բացելով ռազմական ուսումնարաններ և զիննազիւններ, դրանք միշտ չէ, որ լիովին կենսագործվեցին կյանքում, շատ որոշումներ ուղղակի մնացին թղթի վրա կամ էլ դրանց լուծումները չգտնվեցին, մանավանդ, որ դրանք կենսագործելու համար անհրաժեշտ էր հաղթահարել ներքին դժվարութիւնները՝ ավագակաբար զինված խմբերի, անկանոն տարբեր գործասերի և գործխմբերի կողմից հարուցված քսոսը, անկազմակերպվածութիւնը, անիշխանութիւնը և անօրինականութիւնը, ինչպես նաև կուսակցական-քաղաքական մտածելակերպի անհարթութիւնները և կաղապարված գործելակերպի դրսևորումները զինվորական գործի, և մասնավորապես Հայկական բանակի կազմակերպման բնագավառում:

Առաջին Հանրապետութեան բանակի համար լուրջ փորձութիւն հանդիսացավ Հայդուկապետական անկանոն խմբապետական մտածելակերպի և գործելակերպի բախումը և անհաշտ դիրքորոշումը կանոնավոր բանակի կազմակերպման գաղափարների, պետական գործելակերպի դրսևորումների հետ, ինչը գործնականում փոշիացրեց առկա ռազմութը, խաթարեց բանակաշինութեան ռազմավարական մեծագույն արժեք ունեցող գործը: Տվյալ պատմական ժամանակաշրջանում առավել նախաձեռնող և անգիշտում գտնվեցին հայդուկային-ֆիդայական մտածելակերպը որոշակի իմաստով հոգեբանական-բարոյական տեսանկյունից արդարացնող գործելակերպի կողմնակիցները: Բնականաբար, հենց նրանք էլ ահռելի փորձութիւնների և խնդիրների առջև կանգնեցրին 1918 թ. մայիսին ծնված Առաջին Հանրապետութեանը: Դատելով 1918-1920 թթ. պատմական իրողութիւններին, և գլխավորապես Նախարարների խորհրդի արձանագրութիւններից, այդպես էլ ՀՀ կառավարութեանը չհաջողվեց այդ ժամանակ հաղթահարել անկանոն գործասերի, մտուցերիստական զանազան խմբերի, և, անուշտ, Հայկական գործի կազմակերպման հայդուկային մտածելակերպով առաջացած դժվար

րությունները, թեկուզև կարծես թե ժամանակին ընդունվեցին տեղին և լուրջ որոշումներ, որոնք սակայն մեռելածին գտնվեցին:

Բնականաբար, ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում Հայաստանի Առաջին Հանրապետության բանակը, չնայած հաջողությամբ դիմացավ 1918-1919 թվականների և 1920 թ. առաջին կեսի փորձություններին, անցնելով Սարգարապատյան հերոսական ճակատամարտաշարքի բովով, բախվելով 1918 թ. դեկտեմբերի երկշաբաթյա վրաց-հայկական պատերազմի պիքներին, որին նոր կազմակերպվող Հայկական բանակը պատվով դիմացավ՝ նշանավոր զորավար Դրոյի գլխավորությամբ տանելով արժանի հաղթանակ, իսկ այնուհետև թուլանալով, հյուծվելով և բարոյալքվելով 1918-1919 թթ. ներքին կռիվներում՝ նպատակադրում ունենալով զսպել Հայաստանի կեամբիլիոնանոց մահմեդական զանգվածին, ինչպես նաև գործնակաբար կանոնավոր բանակի զորամասերին մասնակից դարձնելով մայիսյան բոլշևիկյան բռնկման, կամ ավելի ճիշտ տվյալ պահին հակապետական համարվող խռովության ճնշմանը, ինչի արդյունքում գործնականում Հայկական բանակը իրապես կորցրեց իր մարտունակությունը, և փաստորեն գրեթե լիովին անպատրաստ գտնվեց 1920 թ. աշնան սկզբին սկսված թուրք-հայկական աղետաբեր պատերազմին, այն գործնականում տանուլ տվեց, որպես արդյունք ունենալով Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հիւրավի տխրահուշակ, ստորացուցիչ և չափազանց ծանր ռազմաքաղաքական հետևանքներով լի պայմանագիրը. դրան ավելացրած նաև այն հանգամանքը, որ թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի տկարացմանը ըստ էության նպաստեց նաև Հայաստանի Անտանտի դժով դաշնակիցների իրական դիրքորոշումը, որի արդյունքում հայ ժողովուրդը լքվեց դաշնակիցների կողմից, ինչն էլ իր հերթին խթանեց մեն-մենակ վիճակում հայտնված հայերի մոտ փախչելու-փրկվելու հոգեբանությունը, գոյություն ունեցող իրավիճակից բխող հուսահատությունը ահազանացրեց, արթնացրեց և գորեղացրեց իրական վախը թուրք բարբարոսի առաջ, իսկ արդյունքում՝ հանդեցրեց Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական տկարացմանը, իրապես մեկուսացմանը տարածաշրջանում և հուսահատ վախճանին, իսկ քաղաքական հեռանկարում՝ նաև խորհրդային իշխանության հաստատմանը:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐՍԱԳՐԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Ստորև ներկայացնում ենք ընդամենը մեկ արխիվային փաստաթուղթ **հայկական բանակի** թվակազմի մասին՝ ֆրանսերեն լեզվով, որին ծանոթանալով, ռազմագիտական բնույթի հիմնախնդիրներով զբաղվող համապատասխան մասնագետը կարող է որոշակի և ամբողջական պատկերացում կազմել Առաջին Հանրապետության զինված ուժերի հիրավի քիչ թե շատ իրական քանակի, այդ թվում փորձել կարևոր եզրակացության գալ նրա գործնական տեսանկյունից մարտունակ թվի մասին: Այն կարող է օգտակար լինել հայկական բանակի վերաբերյալ հիմնարար աշխատությունների ստեղծման հիմնախնդրի լուծման գործում:

RENSEIGNEMENTS GENERAUX SUR L'ARMEE ARMENIENNE¹¹²² (1920 թ. տվյալներով)

1. EFFECTIFS DE L'ARMEE ARMENIENNE EN TEMPS DE PAIX¹¹²³

I^o Officiers¹¹²⁴ 1515
Officiers d'Administration¹¹²⁵ 309
Medecins¹¹²⁶ 97
Veterinaires¹¹²⁷ 17
Soldats du front¹¹²⁸ 24715

¹¹²² Ընդհանուր տեղեկություններ **ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ** վերաբերյալ:

¹¹²³ Հայկական բանակի թվակազմը /անձնակազմը/ խաղաղ ժամանակաշրջանի համար:

¹¹²⁴ Սպաներ:

¹¹²⁵ Վարչակազմի սպաներ:

¹¹²⁶ Բժիշկներ:

¹¹²⁷ Անասնաբույժներ:

Soldats hors rangs¹¹²⁹ 4795

Volontaires¹¹³⁰ 4023

Ouvriers¹¹³¹ 311

Chevaux¹¹³² 7847

**2. EFFECTIFS DES ETATS-MAJORS DE BRIGADES D'INFANTERIE
EN TEMPS DE PAIX¹¹³³**

Officiers 32

Officiers d'Administration 12

Medecins 4

Veterinaires 4

Soldats du front 452

Soldats hors rangs 116

Chevaux 84

3. EFFECTIFS DE L'INFANTERIE EN TEMPS DE PAIX¹¹³⁴

Bataillons¹¹³⁵ 29

Officiers 666

Officiers d'Administration 57

Medecins 31

Soldats du front 15493

Soldats hors rangs 1359

Chevaux 2111

4. EFFECTIFS DE LA MILICE EN TEMPS DE PAIX¹¹³⁶

Bataillons 6

Officiers 115

Officiers d'Administration 15

Medecins 5

Soldats du front 1129

¹¹²⁸ Ռազմաճակատային զինվորներ:

¹¹²⁹ Աստիճանակարգից դուրս զինվորներ:

¹¹³⁰ Կամավորականներ:

¹¹³¹ Բանվորներ:

¹¹³² Չիեր:

¹¹³³ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի հետևակային բրիգադների թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:

¹¹³⁴ Հետևակի արդյունավետությունը խաղաղ ժամանակ:

¹¹³⁵ Գումարտակներ:

¹¹³⁶ Միլիցիայի թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:

Soldats hors rangs 115

Chevaux 466

5. EFFECTIFS DE CAVALRIE EN TEMPS DE PAIX¹¹³⁷

Escadrons¹¹³⁸ 17

Officiers 88

Officiers d'Administration 10

Medecins 3

Veterinaires 2

Soldats du front 2344

Soldats hors rangs 268

Chevaux 2509

6. EFFECTIFS DE L'ARTILLERIN EN TEMPS DE PAIX¹¹³⁹

Batteries¹¹⁴⁰ 16

Bataillons 2

Officiers . 139

Officiers d'Administration 25

Medecins 6

Veterinaires 5

Soldats du front 2751

Soldats hors rangs 388

Chevaux 1435

7. EFFECTIFS DES TR UPES SERVICE AUXILLAIRE EN TEMPS DE PAIX¹¹⁴¹

Bataillons 3

Compagnies¹¹⁴² 33

Sections¹¹⁴³ 12

Officiers 233

Officiers d'Administration 21

¹¹³⁷ Հեծելազորի թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:

¹¹³⁸ Էսկադրոններ:

¹¹³⁹ Հրետանու թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:

¹¹⁴⁰ Մարտկոցներ:

¹¹⁴¹ Չինվորական նախարարության օժանդակ ծառայության ջոկատների թվակազմը խաղաղ ժամանակաշրջանում:

¹¹⁴² Կարգապահական գումարտակներ, տուգանային վաշտեր:

¹¹⁴³ Դասակներ:

Medecins 13
Veterinaires 2
Soldats du front 4932
Soldats hors rangs 644
Chevaux 929

8. EFFECTIFS DES UNITES TECHNIQUES EN TEMPS DE PAIX¹¹⁴⁴

Ils comprennent des bataillon du genie, des sections d'aviation, des section de radiotelegraphie, et des trains blindés¹¹⁴⁵.

9. EFFECTIFS DES ETABLISSEMENTS DEPENDANT DU SERVICE DE L'ARTILLERIE DU MINISTRE DE LA GUERRE¹¹⁴⁶

Il existe des entrepôts de munitions de guerre a Alexandrapol, Erivan, Karaklis, Deilijian, Novo-Bayazet.

Des ateliers pour reparation des fusils et des mitrailleuses, et des ateliers d'artillerie a Alexandrapol.

Des ateliers pour fabrication de cartouches a Erivan et Alexandrapol¹¹⁴⁷.

10. EFFECTIFS DES ETABLISSEMENTS DEPENDANT DU SERVICE SANITAIRE DU MINISTERE DE LA GUERRE¹¹⁴⁸

IL existe des Hopitaux a.

Erivan
Alexandrapol
Kars
Sarikamich
Kamarlu
Igdir
Delijan
Djelal Oglı.

¹¹⁴⁴ Տեխնիկական միավորումների արդյունավետությունը խաղաղ ժամանակամիջոցում:

¹¹⁴⁵ Տեղեկություններ-նկատառումներ ինժեներական գումարտակների, ավիացիոն դասակի, ռադիոհեռագրային դասակի, զրահագնացքների վերաբերյալ:

¹¹⁴⁶ Զինվորական նախարարության Հրետամային ծառայությանն առնթեր օժանդակ հաստատությունների արդյունավետությունը:

¹¹⁴⁷ Ռազմամթերքի պահեստների առկայությունը Ալեքսանդրապոլում, Երևանում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Նոր-Բայազետում:

Հրացանների և գնդացիների վերանորոգման, հրետամային արհեստանոցները Ալեքսանդրապոլում:

Փամփուշտների պատրաստման արհեստանոցները Երևանում և Ալեքսանդրապոլում:

¹¹⁴⁸ Զինվորական նախարարությանը կից սանիտարական ծառայությունների դեղատնային հաստատությունների արդյունավետությունը:

IL existe également des pharmacies militaires, trains sanitaires et asiles pour convalescents¹¹⁴⁹.

*Ստորագրությունը՝ Փարիզում ՀՀ ազգային սլատվիրական քարտուղարի
օգնական Մ. (Միսակ) Ղազարյան
ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 2, գ. 160, թ. 1 - 5: Պատճեն, մեքենագիր:*

¹¹⁴⁹ Հոսպիտալների գոյությունը Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարի-ղամիչում, Դամարլուտում, Իգդիրում, Դիլիջանում: Ռազմական դեղատոմսերի, սանիտարական գնացքների և առողջացողների համար հաստատությունների գոյությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1918 - 1920 ԹԹ.

Առ այսօր քիչ է լուսաբանված այն հարցը, թե ինչպես է Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. ստեղծել անվտանգության իր համակարգը, որի բաղկացուցիչ մասերն էին հետախուզությունը և հակահետախուզությունը:

Հարկ է նշել, որ այս բնագավառում Հայաստանի Հանրապետության առջև ծառայած են եղել մեծ բարդություններ և խոչընդոտներ: Նրան վիճակված էր մաքառել հետախուզական և ռազմական-քաղաքական հզոր ներուժ ունեցող երկրներին, ինչպիսիք էին՝ Թուրքիան, Խորհրդային Ռուսաստանը, մուսավաթական, իսկ այնուհետև՝ բոլշևիկյան Ադրբեջանը, մենջևիկյան Վրաստանին փոխարինած Խորհրդային Վրաստանը և այլն: Եվ չնայած առկա ահռելի դժարություններին, Հայաստանի Հանրապետության կառավարական մարմինները հնարավորինս ուշադրության կենտրոնում են պահել հետախուզական և հակահետախուզական գործի կազմակերպման հիմնախնդիրները, մշտապես մտահոգվել են ներքին և արտաքին անվտանգության օղակների կազմակերպման հարցերով: Կառավարությունը կայացրել է համապատասխան որոշումներ, լուծվել են կադրային, ֆինանսական և այլ հարցեր:

Մույն հրատարակությունը նպատակ է հետապնդում մասամբ լրացնելու վերոնշյալ հարցի վերաբերյալ հայ պատմագիտության մեջ գոյություն ունեցող այդ գծալի բացը: Հրատարակվող փաստաթղթերը հնարավորություն են տալիս մասամբ ներկայացնելու ՀՀ հետախուզական բաժանմունքի 1918-1920 թթ. գործունեությունը:

Հայկական հետախուզական ծառայության կադրային-ֆինանսական հիմնախնդիրների բացահայտման առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև ՀՀ Չինվորական նախարարության, բարձրագույն սպայա-

կազմի, այլևայլ տնտեսական-քաղաքական մարմինների գործունեության արդյունքում ստեղծված մի շարք փաստաթղթեր (գեկուցագրեր, նամակներ, ծանուցագրեր և այլն), որոնք առնչվում են հայկական հետախուզական ծառայության ֆինանսական-տնտեսական և կադրային հիմնախնդիրների հետ: Սույն հրապարակումը նպատակ է հետապնդում մասամբ լրացնել հայ պատմագիտության մեջ գոյություն ունեցող այդ զգալի բացը, ակնկալելով հայկական հետախուզության պատմության ստվերոտ կողմերի հետազա համակողմանի և ամբողջական պարզաբանման: Սույն հրատարակության մեջ փորձ է արվում մասնակիորեն լրացնել այն բացը, որ կա Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության վերաբերյալ պատմագրությունում: Փաստաթղթերը միաժամանակ վկայում են, որ Հայաստանի Առաջին Հանրապետությանը, նրա պետական իշխանության և անվտանգության մարմիններին ամեն ինչ էլ, որ հաջողվել է: Մեր նպատակն այստեղ այն է, որ ցույց տանք, որ Հայաստանի Հանրապետությունը որպես կայացման ձգտող պետություն՝ այդ ծանր տարիներին անգամ զգալի ջանքեր է գործադրել ունենալու ամեն մի պետության համար «աչքի ու ականջի» դեր կատարող այդ մարմինները՝ հետախուզական ծառայությունները: Ստորև բերվող զանազան փաստաթղթերը հնարավորություն են տալիս գոնե մասամբ պատկերացնել ՀՀ հետախուզական բաժանմունքի գործունեությունը 1918-1920 թվականներին, որոնք կարծում ենք՝ կհետաքրքրեն ընթերցող գիտական-մտավորական հասարակությանը:

N 1

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՄԻԼԻԿՈՎԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ՏԻԳՐԱՆ
ԴԵՎՈՅԱՆՑԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՉԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1 մարտի 1919 թ.

Երևան

По имеющимся сведениям, в Тифлисе агентами контрразведки грузин арестован служивший в Армянских войсковых частях и находящийся в настоящее время на службе Добровольческой армии [Тигран] Девоянц с важными документами, передан суду и приговорен к расстрелу. Англичане протестовали против постановления суда, который приведен в исполнение в виду болезни Девоянца сыпным тифом в тюрьме. Полагаю необходимым

принять меры по облегчению участи Девоянца, если сведения эти действительны.

Генерал-майор Силиков
За начальника штаб капитан Гросс
ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 1, ք. 1: Պատճեն, մեքենագիր:

N 2

**ՏԻԳՐԱՆ ԴԵՎՈՅԱՆՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՐԱՍՏԱՆԻ
ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՆ**

*25 մարտի 1919 թ.
Թիֆլիս*

Девоянец обвиняется в военном шпионаже. Следствие о нем закончено.
В ближайшее время дело будет заслушано на сессии суда.

За товарища Министра иностранных дел Сабахтаришвили

ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 1, ք. 111-112: Պատճեն, մեքենագիր:

N 3

ՔԱՂՎԱԾՔ

**ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ
ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՎ ԲԱԶՎՈՒՄ ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ**

*8 ապրիլի 1919 թ.
Երևան*

Լսեցին. Չինվորական մինիստրի զեկուցումը Թիֆլիսում և Բաքվում մեր դիվանագիտական միսիաներին կից զինվորական ներկայուցուցչություն հիմնելու մասին:

Որոշեցին. Կարևոր համարել Թիֆլիսի միսիային կից զինվորական ներկայացուցչություն հիմնելը: Չինվորական ազենտը նշանակվում է Չինվորական և Արտաքին գործերի մինիստրի փոխադարձ համաձայնությամբ, հաշվվում է Դիվանագիտական միսիայի կազմի մեջ և գործում է Սիսիայի գլխավորի ցուցմունքների համաձայն: Ռոճիկը ստանում է Չինվորական

մինիստրության վարկից, որպես զինվորական: Յանձնարարել Արտաքին
Գործերի մինիստրին մտցնի նախահաշվի մեջ 9 ամսվա համար՝ 1919 թ.
ապրիլի 1-ից մինչև տարվա վերջը 90 հազար ռուբլի Թիֆլիսի գրասենյակա-
յին, ներկայացուցչական և այլ ծախսերի համար:

ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 100, ք. 62: Բնագիր, մերենագիր:

N 4

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ

14 ապրիլի 1919 թ.

Երևան

Генеральный штаб ведает: 1) производством занятий в военно-учеб-
ных заведениях войск, 2) борьбой со шпионажем и т.п.

...7) Генеральный штаб состоит из: Разведывательного отделения, ко-
торое ведает сбором сведений о противнике и местностях, обработкой этих
данных и своевременной рассылкой их в войска, руководит разведкой, ве-
дущей штабами бригад, ведет учет сумм, отпускаемых на разведку, органи-
зует борьбу со шпионажем. Штаб генерального штаба Военного министер-
ства:

Штаты

Разведывательное отделение.

Начальник отделения [Генерального штаба, штаб -офицер] - 1

Организация по особому секретному плану.

Помощник [штаб или штаб-офицер] - [2 один из них ведает контрраз-
ведкой],

Писарей: старших -1, младших -1.

Примечание: На случай двух летучих, оперативных штабов разреша-
ется сверх указанного числа иметь в оперативном, разведывательном и об-
щем отделениях еще по два помощника, причем в оперативном оба добав-
ляемых должны быть офицерами Генерального штаба. А также для указан-
ной цели разрешается иметь в каждом отделении добавочных писарей по
одному старшему и по одному младшему. Число офицеров и писарей, до-

бавленных по настоящему примечанию, разрешается иметь на срок до 1 июля 1919 г.

Штаб Генерального штаба Военного министерства.

ՀԱԱ, Ֆ.Պ - 204, ց. 1, գ. 132, ք. 52-55: Պատճեն, մերե նազիր:

№ 5

**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ
ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԼԽԱՎՈՐ
ՇՏԱԲԻ ՊԵՏԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԵՏԱԽՈՒՅՁ
ՍՊԱՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*2 մայիսի 1919 թ.
Երևան*

С расширением деятельности Разведывательного отделения и открытием пунктов в соседних государствах необходимо позаботиться о том, чтобы агенты разведки, находящиеся за пределами Армении, имели бы хоть какую-нибудь поддержку от представителей своей страны. Офицер-разведчик в случае “провала” официально не пользуется правом защиты, он работает на своей страх и риск. Между тем существенную поддержку в его работе неофициально, конечно, могли бы оказывать дипломатические миссии, что и имеет место во всех государствах: ни для кого не секрет, что, во главе разведки всегда стоит глава миссии.

К сожалению, у нас этого не наблюдается. Наши дипломатические представители при обращении к ним агентов сразу пугаются и отказывают, поясняя, что боятся возможных “дипломатических осложнений”, и если и оказывают иногда некоторую помощь, то настолько неумело, что ставят агента в самое рискованное положение - это я испытал на себе.

Необходимо войти в сношение с Министерством иностранных дел и просить о посылке распоряжений всем дипломатическим представителям, как в Закавказье, так и в пределах Турции, где указать, что поддержка агентов разведки в их работе есть прямая обязанность миссии. Эта поддержка должна заключаться главным образом в пересылке памяток и содействии для получения необходимых документов при поездке в различные районы.

Кроме того, чины миссии должны принимать все меры, чтобы своими неосторожными действиями не подвести агентов.

Подробные указания, в чем должна выражаться помощь, могут быть даны на месте офицером разведки.

*Вр. И. Д. начальника отделения,
поручик по адмиралтейству Ован Хан-Котурский*

ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 24: Պատճեն, մեքենագիր:

№ 6

ՔԱՂՎԱԾՔ

**ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ
ՀԵՏԱԽՈՒՁՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒՁՈՒԹՅԱՆԸ
ՖԻՆԱՆՍՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԴՐԱՆՑ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԳԵՍՊԱՆՆԵՐԻ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

8 մայիսի 1919 թ.

Երևան

1. Լսեցին. Ձիմվորական մինիստրի զեկուցումը հետախուզական եվ հակահետախուզական բաժնին բաց թողնել մայիս ամսվա ծախսերի համար 657.000 ռ.:

Որոշեցին. Բաց թողնել Ձիմվորական նախարարության հետախուզական և հակահետախուզական բաժնի մայիսի ծախսերի համար 657.000 ռ. 40 միլիոն հատուկ ֆոնդից:

2. Լսեցին. Ձեկուցում արտասահմանի մեջ հետախուզական և հակահետախուզական գործի մասին:

Որոշեցին. Արտասահմանի մեջ հետախուզական և հակահետախուզական գործունեությունը ենթարկել ՀՀ դեսպանների հսկողությանը:

ՀԱԱ, ֆ.Պ - 199, ց. 1, գ. 146, ք. 82: Բնագիր, մեքենագիր:

N 7

11 мая 1920 г.

Управляющему делами Совета Министров

По приказанию Военного министра прошу указаний ассигновать в распоряжение капитана Девоянца шестьсот пятьдесят семь тысяч руб., так как в назначенных деньгах имеется крайняя необходимость. ВХ 7629, № 7988.

Подпись начальник Генштаба, полковник...

ՀԱՍ, Ֆ.Պ -199, ց. 1, գ. 118, ք. 33: Բնագիր, մերենագիր:

N 8

12 мая 1920 г. В. М.

**Управляющему делами Совета
Министров**

**В. М. хоз. просить ускорить
от пр.-ва на № 7629, от
кредита № 7629, № 2634**

В ответ на послания Вашего от 11 мая за 2634 прошу ассигновать на шестьсот пятьдесят семь тысяч рублей. Выписать на имя начальника Разведывательного отделения Штаба командующего войсками капитана Девоянца.

За Военного Министра Ахвердян

Полковник Багдасарян

ՀԱՍ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ.11 8 ա, ք. 34: Բնագիր, մերենագիր:

N 9

17 մայիսի, 1920 թ., № 2643

Ջինվորական մինիստրությանը, 11/V

Ի հետևումն Ձեր ամսյա № 3541 գրության, հայտնում ենք Ձեզ, որ Ջորքերի հրամանատարի շտաբի մայիս ամսվա հետախուզության և հակահետախուզության կարիքների համար 657000 ռուբլի բաց թողնելու առթիվ Ձեր արած դիմումը հարգված է Սինիստրների խորհրդի ամսյա 8-ի նիստում:

Воен. штаб Армении, канцелария . № 2465, 11/V - 1920 г.

ՀԱՍ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 118ա, ք. 35: Բնագիր, մերենագիր:

18 мая 1920 г.

Военному Министру

17 мая. 2961. Вследствие сношения от 12-го мая с/г за № 7629 по Главному штабу сообщая, что 657000 руб. на разведку следует выписать из кредита Военного министерства на чрезвычайные и непредвиденные нужды, из старого кредита Военного министерства имеется еще один миллион, и, кроме того, сегодня посылается предложение об открытии еще 5 млн. руб.

Управляющий делами Совета Министров

մակագրություն: *По открытию 5 млн. кредита доложить. 21/V.*

Военный штаб Арм. 18/ V. 1920 г., № 7772. № 2559

ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 118ա, ք. 32: Բնագիր, մեքենագիր:

N 11

20 մայիսի, 1920 թ.

Հաստատել, 26 մայիսի.

Հայաստանի Հանրապետության

Ռազմական նախարարության

Գլխավոր շտաբ

Գիվան, № 8404

Ձեկուցում ՀՀ Մինիստրների խորհրդին

Մինիստրների խորհուրդն իր 1919 թ. ապրիլի 8-ի նիստում որոշել էր հիմնել Վրաստանում զինվորական ներկայացուցչություն՝ դիվանագիտական միսիային կից և այդ նպատակի համար հանձնարարել էր Արտաքին գործոց Մինիստրության 1919 թ. նախահաշվի մեջ մտցնել 90000 ռ. այդ ներկայացուցչության 1919 թ. ապրիլի 1-ից մինչև տարվա վերջ, այն է՝ 9 ամսվա ընթացքում լինելիք դիվանի և այլ ծախսերը հոգալու համար: Այդ գումարը մինչև ներկա ժամանակ բաց չի թողնված և զինվորական ներկայացուցչությունը այդ ծախսերը կատարել է այն ավանսներից, որ Գլխավոր շտաբը փոխարինաբար բաց էր թողնում: Չստանալով այս մի տարվա ընթացքում Արտաքին գործոց մինիստրությունից որևէ միջոցներ այդ հիմնարկության ծախսերը հոգալու, զինվորական ներկայացուցչությունը ներկա ժամանակ

գոյություն ունի միմիայն շնորհիվ այն գումարների, որ Գլխավոր շտաբը տալիս է փոխարինաբար այդ ներկայացուցչությանը յուր ազատ գումարներից:

Գլխավոր շտաբի ունեցած տեղեկությունների համաձայն Արտաքին գործոց մինիստրությունը այդ 90000 ռ. չի մտցրել 1919 թ. նախահաշվի մեջ և շնորհիվ դորա այդ գումարի հատկացումը մինչև այսօր հետաձգվում է:

Ընդամին անհրաժեշտ են համարում հայտնել, որ ի նկատի ունենալով ընդհանուր թանկությունը և վերոհիշյալ ներկայացուցչության գործունեության լայնացումը ամսեկան 10000 ռ. ամբավարար է, ուստի խնդրում են.

1. Հատկացնել 90000 ռ. Զինվորական ներկայացուցչի 1919 թ. ծախսերի համար,

2. Ավելացնել ամենամսյա Դիվանի և այլ ծախսերն հոգալու համար բաց թողնվելիք գումարը մինչև 15000 ռ.՝ սկսած 1920 թ. հունվարի 1-ից,

3. Նույն ներկայացուցչության 1920 թ. հունվարի 1-ից, մինչև հուլիսի 1-ը կատարած ծախսերը ծածկելու համար հատկացնել 90000 ռ., այն է՝ ամսական 15000 ռ.:

*Ի. Տ. ռազմական նախարարի գեներալ-լեյտենանտ Հախվերդյան
Գլխավոր շտաբի պետ, գնդապետ Բաղդասարյան*

ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ.112, ք.12: Պատճեն, մեքենագիր:

N 12

**ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԱՅ
ՀԵՏԱԽՈՒՅՁՆԵՐԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*21 մայիսի, 1919 թ.
Երևան
Секретно*

Препровождая при сем рапорт начальника Разведывательного отделения Генерального штаба относительно координации действий чинов Министерства иностранных дел и Военного, прошу Вашего распоряжения об

оказании самой интенсивной помощи чинам разведки, обращающимся к представителям Вашего за пределами Армении за содействием.

Подробные данные, в чем должно выражаться содействие, взаимная поддержка и общность действий могут быть выяснены на месте при переговорах высших чинов разведки с представителями миссии.

ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց. 1, գ. 155, ք. 23: Պատճեն, մեքենագիր:

N 13

**Հայաստանի Հանրապետության
Ձինվորական նախարարություն
Գլխավոր շտաբ, № 8814. Երևան,
21 մայիսի 1920 թ., զեկուցվել է ՀՀ
Մինիստրների խորհրդին, 1/VI.**

**В Министерство финансов по
докладу**

հետախուզային և հակահետախուզային կարիքների համար 657000 ռ. ներկայացված նախահաշվով, որը գտնվում է Մինիստրների խորհրդի գործերում:

**Կառավարություն. Մինիստրների
խորհրդի գործերի կառավարիչ
ստացիաժ է 22 մայիսի, 1920 թ.
№ 1674**

Միջնորդում եմ արտակարգ միջոցներից բաց թողնել Ջորջերի հրամանատարի շտաբի հունիս ամսվա

*Ի. Տ. Ռազմական նախարար, գեներալ-լեյտենանտ Հախվերդյան
Գլխավոր շտաբի պետ Բաղդասարյան*

ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 118ա, ք. 30: Բնագիր, մեքենագիր:

N 14

Պահանջագիր՝ 657000. 1 / VI. 1920

**№ 197
1/VI. 1920
№ 3585**

Տալ 1920 թ. նախահաշվի հ. բանկ... առաջարկում եմ Երևանի գանձարանի ցույց տված աղբյուրներից գրել ծախսի վեց հարյուր հիսուն և յոթ հազար ռ. և տալ սույն

սահանջագրի կտրոնը ներկայացնող գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ կապիտան Տ. Դևոյանցին հետախուզության և հակահետախուզության կարիքների համաձայն մինիստրների խորհրդի մայիսի 8-ի որոշման:

№ 3585. Մտ. ուս. Ա. Ազիզյան I/VI

ՀԱԱ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 118 ա, ք. 36: Բնագիր, մեքենագիր:

N 15

Начальнику Генерального штаба

Рапорт

Начальник Разведывательного
отделения Генерального штаба
Военного министерства, 8 июня,
1919 г., № Р 0238 г., Эривань

По имеющимся у меня сведениям, в распоряжении Карсского гражданского Губернатора имеются 250 золотых турецких лир, отобранных им у пленных аскеров.

Ввиду крайней необходимости в лирах для разведывательных целей и крайне малого их нахождения на рынке, прошу Вашего ходатайства о передаче этих лир во вверенное мне отделение. Причем привосокупаю, что курс лиры во время их отобрания у аскеров был 350 р., по каковой расценке эти лиры внесены в журнал.

*Начальник Генерального штаба, подполковник Шнеур
помощник, поручик Арутюнянц*

ՀԱԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 37, ք. 58: Պատճեն, մեքենագիր:

N 16

**Начальник Военного штаба
по канцелярии, 28 июня
1920 г. № 10634
Շառափարոբյան. ստացված է
29 հունիսի, 1920 թ., № 2270**

**Управляющему делами Совета
Министров**

Для доклада Военному министру
прошу сообщить, какое последовало рас-

поряжение по докладу от 19 мая сего года за РО 437 относительно отпуска 657 тыс. рублей на расходы по разведке и контрразведку на июнь месяц с. г.

Полковник Багдасаров

ՀԱՍ, Ֆ.Պ - 199, ց. 1, գ. 118ա, ք. 126: Բնագիր, մերենագիր:

N 17

Военному министру

Ввиду безусловной необходимости золотых лир для Разведывательного отделения Генерального штаба прошу Вашего ходатайства перед г. министром Внутренних дел для надлежащего распоряжения Карсскому губернатору о передаче названных денег по курсу Разведывательному отделению Генерального штаба.

Начальник Генерального штаба Военного министерства

Генерального штаба полковник Зинкевич

Начальник Разведывательного отделения Генерального штаба

подполковник Шнеур.

28 июня, 1919 г., № 100239, г. Эривань

Փառաշքերի վրա կա հետևյալ մակագրու թղթերը. Просить Министра внутр. дел. ген. м. Араратова

ՀԱՍ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 37, ք. 85, հախաքարձ երեսը: Բնագիր, մերենագիր:

N 18

**Военный министр
Республики Армения
№ Р 0252, 3 июля 1919 г.
г. Эривань**

**Господину Министру
Внутренних дел. вх 57/5**

Ввиду крайней необходимости в турецких деньгах, убедительно ходатайствую сделать распоряжение Карсскому Гражданскому Губернатору о передаче

означенных в прилагаемой переписке турецких лир по курсу разведывательному отделению Генерального Штаба.

Генерал -майор Араратов

Начальник Генерального штаба Военного министерства Генерального штаба полковник Зинкевич

Սույն փաստաթղթի վրա կա մակագրություն, այն է. *деньги находятся в расп. мин. финансов. 5/VII ներքևում՝ Ներքին Գործերի մինիստրի ստորագրությունն է.*

ՀՄԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 37, ք. 57 հակադարձ երեսը: Բնագիր, մերժնագիր:

N 19

В Ген. шт. 5/VII

№ 8008

С возвращением настоящей переписки г. Военному министру, сообщая, что указанные здесь деньги находятся в распоряжении министра Финансов.

5 июля, 1919 г., г. Эривань, и.д. министра Внутренних дел **А. Манасян**
**Փաստաթղթի վրա կան 2 մակագրություններ, որոնցից մեկը մենք վեր ծա նե-
ցինք, ինչը և ներկայացնում ենք. *Просить министра Финансов.***

Штабс капитан Девоянц

Генерального штаба Военного министерства. 5 июля 1919 г. Вх. № 2053

ՀՄԱ, Ֆ.Պ - 202, ց. 1, գ. 37, ք. 57: Բնագիր, մերժնագիր:

N 20

5 июля 1920 г.

№ 5323.

Эривань

Начальнику Главного штаба

Военного Министерства

На отношение № 106343/3552 сообщая, что Чрезвычайный фонд Правительства не может служить источником постоянных ассигнований для контрразведки. Если раньше и выдавались деньги из этого фонда, то ввиду отсутствия особого кредита, открытием же специального кредита должно

